ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ

ИНСТИТУТ ИСТОРИИ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ АРМЯНСКОГО НАРОДА
КНИГА ШЕСТАЯ

ПАМЯТНЫЕ ЗАПИСИ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ XV ВЕКА

ЧАСТЬ ПЕРВАЯ
(1401—1450 гг.)

Составил
Л. С. ХАЧИКЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ԺԵ ԴԱՐԻ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
(1401—1450 թթ.)

կազմեց
Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

ՀՍՍՌ ԳԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ։

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները պարունակում են բազմահարուստ նյութեր Հայաստանի և հարևան երկրների քաղաքական, սոցիալ-տնտեսական ու կուլտուրական կյանքի պատմության տարբեր կողմերի և երևույթների ուսումնասիրման համար:

Հիշատակարանները, որպես պատմական սկզբնաղբյուր, ունեն որոշ առավելություններ այլ կարգի սկզբնաղբյուրների, հատկապես անհատ հեղինակների կողմից գրված ժամանակագրությունների ու պատմությունների նկատմամբ:

Հիշատակագիրները, լինելով իրենց կողմից գրանցվող դեպքերին ու անցուդարձերին ժամանակակից, իսկ հաճախ նաև ականատես ու ականջալուր վկաները, բնականաբար, շատ ավելի ճշմարիտ տվյալներ են հաղորդել դրանց մասին, քան դեպքերից տասնամյակներ հետո ապրած ու ստեղծագործած պատմիչները: Նրանց տեսադաշտից չեն վրիպել ժամանակակից կյանքի այնպիսի ուշագրավ երևույթներ, ինչպիսիք են, օրինակ, հաճախակի կրկնվող տարանցիկ հիվանդությունները՝ մահտարաժամները, սովը և թանկությունը, մորեխն ու թրթուրը և բազմաթիվ այլ աղետներ, որոնք ժամանակի ընթացքում մոռացվելով, տեղ չեն գտել հետագա շրջանների պատմագրական երկերում: Քաղաքական անցուդարձերի, սոցիալական և կուլտուրական կյանքի երևույթների մասին գրելիս ևս հիշատակագիրները հաճախ կենդանի ու ճշգրիտ նկարագրություններով բովանդակալից լրացումներ են կատարում այլ աղբյուրներից հայտնի տվյալների վրա:

Հիշատակագիրների մեծագույն մասը աշխատավոր ժողովրդի ծոցից դուրս եկած գրչի չարքաշ մշակներ լինելով, ժողովրդի հետ մեկտեղ տառապել են օտար նվաճողների ավերիչ արշավանքների ընթացքում, անձամբ կրել են անասելի այն զրկանքները, որ երկար դարերի ընթացքում բաժին էր ընկել հայ աշխատավոր գյուղացիությանը: Բնականաբար, նրանցից շատերը հասարակական այս կամ այն երևույթի, քաղաքական կյանքում տեղի ունեցած այս կամ այն իրադարձության գնահատականը տվել են՝ ելնելով աշխատավոր ժողովրդի շահերից: Անտարակույս, այս հանգամանքը նույնպես բարձրացնում է հիշատակարանների արժեքը որպես պատմական սկզբնաղբյուր:

Նկատի ունենալով հիշատակարանների վերոհիշյալ դրական առանձնահատկությունները, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը լույս է ընծայում հիշատակարանների երկրորդ գիրքը՝

«ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի Ա. մասը, որը հավաքել ու հրատարակության է պատրաստել ինստիտուտի ավագ գիտական աշխատող Լ. Ս. Խաչիկյանը։

Մոտ ապագայում հրատարակության կհանձնվի նաև սույն ժողովածուի Բ. մասը՝ ԺԵ. դարի երկրորդ հիսնամյակի՝ 1451—1500 թթ. հիշատակարանների նյութերով։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՌԱՋԱԲԱՆ

ԺԵ դարի առաջին հիսնամյակի ընթացքում պատմական Հայաստանի հողի վրա հաջորդաբար տեղի ունեցան հայ աշխատավոր ժողովրդի համար աղետաբեր հետևանքներ ունեցող մի շարք պատերազմներ՝ Թամուրյանների ու Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու քոչվորական ցեղերի միջև։ Այդ գոտեմարտերի ու բախումների պատմությունը Մ. Չամչյանից հետո դեռևս ոչ ոք հանգամանորեն չի շարադրել։

Նկատի ունենալով, որ հրատարակվող հիշատակարանները լայնորեն օգտագործվելու են հայ ժողովրդի միջնադարյան կուլտուրայի ու պատմության, գրականության ու կենցաղի բազմապիսի հարցերի և պրոբլեմների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների կողմից, և համոզված լինելով, որ նշված ժամանակաշրջանի քաղաքական խառն ու բարդ պատմության գիտական շարադրանքի բացակայությունը մեծ դժվարություններ է հարուցելու նրանց առջև, անհրաժեշտ գտանք այս Առաջաբանով փոքր ինչ դյուրացնել նրանց աշխատանքը՝ հիշատակարանների նյութերի օգտագործմամբ համառոտակի շարադրելով ԺԵ դարի առաջին հիսնամյակի քաղաքական անցուդարձերի պատմությունը։

1

Հայ ժողովուրդը թևակոխեց ԺԵ դարը, երբ Լանկ-Թամուրի հրոսակախմբերը, երրորդ անգամ լինելով, ասպատակում էին Անդրկովկասի ու Փոքր Ասիայի երկրներն ու քաղաքները։

1399—1400 թվականներին Լանկ-Թամուրը իր բանակներով ներս խուժեց Վրաստան և, ինչպես հաղորդում է Սարգիս գրիչը Տաթևում ընդօրինակած իր ձեռագրի հիշատակարանում՝ «զամենեսեան առհասարակ ի սուր և ի գերութիւն վարեաց, թուով ՃՌ․ (100000) — աւ գրեցաւ զկորուստն, և զեկեղեցիս քարահատակ կործանեաց» (էջ 5)*։

Ժողովուրդը կոծում ու սգում էր իր հարազատների կորուստն ու գերությունը, իսկ Թամուրի զորքերը շարունակում էին իրենց ասպատակությունները, այս անգամ արդեն Հայաստանի արևմտյան նահանգներում։ Կարճ ժամանակում նրանք գրավեցին Սեբաստիան ու Մելիտենեն, այնուհետև մտան Ասորիք՝ ավերեցին Հալեպը և Դամասկոսը, իսկ քիչ անց՝ 1401 թվականի կեսերին՝ Մերդինն ու Բաղդադը Միջագետքում։

Այս արշավանքի և Թամուրի գործած աննկարագրելի հրեշագործությունների մասին գրել են ժամանակակից շատ հիշատակագիրներ։ Լսենք Երևանի

---

* Այստեղ և ամենուրեք ցույց են արվում սույն ժողովածուի էջահամարները։

№ 5707 ձեռագրի ստացողներից մեկին, որը 1401 թվականին շարադրած իր հիշատակարանում խոսում է նաև նախորդ տարվա աղետալի իրադարձությունների մասին։

«Ի սոյն ամի,— գրում է նա,— Թամուր-Բէկն էառ զՍեաստ քաղաք և քանդեաց և աւերեաց, և սրախողող արար զամենեսեան, և զբազումս գերեաց՝ ի կանանց և ի տղայոց, և ԳՌ. (3000) մարդ զերկիր բացեալ և կենդանոյն թաղեալ՝* զայնոսիկ, որ նետ արձակեցին ի նա։ Եւ զայս արարեալ բազմութեամբ զօրօք գնացեալ ի Շամբն՝ ի վերայ Հալպայ և Դամասկոսի, և մատնեաց ասատուած ի ձեռս նորա. էառ և անչափ կոտորումն արար ի Հալպայ քաղաք, որ Գ. (3) գլխէ մնիրա շինեաց ի տաճկանց։ Եւ էանց ի վերայ Դամասկոսի, և էառ՝ Լ. (30) օր թալան արար՝ զոսկի, զարծաթ և մարգարիտ, և ԲԺՌ. (12000) ուղտ իւրն հասայ եբարձ։ Եւ յետ այնր հրաման եհան և հրով այրեցին զքաղաքն առհասարակ...։

Եւ եկեալ մեծաւ հաղթութեամբ ի վերայ Մերդնայ և տապալեաց զքաղաքն ի հիմանց, և արար որպէս զհող արտավարաց, բայց զբէրթն ոչ կարաց առնուլ, այլ յերկրէն շատ գերի եբեր ի քրիստոնէից» (էջ 3—4)։

Այս արշավանքների ընթացքում հավասարաչափ գերվում ու կոտորվում էին և՛ հայ, և՛ վրացի, և՛ ադրբեջանցի ու թուրք աշխատավորները։ Երկրին հասցրած վերքերն այնքան ծանր էին, որ նշանավոր մատենագիր և գրիչ Գրիգոր Խլաթեցին, դեպքերից քսան տարի հետո գրած իր չափածո հիշատակարանում, սարսափով է վերհիշում այդ դեպքերը։ Իր հիշատակարանի վերոհիշյալ անցուդարձերի նկարագրությանը նվիրված բաժինը Խլաթեցին ավարտում է այսպես.

«Ո՜հ, զայն զաղայն, զոր արարին
Արանց, կանանց և ընդ մանկտին,
Զարսն թաղեալ մինչ կենդանին,
Հողով, ջրովըն հեղձուցին,
Իսկ ըզմատաղ տըղայ մանկտին՝
Զայն կալտախս ձիոցն արկին...» և այլն (էջ 279—280)։

1401 թվականի վերջերին Լանկ-Թամուրը, ձմեռելու նպատակով, իր զորքերը հետ քաշեց Ղարաբաղի դաշտային մասը և նախապատրաստվեց գարնանը նոր արշավանք սկսելու Փոքր Ասիայում։

1402 թ., Անկարայի մոտ, պարտության մատնելով Սուլթան Բայազիտի (Իլդրումի) զորքերը և գերելով նրան, Լանկ-Թամուրը վերադարձավ Անդրկովկաս։ Այս մասին մի հիշատակարանում կարդում ենք.

«Եւ ի միուսում տարին (1401) գնաց ի Հոռմանց տունն, և էառ զԿամախ և այլ բազում տեղիս։ Եւ ի միւս այլ տարին (1402) դարձաւ ի Հոռոմս և զՀլտրումն խանն կալաւ, որ ունէր անթիւ հեծեալս և անհամար զաւրս. ցրուեաց և գերեաց զամենեսեան» (էջ 52)։

* Գրիգոր Խլաթեցին հայտնում է, որ չորս օր կենդանի թաղվածների ձայնը լսվում էր գետնի տակից. «Ո՜, յահագէն պատուհասին, և անծանաւթ, որ ոչ պատմէն, զի մինչ աւուրըն չորրորդին գոռումն գայր անդընդայընս»։

Մի այլ հիշատակագիր (Հովհաննես Խիզանցի գրիչը), նույն այս արշավանքի մասին գրում է հետևյալը.

«Եւ յայսմ ամի (1402) եմուտ (Թամուր-Լանկ) ի տունն Հոռոմոց, և նուաճեաց զամենեսեան ընդ ձեռամբ իւրով, և զամիրապետն աշխարհին՝ Իլդրում անուն ըմբռնեաց և կապեաց՝ հանդերձ որդովն» (էջ 22)։

Մեկ ուրիշն ավելացնում է, որ գերվածները «յանկան յա[յ]լ աշխար[հ], և մեռան» (էջ 33)։

1403 թվականին Լանկ-Թամուրը նորից արշավեց Արևմտյան Վրաստան և Աբխազիա։

Անցյալ և այս արշավանքների ընթացքում Թամուրի գործած անգթությունները նկատի ունի Թումա Թավրիզեցի գրիչը, երբ 1403 թ. Շիրվանի Մադրասա գյուղում շարադրած իր հիշատակարանում փորձում է «ստուգաբանել» Թամուր անունը, կապելով այն հայերեն «դաս» և «մուր» բառերի հետ, որովհետև Թամուրը «ուր և հասանէ մթնատեսակ և մրրատեսակ առնէ, զոմն կողոպտելով, զոմն չարչարելով, զոմն սպանելով, զոմն գերելով, զհայր ի յորդւոյ բաժանելով և զորդի ի հօրէ և այլն» (էջ 31)։

1403/4 թթ. ձմեռը Թամուրն իր զորքերով (Առաքել Սյունեցու հայտնած տվյալներով նա «զօրք ունէր ութհարիւր հազար», տե՛ս էջ 35) անցկացրեց Ղարաբաղում «և ապա չուեալ գնաց յերկիրն իւր ի Սամարղանտ, և անդ սատակեցաւ» (էջ 52)։

Լանկ-Թամուրը մեռավ 1405 թ. փետրվարին, 70 տարեկան հասակում, դեպի Չինաստան ձեռնարկած մեծ արշավանքի ճանապարհին։

Նրա մահվան լուրը ցնծությամբ ընդունվեց ժամանակակիցների կողմից.

«Յայսմ ամի,— գրում է հիշատակագիրներից մեկը,— մեռաւ Թամուր ղան, որ Ի. մի (21) ամ իբրև զբաժակ բարկութեան առեալ էր զնա աստուած ի ձեռն, և ում կամէր արբուցանէր, զի յարևելից մինչև ի մուտս արևու զամենեսին հասարակ գերեաց՝ զհաւատացեալսն և զանհաւատս, զամենեսեան սրախողխող արար...» (էջ 53)։

2

Թամուրի մահվանից հետո, նրա հսկայածավալ պետությունը, որ կյանքի էր կոչվել հրի ու սրի միջոցով, և իր կազմի մեջ ուներ տարացեղ ու տարալեզու, միմյանց հետ տնտեսական ու կուլտուրական կապերով չշաղկապված երկրներ ու ժողովուրդներ՝ սկսեց արագությամբ քայքայվել։

Թամուրի ժառանգորդների միջև ծայր առան գահակալական ավերիչ կռիվներ։ Միրանշահը, որը հոր կողմից զրկվել էր Թամուրյան պետության արևմտյան երկրների («Հուլաուի թախթի») վրա իշխելու իրավունքից, սկսում է պատերազմ իր որդու՝ Միրզա-Օմարի դեմ։ Թամուրի մյուս որդին՝ Շահռուխը, որը պայքար էր մղում պետության արևելյան շրջաններում Միրանշահի մյուս որդի Խալիլի դեմ, օգնում է Միրանշահին՝ հոր և որդու անհաշտ պայքարում։

1405 թվականին Միրզա-Օմարի կողմից բանտ նետված Աբու-Բաքր եղբայրը փախչում, միանում է հորը՝ Միրանշահին, և նրանք երկուսով արշավում են Ադրբեջան՝ Օմարի դեմ։ Զորքը լքում է Օմարին և Աբու-Բաքրը Սուլթանիայում իր հորը՝ Միրանշահին հայտարարում է փադիշահ։

1406 թվականի գարնանը Միրզա-Օմարը թարմ ուժեր հավաքելով Թամուրյան պետության արևելյան շրջաններից, կրկին արշավում է իր հոր և եղբոր դեմ։

Օգտվելով միջդինաստիական պայքարից, կարճ ժամանակով Թավրիզը գրավվում է Շիրվանշահ Իբրահիմի կողմից *։

1406 թվականին գահակալական պայքարի հրապարակ են իջնում նոր ուժեր՝ Ջելաիրյան սուլթան Ահմադը և Կարա-Կոյունլու քոչվորական ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆը։ Սրանք երկուսն էլ, որպես վտարանդի, պահվում էին Մամլուկյան սուլթան Ֆարաջի մոտ։ Լանկ-Թամուրի մահվանից անմիջապես հետո նրանք ազատ են արձակվում, և դաշնակցելով միմյանց՝ ուժեր են հավաքում Թամուրյանների դեմ ելնելու նպատակով։

Կարա-Յուսուֆը կարճ ժամանակում իր շուրջն է համախմբում Կարա-Կոյունլու քոչվորական ցեղերի և Հայաստանի ու Հարավային Ադրբեջանի քուրդ ամիրների զինական ուժերը։ Այսպես, նրան հպատակություն են հայտնում և ցույց են տալիս զինական օգնություն Բաղեշի ամիր Շամս-ադ-դինը, Ոստանի ամիր Եզդինը, նրա որդի Մելիքը և ուրիշները։

1406 թվականի աշնանը Կարա-Յուսուֆը պարտության է մատնում Միրանշահի որդի Աբու-Բաքրին և գրավում Թավրիզը։

Քաղաքական այս իրադարձությունները լայն արձագանք են գտել մեր հիշատակարաններում։

1407 թվականին Տաթևի վանքում ընդօրինակած ավետարանի հիշատակարանում Մատթեոս վարդապետը հայտնում է, որ աշխատել է՝

«Ի դառն և ի նեղ ժամանակիս, որում ազգն նետողաց անջինջ կորաւ, և փոխանորդ նորին իշխեց աթոռոյս Ատրպատականի թորգոմածին Ղարա-Ուսուֆ անուամբ։ Որ և մարտեաւ երկու անգամ և հաղթահարեաց զոմն ի թոռանց չար գազանին Թամուրին՝ չարաբարու, ահեղատեսիլ և չարասիրտ Աբ[ու-Բ]աքր»։

Գրիչն ուրախությամբ է արձանագրում կատարված փաստը։ Նա հույս ունի, որ Կարա-Յուսուֆը վերջ է տալու անիրավ հարկապահանջությանը և հաստատելու է խաղաղություն։

«Եւ այն ես,— շարունակում է նա,— ի վերին խնամոցն ամենակարողին աստուծոյ [եղև], որ ազատեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն, որ և զամենայն ազդ և զամենայն լեզու ի ներքոյ նոցա հնազանդ և դերի կայ:ին...» (էջ 76)։

Թամուրյանների պարտությունից ոգեշնչված և իրենց դառն վիճակի բարելավումը տենչացող հպատակ ժողովուրդները, սակայն, շուտով պիտի հուսախաբ լինեին։ Կարա-Կոյունլուների դինաստիան հիմնականում շարունակեց կողոպուտի, ջարդերի ու ահաբեկման նույն քաղաքականությունը։

1407 թվականին Կարա-Յուսուֆը արշավեց Վրաստան, գրավեց մի շարք ամուր բերդեր, պարտության մատնեց վրացական զորքերին, ճակատամարտում ընկավ Գիորգի Է. Թագավորը (1393—1407)։

---

* Գահակալական այս կռիվների մասին տես И. П. Петрушевский, „Государства Азербайджана в XV веке“ աշխատությունը, հրատարակված „Сборник статей по истории Азербайджана“, выпуск I, Баку, 1949 г. ժողովածուի մեջ (էջ 153—213)։

Ժամանակակից Հովաննես Խիզանցի գրիչը հայտնում է, որ արշավանքի ընթացքում սպանվեց 5 հազար և գերեվարվեց 15 հազար մարդ։ Լսենք հիշատակագրին.

«Ահա եղև խաւար երկրիս,
Ղարա-Յուսուֆի չար համբաւիս,
Որ է պարոն Թուրքըստանիս,
Խռոխտ և անյաղթ յայս աշխարհիս։
'Ի իւծեալ բեկէ զմէջս ամենից՝
Ի Մէրդնայ սկսեալ բերդիս,
Մինչ ի քաղաք Թաւրէժ տեղիս
Ղեղի արբոյց դառն վշտիս.
Գնալով ի տուն Վըրաց ազգիս,
Լըցաւ թունօք նըման իժից,
Մահացոյց զա[զգս] քրիստոնէից։
Ուստի առեալ բազում գերիս՝
Հնգետասան հազար ի թիւս,
Եւ հինգ հազար սպանեալ յանգիս,
Չարչարանօք ազգի ազգիս։
. . . .
Ամուր բերդեր արձանաւոր,
Եւ քրիստոնեայք անդ փառաւոր,
Ի միասին բոցով յորդոր,
Այրեալ եղեն որպէս փայտ չոր...» (էջ 68—70)։

Հիշատակագիրն այնուհետև հայտնում է, որ Կարա-Յուսուֆը՝ այդ նորՆեռը՝ հրաման է արձակել անխնայաբար կոտորել քրիստոնյաներին։ Զափածո հիշատակարանի վնասված շարունակության մեջ խոսվում է «Խիզանա երկրի» վրա, ըստ երևույթին նույն Կարա-Յուսուֆի զորքերի կատարած արշավանքի մասին։ Նրանք՝

«Յարիւն չինայէն /// ոյ զինչ կայ,
Զասեն թէ կին և [թէ ա]ղայ,
Զամէն խոցեն ի յանխը[նայ],
Որ ցաւ վիրին չառողջանայ»։

Կարա-Յուսուֆի և Թամուրյանների վերջին բախումը տեղի ունեցավ 1408 թ. ապրիլի 21-ին, Հարավային Ադրբեջանում, Սարդրուդի մոտ։ Միրանշահը, ստանալով իր եղբայր Շահրուխից 20 հազարանոց օգնական ուժ՝ հույսեր պարտության մատնել իր ախոյանին։ Սակայն ճակատամարտում Թամուրյանները կատարյալ պարտություն կրեցին, Միրանշահը սպանվեց, Թավրիզը գրավվեց, Կարա-Յուսուֆը տիրեց ամբողջ Հարավային Ադրբեջանին՝ մինչև Արգավիլ և Սուլթանիե։ «Թիւն ՊԾԸ. (1408). յայս ամի Ղարա-Յուսուֆ էառ զԱտրպայճան Թաւրէզ» հակիրճ արձանագրում է այդ դեպքը ժամանակակից գրիչ Հակոբ Ասպիսընկցին։

Վերջ տալով իր հիմնական հակառակորդներին, 1408—1410 թվականներին, Կարա-Յուսուֆը նվաճողական կռիվներ սկսեց Արևմուտքում։ 1409 թ. նա Արտուխյան Սալըխից գրավեց Մերտինը, 1410-ին հարձակվեց Ակ-Կոյունլու—

ների վրա, ջարդեց նրանց Մշո դաշտում, այնուհետև պաշարեց Դիարբեքիրը (Ամիդ) և Արզնին։

Օգտվելով այն հանգամանքից, որ Կարա-Յուսուֆը զբաղված է Ակ-Կոյունլու Կարա-Յոլուք Օսմանի (մեր հիշատակարաններում՝ Օթման) դեմ պատերազմներ մղելով, Ջելաիրյան Ահմեդը մտադրվում է դուրս գալ իր հզոր «դաշնակցի» դեմ և Թամուրյանների ջախջախման պտուղները վայելել միայնակ։

*Այս նպատակով նա դաշնակցում է Շիրվանշահ Իբրահիմի հետ։ Ամենայն հավանականությամբ նա իր կողմն էր գրավել նաև հայ ֆեոդալական տների որոշ ներկայացուցիչների *։*

Տեղեկանալով Ահմեդի դիտավորությունների մասին, Կարա-Յուսուֆը շուտափույթ հաշտություն է կնքում Կարա-Յոլուք Օսմանի հետ և արագ արշավով վերադառնում է Ադրբեջան։ 1410 թ. օգոստոսի 30-ին տեղի ունեցած ճակատամարտում ապստամբները կրում են լիակատար պարտություն և Սուլթան Ահմեդը խեղդամահ է արվում։ 1411 թվականին Կարա-Յուսուֆը Ջելաիրյաններից գրավում է նաև Բաղդադը։ Եվ այսպիսով, Մերձավոր Արևելքի երկրների՝ Ադրբեջանի, Հայաստանի, Քուրդիստանի և Իրաքի վրա հաստատվում է Կարա-Կոյունլուների տիրապետությունը (1410—1468)։

3

Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները՝ ադրբեջանցիները, վրացիներն ու հայերը, ինչպես առիթ ունեցանք նշելու, Լանկ-Թամուրի և նրա հաջորդների անկումով հույս ունեին, որ երկրում կհաստատվի խաղաղություն, հարկային լուծը կթեթևանա և կստեղծվեն որոշ հնարավորություններ անդորր կյանքի ու աշխատանքի համար։ Սակայն Կարա-Կոյունլուների տիրապետության հենց առաջին տարիները ցույց տվեցին հակառակը։

1409 թվականին արդեն հայ հիշատակագիրները տվյալներ են հաղորդում աշխատավոր ժողովրդի վիճակի հետագա ծանրացման մասին։ Մոկքի գյուղերից մեկում ընդօրինակած ավետարանի հիշատակարանում Հովհաննես գրիչը հայտնում է, որ «պահանջումն անաւրինաց խստանայ ի վերայ քրիստոնէից, և միշտ և հանապազ ի հոսման և ի ծորման է աշխարհ ամենայն, և ոչ երբէք հանդիպի դադարման» (էջ 95)։

Եվ ահա Հյուսիսային Ադրբեջանի տիրակալ, հեռատես ու քաջարի քաղաքական գործիչ Շիրվանշահ Իբրահիմի գլխավորությամբ Անդրկովկասի ժողովուրդները, դաշնակցելով միմյանց, ապստամբություն են բարձրացնում Կարա-Յուսուֆի դեմ։

*Այս ուշագրավ դեպքի մասին ժամանակակից աղբյուրները չափազանց կցկտուր տվյալներ են հաղորդում։ Օտար աղբյուրների** և հիշատակարանների տվյալների համեմատական ուսումնասիրությամբ հնարավոր է լինում պարզել հետևյալը.*

Շիրվանշահ Իբրահիմը դաշնակցում է վրաց թագավոր Կոստանդին Բ-ի (1407—1411) հետ։ Վերջինս երկու հազար ընտիր հեծյալների գլխավորու-

---

** Թովմա Մեծոփեցին հաղորդում է, որ Օրբելյան Սմբատ իշխանը, խարվելով յուրայինների խորհուրդներից, գնում է Թավրիզ՝ Սուլթան Ահմեդի մոտ և նրանից մեծարվելով՝ պարգև է ստանում Անգեղակոթ գյուղը (Թ. Մեծոփեցի, էջ 72—73)։*

*** Տես* И. П. Петрушевский, *նշվ. աշխատ., էջ 159—161։*

թյամբ միանում է Իբրահիմին։ Ամենայն հավանականությամբ վրաց զորախմբում կային նաև հայկական զինական միավորումներ, ամենից առաջ Սյունիքից Վրաստան գաղթած Սմբատ Օրբելյանի ուժերից։*

Աշխատավոր լայն զանգվածների մասնակցությունն ու ակտիվ համակրությունն ապստամբության նկատմամբ պարզ երևում է այն դաժան հաշվեհարդարից, որ ապստամբությունից հետո կատարեցին Կարա-Կոյունլուները Հյուսիսային Ադրբեջանում և Հայաստանում։

*Թշնամի ուժերի բախումը տեղի ունեցավ 1411 թվականին Կուր գետի ափին, Չալաղանի դաշտում (մեր հիշատակագիրները ճակատամարտի վայրը կոչում են Վատնիարյան դաշտ)**։*

*Կարա-Յուսուֆը կարողացել էր հավաքագրել Հարավային Ադրբեջանի քոչվոր ավագանիների և ենթակա այլ երկրների ու շրջանների զորքերը, որոնք թվական մեծ գերակշռություն ունեին ապստամբների նկատմամբ։ Ճակատամարտը վերջացավ ապստամբների պարտությամբ։ Շիրվանշահ Իբրահիմը, իր որդիների և մերձավորների հետ միասին, վրաց Կոստանդին Բ. թագավորը, վրացական բանակի բազմաթիվ հրամանատարների հետ մեկտեղ գերի ընկան։ Կարա-Յուսուֆն անձամբ սպանեց Կոստանդին թագավորին։ Գազանաբար կոտորվեցին նաև վրաց բանակի երեք հարյուր զորահրամանատարներ***։ Կարա-Յուսուֆի զորքերը ավերեցին ու ամայացրին Ադրբեջանի և Հայաստանի շատ շրջաններ։*

Այս և նախորդ տարիների անցուդարձերի մասին ուշագրավ են Մաթեոս Մոնոզոնի 1417 թվականին շարադրած հիշատակարանի տվյալները, որ բերում ենք ստորև.

«Զի դառնացաւ ժամանակս,— գրում է նա,— և թագաւորեաց ոմն թուրքման անումն Ուսուֆ...։ Բռնացեալ Ուսուֆն, պատերազմեալ ընդ որդիսն նորա (Թամուրի)՝ երիցս անգամ, և սպան զնոսա, և մնացեալքն փախըստական գնացին յաշխարհն իւրեանց։ Իսկ զընական խանն Ահմատ կոչեցեալ, որ եկն կա-

---

* *Այս մասին ուղղակի վկայություններ չկան, բայց կան կողմնակի ակնարկներ։ Մինչև ապստամբությունը Կարա-Յուսուֆը բռնագրավել էր Սմբատի ռեզիդենցիան՝ Որոտան բերդը։ Սմբատն իր ընտանիքի ու ազատների հետ ապաստանել էր Վրաստանում, որտեղ և, վրաց արքունիքի կողմից, ստացել էր կալվածքներ։ 1412 թ. Վրաստանի Սփլիսցիխե (Գորիի մոտ, Ուփլիսցիխե) գյուղաքաղաքում շարադրված հիշատակարանի մեջ Սմբատը կոչվում է այդ վայրի իշխան. «Իշխանութեան տեղոյս պարոն Սմբատի և որդւոյ նորին պարոն Բէշքենի, որ ի յասամանէ չարին վտարեցան ի հայրենեաց իւրեանց» գրված է այնտեղ (էջ 133)։ Արդ, դժվար է պատկերացնել, որ հայրենազուրկ արված Սմբատն ու հայ մյուս իշխաններն անտարբեր մնային իրենց թշնամու դեմ պատրաստվող ապստամբության ժամանակ, և իրենց զինական ուժերով չմասնակցեին ապստամբությանը։*

** *Թվականի վերաբերյալ աղբյուրներում կան հակասական տվյալներ։ Ըստ Աբդուրբեզակ Սամարկանդցու ճակատամարտը տեղի է ունեցել 1412 թ. նոյեմբերի 6-ի—դեկտեմբերի 4-ի արանքում (Շաբան ամսին), իսկ Հասան Ռումլին նշում է 1414—15 սխալ թվականը (տես* И. П. Петрушевский, *նշված աշխատ., էջ 160)։ Մենք ընդունում ենք 1411 թվականը Մաթեոս վարդապետ Ջուղայեցու «Մեկնութիւն Գործոց առաքելոց» աշխատության 1411 թ. գրած հիշատակարանին համապատասխան։ Այնտեղ ասված է, որ այդ թվականին Կարա-Յուսուֆը «հարեալ զՎատնիարեան դաշտն, և զկալաւ տէր նորա (զՇիրվանշահն Իբրահիմ), և սպան զթագաւորն Վրաց Կոստանդին, և զբազումս գերի վարեալ» (էջ 119)։ Նույն թվականն է հայտնված նաև «Վրաց պատմության» դասագրքում (տես* „История Грузии", *մաս I, Թբիլիսի, 1950, էջ 301)։*

*** И. П. Петрушевский, *նշված աշխատ., 160—161։*

մամ իւրով ի Բաբելոնէ ի քաղաքն Թաւրէզ, և ի վերայ նորա եւս յարուցեալ Ուսուֆն, և սպան զնա։ Եւ մնացեալ աստանոր միայն ամիրայն Շորուանայ (Իբրահիմ), յորոյ յապստամբելն, երիցս անգամ եկն ի վերայ նորա Ուսուֆն. և ի վերջին գալն՝ ձեռակալ արար զնա և զրաղումս ի միջի նոցա. եսպան զԹշվառական Թագաւորն վրաց զԿոստանդին, որ եկեալ էր յօգնականութիւն իշխանին Շրրուանայ և զերկիրն առ աւար և գնաց։

Զայսչափ չարիս առ գլխաւորս աշխարհիս հասոյց Ուսուֆն, իսկ առ փոքունս զի՞նչ ասացից։ Զի վայրենացեալ զինուորք նորա ուր և հասանէին ոչ վընտանիսն գիտեն և ոչ զօտարսն, Թալանեն և կոփեն ըձեռնահասն իւրեանց, Թէ ի ճանապարհի, Թէ ի տան, Թէ առանձին, Թէ ի քաղաքի, և այսպէս ոչ գոյր Թիւ աղաղակի մերոյ» (էջ 194—195)։

Նույն Մատթեոսը նաև չափածո ողբ է հորինել աղետալի այս դեպքերի և Վրաց Թաղավորի սպանության առԹիվ.

«Սպանաւ արքայն Վրրացտանոյ՝
Այն Կոստանդին՝ գերեալն յոգւոյ,
Ի ձեռն չար ազգ Թուրքմենոյ,
Որոյ Ուսուֆ անուն գոլոյ։
Եւ մեղ էած սուգ գերագոյ...
Զի փոխանորդ զնա ունէաք,
Մեր մեծ ազգին, զոր կորուսաք...» (էջ 197)։

Շիրվանից հաղԹանակով ու մեծ ավարով վերադառնալով, Կարա-Յուսուֆը իր ռեզիդենցիան տեղափոխեց Ալաշկերտ և հաստատվեց այստեղ։

Հպատակ ժողովուրդներին տևականորեն կեղեքելու և հարստահարելու նպատակով Կարա-Յուսուֆը ստեղծեց հարկահանման ուժեղ ապարատ։ Հարկերը շատ ծանր էին. այդ մասին ուշագրավ վկայուԹյուններ կան ժամանակակից մի շարք գրիչների հիշատակարաններում։

1413 Թվականին Կարապետ գրիչը Մոկքի Ծպատա վանքում գրում է, որ «հարկապահանջուԹեամբ ազդս տապալի ի չար ազգէն նետողականի» (էջ 149)։

1414 Թվականին Հովսեփ գրիչը Կտուց անապատում գրում է, որ «հարկապահան[ջուԹեամբ ազգս տապալի՞]//], զի կարի ձանձրացեալ եմք յանարինաց բռնուԹենէ՝ ի քրԹէ, ի ԹաԹարէ և այլ ամենայն [պահանջողա՞ց]» (էջ 166)։

1417 Թվականին Հովանես գրիչը, Խիզանում, Կարա-Կոյունլուների մասին գրում է.

«Անումն է չար սոցա մեծիս,
Թուրքըստանաց խըրոխտ ղանիս,
Ղարա-Յուսուֆ սև մակագրիս,
Որ սևէ զազգս մեր և զազինս...
Նըւաճելով զքուրդ և զպարսիկս
Պահանջէ հարկ և տոկոսիս...» (էջ 200)։

Համանման տվյալներ հաղորդում են նաև այլ հիշատակագիրներ։

Այնուամենայնիվ, շնորհիվ այն բանի, որ Կարա-Յուսուֆի իշխանության հաջորդ տարիներն ընԹացան համեմատաբար խաղաղ պայմաններում, ժողովուրդը փոքր ինչ շունչ քաշեց և, նույնիսկ, որոշ վայրերում սկսվեցին շինա-

բարական ու վերանորոգչական աշխատանքներ։ 1412 թվականին պատմական Հայաստանի Արարատյան նահանգի տիրակալ կարգված Փիր-Հուսեին պարոնի կառավարչության ժամանակ վերաշինվեց Կարս քաղաքը՝ «Եղև շինութիւն և նորոգութիւն հռչակաւոր քաղաքիս Կարուց»,— կարդում ենք մի հիշատակարանի մեջ (էջ 134) և այլն։*

*Նշված ժամանակաշրջանում, ինչպես դիպուկ արտահայտվել է Թովմա Մեծոփեցին՝ «թէպէտ հարկապահանջութիւնն բաղում էր, սակայն խաղաղութիւնն առանց խռովութեան էր»**։*

Գրիգոր Խլաթեցին նույնիսկ հաղորդում է, որ Կարա-Յուսուֆի թագավորության ժամանակ «էր էմնութիւն և էժնութիւն» (էջ 280)։

Սակայն, իհարկե, այս տվյալներից պետք է օգտվել մեծ զգուշավորությամբ։

*Մենք տեղեկություն ունենք այն մասին, որ Կարա-Յուսուֆի տիրապետության սկզբին ցորենի կապիճը*** Հայաստանում (ավելի կոնկրետ՝ Խիզանի շրջանում) արժեցել է մոտ 33 դրամ****։ Իհարկե, դա բարձր գին չէ, եթե նկատի առնենք, որ եղել են անբերրիության, մորեխի և սովի տարիներ, երբ մեկ կապիճ հացը վաճառվել է նույնիսկ 200 դրամով (1401), մեկ մոթ***** հացը 800 դրամով (1422), կամ մեկ բեռ հացը 1000 դրամով (1428) և այլն։*

Սակայն, երբ համեմատում ենք Հայաստանի վիճակը այլ երկրների հետ, միանգամայն պարզ է դառնում, թե որքան դառն ու դժվարին է եղել հայ ժողովրդի դրությունը նշված ժամանակներում։ Հրատարակվող հիշատակարաններից տվյալ ունենք այն մասին, որ 1401 թվականին Ղրիմում հացի սղություն է եղել և գները բարձրացել են ու հացի կապիճը վաճառվել է 30 դրամով (էջ 30)։ (Նույն այդ 1401 թվականին Հայաստանում նույնպես սղություն է եղել և հացի կապիճը վաճառվել է 200 դրամով, այսինքն՝ վեցից ավելի անգամ թանկ, քան Ղրիմում)։ Ուրեմն, նույնիսկ սղության տարիներին, երբ հացի գները բարձրացել են, Ղրիմում մեկ կապիճ հացը վաճառվել է 3 դրամով ցածր Հայաստանի համար «էժնութեան» տարիների գներից։

---

* *Սահաթի որդի Փիր-Հուսեյնը և նրա Փիր-Ղաիբ և Աւգուլ որդիները հիշատակվում են 1411, 1412, 1414, և 1425 թթ. Բագարանում, Կարսում, Օշականում և Ջաղավանքում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում, որպես նշված վայրերի պարոններ (տես էջ 124, 134, 162, 335)։*

** *Թ. Մեծոփեցի, էջ 73։*

*** *Կշռի չափ։ Ուսումնասիրողները հակասական արժեքներ են վերագրում կապիճին։ Ըստ Եղիազարովի հաշիվների՝ կշռում է 3,75 փթի (150 կգ.) (տես* С. А. Егиазаров. Исследования по истории армянского права, публичного и частного, вып. I, Киев, 1919)։ *Ըստ* И. Фаас-*ի՝ կշռում է 1,25 լիտրի (տես* „Записки коллегии востоковедов", том I, Ленинград, 1925, стр. 492)։ *Ըստ Հ. Մանանդյանի՝ կշռում է 1,224 կիլոգրամի կամ 979,5 գրամի (տես «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում», Երևան, 1930, էջ 90)։*

Կարծում ենք, որ շատ ավելի հավանական ու ընդունելի պետք է համարել Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանի» երկրորդ հատորի (Երևան, 1944) էջ 512-ում բերված տվյալը, ըստ որի կապիճը «միջնադարյան գեղջաբանության մեջ գործածվող կշիռ է, հավասար 2913, 240 գրամի»։ Այլ խոսքով, կապիճը մոտավորապես կշռում է 3 կիլոգրամի։

**** XIV—XV *դդ. Իրանում և Անդրկովկասում դրամը պարունակում էր 1,5 գր. արծաթ։*

***** *Մոթը կշռում է 29 կգ. 376 գրամի։*

Բառացի չպետք է հասկանալ նաև հիշատակարանների տվյալները Կարա-Յուսուֆի տիրապետության հետագա տարիների անդորրության ու խաղաղության մասին։

1416 թվականին Կարա-Յուսուֆը արշավեց Վրաստան և գրավելով Ախալցխան, անխնա կոտորեց բնակչությանը, ավելի քան 10 հազար գերի վերցրեց։ Այս մասին ուշագրավ տվյալ է հաղորդում Գրիգոր գրիչը, Կապոսի վանքում ընդօրինակած Գր. Տաթևացու «Քարոզգրքի» հիշատակարանում։ Նա գրում է. «Այլ և գնացեալ ի տունն Վրաց, և առեալ զքաղաքն Յաղլծխա, և զամենեսեան, առհասարակ, զարսն ի սուրն սուսերի մաշեալ, և զկանայս և զմանկունս գերի վարեալ» (էջ 186—187)։

Կարևոր են նույն արշավանքի մասին նաև Գրիգոր Խլաթեցու հայտնած տվյալները.

«Եզև գընալ խան Ոււսուֆին
ՅԱխըլծըխէ Վրաց քաղքին,
Արար զաղայ և գերութիւն,
Անթիւ վնաս և չարութիւն։
Այս էր ի թիւ ութհարիւրին,
Այլ և վաթսուն և հինգ ամին (1416)։
Իսկ զգերիսըն զոր առին,
Յաւտար երկիր վըտարեցին՝
Բաղդատ ՚ւ ի Մըսըր հասուցին
՚Ի ի Խորասան Պարսկացտանին.
Ոչ մի հազար կամ հինգ վեցին,
Այլ քան ըզբիւրըն էր աւելին,
Նոյն սպանելոցն էր բազմութիւն
Եւ անհամար, որ ոչ թըւին» (էջ 280—281)։

1418 թվականին Կարա-Յուսուֆն արշավեց Հյուսիսային Միջագետք՝ Ակ-Կոյունլու Կարա-Յուլուք Օսմանի դեմ և պարտության մատնեց նրան։ Այնուհետև նա մտավ Ասորիք, բայց լսելով իր Փիր-Բուդաղ որդու մահվան լուրը՝ հետ վերադարձավ։

1419 թվականին, ըստ երևույթին, Շահրուխի հետ գաղտնի պայմանավորվածությամբ, Ակ-Կոյունլու Օսմանը հարձակվեց Կարա-Յուսուֆի պետության արևմտյան շրջանների վրա և գրավեց Երզնկան։ Քիչ անց, Արևելքից զինական մեծ ուժերով հարձակում սկսեց նաև Միջին Ասիայի և Իրանի մեծ մասի տիրակալ սուլթան Շահրուխը։ Կարա-Յուսուֆը դուրս եկավ նրա դեմ, բայց մահացավ արշավանքի ճանապարհին, 1420 թ. նոյեմբերին։

4

Կարա-Յուսուֆի մահվամբ նրա զորքի մեջ մեծ խուճապ է ստեղծվում. «Զի շփոթեցաւ զաւրքըն չարին և յիրերաց փախուստ առին»,— գրում է Գր. Խլաթեցին (էջ 281)։ Երեք օր նրա դիակը անթաղ է մնում «իսկ ետ երից աւուրց.— շարունակում է Խլաթեցին,— եկին, բարձին՝ յԱրջէշ բերին»։

Այնուհետև սկսվում է անկազմակերպ այդ զորքի ավերածությունները ու խժդժությունները իրենց անցած ճանապարհին։ Այդ մասին «Յիշատակարան աղետից»-ում կարդում ենք.

«Իսկ զաւրք չարին՝ Միր-Ուսուֆին
Ընդ որ գնացին՝ աւերեցին» (էջ 281)։

Մի այլ ժամանակակից՝ Հովանես գրիչը, Լիմ անապատում ընդօրինակած ավետարանի հիշատակարանում, հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում նույն դեպքերի մասին.

«Ցամի ութհարիւր և եւթանասուն թուականի Հայոց (1421), յետ մահուան Ղարա-Յոմ[ս]ուֆին,— գրում է նա,— եղև խռովութիւն և յոյժ սասանումն ընդ ամենայն երկիրս Հայաստանեայց, զի հեծելազաւրքն ամենայն շփոթեալ՝ զմիմեանս հարկանէին և կողոպտէին։ Որ և գունդ մի ի զաւրացն հատեալ, զորս փաւռնակ կոչէին՝ հինգ հազար տուն, և եկեալ հասին յերկիրն Քաչբերունւոյ, և բազում աւար և գերի առին» (էջ 254)։

Կարա-Կոյունլուների բանակի ներքին կառուցվածքի ուսումնասիրության համար այս վկայությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Ինչպես պարզվում է, բանակի մեջ ընդգրկված գնդերից յուրաքանչյուրը թուրքմենական Կարա-Կոյունլու ցեղախմբի բաղկացուցիչ ցեղերից մեկն է եղել։ Փոռնակ վաչկատուն ցեղը, ինչպես և մյուս ցեղերը, գտնվելիս է եղել Կարա-Յուսուֆի գործող բանակում իր ընտանիքներով ու գույքով՝ բաղկացած լինելով հինգ հազար տնից։ Գալով Քաջբերունիք, նրանք՝ «տնով ու խոստակաւք» սփռվում են ողջ գավառով մեկ և մեծ ավերածություն գործում։ «Եւ զչարչարանս և զաղետս կսկծանացն ո՞ կարէ ընդ գրով արկանել, զոր առնէին ընդ տառապեալ ազգս քրիստոնէից է. (7) ամիս բոլոր»,— վշտալի սրտով բացագանչում է մեր հիշատակագիրը։

Սուլթան Շահրուխը իր «երեսուն և հինգ բիւր» (350 հազար) զորքով մըտնում է Կարա-Կոյունլուների տիրապետության սահմանները և հասնում Խլաթ։ Կարա-Յուսուֆի խուճապահար զորքերը խուսափում են կռվի բռնվելուց և փախչում «ի ներքին երկիրն»։

1421 թվականին Կարա-Յուսուֆի Իսքանդար որդին պետության արևմտյան մասում պատրաստվում է Շահրուխի դեմ դուրս գալու։ Սակայն, մինչ այդ, նա պարտություն է մատնում Շահրուխի դաշնակից Ակ-Կոյունլու Օսմանին և 1421 թ. մայիսին, 150 հազար հեծյալ զորքով, անցնում է Արաքսը և պատերազմական գործողություններ սկսում Շահրուխի դեմ։ Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ալաշկերտի դաշտում, Բագվանի մոտ, 1421 թ. օգոստոսի 1-ին։ Կարա-Կոյունլուները՝ Իսքանդար և Սպանդիար (Իսպենդ)* եղբայրների գլխավորությամբ, խայտառակ պարտություն են կրում և փախչում Մերդինի ու Մոսուլի կողմերը։

Քաղաքական այս անցուդարձերի ու բախումների մասին կարևոր տվյալներ են հաղորդում մեր հիշատակագիրներից Կարապետ գրիչ Աղեթցին և Գրիգոր Խլաթեցին։

«Շահըրուխ չաղաթայն,— գրում է Կարապետը,— ... եկն ի Խլաթ և փախոյց զթուրքմանն, և շատ պակասութիւն եղև մեզ և շատոց, զի թուրքմանն զառաջինն փախեաւ ի ներքին երկիրն, և անտի դարձեալ եկն ի վեր թուրքմանն բազում զաւրաւք՝ Ճ. և Ծ. (150) հազար ձիաւորաւք. և խիստ խայտառակ կոտորեցան ի չաղաթի զօրացն, ի գաւառն Վաղաշկերտոյ, մերձ Բագւանայ։ Բայց

* Թ. Մեծոփեցին Սպանդիարին կոչում է Ասպահան։

զի ողորմած էր Շահրուխըն և քաղցր էր բարուքն՝ թոյլետ նոցա փախչել մազապուրծ, և զօրս դերեցան՝ ազատ արար» (էջ 250)։

Տեղի ունեցած ճակատամարտի և Կարա-Կոյունլուների պարտության մասին Գրիգոր Խլաթեցին գրում է հետևյալը.

«Քանզի խրտան նախ և փախեան
Եւ յետ դարձեալ կոտորեցան,
Ըստ արժանեացն ի ձեռս անկան
Շահըրուխին և մատնեցան։
Շատք ի սըրոյ նոցա մեռան,
'Ի այլքըն փախեան և գերեցան,
Ձիոց կոխան սատակեցան,
Խաղք խայտառակ թալանեցան,
Ի սար 'ւ կ ձոր փախըստական։
Ընդ որ փախեան հալածեցան
'Ի ինքեանք միմեանց դահիճ դարձան» (էջ 282)։

Խլաթեցին նույնպես հայտնում է, որ Շահրուխը «ասախ արար, հուքմ և հրաման ոչ կոտորել զամենեսեան», այլ թույլ տվեց Կարա-Կոյունլուների ջախջախված բանակի մնացորդներին՝ փախչել։ Երկու հիշատակագիրներն էլ Շահրուխի այդ արարքը բացատրում են նրա «քաղցր բարքով», «ողորմածությամբ» ու «արդարադատությամբ»։

Սակայն Շահրուխի համեմատաբար մեղմ քաղաքականությունը Կարա-Կոյունլուների նկատմամբ բացատրվում է, նախ և առաջ այն հանգամանքով, որ նա Հայաստանն ու Հարավային Ադրբեջանն իր ձեռքում պահելու համար չուներ համապատասխան զինական ուժեր ու հնարավորություններ։ Բացի այդ, նա ստիպված էր հաշվի նստել նաև իր ժամանակավոր դաշնակիցների՝ Ակ-Կոյունլուների ու Շիրվանշահերի հետ, որոնք չէին կարող հանդուրժել Թամուրյանների հզորացմանը անմիջապես իրենց սահմաններին կից*։ Այսպիսով, Շահրուխը ստիպված էր բավարարվել իր գերիշխանությունն ընդունել տալով Հայաստանի ու Ադրբեջանի նկատմամբ, և 1421 թվականի աշնանը, ինչպես հաղորդում է Գր. Խլաթեցին՝

«Գնաց դարձաւ ի Խորասան,
Երթեալ յաթոռն իւր բընական՝
Ի Սըմըրղընդ հայրենական»։

Պատերազմական այս գործողությունները, որ հիմնականում տեղի էին ունենում հայկական հողի վրա, մեծ զրկանքներ ու աղետներ պատճառեցին հայ ժողովրդին։ Այս մասին իրենց հիշատակարաններում բազմաթիվ անմիջական տվյալներ են հաղորդում գրչի համեստ աշխատողները։

Գրիգոր Խլաթեցին գրում է, որ՝

«Կին և տըղայքն ի թիւ չանկան,
Ջոր գերեցան և կոխեցան» (էջ 282)։

---

* Այս մասին տես մանրամասն И. П. Петрушевский, Նշվ. աշխատ., էջ 163—164։

Սարգիս գրիչն ընդօրինակում է իր ձեռագիրը Շահրուխի զորքերից ահաբեկված «անհուն դառնութեամբ՝ տեղաց ի տեղս փախչելով, ի յաւտարութիւն ընթանալով, անհանգիստ, քաղց[ած] և ծարաւ» (էջ 260)։

Հովհաննես գրիչն իր կիսատ թողած ձեռագրի ընդօրինակությունը շարունակում է «ի քարանձաւս վիմանց լերանց, յորում փախուցեալ էաք [յերկիւղէ] անհուն զօրաց չաղաթային և թուրքաց, յորում նեղէին զմեզ յերկուց կողմանց» (էջ 255)։

Գրիգոր գրիչը հաղորդում է, որ ընդօրինակել է ձեռագիրը «ի թվ. ՊՀ. (1421), յամի յորում եկն ազգն նետ[ող]աց և աւերեաց զբոլոր ա[շխարհս] Հայաստանեայց» (էջ 256) և այլն, և այլն։

Շահրուխի վերադարձից հետո, կրկին անգամ Հայաստանում երեում է Կարա-Յուսուֆի կրտսեր որդի Սպանդիարը։ Նա մեծ ավերածություններ է գործում Արճեշի և Արծկեի շրջաններում, քանդում է Բասենի ու Ավնիկի ամրությունները և հատկապես մեծ վնասներ է պատճառում Կարին քաղաքին («ԶԿարնոյ քաղաքըն զԱրզրում, քան զամենայն խիստ աւերեց»,— գրում է Գր. Խլաթեցին)։ Ապա նա արշավում ու գրավում է Թավրիզը։ Սակայն շուտով նրա դեմ է դուրս գալիս Իսքանդար եղբայրը։ Կարա-Յուսուֆի որդիների միջև հաշտություն է հաստատվում. Ջհանշահը ենթարկվում է Իսքանդարին, Սպանդիարը բավարարվում է արաբական Իրաքով։*

Եվ այսպիսով, Իսքանդարին հաջողվում է վերահաստատել Կարա-Կոյունլուների պետությունը՝ իր նախկին սահմաններով։ 1428 թվականին Կարապետ գրիչը, Իսքանդարի պետության սահմանների մասին խոսելիս, հայտնում է, որ նա «տիրեաց Պարսից և Բաբելացւոց, Հայոց և Միջագետաց Ասորւոց, յԱրարաթեան տանէն Հայոց՝ մինչ յԵզնկայն, ի Մերդին, ի Բաղդատ, ի Սալթանիայ, և ի Գանձակ շահաստանն Թաւրէզ, և մինչ ի գետն Քուռ։ Զայս ամենայն ի բռին ունէր Իսքանդար Իմիր[զ]այն» (էջ 380—381)։

5

Հաստատվելով գահի վրա, Իսքանդարը, 1422—1427 թթ. ընթացքում, համառ ու երկարատև պայքար է ծավալում իր պետության սահմաններում գտնվող քրդական դինաստիաներով կառավարվող կիսանկախ ամիրություններին ու ֆեոդալական տիրույթներին վերջ տալու նպատակով։

Կիսանկախ այդ ամիրությունները, որ հաստատվել էին Հարավային Հայաստանի գավառներում՝ Բաղեշում, Խլաթում, Ոստանում, Վանում, Խիզանում և այլ վայրերում, իրենց կենտրոնախույս ձգտումներով և տեղական շահերով հաճախ բախվում էին կենտրոնական իշխանությանը։ Վտանգի պահին կամ քաղաքական աննպաստ պայմաններում նրանք լքում էին իրենց սյուզերենին և հաճախ հանդես գալիս նաև թշնամիների բանակում։

Իսքանդարի համար պարզ էր, որ Կարա-Կոյունլուների ընդարձակ պետության ամրապնդման և արևմտյան սահմանների ապահովման համար ան-

---

** Թ. Մեծոփեցին հաղորդում է, որ Սպանդիարը (Ասպահան) իրեն բաժին ընկած երկրամասում մեծ անգթություններ է գործում. «Աւերեաց և գերեաց զՄօսլ և զՍնջար և զԹկլադ և զամենայն աշխարհն, և ապա եկն ի վերայ Ջիզիրու՝ անթիւ արիւնս արար։ Եկն ի վերայ Մերանայ և սպան երեսուն քրիստոնեայս» և այլն (Թ. Մեծոփեցի, էջ 82)։*

հրաժեշտ է նախ և առաջ սանձել կիսանկախ ամիրների կենտրոնախույս ձըգտումները։

Ամիրությունների դեմ Իսքանդարի ձեռնարկած արյունահեղ պայքարի ծանրությունն ընկնում էր առաջին հերթին հայ աշխատավոր գյուղացիության վրա, որը հանդիսանում էր այդ շրջանների հիմնական արտադրող ուժը։ Պատկերացում կազմելու համար, թե ինչ տառապանքներ ու զրկանքներ կրեց հայ ժողովուրդն այդ համառ կռիվների ընթացքում, անհրաժեշտ է ծանոթանալ ժամանակակից հիշատակագիրների հաղորդած ուշագրավ տվյալների հետ։

Իսքանդարը՝ «ի տարելից իւր փախըստին, որ ի ձեռացն չաղաթին», այսինքն՝ 1422 թ. օգոստոսին, ինչպես հաղորդում է նշանավոր գրիչ Թովմա Մինասենցը իր ընդարձակ հիշատակարանում՝ «եկն բազում զաւրաւք ի վերայ Խըլաթայ, և բազում անձինք քրիստոնէից ի գերութիւն վարեցան ի ձեռաց նոցա, և բազումք սրոյ ճա[րակ եղեն]» (էջ 375)։

Նույն արշավանքի մասին ավելի մանրամասն խոսում է Գր. Խլաթեցին։ Նա հաղորդում է, որ Իսքանդարը՝

«Հեծել արար շատ բազմութիւն
'Ի եկն ի վերայ Խլաթայ բերդին.
Բերդին վնասել ոչ կարացին,
Այլ զքաղաքն այրեցին.
Ի յԱղուվանք արշավեցին
Եւ չար ոճիրս անդ գործեցին,
Ըզբերդն առին, կոտորեցին,
Շատ քրիստոնեայք անդէն սպանին,
Քան զերկերիւրն այլ աւելի,
Զորս սըրոյ ճարակ տըւին.
Թոռ զորս ի ծովըն խեղդեցան
Եւ քարավէժ եղեալ կորեան» (էջ 283—284)։

Արշավանքը չի սահմանափակվում Խլաթի շրջակայքով, Գր. Խլաթեցին հայտնում է, որ հինգ հարյուր գերվածների թվում, բացի Խլաթի մերձակա գյուղերի՝ Ողաքի, Ազառի, Աղեթի բնակչությունից, կային նաև մարդիկ Խիզանից ու Բաղեշից։ «Յիշատակարան աղետից»-ի հեղինակը որոշակի տվյալ է հաղորդում նաև արշավանքի դրդապատճառի մասին.

«Այս ամենայն ի պատճառէ
Այն Շամըզդին ամիրայէ...
Որ նա արար հպարտութիւն
Ջհնազանդեցաւ Ըսքանդարին» (էջ 284)։

Կարապետ գրիչ Խլաթեցին 1422 թվականին գրած իր հիշատակարանում հայտնում է, որ ընդօրինակությունը կատարել է «ի ժամանակս նեղ և անձուկ, որ կանք փախուցեալ ի յամուրս և ի ծերպս վիմաց ի յահէ անօրինաց, բազում աշխատութեամբ և տառապանօք» (էջ 291)։ Հասկանալի է, որ Կարապետ գրչի վիճակում էր գտնվում Խլաթի շրջակայքի բնակչության այն մասը, որին հաջողվել էր խուսափել Իսքանդարի զորքերից և ապաստանել լեռներում։

1423 թվականին Իսքանդարը «բազում զաւրաւք» հարձակվում է Ավրեքի վրա և գրավում այն։ Թովմա Մինասենցը հայտնում է, որ իրենց իշխան Մելիք Մահմադը մեծ ընծաներով գնացել է նրա մոտ «ի գործ պատերազմին», այսինքն՝ պատերազմելու համար նրա կողմում, սակայն Իսքանդարը թունավորելով սպանել է նրան։

1424 թվականին Իսքանդարը «խաբանաւք» իր մոտ է հրավիրում Ոստանի ամիր Ահմադին և ամիր Շամս-ադ-դինին, որը Կարա-Յուսուֆից սոյուրգալական իրավունքներով ստացել էր Խլաթի, Մուշի, Բաղեշի և Խնուսի շրջանները։ Շամս-ագ-դինը սպանվում է Խլաթում, իսկ ամիր Եզգինի որդի ամիր Ահմադին, որին ժամանակակիցները կոչում են «ամիրապետ Ոստան քաղաքի, սուլթան Ահմատ», Իսքանդարը շղթայում, ապա սպանել է տալիս Երնջակի բերդում։ Նույն թվականին նա պաշարում է Վանի անառիկ համարված բերդը և մեծ ավերածություններ է գործում շրջակայքում։

Աղետալի այս դեպքերը գրավել են ժամանակակից շատ գրիչների ուշադրությունը. լսենք նրանցից մի քանիսին։

Ոմն խոջա Գորգ, որ 1424 թվականին, վճարելով 1500 դրամ, հետ է գնել Իսքանդարի զորքերի կողմից գերի վերցված մի ավետարան, իր հիշատակարանում գրում է. «Եւ յայսմ ամի (1424)... եկն Սքանդարն յերկիրն Ըռշտունեաց բազում հեծելօք, և զՎանայ բերդս խսարեաց, և շատ աւեր էած՝ զոր սպանմամբ, և զոր գերութեամբ, և զոր այրելով։ Եւ զեկեղեցիքն կործանեցին, և զգրեանքն գերի վարեցին և բերին ի քաղաքն Սղերտ...» (էջ 467)։

Նշանավոր ու մեծավաստակ գրիչ Թովմա Մինասենցը, 1425 թվականին Աղթամարում ընդօրինակած ավետարանի հարուստ բովանդակությամբ հիշատակարանում, Իսքանդարի այս արշավանքի մասին կարևոր մանրամասնություններ է հաղորդում.

«Բոլոր աշխարհս Հայոց ի յառ և ի յաւարի, ի սուր և ի գերութիւն մատնեցաւ վասն ծովացեալ մեղաց իմոց, ի ձեռս անաւրէն և անիծեալ ազգին նետողաց. վասն զի այս բոլոր տարի մ՝ է, որ չար բռնաւորն ամիրզա Սքանդարն՝ տէրն Թավրիզոյ՝ ազգաւ Թուրք, զամիրապետն Ոստան քաղաքի՝ զսուլտան Ահմատն ըմբռնեալ է և երկաթի կապանաւք ի յԱլընջոյ բերթն ի բանտի է եդեալ, խնդրելով ի նմանէ զանառիկ ամրոցն նորա. և զերկիրս Հայոց՝ զԱղբակ, և զՔարպահ, և զՈստանայ երկիրս, մինչ ի Բաղէշ անմարդաբնակ արարեալ։ Եւ բնակիչք աշխարհիս մերկ և բոկ և սովալըլուկ տարաշխարհիկ եղեալ, և ոմանք յաստուածախնամ կղզիս անկեալ, ա[պաւին]ելով յաստուած և յամենայաղթ զաւրութիւն սուրբ Խաչիս՝ ազատեցան ի գերութենէ չար բռնաւորին» (էջ 326)։

Այս տարիներին Վանա լճի շրջակայքի բնակչությանը բաժին ընկած աղետներին ավելանում է նաև սաստիկ մահտարաժամը, որը նույնպես մեծ հունձ է կատարում։

*1425 թվականին Իսքանդարին հաջողվում է գրավել Վանը * և այլ ամրու-*

---

* Վանի գրավման թվականի վերաբերյալ հիշատակագիրները չեն միաբանում։ Մի ձեռագրի հետագա ստացող ոմն Կիրակոս, իր հիշատակարանում գրում է, որ «ի թվաբերութեանս Հայոց ՊՀԳ. (այսինքն՝ 1424-ին) Սկանդար ղանն զՎանա բերթն էառ... և բազում քրիստոնէք հալածական եղան ի սար աշխարհս»։ Եվ ընդհակառակը, Կարապետ Հիզանցու 1425 թ. հիշատակարանից երևում է, որ Սքանդարը հիսուն օր պաշարել է Վանի ղղյակը, բայց չի կարողացել գրավել։ Նա գրում է. «Իսքանդարն ըմբռնեաց զամիրայն մեր զսուլ-

թյուններ Վասպուրականում։ Թովմա Մինասենցի դիպուկ արտահայտությամբ նա «մլքում», այսինքն՝ սեփականում է քուրդ ամիրների տիրույթները։

1426 թվականին Իսքանդարը պաշարում է Բաղեշը, բայց չի կարողանում վերցնել։ Ապարդյուն պաշարումը շարունակվում է մինչև 1428 թվականը։ Բերկրիի վանքերից մեկում 1426-ին շարադրած իր հիշատակարանում Պետրոս գրիչը հայտնում է, որ Իսքանդարը այս երրորդ տարին է, ինչ դալիս ու ավարի է մատնում ողջ երկիրը. «Եւ մեք փախըստական եղաք ամենեքեան առհասարակ՝ հայրապետք և վարդապետք, կրօնաւորք և քահանայք, տանուտերք և տանտիկնայք, ի յաւտար աշխարհ շրջեցանք և ի դռնէդուռն աւտարացանք» (էջ 353)։

Հրատարակվող ժողովածուի մեջ կան համանման բովանդակությամբ այլ հիշատակարաններ ևս։

1426 թվականին Իսքանդարը պատերազմական գործողություններ է սկսում նաև իր պետության արևելյան մասերում։

Նույն այս թվականին վերջ է տրվում Հայաստանում իր գոյությունը պահպանած միակ հայկական ֆեոդալական տիրույթին՝ Մակու բերդին, ուր իշխում էր հայ իշխան Նուր-ադ-դինը։

1426 թվականին Թադեոս առաքյալի վանքում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում վանահայր Գրիգորը (ամենայն հավանականությամբ հետագայում կաթողիկոս դարձած Գրիգոր Մակվեցին) ցնծությամբ է նշում Մակվի հայկական իշխանության անկման փաստը։

«Ի սոյն ամի,— գրում է նա,— ... էառ Ըսքանդար անուն ոմն բռնաւոր՝ որդի Ղարա-Իւսուֆին՝ զանառիկ բերդն Մակուայ, և զերկարնակ ազգն ախթարմայից տարագիր և տարաշխարհ արար... և ետ (զբերդն) շխ Բայազիթ ումն այլազգոյ» (էջ 353)։

Գրիգորը գոհունակությամբ նշում է, որ վանքի նկատմամբ այդ շեխ Բայազետը տրամադրված է շատ ավելի բարյացակամորեն, քան հայ կաթոլիկ Նուր-ադ-դինը։

Մակվի անկումը, սակայն, ուրախություն պատճառեց միայն Թադեոս առաքյալի վանքի վանահորը և նրա նմաններին, որոնք իրենց նեղ տնտեսական շահերը վեր էին դասում ամեն ինչից։

«[Անմխի]թար կըս[կիծ է]հաս բոլոր ազգացս քրիստոնէից,— գրում է Մակվի անկման առթիվ Թովմա Մինասենցը,— զի բոլոր աշխարհացս այն մին բերդն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից. և այն ևս առաւ ի մէնջ» (էջ 376)։

1427 թվականին Իսքանդարը հարձակվում է Շիրվանի վրա և ստիպում Շիրվանշահ Խալիլուլլահ Ա-ին (1417—1462) ենթարկվել Կարա-Կոյունլուներին։

Եվ այսպես, 1422—1427 թթ. ընթացքում, Իսքանդարը, մեծ համառությամբ ու անգթությամբ, մեկը մյուսի ետևից վերջ է տալիս Հայաստանի հարավային

թան Ահմատն, և եկեալ բազում զօրօք ի վերայ մեր, և յիսուն օր խսարեաց զանառիկ զգեակս Վան, և ոչ կարաց առնուլ զսա, և սուտ երդմամբ գնացեալ ի Դաւրէժ, և ի գարնանային աւուրսն առաքեաց զզօրս և գերեաց և աւերեաց զերկիրն Ռշտունեաց» (էջ 328)։

Ըստ երևույթին Վանի գրավումը տեղի է ունեցել Կարապետ Հիզանցու հիշատակարանի գրությունից հետո։

շրջաններում գոյություն ունեցող կիսանկախ քրդական ու հայկական համարյա բոլոր ֆեոդալական իշխանություններին և կատարում նոր նվաճումներ։

Իսքանդարը այդ թվականներին ձեռնարկած իր արշավանքներով, ինչպես հաղորդում է բազմարդյուն հիշատակագիր Թովմա Մինասենցը, «տիրեաց աշխարհիս մերում, և էառ բռնութեամբ զանառիկ ամրոցք աշխարհիս մերոյ, այս է՝ զանմատչելիս և զանկոխս ոտից թշնամեաց և զտեղիս ապաստանի բոլոր աշխարհացս՝ զկղզիս Աղթամարայ, և զանառիկ ամրոցս և զմայրաքաղաքս երկրիս զՈստան, և զպարանոցատանջն զԱմուկ, և մինչ ի Հէշատ և ի Նըւան՝ բոլոր աշխարհս բռնակալեաց ընդ ձեռամբ իւրով և ընդ իշխանութեամբ։ Եւ բազում և անթիւ չարիս և դառնութիւնս անասելիս և անպատմելիս լեզուաց անցոյց ընդ աշխարհս մեր, զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ ընդ գրով արկանել ղաւէր աշխարհիս մերոյ և [կործա]նումն բնակչաց սորին» (էջ 374)։

6

Ներքնապես ուժեղ ու կենտրոնաձիգ պետություն ստեղծելու իր պլաններն իրագործելու նպատակով, բացի կիսանկախ ամիրություններին վերջ տալու ուղղությամբ կատարած իր համառ քայլերին, Իսքանդարը ձգտում էր նաև օգտագործել Կարա-Կոյունլուների պետության մեջ էթնիկապես կարևոր տեղ գրավող հայ ժողովրդի տիրող շերտերին։ Նա իրեն կոչում էր «Հայաստանի թագավոր» (Շահի-արմեն), պետության բարձր պաշտոնների էր առաջ քաշում իրենց տիրույթներից զրկված հայ ֆեոդալական անվանի տների որոշ ներկայացուցիչների*, իր զորքերի մեջ հավաքագրում էր նաև հայ ռազմիկների և այլն։

Բացի այդ, նա երբեմն նույնիսկ սիրաշահում էր Սյունիքի ու Արարատյան դաշտի որոշ վայրերի հայ բնակչությանը։ Այսպես, օրինակ, Մատթեոս Ագուլեցի գրիչը, 1425 թվականին շարադրած իր հիշատակարանում, Իսքանդարի մասին ասում է, որ իբր նա «յոյժ ողորմած էր ազգիս Հայոց, եւ առաւել մեր գեղիս Ագուլեաց, իւր խաս արար, և մէկ տարի թարխան արար» (էջ 337)։

Կարծես հենց այս հիշատակագրության հեղինակին նկատի ունի Թովմա Մեծոփեցին, երբ իր «Պատմության» մեջ գրում է, թե «ոգէտք ոմանք վասն սակաւ սիրելոյն զհաւատացեալս թէ ազգ բարի է՝ երկարութիւն կենաց խընդրէին (Իսքանդարայ), որ և կարծիք է մարգկան, թէ քան զաստեղս աւելի մարդիկ մեռեալ եղեն վասն սորին»**։

---

* Ինչպես ցույց է տալիս Պատմության ինստիտուտի գիտական աշխատող ընկ. Հ. Փափազյանը «Ագրարային հարաբերությունները Երևանի խանության մեջ XVII դարում» իր դիսերտացիոն աշխատության մեջ, այդպիսիներից էր Օրբելյան ֆեոդալական տան շառավիղներից իշխան Սմբատի թոռ Բեշքենի որդի ամիր Ռուստամը, որը 1432 թ. վաճառեց (ավելի ճիշտ վաճառքի անվամբ նվիրաբերեց) Էջմիածնի վանքին, Էջմիածին, Աշտարակ, Բաթռինջ, Նորագավիթ, Աղավնատուն և Թանիս-Քիրաշլի գյուղերը։ Վաճառքի կալվածագրի հայերեն թարգմանության մեջ (պահպանվել է նաև բնագրի պարսկերեն պատճենը) ամիր Ռուստամը մեծարված է հետևյալ տիտղոսներով՝ «Բարձրիշխան, հռչակավոր, բարձրաստիճան, բարձրապաշտոն մեծ վեզիրն, մերձաւորագոյնն մեծին փադիշահի և նախամեծարեալն ի պետութենէ. գլխաւոր արքունի խորհրդական և հաւատարիմ արքունեաց, արժանին ամենայն գովասանաց ի[...]բոլ[...] երևելի ծագմամբ՝ Ամիր-Ռուստամ՝ որդին Ամիր-Միշկինայ (այսպես), որդի Ամիր-Սումբատայ (տես Հ. Աբրահամյան, «Կալվածագրեր», Երևան, 1941, էջ 12)։

Հ. Փափազյանը ապացուցել է, որ «Ամիր-Միշկինայ» անունը աղավաղված է, և բնագրում եղել է «Ամիր-Բեշքենայ»։

** Թ. Մեծոփեցի, էջ 105։

1425 թվականին, Իսքանդարի կողմից ոչնչացվող քուրդ ամիրների պաշտպանության դիմակի տակ, Վանա լճի հյուսիսային շրջաններում հանդես է գալիս Ակ-Կոյունլու Կարա-Յուլուք Օսմանը, որը մեր հիշատակարաններից մեկում կոչվում է «թագաւոր ամենայն Միջագետաց, պարոնաց պարոն շահ Օթման Պահատուր» (էջ 403)։ Նա Կարա-Կոյունլուների արևմտյան սահմանամերձ շրջանների վրա հարձակում էր սկսել տարիներ առաջ։ 1422 թվականին նա տասներեք շաբաթով պաշարել էր Երզնկան և մեծ ավերածություններ գործել շրջակայքում։

Այս մասին ժամանակակից գրիչ Սիմեոնը հայտնում է հետևյալը.

«Երեկ Աւթմանն ի վերա մեր և դառն աւարեց, և ԺԳ. (13) շաբաթ ի վերա քաղաքիս նստաւ և զվաստակն կերցուց, և ով որ ի ձեռք անկաւ՝ զոմն սպանեց և զոմն ծառա բռնեց և խիստ խսարեց։ Եւ ով որ ի յափ ընկաւ՝ նա բերին ծախեցին. և հանց խսարեց, որ մոթ հացն ԲԾ. (800) դրամ եղաւ և մոթ աղն ի ՌՄ. (1200) դրամ. և ոնց որ յԱնի անկ եղաւ» (էջ 289—290)։

Ոմն Ավետիք 1425 թվականին շարադրած հիշատակարանում արձանագրում է, որ Երզնկան երեք տարի պաշարումից հետո գրավված է Օսմանի կողմից. «Եկն տէրն Ամթայ ի վերայ Եզնկիս,— գրում է նա,— և ... հրդեհեաց զգեղասանսն առհասարակ և զվանօրայս...։ Եւ երեք ամ ի խսար պահեաց զքաղաքն, և առեալ ապա խաղաղացոյց» (էջ 344)։

Գրավելով Երզնկան, Օսմանը, դաշնակցելով Իսքանդարի կողմից սպանված Բաղեշի ամիր Շամս-ադ-դինի եղբայր Սավալանի գլխավորած Ռոժիկ քրդերի հետ, մտնում է Վանա լճի հյուսիսային գավառները։

«Եւ եկ[ի]ն ի վերա երկրին արիւնակեր գազանքն՝ զօրքն Օթմանին և հեծեալքն Ռոժկանին, և առ և գերի արարին զերկիրս զորս և կարացին, և շատոց արիւն հեղին» (էջ 329),— գրում է Խառաբաստի վանքում Հակոբ գրիչը։ Նա հայտնում է նաև, որ զոհվածների թվում է գտնվում «մեծ րաբունապետ», նշանավոր գրիչ և հիշատակագիր Գրիգոր Ծերենց Խլաթեցին։

Նույն արշավանքի մասին ավելի կարևոր են Թովմա Մինասենցի հաղորդած տեղեկությունները։ «Դարձեալ պատմեցից,— գրում է նա,— և այլ ևս աղէտ և կըսկիծ արժանի արտասուաց, որ եկն եհաս ազգիս քրիստոնէից։ Վասն զի Աւթման բէկն՝ տէրն Ամթայ, ջատագով եղեալ մերոյ իշխանացս, և եկեալ բազում զաւրաւք, և զերկիրն Արճիշոյ և զԱրծկոյ բնաջինջ գերի վարեալ և սրոյ ճարակ արարեալ» (էջ 326)։

Իսքանդարն անկարող էր հակահարված տալ Օսմանին, որովհետև այդ ժամանակ զբաղված էր նվաճումներ կատարելով իր պետության արևելյան սահմաններում։ Ուրմիան գրավելուց և Շիրվանը հպատակեցնելուց հետո, 1427 թվականին նա սկսեց մեծ արշավանք Շահրուխին պատկանող երկրամասերում, գրավեց Սուլթանիե, Զենջան և Ղազվին քաղաքները։

Բախումը Թամուրյանների ու Կարա-Կոյունլուների միջև դարձավ անխուսափելի։ 1428 թվականի հոկտեմբերին Իսքանդարի դեմ պատերազմական գործողություններ սկսեց Շահրուխի զորահրամանատարը, իսկ 1429 թվականի մայիսին գլխավոր ուժերով հանդես եկավ ինքը՝ Շահրուխը։ Նա ջարդեց Իսքան-

դարին Սալմաստի մոտ և սկսեց ասպատակել Ադրբեջանն ու Հայաստանը։ Աշխատավոր ժողովուրդը թալանվում, ոչնչացվում ու գերեվարվում էր երկուստեք, թե՛ Շահռուխի զորքերի և թե՛ Իսքանդարի պարտություն կրած բանակի կողմից։

Ժամանակակից հիշատակագիրները կարևոր տվյալներ են հաղորդում քաղաքական աղետալից այս իրադարձությունների մասին։

Գրիգոր գրիչը Գառնիի գավառում 1429 թվականին շարադրած հիշատակարանի մեջ գրում է.

«Ի յայսմ ամի եկն չաղաթէն արևելից՝ ի Սամարղանդայ՝ Շահրուխ անուն, որդի Լանգ-Թամուրին, բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք, և էառ զԴաւրէժ քաղաք, և զԹուրքման ազգն աւառ էառ և զբազումս գերի վարեաց....։ Եւ ազգս քրիստոնէից փախստական ի ծերպ և ի ծակ մտած և ի յիւրեանց բնակութենէն ելած։ Եւ փախուցեալ Թուրքմանն Թալանեաց զաշխարհս Հայոց. զհաց և զգինի հանին և մեծ աւերութիւն ածին աշխարհիս, և ի խիստ վտանգի կայ ազգս, ահն ու երկիւղն պատել է, կու վախեն, թէ զամէն ազգս գերի վարեն յորժամ գարնանէ» (էջ 391)։

Այս արշավանքի ընթացքում հատկապես տուժում են Վասպուրականի և Քաջբերունիքի հայերը, որոնցից Շահռուխի զորքերը մեծ թվով գերիներ են քշում Սամարղանդ։ Երեք տարի անց՝ 1432 թվականին մեծ վշտով վերհիշում է այս դեպքերը Դավիթ գրիչը, Երերան անապատում գրած իր հիշատակարանում։ «Վասն ծովացեալ մեղաց մերոց,— հայտնում է նա,—եկեալ [է՞]ր Թագաւորն Պարսից Շահրուհ յաշխարհս Հայոց յերկրորդ գալստեան իւրոյ։ Եւ աւերեալ քանդեաց զբազում տեղիս, և զբազումս գերեաց, նաև յերկիրն Վասպուրականի և Քաջբերունոյ՝ կին և տղայ ոչ մնաց, այլ զամենայն առեալ տարաւ ի Սամըրղընդ» (էջ 419)։

Շահռուխը այս անգամ ևս պահպանեց Կարա-Կոյունլուների պետությունը։ Նա գահը հանձնեց Իսքանդարի եղբայրներից Աբու-Սեիդին, որը ճանաչեց Թամուրյանների գերիշխանությունն իր նկատմամբ ու ստացավ Շահռուխից հրովարտակ՝ Հարավային Ադրբեջանը, Ղաբաբաղն ու Հայաստանը տիրակալելու մասին։

Շահռուխը 1430 թվականի մայիսին թողեց Ադրբեջանը և ուղևորվեց դեպի Խորասան։

Աբու-Սեիդի մասին հրատարակվող հիշատակարաններում կա միայն համառոտ մի գրանցում, ուր ասված է. «ՊՀԸ. (1429). միջին գալն [Շահրուխին], և Բուսաիտն /// ի Թա՞[խտն] եդիր» (էջ 506)։

Այս զորաշարժերի ու ավերածությունների ժամանակ, աշխատավոր ժողովուրդը ստիպված էր ծվարել անմատչելի լեռնածերպերում, փախչել իր բնակավայրերից և երկիրը թողնել անմշակ։ Այդ բանի հետևանքով 1431 թվականին Ադրբեջանում ու Հայաստանում առաջ է գալիս սարսափելի սով, որն իր հերթին մեծ թվով մարդկային զոհեր է քաղում։

Շահռուխի Ադրբեջանից հեռանալուց ոչ շատ հետո, նորից հրապարակ է գալիս Իսքանդարը, մեծ ավերածություններ է գործում Հարավային Ադրբեջանում, պարտության է մատնում ու սպանում իր եղբայր Աբու-Սեիդին, և կրկին անգամ իր ձեռքն է առնում իշխանությունը՝ 1431 թվականին։

Օգտվելով կենտրոնական իշխանության թուլացումից և Կարա-Կոյունլու

եղբայրների միջև մղվող միջդինաստիական պայքարից, Հարավային Հայաստանում նորից գլուխ են բարձրացնում քուրդ ամիրները։ Վանի և Ոստանի ամիր Եզդինի թոռներից մեկը՝ Փիրի-Բեկ անունով, որը տիրում էր Ամուկ բերդին, սկսում է մեծ ավերածություններ գործել Վանա լճի արևելյան և հյուսիսային շրջաններում։ 1431 թվականին նա գրավում է Աղթամար կղզին. «Եւ ի գերութիւն վարեաց,— հայտնում է Թովմա Մինասենցը,— զսպասք և զզարդք երկնանման տաճարին, զբոլոր ծովեզերոյս վանորայիցս և գեղորայիցս զաստուածաշունչ մատեանքս և զայլ անաւթք սրբութեանցն, և ցան և ցրրիւ ընդ ամենայն աշխարհ տարածեաց» (էջ 505, այս մասին տե՛ս նաև էջ 433, 434—435 և 463)։

8

1434 թվականին, երբ դեռևս ժողովուրդը շունչ չէր քաշել Շահրուխի երկրորդ արշավանքի և հաջորդող աղետալի իրադարձությունների ծանր հետևանքներից, մի կողմից Իսքանդարի և մյուս կողմից՝ Շիրվանշահ Խալիլուլլահի և Շահրուխի միջև վերսկսվեցին պատերազմական գործողությունները։

Պատերազմի առիթը հետևյալն էր։ Իսքանդարի որդիներից մեկը՝ երիտասարդ Յար-Ալին, որը իշխան էր կարգված «ի յամուրն Տոսպ գաւառի, ի յոտն Վարագայ, ի Վան քաղաքի... և առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մեր և տաճկաց», գժտվում է իր հոր հետ, և երկու հազար հեծյալ զորամասով փախչում Շիրվան։ Իսքանդարի պահանջը՝ որդուն իրեն հանձնելու մասին անտեսվում է Շիրվանշահ Խալիլուլլահի կողմից, և Իսքանդարը, օգտագործելով այդ առիթը, 1434 թվականին կրկին անգամ արշավում է Շիրվան՝ այն նվաճելու մտադրությամբ։*

*Այս արշավանքի ընթացքում Իսքանդարի զորքերն անխնայաբար ոչնչացրին Շիրվանի այգիները և զարգացած շերամապահության համար անհրաժեշտ բազա հանդիսացող մեծաքանակ թթենիները։ Մի ամբողջ տարի Իսքանդարը մնաց Շիրվանում և ամայացրեց երկիրը**։*

Շիրվանշահ Խալիլուլլահը օգնություն խնդրեց Շահրուխից և վերջինս ձեռնարկեց թվով երրորդ իր արշավանքը Իսքանդարի դեմ։

Շիրվանշահի ու Շահրուխի դաշնակից զորքերը պաշարեցին Երնջակի բերդը. Իսքանդարն ստիպված էր փախչել իր պետության արևմտյան շրջանները։

1435 թվականին շարադրած իր մի հիշատակարանում Թովմա Մեծոփեցին գրում է. «Արդ, գիտելի է, զի մինչ ոչ էր աւարտեալ սուրբ գիրս, անաւրէն թագաւորն Շահրուհ եկն բազում զօրօք յաշխարհս մեր, եւ նստաւ ի վերայ բերդին Երընջակու, եւ թուրքմանն էշ ի ներքին կողմ աշխարհիս Հայոց» (էջ 667)։

Անասելի ծանր դրություն ստեղծվեց հայ ժողովրդի համար։ Շահրուխի արյունարբու զորքերը, շուրջ մի տարի շարունակ բնաջնջում էին խաղաղ բնակչությանը, ավերում ու հրդեհում գյուղերն ու շեները, կողոպտում ու թալանում, գերում ու հավատափոխ անում քրիստոնյաներին։ Ժողովրդի դառն հեծեծանքի աղեկտուր ձայնը լսվում է աշխատավոր գրիչների սրտաճմլիկ հիշատակարաններից։

Մխիթար գրիչը, որին 1437 թվականին հանդիպում ենք հայրենի երկրից

---

* *Թ. Մեծոփեցի, էջ 99։*

** *Նույն տեղում, էջ 99—100։*

փախստական, օտար հորիզոններում, սարսափով վերհիշելով անցյալի դառնությունները, հաղորդում է հետևյալը.

«Եկաւ Շահրուղ իմիրզէն՝ անիծեալ շունն նետողական, բազում և անթիւ զօրաւքն, և աւեր էած աշխարհին Հաոց, և բազումս գերեաց և կոտորեաց, քակեաց և այրեաց և ի հաւատոց էհան։ Եւ մեք տեսաք և վայ կարդաինք անձանց մերոց և լսելեացս։ Եւ մեք լալագին աչաւք և դառն սրտիւ թողաք զծնող, զեղբայր, զքոյր և զմայր և եկաք մինչև ի Համիթ քաղաք» և այլն (էջ 471)։

Աստվածատուր գրիչը՝ Կոտայքի Արծնի գյուղից, շատ շատերի հետ մեկտեղ փախել էր իր հայրենիքից ու ապաստան գտել Հյուսիսային Հայաստանում, վրացական պետության հովանու ներքո։ Նա իր հիշատակարանում հայտնում է, որ Շահրուխը իր «անգութ, և անագորոյն, և անողորմ» զորքերով «բաղում և անասելի աւեր ած ի վերայ աշխարհիս Հայոց։ Զի զոր սրով կոտորեաց, և զոր անողորմ գերի վարեաց և կորոյս, և զոր սովամահ եղան, և զոր մահն տարաւ, և զորս գայլք և գազանք կերան և պատառեցին, և մնացեալքն այսր և անդր փախեան բնաշինչ և մտին յաշխարհն Վրաց» (էջ 485)։

Եվ իրոք, հարևան Վրաստանը գլխավոր այն վայրն էր, ուր պատսպարվելու և պաշտպանվելու հույսով դիմում էին Հայաստանի տարբեր շրջաններից կեղեքված ու թալանված հազարավոր աշխատավոր գյուղացիներ։ Դրա պարզ ու անմիջական ապացույցը գտնում ենք հենց հրատարակվող հիշատակարաններում։ Շահրուխի երրորդ արշավանքին անմիջաբար հաջորդող տարիներին (1436—1438) Վրաստանում և այդ ժամանակ Վրաստանի տիրապետության տակ գտնվող հայկական շրջաններում ընդօրինակվում են մեծաքանակ հայերեն ձեռագրեր։

1436 թվականին Թբիլիսիի արվարձան Կրծանիսում Հովհաննես Գանձակեցի գրիչն ընդօրինակում է մի Գանձարան, հաջորդ թվականին Սանահնի վանքում Շարակնոց է ընդօրինակում Տաթևի տարագիր եպիսկոպոս Շմավոնը։ 1438 թվականին Հաղբատում է գտնվում և ընդօրինակում մի Ճաշոց մեզ արդեն ծանոթ Աստվածատուր գրիչը՝ Կոտայքի Արծնի գյուղից։ Նույն՝ 1438 թվականից մեզ հասել են ձեռագրեր ընդօրինակված՝ «ի մայրաքաղաքս Տփղիս», «յերկիրս Ախալցխոյ», «ի մայրաքաղաքն, որ կոչի Գորի», «ի Մուխրանիս, ի գեղս, որ կոչի Վարղիսուպան» և այլն (տե՛ս էջ 486, 487, 489)։

Հայ տարագիր ժողովրդի անունից է կարծես խոսում այն անանուն հիշատակագիրը, որը 1438 թվականին, ի դեմս վրաց Ալեքսանդր թագավորի (1412—1443), իր երախտագիտությունն է հայտնում Վրաց պետականությանը։ Հանձինս Վրաց թագավորի, նա տեսնում է այն քաղաքական ուժը, որն ի վիճակի է պաշտպանելու հայերին, ուստի և նա երկար կյանք է մաղթում նրան՝ «զաւրաւք և զաւակաւք իւրովք՝ ի վանումն և ի հերքումն անաւրինաց խմբից» (էջ 488)։

Շահրուխի զորքերը իրենց երրորդ արշավանքի ժամանակ ավերում են նաև Սյունյաց նահանգը։ Օրբելյան իշխան Բեշքենը, Սմբատի որդին, որը Կարա-Յուսուֆի օրոք վտարվել էր Սյունիքից, բայց Իսքանդարի ժամանակ նորից վերահաստատվել իր տիրույթներում *, ստիպված է լինում իր ընտանիքով Ռոս-

* Այս վերհաստատությունը, անշուշտ, կատարվել էր Բեշքենի որդի Ռուստամի գործուն օժանդակությամբ, որը, ինչպես տեսանք, Իսքանդարի պետության մեջ բարձր պաշտոններ էր զբաղեցնում։

տամ որդու հետ միասին, «ազատաւք և ժողովրդաւք» կրկին անգամ ապաստանել Վրաց պետության սահմաններում։ Ալեքսանդր թագավորից նա Լոռիում ստանում է կալվածքներ։

Շահրուխի երրորդ արշավանքի ու Սյունիքում գործած ավերածությունների մասին մեծ արժեք են ներկայացնում իր միաբանակիցների հետ միասին Լոռի գաղթած Շմավոն եպիսկոպոսի 1437 թվականին Սանահնում գրած հիշատակարանի տվյալները։ Ստորև մեջ ենք բերում այդ հիշատակարանի պատմական մասից մի ընդարձակ և պերճախոս հատված.

«Որդի անակն սատանայի Շահըռուխն, որդի Լանկ-Թամուրին, յազգէն պարսից, եկաւ բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք ի կողմանց ՙՀարաւու, և եկեալ տապալեաց զաշխարհս մեր, և արար կապուտ կողոպուտ, և գերի էառ զամենայն, և փախըստական արար զաշխարհակալս մեր՝ զկոչեցեալն Ասկանդար՝ զորդին Յուսուֆին, յազգէն Թորգոմա։ Եւ զաղէտն և զկործն և զազգի ազգի վիշտ և դառնութիւն ժամանակիս ընդ գրով ո՞ կարէ արկել, զի այս երրորդ գալն էր և աւերելն և եկեղեցեաց մերոց խաւար ածելն։ Եւ վասն աւերման հրեշտակաբնակ աթոռոյն մեր Եւստաթէի սուրբ Առաքելոյն, զի բնաջինջ աւեր ածին ե, առհասարակ, զտներն այրեցին և զստացուածքն զամենայն կողոպտեցին. և միաբանաւք մերովք փախստական և ցանուցիր եղաք յաշխարհս Վրաց՝ աստուածապարգև իշխանաւս մեր և ամենայն աւրհնութեանց արժանաւոր պարոնաց պարոն Բէշքենաւս, և ազատաւք, և ժողովրդաւք» (էջ 469—470)։

Շահրուխի զորքերը իրենց ասպատակությունները տարածում են մինչև Գանձակի և Ազստաֆայի շրջանները։ 1436 թվականին Աղստաֆայի մոտ նրանք հարձակվում են մի խումբ հայերի վրա, որոնք մեծ կարավանով Գանձակից շարժվում էին դեպի Վրաստան, ազատվելու համար Շահրուխի հրոսակախմբերից։ «Եկաք մինչև Աղեստև,— պատմում է թալանվածներից Հոհաննես գրիչը,— հանդիպեցաւ չաղաթին իլլարն՝ բազում հեծեալ. և թալանեցին զմեզ ու զամէն քրիստովնեայքն, և մերկեցուցին, որ քան զոտից ամանն այլ իրք չթողին. այլ ձմերան աւուրք և ցուրտ» (էջ 461)։

9

Շահրուխը այս անգամ ևս հնարավոր չգտավ վերջ տալ Կարա-Կոյունլուների իշխանությանը։ Նրա զորքերը արշավանքի ընթացքում պաշարել էին նաև Վանի բերդը, ուր գտնվում էր Իսքանդարի Ջհանշահ եղբայրը։ Վերջինս, անհուսալի համարելով իր դրությունը, նպատակահարմար գտավ դուրս գալ բերդից և հնազանդվել Թամուրյաններին։ Շահրուխը Կարա-Կոյունլուների տիրույթները հանձնեց իրեն հպատակություն հայտնած Ջհանշահին և հարուստ ավարով ու բազմաթիվ գերիներով, 1436 թվականի գարնանը թողեց Հայաստանի և Ադրբեջանի սահմանները։

Այս դեպքերի մասին ուշագրավ են Հովաննես Արծկեցի գրչի տվյալները։ Նա հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի դառն և ի չար ժամանակիս, յորում եկն ազգն չաղաթից, թագաւորութեան Շահրուխին, և փախոյց զՍքանդարն, /// և հեծեալն Շահռուխին եկն ի վերայ ամրոցին Շամիրամայ, որ է բերդն Վանայ, զի /// անդ է՞ր] եղբայրն Սքանդարին Ջհանշահուն, և նա ել ի

բերդէն և գնաց առ Շահրուխն, և ներեաց զնա, և ետ զԹախտն Թամանովս, և գնաց» (էջ 484)։

Կարապետ գրիչը ես համառոտ արձանագրում է այդ դեպքը այսպես. «Ջիխանշայն գնաց հնազանդութեամբ մօտ ի Շախրուխն, և նստաւ նորին հրամանաւ ի Թաւրէզ» (էջ 457)։

Իսքանդարը, իր փախուստից (1435) հետո, Կարա-Կոյունլուների պետության արևմտյան շրջաններում պատրաստություններ էր տեսնում դիմադրություն կազմակերպելու համար։ Նույն 1435 թվականին, ընդամենը երեք հազարանոց բանակով, Էրզրումի մոտ նա պարտության է մատնում Շահրուխի դաշնակից Ակ-Կոյունլուների մի քանի անգամ իր ուժերից գերազանցող բանակին։ Ճակատամարտում սպանվում են Կարա-Յուլուք Օսմանը, նրա որդին և շատ անվանի մարդիկ։

Կարապետ գրիչը այս դեպքերի մասին գրում է. «Իսքանդարն փախստական գնաց ի ներքին աշխարհն և սպան զՂարայ-Օթմանն և զորդին և զայլ բազումք ընդ նմա» (էջ 457)։

Այնուհետև, հալածվելով Շահրուխի որդի Ջոնգայի գլխավորությամբ գործող զորաբանակից, Իսքանդարը ստիպված էր փախչել Սեբաստիայի կողմերը։ Իսկ երբ Շահրուխն իր զորքերով թողեց Հայաստանն ու Ադրբեջանը, Իսքանդարը, օգնություն ստանալով օսմանյան Թուրքերից, կրկին անգամ իշխանությունը վերագրավելու փորձ կատարեց։ Նա, ավերելով Սեբաստիայի, Թոխաթի, Խարբերդի ու Դերջանի շրջանները, գերեց ու տեղահանեց մեծ թվով հայերի և նրանց՝ մերկ ու քաղցած, քշեց Արարատյան և Սյունյաց նահանգները, այնտեղ բնակեցնելու համար։ Ճանապարհին շատերը մահացան։

*«Եւ [Իսքանդարն] գնաց մինչև Սևաստ,— հայտնում է այս մասին ժամանակակից Սարգիս գրիչը,— և բազում գաւառք աւերեաց, և զբազումս յազգէ Հայոց գերի արար և եբեր, բազումք ի մերկութենէ և ցրտոյ ի սարին մեռան, և բազումք սովամահ եղեն» * (էջ 486)։*

*Այս նույն ժամանակ Արճեշի ու Արծկեի վրա ասպատակություններ է կատարում մեզ արդեն ծանոթ քուրդ ամիր Փիրի-Բեկը կամ Փիր-Ալին, որի ձեռքին էր գտնվում Ամուկ բերդը։ Նա «հանապազ ելանէր ի բերդէն և գայր ի վերայ երկրիս Արճշայ և Արծկայ. չարչարէր, զոմանս սպանանէր և զոմանց զտղայսն գերի առնէր» և այլն (էջ 484)**։*

1437 թվականին, որոշ ուժեր հավաքելով, Իսքանդարը վերջին փորձը կատարեց իշխանությունը վերագրավելու ուղղությամբ։ Սկզբում նա որոշ հաջողություններ ունեցավ և վերագրավեց պետության արևմտյան շրջանները։ Մեզ արդեն ծանոթ Հովանես Արծկեցի գրիչը հայտնում է նույնիսկ, որ «Սքանդարն դարձաւ և փախոյց զեղբայրն և նստաւ ի թախտն» (էջ 484)։

** Թ. Մեծոփեցու «Պատմութեան» տվյալներով, հենց միայն մի ցուրտ գիշերվա ընթացքում, տեղահանված ու գաղթեցվող հայ բնակչությունից մահացել են յոթ հարյուր հոգի (էջ 105)։*

*** Հմմտ. Թ. Մ ե ծ ո փ ե ց ի, էջ 110—111։ Մեծոփեցին հայտնում է նաև, որ հետագայում այդ նույն Փիր-Ալին, «տէր և իշխան» կարգվելով իրենց աշխարհում (այսինքն՝ Բաղեշում), «ձգեալ է զամենայն հաւատացեալս ի ներքոյ հարկապահանջութեան՝ մինչ զի ամենայն մարգագլուխ 40 Թանկայ առնուն, Թող զբահրայ եւ ղշարէք՝ ի ծերոց եւ ի տղայոց, յորբոց եւ յայրեաց, ի կուրաց՝ յագքատաց եւ ի տնանկաց։ Եւ ամենեքեան կենդանի մեռեալ եւ սովեալ կան» (էջ 111)։*

Սակայն դրությունը շուտով փոխվեց։ Իսքանդարի հրամանատարության ներքո գործող Կարա-Կոյունլուների զորախմբերը, հոգնած ու ձանձրացած անվերջ ու հարատև արշավանքներից և պատերազմներից՝ լքեցին նրան և անցան Ջհանշահի կողմը. Իսքանդարը պատսպարվեց Երնջակի անառիկ բերդում, որտեղ և սպանվեց իր որդի Շահ-Կուբադի ձեռքով։

Ժամանակակից Սարգիս գրիչն այդ մասին գրում է. «Եւ ինքն (Սքանդարն) գնաց ի վերայ Ջհանշին, և ի նորա զաւրութենէն հեծելն ամէն յեղբայրն դարձաւ, և նա փախեաւ ի յեղբաւրէն՝ ի Ջհանշահէն, և ամրացաւ ի յամուրն Երնջակայ, և ընկալաւ զհասն ի յափտենական տանջանացն» (էջ 486)։

Նույն տվյալը համառոտակի արձանագրում է նաև Կիրակոս գրիչը 1438 թվականին Բաղեշում շարադրած հիշատակարանում. «Յայսմ ամի (իմա՛ գրելուց ամիսներ առաջ՝ այսինքն 1437-ին) Սքանդար... սպանաւ ձեռամբ որդւոյ իւրոյ, և նստաւ ի թախթն Ջհանշէն» (էջ 487)։

Եվ սակավ ժամանակով, ինչպես հաղորդում է Թովմա Մեծոփեցին իր «Պատմության» մեջ, երկիրը խաղաղացավ, որովհետև նրա կենդանության օրոք, Խորասանից սկսած մինչև Եգիպտոս, աշխարհը վրդովման ու ալեկոծման մեջ էր. «Ի զՊՀ. (1421) թուականէն ի հետ, մինչ ի մահ սորա (1437) ամենայն երկիր ի վրդովման կայր և ի խռովութեան»,—գրում է նա *։

10

Ջհանշահը իշխեց մինչև 1467 թվականը։

Ժամանակակից գրիչներից շատերը, ըստ երևույթին, համեմատելով Ջհանշահին իր նախորդի հետ, նրան անվանում են «խաղաղարար», կամ «խաղաղասէր» թագավոր։ Այդ մասամբ ճիշտ է. Ջհանշահի թագավորության օրոք Հայաստանի տերիտորիայի վրա տեղի չունեցան մեծ մասշտաբի այնպիսի արշավանքներ ու ասպատակություններ, իրենց աղետաբեր ու կործանարար հետևանքներով, ինչպիսիք լինում էին Իսքանդարի տիրապետության համարյա բոլոր տարիներին։ Սակայն Ջհանշահի ժամանակ ևս պատերազմները անպակաս էին։

1440 թվականին Ջհանշահը մեծ արշավանք ձեռնարկեց դեպի Վրաստան, որի թագավոր Ալեքսանդրը չէր ներկայացել Ջհանշահին իր հպատակությունը հայտնելու համար և հրաժարվում էր սահմանված հարկը վճարելուց. «Զի ոչ եկն առ նա յօգնութիւն խաղաղութեան և ոչ ետ զսահմանեալ հարկս թագաւորականն»,— գրում է Հովհաննես գրիչն իր հորինած վկայաբանական դրվածքի մեջ (տե՛ս էջ 507 *)։

Ջհանշահը «ժողովեալ աւելի քան զքսան հազար ոգիս, առեալ գնաց ի տունն Վրաց»։ Կարա-Կոյունլուների զորքերը նախ գրավեցին Թբիլիսին։ Վերոհիշյալ Հովհաննեսը այդ առթիվ գրում է. «Եւ նոցա երթեալ ի քաղաքն Տփխիս՝ քանդեցին, աւերեցին և զքաղաքն հրոյ ճարակ տուին, և զամենայն եկեղեցիս ի հիմանց տապալեցին»։

Վրաստանի հարավային շրջաններում Ջհանշահը կոտորել տվեց մոտ ութ հազար և գերեվարեց ավելի քան ինը հազար մարդ**, գերազանցապես հայերից։

---

* Թ. Մեծոփեցի, էջ 108։

** Գերվածների ու սպանվածների թվի մասին հիշատակագիրների հաղորդած տվյալների մեջ կա որոշ անհամապատասխանություն։ Վերոհիշյալ թվական տվյալները

Այնուհետև նրանք պաշարում են Սամշվիլդե բերդը։ Երկու ամիս* ապարդյուն կռվելուց հետո, Կարա-Կոյունլուները հաշողվում է խաբեությամբ գրավել բերդն ու դաժան հաշվեհարդար տեսնել բնակչության նկատմամբ։ Սամշվիլդեի աղետի լուրը արագ տարածվում է ողջ Հայաստանում, անմեղ զոհերի համար սգում է հայ ժողովուրդը Լոռիից սկսած մինչև Վասպուրական։

1441—1443 թթ. և հետագա տարիներին շարադրված հիշատակարաններում Սամշվիլդեի կոտորածի մասին կան բազմաթիվ կարևոր տվյալներ։ Ծանոթանանք դրանց մի մասի հետ։

Հաղբատի վանքում 1441 թվականին ընդօրինակած աՃեստարանի հիշատակարանում անանուն մի գրիչ հայտնում է.

«Զի յայսմ ամի ղանն Դայվրիժու Ջահանշահ... ելեալ բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք մահմետականաւք՝ եկն ի Վերաստոն, ի վերայ Վրաց, զի ոչ հնազանդէին ազգն Վրաց ղանին Թավրիժու... Եւ իբրև զկատաղած գազան յարձակեցան ի վերայ Հայոց, և սուր եդեալ ի վերա, և սպանին իբրև հազարաց հնգից անողորմ. և աւելի քան զվաթսուն կրաւնա[ւ]որ և քահանայ սրով և քարիւ քարկոծեցին և սպանեցին, և բազում եկեղեցիք ի հիմանց տապալեցին, և զբազում մանկունս ի մարցն խլէին և ընդ քարիւ հարկանէին, և մայրն զայն տեսանէր. և զբազում մանկունս անմեղս մերկացուցանէին և սրով խոցոտէին, և տղայն ճչէր և աղաղակէր և լայր, և անաւրէնքն ծիծաղէին...։ Բազում կանայք զտղայն ի գիրկն առնէին և քար ի վայր ան[կ]անէին։ Եւ Գ. (3) ամիս նստան ի վերա ամուրին Սամշուլտու, և յորժամ խաբէութեամբ առին զբերդն, թէ որպէս յափշտակեցին զինչսն կամ որպէս բաժանեցին զայրքն ի կանանցն, կամ որպէս խլէին զորդ[ի]քն...» (էջ 514—515)։

Հիշատակարանի շարունակությունը չի պահպանվել, սակայն պակասն առանց թերության լրացնում է Ոհաննես Թմոքվեցի գրիչը, որին 1442 թվականին հանդիպում ենք Արագածոտն գավառի Սերկևլի գյուղում, գյուղի հայ տերերից մեկի՝ պարոն Շալուեի համար ձեռագիր ընդօրինակելիս։

Շատ կողմերով հետաքրքիր իր հիշատակարանի մեջ Ոհաննես Թմոքվեցին Սամշվիլդեի աղետի մասին գրում է հետևյալը.

«Եւ ի սոյն ժամանակի եղև կոտորումն անմեղ քրիստոնէից Սամշուիլդոյ...։ Վասն զի շարժեցան ի սատանայէ ազգն Սկիւթացւոց Ջահանշահ միրզէն, և առ ընդ ինքեան զբազմութիւն լեգէոն զաւրացն, և նստաւ ի վերա բերդին Դ. (4) ամիս, և ի նեղութիւն էարկ զնոսա, զի բազումք մեռան ի վշտաց։ Եւ անաւրէնքն երդուեցան յաստուած կենդանի, թէ առնել չենք ձեզ վնաս։ Եւ նոքա վստահացեալք ի սուտ երդումն նոցա՝ բացին զդուռն բերդին, և անաւրէնքն դիմեցին ի ներքս և սուր ի վերա եդեալ կոտորեցին անխնայաբար աւելի քան Վ. (3000)։ Եւ զողբումն և զաղիողորմ և զկսկիծ դառնութեան ոչ

ստացել ենք հրատարակվող մի շարք հիշատակարանների (տես էջ 504, 514, 532, 546, 644 և այլն) և Թ. Մեծոփեցու «Պատմության» մեջ (էջ 120) եղող թվական տվյալների քննության ու համադրության ճանապարհով։

* Տարբեր տվյալներ են պահպանվել նաև բերդի պաշարման տևողության մասին։ Ոմանք 3 և նույնիսկ 4 ամիս են ասում։ Թ. Մեծոփեցու տվյալներով պաշարումը տևել է մեծ պատկից մինչև պենտեկոստեի օրը, այսինքն 50 օր, իսկ Հովհաննեսի շարադրած «Վկայաբանության» մեջ պաշարման տևողությունը հաշված է ընդամենը 40 օր։

կարեմ ընդ գրով արկանել, ղի զոմանս սրով խո[ղ]խողեցին, զոմանս քարկոծեցին, զոմանս բրաւք ջարդեցին, զոմանց զգլուխն հատին և Գ. (3) մնիրա շինեցին*: ... Եւ էր թիւ գերելոցն աւելի քան Ք. (9000), որ բաժանեցին ի վերայ իւրեանց...: Զոմանս ի նոցանէ յարեելս տարան՝ ի Խորասան, զոմանս յարեւմուտս՝ ի Հոռոմաստան, զոմանս ի հարաւ՝ ի յԱրաբստան, զոմանս հիւսիս՝ ի Լակըստան...» (էջ 532)**:

Շամշվիլդեի աղետից երկու տարի հետո՝ 1442 թվականին, Ջհանշահը Շատախի կողմերում գրավում է «զանառիկ բերդն Ջըռեյ և զՋուլամերկ» (էջ 536):

1445 թվականին նա մեծ բանակով արշավում է Ախալցխա: Ժամանակակից գրիչ Կարապետը, Վանում շարադրած հիշատակարանում հայտնում է, որ Ախալցխայում Ջհանշահը «բազում քրիստոնեայս գերի արար, զոր տեսաք աչօք մերովք զխիղճ և զկսկիծ սոցա» (էջ 584): Ցավոք, այլ մանրամասնություններ այս արշավանքի մասին չեն պահպանվել:

1446 թվականին Ջհանշահը գրավում է Բաղդադը: Նրա այս արշավանքի մասին տվյալներ է հաղորդում Հովսեփ գրիչը: «Եւ հրաման արարեալ,—գրում է նա Ջհանշահի մասին,— ժողովեաց զամենայն Թորգոմացիս յարևելից (այսինքն՝ Կարա-Կոյունլու թուրքմեններին), և բազում զօրօք գնաց ի վերայ Բաղդատայ, և կռիւ եդեալ, և ոչինչ կարաց առնել, բայց ի զօրականացն կոտորեցաւ ԲՌ. (2000) այր ու ԳՃ. (300) պարոն» (էջ 595): Հովսեփ գրչի հիշատակարանի դրությունից քիչ հետո, նույն 1446 թվականին, Բաղդադը գրավվում է: Այդ մասին են վկայում Թովմա Մինասենցը և Վարդան գրիչը. վերջինս արձանագրում է, որ «յամի ՊՂԵ. (1446)... էառ (Ջհանշայն) զանառիկ քաղաքն զԲաղդատն» (էջ 597):

1449 թվականին Ջհանշահը հարձակվում է Թամուրյանների տիրույթների վրա: Հովհաննես գրիչը հակիրճ խոսքերով սոսկ նշում է միայն, որ նա «գնաց ի Հրէ (Հերաթ) ու ի Խորասան» (էջ 639):

1450 թվականին Ջհանշահը մտադրվում է վերագրավել Երզնկան և Հարբերդ շրջանները Ակ-Կոյունլուներից, որոնք տեր էին դարձել այդ շրջաններին Կարա-Յուլուք Օսմանի ժամանակ, 1425 թվականին: Այս նպատակով նա 60 հազարանոց բանակով մտնում է Ակ-Կոյունլուների պետության սահմանները, գրավում է Երզնկան, Կամախի շրջանից գերում է 10 հազար բնակչություն, ավերում է Ներքին և Վերին Դերջանները, Բաբերդը, Կեղին, Սատաղը և այլ շրջաններ, այնուհետև փորձում է նաև գրավել Ակ-Կոյունլուների նշանավոր քաղաքները՝ Ամիթը, Արզնին ու Մերտինը, բայց անհաջողության հանդիպելով՝ հետ է վերադառնում: Արշավանքի ընթացքում Ջհանշահի զորքերը թալանում, սպանում են անպաշտպան բնակիչներին, բռնաբարում կանանց և այլն:

---

* Թ. Մեծոփեցին հայտնում է, որ այդ երեք Թիլանները (բուրգերը) շինվել են 1664 մարդու գլուխներից:

** Մեզ արդեն ծանոթ վարքագրական գրվածքի հեղինակ Հովհաննեսը Սամշվիլդեում սպանվածների թիվը մեկ հազար է հաշվում («Սպանին ի նոցանէ աւելի քան զՌ. հոգի»), իսկ գերվածներինը՝ ավելի քան 10 հազար. «Եւ հրամանս տուեալ,— գրում է նա,—չար բռնաւորն՝ զամենայն կանայս և զորդիս նոցա գերի առնուլ՝ աւելի քան զԺՌ. (10000) ոգի, և ցրուեալ յամենայն կողմանս Տաճկաստանեաց՝ ի Մսր և ի Խորասան» (էջ 508*):

Այս արշավանքի մասին գրել են մի շարք ժամանակակից հիշատակագիրներ՝ Մարտիրոս եպիսկոպոսը Թորդանի վանքում, Գրիգոր գրիչը Երզնկայում, ձեռագրի ստացող Ղազարը Տիվրիկում և ուրիշները։ Սակայն, ամենից բովանդակալից տվյալները գտնվում են Դավիթ Խարբերդցու 1453 թվականին շարադրած հիշատակարանում, որի մեջ նա խոսում է նաև անցյալ տարիների պատմական անցուդարձերի մասին։

«Ի թուականութեան Հայոց ՊՂԹ. (1450),— գրում է նա,— ելեալ սուլթանն Թավրիզու Ջիհանշահ անուն, բազում և անթիւ զաւրաւք՝ ԿՌ. (60000) — աւ, ելեալ էառ զԵզնկայն յազգէն Թուրքմանաց, որ էր ազգաւ Գայընտուր (խոսքը Ակ-Կոյունլուների մասին է) և կալեալ զիշխանն Եզնկա քաղաքին *, և Խ. (40) անուանի ամիրայ զհետ նորա, և տարեալ յարևելս կորուսին։ Եւ Կամխայ ստուածաշէն երկիրն ևս առհասարակ գերեաց իբրև ամձինս ԺՌ. (10000)՝ ընդ այր և ընդ կին, թող զայն, որ մաշեցան. և զՆերքին Դերջանն, և Վերին Դերջանն, զԲաբերդ, զԿեղի, զԿոճակն, և զԳայլգետն, զՇիռեան, զՍատաղ առհասարակ գերեաց...։

Եւ գնացեալ նստան ի վերայ Ամթայ և ի վերայ Արղնու և ի վերայ Մէրտընու... և ոչինչ կարաց առնել կամ զԱրղնի, կամ զԱմիթ, կամ զՄէրտին, այլ դարձաւ յաշխարհ իւր»**։

Ջհանշահը մի շարք արշավանքներ է կատարում նաև իր թագավորության հետագա տարիների (1451—1467) ընթացքում, բայց դրանց մասին առիթ կունենանք խոսելու «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի երկրորդ մասի առաջաբանում։

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ «խաղաղարար» Ջհանշահը, աննշան չափով միայն տարբերվելով իր եղբորից, Գալուստ գրչի խոսքերով ասած, «իբրև էառ զիշխանութիւնն... սկսաւ սայ աւերել և տապալել զգաղում քաղաքս և զգաւառս, և ամայի և անմարդաբնակ առնել» (էջ 537)։

Ջհանշահի ժամանակ հարկապահանջությունը հպատակ ժողովուրդներից անասելի ծանրացավ։ Թ. Մեծոփեցին հաղորդում է, օրինակ, որ Սամշվիլդեի ավերումից հետո, մահմեդական բարձրաստիճան հոգևորականության խորհրդով Ջհանշահը հայերից հավաքվող հարկերն ընդհանրապես, և մասնավորապես խարաճը անչափ բարձրացրեց ***։

Հարկերի ծանրացման մասին նշումներ ունեն նույնիսկ այն գրիչներն ու հիշատակագիրները, որոնք Ջհանշահին «խաղաղասեր» են անվանում։

Ոմն Թումա գրիչ, 1444 թվականին հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի թագաւորութեան Ջհանշահին, որ տիրեաց երկու թախտի՝ Հայոց և Ասորոց, և արար խաղաղութիւն ոչ սակաւ, բայց հարկապահանջութիւնն բուռն և ծանր էր ի վերայ քահանայիցս» (էջ 567)։

Սա խոսում է միայն քահանաների մասին, որոնք, անտարակույս, տնտեսական ավելի բարենպաստ վիճակում են գտնվել, քան աշխատավոր գյուղացիությունը։

---

* Երզնկայի իշխանի անունը, ինչպես հայտնում է Ղազար Տիվրիկեցին, եղել է «Խութլուպակ» (էջ 645)։

** Հիշատակարանը հրատարակված է Գ. Սրվանձտյանի «Թորոս Աղբար»-ի Բ. հատորում, էջ 379—381։

*** Թ. Մ ե ծ ո փ ե ց ի, էջ 124։

Նույն այս թվականին Թովմա Մինասենցը իր ժամանակը «դառն և չար» կոչելով, հայտնում է, որ տիրողները «տառապեցուցանեն և նեղեն զազգս քրիստոնէից ազգի ազգի կեղեքմամբ, և անողորմ հարկապահանջութեամբ, և յաշխարհէ յաշխարհ վտարմամբ իբր զգերի՝ տամբ և ընդանեաւք» (էջ 563)։

Եվ այսպես, բազմաթիվ հիշատակագիրներ, Ջհանշահի իշխանության բոլոր տարիներին, միմյանց նման արտահայտություններով, խոսում են հարկային անասելի ծանր լծի և ժողովրդի դառն վիճակի մասին. մեկը գրում է, որ «նեղիմք յանաւրինաց և յանիրաւ պահանջողաց», մյուսը՝ «յոյժ հարկապահանջութեամբ տառապի ազգս Հայոց», մի երրորդը՝ «զրկեն զազգս Հայոց և քահանայից ի յընչից իւրոց և դատեն անողորմ», մի չորրորդը աղերսում է աստծուն կործանել Ջհանշահին, «որ առաւել հարկապահանջութիւն խնդրէր ի քրիստոնէից» և այլն, և այլն։

11

Ջհանշահի թագավորության օրոք՝ 1441 թվականին, հայ եկեղեցու կյանքում տեղի ունեցավ կարևոր մի իրադարձություն՝ կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխվեց էջմիածին։

Կաթողիկոսական աթոռի Արևելյան Հայաստան տեղափոխելու ուղղությամբ հայ հոգևորականության որոշ շերտեր, հատկապես Սյունյաց մետրոպոլիտությունը, գործունեություն էին ծավալել դեռևս ԺԴ. դարի վերջերին։

Այդ պլանների արգասիքը պետք է համարել Ստ. Օրբելյանի «Ողբ ի սուրբ Կաթուղիկէն» պոեմը, որի մեջ հեղինակը բաղձանք է հայտնում էջմիածնում վերականգնված տեսնել «զաթոռ թագաւորին և զգասազան պատրիարգին»։

Կաթողիկոսական աթոռի Արևելյան Հայաստան տեղափոխելու ուղղությամբ աշխատանքը ավելի մեծ ծավալ է ընդունում Կիլիկյան հայկական պետականության թուլացման և անկման շրջանում՝ ԺԴ. դարի երկրորդ հիսնամյակում։

Գրիգոր Տաթևացին հայտնում է, որ Հովհան Որոտնեցին (մհ. 1386 թ.) իր ժամանակ կամեցել է «սուրբ աթոռն փոխել... ի յԱղւանս, որ ճշմարիտ կաթողիկոս է և սուրբ աթոռն Գրիգորիսի»։ Նա հայտնում է նաև, որ «սրբոյն Ռստակիս[ի] աջն առ մեզ է և Գեղարդն սուրբ և այլ բազում սրբութիւն» *։

Մենք արդեն առիթ ունեցանք նշելու, որ 1432 թվականին, կաթողիկոսական աթոռը էջմիածին տեղափոխելու պաշտոնական ձեռնարկումից և Կիրակոս Վիրապեցուն կաթողիկոս ընտրելուց ինը տարի առաջ Սյունյաց իշխան Բեշքենի որդի Ռուստամը էջմիածնին էր «վաճառել» վեց մեծ գյուղ։ Այս մի վճռական քայլ էր Սյունյաց իշխանների կողմից էջմիածինը կաթողիկոսական նստավայր դարձնելու ուղղությամբ։ Նրանց կողմից առաջադրված կաթողիկոսացուն՝ Գրիգոր Մակվեցին, որի անունով էր ձևակերպված «վաճառված» կալվածքների հանձնումը վանքին, մինչև Կիրակոս Վիրապեցու ընտրությունը մի հիշատակարանում կոչվում է «հայրապետ սուրբ էջմիածնի» (էջ 522)։

Կաթողիկոսական աթոռի էջմիածին փոխադրելու գործի նախաձեռնողները, անշուշտ, ունեին քաղաքական որոշ հեռանկարներ։ Պատմական Հայաստանի սրտում՝ Արարատյան դաշտում, վերահաստատված «հայրապետական

---

* Գրիգոր Տաթևացի, «Բանք գեղեցիկ և յոյժ պիտանի վասն աթոռոյն Աղթամարայ», Մատենադարան, ձեռագիր № 4669, էջ 199բ—200բ։

աթոռը» գոյություն ունեցող պայմաններում պետք է նպաստեր համահայկական կենտրոն ստեղծելու գործին, պետք է որոշ չափով շաղկապեր միմյանց հայ ժողովրդի տարբեր բռնապետական իշխանությունների տակ հեծող հատվածները։

Անշուշտ, Էջմիածնի վանքը տնտեսապես ապահովող աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների համար խորթ չէին նաև շահադիտական որոշ ակնկալություններ։ Կաթողիկոսական աթոռը հսկայական հասույթներ էր ձգելու Հայաստանի տարբեր նահանգներից, ինչպես և աշխարհով մեկ ցրված բազմաթիվ հայկական գաղթավայրերից, և այդ հասույթներից անմասն չէին մնալու նաև գործի նախաձեռնողները։

Էջմիածինը հայ եկեղեցու կենտրոն դարձնելու գործը շահագրգռում էր նաև երկրի տերերին։ Արարատյան նահանգի տիրակալ Յաղուբ-Բեկը քաջ գիտակցում էր այդ քայլի քաղաքական ու տնտեսական նպաստավորությունն իր համար և ամեն կերպ օժանդակություն էր ցույց տալիս գործի կազմակերպիչներին։ Կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ Երևան հավաքված հոգևորականներին, ֆեոդալներին ու ազատներին Յաղուբ-Բեկը Էջմիածին է ուղևորում իր զորքի պաշտպանությամբ, «փողով և թմբկով և զուռնով»։

Սսի աթոռի դեմ կազմակերպված շարժումը համակրություն էր վայելում նաև հայ աշխատավոր ժողովրդի լայն շերտերում, որովհետև Սսի կաթողիկոսները և նրանց կողմից կարգված եկեղեցական պաշտոնյաները անխնա կեղեքում ու թալանում էին ժողովրդին։ Նրանք հոգևորական էին ձեռնադրում միայն նրանց, ովքեր «տեարք էին ընչից»*, որովհետև «արծաթով տային զշնորհս հոգւոյն սրբոյ»։ Նրանք միևնույն թեմի վրա նշանակում էին երեք, երբեմն չորս եպիսկոպոսներ, որոնք «ի վերայ միմեանց յարուցեալ՝ զանօրէնս և զանհաւատս և զսուտ քրիստոնեայս բարեկամս արարեալ գայթակղութեամբ զաշխարհս մեր կործանեցին»։

Այդ եպիսկոպոսները անց էին կացնում շռայլ ու անբարոյական կյանք՝ «անառակութեամբ և արբեցութեամբ և պիղծ վարուք շրջէին», և դրամով գնած լինելով իրենց պաշտոնը, միջոցի առաջ կանգ չէին առնում հնարավորին չափ կարճ ժամանակում հարստություն դիզելու համար, որովհետև շատ չանցած նրանց փոխարինելու էր գալու այդ նույն թեմը ավելի մեծ գումարով գնած մի այլ եպիսկոպոս։

Հրատարակվող հիշատակարանների մեջ կարևոր տվյալներ կան Գր. Լուսավորչի աջի Սսից գողացվելու և ի վերջո Էջմիածին բերվելու, 1441 թվականին տեղի ունեցած կաթողիկոսական ընտրության, ինչպես և դրան հաջորդող իրադարձությունների մասին։

Կարապետ գրիչը, օրինակ, 1442 թվականին շարադրած իր հիշատակարանում արձանագրում է, որ «ի յայսմ ամի եղև ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց, որոց էր գլուխ մեծ րաբունապետն Թովմայ և Յովհաննէս վարդապետն. և եդին զտէր Կիրակոս յԷջմիածին՝ կաթողիկոս ամենայն Հայոց, և նոր նորոգեցաւ աթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի» (էջ 536, տե՛ս նաև Ոհաննես Թմոքվեցու ընդարձակ հիշատակարանը, էջ 531—532)։

---

* Այս և հաջորդ երեք փոքրիկ մեջբերումները քաղված են Թ. Մեծոփեցու «Յիշատակարանի» «Վասն միաբանութեան Հայոց և կաթողիկոս ձեռնադրութեան» գլխից (Հրատ. Կ. Կոստանյանցի, Թիֆլիս, 1892, էջ 51—61)։

Սրանով մենք ավարտեցինք ԺԵ. դարի առաջին հիսնամյակի ընթացքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների և աղետաբեր ու հարատև պատերազմների համառոտ տարեգրությունը։

Ինչպես արդեն ասացինք, պատմական այս համառոտ ակնարկի հիմնական նպատակն է եղել որոշ չափով դյուրացնել ընթերցողների աշխատանքը, որպեսզի անհրաժեշտության դեպքում ամեն ոք հնարավորություն ունենա շաղկապելու հիշատակարանների հաղորդած տվյալները Մերձավոր Արևելքի պատմության ժամանակակից դեպքերին։

Այս ակնարկով նպատակ ենք ունեցել նաև ցույց տալ հայ ժողովրդի անասելի ծանր վիճակը Լանկ-Թամուրի արշավանքների և դրանց հաջորդող Կարա-Կոյունլու քոչվորական ցեղերի մղձավանջային տիրապետության ժամանակաշրջանում։

Պատկերը լիակատար դարձնելու համար, անհրաժեշտ է համառոտ թվարկումով շարադրել նաև ԺԵ. դարի առաջին հիսնամյակի ընթացքում տեղի ունեցած բնական աղետների՝ մորեխի, մահտարաժամի, ինչպես և սղության տարիների ու համատարած սովերի սրտաճմլիկ տարեգրությունը՝ դարձյալ հրատարակվող հիշատակարանների տվյալներով։

ԺԵ. դարը սկսվում է սաստիկ սովով։ 1041 թվականին Ասորիքի կողմերից գալիս է «սաստիկ և թանձր» «չորսթևեան» մորեխ (էջ 3), որը ավերում է «զբազում տեղիս և զգաւառս» (էջ 17). առաջ է գալիս «սով սաստիկ ընդ ամենայն երկիր, որ բերէր կապիճ հացն Մ. (200) դրամ» (էջ 8)։

Ժողովրդի տնտեսական ծանր վիճակի, անընդհատ զորաշարժերի ու գաղթերի հետևանքով ԺԵ. դարի ընթացքում մի շարք անգամ երկրում տարածվում են սուր-վարակիչ հիվանդություններ՝ զանազան «մահտարաժամեր», «մանկամահեր» ու «անասնամահեր»։

1404 թվականին Ստեփանոս գրիչը Ռշտունիքի Տշող գյուղում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ «եղև մահտարաժամ սաստիկ ի վերայ երկրի», որին զոհ է գնում նաև գրչի հայրը (էջ 43)։

Շատ ավելի մեծ զոհեր է տանում 1407 թվականի մահտարաժամը, որի բռնկման օջախը, ըստ երևույթին, Սյունիքն է եղել։ Այդ մասին տվյալներ են հաղորդում երեք տարբեր հիշատակագիրներ։ Լսենք դրանցից Հոհանես գրչին. «Ջի այսմ ամի,— հաղորդում է նա,— մահտարաժամ շարժեցաւ ի վերայ աշխարհի, զողալոյց վերջք արար, որ բերանով չէ պատմելի, ի քսանէ, ի երեսնէ, ի յսնէ թէ մին տզ[այ] մնաց՝ ԺԵ. (15) տարոյ ի վեր, պակաս՝ մեռաւ» (էջ 82, տե՛ս նաև էջ 75, 80)։ Ըստ երևույթին, այս մահտարաժամը եղել է ծաղկի կամ կարմրուկի ուժեղ բռնկում։

1413 թվականին մահտարաժամը հնձում է հատկապես մատաղհասակ երեխաներին. «Գծագրեցաւ սուրբ մատեանս,— հայտնում է ոմն Հովհաննես գրիչ Խիզանում,— ի դառն և բազմավրդով ժամանակիս, որ մահտարաժամ է անկեալ վասն մեղաց մերոց յաստուածասաստ բարկութենէն, և կոճոպէ և յափշտակէ զմատաղ մանկունս ի գրկաց ծնողացն և մորմոքեցուցանէ զծնողս և զեղբայրս» (էջ 152)։

Երեք տարի անց՝ 1410 թվականին սաստիկ մահտարաժամ է բռնկվում Եկեղյաց գավառում։ Այդ մասին տվյալ հաղորդող Գրիգոր գրիչը, որն աշխա-

տում էր Երզնկայի մերձ գտնվող Կապոսի վանքում, հրաժարվում է մանրամասնություններ հաղորդելուց, «Ո՞վ կարասցէ ընդ գրով արկանել զաղէտս տարակուսանացս»,— բացագանչում է նա (էջ 186)։

1419 թվականին, Շահրուխի և Ակ-Կոյունլուների միատեղ ձեռնարկած արշավանքի ժամանակ, սովը, մահտարաժամը և մորեխը հանդես են գալիս միասին։ Ստեփանոս Ուշտունցի գրիչը հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի դառն ժամանակիս, որ... եկն ազգի-ազգի պատուհաս ի վերայ երկրի՝ սով, սրածութիւն, մահտարաժամ։ Եւ յայսմ ամի եկն մարախ բազում ի յաշխարհս մեր, և եկեր զամենայն բոյս դալարի, և եղև նեղութիւն մեծ, յորում էր թիւս Հայոց ՊԿԸ. (1419)» (էջ 226)։

Մորեխը, որ շարժվում էր արևելքից, տարածվում է Սալմաստից մինչև Էրզրում, այսինքն՝ համարյա ողջ պատմական Հայաստանում. «Թանձրախիտ ծածկեաց զդաշտ և զլերինս, զսար և զձոր, միահաղոյն, ի Սալմաստայ մինչ յԱրզըռումն, և կերաւ շատ վաստակ ի բազում տեղիս, յորմէ սասանեցան մարդիկք, և եղև սըղութիւն»,— տեղեկություն է տալիս Գրիգոր Խլաթեցին 1419 թվականին Ցիպնա վանքում ընդօրինակած ավետարանի հիշատակարանում (էջ 225)։

Թովմա Մինասենցի տվյալների համաձայն, 1419 թվականի մորեխի գործած վնասները այնքան ծանր չէին, որովհետև նա՝ «ըստ անչափութեան աւազոյ ծովուս եկավ հնձի ժամանակ, ուստի հնարավոր եղավ բերքի մի մասը փրկել («Իրք մի կերաւ զվաստակն և իրք մնաց»)։ Ավելի սարսափելի էր հաջորդ տարին՝ 1420 թվականը. «Եւ միւս այլ տարին,— շարունակում է Մինասենցը,— ձագն ելաւ և խիստ աւէր էած» (էջ 375, նաև 239)։

Աղվանքի շրջաններում մորեխը ավերածություններ էր գործում յոթ տարի շարունակ, այսինքն՝ 1413—1420 թվականների ընթացքում. «Է. (7) ամ է, որ մարախ զամենայն աշխարհ աւերեաց, և դեռևս եմք ի կասկածի» (էջ 374),— գրում է այդ մասին անհայտ մի գրիչ, 1420 թվականին։

1423 թվականին նույնպես մահտարաժամն ու մորեխը դաշնակցում են միմյանց, որի հետևանքով երկրում տարածվում է սով. «Սաստիկ սով եղև,— արձանագրում է ժամանակակից մի գրիչ,— մի մոթ հացն Պ. (800) դրամ եղև» (էջ 307)։

Մահտարաժամից տուժում է հատկապես Վանա լճի շրջակայքի բնակչությունը, որովհետև, ինչպես հաղորդում է Թովմա Մինասենցը, իր բովանդակալից հիշատակարաններից մեկում՝ 1423 թվականից սկսած մահտարաժամը «մնաց Բ. (2) տարի ի բոլոր ծովուս, և բազում տունք աւերեցան և ծնաւղք անզաւակ մնացին» (էջ 375)։

Թովմա Սպատկերցին 1423 թվականին մորեխի գործած ավերածությունները նկարագրում է ուշագրավ մանրամասնություններով և գեղարվեստական վառ պատկերներով։ Նրա հաղորդած տվյալները վստահորեն կարող են օգտագործվել երկրագործական վնասատուների դեմ պայքարի գործով զբաղվող մեր մասնագետների կողմից՝ հարցի պատմությունն ուսումնասիրելու ժամանակ։ Նա կարծում է, որ մորեխը, որպես պատժիչ զորախումբ, ուղարկված է աստծու կողմից՝ մեղքերի մեջ թաթախված մարդկանց խրատելու համար։

«Ջի առաջին տարին,—շարունակում է Սպատկերցին,— ինքն թևաւորն [եկն] և սերմանեաց, և ի միւս այլ տարին՝ ի գարնան յեղանակին ընդ խոտոյն

ի վեր փչեաց՝ առաւել քան զոյս, մինչ զի լի եղև ի խորութիւն ձորոց և ի լայնութիւն դաշտաց, ի գագաթունս լերանց. էր երկիր առաջի նորա իբրև դրախտ փափկութեան և վերջ նորա՝ դաշտ ապականութեան...։ Եկեր զամենայն խոտ և սպառեաց զամենայն վաստակն սերմանեալ, նուազէին անասունք, լքեալ դատարկացան երկրագործք ի վաստակելոյ, խցեալ կալնուին զերդ և զպատուհան ի ներքս լինելոյ նոցա, մինչ զի զերդս պահէին աւելելով կամ մաղ ի վերայ դնելով, և ապա հաց եփէին ի ներքս կամ ուտէին։ Ամենայն ժողովք շուրջ պարզք և բարեհամք՝ գիշտհոտեալ տղմային արիւնատեսիլ իբրև զեղիպտացւոցն լինէր ի ներքս կուտելոյ նոցա։ Անբնակ ի մարդոյ և յանասնոյ գեօղք լինէին. գնալով նոցա յայլ տեղոջէ յայլ. քակտեցաւ ամենայն միաբանութիւն, որ հացիւ և կերակրով էին շաղկապեալ» (էջ 301—302)։

Տառապյալ ժողովուրդը բնական այս մեծ արհավիրքի դեմ պայքարելու ոչ մի միջոց չուներ։ Միակ բանը, որ կարողանում էին անել, տան երդիկները մաղով ծածկելն էր։ Հավատում էին նաև, որ կան թռչուններ, որոնք սուրբ ջրի հետքով գալիս ու կոտորում են մորեխին։ 1419 թվականի մորեխի ժամանակ Վանի ու Ոստանի ամիր Եզդինը, մարդ է ուղարկում սրբազան ջրի ետևից, և, իբր, ջրի հետքով թռչուններ են գալիս ու վերջ տալիս մորեխին. «Իշխան աշխարհիս մերոյ Ամիր-Եզդինն,— հայտնում է Թովմա Մինասենցը,— առաքեաց մարդ և եբեր ջուր, և հաւ եկն զկնի ջրոյն, և սատակեաց զմարախն, և ազատեցաւ երկիրս» (էջ 375)։

1428 թվականին Ստեփանոս գրիչը իր ժամանակը բնորոշում է որպես «թշվառ և չար» ժամանակ, որովհետև,—շարունակում է նա,—«եղև թանկութիւն սաստիկ, որ մի բեռ հացն է Ռ. (1000) դրամ» (էջ 381)։

Նույն թվականին, ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, Ադրբեջանում և Հայաստանում առաջ է գալիս սարսափելի սով, որ նույնպես մարդկային մեծ զոհեր է տանում։ Որոշ վայրերում, նույնիսկ, մարդ են ուտում, իսկ Թավրիզում, ինչպես հավատացնում է Դավիթ գրիչը, «զեւզն մարդոյ որպէս զանասնոյ վաճառէին միմեանց» (էջ 419)։

Թ. Մեծոփեցին հաղորդում է, որ Արճեշի շուկայում մի մոթ ցորենի գինը բարձրանում է մինչև 60 թանկայի *. «Եւ մեռանէին ամենայն մարդիկ՝ բնիկք և օտարականք»,— հայտնում է նա **։

1437 թվականի մահտարաժամը մեծ հունձ է կատարում Ասորիքում և Հայաստանում, «Կոտորեցան անթիւ տղայք և մանկունք»,— գրում է Կարապետ գրիչը Վանում (էջ 473)։ Իսկ Ավետիք գրիչը Բալուում հայտնում է, որ մահտարաժամի սաստկությունից այնքան շատ մարդ էր մահանում, որ նրանց թաղմամբ զբաղված լինելով, քահանաները ժամանակ չէին ունենում հաց ուտելու (էջ 476)։

1446 թվականին հացի մեծ սղություն է լինում։ Ստեփանոս գրիչը Բաղեշում գրած իր հիշատակարանում արձանագրում է, որ «մին բեռն ցորեան եղև ի Կ. (60) թանկայ» (էջ 592)։

1449 թվականին «յելանելոյն արեւու մինչև ի մուտս արեւու, ի հիւսիսոյ մինչ ի հարաւ» տարածվում է ժանտախտը։ Ըստ երևույթին, հիվանդության

* XIV—XV դարում Անդրկովկասում և Իրանում գործածության մեջ եղող արծաթ թանկան (թենգա) կշռում էր 6 գրամ։

** Թ. Մեծոփեցի, էջ 94—95։

տարածողները մկներն էին, որ նույն այդ թվականին, Ներսես եպիսկոպոս Աղթամարցու վկայությամբ, տարածվել էին ողջ աշխարհում («Եւ ժանգն ապականեաց զվաստակ դաշտաց, և մուկն եռաց յամենայն երեսս դաշտաց և ապականեաց զվաստակս», էջ 633)։

Այդ «սաստիկ մահտարաժամը» այնպիսի չափեր էր ընդունել և այնքան մեծ մահացումներ էր տալիս, որ մերտինցի ժամանակակից մի հիշատակագրի վկայությամբ՝ «ոչ ոք ետես կամ լուաւ ի հնոց կամ ի նորոց այսպիսի դառնալուր պատիժ» (էջ 634)։

Այդ նույն հիշատակագիրը ճշգրիտ ձևով նկարագրում է նաև հիվանդության ընթացքը և ախտանիշերը։ Նա գրում է.

«Մինն այս է դառնութիւն սորա, զի բոլոր ամ մի է և երեք ամիս, որ ի Մէրտինս է և ոչ վերանայ. և երկրորդ եղեռնագոյն դառնութիւն, որ մի անգամ և երկու հանէ խոց և ողջանայ զաւուրս բազում, և դարձեալ կրկին հանէ և մեռանի. և երրորդ դժնեայ դառնութիւն սմին, զի յոր տունն որ մտանէ՝ բնաջինջ առնէ ամենայնիւ. չորրորդ սաստկութիւն սորա, զի ոչ տայ իմանալ զցաւն, երևի թէ անվնաս է և իսկոյն մեռանի...» (էջ 635)։

Այնուհետև հիշատակագիրը խոսում է ժանտախտի հետևանքով երկրի ամայացման և անմարդաբնակ դառնալու մասին. «Ընդ ամենայն գաւառս տարածեցաւ,— գրում է նա,— և բազումս լալագին արար; և զբազում աւանս անմարդաբնակս, շատ մայր առանց որդւոյ արար, և շատ ծնող առանց զաւակաց, բազում տուն առանց տանուտէր, և բազում հարսն առանց փեսայի» (էջ 636)։

Այսպիսով, ինչպես պերճախոս կերպով վկայում են ժամանակակից հիշատակագիրները, ԺԵ. դարի առաջին հիսնամյակում գրեթե չի եղել ոչ մի խաղաղ ու հանգիստ տարի։ Երկիրն ավերվել է ու ժողովուրդը բնաջնջվել կամ օտար նվաճողների արշավանքներից ու ասպատակություններից, կամ սովից կամ մահտարաժամներից, կամ այդ բոլոր աղետներից՝ միաժամանակ։

13

Հայ ժողովուրդը այդ դառն ու վշտաբեր ժամանակներում, ուժերի մեծ լարումով շարունակում էր զարգացնել իր գրականությունն ու կուլտուրան։ Երկրի տարբեր մասերում, նույնիսկ թշնամի բանակների կողմից խուճապահար փախուստի օրերին և նրանց ահից անձավներում ու լեռնածերպերում պատսպարվելով, շարունակում էին իրենց ուսուցչական ու վարդապետական գործունեությունը Հովհան Որոտնեցու (մհ. 1386 թ.) և Գրիգոր Տաթևացու (մհ. 1409 թ.) անվանի աշակերտներից շատերը։

Հրատարակվող հիշատակարանները հարուստ են այդ ժամանակ ստեղծված գիտական ու գեղարվեստական արժեքների, ինչպես և ուսումնական հաստատությունների գործունեության ու վիճակի մասին արժեքավոր տվյալներով։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանումն են ապրել ու ստեղծագործել հայ միջնադարյան գիտության ու գրականության բազմաթիվ անվանի գործիչներ՝ Գրիգոր Տաթևացին, Հակոբ Ղրիմեցին, Մատթեոս Ջուղայեցին, Առաքել Սյունեցին, Գրիգոր Խլաթեցին, Թովմա Մեծոփեցին, Մկրտիչ Նաղաշը, Առաքել Բաղիշեցին և բազմաթիվ մանր ու խոշոր այլ հեղինակներ, տոկուն ու բազմար-

դյուն գրիչներ ու ծաղկողներ, որոնց արժեքավոր հիշատակարանների մեծագույն մասը առաջին անգամ լույս է ընծայվում սույն ժողովածուի մեջ*։

Կուլտուրական նշանավոր կենտրոնները ԺԵ. դարի առաջին կեսին, ինչպես և նախորդ ժամանակաշրջաններում խոշոր վանքերին կից ստեղծված ուսումնական հաստատություններն էին։

Մինչև 1408 թվականը շարունակում էր գործել Հայաստանի ամենանշանավոր ուսումնական հաստատությունը՝ Տաթևի համալսարանը, Գրիգոր Տաթևացու տնօրինության տակ։ Համալսարանը բաժանված էր երեք «ուսումնարանների». դրանցից մեկում Տաթևացին «ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւն քաղցրալուր ձայնի եղանակաւ. մինչև անգամ յամենայն երկրէ և ի քաղաքաց եկեալ պարապէին առ ոտս նորա։ Եւ ի միումն՝ նկա-

---

* Ստորև տալիս ենք ԺԵ. դարի առաջին հիսնամյակում շարադրված միայն կարևոր աշխատությունների ժամանակագրական ցանկը, որ կազմել ենք հրատարակվող հիշատակարանների տվյալներով։

1. 1401 թ. հրապարակվում է Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» աշխատությունը, գրված Թավրիզեցի խոջա Մասուտշահի պատվերով, բաղկացած է չորս հատորից։

2. 1401 թ. Առաքել Սյունեցու «Ադամգիրք» ընդարձակ պոեմի Ա. (ըստ Պոտուրյանի Գ.) խմբագրությունը։

3. 1403 թ. նույն «Ադամգրքի» Բ. և Գ. խմբագրությունները։

4. 1405 թ. Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Սաղմոսաց» աշխատությունը։

5. 1407 Գր. Տաթևացու «Քարոզգրքի» ձմռան և ամռան ընդարձակ հատորները, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ժողովրդի կենցաղի ու վիճակի մասին բազմաթիվ արժեքավոր տեղեկություններով։

6. 1408 թ. Գր. Տաթևացու «Լուծմունք դժուարիմաց բանից ի մեկնութիւն գրոցն Ցորայ» աշխատությունը։

7. 1408 թ. կամ դրանից քիչ առաջ, Գրիգոր Ծերենց Խլաթեցու խմբագրությամբ լույս է տեսնում հոգևոր երգերի ու մեղեդիների «Գանձարան» կոչվող ժողովածուն։

8. 1411 թ. Մաթեոս Ջուղայեցու «Մեկնութիւն գործոց առաքելոց» ուշագրավ և երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին կարևոր նշանակություն ունեցող հատվածներով լի աշխատությունը, որը մինչ այժմ չի գրավել մասնագետների ուշադրությունը։

9. 1415 թ. Հովհան Կոլոտիկի (Գր. Տաթևացու աշակերտներից) «Հաւաքեալ ի լուսաւոր բանից սուրբ վարդապետաց ի պատճառս իմաստից... մարգարէին Եսայեայ» աշխատությունը։

10. 1416 թ. նշանավոր տիեզերագետ ու տոմարագետ Հակոբ Ղրիմեցու «Մեկնութիւն տումարի» բազմաբովանդակ ու արժեքավոր տիեզերագիտական աշխատությունը, որ կազմված է Մեծոփի դպրոցում, Թովմա Մեծոփեցու խնդրանքով, հեղինակի կարդացած դասախոսությունների մշակումով։

11. 1422 թ. Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղետից» կոչվող պատմական վիպասանությունը։

12. 1427 թ. Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն աւետարանին Ղուկասու» աշխատության նոր խմբագրությունը՝ կատարված Թովմա Մեծոփեցու կողմից։

13. 1428 թ. Թովմա Մինասենցի ընդարձակ հիշատակարանը՝ 1419—1428 թթ. պատմական անցուդարձերի մասին։

14. 1434 թ. Առաքել Բաղիշեցու «Պատմութիւն Հովասափու և Բարաղամու» չափածո գրվածքը։

15. 1435 թ. Թովմա Մեծոփեցու խմբագրությամբ՝ «Խմբագիր մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի» աշխատությունը։

16. 1436 թ. Մկրտիչ Նաղաշի դավանաբանական գրությունը կաթոլիկների դեմ՝ «Պատասխանի լատինացոց թղթոյն ի Մկրտիչ Նկարագրէ, զոր գրեաց հրամանաւ կաթողիկոսին և մեծ բաբունապետին Թումայի» խորագրով։

բաղդրութիւն պատկերահանութեան և զանազան նկարչութիւնն։ Եւ ի միասումն զներքին և զարտաքին գրեանս» *։

1402 թավականին Մատթեոս Ջուղայեցի նշանավոր վարդապետը կարգվում է Տաթևի համալսարանի գլխավոր դասախոս։ Այդ մասին տեղեկություն է հաղորդում Թումա Սյունեցի գրիչը, Գր. Տաթևացու «Մեկնութիւն աւետարանին Մատթէոսի» աշխատության Ծար գավառի Քարավաճառ գյուղում կատարած ընդօրինակության հիշատակարանում։ Նա հայտնում է, որ Տաթևացին զծաղկեալն ամենայն բարութեամբ և զարդարեալն ամենայն շնորհիւ վարդապետական խոհեմութեամբ և փիլիսոփէական արհեստիւ Մատթեոս Ջուղայեցի վարդապետին համարում էր իր հոգևոր որդին և «ժառանգ վարդապետութեան իւրոյ», և որ 1402 թ. «շամիւ մեծ վարդապետին Գրիգորի և աղաչանաւք դորոց աշակերտեալ անձանց նստաւ (Մատթէոսն) յաթոռ տէլէտութեան» (էջ 25)։

1408 թվականին, Սարգիս գրչի խոսքերով արտահայտված, «վասն իւիք ինչ պատճառի» Գրիգոր Տաթևացին թողնում է իր նստավայրը և գալիս Մեծոփավանք։ Նրա շուրջը կարճ ժամանակում հավաքվում են բազմաթիվ աշակերտներ և նա դասախոսություններով մեկնում է հին կտակարանի Հոբի գիրքը, Արիստակեսի և Գեորգի «Խրատ գրչութեան» աշխատությունը և Հովհաննի ավետարանը։ Այս մասին խոսում են մի շարք հիշատակագիրներ։ Լսենք իրեն՝ Գրիգոր Տաթևացուն.

«Եւ ի թուականութեանս հայոց ՊԾԷ. (1408) ամի,— գրում է նա,— եկեալ մեր յերկիրս Քաջբերունի, և ձմերեալ ի հրեշտակաբնակ վանքս Մեծոփոյ, ի սպասու դամբարանաց վարժապետացն սրբոց։ Եւ ընթերցմամբ հասաքեցի զդժուարալոյծ բանս Յոբայ և զմեկնչաց նորա, այլ և սակաւ ինչ լուծումն Առիստակիսի և Գէորգեայ՝ ի խրատս գրչութեան, ընդ նմին և զքաղուածոյ մեկնութեանն Յովհաննու աւետարանչի, և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղւոյս ուսումնասէր անձանց» (էջ 86)։

Մեծոփի վանքում նա մնում է լրիվ մի տարի, ապա գալիս են նրա սիրելի աշակերտները, Առաքել Սյունեցու գլխավորությամբ, և գիշերով «գողանում» նրան։ Այս դեպքը տեղի է ունենում 1409 թ. հոկտեմբեր կամ նոյեմբեր ամսին։

---

17. 1444 թ. Եսայի վարդապետի «Տումար արեգական և լուսնի» տոմարագիտական յուրօրինակ աշխատությունը, որը կարոտ է մասնագիտական ուսումնասիրության։

18. 1443 թ. Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանը» կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու, կաթողիկոսի ձեռնադրության և Կիրակոս Վիրապեցու աքսորման մասին (տես Կ. Կոստանյանցի հրատարակությունը, Թիֆլիզ, 1892 թ.)։

19. 1446 թվականից քիչ առաջ Թովմա Մեծոփեցին ավարտել է նաև իր մեծարժեք «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» աշխատությունը (հիշատակարան չունի)։

20. 1449 թ. Մկրտիչ Նաղաշի Վարք-հիշատակարանը, գրված Աստվածատուր վարդապետի կողմից։

Նշված ժամանակաշրջանում գրվել են նաև բազմաթիվ այլ մեծ ու փոքր աստվածաբանական ու մեկնողական աշխատություններ, բանաստեղծություններ, աշխարհիկ թեմաներով տաղեր և այլն։

* Մատենադարան, ձեռագիր № 7823, էջ 42—43 (տես նաև մեր «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» հոդվածը, տպագրված՝ Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ» XXIII հատորում, 1946, էջ 428)։

Շատ չանցած, նույն թվականի դեկտեմբերի 27-ին, նա վախճանվում է Տաթևի վանքում։

Գր. Տաթևացու մահը ողբում են իր բազմաթիվ աշակերտներից ու դասընկերներից շատերը, տեղեկություններ հաղորդելով նաև նրա կյանքի վերջին դրվագների մասին։

Թովմա Մեծոփեցին իր հիշատակարաններից մեկում հայտնում է, որ ինքը 1406 թվականին, 12 ընկերակիցների հետ միասին մեկնել է Տաթև՝ Գր. Տաթևացու համալսարանում սովորելու մտադրությամբ։ Ապա նա շարունակում է.

«Եւ կացաք առ ոտս նմա ամս Բ. (2)՝ իմաստնածութեամբ և սիրով նորին։ Եւ յեր[րոր]դ ամին... եկեալ բնակեցաւ յերկիրս Քաշբերունւոյ, ի սուրբ ուխտս Մեծոփոյ։ Եւ ժողովեաց բազում վարդապետս և կրօնաւորս, աւելի քան զութսուն ոգիս*։ Եւ զամ մի լրման դասիւ վարդապետութեան զամենեսեան լուսաւորեաց...։ Եւ եկեալ սիրելի աշակերտք նորա՝ գողացան զնա ի գիշերի։ Եւ մեք եւեալ գնացաք զկնի նորա՝ հանդերձ վարդապետաւք և եպիսկոպոսաւք և գրոց աշակերտաւք, և հասաք նմա յերկիրն Արայրատեան, լալով, ողբով, արտասուօք, աղիողորմ կսկծանօք, և ոչ կարացաք դարձուցանել զնա։ Եւ անդ ետ մեզ հրաման վարդապետութեան։ Եւ մինչ դեռ յառագաստի պարէաք և հոգով և մարմնով ուրախ էաք, իսկոյն համբաւ մահու խռովեցոյց զմեզ, զի յետ բաժանելոյն մեր ի նմանէ ԼԶ. (36) օր միայն եկաց ի մարմնի...» (էջ 101)։

Գրիգոր Տաթևացու մահվանից հետո նրա և Հովհան Որոտնեցու աշակերտներից շատերը, երկրի զանազան վայրերում փորձեր են կատարում բանալ նոր դպրոցներ, որոնք, սակայն, կարճատև կյանք են ունենում և չեն կատարում այն խոշոր դերը, ինչ տարիներ շարունակ կատարել էր Տաթևի դպրոցը։

Սյունիքի Հերմոնի վանքում դասախոսություններ է կարդում Տաթևացու աշակերտ Հովհաննես Կոլոտիկը։ Հերմոնի վանքը Սարգիս Ղրիմեցի գրչի կողմից կոչվում է «վարժապետական աթոռ»։ Գրիչն այդտեղ ընդօրինակում է Կյուրեղ Ալեքսանդրացու «Պրապմանց գիրքը», ինչպես ինքն է ասում՝ «առ ոտս մեծ վարժապետին... Յովաննիսի՝ աշակերտին Գրիգորի Հայոց փիլիսոփայի, որ և կրկին ընթերցմամբ լուսաւորեալ առաջնորդեցայ ի նմանէ» (էջ 164)։

1421 թվականին Կարապետ Դերջանցին մի «Քարոզգիրք» է ընդօրինակում Հերմոնի վանքում՝ «առ ոտս մեծ րաբունապետին Յովհաննիսի»։ Նա խնդրում է հիշել իր քեռորդիներին, որոնք «դասատուն» գնալու համար տվել են նրան մի գրաստ (էջ 258)։

1443 թվականին Հովհաննես Կոլոտիկ վարդապետը դեռ կենդանի էր «ականջօք խլացեալ» և «սպիտակ մորուօք» և «մօտեալ գերեզմանի»** (ուստի՝ խորին ծերության հասակում) և շարունակում էր մեծ դեր խաղալ հայ եկեղեցու կյանքում։

Նույն ժամանակ Եղվարդ գյուղի վանքում դպրոց էր բացել Գր. Տաթևացու աշակերտներից մեկ ուրիշը՝ Սիմեոն Րաբունին, որը վախճանվեց 1428 թվա-

---

* Թ. Մեծոփեցու հիշատակած 12 աշակերտներից Սարգիսը, 1409 թ. գրած իր հիշատակարանում, Մեծոփա վանքում Տաթևացու շուրջը խմբված աշակերտների թիվը կրկնակի անգամ ավել է ցույց տալիս. «Եւ են ժողովեալ առ ոտս սորա անձինք ՃԿ. (100) աբեղայ և Ը. (8) վարդապետ և այլ միակեցունք» գրում է նա (էջ 93)։

** Թ. Մեծոփեցի, «Յիշատակարան», էջ 84։

կանին Կոտայքի Զագավանքում, որի վանահայրն էր կարգված իր կյանքի վերջին տարիներին։

Սիմեոն Ռաբունու գործունեության մասին Նղվարդի վանքում կարևոր տվյալներ է հաղորդում մի գրիչ, Սիմեոնի պատվերով գրված մայր օրինակից, 1444 թվականին, ընդօրինակելով մի Յայսմաւուրք։ Նա խնդրում է հիշել «զ'սրդիմական և մեծ վարժապետն Հայոց զՍիմէոն, որ յայնմ ժամանակի (իմա՝ 1410—1420 թթ.) փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրև զարեգակն, և մեծաւ յուսով և եռափափագ սիրով սկսաւ նորոգել և զարդարել զվանորայս Արարատեան նահանգիս...։ Նախ բնակեցաւ յաստուածաշէն և ի տիրախնամ գեղն Ողիվարդ, ի փոքր վանս, որ մէջ գեղին, և բազում արդիւնս արարեալ անդ...։ Բազում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ ժողովեալ յուսուցանել զհինն և զնոր մատեան աստուածաշունչ գրոց, զնուրբ և զարտաքին փիլիսոփայութիւն՝ ամս տասն» (էջ 561)։

Սիմեոնի ուսուցչական գործունեության մասին խոսում են նաև այլ հիշատակագիրներ (տե՛ս, օրինակ. էջ 143)։

Անվանի էր նաև Մեծոփա վանքի դպրոցը, որտեղ դասախոսում էին Թովմա Մեծոփեցին ու որոշ ժամանակ նաև նշանավոր տիեզերագետ Հակոբ Ղրիմեցին։ 1416 թվականին Հակոբ Ղրիմեցին, ինչպես ինքն է ասում «զՏումարն դաս ասացի ի հռչակաւոր վանքս Մեծոփու, ի խնդրոյ Թումայ րաբունապետին»։ Այնուհետև նա շարադրում է իր դասախոսությունները տիեզերագիտության մասին, «զի դիւրին լիցի ուսումնասէր մակացու արանց» (էջ 181)։

Մեծոփի դպրոցում Թովման «դաս է ասում» (դասախոսությամբ մեկնաբանում է) կամ այդ նպատակով խմբագրում ու մշակում զանազան մեկնողական աշխատություններ, որոնցից են «Մեկնութիւն աւետարանին Ղուկասու» և «Խըմբագիր մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի» աշխատությունները։

ԺԵ. դարի սկզբին, Երզնկայում, շարունակում էր դեռևս իր գործունեությունը նշանավոր վարդապետ Գեորդ Երզնկացին (Հակոբ Ղրիմեցու ուսուցիչը)։

Գեորգին շատ բարձր է դասում նրան որոշ ժամանակ աշակերտած Հովհաննես Երզնկացի գրիչը, որը 1408 թվականին, «լուեալ զհամբաւս համալսարանի տանս Արևելեան» (այսինքն՝ Տաթևի համալսարանի), թողնում է իր հայրենիքը և գալիս Սյունիք, Գր. Տաթևացու դասախոսությունները լսելու համար։ Նա ժամանակի երեք նշանավոր վարժապետներին՝ Գր. Տաթևացուն, Գեորգ Երզնկացուն և Հակոբ վարդապետին մեծարում է հավասար չափով, նույնիսկ հայտնում է, որ դժվարանում է «գտանել զկարգ շարագրութեան սոցա, թէ զորս նախադաս գրեցից կամ զորս ըզկնի որոյ, զի զանազան պատուականութիւնս երևի ի սոսա, յիւրաքանչիւրսն անհամեմատ միմեանց» (էջ 141)։

Դպրոցներ էին ստեղծվել նաև հայկական հեռավոր գաղթավայրերում։ Ղրիմի դպրոցի ղեկավարն էր Սարգիս վարդապետը, որը Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի մոտ գտնվող սուրբ Անտոնի վանքի վանահայրն էր։ Իր աշակերտների կողմից նա մեծարվում է «մեծ վարդապետ» և «քաջ հռետոր» կոչումներով։ Ուշագրավ է, որ Սարգիսն իր աշակերտների համար մեկնում էր հատկապես փիլիսոփայական բովանդակությամբ աշխատություններ՝ Արիստոտելի ու Պորփյուրի հայերեն թարգմանությունները և նրանց մասին Հովհան Որոտնեցու գրած մեկնությունները։ Այս մասին տվյալ է հաղորդում Սարգսի աշակերտներից Թադեոս Ավրամենցը։ Նա հայտնում է. «Յայսմ աւուր (այսինքն՝ 1428 թ. նոյեմբերի 30-ին) սկիզբն արար մեծ վարդապետս և քաջ հռետորս և արին-

տէր Սարգիս դաս տալ և ուսուցանել (վլուծմունս իմաստասիրական գրոց Յովհաննու Որոտնեցւոյ)... մեզ՝ եղբարցս՝ տէր Թորոսին և տէր Սիմէոնին և ինձ՝ հետնեալ փանաքույս Թադէոսիս» (էջ 389—390, տե՛ս նաև էջ 394—395)։

Վերոհիշյալ դպրոցներից բացի, Հայաստանի տարբեր վայրերում ստեղծվել էին նաև մի շարք այլ դպրոցներ, որոնցում դասախոսություններ էին կարդում ոչ անվանի կամ նվազ հեղինակություն ունեցող մի շարք վարդապետներ։

14

Վանական ու եկեղեցական կալվածատիրության և տնտեսության մասին ևս ԺԵ. դարի առաջին կեսի հիշատակարանները արժեքավոր ու հետաքրքրական տեղեկություններ են պարունակում։

Եկեղեցական կալվածքները, չնայած նույնպես ենթակա էին պետական պաշտոնյաների ու առանձին տիրողների չարաշահումներին և հարկահանմանը, սակայն, ընդհանուր առմամբ, զերծ էին մնում հափշտակումներից և վայելում էին հարկային որոշ արտոնություն։ Ժողովրդին հպատակության մեջ պահելու գործում հայ եկեղեցու կատարած կարևոր դերը քաջ գիտակցում էին երկրի նվաճողները և երբեմն նույնիսկ նպաստում էին վանքերի ու եկեղեցիների վերանորոգման ու տնտեսապես ապահովման գործին։

ԺԵ. դարի ամենանշանավոր եկեղեցական գործիչ և մատենագիր Գրիգոր Տաթևացին իր «Քարոզգրքում» Հայաստանի նվաճողներին նմանեցնում է փշերով ամրացված ցանկապատի, որը պատսպարում է ու պաշտպանում այգին, այսինքն՝ քրիստոնեական եկեղեցին։ Նա քարոզում է հնազանդվել երկրի տիրողներին, որովհետև «այժմ քրիստոնեայք ի ներքոյ բռնաւոր իշխանաց խաղաղութեամբ ունին զիւրեանց եկեղեցականութիւնն» *։

Թովմա Մեծոփեցին տեղեկություն է հաղորդում այն մասին, որ 1402 թվականին, Մեծոփա վանքի վերաշինման ժամանակ, Քաջբերունիքի վրա Թամուրի կողմից իշխան կարգված շեխ Ահմատը՝ «գայր և անձամբ առնոյր ի վերայ անձին իւր զքարինսն, և բերէր դնէր ի հիմն սուրբ եկեղեցւոյն» **։

Վանքերի ու եկեղեցիների արտոնյալ այս վիճակը հաշվի առնելով, հայ աշխարհիկ ֆեոդալներից շատերը դեռևս իրենց ձեռքում գտնվող փոքրաթիվ կալվածքները ապահով տիրելու ակնկալությամբ դրանք «նվիրաբերում էին» զանազան վանական հաստատությունների, նախօրոք դրանց ղեկավար պաշտոններում նշանակելով իրենց մերձավոր ազգականներին կամ հլու և հպատակ անձանց։

1410-ական թվականներին Սյունյաց մետրոպոլիտական աթոռը գտնվում էր պարոն Սմբատի որդի տեր Ստեփանոսի ձեռքին (մհ. 1422 թ.)։ Ստեփանոսին հաջորդող Շմավոն եպիսկոպոսը, ինչպես և նրա հետագա հաջորդներից շատերը, նույնպես Սյունյաց Օրբելյան իշխանական տան հետ մերձավոր կամ հեռավոր ազգակցական կապեր ունեին։

Ժառանգաբար հաջորդում էին միմյանց նաև Աղթամարի և Գանձասարի կաթողիկոսները, Սանահնի վանահայրերը, ինչպես և Բջնիի ազդեցիկ եպիսկոպոսները, որոնց իրավասության տակ էր գտնվում երկար ժամանակ Արա-

---

* Գիրք քարոզութեան, որ կոչի ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 452։

** Թ. Մեծոփեցի, էջ 58։

րատյան նահանգը, և բազմաթիվ այլ եպիսկոպոսական աթոռների ու վանական խոշոր հաստատությունների առաջնորդներ։

Որոշ վանքերի նույնիսկ հաջողվում էր մեծացնել իրենց կալվածքները՝ ինչպես նվիրաբերությունների ու գնումների, այնպես էլ գյուղական համայնքներին պատկանող վարելահողերի ու արոտավայրերի սեփականման ճանապարհով։

Ուշտունյաց գավառում գտնվող սուրբ Վարդանի վանքի առաջնորդ Թումայի ջանքերով Կարա-Յուսուֆի տիրապետության տարիներին (1407—1420) վանքը վերաշինվում է «ի հիմանց», և Վանի ու Ոստանի ամիրների՝ ամիր-Եզդինի և Մելիք-Մահմադի օժանդակությամբ վանքը ձեռք է բերում մի շարք նոր կալվածքներ։ Այդ մասին Թովմա Մինասենցը հայտնում է հետևյալը.

«Կրտըրվաւ և նոյն Թումայ վանից հաւր ձեռօքն Նաշբադընի վէցքու հողն արտ, ամիրաց մըլքաթղթովն և նըշանովն՝ սուրբ Վարդանայ մուլք գընվաւ և (մի բառի տեղ դատարկ) էգին, և Կաթողիկոսենց արտերն, և Պէշգէնի դրախտն՝ սուրբ Վարդանայ վանիցն մուլք, շինեցաւ և ձիթահանքն սուրբ Վարդանայ, ի Գաւաշ գեաւղս» և այլն (էջ 565)։

Նույնպիսի տվյալներ իր մի այլ հիշատակարանում հաղորդում է Թ. Մինասենցը նաև Ուշտունիքի սուրբ Հակոբի վանքի մասին։

Ստեփաննոս Փիր վարդապետի առաջնորդության ժամանակ (1412) վերաշինվում է վանքը, «յաջողութեամբ աստուծոյ ժողովին ի տեղիս և այլ կրօնաւոր և աշխարհականք՝ գործաւոր վանացս»,—գրում է նա։

Վանքի վանահայր Սիմեոն վարդապետը զանազան ճանապարհներով ձեռք է ձգում նոր կալվածքներ։ «Սա ստացաւ,— գրում է Թ. Մինասենցը,—և բազում մուլք և արտորայք, այգի և ծառատունկք վանիցս, զոր ինքեամբ գնեաց՝ տրօք քրիստոնէից, և զոր յորդորեալ զքրիստոնեայս՝ զքահանայս և զաշխարհականս, ետ գնել նոցա ի հալալ արդեանց իւրեանց մուլք և անդաստան վանիցս» (էջ 581)։

Կալվածքների բնույթի ու չափի մասին մոտավոր պատկերացում կազմելու համար ավելորդ չի լինի մեջ բերել նաև հիշատակարանի այն հատվածը, որտեղ թվարկվում են նոր ձեռք բերված կալվածքները։

«Եւ արդ, այսոքիկ են նոր տուած և արծաթագին մուլք վանացս։ Զինչ որ բնական մուլք է վանացս՝ թէ կաղամախի պրակն, և թէ արտ, և թէ ափն, որքան և կէ ի յԸնծափու դաշտս՝ յայտնի է ամենեցուն, և երկու արտ ի Շատուան, և ծառ ի Գանձակ, և երկու արտ ի Դեզձիսն, և հինգ արտ և Սաղաթիէլ երիցանց այգւոյ կէսն ի Մոխրաբերդ, և Օմար Շամշանի բաժին հողն, ԺԳ. (13) արտ, և խոտոնցն, և փագախն, և կալն, և Մանդուկանց Ամիրպէկի այգին՝ ծառերովն՝ ի Մոխրաբերդն...։ Եւ երկու արտ ի Նարեկ, և մէկ՝ ի Բախվանց» (էջ 582)։

Ուրեմն վանքը տարբեր ճանապարհներով իր ունեցած կալվածքներին ավելացրել է 26 արտ, մեկ և կես այգի, մեկ ծառաստան, խոտհունձ, փարախ, կալ և այլն։

Ձեռքի տակ ունենք նաև Խառաբաստի վանքի կալվածքները նշող փաստաթուղթ՝ գրված Կարա-Յուսուֆի տիրապետության տարիներին։ Պարզվում է, որ

վանքը 1410-ական թվականներին ուներ 19 արտ, 70 մոթ ջրովի հող, 20 մոթ անջրդի հող, երեք ջրաղաց և մի այգի *։

Վանքերն ու առանձին բարձրաստիճան հոգևորականներ զբաղվում էին նաև վաշխառուական գործարքներով։ Աղվանից կաթողիկոս Մատթեոսը, օրինակ, հայտնում է 1434 թվականին, որ ինքը Առաքելի որդի Հովհաննես երեցին պարտք է տված եղել «ՁՌ. (6000) դեկան սպակ ու Ի. (20) թաղար ցորեն՝ զապալու չափովն»։ Պարտապանը մահանում է և պարտքի դիմաց ընտանիքը ոչինչ չի ունենում վճարելու, բացի մեկ ձիուց, թամբից և մեկ ավետարանից։ «Տանուտէրք և ք[ահանայք],— հայտնում է կաթողիկոսը,— մէջ ընկան, աւետարանս ու Ա. ձի, Ա. թ[ամբ] բերին, թէ իրքմին չունին, երես դրին, թէ /// խեղջ են, ես այլ խղջացի, ձին ու թամբն յետ տվի, զաւետարանն առի» (էջ 439)։ Հետագայում նա այդ ավետարանը վաճառում է 1200 դահեկանով։

Քրիստոսատուր Կաֆայեցու մի ընդարձակ հիշատակարանից տեղեկանում ենք, որ Ղրիմի հայ վանքերի եկամտի կարևոր աղբյուրներից են եղել նաև բանկերում դրված տոկոսաբեր դրամագլուխները։ Հիշատակագիրը 1431 թվականին հայտնում է, որ Կաֆա քաղաքի մերձակայքում գտնվող սուրբ Անտոնի վանքին, միաբաններից Եսայի կրոնավորի մայրը նվիրաբերել է «Ճ. (100) սոմ ի պանքն եղեալ, անդրդուէլի, մնալով անդ ի կումինին գլուխքն, որ է Ճ. (100) սոմ, և մուտքն նորին յամենայն ամի ուտէ վանքս՝ ՌՆ. (1400) սպ[իտակ]» (էջ 414)։

Բանկային նման գործարքների բուն Հայաստանում կատարված լինելու մասին այս ժամանակաշրջանի հիշատակարաններում և այլ կարգի սկզբնաղբյուրներում վկայություններ չեն պահպանվել։

Հրատարակվող հիշատակարաններում կան մի շարք տեղեկություններ վանքերում աշխատող հոգևոր և աշխարհիկ պաշտոնյաների և «վանաց գործաւորների» մասին։ 1425 թվականին Բերկրիի Հուական որդու վանքում կային 48 միաբաններ ու գործավորներ (էջ 339)։ 1420 թվականին հիշատակվում են այդ վանքի գործավորներից՝ Գորգի տնտեսը, Մկրտիչ մաճակալը, Մեծատուր հովիվը (էջ 242)։ 1425 թվականին Ագուլյաց վանքի միաբան Մկրտչի պարտականությունն է եղել «զարդիւնս հասարակաց» ժողովել շտեմարաններում, իսկ տնտես Ցարուխը «սպասաւորել» է միաբաններին (էջ 337)։

Կարելի է ենթադրել, որ վանքի «գործաւորների» վիճակում էին գտնվում նաև գրիչները։ Նրանք, անշուշտ, գերազանցապես, իրենք էին գործարքի մեջ մտնում և պայմանավորվում ձեռագրի պատվիրատուի հետ, որոշում էին ընդօրինակության վարձը և այլն։ Սակայն կան տվյալներ, որոնք խոսում են այն մասին, որ գրչի աշխատավարձի մի մասը պատկանում էր վանահորը, եպիսկոպոսին կամ այն անձնավորությանը, որի հրամանի տակ էր աշխատում տվյալ գրիչը։ Այս տեսակետից որոշ հետաքրքրություն է ներկայացնում Հովհաննես գրչի կողմից 1407 թվականին ընդօրինակված յայսմաւուրքի Գ. հիշատակագրությունը (տե՛ս էջ 71)։

Բարձրաստիճան հոգևորականները՝ եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, աշխարհիկ ֆեոդալների նման ունեցել են ճորտեր ու ծառաներ, որոնք սպասավորել են նրանց, կատարել զանազան հանձնարարություններ, երբեմն, նույնիսկ, հանդես են եկել որպես զինված շոկատներ՝ բռնի ուժով ի կատար

* Տե՛ս Ղ. Փիրղալեմյան, «Նօտարք հայոց», էջ 31—32։

ածելու համար իրենց եկեղեցական ֆեոդալի այս կամ այն հրամանն ու կարգադրությունը։

Մկրտիչ Նաղաշի զորեղ ծառաները երբեմն հարձակվել են թշնամի բանակների փոքր զորամիավորումների վրա և ազատագրել գերիներին։ Այս մասին որոշակի տվյալ կա Նաղաշի Վարք-հիշատակարանում։ «Առաքէր (Մկրտիչն) ի ծառայից իւրոց արս զօրեղս և սրտապինդս, և խլէին զգերիս յանաւրինաց ե բերէին ի նորաշէն վանս իւր ապաստանի»,—գրված է այնտեղ (էջ 626)։

Նման մի վկայություն էլ պահպանված է Տաթևի եպիսկոպոս Ստեփանոսի Վարքի մեջ։ Սրա եպիսկոպոսության տարիներին Տաթևի միաբաններից մեկը սիրահարվում է մի աղջկա, փախչում է վանքից ու հեռավոր մի գյուղում ամուսնանում նրա հետ։ «Իսկ ազատորդին տէր Ստեփաննոս,— կարդում ենք վարքաբանական այդ գրվածքում,— քանզի ունէր բազում ճորտս այլազգիս, հեծեալ նոքօք ի ձի, և գնացեալ ի դեօղն յայն, քարշեաց զաբեղայն և զաղջիկն բռնութեամբ...» և այլն *։

Հիշատակարաններում կան նաև կարևոր տվյալներ վանականների և ընդհանրապես հոգևորականության ընկած բարքերի՝ անբարոյականության ու շվայտության մասին։

1444 թվականին Այրիվանքում ընդօրինակված Յայսմաւուրքի անծանոթ գրիչը հայտնում է, որ «շատ անկարգութիւն և անօրէնութիւն մտեալ է յեկեղեցի»։ «Քահանայք զանազան զգեստուք պճնեալ և դոտեւորեալ իբր այլազգի, և աբեղայք թողեալ զվանս և զանապատս և զամենայն հոգևոր ուսմունս՝ ի գիւղս բնակէին» (էջ 561)։ Վանականներից շատերը իրենց հարկի տակ պահում էին կանանց՝ սանամայրերի, քույրերի և մորաքույրերի կեղծ անվան տակ։ Սիմեոն րաբունապետը (մհ. 1428 թ.), ստանձնելով Ջագավանքի վանահայրությունը, ձգտում է սանձահարել անբարոյական հոգևորականներին։ Նույն գրիչը հայտնում է, որ նա «զվանքն պարըսպեաց և ամրացոյց, և ոբոշեաց ի յաշխարհականացն, զի աբեղայ ի շուրջ պատի կողմն բնակեսցէ, և սանամայր մի արասցէ և քոյրաքոյր և մայրաքոյր. և ամառն և ձմեռն ի մի վայր ժողովին ի քնոյ ժամն» և այլն (էջ 562)։

15

Հրատարակվող հիշատակարաններում կան նաև որոշ տվյալներ, որոնք ցույց են տալիս, թե տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի տարբեր մասերում շարունակում էին գոյություն ունենալ ու իշխել իրենց փոքրաթիվ կալվածքների վրա հայ ֆեոդալական քայքայված տների որոշ ներկայացուցիչներ, ինչպես նաև նորելուկ մեծատուններ ու կալվածատերեր։ Նրանք, հոգևորականության հետ միասին, դաշնակցում էին երկրի տերերի հետ հայ աշխատավոր ժողովրդին շահագործելու գործում։

Սյունյաց Օրբելյան իշխաններից Սմբատի, նրա որդի Բեշքենի, թոռ Ռուստամի, Ստեփանոս և Շմավոն եպիսկոպոսների մասին եղած տվյալների հետ արդեն մասամբ առիթ ունեցանք ծանոթանալու։ Սրանք իրենց «զասակօք, զօրօք և ամենայն հնազանդելովք» հիշատակվում են Սյունիքի տարբեր վայրերում և

---

* Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները», գիտական հրատարակություն, Վաղարշապատ, 1903, էջ 313։

Լոռիում գրված մի քանի հիշատակարանների մեջ (տե՛ս էջ 4, 77, 133, 194, 258, 292, 382 և 392)։

Հատկապես ուշագրավ է 392 էջի (№ 418) հիշատակարանը, որտեղ, որպես վկաներ Ճախկինում Սյունավանքին պատկանած մի ավետարանի հետ վերադարձման, ստորագրում են Սմբատի որդի Բեշքեն իշխանի ազատներից մի քանիսը՝ Լեշի որդի Դիլանճին, Էլեքսանի որդի Պաշարաթը (հավանաբար եղել է Լոր գյուղի տերը) և Դավաքար գյուղի տեր՝ Սեթիկի որդի Ավագը։

Թովմա Սյունեցի գրիչը 1411 թվականին շարադրած իր հիշատակարանում նշում է Ծար գավառի իր ժամանակի Դոփյան իշխաններին՝ «պարոն Վահրումայ, պարոն Տուտունին, պարոն Շրուանին, պարոն Սատօին, պարոն Պռօշին, պարոն Գրիգորին», ինչպես նաև այդ նահանգի հանգուցյալ իշխաններին, որոնք են՝ Դոփի որդի Հասանը, նրա ամուսին Խոնձան, սրանց զավակներ ու շառավիղներ պարոն Գրիգորը, Սարգիսը, Շանշան (Շահնշահ), Ջհանշան, Աղբուղան, Շրվանը, և «թագազարմ իշխան» Սադունը (էջ 122)։

Սյունյաց Օրբելյանների և Խաչենի իշխանական տների մասին հատկապես կարևոր են Մատթեոս Մոնոզոնի հաղորդած տեղեկությունները՝ 1417 թվականին Գանձասարում ընդօրինակած ժողովածուի հիշատակարանում։ Նա գրում է.

«...Այն, որ կայր մնացեալ շառաւիղ տանն Բուրթելեանց՝ գնաց փախըստական ի տունն Վրաց, որոյ անուն Սրմբատ կոչիւր, և անդ ի յօտարութեանն վախճանեցաւ։ Եւ մնացեալ Բ. որդիք իւր (Նկատի ունի Բուրթելին ու Ստեփանոսին) եկին ի հայրենիս իւրեանց, և ոչ են տեարք իշխանութեանն իւրենաց, այլ ընդ ձեռամբ անօրինաց։ Իսկ տանս Խաչենոյ բարեպաշտ ոմն կայր՝ Ջաղալ անուն, այն փոխեցաւ յաստեացս, և մնացեալքն յազգէ սորին՝ Ջալալն և որդիք նորին, և որդիք Ջաղային՝ Արղութէն և Ջալալադաւլէն, և եղբարք նորին Էլէգումն և Էլէգանն՝ են ի ներքոյ ձեռին անօրինաց. և այսպէս պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան» (էջ 194)։

ԺԵ. դարի առաջին կեսին հայկական կիսանկախ իշխանություն է գոյություն ունեցել նաև Համշենում։ Այդ իշխանության մասին մեր պատմագրության մեջ ոչինչ չի ասված։ Հրատարակվող հիշատակարաններից երկուսը, և նրանց լույսի տակ Ռույ Գոնցալեզ դը Կլավիխոյի ուղեգրական հուշերի մի հատվածը (որը նոր իմաստ է ստանում)՝ հնարավորություն են ընձեռում որոշ խոսք ասելու հայկական այդ իշխանության մասին։

Համշենի առաջին մեզ հայտնի իշխանը եղել է պարոնաց պարոն Առաքելը։ Կլավիխոն, որ Լանկ-Թամուրի ռեզիդենցիայից Իսպանիա վերադառնալու իր ճանապարհին 1406 թ. սեպտեմբերի 13—15-ին անցել է այս իշխանության միջով, այն անվանում է Արրաքիել (Arraquiel): Հայտնում է նաև, որ երկրի անունով «Արրաքիել» էր կոչվում նաև երկրի տերը*։ Կլավիխոյի ճանապարհորդությունից քիչ առաջ այդ իշխանությունը գրավվել էր Սպերի ամիրի կողմից։ Վերջինս, ինչպես հաղորդում է Կլավիխոն, բանտարկելով Առաքելին, մի խլամ կառավարիչ նշանակեց նրա տեղ՝ կառավարելու համար Արրաքիելի

---

* Նա, անշուշտ, սխալվում է. ինչպես հայտնի է «Արրաքիել» երկրանուն տեղական ոչ մի աղբյուր չի նշում։ Ակնհայտ է, որ Առաքել իշխանի անունով ժամանակակիցների կողմից Համշենը կոչվել է «Առաքելի երկիր»։

հողերը, բայց միաժամանակ մի քրիստոնյա փոխկառավարիչ նշանակեց նրա օգնականը»*։

Ըստ երևույթին, այդ դրությունը երկար չի շարունակվում և Առաքելին (դժվար է ասել երբ) հաջողվում է կրկին տեր դառնալ իր երկրին։ Համենայն դեպս պարզ ու որոշակի տվյալ ունենք այն մասին, որ 1422 թվականին «պարոնաց պարոն Առաքելը» կրկին իր երկրի տերն է, և նրա խնդրով Համշենում ընդօրինակվել է Գր. Տաթևացու Քարոզգրքի մի ձեռագիր (տե՛ս էջ 515, առաջին ծանոթագրություն)։

1425 թվականին որպես Համշենի իշխան հիշատակվում է արդեն պարոնաց պարոն Դավիթը, ամենայն հավանականությամբ՝ Առաքելի որդին (էջ 344)։ Այս Դավթի իշխանությունը շարունակվել է երկար տարիներ։ 1440 թվականին Համշենի Խուժկա վանքում Աստվածատուր գրչի կողմից ընդօրինակված Մաշտոցի հիշատակարանում նույն այդ պարոն Դավիթը, իր դեռաբույս զավակի՝ պարոն Վարդի հետ միասին, դարձյալ հիշվում է որպես Համշենի իշխան (էջ 510)։

Համշենի ճանապարհների, լանդշաֆտի ու ժողովրդի բարքի մասին կարևոր են Կլավիխոյի ուղեգրության հետևյալ տողերը. «Այս Արրաքիելի բոլոր երկրամասը շատ լեռնոտ է, նեղ արահետներով, որ կիրճերից է անցնում, և սրանք այնքան ժայռոտ և զառիվեր են, որ բեռնակիր ձիեր չեն կարող առաջ երթալ։ Մի կարդ տեղերում նրանք ստիպված են եղել փայտյա կամուրջներ շինել ժայռից ժայռ՝ անցնելու համար լեռների կատարները։ Բեռնակիր կենդանիները անպետք են այստեղ, բայց բեռնակիր մարդիկ կրում են բեռներն իրենց ուսերի վրա։ Շատ քիչ հացահատիկ է աճում այդ շրջանում» և այլն։ Այնուհետև Կլավիխոն հայտնում է, որ շրջանի բնակիչները, չնայած հայ են և քրիստոնյա, բայց ավազակաբար են վարվում ճամբորդների նկատմամբ։ Այսպես գրելու առիթը, անշուշտ, եղել է այն, որ համշենցիները ստիպել են Կլավիխոյին և նրա ուղեկիցներին վճարել ապրանքների համար բարձր մաքս. «Ազատ անցնելու համար,— գրում է Կլավիխոն,— նրանք մեզ ստիպեցին ապրանքներից ուղեբաժ տալ, անցքի արտոնության համար»**։

Համշենի կիսանկախ իշխանության պատմության համար մեծ կարևորություն ունեցող փաստաթուղթ է Երուսաղեմի Մատենադարանի № 1617 ձեռագրի մեջ ընդօրինակված գրությունը, որը հասցեագրված է պարոն Դավթին։ Այնտեղ ասված է.

«... Պարոն Դաւիթ, յառաջն դուն զայս ուխտէ աստուծոյ, որ ճամփորթ[ի] համար լաւ լինաս ու զճամփորթի ապրանքն հանց պահես՝ որպէս զաստուծոյ տված հոգիդ, ով որ լինա՝ թէ քրիստոնեա և թէ այլազք, աո քեզ ավանդ։ Եւ զինչ քեզ ես Շամշադինս ավանդ դնեմ՝ զայն առնուս, այլ աւելի տամահութիւն չլինայ։ Վրայ այս բանիս գրէ մօտ ի Սպերու տէրն, որ բեռն բեռ բռնէ, թամպալիթ՝ թամպալիթ, իլոման՝ իլոմայ, խուրճին՝ խուրճի, պողչան՝ պողչայ. և բեռին տալիքն ընդ սաղւաթ ընդ ամեն խարճ, մինչև Բասենու սինօռն՝ զան որ պիտ առնում՝ զան յիստակ գրեն, որ [թա]մահ և ստութիւն չլինայ ի մէշն» (էջ 345*)։

Այս գրության հեղինակը, ամենայն հավանականությամբ, քուրդ ամիր Շամս-ադ-դին Ռոժիկն է, որը Կարա-Յուսուֆից ստացել էր Խլաթի, Մուշի, Բաղեշի և Խնուսի շրջանները։

Դավիթը, որն ընդունել էր Իսքանդարի հպատակությունը (1425 թ. հի-

---

* «Ուղեգրություններ», հատ. Ա, ԺԴ—ԺԶ դար, Երևան, 1932, էջ 142։
** «Ուղեգրություններ», Ա, էջ 143։

շատակարանի մեջ որպես Թագավոր նշված է Իսքանդարի անունը), ըստ երևույթին, կախման մեջ էր Շամս-ադ-դինից։ Վերջինս այս գրությամբ ձգտել է կարգավորել Համշենի մաքսատների գործունեությունը և ապօրինի գանձումների առաջն առնել, որոնցից, ինչպես տեսանք, դժգոհում է իր «Ուղեգրության» մեջ նաև Կլավիխոն։ Դավիթը Շամս-ադ-դինի պատվերը կատարելու համար, ինչպես ասված է գրության մեջ, պետք է կարգադրություն աներ Սպերի տիրոջը։ Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ Դավթի ժամանակ Սպերի իշխանությունը ենթարկվում էր Համշենին։ Գրության մեջ առաջարկվում է նաև «յիշատակ գրելս առևտրականների բեռներից պահանջվող մաքսի չափը՝ «մինչև Բասենու սինօռն», թերևս պետք է ենթադրել, որ Դավթի իշխանության սահմանը հասնում էր մինչև Բասեն։

Դժբախտաբար մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն տալիս ավելի բան ասելու Համշենի հայկական այս կիսանկախ իշխանության մասին, որոշելու նրա սկզբնավորման ու վախճանի տարեթվերը և այլ անհրաժեշտ մանրամասնություններ։

Մի քանի հիշատակարաններ տվյալներ են պարունակում նաև Հայաստանի այլ վայրերում ծվարած մանր ֆեոդալների ու կալվածատերերի մասին։

1424 թվականին Սանահնում գրված մի հիշատակարանի մեջ նշվում է «ճիռն աւրհնութեան իշխանն իշխանաց պարոն Ջալալին» (էջ 316)։ Մի այլ հիշատակարանից, գրված Տփղիսում, հայտնի է դառնում, որ Ջալալին պարոն Փաշի որդին է և, իր եղբայր Հովհաննես արքեպիսկոպոսի հետ միասին, վախճանվել է 1432 թվականին (էջ 420)։ Այս Հովհաննես արքեպիսկոպոսը՝ Ոսկեփոր մականունով, մեզ հայտնի է նաև այլ հիշատակարաններից. նա ամենուրեք կոչվում է «եպիսկոպոս Անւոյ», նրան 1426 թվականին հանդիպում ենք Թմոք (Թմկաբերդ) «անառիկ դղյակում» (էջ 354, 534—535 և այլն)։ Այս տվյալներն ի մի բերելով հնարավոր է եզրակացնել, որ իշխանաց իշխան Ջալալին Անիից Վրաստան տեղափոխված իշխանական տներից մեկի վերջին շառավիղներից է։

1432 թվականին հիշվում է որպես Բջնի քաղաքի «նախարար, վերակացու և առաջնորդ» ոմն Ծատուր (էջ 421)։

Ոհաննես Թմոքվեցու կողմից Արագածոտն գավառի Սերկևլի գյուղում 1442 թվականին շարադրված հիշատակարանից տեղեկություններ ենք ստանում այդ գյուղի հայ տերերի՝ պարոններ Ալիբեկի, Շալուեի, Վաչ[ուտի], Քրդի և Սարգսի մասին։ Գրիչը հատկապես մանրամասն տվյալներ է հաղորդում պարոն Շալուեի (իր ընդօրինակած ձեռագրի պատվիրատուի) մասին և դրվատում է նրան հետևյալ խոսքերով. «Այր հսկայազաւր ի մրցմունս պատերազմաց, դիւցազնական ի յազատաց և պայազատ ի յիշխանաց, ի յազանց և ի տոհմէ ասքանազեան սեռից պարոն Շալուէ, որդի մեծի իշխանին աստուածասէր պարոն Սարգսին, և թոռն պարոն Բուղլախին»։ Հիշատակվում են նաև նրա երկու կանայք (երկուսն էլ կենդանի՞), եղբայրները՝ պարոն Գրիգոր և պարոն Փանուել,՝ երիտասարդ որդին՝ պարոն Դավիթ և ուրիշները (էջ 533)։

1443 թվականին հիշվում է ոմն իշխան որդի Ջաջուռի (էջ 549)։ 1444 թվականին որպես Եղվարդի տեր հիշատակվում է «մեծազգի և փառաւոր... աղատածին» Ազիզպեկը՝ իր Ավագ և Զաքարիա որդիների հետ միասին (էջ 561) և այլն։

Մեջբերված տվյալները ուշագրավ են այն տեսակետից, որ որոշ լույս են

ափում հայ ֆեոդալական տների հողազրկման երկարատև պրոցեսի վրա, և ցույց են տալիս, թե ինչպես հայ ֆեոդալական դասակարգը, գործակցելով երկրի նվաճողներին, նոր պայմաններում ևս շարունակում էր պահպանել իր նախկին տիրույթների մի մասը և շահագործել հայ աշխատավոր ժողովրդին։

16

Հրատարակվող հիշատակարանների մեջ քաղաքների և արհեստների մասին տվյալներն աննշան են։ Եվ դա բոլորովին էլ անսպասելի չէ։ Մոնղոլական աշխարհավեր արշավանքներից հետո, հայկական քաղաքները մտան քայքայման և հետադիմության շարունակ է՛լ ավելի խորացող ընթացքի մեջ։ Զարգացած արհեստագործությունը քայքայվեց։ Միջազգային տարանցիկ առևտրի մեջ ներգրավված մի շարք նշանավոր քաղաքներ, որոնցից էին Անին, Կարսը, Խլաթը, Կարինը և այլն, կամ աստիճանաբար անմարդաբնակ դարձան, կամ էլ շարունակում էին քարշ տալ իրենց կիսակենդան գոյությունը, սոսկ որպես ադմինիստրատիվ կենտրոններ։

Այնուամենայնիվ, սխալ կլիներ կարծել, թե մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում քաղաքային կյանքը և արհեստագործությունը Հայաստանում խափանվել էր ամբողջովին և ամենուրեք։

Հրատարակվող հիշատակարանների տվյալներով պարզվում է, որ ԺԵ. դարի առաջին հիսնամյակում Հայաստանում նշանավոր քաղաքներ էին Ոստանը, Վանը, Մուշը, Խիզանը, Արճեշը, Էրզրումը, Բաղեշը, Կարսը, Երզնկան և մի շարք այլ քաղաքներ ու գյուղաքաղաքներ։

Ուշագրավ է նաև, որ հենց այս ժամանակաշրջանում է բարձրանում Երևանի նշանակությունը, որպես Արարատյան նահանգի ադմինիստրատիվ կենտրոն։ 1405 թվականին ոմն ստացող Հակոբ մի ավետարան է նվիրում «Երևանոյ հրաշալի և յորդոր» ժամատեղերին, բայց դեռևս շարունակում է Երևանը, ըստ երևույթին, հին տրադիցիայով՝ կոչել գյուղաքաղաք (էջ 50)։

Շատ չանցած, սակայն, Երևանն արդեն «մայրաքաղաք» է կոչվում և սկսում է որոշակի դեր կատարել Հայաստանի քաղաքական ու կուլտուրական կյանքում։ 1410 թվականին արդեն Երևանում կային անվանի գրիչներ, որոնց Թովմա Մեծոփեցին ընդօրինակել է տալիս Գր. Տաթևացու Քարոզգիրքը («ի գաւառիս Այրարատեան, յանապատիս Երևանոյ, առ դրան սուրբ տաճարիս Անտնիայ առաքելոյ», էջ 106)։

Զգալի թվով հայ առևտրականներ և արհեստավորներ կային նաև Տփղիսում, Թավրիզում, Տրապիզոնում, Սամսոնում, Ամիթում, Սեբաստիայում և բազմաթիվ այլ մերձավոր ու հեռավոր քաղաքներում, որոնք այս կամ այն չափով պահպանել էին իրենց նշանակությունը, որպես արհեստագործության կենտրոններ, և շարունակում էին որոշ դեր կատարել միջազգային տարանցիկ առևտրի մեջ։

Մկրտիչ Նաղաշի Վարք-հիշատակարանի մեջ կա ուշագրավ վկայություն Ամիթի հայկական գաղութի կյանքում արհեստավորների կատարած մեծ դերի մասին։ Ամիթի կաթուղիկե եկեղեցու վերաշինության (1447) հանգամանքները նկարագրելիս, Նաղաշի Վարքի հեղինակ Աստվածատուր վարդապետը հայտնում է, որ այդ գործում Մկրտիչ Նաղաշին մեծ օգնություն էին ցույց տալիս «տանուտեարքն քրիստոնէից»։ Այդ տանուտերների շարքում նա նշում է

Շահրման Թիլկուրանցուն, Սաղաղա ոսկերչին, «որ էր երեսփոխան և հրամանատար», Ալեքսիանոս ոսկերչին, Յերկեն Դանիելին, Աբրահամին և Սիմեոն դարբնին։ Սրանք «ինքեանք տային ինչս բազումս և կերակուրս, և զամենեսեան յորդորէին ի գործառութիւն սուրբ Կաթուղիկէին» (էջ 629)։

Ոսկերիչ արհեստավորներ հիշատակվում են նաև մի շարք այլ վայրերում. այսպես, օրինակ, 1425 թվականին Երզնկայում հիշատակվում է ստացողի եղբայր Հովհաննես ոսկերիչը (էջ 344)։ 1440 թվականին Ոստանում՝ ոսկերիչ Քրիստոսատուրը (էջ 510), 1449 թվականին Աղթամարում մի ձեռագիր է ստանում Հովհաննես ոսկերիչը (էջ 634)։ Ուսլուն անունով մի ոսկեգործ 1419 թ. ձեռք է բերում մի ձեռագիր ավետարան (էջ 237) և այլն։

Բացի ոսկերիչներից, քաղաքներում հիշատակվում են նաև հետևյալ արհեստավորները՝ Սարգիս ներկարարը (էջ 136) և Խնգուբեկ դերձակը (էջ 167)՝ Ոստանում, Պապուհեր դարբինը՝ Վան քաղաքում (էջ 569), Կարապետ պղնձագործը՝ Բաղեշում (էջ 592) և ուրիշները։

Ավելի հետաքրքիր են գյուղերում բնակվող և աշխատող արհեստավորների մասին եղած տվյալները։ Այդպիսիներից, այլևայլ առիթներով, հիշատակվում են՝ կոշկակար Թովմաճ՝ Տշող գյուղում (էջ 204), հյուսներ Հովհաննեսը՝ Ազեթ գյուղում (էջ 249) և Պետրոսը՝ Նարեկ գյուղում (էջ 510), ուսթա Ամիր-Սարգիսը և նրա որդի ուսթա Էվատշահը (մասնագիտության մասին տվյալ չկա)՝ Վաունիշատ գյուղում (էջ 355), բրուտ Պետրոսը՝ Մոկքի Սուրբկանց գյուղում (էջ 434), դերձակ Գորգասալը՝ Սերկևլի գյուղում (էջ 536) և այլն։

1440 թվականին մի ձեռագիր Յայսմաւուրքի նվիրաբերության ակտի տակ, որպես վկա, ստորագրում է նաև ոմն քարխանաճի (արհեստանոցի տեր) Առաքելի որդի Ավտուլ (էջ 512)։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ աշխատանքի գործիքների, հագուստի, կոշիկի, կահկարասու և այլ արհեստագործական արտադրանքների համար գյուղացիները ամեն անգամ հարկ չունեին քաղաք մեկնելու. մեծ գյուղերում կային հյուսներ, բրուտներ, կոշկակարներ, դերձակներ, անշուշտ, նաև դարբիններ և այլ արհեստավորներ։

Հիշատակարանները հնարավորություն են տալիս մասամբ պարզելու նաև պատվիրատուի և արհեստավորի հարաբերությունների հետ կապված որոշ հարցեր։ Արհեստավորները, ամենայն հավանականությամբ, աշխատել են և՛ իրենց սեփական նյութով, և՛ պատվիրատուի նյութով, նայած հանգամանքներին ու պայմանավորվածությանը։

1427 թվականին ոմն Սարգիս եպիսկոպոս, ցանկանում է ձեռագիր գրել տալ, և հայտնում է, որ «զթուղթն ու զամէն նիւթ» տվել է ինքը, բայց ինչ-ինչ պատճառներով գրիչը չի համաձայնվել կատարել նրա պատվերը (էջ 363)։

Նույն այդ թվականին, մի այլ պատվիրատու, ոմն Աբրահամ, Գրիգոր Արծկեցի գրչին վճարում է նաև ընդօրինակվող ավետարանի թղթի գինը՝ «Խ. (40) դրամ» (էջ 366)։ Այս անգամ արդեն պարզ է, որ արհեստավորը՝ տվյալ դեպքում գրիչը՝ աշխատել է իր սեփական նյութով։

Ըստ պայմանավորվածության, տարբեր են եղել նաև աշխատավարձի ձևերը։ Հովհաննես Ապարանեցի գրիչը, 1401 թվականին, ընդօրինակության վարձը ստացել է զուտ դրամով՝ 2000 դահեկան. «Եւ առի,—գրում է նա,—շուքրանա գրոցս ԲՌ. (2000) դահեկան, որ առնէ կէսն Ռ. (1000) դահեկան՝ թանկա Թաբրեզի» (էջ 15)։

Մեզ ծանոթ Հովհաննես Խիզանցի գրիչը՝ ընդօրինակության համար աշխատավարձ ստացել է խառն ձևով՝ և՛ դրամով (մեծ մասը), և՛ բնամթերքով։ Նա անձնապես ստացել է ընդամենը 2150 դրամ, 6 կապիճ հաց, 1 լիտր յուղ և 2 լիտր մեղր (էջ 71)։ Չպետք է կասկածել, որ որոշ դեպքերում գրիչը ընդօրինակության վարձն ամբողջովին կարող էր վերցնել բնամթերքով։

Հիշատակարանները հնարավորություն են տալիս պարզելու նաև ԺԵ. դարի առաջին հիսնամյակի շուկայական մոտավոր գները որոշ ապրանքների նկատմամբ։ Իհարկե, տվյալներն այնքան պատահական են, և վերաբերում են տարբեր վայրերի ու տարեթվերի, որ դրանց հիման վրա տնտեսագիտական հարցեր առաջ քաշել ու լուծել գրեթե անհնար է։ Այնուամենայնիվ, ավելի ստույգ տվյալների բացակայության պայմաններում, անշուշտ, դրանք ևս արժանի են ուշադրության։

Մենք արդեն տեսանք, որ շուրջ 310 թերթից բաղկացած ավետարանի գրության համար անհրաժեշտ թղթի դիմաց 1427 թվականին պատվիրատու Աբրահամը վճարել է 40 դրամ (էջ 366)։

Այլ առիթով նշել ենք նաև, որ 1407 թվականին 6 կապիճ ցորենի արժեքը Հովհաննես Խիզանցի գրիչը հաշվում է 200 դրամ, այլ խոսքով՝ մի կապիճ ցորենի արժեքը եղել է մոտավորապես 33 դրամ։ Հացի գինը, բնականաբար, հսկայական տատանումներ է տվել քաղաքական խառն իրադարձությունների՝ պատերազմների ու ասպատակությունների ժամանակ, ինչպես նաև սովի, մորեխի և բնական այլ աղետների հետևանքով։

Նույն Խիզանում, վերոհիշյալ տվյալից ընդամենը վեց տարի առաջ, մեկ կապիճ հացը վաճառվել է 200 դրամով (վեց անգամ թանկ 1407 թվականի գնից), որովհետև, ինչպես հաղորդում է Զաքարիա գրիչը՝ «եկն մարախ և եղև սով սաստիկ ընդ ամենայն երկիր» (էջ 8)։

1413 թվականին գրված մի հիշատակարան հնարավորություն է ընձեռում մոտավոր չափով որոշելու նաև կովի և եզան գինը։ Այդ թվականին ոմն Մարտիրոս 600 դահեկանով վաճառում է իր հանգուցյալ հորեղբոր ավետարանը և ստացած դրամով գնում է «մին կով և մին եզն» (էջ 160)։

Անտարակույս, նոր նյութերի, հատկապես վիմական արձանագրությունների և հետագա դարերի հիշատակարանների ու կալվածագրերի մեջ եղող տվյալների ուսումնասիրության միջոցով որոշ հնարավորություններ կստեղծվեն վերոհիշյալ ապրանքների շուկայական գների ստուգման ու ճշտման համար։

Ահա համառոտակի թվարկմամբ այն կարևոր բնագավառները, որոնց մասին արժեքավոր տվյալներ են պարունակում ԺԵ. դարի առաջին հիսնամյակի ընթացքում գրված հիշատակարանները։ Եթե վերհիշենք, որ հայ ժողովրդի ԺԵ. դարի առաջին հիսնամյակի պատմության ուսումնասիրության համար մասնագետների ձեռքի տակ, բացի Թ. Մեծոփեցու «Պատմությունից» և Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղետից» գրվածքից, հայերեն լեզվով կարևոր այլ սկզբնաղբյուրներ չկան, ապա ավելի ցայտուն կդառնա հրատարակվող հիշատակարանների արժեքն ու նշանակությունը։

17

Հիշատակարանները շարադրել են ձեռագրերի ընդօրինակության ու նկարազարդման ծանր և դժվարին գործի համեստ մշակները՝ գրիչներն ու ծաղկողները։

Նրանց մեծագույն մասը իրենց գիտակցական կյանքի ողջ ընթացքում օր ու գիշեր, զբաղվել են ձեռագրերի ընդօրինակությամբ, դրանով իսկ հայթայթելով իրենց և իրենց ընտանիքի սուղ պարենը։

Գրիչների կյանքի ու աշխատանքի պայմանների մասին հիշատակարաններում կան պերճախոս ու բովանդակալից բազմահարուստ տվյալներ։

ԺԵ. դարի ամենաբազմարդյուն գրիչներից է արճիշեցի Հոհաննես Մանգասարենցը (կամ Մանգասարի որդին)։ Նա ծնվել է մերձավորապես 1417—1419 թվականներին, ապրել է 86 տարի, և 14 տարեկան պատանի հասակից մինչև իր մահը, 72 տարի շարունակ, ընդօրինակել է ձեռագրեր։

Նրա աշակերտներից մեկը՝ Զաքարիա գրիչը, 1505 թվականին շարունակելով Հոհաննեսի մահով կիսատ մնացած ձեռագրի ընդօրինակությունը, կարևոր տվյալներ է հաղորդում իր ուսուցչի կյանքի ու գործունեության մասին։ Նա գրում է.

«Եւ արդ, գրեալ եղև Յոհան գլուխն ձեռամբ վարդապետին իմոյ տէր Յոհանիսի Մանգասարենց քաշ քարտողին, որ ՀԲ. (72) տարի՝ ամառն և ձմեռն, գիշերն ու ցերեկ ի գրել եկաց։ Որ գրեալ եղև ձեռամբ նորա Խ. (40) Այսմաւուրք և Տարենգիրք, իսկ փոքր գիրք՝ Տետր և Աղօթամատոյց, Շարակնոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձատետր՝ Ծ. (50)—Կ. (60) և այլ աւելի, և Աւետարան ԼԲ. (32)։ Եւ զայս Յոհան գլուխս ի ծերութեան ժամանակիս, որ աչք չէր հայիլ և ձեռքն կու դողայր, բազում չարչարանօք հազիւ կարաց աւարտել, և այլ չկարաց դրիչ բռնել մինչ ի վախճան, որ յանգեաւ ի Քրիստոս ՁԶ. (86) ամաց» (էջ 587 *)։

Այսպիսով, իր կյանքի ընթացքում Հոհաննես Մանգասարենցը, որ դեռ երիտասարդական տարիներին գրած հիշատակարաններում փանգատվում է իր աչքերի տկարությունից, ընդօրինակել է 132 մեծ ու փոքր ձեռագիր։

Հոհաննեսը, անշուշտ, միայնակ չէր, և նրա նման իրենց ողջ կյանքն ·անց են կացրել գրքերի բազմացման տաժանակիր աշխատանքի մեջ Գրիգոր Խլաթեցին, Թովմա Մինասենցը և բազմաթիվ այլ գրիչներ ու ծաղկողներ։

Ծանր է եղել նրանց կյանքի և աշխատանքի պայմանները, նրանք ստիպված են եղել շարունակել գրքերի ընդօրինակությունը քաղցած ու ծարավ, անտուն և անօթևան, տկար և հիվանդ վիճակում, գաղթի ու փախուստի ճանապարհին, օտար նվաճողների հրոսակախմբերի կողմից բռնվելու, կողոպտվելու և սպանվելու վտանգի տակ։

Իրենց տխուր վիճակի մասին ևս գրիչներից շատերը հաղորդում են կենդանի ու խոսուն բազմաթիվ տվյալներ։ Արիստակես գրիչը, Դարանաղյաց գավառի Ավագ վանքում 1408 թվականին ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում խնդրում է անմեղադիր լինել իր սխալների նկատմամբ, «զի շաղգամով մալէզն (ալյուրով պատրաստած կերակուր) և կորեկէ ճաթն օգնական եղև մեզ ի գրելն» (էջ 89), Ֆռանգ գրչի աղքատիկ կերակուրը «ճաթբուր» է եղել, իսկ ջուրը՝ «ցուրտ»։

Գրիգոր գրիչը Խառաբաստի վանքում տառապում է սաստիկ գլխացավից, բայց ընդօրինակվող գրքի հետաքրքրությունը մոռացնել է տալիս գլխացավը. «վա՜, ի գլխի ցաւէս, թէ որպէս նեղին,—գրում է նա,—բայց փափաքումն բանիս կու յաղթէ» (էջ 145)։

Ծերունի Սարգիս գրիչը 1416 թվականին, «աչօք կուրացած» շարունակում է ձեռագրի ընդօրինակության ծանր աշխատանքը։ Նա փանգատվում է իր վի-

ճակից. «Վա՜յ, որ ձեռս կու դողայ, ու ազգի ազգի կիրս կու ափրեմ, ի՞նչ առնեմ, որ ծեր եմ ու աչքս վատատես է, Խ. (40) տարի է, որ գիր կու գրեմ, Թուզութիւն արարէք» (էջ 184)։

Նույն գրչին հանդիպում ենք նաև չորս տարի հետո, 1420 թվականին, ավելի անմխիթար վիճակում, բայց դարձյալ ձեռագիր ընդօրինակելիս։

«Բայց գիտեմ,— գրում է նա,— որ գրիդ բաղում պակասութիւն կայ և անթիւ, թէպէտ որ շատ կայ՝ մեր կարն այդ չափդ էր, ձեռս կու դողայր և աչքս բնաւ չէր տեսնուլ, գրչի մատն չորացած էր, միչի մատամբս ծրեցաք» (էջ 245)։

Մելքիսեթ գրիչը ցերեկը չի կարողացել աշխատել, «քանզի ցորեկն պզտիկ էր, և ցնորն շատ, և սիրտս խոցած յեղբաւրէ», ուստի ստիպված՝ հիմնականում աշխատել է գիշեր ժամանակ, խավար ճրագի ներքո. «խոշորութեան անմեղադիր լէր, ո՜վ եղբայր,— աղերսում է նա,— զի գիշերն եմ գրեր՝ ի ճրագն, յամէն գիշեր Ը. (8) թուղթ և ցորեկն՝ երկու թուղթ կամ երեք» (էջ 387)։

Թորոս գրիչն աշխատել է 1431 թվականի սովի ու արշավանքների ժամանակ, նրան մեծ չափով խանգարել է նաև ցուրտը՝ «որ ե. թանաքն մսեցաւ և ոչ ելաւ պիտոյ»,— գանգատվում է նա (էջ 417)։

Ավելի ծանր է եղել Սիմեոն գրչի դրությունը։ 1439 թվականին նա հայտնում է, որ «մին աչքս կու ցաւէր, նա խբեցի ու մին աչովն գրեցի՝ խիստ աշխատանաւք»։ Ձեռագրի ընդօրինակության ընթացքում նա մի քանի անգամ գանգատվում է աչքի սուր ցավերից, ի վերջո, երբ հաջողությամբ ավարտում է սկսած գործը, ուրախացած արձանագրում է՝ «Ահայ ազատեցար շլրած աչկունք, կզացաց շլնեկունք, կո[տրած] ոտկունք» (էջ 497)։

Գրիչների մի մասը, տոգորված լինելով քրիստոնեական գաղափարախոսությամբ, մեծ կուլտուրական նշանակություն են վերագրել իրենց կողմից ընդօրինակվող եկեղեցական բովանդակությամբ ձեռագրերին։ Նրանցից մեկը դիմում է իր հետագա ընթերցողներին և աղերսում լավ խնամել գիրքը, «զի գիրքն (իմա՛ սուրբ գիրքը) մարդոյ հոգի է և կեանք. իմ դատաստանն, թէ գրէանքս չէին՝ նա աշխարհըս ամէն ի կռապաշտութիւն անկանէր» (էջ 148)։

Բայց գրիչների մեծամասնությունն անտարբեր է մնացել ընդօրինակվող կրոնական բովանդակությամբ ձեռագրերի նկատմամբ, և օգտագործել է ամեն պատեհ առիթ, ձեռագրի մի անկյունում կամ դատարկ մնացած մի քանի տողերի վրա, բարբառախառն ու կենդանի լեզվով դիմելու իր ընթերցողներին, գանգատվելով աշխատավոր ժողովրդին վիճակված տխուր կյանքից ու ծանր առօրյայից։ Այսպիսով, ստեղծվել են այն բազմաթիվ հիշատակագրությունները, որոնք պատշաճ տեղ են բռնում հրատարակվող ժողովածուի մեջ։

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հրատարակվող ժողովածուի մեջ ընդգրկված 744 հիշատակարանների կեսից ավելին՝ 384 հիշատակարան, քաղել ենք Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական ձեռագրատան (Մատենադարանի) հայերեն ձեռագրերից։ Այդ նպատակով մեկ առ մեկ թերթել ենք ոչ միայն 1401—1450 թվականների ընթացքում ընդօրինակված շուրջ 300 ձեռագրերը, այլ նաև բոլոր այն ձեռագրերը, որոնք գրվել են նախորդ դարերում, սկսած 887 թվականին ընդ-

օրինակված հնագույն ավետարանից՝ մինչև 1400 թվականի ձեռագրերը (թվով մոտ 900 ձեռագիր)։ Սրանց մեջ փնտրել ենք հետագա ստացողների ու նորոգողների կողմից ԺԵ. դարի առաջին հիսնամյակի ընթացքում շարագրած հիշատակարաններ։

Բացի այդ, անձամբ ուսումնասիրել ենք Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի Արևելյան ձեռագրերի սեկտորի հայերեն ձեռագրերի հավաքածուն՝ բաղկացած 316 հայերեն ձեռագրերից, Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանի Ձեռագրական բաժնի հայերեն 90 ձեռագրերը (ԺԵ. դարի առաջին կեսից քաղել ենք յոթ հիշատակարան), Վրացական ՍՍՌ Պետական թանգարանի Ձեռագրական բաժնի հայերեն ձեռագրերի հավաքածուն՝ բաղկացած 207 ձեռագրերից (քաղել ենք երեք հիշատակարան), Վրացական ՍՍՌ Պետական կենտրոնական պատմական արխիվի № 223 ֆոնդի 36 հայերեն ձեռագրերը (քաղել ենք մի հիշատակարան), Բաքվի Նիզամիի անվան Ձեռագրատան 10 ձեռագրերը (քաղել ենք մի հիշատակագրություն) և Մոսկվայի Լենինի անվան գրադարանի ու Պատմական թանգարանի ձեռագրական բաժիններում, ինչպես և Արևելյան արվեստների թանգարանում պահվող շուրջ 40 հայերեն ձեռագրերը (ԺԵ. դարի առաջին կեսի հիշատակարաններ սրանց մեջ չկան)։

Ժողովածուն կազմելիս օգտագործել ենք նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվում, Մատենադարանում և Հայաստանի Պատմական թանգարանում պահվող հայերեն ձեռագրերի անտիպ բոլոր ցուցակները։ Դրանք են.

1. Մեսրոպ Տեր-Մովսիսյանի կազմած աշխարհի բոլոր հայերեն ձեռագրերի թերի ցուցակը, որը պարունակում է Երևանի Մատենադարանի ձեռագրերի նկարագրություններից ու հիշատակարաններից բացի, նաև մի շարք այլ երկրների թանգարաններում ու ձեռագրատներում պահվող հայերեն ձեռագրերի նկարագրություններ։

Ցավոք, Մ. Տեր-Մովսիսյանին չի հաջողվել անձամբ ուսումնասիրել Վենետիկի Մատենադարանի ձեռագրերը (նրան այդ բանը թույլ չեն տվել), իսկ Երուսաղեմում նա եղել է շատ կարճատև ժամանակ, ուստի և հնարավորություն չի ունեցել մանրամասնորեն ծանոթանալու և նկարագրելու ս. Հակոբի վանքի Մատենադարանում պահվող բոլոր 3700 հայերեն ձեռագրերը։ Ժամանակի սղության պատճառով նա նույնիսկ չի կարողացել լրիվ ընդօրինակել իր տեսած ձեռագրերի հիշատակարանները և շատ դեպքերում բավարարվել է միայն հիշատակարաններից որոշ քաղվածքներ անելով, կամ նրանց բովանդակությունը համառոտ վերաշարադրելով։

Այնուամենայնիվ, որքան էլ թերի համարենք Մ. Տեր-Մովսիսյանի կազմած հայերեն ձեռագրերի ցուցակը, նրա մեջ կան բազմաթիվ արժեքավոր և մինչ այժմ անտիպ մնացած հիշատակարաններ ու ձեռագրերի նկարագրություններ, որոնք մեծապես օգնել են սույն ժողովածուի լրացման գործին։

Մ. Տեր-Մովսիսյանի ցուցակից քաղել ենք ընդամենը 65 հիշատակարան, դրանցից՝ 30 հիշատակարան Երուսաղեմի ձեռագրերից, 12 հիշատակարան Վենետիկի ձեռագրերից, 23 հիշատակարան այլևայլ վայրերից (Պետերբուրգ*,

* Մ. Տեր-Մովսիսյանը հայտնում է, որ Պետերբուրգում, Կ. Եզյանի տանը պահվում էին 120 հայերեն ձեռագրեր, որոնք գնված էին Կարինի Սանասարյան վարժարան ուղարկելու համար։ Այդ ձեռագրերը հետագայում, Մ. Տեր-Մովսիսյանի կողմից նկարագրվելուց հետո, երբ, զոհ են գնացել մի հրդեհի, որ տեղի է ունեցել այն պահեստում,

Փարիզ, Կ. Պոլիս, Կիպրոսի Նիկոսիա քաղաք, Իրան, Ախալքալաք, Շուշի և այլն)։

Բացի վերոհիշյալից, Մ. Տեր-Մովսիսյանի միջնորդությամբ կարողացել ենք օգտվել նաև Ղ. Ալիշանի կազմած «Հայկարան» կոչվող հիշատակարանների անտիպ ժողովածուից (քաղել ենք 11 հիշատակարան), և Հ. Բարաղամի «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի» անտիպ ցուցակից (քաղել ենք 5 հիշատակարան)։

Մ. Տեր-Մովսիսյանի ցուցակը այժմ պահվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվում։

2. Սմբատ Տեր-Ավետիսյանի կազմած «Նկարագրություն Նոր-Ջուղայի Ամենափրկիչ և այլ վանքերի ու մասնավոր անձանց մոտ գտնվող հայկական ձեռագրերի» անտիպ ցուցակը, որը նույնպես պահվում է Պատմության ինստիտուտի արխիվում (թղթապանակ № 48)։ Ցուցակում նկարագրված են 580 հայերեն ձեռագրեր և բերված նրանց հիշատակարանները։ Այս նույն հիշատակարանները, սակավ բացառությամբ, կան նաև Մ. Տեր-Մովսիսյանի ցուցակում, ուստի և մենք հնարավորություն ենք ունեցել, մեկի արտագրությունը համեմատելով մյուսի հետ՝ խուսափել սխալներից և լրացնել թերությունները։

Նոր-Ջուղայի ձեռագրերի հիշատակարաններից հրատարակվող ժողովածուում տեղ են գտել 14-ը։

3. Նույն Սմբատ Տեր-Ավետիսյանի կողմից, 1904 թվականին կազմած «Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի ս. Ստեփանոսի, որ ի Գողթն» անտիպ ցուցակը (Պատմության ինստիտուտի արխիվ, թղթապանակ № 94)։ Ցուցակը պարունակում է 124 ձեռագրերի մանրամասն նկարագրություն ու հիշատակարաններ, որոնցից 3-ը վերաբերում են ԺԵ. դարի առաջին կեսին։

4. Տիրայր վարդապետի կազմած «Մայր ցուցակ Օքսֆորդի Բոդլեյան գրատան հայերեն ձեռագրերի» անտիպ ցուցակը („Ceneral Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library at Oxford"), որ պարունակում է 132 ձեռագրերի մանրամասն նկարագրություն։ Ցուցակը պահվում է Երևանի Մատենադարանի արխիվային բաժնում (Անհատական արխիվների ֆոնդ, թղթապանակ № 119—122)։ Այստեղից քաղել ենք 2 հիշատակարան։

5. Երվանդ Լալայանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի» աշխատության անտիպ շարունակությունը։ Սրա մի մասը՝ №№ 481—708 ձեռագրերի նկարագրությամբ, պահվում է Հայաստանի Պատմական թանգարանի ազգագրական բաժնում (Ե. Լալայանի արխիվ, թղթապանակ № 134), որից և անձամբ օգտվել ենք, իսկ մյուս մասի հետ, որի տեղը մեզ անհայտ է, ծանոթացել ենք Մ. Տեր-Մովսիսյանի Ցուցակի միջնորդությամբ։ Ե. Լալայանի Ցուցակի անտիպ մասից քաղել ենք ընդամենը 4 հիշատակարան։

6. Քեշիշյանի կազմած Զմմառի (Բեյրութի մոտ) հայերեն ձեռագրերի ցուցակը, որի լուսանկար մի պատճենը այժմ գտնվում է Մատենադարանում։ Որոշ տեղեկությունների համաձայն, Զմմառի վանքի հայերեն ձեռագրերի քանակը

ուր նրանք ապահովության համար. դրվել էին Կ. Եղյանի կողմից։ Որքանով է ճիշտ այդ տեղեկությունը՝ դժվարանում ենք որոշել։ Սակայն այդ հավաքածուի մեջ մտնող ձեռագրերից մի երկուսը (օրինակ № 8160 ձեռագիրը, որը Սանահնի «Քօթուկի» ընդօրինակությունն է) այժմ պահվում են Մատենադարանում։ Ուստի պետք է ենթադրել, որ կամ հրդեհի մասին տվյալը իրականության չի համապատասխանում և կամ՝ հրդեհին զոհ են գնացել ոչ բոլոր ձեռագրերը։

պետք է լինի շուրջ 700։ Մատենադարանում եղող ցուցակում, սակայն, նկարագրված է միայն 154 ձեռագիր։ Այդ ձեռագրերից ԺԾ. դարի առաջին հիսնամյակին են պատկանում միայն 4-ը *։

Այսպիսով, հայերեն ձեռագրերի անտիպ ցուցակներից հրատարակվող ժողովածուի մեջ տեղ են գտել 108 հիշատակարան։ Ուստի, անմիջապես ձեռագրերից և ձեռագիր աղբյուրներից քաղված հիշատակարանների քանակն է 504. այլ խոսքով, ժողովածուի մեջ ընդգրկված հիշատակարանների շուրջ 68 տոկոսը քաղված է ձեռագիր աղբյուրներից։

* * *

Հիշատակարաններ գտնելու համար նայել ենք առանձին գրքերով և պարբերական մամուլում հրատարակված հայերեն ձեռագրերի մեծ ու փոքր համարյա բոլոր ցուցակները և հիշատակարանների ժողովածուները **։

Ստորև թվարկում ենք ձեռագրերի միայն այն ցուցակներն ու հիշատակարանների ժողովածուները, որոնց մեջ կան ԺԾ. դարի առաջին հիսնամյակում շարադրված հիշատակարաններ։ Թվարկումը կատարում ենք ըստ նրանց օգտակարության. սկզբից տալիս ենք աշխատությունների վերնագրերի համառոտած ձևը՝ այնպես, ինչպես նրանք նշված են սույն ժողովածուի մեջ։

1. Փիրղ. Նոտարք — Նոտարք Հայոց, հաւաքեալ և ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդ վարդապետի Փիրղալեմեան Տոսբեցւոյ, Վարագայ վանուց վանականի... Կ. Պոլիս, 1883"։

«Նոտարք Հայոցի» մեջ ԺԾ. դարի առաջին կեսից կա 85 հիշատակարան, որոնց ձեռագրերը կորուստի են մատնվել կամ ոչնչացվել առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ թյուրքական վանդալների կողմից։

Օգտագործել ենք նաև այդ աշխատության բնագիրը՝ «Աշխարք պատմութեան Հայոց» խորագրով, որը պահվում է Մատենադարանում, № 6273-ի տակ, ինչպես նաև նույնի լրացումը՝ «Աշխարք պատմութեան Հայոցի» Բ. հատորը (ձեռագիր № 4515)։

«Նոտարքի» տպագիր տեքստից Ղ. Փիրղալեմյանն ստիպված է եղել դուրս հանել մի շարք կարևոր հատվածներ, որոնցում հիշատակագիրները խոսել են մահմեդական իշխողների բռնությունների ու հպատակ ժողովուրդների նկատմամբ գործած անգթությունների մասին։ № 4515 ձեռագրում հիշատակարանների բնագրերն ընդօրինակված են անվթար, ուստի և դրանց միջոցով հնարավորություն ենք ունեցել լրացնելու տպագիր տեքստում կատարված սղումների մի մասը։ Այսպես, օրինակ, Մկրտիչ գրիչը 1432 թվականին Արճեշում շարադրած հիշատակարանի մեջ իր ժամանակը բնորոշում է այսպես՝ «Ի չար

* Զմմառի ցուցակի լուսանկար պատճենը Մատենադարանը ստացավ այն ժամանակ, երբ սույն ժողովածուի բնագրային մասն արդեն տպագրված էր։ Ուստի վերոհիշյալ 4 հիշատակարանները հնարավորություն ունեցանք հրատարակելու վերջում, որպես լրացում։ «Լրացում» կոչված բաժնում ենք հրատարակել նաև Լենինգրադում պահվող հայերեն ձեռագրերի հիշատակարանները։

** Կարևոր ցուցակներից ձեռքի տակ չենք ունեցել Լ. Մելիքսեթ-Բեկի «Նյութեր հայերեն ձեռագրացուցակների բիբլիոգրաֆիայի համար» (Թբիլիսի, 1939) աշխատության № 37-ի տակ նշված՝ Ֆ. Մակլերի „Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède. Paris, 1924" ցուցակը, ուր նկարագրված են 91 հայերեն ձեռագրեր, ինչպես նաև Ա. Սուրմեյանի կազմած Երուսաղեմի Մատենադարանի հայերեն ձեռագրերի Մայր ցուցակի առաջին պրակը։

և ի դառն ժամանակիս, յորում տառապին ազգ քրիստոնէից զանազան պատուհասիւ ի ձեռաց անօրինաց, ի թոյլ տալոյն աստուծոյ վասն բազմութեան մեղաց մերոց։ Ի թագաւորութեան աշխարհաւէր և անիմաստ Սկանտարին» (էջ 424—425)։ Հիշատակարանի «Նոտարքում» տպագրված տեքստից (էջ 100—101) հանված են վերոհիշյալ նախադասության ընդգծված բառերը։

Թովմա Մինասենցը 1445 թվականին ընդօրինակած Մաշտոցի հիշատակարանում ունի այսպիսի բառեր. «... որք են ազգաւ թուրք (խոսքը Ջհանշահի և Ղլիճ-Ասլանի մասին է)՝ յոյժ հարկապահանջողք և կեղեքիչք քրիստոնէից» (էջ 579)։ «Նոտարքից» բացակայում են նաև այս ընդգծյալ բառերը և այլն։

Գ. Փիրղալեմյանի հավաքած ու հրատարակած հիշատակարանները, բացի գրաքննչական նկատառումներով կրած աղումներից ու աղճատումներից, կրել են նաև այլ կարգի կրճատումներ ու փոփոխություններ։ Հավաքողը հաճախ իրեն իրավունք է վերապահել կցկցել հիշատակարանների տարբեր մասերի նյութը միմյանց՝ դուրս թողնելով ընդարձակ ու կարևոր հատվածներ։ Հետագայում նա զգացել է իր սխալը և «Նոտարքի» ծանոթագրություններից մեկում այդ մասին դրել է. «Վասն աղութեան ժամանակիս ի մերումս ճանապարհորդութեան բազում անգամ ստիպեալ ակամա զանց արարեալ եմ զպարագայս և զանուանս վարժապետաց և ծնողաց ինձ համդիպեալ յիշատակարանս գրողաց. բայց աւա՜ղ, այժմ ողջամ յոյժ յոյժ, թերևս նոյն անուանք առաւել ևս կարէին լոյս սփռել ի վերայ մութ և աղօտ պատմութեանց» (էջ 206, ծանոթագրություն 2-րդ)։ Մենք առավել ցավ ենք զգում այդ առթիվ, որովհետև Փիրղալեմյանի տեսած ձեռագրերի մի զգալի մասն այժմ գոյություն չունի...։

2. ԼՑՎ.— Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալայեան, պրակ առաջին, Թիֆլիս, 1915։

Այս Ցուցակից քաղել ենք ԺԵ. դարի առաջին հիսնամյակում գրված 14 հիշատակարան։ Ինչպես ասացինք, 4 հիշատակարան էլ քաղել ենք նույն ցուցակի անտիպ շարունակությունից։

3. «Թորոս Աղբար», Ա.— Գ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Հայաստանի ճամբորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879։ Այստեղից վերցրել ենք 5 հիշատակարան։

4. «Թորոս Աղբար», Բ.— Նախորդ աշխատության երկրորդ մասը (տպ. Կ. Պոլիս, 1885 թ.), վերցրել ենք 9 հիշատակարան։

5. ՄՑՎ, հտ. Ա.— Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր առաջին, յօրինեց Բարսեղ Սարգիսեան, Վենետիկ, 1914։

6. ՄՑՎ, հտ. Բ.— Նախորդ ցուցակի երկրորդ հատորը (տպ. Վենետիկ, 1924 թ.)։ Այս երկուսից վերցրել ենք ընդամենը 13 հիշատակարան։

7. ՄՑՀ, հտ. Ա.— Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց, կազմեց Արտաւազդ արքեպս. Սիւրմէեան, Երուսաղէմ, 1935 (հատ. Ա.)։

Պարունակում է 191 հայերեն ձեռագրի նկարագրություն. քաղել ենք 9 հիշատակարան։

8. ՄՑՀ, հտ. Բ.— Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնաւորաց. Բ. հատոր, կազմեց Արտաւազդ Սիւրմէեան, Հալէպ, 1936 թ.։

Պարունակում է 54 հայերեն ձեռագրի նկարագրություն. քաղել ենք երկու հիշատակարան։

9. **ՆՎՐ. ՄԱՍՆ. ՆԱՎԱՐՈՒՄՆԵՐ.**—*Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, կազմեց Արտաւազդ Սիւրմէեան, առաջին հատոր, Փարիզ, 1950։*

Այստեղ նկարագրված է 38 ձեռագիր. քաղել ենք մեկ հիշատակարան։

10. **ՎԻԵՆ.**— *Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895։*

Քաղել ենք 10 հիշատակարան։

11. **Բրիտ. թանգարան.**—A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, by Frederick C. Conybeare, London, 1913:

Ունի ԺԵ. դարի առաջին կեսից 8 հիշատակարան։

12. **Սեբաստիա ս. Նշան.**— *Թ. Գուշակեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ս. Նշանի վանուց ի Սեբաստիա (տպ. «Հանդէս Ամսօրեայի» 1922—1930 թթ. համարներում). քաղել ենք 5 հիշատակարան։*

13. **Մ. Աթոռ.**— *Ցուցակ մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի (տպ. «Էջմիածին» ամսագրի 1950—1952 թթ. համարներում)։*

Նկարագրված է ընդամենը 101 ձեռագիր. քաղել ենք 4 հիշատակարան։

14. **Տ. Պալեան, «Լոյս».**— *Տրդատ եպիսկոպոս Պալեան, «Ձեռագիրք Կեսարիոյ վիճակին վանօրէից, ս. եկեղեցեաց և անհատից սեփական», տպագրված Կ. Պոլսի «Լոյս» շաբաթաթերթի 1905—1906 թթ. համարներում (1905 թ., էջ 286—288, 516—519, 661—664, 776—778, 827—828, 967—971, 1138—1140, 1249—1251. 1906 թ., էջ 333—336, 479—480, 910—911, 1030—1032, 1127—1128, նաև էջ 143 և 645, վերջին երկուսը չեմ տեսել)* *։

15. **ՔՑԲ.**—Die Handschriften Verzeichnisse der Königlichen Bibliothek zu Berlin, zehnter Band. Verzeichniss der armenischen Handschriften von dr. N. Karamianz, Berlin, 1888.

(Նույնի ավելի համառոտ վարիանտը՝ Ն. Քարամյան «Ցուցակ Պեռլինի

** Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակած «Նյութեր հայերեն ձեռագրացուցակների բիբլիոգրաֆիայի համար» աշխատության մեջ Տ. Պալյանի Ցուցակների մասին տվյալներ չկան։ Օգտվելով առիթից, լրացնում ենք այդ բացը։*

Բացի վերոհիշյալից Տ. Պալյանը, առանձին պրակներով ու ամսագրերի մեջ, լույս է ընծայել հետևյալ ցուցակները.

1. «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հտ. Ա. Կեսարիոյ վիճակ, տետր Ա. Ցուցակ հայերէն ձեռագրաց ս. Սարգսի վանուց ի Կեսարիա, կազմեց Տրդատ վրդ. Պալեան, Կոստանդնուպոլիս, 1892», 36 էջ։ Պարունակում է 12 ձեռագրի նկարագրություն։

2. «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հտ. Ա. Կեսարիոյ վիճակ, տետր Բ. Ցուցակ հայերէն ձեռագրաց սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Կեսարիոյ և սուրբ Գէորգ եկեղեցւոյ Գըրշէհիրի, կազմեց Տրդատ վրդ. Պալեան, Կոստանդնուպոլիս, 1893», 36—74 էջ։ Պարունակում է 27 ձեռագրի նկարագրություն։

3. «Թեմօրայք Կեսարիոյ վիճակին և հայերէն ձեռագիրք» (տպ. «Մաղիկ» շաբաթաթերթի 1891 թ., №№ 47, 48, 50)։ Նկարագրում է 18 ձեռագիր։

4. «Ցուցակ հայերէն ձեռագրաց ս. Սիոն եւ ս. Լուսաւորիչ եկեղեցեաց Մաղնիսիայի» (տպ. «Արեւելեան մամուլ» կիսամսյա թերթում, սկիզբ՝ 1897 թ. № 4, էջ 127, վերջ՝ 1897 թ., № 16, էջ 555)։ Նկարագրում է 12 ձեռագիր։ Այս նույնը լույս է տեսել նաև առանձին գրքով, Զմյուռնիայում, 1898 թ., որը չենք տեսել։

5. «Ազգային հին ձեռագիրք» խորագրի տակ՝ 1484 թ. ընդօրինակված մի ճաշոցի նկարագրությունը (տպ. «Մաղիկ» շաբաթաթերթի 1891 թ., № 32 համարում, էջ 3—4)։

6. «Ցուցակ հայերէն ձեռագրաց ս. Կարապետի վանուց նոր գրատան, ի Կեսարիա»։ Անտիպ, ունեցել է 160 ձեռագրի նկարագրություն, որից միայն 44-ի նկարագրությունը փրկված է ու պահվում է Վիեննայում (տես ՀԱ, 1923, էջ 548—558)։

արքայական Մատենադարանի հայ ձեռագրաց», լույս է տեսել «Բազմավէպ» ամսագրում, 1886 թ., էջ 183—192)։

Այստեղից քաղել ենք 3 հիշատակարան։

16. **Թավրիզ.**— *Հ. Աճառյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա, 1910։*

Օգտագործել ենք ստուգման ու լրացման նպատակով նաև Հովսեփ Հովհաննիսյանի կողմից, Խաչիկ Դադյանի հանձնարարությամբ, 1898 թվականին կազմած «Ցուցակ Թաւրիզի Հայոց Արամեան գրադարանի ձեռագրերի» անտիպ ցուցակը, որը № 19-ի տակ պահվում է Մատենադարանի հին ցուցակների ֆոնդում։ Հ. Աճառյանի ցուցակից քաղել ենք 3 հիշատակարան։

17. **Թեհրան.**—*Ցուցակ հայերէն ձեռագրաց Թեհրանի, կազմեց Հ. Յ. Աճառեան (ՀԱ, 1935, սյուն. 307—315)։ Ունի ԺԵ. դարից միայն մեկ հիշատակագրություն։*

18. **Նոր-Բայազետ.**—*Հ. Աճառյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Բայազետի, Վիեննա, 1924։*

19. **Գալեմք. Ցուց. Միւնխենի.**— *Ցուցակ հայերէն ձեռագրաց արքունի Մատենադարանին ի Միւնխէն, կազմեց Հ. Գրիգորիս վ. Գալէմքարեան, Վիեննա, 1892։ Քաղել ենք երկու հիշատակարան։*

20. **Ագուլիս և շրջակայք.**— *Մեսրոպ Մաքսուդեան, Նկարագրութիւն և յիշատակարանք ձեռագրաց ս. Թովմայ առաքելոյ վանուց և եկեղեցեացն վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ և անձանց մասնաւորաց (տպագրված է «Արարատ» ամսագրի 1911 թ. №№ 2—12, 1914 թ. №№ 11, 12, 1915 թ. №№ 1, 4, 5-ում)։ Պարունակում է 38 ձեռագրի նկարագրություն, քաղել ենք երկու հիշատակարան։*

21. **Լվովի համալսարան.**— *Ն. Ակինյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց համալսարանի Մատենադարանին ի Լվով (տպ. ՀԱ, 1936 թ., սյուն. 501—512, 1937 թ., սյուն. 111—150)։ Նկարագրված է 23 ձեռագիր։ Քաղել ենք մեկ հիշատակարան։*

22. **«Արձագանք».**— *Գ. Աղանյանցի հոդվածները՝ «Դարձեալ հայ գրչագիրների մասին» («Արձագանք», 1888, №№ 4, 5, 6, էջ 48—51, 60—64, 73—75) և «Հայ գրչագիրներ» («Արձագանք», 1888, №№ 9, 10, 11, 12, 25, 26, 27, 30, էջ 112—116, 128—131, 141—143, 156—158, 204—206, 352—353, 367, 378—379, 411—412) խորագրերով։ Այստեղից քաղել ենք մեկ հիշատակարան։*

23. **ԹԽԴ.**—*Յակոբ Յ. Թօփճեան, Ցուցակ ժողովածոյաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ., 1878—1898, Վաղարշապատ, 1900։ Քաղել ենք մեկ հիշատակարան։*

24. **Հանդես հայագիտության.**—Rapport sur une mission scientifique en Galicie et en Bukovine, par Frédéric Macler, *տպագրված՝* „Revue des etudes arméniennes, t. VII, farc. 1. 1927, *էջ 94—155։*

*Տալիս է 28 ձեռագրի նկարագրություն, որոնցից մեկը ԺԵ. դարի առաջին կեսից *։*

25. **Ցոնուս.**— *Հ. Յ. Տ., Ցուցակ հայերէն ձեռագրաց ս. Կարապետի վանուց Ցոնուցի (ՀԱ, 1894 թ., էջ 49—52)։ Քաղել ենք մեկ հիշատակարան։*

---

* *«Հանդէս Ամսօրեայ» ամսագրի (1939 թ.) միջնորդությամբ օգտագործել ենք նաև Ֆ. Մակլերի* „Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suede“ (Paris, 1924) *ցուցակում հրատարակված հիշատակարաններից մեկը։*

26. Հ. Ոսկեան, Վիեննա, անտիպ.— *Հ. Ոսկյանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» անտիպ ցուցակի մեջ նկարագրված են Հ. Տաշյանի Ցուցակի հրատարակությունից հետո Վիեննայում հավաքված շուրջ 500 հայերեն ձեռագրերը։ «Հանդէս Ամսօրեայի» 1945 թ. սյուն. 101—116-ում տպված են դրանցից մի քանիսի նկարագրությունները։ Այդտեղից քաղել ենք մեկ հիշատակարան։*

Բացի սրանից, հիշատակարաններ ենք քաղել նաև պատմագիտական, բանասիրական ու տեղագրական այն աշխատություններից, որոնց մեջ, այլևայլ նպատակներով ու առիթներով, խոսվել են հայերեն ձեռագրերի մասին և լրիվ կամ հատվածաբար մեջ են բերվել հիշատակարաններ։ Այդպիսի հիշատակարաններ գանելու հույսով նայել ենք մեծ թվով գրքեր ու հոդվածներ, սակայն մեր նպատակի համար օգտակար են եղել միայն հետևյալները.

1. Ղ. Ալիշան, Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890։

2. Ղ. Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893։

3. Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, կամ յարընչութիւնք Հայոց և Վենետաց ի ԺԳ—Դ և ի ԺԶ—Ջ դարս, Վենետիկ, 1896։

4. Ղ. Ալիշան, Կամենից, տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, հաւաստչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896։

5. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901։

6. Գիւտ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ., Մանր մատենագիրք, ԺԶ—ԺԹ դար, Թիֆլիս, 1912։

7. Մկրտիչ եպս. Աղաւնունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, 1929։

8. Առաքել Սիւնեցի, Ադամգիրք, հրատարակեց Հ. Մկրտիչ Պոտուրեան, Վենետիկ, 1907։

9. Մ. Աւգերեան, Լրումն լիակատար վարուց և վկայաբանութեանց սրբոց, հատոր ԺԱ, Վենետիկ, 1814։

10. Արցախ, Երկասիրեց Մակար եպս. Բարխուտարեանց, Բագու, 1895։

11. Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), ի Մակար Ծ. վարդապէտ Բարխուտարեանց, Թիֆլիս, 1893։

12. Ա. Հ. Գարտաշեան, Նիւթեր Եգիպտոսի Հայոց պատմութեան համար, Ա, Գահիրէ, 1943։

13. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884։

14. (Գ. Զարպհանալեան), Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889։

15. Ե. Լալայան, «Ջավախք», Հայ գրչագիրներ, «Ազգագրական Հանդէս», Բ. գիրք, 1897 թ., էջ 278—294։

16. Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատոր առաջին, Վենետիկ, 1835։

17. К. Кучук-Иоаннесов, Древние армянские рукописи из Крыма (оттиск из № 47 «Известии» Таврической Ученой Архивной Комиссии).

18. Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Յիշատակարան ԺԷ դարու, հրատարակեց Կ. Կոստանեանց, Վաղարշապատ, 1903։

19. Բագրեւանդ, Ջրաբաշխ գաւառ, մասն Ա, գրեց Ս. Հայկունի, Էջմիածին, 1894։

20. Գարեգին վարդ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը (կենսագրական նոր նյութերով), Վաղարշապատ, 1914։

21. Գ. Հովսեփյան, Դավիթ փիլիսոփա (Հարքացի), «Արարատ» ամսագիր, 1916 թ., նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 898—911։

22. Յ. Կ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895։

23. Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, ի Ներսիսէ Սարգսեան, Վենետիկ, 1864։

24. Մ. Սմբատեան, Նկարագիր ս. Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904։

25. Յակոբ վ. Քօսեան, Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, հատոր Բ, Վիեննա, 1899։

26. Յ. Քօսեան, Բարձր Հայք, հատոր Բ, Վիեննա, 1926։

«Հանդէս Ամսօրեայի» 1892, 1903, 1917/18, 1938 և 1942 թթ. ու «Արարատի» 1905 թ. համարներում հրատարակված հոդվածներից ևս քաղել ենք 10 հիշատակարան։

* * *

Հիշատակարանները պատրաստել ենք հրատարակության ճիշտ նույն սկզբունքներով, ինչ շարադրել ենք «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի առաջաբանում (տե՛ս էջ XXX—XXXIII)։

Գրեթե բոլոր ձեռագիր հիշատակարանները սկզբից ունեն մի քանի վարիանտներով կրկնվող տարտամ ու անհետաքրքիր, փառաբանություններով լի նախաբան՝ ուղղված աստծուն *։ Այդ բաժինը հրատարակությունից դուրս ենք

---

* Հիշատակարանների այդ «Փառք»-ի բաժինները գրիչները հաճախ բառ առ բառ ընդօրինակել են միմյանցից, սեփական ոչինչ չավելացնելով նրանց վրա։ Ստեղծվել են նաև հիշատակարանների, այսպես կոչված, «օրինակելի» ձևեր, որոնցում չեն գրվել միայն ընդօրինակողի և պատվիրատուի անունները, գրչության հանգամանքների, վայրի և թվականի մասին տվյալները։ Այդ տրաֆարետային հիշատակարաններից օգտվող գրիչները, որոնց թիվը բարեբախտաբար մեծ չի եղել, իրենց հիշատակարանները «շարագրել» են ձեռքի տակ ունեցած տրաֆարետների վրա ավելացնելով՝ միայն մի քանի անուններ ու տվյալներ՝ կապված իրենց աշխատանքի և ձեռագրի ընդօրինակության հանգամանքների հետ։ Այդ ձևով կազմված հիշատակարանները պատմական առումով չնչին արժեք են ներկայացնում։

Հիշատակարանների օրինակելի համարված ձևերի հետ ծանոթանալու նպատակով, ստորև հրատարակում ենք դրանցից մեկը՝ քաղելով 1476 թ. ընդօրինակված № 2335 ձեռագրից։

«Փառք եղակի պետութեանն և եռանձնեակ դաւանութեանն, համագոյ, համապայծառ, համագաղափար, զուգակշիռ, վսեմագոյ, ինքնագոյ էութեանն և միութեանն, հօր և որդւոց և հոգւոյն սրբոյ այժմ և անպայմանն յաւիտենիւ, ամէն։

Արդ, յանդ եկեալ աւարտեցաւ հոգեխօսիկ մատեանս, որ կոչի մանրուսումն ի շրջագայութեան Հայոց տումարի այսչափ, ի գաւառս [այս անուն], ի հայրապետութեան տեառն այս անուն, ի յերկնահանգէտ և ի դերահաչակ և ի հրեշտակաճեմ և յաստուածաբնակ վանքս, որ կոչի այս անուն, որ նման է վերին Երուսաղէմայ, ընդ հովանեաւ [այս անուն սրբութեան], ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս այս անուն, որ է վաքուքն մաքուր, բնութեամբ հեզ, լեզուաւն քաղցր, սրտիւն առատ, իմաստուն որպէս զանուանակիցն իւր, աւտարասէր որպէս զԱբրահամ (որչափ որ կամիս ասա), առ ոտս այս [անուն] առաջնորդի, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի։ Արդ, ստացաւ կրօնաւոր ոմն այս անուն, որ է ժիր և ուրի ի գործս առաքինութեան, անպատասուն, վարժեալ և սնեալ առ ոտս

թողել։ Որոշ դեպքերում, երբ հիշատակագիրները, շեղվելով պատմական նյութից, հիշատակարանների միջին մասում ևս կրկնել են տրաֆարետային իրենց մաղթանքները աստծու հասցեին, կամ նախորդ պարբերություններում արդեն հայտնած մտքերն ու անունները՝ համառոտել ենք նաև որոշ հատվածներ միջին մասերից, ամեն անգամ բազմակետերով նշում անելով այդ մասին։

Հիշատակարանների ուղղագրությունը, առանց բացառության, պահպանել ենք նույնությամբ։ Պահպանել ենք նաև տպագիր աղբյուրներից քաղված հիշատակարանների ուղղագրությունը, չնայած որոշ հրատարակություններում (օրինակ, Ղ. Փիրղալեմյանի և ուրիշների մոտ) դրանք «սրբագրված» են ԺԹ. դարում ընդունված ուղղագրական կանոնների համաձայն։

Կետադրությունը կատարել ենք ինքներս, որովհետև միջնադարյան ձեռագրերում կետադրության մշակված կանոններ չեն եղել, և ամեն ոք վարվել է ըստ իր կամեցողության, հաճախ բոլորովին չըմբռնելով իր կողմից գործածվող կետերի նշանակությունը։ Որպես բացառություն, նույնությամբ պահել ենք Հովհաննես Խիզանցի գրչի 1407 թվականին շարադրած հիշատակարանի կետադրությունը, որովհետև գրիչը հատուկ ուշադրություն է դարձրել այդ բանի վրա և մշակել է սեփական կանոններ (այդ մասին նա մանրամասն հաշիվ է տալիս իր հիշատակարանում, տե՛ս էջ 67—68)։

Մաշված կամ պատռված լինելու հետևանքով, ինչպես և այլ պատճառներով անընթեռնելի դարձած հատվածները նշել ենք երեք ուղղահայաց գծիկներով՝ ///։ Եթե այդ գծիկները դրված են հիշատակարանի վերջում, այդ նշանակում է, որ շարունակությունը չի պահպանվել։

Հիշատակարաններում ամենուրեք թվանշանները գրված են հայկական այբուբենի տառանիշերով, այսպես՝

Ա—1	Ժ—10	Ճ—100	Ռ—1000
Բ—2	Ի—20	Մ—200	Ս—2000
Գ—3	Լ—30	Յ—300	Վ—3000
Դ—4	Խ—40	Ն—400	Տ—4000
Ե—5	Ծ—50	Շ—500	Ր—5000
Զ—6	Կ—60	Ո—600	Ց—6000
Է—7	Հ—70	Չ—700	Ւ—7000
Ը—8	Ձ—80	Պ—800	Փ—8000
Թ—9	Ղ—90	Ջ—900	Ք—9000

Հիշատակարանների օգտագործումը հեշտացնելու նպատակով, ամեն անգամ, հայկական թվանշանների կողքին՝ շեղ փակագծերի մեջ՝ ( ) տվել ենք այդ նույն թվի արաբական համարժեքը, այսպես՝ ԲԺՌ. (12000), ԺԹ. (19) և

այս անուն, *իբրև զլապտեր վառեալ ի մէջ եկեղեցւոյ, և իբրև զանուշահոտ խունկ հաճոյացեալ աստուծոյ, և իբրև զծիծառն բանաւոր կանգնեալ ի մէջ տաճարի, և որպէս զմեղու կարօտեալ երկնային ցօղին։ Այսպէս և սա ցանկացաւ եղև այսմ գրոցս և ետ գրել զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնաւղաց իւրոց։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա՝ ընդ նմին և գիս՝ զանարժան գծողս* զայս [անուն], *որ կամաւն աստուծոյ սկսայ և աւգնականութեամբ նորին կատարեցի՝ յիշեցէք աստուած ողորմայիւ միով, զի կարող է աստուած ի ձեռն այլոց՝ այլոց ողորմութիւն առնել. և ձեզ դիւրին է ասելն և մեզ կարի պիտանի։ Եւ ձեզ յիշողացդ և մեզ յուսացելոցս ողորմեսցի Քրիստոս աստուած» (Ձեռագիր № 2335, էջ 181բ)։*

այլն։ Հայկական տոմարով արտահայտած տարեթվերի կողքին, փակագծերի մեջ նշել ենք ոչ թե նրանց թվաբանական արժեքը, այլ համապատասխան թվականը՝ ըստ Հուլյան տոմարի. այսպես՝ «Ի թուականութեան Հայոց ՊՀԳ»-ի դիմաց դրել ենք ոչ թե 873, այլ 1424, այսինքն՝ 873+551։

Ուղղագիծ փակագծերը՝ [ ] օգտագործել ենք, երբ ստիպված ենք եղել վերականգնել անընթեռնելի որևէ բառ, կամ բառախումբ, ինչպես նաև, երբ բնագրի ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է եղել ավելացնել որևէ տառ կամ բառ։ Սակավ դեպքերում օգտագործել ենք նաև սուրանկյուն փակագծեր՝ < >, որի մեջ առել ենք այն տառերն ու բառերը, որոնք գրչի կողմից կրկնվել են կամ դրվել թյուրիմացությամբ։

Հիշատակարանները ջարդասել ենք, խիստ կերպով պահպանելով ժամանակագրական կարգը, ձգտել ենք ժամանակագրական սկզբունքը պահպանել նաև նույն թվականին ընդօրինակված հիշատակարանները շարադասելիս։ ԺԵ. դարի առաջին հիսնամյակի ընթացքում գրված որոշակի տարեթիվ չունեցող հիշատակարանների զգալի մասը հնարավոր է եղել տեղադրել այս կամ այն թվականի տակ՝ տվյալ հիշատակագրի կողմից գրված մի այլ՝ թվական ունեցող հիշատակարանին առընթեր, կամ հիշատակարանի մեջ նշված պատմական դեպքերի ու դեմքերի համապատասխան։ Սակայն մնացել են որոշ թվով հիշատակարաններ, որոնց գրության մերձավոր ժամանակը որոշելու հնարավորություն չի եղել։ Այդ հիշատակարանները կհրատարակվեն «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» սույն ժողովածուի Բ. մասի վերջում։

Հիշատակարանները համարակալված են ըստ իրենց շարադասության՝ 1—744 համարներով։ Համարից հետո գլխատառերով տրված է ձեռագրի համառոտ վերնադիրը՝ Աւետարան, Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացւոյ, Գանձարան և այլն։ Մյուս տողում ցույց է տրված ձեռագրի հասցեն՝ որտե՞ղ և ի՞նչ համարի տակ է պահվում այն, և կամ ո՞ր հրատարակված կամ անտիպ աղբյուրից է քաղված։ Օրինակ, 3-րդ էջում, ձեռագրի վերնագրից հետո (Գիրք հարցմանց), գրված է՝ Երևան 813, այդ նշանակում է, որ ձեռագիրը, որտեղից քաղված է № 2 հիշատակարանը, պահվում է Երևանի Մատենադարանում, 813 համարի տակ։ Այնուհետև, էջի աջ կողմում, հնարավորության դեպքում, տվյալներ են հաղորդվում հիշատակագրի և գրչության վայրի մասին։ Վերոհիշյալ էջում գրված է՝ գրիչ՝ **Սարգիս** և հաջորդ տողում՝ վայր՝ **Տաթև**։

Եթե ձեռագրի մեջ նույն տարեթվին գրված մի քանի հիշատակարաններ կան, ապա դրանք անջատված են միմյանցից՝ Ա, Բ, Գ և այլ հերթական թվահամարներով, ըստ որում յուրաքանչյուր հիշատակարանի սկզբում, նույն ձևով տվյալներ են հաղորդվում հիշատակագրի և գրչության վայրի մասին, անշուշտ, եթե այդ հիշատակարանները գրվել են ա՛յլ գրչի կողմից և ա՛յլ վայրում։

Էջերի ձախ ընդլայնական լուսանցքում դրված թվանշանները ցույց են տալիս ձեռագրի էջահամարները։ Նոր էջից սկսվող բառից առաջ դրված են երկու ուղղահայաց գծիկներ՝ //։

Հատորի վերջում տրված են ընդարձակ ցանկեր՝ Անձնանունների ցանկ, Տեղանունների ցանկ և Առարկայական ցանկ, ինչպես նաև օտար բառերի բառարան և այլն։

Անձնանունների ցանկում ամեն մի անվան դիմաց տվյալներ են հաղորդվում նաև ձեռագրի հետ ունեցած նրա առնչության, նրա բնակության վայրի ու թվականի մասին։ Պատմական կարևոր դեր կատարած գործիչների մասին

տվյալներն ավելի ընդարձակ են և ստացել են ծանոթագրության բնույթ։ Ուստի բերված ցանկերը օգտագործելի են ոչ միայն այս կամ այն գործչի մասին ժողովածուի մեջ եղող տվյալների էջերը գտնելու նպատակով, այլև նրանց մասին անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու համար։

Հրատարակության համար պատրաստ է նաև սույն հատորի շարունակությունը՝ «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի Բ. մասը՝ 1451—1500 թթ. հիշատակարանների նյութերով։

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

1401—1450 թթ.

ՊԾ 1401

1

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 5707

ՈՑ՝ Ոստանցի

1ա ՊԾ. (1401) Թուին սաստիկ և Թանձր մարախ երեկ ի Շամբէն ի վեր՝ դեղին և Դ. (4) Թեւեան, ի գարնանային ժամանակն, ի համբարձման աւուրքն։ Եւ աստուածային գԹական ողորմուԹիւնն՝ հասաւ և զամենեսեան կոտորեաց ի ծովս Ռուշաօնեաց, զոր ալիք ծովուն դէզադէզ, իբր զշիղջս աւազաց, յեզրն կուտեաց. և ի նեխոյն մարդիկ ձանձրանային յանցանելն։

Ի սոյն ամի Թամուր-Բէկն էառ զՍևաստ քաղաք և քանդեաց և աւերեաց, և սրախողող արար զամենեսեան, և զբազումս գերեաց՝ ի կանանց և ի տղայոց, և ԳՌ. (3000) մարդ զերկիր բացեալ և կենդանոյն Թաղեալ՝ զայնոսիկ, որ նետ արձակեցին ի նա։ Եւ զայս արարեալ բազմուԹեամբ զօրօք գնացեալ ի Շամբն՝ ի վերայ Հալպայ և Դամասկոսի.* և մատնեաց աստուած ի ձեռս նորա, էառ և անչափ կոտորումն արար ի Հալպա քաղաք, որ Գ. (3) գլխէ մինարա շինեաց ի տաճկանց։ Եւ էանց ի վերայ Դամասկոսի, և էառ՝ Լ. (30) օր Թալան արար՝ զոսկի, զարծաԹ և զմարգարիտ, և ԲԺՌ. (12,000) ուղտ իւրն հասայ եբարձ։

Եւ յետ այնր հրաման եհան և հրով այրեցին զքաղաքն առհասարակ և մզեղեցին։ Եւ զմեծ մզկիԹն քակել երետ, յորում էր գե-

* Լանկ-Թամուրի այս արշավանքի մասին պատկերավոր տվյալներ է հաղորդում Վենետիկի 1205 Թ. ընդօրինակված № 038 ձեռագիր ավետարանի հետագա ստացողը։ Ստորև բերում ենք այդ ուշագրավ հիշատակարանն ամբողջությամբ. «Ի ժամանակին որում եւ արքայն Պարսից Թամուր-Ղանն խուժադուժ ազգաւ՝ այլակերպ և այլդէմք՝ լայնաճակատ և նեղաչուի, քաւսա և ժանդ. և ել բազում զաւրաւք յարեւելից կողմանէ։ Եւ սաստիկ զաւրաւք եկն ի վերայ աշխարհիս Շամայ, և գնաց մինչև յԵրուսաղէմ. և զայն տարին յաշխարհիս եկաց և յայնչափ դառնուԹիւն արար, որ ընդ գրով չեմ կարել արկանել։ Այնչափ մարդիկ, զոր էսպան, զոր գերի վարեաց, ու զոր ի սովու բաղումք մեռան, որ հայր յորդո կու հեռանայր և որդի ի հօրէ։ Յայնմ ժամանակին գնացեալ Թաւամալն՝ Հալպա տանուտէրն ի հաց ի գնել, ի յԱնթափ քաղաք. և տեսեալ զսուրբ աւետարանս ի ձեռս այլազգեաց, և յոյժ արտասուեաց վասն այնորիկ, զի անարգէին զաւետարանս և զՔրիստոս։ Եւ յիշեաց զբանն Քրիստոսի որ ասէ. Գանձեցէք ձեզ գանձ...։ Փափաքեցաւ սուրբ աւետարանիս, ետ զիւր հացի գին և էառ զսուրբ աւետարանս, և ազատեաց յանաւրինաց, և էբեր յիւր տունն, և ուրախացան, զի լինի յիշատակ իւրն՝ Թաւաֆալին, և իւր կենակցին Շէն-Տիկնին, և որդոյն Յովանիսին, և դստերն՝ Շնոխվորին, և իւր հաւրն Կարապետին, և մաւրն Քուռխարունին, և ամենայն արեան մերձաւորին...։ Ի ժամանակին յայնմիկ, յորում առաք զսուրբ աւետարանս էր Թիւն Հայոց ի ՊԽԹ. (1400)» (Տես Բ. Սարգսյան, Ցուցակ, Ա., էջ 401–402)։

ըեղմանն Անանիայ առաքելոյն· Եւ զինչ Թիրոյ և մզկիթ կայր Բ.(2) քաղաքին՝ զամէն քանդել երետ և քակել։ Եւ զգերելոց համարն որ էառ, ոչ ոք կարէ ի թիւ արկանել, նոյնպէս և զսպանելոցն։ Եւ եկեալ մեծաւ յաղթութեամբ ի վերայ Մէրդնայ, և տապալեաց քաղաքն ի հիմանց. և արար որպէս զհող արտավարաց, բայց զբէրթն ոչ կարաց առնուլ, այլ յերկրէն շատ գերի եբեր ի քրիստոնէից։ Եւ Թամուրցիքն և մարախն հետ իրերաց հասան յերկիրս մեր՝ այսինքն յՈստան և ի գաւառն իւր։

2

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 813

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Տաթև

381 ր …Ի թուաբերութեան Հայկազեան տոմարի Գ.-երորդի քառասներորդի և տասներորդի (1401) գրեցաւ և յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային, որ կոչի Հարցմունք, ի նահանգիս Սիւնեաց, ի յիշխանութեան տանս մեր պարոն Սմբատայ և հարազատի իւրոյ պարոն Բիւրթելին, որդիք Իւանէի, որդւոյ մեծին Բիւրթելի, որ յՕրպելեանց, բնիկ հայկազնիք, ի մեծ և ի գերահռչակ ուխտիս և հրեշտակաբնակ սուրբ մենաստանիս, ի վանս Յեւստաթէի սուրբ առաքելոյս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Լուսաւորչիս, և աստուածային արեամբ ներկեալ սուրբ Նշանացս, և այլ բազում նշխարաց սրբոց, զոր աստ կան ժողովեալ, առ ոտս երջանիկ և երիցս երանեալ բազմերախտ հօրս մեր և երկրորդ արփիաւորչի հայկազեան սեռի՝ Գրիգոր քաջ հռետորի և աստուածաբան վարդապետի, զոր յայս դառն և խաւար ժամանակիս… լուսաւորէ զեկեղեցի, ոչ ունելով հանգիստ մտաց և ոչ մարմնոյ, քանզի հանէ զգիշերն ի գլուխս* յազաւթս աստուծոյ և յարտասուս բազմահոսս, և լնու զկարօտութիւն բազմութեան եղբարցս, որ առ ոտս սորայ են ժողովեալ, այլ և զբոլոր ազգիս՝ միշտ գնալով ի մէջ այլազգեաց՝ մեծամեծաց և փոքունց, զի ոչ գոյր իշխան և առաջ-
8 ա նորդ, բաց ի սմանէ, զոր տէր | | | ** ըստ տուեցելոյն շնորհացն նորա։ Եւ ոչ միայն այս, այլ և նման անարիւնն Թռչնոյ, որ շրջելով ի տեղիս զանազանս և ի ծաղիկս ազգի ազգիս բերէ զմեզ ճաշակս քաղցրահամս և գեղս բժշկարարս, նմանապէս և մեծս այս մտօքն երկնաճեմ շրջելով ի հինս և ի նորս, այլև յարտաքին գիտութիւնս, ժողովելով զօգտակարն՝ կազմէ պսակս լուսաւորս ի գլուխս մանկանց եկեղեցւոյ և վահան ամրութեան ընդդէմ այլադաւանն տոհմի, և զայս միշտ

* «Ի գլուխս» բառը գրված է տողից վերև, այլ ձեռագրով։

** Հիշատակարանի շարունակությունը տեղահանվել է և այժմ ձեռագրի 8-րդ թերթն է կազմում։ Նորոգման ժամանակ այդ թերթի վերին լուսանցքի և առաջին 4 տողերի վրա թուղթ է փակցվել, որի հետևանքով այդ տողերը չեն վերծանվում։

առնելով և անդադար ուսուցանելով լուսաւորէ զեկեղեցի. զոր և կացցէ, ծաւասցէ (իբրև զՁահ լուսատու ի մէջ եկեղեցւոյ...։ Եւ է ի բազում վաստակոց սորա մինն գիրքս այս, որ է Հարցմունք անուանեալ, զոր ցանկացեալ սմա ետ գրել սրբասնեալ և հեզահոգի, մաքրամիտ և ճըշմարտաասես Յունան չկրօնաւոր, չնման մեծին Յունանու, քանզի տէր աստուած Ցիսուս Քրիստոս պահեսցէ զամենայն աւուրս կենաց իւրոց և յամերամս ժամանակաց բարի հոգով և մաքրամիտ մտօք, ի կամս արարչին աստուծոյ անխարբթախ, ամէն և եղիցի, հանդերձ ծնողօք, և բարի ազգականօք, և ամենայն երախտաւորօք հասցէ երանաւէտ ձայնին Քրիստոսի աստուծոյ մերոյ, զորմէ լսելոց են արժանաւորացն դասք, եթէ՝ Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ ի սկզբանէ աշխ[արհ]ի. Ընդ նմին և զհոգևոր եղբայրս մեր Մարգարայ, որ զաթոռս կալեալ, յիշել ի տէր, աղաչեմք, զոր յոյժ ցանկայ յուսոյն կենաց, որով տացէ տէր աստուած ըստ կամաց նորա, ամէն։ Եւ այն, որ առատն է ի պարգևս ողորմութեան իւրոյ տացէ ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ փափագողացս զերանութիւն. զայն, որ լի է ամենայն բարութեամբ։

Ցբ Ո՜հ, ոհ, ոհ գրիս | | | և մատուցի ընծայ սիրելի և անծկալի եղբօրս իմ Յունան կրօնաւորի և բանասիրի, օգնականութեամբ և կամակցութեամբ մեծիս իմոյ՝ Գրիգոր աստուածունակ պւէտի, ի լաւ և յընտիր օրինակէ, զոր էր գրեալ աստուածամուխ մատամբն իւր և ստուգեալ ամենայնիւ՝ յառաջմէն մինչև ցվերջին նշտնախէծն։

Եւ յանցեալ ամի վասն բտզմացեալ մեղաց մերոց եղև աստուածասաստ խռովութիւն և աշխարհակործան տապալումն, զի իշխանն անօրէն, որդին կորստեան, որ յազգէ խորազմին՝ Թամուր-Լանկ անուանեալ, որ զաշխարհս Հայոց երիցս անգամ կործանեալ էր, եկն կրկին բազում և անթիւ զօրօք և էառ զաշխարհն Վրաց, առաջնորդութեամբ և ձեռնտուութեամբ չար և անիծեալ իշխանաց և ազատացն Վրաց, և զամենեսեան առհասարակ ի սուր և ի գերութիւն վարեաց, թուով ՃՌ. (100,000)-աւ գրեցաւ զկորուստն, և զեկեղեցիս քարահատակ կործանեաց։ Եւ զաղէտս տարակուսանաց ոչ կարեմք բանիւ պատմել կամ գրով ի քարտի արկանել, այլ միայն հեծեմք և հոգոց հանեմք տեսանելով զաղէտս ծնողաց, որ հառաչանօք արտասուեն և ասեն՝ Երանի ամլոց, որ ոչ ծնան և ստ[ե]անցն, որ ոչ դիեցուցին։

Արդ, աղաչեմ զամենեսեան սիրողս Քրիստոսի, որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի յերկնաթռիչ յաղօթս ձեր զփանաքի և զեղկելի գրիչս, հանդերձ ծնողօք և ազգականօք, և զուսուցիչն մեր, որ բազում աշխատեալ են, ընդ նմին զբազմերախտքն մեր, որ բազում ջանիւք զմեզ նուիրեցին։ Այլ և աղաչեմ զձեզ արտասուալից, յիշեցէք զհոգևոր տէրն մեր և զեղբայրն՝ տէր Ալեքսիանոսն, որ մանկական հասակաւ ի Քրիստոս փոխեցաւ, զՅոհաննէս քահանայն ընդ նմին յիշեցէք ի Քրիստոս, զԹամամ զծնօղն իմ յիշել ի տէր. եւ զիս՝ զանարժանս յամենայնի մի մոռանայք, այլ պաղատանօք հայցեմ, զի խնդրիցէք թողութիւն բազում յանցանաց իմոց և

ծնողաց մերոց, և սխալանացն ներեցէք, զի կար մեր այս էր, և նայ՝ որ առատն [է] ի տուրս բարիս ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յուսացողացս առհասարակ ողորմեսցի, ամէն։

Այլ և զհոգոյ ճարակն իմ՝ զԳալուստ աշակերտ բանի և զԳրիգոր | | | յիշեցէք ի Քրիստոս և ի մաքրափայլ յաղօթս ձեր, ամէն և եղիցի։

ԶԱստուածատուր քահանայն յիշէք ի տէր և աստուած զձեզ յիշէ։

Բ

313 բ ԶՍարգիս մեղապարտ յիշեա ի տէր յաւիտեանս, ամէն։ Աստուած զյիշողն և զմեզ յիշէ, ամէն։

3

ՏՕՆԱԿԱՆ

Երևան 1524

Գրիչ՝ Աւետիս
վայր՝ Վարագ

919 ա ...Եւ արդ, ես... բազմամեղ սուտանուն սարկաւագ Աւետիս տեսի զսէր և զփափագ սոցա՝ զՀայրապետ կրօնաւորին և զՅովանէս միակեցին, զոր ունէին առ հոգևորսն և ըստ իմում տկար անձամբս յանձն առի և ամենակարող զաւրութեամբն աստուծոյ զսուրբ գիրքս զթերին կատարեցի, ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, որ է բոլոր աշխարհս ի գերութիւն և ի տարտարոս ի ձեռն անաւրէն ղանին Լանկ-Թամուրին, որ էր թիւս Հայոց ՊԾ. (1401)։

Այլև գրեցաւ սայ ի գերահռչակ և յերկնահանգէտ սուրբ ուխտս Վարագ, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս և այլ սուրբ ուխտեացս, և յառաջնորդութեան և յեպիսկոպոսութեան տեղոյս տէր Ստեփանոսի...։

919 բ ... Ընդ նոսին և զիս՝ զանյիշելի գրիչս զԱւետիս և զիմ ծնաւղսըն՝ զՏղապարոն և զՀէլօք, և զուսուցիչն իմ, և ըստ մարմնոյ զեղբայրն իմ զՂազար կրաւնաւոր, և զհայրն իւր զԳրիգոր, և զամենայն արեան մերձաւորսն մեր՝ զկենդանիք և զհանգուցեալ...։

921 ա ...Այլև կրկին յիշա[տակի արժ]անի արարէք և յիշեցէք յերկնագնաց յաղաւթս ձեր զառաջին գրող սորա զՅոհ[անէս] քահանայ, որ յառաջն ԺԹ. (19) տետր գրեաց և տարաժամ մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս, և սուգ մեծ եթող սիրելեաց իւրոց, զոր տէր աստուած յանսպառ ուրախութիւնսն և յանվախճան կեանսն դասեսցէ զնա, հանդերձ ծնաւղաւք իւրովք և ամենայն ազգականաւք, ամէն, եղիցի, եղիցի։

Ընդ նոսին և ես՝ Յովանէս սուտանուն կրաւն[աւոր], որ ԺԳ. (13) տետր գրեցի, ով զմեզ յիշէ յիշեալ լիցին ի Քրիստոսէ, ամէն։*

---

* Աւետիս գրիչը իր հիշատակարանը կառուցել է ճոռոմ ոճով, բազմաթիվ անգամ կրկնում է նույն «յիշեցեքները» և ունի անհետաքրքիր մի.շարք էջեր։ Այդ բոլորը դուրս ենք թողել հրատարակությունից։

4

ՏՕՆԱԿԱՆ

Երևան 4670

Գրիչ՝ Մերուն
վայր՝ Ոստան

ա

813 բ ... Զոր տեսեալ զայս ամենայն վայելչութիւնս հրաշից երիցս երանեալ 'և սրբասնունդ կրաւնաւորն Ստեփաննոս և բորբոքեալ ի սէրն աստուծոյ ցանկացաւ սյսմ աստուածային գրոցս, որ կոչի Տաւնական...։

814 ա ... [Ցիշեսջի՛ք] զստացող գրոցս զՍտեփաննոս կրաւնաւոր, և զծնաւղսն իւր զՅովանէս և զԱզիզ. և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիսն և զննջեցեալսն՝ զխութլուշա, և զկենակիցն իւր զՄարգարիտ, զժամահար Հերապետն, և զՄկրտիչ, զՍպանդիարն, և զգուստր իւր զԹաշխաթուն, զՈվաննէս, և զորդին իւր զԱստուածատուր, զԹադէոս և զԳրիգոր տղայն, որ աշխատեցաւ ի Գ. (4) անգամ յերթևեկութիւն, և զայլ ամենայն, որ աւգնական լեալ են ի սմա տրաւք, վասն զի սովաւ զուարճանան մանկունք սուրբ եկեղեցոյ, հանապազ կարգալով զսա անխափան։

Եւ արդ, ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս յանմեղաց... զանարժանս մէկ ողորմի ասելոյ արժանի առ[նել աղաչեմ յեր]կնագնաց յաղաւթս ձեր, և զծնօղսն իմ՝ զՍտեփաննոս և զէլխաթուն, և զվարպետն իմ Կիրակոս կրաւնաւոր, և զկենակիցն իմ զԱրղուն, որ աշխատեցաւ ի Թուղթ կոկելն, և զերկու քորքն իմ՝ զՄէլէք և զՀերիք, և զայլ ամենայն արեան մերձաւորս՝ զկենդանիս և զննջեցեալս։

Այլ և գրեցաւ սա ի քաղաքիս Ոստան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, ի Թուականութիւնս Հայոց ՊԾ. (1401), ի հայրապետութեանն տէր Դաւթա Աղթամարա և Կիլիկեցոց տէր Կար[ապե]տի, ի գառն և ի վշտալից [ժամա]նակիս, յաշխարհակալու[թեան] Ամիր-Թամուրի, որ յայսմ [ամի] աւերեց զՀալապ և զԴ[մշխ° և] զԲաղդատ, և բազում [և անմխի]թար սուգ եթող տաճկա[ց ազ]գի...։*

814 բ ...Ընդ նմին և զամենամեղ գրիչս՝ զՄերուն և զիմ ծնաւղսն յիշելոյ արժանի առնէք միով աստուած-ողորմիւ, վասն զի մեծ աշխատանաւք հասուցի զսուրբ գիրքս յաւարտ...։

բ

Կազմող՝ Սարգիս

118 ա ԶՍարգիս մեռեալ հոգիս
Զեռնարկեցի յայսմ տառիս
Եւ կազմեցի 'ստ իմում կարիս,
Որ ոք յիշէ զծոյլս ի բարիս՝
Նոքա յիշին յերկնից բարիսն։

* Դուրս ենք թողնում փչացած և անհետաքրքիր մի ընդարձակ հատված։

5

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4223

Գրիչ՝ Զաքարիայ
վայր՝ Հիզան քաղաք

295 ա ...*Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ* Զաքարիայի *սու-*
տանուն քահանայի, որդւոյ Մկրտիչ *քահանայի, եղբօր* Յովճանճէս *քա-*
հանայի՝ իմաստուն և աննման գրչի և ծաղկողի։ Եւ իմ անընդունակ
գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ իմ,
այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին սուրբ,
բազում աշխատասիրեալ իմ ի սմա՝ գրեցի անարժան ձեռաւք իմովք
յ[ը]նտիր և ի ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանօք և բազում
պանդխտութեամբ և անհանգստութեամբ։ Որ վասն ծովացեալ մեղաց
իմոց ժամանեաց մեզ և եկն մարախ, և եղև սով սաստիկ ընդ ամե-
նայն երկիր, որ բերէր կապիճ հացն Մ. (200) դր[ամ], և այս ամե-
նայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Ի մեծ ի յեղանակ շըր-
ջագայութեան արեգական ստորիջիւք երկնաչու ճանապարհաւ յերկ-
նից յերկիր հայելով, ըստ արարչութեանցն չափեալ, յելանելոյն Ադա-
մայ ի դրախտէն ՋՌ. և ՋՃ. և Է. (6607) ամ՝ ըստ եւթանասնիցն,
որում մեք վարիմք, և է ի մարդեղութենէ բանին աստուծոյ անժա-
մանակ էին և փրկչին Յիսուսի Քրիստոսի ամս ՌՅՂԹ. (1399), իսկ
ըստ Թուոյ խոսրովային Ցաբեթեան տումարի՝ ՊԾ. (1401), և էր մեծ
295 բ *շրջանին, ի կաթուղիկոսութեան հայ* ‖ *կազեանս սեռի տեառն* Դաւթի
Աղթամարցւոյ՝ *եղբաւր տէր* Զաքարիայի, *որ վկայական արեամբ կա-*
տարեցաւ յանօրէն ամիրայէն Էզդնէ, *և եղև սուգ մեծ* Տանս Հայոց,
և ապա առաջնորդութեամբ հոգւոյն սրբոյ յաջորդեաց զաթոռն եղ-
բայրն իւր համանման՝ տէր Դաւիթ, *և լինի ուրախութիւն անբերելի*
տրտմութեան մերում։ Եւ ի թագաւորութեանն այլասեռից Թամուր-
Լանկի, *որ է յաղթօղ 'ւ անպարտելի, զոր տէր աստուածն Իսրայէլի*
պահէ անխախտ, որ չսասանի՝ զաթոռ մերոյս հայրապետի և զմեր
ազին թագաւորի, զի յիշել զանուն սոցա սասանել սաքրին և ոչ ես
երեին թշնամիք ճշմարտութեանն։ Եւ գրեցաւ աւետարանս ի քաղա-
քիս, որ կոչի Հիզան, *ընդ հովանեաւ սբրուհոյ Աստուածածնին, և*
սբբոյն Սարգսի զաւրավարի, և սբբոյն Գէորգեայ, որ է հեռի։ Քանզի
ստացաւ զսա պատւական և սրբասէր քահանայն Աստուածատուր, *ի*
վայելումն անձին իւրոյ և զաւակաց իւրոց՝ Յովանիսին *և այլոցն,* և*
յիշատակ հոգւոյ իւրոյ, և Յոհանէս *միայնակեցին, և ծնօղացն*
իւրոց, զոր տէր աստուած վայելել տացէ զսա ընդ երկայն
աւուրս, ամէն և եղիցի։ Եւ կացցէ սա ընդ իշխանութեամբ Աստուա-
ծատուր *քահանայի և զաւակի իւրոյ* Յովանի, *և այլ մարդոյ գաւէ ի*
296 ա *հետ չկա։* ‖ *Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յա-*

---

* *Ձեռագրի 6ա էջի վրա նկարված են ստացող Աստուածատուր քահանայի, նրա Յովանէս որդու և անանուն մի պատանու ուշագրավ պատկերները (տես՝ նկ. 1)։*

մենալի սեղանոյս, յիշեցէք ի Քրիստոս զստացաւղ սուրբ աւետարանիս զԱստուածատուր քահանայ, և զհայրն իւր զՎասիլն, և զմայրն իւր զԽոնդի-խաթունն, և զկենակիցն իւր զէլխաթունն, և զծաղկեալ զաւակն իւր զՅովանիսիկն, և զամենայն արեան մերձաւորսն իւրեանց, զքոյրն իւր՝ զՏիկին-խաթունն, և զքեւերորդին իւր զԹումա քահանայն, որ իբրև զարեգակն փայլէր ի մէջ աստեղաց և լուսաւորէր զամենայն մարդիկ գիտութեամբն իւրով, որ տղա հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս և սուգ անմխիթար եթող ծնողաց իւրոց, զի զնա միայն ունէին ի բազում զաւակաց իւրեանց և ի նմանէ այլ զրկեցան, և զծերունի հայրն իւր զՅովանէս քահանայն, որ կսկծամահ եղև և հանգեաւ ի Քրիստոս, և զ[Յ]ովանէս միակեցն, և զհայրն իւր, և զմայրն իւր՝ զփոխեալքն ի Քրիստոս, և զամենեսեան, որք աստ յիշեցան...։ Եւ զիս զմեղաւոր գրիչս յիշեցէք ի Քրիստոս, և զհայրն իմ Մկրտիչ քահանայն՝ զփոխեալն ի Քրիստոս, և զմայրն իմ, որ յոյժ աշխատեցաւ ի վերայ մեր, և զմօրքոյրն իմ՝ զփոխեալն ի Քրիստոս, որ յոյժ սիրէր զմեզ, և զէլխաթունն, որ քան զմայր առաւել աշխատեցաւ ի վերայ մեր և սնոյց զմեզ, և դուք որք յիշէք զվերագրեալքս ի սմա, զնոյն և ձեզ տացէ տաւաղն ամենայն բարեաց՝ ի միւսանգամ գալստեանն իւրոյ, ամէն և եղիցի, եղիցի։

Նկ. 1 Ձեռագրի ստացող Աստուածատուր քահանան և իր որդիները։

6

ՈՍԿԵՓՈՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

*Երևան Ց118, «Նոտարք հայոց», էջ 27**

Հեղինակ՝ Գրիգոր Տաթևացի
վայր՝ Տաթև

196 ը *Եւ ես՝ տարտամս յուսունճասիբաց* Գրիգոր *պիտակ անուն խնդրող բանի հաւաքեցի զգիրքս աստուածաբանութեան, որ անուանեալ կոչի*

** Փիրզալեմյանի մոտ հիշատակարանի թվականը ՊԾԶ. (1407)-ն է, կա նաև ձեռագիր, որ տալիս է ՊԾԷ. (1408) թվականը։*

Ոսկեփորիկ, զի ըստ իրին և զանունն եդեալ ունի, ոսկի՝ այսինքն անապական և պատուական գանձիւք աստուածային առլցեալ, որ և զսաացաւղ իւր և զսիրողս աստուածաբանութեամբ փարթամացուցանէ։

Արդ, գրեցաւ սայ ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս, առաքելական աթոռոյս Եւստաթէի և այլ բազմահաւատք սրբութեանց. ի նեղ և ի նուաղեալ ժամանակի, թուականութեան մերոյ ազգի ՊԾ.-երորդի (1401)։ Ի խնդրոյ ումեմն բարեպաշտի խաւջայ Մասուտշահի, բնակութեամբ ի սեպուհ արանց Դավրէժ քաղաքի, զոր խնդրեաց բազում անգամ գրով և բանի[ւ] գրել յաղագս սրբոյ երրորդութեանն և յաղագս Քրիստոսի աստուածութեանն։ Եւ ես տկար ոգով և ծիւրեալ մարմնով հաւաքեցի ի սրբոց արանց զճշմարիտն և զուղիղն և գրեցի կարճառաւտ բանիւ։ Եւ ի չորս հատորս բաժանեցի վասն դիւրութեան ընթերցողաց։ Եւ յաւելեալ բանս ի մերոց վարդապետաց իբր թագաւորական կնիք և մեկնութիւն ի վերայ եդեալ։

Ցիշեցէք ի Քրիստոս զվերոյ ասացեալն բարեպաշտ զխօջայ Մասուտշահն՝ հանդերձ ծնողօք իւրովք, զհայր նորա զՅակոբշահն և զմայրն Էլխութլուն։*

7

ԱԴԱՄԳԻՐՔ ԱՌԱՔԵԼԻ ՍԻՒՆԵՑԻՈՅ (Գ.)**

«Ադամգիրք», էջ 321—327

Հեղինակ՝ Առաքել Սիւնեցի

ա

Ի յուլթ հարիւր Հայոց թուական
Եւ յիսներորդ մըտեալ նոր ամ՝
Ոտանաւոր բանքըս գրեցան,
Հարցաբանութիւն և պատասխան,
Տէր Առաքեալ նըւաստ ոգի,
Շնորհաց թափուր յամենայնի,
Ջոտանաւորս շարադրեցի
Վասն Ադամայ և Եւայի։
Բանս որ պատմի համանգամայն՝
Երկուհարիւր տուն և քըսան.
Ունի խորհուրդ սա զանազան,
Զոր հանճարեղ միտքն իմանան։
Անճառ լուսոյն անզըննելի,

* Հետաքրքրական է նաև Ոսկեփորիկի վերջաբանը (էջ 194ա—196ա), որը մի ուղերձ է պատվիրատու Մասուտշահի հասցեին։ Այստեղ Տաթևացին խոսում է աշխատության մեջ հավաքված նյութերի կարևորության մասին։

** Առաքել Սիւնեցին գրել է «Ադամգրքի» երեք տարբեր վարիանտներ։ Ըստ հրատարակիչ Պոտուրյանի թվարկության՝ Ա. և Բ. վարիանտները՝ 1403 թվականին (տես այդ տարվա թվաշարքում), և Գ. վարիանտը՝ 1401-ին։ Ժամանակի տեսակետից առաջին այս վարիանտն իր հերթին բաժանվում է երկու տարբերակի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տարբեր հիշատակարանը։

Երրեակ անձանցըն միակի,
Հոգով մըտօք բանիւ լեզուի
Տացուք միշտ փառս անլըռելի։
Յորժամ փառօք յերկնից գայցես
Եւ զարարածըս նորոգես,
ԶԹարսեղ եղբայրն իմ որ առ քեզ,
Անճառ լուսով պըսակեսցես։
Սիրողք բանից և ընԹերցողք
Զերգողս յիշէք իմով նախնեօք
Ի սուրբ յաղօԹս ձեր արտասուօք,
Որում և դուք յիշիք փառօք։
Զմեծ վարդապետն իմ հանճարեղ
Գրիգորիոս հոգով անմեղ,
Բազում իմաստք յայտնեաց համեղ.
Յիշէք յաղօԹս ձեր արտասուեղ։

Բ

Ի յուԹ հարիւր Հայոց Թուական,
Ի յիսներորդ սկըսեալ նոր ամ՝
Ոտանաւոր բանքըս գրեցան,
ՀարցարանուԹն և պատասխան։
Տէր Առաքեալ նըւաստ ոգի,
Շնորհաց Թափուրս յամենայնի,
Զոտանաւորս շարագրեցի
Վասն Ադամայ և Եւայի։
Վասըն նախնեաց բանս որ պատմի,
Բարառնաբար ընդ մեղ խօսի,
ԲԾ. ու Ի. տունս ըստ կարգի,
Ի յետիս դէմս բացորոշի։
Անճառ լուսոյն տնզընկելի,
Երրեակ անձանցն ի միակի,
Հոգով մըտօք բանիւ լեզուի
Տացուք միշտ փառս անլըռելի։
Դարձցուք ըզբանս առ ցանկալին
Ի դէմըս մեծ վարդապետին,
Զի նա ուղղեաց ըզկարգ բանին,
Ըստ իւրաքանչիւր պատշաճին։
Վերադիտողն իմ ըստ հոգոյ,
Եւ ազգակից հիքիս մարԹոյ.*
Նա հըրամեց ինձ գըրելոյ
Զոտանաւորքս ըստ խորհըրդոյ։
Ասաց գըրել ինձ ըստ կարգի
Յաղագս նախնեացն յիշատակի,
Վասն Ադամայ և Եւայի,

* Ակնարկում է Գրիգոր ՏաԹևացուն։

Ի դէմս օծին և բանսարկուի։
Բաբունապետ յոյժ պանծալի
Ծով իմաստից ծաւալք շնորհի,
Ի նոյն շնորհէ մասն ինչ առի,
Ջոտանաւորքս շարադրեցի։
Դրախտ նըռնենեաց և դաշտ ծաղկանց,
Մըտօք պայծառ լուսաթափանց,
Իմաստ անջինջ և անանց,
Քան զայլ հռետորս տյլ գերազանց.
Ահա տեսի զճանճըն մեղուի,
Որ ի ծաղկունս շըրջագայի,
Առնուլ ըզնիւթըս հընարի
Նըբբատեսակ հիանալի.
Պետ* պայծառ և հրաշաբան,
Ծով իմաստից լուսահոսան.
Վըտակ դեասց քոց ընթանան,
Առոգանեն զողիս մարդկան։
Եւ նա գըրեաց ճառըս բազումս,
Որ և ունի զիմաստս անհունս,
Գիրքս քսան և չորս որպէս ծաղկունս՝
Եկեղեցոյ եդեալ ակունս։
Տուփ խնկալի անուշ ծաղկանց
Բուրեալ ի քիմս հանուրց ազանց,
Զմայլեցուցիչ հոգոց մասանց՝
Գրիգորիոս՝ այր ցանկութեանց.
Ի քէն շընորհք հոսի անանց,
Ախորժ մըտաց մաքուր մանկանց,
Քաղցրաճաշակ պասքեալ անձանց.
Գրիգորիոս՝ պետ հայկազանց։
Նըստեալ ի մէջ աղբերց ականց,
Աստուածաշունչ բանից ծաղկանց՝
Քաղիր ձեռամբ հոգոց մատանց,
Փունջ փունջ բաշխես հոգոց մանկանց։
Բնակեալ ի լեառըն զըմըռսոյ,
Պայծառացեալ նըման լուսոյ,
Սիրտ իմ հալեալ որպէս ի հրոյ,
Ի բաղձմանէ քոյին սիրոյ։
Առեալ զիմաստս աննիւթական,
Ջեռագըրես ի միտ մարդկան.
Եւ դու ի գիրն անզուգական,
Գրեսցիս անջինջ յատուկ անուամբ։
Նըստեալ փառօք ի պարտիզի,
Ցանուշահոտ բուրաստանի,

* Բնագրում եղել է «Գետ»։

Զձայն քո արա ինձ լըսելի,
Զի հանդարտի շունչս և հոգի։
Ինձ բաղձանաց սիրովըդ քո,
Տուր ինձ համբոյրըս բերանոյ,
Զի ծարաւի սիրտըս հոգոյ,
Ըմպել գրստինքըս քո գինոյ․
՚Ի իւթ իմաստիցդ յոյժ փառազարդ,
Այլ հռետորաց անհամեմատ,
Դու հանճարոյ ծառ ե արմատ,
Սուրբ հրեղինացն յանկ և բաղդատ։
Դովեալդ ի գահըս գումարաց,
Մեկնիչ հոնուրց կտակարանաց,
Դու բուրաստան լուսով ծաղկած,
Թագ և պըսակ եկեղեցեաց։
Բամեալ ծընունդս Հայաստանեաց,
Որք ինչ օգտին ի քոյդ շնորհաց,
Քեզ օրհնութիւն տան երգ վանաց
Քե ազգակիցք և նախնեաց։
Եւ ես՝ յետինս յամենայնի,
Շնորհաց Թափուրս և փանաքի՝
Տէր Առաքել Նըւաստ ոգի,
Զմարթեմ գովել զվեհդ ցանկալի։
Ցընծացեալ ծափըս հար հոգով,
Գայծառացեալ սուրբ հաւատով,
Զագախառնեալ սուրբ երամով,
Մուտ յառագաստ ծաղկեալ լուսով․
Ի յութ հարիւր Թըւականի
Եւ յիսներորդ սկսեալ ամի,
Զոտանաւորքս աւարտեցի,
Կամօք իմոյն վարդապետի․
Զբանքն Ադամայ և Եւայի
Բարտոնաբար աստ գրեցի,
Վասըն խրատու մեռ և օգտի
Ի յապագայն ժամանակի....։
Ցորժամ փառօք յերկնից գայցես,
Եւ զարարածս նորոգես,
ԶԲարսեղ եղբայրն իմ որ առ քեզ՝
Անճառ լուսով պըսակեսցես։
Սիրողք բանիս և ընթերցողք,
Եւ աննախանձ օրինակողք,
Զերգողս յիշէք մերովք նախնովք՝
Ի սուրբ աղօթս ձեր արտասուօք։
Եւ որ զամէնն ասեն սիրով.

Լսօղ* բանիս ընթեռնըլով,
Լըսեն՝ Եկայք օրհնեալք հոգով,
Զկեանս անսպառ ժառանգելով։**

8

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԿԻՒՐՂԻ ՊԱՐԱԳՄԱՆՑ ԳՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

«Միսական», էջ 239

Գրիչ՝ Մէլքիսեդ
վայր՝ Տաթև*

Ի յուԹ հարիւր Հայոց Թուական
Եւ յիսներորդ սկսեալ նոր ամ (1401),
Գիրքս գրեցաւ այս հրաշազան՝
Հարցաբանութիւն և պատասխան,
Ի մեծ հռետոր վարդապետէ
Գրիգոր անուն և հսկողէ՝
Այն որ զանճառս խորոց յայտնէ,
Ճաշակ մըտաց մատուցանէ։
Շինեաց ըզգիրքս զայս պիտանի,
Որ զամենայն իմաստս ունի.
Թէ ոք ի բան ինչ ծարաւի՝
Աստի ըմպէ որչափ կամի,
Զի այս հանճար է նորագոյն,
Զոր չէր յայտնեալ մինչև ի սոյն,
Սայ նոր ճաշակ է քաղցրագոյն,
Ախորժ կամաց ամենեցուն...։

9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 184

Գրիչ՝ Յոհաննէս Ապարանեցի

ա

376 ա ...Արդ, գրեցաւ աստուածաշունչ տառս, հոգևոր բուրաստանս ձեռամբ անարհեստ և անպիտան գրչի Յոհ[աննէ]ս քահանայի, ի վայելումն տէր Խաչատրոյ սրբասնեալ և աստուածասէր քահանայի, և յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց, զոր տէր աստուած վայելել տացէ աստ և ի հանդերձեալն, յիշատակ անջինջ և անսպառ անվախճան յաւիտեանս, ամէն։

* Ձեռագրում եղել է «լսելօղ»։

** Տնասկզբի տառերով հոգվում է հետևյալը. «Ի տվող վարդապետին բանիւ գրեցի զայս ես»։ Ըստ երևույթին բնագրի մեջ տների ընդգծված «ավագ»—ոչինչ չասող սկզբնատառերի փոխարեն եղել են այնպիսի սկզբնատառեր, որոնցով հոգվել է «Գրիգոր» անունը, և ակրոստիխ հիշատակարանը կարդացվել է այսպես. «Ի Գրիգոր վարդապետին բանիւ գրեցի զայս ե[րգս]»։

Արդ, ես Յոհ[աննէ]ս քահանայ | | |* գրեցի զսուրբ աստուածաշունչս ի վայելումն տէր Խաչատրոյ, և առի շուքրանա գրոցս ԲՌ. (2000) դահեկան, որ առնէ կէսն Ռ. (1000) դահեկան՝ Թանկա Թաբբեգի, վկայութեամբ Անդրէաս սրբասնեալ քահանայի, և որդւոց նորա՝ Գրիգոր քահանայի և Աւետշայ սարկաւագի· Եւ աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ օրինակէք, աստուած ողորմին լի բերանով ասացէք տէր Խաչատրոյ՝ ստացողի գրոցս, և ծնողաց իւրոց, և մեզ՝ անարժան ծառայիցս ձեր·

Յանուն աստուծոյ ամենակալին՝ հօր և որդւոյ և հոգոյն սրբոյ, ես՝ Խաչատուր քահանայս ստացա զսուրբ աստուածաշունչ[ս] ի հալալ արդեանց իմոց· յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ հօր իմոյ Նէքռուզին, և մօր իմոյ Շնոհվորին, և եղբարցն իմոց, որք ի Քրիստոս փոխեցան՝ Սկանդարին և Ամիրշային, և այլ ամենայն արեան մերձաւորաց իմոց...։

Բ

44 ա Փառք... որ ետ կարողութիւն տկարութեանս իմո հասանել յայսմ նվագ ի փառս Քրիստոսի, ի թվականիս հայկազեանս տոմարիս ՊԽԹ. (1400), և ի թվին մարդեղութեան տեառն մերո և փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌԴՃ. (1400), և ի թագաւորութեանն Թամուրին և որդո նորա Միրանշաին:

Յայսմ ամի շարժեցան զօրքն Շամա, որդի Իլդրումին, ի վերայ Թամուրին:

Գ

121 ա Զնուաստ և զապիկար գրիչս՝ զՖրա Յոհանէս Ապարանեցի, յիշեա Քրիստոս աստուած ի քո սուրբ արքայութիւնդ։

Դ

126 բ Զնուաստ և զտառապեալ ոգի՝ զՖրա Յոհանէս ի կարգէ սրբոյն Դոմինիկոսի, որո առաջնորդ և հոգեբարձու եղև մեզ պատուական վարդապետն տէր Ֆրանցիսկոս, յիշեցէք ի Քրիստոս...։

Ե

206 ա Յիշեա Քրիստոս աստուած զՄարթա խաթունի հոգին·

Զ

267 ա Զանպատս ի բարեաց և զլծեալս ի կառս մեղաց, զտկարս մարմնով և զմեռեալս հոգով, զնուաստ և զանարհեստ գրիչ զՖրա Յոհանէս ի կարգէ սրբոյն Դոմինիկոսի, զառաջինս ի մեղաւորոն և զյետինս ի կարգաւորսն, աղաչեմ յիշել ի սուրբ և ի մաքրափայլ յաղօթս ձեր։ Թվիս ՊԾ. (1401) գրեցաւ։**

* Մի տողի չափ ջնջված է. ամենայն հավանականությամբ գրված է եղել՝ «ի կարգէ սրբոյն Դոմինիկոսի»։

** Յոհան գրիչը շատ լավ տիրապետել է պարսկերենին։ 296 ա էջի վրա նա հայերեն տառերով մի սյունակից ավելի պարսկերեն բան է գրել։ Ունեցել է նաև նկարչական շնորհք, 216 ա էջի վրա նկարել է մի հետաքրքիր կրկեսային տեսարան։

10

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ, ԱԼԲԵՐԹՈՍԻ

Երևան 69

Գրիչ՝ Յոհան Քռնեցի*
վայր՝ Ճահուկ

ա

245ա *Զստորասականս ի բնաւ բարիս,*
Զբացասականս ի բնաւ չարիս,
Ես՝ ֆրա Յոհան Քռնայեցիս,
Զեզ աղօթից եմ ի կարիս։

բ

45բ *Յաղագս դառն ժամանակիս,*
Որ էր ի Ճահկո *Փասըլիո,*
Յորժամ ՊԾ. էր Հայոց թվիս (1401),
Ի յօգոստոս՝ փոխման տօնիս։

11

ՃԱՇՈՑ

«Նօտարք հայոց» 13, Վան

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Շատվան

Եւ արդ, ես՝ անպիտանս ի բարեաց... Աստուածատուր *քահանայ, տեսի զփափաք* Յոհաննէս *աստուածասէր տանտիրոջ, և իմ տկար անձամբս յանձն առի, և ամենակարող զօրութեամբն աստուծոյ կատարեցի զսուրբ գիրքս զայս ի դառնացեալ և ի վշտաբեր ժամանակիս, յորում էր թիւս Հայոց ՊԾ. (1401), ի հայրապետութեան տէր* Դաւթի: *Եւ արդ, գրեցաւ ի գիւղս* Շատվան, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ստեփաննոսիս, և սուրբ Գէորգայ զօրավարին, և սուրբ Ոսկեանցս։*

12

ԳԱՆՁԱՐԱՆ

ԼՑՎ. անտիպ 543 (Հայկ. ՍՍՌ Պատմ. թնգ.),

Գրիչ
վայր՝ Ռշտունիք, Նկար վանք

...Ցանկացող եղեալ այսմ աստուածային և պայծառ վայելուչ բուրաստանիս աստուածասէր և իմաստուն միայնակեաց, նայ՝ որ մականունն անուն կոչի (՞)... ստացաւ ըզսայ ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ իւրն և ծնաւղացն՝ Սիմէոնի *և* Քընքըշոյ, *և եղբաւրն* Յովհաննիսայ, *և այլ ամենայն արեան մերձաւորացն։*

---

* *Չպետք է շփոթել Քռնայի ունիթոռների ղեկավար Յովհանի հետ, որն ապրել է ԺԴ. դարի առաջին կեսին։*

Արդ, գրեցօ ցանկալի մատեանս այս յերկիրս Ըռըշ[ա]ունեաց, և ի հրեշտակաբնակ յարկիս, որ կոչի Նկար, ընդ հովանեաւ Սրբութեանս, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Ստեփաննոսին, ի հայրապետութեան տեառն Դաւթի. և յաշխարհակալութեան Թամուր-ղանի, և ի տեղայպահութիւն սուրբ ուխտիս՝ իմաստուն և հեզահոգի տէր Յոհաննիսի, որ կամակից եղև գրելոյ սորայ մարմնաւոր պիտուք և այլ ամենայն սպասաւորութեամբ. և կան բնակեալ յայսմ անապատիս բազում կրաւնաւորք։ Այլ և Ստեփանոս և Թումայ սպասաւորեցին մեզ ի պէտս կերակրոյ, այլ և զմեծ հռետոր զԳրիգոր վարդապետ՝ զուսուցիչն մեր, որ զտունականն սկսաւ ի գրել, և ես զգանձարանս, ի մարգաց ամիս, ի միջաբաթ եղև սկսումն գրոյս։ Ո՜վ սուրբ մանկունք եկեղեցոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերնոցն յիշեցեալսն, ուղիղ սրտիւ և լի բերանով ողորմի ասացէք և դուք ողորմութիւն գտջիք.*

13

ՄԱՇՏՈՑ

Երևան 898

Գրիչ՝ Յոհանէս

վայր՝ Ի գաւառիս Խիզան քաղաքի

162ա Զստացօղ և զվայելօղ մատենիս զտէր Գրիգոր եպիսկոպոս Մոկաց՝
զգերապատիւ և զերանաշնորհ, զառաքելաշնորհն և զճշմարիտ պատ-
կերն Քրիստոսի՝ ըստ ներքին մարդոյն, հայրն երկնաւոր անփորձ և
անվրդով պահեսցէ յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ։ Ընդ սմին
և զհարազատ եղբայրն իւր զԹումայ կրօնաւոր և առաջնորդ սուրբ
162բ ուխտին, որ սուրբ Խաչ կոչի և մականուն սուրբ Կանանց վանք. ‖ որ
ստացան զգիրքս յիշատակ հոգւոյ իւրեանց, և ծնօղաց իւրեանց, և
հանգուցեալ եղբօրն իւրեանց Ղազար սարկաւագի, և ամենայն արեա-
նառւացն։

Գրեցաւ ի սուրբ և ի հռչակաւոր ուխտս սուրբ Խաչ յորջորջեալ,
ի գաւառիս Խիզան քաղաքի, ձեռամբ անարհեստ գրչի Յոհ[աննէս]ի
բանի խնդրողի, ի Թվ. ՊԾ. (1401), յամի ձեռնադրութեան տէր Գրի-
գ[որի]։ Աղաչեմ զամենեսեան, որք հանգիպիք սմայ ինչ կերպիւ և իցէ,
յիշեսջիք զամենայն վերոյգրեալքս ի սմայ և զԲ. (2) հարազատ եղ-
բարքն իմ՝ զՅակոբ և զՊետրոս կրօնաւորք՝ հանգուցեալք ի դուռն
սուրբ Խաչիս, և զՄկրտիչ կրօնաւոր և առաջնորդ սուրբ ուխտիս՝
163ա զկազմօղ տառիս և ‖ զպատճառ կենաց իմոց, և զծնօղսն իւր։ Նայ և
զուսուցիչքն մեր՝ զՅոհ[աննէս] և զԿիր[ակոս] վարդապետք, որ էին
առաջնորդք սուրբ ուխտիս...։

Տէ՛ր Գրիգ[որ], բազմաւեր հոգիս իմ քեզ յաղօթից ժամն յանձ եղիցի։

Ցայսմ ամի եկն թանձր մարախ և աւերեաց զբազում տեղիս և զգաւառս։

---

* Թվականի մասին տվյալ է հաղորդում Ղ. Փիրղալեմյանը «Նոտարք»-ում (էջ 14)։

ՀՍՍՌ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

14

ԾԱՇՈՑ

Երևան 8904

Գրիչ՝ Յոհ[աննէս]
վայր՝ Խիզա՞ն

46 ա Քրիստոս աստուած, քո անոխակալ քաղցրութեամբդ և բարերար ողորմութեամբդ յարութեան և անմահական կենացն արժանի արայ զստացաւղ սուրբ գրոցս զՅով[անէս] պատուական քահանայ, որ ստացաւ զսայ յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և ծնաւղացն իւրոց՝ Յակոբին և Ղիաթին, և եղբաւրն՝ Ամիր-Բէկին, և հարազատ զաւակացն՝ Կարապետին և Վարդանին, և կողակցին իւրոյ Աննայի, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց մեղաց թողութիւն շնորհեայ, և արքայութեանդ արժանացոյ, և քեզ փառք յաւ[իտեան]։ Ընդ նոսին և ինձ՝ մեղապարտ գրչի Յոհ[աննէս]ի դերանուն խնդրողի բանի և ծնաւղաց և եղբարց։ Նայ և վարդապետացն մերոց Յոհ[աննէս]ի և Կիր[ակոսի]՝ հոգևոր ծնօղաց մեր և վարժողաց՝ ողորմեայ տէր և տուր զբարի պարգևաց քոց հատուցումն։ Եւ դուք՝ բարեմիտ ընթերցողք և լսողք, յիշեցէք զամենայն վերոյգրեալքս ի սմայ, և միով բերանով աստուած-ողորմի ասացէք և աստուած ձեզ և մեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստն, ամէն։

Թվ. ՊԾ. (1401)։

15

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 732

Հետ. ստացող՝ Յովանէս Համշինցի

211 բ Զսակաւ գիրս գրեցի
Եպիսկոպոսըս Համշինցի,
Այս անպիտանս յամենայնի,
Որ Յովանէս անունս կոչի։
Ցաւաւք նեղեալ յայս աշխարհի,
Դառն և գժնայ և անբարի,
Միտքս փութով ի չար գիմի,
Եւ ի բարոյն յոյժ հեռասցի,
Ու ահեղ աւուրն այն ատենի
[Ի՞նչ] գործ գործեցի ինձ հատուցի
Ողորմելիս յամենայնի,
Ըստ իմ գործոյս ինձ պատրաստի։
Այլ դու՝ տէր[դ] յամենայնի,
Քաղցր ե բարի անքննելի,
Զ՟ոգիս իմ քեզ յանձին արի,
Բարեաց աղքատս յամենայնի.

Եւ քեզ փառք վեր առաքի
Յաւարածոցս անլռելի, ամէն.
Թվ. ՊԾ. (1401)։

16

ԱՔՔԱ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍԱՆԴՈՒԽՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵԼԻՑ

Երևան 1925

Գրիչ՝ Մարկոս
վայր՝ Ղրիմ, Տաշքաւրրու դղեակ

220 ա *...Կատարեցաւ երկրորդ Կլիմաքս, այսինքն որ է Սանդուխտ գիրք, ձեռամբ մեղապարտ անձին* Մարկոս *գրչի, ի* Տաշքաւրրու *դըղեակս, առ ոտս սրբոյն Ստեփաննոսի, ի յաշխարհս* Հռճաց, *ի յաշխարհի բառ՝* Սուրխաթ *և* Ղրիմ *կոչեցեալ, ի Թուականս մեծ յԱդամայ՝ վեցհազարերորդի ութհարիւրերորդի քսաներորդի Զ.-երորդի (6826), ի ծննդենէն Քրիստոսի՝ հազարերորդի չորսհարիւրերորդի երրորդի (1403)՝ Հայոց հաշուի, և ըստ Յունաց հաշուի՝ Ռ.-երորդի երեքհարիւրերորդի* Ի*ննսներորդի երրորդի (1393), և ըստ Ֆռանգաց՝ հազարերորդի [երեք հարիւրերորդի*] Ի*ննսներորդի մին Թ.-երորդի (1399), և ըստ ասորւոց՝ Ռ.-երորդի [երեքհարիւրերորդի*]* Ի*ննսներորդի ութերորդի (1398), և ըստ պատճէն յաբեթական տումարիս Հայոց ՊԾ. (1401), Տանուտէր տարոյն՝ Առեւծն, ի մայիս ամսոյ ԻԱ., ի կաթողիկոսութիւն Հայոց* Կարապետի, *և յեպիսկոպոսութիւն մերոյ նահանգիս ամենայն հիւսիսական կողմանց՝ տէր* Ստեփանոսի, *և ի վարդապետութեանն տէր* խաչատրի, *և յանբարի ժամանակս, որ սղութիւն էր, հացն կապիճն Լ. (30) դրամ եղև։*

Այս Սանդուխտ գիրքս, որ Կլիմաքս կոչի վաղընջուց թարգմանեալ է յունմեռէ ի յԱնդիոք, *ի սուրբ Սիմեոն, զառաջքն Ի. (20)*
220 բ *ճառ ի յոյն լեզուէն, և ոչ ժամա[ն]նեաց կատարեալ, քան զի վախճանեցաւ, իսկ այլ ոմն յեղբարց մերոց՝ անուն* Սիմէոն *կոչեցեալ, ի քսան ճառէն ի վեր թարգմանեաց ի Վրաց լեզուէ, գլուխք երկոտասան և մեկնութիւնս ԾԼԵ-Զ։ Արդ, որք ընթեռնոյք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող գրոցս* զՀայրապետ *կուսակրաւն նորընծայ աբեղայ և զամենայն արեան մերձաւոր ազգականս իւր։*

Եւ կրկին յիշմամբ յիշեցէք ի տէր զՅոհանէս *կուսակրաւն վճիտամիտ աբեղայ՝ զհայր վանացն սուրբ ուխտի Աւքսէնդիոսի, ամենայն ազգականաւքն իւր։*

Եւ յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր ի բարի մասին՝ զթարմատար և զկարգընկեց զՄարկոս *գրիչս, և սխալանաց և խոշրռուտ գրիս մի մեղադրէք, զի քարտէզս փառանգի էր, և աւրինակն դժար, և այդքան էր կար մեր և պէտս մեր։ Կորկոտ և թան և փորս մեզ գուսան, որ է ծաղրական։ Այլ ըստ շնորհաց ձեր ընթերցջիք ի փառս աստուծոյ*

17

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 8868

Գրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Ղրիմ, Կաֆա

307 բ ... Որում ցանկացաւդ եղեալ քահանայս աստուածամերձ Աբրա-
համ անուն կոչեցեալ, տիաւք մանկագոյն, բայց իմաստութեամբ զար-
գարեալ ետ գրել զսա մեկոանէրկ և աղկաղկ անձին Ստեփանոս փըց-
նագրի, որ տեսի զանհամար ազգս տնաւրէնութեանց և ախտից, զորս
սա թուէ առ իս բազմապատկաբար կատարեալ, այլ և անդարձ ի նոյնն,
և առ ստացաւղ սորա՝ յԱբրահամ քահանայ՝ մասնաւոր երևեալ։ Եւ
եդաք զսա յիշատակ մեզ հրապարակին, դսրովիչ և կառափիչ ի կեն-
դանութեան մերում։ Եւ զկնի մահուն մերոյ որչափ մնասցէ սա կա-
մաւք տեառն ի ձեռս այլոց, պարսաւելով զխայտառակութեան ար-
ժանիս միայն զգրչակս, զի թերևս և ողոքանացն, որ աստ լուիցէ
վասն մեր տէր մեր։ Արդ, աղաչեմ զդասս մաքրապարիցդ, յիշել ի
312 ա պատկանաւոր աղաւթս ձեր զյիշատակեալքս || ի սմա զԱբրահամ աս-
տուածարեալ քահանայ Մելտենցի, և զծնաւղսն իւր՝ զԱրքայուն հայրն
և զԱսան-Մելիք մայրն, և զեղբայրն իւր զՔուրդամիրն, և զերիցակին
բամբիշն իւր, և զամենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանիս և
զփոխեալսն առ Քրիստոս...։

Եւ ըզզառածեալս մեղաւք զորդիս տնաւրէնութեան՝ զգրաւղ սորա՝ զՍտեփանոս սուտանուն քահանայ, և զիմսն մի մոռանայք յիշել, և զՅոհաննէս քահանայն՝ զորգետկն իմ, որ ոսկով զարդարեաց ծաղկելով յիշեցէք ի տէր։

Արդ, յամի թուաբերութեանս Հայոց ՊԾ. (1401) աւարտեցաւ մատեանս յաշխարհս Կազարիոյ, յաստուածապահ քաղաքս Կաֆա, առ դրան ամէնաւրհնեալ սուրբ Աստուածածնին։

18

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9222, Ե

Նորոգող՝ Թումա

Արդ, վերստին նորոգեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ յոգնամեղ և անարժան վարդապետի Թումաի, ի թվականիս Հայոց ՊԾ. (1401), ի վաելումն սրբասէր քահանաի Կարապետի, որ ստացաւ զսայ ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ իւր, և ծնօղաց իւրոց Դանիէլի, և մօր իւրո, և եղբարց իւրոց՝ Թումաշաիի և Սիմէոնի, և քեոց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեաց և հանգուցելոց։

Արդ, որք հանդի || պիք սմա ընթռնելով կամ աւրինակելով յիշեցէք ի մաքրափայլ և յերկնագնաց յաղաւթս ձեր զյառաջ յիշեցեալ քահանայն Կարապետ, և զծնաւղսն, և զհարազատ եղբարսն իւր զԹու-

մաշաՌ, և զՍիմէոՆ, և զՄարտիրոսՆ, և զԹումայՆ, որ դիւրաւ վաճառեցին փոքր գնով զաւետարանն, ընդ նոսին և զանպիտան ոգիս. և որք յիշէք զմեզ սրտի մտաւք՝ յիշեալ լիջիք յառաւտ ողորմութիւնն աստուծոյ, որ է օրհնեալ, ամէն։*

* Հիշատակարանն այժմ պահվում է պատառիկ հիշատակարաններից կազմված № 9222 ժողովածու-տուփի մեջ, Ն. համարի տակ։ Հանված է Ախթամարի № 225 ձեռագրից, որ նկարագրված է Ն. Ղալայանի ցուցակի մեջ՝ № 67-ի տակ (սյունակ 126)։

19

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5562

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Հիզան

ա

309 բ ... Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Յովանիսի անիմաստ և տխմար գրչի, անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատասիրեալ իմ ի սմա, գրեցի անարժան ձեռաւք իմովք յընտիր և ի ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանօք և բազում պանդխտութեամբ և անհանգիստ և գժուարին և տորտամելի աւուրբք, ի մեծ թուականիս Հայոց ՊԾԱ. (1402), ի կաթողիկոսութեանս հայկազեան սեռի տեառն Դաւթի Աղթամարեցւոյ, որ և եղբայր տեառն Զաքարիայի հայրապետի՝ վկայեցելոյն ի Քրիստոս մարտիրոսական արեամբ յամիրայէն Ոստանայ։ Եւ ի թագաւորութեանն այլասեռից Թամուր-Լանկի, որ է յաղթող՝ւ անպարտելի, և յայսմ ամի եմուտ ի տունն Հոռոմոց, և նուաճեաց զամենեսեան ընդ ձեռամբ իւրով, և զամիրապետն աշխարհին՝ Իլդրում անուն ըմբռնեաց և կապեաց՝ հանդերձ որդւովն։ Զոր տէր աստուածն Իսրայէղի պահեսցէ անսասան զաթոռ հայրապետական և թագաւորական, ամէն։

Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքիս, որ Հիզան անուն կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Սարգսի զօրավարին, և սուրբ Գէորգեայ, ի վայելումն Յոհաննէս քահանային և Սուքիաս քահանային՝ քւերորդւոյն իւրոյ, և ի յիշատակ հոգւոց իւրեանց և հոգւոյ Թումայ քահանային որդո Յոհաննէս քահանային, որ մատաղ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս*։ Եւ կացցէ սայ ընդ իշխանութեամբ Սուքիաս քահանայի, քւերորդւոյն Յոհաննէս քահանայի, և այլ մարդոյ գաւէ ի հետ չկա, և ոչ իշխօղ, բայց միայն ի Սուքիաս քահանայէ...։

310 ա ... Այլ և զիս՝ զանարժան գրչակս զՅովանէս յիշեցէք ի Քրիստոս և զհայրն իմ զՄկրտիչ քահանայ, և զհօրեղբայրն զԳրիգոր քահանայ, և զՍտեփաննոս քահանայ՝ զորդի նորա, և զմայրն իմ, և զեղբարսն իմ՝ զԶաքարայ քահանայ և զՆերսէս Նորաբողբոջ սարկաւագ,

* Հիշատակարանից հետո՝ 310ա—311ա էջերի վրա, վաղամեռիկ Թումայի անունից գրված է բավականին հաջող մի ողբ («Ի Թումայ քահանայէ, որդւոյ Յովհաննէս քահանայի, ողբ»), իսկ 10ա էջի վրա, Քրիստոսի պատկերից ներքև նկարված է Թումայ քահանան իր ծնողների հետ։ Նրան կից գրված է. «Ես Յոհանէս քահանայի որդի եմ՝ Թումայ քահանայն, որ տարաժամ փոխեցայ ի Քրիստոս, ո՜հ, ո՜հ, ո՜հ» (տես նկ. 2)։

և զքարի կինն զՀ[illegible]աթուն, որ մայրագութ սիրով աշխատեցաւ ընդ մեր, և զամենայն երախտաւորսն մեր ուղիղ սրտիւ և կատարեալ հաւատով յիշեսջիք ի Քրիստոս։ Եւ խոշորութեան և սխալանաց գրիս անմեղադիր լերուք, զի այդ էր կարն մեր։

Բ

ծր Զսուտանուն ծաղկողս և զանարժան քահանայս զՅովանէս յիշեցէք ի Քրիստոս և զծնողսն իմ ըստ մարմնոյ՝ զհայրն իմ զՄկրտիչ քահանայ, որ տարաժամ փոխեցաւ ի Քրիստոս և սուգ անմխիթար եթող ինձ։ Աղաչեմ զձեզ կողկողագին պաղատանաւք, զի յիշէք զմեզ բոլորով սրտիւ և աստուած ողորմի ասէք, զի շատ աշխատեցաւ վասն իմ յուսով, և ես չեղէ պտուղ բարի հատուցանել նմա փոխարէն, վասն որոյ զձեզ աղաչեմ, որք հանդիպիք տեսլեան սուրբ աւետարանիս անմոռաց յիշեսցիք զմեզ և աստուած զձեզ յիշեսցէ։*

Նկ. 2. Ձեռագրի պատվիրատու Յոհաննէսը, իր կնոջ և վաղամեռիկ որդու՝ Թումայ քահանայի հետ։

20

ԱԳԱԹԱՆԳԵՂԵԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Փիրզ. Նոտ. 17—18

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Հիզան, Ս. Խաչ վանք

Փառք... որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ գրել զպատմութիւն երից երանեալ և երջանիկ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի սուրբ ուխտս, որ սուրբ Խաչ յորջորջի, յերկիրս Հիզան քաղաքի, ի թուին ՊԾԱ. (1402)։ Ես Յովհաննէս գծագրեցի ձեռամբ իմով, որ յետինս եմ ի շարս բանասիրաց՝ անուամբ հռետոր կոչեցեալ և հանճարով և վարուք վերջնոտնեալ, յիշել... և զծնողս իմ

* Յովհանեսը Խիզանի դպրոցի հաջողակ նկարիչներից է։

զԱլեքսան քահանայն...։ Եւս առաւել զբազմերջանիկ հարքն մեր զՅովհաննէս և զԿիրակոս վարդապետք, որ էին առաջնորդք սուրբ ուխտիս և մեզ տածողք հոգւոյ և մարմնոյ... և միեղէն եղբարքս մեր, որ ի սուրբ Խոտչի դուռս հաւաքեալ կան՝ զՄկրտիչ հայրպետ, և ինձ արեանառու. զհօրեղբարսն՝ զՊետրոս և զՍտեփաննոս կրօնաւորք, և զայլ եղբարք՝ զԲարսեղ, զԱւետիս, զՆերսէս և զԿիրակոս վախճանեալ, զՊետրոս, զՅոհաննէս, զՍտեփաննոս, զՄարտիրոս, զԳրիգոր սարկաւագ, որ զԹուղթ խազէր, և զՅակոբ դպիր և աշակերտ, և զայլ ամենայն միաբան եղբարքս, որ մեզ կամարար են և ձեռնատու ի գործս բարիս։

Բ

Ես Յոհաննէս վարդապետս... գրեցի զպատմութիւն սուրբ կաթողիկոսացն և թագաւորացն...։

[Յիշեցէք] զեպիսկոպոսն Տարօնոյ՝ զտէր Աստուածատուրն, որ օգնական եղև ի նիւթ տառիս, պատահողք մատենիս յիշեսջիք զնա։

21

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 3578

Գրիչ՝ Թումայ Սիւնեցի
վայր՝ Ի հռչակավոր Երկիրս Ծար,
ի գեղջս Քարավանառ

293 բ ... Գրեցաւ գիրքս այս աստուածաշունչ, որ ունի ամբարեալ առ ինքն զմեկնութիւն բանից սուրբ աւետարանին և կոչի քաղուածու գլխոյն Մատթէոսի սուրբ աւետարանչի, նաև ունի ընդ ինքեան զլուծումն չորից գլխոցն, զոր բազում աշխատութեամբ ժողովեալ է մեծ րաբունոյ և տիեզերալոյս հռետորի Գրիգորի՝ աշակերտի եռամեծին Յովհաննու Որոտնեցոյ:

Եւ կատարեցաւ սայ ի թուականութեանս հայկազեան տումարի՝ ութհարիւրերորդի յիսներորդի առաջներորդի ամի (1402), ի հայրապետութեանն Հայոց և Աղուանից երկուցունց տէրանց Կարապետք կոչեցելոց, զոր այսպէս պատահեցան ի մերումս ժամանակի՝ անուանակիցք գոլ միմեանց, և յարհեպիսկոպոսութեան այսմ նահանգիս տէր Զաքարիայի Դադի Վանուց վերատեսչի, ի հռչակաւոր երկիրս Ծար, ի գեւղս Քարավանառ, ընդ հովանեաւ սրբոցս որ ի սմայ, ձեռամբ մեղսամակութ և անարհեստ գրչի՝ Թումայի Սիւնեցոյ, ի խնդրոյ պատուական և սրբասնեալ և կուսակրաւն քահանայի Յոհաննու։ Յայսմ ժամանակի, յորում փայլէր ի մէջ եկեղեցոյ պայծառ ջահն անշիջանելի և երկրորդ լուսաւորիչս հայկազեան սեռի, մեծ վարդապետն Գրիգոր, որ ոչ միայն հոմանուն գոլ սուրբ Լուսաւորչին, այլ բանիւք և արդեամբք, դաստիարակելով զմանկունս սրբոյ կաթուղիկէ, դիացուցանելով զշնորհս հոգոյն սրբոյ, զանձն ապացոյց տալով և քրիս-

նաջան վաստակաւք յորդորելով զամենեսեան, զոմանս ի սէր աստուա-
ծային առաքինութեան և զոմանս ի ճաշակս աստուածաշունչ վար-
294 ա դապետութեան, տիրապէս || մատակարարելով, հանելով ի գանձուց
իմաստուն տանուտեառն զհին և զնոր կտակս ե տալով ծառայակցաց
ի ժամու զկերակուր բանին, ունելով որդի հարազատ և ժառանգ վար-
դապետութեան իւրոյ՝ զծաղկեալն ամենայն բարութեամբ և զարդար-
եալն ամենալի շնորհիւ վարդապետական խոհեմութեամբ և փիլիսո-
փէական արհեստիւ՝ զախոյանն ընդդէմ հերձուածողաց զվարդապետն
Մատթէոս, զոր յայսմ ամի, կամակցութեամբ սուրբ հոգոյն, և ջանիւ
մեծ վարդապետին Գրիգորի, և աղաչանաւք գրոց աշկերտեալ անձանց
նստաւ յաթոռ տէլէաութեան, զոր տէր աստուած վայելել տացէ և
պահեսցէ զսոսայ՝ հայր որդով բեբկրեալ, պսակ պարծանաց կաթու-
ղիկէ եկեղեցոյ, ամէն։

Զոր ե ես, մեռեալս հոգով և թաղեալս ի բազմաբեղուն ախտս
չարի՝ Թոմայ անարհեստ գրիչ, զգլուխ ի գետին գնելով և զգարշա-
պարս ոտից համբուրելով, նայ և զաչս յաղեբս արտասուաց առնելով,
հայցեմք հառաչալից պաղատանաւք ի ձէնջ, ով մանկունք սուրբ
Սիոնի և դասք լուսեղամից, որք ծըծէք սպունգաւ հոգոյն զհոսանս
շնորհաց, յորժամ հանդիպիք այսմ աստուածային գանձարանի կար-
դալով, կամ աւրինակելով, կամ միայն տեսանելով, յիշել ի մաքրա-
փայլ յաղաւթս ձեր զվերոյ ասացեալ կրաւնաւորն Յունան, և զծնողս
իւր՝ Առաքեալ և Մինախաթուն, և զհարազատ եղբայրն իւր Խոջադեղ,
և զայլ ամենայն արեան մերձաւորս իւր, ե ասել բոլոր սրտիւ, թէ
Քրիստոս աստուած... ողորմեայ վերագրելոյս ի սմայ Յունանին և
իւրոցն...։

Խոշորութեան և սխալանացն անմեղադիր լինել աղաչեմք, զի
կար մեր այս էր, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

22

ԱՒԵՏԱՐԱՆ

Բրիտ. թանգ. Or. 5761, հճ 21, էջ 38

Գրիչ՝ Յով[հաննէս]

ա

252 ա ... Ով Ղազար անուն երէց եռափափ[ագ] սրտիւ ցանկացեալ
այսմ... ստանայ զսա ի հալալ և յարդար գոյից իւրոց՝ յիշատակ իւր,
և ծնողաց իւրոց Սահփաննոս քահանայի, և մաւրն նորա Անիֆի, և
ամենայն արեան մերձաւորաց, և ի վայելումն նորաբողբոջ պատա-
նեկին Սանակա, որո չորս ամ էր, զոր կոչեցեալ էր ի կարգ քահա-
նայութեան...։ Յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր... և զիս՝ զանար-
ժան գրիչ Յով[հաննէս]...։ Ի մարդեղութենէն Քրիստոսի Յիսուսի տեառն
մերո ի ՌՆԲ. (1402) ամին, և ի թուականութեան Մեծ Հայոց ՊԾԱ.
(1402). յայս դառնացեալ ժամանակիս, նեղութիւն ազգի ազգիս, որ
պահանջեն զգին հաւատիս, գոլով անտէր ազգս Հայոց, զոր խնամքն
աստուծոյ և տեառն մերո Յիսուսի Քրիստոսի պահեսցէ զազգս մեր
մինչև ի գալուստն իւր միւսանգամ ա[ն]սասան։ Կաթողիկոս Հայոց
տէր Կարապետ:

Բ

254ա *Արդ աղաչեմ... արժանի յիշման արարէք զնկարագրիչ* Յով[հաննէս], *և զհայրն իմ* Զաքարիա, *և զմայրն իմ* Եղիսա, *և զհարազատ եղբարսն իմ զ*Պօղոս *և զ*Յովհաննէս *և զ*Պետրոս, *և զամենայն արեան մերձաւորսն իմ ի* Տարաւնո, *քաղաքէ* Մշո:

23

ԱՒԵՏԱՐԱՆ

ՀԱ, 1917/18, էջ 59

Գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի
վայր՝ Մառնեվան, մերձ ի Խլաթ

... *Զեոնտրկեալ գրեցի զսուրբ աւետարանս [ի խնդրոյ* Կարապետ *քահանայի], ընդ հովանեաւ ամենամաքուր սուրբ Աստուածածնի, ի վանս* Մառնեվանի, *մերձ* Խլաթայ՝ *մայրաքաղաք[ի]* Բզնունեաց *գաւառի, ի հայրապետութեան տեառն* Կարապետի *ընդհանուր կաթողիկոսի, և մերոյս նահանգի տէր* Դաւթի՝ Աղթամարայ *կաթողիկոսի, իսկ յաշխարհակալութեան նեռողաց ազգին* Միր-Թամուրին *և զարմից և զաւակաց նորին: Եւ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ի ՊԾԱ. (1402) ամին:*

24

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ, ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

Ն. Ջուղա 188, Ս. Տ—Ա, էջ 1242

Գրիչ՝ Յռանգ
վայր՝ Սինէական վանք

274ա *Փառք... որ արժանի արար զանարժան զփր[այ]* Յռանգս *հասանել ի վերջին գիծ գրոյս...: Ցամի մարդեղութեան տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌՆԲ. թվին և ի թվիս Հայոց ՊԾԱ. (1402) գրեցաւ աստուածարուխ մեկնիչս աւետարանին Մատթէոսի ի խնդրոյ պատուական վարդապետին փր.* Մխիթարչի Ապարանեցոյ. *ընդ ամենայն բարութեանցն և բազում գրենացն ստացաւ զսա յիշատակ իւր ի սուրբ կարգս միաբանողաց: Արդ, աղաչեմ յիշել ի սուրբ մաղթանս ձեր զամենայն կարգաւորք վանից* Ապարաներոյ՝ *զկենդանիքն և զննջեցեալսն. նաև զամենայն գեղեցիկ հաւատով ժողովուրդքն որ ի նմա: Նաև աղաչեմ յիշել զբարի մեծ րաբունապետն, ուսման պատճառ սուրբ կարգիս՝ զ*Կարապետ *վարդապետն, այլ և զրարեաց պատճառն կարգիս՝ զ*Սամուէլ *վերախնամողն, որ բազում աշխատեցաւ վասն կարգիս մերոյ, և զ*Մաթէոս *ուշիմ վարդապետն, և զամենայն ննջեցեալքն յիշել աղաչեմ: Նաև յայսմու ժամանակի վերախնամող փր.* Ղուկաս, *որ բազում աշխատեցաւ վասն օգնութեան կարգիս՝ գնալով առ սուրբ պապն* Բօնօֆացիուս, *և բազում շնորհք և ազատութիւն երեր կարգիս՝ նմանելով առաջին*

նախնեացն, և աւելի վաստակեալ քան զամենեսեան՝ յիշխսջիք ի տէր։ Դարձեալ ծանիք, զի գրեցաւ սուրբ տառս ի վանս Սինէտկան, ընդ հովանեաւ սուրբ Յովհաննէս Մկրտչիս, ի նեղութեան և յաղքատութեան։

Աղաչեմ յիշել Սինէականի փրաթենիս՝ զննջեցեալսն և զկենդանիք երախտաւորք մեր, այլ և աստուած և ամենայն սուրբք, և ձեր սուրբ աղօթք օրհնէ զՄուրատն և զիւր որդիքն, որ օգնական է իմ ծերութեանս՝ ի գրել բազում աշխատանօք և օտար աչօք*, այլև առաջն<այ>որդ, միաբանքն յիշեալ լիցի ի ձէնջ...։

Նաև աղաչեմ յիշել զբարի ծերունին զՓրա Աստուածատուր վարգապետ՝ մեր ուսուցիչ, և ֆր. Գալուստն և զֆր. Տիրատուրն՝ մեր երախտաւորքն, և զծնողս մեր յիշել աղաչեմ. և ամենայն սխալանաց և խոշորութեան գրոցս անմեղադիր լերուք, զի կերակուրն ճաթրուր էր և ջուրս ցուրտ...։

Բ

48 ա Զվեհիմաց բաբունապետն զֆր. Մխիթարիչ Ապարանեըեցի՝ ստացող գրոյս յիշեսջիք՝ նաև զնուաստ գծողս՝ զֆր. Յոանգ:

Գ

228բ Ա՜խ, վա՜յ, մեղաւոր Սարգիս, կարդայ և միտ առ, և դատաստանին ահէն սարսիայ, զի մի ճնաս | | | ուսանքն։

25

ԱԻԵՑԱՐԱՆ

Երևան 3033

Վանառման գիր

411 բ Ես Լիպիկ որդի Ասկանտարայ, իմ կամաւ և իմ սրտի յաւժարութեամբ, ծախեցի զսուրբ աւետարանս Աւագտիրին և առի զգինն ի լման

* «Օտար աչօք» գրել նշանակում է օգտագործել ակնոց։ Որքան մեզ հայտնի է հայ գրիչներից առաջին անգամ ակնոց է գործածել 1317 թ. Կիպրոսի Կանչուտ վանքում «Մեկնութիւն պատարագի» աշխատությունը ընդօրինակած Յովհաննէս գրիչը։ Իր հիշատակարանում նա հայտնում է հետևյալը. «Եւ զի յաչաց լուսոյ նուազել էի ըստ մարմնոյ, որպէս և ըստ հոգւոյ. և զտի հայթայթել աչք ապակի, որ աւգնական եղև բնական վառելոյն, զոր հիացման արժանի է զտողացն, որ են ֆռանկք. և այնիւ աւարտեցի զգիրս։ Եւ ամենայն ոք որ ի լուսոյ պակասել է և պատահէ ապակւոյն՝ յոյժ ձեռնտու լինի նմա ի կարդալ և ի գրել, զոր տեսաք յայտնի ի բազումս և փորձիւ և անձամբ կատարեցաք» (Ձեռագիր Երուսաղեմի № 1141, Մ.Տ-Մ)։

Ակնոցից օգտվել է նաև 1353 թվականին ընդօրինակված, այժմ պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանի անձնական գրադարանում պահվող ավետարանի 69-ամյա գրիչ Ցակոբը։ Նա հայտնում է, որ «Վատեալ էր աչքս, եղի աչք, և բազում աշխատանաւք գրեցի վասն փափաքանաց սրտիս»։ (Ձեռագրի նկարագրությունը և հիշատակարանը տես Ա.Ց.Թ., էջ 135։ Այստեղ, սակայն, տարեթիվը սխալ է հաշված, և ձեռագիրը համարված է 1453 թվականի ընդօրինակություն)։

անպակաս, ու այլ մարդոյ խաւսք ու դաւի չկա ի յայս մէջս, ոչ իմ, ոչ իմ որդւոյ ու ոչ այլ մարդոյ։ Ծախեցաւ գիրքս և գրեցաւ սակաւ գիրս ի թվ. ՊԾԱ. (1402)։

Հաստատ է գիրս կտմաւն աստուծոյ։

Ես Յովաննէս վարդապետս, որ զգիրս գրեցի, վկայ եմ։ Ես Կոստանդ արեղէս վկայ եմ։

Զինչ վարդապետ* գրեց իմ՝ Լիպիկիս խրերով է։**

26

ԳԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ

Ն. Ջուղա 106, Մ. Տ-Մ, Ս. Տ-Ա

ա

205ա Զմեղաւոր տէր Թումայ-Մինաս*** արքեպիսկոպոսի Մաւսլայ, Դիարբաք և զտէր դատաստանայգրոց յիշեցէք ի յաղաւթս, ի թվ. ՊԾԱ. (1402), որ եղաւ ձեռնայ[դր]ութեան տէր Թումա արքեպիսկոպոսի։

բ

35 բ Եւ զտէր գրոցս զտէր Մինաս արքեպիսկոպոսի Մաւսլայ յիշեայ։

գ

38 բ Զտէր Թումայ-Մինաս արքեպիսկոպոսի Մաւսլայ-Դիարբաքի՝ զտէր գրոցս, որ բերի ի Սիս, յիշէ յաղաւթս։

27

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան. 4185

Կազմող՝ Սարգիս

1 ա Զստացւող սուրբ աւ[ետարա]նիս զՍարգիս մական[ուն | | | յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս | | | ծնողաւք և ազգակ[անաւք և] արեան մերձաւորաւք, աղաչ[եմ յիշել] ի տէր։ Ընդ նմին զհոգևոր եղբայրն իմ զտէր Ալէքսանոս աղաչեմ յիշել ի տէր, և դարձեալ աղաչեմ, որ զՅովաննէս քահանայն, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս, աղաչեմ յիշել։ Ըստ նոցին(՞) յիշմամբ արժանի առնէք զՅովանննէս կրաւնաւորն, որ բազում աշխատեալ է վասն պատճառի սուրբ | | |

Կազմեցաւ ձեռամբ | | | յիշել ի տէր։ Թվիս ՊԾԱ. (1402) էր որ կազմեցաւ, [ա՞ր]անց ԻԵ. (25)-ն, և Քրիստոսի փառք...։

---

* Ձեռագրում հապավված է այսպես՝ «վդ.»։

** Արաբերեն՝ «ղարար»—«հաստատել» բառից, այսինքն՝ հաստատությամբ, համաձայնությամբ է։

*** Պետք է ենթադրել, որ առաջին անունը (Մինաս) Թումայ արքեպիսկոպոսի անունն է՝ մինչև ձեռնադրությունը։

28

ՃԱՌԸՆՏԻՐ

ՄՑՎ 206 (822), հտ. Բ. 166

Հետ. ստացող՝ Ստեփաննոս

8բ Արդ, ի վերջին ժամանակիս,
Ի ՊԾԱ. Թուականիս (1402),
Ձեռ[ն] ի գրելոյ յիշատակիս,
Ձեռամբ անտրուեսա գրչիս
Ախմար և ծոյլ Ստեփաննոսիս
Եւ սուտանուն աբեղայիս։
Որ կարդալ սմա հանդիպիս
Զիս յողութ քո յիշեսցես,
Քրիստոս աստուած զքեզ յիշէ, ամէն։

29

ԱՒԵՏԱՐԱՆ

«Բազրեանդ», էջ 229—30

Գրիչ՝ Գրիգոր

Գովեստ տացուք հօրն անեղին
  և միածին Նորին բանին.
Ռամից համայն արարողին,
  հոգւոյն սրբոյ զարդարողին
Ի յախտաժէտ անձէ յետին,
  որ սպասաւոր կոչիմ բանին.
Գրիգորէ անվարժ անձին,
  Թմբեալ մտօք յաղտս կրկին,
Որ եռ ինձ կար տկար անձին
  ու ղԳիմ ու զՆուն հասոյց ի մին,
Ռամեալ զբոլոր, որ ի միջին,
  Գիմն առաջին և Նուն յետին.
Ինձ երանի հազար ընդ նմին,
  որ և տեսի զաւարտ սորին։
Էն է գլտակ՝ տէրն ամէնին,
  որ այն գրիչն է առաջին
Որ Բէնն ե՞ան Աբրահամին
  էհաս աւարտն, որ գրեալ էին,
Քառասուն և՛ երկու աւրն ամենի
  տառս գրեցաւ աստուածային։*

* Աւետարանի վերջը,—գրում է հրատարակիչը,—ընդարձակ մի յիշատակարան կայ, զոր ժամանակ չեմ ունեցած օրինակել, այդ յիշատակարանին մեջ «ՊԾԱ» Թուական մը կայ։

30

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նօտ. 18. Մուշ. Ղըզըլաղաճ գիւղ

Գրիչ

Ի մեծ թուականութեան Հայոց ՊԾԱ. (1402), յայս դառնացեալ ժամանակի, նեղութիւն ազգի ազգիս...։ Խնամքն աստուածոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցէ զազգս մեր, մինչև ի գալուստն միւսանգամ անսասան։ Ի կաթողիկոսութեան Հայոց տէր Կարապետի։

ՊԾԲ 1403

31

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՔԱՐՈԶՔ ՄԱՏԹԷՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ԱՇԱԿԵՐՏԻ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 5232

Գրիչ՝ Թումայ Թավրիզեցի
վայր՝ Շրվանայ երկիր, գիւղ Մատրասայ

ա

248 բ Արդ, ես՝ վերջինս ի բնաւից և ղտրուպս ի համայնից, զթափուրս ի բարեաց և լիացեալս ի չարեաց, ցանգացող եզէ այսմ աստուածային քառարուխ քառավըտակ սուրբ աւետարանիս, և գծագրեցի զսա մեծ երկամ[բ]ք և աշխատանօք, ի յերկիրս Շրվանայ, ի գեղջս որ յորջորջի վերաձայնելով Մատրասայ, ընդ հովանեաւ մօր լուսոյ սուրբ Աստուածածնիս, ի նեղ և ի դառն և ի յանծկացեալ ժամանակիս, զի հէնք և երկեւղ և սասանումն և դողումն թշուառականին և նեռին կարապետին՝ Թամուրին, որ թարքմանի դա մուր, զի ուր և հասանէ մթնատեսակ և մրրատեսակ առնէ, զոմն կողոպտելով, զոմն չարչարելով, զոմն սպանելով, զոմն գելելով, զհայր ի յորդւոյ բաժանելով և զորդի ի հօրէ, և այլն։ Եւ ոմանք պատապուրծ լինելով ի յայրս և ի ծերպս և յամրոցս և ի դղեակս, և ոչ լինէին ազատեալք, զի ոմանք ի սովոյ մեռանէին և այլք ի տօթոյ և ի ծարաւոյ, կէսք ի յահէ և յերկեւղէ զինքեանս քարավէժ առնէին, և այլ բազում չարիս, զոր դանդաղիմ ասել առ ի չձանձրանալոյ ընթերցողացդ։

249 ա Արդ, եգև գրաւ սուրբ աւետարանիս* ի թու. Հա[յ]ոց կրկին չորից հարիւրից և տասանց հնգից և երկուց թուոց (1403)։ Արդ, աղաչեմ զդասքդ աշակերտելոց բանին, որք հանդիպիք այսմ աստուածային սուրբ կտակիս ընթեռնելով կամ գաղափարելով կամ տեսանելով, յիշեսջիք ի մեղսաքօրիչ յաղօթս ձեր զմեղուցեալ գրիչ զԹումայ Թավրիզեցիս, և զհայրն իմ զԿոստանդ քահանայ, և զմայրն իմ զՈւսլու-Մէլիքն, և զսնուցիչն իմ՝ զէլմելիքն, և զորդին իմ զԹէոդոս, և զայլ ամենայն արեան մերձակայս իմ, և Քրիստոս առհասարակ զձեզ յիշեսցէ յիւրում արքայութիւնն, յանզրաւ կեանքն և յաներեկ աւուրն. ամենեցուն]ց կրկին աղաչեմ, զի խոշորութեան և սխալանաց անմեղադիր լինիք և ընկալջիք իբր զկրկին լումայս այրոյն առ ձերում մեծանձն[ութեանդ]։

* Պետք է գրեր «Մեկնութեան սուրբ աւետարանիս»։



Նկ. 3. Թումայ Թավրիզեցու ինքնագիրը։

Բ

Ստացող՝ Ստեփաննոս եպիսկոպոս
վայր՝ Շամախի

56 ա *Ո՜վ դասք լուսերամք... յիշեցէք յամենաառատ և հոգիաբուղխ զԹասիրեալ ողորմութեանդ ձերոյ զստացաւղ սուրբ գրոյս աստուածաւանդ բանիս ի տիեզերալոյս բաբունաց պետի Գրիգորի վարդապետի Մեկնութիւն սուրբ աւետարանչացս՝ զՍտեփաննոս վարդապետ զմայրաքաղաքին* Թավրիզու, *և զփոխեցեալն ի Քրիստոս զհայրն իմ* զԲէհնամշանն, *և զմայրն իմ* զԱզիզ-Մալիքն, *և զշնորհալի զեղբայրն իմ* զՅով[ճաննէս]՝ *փոխեցեալն ի Քրիստոս, և զփոխեցեալն ի Քրիստոս զքորքն իմ՝ զ*Դունիա-Մալիքն *և զ*Ախիրաթ-Մալիքն *և զայլ փոխեցեալսն ի Քրիստոս։ Զոր մերոյ հասեալ ի քարոզութիւն ի մայրաքաղաքս ի* Սամախի *և գտաք զտեառն մեծարեալ ոգւոյ զանկողոպտելի զգանձս և գնեցաք զսուրբ գիրքս զայս ի Շ. (500) դ[ահեկան], ի վարժումն մեզ և բազմաց լուսերամից, քանզի Պղատարքոս իմաստասէրն հրամայէ յիւրում բանին, եթէ՝ Ճանապարհորդ ի տունս և ի հայրենիս իւրեանց փութան, իսկ իմաստունք՝ [ի] հանճար և ի իմաստութիւն, և այլ եթէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանի յԵրուսա-*

56 բ ղէմ։ Աղաչեմ և դարձեալ, կրկին, աղաչեմ զձեբոյ || հեզութիւնդ, զի ի մաքրամատոյց աղաւթիւքդ ձերոյ անմոռաց յիշման արժանի առնէք զմեզ, և աստուած զձեր միոյ յիշմանն հազարապատիկ հատուսցէ աստ և ի հանդերձեալն, ամմէն։

Գրեցաւ ՊԾԳ. (1404), տրէ Ե. [5], և մարտ ԺԳ. (14)։ Եւ զիս՝ զկշտամբող դպ[իր] Թ[ու]մ[ա]՝ զծրաւղ բանիս յիշեա ի տէր։

32

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՑՎ 152 (600), հտ. Ա., 637

Ումն նետ. ստացող

200 բ Թամուրն* որ երեկ յա[յ]ս աշխարս**, և գերեց, և բազում հարվածք արար, և գերեց և կոտորեց զհոռմաց թագաւորն, և շատք մեռ[ան] և կորան, և յանկան յա[յ]լ աշխար[հ], և մեռան։ Թվական Հայոց ՊԾԲ. (1403)։

33

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ ՎԵՑԻՑ ՍԿԶԲԱՆՑ ԳՐՈՑ

Երևան 2382

Գրիչ՝ Գրիգոր Տաթևացի
վայր՝ Տաթև

454 ա Զսաացող սորին, զտիեզերալոյս մեծ վարդապետն Հայոց Յովհաննէ[ս] Որոտնեցի, և զիս՝ սակաւ աշխատողս Գրիգոր սպասաւոր նմին, աղաչեմ զձեզ, յիշել ի տէր, ամէն։***

Թվ. ՊԾԲ. (1403) գրեցաւ վերջին գիծս, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս միաբանից ուխտիս Տաթևոյ:

34

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 3955

Գրիչք՝ Սիմէոն և Գալուստ
վայր՝ Տաթև

212 բ ... Գրեցաւ տառս աստուածային, որ կոչի Հարցմունք և է նոր հատորն, ի թվաբերութեան Հայոց Մեծաց ՊԾԲ. (1403) տումարի, ի

* Ձեռագրում՝ «Թամարն»։

** Իմա «աշխարհս»։

*** Հիշատակարանի այս մասը ընդօրինակված է նախագաղափար օրինակից, որը գրված պետք է լինի մինչև Որոտնեցու մահը՝ այն է 1386 թվականը։

վանս հռչակաւոր՝ յեւսատքէի սուրբ առաքելոյս, առ ոտս քաջ հռետորի և բանիբուն վարդապետի Գրիգոր անուն հսկողի, նաև տառիս վեր-ծանողի։ Ի խնդրոյ սրբազան և հեզահոգի, կուսակրօն և ճշմարիտ քահանայի և խարազանազգեաց ճգնաւորի, որ է ամենայնիւ օրինակ բարեաց՝ ի պահս, յաղօթս և յարտասուս յորդահոսս, այլ և ի տուրս աղքատաց ոչ ունելով և ոչ խնայելով, զոր տէր հատուսցէ։

Արդ, սրբասէր քահանայս այս Երեմիա ցանկացաւ սմա և ետ գրել ի վայելումն անձին իւրոյ և ծնողաց իւրոց։ Եւ մեք՝ աշակերտք բանի՝ Սիմէոն սպասաւոր և Գալուստ պիտակ վարդապետ, գրեցաք զսա ի վայելումն վերոյ ասացեալ կրօնաւորի, և աղաչեմք զամենեսեան զհանդիպողսդ՝ զստացող սորա և զանպիտան գծագրողք» յիշեցէք ի յերկնաւորն և ի լուսաբորբոք աղաւթս ձեր և մեղաց թողութիւն հայցեցէք, և որպէս յիշէք՝ յիշեալ լիջիք յամենեցունց աբարչէն, ամէն։

Բ

220 ա Զմեղապարտ Վարդանս յաղաւթդ յիշեսջ։

35

ԱԴԱՄԳԻՐՔ ԱՌԱՔԵԼԻ ՍԻՒՆԵՑՒՈՑ (Ա.)

«Ադամգիրք», էջ 229—232*

Հեղինակ՝ Առաքել Սիւնեցի

Ի յութ հարիւր Հայոց թուական
Ցիսուն 'ւ երկու մըտեալ նոր ամ (1403)
Խորհըրդաւոր բանըս գրեցան
Ի խրախութիւն սըրտից մարդկան։
Զձեզ աղաչեմ սուրբ ընթերցողք
Եւ աննախանձ օրինակողք,
Հայրն իմ Դաւիթ յիշէք մըտօք,
Ի սուրբ յաղօթս ձեր արտասուօք։
Այլ և ըզմայրն իմ ըզՄելիք
Եւ զՄարիամ հանն** իմ բարիք,
Ըզննջեցեալսն և զկենդանիք
Ցիշէք յաղօթս ձեր նազելիք։
Այլ և զեղբայրն իմ ըզԲարսեղ՝

---

* Առ. Սյունեցու «Ադամգրքի» բոլոր երեք վարիանտները՝ իրենց հիշատակարաններով հանդերձ, պահպանվել են նաև Պետական Մատենադարանի ձեռագրերում (օր. №№ 1, 83, 8689 և այլն)։ Հիշատակարանները մեջ ենք բերում Մ. Պոտուրյանի հրատարակած բնագրից, նկատի ունենալով, որ այն կազմված է 10 ձեռագրերի համեմատությամբ։ Երբեմն միայն օգտագործում ենք նաև Երևանի № 1 և, հատկապես, № 83 ձեռագրերի ընթերցվածքները։ Տարընթերցվածքներից ցույց ենք տալիս միայն նրանք, որոնք իմաստային նոր երանգ են տալիս բնագրին։

** Որոշ ձեռագրերում՝ «հարսն»։

Սուրբ քահանայ և հանճարեղ,
Զի վաղճանեալ էր նա անմեղ,
Ցիշէք յաղօթս ձեր արտասուեղ:*
Զմեծ վարդապետն իմ դասասաց՝
Գրիգոր անուն՝ պատճառ բարեաց
Ցիշէք յաղօթս ձեր առ աստուած
Ազգօք 'ւ արեամբ մերձաւորաց,
Պայծառամիտ և հանճարեղ,
Պահող, հըսկող և արտասուեղ,
Հոգով մաքուր, բնութեամբ անմեղ,
Մեծ հռետորն բանիւ համեղ:
Իանս յարմարեաց հանճարագոյնս
Քրննեալ զբոլոր էից մասունս
Գիրք քսանուվեց** որպէս ծաղկունս,
Եկեղեցւոյ եդեալ ակունս:
Զկաթողիկոս Հայոց ազգիս՝
Զտէր Կարապետ օրհնող հողիս,
Ցիշէք յաղօթըս ձեր բարիս
Եւ ընդ նըմին զթըշուառ հոգի[ս]:
Այլ և իշխանըն մեծ՝ Սըմբատ,
Զթիւրքէլ՝ եղբայրն իւր հարազատ,
Զաւակք նոցա ծնընդեամբ արատ,***
Ցազգէս Հայոց լինել անհատ:
Զոր յիշեդաք առհասարակ
Ցիշէք և դուք մտօք յըստակ
Պահել զնոսա հոգով սպիտակ
Կալ**** զանթառամ փառաց պըսակ...:
Ի ղանութեանըս***** Թամուրի,
Որ նա տիրէր****** շատ աշխարհի
Տեառն ձեռին բաժակ ոսկի,*******
Սըբուցանէ ում և կամի:********
Անդամլուծ էր և տկար,
Զօրք ունէր ութհարիւր հազար,
Զաշխարհս էառ հզօրաբար,
Ոչ ոք նըմա ընդդիմայր:

---

* Այս քառյակը տպագրված է նախորդ (մոր մասին) քառյակից առաջ: Դասավորությունը փոխում ենք Երևանի № 1 ձեռագրի հիման վրա:

** Որոշ ձեռագրերում՝ «քսանուչորս»:

*** Տպված է՝ «արագ»:

**** №№ 1 և 83 ձեռագրերում՝ «Տալ»:

***** Որոշ ձեռագրերում՝ «Իշխանութեանս»:

****** Որոշ ձեռագրերում՝ «տիրեաց»:

******* Ըստ երևույթին վրիպակով տպված է «իսկի», ուղղում ենք № 1 ձեռագրի հիման վրա:

******** Շարունակությունը բերվում է հիշատակարանում ըստ № 83 ձեռագրի:

Բազում երկիր առ յաւարի
Ու ի Սըմբրղանէտ տարաւ դերի,
Ցոլովք մընացին յաշխարհ հեռի
Եւ ոչ տեսին տուն հայրենի։
Ոտնաւորքս այս մին մին տուն*
Հազար ու երկու հարիւր է նոյն,**
Որ ընթեռնուն մըտօք ըզսոյն
Գտանէ շատ բանս պիտանագոյն։
Օրհնեմք հոգով զաստուած հոգին,
Գովեմք մըտօք զհայրն անքըննին,
Բարեբանեմք մարմնով զորդին,
Որ ազատեաց ազգօք զնախնին։
Ունի խորհուրդ սա զանազան,
Որ ի գըրոց սըրբոց առան,
Ջընթերցողին միտքըն բանան,
Տալ իմանալ զոր ի սմա կան։
Բայց ըստ ճառից է սա նոր բան,
Որ յայլ ուրեք չերևենան.
Սա կերակուր մըտաց մարդկան,
Ծաշակողաց ըզհամըն տան։***
Որք բաղձանօք ըզսա կարդան
Ըզլըսելիս հոգոյն բանան,
Այլ և մըտաց ըղլոյսըն տան,
Քըննել զխորինս որ ի սմա կան։
Բայց թէ իցէ ոք ձանձրամիտ,
Պարսաւադէտ բանից անկիրթ,
Նա ոչ առնու զճաշակ բանիդ,
Այլ մեղադրէ բանից կարգիդ։
Բայց որ կարդայ զսա աննախանձ,
Գըտցէ իմաստք պայծառասքանչ,
Փայլմունքս, որ կայ ի սմա թափած,****
Ոչ է յինէն, այլ ի բարձանց։
Ես որդն և հող եմ և փոշի,
'Ի արհամարհանք***** ամենայնի.
Բայց օրհնութիւն տեառըն շնորհի,
Որ ի տըկարըս ներգործի։
Թէ ոք ունի բան ինչ ոսկի
Ոչ անարգէ զնիւթն արծաթի,
Զի երկոքեանն են պիտանի,

* Կա վարիանտ՝ «միագոյն»։

** № 83 ունի՝ «Առաջին հատորս աս մէն մին տուն, հազար ու երեք հարիւր ութսուն»։ Այլ ձեռագրեր ունեն՝ «Հազար հարիւր է և ութսուն», իսկ մի ձեռագիր՝ «1203»։

*** № 83— «Ճաշակողացն քաղցր համըս տան»։

**** № 83 —«Թափանց»։

***** Մի ձեռագրում՝ «Նախատինք»։

Առ իւրաքանչիւր պատշաճի։
Ոտանաւորքս վասն այն գրեցի,
Զի դիւրահաճ մարդկան լիցի,
Թէպէտ շատ բան կան աշխարհի,
Այս հաճելի ըստ Ներսէսի։
Դիրս այս գրեցաւ ի վեհից խնդրոյ
Յանարժանէս Առաքելոյ,
Ընտրեալ սուրբ ուխտըս Տաթևոյ,
Յաթոռ Սիւնեաց հռչակելոյ։
Որ ախորժակ ունի ի բաց
Առցէ ղբանըս նորիմաց,
Որոճասցէ ծասկմամբ մտաց,
Ունի ճաշակ հոգոց բազմաց։
Միտքն․էը որպէս ըզճանճ մեղվի,
Որ ի ծաղկունս շըրջագայի,
Առնուլ ըզնիւթըս հնարի
Նըքքատեսակ հիանալի։
Զի ի ծաղկանց ըրղխին բաբի
Գոյնք և բուրմունքըն ցանկալի,
Դեղք հիւանդաց ու խարիսխ մեղուի
Նէրկ և անգոց ազդմունք յայտնի։

36

ԱԴԱՄԳԻՐՔ ԱՌԱՔԵԼԻ ՍԻՒՆԵՑԻՈՅ (Բ.)

«Ադամգիրք», էջ 270—272

Հեղինակ՝ Առաքել Սիւնեցի

Վասն յիշատակարանի գրոցս*

Հասեալ յաւարտ բանիս օրհնեսցուք ըզտէր,
Ուստի բանքս ըսկըսաւ՝ անդ և աւարտէր.
*Պատմի Ադամ 'ւ Եւա և որ ինչ անցքն էր,***
Եւ այլ ծածկեալ խորհուրդ, որ հանդերձեալն էր։
Առէք զխորհուրդս ի միտ, եղբայրք բանասէր,
Իմաստք որ է ի սմա յայլ ուրէք ոչ կէր.
*Բանքս այս ոչ է*** յինէն, այլ ի բաղձմանց էր,*
Զի սէր տնաւրէնութեանն զմիտըս վառեալ էր.
*Բայց ոչ յերկարեցի զի**** ձանձրանալ տէր,*****

** Հրատարակված է 3 ձեռագրերի բաղդատությամբ, օգտագործել ենք նաև Երևանի №№ 1 և 83 ձեռագրերի ընագրերը։*

*** № 83—«[յ]անցանքն էր»։*

**** Երեք ձեռագրերում—«Թէ»։*

***** № 83—«զի մի»։*

****** Այսինքն՝ «տայր»։*

Այսքան բանասիրացըդ բաւական էր։
Գրեցի զոտանաւորքս ոչ գինչ պատճաշն էր,
Զի ես՝ տէր Առաքեալ միտըս ցընդեալ էր.*
Ի յայս ժամանակիս սուլթան Թամուրն էր.
Թվականս մեր ութհարիւր ՚ւ յիսուն երկու էր.**
Բարեմիտ ընթերցողք յիշեցէք առ տէր
Զեղբայրն իմ ըզԽաչսեղ՝ սուրբ քահանայ էր.
Ըզհայրն իմ ըզԴաւիթ, և զՄելիք՝ իմ մէր.
Արեամբ մերձաւորաւք յիշեցէք առ տէր,
Զիմ մեծ բարունապետն՝ յոյժ իմաստասէր,
ԶԳրիգոր մեծ ճըգնազգեաց աղերսէք առ տէր։
Զդիտող Հայաստանեայց, հոգւով սըրբասէր,
Զընտրեալ տէր Կարապետ շնորհազարդէ տէր.
Զմանկունս եկեղեցոյ, որ ի ներկայս էր,
Զանցեալն և զապառնիսն միշտ յիշեսցէ տէր։
Ով ընտրեալ քահանայք՝ մաօք բանասէր,
Զնուաստ տէր Առաքեալ դուք յիշէք առ տէր.
Զյիշաղուգ մեր առ աստուած գըթով սըրբասէր
Ցաւուրն այցելութեան պըսակեսցէ տէր։
Զծաղկունս պէս պէս լուսոյ, որ աստ յիշած էր՝
Նոցին պըճնեալ գունով զձեզ ծաղկեսցէ տէր,
Զիշխանըն մեծ Սըմբատ և զպարոն Բուրթէլ,
Ազգաւք և զաւակաւք ծաղկեցուսցէ տէր։***
Զհերձուածք չարին, որ յայս ժամանակիս էր****
Ի Սիւնեաց վիճակէս փարատեսցէ տէր...։
Երեք հարիւր ու քսան***** տունքս, որ ի սմա կէր,
Այս ձեզ ի յընթերցումն և ինձ յիշման մ՚էլ,
Հանուրց զմէր նընջեցեալսն և զյիշողացդ էլ,
Մեծի հարսնարանին ծաղկազարդէ տէր,
Փառաց և յարութեան և պըսակաց մ՚էլ

* Այս երկու տողը № 83 ձեռագրում փոխված է այսպես.
«Գրեցի զոտանաւորքս որ գինչ պատշաճն էր
Զի բանքս հոգով լցեալ ընտրեալ աբանցն էր»։
** № 83—«Երեք էր»։
*** № 83 ձեռագրում կա նաև հետևյալ երկտողը.
«Նընջեաց իւր զաւակօք և պարոնն Բիւրթէլ.
Զպարոն Սըմբատ՝ որդովքն պահպանեսցէ տէր»։
**** Երկու ձեռագիր ունեն «կէր» փխ. «էր»։ № 83 ձեռագրում տողն այսպես է.
«Զհերձուած Ֆըռանգաց, որ այժմ ժամանակիս էր»։
***** № 83-ում «ութսուն»։

37

ԱՒԵՏԱՐԱՆ

«Թորոս Աղբար», Ա. էջ 65—67, Ամասիոյ ս. Աստուածածին եկեղեցի

Կազմող՝ Սէթ
վայր՝ Խայիք

ա

Յիշեցէք զՍէթ սուտանուն աբեղայս, որ զսուրբ աւետարանս կազմեցի, Յիշեցէք զՀնազանդ անուն հաւատարիմ կին, որ գնեց և կապել երետ...։ ՊԾԲ. (1403) քակեցին զեկեղեցիքն յեգեկան և ի Խայիքն: Հազար վայ մեղաւորիս։

բ

... Որոց փափագող եղեալ յուսոյ գալստեան աստուածորդւոյն կին ոմն աստուածասէր՝ անուն նորա Հնազանդ, և որդւոյն իւրոյ Տիրտուր, և գնեաց զսուրբ աւետարանս զայս յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, հաւրն իւրոյ Սէթին, և մաւր իւրոյ Գուհար-խաթունին, և քուրոջն իւր Մարիամթագին, և հաւրեղբաւր իւրոյ Ջաակարին, և Խազարին: Ի թվին Հայոց ՊԾԳ. (1404) գնեաց և ետ յիշատակ ի Խայիքն:

գ

Ես՝ Հնազանդս գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց և տուի Գրիգոր երիցու՝ որդւոյ Խաղաղուքնայ, որ այլ մարդ իշխանութիւն չունենայ ի վերայ սուրբ աւետարանիս, ոչ ազգ, ոչ որդի և ոչ գեղխտիքս, թէ կենայ, թէ գնայ՝ և Գրիգոր երէց ինքն պահէ. ոչ ծախէ, ոչ պտհէ, այլ կարդայ հանապազ։ Եւ ով առնու և կարդայ՝ խնամով պահէ, և զՍէթ աբեղան յիշէ՝ զկազմողս։

38

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 3985

Գերութիւնից ազատող՝ Գրիգոր
վայր՝ Ղրիմ

291 ա Ես Գրիգոր երէցս շնորհեցի վասն սուրբ աւետարանիս ոսկի մատանի մի՝ փերուժա ակամբ, և դաստըռճա մի՝ Նիկօղոսին, վասն զի ինքն ստացեալ էր զսա յայլազգեաց ի Խ. (40) դր[ամ]. և կառուցի ի վերայ սուրբ աւետարանիս արծաթի խաչ, և նոր զարդարեցի և եդի ի վանքն սուրբ Լուսաւորչին ի բարեխօսութիւն և ի յիշատակ մեզ և ամենայն երախտաւորաց մերոց և ամենայն զարմից։ Եւ մի ոք հանցէ զսա ի վանիցս, իբրև տիրելով ի խաղաղութեան ժամանակի, զի մի պատժեսցի յաստուծոյ։

Տէր աստուած... ողորմեա վերջին ստացողաց սորա Գրիգորի

անարժանի, և Թորոսանց քահանայիցն, և Նիկօղոսին, և ծնաւղացն իւրոց՝ պարոն Յովանէսին, և պարկեշտ ամուսնոյն իւրոյ փոխեցելոցն ի Քրիստոս, և Հազարշին, և ծնողացն իւրոց, և ամենայն զարմից իւրոց, որք ստացան զսա ի հալալ վաստակոց իւրեանց, զի անկեալ էր ի ձեռս այլազգեաց, զի գերել էին զվաներն ի ժամանակս Չեկիբին: .

Եւ դուք մանկունք սուրբ եկեղեցւոյ, յորժամ ընթեռնոյք զսուրբ աւետարանս և զյիշատակարանս՝ թողութիւն խնդրեցէք յաստուծոյ ստացողաց սոցա, զի և ձեզ պարգևեսցէ մարդասէրն աստուած թողութիւն մեղաց, վասն զի առատ է ի տուրս պարգևաց, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ի թվ. Հայոց ՊԾԱ. (1402), ի մայիս ԺԹ. (19) եղև գալ Չեկիբին ի Ղրիմն:

Գիրս գրեցաւ ի թվ. ՊԾԲ. (1403), յունիս Լ. (30),

39

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4923

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամար

261 ա Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս յաստուածաբնակ կղզիս Աղթամար,
ընդ հովանեաւ սուրբ Խաչիս, ի հայրապետութեան տէր Դաւթի, ի
թուականիս Հայոց ՊԾԲ. (1403), ձեռամբ Դանիէլի առաջին Բ. գլուխն
գրեցաւ և Բ. գլուխս ձեռամբ հաւրն իմում Կարապետ քահանայի. և
իմ անընդունակ գոլով յաբուեստ գրչութեան և բազում մեղաց ցնո-
րիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մար-
261 բ դասէր հոգին ‖ բազում աշխատանաւք գրեցաք զսա անարժան ձեռաւք
մերովք ի ստոյգ և յընտիր աւրինակէ, կենաւք տառապանաւք և բա-
զում պանդխտութեամբ։

Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենա-
լի սեղանոյս, որք պատահիք սմա տեսանելով, կամ կարդալով,
կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող
սուրբ աւետարանիս զՄխիթար քահանա, և զծնաւղքն՝ զՆանապետն և
զՋօշտիկինն, և զեղբայրն զԱմենաւաէն, զհաւրեղբարքն զՂազար և
զԿարապետ, և զքոյրքն իւր զՇայմէլիք և զԱյմէլիք, և զհաւրքոյրն
Սիրայ, և զՂիմաթ, և զորդին զՅովանէս, և զվայելող սուրբ աւետարա-
նիս զԿարապետ սարկաւագ, և զազգն ամենայն առհասարակ՝ զկեն-
դանիս և զհանգուցեալս, և լի բերանով և ուղիղ սրտիւ աստուած-
ողորմի ասացէք և աստուած զձեզ յիշէ յարքայութեան իւրում։ Ընդ
նոսին և զիս՝ զԴանիէլ գրիչս, և զհայրն իմ զԿարապետ քահանայ, և
զմայրն իմ զԴուամէլիք, և զեղբայրն իմ զԹումա սարկաւագ, որ աշ-
262 ա խատեցաւ ի կոկել թղթիս, և զքոյրքն իմ, և զամենայն արեան ‖
մերձաւորսն՝ զկենդանիս և զհանգուցեալսն։ Դարձեալ, զվարդապետն

իմ և զհոգևոր հայրն և ըստ մարմնոյ հաւրեղբայրն զՋաքարայ փիլիսոփայն, որ բազում աշխատեցաւ ի ծաղկել զսուրբ աւետարանս, և զամենայն ազգակիցս մեր, և զայնոսիկ, որ աշխատել են ի վերայ մեզ խրատ տալով և այլ ամենայն բանիւ։ Բայց խոշորութեան և սղալանաց գրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս է, և տեառն փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

40

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Հ. Ոսկեան, Մայր ցուցակ Վիեննայի Մխիթ. մատ. Բ հտ. (անտիպ), էջ 247, ՀԱ, 1939, սյուն. 161

Գրիչ՝ Աստուածատրիկ
վայր՝ Անձնապատի վանք

Ծծագրեցաւ սուրբ մատեանս ի թվականութեանս հայոց ՊԾԲ. (1403), ի ցանկալի յանապատիս [Անձնապատիս],* որ ի յըռամկաց բառից | | | ընդ հովանեաւ աստուածընկալ սուրբ Նշանիս, ի դուռն սուրբ մաւրն լուսոյ և այլ սուրբ եկեղեցեաց, ի հայրապետութեան Կիրակոսի....

Յորժամ կարդայք զՈսկեփորիկս,
Դուք յիշեցէք զԱստուածատրիկս,
Որ գրեցի զսուրբ գանձիկս
Հրամանաւ իմ վարդապետիս,
Ի տղայութեան ժամտնակիս,
Ի դուռն սուրբ Աստուածածնիս,
Ի վանքս մեծ Անձնապատիս,
Ընդ հովանեաւ սուրբ Նշանիս....

41

ԱՒԵՏԱՐԱՆ

Ալիշան, Հայկարան

Գրիչ
վայր՝ Մգունք գիւղ

Ի թվ. ՊԾԲ. (1403), ի պարոնութեան Ամիր-Աբդալին, և ի հայրապետութեան Կոստանդնուպօլսոյ արհիեպիսկոպոսի տէր Զաքարիայի, ի գիւղն Մգունք, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցն, առ ոտս սուրբ Ստեփանոսի։

* Ջնջված է։

42

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Գ. Հովսեփյան, «Գաւիթ փիլիսոփայ», «Արարատ», 1916 Թ. էջ 906

Հեղինակ՝ Յակոբ Ղրիմեցի

Զմեղուցեալ գրիչս զՅակոբ մեղուցեալ միայնակեացս Ղրիմեցի՝ զսիրողս միայն բանի և յիրէնմին հեռի, աղաչեմ յիշել ի տէր աստուած՝ ողորմի ասելով մեղուցեալ հոգոյս, և տէր զձեզ յիշեսցէ յողորմութիւնն իւր, ամէն։ Ի թվիս ՊԾԳ. (1404) գրեցի զայս սակաւ հարցմունքս՝ յետոյ քան զգրել գրոցս։

43

ՏԱՂ ՏԷՐ ԱՌԱՔԵԼՈՅ ՈՐՈՏՆԵՑՈՅ ՎԱՍՆ ԱՒԵՏԵԱՑ

Երևան 5951*

Հեղինակ՝ Առաքել

56 բ ... ԸԶձեզ աղաչեմ սիրով
Ես՝ տէր Առաքելս յուսով,
Յիշէք զիս յաղաւթս հոգով,
Ո՜վ սուրբ ընթերցողք յոլով։
Ի թվական Հայոց ազգիս
Ութ հարիւր հիսուն 'ւ երիս (1404)
Բանս այս կարգեցաւ ի գրի
Ի յաւուր Թամուր զանիս։

44

ՏՕՆԱԿԱՆ

Փիրզ. նոտ. 21—22

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Տշող գիւղ

... Տեսեալ զայս ամենայն վայելչութիւն հրաշից երից եղբարքն Յովհաննէս կրօնաւորն և Եզեկիէլ և Սիոն քա-

* Ձեռագիրը Գանձարան է, հիշատակագրությունը վերաբերում է միայն Առաքելի ոտանավորին։

հանայ, և բորբոքեալ ի սէրն աստուծոյ ցանկացան այսմ աստուածային գրոցս, որ կոչի Տօնական....

Եւ արդ, ես ամենամեղ և անարժան ծառայ ծառայիցն աստուծոյ Ստեփաննոս անարհեստ գրիչ, որպէս ծառայ հրաման առեալ ի տեառնէ, զի յայսմ ամս, յորում զսա գրէաք՝ հայրն մեր փոխեցաւ առ Քրիստոս աստուած, քանզի եղև մահտարաժամ սաստիկ ի վերայ երկրի, և ոչ աւարտեցաւ սուրբ գիրքս։ Եւ ես յանձն առի տկար անձամբ... բազում և մեծ աշխատանօք հասուցաք զսա յաւարտումն ի նոյն գեաւղս որ Տշող կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Ստեփաննոսի Նախավկայիս, և սուրբ Սիոնիս, և սուրբ Կիրակոսիս, ի թուականիս Հայոց ՊԾԳ. (1404), ի հայրապետութեան տէր Դաւթի և ի բռնակալութեան աշխարհիս Թամուր ղանի...։ Նաև զանարժան գրիչս զՍտեփաննոս, և զծնողքն մեր զԳրիգոր քահանայ, որ տարաժամ փոխեցաւ առ Քրիստոս, և սուգ անմխիթար եթող ի վերայ մեր... և զեղբարքս մեր զՔոչբէկ և զԱռաքել՝ պատուական սարկաւագունքս, որ աշխատեցան ի կոկել թղթիս, տացէ սոցա տէր վարձըս ըստ վաստակոց, և զհօրեղբայրն մեր զՄարտիրոս կրօնաւորն, որ ... մարտիրոսացաւ*

45

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 5334

Գրիչ՝ Ստեփանոս

ա

117 ր ....Ողորմեսցի սորին ստացողի Թումաշահ դարբնի, և իւր ծնողի՝ Աստուածատրոյ և Շամշա-խաթունին, և կենակցին Թագուհուն, և զաւակաց նոցին Առաքելին և Մկրր[ա]չին, և Առաքել վանից հաւրն, [և զհայր նորա զխաչատուրն]**, և միւս Առաքելին, որ յայս ամս առ աստուած փոխեցաւ, և Սիմէոնին, և կենակցին Ազըզին, և տղային իւրեանց Աստուածատրուն, և ամենայն ազգայնոցն։ Ընդ նոսին և զՍտեփանոս մեղաւոր գրչի,*** և իմոցն ամենայնի՝ կարդացողաց և լսողաց։

բ

186 ա ... Ողորմի Քրիստոս աստուած ստացողի գրոցս Թումա՛շահ դարբնին, և ծնողացն՝ Աստուածատրուն և Շամշա-խաթունին, և կողակցին Թագուհուն, և զաւակացն Առաքելին և Մկր[տ]չին, և փոխեցելոցն

---

* Ամենայն հավանականությամբ այս Մարտիրոս կրոնավորի մասին է Երևանի № 5597 ձեռագրի 258ր էջի հիշատակագրությունը. «Յայսմ [տե՞ղ]ոյս Մարտիրոս կր[աւնաւորն] բազում չարչարանօք մարտիրոս եղև ի ՊԵ. (1356) թվականին»։

** Ուղղագիծ փակագծերի մեջ բերված է 179ա էջի հիշատակագրության տվյալը։

*** Հավանաբար նախորդ հիշատակարանի գրիչ Ստեփաննոսն է։ Այս ընդունելի ենթադրությամբ էլ անթվական այս հիշատակարանը տեղադրում ենք նրան առընթեր՝ 1407-ի թվաշարքում։

առ Քրիստոս, և Դեղկանց Ստեփաննոսին, և Շնոհուրին, և մեղաւոր Ստեփաննոս գրչի, և հոգևոր հարցն իմոց Յոհանէս ճգնաւորին, [և Կարապետ կրաւնաւորին],* և Յակոբ կրաւնաւորին, և կարդացողաց և լսողաց, ամէն։

Գ

396 բ ...Ընդ նոսին և ինձ՝ մեղաւոր Ստեփաննոս գրչի, և իմ ծնողացն՝ Գրիգոր քահանայի և Խութլու-Մելիքի, և հայրազատ եղբարցն Յոհանէս քահանայի և Առաքել քահանայի և Թումա քահանայի, որ տղա հասակաւ յաստուած փոխեցան, և ամենայն ազգայնոցն, կարդացողաց և լսողաց, ամէն։**

46

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 4802

Գրիչ՝ Ստեփաննոս
ա
վայր՝ Տշող գիւղ

572 բ ...Ինքն Քրիստոս աստուած, որ տէրն է փառաց և տուող ողորմութեան, շնորհեսցէ զխաղաղութիւն և զողորմութիւն իւր ամենայն աշխարհի, տացէ աշխարհակալաց սէրտ քաղցրութեան ի վերա ամենայն քրիստոնէից, եկեղեցեաց զանշարժ հաստատութիւն, այլև հայրապետաց ընդ ամենայն տիեզերս ուղղափառ վերադիտողութիւն, վարդապետաց՝ արիութիւն, կրաւնաւորաց՝ վորս առաքինութեան, քահանայից՝ սրբութիւն, թագաւորաց հաւատացելոց՝ յաղթութիւն ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի, իշխանաց՝ հանդարտութիւն, տանց՝ շինութիւն, տղայոց՝ պահպանութիւն, արանց և կանանց՝ աւրինապահութիւն, ճանապարհորդելոց, որք ի ծովու և ի ցամաքի՝ դարձ խաղաղութեամբ, բուսոց և տնկոց և սերմանց՝ անվնաս աճումն շայեկանութեամբ, աւգոց՝ քաղցրութիւն, անձրևաց՝ առատութիւն, անասնոց՝ աճումն, մեղաւորաց՝ դարձ յապաշխարութիւն։

Այլ և բարէխաւսութեամբ ամենայն սրբոց, մարգարէից, մարտիրոսաց և բարէխաւսութեամբ սուրբ Աստուածածնին՝ մեղաց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ ստացողաց գրոցս՝ Ղազար քահանային և Ստեփաննոս կրաւնաւորին, որ ետուն զսա գրել ի հալալ վաստակոց իւ-

* Ուղղագիծ փակագծերի մեջ բերված հատվածը քաղել ենք 162բ էջի հիշատակագրություններից։

** Համանման և ավելի համառոտ հիշատակագրություններ կան համարյա բոլոր ճառերի վերջում։ Գլխավոր հիշատակարանից պահպանվել է միայն սկզբի մեկ էջը, ուր մանրամասնորեն խոսվում է ձեռագրի բովանդակության մասին («Որ է վորք և պատմութիւն աստուածազանից և հոգիընկալ արանց...» և այլն, և այլն), և ապա հայտնվում է, որ ձեռագիրն ընդօրինակվել է «ի խնդրոյ աստուածասէր և հաւատարիմ տանուտերոջն Թումաշահին»։

րեանց, յիշատակ բարի հոգոց իւրեանց եւ ծնաւղաց նոցին՝ հաւրն Յովաննիսին, եւ մաւրն Սարաւթային, եւ եղբաւրն իւրոյ Խնգուբէկին՝ փոխեցելոյն ի Քրիստոս, եւ դեռաբոյս զաւակացն Յովաննիսի եւ Կարապետի, եւ կենակցին իւրոյ Իմշա-Խաթունին, եւ Թումայ սարկաւագին, եւ եղբաւրն իւրոյ Վէգէնին: Ընդ նոսին եւ Ստեփաննոս քահանային, եւ ծնաւղաց նորին Թումային եւ Շնունորին, եւ Մկրտիչ կրաւնաւորին, եւ կենակցին իւրոյ Ազիզ-Մելէքին, եւ ամենայն ազգականացն՝ կենդանեացն եւ հանգուցելոցն, ամէն։ Եւ ինձ՝ մեղաւոր գրչի Ստեփաննոս սարկաւագի, եւ իմ ծնողացն Գրիգոր քահանայի, եւ կարդացողաց եւ լսողաց, եւ Քրիստոսի փառք յաւ[իտեան]։

Բ

Ստացողք սուրբ գրոյս զպատուական քահանայք զՂազար եւ զՍտեփաննոս կրօնաւորն եւ զծնողսն նոցա...։ Ընդ նոսին եւ զիս՝ զմեղաւոր Ստեփաննոս գրիչս, եւ զծնողսն մեր զԳրիգոր քահանայ, որ տղայ հասակաւ առ աստուած փոխեցաւ եւ մեզ սուգ եւ կսկիծ եթող,* քանզի մահ սաստիկ էր ի վերայ երկրի, որ կոտորէր զամենայն առհասարակ եւ զաղխս ծնողացն գալարեցուցանէր, եւ զաւակացն՝ ի վերայ հարցն եւ մարցն խարշէր առաւել, այլ Աստուածածին մխիթար եւ բարեխօս լիցի ամենայն սգաւորաց եւ ննջեցելոց ...։

Եւ ինձ՝ մեղապարտ Ստեփաննոս գրչի, եւ իմ ծնողացն Գրիգոր քահանային, որ առ աստուած փոխեցաւ, եւ Խաթուն-Մելէքի՝ մօրն իմոյ, եւ եղբօրն իմոյ Առաքելի, որ աշխատեցաւ ի կոկել թղթիս, եւ երկուց վկայիցն, որք մարտիրոսացան ... Մելքիսեդի եւ Կարապետի** ... եւ քեզ փառք յաւիտեան։

47

ԱԽԵՏԱՐԱՆ

Երեւան 5727

Գրիչ՝ Ստեփաննոս.
վայր՝ Հիզան.

ա

298բ ...Ուստի եւ տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, բարի արմատոց շառաւիղն, ողջախոհ եւ կուսակրաւն քահանայն Մովսէս, եւ հայր վանիցն, որ կոչի Խենձուրուտի վանք, զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախաւս սուրբ աւետարանիս, եւ ետ գրել զսա յիշատակ... հոգւոյ իւրոյ եւ ծնողացն իւրոց...։

---

* Ստեփաննոս գրչի հայր Գրիգոր քահանան մեռել է 1404 թվականի մահտարաժամի ժամանակ (տես նախորդ հիշատակարանը)․ ուստի այս ձեռագիրը գրված պետք է լինի նույն 1404 թ. կամ հաջորդ մի քանի տարիների ընթացքում։

Այս մասին ձեռագրի լուսանցքներում և 345 դատարկ թերթի վրա նշումներ է արել Ղ. Փիրղալեմյանը 1883 թվականին։ Այդ ժամանակ ձեռագիրը գտնվել է Վանում։

** Փիրղալեմյանի ծանոթագրության համաձայն սրանց նահատակությունը եղել է ՊԾԲ. (1403) ամի, ի Ժ.(10) յուլիսի։

297ա … Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Ստեփաննոս սուտա-
նուն քահանայի՝ անիմաստ և տխմար գրչի։ Եւ իմ՝ անընդունակ գո-
լով յարուեստ գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ,
297բ այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հո‖գին, բա-
զում աշխատասիրեալ իմ ի սմա գրեցի անարժան ձեռաւք իմովք՝
յընտիր և ի ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պան-
դըխտութեամբ, ի մեծ Թուրս, ի յեղանակտն շրջագայութեան արե-
գական ստորիջիւք երկնաչու ճանապարհաւ յերկնից յերկիր հայելով,
ըստ արքրչութեանցն չափեալ՝ յելանելոյն Ադամայ ի դրախտէն ՋՌ.
և ՋԾ. և Է. (6607) ամ, ըստ եւթանասնիցն, որում մեք վարիմք։ Եւ
է ի մարդեղութենէ բանին աստուծոյ; անժամանակ էին և փրկչին
Յիսուսի Քրիստոսի | | | ՌՅԼԵ (1335°), իսկ ըստ Թուի խոսրովային
Յաբեթեանս տումարի՝ ՊԾԳ.(1404), ի կաթողիկոսութեանն հայկազանց
սեռի՝ տեառն Կարապետի Կիլիկեցոյ, և ի մերոյ հայրապետութեանս
տեառն Դաւթի Ախթամարեցոյ, զոր տէր աստուած պահեսցէ անսասա-
նելի զաթոռ հայրապետական և զթագաւորական, զի յիշել զանուանս
նոցա սասանել սաքրին և ոչ ևս երեին թշնամիք ճշմարտութեանն։
Եւ գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքիս Հիզան, ընդ հովա[նեաւ]
| | | և սուրբ զաւրա[վոր]ացս Սարգսի և Գէորգեայ, ի վայելու.[մն]
298ա հաւատարիմ և պա[տու]էլի քահանային Մովսէսի | | | եցեալ։

Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի
սեղանոյս յիշեսջիք ի Քրիստոս զՄովսէս քահանայ և | | | իւր զՍտե-
փաննոս | | |

… Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ աստուա-
ծախաւս տառիս, յիշեսջիք ի սուրբ յաղօթս ձեր զիս՝ զանարժան գրի-
չըս՝ զՍտեփաննոս, և զհայրն իմ զՄելքեսէթ, որ յայսմ ամի փոխեցաւ
առ Քրիստոս և սուգ անմխիթար տուաւ ինձ, և զմայրն իմ զՏիրանց,
և զամենայն արեան մերձաւորսն մեր, աղաչեմ կողկողագին պաղա-
տանօք յիշման արժանի առնել․․․։

Բ

Ծաղկող՝ Յովանէս

2ա Զանպիտան ծաղկող և զսուտանուն զՅովանէս յիշեցէք ի Քրիստոս
| | | սրտիք և աստուած-ողորմի ասացէք, զի յոյժ տրտում եմ վ[ասն]
մեղաց իմոց և դառն ժամանակի և ձմերանի [կատարե]ցաւ սայ և
անկիրթ էի մագաղաթի | | | ը]նդ սմայ, որ իբրև զըպարկ կու | | |
զմազկտուցն խանգարէ, անմեղադիր [լերուք | | | աղաչեմ և յիշեցէք
ի սուրբ [աղաւթս ձեր] զիս՝ զանարժանս և զծնողս [իմ]։

48

ՄԱՇՏՈՑ

Երևան 4787, «Թորոս Աղբար», Բ, էջ 276—277

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամար

ա

... Աւարտեցաւ սուրբ գիրքս այս մաշտոց յընտիր աւրինակէ, ի կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս, ի հայրապետութեան տեառն Դաւթի, և ի թուականիս Հայոց ՊԾԳ. (140։), ի դառն ժամանակիս։ Արդ, ցանկացող եղեալ սմա պատուական քահանայն Կիրակոս, և ետ զսա յաստուածալաւ գիւղն Գանձակ, ի դուռն սուրբ եկեղեցեաց՝ տիրամաւր Աստուածածնի, և սուրբ Ստեփաննոսի նախավկային, և սուրբ Սարգսի զօրավարին, յիշատակ հոգւոյ իւրոյ, և ... Էլխաթունին, ... և Ստեփաննոս կրօնաւորին, ... և դստերցն Շնոհվորի, Խոնդ-Խաթունի և Խաթուն-Մէլիքի, և պապերցն Թադէոսի և Յովհաննէսի... և Թաթուլի, և Դաւիթ քահանայի...։ Յիշեցէք գրիչս զԴանիէլ սարկաւագն և զծնողսն իմ զԿարապետ քահանայն և զԴունմէլիք, և զեղբայրն իմ զԹումայ սարկաւագն ...և զվարդապետն իմ Զաքարայ փիլիսոփայն...։ Դարձեալ, յիշեցէք զտանուտէրքն զԳրիգոր, և զՍարգիսն, և զԹումաշահն, և զոէս Տիրացուն, և զեղբայր նորին զտէր Աւագն...։*

Բ

118ա Քրիստոս աստուած, քո սուրբ խոնարհութեամբդ ողորմեա ստացողի սորա Կիրակոս քահանայի, և եղբաւրն՝ Ստեփաննոս կրաւնաւորի, և ծնողացն՝ Յակոբին և Էլխաթունին, և ազգականացն՝ կենդանեաց և հանգուցելոցն, և ինձ՝ Դանիէլ անարժան դրչիս, և իմ ծնողացն, և քեզ փառք։

Գ

Ես Կիրակոս քահանայս ստացայ զսուրբ գիրքս ի հալալ արդեանց իմոց և ետու զսա նուէր ի դուռն սուրբ եկեղեցւոյս, և մի ոք իշխեսցէ զսա հեռացուցանել կամ ծախելով, կամ գրաւելով, կամ իւր սեպհականելով. և ով որ յանդգնի ...մասն զՅուդային առցէ, և զխաչահանուացն, և զհերձուածողացն զԱրիոսին և զՆեստորին, և նմա թողութիւն մի լիցի կամ փրկութիւն, ոչ ի յայս կեանքս և ոչ ի հանդերձեալն, ամէն, եղիցի։

---

* Ղ. Փիրղալեմյանը, 1883 թվականին ծանոթանալով ձեռագրի հետ, հիշատակարանները գտել է հույժ քայքայված վիճակում, նա գրել է. «Այս մաշտոցս ՊԾԳ. (1404) թվին գրեալ է Դանիէլ սարկաւագն յԱղթամար կղզին, յիշատակարան մաշուելուն սակս գրեցի»։ Այժմ ձեռագրում չի գտնվում այդ մաշված հիշատակությունը, ուստի մեջ ենք բերում Գ. Սրուանձտեանի «Թորոս Աղբարից»։

49

ԱՒԵՏԱՐԱՆ

Վրացական ՍՍՌ, հենտրոնական Պատմական Արխիվ, ֆոնդ 233, № 584

հետ. ստացող՝ Ղազարա

[*Ցիշեցէք*] *զվերջին ստացող սուրբ աւետարանիս* զՂազարա *քահանայս, որ գնեաց զսա ի հալալ ընչից իւրոց՝ ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնողաց իւրոց՝ հայրն* Առաքելին, *և մայրն իմ* Ուլալին, *և ամենայն զարմից իմոց՝ կենդանեաց և հանգուցելոց...։*

50

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 1521

Գրիչ՝ Գրիգոր

*ՊԾԳ. (1404) Թուին։**

62ա *Ողորմի ստացողաց գրոցս տէր* Յոհանէս *եպիսկոպոսին,* Ստեփանոսին, *և* Թումային, *և քուերն* Շնոհւորին, *հաւրեղբաւրն՝* Զաքարին, *և քեռոյն* Գրիգորին, Աւետիս *կոկաւղին, և* Գրիգոր *գրծողին։***

* *Թվականի մասին հիշատակագրությունը գրված է այս (№ 1521) ձեռագրի սկզբի մասը հանդիսացող № 1520 ձեռագրի 293ա էջի ներքին լուսանցքում։*

** *Նմանօրինակ հիշատակագրություններ կան նաև ձեռագրի այլ էջերի վրա։*

ՊԾԴ 1405

51

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 4060

Գրիչ՝ Մանուէլ եպիսկոպոս
Վայր՝ Երևան

ա

243 ա ...Արդ, ես անարժանս և անպիտանս ի յոքունց և ի նման-
եաց իմոց Յակովբ կոչեցեալ, որդի Վիշապին, ի գեղաքաղաքէս էրևա-
նոյ... զմտաւ ածեալ իմ յիշեցի զառաքելական հրամանս, որ ասէ՝
Երանի, որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանի յԵրուսաղէմ, և սակս
այս պատճառի աւրըստաւրէ ըղձայի մնալ հասանիլ բաղձանաց սըր-
տիս։ Որոյ ողորմածն և բարէգութն աստուած, [որ կաա]արիչն է
խնդրու[ածաց և] լսաւղն է աղաւթից՝ ընդունելի արար զաղաչանս
մեր և բերեալ հանդիպեցոյց պատահմամբ ի դրունս մեր զաստուա-
ծախաւս ըզքըիստոսայպըաք սուրբ աւետարանս ի ձեռն վաճառողաց
անգին մարգարտիս։ Որոյ ականատես եղեալ իմ աչօք՝ յարեա, կանգ-
նեցա, կացի և կառուցա, ցնծացա և զուարճացա, բերկրեցա և բոլո-
րեցա և յոյժ գոհացա զամենառատ պարգևողէն, որ արժանի արար
կատարել զխնդրուածս իմ և հաճոյացոյց զբաղձանս իմ։ Վասն
243 բ որոյ և ես կամաւք արարչին ըս ׃ տացայ զհոգէփրկանք սուրբ աւետա-
րանս ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամե-
նայն արեան մերձաւորաց, առ ի Քրիստոս ննջեցեալ հաւրն իմոյ
Ուշապին, և մաւր իմոյ Ջանանին, և կենակցին իմո Մամա-Խաթունին,
և ի Քրիստոս փոխեցեալ եղբարց իմոց Գրիգորին և Անտիպէկին, և
որդւոյ իմոյ Ղրաբշին։ Եւ վասն արևշատութեան ծնացեալ որգոց
իմոց Աղուպշին և Ջանանշին, [և որդոյ իւրոյ Դովլաթ-Խաչին, և
զաւակաց նորին Սմբատին և Զաքարին]*, նաև ծերացեալ զոքանչին
իմո էսուգանին, որ աւգնական եղև ի գին սուրբ աւետարանիս։

Եւ արդ, ես Յակոբս զաստուածախաւս սուրբ աւետարանս և մէկ ձեռն սգեստ և ոկին արծաթի, որ ստացա ի հալալ արդեանց իմոց՝ ընձայեցի էրևանո հրաշալի և յորդոր ժամատեղացս, որ յամենայն ամի յայտնութեանն և զատկին և հոգւոյ գալստեանն պատարագաւ և Քրիստոս-որդի ասելով յիշատակեն զմեզ, և զվերասացեալ ծնողքն մեր, և զայլ արեան մերձաւորս, որք կան շարագրեալ ի կարգ յիշատակարանիս։

* Փակագծի մէջ տալիս ենք լուսանցքի վրա, այլ ձեռագրով կատարված լրացումը

Եւ արդ, աղաչեմ զձեզ, ով սուրբ պատարագողք և ընթերցողք
քրիստոսապսակ սուրբ աւետարանիս, յիշեսջիք լիաբերան բոլորով
սրտիւ ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս՝ զմեղաւոր և զանարժան սգի
Յակոբս, և զհայրն իմ զՎիշապն, և զմայրն իմ զՋրնանն, և զկողա-
244 ա կիցն իմ զՄամա-խաթունն, և զորդանչն | | | Է՞ս]ուկանն, և զհարազատ
եղբարք | | | Գրիգորն և զԱտիպէկն, և զորդիքն իմ՝ զՂարշահն՝ զփոխե-
ցեալն առ Քրիստոս, և զնորաբողբոջ դեռաբոյս որդիքս իմ զԱղուպշէն
[և զԳովլաթ-Խաւշէն, Սմբատն և Զաքարէն] և զՋանանշէն. և զայլ
ամենայն ազգայինս իմ՝ զառաջինս, զմիջինս և զվերջինս։ Որով յի-
շողքդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերո՝ աւրհնելոյն յա-
ւիտեանս, ամէն։

Յաստուածարար սքանչելեացն տեառն բազում ինչ է, զոր տե-
սանեմք աչաւք և իմանալ անկարանամք մտաւք։ Եւ բազում ինչ է,
զոր իմանամք մտաւք և զչափն պատմել անգիտանամք բանիւ։ Զի
ահա տեսանեմք զարեգակն, զի գեղեցիկ է և հրաշալի, և զորպիսութիւն
գեղոյն իմանալ անկարանամք մտաւք. եւ դարձեալ զծով իմանամք
թէ մեծ է ու անբաւ, բայց զչափ երկայնութեան և զլայնութեան
և զխորութեան պատմել անգիտանամք բանիւ։ Այսպէս և զութ
ողորմութեանցն և խնամքն աստուծոյ անթիւ, անպատում և
անչափ են առ ամենայն ազգս մարդկան, և զամենեսեան ըստ
իւրաքանչիւր յաւժարութեան յորդորեալ յառաջացուցանէ ի բարիս,
և պարգևս ողորմութեան իւրոյ բաժանէ առատապէս յամենե-
սեան, և կամի զի ամենեքեան ի գիտութիւն ճշմարտութեան
եկեսցեն։ Ըստ որում եղբայր այս Յակոբ ի յէրևան գեղաքաղաքէ,
ի մանկական տիոց հետէ փութացեալ միշտ ի բարիս և յար-
244 բ դիւնս | | | վերստին ստացաւ ի հալալ ընչից իւրոց զաստուածա-
խաւս սուրբ աւետարանս և սկիհ արծաթի և ձեռն մի [սգես]տ ի
դառն և ի նուրբ ժամանակս, ի բռնակալութեան բազում աշխար-
հաց և տանս Արևելեան՝ Հայոց և Պարսկաց, աստուածասաստ Թէմուր-
Լանկին և որդոյ նորին Միրզայ-Միրանշին, որ յարևելից կուսէ ի
Սմբրղան քաղքէ բազում և անթիւ հեծելօք վասն մեղաց մեր պա-
տուհաս սպառնացաւ յաստուծոյ, և ազգի ազգի մոգութեամբ խա-
ւար գործեաց բազում աշխարհաց և տանս Հայոց, զոր ոչ կարեմք
զամենայն արկանել ընդ գրով, այլ քաջահաւատ այրս այս Յակոբ,
յայս նեղ ի նուրբ ժամանակի ստացաւ զհոգէփրկանք ընձայքս և ըն-
ծաեաց ի դուռն սրբոյ Երկու-Երեսնիս, յիշատակ իւր և ամենայն
ազգայնոց իւր։ Եւ մեր տեսեալ զքաջ հաւատս սորա և զբարէգործու-
թիւնս ընդ ամենեսեան՝ առ քահանայս, և յեկեղեցիս, և յաղքատս, և
ի կարօտեալս, և առ ամենայն ոք։ Վասն որոյ և կա | | | ստիպեալ
յօժարեցուցին զմեզ գրել զինքն և զիւրսն ամենայն յիբու[ՑՈ՞] ստա-
ցուածիս, զի ամենեցուն տեսեալ զայս յորդորեսցին ի բարի[ն]։

Եւ արդ, աւրհնութիւն ամենակալին աստուծոյ եկեսցէ, հան-
կիցէ ի վերա նորա և ի ծնընդոց նորա, և զցաւղն ողորմութեանց
ցաւղեսցէ յոսկերս ննջեցելոց նորա, և գրեսցէ զանուանս նոցա ի

դպրութիւն կենաց, և ուրհնեսցէ այն ուրհնութեամբն, որ ոչ անցանէ աստ և ի հանդերձեալն, ամէն։

Զտէր Մանուիէլ՝ համբակ վերջին,
Ցաջորդ Բրչենոյ ու Այրարադին,
Որ ծըբեցի ծայրօք մատին
Զյիշատակաց գիծս վերջին,
Միշտ յիշեսջիք առ ի բարին
Զմեզ և զնախնիքն մեր բնաւին.
Եւ զձեզ յիշէ տէր ի բարին
Աստ և ի յօրն ապագային, ամէն։*

Բ

Նորոգող՝ Ներսէս Մոկացի
վայր՝ Երևան

242 ա ...Արդ և ես յետնեալ և զառածեալ Ներսէս անուն, որ եմ յերկրէն Մոզաց, ի բնիկ գեղջէն Սուրայ, ի տիս տղայութեան իմոյ ելեալ յերկրէ իմ[մ]է՝ հասի ի մայրայքաղաքն Երևան, և բնակեցա ի սուրբ եկեղեցին, որ է մականուն Երկու-Երեսին, և եղէ սպասաւոր և յաւելածու ի տանս աստուծոյ. ժամանակ ինչ ժամահար եղէ և տեսի զօրութիւն սուրբ աւետարանիս, որ բազմաց ականատես իսկ են եղեալ բժշկութիւն սորա, որ կոչի Վիշա[պ]կենց աւետարան։ Վաղուց ժամանակաց էր սա քայքայեալ և խաղտեալ էր. եւ ես՝ Նուաստ Ներսէս՝ ետու հալալ վաստակոց իմոյ վերըստին նորոգել և կազմել, յիշատակ հոգոյ իմոյ և ծնօղաց իմոց, և որ ընթեռնու յիշէ ի սուրբ յաղօթս իւր, և յինքն յիշեալ լինի ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ։
Սուտանուն Զաքարայ երէց կաղմօղ ծառայ ձեր [յիշեցէք]։**

52

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան 4968

Հեղինակ՝ Գրիգոր Տաթևացի

265 բ Ընդ որոց վերջինս բանասիրաց և տրուպ խնդրողաց բանին պիտակ անուն կոչեցեալ Գրիգոր, մեղսաներկ անձամբ և տխեղծ մա-

* Այս հիշատակարանի գրության ժամանակ Լանկ-Թամուրը դեռ կենդանի էր (մահացել է 1405 թ. փետրվարի 18-ին), ուստի գրված պետք է լինի մինչև 1405 թվականը (Թամուրի մահվան մասին տես հաջորդ հիշատակարանում)։

** Նորոգողի այս հիշատակարանը գրված է նախորդից տասնամյակներ հետո, հավանաբար ԺԶ․ դարի վերջերին։

տամբ վերստին հաւաքեցի զքաղուածոյս մեկնութեան սաղմոսացն Դաւթի, նեղ և ի ստորասուզեալ ժամանակիս, յորում բռնակալն Թամուր, Թոյլտըլութեամբ վերին խնամոցն, տիրեալ էր բազում աշխարհի և աւերեալ. և կործանեցաւ յայսմ ամի՝ ՊԾԴ. (1405) Թուի։*

Եւ պատճառ շարժողութեան վերստին քաղուածոյս. նախ՝ Մեծին Վարդանայ համառաւտ և խորին տեսութիւնն, որ անյայտ ճայր միշտ, հողացայ յայտնի և ընդարձակ ցուցանել, երկրորդ՝ զի առաջին քաղուածոյն կորի կարճ և պակաս Թուէր, և երրորդ՝ ի Թախանձանաց ոմանց հարկեցեալ, մանաւանդ որ տայ ամենայնի և յայտնէ ում և կամի։ Եւ է պիտանութիւն սորայ, նախ՝ ի մեկնիչն Վարդանայ դասիւ ընթերցմանց, պայծառ տեսութեանց, այլ և ի բանս խրատու և քարոզութեանց և լուծումն խնդրոյ հարցողաց, նայ և ի վարժումն իմաստից մտաւոր սաղմոսողաց....։

Արդ, եթէ գտցի ինչ ի սմայ արժանի տեսութեան ձեր՝ տեառն շնորհք և վարժասիրացն նախնի, և պակասն՝ տկարութեան մերում ներեսցի։Այլև վարդապետին իմոյ Յոհաննու Որոտնեցոյ յիշատակ բարի ի տէր արձանասցի։ Ընդ որում քաւութիւն բազմազան մեղաց մերոց և ծնաւղացն կրկին, արեան մերձաւորաց և աշակերտաց, յեղբայրասէր կամաց ձերոց մաղթեսցի։ Որ և դրել աղաչեմ զիմաստուն գաղափարաւղս սակաւս յիշատակի, որպէս և դուք գրեալ լինիք ի դիրն անջնջելի, և ձեզ՝ յիշողացդ ի բարի և մեզ՝ յուսողացս ի հողի տոհասաբակ տէրն ողորմեսցի, ամէն, եղիցի։

---

* Լանկ-Թամուրի արշավանքների, նվաճումների և վախճանի մասին արժեքավոր տվյալներ են պահպանվել Երուսաղեմի Մատենադարանի № 1801 ձեռագիր Ժողովածուի մեջ։ Ստորև ընդօրինակում ենք ձեռագրի այդ հատվածը՝ քաղելով Ս. Տեր-Մովսիսյանի ձեռագիր ցուցակից։ «Ի Թվին հայոց ՊԼԵ. (1386) Լանկ-Թամուր եկն ի Թավրէզ և ի Նախիջաւան, և անտի ի միում աւուր կալօ մինչև ի Կարբի և ի Բջնի, ի Գառնի և ի Սուրմարի, ի Կողբ։ Եւ անտի գնաց ի Վրացտուն և արար գաղայ զՏփխիս քաղաք։ Եւ կալեալ զԹագաւորն Բագրատ՝ տանկացոյց, և գնացեալ ձմերեաց ի Մուղան։ Եւ ի գալ տարոյն, յուր աւագ զատկին եկ ի Սիւնիս, և սփռեալ տարածեցաւ։ Եւ գնաց հետ Թուրքմանին՝ մինչև ի Համբայ ջուրն։ Եւ դարձեալ եկն ի վերայ Վանայ, և խսարեաց զնա զօուրս քսան և հինգ, և առեալ զնա յուր ԻԶ. (26)-ոջ, ի տօնի (*) սուրբ խաչին, և զամենայն ի բերդն ի վայր ելից ԷՌ. (7000) մարդ, և անց գնաց ի Սմրղանդ։ Եւ յետ Զ. (6) տարու դարձեալ եկն ի դուրս Թամուրն, և էջ ի Գադտաս, և անդ կոտորեաց բազում մարդիկ, և մարդու գլխով Ա. մինարէ շինեաց։ Եւ գնաց ի Միջագէտս Ասորւոց, և անդ կոտորեաց բազում մարդիկ։

Եւ էր որդի սուլթան Ահմատին ի բերդն Երնջակոյ։ Եւ եկեալ Վրացիկն տարան։ Եւ լսեց Թամուրն և բարկացեալ եկն ի դուրս մեծ բարկութեամբ և գնաց ի Վրացտունն, շատ օեր և վնաս արար սրով և գերութեամբ, քակեաց զմեծամեծ եկեղեցիս ի Տփխիս։ Եւ անտի էջ ի Շամա տուն, և գնաց մօտեցաւ Երուսաղէմայ, բայց անդ ոչ եմուտ, և դարձաւ բազում աւարաւ, և գնաց ի Թախտն։

Եկն ի Սեբաստեայ և բազում կենդանիս թաղեաց, աւելի քան ՛ԲՌ. (2000), և դարձաւ տեղի իւր։ Եւ ի միւսում տարին գնաց ի Հոռմանց տունն, և էառ զԿամախ և այլ բազում տեղիս։ Եւ ի միւս այլ տարին դարձաւ ի Հոռոմս և զԻլդրումն խանն կալաւ, որ ունէր անթիւ հեծեալս և անհամար զաւրս. ցրուեաց և գերեաց զամենեսեան։ Թուին ՊԾԲ. (1403) դարձաւ յարևելս յԱղուանից և շինեաց քաղաք մի Բաղաղայ անուն. և օուր տօնի հրեշտակապետիցն եկն ձիւն սաստիկ ի Նոր քաղաքն, և եսպան ի շինողացն ԴՌ. (4000) հոգի և ամենայն ի զինւորացն էին։ Եւ ապա չուեալ գնաց յերկիրն իւր ի Սամարղանդ, և անդ սատակեցաւ Թիւ Թամուրին որ եկաց ի | | | յաշխարհս ԺԸ. (18) ամիս»։

53

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Երևան 5597

259 բ Ես՝ Յովանէս կր[աւնաւոր], Թումաս, Մկրտիչ, Կիրակոս կր[աւնաւոր]քս վերստին թափեցաք զսուրբ նշանն Գետարգել, բերաք ի սուրբ Եղիշէի ուխտն՝ ի Վարդպատրկէ վանքն, առ երջանկաշնորհ կրաւնաւոր առաջնորդն սուրբ վանիցն, և ետուք յիշատակ սուրբ Գէորգայ և սուրբ Եղիշէին, ի կործանման պիղծ Թամուրին՝ ՊԾ[Դ]. (1405) թվին, և սպասաւորեցաք մեք սուրբ սքանչելագործ նշանին, մինչև ի մահ, ով ոք հանցէ կամ գողասցէ զսուրբ կենս[ունա՞կ] խաչն՝ մասն և պատիժ Կայենին և Յուդային առցէ, ամէն։

Յայսմ [տար]ոյս Մարտիրոս կր[աւնաւոր] բազում չարչարանօք մարտիրոս եղև, ի Պ[Ծ]Ե. թվն.։

54

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

«Թորոս Աղբար», Բ, 391։

Վայր՝ Անձղեաղատ

Գրեալ ի թվին Հայոց ՊԾԴ. (1405), յանապատիս Անձղեաղատ, ի հայրապետութեան տեառն Դաւթայ, և ի թագաւորութեան ազգին Մարաց Եզաինշերի։ Յայսմ ամի մեռաւ Թամուր Ղանն, որ Ի. մի (21) ամ ի բրև զբաժակ բարկութեան առեալ էր զնա աստուած ի ձեռն, և ում կամէր արբուցանէր, զի յարևելից մինչև ի մուտս արևու զամենեսին հասարակ գերեաց՝ զհաւատացեալսն և զանհաւատսն, զամենեսեան սրախողխող արար, և զԴըմիշ այնպէս արար, որպէս Ներսէս հայրապետն էր ասացեալ ի յՈղբն Ուռհայոյ։

Յայսմ ամի շուրժն Ժ. (10) գիւղ ի Հէշատայ երկիր յիբար խառնեաց։ Յայսմ ամի ջուրքն յէնց պակասեցան, որ բազում գետաղաց ջաղացք խափանեցան։

55

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան 753

Գրիչ՝ Ոքսատկէս
վայր՝ Ավագ վանք

197 ա ...Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսումն, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է յարմարած առաջին երաժըշտապետացն սուրբ ուխտին Արքակաղնոյն*. ձեռամբ անիմաստ գրչի և յոյժ մե-

* Այս տեղեկության համաձայն լավագույն և ամենատարածված Մանրուսմունքի խմբագրությունը ստեղծվել է Արքակաղնի վանքի (Կիլիկիա) երաժշտական դպրոցում, հավանաբար ԺԳ. դարի կեսերին։

զապարտ [Ռբստակիսի]*, ի Թվ. ՊԾԴ. (1405), ի մեծափառ անապատիս
197 բ որ կոչի Ավագ վանք, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածընին, և
սրբոյ Կարապետին, և սրբոց Առաքելոցն, և ի յառաջնորդութեան
սուրբ ուխտիս քաջ հռետորին և տիեզերալոյս վարդապետին մեծին
Գէորգեա, բազմերախտին իմոյ և ուսուցչին։
199 ա Աղաչեմ զամենեսեան, ոյք հանդիպիք սմա տեսանելով կամ ‖
ուսանելով, յիշեսջիք զվերոյգրեալս, նա և զիս եւս և զծընաւղսն իմ
աղաչեմ յիշել ի տէր, և անմեղադիր լինել մեզ, զի այդ չափ էր կար
մեր. և Թէ լինի պակաս կամ աւելի՝ զպակասն դուք լցէք և զաւելորդն՝
ի բաց հանէք, և Թողէք զմեզ առանց բամբասանաց։ Այլ և յիշեսջիք
199 բ զհոգևոր ծնաւղն մեր՝ զսրբասնեալ կրաւնաւորն, որ է ‖ սպասաւոր
բանի՝ զԳրիգոր աբեղայն, որ զաւրինակն շնորհեաց, և դուք յիշեալ
լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ՝ աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

56

ՄԱՇՏՈՑ

Սեբաստիա, ս. Նշան 83, ՀԱ, 1926 Թ., էջ 337

Կազմող՝ Յովհաննէս
վայր՝ Կոճկըռկայ գիւղ

499 ա ...Արդ, զվերջին կազմողս և զսակաւ գրչակս զՅովհաննէս սուտանուն քահանայն, զի յոյժ անպիտան եմ ի գործս բարիս, և Թափուր և ունայն ի յայսմ աշխարհիս, զի չեմ կացեալ ի պատուիրանս աստուածայինս, և չյիշեմ զտանջանս անսպառ գեհենիս, որ կամ տարակոյս և գեգերեալ ի յայսմ աշխարհիս, որ կարդայք և լուսաւորէք ի յայսմ բանիս՝ Թողութիւն խնդրեցէք ինձ մեղապարտիս, և որք յիշէք զմեզ ի յայսմ տեղիս՝ նա յիշեալ լիջիք ի Քրիստոսի միւսանգամ գալուստն ատենին, ամէն։

Կազմեցաւ Մաշթոցս ձեռամբ Յովհաննէս անարժան քահանայիս, ի գեղս Կոճկըռկայս, ընդ հովանեաւ սուրբ Թէոդորոսի, ի Թվ. ՊԾԴ. (1405), ի փառս Քրիստոսի աստուծոյ մերում։

57

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵԶԵԿԻԷԼԻ ԿԻՒՐՂԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՒՈՑ

Օքսֆորդ Ms. Arm. E. 35

Զի հրաման է արարչի՝
Ամենայն ոք ի հող հանգչի,

---

* Գրչի անունը քերված է, վերականգնում ենք համաձայն 198բ էջի ծածկագիր հիշատակագրության, որ բերում ենք ստորև.

«Զանիմաստ գրչակս Դ—Դ, ԽՃ—ԽՃ, Դ—Դ, Ռ—Ռ, Մ—Մ, Օ—Օ, ԱՕ—ԱՕ, Դ—Դ, Ռ—Ռ յիշեցէք, ով եղբայրք»։

Դումարագիր ծածկագրով գրված է գրչի անունը՝ «զՌբստակէս»։

Եկն էհաս օր վաղճանի
Մինաս մեծի քահանայի.
Վաղճան սորին եղև բարի,
Օրինական և ընդ կանոնի.
Որք հանդիպիք՝ տուք ողորմի,
Աստուած և զձեզ ողորմեսցի։*
Զորս և երկ հարիւրի**
Միակ յորելին և քառեակ, Թուի (1405),
Փետրվարի ամսոյ Է. (7)-ին.

58
ԾԱՂԿԱՓԱՂ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՐՈՑ ԾՆՆԴՈՑ, ԳՐԻԳՈՐԻ ԽԼԱԹԵՑԻՈՑ

Երուսաղէմ 1273

Ձեռագրի երկրորդ մասն ընդօրինակված է ՊԾԴ. (1405) Թվականին։ Ցիշատակարանում յիշվում է «Մեծազարմ իշխանաց իշխան պարոն Վասիլ՝ հանդերձ աստուածապարգև զաւակաւք իւրովք»։***

---

* Բնագրում՝ «ողորմեսցէ»։

** Բնագրում՝ «Դևևերկճի»։

*** Հիշատակարանից արված քաղվածքը վերցրել ենք Մ. Տեր-Մովսիսյանի ձեռագիր ցուցակից։

59

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԱՐՏԱՔԻՆ ԳՐՈՑ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

«Սիսական», էջ 239, 240 (տպված է նմանահանությունը)

Գրիչ՝ Թովմայ Մեծոփեցի
Վայր՝ Տաթև

ա

...Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ տառս այս իմաստապատում, որ կոչի Լուծմունք արտաքնոց, բացայայտեալ զսա մեծ վարդապետին Հայոց Գրիգորի*, *ի սուրբ ուխտս* Տաթևի *սուրբ առաքելոյս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Գրիգորիս, առ ոտս մեծ հռետորիս՝ արարողի այսմ գրոցս։ Ի թվիս Հայոց* ՊԾԵ. *(1406), ձեռամբ* Թովմայի *սուտանուն քահանայի, ի վայելումն մանկանց եկեղեցւոյ և յիշատակ հոգւոյ իմոյ, զի աշխատութեամբ և չարչարանօք գրեցի յառաջին աւրինակէն, զի ի Դ. (4) կողմանց նիւսխայ էր արարեալ։***

*Արդ, որ հանդիպիք սմա ուսմամբ կամ օրինակաւ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զ*Թովմայ *անիմաստ գրիչ, և զծնօղսն իմ՝* զՍտեփաննոս՝ *զհայրն իմ, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և զմայրն իմ* զՇամշա, *և զհոգևոր հայրն իմ և զուսուցիչ* զՄաթէոս *քահանայ, և զհօրեղբայրն իմ* զՄկրտիչ *քահանայ, և* զՄկրտիչ *միայնակեաց՝ քեռին իմ, և զեւթներորդ հարազատքն իմ։ Նաև զերախտաւոր հարքն մեր* զՍարգիս *րաբուն[ապետ], և զ[յ]աջորդն իւր՝* զՎարդան *վարդապետն՝ զհոգևոր հայրն մեր, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և մեք Թափառական գոլով յերկրէ* Քաջբերունեոյ *եկեալ բնակեցաք աստ՝ երկոտասան եղբարքս հանդերձ։ Նաև* զՄարգարէ *վարդապետ յիշեսջ[իք] ի Քրիստոս, որ աշխատեցաւ ի կոկել Թղթիս։*

---

* Գրիգոր Տաթևացու այս աշխատության (Մեկնութիւն Ստորոգութեանց, Պերի Արմենիասի, Պորփիւրի են) ինքնագիրը պահվում է, ըստ երևույթին, Վենետիկի Մխիթարյանների մոտ։ Ալիշանը «Սիսականում» (էջ 236) հրատարակել է Գրիգորի ինքնագիր հիշատակարանի նմանահանությունը, որտեղ գրված է.

«Արդ, ես Թմբրամածս Գրիգոր, վերջինս ի ծնունդն եկեղեցւոյ և տրուպս բանին սպասաւորաց՝ սիրով միայն զանունն ստացայ, ջանիւ ի գործն ոչ մխեցայ։ Ցերեսս անկեալ աղաչեմ զպատահաւղսդ այսմ գծից յիշել բարի յիշմամբ զմեզ առաջի Քրիստոսի, զի որպէս և որչափ յիշէքդ՝ բազմապատիկ և ձեզ շնորհեսցի, ամէն»։

** Այսինքն լրացումներ ու մեկնություններ էր ավելացրել լուսանցքների վրա։

Բ

Փառք ողորմութեան քում և գթութեան՝ տէր իմ Յիսուս, որ յայսմ շարժմանէ զերծուցէր զմեզ, զի շարժի տունս իբրև զտերև։

Գ

Ո՜ զարմանալի շարժմանս, զի շարժի սուրբ Առաքելոյս Տաթեու, և զանկակատունս և գաւազանս, որ է նոյեմբեր ԻԹ. (29).*

60

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԵՄԱՏԵՆԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑՒՈՅ

Երևան 1004

Գրիչ՝ Թովմա Մեծոբեցի

400 *...Արդ յերեսս անկեալ պաղատանաւք աղաչեմ զմանկունսդ եկեղեցւոյ, որք հանդիպիք արարչապատում սուրբ կտակիս, յիշեսջիք զմեղապարտս ի մանկանց եկեղեցւոյ՝ զպիտականուն վարդապետս* Թովմա*** *ի բուն բարի բնութիւնն աստուծոյ։ Եւ զուսուցիչն իմ՝ զհոգևոր հայրն իմ զ*Մատթէոս *կրօնաւորն, նաև զաստուածապարփակ և զերանաշնորհ բարունապետքն մեր՝ զմեծ* Սարգիս *և զ*Վարդան *յիշեսջիք ի Քրիստոս, աղաչեմ, որ զայս գիր աւանդեցին մեզ, և աստուած զձեզ յիշէ, ամէն, եղիցի, եղիցի։*

61

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 4072

Գրիչ՝ Գրիգոր Գօրեցի
վայր՝ Տաթև

448 բ *...Արդ, գրեցաւ սուրբ գանձարանս աստուածային, որ կոչի Հարցմունք* Գրիգորի*՝ քաջ ախոյանի և արի հռետորի ընդդէմ հերձուածողացն դասուց, ի սուրբ և ի գերահռչակ ուխտս* Եւստաթէի *առաքելոյս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Լուսաւորչիս, և այլ բազմաժողով սրբոց աստ գումարելոց, առ ոտս երջանիկ բարունապետիս* Գրիգորի *վերոյգրելոյս, և իշխանութեամբ տեղիս բարեպաշտ իշխանացն* Սմբատի *և* Բուրթելի*, ի թվականիս Հայոց ՊԾԵ.* (1406), *ի ժամանակս յետին և անբարի՝ ըստ հոգոյ և մարմնոյ, յորում միշտ սուրն և գերութիւն էր զաւրացել քրիստոնէից ասեմ և այլազ-*

---

* *Բ և Գ հիշատակագրությունները գրված են ձեռագրի ստորին լուսանցքների վրա, մանր տառերով։*

** *Հիշատակարանն անթվական է։ Տեղադրում ենք Թովմա Մեծոփեցու 1406 թվականի հիշատակարանին աղընթեր։*

գեաց։ Ձեռամբ բազմամեղ և յանյարմար գրչի Գրիգոր աբեղայի Վրացատնեցի, որ է գեղաքաղաք Գօրի, ի վայելումն իմոյ և յիշատակ ծնողաց իմոց։

Արդ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան՝ զհանդիպողսդ [ա]յսմ կտ[ակ]իս կարդալով կամ յօրինակելով, յիշեսջիք ի սուրբ և ի մաքրափայլ աղօթս ձեր միով տէր-ողորմայիւ զիս՝ Գրիգոր գրօղ և ||
440 ա ստացօղ սմին, և զծնօղսն իմ, որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ, զհաւրեղբայրն իմ զՄկրտիչ կրօնաւորն, և զհայրն իմ Նուսաբերն, և զեղբայրն Սարգիս, և զմայրն իմ Թամթա-խաթունն, որ դառն կսկծանաւք փոխեցաւ ի Քրիստոս, և զեղբայրն իմ զՄկրտիչն, որ չաղաթէն գերեաց ու դառն տրտմութիւն կսկիծ էթող, և զքուրն իմ Դեստա-խաթունն, և զամենայն արեանառու մերձաւորն իմ և զազգայիննսն։ Եւ աստուած, որ առատ է ի տուրս պարգեաց առ հասարակ ողորմեսցի յիշողացդ և յիշեցելոցս։ Եւ Սիմէոն վարդապետն և զՅուճան աշակերտն, որ զօրինակն մեզ շնորհեցին, Քրիստոս ի գիրն կենաց գրեսցէ և զերկնից արքայութիւնն պարգեւեսցէ նոցա և մեզ ի յիւր փառաւոր գալստեանն, ամէն, եղիցի։

62

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երևան 1264

Բ. մասի գրիչ՝ Մովսէս
վայր՝ Տաթև

ա

457 բ Փառք ...որ ետ կարողութիւն մատնադեղև փցուն գրչի՝ Մովսէս հիւանդ և ծոյլ աբեղաի հասանել ի վերջին գիծ լուսաւոր լուծմանցս այս։ Արդ, գծեցաւ սա ի թու. Հայոց Պ[Ծ]Ե. (1406)*, յիշխանութեան պարոն Սմբատին և որդոց նորին Բէշքէնին և Իւանէին, ի հրեշտակաբնակ ուխտս Սստաթէի սուրբ առաքելոյս, առ ոտս վարդապետին Մխիթարայ, որ մխիթարիչ է հոգւոց ծարաւելոց, որ ծարաւի են բանին շնորհաց, յընտիր և ի ստոյգ աւրինակէ լուսաւոր վարդապետին Գրիգորի, զոր ի մեծ վարդապետին Վարդանա և այլոց սրբոց հաւաքեալ և կոչի լուծմունք Սողոմոնի, և շնորհեաց մանկանց Սիոնի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, ի վայելումն փակակալի սուրբ ուխտիս Յովաննիսի կուսակրաւն աբեղաի, ձեռամբ մեռեալ ոգւոյ Մովսէսի, ի դառն և ի նեղ ժամանակիս։

Արդ, աղաչեմ զմանկունսդ նորոյ Սիոնի, որք պատահէք ուսմամբ կամ գաղափարելով, յիշեսջիք ի բոլոր սրտէ զՅովաննէս ստա-

* Թվականի տառանվոըը պատված է, կարծում ենք եղած պետք է լինի «Ծ» (50), որովհետև Մխիթար Տաթևացի վարդապետը հիշվում է 1406-ից («Սիսական», էջ 238), իսկ 1407 թ. մի հիշատակարանում նրա հետ մեկտեղ հիշվում է նաև սույն ձեռագրի ստացող «Յովհաննէս կուսակրօն աբեղան»։

ցաւղ գրոյս և զծնողսն իւր, ընդ նմին և զփծուն գրիչս, և զՄարտիրոս աբեղայ՝ եղբայրն իմ, և զամենայն արեանառու մերձաւորօն իմ՝ զհոգևորս և զմարմնաւորս, զկենդանիս և զհանգուցեալս, առհասարակ զամենեսեան։ Եւ նայ, որ առատն է ի տուրս, առհասարակ ողորմեսցի ձեզ յիշողացդ, և մեզ յիշեցելոցս, աղաւթիւք և խնդրուածովք ձերովք, ամէն, ամէն և եղիցի։

Ա. մասի գրիչ՝ Յունան

Բ

62 բ Զբազմամեղ գրիչս զՅունան, անբան ի մեջ բանաւորացս աղաչեմ յիշել ի տէր Յիսուս...։

Գ

274 բ ...Եւ զեղկելի գծողս արժանի առնէք յիշել ի տէր, աղաչեմ։ Եւ զՅակոբ քահանայն՝ զխորասնունդ եղբայրն մեր, հանդերձ ծնողօքն իւր և ամենայն ընդանեաւք, որ կէսօրեայ ժամանակաւ ի Քրիստոս՝ յաւան ամենեցուն փոխեցաւ, յիշեսջիք միշտ ի տէր...։

63

ՔԱՂՈՒԱԾՈՅ ԼՈՒԾՄՈՒՆՔ ՍԱՂՄՈՍԱՑ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 4411

Գրիչ՝ Սիմէոն
վայր՝ Տաթև

ա

382 ա Փառք... որ ետ կարողութիւն տկարիս ժամա[նել յաւարտ]։ Արդ, գրեցաւ սա ի թվիս Հայոց ՊԾԵ. (1406) ի ս[ուրբ աթոռս Եւս]տաթէի սուրբ առաքելոյս, ձեռամբ բազմամեղ և ս[ուտանուն] Սիմէոնի պիտակ բանասիրի, աշակերտի Նորին Գ[րիգորի վեհա]փառի՝ առնողի գրոյս։ Արդ, յերեսս անկեալ [աղաչեմ զամենե]սեան, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ կա[րգալով], յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր | | | և զծնօղն իմ, և զամենայն արեան մերձա[ւորսն իմ, և յիշէ°] աստուած զձեզ յիւր] միւսանգամ գալստեանն | | | *

Բ

218 բ Քրիստոս աստուած... ողորմեա ստացողի և գրողի սորին Սիմէոն բազմամեղ վարդապետի, և ծնողաց իմոց, և ամենայն համաւրէն հաւատացելոց, և որք զամէն ասեն, ամէն։

Գ

166 ա Ո՛վ սուրբ մանկունք առագաստի,
Նորաբողբոջք տնկեալք | | |
[Եւ] ուռճացեալք միշտ ի յոգի,

* Թերթի ձախ եզրը պատռված է և շատ բառեր կիսատ են պահպանվել։ Փակագծերում տվել ենք ըստ իմաստի ամենահավանական ընթերցումները։

Եւ մշակեալք տեառն Ցիսուսի
Ժառտն | | | տին ամենալի,
Դուք վայելողք և անծկալիք
Ձձեզ ա[ղաչեմ ա]ղերսալի
Եւ արտասուօք գոչմամբ ի լի
Ցործամ զսոյն | | |
Դուք հանդիպիք մեծահոգի
Զիս յիշեցէք ջերմամբ սրտ[ի]....

Դ

330 բ Զբազմամեղ և զանարժան, զապիկար և զտրուպ գծողս զՍիմէոն մեռեալ ոգի վարդապետ յիշեցէք ի Քրիստոս աստուած, և աստուած զձեզ յիշէ, ամէն.

64

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 2418

Գրիչ՝ Գալուստ
վայր՝ Տաքև*

301 բ ...Արդ, գրեցաւ եղանակաւոր տաղս և լուսազարդ երգարանս ի Թուակա[նին] Հայոց ՊԾԵ.(1406), ի տանս Սիսական, յերկիր | | |,* ի մեծ և ի հռչակաւ[որ] սուրբ ուխտս | | |.** Առ ոտս մեծ և ամենեջանիկ դիտապետիս Հայոց, որ է անուանակիր աքփիաւորչին [Գրիգորի], այլ և գործոց նորին, նա և պսակացն ասեմ մեծին. ի խնդրոյ սրբասնունդ և երանաշնորհ եղբաւր մեր և անընդմիջարար սիրելոյ Գրիգորի սիրողի բանի, ի վայելումն անձին իւրոյ սրբազանի, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց, և ի վարժումն դեռաբոյս պատանեկին | | |, որ է որդի | | | ***ին իւրոյ, զոր տէր վայելել տացէ ընդ երկայն աւուրս, ձեռամբ յոգնամեղ և ապիկար գրչի Գալուստ պիտակ սպասաւորի, ի լաւ և յընտիր աւրինակէ Սըսցոյ, որ էր գրեալ ձեռամբ բազմարուեստ գրչի Գրիգոր դպրի, մականուն Խուլ կոչեցեալ.

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կամ գաղա-
302 ա փարէք, զվերոյասացեալ ստացաւղ սորա և զբազմամեղ || գրչաւոր մի մոռանայք, այլ մաղթեմ յիշել ի սուրբ և յերկ[ն]աթռիչ պտղատանս ձեր առաջի անարատ գառինն և անարիւն զենմանն Քրիստոսի, և նա, որ առատն է ի տուրս բարեաց և աննախանձ ի պարգևս շնորհաց մեզ՝ յուսողացս և ձեզ՝ խնդրողացդ առհասարակ շնորհեսցէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն.

---

* Քերված է, հավանաբար եղել է «Սիւնեաց»։
** Քերված է, եղած պետք է լինի «Տաթևու»։
*** Ստացողի անունը և հայրանունը քերված է, այլ ձեռագրով քերվածի վրա գրված է «Սարգիսին, որ է որդի Ստեփաննոսին»։

65

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑՒՈՑ

Վենետիկ 147

Գրիչ՝ Մխիթարիչ
վայր՝ Մակու

...Զգծողս Մխիթարիչ [յիշեցէք]։ Զմեռն էր և մեր առաջի գիրն այս է, որ գրեցի. ի գաւառս Արտազու, ի գիւղս որ կոչի Մակու, առ պարոնութեան պարոն Նուրադնի և բաբունապետիս Մխիթարիչ վերակոչեցեալ։*

Ի թուի հայկազեանս սեռի ՊԾԵ. (1406) ամի, յամսեանս յունվարի ի Ե. (5) օրն։**

66

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 354

Գրիչ՝ Գրիգոր Ապարանեցի

ա

501 ա Զաշխատող սորին զփցուն գրչակս զԳրիգոր մանուկ Ապարանեցի յիշեսջիք ի տէր Ցիսուս, ամենայն ազգականաւք և երախտաւորաւք, ով պատահողք այսմ նշանախեծի, և որ առատն է ի տուրս բարեաց պարգևեսցէ մեզ յիշելոցս և ձեզ՝ յիշողացդ առհասարակ զիւր երկնից արքայութիւնն, ամէն։

բ

252 բ Զգծաւղ սուրբ և աստուածեղէն տառիս՝ զԳրիգոր դպիր Գառնեցիս յիշեսջիք ի տէրունիս, զի և դուք յիշեալ լիջիք ընդ տեառն սիրելիս։***

գ

189 բ Զնուաստ ստացող սմին գիրս Մխիթարիչ**** վարդապետ յիշես-

* Ակնարկում է Մխիթար Ապարանեցուն, որն իր մի գրության մեջ հայտնում է, թե Սիս քաղաքից 1410 թվականին Մակու է բերված 50 լիտր ձեռագիր («Հայապատում», Ա, էջ 123)։

** Ձեռագրի ընդօրինակությունը Մխիթարիչն սկսել է տարիներ առաջ։ Մի այլ հիշատակագրության մեջ նա գրում է «Ցիշեսջիք և զանարհեստ և զփցուն գծողս գծրս Մխիթարիչ սուտ անուամբ քահանայ...։ Շտապով գրեցի զսա ի գաւառս Արտազու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ տէր Զաքարիայի մեծ կրաւնաւորի և բաբունապետիս Մաթէոս վերակոչեցեալ, ի թուականութեան մարդեղութեան տեառն ՌՅՂԲ. (1392)»։

*** Նման հիշատակագրություններ գրիչն ունի նաև 62 բ, 101 ա էջերում։

**** Տրա Մխիթարիչը կամ Մխիթար Ապարանեցին գործել է 1360—1410 թթ. ընթացքում։ Նրա կողմից գրված կամ նրա անվան հիշատակությամբ այս և մյուս հիշատակագրությունները տեղագրում ենք Մխիթարիչ գրչի կողմից 1406 թվականին Մակվում գրված հիշատակարանին առընթեր, նկատի ունենալով, որ նրա մեջ Մխիթարիչը հիշատակվում է որպես գրչի ուսուցիչ—«բաբունապետ»։

չիք ի տէր կրկին ծնօղօք և համայն զարմիւք, ով պատահողք սմին, և աստուած զձեզ յիշէ առհասարակ։

Ընդ նմին և զփծուն գրչիկս՝ զԳրիգոր սարկաւագ յիշել աղաչեմ ի տէր, հանդերձ ամենայն ազգականօք և երախտաւորօք, նաև զՅո-ճանէս պատանեակս մեր, որ կու սպասաւորէ մեզ։

Դ

205 բ Զգծողս յիշեա և անմեղադիր լեր, զի Թանաքս վատ էր և կու սփռեր, ոհ։

Ե

Ստացող՝ ֆրա Մխիթարիչ

589 ա Զստացօղ սորին զտառապեալ և զնուաստ ոգիս զֆրա Մխիթարիչ սպասաւոր բանի յիշեցէք առ Քրիստոս բարի մտօք։

67

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ, ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Երևան 2529

Հետ. ստացող՝ Մխիթարիչ

344 բ Օ՜վ, վեհանձինք և պանծալի,
Միշտ ձեռնարկօղք գործոյ բարի,
Յորժամ հանդիպիք այսմ տառի,
Յիշման արարէք զիս արժանի...
Զֆրա Մխիթարիչս՝ խնդրող բանի,
Զվերջին ստացօղս գրոցս հրաշալի...։

68

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6792

Գրիչ՝ Գրիգոր Վարդապետ

247 բ Գոհութիւն հաւր անեղին
 և միածին նորա բանին,
Բամից գոյից արարողին,
 հոգոյն սրբոյ զարդարողին,
Ի յախտաժետ անձնէ կըրկին
 աւետարանիս գրողին,
Գրեալ էր նախ սա Օրպէլին
 Սիւնեաց արհի մետրապօլտին,
Որ էր իշխան նա վիճակին
 Տանըն Սիւնեաց մեծ նահանգին,
Բաբուն արի քարտուղարին
 և քաջաբան վարդապետին,

Վասն խնդրոյ Ստեփաննոսին՝
իւր հօրեղբաւրն, և Բիւքթելին,
Արի և քաջ վարդապետին
և Սունեաց եպիսկոպոսին.
Բամեալ և իմ գիրս ընդ նըմին
Գըրիգորիս՝ տէր Աւրպէլին,
Դասակից լինել նըմին
աղքատս յետին՝ այն փարթամին,
Աստուածաբան վարդապետին
և քաջիմաստ հըռետորին,
Պետ և արհի հայրապետին՝
Սիւնեաց աթոռոյ Տաթևին.
Ես անպիտան յամենայնի
Գրիգոր գըծող այսըմ տառի,
Տեսի զկըտակըս ցանկալի՝
զաւետարանըս Քրիստոսի,
Ի թըւականիս ութհարիւրի
՚ւ յիսուն ու հինգ ամ աւելի (1406),
Էտու քաջալերս իմ սըրտի
248 ա ՚ւ աշխատութեամբ գը || ծագրեցի.
Աւետարանս էր այս թերի
Միայն Յոհան էր ի կարգի,
Յերից գըլխոց սակաւ ունի*
զսկիզըն և զաւարտն ի պատշաճի,
Սակս որոյ հոգս ինձ արարի
՚ւ յաւժար կամաւք զթերին լըցի։**

69

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2152

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Բաղէշ

ա

177 բ Փառք անեղին աստուծոյ, անմահին և ամենազօրին և անճառ բանին, որ ետ կարողութիւն Թումայի բանի խնդրողի հասանել յաւարտ ծաղկաքաղ օրինացս և արարածապատում գրոցս, զոր մեծաւ տաժանմամբ և երկօք աշխատութեամբ հասի յաւարտ սորին և խիստ նեղացա, յաւուրս Նաւասարդի, յոդոյ ձմերայնոյ խստութենէ, և ի

* Հովհ. Օրբելու կողմից գրված ավետարանը մագաղաթյա է, նրանից պահպանվել են բարձրորակ լուսանցազարդերով, նկարներով ու խորաններով զարդարված 158 թերթեր։ Գրիգոր վարդապետը պակասները լրացրել է թղթյա թերթերով. ընդամենը գրել է 144 թերթ։

** Սկզբնատառերով հողվում է՝ «Գրիգոր վարդապետի է այս»։

մթութենէ տունջեանն, և ի ճրագէ գիշերի, և վասն փութոյ օրինակին նօտրեցաք փութով, վասն զի սէր փափագանացս սախպեաց զիս առ ի գրել զլուսաւոր և զուրախարար բանքս, որ ի սմա ամբարեալ կան ի ոփոփանս մտաց իմոց և ամենայն բանասիրաց։ Որք հանդիպիք սմա տեսութեամբ և կամ օգտութեամբ ինչ իւիք յիշեցէք զմեզ ի միտս բարիս և սխալանացս, [և] անյարմար գրոյս մի մեղադրէք, զի կար մեր այս էր, և տեղիս՝ մութն և ձմեռն, և յաղթեաց բաղձանս կարողութեանս։ Գրեցաւ յանապատս Բաղիշո, որ կոչի Վերի վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Գէորգեա զօրավարի, յամի ՊԾԵ. (1406) թուականիս, յահկի ամիս...։*

Բ

Մի մասի գրիչ՝ Ստեփանոս

84 բ Ո՛վ ընթերցողք, յորժամ կարդայք կամ օրինակէք, յիշեցէք ի Քրիստոս զանարժանս՝ զՍտեփանոս վարդապետս և զծնօղսն իմ, և աստուած-ողորմի ասացէք, և խոշորութեանս անմեղադիր լերուք, զի գիր չեմ գրել, այլ նօտրել եմ | | | փօտ, զի այս քարոզերս ի յիմ գրիանքըն չկայր և հանկարծ հանդիպեցաւ, ըշտապեցայ ու նօտր գրեցի։**

70

ԱԻԵՏԱՐԱՆ

«Հայք ի Զմիւռնիա», էջ 21—23

Հետ. ստացող՝ Թուրվանգայ

ա

...Ես նուաստս և անպիտան ծառայս աստուծոյ Թուրվանգայս, դուստր պարոն Մարգարին, ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատակ ինձ, և ծնողաց իմոց պարոն Մարգարին, և մօրն իմոյ պարոն Գոնար-Մէլիքին, և եղբօրն իմ պարոն Բեկլարին, և առն իմոյ պարոն Յովանեսին, և եւտու Անդրիաս քահանային և իւր որդւոյն Մխիթարին՝ յիշատակ անջնջելի։

Արդ, որք ընթեռնուք զսուրբ աւետարանս յիշեցէք յաղաւթս ձեր զիս՝ զԹուրվանդէս, և զպարոն Յովանէս, և զվերոյգրեալ ծնողսն իմ, և աստուած զձեզ յիշէ։

Ի թվիս ՊԾԵ. (1406) գրեցաւ։

Բ

Ո՛վ դասք լուսերամից, որք հան[դիպիք]*** քառարուխ վտակիս զվերջի [ստացող] զՅովանէս աբեղայ բիւրակն | | | անուն Աբիբարենց յաղաւթ[ս յիշեցէք], որ ստացաւ զաւետարանս յիշատ[ակ իւր և] ծնո-

* Ձեռագրի ընդօրինակությունը, ինչպես պարզվում է 162ա էջի ծանոթագրությունից սկսված է եղել արդեն 1402 թվականին։ Այդ էջի ծանոթագրության մեջ ասված է. «Ջթում[այ] խնդրող բանի աղաչեմ յիշել ի տէր, թվ. ՊԾԱ. (1402) գրեցաւ»։

** Ստեփանոս վարդապետն ընդօրինակել է միայն ձեռագրի 74—84 թերթերը։

*** Ուղղագիծ փակագծերի մեջ առաջարկված հավանական լրացումների փոխարեն հրատարակության մեջ դրված են բազմակետեր։

դաց իւրոց, և ի վտյելումն ձե[ռնաժն]ունդ զաւակին իւրոյ Տիրատ[րոյ]: Տեր աստուած վայելել տացէ, ամէն։ Ի թվ. ՊԸԾ. (1409°)։ Եւ զեղկելի կազմողակս մի մոռան[այք], ով դասք լուսերամից, որք [հանդիպ]իք այսմ քառաբուխ վտակիս, [զստ]ացող սորայ զպարոն Թուրվանդէն՝ զդ[ուստր] պարոն Մարգարին յաղաւթս յիշեցէք, որ առ զաւետարանս ի հալալ արդեան[ց իւրոց] յիշատակ իւր, և ծնողաց իւրոց պարոն Մուրադի [և] Գոճար*-Մէլիքին, և իւր եղբաւրն պարոն Բե[կլարին | | | եա զսայ ի յԱնդրիաս երէցն և իւր ո[րդի Միխթա]րին, աստուած վայելել տացէ, ամէն։

71

ՑԱՅՍՄԱԻՈԻՐՔ

Վենետիկ 189

Վայր՝ Կոնթեր գիւղ

Ի թվ. ՊԾԵ. (1406), ի մայիս ԻԲ. (22), ընդ հովանեաւ Գորոփոսիսի(°) սուրբ Թէոդորոսի մեծափառ բարձրապատիւ ուխտի, ի դուռն սուրբ Սարգսի զաւրավարի և որդւոյ նորա Մարտիրոսի, ի յաստուածապահ գեղն Կոնթէր կոչեցեալ, յիշատակ Շանմէլիքին և Խոնախ մղտսուն | | | և զհայրն [Խունախին]՝ զՄղպէլն, և զմայրն իւր զՏիկնացն, և զեղբայր իւր զՊուտախն, և զՄոմեղէնն, և զզաւակսն իւր զՀայրապետն, և զԿարապետն, և զՍադիկն, և զզաւակն իւր, և զկողակիցն իւր զԹամրան, զՇանմէլիքն, և զմայրն իւր զՇնօֆոր պարոնն, և զՍառան, և զՀռիփսիմէն, և զՅոնողիայն(°), և զեղբարսն իւր զՆերսէս երէցն, և զիւր որդին զԱբգար սարկաւագն, և զՅովնաննէս երէցն, և զՇանպարոնն, և զՄերունն, և զԿարապետն, և զփոխեցեալ առ Քրիստոս զՄեծպարոնն, և զքոյրն իւր զՄաթախն, և զԳշխոյն... և զգրող սորա զՅովնաննէս աբեղայս, և զծնաւղսն իւր՝ զտէր Պապն և զՍիբայն... զսպասաւոր սուրբ ուխտիս, միաբանքն՝ զՅովսէփն, և զԿիրակոսն, և զՄարդան, և զՊետրոսն, և զԱստուածատուրն՝ զորբասնունդ աբեղայքն, և զՄկրտիչ երէցն, և զԽաչատուր սարկաւագն... և զգործաւոր վանացս՝ Մկրտիչ, և զՅակոբ, և զԳրիգոր, ...և զՅակոբ միայնակեցն և զՄղթոնին...։

* Տպված է «Հոնար» փխ. «Գոհար»։

72

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Նրկան 4684

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Խիզան

ա

529 ա ... Պօղոս աբեղայ և կրօնաւոր։ Ծանգացօ՛ղ եղեալ աստուածային տառիս այս։ և ի բարեխօսութիւն սրբոցս՝ որ հաւաքեալ կան ի սմայ։ ի միտ առեալ զբանն Եսայայ որ ասէ։ երանի՛ որ ունիցի զաւա՛կ ի Սիովն՝ և ընդանեակ յԵրուսաղէմ։ ե՛տ գրել զպատմութիւն սրբոցս, յիշատակ հոգւոյ իւրոյ՝ և ամենայն արեան առուացն։
529 բ Այդ՝ աղաչեմք զամենեսեան որք ‖ հանդիպիք սմա՝ զինչ կերպիւ և իցէ։ Յիշեցէ՛ք պաղատանձ յաղօթս ձեր՝ զպատուական կրօնաւորն, զՊօղոս աբեղայն։ և զհայրն իւր զՔօշբէկ՝ և զմայրն իւր զՋօհար։ և զքւերսն իւր. և զամենայն ազգակիցսն, և զամենայն արեան մերձաւորսն. և զերախտաւորսն։ Դարձեալ՝ յերեսս անդեալ աղաչեմ։ յիշեցէք ի Քրիստոս զանպիտան գրիչս զՅովանէս քահանայ։ և զՄկըրտիչ քահանայ, զհա՛յրն իմ ըստ մարմնոյ։ և զծնօղն իմ որ է մայրն։ և աստուած որ առատն է ի տուրս բարեաց. ձեզ և մեզ ողորմեսցի առհասարակ, ամէն։

Արդ՝ գրեցաւ տառս այս ձեռամբ յոքնամեղ և անարհեստ գրչի Յովանէսս սուտանուն քահանայի։ ի Խիզան քաղաքի, ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնիս։ և քաջ զօրավարացս, Սարգսի և Գէորգեայ։ ի Թուականիս Հայոց՝ ՊԾԶ.(1407)։ ի հայրապետութեան, տեառն Դաւթի Աղթամարեցւոյ: եւ ի խանութիւնն Ղարա Յուսուֆի Թուրքի։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմայ։ Թողութեան գրոյս և սխալանացս անմեղադիր լերուք՝ զի կա՛ր մեր՝ այսչափ էր։ Ես Պօղոս կրօնաւոր, որդի Քօշբէկի։ ետու զՅայսմաւուրքս,

ի սուրբ ուխտս, որ Գամաղիէլ կոչի։ Որ է՛ ի գաւառիս Հիզանայ, և ի վիճակ սորայ։ յորում և բնակութիւն իմ, աստ է։ Ցառաջնորդութի՛ւն սուրբ ուխտիս, Ներսէս վարդապետի՝ և Ստեփաննոս եպիսկոպոսի, և Դաւթի։ Եւ ի հայրապետութեան, նորի՛ն Ստեփաննոս եպիսկոպոսի, որ և զառաջ գրոցս՝ նայ գրեաց մինչ Ժ. (10) տետրն։ Ցիշատա՛կ մեզ, և ծնողաց մերոց՝ և ամենայն արեանառուաց։ Վկայութեամբ սիրելի՛ հօրս՝ մեր ծերունի՛ վարդապետիս Ներսէսի։ և առաջի՛ն պատճառի բարեացս այս հոգևորի՝ Ստեփաննոս եպիսկոպոսի։ և Դաւթի՛ եպիսկոպոսի։ Որ կարդա՛ն և յիշատակեն զմեզ, և զմերսն՝ ի գաւառն սուրբ եկեղեցւոյս Գամաղիէլի։ զի ով ոք որ յիշէ զմեզ. յիշեա՛լ լիցի յանմոռաց գո՛ւթն Քրիստոսի։ զի որով չափով չափէք՝ ձե՛զ չափեսցի յարդարամէտ կշռիռն Քրիստոսի։ Իսկ ի փոփոխման ժամանակի։ մի ոք իշխեսցէ զսայ յետ իմ. ի ւր սեփհականել։ ծախել, կամ հանել ի դրանէ սուրբ ուխտիս։ Բայց եթէ ի խռովութեան ժամանակի, խնա՛մ
530 ա տանի սմայ՝ և | | | և ի խաղաղութեան ժամանակին, դարձեա՛լ դարձուսցէ ի սուրբ եկեղեցիս։ այնպիսինս ի Քրիստոսի՛ բերանոյնս զերանաւէ՛տ ձայնն լսէ որ ասէ։ եկայք աւրհնեալք հօր իմոյ։

Այլ ե՛ս անարժան գրիչս Յովանէս սուտանուն քահանայ։ աղաչեմ զձեզ՝ զի իմաստութեամբ ընթեռնուք զյիշատակարանս սուրբ վկայիցն Քրիստոսի։ Զի և ես՝ ոչ անփոյթ արարի վասն սակաւ՝ ի պարգևատուէ՛ն աստուծոյ։ Զի թէպէտ վասն ա՛յլ բանից աստուածայայտնութեաց որ ի սմա՝ անհաս գտայ։ այլ վասն կետից՝ սակա՛ւ ինչ իմացեալ ուղղեցի։ Զի է բան՝ որ միո՛վ կետիւ կատարի։ Եւ է՝ որ երկուք։ է. որ երի՛ւք և չորիւք։ Արդ՝ ե՛ս զգուշացայ։ զի եդի՛ զկիսակէտն։ և զմիջնակէտն, և զհետի՛ն կէտն։ որ .է՝ երկու կէտ։ Ո՞վ եղբայր իմ և լո՛յս աչաց։ դու այսպէս իմացիր։ զի յորժամ զմի՛ բանն սկսանիս՝ մինչ յա՛յն որ Բ. կետէ ի մին տեղիս մի՛ հանգիր։ քե՛զ օրինակ առ։ զի յորժամ ոք՝ ի հեռաւո՛ր տեղւոյ գնայ ի տեղի իւր և ի տուն, և ունի զինքեամբ շալակ կամ պաշար։ Թէպէտ հանգիստ առնու ի ճանապարհին։ ոչ է կատարեալ հանգիստ՝ մինչև ի տուն իւր հասանէ։ Սապէս և դու մինչ՝ ոչ կատարի բանն. մի՛ հանգչիցիս ի կետն։ այլ ի կէտն, և ի կիսակէտն՝ ի կա՛խ կալ զբանն. մինչև հասանիցես ի տո՛ւնն։ Եւ տունն՝ Բ. կէտն է։ Իսկ գլխագիրն ա՛յն

է, որ զբանն ի բանէն բաժանէ․ որ ի կարգ բանին չերթայ բանն որ ի գիրս՝ այլ նո՛ր բանն որ ի գիրս՝ այլ նո՛ր բան ցուցանի որ չէ ըստ կարգի այնմ բանի։ Եւ ես անարժանս յամենայնի Յովանէս՝ իմացայ զայսն և այնպէս արարի․ Նախ, կէ՛տ եդի ի մէջ բանին։ և ապա կիսակէտ և ապա կատարեալ կէտ։ որ է՝ Բ․ կէտն։

Արդ, ով եղբայր։ թէ դու այնպէս աշխատիս և ուսանիս։ լուսաւորի՛ս մտօք շնորհօքն աստուծոյ և լուսաւորե՛ս զլսօղսն։ Վասն որոյ՝ մի անմտաբար համարիր զկէտն որ ի գիրս յայս։ Զի խանգարի՛չ է այնպիսին սուրբ գրոց՝ որ ոչ գիտէ դնել զկէտն, և զկիսակէտն և զմիջակէտն և զտո՛ւնն։

Եւ ես, այնպէս արարի աստ։

530 Եւ թէ սխալ գտանես՝ եղբայրաբա՛ր ուղղեա։ Զի և ես զորս գտի սխալ ի կէտսն՝ քերեցի։

Իսկ արդ, ո՛վ հոգի իմ և քաղցրիկ եղբայր․ իմացի՛ր և զայս։ զի զխո՛ւնջն որ եդի ի սմայ զխոնա՛րհ և զքա՛ղցր բանն ցուցանէ։ Եւ բե՛րն որ ի սմայ և դի՛ր ի միջին՝ զպակա՛ս և զողբումն բանից ցուցանէ։ եւ զա՛րկն․ զդիմադարձից և զոչ լինելոյ բանից։ Եւ այսպիսի՛ս զա՛յն ցուցանէ։ որպէս ասէ ոք թէ ոչ լսես ինձ՝ ես տաց զքո ջաղայն։ Եւ զա՛յն ամենայն իմացիր և լուսաւորի՛ս հոգւովս սրբով։*

Պարտ է պատմել զբան աղետիս,
 զդառնութիւն ժամանակիս,
 որ գործեցաւ յետին դարիս,
 որ և գրեցաւ բան սուրբ տառիս։
Ահա եզև խաւար երկրիս,
 Ղարա-Յուսուֆի չար համբաւիս,
 որ է պարոն Թուրքըստանիս,
 Խրոխտ և անյաղթ յայս աշխարհիս։
'Ի իւծեալ բեկէ զմէջս ամենից,
 ի Մէրդընայ սկսեալ բերդիս,
 մինչ ի քաղաք Թավրէժ տեղիս.
Ղեղի արբոյց դառն վշտիս,
 գնալով ի տուն Վըբրաց ազգիս,
 լըցաւ Թունօք նըման իժից,

* Յովանեսի գրչի օգտագործած կետադրական նշանները նույնությամբ վերարտադրելու հնարավորություն չունենք, ուստի հրատարակում ենք հիշատակարանի մի հատվածի լուսանկարը, որտեղ օգտագործված են նրա կողմից կիրառվող համարյա բոլոր նշանները (տես նկ. 4)։



Նկ. 4. Մի հատված Յովանէս գրչի հիշատակարանից

մահացոյց զա[զգս՞] քրիստոնէից։
Ուստի առեալ բազում գերիս՝
հնգետասան հազար ի Թիւս,
և հինգ հազար սպաննեալ յանգիս,
չարչարանօք ազգի-ազգիս։
Սուր մերկացաւ վաղակաւոր,
խոցեաց զսիրտս մեր բոլոր,
քանզի հեղին արիւն յորդոր
ըզսուրբ մանկանց Սիոնի նոր։
Ի հարկի տեառն փառաւոր,
յեկեղեցի խորհրդաւոր,
բորբոքեցին հուր զօրաւոր,
որք այրեցան կըտոր-կըտոր։

Ամուր բերդեր արձանաւոր,
  և քրիստոնեայք անդ փառաւոր
  ի միասին բոցով յորդոր
  այրեալ եղեն որպէս փայտ չոր.
Ղամբարապէս նմանապէս
  լուցաւ հըրով երկիրն բոլոր,
  Որպէս գառինք եղեն մոլոր
  ի մէջ գայլոցն պատառող,
Ելեալ հրաման Նեռինըն նոր,
  բղխեաց ըղըրանն որպէս ըղըոր,
  Թէ որ սպանանէ՝ բան է շնոհւոր,
  Երթա առ հաղըն փառաւոր։
Ռամք հաւատով սուրբ միաւոր
  բազումք բարի գործովք աղւոր
  ըսփռեալ եղեն յաշխարհ մոլոր,
  Խնդրել զգերիոն, որք խոցեալ խոր։
Սիրտ չիմանայ զիրաց այս որ
  զինչ գործեցաւ բան ահաւոր,
  չկարէ պատմել ճառըս բոլոր,
  զխիղճ և զաղէտ կըսկըծաւոր։
Իսկ ի յերկիրըս Խիզանայ
531 ա Նոր հը| | |ձայն գուժոյ գայ,
  որ ի [յՃզ]գէն իսմայելայ
  արիւնախանձ | | | զօրանայ։
Ցարիւն չխնայեն | | | ոյ զինչ կայ,
  չասեն թէ կին և [թէ ա]ղայ,
  զամէն խոցեն ի յանխը[նայ],
  որ ցաւ վիրին չառողջանայ
[Վայ և] եղուկըն շատանայ
  քրիստո[նէից ազ]գի, որ կայ,
  հացըն մոխրի. համ [ունե]նայ
  զջուրն արտասուօք ըմբեն | | |
Արդ, ի յաւուրքս չար, որ տե[սայ]
  յետինս Պօղոս աբեղայ,
  յայնժամ [բ]անս այս խորհեցայ,
  կազմել սեղան [սուր]բ, որ Թեայ։
Նոր Սիոնի մանկունք զինչ կայ,
  ի գիրքս ես շատ աշխատեցայ,
  զի սուրբ զաւակ լիցի ինձ սա,
  և յիշատակ անջինջ մընայ։
Ի յաշխարհի տուն ոչ ստացայ,
  արծաթ 'ւ ոսկւոյ ոչ ցանկացայ,
  ոչ մարթաւոր ինձ ժառանկ կայ,
  և զմարթոյս փառք չկամեցայ։

Սիրտիւ ի յայս յօժարեցայ,
  զտառս ի Սիոն զաւակ ուսայ,
  և լի սեղան որ չԹերանայ,
  յուսով զայս տալ ձեզ ցանկացայ.
Է աչքս յաստուած ՚ւ ի ձեզ անա,
  ասել սրտիւ տէր-ողորմեա,
  ինձ և ծնողացն, որ գրեալ ի սմա,
  և զինչ արեան մերձաւոր կայ...։*

Բ

250 ա Որ հեռաւորդ անչափելի,
Մօտեորեալ անմեկնելի,
Եւ Թագաւորդ ամենայնի
Առէր ըզկերպըս ծառայի,
Այժմ նայեա յաղերս բանի
Լեր ունգնգիր խոնարհելի,
Եւ տուաջնորդս այս սուրբ ուխտի
Կցորդ փառացդ արա մեծի,
Զվարդապետս մեր բարի,
Որ և Ներսէս անուն կոչի։
ԸզՍտեփաննոս ընդ տէր Դաւթի՝
Զեպիսկոպոսքս նազելի,
Եւս և զստացող այս սուրբ տառի,
Որ և Պօղոս անուն կոչի,
Եւ զիւր ծնողսն որ ըստ մարմնի,
Զհայրն Քօչիկ՝ ընդ Գոհարի,
Իսկ և զգծողս այս եղկելի,
Որ չեմ յիշման իսկ արժանի,
Եւ զՄկրտիչ հայրն իմ բարի,
Եւ զմայրն յիշման տուք արժանի...։

Գ

533 ա Տւել է ինձ գրելէ գրոցս ՍՃԾ. (2150) դր[ամ] և Զ. (6) կապիճ հաց, որ | | | էր կապիճն, Ա. (1) լիտր եղ, Բ. (2) մեղր։ Զորս ՃԾ. (450) իւր ասելովն եպիսկոպոսին է տւել, այդ ՋՃ. (600)՝ իմ ավածովն դբ[ամ] ընդտ[մէ]ն]. ԲՃ. (200)կոկելէն, ԲՃ. (200) էլ ցորենն՝ ԳՌ. (3000) գայ ընգամէնն։**

---

* Տների սկզբնատառերով հոդվում է հետևյալը՝ «Պաւղոսի աղերս ի Ց[ո]վանիսէ»։

** Հիշատակարանը դիտավորությամբ ջնջված է, երկար աշխատանքից հետո միայն հնարավոր եղավ վերծանել ամբողջը (բացի երկրորդ տողից մի քանի տառ)։ Վերծանության ճշտությունը ստուգվում է այսպես. պատվիրատուն ձեռագրի համար վճարել է 2150 դրամ ընդօրինակողին, 450 դրամ եպիսկոպոսին, 200 դրամ կոկելու վարձ և 200 դրամի արժողությամբ ցորեն, ընդամենը 3000 դրամ, այսինքն ճիշտ այնքան, ինչքան ասում է ինքը գրիչը՝ «ԳՌ. (3000) գայ ընգամէնն»։

73

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 1072 և 5740

Հեղինակ՝ Գրիգոր Տաթևացի

231 ա ...Արդ, ես՝ թաղծեալս մտաւք և ցաւագին անձամբ, վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց փութոյ Գրիգոր պիտակ անուն խնդրող բանի հաւաքեցի ձեռամբ իմով զգիրքս քարոզողաց ի ստորասուզեալ ժամանակի թուաբերութեանս մեծի ութհարիւրի յի-սուն և վեցերորդի ամի (1407), ընդ հովանեաւ դրան սուրբ առաքե-լոյս Եւստաթէի։

Եւ եոլ պատճառ սորա յերից։ Նախ՝ հարկեցեալ յեղբարց հա-մաշունչ աշակերտաց. երկրորդ՝ զի ոչ գոյր գիրք քարոզաց* մերո վարդապետաց, բայց միայն խորին ասացուածք. և երրորդ պատճառ, զի ես տարտամ հոգւով և ծոյլ մարմնով ոչ կարացի բազմաց քարոզել, վասնորոյ հնարեցայ զգիրս քարոզաց*, զի և ինձ մասն լիցի ընդ ձեզ բարեաց։ Զի նախ քան զայս լինէր յերից միոյն՝ կամ ոչ քարոզել, կամ դժուարութեամբ աշխատել, կամ զայլոցն առեալ՝ անպարկեշտ քարո-զել։ Որ և յերկուս հատորս արարի վասն դիւրութեան՝ զմինն ձմե-րան և զմիւսն յամարան, որպէս և տեսանէք։ Առաջինն ի ծնընդե-նէն սկսեալ և կարգաւ ի յարութիւն տեառն կատարեալ, երկրորդն ի համբարձմանէն**սկսեալ և յերկրորդ գալուստն*** աւարտեալ։ Այսպիսի իմն կարգաւ. նախ՝ յաւրինացն հին և ապա ի նորս շնորհաց, ևւթանց առաքինութեանց, և խորհրդոց եկեղեցւոյ, և ամենայն մեղաց, և հա-սարակ բոլոր և մասնաւոր ապաշխարութեանց, և ապա ի կարգս տաւնացուցից յարմարեալ։ Որոց առաջին հատորն ունի քարոզս ՃԿ. (160) թուով, և երկրորդն՝ նոյն չափով՝ սակաւ ինչ յաւելեալ։ Է և այլ ուրէք՝ ի Քաղուածոյս սաղմոսացն, և յԵսայայն, յԱռակացն և յԵրգոցն Աւետարանն, և յԱռաքելական քարոզն և բանք գլխա-
231 բ ւորք։ ‖ Իսկ այն որ Յոբին և յայլմէ վերագրեալն է, զի հատկացին ի միմեանց և մի դողացեալ թուեցին անմարաց մտաց։ Եւ յայլմէն ես պիտանին և բարին ընտրեալ և զաւելորդն խոտեալ։

Արդ, աղաչեմ ի խորոց սրտից առ համշփրակ դասդ սրբազանից, որ բազում մաշխատութեամբ դիւրացուցաք ձեզ զբանս քարոզութեան, և զուք խնդրեցէք դիւրութիւն մեզ յիշմամբ ձեր ի տէր, զի յուսով հաւատամ ի մարդասէրն կամաց, ի ձեռն խնդրոյ ձերոյ մաղթանաց, ներումն շնորհել բազմաթիւ մերոց յանցանաց։

Այլ և վեհին իմոյ պետի՝
Ազգիս հայոց մեծ հռետորի
Յովհաննու մակ Որոտնէի՝
Կանխեալ ի սէրն սիրելի,
Բարեաց ի սմա յիշեալ լիցի,

* № 5740 ձեռագրում «քարոզողաց»։

** № 5740 «Ի հոգոյն սրբոյ գալստենէն» փխ. «ի համբարձմանէն»։

*** № 5740 «Գալուստն Քրիստոսի և յաւագ տաւներն»։

Ցանդերձ ծնօղօք իւր կրկնակի·
Այլ և զծնօղսն վիժածիս
Եւ համաւրէն ազգատոհմից,
Որ ըստ հոգւոյ եղեն վարժիչ
Կամ ըստ արեան կցորդակից·
Նախ՝ քեռորդւոյն իմ ըստ մարմնի,
Ծնրնդամիա երգարանի՝
Առաքելոյ առաքինի,
Եւ Սիւնակաձ գլուխ արհի,
Եւ Նորաբոյս քահանայի՝
Նախ ի Քրիստոս կոչեալ լինի՝
Նորին եղբաւրն՝ Բաբգէի՝
Բարեաց մասին յիշեալ լիցի·
Այլ և գրոյս այս խնդրողի՝
Յակոբ բաբուն համշիրակի,
Ի տանէ Գողթնեայ, ի Բուստ բնակողի,
Որոյ յիշատակն աւրհնութեամբ լիցի·
Եւ զՀեքապետ միայնական,
Որ նա եղև մեզ աւգնական,
Հոգալ զպէտս մարմնական
Աշտկերտաց մերոց լըման,
Ցիշման ի տէր լիցի արժան
Մասին բարեաց ողորմութեան։
Եւ համօրէն վաստակողաց,
Ի սրբագիրս աշխատողաց
Որք առաջին և ի վերջին
Ի կենաց գիրն արձանասցին։
Աշխոյժ մտօք ընթերցողաց
Եւ բարեսէր ունկնդրօղաց
Եւ զօրինակն շնորհողաց
Եւ ուղղիչն սխալանաց,
Ընդ քանքարին շահեցողաց
Ժառանգեսցեն պարգևք բարեաց·
Որ և մաղթեմ յամենայնի
Զգաղափարօղդ ուրինակի
Գրել զգիրս յիշատակի
Ձեռամբ ձերով ի քարտիսի,
Եւ դուք ի գիրն կենդանի
Լիջիք գրեալ անջնջելի·
Եւ յուսողացս և յիշողացդ
Այլ և զամէնն ասացողաց
Առհասարակ տեառնէն բարեաց
Հազորգեսցուք մասին շնորհաց,
Որում պատիւ և սրբասաց

Ի յերկնայնոց ու յերկրաւորաց՝
Հանուրց գոյից և ի մասանց,
Այժմ և յանկէտ ժամանակաց,
Ամէն, եղիցի։

74

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 3104

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Տաթև

358 բ . . . Ի թվաբերութեան Հայկազեան տոմարի Պ.-երորդի Ծ.-երոր-
դի Զ.-երորդի (1407) գրեցաւ և յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս
աստուածային, որ կոչի Հարցմունք, ի նահանգիս Սիւնեաց. ի յիշ-
խանութեան տանս մեր պարոն Սմբատայ և հարազատի իւրոյ պարոն
Բիւրթէլի; որդիք Իւանէի, որդոյ մեծին Բուրթէլի, որ յՕրպէլեանցն,
բնիկ հայկազնիք. ի մեծ և ի գերահռչակ ուխտիս և հրեշտակաբնակ
սուրբ մեծաստանիս ի վանս Եւստաթէի սուրբ առաքելոյս, ընդ հո-
վանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Լուսաւորչիս, և աստուածա-
յին արեամբ ներկեալ սուրբ Նշանացս, և այլ բազում նշխարաց սըր-
բոց, զոր աստ կան ժողովեալ։ Առ ոտս երջանիկ և երից երանեալ
բազմերախտ հօրս մեր և երկրորդ արփիաւորչի հայկազեանս սեռի
Գրիգոր քաջ հռետորի և աստուածաբան վարդապետի, զոր յայս դառն
և խաւար ժամանակիս իբրև զարեգակ ի մէջօրէի պայծառացեալ լու-
սաւորէ զեկեղեցի, ոչ ունելով հանգիստ մտաց և ոչ մարմնոյ, քանզի
359 ա հանէ զգիշերն ի գլուխ յաղօթս աստուծոյ ի յարտ || ասուս բազմահոսս
և լնու զկարօտութիւն բազմութեան եղբարցս, որ առ ոտս սորա են
ժողովեալ, այլ և զբոլոր ազգիս, միշտ գնալով ի մէջ այլազգեաց մե-
ծամեծաց և փոքունց, զի ոչ գոյ իշխան և առաջնորդ բաց ի սմանէ,
զոր տէր տացէ զհաստուցումն բարի։ Եւ լուսաւոր մտօք շրջելով ի բու-
րաստանս հոգեբուխ և ի մատեանս աստուածայինս, բերելով ի յայտ
զծածուկս խորինս ըստ տուեցելոյ շնորհացն նորա. Եւ ոչ միայն այս,
այլ և նման անարիւն Թռչ[ն]ոյ, որ շրջելով ի տեղիս զանազանս և ի
ծաղիկս ազգի ազգի, բերէ մեզ ճաշակս քաղցրահամս և գեղս բժշկա-
րարս, նմանապէս և մեծս այս, մտօքն երկնաճեմ շրջելով ի հինս և ի
նորս, այլ և յարտաքին գիտութիւնս և ժողովելով զօգտակարն՝ կազմէ
պսակս լուսաւորս ի գլուխս մանկանց եկեղեցոյ և վահան ամրու-
թեան ընդդէմ այլադաւանն առհմի, և զայս միշտ առնելով և անդա-
դար ուսուցանելով լուսաւորէ զեկեղեցի, զոր և կացցէ, մնասցէ սա
իբրև զջահ լուսատու ի մէջ եկեղեցւոյ և արժանի լինիցի լսել, եթէ՝
Ազնիւ ծառայ, որովհետև ի փոքուս հաւատարիմ ես՝ ի վերայ բազ-
մաց կացուց[ից], մո՛ւտ յուրախութիւն տեառն քո։

Եւ ի բազում վաստակոց սորա մինն գիրքս այս, որ է Հարցմունք անուանեալ, զոր ցանկացա սմա յետնեալս յամենայն եղբարցս մեղօքս մեռեալ Թումայ անուանեալ, զոր յոյժ ծարաւեալ, առ ի զովացումն անձին իմոյ և ի լուսաւորութիւն մտաց իմոց։

Արդ, ես Թումայ՝ տկարս և անվարժս, ոչ գոլով հմուտ արուեստիս, պիտակ աշակերտ, ապաւինեալ յայն որ զտկարս զօրացուցանէ, տկար մարմնով և դողդոջ ձեռօք սկսեալ, աղօթիւք սրբոց և ողորմութեամբն աստուծոյ աւարտեցաւ, ոչ հարևանցի և կամ վեր ի վերոյ, այլ յոյժ փափաքմամբ և մեծաւ ջանիւ, օգնականութեամբ և կամակցութեամբ մեծիս իմոյ և կրկին ստացողիս Գրիգոր աստուածունակ պւէտի, ի լաւ և յընտիր օրինակէ։

Եւ այսմ ամի, վասն բազմացեալ մեղաց մերոց, եղև աստուածասաստ խռովութիւն, թէպէտ պատիժ, սակայն վասն սիրոյ, զի զոր սիրէ տէր՝ խրատէ։ Զի եղև կրկին պատուհաս. առաջին՝ շարժ ահագին, զի շարժեսցէ զչարս ի բարի, որ և խնայեաց ի մեզ, թէպէտ ոչ ըստ արժանեաց, սակայն յաղթեալ ի սիրոյն. երկրորդն՝ մահ տարաժամ, որ յոյժ տրտմեցաք, զի իշխան մեր Բիւրթէլ կոչեցեալ՝ ի Քրիստոս փոխեալ, մանկամ[ր]քն ծաղկեալ։

359 բ Արդ, աղաչեմ զամենեսեան սիրողս Քրիստոսի, որք հանդիպիք սմայ կարդալով կամ գաղափարելով, յիշեցէք ի յերկնաթռիչ յաղօթս ձեր զգծօղ սորա զԹումայ՝ հանդերձ ծնօղօք և ամենայն արեան մերձաւորօք։ Եւ զիս՝ զանարժանս յամենայնի, մի՛ մոռանայք, այլ պաղատանօք հայցեմ, զի խնդրեցէք թողութիւն բազում յանցանաց իմոց, և ծնօղաց մերոց, և ուսուցչաց, սխալանացն ներեցէք, զի կար մեր այս էր, և նա, որ առատն է ի տուրս բարիս ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յուսողացս, առհասարակ, ողորմեսցի յօրն աներեկ և յանաչառ դատաստանն, ուր բանք սպառին և գործք միայն թագաւորեն, ամէն, ամէն և եղիցի։

Բ

251 բ Զտարտամս ի բարեաց գործոց, զվարանեալս ի յամէն կողմանց, զմեղուցեալ գծողս զԹումայ Թափառականս, ո՜վ սուրբ եղբարք, յիշեցէք ի զենեալ գառն, և զծնօղսն իմ՝ զՄարթիրոսն ի Քրիստոս հանգուցեալ, և զԱրև-Տիկին՝ բազմերախտ մայրն իմ, աստուած զձեզ յիշէ, ամէն, եղիցի, եղիցի։

75

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 24

Գրիչ՝ Մատթէոս վարդապետ
վայր՝ Տաթև

266 բ . . . Արդ, գրեցաւ աստուածաշունչ սուրբ աւետարանս ի լաւ և ընտիր աւրինակէ, ի գերահռչակ սուրբ մենաստանս ի վանս Տաթա-

թէի սուրբ առաքելոյս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Լուսաւորչիս, և այլ բազմագումար աստ ժողովելոց սրբոց, ի յառաջնորդութեան և տեղակալութեան սուրբ աթոռոյս Գրիգորի քաջ հռետորի՝ արթուն բաբունապետի և անյաղթ փիլիսոփայի, տրի ախոյանի ընդդէմ չարափառ և քրիստոսամարտիցն դասուց և յորդորիչ և հաստատիչ և յաւրինիչ ուղղադաւանիցն խմբից...։ Ձեռամբ նուաստ և անարհեստ գրչի՝ Մատթէոս պիտակ անուն վարդապետի, և Գրիգոր վարդապետի, և Եղիա վարդապետի։ Եւ ըստ իշխանութեան տեղոյս ի բարի զարմից ծնացելոց ի վաղընջուց իշխանացն պարոն Սմբատ, ամենաւրհնեալ զաւակօք, զօրօք և ամենայն հնազանդ[ելովք]։ Եւ ոմն ցանկացեալ խնդրեաց զաստուածագիծ տառս ... յիշատակ անձինն իւր՝, Մըմբարաքշահին, և ծնօղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց, և երախտաւոր հոգևոր հօրն՝ Քրմանշահին, և մօրն | | | ...։ Եւ եռ գրել՝ ի թուականութեանն Հայոց ութհարիւրերորդի յիսներորդի և վեցեակ թուի (1407), ի դառն և ի նեղ ժամանակիս, որում ազգն նետողաց անձինն կորաւ և փոխանորդ նորին իշխեց աթոռոյս Ատրպատականի թորգոմածին Ղարա-Ուսուֆ անուամբ, որ և մարտեաւ երկու անգամ և յաղթահարեաց զոմն ի թոռանց չար գազանին Թամուրին, չարաբարու, ահեղատեսիլ և չարասիրտ, անուամբ Աբ[ու-Բ]աքր. և այն եւս ի վերին խնամոցն ամենակարողին աստուծոյ, որ ազատեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն, որ և զամենայն ազգ և զամենայն լեզու ի ներքոյ նոցա հնազանդ և գերի կային,՝ որում ազատեաց զմեզ փրկիչն Յիսուս Քրիստոս, որում փառք յաւիտեանս, ամէն։

Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան՝ զհանդիպողսդ տեսութեամբ և զղձալի ընթերցողսդ և զգաղափարողսդ աստուածային կտակիս այս՝ յիշել եռափափագ ջերմեռանդ սիրով և սրտի մտաւք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյասացեալ ստացօղս սորա՝ զՄըմբաքշահն և զամենայն երախտաւորքն իւր՝ զհոգևոր և զմարմնաւոր։ Այլ և զամենայն աշխատողք սուրբ աւետարանիս, որ չատ [և որ սմկ]աւ, ի գրե[լն | | | և ի կազմել յիշեսջիք միով տէր-ողորմիայիւ ի Քրիստոս Յիսուս, և յիշողացդ և կարդողացդ և լսողացդ և աշխատողացդ, առհասարակ, ողորմեսցի Քրիստոս յոյսն ամենեցուն, և որ զամէնն ասէ, ամէն, եղիցի։

76

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9223, բ

Գրիչ՝ Մատթէոս վարդապետ
վայր՝ Տաթև

ա

...Արդ, եղև զըաւ սորայ գծագրութեան յամի ութհարիւրերորդի
2 ա յիսներորդի վեցերորդի հայկազեան տումարի (1407) ‖ [և յիշխանու-

թեան) մերումն Նա[հանգի Սմբատի և՞ | | | Բու[րթէլի՞]։ Ցառաջնորդու-
թեան վիճակիս մերոյ տանս Սիւնեաց և տէլեաութեան բարունակ գոր-
ծոյ Գրիգորի՝ առն սքանչելոյ, որ է լցեալ և յղփացեալ իմաստիւքն ճո-
խութեամբ. յորոյ և բազում թելադրութենէ եղև զրաւ այսմ աւետա-
րանի. և եպիսկոպոսութեան տէր Առաքելոյ քեռորդոյ Նորա, և իմոյ
անձին տկար Մաթէոսի սուտանուն կեղծաւորի և Գրիգորի պիտակ
աշակերտի, որ և սոյդ գլուխ եմ մեղաւորաց, որ ի չար ժամու եղէ
քաղաքապետ եկեալ ի սուրբ ուխտս Եւստաթէի։ Ընդ հովանեաւ երից
ընտրեալ եկեղեցեացս՝ սուրբ Առաքելոյս, և սուրբ Աստուածածնիս,
[և սուրբ Գր]իգորի, յորոց թևուք [ձեռն]արկեցի և էածի կատար
| | | իմ։ Եւ ոչ տրար զիս | | | կորեալ և զաշխատա | | | եալ։ Եւ
խոշորութեան [գրիս] անմեղայդիր լինել աղաչ[եմ, զի այս չ]տփ էր
կար մեր։ [Եւ աղա]չեմ զամենեսեան | | | պաղատիմ արտասուալից
գիմաւք | | | զընթերձողդ այսմ աստուածային տառիս, յիշեսջիք ի
բոլոր սրտէ զՅովէլ քահանայ՝ ստացաւղ սուրբ գրոցս, և զհանգու-
ցեալն ի Քրիստոս Մխիթար քահանայ, և զԲարսեղ քահանայ՝ պապ և
հայր գոլով սորա, և հարազատ եղբայրն սորա զԴանիէլ՝ փոխեցեալն
առ Քրիստոս, և զՍիմէոն եղբաւրորդի սորա, որ բազում աշխատեցաւ
յառաջին գլուխ գրոցս, և զմայր սորա ՔՆար կոչեցեալ, և ամուսնոյն
իւրոյ Խուլուբի, և դստերն իւրոյ Մինա-Խաթունայ, և զամենայն ար-
եան մերձաւորսն....

Բ

Ստացող՝ Յովանէս

Եւ ես մեղաւոր և անարժան սուտանուն քահանայս Յովանէս
2 բ ստացայ | | | աւ]ետարանս յիշատակ ինձ, քանզի անզաւակ գոլով
իմ հասա ի ծերութիւն, յուսացայ ի Քրիստոս և ի հրամանքն որ
ասէ, թէ՝ Երանի որ ունի զաւակ ի Սիոն և ընտանի յԵրուսաղէմ։ Եւ
արարի զսուրբ աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ մեծ
աստուածաշնորհ վարդապետին Գոշին, որ եմք յազ[գ]է Նորա, և պապին
իմ Մխիթար քահանայի, և հաւր իմոյ Բարսեղ քահանայի, և մաւր
իմոյ ՔՆարին, և ամուսնոյն իմոյ Խուլուբի, և դստեր իմոյ Մինա-
Խաթունի, և եղբաւր իմ Դանիէլի և Մուսիէլի, և եղբաւրորդոյ իմ Սի-
մէոն քահանայի, որ զՄաթէոս գլուխն գրեաց, և հաւրեղբաւր իմ
Սարգսի, և Ստեփանոս սարկաւագի, և քուերաց իմոց Եղիսաբեթի և
Տիրամաւր, և համաւրէն ամենայն ազգականաց իմոց, և Մաթէոսի
գրոց աշակերտի, որ բազում աշխատութեամբ գրեաց զսայ, և հոգե-
հեզ և հաւատարիմ Նաղաշին՝ Հայրապետին, որ բազում աշխատանաւք
Նաղաշեաց զաւետար[անս | | |
Եւ եթէ յետ վախճանի իմոյ ով ոք հանել ջանա և ա | | | Նով
ի թոռանց իմոց, կամ յիմոց, կամ յաւտարաց, կամ եպիսկոպոս, կամ
վարդապետ, կամ երէց, կամ աշխարհական՝ մասն և բաժին զՅուդա-
յին առցէ և զԿայենին և զխաչահանուացն՝ յահաւոր ատենին Քրիս-
տոսի, որում բանք սպառին և գործք մարդոյ միայն թագաւորեն, և
Քրիստոսի փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

77

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երևան 9247

Գրիչ՝ Թովմայ Մեծոփեցի
Վայր՝ Տաթև-Մեծոփայ վանք

ա

401 ա ...Արդ, գրեցաւ աստուածային այս մատեան ի յաւարտումն
կատարման եւթն և տասներեակ յոբելինին, ի սկիզբն պսակելոյ մտի
վեցերորդ ամաց յաբեթական տումարի, որ է ՊԾԶ. (1407), ընդ հո-
վանեաւ երկնահանգէտ մեծարգոյ ուխտի Սիւնեաց նահանգի առաքե-
լական աթոռոյ՝ սուրբ Առաքելոյս, և մօրս լուսոյ Աստուածածնի, և
սուրբ Գրիգորի. առ ոտս մեծ վարժապետի, քաջ հռետորի և անյաղթ
փիլիսոփայի արթուն անուն Գրիգորի՝ արարողի այսմ ստիերի արգա-
սաւորի, որ իբր զարեգակն պայծառ փայլէ ի մէջ Հայաստանեայց
եկեղեցւոյ և լուսաւորէ իմաստութեամբ և գիտութեամբ առհասարակ
զամենեսեան՝ զմերձաւորս և զհեռաւորս, և կարկէ զբերանս երկա-
բնակ հերձուածողաց. զոր և տացէ զսա տէր աստուած եկեղեցւոյ
իւրում երկայն աւուրբք մինչ ի խորին ծերութիւն։ Եւ ի յիշխանու-
թեան տեղւոյս աստուածասէր և բարեպաշտ իշխանիս Սմբատայ, որդ-
ւոյ Իւանէի, թոռին Բուրթէլի, զոր պահեսցէ զսա տէր աստուած ան-
այլէկոծ կենօք յամենայն փորձութեանց՝ ծաղկեալ զաւակօք իւրովք։
Ձեռամբ անարհեստ և անիմաստ սխալագիր գրչի՝ ամենավերջ և
նուաստ ոգի անձին Թովմայի, ըստ յօժարութեան կամաց և ոչ ըստ
գործոց գրոց աշակերտի, զոր ես ինձէն ստացայ զսա դատախազ
տարտամ առողս տաղանդին, ի յիշատակ բարի իմում անձին հիքա-
կանի և որոց գթացին ի կեանս մեր, մանաւանդ հոգևոր հօր իմոյ և
ուսուցչի Մատթէոս կրօնաւորի, և ծնօղաց իմոց հանգուցելոցն ի Քրիս-
տոս՝ հօր իմոյ Ստեփանոսի, և մօր իմոյ Շամշի, և հօրեղբօր իմոյ
Մկրտիչ կրօնաւորի, և եղբարց իմոց հարազատաց՝ Յովհաննէս քահա-
նայի, և Յովանիսի, Ռըստակիսի, և Գօրգի-Մելիքի, Ամիր-Մելիքի, և
401 բ Սօլթանշի, և Մկրտիչ միայնակեցի, և քեռն իմոյ Սուրաթ-Մելիքի, ||
նաև արժանեացն աւրհնութեան աստուածաշնորհ և երախտաւոր վար-
ժապետացն մերոց՝ Սարգիս վարդապետի և Վարդան վարդապետի՝
հանգուցելոցն ի Քրիստոս։ Այլև համշիրակ եղբարցս իմոց ուսումնա-
սիրեալ անձանցս՝ Մարգարէ վարդապետի, և Յակոբ վարդապետի, և
Յովանէս վարդապետի, և սիրասնունդ եղբօրս իմոյ Մկրտչի, աշա-
կերտեալ աստուածային բանին, որ բազում աշխատութեամբ և չար-
չարանօք նեղացաւ ի կոկել թղթիս, և այլ վեցեքեան եղբարցս, որք
եկեալ եմք տարաշխարհիկ ի գաւառէ Քաջբերունոյ վասն ուսման օգ-
տի. և ոչ դիպեցաւ մեզ որպէս կամք մեր էր, այլ պանդխտութեամբ
կացաք ի միասին ժամանակս ինչ։

Արդ, հայցեմք ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ յոգնօրէն և ախոր-

ժահամ հանդերձելոյ, և աղաչանս բազմապիսիս մատուցանեմ՝ յիշատակել զմեզ և զվերոյ ծանուցեալքդ, հանդերձ ծնօղօք մերովք և հարազատօք, ի մաղթանս ուղիղս և ի պատկանաւոր խնդրուածս և սեռն սիրով՝ ի միտս բարիս. որք հանդիպիք սըմա կարդալով կամ օրինակելով և կամ սակս մասին ինչ տեսանելով՝ ներումն և թողութիւն խնդրեցէք բազում յանցանաց իմոց, աղաչեմ զձեզ, զի կար մեր այս էր։ Որով և դուք եղիջիք դրեալ ի մատեանս կենաց վերին դպրութեանն, ամէն, եղիցի, եղիցի։

*Դարձեալ, յերեսս անկեալ աղաչեմք զմանկունս սուրբ եկեղեցւոյ, որք ուսանիք կամ գաղափարէք և կամ մասին սակս սմա պատահիք, վասն սիրոյն Քրիստոսի յիշեսջիք ի բարին Քրիստոս զհոգևոր զհայրն իմ և զուսուցիչ զ*Մատթէոս *քահանայ, որ բազում աշխատութեամբ և չարչարանօք կոկեաց զթուղթս և խազեաց և զնիւթն պատրաստեաց, զի և դուք անմոռաց դրիք ի դպրութիւնն կենաց, ամէն։*

Ր

344 ր *Արդ, յանկ ելեալ աւարտեցաւ աստուածային կտակս, որ կոչի Հարցմունք, զի ութներորդ հատորն ի* Տաթև *գրեցաւ և Գ. (3)-ն՝ յերկրիս* Քաջբերունոյ, *յանապատիս* Մեծոփոյ, *առ ոտս բազմերջանիկ և երանաշնորհ վարդապետի և վերադիտողի երկրիս* Քաջբերունի՝ Յովհաննէս *կոչեցելոյ, և երախտաւոր հօրս մերոյ, որ տածեալ խնամէ զմեզ հոգևորական սիրով և մարմնական պիտոյիւք։*

Ցայսմ ամի յորում աւարտեաց օգնականութեամբ աստուծոյ հզօրին զսուրբ խորանս լուսոյ Տիրամօր աստուածածնին, և կարկեալ եղեն անօրէն և չարահնար աղանդն այլազգեաց գարշելի, որ ոչ կամէին զշինութիւն սրբոյ տաճարիս։ Զոր և պահեսցէ զսա տէր աստուած երկայն աւուրբք մինչ ի խորին ծերութիւն անալէկոծ կենօք, և զյիշատակ սորա Քրիստոս աստուած պահեսցէ հաստատուն և անշարժ մինչև ի կէտ պայմանի այսմ կենցաղի, եղիցի, եղիցի, ամէն։

Թվականին ՊԾԷ. (1408)։

Գ

280 ա *Զտարտամս ի բարեաց գործոց և զվարանեալս ի յամէն կողմանց, զմեղուցեալ գծողս զ*Թումայ *Թափառականս, ո՞վ սուրբ եղբարք, յիշեցէք . . ., և զծնօղսն մեր՝ զհանգուցեալսն ի Քրիստոս։ Այլ և զհոգևոր հայրն իմ և զուսուցիչ զ*Մատթէոս *քահանայ, հանդերձ ծնօղօք և ամենայն մերձաւորօք արեան յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ ամէն, ևլիցի։*

*[Այլև զհարազատ եղբայրն իմ զ*Յովանէս *քահանայ յիշեցէք ի Քրիստոս, որ ի ՊՀԹ. (1430) թվականիս փոխեցաւ ի Քրիստոս և բազում երախտիս ունի ի վերայ մեր, և տէր Յիսուս զձեզ յիշէ, ամէն, եղիցի]։**

* Փակագծերի մեջ առնված վերջին պարբերությունը ավելացված է Թովմայի կողմից, ավելի մանր տառերով, ձեռագրի գրչությունից և Գ. հիշատակագրությունից տարիներ հետո՝ 1430 թվականին։



Նկ. 5. Թովմա Մեծոփեցու ինքնագիրը։

Դ

275 բ Ցայսմ վայրի հանդիպելով մեզ ի սուրբ ուխտս Վաղանդնու, գոլով մեզ ի սուրբ ուխտէն Եւստաթէի, և տեսաք զկսկիծ և զաղէտ փոքր·երիցուս Ներսիսի Որոտնեցոյ, հանդոյ տէր ատուած զնա ի դասս սրբոցն։

Ե

292 բ Աւաղ աղետիս և դառն կսկծիս, զի ի սոյն օր հանգեաւ ի Քրիստոս Օզբէկն ի ճանապարհին, և թաղեցաւ ի սուրբ ուխտս Վաղանդնու, և յեռանդեան օր երկոքին որդիք պարոն Բուրթելին, և տեսաք սուգ, զոր ոչ է իմ տեսեալ, և աղէկիզիմ յամենայն օր վասն մեծ պատուհասիս, որ ի ներս կամք։

Տէր իմ Յիսուս, վասն անյիշաչար գթութեան քո բարձո զպատուհասս։

Գ

299 ա Արդ, պատմեմ յայսմ վայրի զաղէտ տարակուսանաց և կսկծի։ Զի վասն բազմութեան մեղաց մերոց եղև շարժ ի վերայ երկրի, զի հաստատութիւնք երկրի դղրդեցան, և կարծր բնութիւնք վիմաց պատառեցան, և բազում դիակունք մեռեալ դտան, և ամ մի ի լման երկիրս շարժեալ։ Եւ մինչ ի յայս տագնապի կայաք՝ եկն մահ տարաժամ ի վերայ երկրիս [ի Ջուղայ և ի Շամբն],* և այսօր եղբայր Սմբատին պարոն Բուրթէլ՝ հանդերձ որդւովք իւրովք՝ հանգեաւ ի Քրիստոս, և որդի Սմբատին, և այլքս՝ անթուելիք են։ Եւ ով կարէ պատմել զճայն կանացեաց՝ կականալիր և աղիողորմ, զի ամենեքեան որդեկորոյս եղեն՝ որք և այրի, զի նախախնամութիւնն աստուծոյ ծաղկաքաղ առնէ զընտիրս ի մանկանց հաճելոց։

* Փակագծի մեջ բերված բառերը գրված են լուսանցքում։

Եւ վասն այն զքօղս մերկանան,
299 բ *Պատռեն զծածկ || ոյթս զարդի,*
Փետտեն զհերսն և խզեն զվարսն անխնայելի,
Նստին ի սուգ ի տան մթի,
Որպէս օրէն է սգաւորի,
Եւ փոխանակ յորգան սգեստի՝
Սեաւ զգենուն՝ գոյն տխրալի,
Պարտմրք ծեծեն զկուրծս սրտի
Բախեն զերեսս ի յապտակի,
Հեղուն արտոսր անչափելի,
Ցորգ և առատ նման գետի.
Եւ ոչ կարեմ պատմել աստի
Զաղետ, զկսկիծ, զվայ և զըճչիւն այս գաւառի,
Զոր ես ինքնին աչօք տեսնում
Ու ի միջի կամ յամէն ժամի,
Եղբարրք իմովք՝ Մարգարէ *վարդապետի,*
Եւ այլոցեօքն, որ են ի վանքն Ստաթէի.
Եւ վասն այս տարակուսի
Եւ զչիւարանաց թուղթս մնաց ի միջոցի.
Բարերար տէր և աստուած՝ խնայեա ի գինս արեան քո միածնի
Եւ թողութիւն արա սոցա,
Որք եկին և այժմ գան ի յառագաստ քում հարսնարանի։

78

ՔԱՂՈՒԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 3930

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Տաթև

360 բ *...Արդ գրեցաւ սուրբ և գերամբարձ աւետարանի քաղուածոյս ի լուսաւոր բանից* Մատթէոս *գլխոյ, յարմարեալ և աշխատասիրեալ* Գրիգորի *տրի վարդապետի, ի սուրբ և ի գերահռչակ ուխտս և յտկանաւոր աթոռս Եւստաթէի սուրբ առաքելոյս, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս, Աստուածածնիս, և սուրբ Լուսաւորչիս, և այլ բազմահանդէս սրբոցս աստ գումարելոց, ի տեղապահութեան աթոռոյս վերոյասացելոյ վարժապետին* Գրիգորի, *և իշխանութեան տեղոյս մեծատոհմի* Ամպ.ստի. *հարազատով* Բուրդելիւ՝ *ի տէր փոխեցելոյ, ձեռամբ ապիկար և թարմատար գրչի* Յովանիսի, *զոր գրեցի և ստացայ գոյիւք և աշխատութեամբ անձին իմոյ, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի թվիս Հայոց եւթն և տասն յոբե[լե]նի և վեցից թուի (17×50+6+551=1407), ի գառն և յետին ժամանակի...*[*]

* *Շարունակության (11 տող) ձախ եզրը պատռված է, պահպանված մասից պարզ երևում է, որ հետաքրքրական ոչ մի նորույթ գրիչը չի հաղորդում։*

79

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 3023

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Սիւնիք

440 ա . . . Արդ, գրեցաւ գիրքս քարոզից ի վա[նս | | | ոյ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս՝ սուրբ Կարապետիս, և սուրբ Սաե[փանոսիս, և՞] Գրիգորի Օձահալած, ձեռամբ Յոհանէսի վարդապետի և հետ | | | վասն անձին իւրոյ և յիշատակի[չ], որ բազում աշխատութեամբ կոր | | | և վշտաւք, և իմ յոյժ ց[անկացայ սմ՞]այ և առեալ զխնդի[ր | | | ք գրոցս անմխիթարելի սգի հնտ. (հանդիպեցմք) ի պ | | | անիրաւութեամբ հեծել տարեալ տէր երկրիս Սմ[բ]ատ անուն | | | ունգացեալ, և մեր ակն ունելով գալոյ խաղաղութեամբ ի մէջ գ | | |, զոր զլոց և զաղաղակ իմ և զազգականաց իմոց միայն տէրն գ[իտէ՞ | | | ութիւն մեր և զկսկիծ, զոր աէր Յիսուս գրեսցէ զնա ի գիրն կենաց և արքա[յութեանն արժա՞ն]իս արասցէ, և զձեզ աղաչեմ յիշել ի տէր բոլորիւ սրտիւ։

440 բ Այլ և ծնողաց իմոց և ազգականաց թողութիւն շնորհեսցէ տէր սխալանաց նոցա։ Այլ և զձեզ աղաչեմ, յիշման արժանի առնէք զհայրն իմ զխորիշխան, և զմայրն մի զՀանաթ, և զհօրեղբայրն իմ զԹորիս, և զմիւս հօրեղբայրն իմ զՀզարպէկ՝ փոխեցեալն ի Քրիստոս, այլ և փոխեցեալ ի սմին ամսի Բ.* (2) հօրեղբաւրորդիք իմ ի Քրիստոս՝ Թուխթամիշ և Թախշաիշ անուամբ, և այլ բազում, զի Բ. (2) քոյրք իմ ամսով մի յառաջ՝ Է. (7) տղեցով և գստերով մեռան, զի այսմ ամի մահ տարաժամ շարժեցաւ ի վերայ աշխարհի, զողայոց վերջք արար, որ բերանով չէ պատմելի, ի քսանէ, ի երեսնէ, ի յոնէ թէ մին տղ[այ] մնաց՝ ԺԵ. (15) տարոյ ի վեր, պակաս՝ մեռաւ, զոր աղաչեմ յիշման արժանի առնէք զննջեցեալսն մեր և աստուած զձեզ յիշէ։

Այլ և զիս Յոհանէս գրիչս և զեղբայրն իմ ի վաղուց հանգուցեալ Վելի անուամբ յիշման արժանի առնէք։

Արդ, վարդապետն մեր Գրիգոր բայբունապետ, որ հսկի յաթոռ վարդապետու[թեան] և աթոռակալութեան Սիւնեաց վիճակիս և բան իմաստութեան և քարոզութեան | | | ամենայ]ն աշխարհս Հայոց տարածեալ և բազում աշխատութեամբ և ջանիւք Հայոց ազգին լոյս բանից | | | և լինել, զի մինչ ի յայս ժամանակս ոչ կայր Քարոզագիրք մեզ, և սորա Բ. հատոր [Քարոզագ]իրք շինեալ, որ զտարին կատարէ և այլ տօնից կրկին և երեքկին և այլ [ևս] առաւել, զոր տէր Յիսուս ըստ աշխատանաց նորա և ըստ յուսոյն հատուցէ, ամէն։

| | | տիբէր աշխարհիս մեր Յուսուփ անուն թուրքման և այսմ ամէ | | | յաղթահարե՞աց] ճաղաթին, որ եկեալ ի վերայ սորա՝

* Բ.-ից հետո նկատվում է նաև մի այլ տառի հետք, որը նմանվում է Ե.-ի. դժվարանում ենք որոշել թի՞վ է այդ, թե ինչ որ բառի մաս։

թոռն Թամուրին կոչեցեալ | | | Աբու-Բաքր], և Յուսուփս տիրէ թագաւորութեան | | | ի թվականիս Հայոց ՊԾԶ. (1407)-ի, մարերի ամսոյն ի ԻԵ. (25), մայիսի ամսոյն Թ. (9).*

80

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4818

Հետ. ստացող՝ Դաւիթ

282 ա ...Արդ, ես Դաւիթս գնեցի զսուրբ աւետարանս ի հազար և ի հարիւր դրամ, ի հալալ արդեանց մերոց, ի թվ. ՊԾԶ. (1407)։ Թումէն և իւր եղբայրն զաւետարանս ծախեցին Դաւթին՝ Գորգոյ որդոյն։ Բահատինն, և Բրեհիմն, Հանաւն, Ումարն, և Թագիկն, և Սահակն, և Յոհանէս երէց վկա են։

81

ԱՒԵՏԱՐԱՆ

«Թորոս Աղբար», Բ, էջ 303—304, Կամախ, Թաղէոս առաքեալի վանք

Նվիրաբերող՝ Մովսէս երէց

վայր՝ Աւագ վանք

Առաջնորդութեամբն աստուծոյ ես՝ Մովսէս երէցս, եդի զսուրբ աւետարանս յԱւագ վանքն, ի յիշատակ ինձ և հաւրն իմոյ մղտեսի Ամիրպէկին, և ծնողին իմոյ Ասլան-Մելիքին, և երէցկնոջն Ուստիանէ, և որդւոյ իմոյ Անանիա դպրին, և ամենայն արեան մերձաւորաց իմոց անջնջելի յիշատակ...։ Ի թվ. ՊԾԶ. (1407) ...,

82

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ, ՎԱՐԴԱՆԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երևան 1181

Գրիչ՝ Յովանէս

77 բ Ի թուականիս Հայոց ՊԾԶ. (1407) գրեցաւ գանձս աստուածային, որ կոչի Երգ երգոց, որ է սուրբ սրբոց.

Ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի
Յովանիսի մտաց յոռի,
Ի խնդրոյ եղբօր մեր սիրելի,
Որ Խաչատուր անուն կոչի,

---

* Ողջ հիշատակարանը մաշված է, 440 թերթի աջ եզրը ներքևից՝ 5—6 տառի չափով պատռված է, որի պատճառով անընթեռնելի են Թուում մի շարք բառեր։ Թվականի հիշատակությամբ տողը, որն անչափ եղծված է, էջի ցածում ընդօրինակել է ձեռագրի նորոգող Աղուլեցի Պողոսը, 1780 թվականին։

Որ և խնդրող եղեր բանի,
Գանձի և անգին մարգարտի,
Քեզ ի տեառնէ հոգի շնորհի,
Գիտութեան և երկիւղի,
Տալով քեզ զգոյստ յամենայնի
Գնել ըստ բանին տէրունի,
Բայց դու յիշեա զբանն Յիսուսի,
Զոր է գրեալ յիւր մատենի
Իւր սիրելի աշակերտի՝
Գլուխ ամենայն պատուիրանի
Զսէրն դրել սերտ ի սրտի,
Եւ զայն անկեղծ, անխզելի,
Գու ընթերցիր զինքն ի յոճի
Եւ կատարեա գործով բարի,
Եւ զիս յիշեա ի սուրբ սեղանի,
Յորժամ լինիս տեառն առաջի,
Եւ քեզ նոյնն հատուսցի
Այժմ և յաւուրն ապագայի.
Եւ նմա փառք յամենայնի,
Անցեալն, յաժմուս և յապառնի։

Բ

Գրիչ՝ Յովսէփ

...Արժանաւորեաց տէր աստուած մեր զքահանայս զխաչատուր աստուածարուխ շնորհաց ...և ախմար գրչիս՝ սուտանուն քահանայիս Յովսէփի, որ միայն զանունս ունիմ և զգործս ոչ, որ ի յաչս մարդկան երևիմ գեղեցիկ, բայց յետոյ՝ գտյլ եմ յափշտակող։

83

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 918

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Երուսաղէմ

351 բ Կատարեցաւ Գիրք Հարցմանցս եռայմեծին Գրիգորի բաբունեացն պետի, Հայոց մեծ հռետորի...ձեռամբ յոգնայմեղ և անպիտան Կարապետ սուտանուն աբեղայի, ի յաստուածայկոխ և յերկնահանգէտ մայրաքաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ սուրբ Գողգոթայիս և աստուածընկալ սուրբ գերեզմանի, յորում ամի կացի անարժանս սպասաւոր և լուսարար այսմ երկրորդ երկնի, ըստ ներող և երկայնամիտ մարդասիրութեանն աստուծոյ ձեռնարկեցի այսմ համառաւտեալ աստուածայշունչ գտակի, նոր պարգեաց հոգոյն շնորհողի հայկազեանս տոհմի, ոչ թէ հմուտ գոլով գրչութեան արուեստի և կամ ուսեալ բնաւ, որպէս և յայտ է ի գործս, այլ տեսեալ իմ զհոգերուխ վտակս զայս յոյժ փափաքեցի սմայ և հայեցեալ տեսի, զի ոչ ուստէք գոյր հնար

ստանալ զսա, և կամ առն ճարտարի վասն իմ փոխարկել զսայ։ Ապայ,
հայցեալ իմ ի սուրբ և յաստուածընկալ գերեզմանէս, և ես ինձէն
ձեռնարկեալ գրեցի տխեղծ և դողդոջ մատամբս։ Արդ, յերես անգեալ
մոխրայթաւալ դիմօք աղաչեմ զդասս լուսերամ կրօնաւորաց և աշ-
352 ա խատասէր բանասիրաց, որք օգտիք ի սմանէ ‖ կամ օրինակէք յիշե-
ցէք զտարայկուսեալս մեղօք և մոլորեալս մտօք զԿարապետ աբե-
ղայս Վրացտանեցի, և զծնողս իմ՝ զհայրն իմ զՍտեփաննոս քահա-
նայ, և զմայր իմ զԽորմզ-խաթուն, և զխակայկատր եղբայրն իմ զԴաւիթ
դպիր՝ զվերայփոխեալսն առ Քրիստոս, և զքոյրսն իմ զԱմեն-Տիկինն և
զՔնքուշն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն և զերախտաւորս՝ զկեն-
դանիս և զհանգուցեալսն։ Եւ որք սրտի մտօք յիշէք զմեզ և դուք
յիշեսջիք ողորմութեամբ ի պարգեատուէն բարեա[ց, զի մե՞]ծ ջան
մեր և յոյս այս էր, [այ]լ յիշատակ չունիմ յաշխարհի քան զայս
գիրքս, որ ձեր միջնորդութեամբ կու հայցէ ողորմութիւն յտոատ
պարգեողէն։ Եւ թէպէտ գիրս և արուեստս անհաւանելի է, բայց բանքն
յոյժ պիտանի է, և ի մէջ սուրբ Յարութեանս, ի դրան աստուածըն-
կալ սուրբ գերե[զ]մանիս գրեալ է։

Կատարեցաւ ի թվ. ՊԾԶ. (1407), ի փառս Քրիստոսի աստուծոյ
մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն։

84

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԴԺՈՒԱՐԻՄԱՑ ԲԱՆԻՑ Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ՅՈԲԱՑ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երևան 1115

Հեղինակ՝ Գրիգոր Տաթևացի

Եւ ժողովողն մեկնութեանս է Վանական *վարդապետն՝ աշակերտ*
Մխիթար *վարդապետի, որ* Գոշ *անուանի, և է սա վարդապետն* Վարդա-
123 բ նայ, և Վարդանն՝ ‖ Ներսէսի, *և նա* Եսայեայ *վարժապետին, որ և*
Յոհաննու Որոտնեցւոյ՝ *լուսաւորչին մերոյ, որոց յիշատակն աւրհնու-*
թեամբ եղիցի, ամէն։

Արդ, ես վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ, Գրիգոր *մականուն խնդրող բանի, որ ի վաղուց հետէ փափագէի բոլոր մեկնութեանս Յոբայ։ Եւ ի թուականութեանս Հայոց ՊԾԷ. (1408) ամի եկեալ մեր յերկիրս* Քաջբերունի, *և ձմերեալ ի հրեշտակաբնակ վանքս* Մեծոփոյ, *ի սպասու դամբարանաց վարժապետացն սրբոց։ Եւ ընթերցմամբ հաւաքեցի զդժուարալոյծ բանս Յոբայ և զմեկնչաց նորա, այլ և սակաւ ինչ լուծումն* Առիստակիսի *և* Գէորգեայ *ի խրատս գրչութեան, ընդ նմին և զքաղուածոյ մեկնութեանն Յովհաննու աւետարանչի, և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղւոյս ուսումնասէր անձանց՝ ուղղադաւան մտաց, և ի գլուխս բաժանելով վասն մտաւոր տեսութեան և ի զարդ ուսման ի պէտս բեմասացութեան և ի խրատս զբուցատրութեան։*

Այդ, եթէ գտցի ինչ ի սմա ըստ հաճոյից խնդրողաց՝ տեառն շնորհք, և թէ ոչ՝ և այնպէս շնորհք, և պակասն փոքրընկալ անաւթոյս մերոյ ներեսցի։

Որ և լուսաւոր վարժապետին մերոյ Յովհաննու Որոտնեցւոյ *ի սմա մասն բարեաց յիշեալ եղիցի, և մեզ աշխատողաց բազում և անթիւ սխալանաց թողութիւն յեղբայրասէր կամաց ձերոց հայցեսցի։ Որ և մեզ յուսողաց և ձեզ յիշողաց ողորմութիւն տեառն հասարակեսցի, ամէն։*

*Այլ և աղաչեմ զմտերիմ գաղափարաւղս գրել զսակաւ յիշատակս մեր, և դուք գրեալ լիջիք ի գիրն կենացն յաւիտենից, ամէն, եղիցի։**

---

* *Ձեռագիրը եթե ինքնագիր չէ, ապա ընդօրինակված է անմիջապես հեղինակի օրինակից, աշխատության գրության կամ հաջորդ՝ 1409 թվականին։*

172 բ էջում պահպանվել է մի հիշատակագրություն՝ «Գրեցաւ ի թվիս ՊԾԸ. (1409), Յունիս ԺԴ. (14)», որը սակայն վերաբերում է ձեռագրի Բ. մասին, ուր գտնվում են քերականագիտական մի քանի երկեր։

85

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 7592

Գրիչ՝ Յակոբ Ասպիսըեկցի
վայր՝ Տաթև

ա

115 բ Եւ ես Յակոբ անուամբ պետի,
Օրինաւոր գործով թերի,
Մականունս Ասպիսըեկցի,
Այրի հոգի ու ողորմելի,
Ի դամբարանէ գառագեղի,
Նսեմացեալ երեկոի,
Բախեմ զդուռն ողորմածին
Միջնորդութեամբ ընթերցողիդ,
Եւ հանդիպող այս կտակի,
Ներածութեամբ սոյն սուրբ թերի,
Զի տացես զտէր ողորմին
Զնկանակ երիս հացին,
Խոստովանել երիս անձինս
Անցեալ մեղացն և ներկայիս,
Որպէս զցաւք առաւօտին,
Ի յհոգիս իմ ծարաւի,
Կամ զսառն ամարայնի
Ջայն աւետեաց ինձ լսելի,
Որք պաղատիք վասն իմ առ տէր
Ի թողութիւն մեղաւորիս,
Ըստ իս և ձեզ մասն լիցի
Մաղթողական բան նուիրիս։

Եւ զայլ ամենայն արեանառու մերձաւորսն և զերախտաւորսն առհասարակ, որք ձեռնատուք եղեն ի հոգևորս և ի մարմնաւորս, աստուած ողորմի նոցայ, ամէն, և որոց զամէն ասեն։

Գրեցաւ ի վանքս զՏաթև, յերկրիս Սունեաց, առ ոտս հանճարեղ և բանիբուն վարդապետի Գրիգորի, և յիշխանութեան պարոն Սըմբատի որդոյ Իվանէիկի, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն։

Թիւն ՊԾԷ. (1408), յայս ամի Ղարա-Յուսուֆ էառ զԱտրպատական՝ Թավրէզ։

բ

28 ր Աղաչեմ զհանդիպողդ յիշեա առ Քրիստոս զՅակոբ գծողս և անմեղադիր լեր, զի անհմուտ էի գործոյս, վասն սիրոյ արարչի։

գ

128 ա Ով զմեզ անհտնգիստ արար Քրիստոս յիւր միւսանգամ գալուստն անհանգիստ առնէ զինքն։*

* Այսպիսի մանր հիշատակագրություններ կան նաև 58ա, 59բ և այլ էջերում։

86

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան 763

Գրիչ՝ Արիստակէս
վայր՝ Աւագ վանք

315 ա ... Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսումն ի լաւ
և յընտիր աւրինակէ, որ էր հարմարած առաջին երաժըշտապետացն
սուրբ ուխտին Արքակաղնոյն, զոր էր բազում աշխատութեամբ աւր-
ըստաւրէ աւուրն դասն գրած, լի ամենայն արհեստիւ, զոր առեալ
315 բ զնոյն աւրինա || կեցի ձեռամբ իմոյ՝ անիմաստ գրչի և յոյժ մե-
ղապարտի Արիստակիսի, ի մեծափառ և ի հռչակաւոր անապատիս,
որ կոչի Աւագ վանք, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնին, և
սրբոյ Կարապետին, և սրբոց Առաքելոցն, և ի յառաջնորդութեան
սուրբ ուխտիս գերիմաստ քաջ հռետորին և տիեզերալոյս վարդա-
316 ա պետին մեծին Գէորգեա, բազմ || երախտ սուրբ հաւրն իմոյ և վար-
ժապետին։

Զոր ի յայժմուս սա ընդրեցաւ,
Որ յընթանուրբս ծանուցաւ,
Ծաղաց ի ծագս երևեցաւ,
Պարծանք Հայոց ազգիս եղաւ,
Շնորհաւք փրկչին սոյն յարգեցաւ,
Որ և հոգւոյն աման գտաւ։

Արդ, աղաչեմ զամենեսեան, ովք հանդիպիք սմա ուսանելով և
316 բ կամ աւրինակելով, յիշեսջիք զվերոգրեալս, նա || և զիս ես, և
զծնաւղսն իմ, և զեղբայրսն, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկեն-
դանիս և զհանգուցեալսն ի Քրիստոս, զոր և աղաչեմ զձեզ, զի հայ-
ցեսջիք ի Քրիստոսէ կենդանեացն զբարիոք կենցաղավարութիւն՝
ի կամս տեառն գնալ, և ննջեցելոցն խնդրելով զթողութիւն յանցա-
նաց։ Եւ անմեղադիր լինել մեզ, զի այսքան էր կար մեր, և թէ լի-
317 ա նի պակաս կամ աւելի, զպակ || ասն դուք լցէք և զաւելորդն ի բաց
հանէք և թողէք զմեզ առանց բամբասանաց, զի ոչ եթէ ըստ հմտու-
թեան արհեստիս փութացա զսա <ո> քերդել, ոչ, այլ ի կարեկցու-
թիւն հոգևոր և համշիրակ եղբաւրն մերոյ, նորընծա և շնորհազարդ
ծաղկին և սպասաւորաւղ զանգին մարգարտին, սրբասնեալ կրաւնաւո-
317 բ րին Աւետծքին, զոր տէր աստուած վայել || եալ տացէ զսա նմայ՝
խաղաղական կենաւք և յամերամ ժամանակաւ, խորին ծերութեամբ։
Այլ և յիշեսջիք զբազմերախտ և զհոգևոր ծնաւղն սորին՝ զերաժըշտա-
պետն մեր, զպատուելի և զհեզահոգի զսրբասնեալ կրաւնաւորն՝ զտէր
Սաճակ սպասաւոր բանի, իւրայաւքն հանդերձ, որ զաւրինակն պար-
318 ա գևեաց մեզ երկրորդ անգամ, և այս երրորդ, զոր շնորհ || եաց յա-
ղագս հոգևոր զաւակին իւրոյ Աւետիքին՝ շնորհազարդ կրաւնաւորին,
և ետ զսա մեզ գրել առ ի վայելումն անձանց իւրեանց և ամենայն
արեան մերձաւորաց։

Այլ և աղաչեմ զիս յիշեաջիք, զամենայն երախտաւորսն իմ՝ զհոգևորսն և զմարմնաւորսն, ընդ դրելոցս նաև զիս ևս՝ զանիմաստ ԼՇԿՋՄԿՃՁՄՆԺՁՀՄՄ,* զհայր մեր, որ յերկինս ասելով վասն ինձ՝ բա[զ]մամեղիս։

318 բ Բայց եղև գրաւ սորա ի յութհարիւր թվականի և յիսուն և եւթն յաւելարդի (1408), ի յամսեանն մայիսի, յաւր համբարձման Քրիստոսի, զոր և մեք [և] դուք լինիմք արժանի տեսանել զպայծառութիւն այն հրաշալի, ամէն, ամէն և եղիցի։

Ո՜հ, ճհ դառն ժամանակիս, դարձեալ աղաչեմ, զի անմեղադիր լինիցիք, զի շաղգամով մալէզն** և կորեկէ հաթն օգնական եղև մեզ
319 ա ի գրելն։ || Է՜, վայ ու եղուկ ասեմ հազար բերան, երկոյտասանցս և Ն. աւելորդօքս կամ ի դեգերման և խիստ փոշիման, վա՜յ, չիք ունամ յառաջիկան մինչ ի հասանելն իմ կէտ կոչման, | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |***

Բ

141 բ ... Նայ և դծաղկողս զՎարդանս յիշեա։

87

ԱՒԵՏԱՐԱՆ

«Արարատ», 1905 թ. էջ 716, Մշոյ ս. Կարապետ

Գերութիւնից ազատող՝ Դաւիթ Մշեցի
վայր՝ Մուշ

... Ես նուաստ Մշեցի Դաւիթ երէցս ի դառն ժամանակին, որ այլազգիքն նեղէին զազգս քրիստոնէից, ես առաւել զհոչակաւոր ուխտն զսուրբ Կարապետ Տարօնոյ. և նոքա ի չքաւորութենէ՝ բերեալ գրաւէին այլազգեաց։ Եւ յիշեցի թէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, և ընտանեաց նորա յԵրուսաղէմ, և իմ ի հալալ արդեանց տվի Մ. (200) դեկան, և թափեցի զսուրբ աւետարանս, և վերստին դարձուցի ի ս. Կարապետ յիշատակ ինձ, և նախնեաց իմոց, և զաւակին իմոյ Յովանէսին, և կողակցի, և այլ ամենայն արեան մերձաւորաց։ Որք ընթեռնույք զԴաւիթ քահանայս յիշեցէք ի Քրիստոս, և որ յիշէ՝ ինքն յիշեալ լիջի առ Քրիստոս, ամէն։ Ի թվ. Հայոց ՊԾԷ. (1408), որ թափեցի։

---

* Փոխարինողիր ծածկագրով կարդացվում է «գրողս զՌըստակէսս», այսպես՝ Լ→Գ (տասնավորի փոխարեն՝ միավոր), Շ→Ր (հարյուրավորի փոխարեն՝ հազարավոր), Կ→Ո (տասնավորի փխ. հարյուրավոր), Ջ→Ղ (հարյուր. փխ. տասն.) Մ→Ս, Կ→Զ, ;Ճ→Ռ, Ջ→Ը, Մ→Ս, Ն→Տ, Ժ→Ա, Ջ→Կ, Հ→Է, Մ→Ս, Մ→Ս։

** Ալյուրով պատրաստված կերակուր։

*** Գծակետային ծածկագրով կարդացվում է «Ռըստակէսս»։

88

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 5328

Ծաղկող՝ Գրիգոր Տերենց Խլաթեցի*
վայր՝ Ցիպնայ վանք

[Այդ, որք և կամիցին ի խնդիր գիւտի իմաստից ընթա-
նալ մարմնական և կամ հոգեկան մասանց՝ յանձին բարձեալ կրիցեն
զամենայն տաժանմունս, զի թերևս հասանիցեն ի տենչանս փափա-
քանացն որում բաղձանայցեն, որպէս և է տեսանել յաստուածային
անձիս մերոց առաջնորդացն, որ զամենայն կիրս մարմնական գնա-
289 ա ցից ի բաց ընկեցին առ նըպատակ վերին կոչմանն ընթանալով] հա-
սանել առ որ ցանկային ի բազում ժամանակաց, և զամենայն ժամա-
նակս կենաց իւրեանց առ նա համբարձեալ զուշ մտաց՝ բեւեռեալք ի սէր
նորա և կարգեալ հաստատեցին առ ի պայծառութիւն նոր Սիոնի տաւնս
և կանոնադրութիւնս ժամուց և տաւթից՝ առ ի ձգել զամենեսեան ի սէր
աստուածային պաշտաման՝ է զի ներբողական գովասանութեամբ զար-
դարեցին զմայր մեր զսուրբ եկեղեցի, և երբեմն ի ձայն սրկեալ երգէին
զերգս աստուածային և ուսուցանէին հարք որդւոց և վարդապետք
աշակերտաց, զի մի մոռացումն լինիցին երախտեաց աստուածատուր
պարգևաց արարչին մերոյ աստուծոյ։ Ցայս փափագ և ես՝ տրուպս ի
կարգաւորաց և յետինս ի բանասիրաց՝ անուամբս Գրիգոր պիտակաբար, և
թըմբրեալս ծուլութեամբ ի տիղմս մեղաց և անընդոստ մըրափած, մեծաւ
տաժանմամբ ի հոգս անկեալ ժողովեցի զպիտանի գանձերս և եդի կար-

---

* Դժվար է հաստատապես որոշել, թե որ թվականին է ավարտել Գրիգոր Խլաթեցին ԺԵ—ԺԷ դարերում այնքան տարածված «Գանձարան» կոչվող ժողովածուի հավաքման, խմբագրման ու լրացման աշխատանքները։

Սույն հիշատակարանում մանրամասնորեն խոսվում է ժողովածուի նպատակների ու կազմության պարագաների մասին։ Ուստի հնարավոր է ենթադրել, որ այս հիշատակարանը հենց Գրիգոր Խլաթեցու «Գանձարանի» ինքնագիր օրինակի հիշատակարանն է, և որ այդ ժողովածուն պատրաստվել է Թովմա Մեծոփեցու և նրա աշակերտների՝ Մաթէոսի, Պետրոսի և Ստեփանոսի խնդրանքով։ Սակայն կարելի է կարծել նաև, որ վերոհիշյալ անձինք խնդրել են Գր. Խլաթեցուն ընդօրինակել արդեն գոյություն ունեցող ու ճանաչված ժողովածուն, նրա խմբագրումից տարիներ հետո։ Անկասկած է սակայն, որ այս հիշատակարանը գրվել է Ղարա-Յուսուֆի և նրա որդիների իշխանության ժամանակ («յամս թագաւորութեան նետողաց Ղարա-Ուսուֆին և որդոց նորին»), ուրեմն 1408—1420 թթ. միջոցին։

Հիշատակարանը տեղադրում ենք 1408-ի թվաշարքում նկատի ունենալով նաև հետևյալը։ Նույն այս թվականին, Ցիպնայի վանքում, «առ ոտս գերիմաստ և երանաշնորհ և արդիւնական հեռետորի Գրիգոր վարդապետի [Խլաթեցւոյ]», Յովանէս անունով մի գրիչ ընդօրինակել է Խլաթեցու խմբագրած նույն այս «Գանձարանը», և իր հիշատակարանի սկզբի մասը բառացիորեն արտագրել է այս հիշատակարանից (տես հաջորդ հիշատակարանը)։ Պետք է ենթադրել, ուստի, որ «Գանձարան» ժողովածուն իր այս հիշատակարանով արդեն գոյություն ուներ 1408 թվականին։

Յովանէսի հիշատակարանի համապատասխան տողերը հնարավորություն են տալիս նաև վերականգնելու այս հիշատակարանի սկզբի մասը, որն այժմ բացակայում է ձեռագրից։

գաւ ի միում տըփի զասացեալս ի հոգեկիր արանց յառաջնոցն և
յետնոցս, որք արժանի եղեն պարգեւաց հոգոյն սրբոյ և ասացին
զանազան ոճով ի կերպ և ի գոյնս ձայնի, ի կարգ և ի շարս բանի՝
զանազան եղանակաւ, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և ի զըւար-
ճութիւն մանկանց նոր Սիովնի, որ աւըստաւըէ գեղգեղեալ փոփո-
խին ի փառս աստուծոյ և ի պատիւ սըրոց նորա։

Արդ, այսոցիկ ցանկացող եղեալ բարեմիտ և սրբասէր վարդապետն
Թու[մա] և իւր մտերիմ և համակամ աշակերտքն՝ Մաթեոս, Պետրոս և
Ստեփանոսն, և եաուն գրել զսա եռափափագ և սիրատարփ ոգով։

Եւ ես՝ անարգս Գր[իգոր], զտկարութիւն անձին մոռացեալ, սկըսայ
և յաւարտ հանի նոցին աղօթիւք և բարի կամաւք ստացողաց սոր[ա]։

289 բ Եւ արդ, գրեցաւ սա ի վա‼նս Ցիպնայ, ընդ հովանեաւ ամենա-
զաւր սուրբ Նշանի և կաթուղիկեայ սուրբ Ստեփանոսի, հանդէպ սըր-
բարար ծովուն, ուր մանր ձկունքն ելանեն, յամս թագաւորութեան
ազգին նետողաց Ղարա-Ուսուֆին և որդոց նորին։

Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ և կամ աւգտութեամբ
ինչ իւիք, յիշեցէք ի միտս բարիս և ի պատկանաւոր խընդրւածս
զվարդապետն Թումա, և զմտերիմ եղբարս նորա՝ զորբակրաւն աբե-
ղայսն՝ զՄաթէոսն, զՊետրոսն և զՍտեփանոս՝ քըւեբորդի վարդապե-
տին։ Նաև զթարմատար մեղսամած գրիչս Գրիգոր, և զծնողսն իմ, և
զուսուցիչսըն։ Եւ որք յիշէք զմեզ յիշեալ լիջիք և դուք ի Քրիս-
տոսէ աստուծոյ մերոյ։

89

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 3540

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Ցիպնայ վանք

ա

257 ա Փառք ... որ ետ կարողութիւն տկար ոգոյ Յովանիսի սուտա-
նուն կրաւնաւորի, որ անուամբս միայն եմ ձեւացեալ և ոչ գործովս,
ըստ այնմ, որ ասէ՝ Մարմնովս արտաքուստ պճնիմ և անձամբս երփ-
նիւ ճային ճանաչիմ, հասանել յաւարտ լուսայիզձ տառիս, յամի ՊԾԷ.
(1408) թըւականիս մերում։

Արդ, որք և կամիցին ի խընդիր գիւտի իմաստից ընթանալ
մարմնական և կամ հոգեկան մասանց, յանձին բարձեալ կրիցեն
զամենայն տաժանմունս, զի թերևս հասանիցեն ի տենչանս փափա-
257 բ քանացն, որում բաղձանայցեն...։ Ցայս փափագ և ես տըուպս ի կար-
գաւորաց և անարժանս յարժանաւորաց Յովանէս ազազուն և փցուն
գրիչ՝ մեծաւ տաժանմամբ և եռատարփ յաւժարմամբ գրեցի զմար-
գարտաշար բանս իմաստուն և հոգեկիր արանց ի վարժումն կրըթու-
թեան և ի խըատ ուսման մանկանց Սիոնի, ի սփ[ոփ]անս մըտաց բա-

նասիլյաց և տաւնասիրաց անձանց, մանաւանդ ի սէր սիրելեաց աստուծոյ և ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ։

Եւ արդ, գրեցաւ սա ի գաւառիս ի վանք Ցիպնայ, ընդ հովանեաւ ամենազաւր սուրբ Նշանիս, և սուրբ Ստեփանոսի Նախավկայիս, և այլ բազմագումար սրբոցս, որ աստ կան հաւաքեալ, և առ ոտս գերիմաստ և երանաշնորհ և արդիւնական հեռետորիս Գրիգոր վարդապետիս, ի փառս Քրիստոսի աստուծոյ։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիքդ այսմ գանձարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթըս ձեր զվերոյասացեալ վարդապետն Գրիգոր և զամենայն արեան մերձաւորսն իւր, ամէն։ Դարձեալ
.258 ա աղաչեմ զլուսափայլ սրբոյ Սիոնի մանկունքդ, || որք հանդիպիք այսմ աստուածային տառիս յիշեցէք ի միտս բարիս զհարազատ եղբայրս իմ զՎարդան զ[խաչ]ընդուս կրաւնաւորս, որ բազում փափաքանաւք և ըղձմամբ սրտիւ ետ գրել զսա ի վայելումն անձ[ին] իւրոյ և յիշատակ բարի ծնաւղաց մերոց Պաւղոսի և Խութլի, և հօրեղբօրն մեր Մաթէոսի, և ամենայն արեան մերձաւորաց մերոց, ամէն։

Այլ և զորովայնէ ընտրեալն և նախ քան զարտաքսողութիւնն զսրբեալն և զմաքրեալն՝ զԹուիթ սրբասէր կրաւնաւորն, և զծնաւղսն իւր զԹումայ քահանայն, և զմայրն, և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք...։

Բ

.34 ա Արդ, ես վերջինս ի մանկունս եկեղեցւոյ Յովանէս կրօնաւոր, որ անուամբս միայն եմ ձեւացեալ և ոչ գործով, բստ այնմ որ ասէ՝ Մարթինովս արտաքուստ պճնիմ և անձամբս երփիւ ճային ճանաչիմ։ Արդ, ստացա զլուսայիղձ տառս յիշատակ բարի հոգւոյ իմոյ, և ծնողաց իմոց Ամիրին, և հոգևոր հաւրն Մարտիրոսին, և մաւր իմոյ Մամխաթունին, և եղբարց իմոց Ցառուխշին և Խդրշին, և քերց իմոց Ատամելիքին, Նաղմաթին, Ըռաղնին, և Ստեփանոսին՝ փեսային, և այլ ամենայն արեան մերձաւորաց մերոց։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ գանձարանիս եղանակելով կամ աւրինակելով յիշեցէք ի մաքրափայլ և յերկնաբացիկ յաղաւթս ձեր զվերոյգրեալքս ի սմա....։

90

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 6399

Գրավական վերցնող՝ Խաչատուր

1 բ Զտյս Արարածոց մեկնիչս ես՝ Խաչատուր ս[արկաւա]գ գրօկան առի սուրբ Երրորդութեան [եկեղեցւոյ] Աստուածատուր իրիցվէն։

ՊԾԷ. (1408) տէր, Օգսէնտս վկայ, տէր Եսային [վկայ]։

ՊԾԸ 1409

91

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երևան 921

Գրիչ՝ Սարգիս։
վայր՝ Մեծոփայ վանք։

ա

367բ ...Արդ, գրեցաւ աստուածային այս մատեան ի յաւարտումն կատարման եւթնևտասներրեակ յոբելենին և յաւելեալ ութերորդ ամի յաբեթական տոմարի, որ է ՊԾԸ. (1409)։ Եւ արդ, փոքր մի համառօտեցից զսկիզբն գրոցս, թէ ուր գրեցաւ և զիարդ։ Վասն զի գնացաք մեք ի ծառայութիւն և յաշակերտութիւն մեծ և յազթող ե քաջ ախոյանին հաւատոյ սուրբ րաբունապետին Գրիգորի՝ անձինք ԺԲ. (12). և ոչ հանդիպեցաւ մեզ ըստ կամաց մեր, վասն ոչ դիպելոյ ժամանակին. և ոմանք ի մեծագոյն եղբարց իմոց անդ ստացան զսուրբ գիրս զայս։ Եւ արդ, անտ եղև սկիզբն գրոցս, և գրեցաւ Գ. հատորն ի վանք Ստաթէի. եւ անտի քա[յ]քայեալ ցրուեցաք, և եկեալ յերկիրս Քաջբերունոյ, որ կոչի Արճէշ, ի վանքս Սուհառ, որ կոչի խառաբասա. եւ աստ գրեցաւ Բ. հատոր գրոցս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ շիրմի բազմերախտ հօրս մերո և մեծ հռետորին Սարգսի։ Եւ յազդմանէ հոգւոյն սրբոյ վասն իւիք ինչ պատճառի եկն մեծ վարդապետն և երկրորդ լուսաւորիչն յերկիրս Քաջբերունի, ի սուրբ վանս Մեծոփոյ, և վասն աղաչանաց մերոց, զի ժողովեցան առ նա ամենեքեան՝ քահանայք և տանուտէրք, և լալով և աղաչելով արգելեցին, և ասաց գաս՝ զմեծ Նահատակն Յոբ, և զճրատն գրչութեան, և զաստուածաբան աւետարանն Յոհաննու, և արար այլ ևս լուսաւոր բացայայտութիւն սոցա։ Եւ են ժողովեալ առ ոտս սորա անձինք ՃԿ. (160) աբեղայ և Ը. (8) վարդապետ և այլ միաբանեցունք։ Եւ տրտմութիւն մեր զոր յառաջուստ ունէաք՝ յուրախութիւն եղև, և զոր յայնժամ ցրուեցաք՝ այժմ ժողովեցաք, և այլ ևս աւելի։ Եւ աստ եղև կատարումն՝ ընդ հովանեաւ երկնահանգէտ և Նորաշէն, մեծարգոյ ուխտիս Մեծոփոյ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Յակոբիս, և սուրբ վարդապետի գերեզմանացս, առ ոտս մեծ վարժապետի, քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի՝ արթուն անուն Գրիգորի, արարողի այսմ սոփերի արգասաւորի, որ իբր զարեգակն պայծառ փայլէ ի մէջ Հայաստանեայց եկեղեցոյ, և լուսաւորէ իմաստութեամբ և գիտութեամբ առհասարակ զամենեսեան՝ զմերձաւորս և զհեռաւորս, և կարկէ զբերանս երկաբնակ։

հերձուածողաց։ Զոր և տացէ զսա տէր աստուած եկեղեցոյ իւրում եր-
368 ա կայն աւուրբք՝ մինչ ի խորին ծերութիւն, ամէն։ Եւ ի խան || ութեան պարոն Ուսֆին: Ձեռամբ անարհեստ և անիմաստ, սխալագիր գրչի, ամենավերջ և նուաստ ոգի անձին Սարգսի, ըստ յօժարութեան կամաց և ոչ ըստ գործոց հոմանուն անուամբ և ոչ փաղանուն գրոց աշակերտի, զոր ես ինձէն ստաց[այ] զսա դատախազ՝ տարտամ առողս տաղանդին, ի յիշատակ բարի իմում անձին հիքականի, զի եմ լըցեալ բազմազան մեղօք, և որոց գթասցին ի կեանս մեր։ Այլ և հօրն իմ Մարտիրոսի, և հօրեղբօրն իմ Կիրակոսի, և մօր իմոյ Թամքաի, և հոգևոր մօր իմոյ Զըմրուքի, նաև քեռոյն իմոյ Բախշաիշի, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և հօրաքեոց իմ Խաթունի և Զուխարի, և մօրքվեր իմոյ Մարքի, և հօրքվերորդոյ իմոյ Յովանիսի, և ամենայն արեան մերձաւորի իմոյ, ամէն։ Նա և հաւատարիմ և երկիւղած աստուծոյ պարոն Գորգի և ամուսնոյ իւրոյ Խաթունի, որ սակաւ աւուրս հանգաք առ նոսա, նաև արժանեացն աւրհնութեան աստուածաշնորհ և երախտաւոր վարժապետացն մերոց՝ Սարգսի և Վարդանի, այլև զիս՝ զախմարս և զյետինս, որ ոչ եմ ի կարգի եղբարց իմոց, այլ անհամեմատ նոցա և համեմատեմ զիս ընդ սոսա, այլ Թէպէտ ոչ եմ ի կարգի նոցա, այլ յիշեմ զիս ընդ նոսա, որ են աւագ և երէց ամենայն իրօք ուսումնասիրեալ անձանցս՝ Թումայի, Մկրտչի,* և Ղազարի, և Մելքիսէքի, և երկու Մկրտչի, և միւս Թումայի...:

Եւ սխալանացն և անարուեստ գրոյս մի մեղադրէք, զի կար մեր այս էր, մանաւանդ յիշել աղաչեմ զվերոյասացեալ և զսիրելի եղբայրս իմ զՂազար՝ գողջամիտ և զուշիմ աշակերտեալ բանին կենաց, որ գեղեցիկ կազմեաց զգիրքս զայս։

Բ

259ա Զտարտամս ի բարեաց գործոց և զվարանեալս ի յամէն կողմանց՝ զմեղուցեալ գծողս զՍարգիս Թափանականս, ո՜վ սուրբ եղբարք, յիշեցէք ի զենել գառն և ի յօրհնեալ բաժակն։ Եւ զծնօղսն մեր՝ զհանգուցեալսն ի Քրիստոս։ Այլ և զհայրն զՄարտիրոս, և զհօրեղբայրն իմ զԿիրակոս, որ պատուհասամահ եղև, և զմայրն իմ զԹամքա, ընդ նոսին և զհոգևոր մայրն իմ Զմրուք, որ յայսմ ամի արեգի ԺԴ. (14) փոխեցաւ ի Քրիստոս, և զայլ արեան մերձաւորսն իմ առհասարակ յիշեցէք ի Քրիստոս...։

---

* Հավանաբար այս Մկրտիչի գրչին է պատկանում Բաքվի Վ. Ի. Լենինի անվան Կենտրոնական Գրադարանի հայկական բաժնի № 1 ձեռագրի միջին մասը, որի բովանդակությունն է Գր. Տաթևացու Քարոզգիրքը։ Քարոզներից մեկի վերջում Մկրտիչը թողել է հետևյալ անթվական հիշատակագրությունը. «Ի Մեհեկի ԺԵ. զմեծ բարունապետն (խոսքը, անշուշտ, Տաթևացու մասին է) ի սուրբ ուխտէս Մեծոփու կու տանէին ի Տարև, և մեծ տրտմութիւնք եհաս մեծի և փոքու, այլ ողորմութիւնն աստուծոյ եհաս յօգնութիւն, Յոհանէս վարդապետն երեր գրերթաւադն և դքրիստոնեայ տանուտարքն ամենայն և արգելեց, և եղև ուրախութիւն մեծ վարդապետաց և աշակերտացս ամենեցուն։ Յիշման արժանի արէք զուստանունս Մկրտիչ»։

Ամենայն հավանականությամբ այդ հիշատակագրությունը նույնպես 1409 թվականից է։

92

ՄԱՇՏՈՑ

Երևան 962

381բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զվերջին ստացող սուրբ մաշթոցիս զԹումայ ըրաբունայպետ վարդապետն, որ առեալ ի հալալ ինչից իւրոց ետ ի դուռն Մեծոփայ սուրբ Աստուածածնին. լաւ պահողն աւրհնին ի յաստուծոյ և ամենայն սրբոց։ Թվին ՊԾԸ. (1409)։

93

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 7629

39բ Ո՜հ, ո՜հ, ո՜հ, ձայն լալոյ առի և ձայն սգոյ և ողբալոյ. ի դեկտեմբեր ամսոյ ԺԱ. (11) զտէր Աւետիքն նահատակեցին. մեր ազգիս արեգակն էր և խաւարեցաւ այսօր։ Եւ այս բանս եղև ի թվիս ՊԾԸ. (1409), պատկեր աւրն չորեքշաբաթի։ Զապիրատ գրչակս յիշեսջիք, որ զգիրքս գրեցի ի վայելումն զաւակին իմոյ՝ Յոհաննիսին։

94

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 137. այսուհ, 293—295, Մոկսի քաղաքի Թաղի Երից Խորան եկ. 15

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Մոկս, ի գիւղն Կագթանց

...Զոր և փափաքեաց մեծահաւատն և սիրողն սրբութեանց Թադէոս քահանայն՝ առաքինութեան սրբոց և փառաց նոցա. այլ և տեսեալ զգառն ժամանակս, զի պահանջումն անաւրինաց խստանայ ի վերայ քրիստոնէից, և միշտ և հանապազ ի հոսման և ի ծորման է աշխարհ ամենայն, և ոչ երբեք հանդիպի դադարման. և եռես զի ինչք պակասեն, ստացուածք յափշտակին՝ ստացաւ զաստուածունակ աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց՝ հօրն որ Վարդան կոչի, և մօրն իւրոյ Թամարա, այլև որդոց իւրոց Աստուածատրոյ, որ տարաժամ հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս, և Յոհաննէս սարկաւագին, որ ժառանգելոց է զսա, զոր և վայել[ել] տացէ սմա Քրիստոս, և քերցն իւրոց՝ Մինասին և Նազխաթունին, և եղբարցն իւրոց՝ փոխեցելոց առ Քրիստոս աստուած՝ Ղուկասին և Հէրապետին, և ամենայն արեան մերձաւորացն։

Արդ, որք հանդիպիք այսմ աստուածախումբ տառիս, յիշեցէք ի Քրիստոս զԹադէոս քահանայն և զկենակիցն իւր...։

Եւ արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ գրչի Յոհանիսի, ի գաւառ Թրակա, որ Մոկս կոչի, ի գեղն Կագթանց, ընդ հովանեաւ սրբոյն

Թումայի առաքելոյն։ Աչն անեղական պահապան լինի նոցա և ողոր-մեսցի ամենայն ննջեցելոցն նոցա, ամէն, զի յայս դառն և ի նեղ տարիս զմեզ կերակրեցին։ Քրիստոս աստուած զնոսա կերակրէ իւր անմահական հացիւն։

Այլ յիշեցէք ի Քրիստոս զանպիտան գրիչս Յոհանէս սուտանուն քահանայ, և ծնողն իմ՝ զՅակոբ և զՄինաս, և զեղբարսն իմ զՍարգիս և զՄարաիրոս քահանայ, և զհաւրեղբօրորդին իմ զՊետրոս քահանայ, և ծնաւղսն իւր զԹումա և զԳոհար, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

Դարձեալ, կրկին մաղթանաւք աղաչեմ զոխրողքըդ աստուածա-յին տառիս յիշել յերկնարացիկ յաղաւթս ձեր զԹադէոս քահանայ, զի որպէս զաղքատ շրջի ի դրունս ողորմածացդ, զի դուք յարարչէն խնդրէք զթողութիւն մեղաց մերոց, և ծնողաց իւրոց Վարդանէ և Թա-մարա, և ամենայն արեան մերձաւորացն, և որ սրտի մտօք և անբեկ բառով աստուած-ողորմի ասէ՝ աստուած նմա ողորմեսցի, ամէն։

Գրեցաւ ի թւականիս Հայոց ՊԾԸ. (1409), ի ընտիր և ի ստոյգ օրինակէ կիլիկեցւոց, զի թէպէտ և գիրս խոշոր է, բայց բանիւ ճոխ է, և դուք անմեղադիր լերուք, զի կտր մեր այս էր....

95

ԱՒԵՏԱՐԱՆ

ՀՑՎ 235, սյուն. 559—500, Մոկսի Անճըղանց թաղի ս. Աստուածածնի եկ. 2

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Մոկք

...Արդ, կատարեցաւ աստուածախօս և տիեզերաքարոզ աւետա-րանս ի յերկիր որ Մոզս կոչի, ընդ հովանեաւ եկեղեցւոյ սուրբ Վար-դանէ զօրավարի, ի խնդրոյ պատուական և աստուածասէր քահանայի Թումայի, որ ստացաւ զաստուածային գանձս ի յարդար վաստակոց իւրոց և [ի] վայելումն մանկան[ց] սուրբ եկեղեցոյ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, թէ օրինակէք ի լաւ և ընտիր օրինակէ, և թէ կարդայք, յիշեցէք յերկնարացիկ յաղաւթս ձեր զերջա-նիկ և հրաշալի մշակն եկեղեցւոյ զԹումայ քահանայն, և զեղբայրն իւր Ստեփաննոս, և զծնաւղսն իւր զՎարդանէ և զՄարեմ, և այլ ամենայն [հ]անգուցեալսն իւրեանց...։

Դարձեալ, յերեսս անկեալ աղաչեմ զձեզ սուրբ դասք քահանայից յիշել Բարսեղս (*) անարժանս Յոհաննէս գըրիչ, որ ձեռնամուխ եղա ի սա, և զծնօղսն իմ զՅակովբ և զՄինա։ Այլ սխալանաց և խոշորութեան, աղաչեմ, անմեղաւոր անել, զի կտր մեր այս էր...։*

* Հիշատակարանն անթվական է. տեղադրում ենք նույն Յոհանէս գրչի 1409 թ. գրած հիշատակարանին կից։

96

ՏՕՆԱԿԱՆ

Երևան 994

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամար

484 ա ...Զօր յայսմ ժամանակիս, որ բռնացեալ ունի զաշխարհս ազգն Իսմայէլեան և նեղեն զազգս քրիստոնէից անիրաւութեամբ և ոչ իրաւամբ. Արդ, ի յայսմ դառն և վշտաբեր ժամանակիս երևեալ աստուածասէր և բարեպաշտ տանուտէրն Յովաննէս, և ելեալ ի խնդիր այսմ աստուածային անկողոպտելի տէրունական գանձուցս, և ետ գրել զսուրբ գիրքս զայս, որ անուանի Տաւնական, ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, վասն զի կայ ի սմա գրեալ տաւնքն տէրունականաց, ընդ նմին և պատմութիւնք և վարք և չարչարանք և ճգնութիւնք սրբազան առաքելոցն, և հոգիացեալ հայրապետաց, և վսեմական վարդապետաց, և բարեպաշտ ուղղափառ թագաւորաց, և ամենայն տաւնախմբութիւնք, զոր տաւնեն ընթանրական ուղղադաւան եկ[եղեցի]ք | | | գրեալ | | | վարդապետութիւնք | | | ընթեռնուն յուսուրս [ազ]ուհացիցն և յարութիւն փրկչին, զոր մեծ փափաքանաւք ետ գրել զսա Յովաննէս տանուտէրն յիշատակ անջինջ հոգոյ իւրոյ, և ծնողացն Ավրանին և Թանխաթունին, և կենակցին Մարգարտին, և հանգուցեալ տղայոցն Կիրակոսին և Ստեփանոսին և Թադէոսին, և կենակցին Շամշային, և որդոյն Աստուածատրին, և Թանկխաթունին, և քվերն Գուլմելիքին, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց. Եւ ետուն զսա նուէր և ընծայ ի գուռն Հաւրգոմու սուրբ Աստուածածնին, որ հանապազ հրճուին սովաւ սպասաւորք սորա՝ ընտրեալ քահանայքն, և անմոռաց յիշմամբ յիշեսցեն | | |* զՅովան[նէսն], և զծնաւղքն, և զկե[նակի]ցն, և զորդիքն, և զեղբարքն, և զազգըն ամենայն։

Եւ արդ, ես՝ ամենամեղ և անարժան ծառայ ծառայիցն աստուծոյ Դանիէլ անարհեստ գրիչ, յանձն առի տկար անձամբ և ծանրաբեռն մեղաւք, տգէտ գիտութեամբ և անիմաստ մտաւք, անհմուտ դըրոց գիտութեան և անվարժ արուեստիւք, յանդգնութեամբ ձեռնարկելով ի մեծ գործս յայս, ոչ ըստ իմում արժանաւորութեանս, այլ ապաւինելով յամենակարող զաւրութիւն պարգևատուին, որ տայ առատապէս և ոչ նախատէ, բազում և մեծ աշխատանաւք հասուցի զսա յաւարտումն յաստուածաբնակ կղզոջս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանիս, ի թուականութեանս Հայոց ՊԾԸ. (1409), ի հայրապետութեան տէր Դաւթի...։

Բ

200 բ ...Ընդ նոսին և ինձ ողորմեա՝ բազմամեղ Դանիէլ գրչի, և իմ ծնաւղացն՝ Կարապետ քահանայի, և եղբաւր նորին Զաքարիայ փիլիսոփայի, և ամենայն ազգականաց իմոց...։

---

* Երկու տող պատռված է։

97

ՄԱՇՏՈՑ

ՄՑՀ, հտ. Ա. 79, էջ 101.

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Ջերուն

279 ...Արդ, գրեցաւ զսուրբ տառս Մաշթոցի
Ի քաղաքի Ջերո՞ւն կոչի,
Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի
Եւ սուրբ Սարգսի զօրավարին,
Ի թվին ՊԾԸ. (1409).
Ձեռամբ Սարգսի մեղաւք լցեալ և անբարի։
Ես մեղաւորս ամենայնի,
Երես դնեմ ձեզ ի գետնի,
Ցիշել զգծողս այս տառի՝
ԶՍարգիս անուն մեղաւք ի լի,
Եւ զծնողսն իմ ըստ մարմնի։

98

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղէմ 1105, Մ.Տ.Մ.

Գրիչ՝ Ղազար
վայր՝ Աւագ վանք

Ձեռագիրս գրվել է «յառաջնորդութեան սուրբ ուխտիս մեծ վարժապետիս մերոյ Գէորգեայ, ի գաւառէն Դարանաղեաց, որ և առաջնորդ է սա վանից Աւագ կոչեցեալ, ընդ շքով տիրամայր սուրբ Աստուածածնին և սուրբ Առաքելոցս և սուրբ Կարապետիս»։ Գրիչն է Ղազար կրօնաւոր։

99

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՃԱՌԻՑ

Երևան 039

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Սամսոն (՞)

408 բ Թվ. ՊԾԸ. (1409)։

...Շնորհաւք ամենակալին աստուծոյ սկսա և ողորմութեամբ և աւգնականութեամբ նորին յանգ ելեալ կատարեցաւ յոյժ պիտանի և աւկտակար գիրքս այս, որ է բուրաստան ծաղկաւետ, և դրախտ
409 ա ամ[ենա]յի պտղովք, ի յիշատակ ‖ Գրիգոր իրիցուն, և դեռաբոյս զաւակին իւրոյ Մինաս սարկաւագին, և Մելիք-Թամուրին, և Եոթիարին, և Աւագ-Պարոնին, և քուերցն իւրեանց Մարիանէին, և զծնողսն իւրեանց, որ ի Քրիստոս հանգուցեալ են զԽուրմա-Խաթուն, և զաւակսն իւր զՊաիանէն, յորժամ կարդայք և լուսաւորիք յիշեցէք և թողութիւն

խնդրեցէք ամենեցուն...տէր Պետրոս վարդապետի, որ է գաւառա-
409 բ պետ Սամիսոնի և սրբոյ[ն]ոյ Աստուածածնի ‖ և Գէորգի զաւրավարի, արագահաս յաւր ատենի, յորոց հերձուածք խլին արմատաքի... և զգրողս իմ արժանի՝ մեղապարտ և անպիտան Յոհանէս սուտանուն քահանայի... և ով որ զմեզ յիշման առնէ արժանի, և իւր մեղացն թողութիւն լինի...։

100

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 2783

Ծաղկող՝ Գրիգոր Վարդապետ

ա

32 ա | | | զաստուածային աւրհնութեանց արժանաւորսն՝ զԹադէոսն և զՄաթէոսն, և զքոյր նոցին զայրի Թագուհին արժանիս արասցէ Քրիստոս սրբոց պսակին, ամէն, և զԳրիգոր գրծող՝ պիտակ անուն վարդապետ, որ ժողովեալ է զգիրս աւրհնացն աստուծոյ և համառաւտել ի մի զլինելութիւն արարածոցս և զծընընդոցն ի փառս արարչին արարածոց՝ հաւր և որդոյ և հոգոյն սըրբոյ։ Յելիցն Ադամայ ի դրախտէն մինչ ի վախճանն Մօսէսի ԳՌ. և ԷԾ. ու ԻԶ. (3726) ամ է. եւ ի մահուանէն Մովսէսի մինչ ի Քրիստոս Ռ. ու ԳՃԿԸ. (1468) ամ է. եւ ի Քրիստոսէ մինչ յայս, որ գիրքս գրեցաւ Ռ. ու ԳՃ. և ԺԱ. (1411) ամ է, զի ՊԾԸ. (1409) ամին գրեցաւ։

Բ

34 ա Ողորմի ստացողի գրոցս՝ համեստ և հարկեւոր տիկնոջն Աննային, և իւր ծնողացն Ադուր տիկնայ և Թօղանին, և զաւակաց նոցին՝ Փոլատին և Մուրատին:

101

ՏՕՆԱՑՈՅՑ

Առ կ. Եղեան, Մ.Տ.Մ.

Գրիչ՝ Ալեքսիանոս
վայր՝ Երուսաղէմ

124 բ Փառք... գրեցաւ տաւնացուցս ի սուրբ Երուսաղէմ... ի թվականիս մերո[Պ]ԾԸ.* (1409"), ձեռամբ անմիտ Ալէքսիանոս անուամբ աբեղայի...։ Ո՛վ եղբարք, ժամանակս էր վերջի ու տեղս էր խիստ դժար, մահգասիս, որ ինձ ընկեր էր, խիստ կաչկաչան էր,** անմեղադիր լերուք սղալութեան։

* Հարյուրավոր թվանշանը դիտավորյալ քերած է եղել։ Մ. Տեր-Մովսիսյանը, հնագրական տվյալների հիման վրա, ձեռագիրը համարել է ԺԵ. դարի ընդօրինակություն, դրանից պիտի եզրակացնել, որ ջնջված թվականը եղել է «Պ» (800), և ձեռագիրն ընդօրինակվել է 1400 թվականին։

** Իմա «հռհռացող», «ծիծաղող» էր։ Մեքենագրված է այսպես՝ «խիստ կաչ կաչ անէր(°)»։

102

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երևան 2690

Գրիչ՝ Ղազար

94 ա *Արդ, ես կորուսեալ եղկելիս և թշուառականս Ղազարս անպիտան, որ փոյթ յաւժար եմ ի զանազան չարիսն և ծոյլ ի բարիս, յերբեսս անգետլ աղաչեմ զբարունդ բաբի, և երանելի վարդապետ ճըշմարտութեան, և քանոն ուղղութեան, քաջ պըւէտիկոս և իմաստուն սոփեստես տէր* Գրիգոր* *արթուն անուն՝ զքեզ, քո սրբազան դասուց աշակերտաւքդ, պաղատիմ և խնդրեմ, որ կտղտեղացեալ և զտգիտացեալ տիղմս տաղտկալի ոչ անտես առնես, այլ միոյ ողորմոյ արժանի առնես զխոր խոցեալս, և սղալանացս և անարհեստ և խոշոր գրիս անմեղադիր առնես, քանզի կար տկարիս այս էր։***

103

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երևան 2075

Գրիչ՝ Թովմայ Մեծոփեցի
վայր՝ Մեծոփայ վանք

390 ր *... Արդ, ի յամի ծննդեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի հազարերորդի չորսհարիւրերորդի և երեքտասան թիւ յաւելեալ ընդ նմին. և ի թվականիս Հայկազեան տոհմիս տումարի ըստ հոլովման ամաց* ՊԾԹ. *(1410), գրեցաւ գիրք Քարոզութեանս առաջին հատորի, հաւաքեալ ձեռամբ սուրբ հաւրն մերոյ՝ երկրորդ լուսաւորչի, մեծ վարժապետի, քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, արթուն անուն գերապատիւ սուրբ բաբունապետի* Գրիգորի՝ *աշակերտի* Յովհաննու Որոտնեցւոյ, *որ էր աշխարհաւ* Քաջբերունի, *ի կարգէ աստուածաբան վարդապետաց սրբոց՝ երանելոյն Գրիգորի Աստուածաբանի, Կիւրղի*

* *Ամենայն հավականությամբ ուղերձը հասցեագրված է Գրիգոր Տաթևացուն, ուստի և գրված պետք է լինի մինչև նրա մահվան թվականը, այն է՝ մինչև 1410 թ., կամ ավելի ճիշտ՝ մինչև 1409 թ. դեկտեմբերի 27-ը (տես հաջորդ հիշատակարանի ընդարձակ ծանոթագրությունը)։*

** *Ձեռագրի 2-րդ մասի վերջում կա մի հիշատակարան գրված Սրապիոն բաբունապետի ժամանակ, ուստի 1586—1603 թթ. ընթացքում (վարդապետական գավազան ստանալուց մինչև կաթողիկոսանալը)։ Այդ հիշատակարանի տարեթիվը կեղծված է և ինչ-ինչ նկատառումներով (թերևս ձեռագրի արժեքը բարձրացնելու համար) դարձված է ՊԿԷ. (1418)։*

և Աթանասի, միաբանութիւն ղաւանողաց՝ զբանն աստուած միաց-
եալ ի մարմնի, ձեռամբ անարհեստ և անիմաստ, մեղսամած և մաս-
նադեղեւ, սխալագիր գրչաց Թովմայի պիտակ անուն վարդապետի,
[և ս]րբասէր կրօնաւորի Յովանիսի, և ամենաւրհնեալ աստուածասէր
մանկանն Յակոբայ դպրի, ի յիշատակ բարի իմում անձին հիքա-
կանի՝ Թովմայի, և ի յօգուտ խոնարհ և հեզ գրոց աշակերտեալ ան-
ձանց և որոց գթացին ի կեանս մեր, մանաւանդ հոգևոր հաւր իմոյ
և ուսուցչի՝ Մատթէոս կրաւնաւորի բազմաչարչար և աշխատողի ի
վերայ իմ անարժանի, որ պատրաստեաց զնիւթս քարտիսի, և եղ-
բաւր իմոյ Յովհաննէս քահանայի, որ բազում աշխատութեամբ, երթե-
ւեկութեամբ եգիտ զթուղթս այսմ աստուածային սոփերի և քրտնա-
ջան աշխատութեամբ կոկեաց զսա, և հօրեղբարց իմոց՝ Մկրտիչ քա-
հանայի և Մկրտիչ միայնակեցի։ Այլև յիշատակ անջինջ եղիցի սա
սուրբ հարցն մերոց երախտաւորաց, մանաւանդ եռամեծին Գրիգորի,
արարողի այսմ սոփերի, որ ի սոյն և ի սմին ժամանակի փայլէր
ջահն լուսոյ և արուսեակն մեծապայծառ ի նսեմ և ի մութն գիշե-
րիս, և կամ թէ իբր ճիւռ ի մէջ ողկուզաց ի գաւառին Սիւնեաց, ուս-
տի և համբաւ սորա տարածեալ առ ամենեքում[ը]ք։ Ընթանային
ամինեքեան և գային, լուսաւորէին հոգով և մտաւք ի քաղցրաբան
վարդապետութեանց սորա, զի առաքելանման բղխէր զշնորհս հոգոյն
աստուծոյ, և նա թեքեալ շարժէր զլեզու նորա առ ի վարդապետել
զբանն ճշմարտութեան։ Ընդ որս և ես տկար հոգով և ցականեալս
գնացաք ի լուր նորա՝ հանդերձ երկոտասան եղբարբք, և կացաք առ
ոտս նմա ամս Բ. (2)՝ խնամածութեամբ և սիրով նորին։ Եւ յեր-
[րոր]դ ամին, շարժեալ ի հոգոյն ազդմանէ, եկեալ ընակեցաւ յեր-
կիրս Քաջբերունեաց, ի սուրբ ուխտս Մեծոփայ։ Եւ ժողովեաց բազում
վարդապետս և կրօնաւորս, աւելի քան զութսուն ոգիս։ Եւ զամ մի
լըման դասիւ վարդապետութեան զամենեսեան լուսաւորեաց։ Երիս
գիրս բացայայտեաց՝ զՀամբերութիւն քաջ Նահատակին Յոբայ, և
զԳիրս գրչութեան Առիստակիսի և Մեծին Գէորգեայ, և զսուրբ աւե-
տարանն Յովհաննու։ Եւ եհաս մինչ ի յայն տեղի, որ ասէ՝ Յառա-
ջագոյն քան զտօն զատկին։ Եւ եկեալ սիրելի աշակերտք նորա՝ գո-
391 ա զացան զնա ի գիշերի։ Եւ մեք ելեալ գնա ‖ ցաք զկնի նորա՝ հան-
դերձ վարդապետաւք և եպիսկոպոսաւք և գրոց աշակերտաւք, և հա-
սաք նմա յերկիրն Արայրատեան, լալով, ողբով, արտասուօք, աղխո-
ղորմ կսկծանօք, և ոչ կարացաք դարձուցանել զնա։ Եւ անդ ետ մեզ
հրաման վարդապետութեան։ Եւ մինչ դեռ յառագաստի պարէաք և
հոգով և մարմնով ուրախ էաք, իսկոյն համբաւ մահու նորա խռովե-
ցոյց զմեզ, զի յետ բաժանելոյն մեր ի նմանէ ԼԶ. (36) օր միայն
եկաց ի մարմնի, այսինքն՝ վերջին աւրհասն եհաս նմա, որ որջաց-
եալ է ի սկզբանէ ի բնութիւնս մեր։* Աւա՜ղ մեծի տարակուսանացս

---

* Գրիգոր Տաթևացու մահը տեղի է ունեցել 1409 թվականի դեկտեմբերի 27-ին։ Ժամանակակիցներից շատերը, սակայն, հայտնում են, որ նա վախճանվել է հայոց
ՊԾԹ. այսինքն 1410 թվականին։ Այստեղ, ըստ էության, հակասություն չկա, որովհետև



Նկ. 6. Գրիգոր Տաթևացու դիմանկարը
(Հանված է Երևանի № 1203 ձեռագրից, մեծացված է մոտ 2 անգամ)

և հանկարծահաս Թշուառութեանցս, զի մինչև ցայսօր ժամանակի յայտնի գիտէաք, Թէ ողորմած է աստուած տառապեալ ազգիս մեր Հայկազնի, բայց այժմ երևեցաւ, Թէ բարկացեալ է աստուած ազգիս Հայոց, զի զնա ունէաք հոգևոր և մարՄնաւոր Թագաւոր աստուածապարգև, և զնա երարձ ի մեզանէ։ Որոյ յիշատակն աւրհնուԹեամբ եղիցի ի վերայ երկրի և աղաւԹք նորա ի վերայ ամենայն աշխարհի։ Եւ մեք Մնացաք անգլուխ անձն և մարմին առանց հոգոյ, զի աստանդեալ, քոյքայեալ ցրուեցան գրոց աշակերտեալ մանկունք, ոչ ունելով տեղիք ապաստանի և հոգևոր հանգստեան, բայց միայն զՔրիստոս՝ զյոյսն ամենեցուն։

Դարձեալ, աղաչեմ զամենեսեան սիրոՄն Քրիստոսի, որք հանդիպիք այսմ հոգիարուղխ պատգամացս, յիշել զիմս աղկաղկուԹիւնս ի տէր սրտի մտաւք, ընդ ինև և զհանգուցեալ րաբունապետքն մեր՝ զերախտաւոր հարքն մեր ի Քրիստոս Յիսուս՝ զՍարգիս վարդապետ, զՎարդան վարդապետ և զՅովհաննէս վարդապետ՝ զհանգուցեալքն ի Քրիստոս։ Այլև զմարՄնաւոր ծնողքն մեր, զվաղ ննջեցեալքն ի Քրիստոս՝ զՍտեփանոս և զՇամշա մաղԹեմ հոգելից արանցդ խնդրել ի Քրիստոսէ Թողութիւն մեղաց սոցա։ Նաև զհարազատք իմ զՅոհաննէս քահանայ, զՅովաննէս, զԱռիստակէս, զԳորգի, զԱմիր-Մէլիք, զՍոլթանշա, և զքեռն իմ, որք օգնական եղեն ի նիւԹ սորա, աղաչեմ յիշել ի տէր, առ ի ստանալ զսոսա ըստ կամաց իւրոց և Թողութիւն մեղաց գտանել ի Քրիստոսէ աստ և ի հանդերձեալն։

Արդ, գրեցաւ սա յերկիրս Քաջբերունեաց, ի սուրբ ուխտս Մեծոփայ, ի հրեշտակաբնակ կայարանս սրբոց վարդապետաց և ճգնաւորացն առաջնոց, ի դրունս տիրամօր Աստուածածնի և սուրբ Յակոբայ հայրապետի, ի դառն և յանբարի ժամանակիս, յորժէ սաստկաց-

---

դեկտեմբերի 27-ը, տարին հունվարի 1-ից սկսելու դեպքում՝ 1409 Թվականի վերջին օրերից է, իսկ տարին, ըստ հայկական տոմարի, օգոստոսի 11-ից սկսելու դեպքում՝ ընկնում է արդեն 1410 Թվականի տակ։

Գր. ՏաԹևացու մահվան Թվականի ու ամսաԹվի, ինչպես նաև նրա կյանքի և գործունեության առանձին դրվագների ուսումնասիրման համար մեծ արժեք է ներկայացնում նրա վարքը, գրված հավանաբար ՄատԹեոս Ջուղայեցու կողմից, որ պահպանվել է Երևանի № 6607 ձեռագրի ծա—ծա էջերում։ Ստորև տալիս ենք այդ կարևոր վարքաբանական գրվածքն ամբողջությամբ։

«Ի սմին աւուր՝ ի դեկտեմբերի Իէ. (27). ննջումն և հանգիստ երիցս երանեալ քաջ րաբունապետին Գրիգորի, աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ։

[Ս]քանչելի այրս աստուծոյ էր ազգաւ Հայկազնի, աշխարհաւ կրկնակի՝ ի հայրենական տոհմէ Քաջբերունի և մայրենական ցեղն յԱյրարատ գաւառէ, ի դեղաւանէն Փարպոյ։ Ծնեալ յաշխարհին Վրաց, ի յամուրն Թմոք. և սնեալ ի ձեռն հարազատ եղբօրն՝ ի տան Թագաւորին Գաւթի։ Եւ էր մանուկ գեղեցկատիպ, և ուշիմ, և լի հոգոյն պարգևօք։ Եւ յորժամ կամեցաւ մեծ փիլիսոփայն Հայոց Յոհաննէս Որոտնեցին գնալ յԵրուսաղէմ՝ յերկրպագուԹիւն սուրբ տեղեացն, ետես զմանուկն Գրիգոր յառաջադէմ յամենայն ուսմունս, էառ առ ինքն, և արար ըստ հոգոյ որդի, և սնոյց ի բարին, և ուսոյց զամենայն իմաստս աստուածային գրոց և արտաքին սոփեստից։ Եւ տարեալ ի հանգիստ զամբարանի սուրբ Լուսաւորչին, ի Սեպուհ լեառն, և ետ ձեռնադրել սարկաւագ, և յանուն Լուսաւորչին կոչեցաւ Գրիգոր (նրա մկրտության անունը եղել է՝ ԽուԹլուշահ Լ. Խ.), և անուամբ

եալ է սուրն իսմայելացոց ի վերայ մեր հալածանօք, ըստ հառաջա-տես տեսլեան սրբոյն Սահակայ։ Որ և տատանեալ ծփիմք ամենա-ներհակ արկածիւք ի ներքուստ և արտաքուստ, որ ափշութիւն գոր-ծէր տեսականի և ի միջունս գործոյս։ Ի ձեռնտուութենէ հոգոյն աս-տուծոյ գրեցի և գրել ետու մեծաւ տաժանմամբ և եռափափագ ըղձ-մամբ զտենչալիս ոգւոյ իմոյ և յոքունց զգերահրաշ իմաստութիւն և զոգեշահ, լուսաւոր վարդապետութիւն մեծ հռետորին Գրիգորի հօր մերոյ, ամենավերջ վիժեալս ի ծննդոց նորին։ Եւ ընկալայ զսա սըր-տալիր ուրախութեամբ, իբրև զտախտակսն նախամարգարէին մեծի։ Եւ հայցեմ յամենայնէ ներումն գտանել սխալանացս, որ աստ գտանի, որք օրինակաւ և որք պատահմամբ հանդիպելով։ Զի թէ օգուտ ու-մեք լիցի՝ շնորհակալութիւն հոգոյն շնորհաց եղիցի, ե[ւ կա]թ աղաւ-թից ձերոց ցաւղեսցի ի տապան իմ գերեզմանի և սուրբ հօր մերոյ և ճգնաւորի Յովաննէս վարդապետի, որ սաղմոսերգութեամբ և աղօ-թիւք լնոյր զպակասութիւն մեր, և Մխիթար վարդապետի, և Յովան-նէս գրագրի՝ գրոց աշակերտի, հոգևոր հարազատի եղբօր մերոյ, և հարազատի իւրոյ՝ Վարդան աբեղայի, նա և Ղազար կրօնաւորի, և սի-րելի եղբօր Յոհանիսի, և այլոց կրօնաւորացս՝ բազմութիւն եղբարցս
391ա ի Քրիստոս, և եղկելի մատանցս այս վաստակ մտերիմ || և խոհեմ քննողացդ ի վայելս մեծ և օգտութիւն եղիցի։ Զի մի լիջիք բազմիս առաւղ և սակաւին ոչ տուօղ, որով աւրհնեալ փառաւորեսցի ամենա-սուրբ երրորդութիւնն անբաժանելի ի ներկայս և յապառնին և յան-սպառ յաւիտենին, ամէն։

Այլ և զվարդապետն Գալուստ՝ զսիրելի աշակերտ սուրբ հօրն մերոյ մեծին Գրիգորի, որ պատճառ եղև մեզ բազում բարութեան և զօրինակն շնորհեաց մեզ յերկրէ հեռաստանէ, աղաչեմ սիրոյն Յիսու-սի յիշել զնա մաքուր աղօթիւք... հանդերձ կրկին ծնողօք հարազա-տօք և ամենայն մերձաւորաւք իւրովք, ամէն։

ա իրօք եկեց զտեղի նորա՝ լուսաւորելով իմաստութեան լուսովն զազգս Հայոց։ Եւ տարեալ յՕրուսաղէմ արար քահանայ, և դարձեալ բերեալ առ դերեզմանն սուրբ Լուսաւորչին՝ արար վարդապետ՝ աղ համեմիչ և լոյս լուսաւորիչ տանն աստուածոյ, և բերեալ յաշխարհն Սիւնեաց, և զկնի մահուանն իւր ետ հրաման նստել յաթոռ մեծ համալսարանին Եսայեայ և բաբունապետ Հայոց Մեծաց։

Եւ մեծարեցաւ և պատուեցաւ ի մեծ աշխարհակալէն Թամուրէն, և յորդոյ նորին Միրանշայէն. և պատուեցաւ ազգս Հայոց յայլասեռիցն վասն սխրոյ և իմաստալից բանից վեհին Գրիգորի։ Այլ և արար գիրս յոգնիմաստս ընդդէմ ամենայն ազգաց, ճշմարիտ ցուցանելով զհայքս. և արար բանս խրատականս, և իմաստ և հանճարս, և իմաստնացոյց զազգս Հայոց քան զամենայն ազգս, և ուղղեաց զկարգս և զսահմանս եկեղեցոյս։ Եւ էր անդադար յընթերցումն և ի գրել աստուածային իմաստից, և անձանձիր ի յաղօթս, և անպարապ ի ծնրադրութիւնս. աղքատասէր և օտարասէր. առատ ի տուրս աղքատաց, խա-րազանազգեստ մարմնով և խոնարհ հոգւով և ծննդական մտօքն. հասակաւ երկայն, դիմօք պայծառ, տեսակ արժանի զոռոզութեանն, հերօք խարտեաշ, մուրուօք առատ, միշտ պա-հացող, յոյժ արտասուօղ, պատուող տօնից, սիրող սրբոց և բանից [Նոցա]։ Հանգեաւ երանելի մահուամբ ի վանքն Տաթևոյ ի դեկտեմբերի Իէ. (27), և թաղեցաւ ի տօնի մեծ առաքելոյն Պետրոսի և Պօղոսի, և եղև դասակից և պատուակից նորին, ի թվին ՊԾԸ. (1409). ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ, օրհնելոյն յաւիտեանս, ամէն. որոյ յիշա-տակն օրհնութեամբ եղիցի, ամէն»։

Այլ և զվերոյասացեալ բարունապետն Գրիգորիսս, որ եղև պատճառ բազում բարութեան, զի ժողովեաց բազում վարդապետք և քահանայք, տածելով զամենեսեան ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և Թարգմանեաց գիրս ոգեշահս և լուսաւորիչս, և ոչ այոչափ միայն, այլ եղև իբրև զհաւատարիմ լրտեսն Յեսու Նաւեայ, մտանելով յերկիրն պարգևաց, այսինքն արձակեաց զմեզ ի բանադրութենէ անիծից սուտ և ապստամբ կաթողիկոսացն Աղթամարայ, և երեր ազգիս Հայոց զփրկական համբաւն և առաջնորդեաց արժանաւորացն մտանել ի միաբանութիւն և ի հնազանդութիւն գերագրական և սուրբ աթոռոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, որ է դուռն և մուտ երկնից արքայութեանն, յայտնութեամբ հոգոյն ի տեսլեան գիշերոյ, որ է գրեալ յերկրորդ Թուղթն Աղթամար[եցւոց]*, անդ գտանես, և զեղկելիս յիշեսցես, ամէն, եղիցի։

Այլ և զաշակերտակից հարքն մեր և եղբարք՝ զՄարգարէ վարդապետ, զՅակոբ վարդապետ, զՅովանէս վարդապետ, զմիւս Յովանէս վարդապետ, զԿարապետ վարդապետ, զՄկրտիչ Նահապետենց, զՄկրտիչ Օրբէլենց, զՄկրտիչ Հողձեցի, զՂազար Մահդասենց, զԹովմա, զՂազար Աղթամարցի, և զՄելքիսէդեկ Բերկրցի, և զՍարգիս աղաչեմ յիշել ի տէր սրտի մտաւք, նա և Յակոբ դպիր և զՅովաննէս կրօնաւոր, որ բազում աշխատութեամբ և չարչարանաւք օգնական եղեն ինձ ի գրելս, տացէ նոցա Քրիստոս աստուած վարձս ողորմութեան և պահեսցէ ի կամս իւր, ամէն, եղիցի։

Բ

Գրիչ՝ Յակոբ

353 ա Քրիստոս աստուած, բարեխօսութեամբ սրբոց առաքելոց, որ այսօր ակն ունին առ քեզ, զի դարձեալ գաս՝ մխիթարեսցես զնոսա, մխիթարեայ, Քրիստոս աստուած, զՇաքարբէկ մահդասու հոգին ի դասս սուրբ առաքելոցդ, որ այսօր մեզ լօ** ծիրան և խնձոր երեր, և զիս՝ զանպիտան զՅակոբ դպիրս։

104

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 6405***

Գրիչ և ստացող՝ Թովմայ Մեծոփեցի

վայր՝ Երևան

ա

429 ա ... Շնորհօք բարերարին աստուծոյ ես մեղապարտս ի մանկունս եկեղեցւոյ պիտակ անուն վարդապետս Թովմա ստացայ զերկրորդ

* Այս մասին տե՛ս Գր. Տաթևացու «Բանք գեղեցիկ և յոյժ պիտանի վասն աթոռոյն Աղթամարայ, որ է ի ներքոյ բանադրանացս» աշխատության մեջ (Երևան, № 4669 ձեռագիր)։

** կարդա՝ «լաւ»։

*** Ա. հիշատակարանը հասել է մեզ պատառոտված ու մաշված վիճակում։ Անընթեռ-

հատոր Քարոզգրոցս աստուածապատիւ և երանաշնորհ քաջ հռետորին և անյաղթ փիլիսոփային՝ սուրբ հօրն մերոյ մեծին Գրիգորի, յամի թվականութեան մերս տումարի ՊԾԹ. (1410)-երորդի՝ բազում աշխատութեամբ և չարչարանաւք, ի դառն և ի չար ժամանակի, ի գաւառիս Այրարատեան, յանապատիս Երևանոյ, առ դրան սուրբ տաճարիս Անանիայ առաքելոյ, ձեռամբ երախտաւորի և մեր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բարեկամի՝ քրիստոսակիր առն աստուծոյ Գալուստ վարդապետի, և հոգևոր եղբաւր մերոյ և ընկերակցի Սիմէոն կրօնաւորի։ Եւ մասն ինչ ես՝ տրկտրս հոգով և մարմնով գծագրեցի ի յուսումն վարդապետաց եկեղեցւոյ և ի գիտութիւն մանկանց Սիոնի, մանաւանդ յիշատակ հոգւոյ իմոյ, և հոգևոր ծնողաց իմոց և ուսուցչաց՝ Մաթէոս կրօնաւորի, և վարժապետացն մերոց՝ երկրորդ լուսաւորչի մեծին Գրիգորի՝ հաւաքողի և արարողի այսմ սոփերի, որ ի սոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս և եթող մեզ սուգ անմխիթարելի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, և հեզահոգի բաբունապետացն՝ Սարգիս վարդապետի, և Վարդան վարդապետի, և Յովհաննէս վարդապետի՝ բազմաչարչար Նահատակի, որ ի սոյն ամի աւարտեաց զսուրբ եկեղեցի | | |

Բ

213 բ Ձնուաստ և զմեղուցեալ պիտականուն վարդապետս Թովմա աղաչեմ յիշել ի տէր, որ սակաւ ինչ աշխատեցայ և զպակասութիւն քարոզիս լցի ի հոգելից վարդապետաց բանից, որ էր թերի մնացեալ ի սուրբ հօրէն մերմէ։*

Գ

416 ա Այլ և զստացաւղ գրոցս զպիտականուն վարդապետս Թովմա, որ բազում աշխատութեամբ գրել ետու զգիր վարդապետութեան հօր մերոյ մեծ վարժապետին Գրիգորի, ի հալալ արդեանց ծնողաց իմոց, հոգևոր եղբօր իմոյ Սիմէոն կրօնաւորի, որ ի յաւարտ գրոյս վճարեցաւ ի սուտ կենցաղոյս։

Դ

Աւրհնեալ էս Քրիստոս աստուած
 և գովեալ յամէն բերանոյ,
Որ զամենեցուն կարիս
 կատարես առանց հոգալոյ,
Այսաւր զանպիտան գրչիս
 լցուցեր զկիղձս տենչալոյ,

Նշի հատվածները վերականգնում ենք Ս. Տէր-Ավետիսյանի Նախավկայի-վանքի ձեռագրերի անտիպ ցուցակի հիման վրա, որը կազմված է 1904 թվականին, երբ ձեռագիրը (այն ժամանակ № 113 ձեռագիր Նախավկայի վանքի) եղել է համեմատաբար լավ վիճակում։

* Խոսքը Գր. Տաթևացու «Վասն կարգաց ազօթից» (սկ. «Զբերան իմ բացի և առի զհոգի...») քարոզի մասին է։

Զի յիս չունէի կասկած
  զայսպիսի գործ վճարելոյ.
Ով հաստատ ի մեզ յուսա
  չըն[կ]անի ի գործ ամօթոյ,
Ինքն դու հնար առնես՝
  դու աւարտես առանց հոգալոյ,
Քեզ փառք և պատիւ տացուք
  գոհութիւն ընդ հօր և հոգւոյ.

ե

Գրիչ՝ Սիմէոն

225 ա Զստացօղ գրոցս՝ զհոգևոր հայր մեր զվարդապետն Թովմա և զՍիմէոն գրիչս [յիշեցէք], և աստուած զձեզ յիշէ, ամէն:

զ

Գրիչ՝ Գալուստ

59 բ Ես ես՝ անարհեստ և մեղաւք մածեալ գրչակս Գալուստ սպասաւոր բանի գոչեմ ընդ անառակին խնդրելով յարարչէն ամենից, զի և ինձ շնորհեսցէ զբազմութիւն պարտուց յանցանաց և որք զամէնն ասասցեն: ՊԾԸ. (1409) գրեցաւ:

է

81 բ Զբազում մեղաւք զառածեալս և ի հոգոց աշխարհի տատանեալս՝ զԳալուստ անարհեստ գրիչ և զանպիտան սպասաւոր բանի, որ գրեցի զսա ի վայելումն անձին իմոյ տառապելոյ և յիշատակ ոգւոյ իմոյ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, զի ասիցէք բոլորով սրտիւ ղաստուած-ողորմին, որ և դուք գտանիցէք յանյիշաչարն տեառնէ:

ը

318 բ Որք հանդիպիք այսմ վայրի
ԶՈհանէսս* մեղաւք ի լի
Յիշեցէք դուք ի բարի:

105

ԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Երևան 5255

Հետ. ստացող՝ Յովհաննէս
վայր՝ Մեծոփայ վանք

5 բ Զստացաւղ սուրբ կտակիս զերանաշնորհ քարոզն կենաց զՅով–

* Ոհանէսը ձեռագրի մի քանի թերթերի գրիչն է:

հաննէս վարդապետ* աստուածարնակ ուխտին Մեծոփայ վանաց յիշեսջիք առաջի Քրիստոսի, և զհոգևոր որդեակն իւր զՆերսէս, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

106

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երուսաղէմ 2178

Գրիչ՝ Թումա [Մեծոփեցի՞]

... *Յոտար երկիր էի և թանաք չկայր, զվարդապետս* Թումա *աղաչեմ անպարսաւ թողցես, սուրբ եղբայր. ի սոյն աւուրս փոխեցաւ մեծ վարդապետն* Գրիգորիոս *ի Քրիստոս, ի թվկ. ՊԾԹ. (1410), և ես անմխիթար կամ յամենայն կողմանց, վայ ինձ։*

107

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երուսաղէմ 1190

Գրիչ՝ Թումա

Սկսեալ ձեռամբ մեծին մերոյ արփիաւորչի և հսկողի [Գրիգորի Տաթևացւոյ], *որ յայսմ ամի փոխեցաւ առ բարձրեալն իւր մեծ հրաշիւք...։ Եւ աւարտեցաւ յանապատս, որ կոչի սուրբ Նշան, առ ոտս նորաբողբոջ բաբունապետիս, որ կոչի* Սիմէոն՝ *աշակերտ արարողի գրոցս, որ յայսմ ամի զայս գիրքս դաս ասէր, ձեռամբ* Թումայի *պիտակ և անարժան և տրուպ փափաքողի կաթի անկախարգի։*

108

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 856

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Ղրիմ

351 ա ... *Արդ, եղև կատարումն և գրաւ գրոցս Հարցմանց ի յայսմ տարոջ, որ արփիածին և երջանիկ մեծ հռետորն* Գրիգոր *վարդապետն՝ գանձն իմաստից, երկրորդ աստուածաբանն, կրկին լուսաւորիչն հասարակեաց զկեանս առօրեայ, հասեալ ի կէտն իմաստու-*

* *Մեծոփայ վանքի նշանավոր առաջնորդ Յովհ. Մեծոփեցին է, որ հիշատակվում է ԺԵ. դարի առաջին տասնամյակներում՝ մի շարք հիշատակագիրների կողմից։ Նախորդ հիշատակարանում Թովմա Մեծոփեցին հայտնում է, որ նա (Յովհաննէսը) «ի սոյն ամի (1410 թ.) աւարտեաց զսուրբ եկեղեցի[ն]»։ Պայմանականորեն հիշատակարանը տեղադրում ենք 1410-ի թվաշարքում։*

թեան և յաղբիւրն գիտութեան։ Եղիցի նմա յիշատակ մաղթանաց
մասին աւրհնութեանց սրբոցն ի լոյս, ամէն։ Ի շրջագայութեան Հայ-
351 ր կազեան տումարի ի ՊԾԹ. (1410) գրեց[աւ | | |]այսմ մեծարգոյ
նահանգիս Ղազրաց աշխարհի Ղրըմիս, ի շրջակայ մենաստանս և ի
հրեշտակաբնակ անապատս, առ գուրս սուրբ Լուսաւորչին։ Աղաչեմ
զամենես[եան], որք հանդիպիք կարդալով կամ օրինակելով, յիշել
զՅովանէս աբեղ[այն]՝ զհարազատն իմ, զի սա ծն[աւ] զմեզ ըստ բանի
բազմաջան երկաւք՝ կրթեալ ի մամուլս վարժարանի։ Դարձեալ յերեսս
անկեալ արտասուալիր դիմաւք հողս և փոշիս սուրբ գարշապարաց
ձերոց զՍիմէոն կրօնաւորս յիշել, սխալանաց և անարհեստ և փցուն
գրիս չմեղադրել, զի թողծեալ մտաւք և տխեղծ մատամբ գրեցի,
բազմահաւաք և ծաղկերանք լուսաւոր բանիցս մռացումն արար
տկարութեանս. և մաղթեմ եղբայրական սիրով յիշել և զծնաւղսն
մեր և զՍարգիս եղբայրն մեր հարազ[ա]տ...։

109

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 2538

ա

Գրիչ՝ Սիմէոն

231 ա Յիշատակ քո աւրհնութեամբ եղիցի՝ սուրբ Հայր,* որ յայսմ
ամի վերափոխեաց զքեզ Քրիստոս ի դասս երջանիկ վարդապետաց և
մեզ՝ ազգիս Հայոց մեծ սուգ եղև, և զեղկելի գծողս յիշեա՝ զՍիմէոն:

բ

Վաճառող՝ Ստեփաննոս Թավրէժեցի

134 ա Նուաստ և ներգևեալ ոգի Ստեփաննոս լալուկ վարդապետս
Թավրէժեցիս, տուի զայս աւետարանս Շ. (500) դ[ահե]կ[ա]ն, որ էլ
մարդոյ հաղ ու դաւ վասն հետ Աբրահամ աբեղին չկայ, աւետարանս
իւրն հաղ ու մուլք է։ Ով որ խօսի կամ դաւէ առնէ՝ դատի յաստու-
ծոյ և ամենայն սրբոց նորայ, ի թվ. ՊԾԹ. (1410), յարաց ԺԹ. (19),
մայիս ԻՁ. (26) գրեցաւ հաստատ բանս։

110

ՃԱՇՈՑ

Երևան 9087

Գրիչ՝ Եզեկիէլ Որոտնեցի

ա

106 ա Քրիստոս աստուած իւր սուրբ չարչարանացն բարեխաւսութեամբ
ողորմեսցի ստացողի սուրբ գրոցս տէր Աթանասի և ամենայն հաբա-

* Գիմում է հեղինակին՝ Գրիգոր Տաթևացուն, լսելով նրա մահվան բոթը։

զատաց նորա, նաև Եզեկիէլի Որոտնեցոյ եզկելի գրչի, և ծնողաց իւրոց...։

Բ

138 ա Զատացաւղ տառիս՝ զամենարջանիկ և զքաջ դիտապետն զտէր Աթանաս յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ով սուրբ ընթերցողք, նաև զեղկելի գրիչս զէզէկիէլ մեռեալ ոգի...։

Գ

237 բ Զատացող սուրբ գրոցս և զաշխատողք և զամենայն արդիւնակատարք, որք շատ և որք սակաւ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ով սուրբ վայելողք, նաև զմեղուցեալ ծրողս զէզէկիէլ...։
Ի թվիս ԳԾԹ. (1410).

Դ

263 ա Այսաւր գլուխս խիստ ցաւէր:
Եւ ով ոք ոչ ինձ ողորմէր
Քրիստոս սոցա չողորմէ։

Ե

292 բ Ցորժամ գրէի զմահ Եսայի,
Հասաւ վախճան գրոցս ստացողի
Զհայր[ապետ] տէր ծերունի,
Որ Աթանասն որջորջի,
Փառաւք պատուեալ միշտ ի հոգի,
Եւ փոխեցաւ ի դասս հրեշտակի.
Ցոյժ դառնացաք մեք ի հոգի,
Զի բարձին զտէրն ի մարմնոյ աստի,
Եւ հանգեաւ ի գոգն Քրիստոսի։
Անդամալոյծ մի այլազգի
Եկն ի նշխար հայր[ապետի]
Եւ ողջացաւ ի նմին ժամի։
Աղաչեմ զձեզ, եղբարք սիրելի,
Զտէր Աթանաս սուրբ ծերունի
Ցիշման առնէք դուք արժանի,
Ընդ նմին և զգրիչս զեղկելի՝
Զեզէկիէլ մեռեալ ոգի
Աղաչեմ յիշել բոլոր սրտի։*

* Գրիչ Եզեկիէլի ընդարձակ հիշատակարանները տես 1441-ի թվաշարքում։

111

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 3082

Գրիչ՝ Թումա

280 բ … Յիշեցէք ի մաքրափայլ և յերկնագնաց յաղաւթս ձեր զտկար ոգի՝ զվերջինս ի պետաց և զյետնեալս ի պարս բանասիրաց զԹումա խնդրող բանի, զուսուցիչն զԱլեքսանն աբեղա՝ զհոգևոր ծնօղն մեր, և զըստ մարմնոյ ծնաւղսն մեր՝ զքրտնաջան հայրն Սարգիս, և զմայրն Շնոհուր, և զբազմերախտ քոյրն իմ զՂփչախ, որ զամենայն աւուրս իւր տո խս անցոյց ծառայութեամբ և բազում աշխատութեամբ՝ առեալ աշխարհ և սիրել զաստուած՝ հաւատաւոր կոչեցեալ, որ է հաւատացեալ և հաւատով լցեալ, և զքւերորդիսն իմ զՀայրապետ դպիր, և զՏիրատուր, և զՆերսէս, զՄելքսէթ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, և զՍտեփաննոս կրաւնաւոր, և զամենայն արեան մերձաւորսն մեր՝ զկենդանիս և զհանգուցեալս, ընդ նոցին և զսիրելի աշակերտն իմ զՊետրոս աբեղա, և Քրիստոս յիշողացդ և ոչ յիշեցելոցս ողորմեսցի, ամէն:

Զի ԺԵ. (15) ամ ի Բաւլղի թալանն եկաց, յորժամ եկ Թամուրի որդին Ամիրզայն ի վերայ Բաղիշու, և տարան ի Թաւրէժ։ Եւ ես յամենայն ժամ լալոտ աչաւք կայի և աղեխարշեալ ընդդէմ սմա, ոչ գտանելով հնար ազատել զսա, զի անգեալ էր ի ձեռն անողորմ եկեղեցականաց։ Ապայ յետոյ ուրախարար և մխիթարիչ հոգին աստուած մխիթարեաց և ուրախացոյց զվշտագնեալ անձս և զբեկեալ սիրտս և զտրտմեալ ոգիս. և ինքեանք իւրեանց անձամբ բերին զգիրքս առ իս։ Բայց թուլացեալ և բրդացեալ են կրունկք գրոցս՝ կոբատեալ և խաբխաբեալ։

Աստուծոյ գոհութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։ ՊԾԹ. (1410) եկաւ գիրքս։



Նկ. 7. Յակոբ Ղրիմեցու ինքնագիրը։

112

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ

Երևան 1716

Պակասները լրացնող և մեկնող՝ Յակոբ Ղրիմեցի

75 բ Զմեղուցեալ Յակոբ վարդապետս Ղրիմեցի աղաչեմ յիշել ի տէր. ի թվիս ՊԾԹ. (1410)։*

---

* Ձեռագիրն ընդօրինակված է 1276 թ., Կիլիկիայում։ Մեկնողական իր դիտողությունները Հ. Ղրիմեցին թողել է լուսանցքների վրա։

113

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան 1295

Գրիչ՝ Արէլ
վայր՝ Սարկաւագանց վանք

679 ... Արդ, գրեցաւ սուրբ և գերամբարձ աւետարանի քաղուածոյս ի լուսաւոր բանից Մաթէոս գլխոյ, յարմարեալ և աշխատասիրեալ Գրիգորի արի վարդապետի։

Արդ, ես՝ մեղապարտ և անարժանս, տարտամ և ծոյլս ի բարեաց ցանկացող եղէ սմայ, վասն տկարութեան և ծուլութեանս ոչ կարէի ձեռնարկել, վասն զի անհմուտ էի արուեստիս։ Այլ հրամանաւ և աւգնականութեամբ վարդապետին իմոյ Յովաճիսի մականուն Կարմիր կոչեցելոյ, աշակերտի վերոյասացեալ վարդապետին Գրիգորի՝ գրեցի։ Զոր ի միում շաբաթոջ շիջան Բ. լուսաւոր ջահքն և զմեզ թողին խաւար, զոր յիշատակ նոցա աւրհնութեամբ եղիցի։ Բանզի ո՞վ կարէ զանչափ դառնութիւնն, որ յետ մահուան նոցա հանդիպեցաւ, պատմել, քանզի եղեն ազգս Հայոց և քահանայքն մոլորեալ իբրև զհաւտ առանց հովվի, և վանաւրէից հասանէին դառնութիւնք արքունուստ և ի սուտ և ռաահակ եղբարց, զոր տէր խաղաղեցուսցէ։

Արդ, գրեցաւ աստուածաշունչ տառս ի թու. ՊԾԹ. (1410), ձեռամբ մեղապարտ և տխմար դրչի Արէլ սուտանուն աբեղայի, ի վանս Սարկաւագանց կոչեցելոյ, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս, առ
680 ոտս բազմեր ‖ ախտ հաւր իմոյ և վարժապետին Յովաճէս Կարմրի։

Արդ, մոխրամած գիմաւք և արտասուալի աչաւք աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զվերոյասացեալ վարդապետն իմ և զհոգևոր եղբայրն իմ Զէկիէլ կուսակրաւն աբեղա, որ զաւրինակն շնորհեաց և զՄարկոս* պատուական քահանայ, որ բազում խրատով օգնական եղև, զի անհմուտ էի։ Այլ և զծնաւղքն իմ՝ զհայր իմ զԻճախ և զմայրն իմ զԹամար, և զեղբայրն իմ փոխեցեալն առ Քրիստոս՝ զԽաչճամ, այլ և զկենդանիս՝ զԲէճամ և զՆէքճամ, և զամենայն արեան մերձաւորսն իմ յիշել աղաչեմ, և զիս՝ զանարժան գծող սորին մի մոռանայք։ Այլ և խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այս է, և սխալանացն ներեցէք, զի վասն կարաւտութեան [յ]անդգնեցա։ Դարձեալ աղաչեմ զհանդիպողք սորին յիշել ի սուրբ և ի հաշտարար աղ[ա]ւթս ձեր զվերոյասացեալքդ, և որք յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամէն։

Բ

413 Ո՞վ պատուական եղբայրք, ընտրեալք ի բուրոց և զատեալք ի [յ]ոգունց, զանարժան ծրաւղս յիշել աղաչեմ, նաև զվարդապետն իմ զՅովաճէս , որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս [յ]ոյսն ամենե-

---

* Հապավված է այսպես՝ «զՄկս»։

ցուն և զմեզ եթող որբս։ Այլ և զհոգևոր եղբարքս, որ կան աստ ժողովեալ, զմարթիաւոր ծնաւղքն իմ և զեղբարքն, և զանարժանս մի մոռանար յիշել, և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութեանն, ամէն։

114

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 8740

Գրիչ՝ Մելքիսէդեկ
վայր՝ Բաղէշ

447 բ Աւրհնութիւն... որ արժանի արար զանարժանս հասանել ի կատարումն գծոյս։

Եւ արդ, ես թաղծեալս մտաւք և ցաւագին անձամբ, վերջինս ի ծնունդս եկեղեցոյ և տրուպս բանասիրաց փութոյ՝ Մելքիսէդեկ պիտակ անուն խնդրող բանի, գծեցի ձեռամբ իմով զգիրքս քարոզողաց, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն իմոյ Տիրացու քահանայի, և մաւրն իմոյ Մեծ-Տիկնայ, և այլ ամենայն ազգականաց իմոց։ Ի թուաբերութեանս մեծի ութհարիւրի յիսուն և իններորդի ամի (1410), յաստուածապահ գաւառս և ի քրիստոսաշէն քաղաքս Բաղէշ կոչեցեալ, ընդ հովանեաւ ամենազաւր աջոյ ձեռինն աստուծոյ և պահպանութեամբ աստուածընկալ խաչին Քրիստոսի։ Դարձեալ, յերես անկեալ արտասուալիր դիմաւք, ես՝ անարժան հողս և փոշիս սուրբ գարշապարաց ձերոց աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատութ հարց և եղբարց մեր հոգևորաց, զի կոթ մի արտասուաց ի կաթիլ դուլէ ձերդ մաղթանաց ցաւղեսցէ ի գերեզման հոգոյ իմոյ տապանաց և լուասցէ զբազմաշաբաւ զազրացեալ ոսկերս մեղաւք մեռելոյս, զի թերևս վասն ձեր սիրալիր մաղթանացդ | | |

115

ՅԱՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 4737 և Փիրղ․, Նոտ. 38

Գրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Տշող

239 բ ... Գրեցաւ սուրբ տառս ի թուականիս Հայոց ՊԾԹ. (1410), ի հայրապետութեան տեառն տէր Դաւթի սուրբ և անբիծ քաւչապետին, [ձեռամբ մեղապարտ Ստեփանոս գրչի]*, ի խնդրոյ աստուածասէր և քաղցրահամ պտղաբեր ծառոյն Յոհանէս քահանայի, որ պտղաբերեաց զսուրբ գիրքս և շնորհեաց Աստուածածնին Ոստանի նոր քաղաքին ընձա յաւիտենական, յիշատակ և բարեխաւս հոգոյ իւրոյ, և բարի ծնողացն Յովանիսին և Խելաւքին, և հարազատ եղբարցն Սարգըսին և Թումային, և համեստագոյն կենակցին իւրոյ Խնդ-Թագուհոյն, և զաւակի նոցին Փաշաի և այլոցն, որ առ աստուած գնացին, և Սուլտան-Մելքի և Զըմրութի՝ փոխեցելոցն առ Քրիստոս, և ամենայն ազգայնոցն իւրեանց՝ կենդանեաց և հանգուցելոցն, առհասարակ։ Եւ մի ոք

* Այս տեղեկությունը քաղել ենք 1ը և 3ը էջերի վրա գտնվող հիշատակագրությունների։

իշխեսցէ զսա հեռացուցանել ի դրանէ Աստուածածնին, ոչ յիմոց և ոչ յաւտարաց, կամ ծախելով, կամ գրաւելով և կամ այլ ինչ չար առնելով։ Եւ որ յանդգնի և առնէ՝ խաչեալն աստուած 'ջնջեսցէ զնա ի դպրութենէ կենաց և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ, և որ սրով և դանակով մերժենա ի սուրբ գիրքս և հատանէ ի թխթէս և ի գրոցս՝ սուրն հրեղէն կտրեսցէ զմէջս նորա, այլ հանապազ ի դուռն Աստուածածնին կեն[ա | | |*

| | | գրեցաւ սուրբ տառս ի դառն և ի վշտաբեր ժամանակիս | | | ի բռնակալու թե՞ան] աշխարհիս Ղարայ-Յուսուֆին, և երկրիս մերում Ամիր-էզտըՑի, յանուանի և ի հռչակաւոր գեաւղ որ Տշող կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ատեփաննոս Նախավկայիս, և սուրբ Կիրակոսիս, և սուրբ Սիոնիս։ Եւ արդ, ես ունայնացեալս ի գործոց բարեաց | | | յիշեցէք զանյիշելիս ի գրչաց զՍտեփաննոս գծողս ի տէր Քրիստոս՝ յոյսն ամենեցուն... և զծնողսն իմ զԳրիգոր քահանայն հռետոր գրիչ... և զհօրեղբայրն իմ զՄարտիրոս կրօնաւորն, որ ... Նահատակեցաւ։

116

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4818

Հետ. ստացող՝ Մարտիրոս որդի Գորգոյ

280 բ Արդ, ես Մարտիրոս որդի Գորգոյ, յետո գնեցի զսուրբ աւետարանս ի Դաւթա, ի հալալ վաստակոց իմոց, յիշատակ հոգոյ իմոյ, և ծնաւղաց իմոց, և ամենայն ազգականաց։

Արդ, որք աւկտիք ի սմանէ կարդալով կամ օրինակ դնելով յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՄարտիրոս ՔաՑԵի, և զամուսինն զԱւագ-ՏիկիՑ, և զծնօղսն իւր.... Ընդ նոսին և զԹումա՝ տարաժամ փոխեցեալն առ Քրիստոս, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս և սուք եթող մեզ յաւիտեան, և զամուսին իւր ը[զ]Զարդըրիկ, որ ոչ մխիթարեցաւ և ոչ զաբդըրեցաւ, այլ ի տարմշէ ի սուք մտաւ....։

Ընդ նոսին և զԹումա քահանայ ՌստաՑցի, որ զսակաւս գրեցի յիշեցէք առ Քրիստոս աստուած, և դուք յիշեալ լիջիք, ամէն։ ՊԾԹ. (1410) Թվ. մեռաւ ԹումէՑ, և խիստ դառն սուք եթող ծնողացն և քուերցն և ամենայն ազգականաց և եղբարցն, աւա՜ղ, աւա՜ղ։

117

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 2076

Գրիչ՝ Մելքիսեդեկ
վայր՝ ՀիզաՑ քաղաք

209 բ ... Եւ արդ, ես՝ թաղծեալս մտաւք և ցաւագին անձամբ, վեր-

* Շարունակությունը չի պահպանվել, բերում ենք Ղ. Փիրղալեմյանի «Նոտարք Հայոց»-ից (էջ 38), ուր բերված է հիշատակարանը մեծ հապավումներով։

ջինս ի ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց փութոյ՝ Մելքիսեդեկ պիտականուն խնդրող բանի, գծեցի ձեռամբ իմով զգիրքս քարոզողաց յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց՝ հաւրն իմոյ Տիրացու քահանայի, և մաւրն իմոյ Մեծ-Տիկնայ, և այլ ամենայն ազգականաց իմոց։ Ի Թուաբերութեանս մեծի ութհարիւրի յիսուն և իններորդի ամի (1410), յաստուածապահ գաւառս և ի քրիստոսաշէն քաղաքս Հիզան* կոչեցեալ, ընդ հովանեաւ ամենազօր աջոյ ձեռինն աստուծոյ և աստուածընկալ խաչին Քրիստոսի...։**

118

ԱԻԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 138, սյուն. 296—298, Աղթամար

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ յերկիրս Մոկաց, ի վանքս Սուրբ Խաչ

... Ուստի և տեսեալ զայս անճառ փրկագործութեան խորհուրդ ոմանք քահանայք՝ անուն Ղազար և Անառն, հարազատ եղբարք, զոր ի վաղուց հետէ ցանկանային այսմ աստուածախաւս աւետարանիս, և ետուն գրել զսա յիշատակ հոգոց իւրեանց և ծնողացն՝ Յովհաննէս քահտնայի, և մաւրն իւրեանց, և եղբաւրն Յովանիսի, դեռաբոյս զաւակին՝ Վարդանայ, և այլ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց, և երախտաւորացն։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս այս ի Թուականիս Հայոց ՊԾԹ. (1410), ի յերկիրս Մոկաց, ի վանքս Սուրբ Խաչ և ի սուրբ Կարապետի, ի հայրապետութեան տեառն Դաւթի, ձեռամբ յոգնամեղ և փծուն և անարժան գրչի [Աստուածատուր քահանայի]։***

Ի գործի տեառըն չըկացի,
Եւ պատուիրանն ոչ պահեցի
Եւ | | | ոչ գնացի,
Շատ ի մեղացըն գործեցի։
Պատուհաս եկ ի յաշխարհի

. . . .

Բարեխաւսէք առ միածնի,
Զի ջընջեսցէ զմեղս ամենի,
Եւ առաւել զմեր ծընողի,
[Եւ ըստ] մարմնոյ մեր զաւակի՝

* Ղ. Փիրղալեմյանն իր «Նօտարք Հայոց»-ում նույնպես մեջ է բերում այս հիշատակարանը (էջ 37), սակայն գրչության վայրը նրա մոտ Հիզանի փոխարեն ցույց է տրըված Բաղէշ։

** Շարունակությամբ երկարորեն խնդրում է հիշել իրեն և իր մեղքերի թողությունը հայցել։

*** Գրչի անունը քաղում ենք ձեռագրի նկարագրական բաժնից։

Թումայի և Ատոմի,
Տէրն պահեսցէ ողջ յերկրի.
Եւ ըստ աստեացս որ ելանեն,
Արքայութեան արժանասցեն։
Ո՜վ սուրբ մանկունք նոր Սիոնի,
Որ կայք հոգով յեկեղեցի,
Ձձեզ աղաչեմ ես փանաքի,
'Ի առ ոտս անկեալ արտասուալի.
Ցորժամ կարդայք յեկեղեցի
Կամ ուրին[ակէք] յարկ տեղի՝
Աղաչեցէք զաստուած յերկրի,
Վասն ստացող այս[մ տառի]՝
Ղազար, Անտոն քահանայի,
Յովանի և Վարդանի.
Եւ ծընողացն Յոհանիսի՝
Սուրբ և ընտրեալ քահանայի,
Որ զմասնակցեալ մարտիրոսի,
Որ և արեամբ շահատակի,
Եւ Քրիստոսի արժանացի
Ու արքայութեան ժառանգ լինի։
Եւ ազգացըն ամենայնի,
Որք ի յերկրի են կենդանի
Եւ որք հանգեան ի տապանի։
Աղաչեցէք զտէր ամենի,
Որ ողորմի ստացող տառի
Եւ. ջնջեսցէ զկեղտ ամենի։

... Աղաչեմ զձեզ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս զտեղապահ ուխտիս զտէր Գրիգոր հեզահոգին և զքրտնաջան մշակն տեառն ուխտի, և զՅոհաննէս հայրպետն՝ ամենայն առաքինութեամբ լցեալ, որ և խնամածու և վերակացու եղեն մեզ ամենայն պիտոյի[ւ]ք և հանգուցանեն զմեզ յամենայն վշտաց։ Ինքն որ հանգուցանողն է ամենայն սրբոց՝ հանգուսցէ զնոսա յարքայութեան երկնից, ամենայն ծնաւղաւք և զարմաւք, ձեզ ի մեղաց ձերոց, ամէն։

Զստացող աւետարանիս զՂազար քահանայ, և զԱնտոն, և զՅով-հաննէս քահանայ՝ զհայրն յիշեցէք առ աստուած։ Ընդ նմին զտա-ռապեալ գրիչս յիշման արժանի արնէք մին տէր-ողորմիւ։

119

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրզ. Նոտ. 37—38

Նորոգող՝ Աւետիս
վայր՝ Կաւալու վանք

... Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... Աւետիս աբեղայ... եա-տաբեցի զսուրբ աւետարանս... յաստուածարնակ ուխտ, ի վանքս որ

կոչի Կաւալու, ընդ հովանեաւ սուրբ տիրածին Աստուածածնի, յանուն սուրբ Կարապետին և սուրբ Խոչին է կառուցեալ, ի յառաջնորդութեան տէր Սահակ եպիսկոպոսին, և ինքն բարի և հնազանդ օրինացն աստուծոյ... և վանից միաբան տնտես մահտասի Աղ | | | որ է մարագուբ՝ խնամ տանի ի վերայ մեզաւորիս, հալաւ վլանալ, թափելով և կերակրելով, Գրիգոր ամոլավար, որ աշխատէ բազում ջանիւ ի դուռն Աստուածածնին, և Դալալին, որ է աւելածու տան և դռան։ Աստուած-ողորմի ասացէք։ Թուին ՊԾԹ. (1410)։

120

ՃԱՇՈՑ

ՑԽԴ, Ի, էջ 51, Սալմաստի Հաֆթուան գյուղ

Գրիչ

վայր՝ Խորաձորու Ս. Աստուածածին

. . . Գրեցի... ի տեղիս որ կոչի Խորայձորու սուրբ Աստուածածին, որ է տխում(°) Ասորոց, ի թվ. Հայոց ՊԾԹ. (1410), ի հայրապետութեան տէր Դաւթի...։ [Յիշեցէք] զԱտոմ քահանայ..., զՀայրապետ սարկաւագն, և զՅովանէս կրաւնաւորն, զՊետրոս եղբայրն մեր, և զԱռաքել սարկաւագն, զի սա[կ]աւ մի թղթին աւգնական եղև մեզ և աշխատեցաւ ի ծաղկել սուրբ գրոցս, և զՇլէմոն բարեպաշտ տանուտէրն։

ՊԿ 1411

121

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ, Ի ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Երևան 1492*

Հեղինակ՝ Մատթէոս վարդապետ

ա

268 բ Վասն սրոյ աղաչեմ զհանդիպող մանկունս հայաստանեայց մի ծուլութեամբ ազգիս յամառեալ ցնդիցէք ի պատրանս ծովածուփ կեն-ցաղոյս՝ ուրանալով զուխտն աստուածեղէն, քանզի գիտեմ զպատճառ բերանոյ ձերոյ. նախ զմեզ նախատելով թէ՝ «Ասեն և ոչ առնեն»: Եւ այս յիրաւի, զի ոչ եմք գնացիւք ըստ ասացելովքս, այլ գոնեա զա-բարեալս ընթերցջիք, զի ահա և այսոքիկ աշխատութիւնք մեր են պարգևեալ ի հոգւոյն. զի որպէս մեք աշխատեցաք և առաք և դուք ընթերցջիք և լուիջիք, զի ոչ յաւելի մեծամեծ բեռինս կոչեմ զձեզ՝ բայց միայն ի յուսումն: Գարձեալ, աւրինակ դնէք, թէ «Այս անուն ընթերցաւ և զայս ինչ արար», վասն որոյ և դուք ոչ ընթեռնոյք: Գիտացիր բարեկամ մեր, զի ոչ թէ ընթերցումն արար այն, քաւ լիցի, այլ անուղղայ բարքն. և յայտէ ի յոչ ընթերցողացն, որք ոչ ընթեր-ցան և արարին անուղղայ վատթարութիւնս: Այլ և պատճառեն ոմանք զհեշտ կեանսն թէ՝ «Այս ամենայն ընթերցումն վասն ընչից է և փա-ռաց, և ահա, առանց ընթերցման գտանեմք զայն»:

Իմա, ով եղբայր, զի փառք առանց ընթերցման պատկեր ան-ցաւորիս է, իսկ ընթերցմամբ փառք՝ յայտնութիւն է կենացն յաւի-տենից, որոյ կաթիլ է նա ցուցեալ յաստուծոյ ի հոգիս մեր առ ի զովացուցանել զպասքումն սրտից մերոց:

269 ա Արդ, գիտացեալ զայս ամենայն միայն կամաւորութեամբ սի-րեսցուք զսա, ընկալցուք զգանձս զայս յամանս խեցեղէնս. քանզի և աղքատացաք յամենայն կողմանց ի մեծամեծաց և ի փոքունց և ու-նայնութեան աւուրք մեր անցին, միայն մնացեալ այսոքիկ, որ գըր-եալ են և գրին: Թէ և փառք մեր ոչ գտանին աստ, սակայն փառքն աստուծոյ սոքաւք յայտնի լինին: Եւ ահա այժմ պարտական եմք փառաւորել զնա և գոհութիւն տալ, որ զանց արարեալ զմերով անար-ժանութեամբս, ետ մեզ ըստ չափու մերում զխնդրուածս սրտից մե-րոց, և հասեալ այս երևելի շնորհացս, սոքօք հետևեսցուք հաղորդել

* Օգտագործել ենք նաև №№ 2519 և 9402 ձեռագրերը և «Թորոս Աղբար», Բ., էջ 479--483:

մեծի անհասական ծովուն՝ ընդ ամենայն սիրողս անուան իւրոյ, Թե-րեւս լիցի մեզ հասանել մասին սրբոց և փառաց ընտրելոցն, և խոս-տացեալ բարեացն ժառանգորդ լիցուք ի Քրիստոս Յիսուս...։*

Բ

Ի սպառել ազգիս հայկազեան և ի վերջին դարուս սառուցեալ ոգւոց տարաժամ կորուսելոց՝ մեծի և փոքու, և ի ստորասուզեալ դա-սուն քահանայական, և ի հարեալ ժանեաց բանսարկուին, յամս Թուականի ՊԿ. (1411), ի բռնակալութեան ազգին Թորգոմեան, որ յետին գազան հանդիպեալ դանիէլականն, որ ուտէր և մանրէր զիւրսն և զօտարսն՝ ոչ յայտնի գոլով առաջնորդին և հնազանդին, այլ հա-ւասարեալ կորստեամբ և չարեօք առաւելեալ, որ և յիշել եմ զառա-ջին չարին Թամուր *կոչեցեալ կաղին, և ի նոյն վտանգի գոլով։ Յե-տոյ ամենայնի հարեալ զՎատնիարեան դաշտն, և զկալաւ տէր նորա, և սպան զԹագաւորն Վրաց* Կոստանդին, *և զբազումս գերի վարեալ։ Յայսմ դառնութեան ժամանակիս ես՝ նուաստ և խեղդամտհ ի մեղս* Մաթէոս, *յետնեալս յիմաստից և տգէտս ի գիտնականաց և Թոացեալս որբ ի յիմ հարազատագոյն հարանց՝ հոգեկանաց և մարմնականաց, որ և յայսմ ամի եղև զրաւ կենաց մեծ բարունոյն իմոյ* Գրիգորի** *յիշատակին մեծի հօրն* Յոհաննու Որոտնեցւոյ, *որոյ սուգն պաշարեաց*
269 բ *զիս և ետ մոռանալ ‖ զառօրեայ կենցաղս, վասն որոյ տատանեալ կենօք ձեռնարկեցի հաւաքել զբանս սուրբ հօրն մերոյ Ոսկեբերանի, և Եփրեմի, և զոր ինչ պարգևեաց մեզ հոգին սուրբ, ի խնդրոյ հարա-զատ և սիրեցեալ եղբօր մերոյ* Յակոբ *վարդապետի, յորոյ սիրոյ հարկեալ յանձն առեալ մեր զմեծ աշխատանս զայս, որ չէր իմ կա-*

---

* «Թորոս Աղբար»-ի մեջ՝ «անհունական»։

** Գրիգոր Տաթևացու մահվան և Վրաստանի կոտորածի ու գերեվարության առի-թով՝ Մատթէոս վարդապետը կարդացել է մի դամբանական, որ կրում է հետևյալ ընդար-ձակ խորագիրը. «Նորին Մաթէոսի վարդապետի ներբողեան ողբերգաբար, ոգեալ ի Թա-գուՑս երջանիկ բաբունապետին Գրիգորի: Ընդ նմին յիշատակեալ զողբս լալեաց կոտորա-ծին, որ ի Վրացտուն՝ ի Փայտակարան քաղաքի, քանզի պատկեր աւուրց ի մի դիպեցաւ։ Մանաւանդ ի հրաշագեղ Կարապետ՝ եղբայր իւր (Գրիգորի)» (Ձեռագիր № 1402, էջ 270բ—278ա)։

Դամբանական ճառի մեջ Մատթէոս վարդապետը, գովաբանելով իր ուսուցչի բարե-մասնությունները, հաղորդում է ուշագրավ տվյալներ Գր. Տաթևացու կյանքի ու ժամա-նակաշրջանի մասին։ Ստորև քաղվածաբար տալիս ենք երկու հատված դամբանականի կարևոր մասերից։

«Եւ արդ, ուստի ներբողեցից զքեզ ճառս ողբերգականս,—ավաղում է նա դիմելով իր հանգուցյալ ուսուցչին,—քանզի թէ ընթանամ ի հրապարակս եկեղեցւոյն՝ ոչ գտանեմ զքեզ. եւ ի ժողովս բարի արանց, ուր հանապազ նստէիր՝ նոյնպէս և անդ ոչ երևիս. իսկ թէ ի գահոյս թագաւորական շտապեցայց, ուր հանապազ կանխէիր՝ և անդ ես խնդրեն զքեզ. իսկ թէ ի բնակութիւն ձեր ընթացայց՝ առ ընտանիս և սիրելիսն՝ և նոքա զեռեւ ողբան զքեզ. իսկ թէ զմայր քո հարցանեմ՝ ի յողբալոյն ոչ կարէ պատասխանել ինձ. եւ թէ ի դրկեցութեանն քննեցից զքեզ՝ և նոքա յոգւոց հանեն. իսկ թէ յուսումնակիցսն քո ժպրհիմ՝ և նոքա ի սուգ են անհնարին վասն քոյին տեսութեան զրկելոյն... իսկ թէ զդասս զրոց աշակերտացն հարցանեմ՝ նոքա իբր զմոլի եղեալ են անտերունջ՝ շրջելով ի

բողութիւն, այլ ի չգոյէ առն և ի հասեալ ժամու անահրաւնջ գոլով,
և ի խնդրոյ սրբազան եղբօրն մերոյ սկսայ շնորհօքն Քրիստոսի աս-
տուծոյ, և ողորմութեամբ նորին կատարեցի։

Արդ, աղաչեմ զհանդիպողսդ սուրբ գանձիս՝ մտադիւրութեամբ
ընթեռնուլ, և զաւելորդն կրճել, և զպակասութեանն ներել, զի ոչ միայն
զիւրն հոգացաք աստուծով, այլ և զնմանակից բանին, որ ի համա-
նունութենէ յայլևայլ գրոց առընթեր միմեանց եդի, առ ի դիւրա-
գիւտ լինել աղքատ մանկանց իմոց ի բեմբասացութիւն և ի կարգ
զրուցաց հրապարակաց բանին։ Եւ այս գառն և տաժանելի կրիւք,
քանզի ոչ ունէի զարժանաւորութիւն հոգւոյն, որ դիւրաւ մտածէի,
այլ ժտելով և չարչարանօք տկար ոգւոյ ի լոյս էած աստուած հոգին
առ ի լցուցանել զփափագող սրտին։ Վասն որոյ աղաչեմ խնդրել
զթողութիւն բազմավրէպ յանցանաց իմոց, թերես իջցէ աղօթք մաղ-
թանաց և ողորմութիւն փրկչին ի շարաւալի ոգիս իմ, և լուասցէ
զաղտ հնութեան մեղօք մեռելոյս, և արժանացուսցէ ողորմութեան
մասին սրբոց, և կարգեսցէ ընդ յետին մշակացն։ Այլ և երջանիկ
հօրն մերոյ Սարգիս վարդապետի յիշատակ ի սմա եղիցի, զի պատ-
ճառ եղև մերոյս գծագրութեան, քանզի նա կանխաւ համառօտեալ էր
զսա, և մեք նորին շաւղացն հետևեցաք։ Այլ և անմեղադիր լինել
աղաչեմ, զի դառնութիւն ժամանակիս և աշխատանք* չար խորհրդոց
շփոթեալ աղտեղացուցին զհոգի և զմարմին իմ, մանաւանդ ծուլու-
թիւն անգութ և անհնազանդ տշակերտաց վիրաւորեցին զիս, և յա-
270 ա ւէտ վիշտք || ի սուտ եղբարց, որք անհրաժեշտ վատթարութեամբ
դառնացուցին զիս. վասն որոյ և ոչ կարացի զբովանդակն մակա-
գրել, այլ զստկաւս ի բազմաց գրեցի առ ի յիշատակ մանկանցդ եկե-
ղեցեացդ Հայաստանեայց։ Վասն որոյ գրեսջիք զյիշատակութիւնս
իմ ի վերջք գրոցս որք գաղափարէք, զի և դուք յիշեալ լիջիք ի
Քրիստոս յաւիտենական կենօք։ Եւ որ յաչաղենն և հակառակինն՝
առցեն զնոյնն, զոր և արարին, իսկ կատարողք աղաչանաց մերոց՝
օրհնեալ լիջին ի Քրիստոս Յիսուս՝ ի տէր մեր։

Այլ և սովորութիւն է բնական մերոյ ազինս՝ ի յօտար ազգաց
իմաստից բանին ցանկալ և որոնել, թէև կարի յետնոց է արարեալ,
և զնոյն ընթեռնուլ և զիւրոյ հօր, թէև կարի մեծաց է աշխատեալ՝

մացառուտ վայրս փշոց, որք ավելի ինչ ոչ գտանեն, բայց միայն զխոցուածս հոգւոց։ Վասն որոյ ի միտ ածեալ ոչ ուրէք երեւիք ասա՝ յայսմ աշխարհիս, բայց միայն առ տենչալին ձեր Քրիստոս» (էջ 271 բ—272 ա)։

Մատթէոսի կարծիքով սոցիալական լարված հարաբերությունները, ժողովրդի բո-
ղոքն ու դժգոհությունը առկա անտանելի պայմաններից ավելի են խորանում ու ակնհայտ բնույթ են ստանում Գր. Տաթևացու մահով։ Հետևյալ խոսքերով է բնութագրում Մատթէոսը իր ժամանակը. «(Ամենեքեան) աքացեն զմիմեանս, խածատեն զմարմինս իրերաց, բամբասեն զառաջնորդս իւրեանց, տրտնջան ի տանուտեառնէ իւրեանց. ի մարմինս մաշին, ի միտս տանջին, ի հարկահանաց ձանձրանան, յանօրինաց տառապին, զտիւ լան, զգիշերն ողբան, բարիքն տրտմին, և չարացեալքն ուրախանան։ Եւ այս ամենայն վասն մեղաց մերոց» (էջ 276 բ—277 ա)։

* № 2519 ձեռագրում՝ «աղճատանք»։

ոչ ընդունել, վասն որոյ աղաչեմ մի զանմտութիւնս զայս ի գործ ածել, այլ ընդ օտարացն և զքոյսս [սիրել և] մեծարել և կամակար մտօք ընթեռնուլ, զի լիցի ձեզ թերևս հասանել յաւիտենական գիտութեանցն՝ մտանել յանղրաւական գիտութիւնն՝ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ ընդ հօր իւրում և սուրբ հոգոյն, այժմ և յաւիտենս, ամէն։

Գ

207 ա ...Արդ, եկեալ տեսցուք զհաւատացեալ ազգս Հայկազեան, որ նորագոյն սկսան խաւարանալ՝ բացեալ զբերանս յերկինս և իբր զտիւ և զգիշեր ընթերցման լեալ այնպէս ձանձրութեամբ հայհոյեն զգիրս սուրբս, մանաւանդ զայս, թէ զինչ իցեն դրեալքդ։ Այլ և որք սակաւ ինչ յաճախեալ վասն ագահութեան ի բանս՝ առասպելօքն կամին անուն առնու.լ և համաձևանալ փառօքն տեառն։ Որ և յաւելաւ այս սուգ ի վերայ իմ առաւել քան զկորուստ թագաւորացն և իշխանաց։ Եւ սոքօք խոցոտեալ ի յոգի և ի գերեզմանի դրան՝ կամիմ զհնարս իմանալ իրացս և ոչ գտանեմ. Վասն որոյ ողբամ զտիւ և զգիշեր, թողեալ զյիշատակ բանի ողբերգականի զկնի եկելոցս, թերևս հանդիպեսցի բարեխորհ և մտաւոր ընթերցողի յիշել ի ժամ արտասուաց աղօթականի. յորոց հասցէ մասն կաթլաց յոսկերք մեղօք մեռելոցս և արժանի արասցէ խոստացելոց բարեացն տեառն մերոյ....։

122

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Երևան 5871

Հեղինակ՝ Մաթէոս Ջուղայեցի

57 բ Որ և այս տեսչութեան բանի ընդ նախասացեալ մեկնութեանն որ ըստ Ղուկասու աւետարանին է գիցի և իբր զկրկին լօմայս այրոյն՝ ընծայեսցի ձեր մեծանձնութեանդ։ Արդ, սայ է մասն ինչ յաշխատութենէ վարժապետին իմո Գրիգորի մեծի, և մասն ինչ ի քրտանց հարցն, և բոլորն իսկ յառատաձիրն տեառնէ, զոր և յոյժ աշխատութեամբ հաւաքեցի ի մի վայր առ ի դիւրահասութիւն մանկանց նորածնելոց եկեղեցեացդ Հայաստանեայց։ Զոր և հայցեմ երկրամած գիմօք, ով դասք լուսափայլից, որք պատահիք այսմ աստուածաճեմ բուրաստանիս յիշեսջիք զանպիտանս ի բնաւս, զյոգնամեղ անձն զՄաթէոս սպասաւոր բանի, և զվարժապետն իմ զմեծն Գրիգոր, և զմիւս Գրիգոր րաբունի՝ զազգականն իմ՝ զխնդրող այսմ աշխատանաց. և զսակաւ ծրիկս ուղղութեամբ ընթերցջիք և զպակասն ուղղեցէք, և զաւելորդն կշռել պարտիք, և պակասութեանն ներեցէք։ Զի ոչ թէ լիապէս գրեալ է աստ, այլ այս գլխաւոր բանից եզև լուծումն և որք պիտոյ են մեծի աշխատութեանն. իսկ զայլ մասնաւորն, եթէ կամիք, ի մեծ անդր գտջիք, ուր բոլորն է մակագրեալ։

Դարձեալ, աղաչեմ զսակաւ յիշատակիկս գծել ի վերջքս գրոց, որք գաղափարէք, զի և գուք գրեալ լիջիք ի գիրն կենաց։ Եւ որք բառնան՝ Թողցի նմա ըստ գործոց իւրոց, բայց սխալանաց Թողութիւն հայցեմ, զի այնքան կարացի։*

123

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔԱՐՈԶ Ի ԲԱՆՆ՝ ՑԱՐԻՑԵՆ ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԷՔ

Երևան 2229

Հեղինակ՝ Մատթէոս Ջուղայեցի

Եւ քանզի ոչ վայել է Թագաւորի ի տառապելէ իր ինչ խնդրել,
և այս Թէպէտ գործ սիրոյ է և խոնարհութեան, սակայն մեզ ոչ վա-
190 բ յել էր. բայց զի || և Թագաւորք ի չքաւորաց առնուն զնիւթ այրմանն,
զոր աշխատանօք ժողովին, այսպես և հայր մեր, ընկալցիս զպատճառ
բանիս և իմաստութեամբ շնորհացդ աստուածային, որ ի քեզ է ամ-
բարեալ՝ այրեսցես զանուղղա գործս և զօրէնս նոցա։ Ողջ լեր ի տէր։

124

ՃԱՇՈՑ

Փիրդ. Նօտ. 39-40, Վանի Հայկավանք եկեղեցի

Գրիչ՝ Թովմա Սիւնեցի
վայր՝ յերկիրս Ծար, ի վանս Գետամէջ

...Գրեցաւ և զրաւ առեալ աւարտեցաւ տօնազարդ և աստուածամեծար սուրբ գիրքս ի Թուաբերութեան հայկազեան տոմարիս ՊԿ. (1411), ի Թագաւորութեան Յուսուֆին, ի հայրապետութեան Հայոց տէր Կարապետի, և յԱղուանից՝ նորին անուանակցի տէր Կարապետի, և յեպիսկոպոսութեան նահանգիս աԹոռոյն Ադդէի՝ տէր Զաքարիայի, և յիշխանութեան տեղւոյս պարոն Վահրամայ, պարոն Տուրսունին, պարոն Շրուանին, պարոն Սատոյին, պարոն Պռօշին, պարոն Գրիգորին, յաստուածաշէն երկիրս Ծար կոչեցելոյ, ի վանս Գետամէջ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլ սրբոց նշանացս, զոր սօքօք ամրացեալ փրկեսցին յամենայն որոգայԹից հոգւոյ և մարմնոյ, ամէն։

Ցիշատակ եղիցի և ի սմա հանգուցեալ իշխանացն այսմ նահանգի ...Նախ մեծաշուք իշխանին Հասանայ որդւոյ Դաւբին, և ամուսնոյն իւրոյ Խոնձային, և զաւակացն իւրոց՝ քաջ և արի պարոնացն Գրիգորայ, Սարգսի, Շանշի, Ջհանշի, Աղբուղին, Շրվանին, նաև Թագազարմ իշխանին Սադունին, զոր տէրն տէրանց և Թագաւորն Թագաւորաց՝ ընդ սրբոց Թագաւորացն և բարեպաշտ իշխանացն գա-

* Մատթէոս Ջուղայեցի վարդապետի այս և հաջորդ անԹվական հիշատակարանները տեղադրում ենք նույն հեղինակի 1411 Թվականին գրած ընդարձակ հիշատակարանին առընԹեր։

ռեսցէ և պսակեսցէ զնոսա, ամէն։ Յիշատակ եղիցի և ի սմա աղատացն տանս Դաւրեան, նախ՝ ամենայն օրհնութեանց արժանաւոր պարոն Աթապակին և այլ ամենայն ազատաց։ Նաև յիշել ի տէր զամենայն տանուտեարսն աստուածաշէն երկրիս Ծարայ, նախ Ձագիկ | | | *

Գրեցաւ սուրբ տառս ձեռամբ Սիւնեցի Թովմա գրչի, ի խնդրոյ Յովհաննէս քահանայի։

125

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՔԱՐՈԶԻՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ ԵՒԱԳՐԱՅ

Երևան 4161

Գրիչ՝ Մովսէս
վայր՝ Տաթև

ա

246 բ … Գրեցաւ սուրբ և ընտիր մարգարիտս լուսափայլ ձեռամբ մեղապարտ Մովսէսի, զոր մեծ փափագանաւք խնդրեցի զգանձս աստուածային, ծաղկաւէտ և սաղարթափթիթ զարդարեալ, ի պէտս հիւանդացեալ հոգոյ իմոյ, և ծնողաց իմոց, և եղբաւրս՝ Մարտիրոս քահանայի, վասն զի գտա զսայ բըժիշկ և ողջացուցիչ բազմաց։

Վա ձեռացս, որ մեղաւ[քս] հողանա, երանի հասկացողին, որ հասկանա և ի միտ պահելն խիստ ջանա։

Ո՛վ եղբայրք, որք կարդայք կամ ընթեռնույք, իմ բազում յանցանացն թողութիւն խնդրեցէք, աղաչեմ, ‖ և ընդ նմին հատուսցէ ձեզ արար[իչն աստուա]ծ։

Արդ, գրեցաւ սա ի թու[ականիս] Հայոց ՊԿ.** (1411), ընդ հովանեաւ Կաթուղիկէիս, և [Ս.]ստաթէի սուրբ առաքելոյս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Լուսաւորչիս, և այլ բազմահաւաք սուրբ նշխարացս, որ կան աստ ամփոփեալ, առ ոտս քաղցրուսոյց հաւրս մերոյ Յովաննէս փակակալի սուրբ ուխտիս։

Ո՛վ պատուական սուրբ հարք և եղբայրք, աղաչեմ զձեզ և խնդրեմք ի ձէնջ, հայցեցէք յաստուծոյ, որ ողորմեալ և վերստին կանգնեսցէ զանկեալ և զկործանեալքս մեղաւք՝ աղաւթիւք ձերովք, ամէն։

բ

191 բ Տէր աստուած, ողորմեա Մովսէս գրչի և Դեղիկ միակեցի և ծնողաց նոցա…։

* Ձեռագրից թերթ է ընկած եղել։

** Պ. (800) թիվը պարզ երևում է, իսկ Կ. (60)-ն պատռված է։ Նորոգողը, ԺԹ. դարի մարդ, թվականը կորուստից փրկելու համար նորից այն գրել է տողամիջին, այդ ընդօրինակության հիման վրա երկրորդ՝ այժմ բացակայող տասնավոր թիվը եղել է Կ. (60)։

Գ

*Ո՜վ, սուրբ միայնակեաց, աղաչեմ վասն Քրիստոսի, յիշեա զմայրն իմ, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս։**

Դ

Ո՜վ սուրբ ընթերձող, աղաչեմ, յիշեա զծեր հայրս մեր՝ զՀայրապետ, *զի շատ երախտաւոր է մեզ։***

Ե

Ո՜վ սուրբ ընթերցողք, յիշեցէք զՄովսէս *կաղիկս, զի դառն և անբժշկելի ցաւ էհաս ոտվայնիս, և ես ոչ զոքուն ունելով դեղ, բայց միայն զսուրբ աստուածածինն և զսուրբ վարդապետաց աղուխքս, և բժշկեցայ։****

126

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 225

Գրիչ՝ Յոհաննէս Սեբաստացի
վայր՝ Բագարան, Աղճաղալայ բերդ

309 բ *...Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ մեղապարտ
և անիմաստ և տխմար գրչի* Յոհաննէս *սուտանուն քահանայի, որ
կոչի* Սեբաստացի, *և իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և
բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր
պարգևեաց մեզ մարդասէր հոգին, գրեցի անարժան ձեռաւք իմով
յընդիր և ի ստոյգ աւրինակէ՝ կենաւք, տառապանաւք և բազում
պանդխտութեամբ։ Իսկ ի հայկազան թվականիս ՊԿ. (1411), ի գաւառս*
Բագրանա, *ի բերդս* Տիկրանա, *որ կոչի* Աղճաղալայ, *ընդ հովանեաւ
310 ա սուրբ Յովհաննիսի և սուրբ Նշխարացս Դաւթի, ի մեծ || հայրապետութիւն տեառն* Յակովբայ, *և ի կայսերակալ բռնակալութիւն ազգին
նետողաց* Ուսուփ *խանին, և ի պարոնութեանն* Փիր-Հուսենին, *որ և
եդեալ կան հարկ ի վերա քրիստոնէից և կան ի տառապանք յայլասեռից, և է ամենայն ուրէք բարեկարգութիւն նուազեալ և անիրաւութեան յամենայն կողմանց զաւրացեալ. և կատարեցաւ բանն մարգարէական, որ ասէ թէ՝ Գոյ ժամանակ, որ ասեն լերանց, թէ անկերուք ի վերա մեր և բլրոց, թէ ծածկեցէք զմեզ։ Զոր տէր աստուած
տյց արասցէ ազգի մերում և փրկեսցէ զմեզ ի ձեռաց նեղչաց մերոց։*

Այլ և արդ, սուրբ հարք և եղբայրք և մանկունք եկեղեցւոյ, որք ընթեռնուք զսուրբ աւետարանս զայս և կամ աւգտիք և աւրի-

---

* *Գրված է 224 բ—225 ա էջերի ստորին լուսանցքում։*
** *Գրված է 232 բ—233 ա էջերի ստորին լուսանցքում։*
*** *Գրված է 241 բ—242 ա էջերի ստորին լուսանցքում։*

նակէք, յիշեսջիք աղաւթիւք ձերովք զստացաւղ սորա՝ զԱբրահամ
կրաւնաւորս, և զծնողսն մեր՝ զհայր մեր զպարոն Սարգիսն, և զմայրն
310 բ մեր || զԽութլու-Խաթունն, և զհարազատ եղբարն մեր զպարոն Շաքար-
պէկն, և զկենակիցն իւր զԱմեն-Տիկինն, և զհանգուցեալն առ Քրիստոս
զեղբայրսն մեր զԴաւիթն և զԳրիգորն և զՇահին-պէկն, և զամենայն
արեան մերձաւորքս մեր, որ ի վերա մեր երախտիք ունին, և զՅով-
աննէս կրաւնաւորս, որ աստ հանդիպեցաք։ Ընդ նմին և զիս՝ զան-
պիտան գրիչս զՅոհաննէս սուտանուն քահանայս, և զծնողսն մեր
զԱմիրպէկն, և զմայրն մեր զԽասխաթունն։ Արդ, յորժամ ընթեռնուք
սուրբ աւետարանս, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր և աստուածն
ամենայնի յիշեսցէ զձեզ ի յիւր միւսանգամ գալուստն, ամէն։

Եւ զիս զՆերսէսս, որ զթուղթս կոկեց[ի], յիշեցէք ի ձեր սուրբ
աղաւթքդ, ամէն։

127

ԱՒԵՏԱՐԱՆ

Երեւան 5240

Հետ. ստացող՝ Ներսէս։

ա

139 ա ...Ես՝ վերջին ստացողս խուսն* Ներսէս ստացայ** զԱւետա-
րանս Քրիստոսի աստուծոյ մերոյ և զՇարակնոց մի՝ ի հալալ և յար-
դար յընչից իմոց և տուի իմ եղբաւրորդւոյն՝ Կարապետ քահանային,
յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց, և եղբարց իմոց՝ Հայրապետ քա-
139 բ հանային և Աւետիս քահանային, և խու || սն Խոցդեղին, և որդոց իմոց
Ըռէսկէն և Աւաք-Պարոնին***, և որք կարդայք կամ աւրինակէք յի-
շեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր և աստուած զձեզ յիշէ։****

Յետ ժամանակի փոխեցաւ Կարապետ քահանայն առ աստուած,
և մնաց երեք որդի՝ Ղազարն, Հերապետ քահանայն և Մկրտիչն աշ-
խարհական։ Եւ անդաւ աղաղակ և աղմունք***** ի մէջս իւրեանց
վասն Աւետարանիս և Շարակնոցին, և երեկ Թումա վարդապետն և
Յովանէս վարդապետն, և բաժանեցին զամենայն ինչս որ կայր՝
երեք բաժին. և մնաց Աւետարանս և Շարակնոցն։ Հայրապետն ասաց,
թէ Շարակնոցն ինձ տուր. նա Ղազարն չետուրն. էառ Շարակնոցն
Ղազարն և տուին [վարդապետք]****** զաւետարանն Հայրապետ քա-
140 ա հանային, թէ ծախ || է, թէ գրաւէ վարդապետաց վկայութեամբն՝ ինքն
գիտէ.******* Աստուած ետուր իւրն Շարակնոց. Եւ******** յետոյ

* Իմա՝ «հիւսն»։

** Տողամիջում, «ստացայ» բառի վրա, անվարժ ձեռագրով գրված է՝ «գնեցի»։

*** Տողամիջում գրված է՝ «և ամենայն արեան մերձաւորաց»։

**** Տողամիջում՝ «յիւր արքայութիւնն»։

***** Իմա՝ «աղմուկ»։

****** Գրված է տողամիջում, անվարժ ձեռագրով։

******* Նույն անվարժ ձեռագրով տողամիջում գրված է՝ «ուրն էչ» (իմա՝ «իւրն էչ»)։

******** «Եւ»-ից հետո տողամիջում՝ «Բ. որդին»։

ժամանակաց փոխեցան* որդիքն նորա [աէր]** ԱտոմՆ և ԹումէՆ առ աստուած, և ՃԱաց անյիշատակ։ Եւ ես Հայրապետ [քահանայս]*** տուի զԱւետարանս ի դուռն սուրբ Գորգուն և սուրբ Աստուածածնին, յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց՝ ՂազարուՆ և ՄկրտչիՆ, և որդւոց իմոց՝ ԱտոմիՆ և ԹումայիՆ, և կենակցին իմոյ ԵղիսաբէթիՆ, և դստերն իմոյ ԱՆՆա-ԽաթուՆիՆ, և ամենայն արեան մերձաւորաց իմոց, և թէ քանի կենդանի է**** առ ինք պահէ, և յետ մահուանն իւրոյ՝ կենտ ի դուռն եկեղեցեացն։ Եւ որք դաւի ենէ, ի յեկեղեցոյ դրանէն <և> հանէ, նա զմասն զՅուդային և զխաչայխանուացն և զԿայենին առցէ, [ամէն],*****

128

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 2177 ******

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Մեծոփայ վանք

360ա ...Արդ, ի յամի ծննդեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ հազարերորդի չորսհարիւրերորդի և չորեքտասան թիւ յաւելեալ ընդ նմին, և ի թուականիս Հայկազեան տոհմիս տումարի՝ ըստ հոլով-ման ամաց ՊԿ. (1411), գրեցաւ գիրք քարոզութեանս առաջին հա-տորի, հաւաքեալ ձեռամբ սուրբ հօրն մերոյ երկրորդ լուսաւորչի՝ մեծ վարժապետի, քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի արթուն անուն գերապատիւ սուրբ րաբունապետի Գրիգորի՝ աշակերտի Յոհա-Նու ՈրոտՆեցւոյ, որ էր յերկրէս ՔաջբերուՆի, ի կարգէ աստուածաբան վարդապետաց սրբոց՝ երանելոյն Գրիգորի աստուածաբանի, Կիւրղի և Աթանասի՝ միաբանութիւն դաւանողաց զբանն աստուած միացեալ

* Ձեռագրում՝ «փոխեցաւ»։

** Գրված է տողամիջում նույն անվարժ ձեռագրով։

*** Ավելացված է տողամիջում նույն անվարժ ձեռագրով։

**** Ում մասին է խոսքը չի ասված. հավանորեն վերը հիշված վարդապետներից մեկի։

***** Ավետարանն ըստ հնագրական տվյալների ԺԳ. դարի կեսի ընդօրինակություն է, հիշատակարանի բուն և հետաքրքրական մասը գրված պետք է լինի մի քանի տասն-ամյակ ընդօրինակությունից հետո, հավանաբար 1409—1411 թվականների ընթացքում։ Թվականի որոշման համար, բացի հնագրական հիմքերից ունենք նաև հետևյալ տվյալ-ները։ Հիշատակարանում նշված Թովմա և Յովանէս վարդապետները նույնանուն Մեծո-բեցի վարդապետներն են։ Թովմա Մեծոբեցին վարդապետական գավազան ստացել է Գր. Տաթևացուց 1409 թվականի նոյեմբեր ամսին, իսկ Յովան Մեծոբեցին վախճանվել է 1411 թվականին, ուստի և նրանք համատեղ կարող էին հանդես գալ որպես Կարապետ քահա-նայի ժառանգության բաժանորդներ 1400-ից ոչ շուտ, 1411-ից ոչ ուշ։ Նկատի ունենա-լով այս տվյալները հիշատակարանը պայմանականորեն տեղադրում ենք 1411-ի թվա-շարքում։

****** Այս ձեռագրի միայն 301—303 թերթերն են ընդօրինակված 1411 թվականին, մյուս մասը (թերթք՝ 1—300, 364—455) ԺԷ. դարի ընդօրինակություն է։

ի մարմնի, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի և աղօթք սոցա ի
վերայ ամենայն աշխարհի։ Ձեռամբ անարհեստ և անիմաստ, մեղսա-
մած և մատնադեղև սխալագիր գրչի Յովանէս անարժան կրօնաւորի,
որ անուամբս միայն եմ ձևացեալ և ոչ գործովս, ըստ այնմ որ ասէ՝
Մարմնովս արտաքուստ սքնիմ և անձամբս երփնիւ ճայիմ ճանաչիմ,
ի յիշատակ իմում անձին հիքականի և ի յօգուտս խոնարհ և հեզ
գրոց աշակերտեալ անձանց, մանաւանդ հոգևոր հօր իմոյ և ուսուցչի
Դաւիթ կրօնաւորի և Թումա քահանայի՝ հանգուցելոցն ի Քրիստոս,
մանաւանդ հարազատ եղբօրս իմ՝ Վարդան խաչընդուս կրօնաւորի,
որ բազում աշխատանաւք, երթևեկութեամբ եգիտ զթուղթս այսմ
360 բ աստուածային սոփերի և քրտնաջան աշխատութեամբ կոկեաց։ ‖ Այլ
և հոգևոր հօրս մեր Թումայի՝ և եղբօրս մեր Ղազար սարկաւագի, որ
և սա օգնական եղև տուն տալով և ողորդելով, աղաչեմ յիշել ի տէր,
առ ի սլահել զսա ըստ կամաց իւրոց։ Դարձեալ աղաչեմ զամենեսեան
սիրովն Քրիստոսի, որք հանդիպիք այսմ հոգիաբուխ պատգամացս,
յիշել զիմս աղկաղկութիւնս ի տէր սրտի մտօք, և զամենայն աշխա-
տողսն ի սմա։ Նաև զհանգուցեալ րաբունապետքն մեր՝ զՍարգիս
վարդապետ, զՎարդան վարդապետ, և զՅովհաննէս և զԿիրակոս աշ-
խարհալոյս վարդապետքն եկեղեցւոյ, որոց յիշատակն աւրհնութեամբ
եղիցի։ Այլ և զմարմնաւոր ծնօղքն մեր, զվաղ ննջեցեալքն ի Քրիս-
տոս՝ զՊօղոս և զԽութլու, և զմօրաքեռն իմ զՍթլալ, և զհօրեղբայրքն
իմ՝ զՎարդան քահանայ, և զՊետրոս, և զՍաղաթէլ, և զՄաթէոս, և
զկենակիցն իւր զՄարթայ՝ զհանգուցեալքն ի Քրիստոս։ Այլ և զքեռն
իմ զԱննա, և զայր իւր զՄարտիրոս աղաչեմ յիշել ի տէր և մեղաց
թողութիւն խնդրել։ Եւ որ լի սրտիւ աստուած-ողորմի ասէ, և ինքն
ողորմութիւն գտցէ յողորմածէն աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտ-
եան, ամէն։

Արդ, գրեցաւ սա յերկիրս Քաջբերունեաց, ի սուրբ ուխտս Մեծո-
փոյ, ի հրեշտակաբնակ կայարանս սրբոց վարդապետաց և ճգնաւո-
րացն առաջնոց, ի դրունս տիրամօր Աստուածածնի և սուրբ Ցակո-
բայ հայրապետի, հրամանաւ գիտնական և արդիւնական հռետորի
Թումա վարդապետի, ի ծնունդ և ի սնունդ մաքրափայլ որդւոց մաւր
մերոյ Սիոնի, որ և զյօժարամիտսն ծնանի երկօք բանին ճշմարտու-
թեան, այլ և յիշատակ իւր և իւրոցն ամենայնի։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ կենսապար-
գև կտակիս յիշեսջիք զվերոյասացեալ վարժապետն Թումա, և զհարա-
զատսն և զծնօղսն իւր, և զհոգևոր հայրն իւր և զուսուցիչն՝ զՄաթէոս
սրբասէր կրօնաւորն, որք օգնական եղեն մեզ յօժար կամօք և անկեղծ
սիրով՝ կերակրով, զգեստիւ; զօրինակն շնորհելով, քաջալերելով և
այլ ամենայն պիտոյիւք, զոր հատուսցէ սոցա տէր միոյն հարիւրա-
պատիկ, հազարապատիկ և բիւրապատիկ, կրկին կենօք, ամէն։ Ի
ձեռնտըւութենէ հոգւոյն աստուծոյ գրեցի մեծաւ տաժանմամբ և
եռափափաք ըղձմամբ զտենչալիս ոգւոյ իմոյ և յոքունց՝ զգերահրաշ
361 ա իմաստութիւն և ‖ զոգեշահ լուսաւոր վարդապետութիւն մեծ հռետո-

րին Գրիգորի, ի դառն և յանբարի ժամանակիս, յորմէ սասակացեալ է սուրն իսմայելացւոց ի վերայ մեր հալածանօք, ըստ յառաջատեսլեան սրբոյն Սահակայ։ Որ և տատանեալ ծփիմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ և արտաքուստ, որ տփշութիւն գործէր տեսականի և միջումն գործոյս։ Եւ ընկալայ զսա սրտալիր ուրախութեամբ իբրև զտախտակսն նախամարգարէին մեծի։ Եւ հայցեմ յամենայնէ ներումն գտանել սխալանացս, որ աստ գտանի, քան զի կար մեր այս էր, զի թէ օգուտ ումէք լիցի՝ շնորհակալութիւն հոգւոյն շնորհաց եղիցի, և կաթիլ աղօթից ձերոց ցօղեսցի ի աապտն իմ գերեզմանի և սուրբ հօր մերոյ Յովաննէս ճգնաւորի, որ էր տեսականաւն և գործնականաւն զարդարեալ, և յետ Քրիստոսի երախտաւորին մեր Մարգարէ* վարդապետին, և ամենայն արեան մերձաւորաց նորին, ամէն։

Դարձեալ աղաչեմ զամենեսեան, որք օգտիք ի սմանէ յիշեցէք յերկնարացիկ և յաստուածամերձ յաղօթս ձեր զհայրապետ սուրբ ուխտիս՝ զՄկրտիչ կրօնաւորն, և զՅովաննէս, և զհարազատն իւր զԿարապետ կրօնաւորն, այլև զմիաբան եղբարքս՝ զՂազար խաչընդուս կրօնաւորն, զԿարապետ կրօնաւորն, և զհարազատքն իւր՝ զՍարգիս փիլիսոփա Վարագեցի, և զԹումա Շուշանցին, և զՊ[ե]տր[ոս], և զՍտեփաննոս, և զՄերուն, և զՅովանէս, և զՄկրտիչ Հիւսանորդին, և զԳրիգոր Սալնապատեցին, և զքաջ ամոլքն՝ զՅոհանէս և զՅակոբ, և զմիւս Յոհանէսն, և զՍտեփանոս, զԱբրահամ, զԹումա, զԳրիգոր տնտեսն, և զայլ ամենայն գործաւորքս՝ զմեծ և զփոքր։ Եւ որ սրտի մտօք յիշէ և լի սրտիւ աստուած-ողորմի ասէ վերոյգրելոցս ի սմա, և զի[ն]քն յիշէ յանուանէ Քրիստոս աստուած, թէ՝ Ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ, մուտ յուրախութիւն քո, այլև զԱստուածատուր մողզասին, զՄ[ա]ր[գարէ°] հոգևոր եղբայրն, և զծնօղսն իւր, զհարազատ եղբայրն իւր զՅովանէս՝ զհանգուցեալն ի Քրիստոս, որ խիստ լաւ կոկիչ երեր թղթիս և կնկուղ գլխիս և մոմ լուսատու խաւար գիշերիս, փարատեսցէ Քրիստոս աստուած զխաւար մեղաց և անգիտութեան նորին, ամէն։

129

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6610

Վայր՝ Ոստան քաղաք

274 ա | | | ն]ահատակին սրբոյն Ստեփաննոսի բարե[խաւսութեամբ]** ողորմեա համաւրեն երախտաւորաց սրբոյն [Ստեփան]նոսի Ոստան քաղաքիս, որք զսա են զարդարել [տրօվ]ք՝ Աւետարանաւ, Ծառով, շուրջառով, ծածկո[ցով], շուշփայով և այլ սպասիւք, որ ի պէտք է սուրբ տաճարիս սրբոյն Ստեփաննոսի նախավկային, ամէն։

* Ձեռագրում գրված է հապավված, այսպես՝ «Մգէ.»։

** Փակագծերի մեջ առնված տառերը, թղթի ձախ եզրի վերին մասի պատռված լինելով՝ բացակայում են, վերականգնում ենք ըստ իմաստի։

[Ե]ւ են այսոքիկ՝ Դ. (4) Աւետարան տախտակագիր, և Բ. (2) Երկաթագիր, Բ. (2) Տարէգիրք, մեծ Տաւնականն, Ճառընտիրն, Սարգսի գիրքն, Կոչումն [ընծայութեանն]. բիճգիր Ճառն, քահանայաթաղն, փոքր Մաշթոցն, մեծ սուրբ Նշանն, Գ. (3) պղընձէ խաչ, Ա. (1) փայտէ [խաչ], շուրջառ, առաջինն, նախ կանաչն, կարմիր նախն, դեղին շուրջառն, Բ. (2) հասլհասն, կարմիր շուրջառն, ժանկառի շուրջառն, Բ. (2) կանաչ շուրջառ, գուլըստան շուրջառն, Քութի շուրջառն, Բարի-Տիկնոջ շուրջառն, արծաթի սկայն՝ մաղըզմանով, Զ. (6) շապիք, Ը. (8) ջուհտակ ու ֆրտ մի բազպան, Զ. (6) ո[ւ]րար, Զ. (6) ծածկոց, ԺԲ (12) շուշփայ, ապրիշումէ վարագոյրն, զանկակն, Յայսմաւուրք Բ.՝ Սարգիս իրիցուն և հովիւ Թումաշահին: Եւ եղիցին սոքա յիշատակ անջինջ ի սուրբ եկեղեցիս, և ով որ յանդգնի ի սմա գողանալով և հեռացուցանէ ի սմանէ՝ մասն զՅուդային և զխաչահանուացն առցէ, և դասեսցէ ընդ սատանայի և ընդ կամարարս նորա. և ով որ խնամ տանի սոցա՝ լսէ զձայն աւրհնութեան, եթէ՝ Եկայք աւրհնեալք հաւր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն իմ, ամէն։

Գրեցաւ ի Թվ. ՊԿ. (1411)։ Յայսմ ամի այրեցին զմեր ժամատունս Ղարա-Իւսուֆն, և քրիստոնեայք քաղաքիս նոր շինեցին։ Քրիստոս աստուած զսոցա հոգոյ տունն շինէ՝ զարքայութիւնն, և զաշխատողացն և զգրողիս, ամէն։

130

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6291

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Կասր գիւղ

362 բ ...Արդ, կատարեցաւ աստուածախաւս և տիեզերաքարոզ աւետարանս ի գեաւղս որ կոչի Կասր, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Յոհաննէս սուտանուն քահանայի։ Աղաչեմ զձեզ մանկունք սուրբ եկեղեցւոյ, զի սխալանաց և
363 ա խոշորութեան գրիս անմե ‖ ղադիր հայցեմք, զի կար մեր այս է։

Դարձեալ, աղաչեմ զձեզ յիշեցէք յաստուածամերձ յաղաւթս ձեր զհայրն իմ զՅովհաննէս քահանայ, և զմայրն իմ զՂաղ-Խաթուն* զհանգուցեալն ի Քրիստոս, այլ և զեղբարքն իմ, և զամենայն արեան մերձաւորքն, և զիս՝ զանարժան Յոհաննէսս և լի բերանով աստուածողորմի ասացէք, և որ զմեզ յիշէ և ինքն յիշեալ լիջի ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։

Գրեցաւ ի Թվականիս Հայոց ՊԿ. (1411)։

Արդ, ես յետինս ի կարգաւորաց, անարգս ի պատուականաց, տկարս ի զաւրաւորաց, որ միայն անուամբս երևիմ յաչս մարդկան

* Կարդա՝ «Ղլալ-Խաթուն»։

արդար և ոչ գործովք բարեաց, առաջի մարդկան կարգաւոր և առաջի
աստուծոյ անկարգ, առաջի մարդկան քահանայ և ճշմարտագործ և
363 բ առաջի աստուծոյ ոչ ես։ Եւ ‖ ...եառւ գրել յարդար վաստակոց
իմոց՝ յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց։ Արդ՝ յերեսս անկեալ երկրա-
մերձ գիմօք և կողկողագին հառաչմամբ հայցեմք ի ձէնջ ...որք
հանդիպիք այսմ աստուածային և առաքելաւրաւս տառիս, յիշեցէք
ի Քրիստոս աստուած սրտի մտօք և լի բերանով զիս՝ զանարժանս
զԹումայ կրաւնաւորս, և զծնաւղսն իմ՝ զհայրն զտէր Աւագ, որ ծերա-
ցեալ անձամբ առ Քրիստոս փոխեցաւ, և զմայրն իմ զՍիրայ, և զեղ-
364 ա բայրն իմ զՈւմէկն, այլ և ‖ զեղբորորդիքն իմ զՅոհանՆէս քահանայ,
զՍարգիսՆ, զՆերսէսՆ, զդեռաբուսիկ սարկաւագ ԱստուածատուրՆ, այլ
և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանիսն և զմեռեալսն։

Գարձեալ, աղաչեմ զձեզ, ով դասք լուսերամից, որք կարդայք կամ օրինակէք, յիշեցէք ի հեշտալուրն Քրիստոս զքարէմիտ տիկինն Մարթայ և զՊետրոս՝ որդի նորին, որ փոխեցաւ առ Քրիստոս, և մայր նորա, վասն հոգւոյ որգւոյ իւրոյ աւգնական եղև ի սուրբ յա-ւետա[րա]նս, այլև զՆազ-խաթունՆ՝ զկենակիցն Պետրոսի, որ և նա կամակից եղև ի յաւետարանս վասն հոգւոյ առն իւրոյ։ Այլ և զամե-նայն արեան մերձաւորս նոցա՝ զզաւակս, զընդանիսն, զկենդանիքն և զհանգուցեալսն, և որ լի սրտիւ աստուած-ողորմի ասէ, և ինքն ողորմութիւն գտցէ ի Քրիստոսէ, և նմա փառք յաւիտեան։

131

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ ՑԱԿՈԲԱՑ ՂՐԻՄԵՑՒՈՑ

Երուսաղէմ 1223

Գրիչ՝ Աւետիք
վայր՝ Աւագ վանք

Գրեցաւ ի թվին ՊԿ. (1411), ի սուրբ մենաստանս որ կոչի Աւագ անապատ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Կարապետի, յառաջնորդութեան մեծ բաբունապետի և քաջ փաղերայի և վարժա-պետի Գէորգ վարդապետի, ձեռամբ աշակերտի սորին Աւետիք կրաւ-նաւորի։

132

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Եվրոպայի մասնավոր հավաքումներ, № 24, էջ 44—45

Գրիչ՝ Յովհաննէս Սանահնեցի
վայր՝ Երուսաղէմ

Արդ, գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսումն ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ տիեզերաժողով, խոյակապ, գերահոչակեալ հրաշափառ մեծի Ցարութեանս, եւ երկնանման սուրբ

Գողգոթայիս, եւ աստուածընկալ սուրբ գերեզմանիս Քրիստոսի՝ աստուծոյ մերոց. եւ այլ համաւրէն սուրբ տնաւրինականացս, ի սուրբ ուխտս Հայոց սուրբ առաքելոյս Յակոբայ Զեբեթեան. ի թուականութեանս Հայոց ՊԿ. (1411), ի խնդրոյ սիրելի եւ համշիրակ եղբաւր մերոյ սրբասէր եւ պատուական կրաւնաւորի Սարգիս *աբեղայի, ձեռամբ ամենամեղ եւ փցուն գրչի* Յովհաննէս Սանահնեցւոյ, *ի լաւ եւ յընտիր աւրինակէ Կարապետցոյ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, յիշեցէք ի Քրիստոս զստացող սորին՝ զցանկալի եղբայրն մեր* զՍարգիս, *որ յոյժ աշխատեցաւ ի սպասաւորութիւն մեզ։ Նաեւ զվարժիչ նորա՝ զքաջ դիտողապետն՝ զհաւրեղբայրն իւր զտէր* Յովհաննէս *մականուն կոչեցեալ* Հեթում՝ *զփոխեցեալն ի Քրիստոս, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, հանդերձ ծնողաւք եւ համաւրէն ազգայնաւք՝ կենդանեաւք եւ ննջեցելովք։ Ընդ նմին եւ զերանաշնորհ զզերիցս երանեալ զըստ հոգւոյ հայրն իմ եւ զուսուցիչն* զՅովհաննէս *փիլիսոփայ աղաչեմ յիշել սրտի մտաւք, հանդերձ միեղէն եղբայրութեամբս՝ տէր* Մարկոսիւ *եւ տէր* Գրիգորիւ, *որ ի միասին ժամանեցաք յերկրպագութիւն սուրբ տնաւրինականացս։*

Ո՛հ, եւ զանպատս ի բարեաց, զմեղաւոր գրիչս մաղթեմ յիշել եւ սխալանացն անմեղադիր լինել, որով յիշողդ ողորմեսցի Քրիստոս, եւ նմա փառք յաւիտեան։

133

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4171

Հետ ստացող՝ Սարգիս

3 բ *[Յիշեցէք] զըստացող սուրբ աւետարան[ի]ս՝* զՍարգիս *աբեղայս, որ գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ ընչից իմոց, յիշատակ իմ և ծնողաց իմոց։ Առայ զսուրբ աւետարանս* Ներսէս *իրիցոյ որդի* Սարգըսէն* *Ճ. (100) թանկայ, վկայութեամբ* էծկանց Գրիգորին, Գառնեցի Ներսէսին. Սուտես(°) *վկա է,* [Ա°Ն]տոն *եպիսկոպոս վկայ եմ, ես՝* Խութլուպուղես *վկա եմ։*

Հաւրն իմոյ Նահապետին *և մաւրն իմոյ* Սինքուրին, *արդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, և զիս՝* զՈվանէս | | | *ե աստուած զձեզ յիշէ, ամէն։*

Ի թվ. ՊԿ. (1411)։

134

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6792

Հետ ստացող՝ Յոհանէս

11 ա *Կամաւն աստուծոյ ամենակալին, ես* Յոհանէս *երէց ընդանի, որ եմ* Ամիրբէկի *թոռն, և սպասաւոր և ծառայ Վասիլ թագաւորի պա-*

** Սրա պապը՝ Էլբեգին, 1382 թվականին, տեսնելով ավետարանը «ի ձեռն այլասեռից ի գերութիւն», գնել էր այն՝ վճարելով 100 դահեկան։*

տերագմի սուրբ Նշանին, ի յամի ՊԿ. (1411) Թըւականիս Հայոց ստացայ զպատերագմի սուրբ աւետարանս յիշատակ ծնաւղաց իմոց, խաչպան* Թօդանին *և* Մելիքին, *այլև պահապան ինձ, և որդւոյոց իմոց աստուածապարգև զաւակացն՝* Կարապետին *և* Յովանիսին, Մկըրտչին *և* Մարգարին:

Ես Գրիգոր *վարդապետս ծախեցի զաւետարանս* Յոհանէս *խաչպան երիցուն, որ այլ ումեք դաւի չկայ ի հետ։ Աստուած իւր ստացողին զսա բարով և ողջ անձին վայելել տացէ, ամէն։*

** Ավետարանի սույն՝ «Պատերազմի» անունը կրկնվում է նաև ԺԸ. դարի մի հիշատակագրության մեջ, ուր ասված է. «Ես տէր Սարգիս աբեղայս գայս Ի. աւետարանս, որ է սա՝ Պատերազմին և միւսն՝ Աւետաբեր, և Գ. խաչ, որ գողացեալ տարեալ էին ի Բօհտան, գնացեալ գտի բազում աշխատանօք, և բերեալ դարձեալ եդի ի դուռն Մեծոփայ սուրբ Աստուածածնին»... (էջ 12 բ)։*

ՊԿԱ. 1412

135

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

Երևան 1609

Գրիչ՝ Մելքիսեդեկ
վայր՝ Վրաստան, Աֆլիսցիխէ գիւղաքաղաք

419 բ Փառք... որ ետ կարողութիւն մատնադէտ և փծուն գրչի Մելքի-
սեդեկի Եւստաթէի հասանել ի վերջք երգարանիս։

Հզաւրն ի գոյսս և Նախագաղափարն ամենայն բնութեանց եդեալ
սահմանէ ի կերպս և ի ձևս աւրըստաւրէ առաւելուլ քան զոր
420 ա առնու ի Նախասկզբնէ իւրմէ, ուստի յայտնի ‖ լինի արարչական
կամք նորա, թէ եդեալ է զհանճար ի փանաքի մարմինս վերաթռիչ
լինել առ նա, վասն որոյ և ամենայն ոք ցանկայ բարեաց, թէ և
կարի յետինն իցէ, իսկ կատարեալքն ամենայն հոգւոց բարեաւ հեալ
ասացեալ միշտ զվերինն խորհին, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ
աստուծոյ, յորոց և մի գոլով Տէրունական կուսակրաւն աբեղայ, որ
յոյժ փափագմամբ և բազում կարաւտիւ ստացաւ զՇարակնոցս զայս
ի յարդար ընչից իւրոց, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ
իւր, և ծնողաց իւրոց, և եղբարց իւրոց, և ամենայն արեան մեր-
ձաւորացն, մանաւանդ առ ի յիշատակ առ յապա յեկելոց մանկանցդ
Հայաստանեաց. ի թուիս ՊԿԱ. (1412), ի հայրապետութեան տեառն
Յակոբայ:

Արդ, եղև գրաւ գրչութեան սորա յաշխարհս Վրաց, ի թագաւո-
420 բ րութեան Կոստանդիլի, ի գեղս ‖ քաղաքս Աֆլիսցիխէ, ընդ հովա-
նեաւ սուրբ Աստուածածնիս, և իշխանութեան տեղոյս պարոն Սմբատի
և որդւոյ նորին պարոն Բէշքենի, որ ի յաստմանէ չարին վտարեցան
ի հայրենեաց իւրեանց, միայն յուսալով ի Քրիստոս աստուած, զի
այց արասցէ։

Արդ, որք հանդիպիք սմա յաւրինակելով կամ ընթերցմամբ,
յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սորին՝ զՏերունական
սրբասնեալ քահանայ։

Արդ, երես անկեալ աղաչեմ զտեսանողքդ կտակիս՝ յիշել զքաջ
բաբունապետն իմ զՄաթէոս վարդապետն, որ սնոյց զմեզ և ուսոյց
մեզ զարուեստ գրչութեան։ Ընդ նմին և զիս՝ զանպիտան գծող սոր-
րին զՄելք[իսեդեկ], որ դառն պանդխտութեամբ գրեցի և կատարեցի
շնորհաւք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յորում վայել է փառք։

136

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 531, Մ.Տ.Մ.

Նորոգող և կազմող
վայր՝ Կարս

311 բ ...Արդ, ի թուականութեանս հայկազեան տումարի ՊԿԱ. (1412) եղե շինութիւն և նորոգութիւն հռչակաւոր քաղաքիս Կարուց, ի ձեռն արդարադատ պարոնին պարոն Փիր-Հիւսէնին։

Զոր և յառաջնումն աւերման քաղաքիս ի պահեստի կայր սուրբ աւետարանս ի ստորոտ կլայիս, ի մէջ քարանձաւաց վիմաձորիս, որ և իշխանութեանս յայս ամի ի յայլասեռից եդիտ զսա հնացեալ և այլայլեալ, և եկն եբեր զսայ՝ ծախեաց ի վերայ քրիստոսայսէր և երկիւղած կրկին հարազատ եղբարցն՝ Յովանէսին և Ալթունին, զոր և ըստ աստուածասէր բարուց իւրեանց ետուն զգին և ազատեցին ի գերութենէ։ Եւ դարձեալ ետուն ծախք և ետուն կազմել զսուրբ աւետարանս յիշատակ նախնեաց իւրոց Մկրտչին և մօրն իւրեանց Մարթային։

137

ԳՐՈՒԹԻՒՆՔ ԴԻՈՆԻՍԵԱՑ ԱՐԻՍՊԱԳԱՑԻՈՑ ԵՒ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԳԻՐՔ ԿԻՒՐՂԻ

«Մատենագ. հայկ. թարգմանութեանց», էջ 391

Թովմա Մեծոփեցի

ԶՄկրտիչ վարդապետն Մեծոփեցի յիշեսջիք առաջի Քրիստոսի անմահ գառինն անարատի, որ զսուրբ գիրս Կիւրղի՝ գրեալ ձեռամբ սուրբ հօրն Ներսիսի [Լամբրոնացւոյ] եբեր՝ ի մեզ հասոյց, ի պիտակ անուն վարդապետս Թովմայ, որ ես տեսի և ուրախացայ յոգի, և երկրպագութեամբ համբուրեցի, նաև զսիրելի եղբայրն մեր հարազատ զՄկրտիչ վարդապետն Աւրբելի որդի, որ ստացաւ զսա...։ Գրեցաւ ՊԿԱ.(1412)։

138

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9223, ժա

ա

Գրիչ
վայր՝ Արճէշ

1 ...Արդ, գրեցաւ քարոզութիւն աւետարանիս Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ՝ յամի գալըստեան փրկչիս հազարերորդի չորսհարիւրերորդի տասներորդի չորրորդի, և ի կատարման ութն և տասներեակ յոբելինին՝ ի սկիզբն մտանելոյ տասն և մի ամաց յա-

բեթական տոհմիս տումարի, որ է ՊԿԱ. (1412) թվականիս մեծի, ի
նահանգիս Բզնունեաց, ի քաղաքիս Ար[ճէշ] կոչեցելոյ, ձեռամբ ան-
2 արժան | | | *, ի խնդրոյ պատուական և երջանիկ առն աստուծոյ ճըշ-
մարիտ և սուրբ կրօնաւորին և փիլիսոփային Թադէոս քահանային։
Եւ ետ զսա ինքեան և ծնողաց իւրոց՝ հաւրն Խընկայ, և մաւրն իւրոյ
Աւթային յիշատակ բարի և հոգևոր զաւակ՝ յաստուածաբնակ և հրեշ-
տակերամ ուխտն Մեծոփայ վանք անուանելոյ։ Եւ ինքն գնաց ի
միշտ կենդա[նին | | | *...։ Արդ, աղաչանս բազմապիսիս առաջի վեր-
ծանողացդ այսմ սոփերի մատուցանեմք՝ յիշատակել բաբի կամաւք
և սեռն սիրով ի պատկանաւոր խնդրուածս զաստուածապատիւ և
զքրիստոսունակ քահանայն զԹադէոս, և զհոգևոր և զմարմնաւոր
ծնաւղքն իւր, և զամենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանի և
զհանգուցեալ։ Այլ և զուսուցիչն իւր զՍտեփանոս փիլիսոփայն, և
3 զեղբայրն իւր զՅովհանէս վարդապետ զհանգուցեալք | | |

...Յիշեսջիք... զհեզահոգին՝ զմիայնակեացն Եւաս, որ ստացաւ
զսա ի հալալ արդեանց վաստակի քրտանց իւրոց, և ետ զսա վեր-
ստին դարձեալ յաստուածաբնակ ուխտս Մեծոփայ վանաց, ի դուռն
տաճարին Աստուածածնի կուսին՝ յիշատակ բարի [հոգ]ւոյ իւրոյ | | |
և բարեպաշտ երախտաւոր ծնողաց իւրոց, հաւրն իւրոյ Հընդուին, և
մաւրն Թամամին, և այլ ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կեն-
դանեաց և հանգուցելոց...։

Բ

Կազմող՝ Թովմա Մեծոփեցի

Ընդ որս և ես՝ անպիտանս յամենայնի նուաստ և մեղապարտ
ի մանկունս եկեղեցւոյ վարդապետս Թովմա, և Մատթէոս կրաւնաւորս
աղաչեմք զեղբարքդ յիշել զմեզ, որ զսուրբ գիրս ծաղկել տուաք և
կազմեցաք, և աստուած զձեզ յիշէ, ամէն։
4 | | | և զազգականս իւր զՄկրտիչ հէրպետն, և զեղբայրն իւր
զՍտեփանոս ձեռնաւոր, և զորդիսն իւր զՅովանէս, զՅոհանէս քա-
հանայ, զԱռիստակէս, զԳորգի-Մելիք, զՍօլթանշա, և զամենայն բարե-
կամ և զսիրելիս իւր, և որք աւգնական և առիթ եղեն ի գինս
գրոցս...։

139

ՃԱՇՈՑ

Երևան 9093

Գրիչ՝ Դանիէլ
Վայր՝ Աղթամար

429 ա ...Արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... բազմամեղ սուտանուն
Դանիէլ քահանայ, տեսի զսէր և զփափաք Յովանէս և Ստեփանոս կրաւ-

* 3 տող պատռված։

նաւորի, զոր ունէին առ հոգևորսն և կատարեցի զսուրբ գիրքս զայս,
բազում և մեծ աշխատանաւք հասուցի զսա յաւարտումն յաստուա-
ծաբնակ կղզոջս Աղթամար, ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչիս
և սուրբ Նշանիս, ի թուականութեանս Հայոց ՊԿԱ. (1412), ի հայրա-
պետութեան տեառն Դաւթի...։
Դարձեալ և մեղապարտ Դանիէլ գրիչս... յիշեսջիք և զիմ ան-
420 բ արժանութիւնս ‖ ... նաև զծնաւղքն մեր զԿարապետ քահանայ և
զԴուռմէլիք, և զեղբայրս մեր զԹումայ կրօնաւոր, որ աւգնական և
ձեռնտու եղև մեզ. և զքորքն մեր, և զամենայն արեան մերձաւորքն
մեր՝ զկենդանիք և զննջեցեալք, և զուսուցիչն մեր զԶաքարայ փի-
լիսոփայ՝ հաւրեղբայր մեր, և զայնոսիկ որք երախտաւորք եղեն մեզ
ի պէտս մարմնաւոր պիտոյից։ Այլ և զառաջնորդ և զպաշտաւոր աս-
տուածաբնակ սուրբ տաճարին սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի՝
զպատուական և զընտրեալ եպիսկոպոսն զտէր Ստեփաննոս, և զՊետ-
րոս՝ քվերորդի նորա, և զդեռաբոյս ծաղիկն զտէր Մեսրոպ, և զհան-
գուցեալն ի Քրիստոս զՄարգարէ վանից հայրն, որ հայրական և եղ-
բայրական գթով խնամէր զմեզ, և զայլ ամենայն կրաւնաւորսն՝ զմեծ
և զփոքր արժանի արասցէ Քրիստոս աստուած իւր սուրբ տեսլեանն...։

140

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4157

Գրիչ՝ Ծերուն
վայր՝ Ոստան

242 բ ...Որբասնունդ քահանայն Սաեփաննոս... ցանկացաւ այսմ
աստուածային աւետարանիս և ետ գրել զսա յիշատակ իւր, և ծնո-
ղաց իւրոց Սարգիս ներկարարի, և մաւր իւրոյ Խոնդի, և կենակցի
իւրոյ Խաթուն-Մելիք տիրուհւոյ, և բարի զաւակաց իւրոց Մելքոնի և
Սարգսի, և այլ ամենայն արեան մերձաւորաց իւրոց։ Եւ արդ, ես՝
յետնեալ և աքսորեալս ի կարգաւորաց, բազմամեղ և անպիտան
սուտանուն Ծերուն, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելա-
կան բանէն, որ ասէ՝ Յոր կոչումն կոչեցար՝ ի նմին կացջիր։ Եւ արդ,
իմ ոչ բերելով զայսպիսի վստահութիւն, այլ ունայն յամենայն բա-
րեաց և թափուր, այլ յուսամ ի մարդասիրութիւնն աստուծոյ, զի
իմ բազում մեղացն թողութիւն արասցէ։
Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքիս Ոստան, ընդ հո-
վանեաւ սուրբ Աստուածածնի և սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի,
ի հայրապետութեանն Աղթամարայ՝ տէր Դաւթի, և ի թուին Հայոց
ՊԿԱ. (1412), ձեռամբ մեղապարտ և անարժան Ծերունի, և անընդու-
նակ գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղաւք պաշարեալ, այլ
243 ա ըստ կարի մեր, զոր [Ետ | | | մարդասէր հոգին, բազում աշխատա-
նաւք գրեցի անարժան ձեռաւք իմովք, ի ստոյգ և յընտիր աւրինակէ։
Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի

սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ, յիշեսջիք յաղաւթս ձեր զյառաջասացեալ ստացող [սորա] զՍտեփաննոս քահանայ [և] զծնողսն իւր....

Ընդ նոսին և զանպիտան գրիչ զՆերսէս, և զծնողսն իւր զՍեփաննոս և զԹանխաթուն, և զկենակիցն իւր, որ աշխատեցաւ ի թուղթ կոկելն. և զերկու քուերքն իւր զՄէլէք և զՀերիք, և զվարպետն իւր զԿիրակոս կր[աւնաւոր], և զՅոհաննէս կր[աւնաւոր], որ զգիրն ուսոյց, և զԳէորգ վարդապետն, որ զծաղիկն ուսոյց, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիսն և զննջեցեալսն. Եւ որք զմեզ յիշէք սրտի մտաւք և դուք յիշեալ լիջիք յառաջ յողորմութեանն աստուծոյ, որ է աւրհնեալ, գովեալ, բարեբանեալ, այժմ [և յաւիտեանս]։

243 բ Դարձեալ վերըստին յիշեսջիք զհոգեոր աներն իմ զՔաշիշաւղլի, և զկենակիցն իւր զԳոհար-Մելէք, և զորդին իւր զԽաչատուր՝ զփոխեցեալն ի Քրիստոս, և զՏիրատուր, և զՅորդանան, և զԴալար, և զԱւաք-Պարոն, և զդուստրն իւր՝ զհանգուց[եալ]ն ի Քրիստոս զԱյմէլէք, և զծնաւղսն իւրեանց։ Ընդ նոսին զերախտաւոր և զհոգեոր եղբայրն մեր զՄարտիրոս, և զծնաւղսն իւր զՍոկ (՞) Ստեփաննոս և զՇնոհւոր, և զեղբարսն իւր զէլէքսան և զԹաւաքալ, և զկենակիցն իւր զԽաթուն-Մէլէք: Դարձեալ, յիշեսջիք յաղաւթս ձեր զՅովաննէս, [և զ]կենակիցն իւր զՋուհար, և զեղբայրն իւր զՇղիայ, և զծնաւղսն իւր, ընդ նոսին և զՄարկոս, և զեղբայրն իւր զՄաթէոս, և զծնաւղսն իւրեանց, զԱռաքել և զծնաւղսն իւր։

Յիշեա Քրիստոս աստուած զՍտեփաննոս՝ զքեռի Ստեփաննոս քահանայի, և զդուստր նորին զՇղիսաբէթ, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւրեանց՝ զկենդանիս և զհանգուցեալսն ի Քրիստոս, և ինքն, որ առատն է ի տուրս բարեաց՝ տացէ զիւր առատ ողորմութիւնն առհասարակ, որ շատ և որ սակաւ ! | |

141

ԳԱՆՁԱՐԱՆ

Բրիտ. Թնգ. Or. 2608, հ8 54, էջ 120—121

Գրիչ՝ Վարդանէս

վայր՝ Արծըրունեաց գաւառ, Կոներաց վանք

Փառք... որ ետ կարողութիւն բազմավէր ոգւոյ իմոյ Վարդանէս աբեղայի հասանել ի յաւարտ գանձարանիս յամի ՊԿԱ. (1412) Թուականի Հայոց, յամսեանս քաղոց, որ օր Ե. (5) էր ամսոյս։ Աւարտեցաւ ի փառս աստուծոյ հաւր. Արդ, գրեցաւ սա ի գաւառին Արծըրունեաց, ի վանքս Կոներաց, ընդ հովանեաւ սուրբ ծովահայեաց Աստուածածնիս և այլ հաւաքեալ նշխարաց սոցա, առ ոտս տէր Յոհաննէս վարդապետի և առաջնորդ սուրբ ուխտիս | | | որ է եղբայր վարդապետիս և ինձ հօրեղբաւր որդիք...։

Յիշեցէք զեղկելիս՝ զՎրդանէս աբեղայս, և զհայրն իմ զՀամա-

զասպն, և զմայրն իմ զՓաշա-Մելիք, և զեղբայրքն իմ զՄելքիսէթն և Ջաքարէն, զՅովաննէս և զՄինաս, և զքոյրն իմ զԹաղա-Մ[ե՞լ]իքն, և զայլ ամենայն մերձաւորքն իմ յիշեսջիք ի տէր մեր։

Արդ, ես առաւել աղաչեմք զձեզ վասն խոշորութեան և սխալանաց սորա, զի ի յաշնանէ մինչ ի զատիկ՝ ապա վճարեցաւ, զի այս էր կար մեր* վասն խիստ ձիւնամեծիս և առաւել ցըրտիս, այս է։

Արդ, յիշեսջիք ի սուրբ յաղօթս ձեր զքարտիս կոկողքս՝ զդեռայրոյս աբեղայքս՝ զՅոհաննէս և զԿարապետ և զՎարդան սարկաւագն, ամէն. այլ և զՄովսէս հեզահոգի աբեղայս, որ զօրինակն շնորհեաց և զայլ արեան մերձաւորքն իւր...։**

142

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑՒՈՅ

Երևան 1701

Գրիչ՝ Ռըստակէս Սեբաստացի
վայր՝ Աւաք վանք

ա

271 ա ...Արդ, և ընդ արժանաւորացս յիշեսջիք և զանարժանս՝ զբազմաշարաւ անձս զըՌըստակէս Սեբաստացի, զվերջինս և զծոյլս յաշակերտաց տեառնս իմոյ՝ մեծի վարժապետի Գէորգէոս փաղերայի։ Զոր առեալ զսա գաղափարեցի ի Թուականութեան Հայոց Մեծաց երկքառասնից տասանց և եռակի քսանից, Նեզակ Թուով յաւելից (1412)։***

Եւ եղև գրաւ սորա ի մեծափառ անապատիս, որ կոչի Ավաք վանք, և ի յառաջ[նորդ]ութեան նոյն տեառնս իմոյ, յաւուր մեծի հինգշաբաթի, ի փառս Քրիստոսի։

բ

Ո՜հ, զի Աստուածածնին կրեցի զթուղթս ի յԱւագ վանքն և սուրբ Ցակոբիս՝ ի Կափոսիս կու գրեմ, սառնասառոյց ցրտութեամբ։

143

ՈՍԿԵՓՈՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 5118

Գրիչ՝ Ռըստակէս Սեբաստացի
վայր՝ Ավաք վանք

ա

197 ա Արդ, գրեցաւ քաղուածոյս աստուածաբանութեան ի հաւաքմանէ առն մեծի վարժապետի՝ անուն արթուն զուարթուն առն Գրիգորիսի, ձեռամբ եղկելի և կրկնամեռիկ անձին Ռըստակիսի, ի գերա-

* Տպված է «երկար մեր»։

** Ձեռագրի 278 բ էջում խնդրում են հիշել իրենց ոմն Պօղոս քահանայ և Սահփանոս եպիսկոպոս Խարբերդու, ՊՁԴ. (1435) թվականին։

*** Պետք է հաշվել այսպես՝ $2\times40\times10(=800)+3\times20(=60)+1$ (Նեզակ թիվ) $+551=$ 1412 թ.։

հռչակ անապատս որ կոչի Ավաք վանք, ընդ հովանեաւ տիրամաւր Աստուածածնին, և սրբոց Առաքելոցն, և այլ բազմահաւաք նշխարաց, և սրբոյն Կարապետին, և ի յառաջնորդութեան Նորին հարազատի Գէորգէոս փաղերայի։ Արդ, յերես անկեալ աղաչեմ զհանդիպողսդ յիշել սրտի մտաւք զԹշուառականս ոզորմայիւ ի տէր, հանդերձ ծնաւղաւք և ամենայն արեան մերձաւորաւք, և ասացեալն ի ձէնջ վասն մեզ կրկնապատիկ պարգևեսցէ ձեզ տէրն ամենագութ, յորժամ բանքս սպառի և Թագաւորութիւն գործոց լիցի. և տեառն փառք անլռելի, ամէն, ամէն և եղիցի։

Գրեցաւ ի Թվ. ՊԿԱ. (1412), յամսեանն աւգոստոսի, ի փառս Քրիստոսի։

Բ

287 ա Գանձս այս բազմազեղուն
Եւ մարգարիտ պատուեյագոյն,
Ցանմահական ծովէ հոգոյն
Պարգև տուաւ մեզ ի վեհոյն,
Ցեռամեծէ բաբունոյն
Գէորգէէ սուրբ հաւրն իմում։

Զոր տէր ասացէ սորին ունել զիշխանութիւն տան քաղաքի իւրայովքն ամենեցուն, որ և մեզ լիցի ընդ սորին իշխանութեամբ։ Բայց ես՝ պիտակ ոգի Ռըստակէս Սեբաստացի, աշխատասիրութեամբ զսա աւրինակեցի առ ի վայելումն ուսումնասիրաց եղբարց, որոց և լիցի։

Արդ, աղաչեմ անմեղադիր լինել մեզ վասն սխալանաց և անարհեստ քերդողութեանս, ներել աղաչեմ հայրաբար և ուղղել եղբայրաբար...։

144

МԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

ՄՑՀ հա. Ա. 73, էջ 153

Գրիչ՝ Ստեփանոս Ավաքերիցանց
վայր՝ Սիս

308 ...Գրեցաւ շարականքս, որ կոչի գետք և գիշերութեան ալէլուքս զկնի, ի Թուիս Հայոց ՊԿԱ. (1412), ի մայրաքաղաքիս Սիսոյ, ընդ հովանեաւ սուրբ Կարապետին Մկրտչի և Ցակովբա հայրապետի, ձեռամբ մեղաւոր և անմար գրչի Ստեփանոսի՝ կոչեցեալ Ավաքերիցանց. ի վայելումն անձին սրբասէր քահանային Կոստանդնի, որ ետ գրել զսա յաղագս հսկմանց գիշերո, զի շարականն բոլոր ի սմայ է հաւաքած, զարդ ի հարցներոյն, զի է որ ծայրքաղ է, և է որ առաջաբան է, և է որ կատարեալ է. Նոյնպէս և ուԹն ձայնի ալէլուքն՝ իր սարաւքն, զի մնա յիշատակ իւր, և ծնողաց Նորա, և զուգակցին իւրոյ Իթլիշանի, և դեռաբոյս զաւակաց Նորա Լեւոնի և Յոհանէս դպրի, և ամենայն զարմից։

Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զձեզ վասն սիրոյն Քրիստոսի, որք հանդիպիք սմայ, յիշեսջիք ի Քրիստոս զծնաւղս իմ և զամե-

նայն Նընչեցեալսն, և ինքն որ առատն է ի տուրս բարեաց Նաև ձեզ պարգևեսցէ ըստ այնմ կերպի, զոր դուք մեզ խնդրէք։

Ո՜վ սուրբ քահանայք, շարականքս որ ի սմայ են, Նաև վերջն է սկսած ու քաշած ծուռ՝ մինչև յառաջն. Թէ կամիս ուղորդ քաղել դու, յոր ձայն որ լինիս դու ի յերջքն սկսիր ի ձայնին ու քաղէ, ու զԹղԹերն ի յետ շրջէ, նայ տանի զքեզ ուղորդ՝ ըստ կամաց քոց. և ողալանաց սորա անմեղադիր լերուք դի կար մեր այս էր…։

145

ԺԱՇՈՑ

Երևան 7448

Ստացող՝ Գաբիանէ
վայր՝ Հայտար գիւղ

505 բ Ես՝ Գաբիանէս, որ կու կենամ ի գեւղս Հայտարին, ետու զայս գիրքս ի յեկեղեցին՝ ի սուրբ Աստուածածինն, ինձ յիշատակ, և իմ կողակցին, և իմ ծնողացն, և իմ ամէն արեանառու ազգականացն, եդի յիշատակ ի յեկեղեցին ի սուրբ Աստուածածինն, որ է ի գեւղս ի Հայտարին, յիշատակ անջնջելի մինչև ի գալուստն Քրիստոսի։ Եւ եթէ ոք յանդքնեսցի՝ ի զաւակաց իմոց կամ ի յազգականաց ձեռնամուխ լինել ի գիրքս՝ ծախելով, կամ կրաւկան դնելով, կամ Թուղթ կտրելով, և Քրիստոս աստուած կտրեսցէ զինքն ընդ մէջ, և զմասն նորա ընդ անհաւատսն դիցէ, և որք հանդիպիք ի քահանայից, կամ ի սարկաւագացն, կամ ի սպասաւորաց եկեղեցւոյ խնամս տանի գըրոցս, մերկ ոչ պահէ, կամ մերկ ի վերայ քարի ոչ դիցէ, աւրհնեալ եղիցի <լիցի> ի Քրիստոսէ։ Բայց խնամարկու և վերակացու գրոցս՝ Յովաննէս քահանայ եղիցի։

Գրեցաւ յիշատ[ակարանս] ի Թվ. ՊԿԱ. (1412)։*

146

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԲԱՐԳՈՒՂԻՄԷՈՍԻ ՄԱՐԱՂԱՑՒՈՅ

Երևան 2184

5 ա Ես տէր Ջոմս.** արհեպիսկոպոս ծախեցի զիմ Քարոզագիրքս ֆրա Կարապետին ԲԾՏ. (250) դեկան։

Ես Յոհան վարդապետս վկայ եմ, ես ֆրա Ղուկաս վկա, ես ֆրա Ղւպր.** քարոզս(ՙ) վկայ եմ, ես ֆրա Յոհանէս վկայ եմ։ Թվ. մարդեղուԹեան ՌՆԺԲ. (1412)։ Աստուած վայելել տացէ։***

---

* Ստացողի այս հիշատակարանին նախորդում է գրչի ընդարձակ, բայց սակավարժեք հիշատակարանը, ուր Թվարկվում են նաև Գաբիանէի մերձավոր ազգականները. այդ հատվածը բերում ենք ստորև՝ «Յիշեսջիք առ տէր զվերոյգրեալ Գաւրիանէ, և Սիմէոն՝ զայր իւր՝ զփոխեցեալն առ Քրիստոս, և ծնողաց իւրոց՝ հաւրն իւրոյ Շահրկան, մաւրն իւրոյ, և զաւակաց իւրոց՝ Հայոցին և Ուստիանէ, և որդոյ իւրոյ Մելիքէ, և ի յաստուած փոխեցեալ որդոյ իւրոյ Յոհանիսին, և քւերորդոյ իւրոյ՝ Սարգիս մղախուն, և զամենայն արեան ազգայինսն իւրՅ (էջ 505 ա)։

** Անունը հաղավված է, վերծանել դժվարանում ենք։

*** Հիշատակարանին կից կա մի-մեծ ձվաձև կնիք՝ լատիներեն գրուԹյամբ, որը լավ չի ընԹերցվում։ Կնիքը հավանորեն վաճառող Ջոմս. (Ջերոնիմոս) եպիսկոպոսինն է։

147

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԵՒ ՄԱՏԹԷԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 1198

ա

Գրիչ՝ Յոհաննէս Եզնկացի
վայր՝ Տաթև-Հերմոն-Եղևարդ

457 ա ... *Բայց պատահեալ երբեմն, զի վասն բազմանալոյ անաւրէ-
նութեան և չարեաց, նուազեալ ընգաղաւտացաւ ի մէնջ անհամե-
մատ պարգևս այս իմաստից, որպէս թէ սովէաք ի լսելոյ զբանն
աստուծոյ։ Յայնժամ, ամենագութ և անյիշաչար պարգևատուն՝ գթա-
լով ի հաւտս իւր փոքրիկ, ծագեաց որպէս ի մէջ գիշերի աջահն ան-
շիջանելի՝ զպէտն բաբունեաց, զքաջ հռետորն և զերկրորդ լուսաւո-
րիչն մեր զ*Յովհաննէս Որոտնեցի* մականուն Կախեալ ի սէրն Քրիս-
տոսի. և բազմաջան շառաւիղաւք զարգացեալ աճեցոյց ի պայծառու-
թիւն եկեղեցւոյ իւրոյ և ի վանումն ամենայն հակառակամարտից,
որ և նա ըստ շաւղաց ճշմարտասիրաց աստուածաբանիցն հետևեալ,
անսխալապէս հասեալ ի կէտ կոչման իւրոյ, փոխեցաւ առ փափաքելին
457 բ ամենեցուն՝ տէրն մեր Յիսուս Քրիստոս, ‖ և բազում շահս և ան-
թուելի բարեաց պատճառս թողեալ յեկեղեցի աստուծոյ, որոյ յիշա-
տակն աւրհնութեամբ եղիցի, ամէն։*

*Բայց ի նմանէ վարժեալք եղեն բազումք ըստ իւրաքանչիւր
կարողութեան և տարողութեան, յորոց երիս ոմանս արեգակնանման
ճառագայթիւք ցաւլացեալ երևեցան ի մէջ բազմահոյլ բանասիրաց,
համշիրակք և հարազատք միմեանց։*

*Եւ ոչ է ինձ կարողութիւն գտանել զկարգ շարադրութեան սո-
ցայ, թէ զորս նախադաս գրեցից կամ զորս ըզկնի որոյ, զի զանազան
պատուականութիւնս երևի ի սոսա, յիւրաքանչիւրսն անհամեմատ
միմեանց։ Եւ համարձակիմ դնել առաջին զպատուեալն կրկին ալեաւք
իմաստիւք [խոհ]եմ և մարմնական ծերութեամբ, զանուանակիր տեառն
եղբաւրն* (Յակոբայ) *և զսպիտակացեալ աղաւնին ի յոգի և ի մար-
մին, զմեծ բաբունապետն և զամենեցունց վարժիչն աշակերտակցաց
իւրոց։ Եւ զկնի սորին՝ զանհամեմատ փարթամութիւնն, զբազմե-
րախտ հայրն համայնից, զպայծառացեալն իբրև զոսկի ի ք[ր]այումն
ի մամուլս կրթութեան, որ ոչ սակաւ ինչ արդիւնս երևեցուցեալ մեզ
ի բազում երկանց իւրոց, հաստակառոյց սիւնն եկեղեցոյ, անուանակիր
լուսաւորչին մերոյ* (Գրիգորի), *նաև զգաւն և զուարթուն գոլով նման
նմին, որ զամենայն բարիո[ք զ]ընթացս իւր կատարեալ, ժամանեալ
էհաս մեծաւ ուրախութեամբ առ բաղձալին մեր Քրիստոս, զոր ի յիշեւ-*

իմ գնա ատտանաւր ոչ տան թոյլ վտակք արտասուացս ուղիղ հայել ի
քարտեզս կամ ի մելանս։ Եւ զկնի սորին զբոլորովիմբ հոգիացեալն
ի մարմնի, զանկշռելի բարեաց անութն և զհասուն ի ծայրս ամե-
նայն իմաստից՝ տեսականին ասեմ և գործնականին, զպետս պուէտիցն
և զնազելի հռետորն, զհոմայնից բաղձալին ասեմ՝ զմեծն Գէորգէոս,
զանյաղթ զաւրականն Քրիստոսի՝ ընդդէմ բազմահնար մեքենայից
չարին։

Արդ, մի ոք տկար մտաւք եպերանս համարեսցի, զի ի վերջոյ
դրի զանուն րաբունոյն իմոյ Գէորգեա, զի ոչ թէ վասն անպատու-
[ու]թեան, քաւ և մի լիցի. զի ոչ ամենայն ուրէք առաջինն պատուա-
կան երեի քան զվերջինն, նմանապէս և ոչ վերջինն քան զառաջինն,
որպէս յայտ է ի բազում իրաց, զի առաջին է կենցաղս և ապա յա-
ւիտենական և անսպառն, դարձեալ՝ առաջին է մարմին և ապա բա-
նական հոգի, դարձեալ՝ ի ստեղծմանն յետինն է մարդն և առաջին՝
այլքն, դարձեալ՝ ի ծնունդն առաջին ախտաւորն և ապա հոգևորն, և
ևս գերագոյն, զի թէ ի փառս տալն զորս և կամիս առաջին անուա-
նես, զերրորդութեան անձինսն ոչինչ է առաւելութիւն և նուազու-
թիւն.

Եւ սոքա երեքեան պետքս ըստ իւրաքանչիւր կարգի և յաջող-
ւածոյ և դիպման, երկասիրութեամբ և բազում չարչարանօք ստա-
ցան մանգունս ստնդիայս կաթինն իմաստից. Զոր տէր աստուած
արդիւնական շահաւէտութեամբ պտղաբերեալ զարգացուցանէ ամե-
նայն սրբոց բարեխաւսութեամբ, ամէն։

Ցորոց և ես՝ յետնեալս յամենեցունց Յոհանէս անուանեալս և
ոչ ենթակայացեալս կրաւնաւոր և կամ սպասաւոր բանի, տկար մտաւք
և տարտամ լեզուաւ կամեցա հետևել այսքան բարի արանց, թէպէտ
458 ա և ոչ է կարողութիւն, զի լինիցիմ հասու։ Եւ ժամանակս ինչ ‖ դե-
գերեալ եղէ առ ոտս երջանիկ րաբունապետին իմոյ Գէորգայ և ապա,
լուեալ իմ զհամբաւս համալսարանի տանս Արևելեան, ցանգացա և
զստցա տեսանել, և աղօթիւք սրբոց հասի փափագանացս։ Եւ ժամա-
նակս ինչ, իբրև ամս երկուս անցեալ, և մեծ րաբունին Գրիգորիոս
փոխեցաւ յաստեացս առ Քրիստոս, և անմխիթար սուք եթող համայն
ազգիս. և ի նմին ամի պակասեցաւ և եղբայր և ընդերակիցն իմ Մել-
քիսեդեկ: Եւ ես բազում թախանձանաւք շրջշրջէի ի տունս Արևելեան,
վասն զի բազումք յաշակերտաց սորին սկսեալ էին յարմարել դա-
սատունս ըստ իւրաքանչիւր կարողութեան, ոչ համարձակէի դառնալ
առ հայրն իմ հոգևոր՝ Գէորգէոս Մեծն։ Եւ յետ ժամանակաց ապայ
այցելութեամբ տեառն եկն առ իս ոմն յեղբարց իմոց յուսումնակ-
ցաց՝ Ղազար սպասաւոր [բան]ի, և ապա նովաւ փարատեալ եղև
տրտմութիւն իմ յաւտարութեան աստ։ Եւ յետ սուղ ինչ ժամանակի,
դարձեալ ոմն բարեկամ եղբայր և ուսումնակից մեր եհաս առ մեզ՝
Առիստակէս անուն, որ և սա սիրաւղ և սպասաւոր բանի, յորմէ ոչ
սակաւ դիւրութիւն եղև մեր տառապանացս։ Եւ եկեալ ի միտս մեր
ձգաք ի սրտի դառնալ անդրէն առ հոգևոր հայրն մեր Գէորգէոս, զոր

յուսամ յապենիազն աստուած, զի տեսութեան նորին արժանաւորեսցէ զմեզ՝ բարեխօսութեամբ մաւր իւրոյ, ամէն։

Արդ, գրեցաւ և յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային ձեռամբ անարհեստ և փցուն գրչի Յոհանէս Եզնկացոյ՝ սիրողի բանի, ի Թուաբերութեանս Հայոց յՊ-երորդի վաթսներորդի երկրորդի (1413), ի տունս Արևելեան, մասն ինչ ի վանս Եւստաթէի առաքելոյն Քրիստոսի, և մասն ինչ ի վանս Հերմոնի, առ ոտս բաբունոյն Յովհաննիսի՝ աշակերտի Գրիգորին, և մասն ինչ ի վանս Եղևարդու, ի գաւառս Այրարատեան, առ ոտս բաբունոյն Սիմէոնի, որ և սա աշակերտ նոյն Գրիգորի:

Արդ, աղաչեմ զամենեսեան զհանդիպաւղք այսմ տառի կարդալով կամ աւրինակելով և կամ միայն տեսանելով, յիշեսջիք յերկնաթռիչ աղաւթս ձեր առաջի մեղսաքաւիչ անարատ գառինն աստուծոյ զվերոյասացեալ պետքն մեր, նայ և զաւրինակի շնորհօղն՝ զՍիմէոն վարդապետն, որ զԱւետարանին [մեկնիչն] շնորհեաց, և զՄատթէոս գրոց աշակերտն, որ զՍաղմոսին [մեկնիչն] ետ, և զամենեսեան որք շատ և որ սակաւ աւգնական եղեն մեզ, վասն զի յամենեցունց բազում մարդասիրութիւն տեսաք աստ՝ զԹ. (9) ամ, զոր աստ կացաք։ Նաև զհամշիրակ եղբայրքս իմ՝ զՂազար և զԱռիստակէս, որոց ես եղէ պատճառ ւտարութեան սոցա, ի բնական տեղոյն և ի վարդապետէն և ուսումնասիրացն։ Դարձեալ, մեծ հառաչանօք անգանիմ առ ոտս ձեր, եղբայրք իմ գթասիրտք և ողորմածք, և արտասուաթոր կականմամբ հայցեմ անդադարապէս միով տէր ողորմայիւ յիշել զծնաւղսն իմ մարմնաւոր, վասն զի ոչ եմ կարող կամ աղաւթիւք, կամ նուիրաւք, կամ այլևայլ իրաւք օգնական լինել նոցա։ Եւ եթէ ոք խոնարհեսցի առ ժահահոտ-
458 բ եալս ազգի ազգի վիրաւք, ‖ և յիշման արժանի արասցէ, և բան ինչ մխիթարական տացէ ինձ առ ի պատճառս բժշկութեան, այսինքն՝ զի զանուն ամենակարաւղ տեառնն կարդասցէ յաւգնութիւն տկարացելոյ անձինս, հաւատամ ճշմարտապէս, զի զփոխարէնսն հարիւրապատիկ առցէ աստ և ի հանդերձելումն, ամէն։

Արդ, որք ուղիղ և ցաւագին սրտիւ յիշեն զտառապեալս, և նոքա յիշեալ լիցին ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ, ամէն։ Եւ սխալանաց և անարհեստութեան գրոյս անմեղադիր [լեր]ուք, զի կար մեր այս էր։

Բ

Ոճ՝ Մովսէս

2 ա Զմովսէս կարճահասակս, որ է քաղցեալ յիշեցէք ի Քրիստոս։

Գ

Ստացող՝ Սարգիս վարդապետ

458 բ Ընդ առաջին և ընդ վերջին զստացող գրոցս՝ զպիտականուն Սարգիս վարդապետս, այլև զհայրն իմ զտէր Վարդան, և զեղբայրն իմ զԿարապետ յիշեցէք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, և դուք յիշեալ լիջիք։

148

ԱՌ ՈՐՍ ԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ

«Այրարատ», 163 (նմանահանութիւն)

Գրիչ՝ Մկրտիչ Եղեգեցի
վայր՝ Սաղմոսավանք

... Այլև զմեզօք մեռեալ ոգի
ԶՄկրտիչ Եղեգեցի.
Սուտանուն կարօտ բանի
Առնէք յիշման զիս արժանի,
Եւ ձեզ լիցի մասն ի բարի
Եւ ձեր ամէն յանցանք [ք]աւի.
Զմեզ յիշեցէք ի յաղաւթի։

Ի թուականիս հայոց ՊԿԲ. (1413) գրեցաւ լուծմունքս ի սուրբ մենաստանիս Սաղմոսի: Եւ ետու զգիրքս յիշատակ հոգոյ իմոյ հոգեւոր եղբաւր իմոյ Թովմա վարդապետի՝ աստուածաբնակ ուխտին Մեծոփայ վանացն, վասն զի նա զԱռ որս գիրս Աստուածաբանին ինձ և ազգականին իմոյ Մարգարէ վարդապետին՝ ինքնագիր ձեռաւք դրեալ շնորհեաց մեզ։

149

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 917

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Խառաբաստ

ա

290 ա Զնուաստ ոգի Գրիգոր աշակերտ բանի մի մոռանայք, ո՜վ բարեմիտ ընթերցողք, այլ յիշեցէք ի բարի մասին։ Եւ խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի նորուսումն էի յարհեստ գրչութեանս, և յօտար երկիր, և տառապեալ կեանք, և անձանձիր փոյթ ի կարդալ, ի վանս Խառաբաստա կոչեցեալ, ի թվ. ՊԿԲ. (1413)։

բ

279 ա | | | *Եւ ուրացաւ զտէր կենդանի
Վա ձեզ յաւուրն աներեկի,
Ցորժամ փառօք գայ հայրենի,
Նստի յաթոռ դատաստանի,
Հրեղէն սրովք անըրթելի
Ընդ մէջ կտրէ զֆրաթանիդ,**
Զվայն տայ լսել յաւիտենից։

---

* Գրված է նշված էջի ստորին լուսանցքում, նախորդ թերթի ստորին լուսանցքը պատռված է, կարծում ենք, որ հիշատակագրության սկզբի մասը եղել է այդ լուսանցքի վրա։

** Խոսքն ուղղված է, ըստ երևույթին, հայ կաթոլիկ ունիթոռներին («Ֆրաթանիք»— հենց պետք է նշանակի «եղբայրներ», ֆրանս. freres—եղբայր բառից), որոնք, գրչի կարծիքով, ատծու ահեղ դատաստանի օրը դատապարտվելու են դժոխքի արհավիրքներին։

գ

4 բ Զյետինս ի բանասիրաց՝ զնուաստ տառապեալ ոգի վարդապետս Գրիգոր, յիշել աղաչեմ սրտի մտօք, նաև զիմսն ամենայն՝ զԹադէոս սրբասնունդ կրօնաւոր՝ քուէրորդի իմ, որ և տարաժամ մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս, և զԻսրայէլ և զՎրդանէս դպիրք և սաղմոսերգուք՝ եղբօրորդիք և աշակերտք մեր, որ և նոքա ընդ Թադէոսին հանգետն ի Քրիստոս և [ըն]կալան զպսակսն անապական։ Եւ որ զմեզ բանիւ հայցէ՝ ն[մա] գործով եղիցի ի Քրիստոսէ աստուծոյն մերոյ, օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն, աւմխ, աւախ։

դ

182 ա Քրիստոս աստուած, լուսաւորէ զհոգի Թովմա վարդապետին, որ մականուն Տկլոզ կոչիւր, զի զայս Բ. Թխթիկս նա գրեաց ի վանս Խառաքաստայ, յիշատակ նորին օրհնութեամբ եղիցի, ամէն։

ե

224 ա Վա, ի գլխի ցաւէս, թէ որպէս նեղիմ, բայց փափաքումն բանիս կու յաղթէ։

զ

391 ա [Այ]ս էջս Թովմա եպիսկոպոսն գրեաց՝ Ջուղայեցին, աստուած ողորմի նմայ։

է

292 ա Վա̃յ, զայս ապլահ և գէշ մարդս, որ երէկ ի մեր գլուխս ելօ:

ը

Գրիչ՝ Անդրիաս

285 բ Զանարժանս խաբեղայս զԱնդրիաս՝ զսակաւ գիրս գրեցի ծուռ ու մուռ, անմեղադիր լերուք, զի նոր կու ուսանիմ։

թ

Գրիչ՝ Կարապետ

293 ա Զգծող էջիս՝ զնուաստ Կարապետ աշակերտ բանի [յիշեցէք]։

150

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

ԼՑՎ 1256, Լիմ

Գրիչ՝ Յովանէս

վայր՝ Խառաքաստայ վանք

... Ի թուայբերութեան հայկազեանս սեռի ՊԿԲ. (1413) գրեցաւ և յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային, որ կոչի Հարցմունք, ի նահանգիս Քաջբերունի, ի մեծահռչակ ուխտս և ի հրեշտա-

կաբնակ սուրբ մենարանիս՝ ի վանս Խառաբաստայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, և ի Սարգիս վարդապետի գերեզմանի, և յայլ սուրբ նշխարացս, զոր աստ կան ժողովեալ։ Եւ ես՝ պիտակ անուն Յովանէս գաւառաւ Քաջբեր[ունե]ի, ի վանից Սուհարա, [որ] կոչի այժմ Խառաբաստա վանք, վասն յօժարութեան սրտի ձեռն ի գործ [արկի] և գրեցի տխեղձ մատամբ և տկար անձամբ ի բոլոր ամի. և մի ամ-սոյ վճարեցաւ...։

[Աղաչեմ] յիշել... զհայրն [իմ] զՎարդանն, և զՍահակ, և զքոյրն իմ զՄարթա... և զիս՝ ըզգծողս՝ զՅովհաննէս, որ անուամբ միայն եմ քահանայ։

151

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երուսաղէմ 1155, ՀԱ, 1925, սյուն. 566

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Ապահունեաց սբ. ուխտ

... Գրեցաւ ի թվիս ՊԿԲ. (1413) և ի հոկտեմբերի ամսոյ ի ԻԵ. (25)։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ գրոցս յի-շեսջիք յաղաւթս ձեր սուրբ՝ զպարծանք պարծանաց մերոց հոգւոյ և մարմնոյ, զհոգևոր եղբայրն իմ զՅակոբ աբեղայն, և զծնաւղսն իւր, և զեղբարսն իւր ի Քրիստոս Յիսուս, որ զօրինակն շնորհեաց։

Գրեցաւ ծաղկազարդ և վարդափըթիթ, մարգարտաշար գիրքս, որ կոչի Հարցմանց ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Յոհաննէս աբեղայի, ի սուրբ և ի հրաշափառ և սքանչելագործ ուխ[տս°], ի վանս (°) | | | սուրբ Թ | | | Նի | | | և սուրբ | | | Սարգսի, և | | | աղա-չեմք զամենեսեան որք հանդիպիք, ո՛վ սուրբ երամք ընթերցողաց, ընթեռնելով կամ գաղափարելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զգծող և զծրող սորայ [զՅոհաննէս] աբեղայ, և զհայրն իմ զտէր Պապն, և զմայրն իմ զՍիրայն, և զեղբարսն իմ, և զամենայն արեան մերձա-ւորսն իմ՝ զփոխեցեալսն առ Քրիստոս և զկենդանիս։ Ընդ նմին և զհարազատսն իմ՝ զհայր [վանացս] զՄարտիրոս աբեղայն և զՄարուգէ աբեղայն. ընդ նմին և զբազմերախտ, սրբասնունդ և պատճառաւոր այսմ գրոցս գրելոյ՝ զպանծալի հոգևոր եղբայրն մեր զՅակոբ աբեղայն, և զԳրիգոր աբեղայն, և զԿարապետ երէցն, ընդ նմին | | | միա-բանք | | | աբեղայն, և զՅովսէփ աբեղայն | | | և զՄկրտիչ և զՆեր-սէս [երէց]անին, և | | | զՄկրտիչ [տնտեսն], և զՅովանէս | | | և զՄխիթարն | | | որք | | | բարէս՝ [զմե]ծ և զփոքր [միաբանսն սուրբ] ուխտիս։ Ընդ նմին և զ[Պա°ւղ]ոս | | | աբեղայն զ | | | սուրբ ուխ-տիս որ կոչի Ապահ[ունեա°ց | | | վերջք զր | | | ա[ստ աւարտե]ցաւ, և մեզ եղբայրութեան սէր կատարեաց, զոր հատուսցէ տէրն Յիսուս ի միւսանգամ գալուստն, և սուրբ [եկեղեցեաց] բարեխաւսութեամբ՝ սուրբ Նի[կողայոսի, և սուրբ] Աստուածածնին, և սուրբ Թէոդորոսի, և ամենայն սրբոց։

Քրիստոս աստուած մեր, որ առատն է ի տուրս բարեաց ձեզ՝ յիշողացդ սրտի մտօք, և մեզ՝ յուսողացս և յիշելոցս, առհասարակ, ողորմեսցի, և պարգևեսցէ զիւր երկնից արքայութիւնն, և նմա փառք յօիտեանս, ամէն։

152

ԵԻԹՆԱԳՐԵԱՆՔ

Երևան 599

Գրիչ՝ Թովմայ
Վայր՝ Խլաթայ վանք

ա

61 ա Զյետնեալս յամենայն շնորհաց և զծոյլս յամենայն կրաւնաւորաց, զբազմավէր ոգիս, զպիտականուն վարդապետս* աղաչեմ յիշել ի տէր, որ բազում աշխատութեամբ հաւաքեցի զայս գիրքս, որ ցրուեալ և ցընդեալ էր ի վաղուց հետէ և ոչ ոք գիտէր թէ զինչ էր սա։ Այլ և զհոգեոր և զմարմնաւոր ծնաւղքն մեր, մանաւանդ զՄաթէոս քահանայ յիշեսջիք ի բարին Քրիստոս, և կաթ մի յարտասուաց ձերոց ցաւղեսցի ի թարախալից մեռեալ հոգիս և մարմինս մեր, և Քրիստոս աստուած զյիշողքդ յիշէ ի փառս իւր, ամէն. ՊԿԲ. (1413) գրեցաւ։

բ

62 ա Աղաչեմ անպարսաւ [թողուլ զիս]։ Զայս ի հին գիրս գտի, ի Խլաթայ վանսն։

153

ԱԻԵՏԱՐԱՆ

«Արարատ», 1905, էջ 728—729

Կիւմուշխանէ, Ս. Փրկչի վանքի ձեռագիր № 2

Գրիչ՝ Զաքարիա
վայր՝ Վան

... Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Զաքարիայի՝ որդւոյ Մկրտիչ քահանայի...։ Գրեցի ձեռօք իմովք յընտիր և ի ստոյգ աւրինակէ, կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ և անհանգըստութեամբ, ի քաղաքիս որ կոչի Վան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսի, և սուրբ Գէորգայ զաւրավարին, ի կաթողիկոսութեան հայկազեան սեռի տէր Դաւթի Աղթամարեցւոյ, և ի թագաւորութեան այլասեռից Ղարա-Եուսուֆի, զոր տէր աստուած Իսրայէլի պահէ անխախտ, որ չի սասանի զաթոռ մերոյս հայրապետի և զմերազին թագաւորին, զի յիշելով զանուն սոցա՝ սասանել սաքրին և ոչ ևս [երբէն] թշնամիք ճշմարտութեան։ Եւ էր մեծ թիւն Հայոց ՊԿԲ. (1413)...։

---

* Այս տողի շարունակությամբ, լուսանցքի վրա, գրված է եղել ինչ որ անուն, որից պահպանվել են միայն՝ «Թ» և «Ա» տառերը, վերից վար դասավորությամբ։ Հնարավոր է ենթադրել, որ այստեղ գրված է եղել գրչի անունը՝ «Թովմայ»։

Ցիշեցէք ի Քրիստոս զստացող սուրբ աւետարանիս զՂուկաս քահանայն, և զզաւակն զՍիմէօն քահանայն, և զնորաբողբոջ զաւակն զՅովհաննէսն, և զծնող Սիմէոնին զՄարթէն, և զկողակիցն զՄամ-խա-թուն... և զանարժան գրիչս զԶաքարիա, և հայրն իմ զՄկրտիչ քահանայ, և զմայրն իմ ըստ մարմնոյ, և զմօրքուրն իմ զԽերմելիք, և զկրկին մայրն մեր զԻլխաթուն, որ առաւել [քան] մայր սնուցանէր զմեզ և դարմանէր, և զերկու եղբայրս իմ զՅովհաննէս գրիչ և Ներսէս... այլ և զհոգևոր եղբայրն իմ զՅովհաննէս, որ հանապազ կերակրէր զմեզ և ուրախացուցանէր։

154

ՃԱՌԸՆՏԻՐ—ՏՕՆԱԿԱՆ

ՄՑՀ, հտ. Ա. 146, էջ 267—275

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Մոկաց երկիր, Ծպատայ վանք

ա

...Եւ յիշեսցեն յաղաւթս իւրեանց զստացող սուրբ գրոցս զԹադէոս հոգևոր քահանայս, և զծնօղսն իւր՝ զհեզահոգին զՎարդանն հայրն, և զաստուածասէր մայրն զԹամար, և զկենակիցն իւր զՇուշան, և զգեղեցկատիպ որդեակն զԱստուածատուրն, որ տարաժամ հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս և սուք եթող անմոռանալի, զոր տէր աստուած դասեսցէ զհոգիս սոցա ի տեղիս հրեշտակաց, ի խորանս լուսեղէն, ամէն։ Կրկին մաղթանաւք աղաչեմ յիշել զփեսայքն իւր, որ աւգնական եղեն գրոցս, զպատուական տանուտէրն զՅովհաննէս, և զկենակիցն իւր զՆազխաթուն, զբարէմիտն զՄովսէս, և զհաւատարիմ կինն իւր զՄինայ...։

Ո՜վ քահանայք՝ առաջինք և յետինք, լաւ խըն[ամ]ով պահեցէք և կարդացէք, զի գիրքն մարդոյ հոգի է և կեանք. իմ դատաստանն, թէ գրէանքս չէին՝ նա աշխարհըս ամէն ի կռապաշտութիւն անկանէր։

Աստուած փառաւորէ զԹադէոսի հոգին, որ Ոգիմ գեղիդ լուսաւորիչ եղև, ժողովեաց զաստուածային ծաղկունքն՝ աւետարան, տարեգիրք, յայսմաւուրք, տաւնական, ճշմարիտ աստուածն գիտէ, որ երախտիք է ի վերայ ձեր, ո՜վ պատուական տանուտէրեայք և տանդիկնայք, մեծ և փոքր առհասարակ, լաւ հարկիք արարէք Թադէոսիդ, իբրև ծնաւղի ձերոյ, զի խիստ շատ աշխատեցաւ յերթևեկութիւն սուրբ գրոցս...։

Եւ արդ, ես՝ ունայնս ի գործոց բարեաց և փցունս ի գրչաց Կարապետ սուտանուն կրօնաւոր և անարժանս ի կարգաւորս՝ յանձն առի ըստ իմում կարի և գրեցի զսուրբ գիրքս դրոշմամբ մեղսամած մատամբ իմով, բազում և պէսպէս աշխատանաւք, վասն զի զիմ անարժանութիւնս յիշելոյ արժանի առնէք յերկնագնաց յաղաւթս ձեր և մեղաց թողութիւն խնդրէք ինձ և ծնողաց իմոց և ամենայն երախտաւորացն մերոց, աղաչեմ։

Արդ, գրեցաւ սա յերկիրս Մոկաց, ի վանքս Ծպատայ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս, ի հայրութեան տէր Յոհաննէսի հեզահոգւոյ

և աղքատայսիրի, աստուած սմա բազում վարձս պարգևեսցէ, զի զմեզ խնամէ իբրև զիւր որդի, և միեղէն սուրբ եղբարցս աննախանձ կրօնաւորացս տացէ տէր աստուած զերկնից արքայութիւնն, ամէն։ Եւ ի հայրապետութեան Հայոց տեառն Դաւթի, ի դառն և ի վշտալից ժամանակի, որ հարկապահանջութեամբ ազգս տապալի ի չար ազգէն նետողականի, ի թուականութեանս Հայոց ՊԿԲ. (1413)...։

Արդ, ես՝ ամենամեղ գրիչս Կարապետ, աղաչեմ զամենեսեան հոգացեալս ի գերեզմանի, զի ահաւասիկ կամ յաջ և յահեակ սպարապեալ հողով, և ոչ զօր ունիմ թէ աւգնեսցէ ինձ յայսմ տեղւոջս, և յոյժ սրտաբեկեալ կամ, զի զամենայն աւուրքս իմ կացի կեղծաւորութեամբ և մարդահաճութեամբ, որ համբաւեն զչարս բարի, զխաւարս լոյս կարծելով, զի ոչ գիտեն զմեղս իմ և ոչ ճանաչեն զխաբէութիւնս իմ, որ երեիմ սրբութեամբ և լի եմ աղտեղութեամբ, գիտեմ զարդարութիւն և գործեմ զանաւրէնութիւն, այլ արտասուալից աչաւք և հառաչմամբ սրտիւ դէմս ի ձեզ ապաւինիմ, զի վասն իմ աղաչէք զողորմածն աստուած, զի ողորմեսցի ինձ՝ բազմամեղիս։ Եւ արդ, կարող է աստուած ի ձեռն այլոց աղաչանաց այլում ողորմութիւն շնորհել, և ինքն ողորմածն աստուած ողորմեսցի ամենեցուն, ես առաւել այնոցիկ, որ զմեզ յիշեն և մեր մեղացն թողութիւն խնդրեն, ամէն։

Ո՜վ դասք սրբազանից, որք հաճոյ եղէք սուրբ երրորդութեանն ... աղաչեմ զձեզ բարեխաւսեցէք առ տէր Յիսուս և աստուած բանն, զի շնորհեսցէ թողութիւն աստուածասէր քահանային Թադէոսի և իւրոցն ամէնի, և ամենայն աշխարհի զանշարժ զխաղաղութիւն, եկեղեցեաց Հայաստանեաց՝ զանսասանելի զհաստատութիւն, հայրապետաց՝ ուղղափառութիւն, աշխարհակալաց՝ սիրտ քաղցրութեան ի վերայ ամենայն քրիստոսադաւան ժողովրդոց, թագաւորաց հաւատացելոց՝ արիութիւն ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի, իշխանաց՝ անդորրութիւն, կրօնաւորաց՝ ժուժկալութիւն, քահանայից՝ պարկեշտութիւն, սարկաւագաց՝ սրբութիւն, ժողովրդոց քրիստոնէից՝ պահպանութիւն յերեելի և յաներեոյթ թշնամւոյն, պահել զանդաստանս մեր ի ցասմանէ կարկտոյ, ի սառնամանեաց, յերաշտութենէ, անձրեաց՝ առատութիւն, ծառոց՝ պտղաբերութիւն, սերմանց՝ բազմապատիկ շահեկանութիւն, անասնոց՝ անսխալ ծննդականութիւն, ծերոց՝ զգաստութիւն, երիտասարդաց և կուսանաց՝ զաւրութիւն ընդդէմ չարին, արանց և կանանց՝ աւրինապահութիւն, արդարոցն՝ համբերութիւն կեալ ի նմին արդարութեան, մեղաւորացն՝ դարձ և զղջումն ապաշխարութեան, ննջեցելոցն՝ մեղաց թողութիւն, հանգիստ և ողորմութիւն, և Քրիստոսի աստուծոյ մերոյ փառք և պատիւ...։

Յիշեա Քրիստոս աստուած ի քո յահաւոր գալստեանն զՊետրոս կրօնաւորն, որ զգրելոյ տեղիքս երիտ...։

Աւա՜ղ, զգերիս յայսմ աշխարհի,
Ձեռվ նման աբեղայի,
Բարի անուն ժառանգեցի,

Ջհոգիս բաղում չարեաւք լցի
Եւ անպաշար ի բաց թողի։
Կարդ տուին ինձ հրեշտակի՝
Զայն կորուսեալ եմ աշխարհի,
Սրբութիւնն ես ատեցի,
Զաղտեղութիւնն սիրեցի։
Վայ աւուրն իմ ծննդեան,
Մայրն իմ յղացաւ զիս մեղաց որդի,
Այս կեանքս սուտ է և սնոտի,
Վայ, որ ի սա ապաւինի։

Ո՜վ, Ողիմ գեղի սուրբ ժողովուրդք, հայեցէք ի ձեր նախնի ննջեցեալքն, որոց ոչ ևս երեին, ոչ երևանան.

Ո՞ւր են ձեր սիրասնունդ տղայքն,
Որ զէթ զվարդ գունով ծաղկեցան,
Եւ փոյթ ընդ փոյթ շուտով թառամեցան,
Գնացին՝ մտան հողիկն ի զնտան,
Որ ոչ լոյսնացոյց և ոչ պատուհան.
Կան և մնան մինչ ի դատաստանն։
Ցորժամ գոչէ փող Գաբրիէլեանն
Ցահեղ ձայնէն աշխարհ որոտան,
Սոքա յառնեն լուսով աննման,
Երթան ընդ յառաջ փրկչին տիրական,
Հանգչին ի գոգն մեծն աբրահամեան....։

Դարձեալ, կրկին մաղթանաւք աղաչեմ յիշել զպատուական և զաստուածասէր տանուտէրն զՄկր[տ]իչն, *և զորդիքն իւր* զԴաւիթ,, զԹաձդին, զՀերպետն: *Ցուսամք յաստուած, որ պահեսցէ զսոսա մինչև ի խորին ծերութիւնն, զի զանդն տուին մեզ, որ այգի տնկեցինք։ Ինքն՝ արարիչն աստուած զանմահական պտուղն, զյաւիտենից երանութիւնն և զհանգիստն պատրաստէ* Մկրտչին *և ամենայն արեան մենձաւորացն իւրոց, ամէն։ Ու զպուճ արտն գնեցինք մեզ մուլք, ի մեր հալալ ըռուճկոն, ով որ յետ մեզ դաւի կամ աս աւ կամ լիս առնէ՝ նա որոշեալ և կապեալ յաստուծոյ և յամենայն սրբոց, ամէն։*

Ո՜վ ժողովուրդք, գիտութիւն լիցի ձեզ, որ Թադէոս *երէցս գանգատէ ի ձեզանէ. ամէն մարդ ով որ գիրք է գրել գեղնցիքն էլ կուցանկան, թէ զմեզ էլ մասն լինի յայս գիրքս. սա իրք մի չխնդրեց ի ձէնջ, իմ դատաստանն, որ խիստ՝լաւ ջանաց։ Թէ բարի չէր ոք չար ընդէր իւրն երկոք մի ի պահ երիտ, նա չար կանանիքն ի վեր կալան, մեծ անաւրէնութիւն և անաստուածութիւն է։ Աստուած է այս բանիս վկայ, որ ամենայն մեղաց թողութիւն գտաք ու զրկանացն ոչ, մինչև ի տէրն դարձուցանեն անխախտ*, մի խաբիք, աստուած ոչ*

* *Տպված է «անբախա»։*

արհամարհի, սատանայ խաբեց, առ զքո ամանադ, լաւ ըստայ* ամաչել քան յահեղ ատեանն հրապարակի։

Բ

931 Քրիստոս աստուած... ողորմեա ամենայն հաւատացելոց, եւս առաւել ստացողաց գրոցս Թադէոսի և Յոհաննէսի, և փեսայիցն իւրեանց Յոհաննիսին և Նազմէլիքին, և դեռաբուսիկ տղային, որ վաղվաղակի ծաղկեցաւ և շուտով թառամեցաւ, զՄովսէս և զՄինէն, որ աւգնական եղեն գրոցս, միոյն հազարապատիկ հատուցումն առնէ տէր աստուած սոցա և ծնաւղացն, ամէն, ամէն։ Սոյնպէս և Յովաննէս եղև օգնական, տէր աստուած տացէ սմա զերկնից արքայութիւնն։**

Գրիչ՝ Յովաննէս

Գ

1162 ... Ողորմեա ստացողի գրոցս Թադէոս քահանային, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորացն, և զդեռաբոյս քահանայն Յովհաննէս...: Եւ ինձ՝ ստկաւ աշխատողիս՝ Յովաննէս գրչի, և ծնողաց իմոց, և կարդացողաց, և լսողաց...։

Ո՛վ եղբարք, անմեղադիր լերուք խոշորութեան գրիս, զի այս տետրս յետո գրեցաւ. վասն այն պատճառին մանտր է գիրս, զի այլ թուխթ չկայր։

Դ

1272 Ո՛վ եղբայր, դու զիս յիշեա,
Սառն լկաւ ես չիմացա,
Կաթիլս անկաւ ես վախեցայ,
Եւ ես կարի վայր նստացայ։

Ե

1318 Ո՛վ եղբարք, անմեղադիր լերուք, երկու տարպայ գրեցաւ, մոռացայ։

Զ

1338 Ո՛հ, ի պիղծ ճանճերոյս։

Է

1347 Ո՛հ, լարն կտրաւ, շատ ջնաս պիտի 'առնէր։***

Ը

1350 Գրեցաւ Ճառընտիրս ի Մոքաց երկիրն, ի հռչակաւոր սուրբ Փրկչին, ի հայրապետութեան տեառն Յոհաննէսի, և յետոյ այլ հայրա-

* Իմա՝ ամաչել։

** Կարապետ գրիչը նման և ավելի համառոտ հիշատակագրություններ շատ ունի։

*** Հավանաբար խոսքը այն լարի մասին է, որով գրչի շարժական տախտակ-սեղանը կապում էին առաստաղից։

պետութեան Հայոց Դաւթի, *աւարտեցաւ ծաղկնտիրս այս ի սուրբ Փրկիչն, որ և յիշէք զստացողքս՝* զԹադէոս *երէցն և* զԿարապետն *միով հայր մեղայիւ ողորմի ասացէք, ամէն, որ է թվ. ԳԿԲ. (1413)։**

155

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Փիրղ. նօտ. 42—44, Բաղէշ, Ամրդոլու վանք

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Հիզան

ա

. . . *Եւ արդ, ես...* *վերջինս ի մանկունս եկեղեցւոյ...* Յովհաննէս *պիտակ անուամբ սպասաւոր բանի, գծեցի ձեռամբ իմով զգիրս սուրբս յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ հօրն իմոյ* Ալեքսան *քահանայի, և մօրն իմոյ. և հաւուն իմոյ* Յովանէս *քահանայի, և եղբարց իմոց ըստ մարմնոյ՝* Յակոբի *և* Պետրոսի՝ *կուսակրօն քահանայից....։*

*Բայց գրեցաւ ի ԳԿԲ. (1413) ամի,** յաստուածապահ և մեծափառ և գերահռչակ ուխտն, որ սուրբ Խաչ յորջորջի, ի գաւառիս* Հիզան *քաղաքի։ Եւ կամք մեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ ձեռին աստուծոյ և պահպանութեամբ աստուածընկալ սուրբ խաչիս Քրիստոսի։ Նաև զյիշատակի արժանաւորսն՝ զհոգևոր հարքն մեր* զՅովաննէս *և* զԿիրակոս *րաբունիք, որ էին մեզ տածողք հոգեպէս և մարմնապէս և վարժիչք աստուածային պատուիրանացն՝ բարեաց յիշման ի տէր արժանի առնել։ Այլ և զմերս միաբան եղբարքս, որք կան հաւաքեալ ընդ հովանեաւ սուրբ Խաչիս, կուսակրօն և սրբասնեալ եղբարքս մեր, նախ և առաջին՝ գրոց որդիքս* Աւետիս, Բարսեղ, *և ապա այլքն ամենեքեան՝* Ներսէս, Պետրոս, Յակոբ, Գրիգոր, Յովհաննէս, Ստեփաննոս, Յոհաննէս, Մարտիրոս, Առաքել, Դաւիթ, Յակոբ, *և հանգուցեալքն՝* Կիրակոս *կրօնաւորն, և* Յովաննէս *միակեցն, և աշակերտն մեր* Գրիգոր, *որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս աստուած։ Նաև այլ միաբանք, որ կան ի դուռն սուրբ եկեղեցւոյս մեծաւ յուսով և սպասեն անճառ խոստմանցն աստուծոյ...։ Նաև* Կիրակոս՝ Շիրինի *որդին* ի Տիոյ***, *և իւր կողակիցն՝* Նազ-խաթունն, *որ օգնական եղեն ի սուրբ գիրս։*

Գծագրեցաւ սուրբ մատեանս ի դառն և ի բազմավրդով ժամանակիս, ոբ մահտարաժամ է անկեալ վասն մեղաց մերոց յաստուածասաստ բարկութենէն, և կոճոպէ և յափշտակէ զմատաղ մանկունս ի գրկաց ծնողացն և մորմոքեցուցանէ զծնողս և զեղբարս, ի Թուականին ԳԿԲ. (1413)։

---

* *Հրատարակիչը հայտնում է, որ այս հիշատակարանը հավանաբար ընդօրինակված պետք է լինի այժմ կորած նախնական բնագրից։*

** *Ձեռագրի ընդօրինակությունը, համաձայն Աւետեաց քարոզի սկզբում եղած հիշատակագրության, սկսվել է ԳԿ. (1411) թվականին։*

*** *Գյուղ է Հիզանի շրջանում։ Ղ. Փիրղալեմյանի ժամանակ ունեցել է 39 տուն հայ բնակիչ։*

Բ

Զերջանիկ և զփառաւորեալ ըաբունիք մեր՝ զՅովճաննէս և զԿիրակոս՝ զվերափոխեցեալսն ի Քրիստոս ուղիղ հաւատով, և զնոցին ծնողսն, և զիս՝ զանարժան գծողս յիշման արժանի արնէք ի բարին...։

Գ

Զառաջնորդ սուրբ ուխտիս (Հիզանոյ սուրբ Խաչի վանից)՝ զՄկրտիչ կրօնաւոր, և զծնողսն իւր, և զհոգևոր եղբարքս մեր և զորդիքս՝ զԲարսեղ, զԱւետիս, զՆերսէս, զԱտոմ, զՊետրոս, զՅոհաննէս, զՍտեփաննոս, զԳրիգոր, զՅակոբ, զՄարտիրոս, զՅոհաննէս, զԱռաքել կրօնաւորք, և զայլ միեղէն միաբան եղբարքս և զծնողք նոցին, առհասարակ, և զյետնետլս ի շարս բանասիրաց զՅոհաննէս ծրողս, և զեղբարսն և զծնողսն մեր, պատահողք սմին, ինչ կերպիւ և լինի, յիշելոյ արժանի արնեք...։

156

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

Երևան 1317

Գրիչ՝ Սամուէլ
վայր՝ Ի գաւառիս Եկեղեաց,
ի վանս Սաղի ս. Ստեփաննոս

535 ա ... Արդ, այսմ համատարած ծովուս ալեացն կուտակ առեալ և զհոյլս բազմածին կենդանեացն զարհուրեցուցանեն, մանաւանդ զայնոսիկ, որ դողն լաստիւ համարձակապէս արշաւեն անհոգութեամբ ընդ մկանունս նորա, առ ոչինչ համարելով զփրփրադէզ սաստիկ կոհակս գոչմանն, զոր և գազանացն, որ ի նմա ի սաստիկ մրրկածին աւդասաստ խառնակութեանն զարհուրեալք ելանեն ի բնակութեանցն երևելով հողածին կենդանեացն։ Իսկ նաւուղիղն՝ զիմաստութիւն խելացն յինքն բերելով, իբրև արիական պատերազմող զնաւն անվրդով սայթաքմամբ, առանց իրիք վնասու, ի նաւահանգիստն հասուցանելով, և ինքն պարծանաւք անցանիցի ի ցոյցս տեսողացն՝ բազմելով հրճուալից բերկրանաւք ի վերա բարձի։ Ապա զմթերս գանձուցն, զոր ի նաւարկութենէն շահել իցէ՝ բերեալ մատուցանիցէ սիրելեացն, պատմելով զանցս աղետիցն, զոր կրեալ էր, զնեղութիւնսն բազում տառապանաւք ի վերա ծովուն։ Իսկ յորժամ ժողովին սիրելիքն և պարապեն ուրախութեան գինոյ և զբաւսանաց ցանկալի հրճու[ու]թեան, մոռանայ զանցեալ իրս նեղութեան և դարձեալ ի նոյն յաւժարանայ նաւարկութիւն։

535 բ Արդ, նմանապէս երջանիկ և սուրբ վարդապետ || ս այս Սարգիս անուն, ցանկորդեալ պատուական գանձիս և անգին մարգարտիս, զոր բազումք ի վարդապետաց եկեղեցոյ անփոյթ արարեալ զմեկնութիւն

թղթոցս սուրբ առաքելոցն Յակովբա և Պետրոսի, Յոհաննու և Յուդայի։ Իսկ յառաջասացեալ մեծ վարդապետս այս Սարգիս, յաւժարական կամաւք անձամբ զանձն տուեալ տեառն ի ծառայութիւն, առ ոչինչ համարելով զմարմնաւոր վտանգս յաղագս սիրոյ հոգոյն՝ ձեռն զմաճով արկեալ ի խնդրոյ երջանիկ և սուրբ կաթուղիկոսին Հայոց տեառն Գրիգորիսի և հարազատ եղբաւր նորին տեառն Ներսէսի։ Արդ, մտեալ ի խորս աստուածային զանձուցն վերաբերելով զանգին մարգարիտս՝ տալով զսա մանկանց առագաստի ընդ հանուրց հաւատացելոց՝ ի խրատ և ի զղջումն ապաշխարութեան և ի լուսաւորութիւն համաւրէն ազգիս Հայոց տանս Թորգոմայ։

Արդ, գրեցաւ աստուածախաւս քնարս այս ձեռամբ Սամուէլի անիմաստ, փցուն և անարժան գրչի, ի գաւառիս Եկեղեաց, ի սուրբ ուխտս որ կոչի Սաղի սուրբ Ստեփաննոս, ընդ հովանեաւ սրբոյ Նախավկայիս և այլ բազմահաւաք սուրբ Նշանացս և սուրբ Նշխարացս, հրամանաւ Մարգարէի աստուածասիրի՝ առաջնորդի անապատիս, ծախիւք և արդեամբք Ոնոփրիոսի աւաք սարկաւագի, և Պետրոսի կուսակրաւն աբեղ[այ]ի, և Յակոբ կրաւնաւորի։

Արդ, ի սպառեալ դարուց և ի նուազեալ ժամանակաց մերոյս աղքատութեան՝ յայտնեալ ի հոգոյն սրբոյ, և զհուր աստուածային սիրոյն բորբոքեալ ի սրտի իւրեանց, ոչ անտես արարին զկտակ մատենիս, այլ ըստ իւրեանց յաւժարական սիրոյն, զոր ունէին առ խըմբարան սուրբ եկեղեցիս, նա և վասն անչափ խոնարհութեան հոգոյն, զոր ունէին՝ ոչ ամաւթ համարեցան գթալ հայրաբար ի վերա իմոյ անարժանութեան և ախմարութեան գրչիս, այլ հրամայեցին հայրաբար և տիրապէս, և ես կատարեցի որդիաբար և ծառայապէս։ Եւ տկար անձամբ և մեղուցեալ ոգով ջանացի, որչափ և կարացի ըստ իմում
536 ա կարի և ըստ բերման ժաման||ակիս, գրելով ի սմա զմեկնութիւն թղթոցս սուրբ առաքելոցն Յակովբայ և Պետրոսի և Յոհաննու և Յուդայի։

Արդ, գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԿԲ. (1413), ի հայրապետութեան տեառն տէր Գրիգորի արքեպիսկոպոսի, զոր տէր աստուած խաղաղութեամբ պահեսցէ։ Արդ, աղաչեմ զամենեսեան արտասուալից պաղատանաւք, զի զամենեսեան յիշատակի արժանի առնիջիք զաստուածազարդ սուրբ կտակիս զստացող տառիս զՈնոփրիոս աւաք սարկաւագ՝ զհայր վանացս*, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոյ և ետ ի դուռն սուրբ Կարապետիս յիշատակ անջինջ։

Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով կամ գաղափար առնել[ով], յիշեցէք յաղաւթս ձեր զհայր Ոնոփր[ի]ոսն, և զեղբայրն իւր զՏիրատուր աբեղան, և զհայրն իւր զԴաւիթ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, և զմայրն իւր զՍիրմայն, և զեղբայրսն իւր զԱստուածատուրն և զՍիմէոնն, և զաւակսն իւրեանց զտէր Աւագ և զՅակոբ, զոր աստուած հասուցանէ ի խորին ծերութիւն։

* Ձեռագրում՝ «զվայր վանացս», ուղղում ենք համաձայն 482 ա էջի հիշատակագրության, ուր գրված է «Ոնոփրիոսի՝ վանացս հայրն» են։

Ցիշեցէք և զՊետրոս աբեղան, որ աւգնական եղև ի գրոցս գրե-
լէն Գճ. (300) դրամ, և զքուրն իւր զէլխաթունն, և զզաւակն սորա
զՍտեփաննոս սարկաւագն՝ զփոխեցեալն ի Քրիստոս, որ եթող սուգ
մեծ, և զամենայն արեան մերձաւորս սոցա՝ զկենդանիս և զհանգուց-
եալսն։ Ցիշեցէք և զՅակոբ աբեղան զփակակալն, և զծնաւղսն, և զեղ-
բարս նորա, և զՏաւնական երէցն, և զԹադեոսն՝ զծերունին, և զերկու-
դեռաբոյս կրաւնաւորքն*, և զամենայն աշխատաւոր և զգործաւոր և
զերախտաւոր սուրբ Կարապետիս...։

Ընդ նմին յիշեսջիք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զա-
ռաջնորդ սուրբ անապատիս զսուրբ Ստեփաննոսու Նախավկայիս՝ զհայր
Մարգարէ, որ բազում երախտիք ունի առ մեզ, և յօրդորեաց ի բանս
յայսմիկ և հանգոյց, զոր տէր աստուած պահեսցէ ի կամս իւր, և
զծնաւղսն և զեղբարսն նորա, և զամենայն արեան մերձաւորս նորա՝
զկենդանիս և զհանգուցեալսն ի Քրիստոս։ Եւ զամենայն եղբայրու-
536 բ թիւնս առհասարակ՝ ‖ զՅովաննէս կրաւնաւորն՝ զհոգևոր հայրն մեր,
որ բազում աշխատութեամբ սնոյց և ուսոյց զիս, և նա եղև պատճառ
այսմիկ և զաւրինակն շնորհեաց, և զծնաւղս և զեղբայրսն նորա՝
զհանգուցեալսն ի Քրիստոս, և զքուէրորդիսն զՇահրիարն, որ զգիրքս
գլխագրեաց, և զԿարապետն, և զՄատթէոս զկուսակրաւն աբեղան՝ զգա-
սակալս, որ զգիրքս ղորդեաց և աւգնական եղև մեզ բազում անգամ,
և զքուերորդին իւր զՄկրտիչ սարկաւագն, և զծնաւղսն նորա, և
զԱռաքել աբեղան՝ զհոգևոր եղբարս մեր, որ աւգնական եղև ի խա-
զելն, և զծնաւղսն նորա, և զՊաւղոս աբեղան՝ զճգնաւոր և զփակակալ,
որ աւգնական եղև ի պէտս մարմնականս, և զծնաւղս և զեղբարս նորա,
և զսպասաւորքս և զգործաւորքս և զաշխատաւորք սուրբ անապատիս։
Ընդ նմին և զմեղապարտ և զանարժան գրիչս զՍամուէլ աբեղաս,
զԹոյլս և զտարտամս հոգով և զպարտապան բիւր քանքարիս, և զեղ-
բայրս իմ զՊետրոս՝ զքարեսէր և զհեզահոգի կուսակրաւն աբեղաս, որ
աւգնական եղև ի կոկելն և ի պէտս հանդերձից, զոր տէր աստուած
պահեսցէ յիւր կամս և մշակ առանց ամաւթոյ, և զեղբարսն իմ զԿա-
րապետ և զՊաւղոս, և զաւակսն իւրեանց, և զքոյրն մեր զՄեծ-խա-
թունն, զոր տէր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, և զծնաւղսն
մեր զՍարգիս և զՃաշ՝ զփոխեցեալսն ի Քրիստոս....

Եւ ով ոք որ հանդիպիք այսմ տառիս կարդալով, կամ տեսանե-
լով, կամ գաղափարելով, նախախնամելով պահեսցէ զգիրքս և լաթով
բռնեսցէ և մի իշխեսցէ ի գրոցէս պարապ թուղթ կտրել, կամ ի յի-
շատակարանէս քերել և այլ անուն գրել։ Եւ ոչ ոք յազգականաց Ոնոփ-
րիոսին կամ ի ՊետրոսինՆ մի իշխեսցէ ծախել կամ գրաւկնել զգիրքս։
Ողորմեսցի Քրիստոս և համաւրէն ամենայն ազգի քրիստոնէից և ընդ-
հանուրց հաւատացելոց, տացէ խաղաղութիւն ամենայն աշխարհի, և
537 ա հաստատութիւն եկե ‖ ղեցոյ իւրում սրբոյ։ Եւ եթէ ոք յանդգնեսցի
ծախելով, կամ գրաւկնելով, կամ թուղթ կտրելով, կամ անպարկեշտ

* Կրոնավորների անունները լրացնելու համար տեղ է բաց թողնված։

պահելով՝ նա զմասն Յուդայի առցէ և զբաժին նորա ընդ անհաւատսն դիցէ, և մեզ յիշեցելոցս և ձեզ յիշողաց, առհասարակ, զայն ձայնն լսել տայ, որ ասէ՝ Եկայք աւրհնեալք հաւր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն...։*

157

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 5435

Գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի

384 բ Թարգմանեցաւ գիրքս խրատական սուրբ վարուց** հրամանաւ տղայ տէր Գրիգորիսին Հայոց կաթողիկոսի, եղբօրորդոյ տեառն Ներսէսի, յասորի լեզուէ ի հայս, յամի ՈԼԶ. (1187) թըւականին։

Եւ ես՝ անիմաստ և մեղսամած գրծողս Գրիգոր պիտականուն խնդրողս բանի, ցանկացայ և դրեցի զսա յամի ՊԿԲ. (1413) թըւականիս, ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ։

158

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

Երևան 1573

Գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի

340 բ Թիւն ՊԿԲ. (1413)։

Գովեստ տացուք հօր անեղին
       և ծնածին բանի նորին,
Ռամից համայն արարողին,
       հոգոյն սրբոյ զարդարողին,
Ի յախտաժետ անձնէ յետին,
       որ սպասաւոր կոչի բանին,
Գըրիգորէ մեղսասիրին,
       որ թաւալեալս եմ ի տըղմին,
Որ ետ ինձ ոյժ տըկարս անձին
       ու զԴայն ու զՆուն հասոյց ի մին,
Ռամեալ զհամայնն, որ ի միջին,
       Դայն առաջին և Նուն յետին...,***

---

* Սամուէլ գրիչը մանր և ոչինչ նորութիւն պարունակող հիշատակագրութիւններ է թողել ձեռագրի 4 ա, 139 բ, 214 բ, 230 ա, 419 ա, 482 ա, 494 բ էջերում։

** Հիշատակարանը գրված է Փիլիքսիանոսի «Վասն սկիզբն առնելոյ ելանելոյ յաշխարհէս յայսմանէ» խրատական գրվածքի վերջում, ուստի և վերաբերում է նրան։

*** Ամբողջի սկզբնատառերով հոգվում է հետևյալ նախադասությունը՝ «Գրիգոր է այս բանքս թողուլ զմեզս»։ Շարունակությունը անարժեք է, տարտամ տաղաչափությամբ Խլաթեցին գովաբանում է Նարեկացու Մատյանի արժանիքները։

159

ԱՒԵՏԱՐԱՆ

«Միարանք և այցելուք Երուսաղէմի», էջ 214—216»

Հետ ստացող՝ Կոստանդին Վահկացի
վայր՝ Երուսաղէմ

ա

... *Ցիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր* Կոստանդինս, *և զծնաւղսն իմ* զՎասիլ, *և զմայրն իմ* զՏիրուհի, *և զաստուծոյ աւրինաւք ամուսին իմ* զՄարիուն, *և զաստուածատուր որդեակն իմ* զԱկոբ, *[որ] Ժ. (10) ամեայ փոխեցաւ ի Քրիստոս և ինձ մեծ սուգ և տրտմութիւն եղև, որ այլ չունիմ ինձ մխիթար յաշխարհս...,*

Արծաթապատ զարդարեցաւ ի մեծ թվին Հայոց ՊԿԲ. (1413), և ի հայրապետութեան տեառն տէր Յակոբայ *կաթողիկոսի՝ ընդհանուր ամենայն հայկազեան սեռի, և ի նորա աթոռակալութեան տէր* Վահրամին...:*

Բ

... *Տէր* Կոստանդինս՝ *ես անպիտան,*
Ընծայեցի զաւետարանս
Ի սուրբ քաղաքս տնաւրինական՝
*Ց*Երուսաղէմս *պանծական,*
Որ Քրիստոսի է գերեզման,
Ինձ և իմոց պատճառ յիշման,
Որ զմեզ յիշէք միշտ անխափան...։
Տէր Կոստանդինս *էր փակակալ,*
Եպիսկոպոս Հայոց պատուեալ,
Զայս աւետեաց մատեան ստացեալ
Եւ աստուծոյ ընծայ տուեալ։
Սա յիշատակ բարեաց լիցի
Տէր Կոստանդի՝ *իւր ստացողի,*
Եւ իւր ծնողաց մարմնաւորի,
Եւ իւր որդւոյն պատանեկի՝
Յակոբ՝ *անուննն ցանկալի...։*
Մնալ յիշատակ ի տաճարի,
Որ Ցարութիւն անուն կոչի,
Ի Քրիստոսին գերեզմանի,

** Հրատարակիչը հայտնում է, որ ավետարանն ընդօրինակված է 1260-ին, Հռոմկլայում, Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի համար, Թորոս Ռոսլինի ծաղկողությամբ։ Այնուհետև, նույն այս հիշատակարանի չհրատարակած մասի տվյալների հիման վրա, նա գրում է. «Այս թանկագին ձեռագիրը ժամանակ հետո գրավ կը գրվի ասորի խոճա Ասիլետին անուն մեկուն մոտ։ Վահկացին՝ դեռ եպիսկոպոս, փափաքող կըլլա ձեռագիր մը ունենալու. կիմանա որ հիշյալ ձեռագիրը գրավ կը մնա նույն ասորիին մոտ, ամեն ջանք կը թափե և ԽԶ. (46) ֆլորին կը գնե ու կ՚ստանա և ոսկեզօծել ու արծաթել կուտա զայն»։*

Ի Դողգոթա խաչին տեղի,
Յերուսաղէմ մեծ քաղաքի,
Ի սուրբ Յակոբ եկեղեցի...։
Ոչ ոք հանէ սա ի յաստի,
Ոչ տայ ի ձեռս անօրինի։
Թէ յայլազգեաց ահ մի լինի՝
Դընեն պահուստ ի յամրոցի,
Կամ ի Կիպրոս կղզին տանի,
Մինչ բարկութիւնն այն անցանի,
Դարձեալ բերեն ի սոյն տեղի
Եւ վարձս առցեն ըստ վաստակի....*

160

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 7463

Ստացող՝ Յովաննէս

ա

300 ա ... Ի թվականի Հայոց ազգի
Արեթական սերեալ տոհմի
ՊԿԲ. (1413)-երորդի,
Յամսեան Բ.-ն մայիսի,
Եղև զրաւ գրոցս այս պանծալի,
Որ Այսմաւուրք սա անուանի...։
Ի յիշատակ անջնջելի
Ինձ՝ անարժան քահանայի
Յովաննէս անուն բազմամեղի,
Եւ ի վայելումն դեռաբուսի՝
Որդւոյ իմոյ Նիկողայոսի,
Դաւանութեամբ սուրբ Գրիգորի
Հայաստանեայց լուսաւորչի,
Եւ իմ նախ[ն]եացն ամենայնի,
Երախտաւորաց մեր բոլորի,
Եւ արեանառու մերձաւորի։
Ջնջող զգիր մեր յիշատակի
Ոչ մնացէ առանց պատժի,
Եւ յիշողացդ զմեզ ի բարի՝
Ի տեառնէ և իւր պարգևեսցի,
Ողորմութիւն մեզ խնդրողի՝
Ի Քրիստոսէ և Նմին տացի, ամէն։
Դարձեալ և այս յայտնի լիցի
Քահանայիցդ սուրբ կարգի,

* Այս երկու հիշատակարաններն էլ, ի դիմաց Կոստանդին Վահկացու, գրել է ոմն գրիչ՝ Աստուածատուր երէց։

Զի ես Յովաննէսս նուաստ հոգի
Ստացայ զգանձս գովելի,
Եգի ի տաճար սուրբ Աստուածածնի՝
Ինձ յիշատակ անջնջելի
Եւ նախնեացն համայնի.
350 բ Բայց իշխանութիւն ‖ ոչ ոք չունի
Տալ գրաւական վասն արծաթի,
Կամ վաճառել ընդ քանքարի,
Զի է ազատ յամենայնի։
Բայց ընթերցցի աստ ի խրատի
Մինչ ի գալուստն Քրիստոսի։
Եւ թէ ոք յանդգնեսցի
Գրաւելով կամ ծախելով՝
Ի Քրիստոսէ ինք պատժեսցի։

Դարձեալ, աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ քահանայք և այլ[ք], որք կարդայք, կամ աւրինակէք, և որ հանդիպիք՝ լի և առատ սրտիւ մեղաց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ ինձ՝ անարժան քահանայիս Յովաննէսիս, որ լոկ զանունն ունիմ և ոչ զգործք, և եղբաւրն իմո Ղազար քահանային, և կենակցին իմոյ Զարմանդուխտին, և զաւակին իմոյ Խաչատրին, և Գրիգորին, և Հռիփսիմէ, և Յուստիանէ, և Մաթէոսին, և միւս Մաթէոսին, և Բազոսին, և Իրինէ, և Նիկողոսին, և միւս Հռիփսիմէ, և զՍտեփանոսին: Յիշեսջիք և զծնողսն իմ՝ զհայրն իմ զՄկրտիչն, և զմայրն իմ զԱղութն, և զնոցին ծնողսն՝ զՍտեփանոսն և Յուստիանէն, և զՄուրատն և զՀիլալն, և զքուերքն իմ՝ զԹանկ-Խաթունն, և ըզՍառան, և զՍայինն, և զԳրիգորն և զէմինն, և զՎարդերեսն, և զՄարտիրոսն, և զՄեղիտէն, և զՍարգիսն, և զԳոհար-Մելիքն, և զՇանրոցն, և զՀռիփսիմէն, և հաւրեղբայր իմ զԿարապետ քահանայն, և զքեռին իմ՝ զՍարգիս քահանայ, և զՄարտիրոս քահանայ, և զԽաչատուր կրօնաւորն, և զԿարապետ քահանայ, և զաներն իմ զՍտեփաննոս քահանայ, և զորդին իւր զՄարկոս քահանայ, և զմայրն իւր զՄարիանէն, և զԸնքնստն, և զՎարդերեսն, և զՍանդուխտն, և Սարգիս քահանայ, և զՇարերն, և զԳրիգորն, և զՅոհանէսն, և զԳոհար-Խաթունն, և Հռիփսիմէն, և զՅուստիանէն, և զՄարիանէն, և զՍիմէոնն, և զՍտեփաննոսն, և զՄելքիսեդեկն, որ աշխատեցաւ յետ մեզ, և զկնքահայրն իմ զԿիրակոսն, և զկնքամայրն իմ, և զՊաւղոսն, և զԵաւլթուխն, և զԱվրամն, և զուսուցիչքն իմ, և զամենայն արեան մերձաւոր, և զայնոսիկ, որ երախտիք ունին ի վերայ մեր, և զՍիմէոն երէց՝ զգրող գրոցս...։

Յիշեսջիք և զԸնքնստն, որ զգրոցս կոճակն շինեաց, յիշեսջիք և զՍիմէոն քահանայն, որ աշխատեցաւ ի յետ գրոցս։*

---

* Վերջին պարբերությունը գրված է նույն թանաքով, բայց այլ ձեռքով։

161

ՑԱՑՍՄԱԽՈԽՐՔ

«Արարատ», 1905, էջ 734—735, Դիւանուշխանէ

Գրիչ՝ Յովհաննէս

Աստանաւր աւարտեցաւ քրիստոսաշնորհ վկայապատում մարգարաաշար ատոս այս ի թվականիս Հայոց ՊԿԲ. (1413) և մայիս ԻԶ. (26), ընդ հովանեաւ սուրբ Թէոթորոսի մեծափառ և բարձրապատիւ ուխտի, և սուրբ Աստուածածնի, և սուրբ Սարգսի, և սուրբ Ցակորայ՝ կենաց բարեխաւսի, և սուրբ Գրիգոր Լուսաւորչի, և այլ սուրբ նշանացս և սուրբ նշխարաց, որ աստ կան հաւաքեալ։

Արդ, աղաչեմք զամենեսեան՝ յիշել յաղաւթս ձեր զստացող գրոցս զՄատթէոս երէցն, և զհայրն իւր զԹորոս երէցն, և զմայր իւր զՄեծխաթունն, և զերախտաւորն իւր զԿարապետն և զՄելիքն, և զամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիս և զննջեցեալս առ Քրիստոս, և զԱռաքել երէցն, և զծնաւղսն և զեղբարսն իւր, ընդ նմին և զգրող սորա զՅովհաննէս աբեղայն, և զծնաւղսն իւր, և զեղբարսն իւր՝ զկենդանին և զհանգուցեալս առ աստուած, և զհայր վանացս Զաքարէ աբեղայն, և զծնողսն իւր, և զայլ սպասաւոր սուրբ ուխտիս, միաբանքն՝ զՄարտիրոս հին հայրապետն, և զՑովսէփն, և զԿիրակոսն, և զՎարդանն, և զՊետրոս, և զԱստուածատուր աբեղայքն, և զՄկրտիչ երէցն. որ մեզ սիրով սէր արարին, և զգործաւոր վանիցս՝ զՄկրտիչ տնտես, և զերկու Յակոբն, և զՅովհաննէս, և զԳրիգորն, և զԼուսպարոն, և զԽաչատուր, և զՍիօն սարկաւագերն...։

162

ԱԻԾՏԱՐԱՆ

Երևան 7305

Վաճառման գիր

209 բ Յանուն աստուծոյ, ես Մարտիրոս Աբրա/համու որդի, Թադէոս քահանային եղբաւր որդի։ Յորժամ վաղճանեցաւ հաւրեղբաւրն իմ Թադէոս քահանայն, ես Մարտիրոս զնորայ աւետարանս ծախեցի Յակոբ քահանային՝ Ո. (600) դ[ահե]կ[ա]ն. գնին առի մին կով ու մին եզն, ու մատաղ արարի Թադէոս քահանային։ Ով ոք որ յայսմ հետէ դաւի առնէ այս աւետարանիս՝ կամ յիմ ազգէ, կամ յաւտարաց՝ ՅԺԸ. (318) հայրապետացն անիծած եղիցի, և մասն զՅուդային և զխաչահանուացն և զԿայէնին առցէ։ Մուսուլման Մուտամ-Փաշին վկայութեամբ, Էատկարին վկայութեամբ, Սատաթիարին՝ Սափատինին որդոյն վկայութեամբ, Կարապետ քահանային, Մկրտիչ քահանային, Յոհանէս քահանային՝ սոցա վկայութեամբ։ Եւ ես Բարսեղ քահանայս, որ զգիրս դրեցի՝ վկայ եմ։ Այլև տանուտերացս վկայութեամբ՝ Տիրատրին վկայութեամբ, Խութլուպէկին վկաութեամբ, Գրիգորին վկայութեամբ, Ամ—

սաչաՆիՆ վկայութեամբ, ՊապիկիՆ վկայութեամբ, աստուծոյ վկայու-
թեամբ։ Մեք ամենեքեան վկայ եմք առաջի աստուծոյ, որ այս աւե-
210 ա տարանս գնեց Յակոբ ‖ քահանայն ի ՄարտիրոսէՆ, ի վայելումն ան-
ձին իւրոյ և յիշատակ ծնողաց իւրոց։

Եւ ես Յակոբս անարժան քահանայս յերեսս անկեալ աղաչեմ
զամենեսեան, որք հանդիպիք այս սուրբ աստուածային և անապա-
կան գանձարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի բոլոր
սրտէ զծնողսն իմ, զհայրն իմ զՊեսիկ, և զմայրն իմ զՆազ, և զեղ-
բարսն իմ զՎարդաՆ, և զՍևալաՆ, զՄելիքշայ, զԱրթուխշայ, և զքոյրն
իմ զՎախախ, և զբազմերախտ հայրն իմ ըստ հոգոյ և զվարպետն
զՄկրտիչ քահանայ, և զամենայն աստուածային աւրհնութեանց ար-
ժանաւոր մայր վարպետին իմ զՍամար, վասն զի բազում և անչափ
երախտիս ունին ի վերայ մեր, և զայլ ամենայն արեան մերձաւորսն
իմ, զոր կան այժմ, և որոց գնացեալ են առ աստուած՝ զքեռին իմ
զՄարտիրոս, և զմեծ մամն իմ զՍրամարգ։ Ցորժամ յաղաւթս կայցէք
յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերոյասացեալքս ի սմա։

Եւ զիս՝ զՅակոբ քահանայս աղաչեմ յիշատակել առաջի անմահ
գառինն, ո՞վ սուրբ ընթերցողք, վասն զի բազում տենչանաւք և բա-
զում փափա[քա]նաւք ստացայ զսուրբ աւետարանս յիշատակ ինձ և
ծնողաց իմոց, զոր վերոյ գրեցաք, քանզի լուայ զհրաման տեառն,
210 բ որ ասէ, թէ՝ Երանի որ ‖ ունի յիշատակ ի Սիոն և ընտանի յԵրուսա-
ղէմ...։ Վասն որոյ զայս ամենայն մխիթարութիւնս ի մտի ունելով,
ի հալալ ընչից իմոց ըստացայ զսուրբ քաւարանս յիշատակ ինձ և
ծնողաց իմոց, և ի վայելումն որդոյ իմոյ ԹումայիՆ, որ դեռևս մա-
նուկ է | | | տէր աստուած վայելել տացէ, ի թվ. Պ[Կ]Բ.* (1413*)։

Սոցա վկայութեամբ, զոր վերոյ գրեցաւ։

* Թվականի թվանշանները հետագայում սև թանաքով նորոգված են, առաջին և
երրորդ թվանշանների մասին կասկածներ չեն կարող լինել, սակայն երկրորդ՝ «Կ» (00)
թվանշանը կասկածելի է. այն գրված է ջնջված ինչ-որ այլ տառի վրա, որը կարող է «Կ»
եղած չլինել։

24—11

163

ՊԿԳ **1414**

ՃԱՇՈՑ

Երևան 6255

Գրիչ՝ Սարգիս Թմոքեցի
վայր՝ Աւշական գեղաւան

ա

432 ա *...Աւարտեցաւ քրիստոսահիմն և առաքելախաւս մարգարէաշէն հոգիաբուխ [Ճաշոցս ի ձեռն] փցուն և անարհեստ գրչի, ի խնդրոյ սրբասէր քահանայի* Ներսեսի *քաղցրանվագ փիլիսոփա[յի],՝ որ ստացաւ զշտր մարգարիտս և զանառիկ մեծութիւն՝ զպայծառութիւն սրբոյ եկեղեցոյ։*

Արդ, որք աւգտիք այսմ հոգիանորոգ լուսերանգ վարդափթիթ
432 բ *անուշահոտ բուրաստանիս, կամ աւրինա ‖ կելով, [կամ] կարդալով, յիշեսջիք ի Քրիստոս ըզտէր* Մանուէլն *արհեպիսկոպոս* Բըջնոյ *և* Արաբատեան, *և զտէր* Յովաննէս, *որք բազում աշխատութեամբ աւգտակարք եղեն աստուածաշունչ տառիս, ընդ նոսին և զ*Ներսէս *քահանա, որ բազում աշխատութեամբ հալալ ընչից իւրոց ստացաւ զսա յիշատակ իւր, և վարդապետին իւրոյ* Սեթեկի, *և ծնօղաց իւրոց՝ հաւրն իւրոյ* Սարգսին, *և մաւրն* Սիթա-խաթունին, *և կենակցին* Մինա-խաթունին, *և զաւակացն իւր՝* Անթառամին, *և* Յոհանիսին, Զինին, Աւագին, *և տէր* Գրչին, *և փեսային իմոյ* Մկրտչին, *և* Խաչատրին, *և* Սարգսին՝ *իմոյ աշակերտին,* Գալըստին, *և* Հռիփսիմեացն, *և* Ալթաղին, *և* Աթա-Մէլիքին, *և ամենայն ազգականաց, որք կենդանի, որք ննջեցին...։*

*Աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք այսմ հոգիանորոգ բուրաստանիս, յիշեսջիք ի Քրիստոս զսրբասէր քահանայն զ*Ներսէս, *որ ստացաւ զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ամենայն արեան մերձաւորացն։*

*Ընդ նոսին և զեղկելի փծուն գրիչ, որ բազում չարչարանաւք հաւաքեցի, միթէ յիշման արժանի առնէք զեղկելի գրիչ զ*Սարգիս, *և զծնաւղսն իմ, և զեղբայրն զ*Դաւիթ, *զհայրն իմ զ*Կիրակոս։

Աւարտեցաւ գիրքս աստուածաշունչ ի Թուաբերութեանս Հայոց ՊԿԳ. (1414), *ի գեղաւանս յ*Աւշական, *ընդ հովանեաւ ամէնաւրհնեալ կամակատար Աստուածածնիս, և Մեսրոբայ վարդապետիս, և այլ համաւրէն սրբոցս, ի թագաւորութեանն* Ուսուփին *և* Փիւր-Հուսինին, *որդոյ* Սանաթին։ *Գարձեալ աղաչեմք զամենեսեան, զի ասիցէք բոլորով սրտիւ ամբիծք աւետարան, և Քրիստոս որդի աստուծոյ։ Եւ որք յիշէք և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամէն։*

Բ

438 բ Յիշեցէք ի Քրիստոս զփծուն գրիչս Սարգիս Թմոքեցի, որ բազում աշխատութիւն կրեցի։

164

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 817

Գրիչ՝ Գրիգոր

վայր՝ Հերմոնի վանք-Եղվարդ

441 ա ...Ի Թուաբերութեան Հայկազեան տոմարի Գ.-երորդի վացսուներորդի երորդի (1414) եղև գրաւ այսմ աստուածայշունչ և հոգոմն աստուածային բղխեալ Հարցմանցս։ Եւ զարդարեալն ամենայն առաքինութեամբ՝ գունագեղ, ընտրող, զանցեալ գեղով բազմայշան մեծ րաբունին և իմաստասէրն Հայկազեան ազգի Գրիգորիոս պետն ամենայն հանճարի, որ առեալ զիմաստս բազմայշան և ազգի ազգի աստուածայշունչ հին և նոր կտակարանաց և արտաքին իմաստիցն քերթողն, բազում աշխատութեամբ և երկամբք ժողովեալ զամենայն իմաստս ճարտայսանից ի մի վայր և տուեալ մանգանց եկեղեցոյ ի զմայլումն և յղնթերցումն և ուսումն ամենայն առաքինութեան, և պատասխանիք ընդդէմ ամենայն ազգաց՝ չարեաց և բարեաց։

441 բ Արդ, և ես՝ եղկելիս սուտանուն կրօնաւոր Գրիգոր սիրող բանի ցանկացա այսմ տառի և ըստ կարի մերում տառայտպեցի բազում աշխատութեամբ և յոյժ փափագանօք, ի վայելումն անձին իմոյ և յիշատակ ծնողաց իմոց՝ հօրն իմոյ Հասանին, և մօրն իմոյ Մամայխաթունին, և եղբօրն իմոյ Մկրաչին, և այլ ամենայն արեան մերձաւորաց, որք հանգուցեալ, և որք այժմ կան, որք աւգտիք յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զի ձեզ՝ անաշխատելի բան, և մեզ՝ յոյժ գովելի պարգև, զի աստուած ի ձեռն այլոց ողորմի։

Գարձեալ, կրկին աղաչեմ զընթերցողսդ և զլսողսդ և զմայլողսդ, զի միով տէր-ողորմիւ յիշէք, և աստուած զձեզ յիշէ, զի բազում վշտօք ի բազում վայրի պարայգայ ամօք եղև աւարտ։ Զի եղև սկիզբն ի գաւառին Եղեգեաց որ կոչի Վայունձոր, ի վանս Հերմոնի, առ ոտս մեծ րաբունոյն Յովաննէս հեռեաորի, և միջայմուխ եղեալ ի ճգնողական յարկին Նորավանս, և աւարտ գրչութեան սորա ի գաւառս Արարդեան, ի գեղաքաղաքս յԵղիվարդ, ի վանքս սուրբ Ցակոբ, առ ոտս երջանիկ պետին Սիմէոն րաբունի, և յիշատակս ի հայրենի քաղաքս Կարբի, և որք յիշէք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ, ամէն։

ԼՇԲԼՑՇ, ԳՏԼԳ*

Բ

109 բ Ո՜, զմեղօք մեռեալս հոգով,
Եւ աղքատ ի բարիս գործով,
Եւ զծոյլս հեղգանալով,
Եւ զնժդեհս ժամանակով,

* Տառերի առաջին խումբը փոխարինագիր ծածկագրով կարդացվում է «Գրիգոր», իսկ երկրորդը՝ եղբայրագիր (անկանոն) ծածկագրով՝ «գրիչ»։

Վասն զի նեղիմք յայս տագնապով
Վասն այլազգեաց սեռից յոլով։
Աղաչեմ զձեզ սիրով,
Որք ղայս կարդայք ընթեռնլով,
Զաղքատս յիշեա դու յոյժ սիրով,
Աստուած-ողորմի մեզ ասելով,
Զի տէրն առ[ա]տապարգև է յոլով,
Զի կար մեր այս է տառայտպելով։

165

ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԿԻՒՐՂԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ

Երուսաղէմ, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Սարգիս Ղրիմեցի
վայր՝ Հերմոնի վա՞նք

...Զոր այսու յուսով տարփացաւղ եղեալ սորին ուղղութեան վերջինս ի ծնունդս եկեղեցոյ և տրուպս ի մէջ գրոց աշակերտաց Սարգիս Ղրիմեցի և որդի Հաքիմի, զոր ի վաղ ժամանակաց տենչացեալ կարտւտ էաք՝ յեղակարծ ժամու գտեալ եղև ի վարժապետական աթոռս, ի վանս որ կոչի Հերմոնի...։ Գծագրեցի զսա առ ոտս մեծ վարժապետին իմոյ Յովաննիսի՝ աշակերտին Գրիգորի Հայոց փիլիսոփայի, որ և կրկին ընթերցմամբ լուսաւորեալ առաջնորդեցայ ի նմանէ։ Ցորում էր թիւ շրջագայութեան տօմարի մեծի Պ. և ԿԳ. (1414) ամի...։ Ցիշել աղաչեմ... զառաջնորդ իմ զվերոյգրեալն Յովաննէս առաջնորդաց պետի, ընդ նմին և զհոգևոր եղբայրն իմ զտէր Ղազար սպասաւոր բանի։*

166

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան 1122

Գրիչ՝ Սարգիս Ղրիմցի

Նաև զիս՝ զեղկելի,
Բազում չարեաւք հոգիս ի լի,
Մինչ զի ներկեալ և ի մարմնի,
Ղրիմցի Սարգիսս, որ գրեցի
Ցոյժ փափագմամբ և ծարաւի
Այս քաղցրահամ բուրաստանի,
Մինչ զի գրոյն փոյթ ոչ արի,

* Հիշատակարանն օգտագործել է Ալիշանն իր «Սիսականում» (էջ 125), համարելով 1415 թվականի։

Ոչ քարտիսի լաւագունի,
*Զի չէր հասու ժամանակիս.**

167

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Կ. Պոլիս, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Սուխարայ վանք

ԶՅակոբ *սպասաւոր բանի, և* զԱնգրէաս *կուսակրաւն աբեղայ, և միագումար զամենայն ազգայինսն յիշեցէք...։ Գրեցաւ ի թվին ՊԿԳ. (1414), ի վանս* Սուխարայ, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս որ Արծուաբեր կոչի.*

168

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երուսաղէմ 2180

Գրիչ՝ Մելքիսէդ
վայր՝ Գոմուց վանք, մերձ ի Բաղէշ

Գրեցաւ ի գեղահոյակ ուխտս Գոմուց վանք *կոչեցեալ, մերձ աստուածաշէն քաղաքս* Բաղէշ *անուանեալ, ի յառաջնորդութեան տեղոյս գորովագութ պարծանաց հաւրս մերոյ* Թովմա *վարդապետի... ձեռամբ...* Մելքիսէդ *պիտակ անուն բանի խնդրողի... ի ՊԿԳ. (1414) թվին...։** [Ծնողքն գրչի՝* Տիրացու *քահանայ և* Մեծաիկին. *եղբարքն* Գրիգորիս *և* Մխիթար, *քոյրքն* Խաս *և* Աղութ...]։***

169

ԱՒԵՏԱՐԱՆ

«Արցախ», էջ 145—146

Գրիչ՝ Յովսէփ քահանայ
վայր՝ Կտուց անապատ

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թվին Հայոց ՊԿԳ. (1414), ի դրան սուրբ Խաչին, և սուրբ Կարապետին, և սուրբ Գրիգոր լուսաւորչին... որ կոչի Կտուց...։ *Ի հայրապետութեան տեառն Հայոց կաթողիկոսի տէր* Դաւթի՝ *սուրբ Խաչի Ախ[թ]ամարա առաջնորդի, և*

* *Անթվական այս հիշատակագրությունը տեղադրում ենք 1414-ի թվաշարքում, նույն Սարգիս Ղրիմեցու հիշատակարանին առընթեր։*

** *Շարունակությունը հիշատակարանի տվյալների հիման վրա իր խոսքերով համառոտակի շարադրել է ձեռագրի նկարագրող Մ. Տեր-Մովսիսյանը։*

*** *Ձեռագրում կա նաև հիշատակարան 1462 թվականից, գրված ստացող Յովհաննէս ծրէց Երզնկացու կողմից, որը նկարագրողի կողմից մեջ չի բերված։*

առաջնորդութեան սուրբ ուխտին սուրբ Կարապետին... արհիեպիս-
կոպոսին Մխ[իթ]արա:

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի դառն և ի նեղ ժամանա-
կիս, որ հարկապահան[ջութեամբ ազգս տապալ[...] | | | զի կարի ձան-
ձրացեալ եմք յանաւրինաց բռնութենէ. ի քրթէ, ի թաթարէ և յայլ
ամենայն | | |

170

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5523

Գրիչ՝ Թումա
վայր՝ Ոստան քաղաք

270 ա ...Ուստի տեսեալ զսորա անճառ փրկայգործութեան խորհուրդ իմաս-
տուն քահանայ Կիրակոս և ստացաւ զսուրբ աւետարանս յիշատակ հոգոյ
իւրոյ, և ծնողացն՝ հաւրն Սարգսի, և մաւրն Թանկ-Խաթունի, և քու-
րոջն Թուխթանկ, և Խաթուն-Մէլէք, և Խաթունշայ, և զկողակիցն իւր
270 բ զՇարմէլէք։ || Եւ արդ, ես՝ յետինս և բազմայմեղ սուտանուն քահա-
նայ Թումա, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն,
որ ասէ՝ Ծոր կոչումն կոչեցար ի նմին կացջիր, և արդ, իմ՝ ոչ բե-
րելով զայսպիսի վստահութիւն, այլ ունայն յամենայն բարեաց և
թափուր, այլ յուսամ ի մարդայսիրութիւնն աստուծոյ, զի իմ բա-
զում մեղացն թողութիւն արասցէ։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքիս Ոստան, ընդ հո-
վանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Ստեփանոսի, ի հայրապետու-
թեան տէր Դաւթի, և ի թուին Հայոց ՊԿԳ. (1414), ձեռամբ մեղա-
պարտ և անարժան Թումայ անիմաստ և ախմար գրչի, և անընդունակ
գոլով յարուեստ գրչութեան, և բազում մեղաւք ցնորիւք պաշարեալ,
այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, բա-
271 ա զում աշխատանաւք գրեցի անարժան ձեռաւք իմովք։ || Արդ, որք
ճաշակիք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք
պատահիք ի սմայ տեսութեամբ կամ ընթերցմամբ, յիշեսջիք յաղաւթս
ձեր զառաջ յիշեցեալ ստացող սորայ՝ զԿիրակոս քահանայ, և զծնաւղ-
քըն իւր զՍարգիս, և զմայրն իւր զԹանկ-Խաթուն, և զեղբայրն զՅովա-
նէս, և զՄկրտիչ, և զՍտեփանոս, և զԳրիգոր, և զքոյրն զԳուլշատ, և
զմորքուրն զԱրուս, և զփեսայն զՇախրամիր, և զՅաստուխշէն, և զՍար-
գիս, և զքեռին իմ զՅոհաննէս, և զՄարեմ, և զԳուլմէլէք, և զկնքաւորն
իմ զՄկրտիչ, որ կամաւոր եղաւ սուրբ աւետարանիս, և զծնաւղքն
իւր, և զՄարտիրոս, և զՍտեփանոս, և զՅովաննէս, և զԱւագ-Պարոն, և
զեղբարքն իւր, և զԽաչատուրն՝ զփոխեցեալն ի Քրիստոս, լի բերա-
նով աստուած—ողորմի ասացէք և աստուած զձեզ յիշէ, ամէն, և որք
271 բ շատ և որք սակաւ աւգնութիւն արարին || միոյն հարիւրայպատիկ
տացէ ըզկեանսն յաւիտենականս, ամէն։

171

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Փիրդ. Նոտ. 44, Աղթամար

Հետ. ստացող՝ Խնդուբէկ
վայր՝ Ոստան

[Ցիշեցէք] յետին ստացողի Յովաննէս անարժան քահանայի ... թվին ՊԿԳ. (1414)։

Եւ արդ, ես՝ Խնդուբէկ դերձակս՝ ի յՈստան քաղաքի գնեցի ի քրդէ, զի էր գերի բերած, յիշատակ ինձ....։

Ցետոյ տէրն [Յովաննէս քահանայն] եկն և գտաւ առ իս, և իմ յօժար սրտիւն ի տէրն տուի, որ յիւր սուրբ աղօթքն յիշեսցէ զիս...։

172

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ

Ախալքալաք, Արաղովա գյուղ, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ յերկիրն Արծրունեաց

Գրեալ ի վայելս Երեմիայի, ի Թուականութեան Հայկազեան տոմարի Պ.-երորդի, Կ.-երորդի, Գ.-երորդի (1414), յերկիրն Արծրունեաց, ի վանքս որ կոչի Սքանչելագործ, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս Սքանչելագործի, օծեալ ձեռամբ առաքելոյն Թադէոսի։

173

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 2063

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Գամաղիէլի վանք, մերձ ի Հիզան

278 բ ...Եւ արդ, ես՝ Թախիծ մտօք և տառապեալ անձամբ, վերջինս ի մանգունս եկեղեցւոյ և յետնեալս ի շարս քահանայապետից Ստեփաննոս անուամբ այցելու պիտակ բանիւ և ոչ գործով, գրեցի ձեռամբ իմով զսուրբ տառս զայս յիշատակ Պետրոս կրօնաւորի, որ և գծողիս քըւերորդի, և ծնօղաց իւրոց՝ Յուսուֆի և Էլխաթունի, և այլ ամենայն արեան մերձաւորացն՝ մերձակայից և հեռաւորաց, մեծի և փոքու, առհասարակ, նաև ամենայն աշխատաւորացն ի սուրբ մատեանս։

Բայց գրեցաւ ի Թուաբերութեանս մեծի ութհարիւրի և վաթսուն և երկրորդ (1413) ամի, յասստուածապահ և գերափառ և բարէհռչակ սուրբ ուխտս, որ Գամաղիէլ առաքելոյ անուամբն յորջորջի, ի

գաւառիս Հիզան քաղաքի։ Եւ կամք ընդ հովանեաւ ամենազօր աջոյ ձեռինն աստուծոյ և պահպանութեամբ աստուածընկալ սուրբ խաչիս Քրիստոսի և առաքելոյս Գամաղիէլի, նաև զյիշատակի արժանաւորն զհոգևոր հայրս մեր, որ և մարմնոյ արեանառուն մեզ զՆերսէս վարդապետս և զծնօղսն իւր, որ է մեզ տածօղ հոգեպէս և մարմնապէս, այլ և ուսուցիչ և խրատիչ, բարեաց յիշման ի տէր արժանի առնել։ Այլ և զՎարդան եպիսկոպոս և զայլ միեղէն եղբարքս, որ կան հաւաքեալ ի գուռն սուրբ տաճարիս և սպասեն անճառ խոստմանցն Քրիստոսի աստուծոյ, զոր և տացէ նոցա անսուտն աստուած զանըսպառ բարիսն և զանապատում երանութիւնսն, ամէն։

Արդ, ես՝ Ստեփ[աննոս] եպիսկոպոս, աղաչեմ զպատահողք սուրբ մատենիս յիշման արժանի առնել զիս՝ զանարժանս, և զծնօղսն իմ զԿիրակոս, և... զեղբարսն իմ, և զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիք և զհանգուցեալք։ Եւ աստուած յիշողացդ և յիշելոցս առհասարակ ողորմեսցի, ամէն։

279 ա Գարձեալ, յերեսս անգեալ աղաչեմ աղերսալից գիմօք Պետրոս կրօնաւոր՝ անխոնարհս և անհնազանդս, հողս և փոշիս սուրբ գարշապարացդ ձերոց, մաղթեմ ի խորոց սրտէ զհարազատգութ հարց և եղբարց մեր հոգևորաց, զի կաթ մի արտասուաց ի կաթիլ մի դուլէ ձերդ պաղատանաց ցօղեսցէ ի գերեզման իմոյ տապանաց և լուասցէ զբազմաշարաւ զազրացեալ ոսկերս մեղօք մեռելոյս, քանզի գրեալ է, թէ՝ Կարօտին գնացեալ հոգիքն այլոց մաղթանաց, զի և ես՝ անարժանս գտայց ողորմութիւն յամենողորմ և բարերար փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ....

Բ

350 բ ...Արդ, յանգ ելեալ կատարեցաւ սուրբ տառս... ձեռամբ Ստեփ[աննոսի] եպիսկոպոսի։ Եւ զայս չափաւորս ես գրեցի՝ Յոհան պիտականուն բաբունի, տկար անձամբ և ներգևեալ մարմնով, յիշատակի վասն մեզ, և ծնօղաց մերոց, և եղբարց Յակոբի և Պետրոսի սրբասնունդ կրօնաւորաց, և այլ ամենայն արեանառուաց, նաև վարդապետացն մեր՝ Յոհաննէսի և Կիրակոսի՝ մեզ ծնօղք հոգևոր և տածօղք մարմնաւոր և մարզիչք յօրէնսն աստուծոյ։

Արդ, ցանգացող եղեալ սուրբ մատենիս Պետրոս կրօնաւոր և ետ գրել զսա ըղձմամբ սրտի և յօժարութեամբ ոգւոյ, ի վայելումն անձին իւրոյ և այլոց բազմաց, և յետ աստեացս՝ յիշատակ ինքեան, և ծնօղաց իւրոց Յուսուֆին և էլխաթունին, և այլ ամենայն արեան մերձաւորաց, յիշատակ յետ իւր թողլով յերկրի. զի ով որ հանդիպի կարդալով, կամ գաղափարելով, կամ տեսանելով, յիշման արժանի առնէք զստացող սորին զՊետրոս կրօնաւորն և զայլ վերոյգրեալսն ի սմայ։ Այլև զՄկրտիչ կրօնաւոր և զառաջնորդ սուրբ ուխտիս, որ է կազմող մատենիս, և զծնօղսն իւր, և զայլ ամենայն արեանառուսն,

և աստուած յիշողացդ և յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի, յաւուրն մեծի ատենի։

Բայց գրեցաւ սա ի սուրբ և ի բարեհռչակ ուխտս, որ սուրբ
Խաչ կոչի, յերկիրս Հիզան քաղաքի, ի թու. ՊԿԳ. (1414), Դարձեալ
զմեր միաբան եղբարքս և զհամաշունչ, որ կան ի դուռն սուրբ տա-
ճարիս, նախ՝ Աւետիս վարդապետ, և Բարսեղ գրոց աշակերտ, Ներսէս,
351 ա Ատոմ, Գրիգոր, Յակոբ, Յոհաննէս և Յոհ[աննէ]ս, ‖ Մարտիրոս, Դաւիթ,
Յակոբ, իսկ հանգուցեալքն՝ Կիրակոս վարդապետն և Յով[հաննէս] միա-
կեցն՝ սիրելի և սիրասնունդ և սրբասէր կրօնաւորք, սպասեն ան-
ճառ խոստմանցն աստուծոյ, զոր և տացէ սոցա Քրիստոս աստուած
զանմահական զկեանսն և զանվախճան հանգիստն, զմշտաւետ ուրա-
խութիւնն, հանդերձ ծնօղօք իւրեանց, որ օգնական և կամեցող եղեն
ամենեքեան սուրբ գրոցս։ Այլ և զՆերսէս երէց՝ ծաղկող սորին, և
զծնօղսն իւր յիշեցէք...։

174

ՔԱՂՈՒԱԾՈՅ ԼՈՒԾՄՈՒՆՔ ՍԱՂՄՈՍԱՑ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 3876

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Տարբերունի գաւառ, Յուսկայ որդւոյ վանք

384 բ ...Արդ, ես՝ ունայնս ի բարեաց գործոց և լցեալս յաղտեղի
գործոց Մկրտիչ պիտակ անուն խնդրող բանի, փափագեցի և ցանկա-
ցող եղէ հոգիահրաշ բացայայտութեան սաղմոսացս Դաւթի, զոր արա-
րեալ է սուրբ հօրն մերոյ և նորոգ լուսաւորչի Գրիգորի բանիբուն
վարդապետի։ Եւ զի ոչ կարացի գծագրել իմով ձեռամբ վասն ծու-
լութեան բազմավրդով մարմնոյս և ժամանակիս բերման, այլ ետու
գրել զսա ձեռնասուն և հեզահոգի աշակերտիս իմոյ Մկրտիչ կրաւնա-
ւորի, ի վայելս սիրողաց բանի և ի սեղանաւորութիւն մանկանց նո-
րոյս Սիոնի սուրբ եկեղեցոյ, և յիշատակ բարի իմոյս հիքական ան-
ձին, զի թերևս ընկալայց յամենառատ սեղանոյ ձերոյդ աղօթից փշրա-
նըս ողորմութեան ի հրամանացդ վեհից, և որ տուողն է բարեաց
ձրի շնորհաց՝ թողութիւն մեղաց տացէ տուողաց մերս աղքատու-
թեանց զտեսութիւն փառաց անանցն կենաց, ամէն։
Նաև հոգևոր հաւրս մերոյ և բազմերախտ խրատաւղի Կարապետ
կրօնաւորի եղիցի մասն բարի յաւուրն ահեղ և սոսկալի։
Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊԳԿ. (1414), ի գա-
ւառիս, որ կոչի Տարբերունի, ի սուրբ ուխտս, որ կոչի Յուսկայ որդի,
ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Յարութեանս, և սուրբ
Կարապետի, և սքանչելագործ սուրբ Նշանիս, որ կոչի Կարմիրակն,

ի հայրապետութեան տեառն Յակոբայ և ի բռնակալութեան պարոն Ուսուֆին, առ ոտս Ստեփանոս վարդապետի և հօր վանաց՝ Մելքիսեթի, որոց տացէ տէրն բարի զարքայութիւն անճառելի։

Արդ, ես՝ Մկրտիչ սուտանուն կրօնաւոր, որ զգիրքս դրեցի, յերես անկետյ աղաչեմ զմանկունսդ նոր Սիոնի, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ օրինակելով և կամ հարաւանցի տեսութեամբ, յիշեսջիք առաջի զենման գառինն զլրազմավէր ոգիս՝ զՄկրտիչ գծօղս, և զծնօղսն իմ՝ զփոխեցեալսն ի Քրիստոս, զհայրն իմ զմահդասի Մուրատն, և զմայրն իմ զԴովլաթ[շա՞], և զամենայն արեան մերձաւորսն իմ, և զխրատիչքն իմ՝ զՄկրտիչ վարդապետ և զԿարապետ կրօնաւորն...։ Եւ աղաչեմ պաղատանօք, զի սխալանացն և խոշորութեան անմեղադիր լինիք, զի կար մեր այս էր և գիրս առաջին, և տէր աստուած զձեր սխալանսն թողու և դուք՝ զմերն։

Այլ և զաստուածապատիւ հոգևոր հարազատն իմ զՂազար կրօնաւորն, որ բազում աշխատութեամբ զգիրս կազմեաց, յիշեսջիք ի բաբին Քրիստոս, հանդերձ ծնողօք և ամենայն արեան մերձաւորօք, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

175

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 6034

Գրիչ՝ Ղազար

302 բ ...Աստանաւբ կատարեցաւ տառս աստուածային, որ կոչի շարակնոց, ի թուականիս ՊԿԳ. (1414), ի հայրապետութեան Դաւթի, և ի բռնակալութիւն աշխար[հիս Հայ]ոց Ամիր-Եզդնի, ձեռամբ մեղսամակարթ, փծուն և անարհեստ գրչի՝ Ղազար սուտանուն սարկաւագի. ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտ առն, որոյ անուն Հայրապետ կոչի. որ ստացաւ զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, և ի վայելումն զաւակին իւրոյ Խաչատուր(՞) կրօնաւորի, որոյ տէր աստուած վայելել տացէ, ամէն։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, յիշեսջիք զստացող սորա զՀայրապետն, և զհայրն իւր Նահապետ, և զմայրն իւր
303 ա [Թա՞]ն-խաթուն, և զեղբայրն իւր զՅովա ‖ ննէս, և զքոյրն իւր զԱրքա-Տիկին և զՄարգարիտն, և զկենակիցն իւր զՄարգարիտ, և զաւակսն իւրեանց զԹան-խաթուն, և զԱստուածատուր, և զՏիրատուր, և զհաւրեղբայրն իւր զԿարապետ քահանայն, և զորդին իւր զՄխիթար, և զմիւս կենակիցն իւր զՓաշա, և զմայրն իւր զՍառայ, և զքոյրն իւր զՇախմէլէք, և զզաւակսն՝ զԽաչատուր, և զՏիրատուր, և զՄսըրմէլէք, և զԱյմէլէք, և զամենայն արեան մերձաւորսն իւրեանց։ Եւ զիս՝ զանարժան և զփծուն գրիչս, և զիմ ծնողսն՝ զհայրն իմ զԴանիէլ քահանայն, և զհաւրեղբայրն իմ զՍամուէլ վարդապետն, և զմայրն իմ զՍառայ, և զամենայն արեան մերձաւրսն իմ՝ զկենդանիսն և զհանգուցեալսն առ Քրիստոս...։

176

Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 7873

Ստացող՝ Գրիգոր
վայր՝ Կաֆայ

...Արդ, ցանկացաւղ եղեալ այսմ աստուածախաւս մատենիս
Գրիգոր քահանայն և իւրքն ամենայն, և ետուն գրել զսա յիշատակ
210 բ անջինջ և կտակ յաւիտենական ոգւոց իւրեանց՝ աստ ‖ և ի հան-
դերձելումն։ Վասն որոյ աղաչանաւք հարկաւորեմք աղերսական պա-
ղատանաւք զդասս երջանիկ քահանայից և զբոլոր լրութիւն ուխտի
եկեղեցւոյ սրբոյ՝ զմանկունս պանծալի լուսակիր մաւր մերոյ հոգևո-
րի սրբոցն Սիոնի, որք հանդիպիք մատենիս սրբոյ և պատուականի,
յիշեսջիք ի Քրիստոս՝ ի տէր մեր զստացաւղ սորա զԳրիգոր քահա-
նայն, և զիւրիցակինն իւր զՄարթա-խաթունն, յիշեսջիք ի տէր զհայրն
իմ զՆորճատն, և զմայրն իմ զՂիմաթն, և զաներն իմ զՄխիթար քա-
հանայ, և զոքանչն իմ զՎարդխաթունն, և զեղբայր իւր զպարոն Գոր-
գըն, և զմիւս եղբայրն զՅակոբն, և զկենակիցն իւր զՄարթա-խաթունն,
և զզաւակսն իւրեանց, և զքոյրն իւր զՀեղինէ, և զՄելիքն, և զԵղիսա-
բէթն, յիշեսջիք ի տէր և զայլ ամենայն ազգայինս՝ զպապն իւր
զԳրիգորն, և զմամն իւր զՀեղինէ, և զմիւս պապն զՅեվտան, և զմամն
զԱղութ-խաթուն, յիշեսջիք ի Քրիստոս զփեսայքն իւր զՍաճակն և
զՍիմէոնն, հանդերձ զաւակաւքն իւրեանց, և զԱստուածատուրն, և
զզաւակսն իւր, զՄարտիրոս քահանայ, և զԿուլա-խաթունն, և ըզաւակ-
սըն իւր, այլ և զամենայն ազգայինս իւր՝ զայժմու կենդանիքս և
211 ա զկանխաւ ննջեցեալսն ‖ իւրոց ...։ Հուսկ յետոյ իբրև անարգի միոջ
յիշեսջիք և զծրագրաւղս զԳրիգոր՝ զմեղաւոր հողս՝ զսուտանուն քա-
հանայ, զհայրն իմ և զմայրն իմ՝ զփոխեցեալսն առ Քրիստոս, նաև
զզաւակսն իմ՝ զԽաչատուրն և զՅակոբ կրաւնաւորն, և զմայր նոցին,
և հարազատ եղբայրն իմ՝ զՄարտիրոսն։ Եւ ինքն Քրիստոս՝ կոչաւղն
աշխատողաց և ծանրաբեռնից, յիշեսցէ զյիշողքդ վերոյգրեալ արանցս,
և որ ի նիւթս աշխատեցան, որք սեռն սիրով ի պատկանաւոր խըն-
դրուածս ի միտս բարիս հայցէք ի տեառնէ զթողութիւն և զողոր-
մութիւն, և ինքն Քրիստոս աւրհնեալ յաւիտեան։

Արդ, գրեցաւ սա ի քաղաքս Կաֆայ, առ ոտս սրբուհւոյ Աստուա-
ծածնին, որ Յարութիւն կոչի, ի թվ. Հայոց ՊԿԳ. (1414)։ Ո՛վ ըն-
թերցաւղ և լսաւղք, յիշեսջիք ի տէր զշնորհաւղ աւրինակիս՝ զեղ-
բայրն մեր ըստ հոգւոյ զԱբրահամ քահանայ, և դուք զնոյն ընկալ-
ջիք ի տեառնէն...։

177

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Երևան 8429

Հետ. ստացող՝ Սարգիս

1 ա Կամաւն աստուծոյ ես՝ Սարգիս վարդապետ ստացա զգիրքս։ Ցով
անկանի ի Ե. (5) աւր պատարագ ինձ առնէ։ Ցոբայ մեկնիչն է կէսն

և Բարձրացուցէքն։ Ով չառնէ [զպատարագն]՝ դատի ի տեառնէ, մեր մեղացն պարտական է առաջի անաչառ ատենի։

ՊԿԳ. (1414)։*

178

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երևան 1391

ա

Գրիչ՝ Կիրակոս

271 բ ...Արդ, որք հանդիպիք աստուածային գանձուցս վայելելով կամ բեզ[մ]նաւորաբար պտղաբերելով, զամենայն գովութեանցն արժանաւորն և զպայծառ ջահն հաւատոյ և զանդրդուելի սիւնն եկեղեցոյ՝ զՍիմէոն վարդապետն յաղօթս յիշեսջիք, որ եռափափաք սիրով կամեցաւ յիշատակ մանկանց եկեղեցոյ թողուլ և ժրաջան ընթեցողաց ուսումնասիրաց...։

272 ա Ի թվ. Հայոց Պ. և ԿԳ. (1414) գրեցաւ, ձեռամբ յոգնամեղ և ախմար և անարհեստ գրչի սուտանուն Կիրակոսի, որ ամաչեմ յիշել զիս կրօն[աւ]որ, քանզի աղքատ եմ ի բարեաց և առաւել փարթամ ի չարեաց...։

բ

Ստացող և վերջին մասի
գրիչ՝ Սիմէոն

300 բ Զվերջինս ի ծնունդս եկեղեցոյ, զվերջացեալս յամենայն բարեաց՝ տեսականաց և գործոց, զգծօղ վերջին բանից և գործոց աստուածաբան աւետարանչի [Յովհաննու], ի թուիս ՊԿԵ. (1416), զՍիմէոն վարդապետ՝ պարտական բիւր քանաքարոյ, յիշեսջիք սրտի յօժարութեամբ ի մաքրափայլ յաղօթս ձեր, բարեխօսութեամբ մաքրեցելոյ և սիրելի աշակերտին Յոհաննու, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

179

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4817

Հետ. ստացող՝ Յովաննէս

74 ա Ո՛վ սուրբ նշան աստուածային...
Զքեզ աղաչեմ ողորմագին,
Լեր բարեխաւս Տիրացու քահանային,
Իւր ծնաւղին։

* Թվականը գրված է նույն էջի ներքևում, Յոբի մասին գրած ոտանավոր ուղերձի մեջ (սկ. «Սուրբ Յոբ արդար և ողորմած...»)։
Հիշատակագրության և ուղերձի ձեռագրերը տարբեր են, բայց ժամանակով ոչ հեռու միմյանցից։

Ըստ նմին ե գըրողին՝
Յովաննէս *մեղապարտին,*
Եւ իր ծնողին և ամենայն հաւատացելոց։

Ցետին ստացողին Յովաննէս *անարժան քահանային, և դեռաբոյս* Յովանէս *քահանային, աստուած ողորմի իւրէն* Մարդայ *կողայկցին. ով զմեզ յիշէ՝ Քրիստոս յիւր միւսանգամ գալուստ զինքն յիշէ։*
Թվ. ՊԿԳ. (1414)։

180

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 5405

Գրիչ՝ Յունան։

ա

71 բ *Եւ ես՝ անարհեստ և մեղօք մածեալ գրչակն, սոսկ տէր* Յունան *սիրօղ բանի, գոչեմ ընդ անառակին, խնդրելով յարարչէն ամենեցուն, զի և ինձ շնորհեսցէ զըրազմութիւն պարտուց յանցանաց և որք զամէնն ասասցեն։ ՊԿԳ. (1414) գրեցաւ։*

բ

94 բ *Զբազում մեղօք զառածեալս և ի հոգոց աշխարհի տատանեալս՝ զ*Յունան *անարհեստ գրիչ և զանպիտան սպասաւոր բանի, որ գրեցի զսա ի վայելումն անձին իմոյ տառապելոյ և յիշատակ ոգւոյ իմոյ և ծնողաց, աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա, զի ասիցէք բոլորով սրտիւ զաստուած-ողորմին, որ և դուք գտանիցէք յանյիշաչարըն տեառնէ, ամէն։*

181

ՅՈՎԱՆՆՈՒ՝ ԱՇԱԿԵՐՏԻ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ, ՀԱՒԱՔԵԱԼ Ի ԼՈՒՍԱՒՈՐ ԲԱՆԻՑ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, Ի ՊԱՏՃԱՌՍ ԻՄԱՍՏԻՑ... ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵՍԱՅԵԱՅ

Երևան 1128

Հեղինակ Յովաննէս Կոլոտիկ
վայր՝ Հերմոնի վանք

192ա *Եւ ի կատարումն գրոցս՝ զկատարումն արարածոցս և զհատու-*
ցումն ըստ գործոց յայտնէ, թէ արդարքն նորոգին և մեղաւորքն
տանջին ի հուրն անշէջ և ի յորդն անմահ։ Յորոց փրկեսցէ զմեզ
Քրիստոս աստուած զամենայն հաւատացեալս անուան նորա, բարե-
խօսութեամբ սուրբ մարգարէիս, և ամենայն բարի և աստուածահա-
ճոյ արանց մեկնողացն սորա՝ սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին, *և* Եփրեմի
երանելւոյ, վիմին ուղղափառ հաւատոյ Կիւրղի Աղեքսանդրացոյ, *և*
Սարգսի *մերոյինս ազգի լուսաւորչի, որ ի վանքն* Խորանաշատոյ, *մա-*
կանուն Կունտ *կոչեցելոյ, և հօրն մերոյ և երջանիկ պետին* Գէորգեայ,
և մեծ վեհին Յոհաննու Որոտնեցոյ, *և աշակերտի նորին* Գրիգորի՝
կրկին լուսաւորչին ի վերջացեալ ժամանակի և անպտղացելոյ յար-
գասեաց բարոյ։ Տացի խաղաղութիւն անդամոց քրիստոսադաւան
տոհմից, նաև քաւութիւն մեղաց և սրբութիւն մտաց և խորհրդոց, զի
կարասցուք հասանել մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս, հանդերձ
ամենայն վարդապետօք և երախտաւորօք մերովք, անսպառ յաւիտե-
նիւ յաւիտեանս, ամէն։

Դարձեալ, աղաչեմք զհանդիպողսդ ի սմա, մի մեղադրեալ մեզ,
զի ոչ եթէ վասն ազարտելոյ զբանս նախնեացն մերոց ձեռնարկեցաք
ի գործս, որ ի վեր էր քան զկար մեր, այլ այս եղև պատճառ գրու-
թեան սորա. նախ, զի վեհն իմ և երախտաւորն հրամայեաց ինձ*
վճռաւ երդման և կապանաց առնել զքաղուածոյս, զի առաջ քաղուա-
ծուին չէր հաւան, զի ի տղայութեանն էր արարեալ, և երկրորդ՝
մեր՝ զարմանալով յանարգամեծարութիւնն աստուծոյ, որ բանայ
զբերան անարժանից ի յօգուտ այլոց, մանաւանդ ընդ անյիշաչարու-
192բ *թիւն պարգևատուին, որ ներգործ ‖ եաց առ մերս անարժանութիւն,*
և ես՝ աշակերտակից եղբարց աղաչեցեալ, հարկեցայ։ Եւ դուք ներե-
ցէք իմում յանդգնութեանս, զի յօժարութիւն մտացս բռնադատեաց
մոռանալով զտկարութիւնս իմ։ Զի թէ գտցի ի սմա բան ինչ ըստ

---

* *Գրիգոր Տաթևացու մասին է խոսքը։*

հաճութեան մտաց ձերոց՝ տեառն շնորհ և գովութիւն և վեհին իմոյ վարժողին, և թէ պակաս և անհաճոյ բարեսէր կամաց ձերոց՝ մեզ լիցի անսխալութիւն յեղբայրական գթոց ձերոց։

Դրեցաւ տխեղծ մատամբ Յովաննէս պիտակ պետի, ի թվս. ՊԿԴ. (1415), ի վանքս Հերմոնի, առ դրան սուրբ Լուսաւորչիս և սուրբ դամբարանաց սուրբ վարդապետաց Տիրատրոյ, Գրիգորի և այլոց, ի սակաւ կրթութիւն և ի վարժ մանկանց Սիոնի, և ի փառս և ի գովեստ ուրհնելոյն յամենայն արարածոց Քրիստոսի աստուծոյ մերոյ յաւիտեանս, ամէն։

182

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

Երևան 3276*

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Հերմոնի վանք

454 ա Արդ, բարունապետ մի գովելի ընտրեալ յազգէս հայկազենի, որ գաւառաւ էր Սիւնեցի, և բնակութեամբ էր յաթոռոյն Եւստաթէի, որ Սիմէոն անուն կոչի, յողորմութենէ սուրբ հոգւոյն եկեալ ի գաւառս Արարատեան և դաս հրամեալ բազում ժամանակ, որպէս ի Քրիստոսէ շնորհեալ մեզ։ Եւ ապա ի խնդիր ամենայն աստուածաշունչ գըրոց և մեկնչաց, և ստացեալ բազում՝ զոմանս գրելով, զոմանս գըրել տալով հալալ ընչիւք, որ և զայս Երկոտասանից [մարգարէից] մեկնիչս ստացաւ ի վայելումն անձին իւրոց և աշակերտաց իւրոց, և յետ աստեացս անջինջ յիշատակ իւր, և ծնօղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց։

Արդ, գրեցաւ սա ի վանքն Հերմոնի, ձեռամբ Գրիգորի, ի թուականիս Հայոց ՊԿԴ. (1415)։ Արդ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեանսդ, յիշեսջիք զվերոյ ասացեալ զմեծ բարունապետն, որ որբոց խնամիչ է և տնանկաց մխիթարիչ...։

183

ՇԱՐԱԿՆՈՑ

Վենետիկ 230, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Մեծոփայ վանք

Ի թվ. Հայոց ՊԿԴ. (1415), ի յերկիր Քաջբերունւոյ, ի սուրբ մենաստանիս որ կոչի Մեծոփայ վանք, ի յառաջնորդութեան երից

* № 3276 ձեռագիրը տարբեր նյութերի ժողովածու է։ Գրիչն այստեղ ընդօրինակել է նաև իր գաղափար օրինակների հիշատակարանները։

հրանեալ արհիեպիսկոպոսի տեառն Յովհաննու, և առ ոտս լոյս վարդապետիս Թովմայի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Յակոբայ, և սուրբ վարդապետաց գերեզմանացս, ձեռամբ... Յովաննէս խաբերայի, ի խնդրոյ... կրօնաւորի Անդրէասի, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի ծնողաց իւրոյ պարոն Ստեփան և Խութլամէլիքին...։

184

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԹՈՎՄԱՅԻ ԱՔՈՒԻՆԱՑԻՈՅ

Վրաց թանգարան 10

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Շահապօնք

353 բ Գերամեծար և գերահարգելի հայր[ն] մեր ֆրա Յովսէփ, կոչեալ մականուամբ Շահապօնեցի, սկսեալ զաստուածային խորհրդաւոր գործա[ռն]ութեան մատեանս, և ոչ առեալ զաւարտ վասն վրդովման ժամանակին և ի խստութենէ այլազգեաց, և մնացեալ թերատ բազում ամ, և յետոյ շնորհեաց մեզ ի խնդրոյ մեր՝ լնլով զթերին։ [Յա]ղագս որոյ ես՝ նուաստ ի Քրիստոսէ և յետին որդիս Սիօնի, ապիկար ոգիս ֆրա Գրիգոր սպասաւոր բանի... սկսեալ կատարեալ յանկեցաւ....։

Արդ, մակագրեալ եղև աստուածային մատեանս յամի հազարերորդի չորեքհարիւրերորդի* տասներորդի հինգերորդի, յուլիս ամսոյ ԻԳ. (23), և ի թուականութեանս Հայոց ՊԿԴ. (1415)։

Վասն որոյ աղաչեմ զաստուածաբան ընթերցօղսդ և վայելօղսդ զսխալանս մեր որ աստ՝ հարազատաբար սիրով ուղղել և մեզ, հանդերձ ծնօղօքն մերովք՝ հոգևորօք և մարմնաւորօք, ի տէրութիւն բարիսն յիշատակել... և զուսուցիչն իմ՝ հոգևոր հայրն զսրբակրօն քահանայ զֆրա Պետրոս, զմարմնաւոր ծնողսն իմ՝ զտառապեալ հա[յ]ր[ն] իմ զԽոցադեղ, և զմայրն իմ զԹանկիկ, և զեղբայրն իմ զԲեկի, որ կայ այժմ, և այլ ամենայն արեան մերձաւորքն իմ....։**

185

ԱՒԵՏԱՐԱՆ

«Ազուանից երկիր», էջ 247, Վարգաշէն

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Նարեկ

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ անարժան Ստեփաննոսի անիմաստ և տխմար գրչի... այլ ըստ կարի մերում աշխա-

* Հիշատակարանը հասել է ԺԸ. դարի ընդօրինակությամբ (ընդօրինակողն է Արթանաս եպիսկոպոսը)։ «Չորեքհարիւրերորդի»-ի փոխարեն ձեռագրում սխալմամբ գրված է «երեքհարիւրերորդի»։

** Հիշատակարանի ընդօրինակությունը շնորհակալությամբ ստացա ընկ. Ս. Լալաֆարյանից, որը ձեռնարկել է Վրաց թանգարանի հայերեն ձեռագրերի մանրամասն ցուցակագրման կարևոր աշխատանքին։

ուԹեամբ գրեցի զսուրբ աւետարանս... յընտիր և ի ստոյգ աւրինակէ, ի Թուականութեանս Հայոց ՊԿԴ. (1415), ի հայրապետութեան տեառն Դաւթի *և յիշխանութեան գաւառիս մերոյ* Բէլէք-Բէկի...: *Գրեցաւ սուրբ աստուածաբնակ գիւղս, ուր հանգուցեալ է աստուածընդունակ նշխար սրբոյն* Գրիգոր *վարդապետի, որ կոչի* Նարեկացի, *ընդ հովանեաւ սուրբ տաճարացս լուսոյ մօր Աստուածածնի և միածնի իւրոյ*:

186

ՃԱՌԸՆՏԻՐ

Փիրգ. Նոա. 44—45, Կտուց անապատ

Գրիչ՝ Ստեփաննո
վայր՝ Տշող գիւղ

...*Եւ արդ, ես անպտուղս ի բարեաց* Ստեփաննոս *գրիչս տեսի զսէր և զփափաք բարի ծառային Քրիստոսի* Ստեփաննոսի, *և իմ տկար անձամբս յանձն առի և ամենակարող զօրութեամբն աստուծոյ կատարեցի զսուրբ գիրքս ի դառն ժամանակիս, յորում էր Թիւս Հայոց ՊԿԴ. (1415)*: *Եւ արդ, գրեցաւ սա ի գեաւղս որ կոչի* Տշող, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ստեփանոսիս, և սուրբ Սիօնիս, և սուրբ Կիրակոսիս, և այլ սրբոց առհասարակ*: Ստեփաննոս *քահանայ յիշման արժանի արնէք, և զծնողսն իմ*... [Գրիգոր *քահանայ*], *և զհօրեղբայրն մեր* Մարտիրոս *կրօնաւորն... որ մարտիրոսացաւ... և զօրինակի տուողքն* զՅովհաննէս *փիլիսոփայն՝ զսրբասէր քահանայն, և* զՊօղոս *քահանայ*...:

187

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փիրգ. Նոա. 45, Ոչտունեաց Բէլու գիւղ

Գրիչ՝ Ղազար
վայր՝ Իլոյվանք *գիւղ*

...*Արդ, գրեցաւ աստուածապատում տառս ի գեղս որ կոչի* Իլոյվանք, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս... ձեռամբ* Ղազար *գրչի, ի խնդրոյ տանուտէր* Յոհաննու, *ի հայրապետութեան տէր* Դաւթի... *ի Թուականիս Հայոց ՊԿԴ. (1415), ի ժամանակիս դառնութեան* Ղարայ-Ուսուֆիս, *ի յամիրութեան* Եզդինշէրին *և որդւոյ իւր* Մելիքին:

Եւ ետուք զսա նուէր և ընծայ ի դուռն սուրբ Յակոբայ, և սուրբ Աստուածածնին, և Յոհանայ, որ ի տեղն կենայ:

188

ՑԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌԻՔ

Երևան 6775

ա

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Երուսաղէմ

315 ա *...Որոց (ճառից) ցանկացայ հողս* Գրիգոր՝ *խնդրողս բանի և մեծաւ ջանիւ և աշխատութեամբ գրեցի զսա, և ետու իմ համշիրակ եղբօրն՝* Մկրտիչ *վարդապետին, ի վայելումն անձին իւրոյ և մեզ յիշատակ։ Զի ԿԶ. (66) ամաց եմ ես ու ԽԸ. (48) տարւոյ աբեղայ, և զայս ճառերս չէմ տեսել, և ոչ ի մեր երկիրն կային սոքա՝ Ցաճախապատումս և կամ Ներբողեանքս ասացած ի* Վարդանայ *բանիբուն վարդապետէ։ Վասն որոյ փափագանօք գրեցի յ*Երուսաղէմս*, յորժամ և գտի, ընդ հովանեաւ սրբոյն Ցակոբայ և տէր* Պօղոսի *եպիսկոպոսի, որ քան զարժանն մեր ի վեր ընկալաւ զմեզ և հանգոյց, ՊԿԴ. (1415) Թուին։*

բ

Ստացող և վերջին մասի գրիչ՝ Մկրտիչ
վայր Մեծոփայ վանք

367 ա *...Կատարեցաւ լուսաւոր վարդապետութիւնս որբոյն տեառն*
Ներսէսի *երկրորդ լուսաւորչի, գիրքս որ կոչի Ընթ[ան]րական և խը-*
րատ ամենայն հասակի, [ի] Թըւականութեանս Հայոց ի ՊԿէ. (1418),
ի վանս Մեծոփայ *սուրբ Աստուածածնիս, յերկիրս* Քաջբերունեաց: *Որք*
ընթեռնուք կամ աւրինակէք յիշեցէք ի Քրիստոս զսուրբ հայրն մեր՝
զմեծ րաբունապետն զարթուն անուն, զերկրորդ աստուածաբանն,
զբազմերջանիկն, զաղքատասէր և զհեզահոգին, և զքաղցր եղանակաւ
367 բ *երգեցիկն, և լի ամենայն աստուածային շնորհաւք ‖ զ*Գրիգոր *վարդա-*
պետն, որ՛զ[Ց]աճախապատումն ետ ինձ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ,
որ և տացէ նմայ Քրիստոս զերկնից արքայութիւնն, ամէն։ Այլ և
զտէր Կարապետն, *որ դաւրինակն ետ, և զ*Ակոբ *այրեգայն սրբակրօն,*
*որ փոքր մի աւգնական եղև գրելով, և զ*Գրիգոր *կազմող գրոցս, և*
*զառաջնորդ սուրբ ուխտիս զ*Կարապետ *վարդապետ, և զամենայն միա-*
բանքս, որ կան ի տեղիս յիշեցէք ի Քրիստոս։

*Դարձեալ, աղաչեմ զամենեսեան՝ զմեղսամած գրիչս զ*Մկրտիչ *պի-*
*տականուն վարդապետ, և զծնաւղսն իմ՝ զ*Նահապետ *և զ*Թանգուղխ,
և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս
ձեր, և աստուած զձեզ յիշէ, ամէն։ Դիտութիւն լիցի, զի կար իմ
այս է, ոչ գիտելով գիր, այլ յաւժարութիւնս յաղթեաց և սէր գրոցս,
որ և սիրոյն Քրիստոսի արժանի արասցէ զմեզ և զամենայն հաւա-
տացեալս, ամէն։

189

ԱՒԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 1950

Նվիրաբերող՝ Յիսէ
վայր՝ Մար

Ի թվ. ՊԿԴ. (1415) երեկ Երուսաղէմայ *եպիսկոպոս տէր* Պաւղոս *ի մայրաքաղաքս ի* Մարս: *Ես* Յիսէ՝ *որդի* Սարգիս *իրիցուս, որ տվի զաստուածաբան աւետարանս յ*Երուսաղէմ՝ *ի սուրբ Յակոբ, յիշատակ իմ հաւրն* Սարգիս *իրիցուն, և իմ աղբաւրն* Յովանիսին, *և իմ մաւրն* Աղբէրացին, *որ յաստուած են հանգուցեալ: Ես՝* Յիսէս *և իմ քոյր* Մարիամս, *որ տվաք մեր սրտի կամաւքն և յաւժարութեամբ զարծաթապատ աւետարանս յիշատակ մեզ և մեր ննջեցելոցն, և մի ոք իշխեսցէ հանել սուրբ աւետարանս ի սուրբ Յակոբայ, կամ ծախելով, կամ տալով, կամ գողանալով, կամ այլ հնարիւք: Որ հանին զաւետարանս ի սուրբ Յակոբայ՝ նա այնպիսին զանէծքն առցեն յաստուծոյ և ի սուրբ Յակոբայ և այլ սուրբ տնաւրինականացն:*

190

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑՒՈՅ

Երևան 5163

Գրիչ՝ Կիրակոս

ա

279 բ *Ի թու[ականիս] հայայկազմեան տոմարի ՊԿԴ. (1415) գծագրեցաւ Մեկնիչ Սաղմոսի ձեռամբ ախմար և մեղապարտ գրչի* Կիրակոսի *սուտանուն կրաւնաւորի, որ ամաչեմ յիշել զիս կրաւնաւոր, ի յիշատակ ժրաջան քաջակրաւն, հոգով բարի լցեալ և առաքինութեամբ ծաղկեալ* Յովանէս *րաբունո, զոր աէր աստուած վաելեալ տացէ իւր ամենայն մերձաւորաւք և սպասաւորաւք բանի, ամէն…:**

բ

275 բ *…Տէր աստուած շնահաւոր արասցէ և վաելեալ տացէ զՄեկնիչ սուրբ Սաղմոսի աստուածահաւրն Դաւթի, ամէն. և [պա]տուելի երկնայնոցն և երկրայնոցս յոգիազարդ անձին՝<ի>-սպասաւորի բանի և հարազատի՝*Յովանիսի *հռետորի յերկար ժամանակաւ, մինչ ի խորին ծերութիւնն, ի պարծանս Սիոնի և մանկանց առագաստի, և մխիթար տարակացեալ հաւատա[ց]ելոց, ջահ անշիջանելի, և սիւն անդրդուելի կայցէ, ամէն: Զիս մի մոռանար ընտրեալ սուրբ վարդապետ, զի կարաւտ եմ*

---

* *Համանման հիշատակագրություններ կան նաև ձեռագրի 188ա, 279ա և այլ էջերում:*

շնորհաւք լցեալ հոգևոր և աստուածատուր գետաւքէն և ամենալից ջրո ե հացի, զի ձերիւ աղաւթիւք յագեսցի և զովեսցի սովալլուկ յոգիս իմ, ամէն։

191

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

ԼՑՎ 1267

Գրիչ՝ Կարապետ

Արդ, սուրբ հարք և եղբարք, որ բաղձալի փափագմամբ ընթեռնուք զՔարոզգիրքս, զոր արարեալ է մեծ քոբունոյն եռամեծին Գրիգորի, և աւգտիք ի լուսատու բանից սորա՝ յիշեցէք զգրիչս՝ զԿարապետ սուտանուն աբեղայ, և զծնողսն իմ, նաև զամենայն առաքինութեամբ լցեալ եղբայրն իմ զՅակոբ աբեղայն, որ բազում աշխատեցաւ ի կոկել թղթիս և ի սպասաւորութիւն անարժանիս։ Տացէ սմա տէր աստուած զանճառ բարին։

Գրեցաւ ի թվին ՊԿԴ. (1415)։

ՊԿԵ **1416**

192

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ ՅԱԿՈԲԱՅ ՂՐԻՄԵՑԻՈՅ

Երևան 2914

Հեղինակ՝ Յակոբ Ղրիմեցի
վայր՝ Մեծոփայ վանք

...*Արդ, ես*՝ Յակոբ *վարդապետ* Ղրիմեցի, *ի Թվիս Հայոց* ՊԿԵ.
(1416), զՏումարն դաս ասացի ի հռչակաւոր վանքս Մեծոփու, *ի
խնդրոյ* Թումայ *րաբունապետին* և աշակերտաց նորին։*

185 ա *Արդ, վասն զի բազում տումարատեարք, որ աստ կային՝ պատ-
ճենք նոցա ոչ համաձայն գտանէին միմեանց ըստ շարադրութեան
կարգի, այլ յետ և յառաջ շարագրեալք էին։ Վասն որոյ հարկ եղև
մեզ ըստ կարգի նոր մեկնչիս, զոր արարաք ի շնորհաց սուրբ հո-
գոյն, շարագրել զտումարս մեծ Հայոյն, զի դիւրին լիցի ուսումնա-
սէր մակացու արանց։ Այլ և ի շար սորայ զՀռոմայեցոցն և զեբ-
րայեցոցն պատճէն ես եդաք, զի այս Գ. (3) ազգիս հարկաւորք են
ի տումարագիտութեան գործս, զի դրունք և մուտք յերկոտասան
յազգս տումարաց սոքայ են։*

*Այլ և զմեկնիչն տումարիս զկնի սոցա եդաք շարագրեցաք, զի
առ ձեռն պատրաստ լիցի խնդրողին զսայ...։*

Արդ, յիշեսջիք յաղօթս ձեր զՅակոբ *վարդապետս* զՂրիմեցիս,
186 ա ‖ *որ շարադրեցի զտումարս և զմեկնիչս, և լի բերանով աստուած-
ողորմի ասացէք ի սէրն Քրիստոսի ծնաւղաց իմոց և ամենայն
արեան մերձաւորացն։*

*Բայց աղաչեմ զօրինակողսդ, որ ուշիմ մտօք շարագրէք զսայ,
զի տումարական արհեստն անհնար է առ ի ներընդունել զյաւէտն
և զնուազն, զի բոլորովին արհեստս այս ի վերայ ճշմարտութեան է
հիմնարկեալ, և ստութիւն ի սայ ամենևին անկար է առ ի ներգոր-
ծել։ Զի որպէս անհնար է միակ Թվին երկուս լինել և կամ երկուցն
զմիակի անունն յինքն բերել, այսպէս և տումարական մակացու-
թիւնս անհնար է զաւելի և զպակաս շարագրածութիւնն ներընդու-
նել, զի համարողական արուեստիւ գոյանայ, որ մէկն մէկ է և եր-
կուս չէ, և երկուսն երկուս է և մէկ չէ։ Վասն որոյ աղաչեմ, յորժամ
սրբագրես և օրինակես՝ հոգաբարձութեամբ զաւելորդն հանես և*

---

* «Մեկնութիւն տումարի» աշխատության որոշ ձեռագրերում պահպանվել է Յակոբ Ղրիմեցու ուղերձը՝ պատվիրատու Թովմայ Մեծոփեցու հասցեին։ Բուն հիշատակարանից հետո տալիս ենք այդ ուղերձի բնագիրը երկու խմբագրություններով՝ Ա—Երևանի № 5975 ձեռագրից և Բ—Փիրղալեմյանի «Նոտարք»-ից (էջ 159)։

զպակասն գրեաս, զի զվարձս յաստուծոյ առցես և զաստուած-ողորմի լսելն արդարութեամբ վայելես:*

Ուղերձ առ Թովմայ Մեծոբեցի

ա

137 բ Փառք... որ ետ հասանել մեզ յաւարտ տումարական մեկնութեանս՝ ի յուրախութիւն ուսումնասիրաց անձանց։

Արդ, ո՜վ բաբունապետդ սուրբ և առաքինի, ահա ե զայս ես զխնդիր քո կատարեցի բազում աշխատութեամբ: Եւ առցես զսայ և ըստ ուշիմ և նրբահայեաց մտաց քոց որոնեսցես՝ զպակասն լցուսցես և զաւելորդն կշռեսցես. և զոր ինչ հաւանական գտցես՝ տեառն մատուցանիցես զշնորհս և զփառս, զի նորա են ամենայն գանձք իմաստութեան, և յոչ հաւանականսն՝ տկարութեանս մեր ներեսցես, զի խնդիրդ քո ի վեր է քան զկար մեր, այլ սիրով խնդրելոյդ յաղթեալ ձեռնարկեցաք։ Վասն որոյ աղաչեմ զհեզութիւնդ քո քոյին սիրովդ, զի յիմաստասիրելն քո զքո հոգւոյ աղքատս՝ զՅակոբ Ղրիմեցի սոսկանուն վարդապետս, ի հառաչալիր աղօթս քո մի մոռասցիս, այլ ի յիշելն քո և զաստուած ողորմին յիշեսցես, ողջ լեր:**

բ

...Արդ, ո՜վ բաբունի և աստուածաբան, աստուածային իմաստութեան ցանկացող, որդեակ իմ հոգևոր և եղբայր ցանկալի և բաղձալի վարդապետ Թումայ՝ առաջնորդ աստուածաբնակ քրոբէագումար հռչակաւոր սուրբ ուխտին Մեծոփայ վանք անուանելոյ։ Ահա զայս ես խնդիր քո կատարեցի բազում աշխատութեամբ, և առցես զսա և ընդ ուշիմ մտաց քոց նրբահայեաց որոնեսցես, և զպակասն լցուցանիցես, վասն որոյ աղաչեմ զքոյին հեզութիւնդ սիրով բաղձանաց, զի մօտասիրելն քոյովդ հանդերձ զհոգւոյս աղքատս քո զՅակոբ Ղրիմցիս՝ սոսկանուն միայն վարդապետս ի յառաջալիր յաղօթս քո մի մոռասցիս:***

---

* Սույն հիշատակարանը փոքր ինչ աղավաղումներով և ստացողների անվանց հավելումով ընդօրինակված է նաև նույն այս ձեռագրի 195ա—196ա էջերում, ՌԽԴ. (1595) թվականին:

** Այս նույն (№ 5975) ձեռագրի 150բ էջում, «Յաղագս բնութեան մարդոյ» հոդվածի վերջում՝ պահպանվել է Յակոբ Ղրիմեցու հիշատակագրությունը որպես ընդօրինակողի: Նա գրել է «Զմեղուցեալ գրիչս զՅակոբ Ղրիմեցի՝ զպասաւոր բանի աղաչեմ յիշել յաղօթս՝ աստուած-ողորմի ասելով. և տէր ձեզ ողորմեսցի, ամէն»:

Ե՛վ Ղրիմեցու ուղերձը և՛ այս հիշատակագրությունը պահպանվել են ԺԵ. դարի կեսերին ոմն «մեղուցեալ գրիչ Ստեփանոսի» կատարած ընդօրինակություններով:

*** Այս ուղերձը Ղ. Փիրղալեմյանը թյուրիմացությամբ հրատարակել է 1448-ի թվաշարքում:

193

ՅԱՂԱԳՍ ԱԶԳԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԱՆՄԱՆ, ՅԱԿՈԲԱՅ ՂՐԻՄԵՑՒՈՅ

Փիրգ. Նոա. 159

Հեղինակ՝ Յակոբ Ղրիմեցի

Եւ այսքան շատ լիցի, որ ցուցեալ եղև ի մէնջ, ամէն։ Ի խնդրոյ Թովմայ *վարդապետի հրեշտակաբնակ սուրբ ուխտիս* Մեծոփայ, *և ես ծառայաբար կատարեցի՝* Յակոբ *վարդապետս* Ղրիմեցի՝ *աշակերտ* Գէորգայ *վարդապետի և քաջ դիտասէրի* Եզնկացւոյ, *յաղագս ազգականութեանց բաժանման։**

194

ՅԱՂԱԳՍ ԱՆՑԱՑՏ ՆՇԻ, ՅԱԿՈԲԱՅ ՂՐԻՄԵՑՒՈՅ**

Երևան 8076

73 բ *Զհոգևոր հայր մեր և զվարդապետ* Յակոբ Ղրիմեցի՝ *ճգնաւորն և շարագրօղ գծիս այս, և զ*Թովմա *հեզահոգի վարդապետն, խնդրող բանիս ի տէր վարձատրեսցէք, և տէր զձեզ վարձատրեսցէ, ամէն։*

195

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7043

Գրիչ՝ Վարդան

281 բ *...Եւ արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Ը.*** հարիւր և ԿԵ. թվի (1416°), ձեռամբ [անարժան]* Վարդան *աբ[եղայի | | |, ի ժամ]անակի, որ [կա]յր [անհնար]ին հալածումն | | | ի վերա | | | քրիստո]նէից [յազգ]աց իսմաէլեան, որ հանապազ ոչ դադարէին ի խնդրելոյ հարկս ի քրիստոնէից, և ամենեքեան գրաւեալ կային ընդ ձեռամբ նոցա, որպէս թէ կապեալք ի շխթայս իբրև զհինն Իսրայէլ առ Փարաւոնիւ։ Եւ ոչ ուստէք ունին ակն փրկութեան, բայց միայն զփրկիչն մեր Քրիստոս, որ մերձ ընդ մերձ կորուսցէ զհալածիչսն*

* *Սույն և հաջորդ հիշատակարանները անթվական են, տեղադրում ենք Յակոբ Ղրիմեցու «Մեկնութիւն տումարի» աշխատության հիշատակարաններին առընթեր։ Սակայն դրանք կարող են գրված լինել ինչպես ավելի վաղ, այնպես էլ Յակոբ Ղրիմեցու կենդանության հետագա տարիներին։ Երևանի № 9100 ձեռագրի 343 էջի վրա պահպանված տվյալի համաձայն Ղրիմեցին վախճանվել է 1426 թվականին։ Այնտեղ գրված է. «Թվին հա[յոց] ՊՀԵ. (1426) մեծ վարդապետն Յակոբ Ղրիմեցին փոխեցաւ ի Քրիստոս, ի քաղաքն Արծկէ, և եդաւ ի տաճար սուրբ Աստուածածնին»։*

** *Աստվածաբանական դատողություններով համեմված երկրաչափական փոքրիկ աշխատություն է։*

*** *Հիշատակարանը մաշված ու եղծված է։ Ը. (8) թվանշանի տակ աղոտ կերպով նշմարվում է «Եւթն» բառը, ըստ որի հիշատակարանի գրությունը՝ հարյուր տարի առաջ ընկնելով դառնում է 1316-ը։ Հիշատակարանը տեղադրում ենք 1416-ի թվաշարքում կարծելով, որ գործ ունենք գրչական սխալի հետ։ Ընդօրինակողն սկզբից սխալմամբ գրել է «Եւթն» բառը, բայց հետո, նկատելով իր սխալը՝ ջնջել է այն և վրան գրել Ը. (8)։*

քրիստոնէից և քարագլխեսցէ թաւագլորելով | | | [ըստ] չարութեան
282 ա [իւրե]անց և ըստ գործոց։ || Եւ հաստատեսցէ զհաւատացեալս անուան
իւրոյ ան | | | սնելի մինչև ի սահմանեալ կէտ կոչման և պահեսցէ
անսայթաք և անգթելի ի վերա վիմի հիման մաւր մերո նոր Սիոնի,
ամէն։*

196

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4300

Գրիչ՝ Սարգիս

ա

273 բ Զմեղսաներկ և զսեւ|ացեալ հոգով, չարագործ մարմնով աչօք կուրացածս Սարգիս աղ[աչեմ յ]իշել ի տէր, և աստուած զձ[եզ յիշէ]. ի թվ. ՊԿԵ. (1416)։

բ

279 ա Ո՜վ պատուական սուրբ հանդիպողք, պաղատելով աղաչեմք զձեզ, որ և զքաջ հով[ու]ապետքն մեր զտէր Զաքարայն, զտէր Թադէոսն, զտէր Ստեփաննոսն, զտէր Գրիգորն, զտէր Աղեքսիաննոսն, զտէր Վանականն, զտէր Մարկոսն, զտէր Անդոնն, զտէր Յովանէսն, և զտէր Սարգիսն աղաչեմ յիշել ի տէր, և աստուած զձեզ յիշէ ի յիւր միւսանգամ գալուստն, ամէն, և զիս՝ զմեղապարտ գրչակս, ամէն։

գ

213 բ Զտառապեալս և զմեղսաներկս անձն և հոգով մեռեալս և մարմնով մոլորեալս Սարգիս գրիչ՝ անուամբ եպիսկոպոս և գործով թաբաւր ի յամենայն քահանագործութենէ, և սեվերես դիմաւք կամ ի պատրանք աշխարհիս անդարձ մեղաւորս, հանդերձ ծնողաւք և ազգականաւք աղաչեմ յիշել ի տէր, և աստուած զձեզ յիշէ ի տէր աստուած, ամէն։

ԶԹադէոս քահանայ և զՍարգիս քահանայ աղաչեմ յիշել ի տէր, և աստուած զձեզ յիշէ։

դ

294 ա Ընդ նմին զհոգևոր եղբայրն մեր՝ զՄատթէոս քահանայն և զՅովանէս քահանայն, հանդերձ ծնողաւք և ազգականօք, աղաչեմ յիշել ի տէր, և զիս՝ զանարժանս, ամէն։

ե

100 ա Վա՜յ, որ ձեռս կու դողայ, ու ազգի ազգի կիրս կու || աւիրեմ, ինչ անեմ, որ ծեր եմ ու աչքս վատատես է. Խ. (40) տարի է, որ գիր կու գրեմ, թողութիւն արարէք։

* Շարունակությունից (2,5 սյունակ) կարդացվում են միայն որոշ բառեր ու նախադասություններ, որոնցով գրիչը խնդրում է հիշել իր ծնողներին և իրեն։

Գ

181 ա Վայ, որ զձեռս ի դողմանէ, ու աչքս վատա || տես, և ես ծերացեալ կամ։ Խ. (40) տարի է, որ կու գրեմ։

Է

266 ա Վայ, որ զձեռս կու դողայ, ինչ առ || նեմ, ուժեղ չեմ կարել, որ չգրեմ, Թողութիւն արարէք վասն աստուծոյ։

Ը

70 բ Զտառապեալ և զսեվաց[եալ] հոգով անձն Սարգիս կոչեցեալ եպիսկոպոս և գործովք Թափուր ի յամենայն մասանց բարեաց աղաչեմ յիշել ի տէր, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

Ը. (8) օրն գրեցաւ գլուխս [Մատթէոսի]։*

197

ՄԱՇՏՈՑ

Երևան 3670

Գրիչ՝ Սարգիս

154 ա Եւ զնուաստ գրչակս փծուն՝ զտառապեալ անձն զՍարգիս եպիսկոպոս** յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ յիւր ամենագութ յողորմութիւնն, ամէն, ժսհտ։***

198

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

Կ. Եզեան, Պետերբուրգ 72

Նուիրատու՝ Սարգիս

Կամաւն աստուծոյ մեք՝ նուաստ ոգի Սարգիս եպիսկոպոս, իմ սրտի կամաւ և յաւժարութեամբ տուաք զգիրքս զայս ըստ հոգոյ որդոյն իմոյ և ձեռայսնոյց աշակերտին՝ Մարաիրոս աբեղային, զոր տէր աստուած վայելել տացէ։

Արդ, եթէ ի մերոց սուտ ազգականաց կամ յաւտարաց հակառակին այսմ հայրէնատուր․աւանդութեանս՝ նայ այնպիսի[քն] մասն և բաժին զՅուդային և զխաչահանուացն առցեն և ընդ անիծիւք եղիցին։

* Ութ օրում Սարգիս գրիչն ընդօրինակել է 70 թերթ, ավելի քան 88,000 տպագրական նիշ։ Եթե նույն արագությամբ է նա աշխատել նաև ձեռագրի հաջորդ մասերն ընդօրինակելիս, ապա ամբողջ ավետարանի ընդօրինակությունն ավարտած պետք է լինի շուրջ մեկ ամսվա ընթացքում։ Արտակարգ արագաշարժ և վարժ գրիչ է։

** Ամենայն հավանականությամբ նախորդ համարի տակ բերված հիշատակագրությունների հեղինակը Սարգիս եպիսկոպոսն է։ Ըստ այդմ էլ այս և հաջորդ անթվական հիշատակարանները տեղադրում ենք նրան առընթեր՝ 1416-ի թվաշարքում։

*** Փոխարինագիր ծածկագրով կարդացվում է «ամէն»։

199

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 2074

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Կափոսի վանք

428 բ Փառք...որոյ ողորմութեամբն սկսա և աւգնականութեամբ նորին աւարտեցի զփափագելի և ղտենչալի զգիրս զայս Քարոզաց, արարեալ երից երանեալ մեծ հռետորին Գրիգորի րաբունապետին՝ ի պայծառութիւն տօնից տէրունականաց և ի գովեստ սրբոց նորին և սիրողաց, նաև ի զուարճութիւն մանկանց եկեղեցոյ։ Զոր ես եղկելիս, թափուրս յամենայն բարեգործութեանց, ծոյլս և տարտամս յամենայնի, Գրիգոր բանի սպասաւորս, պետ կոչեցեալ ըստ անուանեցելոցն և ոչ ենթակայեցելոցն, նմանապէս և ես անուանս սոսկալոյ հաղորդեալ և ի յարմար գործոյ սորին ամենևին տարակացեալ, յերկուցն ասեմ առաքինութեանց՝ տեսականին և գործնականին, մանօանդ թէ և տեղի տուեալ սերմանցն չարին։ Եւ թէպէտ այսու ամենայնիւ զգածեալ էի, սակայն փափագող եղէ այսմ՝ շնորհաբուխ մատենիս, և զի որպէս հոգով հիւանդացեալ, սապէս և մարմնով տկարացեալ աչաւք շլացեալ և գլխով ցաւեցեալ, և բոլորովին անգամօք անպիտանացեալ։ Այլ քանզի յաստուած խրախուսեալ և ի սատարութիւն իմոցս հարազատաց, ի բաց եգեալ զանձին տկարութիւն՝ գրեցի զսա, մանաւանդ յորդորմամբ և նպաստաւորութեամբ բազմերախտ և գորովագութ հօրս իմոյ հոգևորի ուսուցչի՝ տէր Սարգիս բանի սիրողի և քաջ երաժշտապետի, զոր տէր Յիսուս գրեսցէ զսա՝ իւրաաւքն հանդերձ ի գիրն կենաց անջնջելի։

Արդ, գրեցաւ սա ի սուրբ մենաստանիս, որ յորորջեալ կոչի Կափոսի, ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ սքանչելագործ հայրապետին Մծբնա, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս եռամեծի և քաջ փիլիսոփայի՝ բազմերախտ հօրս մերոյ և վարժապետի Գէորգեա՝ արի և քաջ րաբունապետի։ Զոր յայսմ ժամանակի զսա տեսանեմք օթևան հոգոյն սրբոյ և հանգուցանող կամացն աստուծոյ, զոր և տէր Յիսուս պահեսցէ զսա յերկարեալ ամօք և բազմերամ ժամանակաւք մինչև ի խորին ծերութիւնն՝ անսասան կենօք և երկու աշխարհօք, ամէն։

Այլ և գրեցաւ սա ի թվականութեան հայկազեան տումարիս յաբեթականս տոհմի ԸՃ.-երորդի Կ. և Ե. յաւելորդի (1416), ի դառն և յանբարի ժամանակի, ի վերջ եկեալ անցաւորիս։ Նաև առ մեզ կատարի բանն տէրունի, թէ՝ Յաւուրն յայնոսիկ յարիցէ ազգ յազգի վերայ և եղիցին սրածութիւնք և մահք տարաժամք, զոր և միոյն ականատես եղաք և միւսոյն ականջալուր։ Քանզի առ մեզ եղեալ մասատիկ յԵկեղեաց գաւառիս, զոր ով կարասցէ ընդ գրով արկանել զաղէտս տարակուսանացս։ Այլև գնացեալ անօրէն բռնաւորն Խարա-Ուսուֆ կոչեցեալ, վառեալ չարութեամբ, և մտեալ ի ՏուԸԸ Վրաց, և առեալ զքաղաքն Յաղլծխա, և զամենեսեան, առհասարակ, զարսն ի

սուրն սուսերի մաշեալ, և զկանայս և զմանկունս գերի վարեալ. և այլ այսպիսի յոլովս գոյ տեսանել ի հասեալ ժամուս։

Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զսիրողքդ բանի, որք յետ մեր հանդիպիք, յիշել ի Քրիստոս զվերոյգրեալ զգծող սմին՝ զտառապեալս ոգի, և բազում և անթիւ սխալանաց մերոց՝ բանիցն և գործոցն, կամայիցն և ակամայիցն ներումն թողութեան հայցել, նաև ծնողաց մերոց, և եղբարց, և ամենայն ազգականաց մերոց, և ամենայն աշխատողաց ի սմա, զոր և ձեզ և մեզ և ամենայն հաւատացելոց, առհասարակ, ողորմեսցի Քրիստոս ի միւսանգամ գալըստեանն իւրում, և երանաւէտ ձայնին արժանի արասցէ, ամէն։

Այլև աղաչեմ յիշել ի տէր զպանծալի եղբայրս մեր զյիմաստայեղձ փեսայն եկեղեցոյ զՂազար րաբունին, և զհամշիրակ եղբայր մեր զԹումա բանի սպասաւոր, որ զօրինակն շնորհեցին մեզ, զոր տէր Յիսուս պարգևեսցէ ինքեանց և ծնօղաց իւրեանց զերկնից արքայութիւնն, ամէն։

200

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երևան 5869

Գրիչ՝ Աւետիք

ա

402 բ Այլ և զիս՝ զանարժանս և զեղկելի զփցուն գրիչս՝ զԱւետիք սպասաւոր բանի և սոսկ անուամբ վարդապետ, աղաչեմ զսուրբ ընթերցողսդ և զամխոյժ մտաւորսդ յիշել ի սուրբ և ի մաքրափայլ աղաւթս ձեր, և մեղաց թողութիւն հայցել մեզ, և ծնողաց մերոց, և ուսուցչաց, և ամենայն մերձաւորաց. և աստուած զձեզ յիշեսցէ և կատարեսցէ զխնդրուածս ձեր, ամէն։

Այլ և աղաչեմ յիշել ի տէր զպատուական եղբայրս մեր զԹումայ գրոց աշակերտս, որ պատճառ եղև աւրինակի գրոցս, որ բազում հնարիւք առեալ մեզ պարգևեաց, զոր տէր Յիսուս գրեսցէ զսա ի գիրն կենաց անջնջելի, հանդերձ ծնօղօք իւրովք, ամէն։

Այլ և աղաչեմ անմեղադիր լինել սխալանաց և խոշորութեան գրոցս, զի աւրինակն թագուն էր և խիստ ըշտապով։ Ի թվականիս ՊԿԴ. (1415)։

բ

321 բ ...Այլ և եղկելիս յամենայնի և թշուառացեալս ոգի, անարժանս և յետնեալս յամենայնի Աւետիք պիտականուն փափագող բանի՝ գծող այսմ տառի, յերեսս անկեալ մաղթեմ զամէներջանիկ բանասէրքդ, որ յետ մեր հանդիպիք սմա յընթերցումն կամ ի գաղափարումն, զի ի մաքրափայլ աղօթս ձեր յիշման արժանի առնիցէք

զմեզ՝ հանդերձ ծնօղօք մերովք և ամենայն արեան մերձաւորօք։ Եւ սխալանացն և խոշորութեան գրոյս անմեղադիր լինել աղաչեմ, զի այսչափ էր կար մեր, այլև կարի շտապով էր։ Դարձեալ աղաչեմ յիշել ի տէր զհոգևոր հայրս իմ և զլոյժ երախտաւոր ուսուցիչս իմ զտէր Սահակ բանի սպասաւորս և զքաղցրաձայն երաժիշտս, զոր տէր Յիսուս գրեսցէ զսա ի գիրն կենաց անջնջելի, ամեն։ Այլ և զհամշիրակ եղբայրն մեր զՅոհաննէս բաբունին, որ զօրինակս շնորհեաց, այլ և զպատուական եղբայրս մեր զԹումա բանի սպասաւորս, որ բազում աշխատութեամբ առեալ զօրինակն և մեզ շնորհեաց, նայ և զամենայն երախտաւորս ի սմա աղաչեմ յիշել ի տէր և մեղաց թողութիւն հայցել, զոր և ձեզ յիշողացդ և մեզ, առհասարակ, ողորմեսցի Քրիստոս ի միւսանգամ գալստեանն իւրում, և եկայք ձայնին արժանաւոր արասցէ լսել, ամէն։

Ի թվականիս ՊԿԵ. (1416).*

201

ՄԱՇՏՈՑ

«Լոյս», 1905, էջ 140—141, Բալու

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Երզնկայ

Գրուած է Երզնկայի ս. Յակոբ (Մեծրնա) եկեղեցին «ձեռամբ յոգնամեղ և անպիտան գրչի Յովանիսի, որ անուամբ եմ քահանայ և գործովքս զազրալի»։ Գրութեան թուականն է ՊԿԵ. (1516)....։ Գիրքըն գրուելուն ծախքը ևն. հոգացողն է Նուրախաթուն. Թէպէտ միևնոյն ատեն կը յիշուին Յովհաննէս աւագերէց մը և իր որդին Մկըրտիչ, որ սարկաւագ է եղեր։ Ասոնք գրել կուտան իրենց եկեղեցիին համար որուն անունն է Լուսաւորիչ....։

202

ՄԱՇՏՈՑ

Նոր-Ջուղա 420

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան

171 ա ...Արդ, գրեցաւ մաշտոցս ի քաղաքիս որ կոչի Վան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Վարդանա, ձեռամբ յոգնամեղ և անարժան, սուտանուն քահանայի Կարապետի, ի թվ. ՊԿԵ. (1416)։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տիրելով, կամ կարդալով, կամ աւրինակելով յիշեցէք ի սուրբ և յարժա-

* Այս տողը գրված է կարմիր թանաքով։

նաւոր յաղաւթս ձեր զստացող սորա զԿիրակոս կուսակարաւն քահանայ, և զծնողքն իւր՝ զհայրն Մկրտիչ և զմայրն Աղբրաց, և զհոգևորհայրն զԱստուածատուր քահանայ, և զքուերորդին զԱւետիս քահանայ և զՍտեփանոս, և զծնաւղքն իւրեանց՝ զհայրն Սարկաւագն, և զմայրն Գուհար: Դարձեալ, յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զԱստուածատուր տնտեսն, որ աւգնական եղև մաշթոցիս, և զեղբայրն զՅակոբ, և զծնօղսն իւրեանց՝ զհայրն Գրիգորէս, և զմայրն Արղուն-Մելիք, և զյառաջ յիշեալսն զԿիրակոս քահանայ և զԱւետիս.... Ընդ նմին և զանարժան գծողս զԿարապետ աշխարհի երէց... և եղբաւրն իմ Վարդան սարկաւագի, և իմ ծնողացն՝ հօրն իմ Յովանէս քահանայ, և մաւրն իմ Զմրութի, ամէն։

Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զյառաջ յիշեցեալն զԿիրակոս քահանայ, և զԱւետիս քահանայ, և զԱստուածատուր տնտես, որ ըստացան զսա յարդար վաստակոց իւրեանց և ետուն ի դուռն սուրբ Աստուածածնին Սղգայոյ։

203

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երուսաղէմ 2179

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Հիզան, ս. Խաչ վանք

...Նաև զհօրեղբայրս իմ զՅովանէս և զՄարտիրոս, նաև զյիշատակի արժանաւորն՝ զհոգևոր հարքն մեր զՅոհաննէս և զԱւետիս րաբունիքս [յիշեցէք]...։ Գրեցաւ ...ի գերահռչակ ուխտս որ կոչի Աւաք սուրբ Խաչ... ի Թուականիս ՊԿԵ. (1416), ի գաւառիս Հիզան քաղաքիս։

204

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 2148

Գրիչ՝ Մելքիսէդ

ա

377 բ ...Արդ, գրեցաւ սա ձեռամբ բազմամեղ գրչի Մելքիսէդ պիտականուն բանի խնդրողի, ի վայելումն եղկելի անձին իմոյ, այլ և մանկանց եկեղեցոյ։ Եւ ստացա զսա եռափափաք սիրով անջինջ յիշատակ ինձ անարժանիս, և ծնաւղաց իմոց, և ամենայն արեան մերձաւորաց, ի շրջագայութեան Հայկազան տաւմարի ՊԿԵ. (1416) թուի։

Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան սրտառուչ մաղթանաւք՝ զհանդիպողսդ այսմ աստուածային և հոգէկեցոյց գանձիս կարդալով կամ գաղափարելով, կամ տեսութեամբ, յիշեսջիք ի մաք-

ըափայլ տզաւթս ձեր ջերմեռանդ սիրով զիս՝ զանպիտան և զփցուն գծող սորա, և զծնաւղսն իմ՝ զհայրն իմ զՏիրա[տուր | | |*

Բ

Կաֆայ ասացեալ

Աւրհնեալ ես Քրիստոս աստուած
Եւ գովեալ յամէն բերանոյ,
Որ զամենեցուն կարիս
Կատարես առանց հոգալոյ.
Այսաւր ղանպիտան գրչիս
Լցուցեր զիղձս տենչալոյ,
Զի յիս չունէի կասկած
Զայսպիսի գործ վճարելոյ։
Ով հաստատ ի քեզ յուսա
Զանկանի ի գործ ամաւթոյ
Ինքն, դու հնար առնես
376 բ 'Ի աւարտես առանց հո || գալոյ.
Քեզ փառք և պատիւ տացուք,
Գոհութիւն ընդ հաւր և հոգոյ,
Որ զմեզ արժանի առնես
Յառագասան մտանելոյ։

205

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

Երևան 4921

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Ղրիմ

248 բ ...Արդ, եզև զրաւ գրչութեանս ի թվականիս Հայոց || ՊԿԵ. (1416), յաշխարհս Հռնաց, որ կոչի այժմ Ղրիմ, ի վանքս որ է յանուն սուրբ Խաչին, որ մերձ է | | |, ի հայրապետութեան տեառն Պօղոսի, և յարհիեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսայնոցս տէր Կիւրեղի, ձեռամբ անարժան և պիտականուն կրօնաւորի Յակոբի մեղայպարտի։

Արգ, յերես անկեալ աղաչեմ զձեզ, ով դասք լուսեղամից և գումարք խաչակրօնից, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, թողութիւն մեղաց հայցեցէք եղկելի գծողիս և ծնողաց իմոց՝ հօր իմոյ և մօր իմոյ, և եղբօր իմոյ Ամիր-Սարգըսին, և ամենայն արեան մերձաւորաց իմոց...։

Այլ և տգեղութեան գրոյս անմեղագիր լերուք, զի կար մեր այսչափ էր, և թէ մեղադրէք, նա զայն դուք գիտէք, ձեր կամք է և

* Մի թերթ պատռված։

մեր արժանք։ Նաեւ առաւել յիշեսցջիք զօրինակիս շնորհօղն՝ զՄելքիսեդեկ կրօնաւորն, և զնորին աշակերտն՝ զՎարդան կրօնաւորն, և քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

206

ԱԻԵՏԱՐԱՆ

Նոր-Ջուղայ 547, Մ.Տ.Ա. և Մ.Տ.Մ.

Կազմող՝ Թումայ Թավրիզեցի

343 բ …[Յիշեցէք] զվերջին ստացող քառավտակ սուրբ աւետարանիս զհեզահոգի և զսրբասնեալ քահանայ զԶաքարիայ, որ ետ վերստին նորոգել զսուրբ աւետարանս ի վայելումն անձին իւրոյ։ Արդ, որք հանդիպիք սմայ տարազաւ իւիք՝ յիշեցէք… զստացող սորա Զաքարիայ քահանայ, և զհայրն իւր զԱմիր-Սարգիս, և զմայրն իւր զՀերիք, և ծաղկեալ անդրանիկ զաւակն իւր զԱլէքսիանոս, և զհամշիրակ եղբարքըն իւր՝ զըԹաւաքալ և զԵրանշահն, և զամենայն ազգայինս իւր՝ զկենդանիս և զհանգուցեալսն։ Ընդ նոսին և զեղկելի կազմողակս՝ զԹումայ էրէց Թավրիզեցիս և զմերսն ամենայն։ Եւ ինքն, որ առատն է ի տուրս պարգևաց, որ տա առատապէս և ոչ նախատէ, ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յիշելեացս, առհասարակ, ողորմեսցի, ամէն։ ՊԿԵ. (1416) Թուականիս կազմեցօ։

207

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նօտ. 49, Արճէշ

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Երուսաղէմ

…Արդ, գրեցաւ սա ձեռամբ Յոհաննէս սուտանուն քահանայի*… ի մեծափառ և ի գերահրաշ աստուածակոխ քաղաքս Երուսաղէմ, ի Թուականի Հայոց ՊԿԵ. (1416), ի մէջ Յարութեանս, ի դուռն սուրբ գերեզմանիս, և ընդ հովանեաւ սուրբ Գողգոթայի և այլ տնօրինականացս Քրիստոսի աստուծոյ մերոյ։

208

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Փարիզ 31, Մ.Տ.Մ.

Գրիչ՝ Ղազար

83 բ Այլ և զիս՝ զանարժան և զեղկելի զփցուն գրիչս և զՂազար սպասաւոր բանի և սոսկ անուամբ վարդապետ աղաչեմ զսուրբ ընթերցմամբ յիշել….։

---

* Սրա մասին մանրամասնութիւններ կան ստացող Կարապետ վարդապետի հիշատակարանում, տես 1421-ի Թվաշարքում։

Այլ ևս աղաչեմ անմեղադիր լինել սխալանաց և խոշորութեան գրոյս, զի գրչութեան արհեստին այսքան հմուտ էաք, և կար մեր այս է։ Զաւելին ջնջէ և զպակասն ուղղէ և զաստուած-ողորմիսն ասա, և աստուած զքեզ յիշէ, ամէն։

Այլ և մարթաւորս տկար սաստիկ և մարթաւոր ընչից ևս առաւել աղքատ, որ անգամ թղթի գին ոչ ունէի. ի թվիս ՊԿԵ. (1416)։

209

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ

Երևան 5674

Գրիչ՝ Անդրիաս

ա

238 ա *...Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ տառ[ս] այս իմաստայ-պատում, որ կոչի Լուծ[մունք] արտաքնոց, բացայյայտեալ զսա մեծ վարդապետն Հայոց* Գրիգորի, *ի թվիս ՊԿԵ. (1416), ձեռամբ* Անդրիաս *սուտանուն խաբեղայի, որ զանունս ունիմ և զգործս ոչ։ Այլև զըստացող սուրբ տառիս՝* զԿարապետ *վարդապետ, և զեղբայրն իւր* Յովանէս *կրաւնաւոր, և զամենայն մերձաւորս՝ զկենդանիսն և հանգուցեալն ի Քրիստոս, ամէն։*

Արդ, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ աւրինակաւ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԿարապետ *վարդապետս։*

բ

16 բ *Աստուած լուսաւորէ* զԹումայ *վարդապետի հոգին։*

գ

151 բ Զներսէս *կրաւնաւոր, որ սիրով ընկալաւ զիս, [յիշեցէք]։*

210

ԳԱՆՁԱՐԱՆ

Փիրդ. Նօա. 49, Վարագ

Գրիչ՝ Յովհաննէս

Որք նուազէք աստուածային անուշահոտ եղանակաւ առ դրան սուրբ Աստուածածնիս և սուրբ Սարգսի զօրավարիս՝ յիշեցէք... գրիչս Յովհաննէս... *քահանայ, հօրն իմ* Մկրտիչ *քահանային...։*

Այս է առաջին գիրն, զոր գրեցի, ի թուականիս Հայոց ՊԿԵ. (1416)։

211

ՈՏԱՆԱՒՈՐ ՆԵՐԲՈՂԵԱՆՔ Ի ՎԵՐԱՅ ՍՐԲՈՅ ԵՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 8689

Գրիչ՝ Մատթէոս Մռնզոն
վայր՝ Գանձասար

ա

86 ա *Փառք քեզ կերտող գոյեղինիս, և բոլորող կիսագնտի և եթերի, և*
կառուցող հաստահիմն դեմետրի և նիւթոյ պարզոյ, և ջոկտրող ի
միջոցի ստո սեռի և տեսակի և մանրամաղ հիւղէի՝ հայր և որդի և
սուրբ հոգի, որ ներեցեր քոյին մարդասիրութեամբդ առ բովանդակ
մեղանչականս յերիս սեռս՝ մատնադէտ և փծուն գրչիս Մատթէոսի՝
անարժան քո ծառայի հասանել ի վերջք աստուածախումբ տառիս և
*հայել խոհական մտօք և տեսանել զգալի աչօք զվերջիս գիծ տառիս...։**
87 ա *...Արհեստաւորք յայտ կացուցանեն յանպատշաճ իրաց զպատ-*
շաճաւորն և զպիտանին, որպէս հիւսունք ի մայրից՝ սեղան և աթոռ,
կարուակք յոդից՝ կօշիկ և զգեստ, դարբինք ի քարանց՝ երկաթ, և եր-
կաթոյ՝ սուսեր և այլ ինչ գործի. ահա այսոքիւք նըմանին մարդիկ
աստուծոյ, և արարչակից կոչին...։
Ցորոց մի էր և ոմն Մանուէլ քահանայ՝ վերջին ի ծնունդս ման-
կանց եկեղեցւոյ, որ թէպէտ յանկար հասակի այն ինչ յարբունս հա ‖ *-*
87 բ *սեալ երիտասարդական ձևոյ և կերպարանաց, ի մանկութենէ կրելով*
զխիղճ մտացն և ելս ի մտի դնելով ի հովտէս տրտմութեանց։ Վասն
որոյ նախքան զայս գործառնութիւնս թողեալ զմեզ և զծնօղսն իւր և
զեղբայրսն լալագին երեսօք՝ հետևեաց տեսանել զտեղի կոխման գար-
շապարաց մարմնացեալ բանին աստուծոյ յԵրուսաղէմի և երկիրպա-
գանել սուրբ տեղացն, ուր կացեալ են ոտք նորա, ըստ մարգարէին։
Ցորում ճանապարհին բանսարկուն ոչ սակաւ փորձութիւնս յարուց-
եալ՝ ալեկոծութիւն ի ծովու և ծփանս ի մէջ կոհակացն՝ ամսօրեայ
ժամանակօք, որպէս Պօղոսին յաւուրս աշնան, յորոց զերծուցեալ աս-
տուած և տարեալ հասոյց յիւր սուրբ տնօրէնութեան տեղեացն տե-
սումն...։
88 ա *...Եւ մարգարեն յառաջագոյն գոչէ զպատուականութիւն սմին իրի.*
թէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, որ է գիրք, և ընտանի յԵրու-
սաղէմ, որ է յիշատակ նորին յորքայութեանն աստուծոյ։ Զայսպիսի
բանքս ի միտ ածեալ յորժամ դարձաւ յԵրուսաղէմէ՝ յետ երկուց
ամաց, առեալ զնիւթ թղթիս ի Դամասկոսէ, և եկն խաղաղութեամբ

* *Բաց ենք թողնում մի ընդարձակ հատված, որի մեջ գրիչն անում է աստվածա-բանական դատողություններ։*

24—13

առ մեզ. և Թախանձեալ զհոգիս իմ առ ի փափագմանն կատարումն,
գրել զյիշատակարան մատենից բոլոր տարոյն, որ է ի բանից աս-
տուածաշունչ տառից, յարմարեալ ի հարցն սրբոց շարժեալք ի հոգ-
ւոյն, կարգեալ կերակուր հոգւոց իւրաքանչիւր աւուր ըստ կարգի։ Եւ
իմ տեսեալ զջերմեռանդ սէր նորա, մանաւանդ հայեցեալ յաղքատու-
թիւն ձեռինն և ի կատարեալ սէրն՝ ոչ խնայեցի յիս, այլ մոռացեալ
զտկարութիւն ծերութեան իմոյ և զգառնութիւն ժամանակիս՝ յանձն
առի գրել բազում և դառն չարչարանօք, նախ՝ զի օրինակ ոչ գոյր կա-
տարեալ, և այն որ կայր՝ Թերի և սղալ և պակաս, զի ի մինն աւետա-
րանն կայր յետ և յառաջ գրեալ և սաղմոսն ոչ, և միւսն՝ ներհակ սո-
րին։ Զոր զկսկիծ մտաց կրեցի գնելով երիս օրինակս, և յերից զու-
գորդն ընտրեցի՝ որչափ և կարացի, որպէս տեսանէ աստուած և ի
88 բ Թերեացն լիապէս գծագրեցի, շարագրելով զբոլոր ա ‖ մենին՝ զտը-
ւընջեանն և գիշերսյ, ի հեշտութիւն համբակն և անտարակուսելի
մնալ, այլ սկսեալ ի ծնընդենէն մինչև ի նոյն՝ վճարի։

Եւ այս եղև ի տունս Աղուանից, ի Թվականութեանս Հայոց տու-
մարի ՊԿԶ. (1417), յորում ամի կատարեցաւ ընԹացք լուսնին ըստ
Թուոյ մասանց նորին, զոր գրեալ էին նախնիքն մեր։ Յորում ամի
եղև երաշտ սաստիկ, և չորացան ամենայն բոյսք, և ջուրք ցամաքե-
ցան, ի հայրապետութեան տէր Կարապետ կաԹուղիկոսի տանս Աղուա-
նից, ի ժամանակի անիշխանութեանն քրիստոնէից։ Քանզի այն, որ
կայր մնացեալ շառաւիղ տանն Բիւրթելեանց՝ գնաց փախստական ի
Տունն Վրաց, որոյ անուն Սըմբատ կոչիւր, և անդ՝ ի յօտարութեանն
վախճանեցաւ։ Եւ մնացեալ Բ. որդիք իւր եկին ի հայրենիս իւրեանց,
և ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրի-
նաց։ Իսկ տանս Խաչենոյ բարեպաշտ ոմն կայր՝ Զազայ անուն, այն
փոխեցաւ յաստեացս, և մնացեալքն յազգէ սորին՝ Ջալալն և որդիք
նորին, և որդիք Զազային՝ Արղութէն և Ջալալադաւլէն, և եղբայրք նո-
րին՝ Էլէգումն և Էլէդանն՝ են ի ներքոյ ձեռին անօրինացն. և այսպէս
պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան։

Զի դառնացաւ ժամանակս և Թագաւորեաց ոմն Թուրքման անունն
89 ա Ուսուֆ, զի ‖ ճանաչիւր ըստ Թոյլ տալոյն աստուծոյ լինել կշտամբիչ,
ըստ այնմ Թէ զչարսն չարեաւ կորուսցէ, զի ի բառնալ գազանին չոր-
րորդի Թամուրն կոչեցեալ Կաղն, բռնացեալ Ուսուֆն, պատերազմեալ
ընդ որդիսն նորա երիցս անգամ, և սպան զնոսա, և մնացեալքն փա-
խըստական գնացին յաշխարհն իւրեանց։ Իսկ զընական խանն Ահ-
մատ կոչեցեալ, որ եկն կամաւն իւրով ի Բաբելոնէ ի քաղաքն Թաւ-
րէզ, և ի վերայ նորա եւս յարուցեալ Ուսուֆն, և սպան զնա։ Եւ
մնացեալ աստանոր միայն ամիրայն Շըբուանայ, յորոյ յապստամբելն
երիցս անգամ եկն ի վերայ նորա Ուսուֆն, և ի վերջին գալն՝ ձեռ-
բակալ արար զնա և զբազումս ի միջի նոցա, եսպան զԹշուառական
Թագաւորն Վրաց զԿոստանդին, որ եկեալ էր յօգնականութիւն իշ-
խանին Շըբուանայ, և զերկիրն առ աւար և գնաց։ Զայս չափ չարիս
առ գլխաւորս աշխարհիս հասոյց Ուսուֆն, իսկ առ փոքունսն զինչ

տասցից։ Զի վայրենացեալ զինուորք նորա ուր և հասանէին, ոչ զըն-
տանիսն գիտեն և ոչ զօտարսն, թալանեն և կոփեն զձեռնհասն իւր-
եանց, թէ ի ճանապարհի, թէ ի տան, թէ առանձին, թէ ի քաղաքի,
և այսպէս ոչ գոյր թիւ աղաղակի մերոյ։

89 բ Ահա այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց ‖ մերոց։ Եւ դեռևս
ի տարակուսի եմք, ոչ գիտելով թէ յառաջիկայսն զի՞նչ ծնանի մեզ և
կամ թէ որպէ՞ս տի զերծանիմք յայսպիսի դառն նեղութեանցս, ակն
ամենեցուն արտասուաթոր առ աստուած նայի, թերևս գթասցի ի մեզ
ողորմութեամբ։

Ցայսպիսի դառն և ի նեղութեանց միջի գծագրեալ եղև գիրքս
իմով ձեռամբ՝ նուաստ և յետինս բանասիրաց, սպղար ծնունդս
եկեղեցւոյ Մաաթէոս Մոնոզոնս, որ ի ծերացեալ .սրդանդէ ծընայ տե-
սանել զայս ամենայն վիշտս և այլ բազում ցաւս, զոր ոչ գրեցի։ Իսկ
տեղիք գծագրութեան սորա եղև ի սուրբ ուխտս Գանձասարայ, յեր-
կիրս Արցախական, որ այժմ կոչի Խաչէն, ընդ հովանեաւ սուրբ Նըշ-
խարացս Յովհաննու Կարապետին, որ ի բերանոյ տեառն գովեցաւ. և
ի նմանէ վկայի հաճոյ լինել, որ յամենայն ամի երիցս և չորս լոյս
ծագելով ի վերայ սուրբ Նշխարացն՝ ակներև ամենեցուն, որում կարի
եմք ցանկացեալ, և վասն սիրոյ նորին ոչ կարեմք հեռանալ աստի,
զի է ի վերայ ճանապարհի։ Եւ յայսմ աղէտիցս, որ վերոյ ասացաւ
նախ քան զգրել գրոցս* պատահեցաւ մեզ յաւար անկանիլ կրկին ան-
գամ ի նոյն չարասեռ ազգէն Թուրքմանայ։ Զի ի գնալն ի Շրուան
մեք նոցա հանդիպելով՝ նախ զմեզ յաւար հարին, և ապա գնացեալ
90 ա ածին զմատունս ի ծակ իժ ‖ ից, և դարձեալ բերին ի վերայ մեր զա-
նօրէն ազգն Թաթարաց, և յաւար հարին կրկին զսուրբ ուխտս, և ոչ
ինչ ի մարմնաւոր ընչից թողաց, բայց միայն մեք և սրբութիւնքն։

Իսկ յետ այսր ամենայնի ծփանաց և խռովութեանց և աւարի,
թախանձեաց զմեզ սիրեցեալ որդիս մեր Մանուէլ քահանայն, և ետ
գրել զսա ոչ ձրի, այլ գոյիւ չափ, զոր ինչ ունէր արկ առաջի մեր։
Եւ մեք ողորմութեամբն աստուծոյ և պարգևաց նորին սկսեալ, և
հանկ հանեալ հասոյց ամենողորմ աստուածն իմ, որում գոհութիւն
պարտիմ տալ յաւուրն բիւրս բազումս, որ ոչ յիշեաց աստանօր զմեղս
իմ և ոչ թերի եթող, այլ արար առ իս ողորմութիւն և զիղձս կա-
տարեաց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ աստուածա-
զարդ բուրաստանիս օրինակելով, և ընթերցմամբ, և կամ սոսկ տե-
սութեամբ, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացող սորին
[զՄանուէլ] քահանայ։**

---

* Հավանաբար ակնարկում է ստորև մեջ բերվող Բ. հիշատակարանը։

** Սույն հիշատակարանը պահպանվել է ԺԷ. դարի ընդօրինակությամբ։ Ձեռագրի մեծ մասի (էջ 39ա—226բ) ընդօրինակող գրիչը ստացողի անվան փոխարեն գրել է. «զայս անուն և զ.», չկամենալով կրկնել Մանուէլ քահանայի անունը։ Մաաթէոս Մոնոզոնի կողմից գրված բնագրով պահպանվել է այս հիշատակարանի միայն սկզբի մասը և Բ. հիշատակարանն ամբողջությամբ, որովհետև այն գտնվում է ձեռագրի հին մասում

Եւ ի կատարման գրոցս պարտիք՝ Երանի որում թողան մեղք,
ասել, և Քրիստոս որդի աստուծոյ, և զյիշատակա[րա]նս ընթեռնուլ
յամենայն ամի , զի և ձեր յիշատակն ընթերցցի առաջի աստուծոյ ի
դպրութիւն կենացն յաւիտենից։ Ցետ ամենեցուն ժտեմ և ես մեղսա-
մակարթ անձնս, ներգեեալս և սևացեալ ոգիս, փերևետեալ և ձևա-
գրեալ ի տիպս ողջանդամի, և ամենայն անդամօք հոգւոյ և մարմ-
90 բ նոյ ‖ անբժշկելի վիրօք խոցոտեալ ի բանսարկուէն, քանզի յերեւե-
լիսս օդիս և ի ներքոյ գայլ, ասացեալ բանիւք բազմօք, հեռացեալ
յամենայն անըրժելի կրից որում հաճոյանայ աստուած, յետինս ի
բանասիրաց և կրտսերս յորդիս եկեղցւոյ՝ Մատթէոս Մռնոզոնս, որ բա-
զում տառապանօք գծեցի ըստ իմում կարի, և ոչ կարացի որպէս վա-
յել էր ձեռում մեծանձնութեանդ զգեղեցկատիպն նկարել, որ վայել-
չականն է աչաց և դիւրընկալ մտաց. այլ ըստ մոլորեալ մտաց իմոց
անցուցի զհարկ գրելեացս՝ ոչ հետեեալ ձեռյն և արհեստագրչութեանն,
այլ միայն ճշմարտութեան և ուղղութեան և անթերի գոլոյն ի կար-
գի ընթերցուածոնս Վասն որոյ երես անկեալ աղաչեմ մտադիւրու-
թեամբ ընթեռնուլ և գծագրել որք գաղափարէք, զաւելորդն կշռել և
պակասութեանն ներել իմում տկար անօթոյս. և յորժամ զուարճա-
նայք ընթերցմամբ յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, խնդրելով ի
Քրիստոսէ զթողութիւն անթուելի յանցանաց իմոց, զի թերևս իջցէ
մասն ինչ ի սրբանըւէր աղօթից ձերոց և յողորմութեանցն աստու-
ծոյ յոսկերս հնացեալ մեղօք մեռելոյս և լուասցէ զաղտ մեղաց իմոց,
և ջնջեսցէ զձեռագիր իմոյս յանցանաց և արժանի արասցէ յետին
մշակացն...։

Բ

17 ր Այլ, ողբալի որդիք մարդկան,
Որ նախքան զգալն ի դատաստան
Եհաս վճիռ ատենական՝
Մահ տարաժամ յանկարծական,
Եհար զորդիս իմ զորբական՝
ԸզՄկըրտիչ մանուկ տըղայն,
Եւ ըզՆերսէսն աղքատական,
Եւ զԴանիէլ՝ մանուկ բարի,
Այն ինչ հասեալ տիս հասակի,
Ոչ հասարակ կենաց գիպեալ
Եւ ոչ բարեաց այսմ աշխարհի,
Այլ ի կանուչ ի հասակի
Թառամեցան ի մին տեղի։
Եւ այս եղև վասն իմ մեղաց,
Որ շատացաւ ի յիմ կամաց

(էջ՝ 1ա—38բ)։ Համեմատելով հիշատակարանի սկզբի մասի բնագիրը ԺԷ. դարի ընդօրի-
նակության համապատասխան մասի հետ, համոզվում ենք, որ այն կատարված է մեծ ջանա-
սիրությամբ և գրեթե առանց սխալների, ուստի և հրատարակվող բնագիրը լիարժեք է։

Եւ բարկացոյց ըզմեծն աստուած,
Որով ի յայս ժամըս էած։
Ապա եհաս ինձ ժամ լալոյ
Եւ ըզիըլխցուկս իմ թափելոյ,
Զի քոն զայս ամս գիրս գըրելոյ,
Երիւք ամաւք յառաջ այսոյ*
Ապանաւ արքայն Վըրացւանոյ՝
Այն Կոստանդին՝ գերեալն յոգւոյ,
Ի ձեռըն չար ազգ Թուրքմենոյ,
Որոյ Ուսուֆ անուն գոլոյ։
Եւ մեզ էած սուգ գերագոյ
'Ատ երկուց դիմաց և խորհըրդոյ,
Զի փոխանորդ զնա ունէաք
Մեր մեծ ազգին, զոր կորուստք,
Եւ ի տեղի աղտեղութեան,
Որ գայլք և հաւք ըզնա կերան,
Եւ կարապետ մեծի վըշտիս
Եղև աւէր մերոյ վանիս.
Նախ Փիրումար ոճն ի չարեաց,
Որ էր իշխան նորին զօրաց,
Եկն ի վերայ դաշտին Վատնեաց:
Եւ նախ ըզվանքս մեր թալանեաց,
Եւ ի վաղիւն էանց, գընաց,
Եւ զեղկելի դաշտըն կոխեաց,
Մասն ինչ զնոցին ապականեաց,
Իսկ որ իշխանն էր այն դաշտին
Էառ ըզզօրըս Շըրվանին,
Էանց յայս կոյս ի Կուր գետին,
Նախ ըզմեր վանքս կոխեալ յոտին
'Ի ապա զվերին լերին սորին,
Ցոր մընացաք խնամօք վերին
Թափուր 'ւ ունայն և լալագին։**

212

ԲԱՌԳԻՐՔ

Երևան 3202

Գրիչ՝ Զաքարայ
ա
Վայր՝ Խիզան

230 ը ...Արդ կատարեցաւ գիծս, որ կոչի Բառագիրք, ձեռամբ անի-
մաստ և անմար գրչի Զաքարայի սուտանուն քահանայի | | | *** կո-

* Զափածոյ այս հիշատակարանը, ըստ երևույթին, գրված է գլխավոր հիշատակարանից մի երկու տարի առաջ՝ հավանաբար 1415 թվականին։

** Հիշատակարանի սկզբում, ընդգծված տառերով, գրված է «Այս գրոցս չէ, այլ աշխարհի գրաղմանցն, զինչ անցք անցեալ է զայն է գրեալ ի վերայ իւրայնոցն»։

*** Երկու բառ քերված։

չեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Սարգսի զօ-
231 ա րա ‖ վարին և որդւոյ նորա Մարտիրոսի, և սուրբ Գէորգեայ զօրա[վա-
րին]։ Զպատահողք սորա զամ[ենե]սեան աղաչեմ զինչ կերպիւ և իցէ
յիշել ի պաղատանս յաղօթս ձեր զստացօղ սուրբ գրոցս՝ զԱւետիս
վարդապետն և զհարազատ եղբայրն իւր զՆերսէս կրօնաւորն՝ զգով-
եալն յամենայնէ, և զմարմնաւոր ծնօղքն իւրեանց, և զամենայն արեա-
նառուսն՝ զվերափոխեալսն առ Քրիստոս աստուած, աղաչեմ յիշ-
ման արժանի առնէք և աստուած յիշողացդ նովին չափով տացէ զիւր
առատ ողորմութիւնն։ Դարձեալ աղաչեմ յիշման առնել արժանի զմե-
ղաւոր գրիչս և զհայրն իմ զՄկրտիչ քահանայ՝ զփոխեալն ի Քրիս-
231 բ տոս | | | *

Այլ և գրեցաւ տառս ի յայսմ ամի, որ յարեան հարք[ի] վերայ
որդւոց և | | | զքա[ղաքն] և գնային ի Ղարա-Յուսուֆ[Ն | | | ի
ԺԱ. հարիւր—Ռ. (1,100—1000), և նեղէ[ին] զքրիստոնեայս | | | ծե-
ծել[ով] Թուրքերուն, և բազումք փ[ա]խեան և զերծան ի ձեռաց նոցա,
զոր տէր աստուած այց արասցէ | | | Հայոց, ամէն։ Եւ էր Թվ. ՊԿԶ.
(1417)։

Եւ այս եղև ի զօրութենէ աւագ սուրբ խաչին,
Որ վրէժխնդիր եղև Ամիր-Դայութիւն,
Զի յանցեալ ամին, որ զսուրբ խաչն առին
232 ա Զղա ‖ ւլն և զերդումն իւրեանց փոխեցին,
Եւ սուրբ խաչին տուգանք հասուցին.
ԾՌ. (50,000) յառաջըն աււին
Եւ ԻՌ. (20,000) ետև տօգնեցին։
Նոյնպէս և հայրն Ամիր-Դայութին
[Ե՞տ իւ]րո զհումքն ի յիւրեն որդին,
Երբ որ չեկաց ի յիւր հրամանին,
Դարձեալ էառ 'ւ աքսորեաց զորդին,
Եւ այս եղև զօրութեամբ խաչին։

Այլ և սխալանաց և խոշորութեան գրիս անմեղադիր լեր, զի
հանապազ ի տարտարոս ի ներս կայինք, և չփոթէր միտքս իմ ի հոգս
աշխարհիս։

Բ

Հետ. ստացող՝ Բարսեղ

Զվերջին ստացող այս սուրբ տառիս, որ կոչի Բառգիրք՝ զտէր
232 բ Բարսեղ երիցս երանեալ րաբունապետն, որք ընթեռն ‖ ուք յիշեսջիք
առաջի ան[մահ]ին և միշտ էին, ի յաներեկ օրն վե[րջին]։**

* 231 բ էջի սկզբի երկու տողն ամբողջապես, և մյուս տողերի ծայրերը՝ 2—3 տառի չափով, մաշվել ու դարձել են անընթեռնելի։

** Ըստ հնագրական տվյալների հիշատակությունը գրված է ԺԵ. դարի վերջին։

213

ԱԻՆՏԱՐԱՆ

Երևան 5444

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Հիզան

307 բ ...Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ
ոՑ ի լուսածնունդ զարմից սրբոյ Միոֆնի Ստեփաննոս անուն, կրօ-
նաւոր գոլով ցանկացօղ եղև այսմ հոգիանորոգ և կենսաբեր սուրբ
աւետարանիս, զոր ի վաղուց հետէ փափագէր այսմ լուսալըական և
աստուածախօս մատենիս։

Այլ և գրեցաւ սա ձեռամբ [յո]քնամեղ և փցուն [գր]չի Յովա-
նիսի, ի քաղաքիս Հիզան կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուա-
308 ա ծածնի, և սր || բոյն Սարգսի զօրավարի, և սրբոյն Գէորգեայ, որ է
սակաւ մի հեռի, կենաւք տառապանօք և բազում պանդխտութեամբ։
Ի թուականութեանս Հայոց ՊԿԶ. (1417), և ի հայրապետութեանն Նա-
հանգին Կիլիկեայ տեառն,* և մերայ հայրապետութեան տեառն Դաւթի
Աղթամարեցւոյ, հեզահոգի և հացատու ամենայնի և բարի ընդդէմ
չար հատուցանողաց։

Արդ, ստացաւ զսա սրբասէր կրօնաւորն Ստեփաննոս, որ է ամե-
նայն առաքինութեամբ զարդարեալ. նախ՝ զի հեզ է և խոնարհ, և ոչ
սրտմտող բնաւ և կամ բարկացօղ. և իբրև զԳրիգորիոսն վկայասէր՝
սիրօղ եղև սա ամենայն աւուրս իւր [աստուածա]խօս և աստուածա-
[շունչ մատե]նից և միշտ աշխատել[ով] ըստ տէրունական հրամանին,
բռամբ [յափշտա]կէր** զարքայութիւնն [երկ]նից ինքեան և այլ[ոց,
զ]ողորմութիւն տալով [օգնէ]ին], զի եղիցի որպէս և սուրբ ա[ւետա]-
րանս այս ի յիշատ[ակ հո]գւոյ իւրոյ և ծնող[աց իւ]րոց, հօրն Յովանի-
ս[ին, և մօ]րն՝ Ազըզին, և ամենայն երախտաւորա[ց | | | ...։***

308 բ ...Եւ արդ, աղաչեմ զամենեսեան՝ զմանկունսդ նորածնունդ սըր-
բոյն Սիոֆնի, որք հանդիպիք աստուածախօս սուրբ աւետարանիս կար-
դալով կամ օրինակելով, յիշեսջիք ի Քրիստոս զվերագրեալքս ի սմայ՝
զՍտեփաննոս կրօնաւոր, և զծնօղսն իւր, և զամենայն արեան մեր-
ձաւորսն իւր, և զանարժան գրիչս և զծնօղսն իմ ...։

Ի [յիշատակ մերոյ բանիս]
[Պարտիմք խառնել զբան աղէտիս]

* Անվան լրացման համար տեղ է բաց թողնված։

** Ձեռագրի աջ եզրին նորոգման ժամանակ թուղթ են փակցրել, այդ թղթի տակ են մնացել տողերի վերջին 4—6 տառերը։ Լույսի տակ պահելով դրանք աղոտ կերպով նշմարվում են ու տրված են մեր կողմից ուղղագիծ փակագծերի մեջ։

*** Շարունակությունը՝ 14 տող, պատռված է, պահպանվել են միայն նորոգման ժամանակ փակցված թղթի փակ եզող տողավերջերը, որոնք, սակայն, հնարավորություն չեն տալիս վերականգնելու պատռված մասի բովանդակությունը։

[Թէ որպէս] յայժմ դառնա...*
. . . .
Ց...անուոյն...
...սայ...ն... մեր ազգ[իս]
[Եղ]բայրն եհան եղբօրն ի...
Զարիւնն ջուր եցոյց, վ[այ] զիս։

Ուստի և նոյն...յայս դարիս
Տարած[եցաւ] ի յօր վերջինս,
Ցարոյց... չար մերոյ ազգիս,
Զյետինս չար քան զառաջինս։

Վկայելով Գօղ[ոս]...նիս
Թէ վիշտս յազգէ եհաս առիս,
Որպէս և ազգ իսմայէլիս,
Որ հալածէ զԻսահակիս։

Անունն է չար սոցա մեծիս,
Թուրքըստանաց խըրոխտ ղանիս,
Ղարա-Յուսուֆ սև մակագրիս,
Որ սևէ զազգս մեր և զազինս։

Նայ կայ 'ւ իշխէ Մերդնայ բերդիս
Եւ Թավրիժու մեծի Թաղթիս,
Նըւաճելով զքուրդ և զպարսիկս,
Գահանջէ հարկ և տոկոսիս։

Իսկ ընդ այս մեծ տրտմութիւնս
Մեզ յաւելաւ շատ [հ]եծութիւնս,
Ընդ յոյժ... մեր նեղութիւնս
....աւաց հե...թիւնս
Ս....տեցաւ....
Ցոյժ**

Բ

Յա Զբազմամեղ սուտանուն ծաղկողս՝ զՅովանէս յիշման արժանի արարէք, աղաչեմ, ով ոք որ հանդիպի սմայ, և աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, մեզ և ձեզ առհասարակ ողորմեսցի, ամէն։

---

* Այս երեք տողը վերցնում ենք Ղ. Փիրղալեմյանի «Նօտարք»-ից (էջ 152), ուր բերված է այս հիշատակարանից 11 տող։

** Էջի ներքին մասը պատռված է և շատ տողեր մաշված են։ Հնարավորին չափով աշխատեցինք վերականգնել բացակայող և մաշված մասերը։ Շարունակությունը, վերջին թերթի կորուստի պատճառով, չի պահպանվել։ Պահպանված տների սկզբնատառերով հոգվում է գրչի թերի անունը՝ «Ի Ցովանիս[է]»։

Գ

Սատացող՝ Ստեփաննոս

7ր Ես՝ Ստեփաննոս սուտ քահանայ,
Որ աբեղայ անուանեցայ,
Ի մահուանէ զարհուրեցայ,
Մանուկ տիաւք չարչարեցայ,
Ոչ տուն և տեղ ես ստացայ,
Արծաթ 'ւ ոսկի խորեալ չը կայ,
Զի քո խոստմանց տէր ցանկացայ,
Զոր Պետրոսի տուեր յապայ։
Մարգարէի բանին լւայ,
Որ երանի մարդոյ նայ տայ,
Թէ ում զաւակ ի Սիոն կայ՝
Ցաւիտենից ուրախանայ։
Արդ, աէր, ընկալ զայս, որ ստացայ,
Զորդի հոգւոյս որով ծնայ.
Եւ ընդ որդւոյդ աստուծոյ սայ
Քանքար բարեաց ինձ բազմանայ։*

214

ՇԱՐԱԿՆՈՑ

Փիրդ. Նոտ. 52, Լոնդոն, Բրիտ. Թնգ.

Գրիչ՝ Մարտիրոս
վայր՝ Հաղբատ

...Արդ, գրեցաւ գիրքս այս որ կոչի շարակնոց ի Թուականու-Թեանս հայկազեան ՊԿԶ. (1417) ամի, ի սուրբ ուխտս Հաղբատայ, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս, և սուրբ ԿաԹուղիկէիս, և սուրբ գե-րեզմանիս Սարկաւագ վարդապետիս, և Շուշանայ սուրբ վկային. ի վարդապետուԹեան մեծ րաբունոյս և քաջ հռետորիս Յովհաննէս վար-դապետիս, ի յառաջնորդուԹեան տէր Զաքարէի, ձեռամբ փծուն գրչի Մարտիրոսի սուտանուն աբեղայի, ի վայելս անձին, և յետ մահուն յիշատակ հոգւոյ կրկին ծնողաց և եղբարց...։ Յիշեցէք ... և զհօրեղ-բայրն իմ՝ զտէր Յուհան, զհայրն իմ զԽոցատեղ, և զմայրն իմ զՍոնդիկ, զեղբայրն իմ զՍարգիս, և զամուսինն զՄամքան, և զաւակսն իւրեանց, զքոյրն իմ զՈւստիանէ, որ միամտուԹեամբ սպասաւորեաց մեզ...։

* Սույն հիշատակագրությունը գրված է ստացող Ստեփաննոս քահանայի նկարին տակ։ Ստեփաննոսը նստել է ծալապատիկ էջի ձախ անկյունում և ձեռքերը պարզել վեր, ուր մեծ գիրքով իր «չորեքկերպյան» աթոռի վրա բազմել է Քրիստոսը։

215

ԱՎԵՏԱՐԱՆ

Երևան 4841

ա

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Ջերմաձորոյ երկիր, Ակոռոյ վանք

...Կատարեցաւ սուրբ աւետարանս ի յերկիրս Ջերմաձորոյ, *ի*
361ա ‖ *վանքս* Ակոռոյ, *ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի Նախա[վկայի],*
ի յիշատակ ինձ և եղբօրն իմոյ Մարտիրոս *քահանային, [որ դեռևս*
տղա գոլով փոխեցաւ առ Քրիստոս և մեզ սուգ անպակաս եթող], և*
միւս եղբօրն Սարգսին, *և ծնողացն մերոց* Յակոբայ *և* Մինայի:

Քրիստոս աստուած, թէպէտ որ անարժան ձեռօք յանդգնեցայ ի գործ աւետարանիս քո, բայց դու մի խպառ բարկանար ինձ և մի յիշեր զանթիւ չարիք տնաւրէնութեան իմո։ Ո՜վ մանկունք նոր Սիոնի սուրբ եկեղեցւոյ, պաւրինիմք ի Քրիստոս և ի սուրբ աղօթս ձեր, զի յորժամ կարդայք կամ օրին[ակ]էք [յիշեցէք] ի Քրիստոս աստուած զեղկելի անձն իմ զՅովհաննէս *գրիչ և զեղբայրքն իմ* զՄարտիրոս *քահանայն և* զՍարգիս, *և զծնաւղսն մեր* զՅակոբ *և* զՄինայ, *և զհանիկն իմ* զՏիրանց, *որ բազում աշխատեցաւ ի սպասաւորութիւն մեզ։ Այլ և զհօրեղբաւր որդին մեր* զՊետրոս *քահանայ, որ և մասնակից եղև սմա, և զծնօղսն իւր՝* զԹումէն *և* զԳոհարն, *և զձեզ յիշէ աստուած ի բարին, ամէն։*

Դարձեալ, աղաչեմք զձեզ դասք լուսերամից, յիշել ի տէր աս-
361բ *տուած զհօրեղբաւր դուստրն մեր* զԹամա‖րն, *որ մայրաբար գութ*
տարաւ ի մեզ...։

Դարձեալ...միոյ աստուած-ողորմոյ արժանի արարէք զկիսամահ անարժան գրիչս Յոհ[աննէս], *որ ոչ մեռած եմ և ոչ կենդանի, և զեղբարքն իմ* զՄարտիրոս, *և* զՊետրոս,** *և* զՍարգիս, *և զկենակիցն իւր, և զզաւակսն նոցա, այլև* զՄկրտիչն, *և զկենակիցն իւր* զԹամարն, *և զորդիսն նոցա* զՄխիթարն *և* զՅովաննէս *քահանայ, և զամենայն արեան մերձաւորքն մեր...։*

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի լաւ և յընտիր աւրինակէ ի թվարերութեանս Հայկազեան տումարի ՊԿԶ. (1417), ի հայրապետութեանս Հայոց տէր Դաւթի:

Եւս առաւել ողորմեա տէր աստուած Սիրունին, *և կողակցոյն* Համեմին, *և տղայոց՝* Հանէսին *և* Վանէսին, Հայրապետին, Թուրւանդին, Մուղամին, *և* Նարբնջին, Գուլստանին, *և* Առաքելին, *ամէն։****

---

* *Փակագծերի մեջ առնված նախադասությունը մեջ ենք բերում հիշատակարանի սկզբի անհետաքրքիր մասից։*

** *Ձեռագրի 6 ա էջի վրա Աստվածատուր ծաղկողը նկարել է Յովաննէս գրչին և նրա աջ ու ձախ կողմերում՝ ստացողներ Մարտիրոսին և Պետրոսին, որոնք ծալապատիկ նստած են գահի վրա բազմած Քրիստոսի ներքևում (տե՛ս նկ. 8)։*

*** *Վերջին պարբերությունը գրված է գրչին ժամանակակից այլ ձեռագրով։*

Բ

Ծաղկող՝ Աստուածատուր

15 բ Ո՛վ եղբարք, կարաւտելոցն ողորմութիւն արարէք, զի և դուք զձեր կարօտութիւնն առնուք ողորմածէն աստուծոյ։ Աղաչեմ զձեզ յիշել աղաւթիւք զիս՝ զանարժան արեղայ Աստուածատուր, որ ծաղկեցի զսուրբ աւետարանս, և զհանգուցեալ հայրն իմ զԱտոմ, և զմայրն իմ զՇաքար, և զեղբարսն իմ զԹումաբէկ և զՅոհանէս, և զհանգուցեալ զքոյրն իմ զՇահըրման, և զհանիկն իմ զԳօհար, և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Նկ. 8. Յոհաննէս գրչի և ստացողներ Մարտիրոսի ու Պետրոսի պատկերները։

216

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Փիրդ. Նոտ. 53, Հզուն աւանի եկեղեցի

Գրիչ
վայր՝ Յիպնայ վանք

...Աւարտեցաւ ճառս որ կոչի Ոսկեփորիկ ի վանքս Յիպնայ, ընդ հովանեաւ Կաթուղիկէիս, սուրբ Ստեփաննոսի և սուրբ Նշանիս Վասիլ Թագաւորի... ի թուականութեան Հայոց ՊԿԶ. (1417), ի դանութեան Ուռուֆին, և ի կաթուղիկոսութիւն Սըսայ Գրիգորի և յԱղթամարայ կաթողիկոսութեան տէր Դաւթի, ի չար և ի դառն ժամանակի... առ ոտս մեծ բաբունապետիս մերոյ Գրիգորի, որ մականուն Տերենց կոչի։ Սա բազում աշխատութեամբ ուսոյց ինձ զգիրս...։

217

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Փիրդ. Նօա. 52—53, Մշայ աբ. Կարապետ

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Նարեկայ վանք

...Ի թուականութեանս ՊԿԶ. (1417), ի հայրապետութեան տեառն Դաւթի, և թագաւորութեան... Ղարայ-Յուսուֆի...։ Իսկ իշխանութեան գաւառիս մերոյ Մելիք-Մահմուտի. լաւ պահէ զմեզ, աստուած զինքն հետ իւր առաջնորդին դասէ, ամէն։

Արդ, աւարտեցաւ սուրբ տառս, զոր արարեալ է եռամեծին Գրիգորի քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի։ Գրեցաւ ի վանս Նարեկայ, ընդ հովանեաւ սուրբ Վարդանայ զօրավարին, և աւարտեցաւ ի մեծ և հռչակաւոր սուրբ ուխտս սուրբ Յակոբ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, և սուրբ Յոհաննէս աւետարանչիս, և սուրբ Յակոբ հայրապետիս, և սուրբ Երից մանկանց, առ սուրբ աղբերս, զոր բղխեաց սուրբն Յակոբ, ձեռամբ գրչի Աստուածատուր կրօնաւորի։

218

ՄԱՇՏՈՑ

Փիրդ. Նօտ. 50—51, Աղթամար

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Տշող գիւղ

...Յիշեցէք ...զՍտեփաննոս քահանայ, որ գրեցի զսա, և զհայրն իմ զԳրիգոր քահանայ, և զմայրն՝ զԽութլումելիք, զհօրեղբայրն՝ զՄարտիրոս կրօնաւորն, որ... մարտիրոսացաւ, և զհարազատ եղբարսն իմ՝ զՅովհաննէս և զԱռաքել սրբասէր քահանայք։ Գրեցաւ ի գեաւղս, որ կոչի Տշող, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Սիոնին, և սուրբ Կիրակոսին, և սուրբ Ստեփաննոս Նախավկային, ի հայրապետութեան տէր Դաւթի, յոր էր թիւս ՊԿԶ. (1417), ի խնդրոյ կոշկակար բարեպաշտ Թովմայի:

219

ԱԻԵՏԱՐԱՆ

Վրաց թանգարան 17

Գրիչ՝ Բարսեղ

Փառք ...որ ետ կարողութիւն և ժուժկալութիւն ինձ՝ տկարի և մեղսամակարթ և անարժան ծրողի Բարսեղ անուամբ եպիսկոպոս այլ ոչ գործաւք՝ հասանել յաւարտ աստուածախաւս մատենիս...։

212բ ...Առաքեալ ումն անուն քահանա, սա կեցեալ յաշխարհի բազում վայելչութեամբ և յիշեաց զի յունայն և յանցաւոր և կորստական է,

ապա յոյս ի մտի եդ ստանալ յանցաւորաւքս զանանցն և մարմնաւորաւքս զհոգևորն. զամենայն ինչ զոր ունէր վաճառեաց ըստ տէրունական բանին և գնաց զհետ Քրիստոսի, ինքն երթեալ կնաւն իւրով փափաքանաւք տեսանել զտեղի տնաւրէնութեանն Քրիստոսի։ Եւ բազում նեղութեամբ գնացեալ նաւարկութեամբ՝ յերից ամսաւք նաւակածեալ, և անտի առաջնորդեալ վերին խնամոքն՝ հասեալ փափաքանաց իւրոց, և դարձեալ ի գալն՝ անկեալ ի ձեռս աւազակաց, սրախողխող լեալ վիրաւորեցաւ։ Սայ էր բնական ի Հերգա գաւառէ, ի նահանգէ Առաճա, ի քաղաքէ Բարսաւա, ի գեաւղջէ որ կոչի Պարիս, ժառանգ ունելով զՔրիստոս։ Վասն զի որք հետևին բարոյն ոչ յագին. յետ ամենայն բարեաց զոր գործեաց յաւել ևս՝ և ստացաւ զաւետա-
215 բ րանս ‖ զայս յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց, և ամուսնոյ իւրոյ։

Նաև որք ընթեռնոյք զսուրբ աւետարանս, յիշեցէք ի Քրիստոս զԱռաքեալ քահանայ, և զամուսինն իւր զՀերիքն, և զհայրն նորա զԱմիրն, և զմայր նորա զԱրուզն, և զեղբայր նորա զՏպէլն, զՄխիթարըն, հաւրեղբայրն զԽոցադեղն, և զզաւակն զՅակորն, և ծնաւղս ամուսնոյն իւրոյ զէդիլն և զՋանխաթունն, և զեղբայրսն զՄխիթարն և զԴամուր-Բուղէն, և զամենայն արեան մերձաւորսն նորա։ Նայ և զիս՝ զբազմամեղ գրիչս զԲարսեղ միայնամեղօրս, [որ] չեմ իսկ արժանի յիշման, այլ յուսամ ի սուրբ յաղաւթս ձեր, զի ձերով բանիւ և խնդրուածաւք շնորհեսցէ աստուած զյանցանս մեր և գտայց ողորմութիւն ի նմանէ...։

Գրեցաւ ի թվ. ՊԿԶ. (1417)։

220

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 1303

Գրիչ՝ Գրիգոր.

ա

284 ա ...Արդ, ես՝ Գրիգոր սուտանուն կրօնաւոր տառատպեցի զայս աստուածային գանձս իմաստից բազում աշխատութեամբ ի բազում վայրի, յիշատակ | | |* և այլ ամենայն արեան մերձաւորաց՝ հանգուցելոց և կենդանեաց՝ գանձ աստուածային, ի յընթեռնուլն աշակերտողաց բանի ի մամու[լ]ս աստուածային վարժարանի։

Արդ, հայցեմք ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ յոքնարկն և ախորժահամ մատենիս, յիշատակել զմեզ ի մաղթանս ուղիղս և ի պատկանաւոր խնդրուածս սեռն սիրով ի միտս բարի՝ միով տէր-ողորմայիւ, որ և դուք եղիջիք գրեալ ի մատեանս կենաց վերին դպրութեանն, ամէն։ Ի թվ. ՊԿԶ. (1417)։

* 1424 թ. ստացող Կիրակոսը ջնջել է նախկին ստացողների անունները և ջնջված երկու տողերի վրա գրել՝ «Կիրակոս վարդապետին, իւր հաւրն՝ Մարտիրոսին, և Նաղութինոյ։

Բ

90 ա Աւա՜խ, զի առաւօտ է և ես մեղօք երեկոյ, աւա՜խ։

Գ

94 բ Եւ զեղկելի գրիչս՝ զԹափօրս ի գործոց բարեաց՝ զԳրիգոր, աղաչեմ յիշել ի տէր, զի խիստ ըշտապ գրեցի, մանաւանդ՝ գիշերով։

Դ

96 ա Աւա՜խ, զմեղօք մեռելոյս յիշեայ, ո՜վ ընթերցող, զայս էջս յայլ երկիր և միւսն յայլ աշխարհ։

Ե

184 ա Աւա՜խ, թէ դառն եմ և տնանկ ի յիմ խելացս, ո՜վ եղբայր, յիշեայ զմեղօք մեռեալ ոգիս, զի միտքս խիստ ժխոր է, և օրինակս նօտր է, և միտքս ի գնալն խիստ քան զկենալն։

Զ

212 ա Աւա՜խ, զմեղօք մեռեալ հոգիս, զի ընդ հոգոյս և մարմինս է ցաւօք հեծեալ, թէ յիշես և դու յիշեալ լիցիս։

Է

217 բ Փառք Քրիստոսի, որ հասայ ի վերջս գծի, ո՜վ եղբայր, աղաչեմ յայսմ վայրի, զի միտքս յոյժ է աղտեղի և բազում խորհրդով ի լի, զի զոր սկսա՝ չկատարեցի, զայս կարդայ և զմեզ յիշեայ ողորմելի, զի աստուած ի տուրս է խնդրողի, և ձեզ և մեզ ողորմեսցի, ճրագով զայս նկարեցի, զաւուր պատճառն, որ կարգի, զի մեծ բարունին իմ պանծալի, որ Յովանէս վարժող կոչի, և նայ ծասկի միտս ցանկողի այսմ տառի։

Ը

256 ա Քրիստոս անիծէ զմեծաւոր և զամբախտ մարդն, որ յականջէն ի բերանն որչափ է։*

221

ԺԱՄՈՑ

Երևան 9087

Գրիչ՝ Եզեկիէլ

162 բ Յայսմաւուր յիշատակ սրբոյն Սահակայ Թաւրիզեցոյ, որ ի Շամախի քարկոծեցաւ, ի թվ. Հայոց ՊԿԶ. (1417), յապրիլ ամսոյ ԻԱ. (21), յայս հինգշաբթի աւրս նահատ[ակ]եցաւ ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ։

* Բ–Ը հիշատակագրությունները գրված են նշված էջերի ստորին լուսանցքներում, մանր տառերով։

222

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

«Արարատ», 1914, էջ 1035, «Ագուլիս և շրջակայք»

Գրիչ՝ Քրիստոսատուր
վայր՝ Ղրիմ, Քիմճակի վանք

290 ր *Փառք... որ ետ կարողութիւն ապիկար ծառայիս և զաւրացոյց ղմասունս բազկիս և հասոյց յաւարտ այսմ հոգենուագ մատենիս։*

Արդ, եղև զրաւ գրչութեանս ըստ հոլովման շրջագայութեան ամաց Թվակի ազգանաղեան ազինս աբեթական տումարի երկեակ՝ քառից հարիւրոց և տասանց վեցից և Թուոց վեցից (1417), յաշխարհս Հռճաց, *որ կոչի* Ղրիմ: *Ի հայրապետութեան տեառն* Գրիգորի *և մերոյ արքեպիսկոպոսին տէր* Կիւրեղին, *ձեռամբ Թարմատար և փցուն գրչի* Քրիստոսատուր *պիտակ անուն կրաւնաւորի, ընդ հովանեաւ հռչակաւոր երկնահանգէտ և սուրբ ուխտիս, որ կոչի* Քեմճակի *վանք, յանուն կենսակիր մօրն լուսոյ սուրբ Աստուածածնին, և առ հանգստարան երջանիկ և սուրբ հօրն մերոյ խաչաչարչար խոտաճարակ մեծ ճգնաւորին Քրիստոսի և տիեզերալոյս* Աւետիք *վարդապետին՝ յոյժ վայելուչ զուարթատեսիլ և տրամահալած լեառնային և դաշտային ծովահայեաց։ Արդ, այսմ հոգեպատում սուրբ կտակիս ... ցանկացաւղ եղեալ սրբասնեալ և կուսակրաւն քահանայն* Մաղաքիա, *և ըստացաւ զսա արդեանց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ և հրահանգ և վարժիչ հոգւոյ և մտաց, և յիշատակ ծնաւղաց իւրոց ...։*

223

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ

Կիպրոս, Նիկոսիա. ՀԱ, 1938, սյուն. 227—229

Ցանկ գրոց ոմն գրասիրի

Ի թուականս ՊԿԷ. (1418) ի հոկտեմբերի ԻԵ. (25)-ն, ի յանուն աստուծոյ, գիրք որ կայ ինձ այսչափ.

Ա. Մէկ Աւետարան մի.
Բ. Մէկ Աւետարանի մեկնիչ Յոհան գլխոյն, Անան[իայ]ին.
Գ. Մէկ Նաւտր Նարեկ մի.
Դ. Մէկ Նաւտր Նաւմաւս մի, առանց կող.
Ե. Մէկ մեծ Կանոնք, վարդապետին տված.
Զ. Մէկ այլ Նաւմաւս, միջակ գրի, ցանկն ի վերջքն.
Է. Մէկ այլ Պրոկլի Գիադոխոսի.
Ը. Մէկ Կիւրղի պարապմանց, Նաւտրգիր, Մելքիսե[թ].
Թ. Մէկ Հաւաքմունք, իմ գրած է.
Ժ. Մէկ Արտաքին՝ Սահմանք և Սոկրատ և Պէրի արմէն[իաս].
ԺԱ. Մէկ Սաղմոսի մեկնիչ, ընդ կանոնի Վարդանա.
ԺԲ. Մէկ Աւետարանի մեկնիչ Յոհաննու ժողովածու Վարդանա, դասի.
ԺԳ. Մէկ Երգ երգոցի մեկնիչ, Նարեկա Գրիգորի.
ԺԴ. Մէկ Բառգիրք և Գրչութեան խրատ՝ ի մի.
ԺԵ. Մէկ Քարոզգիրք, ախթարմի է.
ԺԶ. Մէկ Կանոնք, ծաթգիր.
ԺԷ. Մէկ փոքրիկ Նարեկա լուծմունք.
ԺԸ. Գրիգորի Նիւսացոյ կազմութեանց.
ԺԹ. Մէկ գեղեցիկ Հաւաքմունք աւետարանաց.
Ի. Մէկ Մեկնիչ արարածոց, Եփրեմի.
ԻԱ. Մէկ Ղուկասու մեկնիչ, կրկին՝ Իգնատիոսի և Կիւրղի։
ԻԲ. Մէկ այլ իմաստասիրական՝ Պրոկլի.
ԻԳ. Մէկ մեծ արարածոց մեկնիչ դասի, ժող[ով]ած Վարդան վարդապետի.
ԻԴ. Մէկ Աղուանից գաւազանք.
ԻԵ. Մէկ Եւսեբի գաւազանք, մագաղաթ ձեռագիր։
ԻԶ. Մէկ Լուծմունք իմաստասիրաց Պերիւմեն (իմա՝ Պերի արմենիաս)
ԻԷ. Մէկ մեծ Քարոզգիրք, լաւ.
ԻԸ. Մէկ այլ փոքր Նաւտ[ր] և ֆռանկի թուխտսն.
ԻԹ. Մէկ Հարցմանց։

224

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑՒՈՅ

Երևան 1094

400 բ *Աբխտղոմին գրէնքն, որ կայ՝ այս է. Բ. Տաւնապատճառ, Ա. Սաղմոսի մեկնիչ, Ա. Արարածք, Ա. Արարածոց մեկնիչ, Ա. Առակս, Ա. Ցեսայի, Ա. Ծառընտիր, Ա. Տեառ, Ա. Նեղոս, Բ. Նոհ (°), Բ. Ջուխտ սարծուղտ, չարմին, հացզորեն (°)։**

225

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 3525

ա

Ծմբագրող՝ Յակոբ Ղրիմեցի

336 բ *Արդ, ես՝ Ցակոբ մեղաւոր վարդապետս Ղրիմեցի, որ ի խաչելութեան քարոզս աշխատասիրեցայ, աղաչեմ զձեզ յիշել ի տէր միով բանիւ։*

բ

Գրիչ՝ Յովանէս

486 բ *...Ի Թըւիս Հայկազան տօմարի Պ.-երորդի Կ.-երորդի և Է.-երորդի (1418) գրեցաւ և յանկ ելեալ [աւարտեցաւ] տառս աստուածային, և բուրաստանս երկնայ[ի]ն, դրախտ եդեմային, և ծառս կենաց անմահութեան պտղոյն...։*

*Արդ, աւարտեցաւ սա յերկիրս | | |,** ընդ հովանեաւ սուրբ*
487 ա *Աստուածածնիս | | | քանզի ըստ ասիցն իմաստասիրին, թէ այս պատկեր է՝ առն վեհին Պղատոնի, զոր գովելոյ անգամ ոչ եմ արժանի...։*

Արդ, ես՝ [Յովանէս]*՝ մեղօք մեռեալ և բազմավէր ոգի նվաստ վարդապետս շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի բազում և յոյժ տառապանօք և խիստ ջանիւ։*

*Արդ, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ օրինակելով. յիշեցէք ի մաքրափայլ և ի սրաթուիչ յաղօթս ձեր զ*Յովանէս *ստացողս և զծնօղսն իմ, զհայրն իմ | | | և զմայրն իմ | | | և զքոյրն իմ | | | և զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիս և զփոխեցեալսն ի Քրիստոս, և լի բերանով աստուած-ողորմի ասացէք նոցա, աղաչեմ զձեզ, և դուք որ յիշէք՝ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ։*

** Տեղագրում ենք նախորդ հիշատակարան—գրացանկին առընթեր, նկատի ունենալով ամբողջականության ընդհանրությունը։ Ըստ հնագրական տվյալների գրված է ԺԵ. դարում։*

*** Ուղղահայաց երեք գծիկներով այստեղ ցույց ենք տալիս հետագա ստացողներից մեկի կողմից միտումնավոր քերված բոլոր այն բառերն ու տողերը, որոնք վերաբերել են ձեռագրի գրչության հանգամանքներին։*

Դարձեալ, եւ առաւել ծունր կրկնեալ աղաչեմ զսուրբ հանդիպողքդ յիշել ի սուրբ յաղօթս ձեր զհոգևոր հայրն իմ և զբազում երախտաւորն | | |, զի նա պատճառ մեզ այսմ ամենայն բարութեան, զոր աղաչեմ յիշատակել յաղաւթս ձեր | | |, զոր տացէ նմա տէր աստուած մեր փոխարէն զարքայութիւնն երկնից...։

*Դարձեալ յիշեցէք յաղօթս ձեր [զ*Յակոբ *վարդապետ* Ղրիմեցին]*, *որ եկն ի հեռաստանէ և բազում աշխա[տութեամբ | | |** զայս ԾՀԷ. (177) քարոզս և է ինչ, զի ինքն շարադրեաց ի շնորհաց սուրբ հոգոյն, զոր տացէ նմա տէր աստուած մեր զփոխարէն վաստակոց իւրոց։ Այլ և | | | եղբայր մեր, որ աշխատութեամբ սպասաւորեաց մեզ։ Այլ և | | |, որ հոգաբարձու եղև մեզ, հատուցէ նոցա տէր աստուած մեր ըստ վաստակոց նոցա զարքայութիւնն իւր։ Եւ դուք խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի օրինակն յայլ աշխարհ կերթայր, և զիս փութացուցանէին։*

226

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան 2137

ա

Խմբագրող՝ Յակոբ Ղրիմեցի

123 բ *Զմեղուցեալ* Յակոբ *վարդապետս* Ղրիմցի, *որ զքարոզս շարադրեցի ի շնորհաց հոգւոյն յիշեցէք ի տէր Քրիստոս, աղաչեմ։*

բ

Գրիչ՝ Իգնատիոս

192 բ *Ցորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս աստուած բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին՝ մանաւանդ ստացողի սորա* Յովսէփ *վարդապետի, և գծօղի* Իգնատիոս *սուտ կրօնաւորի, և շարադրողի* Յակոբ *վարդապետի* Ղրիմեցւոյ, *և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։*

գ

234 ա *Զստացող լուսազարդ կտակիս* զՅովսէփ *վարդապետն, և զհարազատ եղբարքն՝* զՆիկողայոս *քահանայն և* զՅովանննէս, *և զքուերքն իւր* Մարթա *և* զՄրւաթ, *և զամենայն արեան մերձաւորս իւր յիշեցէք առ բարին աստուած։*

դ

5 բ *Զաստուածարեալ և զխաչընդուս կրօնաւորն* զԱնդրէաս *աղաչեմ յիշել ի տէր, որ փոքր մի աւգնական եղև մեզ ի գլխագրելն և համարագրելն, և աստուած զձեզ յիշէ, ամէն։*

---

* *Նույնպես քերված է, սակայն երկար և ուշադիր քննությունից հետո հնարավոր եղավ վերծանել։*

** *Քերված է 1,5 տող։*

227

ԱՌԱԿՔ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՅԳԵԿՑՒՈՅ ԵՒ ԱՅԼ ԳՐՈՒԹԻՒՆՔ

Երևան 601

Գրիչ՝ Տանձակաճ
վայր՝ Խոբին անապատ

Ա

201 ր ...Գրեցաւ գիրս այս ի Խոբին անապատիս՝ ի հռչակաւոր և ի սուրբ ուխտիս, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս և կենսաբեր սուրբ Նշանիս, ձեռամբ յոգնամեղ Տանձակաճ մեղապարտիս։

Արդ, յերես անգեալ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք յիշեցէք զմեղապարտ ծերուկս, ամենայն մերձաւորաւք և ամենայն զարմիւք՝ կենդանեաւք և ննջեցելեաւք, և զմեր տէր Կիրակոսս եպիսկոպոս, և զմիաբանքս ամենայն, ի խնդրոյ դեռաբոյս կրաւնաւորիս՝ զՍիմէոնս՝ ծնողիւք և ամենայն զարմիւք...։

Գրեցաւ ի թվին ՊԿԷ. (1418)։

Արդ, աղաչեմ կրկին զամենեսեան, որ զայս գիրս ընթերցի՝ գրոյս մեղադիր ոչ լիցի, և որ յիշէ զմեզ ի բարին՝ նոյն և ինքն յիշեսցի։ Եւ որ զայս գրկունքս ընդ ձեռամբ ունիցի, աղաչեմ, զի հանապազ ընթերցի, այնչափ տարոյ իւր մեղքն և իւր ծնողացն և ամէն զարմիցն թողցի, նոյնպէս և լսողն այսմ տառի, և տէրն ամենեցուն մեզ և ձեզ ողորմեսցի, ամէն, և որ զամէնն ասէ, ամէն։

Հետ. ստացող՝ Ջուլաճա՞կ

Բ

Արդ, աղաչեմ կրկին զամենեսեան, որք հանդիպիք այսմ տառիս յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող տառիս | | |*
202 ա Ջ]ուլաճակս, և | | | ան, և զաւա[կս նորա՝ զհանգուց] [[եալսն ի Քրիստոս, և զամենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանիս և զհանգուցեալս, որ ստացան զսայ ի հալալ արդեանց իւրեանց, յիշատակ իւր և ծնողաց իւրեանց, ՃԶ. (180) դրամ, և ետուն ի Վասկերս, ի ձեռն Աղազար էրիցուն, որ քանի ի հաւն կենայ՝ կարդայ, ու եփ երթայ՝ ի հետն տանի, և մի իշխեսցէ զսայ ծախել կամ գրաւկան դնել, այլ հանապազ ընթեռնուլ։ Եւ որ զայս գիրքս ընդ ձեռամբ ունիցի, աղաչեմ, զի հանապազ ընթերցի, և յիշել զմեզ ի բարի. ընդ նմին յիշեցէք զՀայրապետ քահանայն, որ յորդորեաց զՋուլաճակ, որ ետ զգիրքս ի Ղազար էրէցն, Ժ. (10) դր[ամ] ես տուի, ու ՃԶ. (180) Ջուլա[ճակն | | | ողորմեսցի առհ[ասարակ | | | ն, ամէն։**

* 202-րդ թերթը ներքևից պատռված է, վերջին երեք տողերի կեսից ավելին չի պահպանվել։

** Սույն հիշատակարանի գրության տարեթիվը հայտնի չէ, ըստ հնագրական առվյալների գրված պետք է լինի ԺԵ. դարում, ձեռագրի գրությունից (1418 թ.) ոչ շատ հետո։

228

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 2143

Գրիչ՝ Յակոբ

վայր՝ Խառաբաստայ վանք

486 բ ...Արդ, ի յամի ծննդեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի
հազարերորդի չորսհարիւր և քսաներորդի և ի Թուականիս Հայկա-
զեան տոհմիս տումարիս ըստ հոլովման ամաց ՊԿԷ. (1418), գրեցաւ
գիրքս քարոզութեան յերկուց հատորաց մեծ վարժապետին քաջ հռե-
տորի և անյաղթ փիլիսոփային, արթուն անուն դերապատիւ սուրբ
բաբունապետի Գրիգորի՝ աշակերտի Յովհանու Որոտնեցւոյ, ի կարգէ
աստուածաբան վարդապետաց՝ երանելոյն Գրիգորի աստուածաբանի,
Կիւրղի և Աթանասի՝ միաբանութիւն դաւանողաց զբանն աստուած
միացեալ ի մարմնի, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի, և աղօթք
սոցա ի վերայ ամենայն աշխարհի, ձեռամբ անարհեստ և անի-
մաստ, մեղսամած, մատնադեղև սխալագիր գրչի Յակոբի՝ անարժան,
ծոյլ և մեղսասէր կրաւնաւորի, ի յիշատակ և ի վայելումն աստուա-
ծապարփակ հոգիընկալ և երանաշնորհ քաջ բաբունապետին և տիե-
զերալոյս վարդապետին Կարապետի, ի վայելումն անձին և ի յիշա-
տակ բարի ծնօղաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն...։ Այլ
և զաստուածամերձ և զաստուածարեալ զհոգևոր հայրն իւր զտէր
Զաքէոս եպիսկոպոսն, որ բազում ջանիւ և աշխատութեամբ աշխա-
տել է ի յուսուցանել և ի յառաջնորդելն սուրբ ուխտիս, զոր և տէր
աստուած զասաւորեսցէ զհոգի նորին ընդ սուրբ հայրապետացն
Գրիգորի, Ներսէսի և այլ սուրբ հայրապետացն, ամէն։

Գարձեալ, աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի, որք հանդի-
487 ա պիք այսմ հոգիաբուխ պատգամացս, յիշել ‖ առաջի անմահ գառինն
Յիսուսի Քրիստոսի զաստուածաբան վարդապետն զԿարապետ, որ
մեծաւ տաժանմամբ և եռափափաք սիրով ետ գրել զտենչալիս ոգւոյ
և զգերահրաշ իմաստութիւն և զոգէշահ լուսաւոր վարդապետութիւն
մեծ հռետորին Գրիգորի, զոր և պաղատիմք առ բարերարն աստուած
պահել զսա անփորձ և անբասիր մինչ ի խորին ծերութիւնն, ամէն։

Արդ, գրեցաւ սա ի յերկիրս Քաջբերունի, ի սուրբ ուխտս Խա-
ռաբաստայ, ի հրեշտակաբնակ կայարանս սրբոց վարդապետաց և
ճգնաւորացն առաջնոց, ի դրունս տիրամօր Աստուածածնիս, և սուրբ
Ստեփանոսի, և սուրբ Սարգսի, հրամանաւ գիտնական և արդիւնա-
կան հռետորի Կարապետ վարդապետի, ծնունդ և ի սնունդ մաքրա-
փայլ որդւոց մօր մերոյ Աւոմնի, ի յիշատակ իւր և իւրոցն ամենայ-
նի՝ հարազատ եղբարցն խաչաչարչար մշակին և կենդանի նահատա-
կին Յովանէս սրբասէր կրօնաւորի՝ առաջնորդի սուրբ ուխտիս, զի չէ
պակաս յառաջին սուրբ հարանցն, զոր և տէր աստուած պահեսցէ
զսա ի կամս իւր և յետ աստեացս ընդ սուրբ հարանցն դասեսցէ և
պսակե[սցէ | | | զԱզիզբէկ և զզաւակսն [իւ՞ր], ամէն։

Այլ և զմարմնաւոր ծնօղսն՝ զՄարգարէն, և զմայրն, և զհոգևոր

հայրն ակը Զաքէոս եպիսկոպոս՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և զքեռորդին՝ զտէր Սանփաճոս նորընծայ եպիսկոպոս սուրբ ուխտիս, և զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիս և զհանգուցեալսն, լսել տայ զերանաւէտ ձայնն, որ ասէ՝ Եկայք աւրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն, ամէն։

Դարձեալ աղաչեմ զամենեսեան, որք օգտիք ի սմանէ յիշեցէք յերկնարացիկ և յաստուածամերձ յաղօթս ձեր զիս՝ զանիմաստ և զսխալ գրիչս զՅակոբ, որ գրել սորա ի հարկէ և ի սիրոյ եղև և ոչ մակացութիւն արուեստից։ Եւ հայցեմք յամենայնէ ներումն գտանել սխալանաց, որ աստ գտանի, քանզի կար մեր այս էր։

Զի թէ օգուտ ումեք լիցի՝. շնորհակալութիւն հոգւոյն շնորհաց եղիցի՝ և կաթիլ աղօթից ձերոց ցօղեսցէ ի տապան իմ գերեզմանի և սուրբ հոգևոր հօրս իմոյ Կարապետ վարդապետի, որ տեսականաւն և գործնականաւն զարդարեալ է։ Որ օգնական եղև մեզ յօժար կամօք
487 ր և անկեղծ սիրով կերակ‖ր[եաց զմեզ քա]ջալերելով, և ամենայն պիտոյիւք, զոր հատուսցէ սորա միոյն հարիւրապատիկ, հազարապատիկ և բիւրապատիկ, կրկին կենաւք, ամէն։ Այլ և յետ Քրիստոսի երախտաւոր հոգևոր հայրն իմ զմեծ վարդապետն Գրիգոր, որ զսակաւ գիրս ուսոյց մեզ, նաև զուսուցիչն և զմարմնաւոր երախտիքն զոր ունին ի վերայ մեզ՝ զաստուածապարփակ հոգին զԹումայ վարդապետն, որ զօրինակն շնորհեաց և յաջողեաց, և զՄաթէոս կրօնաւորն, որ բազում երախտիք կա ի վերայ մեզ։ Այլ և զաստուածաբեալ կրօնաւորքն՝ հարազատ եղբարքն, որ զպակասութիւն սորա լցին օրինակ շնորհելով, և զՄկրտիչքն, որ սակաւ ինչ աշխատեցան ի պակասութիւն սորին։ Եւ դարձեալ, աղաչեմք զամենեսեան, որք օգտիք ի սմանէ ուսանելով, և կամ օրինակելով, և կամ այլ ինչ իւիք, յիշեսջիք ի բարին Քրիստոս զվերոյասացեալքն՝ զԿարապետ վարդապետ, և զեղբարքն իւր, և զայլ ամենայն արեան մերձաւորսն, և զայնոսիկ, որ ի սուրբ գիրքս երախտիք և աշխատանք ունին՝ մեղաց թողութիւն խնդրեցէք և լի սրտիւ և առատ բերանով աստուած-ողորմի ասացէք, և աստուած ձեզ ողորմի և ձեր ննջեցելոցն, ամէն։

229

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. նոտ. 54—55, Բերկրի՝ ի վանս Տէր Յուսկան որդւոյն (Արդեշան)

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Բերկրի

...Արդ, գրեցաւ քարոզութիւն սուրբ աւետարանիս Քրիստոսի աստուծոյ մերոյ... ի թուականութեան Յաբեթական տոհմիս տումարի ՊԿԷ. (1418)-երորդի, ի լուսազարդ և քրիստոսաբնակ անապատիս տէր Յուսկայ որդւոյ... ի գաւառիս Տարբերունեաց, որ այժմ Բերկրի [կոչի], ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս, սուրբ մօրս լուսոյ Տիրամայր աստուածածնի կուսին, և սուրբ Կարապետին, և սուրբ

Ցարութեան, ձեռամբ յոգնամեղ գրչի Յակոբ սուտանուն կրօնաւորի, ի խնդրոյ սրբասէր Մկրտիչ քահանայի, որ է կարգեալ ի սպասաւորութիւն ժողովրդեան Քրիստոսի, յիշատակ բարի իւր և ծնողաց իւրոց՝ հօրն Օզբէկին, և մօր իւրոյ Խութլու-Խաթունին, և ծաղկեալ զաւակաց իւրոց Պետրոսին և Թումային... ի հալալ արդեանց մօրեղբօր իւրոյ և քեռոյն Ստեփաննոսին, և Մարտիրոսին, քրիստոսասէր և բարեպաշտ տանուտէրացն Բերկրոյ...։

[Ցիշեցէք] զերջանիկ և զերանաշնորհ քարոզն կենաց, զարժանին յիշման՝ զերախտաւոր հայրն մեր զՄկրտիչ վարդապետ, զառաջնորդ սուրբ ուխտիս, որ բազում բարութեան մեզ պատճառ եղև, որ և պահեսցէ զսա Քրիստոս աստուած անփորձ և անբասիր կենօք մինչև ի խորին ծերութեան, ամէն։

230

ԳԻՐՔ ԳԱՆՁՈՒՑ ԿԻՒՐՂԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ

Երևան 4009

Ստացող՝ Յովաննէս
վայր՝ Հերմոնի վանք

231 բ ...Արդ, ես՝ վերջինս և անպիտանս ի ծնունդս եկեղեցոյ Յովաննէս պիտակ խնդրող բանի ի յոլով ժամանակս ցանկացող եղէ սուրբ և հոգիընկալ և աստուածունակ մատենիս լուսաւոր և լուսաւորիչ բանիցս, սուրբ և հռչակաւոր ախոյանին սուրբ և ուղղափառ հաւատոյ՝ առնն աստուծոյ սրբոյն Կիւրղի: Եւ ետու գրել զգանձարանս աստուածային միեղէն եղբարց աշակերտեալ անձանց, որպէս զի և գրեսցին նոքա ի գիրն կենաց անջնջելի դրոշմամբ։ Այլ և ես՝ տկար անձամբ զպակասն լցի յետոյ՝ ի կազմած ժամանակս։ Արդ, որք հանդիպիք ի սմա ընթերցմամբ կամ օրինակելով՝ յիշէք ի մեղսաքաւիչ և ի սրբարար յաղօթս ձեր Յովաննէս մեղսաներկ անձն, ասելով թէ՝ տէր աստուած Ցիսուս Քրիստոս, ողորմի մեղաւոր և բազմավէր Յովաննէս սուտանուն վարդապետին, և աստուած զյիշողք յիշէ յիւր յարքայութիւնն, ամէն։

Գրեցաւ ի վանքս Հերմոնի, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչիս, ի թվ. ՊԿէ. (1418), ի փառս և ի գովեստ սուրբ երրորդութեանն և միոյ աստուածութեանն՝ ուրհնելոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

| · | | | | · | · | | | | ⁞ ⁞ | ⁞ | | : | | ⁞ | · | | | | ·
| · | | | : | · | | | | ⁝ | | | | ⁞ | | | ⁝ : | | | | ⁝ :
| · | | | : | | ⁝ : | | | ⁝*

* Կետագծային ծածկագրով կարդացվում է «Առաքել ծառայ աստ[ծ]ու, ամէն»։

231
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ
Փիրդ. Նոտ. 55—56, Վան

Գրիչ՝ Մկրտիչ
Վայր՝ Բաղիշոյ գաւառ, Գոռ գիւղ

| | | Ըստ որում և սրբազան և մաքրամիտ կրօնաւորն Մարտիրոսն՝ խնդիր եղեալ եռափափագ սրտիւ և ստացաւ զկարմրերանգ և զլուսաբոլբոջ կտակս... ի վայելումն անձին իւրոյ... յիշատակ բարի ծնողաց իւրոց՝ Աբրահամուն և Քամալին, և եղբարց իւրոց Կիրակոսին և Մկրտչին...։ Եւ ես... մեղսամած և տարտամ ոգի Մկրտիչ գրիչս, որ կոչիմ սարկաւագ, բայց բացասութեամբ և ոչ ստորասութեամբ, զի գործով և խորհրդով ես վատթարագոյն գտանիմ քան զամենայն ոք ի ռամկաց, և զարտուղի մարմնական գնացիւքս, քանզի շնչմունք զանազան տապախառն փորձութեանց շուրջ զմեօք մածեալ կայ, և ախտք անհնարինք և հեշտութիւն ձգիչ, կարիք ի ձեռին, և անմտութիւն մերձ, ծուլութիւն խաւարեցուցիչ և անարիութիւն պատեալ զինև։ Արդ, թէ սխալանաց հանդիպիք՝ վասն այսր ամենայնի անմեղադիր լերուք...։

Ի մեծ տարակուսանս կայի վասն դառնութեան ժամանակիս և աւերման աշխարհիս. այլ զազգիս մերոյ զտառապանս ով կարէ ընդ գրով արկանել. քանզի ի բազմանալ մեղաց մերոց փակեցաւ դուռն ողորմութեան աստուծոյ, և պատուհանք բարկութեան բացան և ի մերում ժամանակիս...։

Գրեցաւ սա ի գաւառն Բաղիշոյ, ի գեաւղս որ կոչի Գոռ, ընդ հովանեաւ մեծաշնորհ և տիեզերահամբաւ սուրբ և գերապատիւ առաքելոյն Անանիայի և սուրբ Գէորգայ, ի կաթուղիկոսութեան մեր աթոռոյն տէր Պօղոսի, յամի ՊԿԷ. (1418) Հայոց թուականիս, բայց եղև կատարումն գրոյս արաց ամսոյ ԻԱ. (21), յաւուրն հինգշաբթի։

232
ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ
Երևան 5175

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Վարագ

...Արդ, եղև պատճառ մակագրութեան սորա վասն չորից։ Նախ, զի ես՝ Նիկողայոս, անկիրթ գոլով ուսման և կարդալոյ, վասն ճանգարման ժամանակիս և ծուլութեան իմոյ, զսայ իբրև զվարժարան և լցուցիչ թերութեան իմոյ գծագրեցի։ Երկրորդ, զի յայսմ
309 ա ժամանակիս վարժայպետն մեր Գրիգորիոս կրկին նորոգ || եաց զեկեղեցիս Հայոց բազում գրեանս առնելով և զխոր և զխրթին բանս գրոց ի յայտ ածելով։ Եւ ես՝ սուտանուն աշակերտ և յետին, որ և յետնեալ գտայ քան զամենայն, վասն զի լուս[աւ]որ հոգի վարդապետն իմ Վարդան յաստուած փոխեցաւ, և ես տարակուսեալ մնացի ժամանակ ինչ թափառական, շրջեցա ի բազում տեղիս, և ոչ ուսայ զգիրս վասն ծուլութեան իմոյ։ Ապայ յետոյ ցանգացայ սմայ և ի

չատէն զսակաւն, ի մեծէն զփոքրն գրեցի, զի յիշատակ նորին ան-
ջինջ եղի[ցի] յեկեղեցի։ Երրորդ, և ես՝ անարժան[ս], ոչ ունելով ինձ
յիշատակ բարի յեկեղեցի, որպէս բազումք զբազում ինչս ստանան
ի վերինն Սիոն, ես զսա ստացա ինձ յիշատակ, զի որպէս զնքարա-
կիտ այրի կնոջն ընդալ, և զսայ ընդալցի բազմապարգ[և]ն տէր։
Չորրորդ, զի զամենայն տնաւրինական տաւն փրկչին և զիւրաքան-
չիւր սրբոցն սովաւ կատարելով պայծառ տաւնախմբութեամբ, զի և
ինձ լիցի մասն կաթիլ մի շնորհի յառատաձիր պարգևի բարերարի
փրկչին իմոյ Յիսուսի, և համաւրէն սրբոց նորին բարէխաւսի, և ի
ձերդ աղերսի, որք փոյլիք միշտ յեկեղեցի։

Արդ, գրեցաւ լուսաւոր և հոգեկեցոյց վարդապետութիւնս մեծ
հեռետորին և արի և քաջ ախոյանին ընդդէմ ամենայն հերձուածո-
ղաց և չարափառացն գնդին սատանայի ի գերայհռչակ և յերկնայ-
հանգէտ և աստուածարնակ ուխտս Վարագ, ընդ հովան[ե]աւ սուրբ
և աստուածահրաշ Նշանիս, և սուրբ մաւրս լուսոյ Աստուածածնիս,
և այլ բազում եկեղեցեացս որ աստ կան կառուցեալ, ձեռամբ բազ-
մամեղ և անարժան գրչի՝ Նիկողայոսի պիտականուն աշակերտի, ի
թիվս Հայոց ՊԿԷ. (1418), ի յառաջնորդութեան սորա աստուածա-
բան և քաջ րաբունապետիս մերոյ Մարգարայ վարդապետիս։ Արդ,
399բ յերես անգեալ մոխրամած գիմօք || աղաչեմ զձեր սրբութիւնդ, ով
մանգունք սուրբ եկեղեցոյ որք հանդիպիք այսմ տառի, յիշեցէք
յերկնաթուիչ յաղաւթս ձեր զՆիկողայոս քահանայ՝ անարժան յիշման,
նայ և զծնաւղսն իմ՝ զհայրն իմ զՄարտիրոս, և զմայրն իմ զԳոհար՝
զհանգուցեալսն առ Քրիստոս, և զեղբարսն իմ զՀայրապետն և զՍա-
խապետն, և զեղբաւրորդին իմ՝ զդեռաբոյս ծաղիկն եկեղեցոյ զՍտե-
փանոս կրօնօորն, և զքոյրն իմ զՀռիփսիմէ, և զհանգուցեալ եղբայրն
իմ առ Քրիստոս՝ զՏիրատուրն, և զամենայն արեան մերձօորսն իմ....*

233
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան 5512

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Աղթամար

297ա ...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի կղզիս Աղթամար, ընդ
հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տէր
Դաւթի, և ի թուին Հայոց ՊԿԷ. (1418), ձեռամբ մեղապարտ և անար-
ժան Թումայի անիմաստ և ախմար գրչի, և անընդունակ գոլով յար-
ւեստ գրչութեան, և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ

* 6ա էջի վրա Գեղարդավանքի մի վանական թողել է մի քանի ուշագրավ պատ-
մական դեպքերի մասին համառոտ գրանցումներ, դրանք են՝ «Թվ. ՌՃԻԸ. (1679) մայիս
ամսոյ աւրն Գ, չորեք[շաբթի] շարժ եղև Երևան։
Սուրբ Գեղարդայ եկեղեցոյ շինուածն թվ. ՌՃԽԵ. (1696)։
Ստեփան[ոս] կաթուղ[ի]կոսի մեռանելն թվ. ՌՃԽԷ. (1698)։
Թվ. ՌՃԽԸ. (1699) ճաղացն սելաւ եկաւ տարաւ, գեղս | | |
Թվ. ՌՃԽԸ. (1699) դարպասին ձեռն տըւինք, սայկայն կատարած[ն] աստուծոյ է
գիտելի»։

կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին՝ բազում աշխատանաւք գրեցի անարժան ձեռաւք իմովք, ի ստոյգ և յընտիր աւրինակէ՝ կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ։

Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ, յիշեսջիք յաղաւթս ձեր զյառաջ յիշեցեալ ստացող սորա զխաչատուր,
297 բ և զծնողքն իւր զԹումայ ‖ և զԹամար, և զհաւրեղբայրն զեղիայ, և զազգն ամենայն յիշեցէք և աստուած-ողորմի ասացէք, Ընդ նոսին և զանպիտան Թումայ գրիչ, և զմեր ծնաւղքն՝ զԿարապետ քահանայ և զԴուռմէլիք, և զուսուցիչն մեր և զեղբայրն՝ զԴանիէլ քահանայ, որ ծաղկեաց և կազմեաց զսուրբ աւետարանս, և զհարսն մեր զՇամսախաթուն, և զքոյրքն մեր, և զողայքս՝ զՋաքարայ և զԿարապետ, և զՎարդան կրաւնաւոր, որ աշխատեցաւ ի կոկել Թղթիս, և զամենայն ազգականքն մեր՝ զկենդանիք և զհանգուցեալք։ Եւ որք զմեզ յիշէք սրտի մտաւք և դուք յիշեալ լիջիք յառատ յողորմութեանն աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Ես՝ խաչատուրս, ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց, և ետու զսայ ի վայելումն Աստմ քահանային, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց...։

298 ա Արդ, աղաչեմ զհանդիպեալքդ սմա տեսութեամբ կամ կարդալով, յիշեցէք զմիջնորդ սուրբ աւետարանիս զխոջայ Աստմ, և զծնաւղքն՝ զԱնդրէաս և զխաթուն-Մէլիք, և զկենակիցն զԳուրջի-խաթուն, և Քրիստոս աստուած ամենեցուն առհասարակ ողորմեսցի, և Թողութիւն մեղաց շնորհեսցէ, և երկնից սուրբ արքայութեանն արժանի արասցէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

234

ԱՒԵՏԱՐԱՆ

Ե. Լալայեան, Ջաւախք, Ազգ. հնդ. 1897, Բ., էջ 286

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Աղթամար

[Ընդօրինակեալ] Թումայ մեղուցեալ գրչի մեղսամած մատամբ ի յաստուածաբնակ և յանառիկ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս և աստուածամուխ սուրբ Գեղարդեան, ի հայրապետութեան տեառն Դաւթի, Հայոց ի ՊԿԷ.(1418)։

235

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4931

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան

ա

290 բ ...Արդ, այսմ աստուածեղէն և փարթամ գանձիս և լուսափայլ

մարգարտիս ցանկացաւ աստուածասէր և բարեպաշտ տանուտէրն Ղազար, և ետ գրել զսա յիշատակ իւր և բարի ծնողացն իւր, հաւրն՝ Շամօին, և մաւրն Մարեմայ, և եղբարցն Մովսէսի, և Խաչկայ, և Մանուկի, և քուրոյն Սուրաթի, և կենակցին Գուհարի, և որդոյն Պետրոսի, որ տարաժամ փոխեցաւ ի Քրիստոս և սուգ անմխիթար եթող ծնողացն, և ամենայն արեան մերձաւորացն իւրոց...։

291 բ Արդ, յանկ ելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս ... ի քաղաքիս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, և սուրբ հայրապետին Սահակայ, և սուրբ Տիրամաւր Աստուածածնին, և սուրբ զաւրավարացն Վարդանեանց։

Եւ ես՝ Թափուրս ի բարեաց գործոց, մեղանչականս յանմեղաց, անչիշելիս ի գրչաց, անկարգս ի կարգաւորաց՝ Կարապետ անարժան քահանայ, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ընդ հովանեաւ սրբոցս կատարեցի զսուրբ աւետարանս, մեղսամած մատամբս յաւրինեցի, միթէ քաւի մեղս ի մարմնի։

Ի թուական հայկազեան տաւմարիս ՊԿԷ. (1418), ի հայրապետութեանն տեառն Պաւղոսի և յաշխարհակալութեանն Ղարայ-Յուսուֆի...։

...Այլ յերես անկեալ ես առաւել աղաչեմք զձեզ, յիշեցէք ի
292 ա Քրիստոս և ի սուրբ յաղաւթս ձեր զիս՝ զանարժան գծողս || զԿարապետ սուտանուն քահանայ, և զծնողքն իմ՝ զհայրն իմ զՍտեփաննոս քահանայ, և զմայրն իմ զՄինայ, և զհաւրեղբայրն իմ զՄովսէս, և զեղբարքն իմ զՅովաննէս քահանայ և զՄելքիսէթ՝ զհանգուցեալքն ի Քրիստոս, և զՅակոբ քահանայ, և զՅոհաննէս քահանայ՝ զերախտաւորքն մեր, և բոլոր սրտիւ և լի բերանով աստուած-ողորմի ասացէք, և ինքն՝ Քրիստոս աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ և մեզ առհասարակ ողորմեսցի և լսել տացէ զբարբառն, որ ասէ, թէ Եկայք աւրհնեալք հաւր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն, ամէն։

Բ

14 ա Զբազմամեղ ոգի զԿարապետ սուտանուն քահանայ յիշեցէք, որ գրեցի և ծաղկեցի զսուրբ աւետարանս, և անարհեստութեանս անմեղադիր լերուք, քանզի այս առաջին ծաղիկ էր, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

236

ՄԱՇՏՈՑ

Վիեն. 108, Տաշ. Ցուց. էջ 383—384

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան

188 ա ...Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածասէր եւ բարեպաշտ տանուտէրն Յովաննէս, եւ ցանկացաւ այսմ լուսափայլ մարգարտիս,

եւ ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւրն, եւ ծնողաց իւրոց՝ հաւրն Անդրիանոսի, *եւ մաւրն* Խոնդի, *եւ որդւոյն* Ստեփաննոսի, *եւ դստերն* Ազիզի, *եւ կենակցին* Շնովհորի, *եւ այլ տղայոցն, եւ ետ զսա անջինջ յիշատակ ի դուռն սուրբ Աստուածածնին՝ ի գիւղն* Յառականց. *եւ ի յայսմ ամի շինեցաւ եկեղեցիս, որ գիրքս գրեցաւ...։ Եւ արդ. գրեցաւ սա ի քաղաքս որ կոչի* Վան, *ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, ձեռամբ անարժան քահանայի* Կարապետի, *ի հայրապետութեան տեառն* Պօղոսի, *եւ ի թվականիս Հայոց ՊԿԷ. (1418)։*

Արդ, դուք հան[դիպո]ղք | | |

237

Մ Ա Շ Տ Ո Ց

Փիրգ. Նոտ. 54, Վան

Գրիչ՝ Կարապետ

վայր՝ Մոկաց երկիր, [Փութկոյ] սուրբ Գէորգ

...Գրեցաւ սուրբ տառս աստուածային ի թուականիս Հայոց ՊԿԷ. (1418), ձեռամբ պարտաւոր գրչի՝ սուտանուն Կարապետ *աբեղայի, յարքունական յերկիրս* Մոկաց, *ի յանապատիս սուրբ Գէորգ, և առաջնորդիս մերոյ, որ անուն տէր* Ստեփաննոս *յորջորջած, ի խնդրոյ* Մարգարէ *պատուական քահանայի, որ մականուն* Յակոբ Ասորի *կոչի...։*

238

Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 4151

ա

Գրիչ՝ Աստուածատուր

վայր՝ Ռշտունիք, Ս. Վարդանի անապատ

...Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով զարդարեալ... քրիստոսասէր տանուտէրն Ստեփանոս, *և ջերմեռանդ սիրով որ առ աստուած և մեծաւ փափագմամբ ստացաւ*
372 բ *զսա ի հալալ արդեանց իւրոց... և ետ զսա ընծայ և նըւէր ի սուրբ եկեղեցին, որ է շինեալ յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, ի մայրաքաղաքիս* Ոստան, *յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց՝* Քրիստոսատրին *և* Փաշամէլէքին, *և եղբաւրն իւրոյ՝ տարաժամ հանգուցելոյն առ աստուած ի հասակ երիտասարդական՝* Աստուածատրուն, *և հօրեղբաւրն իւրեանց* Աւաք-Պարոնին, *և կենակցին* Ստեփանոսին՝ *ստացողի տառիս* Բուլղանին, *և զաւակացն իւրեանց* Քրիստոսատրին, *և* Աւետիսին, *և* Մելքիսէթ *սարկաւագին, և պարոն* Ազքզին *հանգուցելոյն ի Քրիստոս, և այլ ամենայն արեան մերձաւորացն իւրոց՝ կենդանեացն և հանգուցելոցն, և որոց տէր կամեսցի։*

Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց և ան-
373 ա կատարս ի կա ‖ տարելոց… Աստուածատուր սոսկանուն աբեղայս…
կատարեցի զսուրբ գիրքս զայս ի գառն և ի նեղութեան ժամանա-
կիս, ի Թուականութեան հայկազեան տումարիս ՊԿէ. (1418), և ի
հայրապետութեան տեառն Դաւթի, ի յերկիրս Ըռըշտունեաց, ի սուրբ
և ի հռչակաւոր անապատս, որ կոչի սուրբ Վարդան, որ է հանդէպ
Գաւաշից, ի դուռն սուրբ Աստուածածնիս և ի սրբոյ Վարգանայ զաւ-
րավարիս, ի ղանութեանն պարոն Յուսուֆին, և ի բռնակալութեան
373 բ մերոյս նահանգի ‖ Ամիր-էզդնին և որդոյն իւրոյ Մելիք-Մահմադին,
որոց աւգնական և պահապան լիցի նոցա տէր աստուած, վասն զի
յոյժ խնամածուք են ազգիս Հայոց…։
375 ա …Դարձեալ, յերես անկեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր ես՝ մե-
ղուցեալ և անարժան ծառայս ծառայիցդ աստուծոյ Աստուածատուր
սոսկանուն աբեղայս՝ ծրագրող սորա, ո՜վ պատուական հարք իմ և
եղբարք, ընթերցողք և լսողք այսմ կտակի… յիշեցէք ի սուրբ և
յերկնաթռիչ յաղաւթս ձեր և զիմ անարժանութիւնս, մանաւանդ
զերջանիկ և ղքրտնաջան մշակն եկեղեցոյ՝ զցանկալին հրեշտակաց և
մարդկան, զգովելին յամենայն բերանոյ, զհնազանդ և զաստուածա-
սէր հոգին, զսուրբ և զընտրեալ րաբունին իմ զՅակոբ վարդապետն՝
375 բ զուսուցիչն իմ, ‖ որ է հոգի Թեթև ի Թանձր մարմնի, մշակ Քրիս-
տոսի առանց ամաւթոյ, զարգարեալ ամենայն հոգեկան և մարմնա-
կան առաքինութեամբ, որ է հայր իմ ըստ հոգոյ և քեռի ըստ մարմ-
նոյ, որ ըստ քաղցր բարէմտութեանն իւրում էառ զիս և սնոյց և
ուսոյց ինձ զամենայն կարգ և զբտրէձևութիւն, զոր ոչ առնեմ ընաւ՝
զՍաղմոս, զՇարական, զգիր, զծաղիկ, զոսկել և զկազմել, և այլ բա-
զում բարութիւն՝ հոգեկան և մարմնական առատապէս ընձեռեաց ինձ,
և ես ոչինչ ունիմ նմա փոխարէն հատուցանելոյ՝ վասնորոյ հայցեմ
ի ձէնջ պաղատանաւք, ո՜վ պատուական հարք իմ և եղբարք, խնդրե-
ցէք յաստուծոյ, զի բազմաժամանակեա և յերկար ամաւք պահեսցէ
զսա աստուած ի պարծանս ինձ և ամենայն աշխարհի, և յետ աս-
376 ա տեաց ելանելոյ ընդ սրբոց վարդապետացն դա ‖ սակցեսցէ զնա և
պսակեսցէ ընդ Ոսկիբերանին, և Աստուածաբանին, և նմանեաց նոցին,
և զծնաւղսն իւր զԱտոմ և զՂըբէլ, և զեղբայրն իւր զՑովանճէս արժանի
արասցէ Քրիստոս ողորմութեան իւրոյ, ամէն։

Այլ և ըստ մարմնոյ ծնաւղացն իմոց աղաչեմ զձեզ աստուած-
ողորմի ասել՝ հաւրն իմոյ Ատոմի, և մաւրն իմոյ Շաքար-խաթունի,
և եղբարցն իմոց Թումաբէկի և Յոհանիսի, և քըւերցն իմոց հանգու-
ցելոցն ի Քրիստոս Շահըրմանի և Գուլիշայի, և մեծ մամուն իմոյ
Գաւհարի, և հաւրքըւերն իմոյ Թավրէզ-Մէլիքի, և որդւոց նոցին էվա-
տին և Մուրատին և Ստեփանոսին, և մօրքըւերն իմոյ Գաւհար-Մէլիքին,
և որդւոյն իւրոյ պարսն Ումէկին. և այլ ամենայն արեան մերձաւո-
րացն իմոց՝ կենդանեացն և հանգուցելոցն, և որոց ինքն կամեսցի
ողորմեսցի Քրիստոս, ամէն։
376 բ Դարձեալ, աղաչեմ յիշել ի Քրիստոս զՍտան քաղաքի քահա-

նայքս, որք սպասաւորք են սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և վայելողք և ընթերցողք այժմ տառի՝ զտէր Թումա և զտէր Յովաննէս փիլիսոփայքն, զՍտեփանոս քահանայն և զորդին իւր զՅովաննէս, զՁաքարա և զՄկրտիչ, զՅոհաննէս և զերիս Ստեփանոսեանքն, զՎարդան և զԹումա և զՅովանիսեանքն, և զծնաւղսն նոցին ամենեցուն, առհասարակ...։

Բ

Ստացող՝ Ստեփանոս.

Եւ արդ, ես՝ մեղուցեալ ծառայս աստուծոյ Ստեփանոս, ստացա զսուրբ գիրքս զայս ի հալալ արդեանց իմոց և ետու զսա ընծայ և նըւէր սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, ի քաղաքիս Ոստան: Եւ
377 ա մի ոք իշխեսցէ ‖ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ տաճարիս ծախելով, կամ գրաւելով, կամ գողանալով։ Եւ ով ոք յանդըդնի և հեռացուցանէ զսա այսքան պատճառաւքս՝ և ինքն հեռասցի յողորմութենէն աստուծոյ և պատիժ պատուհասի կրեսցէ յաստուծոյ ընդ Կայենի և ընդ Յուդայի և ընդ խաչահանուացն, ամէն։ Իսկ որք սրտացաւաբար և խնամարկութեամբ սպասաւորեն սուրբ գրոցս՝ գտցեն ողորմութիւն և թողութիւն մեղաց ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գ

Կազմող՝ Թումա.

377 ա Առաջեմ զսրբասէր ընթերցողդ և զքրիստոսասէր ունկնդիրսդ՝ յիշման արժանի առնել և զիմս անարժանութիւն՝ զբազմամեղ և զսուտ կանուն աբեղայս Թումա, և զծնաւղսն, որ սակաւ ինչ գծագրեցի ի գիրքս և կազմեցի զսա։*

239

ՃԱՇՈՑ

Երևան 4551

Գրիչ՝ Աստուածատուր.

326 ա Յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացաւղ սուրբ գրոցս զԱրևշահն, և զծնաւղսն իւր զՄելէքշայն և զխաթունն, որ յուսով և հաւատով ստացան զսուրբ գիրքս յիշատակ հոգոյ իւրեանց և ամենայն մերձաւորացն, ամէն։ Նաև զլիմար գրիչս Աստուա–

* Երկու տող հետո, այլ ձեռագրով, գրված է Ասինանցի Սարգսի հիշատակարանը, «որ թափեաց զսուրբ գիրս ի ձեռաց յանաւրինացն»։ Հնագրական տվյալներով այդ հիշատակարանը կամ ԺԵ. դարի վերջից է, կամ ԺԶ. դարից։

Ձեռագրի 1ա—1բ էջերում կա նույն ժամանակների (ԺԵ/ԺԶ դար) մի այլ հիշատակարան՝ պարոն Թադէոսի որդի պարոն Բաղշայիշի և նրա խոջա եղբայրների կողմից ձեռագրի ձեռք բերման մասին։

ծառուր* անարժան, և զծնաւղսն իմ զԱտոմ և զՇաքար-Խաթուն, և ձեզ ողորմեսցի Քրիստոս աստուած, ամէն։**

240

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նոտ. 56, Վանի շրջան, Մանգան գիւղ

Ստացող՝ Շաքար
վայր՝ Գաւառք

...Ի թուաբերութեանս Հայոց տումարի ի ՊԿԷ. (1418), ի կաթուղիկոսութեան տեառն Գրիգորի, որ մականուն Խանձողատ կոչի, ի վիճակիս առաքելոյս Բարթուղիմէոսի, ի հայրապետութեան տէր Մեսրոպի, ի յերկիրս որ Գաւառս կոչի։ Ես ցանկացող եղէ այս սուրբ աւետարանիս՝ Շաքար, և ստացայ զսա յիշատակ ինձ և կողակցին իմոյ Մարեմի։

241

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Վենետիկ 536

Գրիչ՝ Խաչատուր
վայր՝ Աւագ վանք

Խաչատուր կրօնաւոր և պանդխտակից եղբայրն իմ Յովհանէս արքեպիսկոպոս յիշեցէք...։ Գրեցաւ ի թվիս Հայոց ՊԿԷ. (1418) փետրրվար ԺԳ. (13), ի դրան սուրբ Աստուածածնին և սուրբ Ովանիսին և սուրբ Առաքելոյն, որ կոչի Աւագ վանք։

242

ԱՒԵՏԱՐԱՆ

Շիրակ, Ղուլիճան գիւղ, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Վրաց գաւառ, գիւղ Օթայ

Ի թուաբերութեանս Հայոց տումարիս ի ՊԿԷ. (1418), ի գաւառիս Վրաց, ի գիւղն որ կոչի Օթայ, ի հայրապետութեան տեառն Ներսսի և տէր Յակովբոսի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին...։ Յիշեցէք զվարպետն իմ զտէր Յովհանէս, որ մականուն կոչի Ոսկեփոր, ընդ նմին և զեղկելի գրչակս զՄկրտիչ...։

---

* Հիշատակարանը տեղադրում ենք 1418-ի թվաշարքում՝ նույն այս Աստուածատուր գրչի թվակիր հիշատակարանին կից։ Որ գործ ունենք նույն գրչի հիշատակարանների հետ՝ այդ երևում է նրա ծնողների անուններից՝ Ատոմ և Շաքար-Խաթուն։

** Համանման բովանդակությամբ հիշատակագրություններ կան նաև ձեռագրի 21 բ, 87 բ, 111 ա, և 330 բ էջերում։ Ձեռագիրը հարուստ է լուսանցազարդերով և բարձրորակ մեծագիր մանրանկարներով։

243

ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԱՐԱՐԱԾՈՑ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽԼԱԹԵՑՒՈՑ

Երևան 1053, նաև 5574

Հեղինակ՝ Գրիգոր Խլաթեցի

94 ա *Ցելիցն Ադամա ի դրախտէն մինչև ի վախճանն Մովսիսի Գ՝Ռ. և Էձ. ու ԻՁ. (3726) ամ է, և ի մահուանէն Մովսիսի մինչ ի Քրիստոս Ռ. ու Դձ. և ԺԱ. (1411) ամ է. և [ի] Քրիստոսէ մինչ յայս, որ գիրքըս գրեցաւ՝ Ռ. ու Դձ. և Ի. (1420) ամ է, զի Պ. և Կէ. (=1418) ամին դրեցաւ։*

244

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7224

Գրիչ՝ Սարգիս

ա

249 ա *Զստացող սուրբ աւետարուիս աւետարանիս՝ զԴաւիթ կուսակրաւն աբեղայս, հանդերձ ծնողաւք և ազգականաւք, աղաչեմ յիշել ի տէր, և ասսուած զձեզ յիշէ, ամէն։ Եւ զմեզ յիշեայ, և մայր իմ* Թանգսող*, որ յայսմ ամի ի Քրիստոս փոխեցաւ։ Թվ. ՊԿԷ. (1418), աշխարհայկալութեան* Ուսուֆին:

բ

249 բ *Զմեղապարտ* Սարգիսս *աղաչեմ յիշել ի տէր, և ասսուած զյիշաւղքդ յիշէ, ամէն։*

245

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԳՐՈՑՆ ՊՈՐՓԻՒՐԻ

ԲՑՎ 143

Գրիչ՝ Անդրիաս

...Կատարեցաւ տառս այս իմաստայպատում, որ կոչի լուծմունք Արտաքնոցս, բացտհայտեալ ղսա մեծ վարդապետին Հայոց Գրիգորի*, ի Թվիս ՊԿԷ. (1418), ձեռամբ* Անդրիաս *սուտանուն խաբեբայի...։ Այլ և զստացող սորա զ*Կարապետ *վարդապետ և զեղբայրն իւր* Յովանէս *կրօնաւոր [յիշեցէք]...։*

ՊԿԸ 1419

246

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 3714

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Ցիպնայ վանք

268 ր ... Որոյ (Աւետարանիս) ցանկացող եղեալ բարեմիտ և ողջախոհ քահանայն Յոհանէս, և ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ, զի նորընծայ է ի կարգ և յաստիճան քահանայութեանն։ Վասն որոյ եռափափագ ըղձիւ ստացաւ զգանձս աստուածային յիշատակ իւրն և բարի ծնողաց իւրոց՝ Դանիէլ քահանայի, և Խիկարի՝ հանգուցելոյն ի Քրիստոս, և եղբարց իւրոց հարազատաց՝ Մովսէս քահանայի և Ներսէսի, այլ և զբազմերախտ քեռոյն իւրոյ՝ տէր Աւագ քահանայի։

Եւ արդ, գրեցաւ սա ի վանս Ցիպնայ, ընդ հովանեաւ ամենա-
269 աջզօր սուրբ Նշանի և սուրբ Ստեփանոսի, ձեռամբ յոգնամէգ և ան ‖ -

Նկ. 9. Ձեռագրի ստացող Յոհանէս երեցը
և նրա հայրը՝ Դանիէլ քահանան

իմաստ գրչի Գրիգորի պիտականուն վարդապետի, յամի ՊԿԸ. (1419) Թըւականի, ի հայրապետութեան տեառն Պաւղոսի և յաշխարհակալութեան Ղարայ-Ուսուֆին։ Ցորում ամի և մարախ ել յարևելից ի վերայ երկրի, և Թանձրախիտ ծածկեաց զդաշտ և զլերինս, զսար և զձոր, միահաղոյն, ի Սալմաստայ մինչ յԱրզրումն, և կերաւ շատ վաստակ ի բազում տեղիս, յորմէ սասանեցան մարդիկք, և եղև սըղութիւն։ Արդ, որք հանդիպիք սուրբ աւետարանիս յիշեցէք ի միտս բարիս զստացող սորա զՅօհանէս քահանայ*, և զծնօղսն իւր, և զեղբարսն։

Նկ. 10. № 3714 ձեռագրի գրիչ Գրիգոր վարդապետը դասավանդելիս

* Ձեռագրի 15ա էջի վրա, նստած դիրքով, նկարված է ձեռագրի ստացող «Յոհանէս երէց»-ը՝ ձեռքին բռնած ավետարանը, իսկ նրա դիմաց, աջ կողմում, նստած է ավելի ծեր մի քահանա, հավանաբար ստացողի հայր Դանիէլը (տես Նկ. 9)։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև 14բ էջի նկարը։

Ձախ կողմում՝ աթոռի վրա բազմել է մի վարդապետ, ձախ ձեռքին բռնած ունի խարազան, աջ ձեռքին՝ մի տախտակ, վրան գրված՝ «Երանեալ է այր որ [ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց]»։ Նրա դիմաց, ձեռքերը կրծքին ծալած կանգնած է դաս պատասխանող աշակերտը, ավելի աջ՝ հատակին ծալապատիկ նստած է մեկ ուրիշը, ձեռքին Թարմ ճիպոտներ, որոնք պետք էին գալու վարդապետին աշակերտներին խարազանելու համար (տես Նկ. 10)։

247

ՃԱՌԸՆՏԻՐ

Փիրղ. Նոտ. 59—69, Վարագ և Երևան 3790*

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Ռշտունիք, Տայշող գիւղ

... Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... սուտանուն քահանայ Ստեփաննոս գրիչս, տեսի զսէր և զփափաք սրբասէր քահանային Յովանիսի, և իմ տկար անձամբս յանձն առի և ամենակարօղ զօրութեամբ աստուծոյ կատարեցի զսուրբ գիրքս ի դառն ժամանակիս, որ և ի ծովացեալ մեղաց մերոց և ի չար գործոց եկն ազգի-ազգի պատուհաս ի վերայ երկրի՝ սով, սրածութիւն, մահտարաժամ։ Եւ յայսմ ամի եկն մարախ բազում ի յաշխարհս մեր, և եկեր զամենայն բոյս դալարի, և եղև նեղութիւն մեծ, յորում էր թիւս Հայոց ՊԿԸ. (1419), ի Նաւասարդի ամսոյ Ի. (20), ի հայրապետութեան տէր Դաւթի, և փոքր Զաքարիայի, և ի բռնակալութեան աշխարհիս Ղարայ-Յուսուֆի և Ամիր-էզդընի:

Արդ, գրեցաւ յերկիրս Ռշտունեաց, յանուանի և հռչակաւոր գեաւղս որ կոչի Տայշող, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, և սուրբ Ստեփաննոս Նախավկայի, և սուրբ Սիոնի, և սուրբ Կիրակոսի։ Ի խնդրոյ երիցս երանեալ պատուական քահանային Յովհաննիսին, յիշատակ բարի հօրն իւրոյ Ստեփաննոսին, և մօրն Մռջանին, և եղբորն Յուսէփին, և քուերն Փաշմելեքին, և քեռացն Մարկոսին, և իւր կենակցին Շաքար-խաթունին...: Նաև զիս յիշեցէք՝ զՍտեփաննոս քահանայ գրիչս, որ գրեցի զսա, և զհայրն իմ զԳրիգոր քահանայ, որ առ աստուած փոխեցաւ, և զմայրն իմ զԽութլու-Մելիքն, և զհարազատ եղբարքն իմ զՅովհաննէս և զԱռաքել սրբասէր քահանայքն, և զհօրեղբայրն մեր զՄարտիրոս կրօնաւորն... և զկենակիցն իմ զՄինա-Թագուհին, որ սպասաւորէր մեզ ի մարմնաւոր պիտոյից։ Յիշեցէք և զսրբազան քահանայքն զԱւետիս և զՅովանէս, որ զօրինակ գրել ետուն՝ զհանգուցեալքն առ աստուած։**

---

* № 3799 ձեռագրի մեջ եղող հիշատակարանը ամենայն հավանականությամբ ընդօրինակված է Ղ. Փիրղալեմյանի կողմից օգտագործված ճառընտրից։

№ 3790 ձեռագրում հիշատակարանը պահպանվել է շատ վատ վիճակում, բազմաթիվ բառեր ու տողեր դարձել են անընթեռնելի։ Միևնույն հիշատակարանի այս երկու ընդօրինակությունների միակ նշանակալից տարբերությունը վերաբերում է գրչության վայրին։ № 3799 ձեռագրի հիշատակարանի մեջ որպես գրչության վայր նշված է՝ «Գեաւղա[քաղաքս Բ]աբերդ, ընդ հովան[եաւ սուրբ Յովհա]ննիսին», ի տարբերություն այս հիշատակարանի, որ գրված է Ռշտունիքի Տայշող գյուղում։

** № 3790 ձեռագրի 7բ էջում կա նաև հետևյալ հիշատակագրությունը. «Ի յայս տեղս մարդիկ եկին ու կոխ արարին. նայ այս երեսս ի մէջ անցաւ (այսինքն՝ անցրել թաց), անմեղագիր լերուք»։

248

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2676

Գրիչ և ծաղկող՝ Աստուածատուր
վայր՝ Ոստան

ա

... *Որք պատահիք սմա ընթերցմամբ կամ աւրինակելով, յի-*
շեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացաւղ սորա զՄուրատշէն,
325 բ *և զիւր ծնաւղսն,* ‖ զԱնպէտն, զԹավրէզն, զէվատն, զՍտեփաննոսն,
զՔամալն, զԳաւհար-Մելիքն, զՂարիպշահն, *զկենակիցն՝* զՀալիմ-խա-
թունն, *և զիւր քվերսն, և զամենայն արեան մերձաւորսն։ Ընդ նոսին*
և զանպիտան գրիչս՝ զԱստուածատուր *աբեղայ, և զծնաւղքն իմ՝*
զԱտոմ *և* զՇաքար-խաթունն, *և զհարազատ եղբարսն իմ՝* զԹումարէկ
և զՅոհաննէս, *և զհանգուցեալ քվերսն իմ՝* զՇահըրման *և* զԳուլիշայ,
և զմեծ մայրն իմ զԳաւհար-Մելիք, *և* զՂարիպշահն։ *Նաև յիշեցէք ի*
Քրիստոս զվարդապետն իմ զՅակոբ, *որ բազում աշխատեցաւ ի վերայ*
իմ և ուսոյց ինձ զսաղմոս, զշարական, զ[խազ]տետր, զգծագրութիւն
և զամենայն բարեձևութիւն, զոր ոչ առնեմ. Քրիստոս աստուած յեր-
կար կենաւք պահէ ի գլուխս մեր, և յետ ատեաց զերկնից արքայու-
326 ա *թիւնն ժառանգէ ընդ* ‖ *երկնաւոր վարդապետին, ամէն...։*

Այլև, գրեցաւ սուրբ աւետարանս ի յանապատիս սուրբ Վար-
գանայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս *և սուրբ Վարգանայ*
զաւրավարիս, ի հայրութեան Թումայի, *ի հայրապետութեանն տեառն*
Դաւթի, *և ի թուականութեանս Հայոց* ՊԿԸ. *(1419), ձեռամբ* Աստ-
ւածատուր *աբեղայի՝ անիմաստ և անմար գրչի, բազում մեղաւք*
ցնորեալ և ափշեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ
մարդասէր հոգին, բազում աշխատանաւք կատարեցի զցանկ և զբառն
326 բ ‖ *յայն աւետարանէն որ ի* Սիս *էր գրած։**

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՈստան *քաղաքի քահանայքս՝*
զկենդանիքս և զհանգուցեալսն՝ զՅոհաննէս *քահանայն և աւագերէց*
սուրբ Աստուածածնին, և զՅոհաննէս *փիլիսոփայն* զԱմիրլուսենց, *և*
զԳորգ *փիլիսոփայն, և* զՍտեփաննոս *քահանայն, և* զԱստուածատուր
փիլիսոփայն, և զԱտոմ *փիլիսոփայն,* զՄերուն *գրագիրն, և* զՍարգիս
քահանայն, և այլք, որ գնացին առ Քրիստոս, ջնջէ Քրիստոս աստ-
ւած զիւրեանց ձեռագիր յանցանացն։ Իսկ զկենդանիքս՝ զՍտեփան-
նոս *քահանայն, որդի* Յոհաննէս *քահանային, և զորդի նորին* Յովան-

** Ավետարանիչների նկարներից դատելով ընդօրինակությունը կատարված է Սար-*
գիս Պիծակի մի ձեռագրից։ Այդ նկարների պատճենահանումը կատարված է այն աստի-
ճանի ծառայաբար, որ նույնիսկ կարելի է ցույց տալ գաղափար օրինակը՝ որն իրոք
ծաղկված է Սարգիս Պիծակի կողմից (Երևան, № 5786), 1336 թվականին։ Աստվածա-
տուրի նկարչական շնորքն ու հմտությունը երևում է սկզբից եղող 14 թերթ նկարների
ու խորանների մեջ, որոնք կատարված են Վանի մանրանկարչական դպրոցին հատուկ
տրադիցիայով ու տեխնիկայով։

նէս քահանայ։ Այլ և զաւագերէց սուրբ եկեղեցոյս՝ զտէր Թումայ, և
զՅովանէս փիլիսոփայ, զՍտեփաննոս որդի Աստուածատուր փիլիսոփա-
յին, զոր ի վերոյ յիշեցաք, և զմիւս Ստեփաննոս որդի Ատոմ քահա-
327 ա նային, և Զաքարիայ որդի Սաե ‖ փաննոս քահանայի, և զԹումայ որ-
դի Ծերունին, զՄկրտիչ, զՍտեփաննոս, զՅոհաննէս, զՄկրտիչ, զՎար-
դան...:

Բ

15 բ Ո՛վ եղբայրք. թէ ես յայս աւետարանս յուսկեն յիշտապել եմ
ու անփոյթ առնել, նա աստուած զիմ մեղքն ոչ թողու, ապա ճաճք
առնէին զիս, թէ զմեր գիրքն ի մեզ չի տալ, ի նաւասարդի ամիս ոս-
կել տուին, ու թանաքն ամէն մսաւ, յիշ[տ]ապաւղքն ամօթով լինին
յաստուծոյ։

Գ

Ստացող՝ Մուրատ

Ես՝ Մուրատս, որդի Անպետին, տուի զսուրբ աւետարանս Ոս-
տան քաղաքի կաթուղիկէ եկեղեցոյն ընծայ, յիշատակ հոգոյ իմոյ և
327 բ իմ ծնաւ ‖ ղացն։ Եւ արդ, մի ոք իշխեսցէ ձեռնարկել ի սա ծախելով
գրաւելով, գողանալով, կամ այլ ինչ հնարք առնելով՝ հեռացուցանել
ի սուրբ Ստեփաննոսէն։ Ով որ զայս առնէ ան[էծս | | |*
Եւ արդ, ով եղբարք, զաւակ ոչ ունիմ յաշխարհիս, և ստացայ
զսուրբ աւետարանս յիշատակ ինձ, ով որ | | |**, թէ եղբայր, թէ որ-
դի, թէ քահանայ, թէ աւագերէց, թէ եպիսկոպոս | | |***

Դ

Գերութիւնից ազատող՝ խոջայ Ջանգիշա

329 բ ... Եւ արգ, ես՝ խոջայ Ջանգիշա ստացայ և գնեցի զսուրբ աւե-
տարանս ի յանաւրինաց, ի յարդար վաստակոց իմոց, ի ԾՁ. (180)
շախռուխի, և եդի ի դուռն սուրբ Առաքելոցն՝ ի Վան քաղաքի, և մի
ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ Առաքելոցն գողա-
նալով, կամ ծախելով, կամ գրաւելով։ Եւ եթէ ոք յանդգնի և հեռա-
ցուցանէ, նա զմասն զՅուդային առցէ և զայլ խաչահանացն։****

---

* Ցոթ տող, ուր գրված են եղել անեծքի խոսքեր գրավողի կամ գողացողի հաս-ցեին, գանակով քերված է՝ հավանաբար ոճի գողացողի կողմից, կարդացվում են միայն առանձին տառեր, որոնցով ենթադրաբար դուրս են գալիս «[դհայե]նին առցէ... և զխա-չահանուացն...» եռ։

** Մի բառ քերված է։

*** Երեք տող քերված է։

**** Խոջայ Ջանգիշայի հիշատակարանի սկիզբը չի պահպանվել, ուստի և գրության տարեթիվն անհայտ է։ Ըստ հնագրական տվյալների գրված պետք է լինի ամենաուշը ԺԵ. դ-րի երկրորդ կեսերին։

249

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 8765

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Գեղազունի

ա

82 բ *Զտառապեալ և սեվաց հուրով* Սարգիս *կոչեցեալ քահանայ և գործովք Թափուր աղաչեմ յիշել ի տէր. և աստուած զձեզ յիշէ, ամէն։*
*Թ. (9) օրն աւարտեցաւ գլուխս։**

բ

218 ա *Զտառապետլս և զժահայհոտս, Ներկեալ շարաւալի հոտով, յեր-կարեալս մինչև ի յայժմ տեղիս՝* Սարգիս *մեղաւք լցեալս, ի բազում ժամանակս, որ կամ և մնամ հայեալ ի մեծն աստուած, միթէ զվերջքն արասցէ ի կէտ վերջինս ի բարի, աղաչեմ յիշել տերամբ, և աստուած զձեզ յիշէ, ամէն։*
*Թվիս ՊԿԸ. (1419), ի մուտն մարերի։***

գ

Գրեցաւ ի Գեղազունի, *ի դուրս սուրբ Գրիգորի Լուսաւորչի, ի թվ. ՊԿԸ. (1419), մարերի Ը. (8), և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։****

277 բ *Նաև յիշման արժանի արէք զծնողքն մեր՝* զՍուլթանշահն, զՄինա-խաթունն, զՏիրիկն, զԽուանդն, զԹանկսուղն, *և զայլ արեան մերձաւորքն մեր, և զերախտաւորքն մեր, և զսիրալի եղբայրն մեր զտէր* Դանիէլն, *և զճգնաւոր* Սիմէոն *սրբոյլ, և զկերակրողքն մեր, որ բազում նեղածացեալ(*) կա՝* զՄաղաքիա, զԱմիրազիզն, *զկենակցին իւր* զԹանկսուղն, *և զայլն, որ կան ի վերայ մեր երախտաւորք։*

Զհոգևոր տէրքն մեր՝ զտէր Ստեփանոս, *զտէր* Յովանէս, *զտէր* Ստեփանոս, *զտէր* Թադէոսն, *զտէր* Ստեփանոսն, *զտէր* Գրիգորն, *զտէր* Ալեքսիանոսն, *զտէր* Վանական, *զտէր* Մարկոս, *զտէր* Անտոն, զԵսային, *զտէր* Մաթէոս *քահանայն, ոբ ի* Քրիստոս *[փոխեցաւ],* զԱստուածատուր *քահանայ, և զամենեսեան, որ բազում աշխատեալ կան ի վերայ մեր, որում փառք յաւիտեանս, ամէն։*

Եւ որպէս զմեզ յիշեն, նոյնպէս և Քրիստոս զձեզ յիշէ։ Գիտեմք զպակասութիւն գրոյդ, ապա ծեր եմ ու աչք չի տեսնուլ, ձեռս կու դողայ, այնոր համար գիրդ ձագուձու(*) երեկ, վասն աստուծոյ թողութիւն արարէք։

** Իմա՝ Մատթէոսի ավետարանը։*
*** Իմա՝ Մարերի ամսվա 1-ին։*
**** Եթե Սարգիս գրիչը նույն արագությամբ ընդօրինակել է նաև մյուս երկու (Մարկոսի և Ղուկասի) ավետարանները, ապա 277 թերթից բաղկացած ձեռագրի ընդօրինակությունը նա կատարել է բացառիկ արագությամբ, շուրջ մեկ ամսվա ընթացքում։*

250

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

«Բազրևանդ», էջ 185—186

Կազմել տվող՝ Թովմայ Մեծոփեցի

Արդ ... [գրեցաւ] ի վանս Ցովանու, ընդ հովանեաւ սրբոյ Կարապետիս, ի խնդրոյ տոն ումեմն կոչեցելոյ Անդրէաս՝ *այր աստուածասէր և գովելի, ձեռամբ* Աբրահամու, *աշխատութեամբ և ջանիւ մեծաւ, ի պանդխտութեան ժամանակիս։ Արդ, յերես անկեալ հայցեմ յամենեցունց յիշել ի մաքրամատոյց և գերաստիճան յաղաւթս ձեր զստացող սորին և զգծող...։*

Այլ և զխաչատուր *վարդապետ* Կեչառուեցի *յիշել աղաչեմ, որ յետոյ ժամանակի ստացայ զսա յիշատակ հոգւոյն, աստուած զնա յիշէ։**

Այլ և ես լցեալ մեղաւք և անպտուղ ամենայն բարեաց, յերես անկեալ պաղատիմ մանկանցդ եկեղեցւոյ վարդապետ Թովմայ *Մեծոփայ վանուց, և աղերս մաղթանաց արկանեմ առաջի հմտականացդ և ընթերցողացդ՝ յիշել զամենամեղս* զԹովմա *ի մաքրափայլ և հաստղական յաղաւթս ձեր, ընդ սմին և զծնողսն մեր՝ զհոգևոր և զմարմնաւոր, որ ետ[ու] սա վերստին կազմել զգիրս զայս հոգևոր հաւր իմոյ* Մաթէոս *կրօնաւորի, և աստուած զձեզ յիշէ, ամէն...։*

Ի թուականութեանս մեր ՊԿԸ. (1419) կազմեցաւ, ի փառս աստուծոյ։

251

ՃԱՇՈՑ

Փիրգ. Նոտ. 57—58, Վան, Կարմրաւոր Աստուածածնի վանք

Գրիչ՝ Թումայ
Վայր՝ Աղթամար

... Փափագմամբ ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ Ապրիլուսի *և* Մարթայի, *և եղբարցն* Աբրահամու *և* Մարտիրոսին, *և կենակցւոյ նորա* Բաղդատին, *որդւոյն՝* Յորդանանու. *Եւ ետ զսա նուէր և ընծայ ի գուռն սրբոյն Սանդխտոյ, ի գերեզման սուրբ և սքանչելագործ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ...։ Անկարգս ի կարգաւորաց* Թումայ՝ *մեղօք դառնացեալ կրօնաւոր... գծագրեցի զսուրբ գիրքս զայս... ի յաստուածաբնակ կղզիս* Աղթամար, *ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և այլ սրբութեանց որ աստ կան, ի հայրապետութեան տեառն* Դաւթի, *ի թուականութեան Հայոց ՊԿԸ. (1419)։*

---

* *Կազմել տվող Թովմա Մեծոփեցու հիշատակարանը սկսվում է այս պարբերությունից հետո։ Մինչ այստեղ գրված է Աբրահամ գրչի կողմից, հավանաբար ԺԴ. դարի սկզբներին։*

252

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 145, այուն. 320

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Նարեկ գիւղ

... Գրեցաւ... ի թուականութեանս Հայոց ՊԿԸ. (1419), ի հայրապետութեան տեառն Դաւթի, և իշխանութեան մերոյ նահանգիս՝ Միլիքի՝ որդոյ Ամիր-էզդին մէլիքին։ Արդ, և գրեցաւ սա յաստուածապահ գեաւղս Նարեկ, ուր հանգուցեալ կայ աստուածընդունակ նշխարք սրբոյն Գրիգորի վարդապետի, ընդ հովանեաւ սուրբ տաճարացս՝ լուսամաւր Աստուածածնի և միածնի իւրոյ, սուրբ Յարութեան, և սուրբ Առաքելոցն, և Գրիգորի սուրբ Լուսաւորչի, և սրբոյն Սանդըխ[ա]ոյ կուսին...։

253

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

Երևան 847

Գրիչ
վայր՝ Ի վանս Գառվագրակի

ա

272 բ ... Յազգանազեան մեծ տումարի
Հայոց Մեծացս թվականի,
Երկեակ քառիցս հարիւրի,
Վեցից տասանց և ութ աւելի (1419),
Աւարտ եղև այսմ տառի,
Որ Հարանց վարք սա յորջորջեալ,
Զի զվարս սուրբ հարցն պատմեալ...։*
273 ա Որ ոք սիրով սա ընթերցի
Եւ փափաքմամբ ընդ սա խաւսի՝
Սրբոցս, որ աստ յիշատակի,
Փառաց նոցին հաղորդ լիցի։
Հոգենորոգ այսմ տառի
Յոյժ ցանկացեալ տարփմամբ սրտի,
Հոգով աղքատ կրաւնաւորի,
Որ Յոհաննէս անուն կոչի։

բ

95 բ Ո՛վ սուրբ ընթերցողք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զեղկելի գծողակս, որ եմ յեղելեացն և ոչ յերանելեացն, և զծնօղս իմ, և զեղբայրս իմ, և զՅովանէս կրօնաւորն, և զՄէլքիսէթ կրօնաւորն, որ զօրինակն շնորհեաց, և զՈբսատկէսն, որ պատճառ եղև գրելոյ գրոցս, և թողութիւն մեղաց հայցեցէք։

* Բաց ենք թողնում ընդարձակ մի հատուած «Հարանց վարք»-ի բովանդակության մասին։

գ

135 բ Զեղկելի գծողակս յիշեա, ով սուրբ ընթերցողք, և զՅովանէս կրօնաւորն, որ կարեկից եղև մեզ ի պանդխտութիւնս...։

դ

Ստացող՝ Յովանէս

Ես՝ Յովանէս սիրող բանի,
Որ եմ ի վանս Գառվագրակի,
Ի դուռն սուրբ Կարապետի,
Ըզգիրքս որ Հարանց վարք կոչի.
Ինձ յիշատակ զսայ եդի,
Ծնողաց իմոցն, իմոց,
Եւ հաւր իմոյ Իղխտիարի,
Եւ եղբաւրն իմոյ Առքառնի,
Եւ ամենայն զարմից իմոց,
Որ հանգուցեալ են և կենդանի,
Ըստ փափագման իմոյ սրտի,
Զի խնդրելին իմ կատարի,
Զի որ ընթեռնու և բան ուգտի,
Նա զիս յիշէ անմոռնալի,
Ի դուռն սուրբ Կարապետի,
Եւ առաջի աստուածընկալ սուրբ Նշանի,
Որ է յոյս ամենայն Քրիստոնէի։

Ո՛վ եղբայրք, չունի ոք հրաման, որ զգիրքս ի սուրբ Կարապետէն հանէ կամ ձեռնամուխ լին[ի]՝ թէ իմ է, ոչ հայր վանիցս և ոչ իմ ազգական, այլ միշտ և հանապազ կարդան և խնամով պահեն, և պահաւղքն և կարդացաւղքն աւրհնին յաստուծոյ և ի մէնջ, ամէն։

ե

Կազմող՝ Սարգիս

273 ա Զկազմող սորայ՝ զՍարգիս սուտանուն աբեղա, աղաչեմ յիշել յաղաւթս ձեր։

254

ՔԱՂՈՒԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երեւան 1306

Գրիչ՝ Մկրտիչ Նաճապետանց
վայր՝ Յուսկան որդոյ վանք

ա

142 բ Զլիս ամենայն չարութեամբ և զպակասեալս յամենայն բարութեանց՝ ի գործնական և ի տեսական առաքինութենէ, զպիտականուն վարդապետ Մկրտիչ՝ մականուն Նաճապետանց, միով տէր-ողորմայիւ յիշեցէք ի Քրիստոս աստուած, և աստուած զձեզ յիշէ յարքայութիւնն։ Գրեցաւ ի տէր Ցուսկան որդոյ Վանս։

Բ

Վայր՝ Սուխարայ վանք

190 բ Գրեցաւ ի սուրբ վանքս Սուխարայ, ի յերկիրս Քաջբերունի, ի թուականութեան ՊԿԸ. (1419)։ Զգծողս յիշեցէք ի Քրիստոս։

255

ՃԱՌԸՆՏԻՐ

«Միաբանք և այցելուք Երուսաղէմի», էջ 247, 380 և Մ.Տ.Մ.

Գրիչ՝ Մանուէլ
վայր՝ Երուսաղէմ

Փառք... վասն որոյ սուրբ և երջանիկ սրբասնեալ և ամենայն առաքինութեամբ ղարգարեալ տէր Պօղոս, որ էր արքեպիսկոպոս յԵրուսաղէմայ, զոր սուղ ինչ աւուրց եղև կաթողիկոս ամենայն Հայոց՝ յոյժ ջերմեռանդ սիրով ցանկացող և փափագող եղեալ յայսմ բազմերանգ և յոգնագորով մատենիս...։ [Յիշեցէք] զտէր Պօղոս կաթողիկոսն, զհայրն իւր Զաւտարշահ, և զմայրն իւր Թեմնա, և զամենայն զերախտաւորսն...։ Եւ ընդ նմա յիշեսջիք զԱստուածատուր միայնակեցն զԼեռնակողմեցին, որ ի ծախքն աւգնական եղեն, և զԳինեպետ միակեց... այլև առհասարակ միաբանք և բնակիչք սուրբ Յակոբա և սուրբ Փրկչին և սուրբ Հրեշտակապետացն...։

Եւ արդ, եղև զբաւ գրչութեան այսմ տառիս ձեռամբ մեղսամած և յոգնամեղ և յոյժ մեղաւորի, որ զանունս միայն ունեմ և բաբի գործոց դատարկ... Մանուէլ անուն յորջորջողի, և միւս գրագիր [Յոհանէս] Եզընկեցի՝ հեզահոգի և բարի։ Եւ երկուքս սկսաք գրել ի սուրբ աստուածակոխ քաղաքն Երուսաղէմ, ընդ հովանեաւ աստուածընկալ սուրբ գերեզմանին, ի հռչակաւոր վանքս՝ ի սուրբ Յակոբ։ Եւ գիրքս այս... գրեցաւ ի թվականութեան Հայոց ՊԿԸ. (1419)*, և իշխանութեան այլասեռից՝ ի սուլտանութեան Շեխոյն, և ի հայրապետութեան տեառն Պօղոսի, որոյ զգիրքս ետ գրել, և եպիսկոպոսութեան սուրբ քաղաքիս... տէր Մարտիրոս Անեցոյն, զոր տէր աստուած պահեսցէ մինչև ի խորին ծերութիւն, և զվակա[կա]լ սուրբ Յակոբո զԳրիգորէ փիլիսոփայն և զայլ սպասաւորք սուրբ դամբարանիս։ Այլ և զկրաւնաւոր եղբայրքս՝ զՄկրտիչն, որ օգնական էր ուղղել և յազօրդելն, և Յակոբ աբեղայն, որ զտէտրն շինէր, և խազէր, և ի կապելն, և Ստեփանոս աբեղայն...։ Այլ և յայսմ ամի կաթողիկոսն, որ էր նստած յաթոռն՝ Գրիգոր անուն՝ մականուն էր Խանձողաչուր, վասն ապիրատ ինչ գործոյ՝ ընկեցեալ եղև յաթոռոյ։ Եւ եկեալ դուռսն զտէր Պօղոս, և առացեալ յաթոռ կաթողիկոսութեան, և եդ յիւրում տեղոջ զիւր խոստովանահայրն՝ զՄաթէոս աբեղայն՝ վերակացու գրոցս, և շատ աշխատեցաւ արդեամբք և գործովք սպասաւորել մեզ, այլ և Հայրապետ... աբազայն և զմայրն իւր զապաշխարողն, որ յոյժ աշխատութեամբ սպասաւորէր մեզ յեփել և թափել հանապազ սպասաւորութիւն

* Ձեռագրի ընդօրինակությունն սկսված է եղել 2 տարի առաջ՝ 1417 թվականին։

մեզ, զկոկող Թղթիս առաջինն զՄկրտիչ, որ | | | մօտ ի կաթուղիկոսն, և Խաչատուր ժամկոչն և զեղբայրն մեր զՅորաչն:

Արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ և անարհեստ գրչի Մանուէլի և Յոհանէսի, ի մեծի գերահրաշ աստուածակոխ քաղաքս յԵրուսաղէմ, ի հռչակաւոր վանքս ի Յակոբ | | | *և յոյժ աշխատեցաք, և ես Մանուէլս ծաղկեցի, և ռայիսի որդի Յակոբ աբեղայն լաւ օգնական եղև մեզ ի ծաղկելն, զի հայր նորա Խւար ոչէսն գնացեալ էր ի Կիպրոս կղզին, այս աւուրքս խարար երիք, թէ փոխեալ է ի Քրիստոս.... Եւ յորժամ սկսաք զգիրքս ի թուին ՊԿԶ. (1417) էր, ի մտանել ՊԿԸ. (1419) թուին եղև կատարումն գրոցս...:

Բ

Քրիստոս աստուած, քո սուրբ վկայիցն բարեխօսութեամբ և ամենայն սրբոց ողորմեա սրբազան արքեպիսկոպոսիս Երուսաղէմայ տէր Պաւղոսի, որ յոյժ փափաքմամբ ետ զսա գրել յիշատակ իւր և ծնողաց իւրոց, և միւս արքեպիսկոպոսիս Երուսաղէմայ տէր Մարտիրոսի, և սպասաւորացն սուրբ Յակոբայ՝ առաջնոց, միջնոց և վերջնոցս, այլ և Աստուածատուր միակեցին, և ծնողացն, և ինձ՝ եղկելի բազմամեղ և փծուն անարհեստի գրչիս՝ Մանուէլիս, և ծնողաց իմոց, և բազմերախտ հոգևոր մաւրն իմոյ, և թուղթս կոկող Մկրտչին, այլ և կարդացողացդ և լսողացդ և որ զամէնն ասեն, ամէն:

Գ

Գրիչ՝ Յովհաննէս Երզնկացի

Ո՛վ սուրբ ընթերցողք և միաբանք սուրբ Յակոբայ, յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զարհիեպիսկոպոսն Երուսաղէմայ զտէր Պաւղոսն և զծնողսն իւր, վասն զի ջերմեռանդ սիրով գրել ետ զգիրս յիշատակ իւր և ծնողաց իւրոց, ի վայելումն սուրբ Յակոբայ, ընդ նմին և զանարժան գծողս զՅովհաննէս աբեղայ [Երզնկեցի]...:

256

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ, ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Երևան 1551

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Երուսաղէմ

200 բ Գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՊԿԸ. (1419), ի մարտի ԻԱ. (21), ի յԵրուսաղէմ քաղաքիս, ի սուրբ Յակոբայ դուռն, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Յոհանէս աբեղի, ի խնդրոյ ճգնազգեաց կուսակրօն Յակոբ տրեզի և հարազատ եղբօր իւր Գրիգոր սրբասնունդ միակեցի:

Արդ, աղաչեմ, ով ոք հանդիպի յիշեսջիք ի տէր զվերոյասացեալսդ, և աստուած, որ առատն է, յիշողացդ և յիշեցելոցս առհասարակ ողորմի...:

* Երկու տող քերված:

257

ՄԱՇՏՈՑ

Փիրդ. Նոտ. 58, Մաքզուան

Գրիչ՝ Աթանազինէ Սեբաստացի
վայր՝ Սամիսոն քաղաք

... Արդ, գրեցաւ. հայր Մաշտոցս ձեռամբ անարհեստ գրչի Աթանազինէ Սեբաստացւոյ, *ի քաղաքս որ կոչի* Սամիսոն, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան տէր* Յակոբայ *հեզի և ճշմարտախորհի, որ կարդաք կամ օրինակէք՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղուցեալ գրիչս* զԱթանազինէ *կրօնաւորս...։ Գրեցաւ Մաշտոցս ի թուին ՊԿԸ. (1419)։*

258

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Վիեն. 505, Տաշ. Ցուց. էջ 978

Գրիչ՝ Յովհաննէս

ա

18 բ *Զտառապեալ ծրողս* Յովհաննէս *անուամբ վարդապետ եւ գործով [Թափուր], եւ* զԳրիգոր *կրաւնաւոր ստացող սորին յիշման արժանի առնէք։*

բ

48 բ *Զստացօղ տառիս* զԳրիգոր *կրօնաւոր, եւ զծնօղսն իւր* զՍիմէոն *եւ* զԸռուզ, *եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն, նաեւ* զԿիրակոս Լիանոսենց՝ *հանդերձ ծնողօքն, յիշման արժանի առնէք։*

գ

71 բ *... Նա եւս* զԿիրակոս *եւ զծնօղսն՝* զԼիանոս *եւ* զՄարգարիտ *յիշման արժանի առնէք։*

դ

110 ա *Զեղկելի գրիչս* զՅոհաննէս, *եւ զծնօղսն իմ, եւ զեղբարսն յիշեցէք ի Քրիստոս...։ Թվ. ՊԿԸ. (1419)։*

ե

194 ա *Զ*Կիրակոս, *եւ զծնօղսն իւր, եւ զկողակիցն իւր* զՍուլտան, *եւ զամենայն արեան մերձաւորսն յիշելոյ եւ աստուած-ողորմի ասելոյ արժանի առնէք, պատահողք կտակիս։*

զ

206 ա *Զերջանիկ եւ զհանգուցեալ բարունիքն մեր* զՅոհաննէս *եւ* զԿիրակոս *յիշելոյ արժանի առնէք...։*

Է

311 ա ԶԳրիգոր կրօնաւոր եւ զծնօղսն իւր զՍիմէոն եւ զՇռուզ յիշման արժանի առնէք ընթերցողք տառիս։ Ընդ նոսին եւ զԿիրակոս եւ զծնօղսն իւր՝ զԼիանոս եւ զՆազխաթուն, որ ձեռնտու եւ օժանդակ եղեւ ի սուրբ գիծս յուսոյ աղագաւ...։*

259

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երեւան 2142

Գրիչ՝ Բարսեղ

Ա

301 բ ... Եւ արդ, ես՝ թախիծ մտօք և տառապեալ անձամբ Բարսեղ սուտանուն քահանայ գրեցի զվերջին մասն սուրբ գրոցս, աղաչեմ խոշորութեան և սխալանաց անմեղադիր լերուք, և եղբայրաբար ուղղեցէք։

Բայց գրեցաւ ի թուաբերութեանս մեծի ՌԾ. և Կ. և Ը. (1419),
302 ա յաստուածապահ և ի գերահռչակ ուխտս, ‖ որ կոչի սուրբ Ցակոր, յիշատակ սրբասնեալ կրօնաւորի Սիմէոնի սպասաւորի բանի, և ծնօղաց իւրոց, և ամենայն մերձաւորաց իւրոց։

Արդ, յերեսս անգեալ աղաչեմ զսրբասնեալ մտնգունս սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՍիմէ[ոն], և զծնօղսն, և զամենայն արեան մերձաւորսն իւր՝ զյիշման արժանիսն...։

Աչքս չու.նի լոյս, անմեղադիր [լերուք]։**

Բ

337 բ Ով, Սիմէոն՝ սիրող բանի
Եւ բարձող յուս զխաչն Քրիստոսի,
Դու հասանիս մտացըդ խորհրդի,
Զոր ցանկայիր այսմ բանի,
Տէր զքո խնդիրսդ քեզ շնորհի,
Ցորժամ յիշես զբանս յատենի,
Մի ողորմի զիս յիշեա, իմ սիրելի,
Զի եմ լցեալ մեղօք ի լի,
Եւ շիւարեալ յոյժ եղկելի,
Միթէ Քրիստոս ողորմեսցի
Քեզ և մեզ 'ւ ամենայնի։

* Հրատարակիչը հայտնում է, որ նման հիշատակագրություններ ձեռագրում շատ կան։

** Այս տողը գրված է ներքին լուսանցքում։

260

ԲԱՌԳԻՐՔ

Երևան 3201

ա

Գրիչ՝ Բարսեղ

219 բ ... Աւարտեցաւ գրկունքս ի թվականիս ՊԿԸ. (1419), ձեռամբ անարհեստ գրչի Բարսղի, ի խնդրոյ Սիմէոնի սպասաւորի բանի, որո տէր աստուած վայել[ել] տաց[է] ընդ երկայն աւուրս, ամէն...։

բ

142 բ ... Արդ, կատարեցաւ գիրքս, որ կոչի Բառ[գիրք] || ձեռամբ անիմաստ գրչի Բարսղի սուտանուն քահանայի, ի հռչակաւոր սուրբ ուխտս, որ կոչի սուրբ Յակոբ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սրբոյն Յակոբայ, և սուրբ Յոհաննիսիս, սուրբ Գ. Մանգանցն, ի խնդրոյ Սիմէոնի պատուական կրօնաւորի՝ սպասաւոր[ի] բանի, որոյ տէր աստուած վայել[ել] տացէ ընդ երկայն աւուրս...։

261

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6253

Հետ. ստացող՝ Ուպլուն

5 ա ...Արդ, այսմ վերջի ստացողի և քրիստոսադաւան սուրբ աւետարանիս ցանկացաւղ եղեալ պարոն Ուպլուն ոսկեգործ, և ամենայն պարկեշտութեամբ զարդարեալն համեստ և իմաստուն աղախինն Քրիստոսի Քուլաք-Խաթունն, ի հալալ արդեանց իւրեանց ծախիւք, ի կենդանութեան իւրեանց յիշատակեցին ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ, որ յանուն սուրբ Առաքելոցն շինեալ է...։

Գրեցաւ վերջի յիշատակարանս ի մեծ թվականիս Հայոց ՊԿԸ. (1419), ի մարտի ամսոյ Զ. (6)։

262

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 2117

Գրիչ՝ Ղազար

430 ա ... Գրեցաւ աստուածաշունչ գիրքս և տառս | | |, որ կոչի Քարոզգիրք, [ձ]եռ[ամբ] բազմամեղ և խղճալի մեղաւք ոգւոյ Ղազար աշակերտ բանի, ի վայելումն մ[անկա]նց Սիոնի:

Արդ, աղաչեմ զհանդիպողսդ, յորժամ ճաշակէք ի քաղցրահամ պտղոյ սորա, յիշեսջիք սրտի մտաւք եղկելի գծողակս, և թողութիւն մեղաց հայցեցէք, և սխալանացս անմեղադիր լինել աղաչեմ, զի հարկ կարդալոյն ի վերայ կայր։ Ի թվ. ՊԿԸ. (1419)։*

---

* Մ. Տէր-Մովսիսյանի ցուցակում տեղեկություն կա նաև 1419 թվականին ընդօրինակված Գր. Տաթևացու Քարոզգրքի մասին (Երուսաղեմի Մատենադարանի № 2148 ձեռագիր)։

Այդ ձեռագրի հիշատակարանից Մ. Տէր-Մովսիսյանը քաղել է հետևյալ տեղեկությունները․ «Գրիչք Յովհաննէս որդի Ամիրբէկի և Մարթայի և Ներսէս, թղթի կոկող՝ Յովհաննէս Երևանցի՝ միակեց»։

ՊԿԹ 1420

263

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5514

Գրիչ՝ Թումայ Մինասենց
վայր՝ Աղթամար

297 ա ...*Եւ արդ, ես՝* ... *սուտանուն արեղայս* Թումայ, *տեսի զփափագ*
սորա և զսէրն, զոր ունէր առ հոգևորսն, և իմով իսկ տկար անձամբս
յանձն առի և ամենակարաւղ զաւրութեամբն աստուծոյ կատարեցի
զսուրբ աւետարանս զայս յաստուածախնամ կղզիս Աղթամար, *ընդ հո-*
վանեաւ սուրբ Խաչի և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տեառն
Դաւթի, *և ի թվաբերութեան հայկազեանս տոմարի* ՊԿԹ. (1420), *յամ-*
297 բ *սեանն սահմի ԺԵ. (15), ի դառն և ի նեղ ժամանակի, որ եր || կիր*
ամենայն երերեալ կայ և տատանեալ ի ձեռաց անաւրէն ազգին նե-
տողաց. Արդ, աղաչեմ զամենեսեան... ուղիղ մտաւք աստուած-ողորմի
ասասջիք ստացողի սուրբ աւետարանիս՝ պատուական և ընտրեալ
կրաւնաւորին Վարդանայ, *և ծնաւղաց նորին* Յոհանիսին *և* Ամէն-Տիկ-
նէն, *և եղբարցն* Թումային *և* Աստուածատրուն, Գրիգորին *և* Սինին, *և*
կենակցաց նոցին, և զաւակացն, և քուերցն Ուլունին *և* Շամշային, *և*
հաւրեղբարցն Վարդկէն *և* Սարգսին, *և եղբաւրորդոյն իւրոյ* Կարապետ
298 ա *կրաւնաւորին, և մաւր նորա* Հռիփսիմէին, *և* Աւետիս *կրաւն || աւորին, և*
հաւրեղբաւրորդւոյն Թումային, *և* Յովանիսէն, *և* Սարգսին, *և այլ ամե-*
նայն արեան մերձաւորաց նոցին՝ կենդանեացն և հանուգուցելոցն...։
...*Եւ արդ, ես՝ վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ և առաջինս ի*
դասս մեղաւորաց... Վարդան *անուամբ միայն աբեղայս... ստացա*
299 ա *զսա յարդար վաստակոց իմոց և ետու զսա ըն || ծայ և նուէր ի մեծ*
և ի հռչակաւոր և յանուանի սուրբ ուխտս, որ Պառկի *վանք յոր-*
ջորջի, որ կայ հանդէպ Ոստան *քաղաքի, ի դուռն գերամաքուր սուրբ*
Աստուածածնին և սրբոյն Գէորգեայ զաւրավարին, ի մխիթարութիւն
անձին իմոյ և ի յոյս փրկութեան։
Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսութեամբ
և կամ ընթերցմամբ, յիշել զմեզ ի տէր սրտի մտաւք, և աստուած-
ողորմի ասել մեզ և մերոցն ամենայնի՝ յիշելոցն ի սմա։ Այլև հոգևոր
զաւակին իմոյ Թումայ *կրաւնաւորին՝ հանգուցելոյն առ Քրիստոս, և*
ծնաւղաց նորին Աստուածատրուն *և* Շաքարին, *և հոգևոր եղբօրն իմոյ*
Յոհանին, *և կենակցին իւրոյ* Թանմէլէքին, *և ամենայն հաւատացելոց*
քրիստոնէից, որոց տէր կամեսցի, ամէն։
Գարձեալ, յերես անկեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր յիշել ի
299 բ *Քրիստոս և զսպասաւորք սուրբ եկեղեցեացս։ || Նախ և առաջին զբաղ-*
ձալին հրեշտակաց, զամբիծն հոգով և զանարատն մարմնով՝ զիմաս-
տասէր և զհանճարեղ և զմեծահամբաւ րաբունին՝ զՅովաննէս, *որ է*

*պատճառ շինութեան և ամենայն բարեկարգութեան սուրբ ուխտիս,
և խրատիչ և վարժիչ ամենեցուն, և պարծանք ամենայն Հայաստան-
եայց եկեղեցեաց. զոր աէր աստուած պահեսցէ զսա պարագայց ամօք
պարծանք աշխարհիս մերոյ, ամէն։ Եւ ծաղկեալ ալեաւք, մանաւանդ
թէ իմաստութեամբ, զառաջնորդ սուրբ ուխտիս* զՍտեփաննոս *փիլիսո-
փայ, և* զԱստուածատուր *վարպետ, և զհոգևոր եղբարքս մեր* զՄկրտիչ
մահդասի և զՅովաննէս, զԱբրահամ *և* զՄարտիրոս, զՂազար *և* զՅովան-
նէս, զՄարգարէ *և* զԿարապետ, զՅովսէփ *և* զԱստուածատուր, զՍտեփան-
300 ա նոս *և* զՅովաննէս, զԱտոմ *և* զԱստուածատուր, զՄկրտիչ *և* զՍտեփան ‖ նոս
մահդասի, զՍտեփաննոս *և* զՄկրտիչ, *և զայլ ամենայն գործաւորք և
սպասաւորք սուրբ ուխտիս...։*

*Ի թուականութեան Հայկազեան տումարիս ՊԿԸ. (1419), յամս-
եանն արեգի ԻԴ. (24)* տեղաց բաժակ բարկութեանն աստուծոյ, այ-
300 բ սինք ‖ Ն է մարախն ապականիչ, եմուտ ի յերկիրս մեր, և ուր և եգիտ
կիսահաս վաստակ՝ եկեր, և ընկէց զսերմ իւր յերկիր, և սասանեցոյց
զամենեսեան, զոր տէր Յիսուս սատակեսցէ զնա հոգւոյ բերանոյ իւ-
րոյ և քաղցրութեամբ ակամբ հայեսցի ի տառապեալ ազգս քրիստո-
նէից, ամէն։*

Սուրբ աւետարանս Պատրկի վանից *սուրբ Աստուածածնին է, և
մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սորին, ոչ վանիս հայր
և ոչ այլ ոք, ոչ ծախելով և ոչ գրաւելով, և ով յանդրգնի և հանէ՝
պատժի և պատուհասի յաստուծոյ...։***

264

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 2880

Գրիչ
վայր՝ Աղուանք

308 ա *Գրեցաւ գիրս այս, որ կոչի
Հարցմունք* Գրիգորի *բանասիրի՝
Արի և քաջ բաբունապետի,
Իմոյ ծնողի ըստ բանի,
Ջի ոչ թէ բազում, այլ սակաւ և ըստ կարի
Սնեալ մեր ի նորին հանգիսի,
Եւ ճաշակեալ ի պտղոյ նորա ըստ արժանի,
Եւ ապա եկեալ ի նահանգ այսմ աշխարհի,
Որ բնական* Աղուանք *կոչի,
Ոչ վայելեալ ի վայելս հրճուալի
Եւ ոչ հասեալ ի նաւահանգիստն ախորժելի,
Այլ կամք ալեկոծեալ ի մէծաւրէի,
Եւ ակն ունիմ ձեռնատուողին մեծին Պետրոսի,*

---

* *Ըստ շարժական տոմարի՝ օգոստոսի 10-ը։*

** *Հիշատակագրություններ կան նաև ձեռագրի 88բ—89ա, 143ա էջերում, որոնք կրկնում են գլխավոր հիշատակարանի բովանդակությունը։*

Զի տացէ մեզ լսել զձայնն վիմին շնորհալի
Եւ հանցէ ի խորոյ խաւարի,
Եւ նմա փառք ընդ հաւրն և հոգոյն, ամէն։

Գծագրեցաւ տաոս աստուածային ի թվ. ՊԿԹ. (1420), ի հայրապետութեան տանս Ազուանից տեառն Կարապետի, և եպիսկոպոսութեան յայսմ աթոռոյ տէր Կարապետի, և թագաւորութեան մեծին Իւսուֆին՝ քաջ և արի անրարշտին, թէպէտ և է այլազգի, բայց խաղաղութիւն ունի ընդ քրիստոնայս, և ընդ քահանայս, և ընդ եկեղեցիս, բայց վասն մեղաց մերոց է. (7) ամ է, որ մարախ զամենայն աշխարհ աւերեաց, և դեռևս եմք ի կաս[կ]ածի։ Այլ յոյս և ապաւէն զՔրիստոս ունիմք, զի դարձուցէ զամենայն պատուհաս մեղաց մերոց, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

265

ԱԻԵՏԱՐԱՆ

Մ. Աթոռ 80, «Էջմիածին», 1951 թ., նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 88

Գրիչ՝ Մարտիրոս
վայր՝ Սանահին

34բ-36ա ... Արդ, ես Մարտիրոս քահանայ թախծեալ եմ տրտմական ոգով, ոչ ունելով իմ զաւակ ի Սիոն և ընտանեակ յՆրուսաղէմ, ցանկացայ այսմ... ի վայելս անձին իմոյ և ի պայ[ծառութիւն] մանկանց Սիոնի, և փոխեց[ելոցն] ի Քրիստոս հաւրն իմոյ Իգնատիոսի, և մաւրն իմոյ Խալինարին, և այլ ամենայն արեան մերձաւորացն... և զհարազատ եղբայրն իմ զԴաւիթ, և զդեռաբոյս զաւակն իւր զԱրիսաղամն, և դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի, ամէն։

Արդ, գրեալ եղև սա ի ժամանակս բռնակալին Յուսուվի, ի թագաւորութեան Վրաց Ալեքսանդրի, ի նահանգի Գուգա[րա]ցոց, ի գաւառիս Ձորոց, և ի գերահռչաք և յերկնահանգէտ սուրբ ուխտիս Սանահին, որ է ան | | | հիմ մանկ | | | ի, ձեռամբ [յոգ]նամեղ և փըցուն գրչացս | | | և Յովհաննէս վարդապետս՝ երկուց հարազատաց, և ոսկիազուած խորանաց և ծաղկերանդ վարդաշատ ծաղկանց նկարողի Յովհաննիսի սիրասնունդ աշակերտի, ընդ նոսին և զմեզ՝ զաշխատողքս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, ամէն։

Ի թուաբերութեանս [յ]արեթական մեծ տումարիս ՊԿԹ. (1420), տանուտէր Զուկն, և նտհանջ ամն։

266

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 4004

Ստացող՝ Սարգիս
վայր՝ Գեղարքունեաց գաւառ

900 ...Վասն որոյ և տկարս ամենայնի և տառապեալս և յետնեալս ի դասս աշակերտաց բաբունեաց տէր Սարգիս ետու զսա | | | գրել

Ռստակիսի գրչի, զի փափաքէի այս ժողովեալ գանձուցս, զոր արարեալ երկրորդ լուսաւորիչն... վարդապետն Գրիգոր...:

Արդ, ստացա զսա ի վայելումն անձին իմոյ և ի յիշատակ ծնողաց իմոց, հաւրն իմ Շնորհքին, և մաւրն իմոյ՝ Սիրա | | | * գրեցաւ սայ ի գաւառս Գեղարք[ունեաց, ծաղ]կեցաւ և կազմեցաւ ձեռամբ Առաքել աբեղայի, աղաչեմ յիշել ի տէր։

Ի թվականիս ՊԿԹ. (1420)։

Ի դրան սուրբ և հրաշալի և աստուածաբնակ սուրբ աթոռոյս Գանձասարա եղև կատարումն սորա, զոր տէր աստուած հաստատ պահեսցէ մինչև ի գալուստն իւրն միւսանգամ, ամէն։**

267

ՇԱՐԱԿՆՈՑ

Երուսաղէմ 1718

Գրիչ՝ Պետրոս
վայր՝ Մեծոփայ վանք

Ցերկիրն Քաջբերունի ի սուրբ ուխտն Մեծոփայ, ընդ հովանեաւ սուրբ Տիրամաւր, առ ոտս երջանիկ րաբունապետին Թովմայի, յառաջնորդութեան Յովհաննէս արքեպիսկոպոսի, ձեռամբ Պետրոս աբեղայի, որդւոյ Կոոնի(?) և Նազխաթունի, և աշակերտի Թովմայ րաբունապետի։

268

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. նոտ. 60—61, Բերկրի, ի վանս տէր Ցուսական որդւոյն

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Բերկրի

... Եւ արդ, ես՝ յետինս ի կրօնաւորաց և անպիտանս ի բանասիրաց, անարժանս ի մանկունս եկեղեցւոյ և անիմաստս ի քարտուղարաց [Մկրտիչ] շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի թուականիս Հայոց Մեծաց ՊԿԹ. (1420), ի հայրապետութեան տեառն Պօղոսի՝ արի և քաջ ախոյանի և ճշմարիտ ուղղափառի, ի գաւառիս Տարբերունի, որ այժմ կոչի Բերկրի, ի սուրբ ուխտս որ կոչի տէր Ցուսկան որդի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ցարութեանս, և սուրբ Կարապետիս, և սքանչելագործ սուրբ Նշանիս, որ կոչի Կարմիրակն, ի յառաջնորդութեան

---

* Ձեռագրի վերին մասն ամբողջովին բորբոսնել է, քայքայվել և դարձել անընթեռնելի։ Հիշատակարանի 901 էջի վրա գտնվող շարունակությունից հնարավոր է լինում կարդալ միայն վերջին 6 տողը և նախորդ տողերից միայն առանձին բառեր, օրինակ՝ «զհոգեւոր Հայրն իմ», «զանյաղթ փիլիսոփայն», «որ յիշէք յիշեալ լիջիք» և այլն։

** Վերջին պարբերությունը գրված է այլ ձեռագրով։

սուրբ ուխտիս Մելքիսէթ *հեզահոգի և աստուածաբան վարդապետի, և այլ միեղէն. եղբարցս, հոգևոր հօրս իմոյ* Կարապետ *խաչընդուս կրօնաւորի, և հոգևոր եղբօրս իմոյ, որ բազում պիտոյիւք սպասաւորէ մեզ՝* Յակոբայ Խօյեցւոյ, Կիրակոսի *և* Յովաննիսի, Մկրտչի *և* Վարդանի, *համարուեստակից եղբօրս* Յակոբի, Սիմօնի *և* Կիրակոսի, Ստեփաննոսի *և* Յովանիսի, *նաև սպասաւորաց մարմնաւոր պիտոյից մերոց՝ հայր* Սարգսին, *և* Գորգի *տնտեսին, և* Մկրտիչ *մաճակալին, և* Աստուածատուր *միայնակեցին, և* Մեծատուր *հովուին, և զամենայն միաբանքս սուրբ ուխտիս, տէր աստուած հանգուցանէ զսոսա յարքայութեան իւրում, ամէն։*

Եւս առաւել աղաչեմ յիշել զՅակոբ Խօյեցի *աբեղայն, որ զօրինակն շնորհեաց...։ Յիշեսջիք յաղօթս ձեր [զստացող սորին]՝ զբարեպաշտ տանուտէրն* զՆասրաաին, *և զծնողսն իւր [*զՍեւինջբէկն *և* զՍուբաթ–Մէլիքն*], ընդ նոսին աղաչեմ յիշման արժանի առնել զանպիտան գրիչս, և ծնողսն իմ՝* զՕրպէլ *և* զԴօվլաթ, *և զմամն իմ* զԹաղդատ...։ *Յիշեցէք* զԱբրահամ *սրբահոգի կրօնաւորն, որ զարդարեաց և ծաղկեցոյց սուրբ աւետարանս և երկու փլօրի եթող ի վարձէն. Վարձատուն Քրիստոս տացէ նմա զիւր ողորմութիւն, ամէն։ Աղաչեմ յիշել զարժանին յիշատակի՝ զպատուելի քահանայն* զՄկրտիչ՝ *առաջնորդ քաղաքին* Բերկրոյ, *որ բազում գութ և խնամ տանի մեզ։*

269

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4626

Գրիչ՝ Իգիա
վայր՝ Նարեկ գիւղ

ա

393 բ ...*Ուստի և տեսեալ զսորայս փրկագործութեան խորհուրդ ոմն
աստուածասէր և բարեպաշտ տանուտէր* Թաթարբէկ *կոչեցեալ, հարեալ
ի սէրն Յիսուսի ետ գրել զսուրբ աւետարանս յիշատակ և բարեխաւս
առ Քրիստոս աստուած վասն հոգւոյ իւրոյ, և ծնաւղացն իւրոց* Մո-
մեղենի *և* Նորատիկնայ, *և եղբաւրն* Առաքելայ, *և կենակցին իւրոյ* Մի-
նայի, *և որդւոյն* Ամիրբէկի, *և քեռն իւրոյ* Աւրդունի, *և եղբաւրորդւոյն*
Թումայի, *և կնոջ նորա* Գահարի, *և մաւրն* Շնոհուրի, *և* Առաքելի, *որ
ողորմելի մնաց յաշխարհի փոքր մի աւուրք, քանզի էր յոյժ ծերա-*
294 ա *ցեալ, և ետես զմահ որդւոց իւրոց և զաւերումն տանն և [] հեծեծ[ան]-
աւք շրջէր, հոգոց հանելով։*

...*Եւ արդ, ես՝ յետինս ի կրաւնաւորաց և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ* Իգիա *անուն, քանզի խորշեցայ ի* Պսակ *անուանէ, որ* Նախավկային *միայն վայել է, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ՝* Ցոր *կոչումն կոչեցարուք՝ ի նմին կացջիք, սկսայ գրել զսուրբ աւետարանս անարժան ձեռաւքս։*

Գրեցաւ սա ի գեաւղս, որ կոչի Նարեկ, *ձեռամբ սուտանուն կրօնաւորի* Իգիտի, *ընդ հովանեաւ սուրբ եկեղեցայցս՝* Ցարութեանս,

294 բ Աստուածածնիս, Առաքելոյս || և սուրբ Գրիգորիս, և առ գերեզմանի
տիեզերալոյս Գրիգոր վարդապետի Նարեկացւոյ, ի թուականութեանս
Հայոց ՊԿԹ. (1420), ի հայրապետութեան տեառն Դաւթի, և ի բանա-
կալութեան նախա[ն]կիս մերոյ բարձրանուն Մելէքի:

Արդ, որք աւգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով, յի-
շեցէք յաղաւթս ձեր զվերոյգրեալսն՝ զԹաթարբէկն, և զծնաւղսն իւր,
և զամենայն արեան մերձաւորսն, ընդ նոսին և զմեղուցեալ գծողս,
և զծնաւղսն իմ՝ զԱմիրբէկ և զԴաւմելէք, և զեղբարսն իմ զԹովմայ
քահանայ, զՂազար և զՍտեփաննոս, և զկենակից իւր զՍուլթան-Մելէք,
որ սուրբ սրտիւ և անկեղծ հաւատով սպասաւորէր մեզ և պատրաս-
295 ա տէր զկերակրիկն, աստուած զնա կերակրէ յա || րքայութեան իւրում,
և զՔաւչբէկ սարկաւագ, և դեռաբոյս զաւակսն նոցա...։

Ով որ զայս թղթերս կտրէ, թէ գիր չկայ ի ներս՝ աստուած զնա կտրէ ընդ մէջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորսն դիցէ, և զտանջանսն սատանայի արկցէ զգլխով նորա։ Այս բաւական է լսող մարդոյն, և անլուր և թերի մարդոյն՝ սակաւն և բազումն միապէս է։

Բ

Ստացող՝ Թաքարբէկ

295 բ Ես Թաքարբէկս տըւեր եմ զսուրբ աւետարանս ի գեաւղս, որ
կոչի Մաւկու, ի դուռն սուրբ Գէորգեայ զաւրավարին, յիշատակ ինձ,
և իմ ծնողացն, և իմ զաւակացն, և ամենայն արեան մերձաւորացն,
ամէն։

Ով որ զայս սուրբ աւետարանս ի դրանէ սուրբ Գէորգեա զաւրավարէս հեռացուցանէ ծախելով կամ գրաւելով, հետ Յուդայի դասի և հետ խաչահանուացն, ամէն։

Գ

295 ա Աւետիսն՝ Թումի որդէ[ն], տարաժամ փ[ոխ]եցաւ առ աստուած,
շատ տրտմութիւն եբեր հաւրն և մաւրն, աստուած ողորմի իւր հո-
գուն, ամէն,

Աստուած ողորմած եղաւ և ետ իւրեանց նոր զաւակ, իւրեանց տրտմութեանն մխիթար՝ Սադաղայ անուն, աստուած զինքն ընդ երկայն աւուրս առնէ, իւր հաւր և մաւրն ժառանգ պահէ, մինչև ի խորին ծերութիւնն, ամէն։*

Դ

...Աստուած-ողորմի ասացէք Նաւճօշին և Աւետիսին, որ են սոքա
296 բ ի Բէնաւէնից, || որ ազատեցին զաւետարանս ի ձեռաց անաւրինաց...։

Դարձեալ յիշեսջիք... զՄերուն, և զկին իւր զՇաղզադէն, և զդուստրն իւրեանց զՀանպաշէն, զի այծ մ՝ սոքա ետուն ի գին սուրբ աւետարանիս...։**

* Այս և նախորդ (ստացող Թաթարբէկի) հիշատակարանները գրված են միևնույն ձեռագրով ու թանաքով, կամ գլխավոր հիշատակարանի գրության տարեթվին (1420), կամ մի-երկու տարի միայն նրանից հետո։

** Ըստ հնագրական ավյալների այս հիշատակարանը գրված պետք է լինի կամ ԺԵ. դարի վերջին, և կամ, որ ավելի հավանական է, ԺԶ. դարի ընթացքում։

270

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վիեն. 260, Տաշ. Ցուց. էջ 666

Նորոգող և կազմող՝ Աբրահամ
վայր՝ Շատախ, Մըղկունք գիւղ

136 բ *Թվիս Հայոց ՊԿԹ. (1420) Նորոգեցաւ սուրբ գիրքս ի գաւառիս* Շաթխոյ, *ի գեղն որ կոչի* Մըղկունք, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին։ Արդ, յիշեցէք զ*Աստուածատուր *երէցն եւ զծնաւղս իւր, որ երետ Նորոգել զգիրքս յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ, որ առատն է ի տուրս բարեաց։ Այլ գիրքս սուրբ Կարապետին է, ոչ ոք իշխէ ասել զսա իւր, կամ եպիսկոպոս կամ քահանայ ոչ իշխէ ասել թէ իմ է, այլ յիշատակ է իւր տիրոջն՝ ի սուրբ Կարապետն։*

Արդ ես՝ Աբրահամ *աբեղէս, որ կապեցի զսա, յերես անգեալ աղաչեմ յիշել ի սուրբ աղաւթս ձեր...։*

271

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6374

Գրիչ
վայր՝ Ակէոյ վանք

179 բ *...Ի թուականութիւն Հայոց ՊԿԹ. (1420), ի հայրապետութեանն տեառն* Դաւթի Փոքու *գրեցաւ սուրբ աւետարանս, ընդ հովանեաւ սուրբ Սարգսի զաւրավարիս, յանապատիս որ կոչի* Ակէոյ *վանք։ Եւ արդ, աղաչեմ զամենեսեանդ սիրօք աստուծոյ՝ զընթերցողսդ և զլսողսդ, յիշման արժանի առնել զվերոյստացեալ պատուական ե հոգևորն* Եղիա *և զկենակիցն ի[ւր]* Սիրա | | |

272

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7686

Գրիչ՝ Քրիստոսատուր
վայր՝ Կաֆա

280 ա *...Ի թուաբերութեանս ասքանազեան և յաբեգա || կան տումարի ի ՊԿԹ. (1420), ի հայրապետութեան տեառն* Պաւղոսի *և յաթոռակալութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր* Կիւրեղին: *Բայց գրեցաւ սա յաշխարհի* Հոնաց *և յերկիր* Խրիմի, *ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս որ կոչի* Կաֆա, *ընդ հովանեաւ առ ոտն սուրբ Աննաին։*

Այժմ աղաչեմ զամենեսեան զդասս լուսերամից, որք հանդիպիք այսմ աստուածային խրախճանութեան, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զփափագմամբ ստացաւղ սորա զվերոյգրեալ զպարոն Աստուածատուրն, *և զզուգակիցն իւր* զՇաղութ-Խաթունն, *և զիւր ծնաւղսն Նորա՝*

զպապն իւր զԳրիգորն, և զմամն իւր զԱննա, և զհայրն իւր զՍատաթ, և զմայրն իւր Մարեմ-Խաթ[ուն], և զքոյրն իւր Մարի-Մելիք, և զեղբայրն իւր զԽաչատուրն, զՅոհաննէս, զՍիմէոնն, և զորդեակն իւր զէսանշէկն: Նա և զամենայն արեան մերձակայս Նորին՝ զարս և զկանայս, զծերս և զտղայս, զկենդանիս և զհանգուցեալս, զպատուեալս և զզանցարարեալն։ Նա և եթէ արժանի համարիք զանարժան գծաւղս, զծաղկաւղս և զկազմաւղս զՔրիստոսատուր անարժան կրաւնաւորս և
280բ զծնաւղսն ‖ իմ ցաւակցաբար յիշման ի փառաւոր և ի սոսկալի ատեանն, և զհոգևոր ծնաւղն իմ զՍիմէոն աբեղան, և զհոգևոր եղբայրն իմ զսիրասնունդ զՄաղաքիա կրաւնաւորն...։

273

ԾԱՇՈՑ

Երևան 4107

ա

Ա. մասի գրիչ՝ Սարգիս

503 Զմեղսաներկ, զժահահոտ, զարշելի, զաղրագործ զտոկոսիս և զփանաքի զծոյլս ի բարի և արի ի չարի, զբարկացողս և զբանբասողս, ի յամենայն կողմանէ զիմ Թողուլ և զայլոցն քաւել՝ զՍարգիս սոսկանուն եպիսկոպոս և ամենայն. բարեաց Թափուր, աղաչեմ զուբբ հանդիպողքդ, որ յիշմամբ արժանի առնէք ի բարի... և աստուած զձեզ, որպէս և դուք բոլորով սրտիւ յիշել, քան զի բիւր հազար քանքարոց պարտական եմ և իմ կարգէս սեվերես իբրև Յուդա յաստուծոյ, նոյնպէս մեղուցեալ ծառայս աստուծոյ։

Բայց գիտեմք, որ գրիդ բազում պակասութիւն կայ և անթիւ, թէպէտ որ շատ կայ՝ մեր կարն այդ չափդ էր, ձեռս կու դողայր և աչքս բնաւ չէր տեսնուլ, գրչի մատն չորացած էր, միջի մատամբս ծրեցաք, Ռ.(1000) բերան աստուծոյ և ձեզ մեղայ, Թողութիւն առնէք մեր բազում և անթիւ մեղացն և աստուածն, որ առատն է ի տուրս բարեաց, պարգևեսցէ առհասարակ հանդերձ ծնողաւք և ազգականօք, ամէն, զՅովանէս քահանայն, և զԱստուածատուր, և զայլն ամենայն երախտաւորքն մեր յիշեցէք առ Քրիստոս Յիսուս, ամէն։

ԺՍԱ[Հ]Գ. ՔԲԲՀՏ,* դարձեալ ամէն։

Ո՜հ, տէրդ իմ, հիմայ ԽԲ. (42) տարի է, որ մեր բանս այս է. ապա այսոր նման անդէպ չէր եղեալ, խիստ կու ամաչեմ ի ձեզնէ, Թողութիւն արարէք։**

բ

Գրիչ՝ Յունան

9-0 ...Աւարտեցաւ քրիստոսահիմն, առաքելաշէն, մարգարէախաւս այս կտակ յամի ութհարեւրերորդի վացուներորդի և իններորդի Թըւա-

* Այս երկու բառերը տարբեր տեղի փոխարինագիր ծածկագրերով կարդացվում են «ամմէն»։
** Գրված է էջի ներքին լուսանցքի վրա, մանր տառերով։

կանութեան Հայկազեան ազգիս տոմարի (1420), յամսեան հրոտից ԻԱ. (21), պատկեր աւուրս՝ հինգշաբթի, ձեռամբ յոգնապայծառ և ջահաւորեալ տէր Սարգսի և նեբգևեալ և մեղսամակարթ և փծուն գրչի Յունանի, որպէս և գիրգ ցուցանի՝ ի ԻԲ. (22) տետրիցն ի վեր. Արդ, եռափափաք սիրով գրեաց զսա տէր Սարգիս և մեզ գրել ետ անջինջ յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն հոգևոր և մարմաւոր ծնօղաց և երախտաւորաց և ամենայն քրիստոնէից։

921 Քանզի, որք մեծութեան ընչից ըղձանան՝ ոչ ինչ աշխատութիւն զմտաւ ածեն, յայլմէ յայլ անցանել գաւառս հեռագնացս ուղղտաւորութեան, որպէս զի շահն աճեցուցանել մաքթասցեն։ Նա և ընդ համատարած ծովուն ծփանաց նաւարկեալք, որ բարկացայտ ալեաւքն լեռնացեալ կոհակաձև դաշտանան։ Անդընդապտոյտ խորոցն բզացեալ կուտիցն մէտ առ մէտ ալեացն ահ պակուցանող տեսողացն արկանելով, իսկ աբիտցեալքն ստորիջիցն ի խիւզս խոռոջիցն, ի խորս խաւարային ձորոցն համարձակին, ի քարաժեռս դժւարամուտս տեղեացն, ի խնդիր ականց զանազանից, լաւ համարելով զմահ անձանց, քան թէ ունայն ձեռաւք զվատացն ժառանգել զանուն։ Եւ այլք, ըստ քրաջական արուեստին, հալոցաւք հնոցացն զոսկւոյն զգիւտ արուեստաւորեալ՝ յառաջ բերեն զանաւթն պատւական։

Ըստ նմին աւրինակի և ես տառապեալ ոգի տէր Սարգիս Պարտաւեցի ի խնդիր ելայ այսմ հոգենորոգ ծաղկաւէտ, վարդափթիթ, անոյշահոտ բուրաստանիս, և գծագրեցի զմարգարտաշար և զանառիկ փարթամութիւնս մանկանց Սիոնի և զուրախարարս սուրբ եկեղեցւոյ, ի յիշատակ վերոյգրելոցն ամենայնի, յուսալով յաստցեալն, թէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանի նորա յԵրուսաղէմ.

Եւ քանզի ունի սա զբոլոր մասունս տօնից տէրունականաց, զոր սուրբ հարքն հաստատեցին՝ զընթերցւածսն Յակոբոսի տեառն եղբաւրն և զԿիւրղի Երուսաղէմացւոյն, և զԳործս առաքելոցն՝ կաթողիկէից թղթովքն և Յովհաննու աւետարանաւն, և զտաւնանամակս սրբոց առաքելոցն, մարգարէից, վարդապետաց, հայրապետաց, մարտիրոսաց,
922 ճգնաւորաց, կուսանաց, զկիրակէի, ‖ զչորեքշաբթի և զուրբաթի, յիսկըզբանէ տարւոյն մինչև ցկատարումն տարւոյն ամենայն աւուրս պատշաճի իւրում ունի յինքեան զգիրք և զաւետարան։ Եւ վասն տօնիցս կարգելոց մի ոք յերկւասցի, զի կարգեալ է զսա սրբոց հարանցն և սուրբ վարդապետին Գէորգայ, ի սուրբ ուխտն, որ կոչի Դրազարկ, ի սահմանս Կիւլիկեցւոց, զոր ընկալեալ լուսաւորեցան սուրբ եկեղեցիք։ Իսկ երջանիկ քահանայն Տիրացու, ի քաղաքէն Մշոյ, որ կարողութեամբն աստուծոյ և հրամանաւ երանեալ վարդապետին Ստեփանոսի, որ ի վանս Իննակնեան, որ յանուն սուրբ Կարապետին, ի գաւառին Տարօնոյ, զայս ամենայն բազմութիւն ծաղկանց ի հոգւոյն սրբոյ գալստեան աւրէն մինչ ի մեծ պահսն աղուհացից շարագրեաց, ի վայելումն և ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ...։

274

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նոտ. 62—63 և № 4515, էջ 123—124, Բարերդ

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Խզան

...[Գրեցաւ] ի մեծ Թուիս Հայոց ՊԿԹ. (1420), ի կաթողիկոսութեան Հայկազեան սեռի տեառն Գրիգորի, *և ի մերոյ կաթուղիկոսութեան* Աղթամարայ *տեառն* Դաւթի. *և ի թագաւորութեան այլասեռից* Ղարայ-Յուսուֆի...: *Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքս* Խզան, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, և սուրբ Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, և սուրբ Գէորգայ, որ է սակաւ մի հեռի։*

Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Ստեփաննոս *քահանայի՝ սուտանուն և ախմար գրչի և անարժանի...։ Գրեցի անարժան ձեռօք իմովք յընտիր և ի ստոյգ օրինակէ, կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ, ի դառն և ի նեղ ժամանակի, ի վայելումն անձին* Ներսէն *քահանայի, և որդւոյն իւրոյ* Թոմայ *քահանայի, և դեռաբոյս զաւակին* Յոհաննիսի: *Եւս առաւել զննջեցեալս և զծնողս իմ՝ զ*Յովհաննէս *և զմայրն իմ զ*Աւագ-Տիկին *աղաչեմ յիշման արժանի առնել։ Եւս առաւել զհոգևոր եղբարս իմ... զ*Աւետիս *վարդապետն և զ*Ներսէս *կրօնաւորքն, և զհոգևոր զաւակն մեր զ*Սուքիաս *կրօնաւորն, և զամենայն արեան մերձաւորս մեր առհասարակ յիշեսջիք ի Քրիստոս։*

275

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Լալայան, Ջաւախք, Ազգ. հանդէս, Բ. 1897, էջ 286

Գրիչ՝ Յովհաննէս գրչիկ

...Ի հայրապետութեան Հայոց տեառն Յակովբայ, *և յեպիսկոպոսութեան տեառն* Խաչատրի *արհեպիսկոպոսի վերադիտող* Հացունեաց *գաւառի։*

276

ՄԱՇՏՈՑ

Երևան 5917

Գրիչ

ա

98 բ *Զհաւատարիմ և զհոգևոր մայրն իմ զ*Շնորհնոր, *որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, պատահողք տառիս, յիշման արժանի առնէք զնա։*
Թվ. ՊԿԹ. (1420).

Բ

154 ա Զնազելի և զհոգևոր մայրն մեր զՇնորհաւոր, որ ձեռնտու և աւգնական եղև ի սուրբ գիրս, պատահողք սուրբ մատենիս յիշման արժանի առնէք զնա, և մեղաց թողութիւն խնդրէք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։ Եւ ինձ՝ անպիտան գրծողիս, և իմոցն ամենայնի.

Գրեցաւ ի թվ. Հայոց ՊԿԹ. (1420)։

277

ՃԱՇՈՑ

Երևան 4522

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Աղէթ

ա

431 ա ...Աւարտեցաւ քրիստոսահիմն առաքելաշէն մարգարէախօս այս գիրք յամի Գ. և Հ. Թուականիս Հայոց (1421), ձեռամբ Կարապետ աբեղայի, ի խնդրոյ բարեմիտ հիւսանն Յոհաննիսի: Քանզի որք մեծութեան ընչից ըղձանան՝ ոչինչ աշխատութիւն զմտաւ ածեն՝ յայլմէ յայլ անցանել գաւառս հեռագնաց ուղեորութեան, որպէսզի ղշահն աճեցուցանել մարթասցեն։ Նաև ընդ համատարած ծովուն ծփանաց նաւարկեալք, որ բարկացայտ ալեաւքն լեռնացեալ կոհակաձև դաշտանան, անընդապտոյտ խորոցն բքացեալ կուտիցն, մէտ առ մէտ ալեացն, ահ պակուցանող տեսողացն արկանելով։ Իսկ արիացեալքն ստորիջիցն ի խիւղս խոռոջիցն, ի խորս խաւարային ձորոցն համարձակին, ի քարաժեռս դժուարամուտս տեղեացն, ի խնդիր ականց զանազանից, լաւ համարելով զմահ անձանց, քան թէ ունայն ձեռաւք զվատացն ժառանգել զանուն։ Եւ այլք, ըստ քրէական արուեստին հալոցաւք հնոցացն՝ զոսկւոյն զգիւտ արուեստաւորեալ, յառաջ բերեն զանաւթն պատուական։

Ըստ նմին աւրինակի և աստուածասէր Յոհաննէսն հեւսն՝ Ամիրզայն, որ ոչ ունէր զաւակ մարմնաւոր, զի միակեց էր և անախտ ի մարմնական ամուսնութենէ, վասն որոյ ի խնդիր եղեալ այսմ հոգենորոգ և ծաղկաւէտ, վարդափթիթ, անուշահոտ բուրաստանիս, և ստացաւ զմարգարտաշար և զանառիկ փարթամութիւնս՝ զպայծառութիւնս մանկանց Սիոնի և զուրախութիւնս սուրբ եկեղեցւոյ ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի ծնողաց իւրոց Աւետիսին և խաթլու-Մելիքին, և եղբարցն Սարգսին և Մարտիրոսին, Շնոհֆորին և Շամշին ...։

431 բ ...Եւ վասն տաւնիցս կարգելոցս [ի սմայ] մի ոք յերկւասցի, զի կարգեալ է զայս սրբոց հարանցն և սուրբ վարդապետին Գէորգեայ, ի սուրբ ուխտն, որ կոչի Դրազարկ, ի սահմանս Կիւլիկեայ, յերկրին Սըսայ, զոր ընկալեալ լուսաւորեցան եկեղեցիք Հայաստանեայց ի պայծառ տաւնակարգութիւնս։ Իսկ երջանիկ քահանայն Տիրացու, ի քաղաքէն Մըշոյ, որ կարողութեամբն աստուծոյ և հրամանաւ երանեալ վարդապետին Ստեփաննոսին, որ ի վանսն Իննակնեան՝ որ յանուն սուրբ Կարապետին, ի գաւառին Տարաւնոյ, զայս ամենայն բազմութիւն ծաղկանց՝ ի հոգոյն սրբոյ գալըստեան աւրէն մինչ ի յաւագ պահսն

աղուհացից շարագրեաց ի վայելումն և ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ։ Վասն որոյ հայցեմք յաստուծոյ, զի զցաւղն ողորմութեան ցաւղեսցէ յոսկերս նոցին, և բուսուսցէ զնոսին յօրն վերջին...։

Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ և կամ աւգտութեամբ ինչ իւիք, յիշեցէք ի միտս բարիս և ի պատկանաւոր խնդրուածս զստացող գրոցս՝ զմիակեց Յոհանէս հեւսն, և զծնողսն իւր, նաև զԿարապետ աբեղայ՝ գծող սորին, որ բազում աշխատութեամբ գրեցի զգիրքս յԱղէթ, ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ, ի խնդրոյ Յոհանէս հիւսանն, որ էր նա անկին և անտուն, վարուքն մաքուր և ողջախոհ, անբամբաս և անպարսաւ ի բասբանաց մարդկան։

Վասն որոյ և ես տեսի զյաւժարութիւն կամաց նորա և զբարի
մտածմունսն, և յանձն առեալ գրեցի զսա բազում աշխատութեամբ և
տառապանաւք՝ յահ և ի փախ, սասանմամբ և դողութեամբ։ Զի Շահ-
րուխ չաղաթայն՝ բարեսէր և արդարադատ արքայն, եկն ի զԽլաթ
432ա և փախոյց զԹուրքմանն, և շատ պակասու ‖ թիւն եղև մեզ և շատոց,
զի Թուրքմանն զառաջինն փախեաւ ի ներքին երկիրն, և անտի դար-
ձեալ եկն ի վեր Թուրքմանն բազում զաւրաւք, Ճ. և Ծ. հազար
(150,000) ձիաւորաւք, և խիստ խայտառակ կոտորեցան ի չաղաթի
զօրացն, ի գաւառն Վաղաշկերտոյ, մերձ Բագւանայ։ Բայց զի ողոր-
մած էր Շահռուխըն և քաղցր էր բարուքն՝ թոյլ ետ նոցա փաղչել
մազապուրծ, և զորս գերեացն՝ ազատ արար։

Եւ մեր՝ գրելն զգիրքս յայս պըղտոր տարիս եղև, որ էր հեծելաշարժ, սըղութիւն հացի և ամենայն իրաց պակասութիւն։ Իսկ բարեսէր Յոհանէսն յայս գառն տարիս, վառեցաւ ի սէր գրոցս, զըրկեաց զմարմինն և զաւրացոյց զհոգին։ Վասն որոյ ոչ ունին իշխանութիւն եղբարք սորա և կամ այլ ոք յազգականաց տիրապետել զգիրքս, զի ի սմանէ ընծայեալ է աստուծոյ, յոր տեղ որ լինի, և այլ մարդոյ հուքըմ ոչ կայ ի վերայ գրոցս, զի աստուծոյ նըւիրեալ է։*

Բ

27 ա Ո՜վ եղբայր, անմեղադիր լերուք, զի անկոխել է թուխթս,** ոխ ի վատ մարդոյ գարդէս։

Գ

186 բ Քրիստոս աստուած, քոյ աստուածային յարութեամբդ ողորմեա ստացողի սուրբ տառիս ուսթա Յոհանիսին, և ծնողաց նորին՝ Աւետիսին և Խութլու-Մէլէքին, և եղբարցն՝ Ամիր-Սարգսին և Մարտիրոսին, և հարսներուն՝ Շայ-Մէլէքին, և այլ արեան մերձաւորացն, ամէն, եղիցի։ Այլև բազմամեղ և տըրտում ոդոյ Կարապետ գրչի և իւր ծնողացն, և եղ-

---

* Որպես հիշատակարանի շարունակություն Կարապետ Աղեթցին հետագայում ավելացրել է իր ուսուցիչ Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղետից» չափածո հիշատակարանի 279—417 տողերը (տես 1422-ի թվաշարքում)։

** Բնագրում՝ «թողխս»։

րաւրըն՝ Թումա նորընծայ քահանային։ Այլև Թումա վարդապետին
իմոյ, որ կու աշխատի ի Թըղթի կոկելն, և իւր ծնողացն, և մեր աշա-
կերտիս՝ Աւետարիս, որ իբրև զջուր է ի ձեռս մեր, Քրիստոս զսա
աւրհնէ, ամէն։

278

ՃԱՇՈՑ

Երևան 4695

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Աղթամար

464 ա ...Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով
սրբասնեալ և բարեմիտ կրաւնաւորն Յոհանէս, և ցանկացեալ այսմ
աստուածային փարթամ գանձուցս, և ջերմեռանդ սիրով հոգոյն սըր-
բոյ և մեծ փափաղմամբ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց
և ի քրտնաջան աշխատանաց, ի վայելումն անձին իւրոյ և յետ աս-
տի կենացս ելանելոյ՝ յիշատակ բարի հոգոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց
Կիրակոսի և Ուլուն-Մէլիքի, նաև եղբաւր իւրում Յովանիսի, և զա-
ւակաց նորա Սադսալի, և Մարմէլիքի, և կենակցին Մարեմի, այլ և քը-
ւեր նորին Խութլու-Մէլիքի, և զաւակացն Աստուածատրոյ, Ստեփանոսի
և Յոհանիսի, և սնուցողացն իւր Շնոհվորի և Նոր-Տիկնայ, և այլ ամե-
նայն արեան մերձաւորաց իւրոց և երախտաւորաց՝ կենդանեաց և
հանգուցելոցն ի Քրիստոս։ Եւ ետ զսա ընծայ և նուէր ի սուրբ և ի
հռչակաւոր և յանուանի ուխտն, որ կոչի Վարագ, ի դուռն սուրբ և
գերամաքուր Աստուածածնին, և սրբոյն Ցոհաննու աւետարանչի, և
յայլ բազմահաւաք սուրբ եկեղեցեացն, որպէս զի վայելեսցեն զսա ման-
կունք սուրբ եկեղեցեացն և ուրախասցին սովաւ հանապազ ընթերց-
մամբ, և յիշեսցեն անմոռաց յիշմամբ յերկնագնաց յաղաւթս իւ-
րեանց զյառաջ յիշեցեալ ստացող գրոցս՝ զՅոհանէս...։

Ի յառաջնորդութեան սուրբ ուխտին իմաստուն և հանճարեղ
վարդապետին Մարգարայ կոչեցեալ, այլ և յեպիսկոպոսութեան տեղոյն
սրբասնեալ եպիսկոպոսացն տէր Ցովանիսի և աէր Աառմոյ։ Ի թվա-
կանիս Հայոց ՊՀ. (1421) ամին, ի դառն և ի վշտաբեր ժամանակիս,
յորում կամք ի նեղութիւն և ի տառապանս ի ձեռն այլասեռից ազ-
464 բ գաց, զի զամենեսեան չարչարեն և նեղեն, տուժեն և || տուգանեն,
կեղեն և կեղեքեն, և այլ ազգի-ազգի վշտաւք տանջեն։

Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, և ոչ
դառնամք և ոչ ապաշխարեմք զանչափ չարիս մեր, այլ աւր[ը]ստաւ-
րէ առաւելումք ի մեղս և արհամարհեմք և անարգեմք զամենայն
խրատ և զբանս սուրբ գրոց, որ է ի շահ և յաւգուտ հոգոց մերոց։
Այլ և առ մեզ է տեսանել զբանս առաքելոյն, որ ասէ, թէ ի ժամա-
նակս յետինս, որ եմք մեք, յարիցեն մարդք արհամարհողք, ժպիրհք,
յանդուգն, անսուրբք, աննուէրք, ուսումնատեացք, արծաթասէրք, անձ-
նասէրք քան աստուածասէրք, ծոյլք, գատարկակեացք, չարաճճիք,

որպէս առ մեզ և ի մէնջ է ուսանել, զի փոխանակ բարոյ չարք եղաք՝
ամբարտաւանք, ամբարհաւաճք, վէսք, սնափառք, ստախաւսք, նեն-
գաւորք, բամբասողք, շոգմոգք, հայհոյիչք, մարդահաճոյք, կեղծա-
ւորք, արատաւորք, նախանձոտք, երախտամոռացք, եղբայրատեացք,
մանաւանդ թէ աստուածատեացք իսկ, ևոր այլ ևս սոյնպիսիս և յա-
ճախագոյնս քան զսոյնս հայրն չարեաց և ծնիչն անաւրէնութեան՝
այսինքն սատանայ, սերմանեաց ի մէջ զուտ և սուրբ ցորենոյն, այ-
սինքն ի սպասաւորքս սրբարար և աստուածընկալ սեղանոյն և զմար-
մին և զարիւնն Քրիստոսի պատարագողացս, զի ոմանք զսահմանեալ
աղօթիցն անփոյթ արարեալ անխտիր՝ ի տաւնս տէրունականս ի մար-
մին և յարիւնն Քրիստոսի մերձենան, և կէսք զուսման և զգիտու-
թեան ոչինչ փոյթ առնեն, այլ լոկ միայն տգիտաբար զքահանայա-
կանն գործեն զգործ, և կէսք զհետ գինոյ և ցքոյ շրջին և երեկանան
ի նմա, և ոչ միայն այս, այլ և եպիսկոպոսք ի վերայ եպիսկոպոսաց
յառնեն, և քահանայք ի վերայ քահանայից, և ուխտաւորք ի վերայ
ուխտաւորաց, և կրաւնաւորք ի վերա կրաւնաւորաց, և զազատն ի
բնէ՝ զեկեղեցի ասեմ, զոր Քրիստոս իւրով սուրբ արեամբն ազատեաց,
մեզ ի հարկ և ի ծառայութիւն արկաք անաւրինաց, յաղագս փառաց
և անձնահաճոյ կամաց. և արդ, որքեմ թողութեան արժանաւոր գտա-
նիցիմք։ Եւ արդ, բաւականացի ասացեալս, զի ոչ եթէ նախատելով
465 ա կամ չա ‖ րախաւսելով զումեքէ գրեցի զայս, այլ ի խրատ և ի ղըղ-
ջումն բարեմիտ ընթերցողացն ասեմ և լսողացն՝...։
Եւ արդ, ես՝ ...սուտանունն կրաւնաւոր Թումայ գծողս, տեսի
զսէր և զվափագ սորա, զոր ունէր առ հոգեորսն, և իմով տկարու-
թեամբս յանձն առի, և ամենակարող զաւրութեամբն Քրիստոսի կա-
տարեցի զսուրբ գիրքս զայս, բազում և մեծ աշխատանաւք հասուցի
զսա յաւարտումն յաստուածարնակ և յանառիկ կղզիս Աղթամար, ընդ
հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Գեղարգեանս, ի հայրապետութեան
տեառն Դաւթի կաթողիկոսի, զոր տէր պահեսցէ զտեղիս զայս խաղա-
ղութեամբ, աթոռակալաւն իւրով, ամէն...։
465 բ ...Նաև զծնօղքն մեր զԽաչիկ և զԱզիզ-Մէլիք, և զեղբարքն իմ
զՆաւասարդ՝ տարաժամ հանգուցեալն, և զԳէորգ քահանայ, և զքոյրն
մեր զՀալիմ-Խաթունն, Նաև զհաւրեղբարքն իմ զԶաքարիայ գրագիր, և
զԿարապետ քահանայ, և զՅովանէս՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և զայլ
ամենայն ազգատոհմքն մեր և զերախտաւորքն՝ զկենդանիսն և զնըն-
ջեցեալսն, այլ և զուսուցիչն մեր՝ զիմաստասէր փիլիսոփայն՝ զԱառմ
վարդապետ, և զԱւետիս, և զՅովանէս կրաւնաւորք, որ աշխատեցան ի
կոկել թղթիս, այլև զայնոսիկ, որ բոլոր սրտիւ մեզ աստուած-ողորմի
ասեն յիշելոցս ի սմա՝ ստացողաց և գրողաց և այլ աշխատաւորացն,
ամէն...։

279

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4624

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Լիմ

ա

287 բ ...Ես՝ յետինս ի գրչաց և անպիտանս յամենայնի Յովանէս, անուամբ կրաւնաւոր և գործով թափուր յամենայն վարուց կրաւնաւորաց, որ անուամբս միայն եմ ձեւացեալ առանց գործոց, ըստ այնմ որ ասէ՝ Մարմնովս արտաքուստ պճնիմ և անձամբս երփնիւ ճային ճանաչիմ, գրեցի զսուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊՀ. (1421), ի սուրբ մենաստանիս, որ է հանդէպ Արճիշոյ, կղզի վայելուչ ի ծովս Բզնունեաց՝ Լիմն կոչեցեալ, ընդ հովանեաւ հոյակապ և հռչակաւոր տաճա-
288 ա րիս աստուծոյ, որ յանուն սրբոյն Գէորգեայ զաւ || րավարին կառուցեալ է, որ է նման վերին խորանին։ Եւ ետու զսուրբ աւետարանս սուրբ եկեղեցւոյս սուրբ Գէորգ կոչեցեալ, յիշատակ բարի հարազատին իմ Վարդան որբասէր կրաւնաւորի, հանգուցելոյն ի Քրիստոս, որ յայսմ ամի փոխեցաւ առ աստուած, յուլիս ամսոյ ի Դ. (4), և եդաւ ի տապանի յարեւելից կողմանէ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյս, ի թեւս հարաւոյ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք զսուրբ աւետարանս կամ աւրինակէք յիշեսջիք զՎարդան կրաւնաւորն, և մեղաց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ, զի և ձերն թողցի, ամէն։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի դառն և ի չար ժամանակի, ձեռամբ անարժան և փցուն գրչի Յովանիսի, զի իմ անընդունակ եղեալ յարուեստ գրչութեան, և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ։ Այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց մեզ մարդասէր հոգին բազում աշ-
288 բ խա || տանաւք և տրտում և ցաւ[ա]գին անձամբ գրեցի մեղսամած մատամբք իմովք, կենաւք տառապեալ և տարակուսեալ մեղաւք։

Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, յիշեսջիք յաղաւթս ձեր զՎարդան սրբասէր կրաւնաւորն և զիս՝ զմեղուցեալս յամենայնի, և զծնաւղսն մեր զՊաւղոս և զԽութլու, և զԱննա՝ քոյր իմ, և զհարեղբայրն մեր զՄաթէոս, և զկենակիցն իւր զՄարթա՝ զհանգուցեալսն ի Քրիստոս։

Այլ և զհոգևոր ծնաւղսն մեր և զուսուցիչսն՝ զԴաւիթ կրաւնաւորըն և զծնաւղսն իւր զԹովմայ քահանայ... և լի սրտիւ աստուած ողորմի ասացէք։ Այլև զառաջնորդ սուրբ ուխտիս զՅոհանէս խաչընդուս կրաւնաւորն, և զմիաբանքս՝ զտէր Յովհաննէս եպիսկոպոս, և զՍարգիս փիլիսոփայն, և զՄկրտիչ կրաւնաւորն, և զՍտեփաննոս եկե-
289 ա ղեցպանն, և զԹովմա կը || րաւնաւորն, և զհարազատն իւր զՅակոբ կրաւ[նա]ւոր, և զհայրն իւրեանց զՍտեփաննոս։ Այլ և զՎարդան փիլիսոփա, հանդերձ հարազատիւն իւր Թորոսիւ, և զՅովաննէս, և զերկու հարազատսն իւր զՅակոբ և զՄարտիրոսն՝ զքաջսն և զարիսն ի գործ

հոգևորս և մարմնաւորս, և զծեր հայրն նոցա զՍտեփաննոս, և զԿարա-
պետ աբեղայն, և զՅովանէս Արճիշեցի, և զամենայն գործաւորք դրան
սուրբ եկեղեցւոյս՝ զտնտես, զմաճակալ, զհովիւ և զամե[նե]սեան՝ զմեծ
և զփոքր, աղաչեմ յիշել ի տէր, որք յաւժար կամաւք աւգնական
եղեն մեզ։ Այլ և զհոգևոր եղբայրս մեր զԳրիգոր կազմաւղ և զծնաւղ-
սըն փւր զհոգևոր և զմարմնաւոր, որ բազում աշխատութեամբ աւգ-
նական եղև մեզ յամենայն գործ և ի սըպա[սա]ւորութիւն, հատուսցի
սմա փոխարէն յարքայութիւնն աստուծոյ հազարապատիկ և բիւրա-
պատիկ, ամէն։
:389 բ Դարձեալ, յերես ‖ անկեալ աղաչեմ զամենեսեան, որ խնամով պահէք
հանապազ ի սուրբ սեղանն, և խնամք աստուածային ի վերայ խնա-
մով պահողին եղիցի, ամէն։ Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսուրբ
աւետարանս ի դրանէ սուրբ եկեղեցւոյս՝ ծախելով, կամ գրաւելով,
կամ այլ ինչ պատճառաւ։ Եւ եթէ լրբի ոք և յանդգնի՝ զանէծսն Կա-
յենի առցէ և զԾուդային և զխաչահանուացն և զնմանեաց նոցին,
ամէն։
Եւ թէ փախուցանէ ոք և ի գերողաց ազատէ եկեղեցւոյս համար՝
աստուած զնա ի մեղաց ազատէ և ի գերոզէն սատանայէ փրկէ, և
առաջին արդարոյն Աբիլի, և միջնոցն, և ներկայիս, և վերջնոցն աւրհ-
նութեանցն և պսակացն և փառացն դասակից և մասնակից և պսա-
կակից և փառակից արասցէ, ամէն, և որք զամէնն ասեն, ամէն։

Բ

.221 ա Ցամի ութհարիւր և եւթանասուն թուականի Հայոց (1421), յետ
մահուան Ղարա-Յու[ս]ուֆին եղեւ խռովութիւն և յոյժ սասանումն ընդ
ամենայն երկիրս Հայաստանեայց, զի հեծելազաւրքն ամենայն շփոթեալ՝
զմիմեանս հարկանէին և կողոպտէին։ Որ և գունդ մի ի զաւրացն հատ-
եալ, զորս փաւռնակ կոչէին՝ հինգ հազար տուն, և եկեալ հասին յեր-
կիրն Քաջբերունւոյ, և բազում աւար և գերի առին։ Եւ էր որդի մի
Յուսուֆին՝ չարաճճի և անագորոյն և յոյժ անողորմ ի բերդն Արծկոյ,
ելանէ ընդ առաջ նոցա և առնէ սէր ընդ նոսա, և դարձուցէ և սփռէ
ի վերայ երկրին՝ տնով և խոստակաւք։ Եւ զչարչարանսն և զաղէտս
կսկծանացն ո՛ կարէ ընդ գրով արկանել, զոր առնէին ընդ տառապեալ
ազգս քրիստոնէից Ե. (7)ամիս բոլոր։ Եւ ես՝ յետինս ի մանկունս
-221 բ եկեղեցւոյ Յովանէս և հարազատս իմ՝ Վարդան սրբասէր կրաւ[նա]ւոր ‖
եկաք փախստական ի հռչակաւոր մէնաստանս Լիմն կոչեցեալ։ Եւ
եղև զըաւ կենաց եղբաւրս իմ Վարդան կրաւնաւորի, և եթող ինձ սուգ
անմխիթարելի և վէրք անբժշկելի։ Եւ ես գրեցի զսուրբ աւետարանս
և ետու սուրբ եկեղեցւոյս յիշատակ եղբաւր իմոյ Վարդան աբեղայի՝
հանգուցելոյն ի Քրիստոս, այլ և ծնողաց իմոց՝ հոգևորաց և մարմ-
նաւորաց, և ինձ՝ մեղապարտի։ Ո՛վ նուրբ առաջնորդք և միաբանք
սուրբ ուխտիս, յերես անկեալ աղաչեմ զձեզ չհեռացուցանել զսա ի
դրանէ սուրբ եկեղեցւոյս ոչ ծախելով և ոչ գրաւելով, և թէ ոք լրբի
և յանդգնի՝ զանէծս առնու նա յիրաւի զԾուդային և զայլ խաչահա-

նուացն, այլ և զառաջնոյն՝ կայէնի և զվերջնոյն՝ զնեռինն, ամէն։ Եւ խնամքն աստուծոյ ի վերայ խնամով պահողին եղիցի յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գ

87 ա Զվարդան սրբասէր կրաւնաւորն՝ զկոկոզ քարտխսխս, որ յետ Թղթիս կոկելոյ Ը. (8) աւր եկաց և փոխեցաւ առ յոյսն ամենեցուն՝ Քրիստոս աստուած, աղաչեմ յիշել յաղաւթս և աստուած-ողորմի ասել, զի և դուք ողորմութիւն գտջիք յողորմածէն աստուծոյ, ամէն։*

280

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Առ Կ. Եզյան, Պետերբուրգ Մ.Տ.Մ.**

Գրիչ՝ Յովհաննէս

124 բ ...Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ տառս այս իմաստապատում որ կոչի Լուծմունք արտաքնոց՝ բացայայտեալ զսա մեծ վարդապետին Հայոց Գրիգորի, ի քարանձաւս վիմանց լերանց, յորում փախուցեալ էաք [յերկիւղէ] անհուն զօրաց Ջաղաթայից և Թուրքաց, յորում նեղէին զմեզ յերկուց կողմանց։ Ի թվին Հայոց ՊՀ. (1421), ձեռամբ անիմաստ և պիտակ անուն վարդապետի Յովհաննիսի ի պէտս կարեաց իմոց։ Եւ որոց հետեւեալ և որք հետեիք յիշեցէք ի տէր Յիսուս զՅովանէս մեղուցեալ վարդապետ և զծնողսն իմ։

281

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՊԱՐԱԳՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Վենետիկ 8

Գրիչ՝ Մկրտիչ Եղեգեցի

... Եւ ետու զգիրս յիշատակ հոգւոյ իմոյ՝ հոգեւոր եղբաւր իմոյ Թովմա վարդապետի աստուածաբնակ ուխտին Մեծոփայ վանուց, վասն զի նա զԱռ որս գիրս Աստուածաբանին ինձ և ազգականին իմոյ Մարգարէ վարդապետին ինքնագիր ձեռաւք գրեալ շնորհեաց մեզ.***

Ի ՊՀ. (1421) թվին մեք կացաք ի սուրբ մենարանս Վարագ, յահէ թագաւորին արեւելից Շախրուհ կոչեցեալ, առ հոգեւոր եղբարս մեր Մարգարէ վարդապետին, և բաղձալի սրբազան եպիսկոպոսին տէր Յովհաննիսին... և տեսաք զմածեալն արեամբ Յիսուսի զփրկական փայտ խաչին Վարագայ...։ Եւ սոյն ամի յաղթեաց չաղաթէն զԹուրքմանն՝ զորդիք Յուսուֆին ի Վաղարշակերտ, և դառն գերեաց։

---

* 136 ա—137 բ էջերի վրա կա մի հիշատակագրություն, որը հետաքրքրական է միայն իր վերջին պարբերությամբ. այդտեղ ասված է. «Որ խնամով և շուշափայիւ պահէ զսուրբ աւետարանս, խնամքն աստուածային ի վերայ նմին եղիցի, ամէն»։

** Ձեռագիրը գնված է եղել Սանասարյան վարժարանի համար։ Ջոհ է գնացել հրդեհի։

*** Հմմ. № 148 հիշատակարանի հետ (էջ 144)։

282

ԲԱՌԳԻՐՔ

Երևան 3201

Ստացող՝ Գրիգոր
վայր՝ Բերկրի՞

1 ա *Ով | | | կորովամիտ վերածնող այսմ լուսազարդ սուրբ տա[ռիս], յիշեցէք յերկնաբացիկ սուրբ յաղօթս ձեր զնուաստ ոգի վարդապետս* Գրիգոր՝ *սպասաւոր սուրբ ուխտին Առաքելոց, որ ստացա զս[ա յ]աւարէ երկրին* Տար[բերու]նոյ, *որ այժմ* Բերկրի *կոչի։ Եւ եղև ստացուած սորա ի թվ. ՊՀ. (1421), յամի յորում եկն ազգն Նետ[ող]աց և աւերեաց զբոլոր ա[շխարհս] Հայաստանեայց, աւախ։*

283

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նոտ. 49–50, Արճէշ, Արծուաբեր Աստուածածնին վանք

ա *Ստացող՝* Կարապետ
վայր՝ Սուխարայ վանք

...Դարձեալ, ես՝ նուաստս ի բանասիրաց և վերջինս ի վարդապետաց Կարապետ *կարօտ բանի՝ փափագող էի աստուածաբնակ քաղաքին* Երուսաղէմի, *որ բազում անգամ ջանայի գնալ և ոչ յաջողէր... զի բուռն էր հարկապահանջութիւն* Ղարայ-Ուսուֆ *խանին ի վերայ մեր...։ Եւ ի միւսում տարին գութ մարմնական ծնողաց նեղեաց զմեզ և բնական աշխարհի սովորութիւն, և խնդրեցաք յաստուծոյ հասուցանել զմեզ [Յերուսաղէմէ] յերկիրս* Քաջբերունի՝ *ի վանքս* Սուխարայ, *որ այժմ* Խառաբաստայ *վանք կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս։ Եւ տեսեալ իմ զսուրբ աւետարանս ի յ*Երուսաղէմ, *գրեալ ձեռամբ* Յոհաննէս *կրօնաւորին, որ փակակալ* էր աստուածային սուրբ գերեզմանին, և ջահավառ սուրբ Գողգոթային, և գրեալ ի մէջ սուրբ Յարութեան։ Վասն որոյ ցանկացող եղէ ես* Կարապետ *վարդապետս, զի յայն աւուրն էր գրեալ զաւետարանս, որ աստուածային խորհուրդ մատուցեալ էր ի սուրբ Գողգոթայ։ Եւ գնեցի զսա ի հալալ վաստակոց իմոց, յիշատակ ինձ, և ծնողաց իմոց, [և] հօրեղբօրն իմում տէր* Զաքէոսի *...։*

*Եւ դառնալն իմում ոչ եղէ արժանի տեսանել զեղբայրն իմ զ*Յոհաննէս, *զի փոխեալ էր առ Քրիստոս ի չար և ի դառն ժամանակիս, որ վերջացեալ էր* Ղարայ-Ուսուֆն *.... Եւ իմ՝ այրեցեալ սրտիւ նուիրեցի զսուրբ աւետարանս դռան սուրբ Աստուածածնի տաճարիս...։*

Բ

*Եւ զիս զ*Հայրապետ *կազմողս յիշեցէք ի Քրիստոս, ի թուականութեան հայոց ՊՀ. (1421),*

---

* *Տպված է «փակեալ» (՞)։*

284

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Վիեն. 419. Տաշ. Ցուց., էջ 873

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Սանահին

ա

237 ա– ...Կատարեցաւ ցանկալի երգարանս երաժշտական ձայնաւորաց
239ա ի թվականութեան հայկազեան տումարի յութից հարիւրոց եւ Է.—եակ տասանց (1421). յամի յորում եղեւ ելանել ասպատակաւ՝ ի մերում ժամանակս չորրորդ անկամ, ազգին Նետողաց՝ խորագէտն անուանեալ ազանց Շահռուխ փաթշահին Պարսից, սատակչին Թուրքման ազգին․ ի յայս եւ ի սոյն ժամանակս գրեցաւ տետրակս ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտս որ կոչի Սանահին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ հրաշափառ Կաթուղիկէիս, յառ ոտս Ղազար վարդապետի եւ հարազատ եղբօր իւրոյ Յովսէփ փիլիսոփայի, ձեռամբ ամենամեղ եւ փցուն գրչի Յոհանիսի, ի լաւ եւ յընտիր աւրինակէ Առաքելցոյ, ի վայելս անձին սրբասէր աշակերտի եւ ըստ հոգւոյ եղբօր մերոյ Մելքիսեդ կուսակրաւն քահանայի։ Վասն որոյ աղաչեմք զամենեսեան, որք աւկտիք ի սմանէ ուսմամբ կամ գաղափար առնելով, յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զմեղապարտ գրիչս զՅոհանէս, եւ զծնօղսն իմ, խնդրելով ի տեառնէ զթողութիւն մեղաց, նաեւ զստացաւղ սորին զՄելքիսէթ ծաղկող եւ կազմող․ եւ զբազմերախտ սնուցօղն՝ զալեօք ծաղկեալ հօրեղբայրն իւր՝ զսրբասէր քահանայն զԴաւիթ, և զքեռին իւր զտէր Զաքարայ, եւ զբարեպաշտ ծնօղսն իւր զհայրն զԽութուխ եւ զմայրն զՄինա-Խաթուն, եւ զհարազատ եղբարքն իւր զՍէթն, զԱթաբեկն, զՄելքի եւ զՅովսէփ, հանդերձ ամենայն լրմամբ յիշեցէք ի Քրիստոս։

բ

233 բ Ո՛վ դասք լուսերամից եւ քաղցրանուագ երաժշտապետք, որք օգտիք ի սմանէ եւ վայելէք՝ զմեղաւոր գծողս յիշեցէք ի Քրիստոս։

285

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 2064

Գրիչ՝ Թումայ Կափայեցի
վայր՝ Տաթև

ա

405 բ Փառք... որ ետ մեզ հասանել ի զըաւ մատենիս աստուածային և զանձիս հոգևոր, ժողովեալ ի գրոց սրբոց՝ ի խրատ և ի լուսաւորութիւն հաւատացելոց, և յաւժանդակութիւն վարդապետաց և աշակերտաց գրոց։

Եւ արդ, եղև գրաւ սորայ ի թուականութեանս Հայոց ՊՀ. (1421), ձեռամբ [յ]ոգնամեղ և տրուպ անուն Թումայի՝ գրոց աշակերտի Կափայեցոյ,* երկրին Որոտեան, ի վանս Տաթևոյ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Եւստաթէի, ի յառաջնորդութեան տէր Ստեփաննոսի ի զարմէն Պուռթելեանց, եղև գրաւ սորայ ի փառս Քրիստոսի աւրհնելոյն, ամէն։

Արդ, և ես՝ Իգնատիոս վարդապետ, տրուպ և յետին ամենայն վարդապետաց՝ մեղսամերձ և դառնացեալ ոգի, ստացայ զգիրքս խրատոյ ի հալալ ընչից իմոց, յիշատակ և բարեխօս ինձ և ծնաւղաց իմոց և ամենայն յարեան մերձաւորաց իմոց՝ եղբարց և քերց և եղբաւրորդաց իմոց՝ քահանայից և աշխարհակ[ան]աց, կենդանեաց և մեռելոց, և ամենայն երախտաւորաց իմոց, առհասարակ, ամէն...։

Բ

380 ա Զսակաւ աշխատողս՝ զՄարտիրոս սուտանուն աբեղա յիշեցէք յաղաւթըս ձեր, ով սուրբ ընթերցողք, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

286

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Ճեմարան Արևելեան լեզուաց 3, Cod. Arm. III Ճ. Յ, ՀԱ, 1892, էջ 80—83

Գրիչ՝ Կարապետ Դերենանցի
վայր՝ Հերմոնի վանք

443 ա–444 ա ... Քարոզգրոցս ցանկացեալ եղէ [ես] Կարապետ Դերենանցի, վասն որոյ յաւժարութիւն սրտիս մոռանալ ետ զտգիտութիւն արհեստիս, զի ոչ գիտէի կատարել զգրագրութիւն, և համարձակեցայ առ ի գրել զաստուածային բուրաստանս...։

Արդ, գրեցաւ սայ ի Հերմոնի վանս, առ ոտս մեծ րաբունապետին Յովհաննիսի, ի թուականութեանս Հայոց ի ՊՀ.(1421), ձեռամբ անիմաստ և ախմար գրչի Կարապետի սուտանուն գրոց աշակերտի | | |** ընդ հովանեաւ] վարդապետաց զերեզմանացս։

Արդ, որք հանդիպիք այսմ տառիս յիշեսջիք ի մաքրափայլ և յարժանաւոր աղօթս՝ զանարժան և զփցուն գրողս զԿարապետս, և զհայրն իմ զՄկրտիչ քահանայն, և զմայրն իմ զԵղիսաբեթն, և զքոյրն իմ զՄարթայն, և զքեռորդիքն իմ զՄեղիտոնն և զՈսկէգոյնն, որ օգնական եղեն ի գնալն իմ առ դասատունն և ետուն գրաստ մի, զոր տէր

* Այս նույն գրիչը՝ Թումայ Կաֆայեցի՝ 1422 թ. ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանում մաղթում է յիշել իր ուսուցչին. «Վարժապետն և զուսուցիչն, զանհաս երաժիշտն և զքաղցրաձայն փիլիսոփայն, զմեծ պարոն Սարկաւագն, զուսուցիչն մանկանց Նոր Սիոնի» (տես «Սիսական», էջ 241)։ Ալիշանի կարծիքով, այստեղ հիշատակվողը Գր. Տաթևացու հաջորդ Մխիթար Տաթևացին է (°)։

** Ջնջված է երեք տող։

աստուած ընդ երկայն աւուրս արասցէ զնոսա, և զայլ ամենայն ազգայինսն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս...։ Նայ և զհոգևոր հայրն իմ՝ զյոյժ երախտաւորն առ հոգևորն և առ մարմնաւորն, զուսուցիչն և զվերակացուն զՅակոբ զկուսակրաւն աբեղայն, զանարատ և զանբիծ փիլիսոփայն՝ զպայծառ ջահն եկեղեցոյ և զուսուցիչն մանկանց նոր Սիոնի, զոր ընդ միոյն հարիւրապատիկ և հազարապատիկ տացէ նմա Յիսուս Քրիստոս վարձս [աշ]խատանաց իւրոց՝ զպսակն անթառամելի և զկեանսն յաւիտենականս։ Նայ և զհարազատ եղբայր նորա՝ զփոխեցեալն առ Քրիստոս [զհա]յրն Մուսեխն, և զաստուածատուր զաւակքըն նորա՝ զԱմիր-Ազահն(*) և զԱմիր-Ճիհանն և զ[Կարա]պետն, զոր աստուած անփորձ պահեսցէ և ընդ երկայն աւուրս արասցէ զնոսա, նայ և զհոգևոր մայր իմ զՄարեմ-խաթունն։ Այլ և զկուսակրաւն աբեղայն զԳալուստ գրոց աշակերտն, որ զաւրինակն շնորհեաց։ Այլ և զբազմերախտ եղբայր իմ ըստ հոգոյ՝ զԿարապետ կուսակրօն աբեղայն՝ ամենայն ժամ օգնական և ձեռնտու եղև ինձ ի գիշերի և ի տուընջեան, և զգիրքս կազմեաց...։

Այլ և զՍարգիս(*) աբեղայն՝ զկատարեալն հաւատով, յուսով և [սիրո]վ։ Ա[րդ], յերես անկե[ալ աղա]չեմ զձեզ մի [մեղադիր լինիք] վատթարութեան գրոյս, զի կար մեր այսչափ էր...։

287

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 151, սյուն. 340—344, Վանի Աբաբուց եկեղեցի

ա

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան

...Եւ գրեցաւ սա ի թվաբերութեանս Հայոց ՊՀ. (1421), ի հայրապետութեան տեառն Պաւղոսի, և մերոյ աթոռակալի և առաջնորդի սուրբ ուխտիս Վարագայ՝ քաջ հռետորի տիեզերալոյս վարդապետին Մարգարէի և տէր Յովհաննէս եպիսկոպոսի, ի քաղաքս որ կոչի Վան, ընդ հովանեաւ սրբազան առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, ձեռամբ անարժան և սուտանուն երիցու՝ Կարապետ անարհեստ գրչի։

Արդ, աղաչեմ զմանկունդ սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա յիշեցէք ի Քրիստոս և ի սուրբ յաղաւթս ձեր զստացող սուրբ աւետարանիս զՍտեփանոս սրբասէր կրօնաւորն և զծնողքն իւր՝ զԹումայ և զՇնոհվոր-Տիկին, և զքեռին զՄկրտիչ կրօնաւոր, որ ի ձեռաց Թամուրին մարտիրոսացաւ, և զպապիկն զՍարգիս քահանայ, և զկենակիցն իւր զԱզիզ-Մէլէք, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս, և զհաւրեղբաւրն զՍտեփանոս քահանայ, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիք և զհանգուցեալսն...։ Եւ դարձեալ, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զՂազար քահանայ, և զծնողքն զՅովհաննէսն և Սարաւթայ, և զեղբայրն զԽնդութէկ՝ զհանգուցեալն ի Քրիստոս...։

Եւ զիս՝ զանարժան գծողս, և զծնողսն իմ զՍտեփանոս քահանայ

և զՄինայ, և զհօրեղբայրն իմ զՄովսէս միայնակեցն, և զեղբայրն իմ զՅովաննէս քահանայ՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և զկենակիցն իմ՝ զԹանգու-խաթուն, և զամենայն ազգականսն իմ...։ Այլ և յիշեցէք ի Քրիստոս զուսուցիչն մեր զՄկրտիչ սրբասնեալ քահանայ, որ բազում աշխատեցաւ ի վերայ մեր...։ Այլ և յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զՍտեփաննոս սպասաւոր բանի, որ այսօր առ մեզ հանդիպեցաւ...։*

Բ

Կազմող՝ Մխիթար Գուզիկ

Արդ, յիշման արժանի առնէք զեղկելի կազմողս՝ զՄխիթար աբեղայս, որ մականուն Գուզիկ կոչի[մ].

Որ մեղաւք լցեալ եմ զհոգիս
Եւ սեաւ ներկեալ քան զԹանաքիս,
Կրպրտաեսակ մըԹացուցի,
Դեղ չեմ գտնուր ես այս վիրիս։
Զձեզ աղաչեմ և պաղատեմ,
Արտասուաթոր ի ձէնջ հայցեմ,
Մի բերան աստուած-ողորմի
Ասացէք մեղաւորիս,
Եւ աստուած ձեզ ողորմի
[Ի] սոսկալի դատաստանին, ամէն...։

288

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6969

Գրիչ՝ Սարգիս

ա

67 ա Զմեղսաներկ անձն զսեվացեալ հոգով Սարգիս եպիսկոպոս՝ անուամբ և գործովք Թափուր ի յամենայն բարեաց, աղաչեմ զձեզ վասն սիրոյն Քրիստոսի յիշեցէք ի տէր, հանդերձ ծնողաւք և ամենայնիւ...։

Բ

205 բ | | | Սարգիս | | | գ]իծս գրոցս հասան[ել] վերջին գիրս։ Գրեցօ | | | յաւուր [Լուսա]ւորչի պահոցս, [չո]րեքշաբԹի, մեհեկի վերջն | | | և անհուն դառնուԹեամբ՝ տեղաց ի տեղս փախչելով, ի յաւտարուԹիւն ընԹանալով, անհանգիստ, քաղց[ած] և ծարաւ, անչափ ով կարէ ի գիր արկանել, ի նետողաց ազգէ, որ կոչի Շաղռուխ. և ապա ի սուտ եղբարց, վայ հազար բերան, [ի Թվական] իս Հայոց ՊՀ°.(1421°)։**

* Հիշատակվում են ձեռագրի գրչուԹյան հետ հեռավոր կապ ունեցող մի շարք այլ անուններ։

** Ամբողջ հիշատակարանը եղծված է, նամանավանդ վերջին այս տողը։ ՊՀ- (1421) Թվանիշերը հազիվ են նշմարվում, և նրանց ճշտուԹյան մասին երաշխավոր լինել չենք կարող։

289

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 3716

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան

ա

... Արդ, զայս պատուական ակնըս շափիւղայ... առեալ բարե-
պաշտ տանուտէրն Յովհաննէս պաշար երկայնաձիգ ճանապարհին, որ
298 բ տանի առ հանդերձե || ալ և ահագին դատաստանն...։
Արդ, յանկ ելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքս, որ
կոչի Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, և
այլ սուրբ եկեղեցեացս։ Եւ ես՝ Թափուրս ի բարեաց գործոց Կարա-
պետ սուտանուն քահանայ և գործովք ունայն, տկար անձամբ յանձն
առի ե ամենակարող զաւրութեամբն աստուծոյ կատարեցի զսուրբ
աւետարանս, մեղսամած մատամբս յաւրինեցի, միթէ քաւի մեղս ի
մարմնի. ի թուականութեանս Հայոց ՊՀ. (1421), ի հայրապետութեան
տեառն Պաւղոսի և մերոյ աթոռակալի Մարգարէ վարդապետի և տէր
Յովաննէս եպիսկոպոսի՝ առաջնորդացս ուխտին Վարագայ:
Արդ, աղաչեմք զմանկունսդ սուրբ եկեղեցւոյ, յիշեցէք ի Քրիս-
299 ա տոս || և ի սուրբ յաղաւթս ձեր զՅովաննէս բարեպաշտ տանուտէր, և
զծնողքն իւր, և զամենայն արեան մերձաւորքն իւր լի բերանով աս-
տուած-ողորմի ասացէք, և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն.
Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս և ի սուրբ յաղաւթս ձեր զՄկրտիչ
քահանայ, և զծնողքն իւր՝ զհայրն զԿարապետ, և զմայրն զԳոհար-Մէլէք,
և զկենակիցն զՆաէֆ-Խաթուն, և զդեռաբոյս զաւակն զԻգնատիոս, որ
կամակից եղև այսմ բարի գործոյս և բազում աշխատանս կրեաց,
տացէ նմա տէր աստուած վարձս բարիս ի հանդերձեալ աւուրն։ Եւ
Յովանէսն եւ նմա զսուրբ աւետարանս, զի հանապազ ընթեռնու և
աստուած-ողորմի ասէ...։
Այլ յերես անկեալ ես առաւել աղաչեմ զձեզ յիշեցէք ի Քրիստոս
299 բ և ի սուրբ յաղօթս || ձեր և զիս՝ զանարժան գծողս զԿարապետ, և
զծնողքն իմ՝ զհայրն իմ զՍտեփաննոս քահանայ, և զմայրն իմ զՄինայ,
և զհաւրեղբայրն իմ զՄովսէս, և զեղբայրն իմ զՅովաննէս քահանայ՝
զհանգուցեալն ի Քրիստոս, և զկենակիցն իմ զԹամար, և զդեռաբու-
սիկն իմ զՄեսրոպ, և զամենայն արեան մերձաւորսն... իմ՝ զկենդա-
նիս և զհանգուցեալս...։
Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զաշխատողս և զկոկող Թղթիս զԱւե-
տիս քահանայ...։
Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոս սարկաւաք՝ ծառայ
Կարապետ քահանի։*

---

* Վերջին պարբերությունը գրված է այլ ձեռագրով։

Բ

Յիշեա Քրիստոս աստուած յարքայութեան քում զաստուածասէր և զբարեպաշտ տանուտէրն՝ զուսթա Մուրատշէն, *և զկենակիցն իւր* զՕլջա-Խաթունն, *և զորդեակն իւրեանց* զՄիրիջանն, *որ էր տեսլեամբ գեղեցիկ և հասակաւ վայելուչ, և տարաժամ մահուամբ առ Քրիստոս փոխեցաւ, և սուգ անմխիթար եթող ծնողաց իւրոց. Աղաչեմ զամենեսեան յիշեցէք յաղօթս ձեր և աստուած-ողորմի ասացէք* Օլջա-Խաթունին *և ծնողաց նորին՝* Թումային *և* Հռիփսիմին, *զի արարին ձեռն մի զգեստ պատարագի՝ շուրջառ և ուրար և բազպան, և ետուն վայելումն* Մկրտիչ *քահանային և որդւոյն իւրոյ* Կարապետ *քահանային, որ որդեգիր եղև* Օլջա-Խաթունին, *տէր աստուած վայելել տացէ, ամէն։*

Դարձեալ, յիշեցէք զՀայ-Խաթունն *և* զՄէլէք-Խաթունն, *և աստուած-ողորմի ասացէք։*

290

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 156, սյուն. 361—362, Վանի Հայկավանք եկեղեցի

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Սուրբ Խաչ (Աղթամա՞ր)

...Ի յութ [հ]արիւր թըւին մըտեալ
*Եւ ւթանասուն, որ յաւելեալ (—1421)**
Աւետարանս եղև գըրեալ,
Ի գուռն սուրբ Խաչիս կոչեցեալ։
Ես Յովհաննէս *կրաւնաւորեալ,*
Գործ գըրչութեան յաւժ[տր]եցեալ,
Եւ մըտայգիւր ի սայ եռեալ
Օըրագրեցի արկար անձամբ.
Եւ մեղսամած մատամբ իմով
Կատարեցի մեծաւ յուսով,
Առիթ գըտեալ ինձ փրկութեան,
Ներքին մարդոյս՝ ըըժըշկութեան,
Ըզսուրբ մատեանս տէրունական,
Որ է պատմիչ տնաւրինութեան,
Որով ի լըումն եկն՝ ամենայն

** Հրատարակիչը ձեռագրի գրչության թվականը համարել է 1431-ը, ըստ երևույթին նրան շփոթության մեջ է ձգել «ւթանասուն, որ յաւելեալ» արտահայտությունը։ Այդ նշանակում է, որ ձեռագիրը գրված է ութհարյուր գումարած («յաւելեալ») յոթանասուն թվականին (1421)։ Բայց կարելի է «յաւելեալ»-ը անմիջապես 70-ին կցել և հասկանալ «ավարտված յոթանասուն», այսինքն 86։ Այդ դեպքում իրոք ձեռագիրը գրված կլինեք 1431-ին։*

Խորհուրդ կամացըն հայրական։
Որք հանդիպիք սըմայ սիրով
Եւ ընթեռնուք մեծ հաւատով,
Դուք հայցեցէք բոլոր սըրտով,
Զտէրըն տերանց աղաչելով,
Զհայր երկնաւոր աղերսելով.
Ընդ անսառակին յիս գըթալով,
Ըզբանըն հաւր առեալ մարմնով,
Ընդ աւազակին զիս յիշելով,
Ըզբըղխումըն համապատւով
Ընդ հովանեաւ պարփայկելով,
Ցերիս անձինս բաժանելով,
Ի մի բնութիւն միանալով։
Զի աշխատանս իմ, զոր կըրեալ,
Ի սուրբ մատեանս և ծըրագրեալ,
Իբր ի լումայ այր[ւ]ոյն հաճեալ,
Ի գանձանակն առընկալեալ.
Նոյնասարաս յիս նայեցեալ
Տաճար անուան իւր ընձայեալ.
Գարտ[ե]ացն իմոց, որ ոչ թըւին
Ներքին մարդոյս և արտաքին,
Զի քան զաւազ շատ է ղծովին
Եւ քան ըզշիթս անձրևային,
Քաւարան սայ եղիցի
Արքայութիւնըն ըըռնալի։
Եւ մի զմիայն իմումս անձին,
Այլ իմ բոլոր. ազգատոհմին,
Ծնաւղացն իմոց մարմնաւորին,
Որք ի ժողովս են երկնային,
Որ տարաժամ [ելին] յաստեացն,
Առհասարակ մասն և բաժին։

Բ

Ես՝ Հետաեգս անացի միայն՝ զե[ր]թ զթուփ մի ի մէջ դաշտի, զաւակ չունէի։ Այլ յիշեցի զբանն տերունի՝ որ ասէ, թէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանեակք իցեն նորա յԵրուսաղէմ։ ԶՔրիստոս եղի ինձ յոյս և ապաւէն ըստ իմ կարողութեանս, ու գնեցի զայս աւետարանս Ռ. հարիւր (1,100) գրամ։ Ու տուի ի դուռն սրբոյն Սարգսի զաւրավարին, որ Հերպետ քահանայն կարդայ և այլ քահանայք, որք լինին . . .։*

* Հետևի այս հիշատակարանի գրության ժամանակի մասին հրատարակիչը ոչինչ չի հայտնել։ Հնարավոր է, որ այն ձեռագրի գրչության թվականից (1421) շատ հետո է գրված։

291

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 207

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Աղթամար

ա

357 բ ...Արդ, այսմ աստուածեղէն և երկնապարգև գանձիս, և լուսափայլ և մաքուր մարգարտիս ցանկացող եղեալ երջանիկ ոմն կրօնաւոր և աստուածեղէն ծրիւքն բարգաւաճեալ, որոյ անուն Սաղաթիէլ ճանաչի, և ելեալ ի խնդիր այսմ աստուածախօս և աստուածունակ տառիս, որ ունի ամբարեալ յինքեան զբոլոր հին և զնոր կտակարանսն՝ զմարգարէականս և զառաքելականս, որ և անուն գրոցս աստուածաշունչ յորջորջի, և ետ գրծագրել զսա յոյժ փափագանօք բազում գրծագրողաց՝ ի հալալ արդեանց իւրոց։ Որ և վասն առաւել ջերմեռանդ սիրոյն, զոր ունէր առ աստուած, և վասն չքաւորութեան իւրոյ՝ զմեծ մասն գրոցս իւրով իսկ ձեռամբն գծագրեաց ի մեծահռչակ և յաստուածարնակ և յականաւոր և յերևելի և ի մայրաքաղաքն ամենայն վանորայից՝ ի Վարագ վանքն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և այլ բազմահաւաք սրբոցն, որ անդ կան հաւաքեալ։ Աւրինակ եղջերուին, որ յոլովութենէ հրական մասինն բաղձայ փափագմամբ ի յաղբիւրս ջուրց, ըստ բանի երջանկին Դաւթայ, այսպէս և սքբասէր և ընթերցասէր կրաւնաւորն Սաղաթիէլ, ի յօժարութենէ կամացն յաղթեալ փափագեցաւ այսմ աստուածախօս և աստուածաշունչ կտակիս և ստացաւ զգանձս անկողոպտելի և զանառիկ մեծութիւնս ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ, և ի զուարճութիւն մանկանց Սիոնի, ի վայելումն անձին իւրոյ յաստի կենցաղումս, և յիշատակ բարի հոգոյ իւրոյ, և ծնողաց իւրոց՝ հօրն իւրոյ Ամիրբէկին, և մօրն Խելօքին, և եղբօրն Մկրտչին, և քըւերն Փաշա-Մելէքին, և հօրեղբօրն Սէթին, և այլ ամենայն արեան մերձաւորացն իւրոց՝ կենդանեացն և հանգուցելոցն, և որոց տէր կամեսցի...։

Այլ և զգծագրողք այսմ աստուածաշունչ կտակիս՝ նախ և առաջին զՅոհաննէս պատուական վարդապետն, մականուն Մոնթ կոչեցեալ*,
358 ա որ պատճառ և սկիզբն գրծագրու || թե[անս | | | եղեալ, և զԽաչատուր քահանայն**, և զԿարապետ քահանայն, [և զԱնդրիաս և զՎար-

* 488 ա էջի ներքին լուսանցքում այս Յովհաննէսը գրել է՝ «ԶՅովհաննէս գծողս աղաչեմ յիշել ի տէր, որ զկէս տետրիս գրեցի մինչև ի վերջքն»։

** 377 բ էջի ներքին լուսանցքում Խաչատուրը գրել է՝ «Ջստացող գրոցս յիշեցէք ի Քրիստոս՝ զՍաղաթէլ կրօնաւորն, և աստուած-ողորմի ասացէք։ Ընդ նմին և զմեղապարտ գրիչս զԽաչատուր, եւ աստուած զձեզ յիշէ, ամէն, եղիցի»։ Ունի նաև այլ հիշատակագրություններ՝ «Աւաղ, զայս վատ Թանաքս, անմեղագիր լերուք» (էջ 378 ա), «Աւախ, զայս վատ Թղխթերս» (էջ 341 բ)։

դաՆ], և զծնօղս նոցին յիշեցէք ի Քրիստոս սրտի մտօք և աստուած-ողորմի ասացէք նոցա, ով պատուական հարք իմ և եղբարք, ընթերցողք և վայելողք այսմ տառի։*

Ընդ նոսին և զիս... զանարհեստ սոսկանուն աբեղայս Թումա, որ և ես արժանի եղէ սակաւ ինչ աշխատութեան՝ գծագրելով զերկրորդ աւբէնքն ի տառս յոյս մեղսամած մատամբ իմով և զյիշատակարան գրոցս, և կազմեցի զսա ըստ կարի փանաքիմաց գիտութեան իմոյ, միոյ աստուած-ողորմայի արժանի արարէք և զիմս անարժանութիւն....

Աւարտեցաւ և կազմեցաւ գիրքս այս ի թվաբերութեան Հայկազեան տումարի ի ՊՀ. (1421), յաստուածախնամ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ գերահռչակ սուրբ Խաչին և սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան Դաւթի: Արդ, աղաչեմ զհանդիպողքդ սմա զաստուած-ողորմին աննախանձ կամօք ասասջիք սրբասէր և պատուական կրօնաւորին Սաղաթիէլին, որ և սպասաւոր է բանի, և ծնօղաց նորին Ամիրբէկին և Խելօքին, և այլ ամենայն արեան մերձաւորաց նորին...։

Բ

103 բ *Յամի Պ. և Հ. և Ա. (1422) թվականութեան Հայկազեան տումարիս գծագրեցաւ գիրս երկրորդում օրինացս ի կղզիս Աղթամար, ձեռամբ Թումայի անարժանի, ի խնդրոյ սրբասէր աբեղային Սաղաթէլի: Աղաչեմ զհանդիպողսդ զաստուած-ողորմին անմոռաց ասել ստացողի սորին և ծնօղաց նորին, և մեղաւոր գծողին և ծնողաց նորին, և ձեզ ողորմեսցի տէր, ամէն։*

Գ

181 բ *Ո՜հ, ո՜հ, զանիծածն սատանա, որ ոչ կամի թոյլ տալ գրել զսա, այլ ցնորեցուցանէ զմիտս յայլ դեհ, ապաւէնն աստուած։*

Դ

Ստացող և մի մասի գրիչ՝ Սաղաթէլ
վայր՝ Վարագ

558 ա *Յայսմ ամի եղև զբաւ սորա, որ էր թիւս Հայոց ՊՀԱ. (1422) ի պարնութիւնն Էզդինշէրին և որդոյ նորին Մելեքին:*

Գրեցաւ գիրքս հոգելից ի գաւառս Տոզր կոչեցեալ, ի սուրբ մենաստանիս Վարագք կոչեցեալ, ընդ հովանեաւ կենսատու սուրբ Նշանիս, և յԵրկոտասան սիւն լուսոյս, և սուրբ Աստուածածնիս, և Նախա-

* *Ձեռագրի ընդօրինակությանը մասնակցած մյուս գրիչների անունները լրացնելու համար տեղ է բաց թողնված։ Մենք լրացնում ենք այդ անունները ձեռագրի մեջ պահպանված հիշատակագրությունների հիման վրա։ 420 ա էջում գրված է՝ «ԶԱՆդրէաս գծողս աղաչեմ [յիշեցէք]», 428 բ էջի ներքին լուսանցքում գրված է՝ «ԶՎարդան սակաւ գծողս յիշեցէք»։*

վկայիս, և սուրբ Յովհաննէս աւետարանչիս, և գերապանծ սրբոյ Սիոնիս, և սուրբ Սոփայիս։ Ի յառաջնորդութիւն տիեզերալոյս բաբունապետիս Մարգարէ *քաջ հռետորի և իմաստասիրի, ի հայրապետութեան արքեպիսկոպոսիս տէր* Յովանեսի, *որ սիրող և խնամածու եղև մեզ իբրև հայր առ որդի, գորովագութ գթով ուսուցանելով և խրատելով, զոր տէր Յիսուս վարձատու լինի սմա, վասն զի սա եղև պատճառ գրոցս, որ Ժ. (10) տետր ետուր և զաւրինակն շնորհեաց, հազարապատիկ առցէ ի հանդերձեալն։ Ես՝ պիտակ անուն վարդապետ* Սաղաթէլ *առի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց. [որք հանդիպիք] կարդալով, կամ տեսութեամբ, կամ գաղափար ունելով յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյգրեալս ի սմա, և մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ աստուծոյն մերմէ, ամէն։ Եւ նա, որ առատն է յամենայնի ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի, ամէն, եղիցի, եղիցի։*

Ե.

327ա *Զ*Սաղաթէլ՝ *մեղաւք լցեալ,*
Եւ ազգի ազգի ախտիւ գերեալ,
Ի բարի գործոց ունա[յնա]ցեալ,
Եւ գրչէ բան մի չուսեալ,
Ու ի ծերութեանն այս պատահեալ,
Ամէն գրեանքս սխալ եկեալ։*

*Եւ աղաչեմ մոխրամած գիմօք, յիշեսջիք ի բարին Քրիստոս զծնաւղ իմ զ*Ամիրբէկ, *և զ*Խելաքն՝ *զմայրն իմ, և զքոյրն իմ զ*Փաշա-Մէլէք, *և զհօրեղբայրն իմ զ*Սէթ, *և զորդի նորին* Կիրակոս, *և զամենայն ազգն իմ....։***

292

ԱՐՃԷՇ ԱՐԱՆ

Փիրդ. Նոտ. 66, Վան, Ս. Խաչի վանք

Գրիչ՝ Սիմէոն
վայր՝ Մարմետ գիւղ

...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեանս Հայոց տումարի ՊՀ. (1421), ի հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տէր Պօղոսի Սսոյ, *և* Աղթամարայ՝ *տէր* Դաւթի, *ի յաշխարհակալութեան* Սքանտար *ղանին, ի յերկիրս* Վասպուրականի, *ի գեաւղս որ կոչի* Մարմետ, *ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսիս և այլ սուրբ նշանացս որ աստ կան հաւաքեալ, առ ոտս բարեսիրտ և հեզահոգի եպիսկոպոսին մերոյ տէր* Մխիթարի, *որ է գէտ, հովիւ և տեսուչ և ՛վերակացու այսմ վիճակի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։*

Արդ, գրեցաւ և աւարտեցաւ ի նոյն ամի, ձեռամբ անարուեստ գրչի Սիմէոն *աբեղայի։*

---

* *Բնագրում՝ «սլախլ»։*

** *Ձեռագրում կան նաև սակավարժեք այլ հիշատակագրություններ։*

293

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրդ. Նօտ. 65, Վանի Տիրամայր եկեղեցի

Գրիչ.
վայր՝ Խիզան

... *Գրեցաւ ի մեծ թուականիս Հայոց* ՊՀ. *(1421), ի կաթողիկոսութեան հայկազեան սեռի տեառն* Պօղոսի, *և յամիրութեան* Ամիր-Դայուտին, *ի քաղաքիս* Խիզան:

294

ԳԱՆՁԱՐԱՆ ԵՒ ՏԱՂԱՐԱՆ

Սեբաստիա, Մ. Նշան, 136, ՀԱ, 1927, սյուն. 313—314

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Պառուազրակ

756 ... *Գրեցաւ տաղերս ձեռամբ անիմաստ գրչի սուտանուն* Աստուածատուր *դպրի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս, ի յանապատս որ կոչի* Պառուազրակ, *ի թվ.* ՊՀ. *(1421)։*

*Արդ, աղաչեմք զամենեսեան յիշման առնել զմեզ արժանի... զայս սակաւ աշխատողի և ծաղկողի և գլխագրողի, և աստուած զձեզ յիշէ, ամէն։ Ընդ նմին և զհարազատ եղբայրն իմ՝ զ*Հայր *կուսակրաւն աբեղայն, որ աշխատեցաւ յետ ինձ...։*

*Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ եղանակաւոր տաղիս յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացաւղ սորա զպատուական կուսակրաւն աբեղայն զ*Յակոբ *ճգնաւորն, որ բազում փափաքմամբ ցանկացաւ գնել զաստուածազարդ գիրքս, որ է գանձ և տաղ ի մի տուփ, ամենայն տէրունական տաւնից զարդ և պայծառութիւն, յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց՝ զեղբաւրորդի նորա զ*Աստուածատուր *աբեղայն, և զ*Խաչատուր *սարկաւագն, և զ*Պետրոս *կուսակրաւն աբեղայն՝ զծերունին, և զհոգեոր եղբայրն մեր զ*Ստեփաննոս *կուսակրաւն աբեղայն։ Արդ, որք հանդիպիք սմա կարդալով, կամ աւրինակելով, կամ տեսանելով, յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զ*Յակոբ *ճգնաւորն, որ ստացաւ զսա յիշատակ իւր ի դուռն սուրբ Կարապետին՝ ի* Պառուազրակն: *Արդ, մի ոք իշխեսցէ ի սուրբ հարցն ընդ ձեռամբ պահել կամ արգելուլ, քանզի հասարակաց՝ մեծի և փոքու է։ Արդ, կացցէ սա յեկեղեցւոջն՝ ի սուրբ Կարապետն և եղիցի հասարակաց ամենեցուն՝ յաւրինակ և յուսումն և յամենայն պէտս կարեաց. և կամ որ յանդգնի կամ ընդ ձեռամբ պահէ և արգելու՝ զ*Յուդայի *և զ*Տորելայ *մասն առցէ։*

*Ո՜վ եղբարք հոգեորք, ընկալարուք ի մէնջ զսակաւ զայս նշանակ սիրոյ և զ*Յակոբ *ճգնաւորն՝ զբարին և զընտիրն, յիշեցէք յաղաւթըս ձեր հոգևոր սիրով, զի և զձեզ աւրհնեսցէ Քրիստոս՝ որդին աստուծոյ հոգով և մարմնով, և զարդարեսցէ շնաւրհաւք սուրբ հոգւոյն,*

ամէն։ Ընդ նմին և զառաջնորդ վանիցս զՄաղաքիայն՝ զկուսակրաւն աբեղայն... և զՅակոբ բարի ճգնաւորն և զհոգևոր հայրն մեր զՌեո-փիլոս, որ բազում աշխատեցաւ և ուսոյց և սնոյց զմեզ...։

Մի մեղադրէք սղալանաց և խոշորութեան գրոյն, զի ձմեռն էր, և գրողս տխմար էր, և թանաքս պայծառ չէր, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

295

ԱՒԵՏԱՐԱՆ

ՆՑՎ 150, սյուն. 329—332, Վանի Արարուց եկեղեցի

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Տպաս անապատ

...Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Վարդան աբեղայի անիմաստ և տխմար գրչի...ի դառն ժամանակիս, որ ոչ գոյ համբաւ բարեաց, և ոչ գլուխ Հայոց ազգաց, յայլասեռից յոյժ վշ[տ]ացած՝ հոգոց հանեմք ի խոր սրտաց։ Ի մեծ թուիս՝ ի յեղանակ շրջագայութեան արեգական ստորիջիւք երկնաչու ճանապարհաւ յերկնից յերկիր հայելով, ըստ արարչութեանցն չափեալ յելանելոյն Ադամայ ի դրախտէն ՉՌ. և ՋՃ. (6600) ամ՝ ըստ եւթանասնիցն, որով մեք վարիմք։ Եւ է ի մարդեղութենէ բանին աստուծոյ անժամանակ էին փրկչին Յիսուսի Քրիստոսի ամս ՌՆՃԻԱ. (1421), իսկ ըստ Յոսրովային յաբեթեանս տումարի՝ ՊՀ. (1421), և էր մեծ շրջանին։ Ի կաթուղիկոսութեան հայկազեան սեռի տէր Դաւթի՝ եղբաւր տեառն Զաքարիա, որ վկայական արեամբ կատարեցաւ, որպէս հնուն Զաքարիայն։

Էր նա տեսլեամբ սուրբ հրեշտակի
Որպէս ճրագու* պատարագի,
Ցերեսն առեալ զտիպն Յիսուսի
Սիրտըն լըցեալ հոգով ի լի։
Էր իմաստուն յոյժ և արի,
Ծաղրատեսակ(՞) յամենայնի,
Անձամբ յաղթող և կորովի
Տղայ հասկաւ եւթնիցս հնգի։
Պսակեցաւ արեամբ բարի,
Ոչ ուրացաւ զտէրն ամենի,
Զիւր զաւրաւոր անձն և արի
Ետ նա ի սուր վասն Յիսուսի։
Եւ աէր աստուածն Իսրայէլի,
Որ պահապանն աննիրհելի
Պահէ զաթոռ հայրապետի՝
Հաստատ, անշարժ վերայ վիմի,
Աղաչանաւք մօրըն կուսի՝

* Տպված է «ղրակ ուշ(՞)։

Մարիամու Աստուածածնի
՚Ի ամէն* սրբոց յերկինս ՚ւ յերկրի,
Զխաղաղութիւն տայ աշխարհի։
Արդ, այս ահեղ ժամանակի,
Որ կամ լցեալ չարեաւք ի լի,
Զաւետարան ըստ Քրիստոսի
Ես անարժան՝ գծագրեցի,
Ի յանապատս, որ Սպատ կոչի,
Ընդ հովանեաւ Ամենափրկչի
Եւ Յովաննու Կարապետի**,
Եւ յայլ համաւրէն եղբարց մերոց,
Որք կան բնակեալ յայսըմ տեղի.
Եղբայրութեամբ խնամ[ա]րկեցին,
Որ զգործըս մեր կատարեցի։

...Եւս առաւել ողորմեա, Քրիստոս աստուած, առաջնորդին սուրբ ուխտիս մերոյ՝ տէր Յոհանէսին, որ հայրախնամ խնամէ ի վերայ մեր...։

Արդ, որ հաշակէք յաստուածային սեղանոյս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զըստացող սուրբ աւետարանիս՝ զԹումայ կրաւնաւորն, և զհայրն իւր ըստ մարմնոյ զՎարդան, և զմայրն իւր զՄարեմ, և զեղբայրն իմ*** զՍտեփաննոս, և զկենակիցն իւր, և զեղբաւրորդիքն իմ՝ զԳրիգոր սարկաւագն, և զՄիրանն և զԿարապետն, և զքոյրն իւրեանց Նոր–Տիկինն, և զՏիրանցն, և զԹանկ–Խաթունն՝ քեռոյ դուստ[ր]ն իմ, և զամենայն արեան մերձաւորացն իմ յիշեսջիք ի Քրիստոս աստուած...։

Եւ ինքն՝ ամենառատն և պարգևատուն Քրիստոս աստուած, տացէ զիւր յաւիտենից հանգիստն Թումային և կենակցին իւրոյ Ոսկոյն, որ զաւրինակն շնորհեցին մեզ։ Ցերես անկեալ աղաչեմ զձեզ, ով որք հանդիպիք աստուածային բուրաստանիս՝ անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեան գրոյս, ոհ, ոհ...։

296

ԳԻՐՔ ԿԱՑՄԱԿԱՆՑ ԲԷԴԱ ՔԱՀԱՆԱՅԻ

Երևան 2037

Գրիչ՝ Յովասաբ Ապարանեցի
վայր՝ Կաֆայ

187 ա Փառք...որ հասոյց զմեղապարտ ոգիս և զփցուն գրիչս՝ զՓրայ Յովասաբ Ապարանեցիս ի յաւարտ սորին, զոր և ծրագրեցաք ի սուրբ Նիկօլ, ի Կաֆայ, ի յամի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՆԻԱ. (1421), յապրիլ ԺԲ. (12) եղև աւարտումն սորա, ի յերեսնամեայ կենաց մերոց։ Արդ, աղաչեմք զամենայն հանդիպօղք այսմ սուրբ և-

* Տպված է «ամենայն»։
** Տպված է «սուրբ Կարապետի»։
*** Իմն ոչ թե գրչի, այլ ստացողի։

պատուական և ի փրկութիւն բազում հոգոց գրոցս, որ կոչի Հայծականց, յիշեցէք զմեղայպարտ ոգիս զփրայ Յօվասաբս և զծնօղսն իմ՝ զՔարիմշայ և զԿատարինայ, և աստուած զձեզ յիշէ ի յիւր յանմահ տեսութիւնն և յարքայութիւնն, նայ և զվարպետսն իմ զառաջին և զերկրորդ՝ զփրայ Օգոստինոս և զՄխիթարիչ | | | և զբաբունին յիշեցէք ի Քրիստոս։

Ի սոյն ամի ի Սամսոն քաղաք կրակ | | | և զամենեսեան առհասարակ կիզեաց | | | և զամենայն հասակ։ Ի սոյն ամի | | | զԹուրքն* կոտրեաց, և կոտոր | | | իբրև ՀՌ. (70,000) մարդ։

297

ՄԱՇՏՈՑ

Փիրզ. Նօտ. 66, Կ. Պօլիս, Ղալաթիոյ թանգարան

Գրիչ՝ Մխիթար

...Գրեցաւ քահանայաթաղս ի թուաբերութեանս Ասքանազեան և Արեթական տումարի ՊՀ. (1421) ամի, ի հայրապետութեան տէր Պօղոսի, և եպիսկոպոսութեան Աղեքսանդր վայվոդային, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ձեռամբ մեղապարտ գրչի՝ Մխիթար անարժան քահանայի, որ ի | | |

298

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 918

352 ա Ո՛վ քահանայք սուրբ Սիոնի և դասք ընթերցողաց, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զսրբասնեալ և զարժանապատվեալ, ծաղկեալ ալեաւք ծերունին, զգահագլուխ քահանայն զտէր Վահրամն, որ էր երաժշտապետ պանծալի և փակակալ սուրբ լուսաւորչին Գրիգորի։ Քանզի յայսմ ամի, որ էր Թվական Հայոց ՊԿ. (1421) ամ, գնացեալ յԵրուսաղէմ յերկրպագութիւն սուրբ տնաւրինականացն Քրիստոսի, և տեսեալ զմատեանս աստուածային, ծաղկաւէտ բուրաստանս որպէս դրախտ վայելուչ և գեղեցիկ, հաւաքեալ ի սմա ծաղիկս զանազանս, բերելով մեզ ճաշակս քաղցրահամս և դեղս բժշկարարս, և եռափափաք սիրով գնեաց զսայ ի հալալ արդեանց ի նոյն վերոյյիշեալ Կարապետ աբեղաէ, որ էր յայնժամ փակակալ և սպասաւոր սուրբ դամբարանի Ցակոբայ առաքելոյն, ի վայելումն շքեղազարդ անձին իւրոյ, և յետ աստեացս ելանելոյ՝ թողուլ յիշատակ իւր և ծնողաց նորին և ամենայն զարմից։

Արդ, աղաչեմ զձեզ զամենեսեան ... յիշեցէք ի յերկնաթռիչ աղաւթս ձեր զվերոյգրեալ քահանայն զՎահրամն, և զբարեհամեստ զուգակիցն իւր զտիկին Եղներն, և զիւր նազելի դուստրն՝ տիկին Մա-

* Գրիչն ընդօրինակել է նաև Թարգմանողի կարևոր հիշատակարանը՝ 1356 թվականից։

352բ բիունն, և զփեսայն իւր՝ զպարոն Թորոսն, և զաստուածա || պարգև զաւակքն իւր։ Այլ և զհանգուցեալ սիրուն որդեակն իւրեանց, զսըր-րամիտ, զմաքուր և զամբիծ սարկաւագն, որոյ անուն յորջորջիւր Հե-թում, քանզի յայսմ ամի, որ էր Թվական Հայոց ՊՀ. (1421) ամ, ի յու-նիս ամսոյ ԺԱ. (11), և պատկեր աւուրն չորեքշաբթի, փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն և գնաց տարաժամ յաշխարհէս, զի էր ամաց Ժ. և Ը. (18)-ից, և եթող մեծ սուգ և անփարատելի տրտմու-թիւն իւր ծնողացն և ամենայն զարմիցն, եւս առաւել մեզ, քանզի ի մանկութենէ ի վեր սնուցել էաք գորովալիր աղետիւք։ Որոյ տէր աստուած զինքն սուրբ սարկաւագացն դասակից և պսակակից և մաս-նակից արասցէ, և ինքն փրկիչն ամենեցուն, որ առատն է ի տուրս բարեաց ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ որ զյիշատակարանս գրեցի, ընդ միոյն հազարապատիկ և բիւրապատիկ պարգևէ զիւր սուրբ արքայու-թիւնն, ամէն ու հազար ամէն։

299

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՑՀ հմ. Ա. 36, էջ 77—78

Հետ. կազմող՝ Սիմէոն

639 ...Զվերջին կազմողս սորայ զՍիմէոն դպիրս յիշեցէք ի տէր, և տէր յիշէ զձեզ յիւր երկնից արքայութեանն, ամէն։

Ո՛վ դու սուրբ աւետարան, աւգնեայ ինձ և զանարժան Սիմէոն դպիրս արժանացոյ ողորմութեան։ Ի Թվականին ՊՀ. (1421)...։

300

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

Երևան 5708 (Ա), 4522 (Բ), 8908 (Գ) 1117 (Գ)

Յիշատակարան աղէտից ի ժամանակիս մերում, զոր ասացեալ է Գրիգոր վարդապետի, որ մականուն Ծերենց կոչի, Խլաթեցի*

Ի յութհարիւր Հայոց թուական
Ընդ որ և հինգ եօթն յաւելան (1386),
Յունուարի մին պտհք յայտնութեան
Լոյս արեւուն խաւարեցան։
Մեծ վարդապետն անուն Յոհան,
Որ և Կախիկ անուն ծնընդեան
Յետ վեց աւուրըն խաւարման՝
Փոխի առ տէր իւր անծկական։
Ի սոյն աւուրս դառնութեան
Ծրագալուցի աւր յայտնութեան
Մեծ պատուհաս ի շահաստան
Բարբարոսաց ազգէն հասան։
Արքայն Հոնաց Թուխթամիշ խան
Զաւրս առաքեաց ի Պարսկաստան,
Որ եկն, արար առ և թախթան
Մինչև յերկիրըն Հայաստան,
Հինգն յունուարի Թարվէզ մըտան,
Ի քսան և ինն՝ ի Նախչըւան,
Անտի գնացին դէպ ի Մուղան,
Դարձան յաշխարհն իւրեանց բնական։

Վերնագիր ունի միայն Ա.-ն ¹ Տպ. ընգ որս ³ Գ. Յունուվարի մէկ փխ. Յունուարի մին ⁴ Գ. արեու ⁵ Գ. Յովհան ⁶—⁸ Ալ2. չիք ⁶ Գ. իւրեան փխ. ծնընդեան ⁸ Տպ. աէրն իւր անժամանական, Դ. անձկական ⁹ Գ. ծննգեան փխ. դառնութեան ¹⁰ Գ. սուրբ փխ. աւր ¹³ Գ. յոնաց Թուխթան իշխան ¹⁵ Տպ. թախտան, Գ. թալան ¹⁶ Գ. յերկիրս ¹⁸ Գ. Նաջուան ²⁰ Գ. յաշխարհ

* *Գրիգոր Խլաթեցին «Յիշատակարան աղէտից» կոչվող պատմական հոր բովանդակությամբ իր չափածո հիշատակարանը, որ հայագիտության մեջ իրավամբ կոչվել է՝ պատմական վիպասանություն, գրել է 1422 թվականին, իր իսկ խմբագրությամբ, շուրջ 1408 թվականին լույս ընծայած «Գանձարան» ժողովածուի մի ընդօրինակության առիթով։ Ո՞վ է եղել այդ ընդօրինակության պատվիրատուն և ի՞նչ հանգամանքներում է կատարվել այն՝ պարզ չէ, որովհետև հիշատակարանը մեզ հասել է հետագա (ընդարձակ և համառոտ) ընդօրինակություններով, որոնք լրիվ են իրենց պատմական ու արժեքավոր մասով, սակայն թերի են վերջից։ Մեզ հասած ամենաընդարձակ (Ա) օրինակում պահպանվել է մի հատված, որտեղ գրիչ—հեղինակը փառաբանում է երրորդությանը գանձե-*

Զաո ու զաւար ընդ ինքեանս տարան,
Մըտին յաշխարհըն Հոնական։
Անթիւ վընաս էր գործեցան,
Ի գալ նոցա մինչև դարձան.
Բազմաց արիւնք յերկիր հեղան
Եւ շատք ի ձիւնն մըսեցան,
Բազումք յահէ նոցին փախեան
Եւ ի նըզմունս սատակեցան.
Մարք ըզտղայոց գութ մոռացան,
Ծընաւղք մանկանց դահիճ եղան.
Շատք ի սըրոյ նոցին մեռան
Եւ այլք բազումք չարչարեցան։
Ընդ սոյն՝ ընդ այս գործըս չարին
Եւ ընդ կորուստ Հայաստանին
Եհաս միւս այլ հարուած կըրկին
Ցոյժ դառնագոյն քան զառաջին,
Մինչ դեռ ի նոյն էաք սըգին,
Եկեալ եհաս մեզ ձայն գուժին,
Թէ շարժեցաւ տուն Խորազմին,
Առհասարակ ցեղ Թաթարին,
Ժառանգաւորք Սըմբըղընդին,
Աւտար որդիքն Աբրահամին
Միահաղոյն յաշխարհս մըտին,
Ցաթոոս Ատըրպատականին։

21—22. Գ. չիք 23. Գ. յոյժ փխ. էր, Տպ. վնասեր, Ալշ. վնասներ, փխ. վնաս էր 26 Գ. սառեալ միջեան փխ. մըսեցան 28 Գ. ի նիզմունս վախճանեցան 29—30 Գ. չիք 32—34 տողերի փխ. Գ. ունի «և յաստուծոյ պսակեցան» 34 Տպ. Ընա ընա այս, Ալշ. ընդ այս, փխ. ընդ սոյն՝ ընդ այս 35 Ալշ. այլ չիք 36 Ա. Տպ. Եւ փխ. Ցոյժ 37 Գ. էաք ի նոյն 39 Գ. Խարասան փխ. Խորազմին 40 Գ. ազգ փխ. ցեղ 41 Գ. ժառանգաւոր 42 Գ. Հագար փխ. Աւտար 44 Գ. Արպատական ամուրն հասին

րից բաղկացած («բամեալ զանձերս որ ի միջի») ժողովածուի, այսինքն «Գանձարանի» ընդօրինակության ավարտման կապակցությամբ, և հայ գրիչների համար տրադիցիոն դարձած արտահայտություններով խնդրում է ներողամիտ լինել ընդօրինակության ընթացքում թույլ տված սխալների համար («Եւ սխալանաց շարագրիս անմեղադիր լերուք անձինս»)։ Սպրդած սխալները (եթե իրոք եղել են սխալներ) Խլաթեցին բացատրում է իր հոգեկան ծանր վիճակով։ «Տառապեալ Հայոց առհմին» հասած աղետները անհուն վշտով են համակել հեղինակին, «կըսկըծայր սիրտս ի փորիս»–գրում է նա։

«Ցիշատակարան աղէտից»-ը առաջին անգամ հրատարակել է 1897 թվականին Գրիգոր Խալաթյանցը համառոտ առաջաբանով (տես Յիշատակարան աղէտից Գրիգորի Խլաթեցւոյ, պատմական վիպասանութիւն, հրատարակեց Գր. Խալաթեանց, արտատպված «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1867)։ Մինչ այդ որոշ հատվածներ հրատարակվել էին Ղ. Փիրղալեմյանի «Նոտարք Հայոց»–ում (էջ 5, 36, 47, ընդամենը 33 տող) և Ղ. Ալիշանի «Այրարատ»-ում (էջ 323—325, ընդամենը 78 տող)։ Երկրորդ ամբողջական հրատարակությունը լույս տեսավ 1001 թվականին Ալիշանի «Հայապատում»ի Բ. հատորում (էջ 563—568)։ Գր. Խալաթյանցի (ինչպես նաև Ղ. Ալիշանի) հրատարակությունը կատարված է Արգվինի Հայոց եկեղեցու մի «Գանձարանի» մեջ եղած բնագրի ընդօրինակության հիման վրա։ Արգվինի այդ ձեռագիրը՝ ընդօրինակված 1462 թ. Վանում, Կարապետ գրչի

Առին աւար և գերեցին
Զազգըս Պարսից և Հայ զարմին,
Տապալեցին 'ւ յատակեցին,
Անխայարար խոցոտեցին,
Զարըս սըրոյ ճարակ տուին,
Եւ ըզկանայսըն գերեցին.
Զոմանց զգլուխսըն քերթէին,
Հանդերձ հերաւքն խըլէին.
Զայլոց ըզշունչսն արգելուին
Եւ հեղձամահս խեղդէին.
Որպէս զոչխարըս մորթէին,
Փոկս ի Թիկանցըն հանէին.
Զկէսըս հըրով խորովէին
Եւ ճենճերովքըն ցընծային,
Շատք ըզՔրիստոս ուրանային
Եւ ըզՄահմետ դաւանէին։
Եւ ընդ գաւառն Այրարաթին
Մըտին յաշխարհըն յԱղւանին,
Զարքայանիստ քաղաքն առին
Որում Տըփխիսըն *կոչէին.*
Զարքայն Բագրատ *ըզվըրացին*
Ի հաւատոցն ուրացուցին։

---

46 Գ. Զազգն 47 Ա. չիք 'ւ 48 Գ. Անխնայաբար կոտորեցին 49 Գ. Զոմանս փխ Զարըս 51 Ա. գլուխըն, Գ. կտրէին փխ քերթէին 52—60 տողերի փխ Գ. ունի «Որպէս զոչխարս զենէին || Զոմանց զգլուխսն քերթէին || Փոկս ի Թիկանցն հանէին || Զոմանս ի հուրս արգելէին || Եւ հեղձամահս խեղդէին || Զոմանս հրով խորովէին || Եւ զջենջերովն խնդային 61 Տպ. ընդ գաւառ, Գ. Արարատին, Ալշ. Այրարատին։ 62 Գ. ի յԱղուանից աշխարհ մտին 63—64 Գ. չիք. 65 Գ. Բագգագ փխ Բագրատ 66 Ալշ. ի հաւատոյն

կողմից, այժմ գտնվում է Երևանի մատենադարանում և գրանցված է 5798 համարի տակ («Ցիշատակարանը» գրավում է ձեռագրի 311բ—317բ էջերը)։ Բնագրի և հրատարակությունների համեմատությունը ցույց է տալիս, որ հրատարակությունների մեջ տեղ են գտել մի շարք սխալներ ու աղավաղումներ և հրատարակիչները (հատկապես Ղ. Ալիշանը) սրբագրել են բնագրից որոշ տողեր ու արտահայտություններ։

«Ցիշատակարան աղէտից»-ի համեմատական բնագիրը կազմել ենք, հիմք ընդունելով Երևանի վերոհիշյալ № 5798 ձեռագիրը (Ա. ձեռագիր)։ Լայնորեն օգտագործել ենք նաև հետևյալ ձեռագրերը.

Բ.— Երևան 4522, Ճաշոց, ընդօրինակված Կարապետ գրչի կողմից, Աղէթ գյուղում։ Գրիչը, ըստ երևույթին, անձամբ ծանոթ է եղել Գր. Խլաթեցուն և, «Ցիշատակարանի» գրությունից շատ չանցած, 130 տողանոց մի ընդարձակ՝ հատված է քաղել այնտեղից և կցել իր 1421 թվականին շարադրած հիշատակարանին։

Գ.— Երևան 8908։ Ձեռագիրը միջնադարյան տաղերի ու բանաստեղծությունների ուշագրավ ժողովածու է, որ հավաքել ու խնամքով ընդօրինակել է ձեռագրերի մեզվաջան խուզարկու Ղ. Փիրղալեմյանը։ Նրա ընդօրինակած բնագիրը պատկանում է այլ խմբագրության և բազմաթիվ շեղումներ ունի Ա. և Բ. ձեռագրերի նկատմամբ։ Որոշ հատվածներում կան ուղումներ ու խմբագրական կարգի փոփոխություններ, որ ամենայն հավանականությամբ արել է ինքը՝ Ղ. Փիրղալեմյանը։

Անտի անդրէն դարձ արարին
Եւ ի Մուղան ձմըռնեցին,
Ապա յաւուրս գարնանային
Դարձ ի Սիւնիս Մեծն արարին
ԸզՈրոտայն դըղեակն առին,
Մինչև ի Կարս արշաւեցին,
Զերկիրս ամէն չաւլ արարին
Ի յանցանելն երթևեկին.
Զի յետ դարձան և կըրկնեցին
Երրորդ անգամ չորրորդեցին,
Որոյ անուն գըլխաւորին
Էր Լանկ-Թամուր չարեաց գընդին։
Այս էր ի թիւ ութհարիւրին
Եւ երեսուն և վեց ամին (1387).
Զամուր տեղիսն յաւար առին
Եւ շատ ոճիրըս գործեցին,
Ցորոց և մի էր և Բըջնին,
Որ էր աթոռ երկուց պետին,
Զոր առին և քանդեցին,
Զեպիսկոպոսն սպանեցին։
Այլ և զՀասանն Տարեցին
Երեք որդւովքըն զենեցին,
Զի ըզնոցին ամուրն առին

69—93 տողերը Գ.-ում տեղափոխված և տեղադրված են 244—245 տողերի միջև 71 *Գ. ԶԱրարատեան* փխ *ըզՈրոտայն* 73 *Գ. անմարդ արին* փխ *չաւլ (չօլ) արարին* 81 *Տպ. տեղոն* 83 *Գ. Պրճնին* 84 *Գ. է* փխ *էր* 86 *Գ. գլխատեցին* 88 *Ա. Տպ. սպաննեցին* փխ *զենեցին*

Գ.— Երևան 1117, ժողովածու, ընդօրինակված Յովհաննէս Շոռոթեցու կողմից, 1693 թվականին։ Ձեռագրի 451բ—452ա էջերում, «Յիշատակարանի» պատմական մասից ընդօրինակված է 54 տող, «Այս Շ[ա]մ[ա]խի մեկ գրքի յիշատակարան էր, գրեցի» խորագրի տակ։

Տարընթերցվածքների բաժնում նշել ենք Գր. Խալաթյանցի (Տպ.) և Ղ. Ալիշանի (Ալշ.) հրատարակությունների միայն կարևոր տարբերակները։

Մատենադարանի գիտ. աշխատող ընկ. Ա. Մնացականյանից տեղեկացանք, որ «Յիշատակարան աղէտից»-ի Լանկ—Թամուրի արշավանքներին ու ասպատակություններին նվիրված բաժնի նյութը Գր. Խլաթեցին շարադրել է նաև 1422-ից տարիներ առաջ, իր մի այլ չափածո ստեղծագործության մեջ (Երևան 6629, էջ 4բ-6բ)։ Այդ ստեղծագործության սկզբի մասից տեղեկանում ենք, որ Խլաթեցին ՊԼԶ. (1387) թվականին, ծանոթանալով Մխիթար Այրիվանեցու հարյուր տարի իրենից առաջ (1286-ին) գրված «Ընտիր գանձերի» հետ, մտադրվել է անձամբ լինել Այրիվանքում, տեսնել նրա սրբությունները ու Մխիթարի դամբարանը. իր փափագը նա իրագործել է 26 տարի հետո, այսինքն 1403 թվականին։ Այդ ժամանակ էլ գրել է պատմական բովանդակությամբ վերը հիշված իր չափածո ստեղծագործությունը, որի մեջ կան ուշադրավ որոշ մանրամասնություններ, որոնք բացակայում են «Յիշատակարան աղէտից»-ից։ Նկատի ունենալով վերոհիշյալը՝ կից հրատարակում ենք նաև այդ բանաստեղծության պատմագիտական արժեք ներկայացնող մասը։

Եւ՝ զըազումըս գերեցին.
Եւ զԿապուտից ամուրն առին,
Եւ չորս հարեւր անդէն սպանին,
Եւ յերեւան մեծ աւանին
Արս հինգհարեւր կոտորեցին.
Զունիմ ասել բան զոր կրեցին
Քրիստոնէից ազգ Հայ զարմին.
Դողան ոսկերքս և սասանին,
Լոյս իմ քաղի, սիըաըս ճըմլին,
Քանզի աչաւք իմ տեսանին
Ողորմագին հարուած սոցին.
Իշխանք բազումք ի տանց ելին
Եւ ի յընչից պարապեցին.
Ցերիվարացն զըըկէին
Եւ հետիոտս տանէին.
Տըղայքն ի մէջ ճանապարհին
Ցոչ ի կարել գնալ՝ մեռանին,
Եւ կրաւնաւորք վանականին
Մոլորելով յարկ ոչ գտին,
Որք ի կանայս ոչ նայէին՝
Հարկիւ ի մէջ նոցա մտին,
Կարաւտ հացի մերկ շըջէին
Եւ ըոկ ոտամըք հետեւէին.
Պատիւ չը կայր պատուականին
Եւ ոչ նըշան ունեւորին.
Զը կայր ոչ հաց հացաըաշխին
Եւ ոչ գինի գինարբուին,
Զը կայր ոչ ձի ձիաւորին
Եւ ոչ սըլեխ հետեակին.
Աւտարք յաւտարս շըջէին
Եւ կերակուրս մուրանային.
Տիկնայք որ ճոխ տունս ունէին
Եւ մետաքսաւք պերճանային՝
Հացակարաւտս երևէին,
Ծածկոյթ անձանցըն խընդրէին.

90 Տպ. չիք. 91 Գ. զԿապուտ 92 Գ. Արս չորս հարիւրս. 95 Տպ. Քան փոխ բան 96 Գ. Քրիստոնեայ 97 Տպ. սաւառնին փոխ սասանին 98 Գ. Սիրտս ճմլի և շունչս քաղին 99—100 տողերի փոխ Գ. ունի «Զողորմելի հարուածս սոցին». 101 Գ. ամէն իւրեանց փոխ բազումք ի տանց 102 Գ. Եւ ի յնչիցըն Թափուր մնացին 103 Ա. զրկեցին 106 Գ. Նուաղեալ անդէն մեռանէին 108—109 տողերի փոխ Գ. ունի «Որք աղօթից պարապէին ‖ ի գեղս կանանց ոչ նայէին» 112 Գ. Ալշ. ոտամբ 113—114 տողերի փոխ Գ. ունի «Ի հեռաւորս ընթանային ‖ յօտար երկիր փտարէին» 118 Տպ. տըրեխ փոխ սըլեխ (զրահ), Գ. Եւ ոչ մի փող պարոն խոճին 119 Գ. Փարթամք փոխ Աւտարք 120 Գ. կերակուր 121—122 տողերը Գ.-ում տեղադրված են 124-րդ հետո 121 Գ. զարդս փոխ տունս 123 Գ. Հացակարօտ նուաղէին

Իշխանք, որ պետք անուանէին
Եւ արծաթով յըղըանային՝
Աղքատացեալըք լինէին
Եւ կերակրոց կարաւտէին.
Եւ որք բազմաց հացըս տային՝
Մին պատառոյ ակն ածէին,
Թէպէտ և յոյժ ամաչէին,
Այլ ի կարեացըն լըրբէին,
Թէև մուրալ պատկառէին,
Այլ ի սովոյն յանդըգնէին,
Ծիւրեալք ի ցաւս ախտանային
Աւն անդր և աստ մեռանէին։
Մանկունք ի մարսըն նայէին,
Միթէ կենաց հընարս առնէին,
Մարքն ի գթոյն խորովէին,
Արագ ըզկեանս վըճարէին։
Հարքն ի գորով տղայոց լային,
Աղիողորմ վայէին
Ի տեսանելն զոր սընուցին
Դառըն կարեաւքն ցաւագին.
Ի մեռանել մանկանց նոցին
Ինքեանց հոգիքն քաղէին.
Կիսոց չկայր ոք որ լային,
’Ի ոչ գերեզմանս ճանաչէին,
Եւ այսպիսի ողորմագին
Այս տեսողացն երևէին։
Այս ոչ միայն քրիստոնէին,
Այլ ի տաճիկ ազգաց ընաւին,
Զի հասարակ էր նեղութիւն
Պարսից ազգին, Հայ և Թուրքին։
Եւ այս ամէն յայնկոյս գետին,
Որ յԵրասխայ անուն կոչի[ն]։
Իսկ յանցանելն յայսկոյս գետին,
Եւ յարշաւելն ըզհետ Թուրքին
Մինչև յԱմթայ ջուրըն հասին,
Բազում ոճիրըս գործեցին։
Անտի դարձան ’ւ ի Հայք ելին
Եւ ի վերայ Վանայ եկին,

---

125 Գ. բազմաց էին փխ անուանէին 127—128 Գ. չիք 130 Տպ. ունէին 133 Գ. ամաչէին փխ պատկառէին։ 135—136 Գ. չիք 137 Գ. Տղայք ի մայրսն հայէին 138 Գ. չիք 139 Գ. Մայրքն 140—144 տողերի փխ Գ. ունի՝ «Ի մարց գորովն տղայքն լային ‖ աղիողորմ և գառնագին» 146 Գ. Տպ. ինքեանք 147—150 Գ. չիք 151 Ա. Տպ. քրիստոնէից 153 Գ. հաւասար փխ հասարակ 156—157 Գ. Ալշ. չիք 158 Գ. ի փխ եւ, ի հետ 159 Գ. մինչ ի 161 Գ. Տպ. ’ւ չիք Գ. ի Հայս եկին։ 162 Գ. հասին փխ ՚եկին

Պատեցին ՚ւ պաշարեցին,
Զամուր գրդեակն յաւար առին,
Զհայ և զՏաճիկսըն կապեցին
Եւ ի քարանցն հոսեցին,
Այնքան հարին, սատակեցին,
Մինչ մըսադէզ անդ արարին։
Այլ և զամուրն Երնջակին
Զթողում ասել զանցըս նորին,
Որ ի յաւուրց աւագ զատկին,
Մինչև ի տաւն սըրբոյ Խաչին
Ծանր զաւրաւք պաշարեցին,
Բայց վընասել ոչ կարացին.
Ապա յետոյ դարձ արարին
Յաշխարհն իւրեանց ուստի եկին։
Դարձեալ կրկին ի դուրս ելին
Ի քառասուն ՚ւ երկու ամին
Ի Բաբելոն արշաւեցին
՚Ի ի Միջագետըս կոխեցին,
ԶՈւռհա քաղաքըն պանծալին
Եւ ըզԱմիթ երևելին,
ԶՄէրդին ամուր և զՆըսեբին՝
Զորս ընաջինջ գերեցուցին,
Եւ այլ բազում քաղաքանին,
Զորս քանդեցին և գերեցին։
Անտի դարձան յաշխարհս վերին,
Մինչև յԱւնիկ արշաւեցին,
Զոր և ջանիւ մեծաւ առին
Եւ ըզՄսըրն գերեցին։
Անտի դարձեալ յետ գնացին
Եւ զաւրս թողին յԵրընջակին,
Տասնուհինգ ամ խըսարեցին
Զբերդն Երնջակ ՚ւ ապա առին։
Զթողում ասել զգործ անարին
Զմեծ հանդէսն Վրաց արքային,
Որ եկն արար շատ յաղթութիւն
Զզաւրսն փախոյց ըզչաղաթին,

163 Ա. Տպ. ՚ւ չիք 165 Գ. զՏաճիկն։ 166 Գ. Եւ ի բերդէն վայր հոսէին 167—168 տողերի փխ Գ. ունի՝ «Այնքան մոռգեզն բարձրացուցին ‖ որ յանկանելն չմեռանէին» 170 Գ. Զկարեմ, Տպ. Այլ. Թողում փխ Զթողում, Այլ. զանհընարին փխ զանցըս նորին 177 Ա. Տպ. եկին 180 Գ. Եւ փխ ՚Ի ի 182 Գ. զյԱմիթ 183 Տպ. ԶՄերաին, Գ. ԶՄէրաին ամուրն և զՄծըին 184 Գ. Զամէն փխ Զորս 186 Գ. Զորս և քանդեալ կողոպտեցին, Տպ. աւերեցին փխ և գերեցին 187 Գ. Ապա փխ Անտի, յաշխարհ 188 Գ. ի Ցոյնս փխ յԱւնիկ 189 Գ. Զորս 190 Գ. Եւ ըզՄըսըր յայժ քանդեցին 193 Գ. Եւ յԵրնջակ կրկին մաին 193 Այլ. ամիս փխ ամ 194 Գ. Երընջակայ, Տպ. Գ. ՚ւ չիք 195 Գ. դգործարանին (*), 196 Ա. Զվաթարհանդէս, տպ. Զվատթարհանդէս 197 Ա. վատ փխ շատ 198 Գ. Փախոյց ըզզօրս չաղաթին 199 Գ. Որք

Որ պաշարեալ խըսաըէին
Զամուր գըղեակն Երընջակին.
Անաի եհան զխանի որդին՝
Զսուլթան Տահիրն յԵրըջակին.
Տարաւ առ իւր և զաւրացոյց
Եւ ետ տանել Ահմատ խանին.
Եւ ի գնալ չար զաւակին՝
Ապըստամբեաց ընդդէմ խանին՝
Սուլթան Ահմատ թագաւորին,
Որ էր որդի խան Ոյիսին.
Ոչ աջողեաց այն անբախտին՝
Սուլթան Տահիր որդւոյ խանին,
Զի հայրանենգ եղեալ չարին
Գետն տարաւ ի Բաղդադին.
Իսկ ի լըսել Լանկ-Թամուրին,
Զոր ինչ արար արքայ Վրացին,
Ի բարկութիւն շարժեալ կրկին
Հանդէպ արար իւր հեծելին.
Այլ բազմութեամբ քան զառաջին
Ի դուրս եկեալ Թամուր բէկին,
Ցամուրսն եմուտ Վրացտանին,
Արար գերի զամենեսին.
Անտի գնաց մինչ ի Զըմիւռին
Քաղաք Լիկեաց ծովեզերին,
Զզաւրսըն կոխեալ զԻլդրումին՝
Զհըզաւր յաղթող մեծ սուլթանին,
ԶՂարայ-թաթարս այլ ընդ նմին
Գերի տարաւ զամենեսին,
Որոց ոչ էր թիւ համարին՝
Կոտորելոց, զորս գերեցին
Ի տուն Գամրաց Կապադովկին,
Որ Մէջերկրեայ Հոռոմք ասին.
Ո՜հ, զայն զազայն զոր արարին
Արանց, կանանց և ընդ մանկտին,
Զարսն թաղեալ մինչ կենդանին,
Հողով, Ջրովըն հեղձուցին,

---

202 Ա. Զաուլտան, Տպ. Զաուլղան, Ա. Տախիրն 203 Գ. ինքն փխ իւր 207 Ա. Սաւլթան 208 Տպ. Խանոյխին, Գ. Իսայ խանին 209 Գ. անբազդին 210 Ա. Սօլթան, Գ. որդի 212 Տպ. Հետն փխ Գետն 214 Տպ. արքայն 217 Տպ. զառաջինն 219 Գ. Վրաստանին 222 Գ. Լիկեայց 223 Տպ. Զչարսըն, փխ Զզաւրսն Գ. Ալլ. կոխեաց Գ. ըզօրրս Իլտըրմին 224 Գ. Հզօր, Ա. Սուլտանին, Տպ. Սուլզանին 225 Գ. ըզզարայ թաթարն 227 Գ. զոյր փխ էր 228 Գ. գերի տարաւ զամենեսին 230 Գ. և երկու Հոռովմք փխ Մէջերկրեայ Հոռոմք 231 Գ. չարիսն փխ զազայն, գործեցին փխ արարին 233 Գ. Զորսն փխ Զարսն, Ա. թողեալ փխ թաղեալ, Գ. զեռ փխ մինչ 234 Գ. ծածկեալ մեռանէին փխ Ջրովըն հեղձուցին

Իսկ ըզմատաղ տըղայ մանկտին՝
Զայն կալուտիս ձիոցն արկին.
Իսկ յիջանել Միր Թամուրին
Ի Շամատուն Դամասկոսին,
Ծով ու ցամաք սասանէին
Վասըն լըրոյ չար համբաւին.
Զորըս սըրոյ ճարակ տային
Եւ զորս բոցով հրոյ այրէին,
Եւ ըզգլուխսն զոր կըտրէին՝
Զայնս մընիրայս յաւրինէին.
Եւ յայսպիսի չար համբաւին
Աշխարհ ամէն սասանեցին.
Զայս արարեալ Միր Թամուրին՝
Դարձաւ յաթոռ Սըմըրղընդին,
Եւ անդ եհաս աւր վաղճանին՝
Սատակեցաւ յիւր աթոռին.
Իսկ Միրանշայ՝ որդի նորին
Նստեալ ի թախթն Թաւրիզին,
Որոյ ընդդէմ կացեալ նորին
Ղարա—Յուսուֆ Բահադուրին՝
Եհար զզաւրսն չաղաթին
'Ի էառ ըզգլուխ Միրանշային,
Թագաւորեաց ի նոյն թախթին՝
Թաւրէզ քաղաք շահաստանին.
Արար բազում խաղաղութիւն
Եւ աջողումն մարդկային.
Էր էժնութիւն և էժնութիւն,
Ամենեւին անգողութիւն.
Իսկ յաճախել մեղաց ախտին
Մարդկան ազգիս քրիստոնէին,
Եղև գընալ խան Յուսուֆին
ՑԱխըլծըխէ Վրաց քաղքին,
Արար ղազայ և գերութիւն,
Անթիւ վնաս և չարութիւն.
Այս էր ի թիւ ութհարիւրին,
Այլ և վաթսուն և հինգ ամին (1416).

---

235 Գ. Զկանայս և զմանկտին փխ ըզմատաղ տըղայ մանկտին 236 Գ. կալոտին, Ա. տային փխ արկին 237 Գ. Լանկ—Թամուրին 238 Տպ. շահաստան փխ Շամատուն 239 Գ. և փխ ու, Ա. սասանեցին 244 Տպ. մընեբայս, Գ. մընիրայ 240 Ա. համբաւէս, Գ. համբաւով 246 Գ. Զաշխարհս 247 Գ. Լանկ—Թամուրին 249 Գ. Եւ անդ մեռաւ չար կենդանին 250 Գ. աշխարհին փխ աթոռին 252 Գ. Մնաց ի թախթն, Տպ. եկեալ ի թախթն 253 Գ. Որ և, Նմին փխ Նորին 254 Ա. Տպ. բախադուրին, Այլ. Բախտիարին 255 Ա. Տպ. էհար 255 Գ. էառ, Տպ. Եւ առ փխ 'Ի էառ, Գ. զգլուխն 258 Ա. Տպ. Թաւրէժ, Ա. շախաստանին 261 Գ. էժնութիւն և յէժնութիւն 264 Գ. Մերոյ փխ Մարդկան 266 Գ. ցԱխըլցխայ, Ա. Տպ. քաղաք Վրացին 269 Գ. ի թիւն ութն

Իսկ զգերիսըն զոր առին
Յաւտար երկիր վըտարեցին՝
Բաղդատ 'ւ ի Մըսըր հասուցին
'Ի ի Խորասան Պարսկացտանին,
Ոչ մին հազար կամ հինգ վեցին,
Այլ քան ըզըիւրըն էր աւելին,
Նոյն սպաննելոցն էր բազմութիւն
Եւ անհամար, որ ոչ թըւին.*
Իսկ ի յամի ութհարիւրին
'Ի եւթանասուն թըւականին (1421)
Ղարայ-Ուսուֆ տէրըն թախթին
Սատակեցաւ ըստ արժանին,
Խաղք, խայտառակ որպէս տեսին
Անկեալ յերկիր զպըղծոյն մարմին,
Ուռեալ նեխաւ գէշ գարշելին,
Ազգաւք հանին զաչեր նորին։
Զի չփոթեցաւ զաւրքըն չարին
Եւ յիրերաց փախուստ առին։
Իսկ յետ երից աւուրց եկին,
Բարձին ըզգէշն՝ յԱրջէշ բերին։
Իսկ զաւրք չարին՝ Միր Ուսուֆին
Ընդ որ գնացին՝ աւերեցին,
Զար, անզգամ որդիք էին
Եւ անսասխ ազգ Թուրքմանին։
Ընդ մեռանել Ուսուֆ բէկին
Զաւրք չաղաթին եկին հասին,
Որոց գըլուխ և առաջնորդ
Էր Շախրուխ անուն նորին.
Էր նա որդի Միր Թամուրին,
Կըրսեր եղբայր Միրանշային.
Զաւրքըն բազում քան զԹամուրին,
'Ի այլ աւելի քան ըզնոսին,
Հինգ բիւր, որ է յիսուն հազար,
Էր սորա զաւրքն ընդ նոյն համար.
Զի երեսուն էր Թամուրին.
'Ի այլ աւելի քան ըզնոսին՝
Երեսուն ու հինք բիւր Շահռուխին

---

* Բ. և Գ. օրինակներում «Յիշատակարանը» սկսվում է այստեղից.

273 Գ. ի Բաղդատ և ի Մըսըր 274 Գ. 'ւ չիք, Պարսկաստանին 275—278 Գ. չիք 284 Ա. մարմին պղծին 285—286 Գ. չիք, այս երկու տողը Ա. Տպ. օրինակներում տեղափոխված է 288 տողից հետո 289 Գ. երկուց փխ երից 290 Ա. Բ. Գ. և Թաղեցին փխ յԱրջէշ բերին 293 Ա. Տպ. Ալշ. մարդիկ փխ որդիք 294 Գ. Ալշ. անառակ փխ անսասխ 296 Ալշ. Զաղաթին զաւրքն 297 Տպ. առաջին 298 Տպ. այստեղ և ամենուրեք՝ Շախ Ռուհ կամ Շահրուհ 299 Գ. Լանկ-Թամուրին 300 Բ. կրասեր 302 Ա. Տպ. 'Ի չիք, Գ. առաւել փխ աւելի զնորին 304 Ալշ. այս փխ սորա: Գ. սոյն 305 Գ. երեսուն բիւր 306 այս տողի փխ Գ. ունի՝ «Յոյժ չարագործ նման Ներին» 307—308 Ա. Տպ. Ալշ. չիք

Զաւրքն ամենայն ի միասին.
Բայց ոչ ունէր սա չարութիւն,
Այլ բարեսէր հանդարաութիւն.
Ցորմէ սարաեաւ ազգ Թուրքմանին
Վասն չարեաց զոր գործեցին.
Զի անողորմ էր 'ւ անիրաւ,
Էր անմըրւաթ 'ւ անշտղաւաթ,
Անդատառաան ե անհաւատ,
Գիժ, չարագործ իսկ ե տըմարդ,
Անպատկառ ե անամաւթ,
Մեռաց աման, չարեաց անաւթ.
Փառք աստուծոյ զոր ինչ արար
Ընդ Թուրքմանի չարեացն յարմար,
Քանզի խրտան նախ ե փախեան
Եւ յետ դարձեալ կոտորեցան,
Ըստ արժանեացն ի ձեռս անկան
Շահրուխին ե մատնեցան.
Շատք ի սըրոյ նոցա մեռան
'Ի այլքըն փախեան ե գերեցան,
Ձիոց կոխան սատակեցան,
Խաղք խայտառակ Թալանեցան,
Ի սար 'ւ ի ձոր փախըստական.
Ընդ որ փախեան հալածեցան
'Ի ինքեանք միմեանց դահիճ դարձան.
Անթիւ ըռզակ էր զոր տարան,
Աղէկ ձիան ե շատ ուղտան,
Կին և տըղայքն ի Թիւ չանկան
Զոր գերեցան ե կոխեցան.
Բայց ողորմած և խըղճական
Նա սիրտ ունէր՝ Շահրուխն այն,
Ասախ արար, հուքմ և հրաման
Ոչ կոտորել զամենեսեան,
Այլ Թոյլ ետուր որ ցըրուեցան
'Ի աւտար երկիր վըտարեցան.

---

[311] Ա. Ալշ. սարսեաւ, Տպ. սարսզան(*) [311] Ա. Տպ. Բ. Գ. վասն իւր չարեացըն զոր ունին [313—318] տողերի փխ. Գ. ունի՝ «Թէպէտ բազմաց զուր փորեցին ‖ ինքեանք անկան ըստ Սաղմոսին» [314] Ա. Տպ. էր չիք [316] Ա. պեղծ [320] Ա. Թուրքմանին [321] Ա. Տպ. խըրան Ալշ. խլրտան, Գ. եղեն փախստական փխ խրտան նախ և փախեան [322] Գ. յետոյ, Ա. Գ. դարձան [323] Բ. Դ. արժանեաց, Գ. ի ձեռն [324] Բ. պարտեցան [325] Գ. նորին [326] Գ. 'Ի չիք [3]2'-ից հետո Ա. Բ. Գ. ունեն՝ «Կողոպտեցան և գերեցան», [327] Գ. չիք [328] Գ. ամենեքեան փխ Թալանեցան [331] Այս տողով ավարտվում է «Յիշատակարանը» Գ. (ՄատՆ 1117) ձեռագրում. [333] Բ. Ացւոր փխ Աղէկ, Գ. ձիանք, ապրանք փխ ուղտան [334] Գ. տըղայք [336—338] տողերը Գ-ում այսպես՝ «Բայց Շահուռուխն, որ էր սուլթան ‖ Նա սիրտ ունէր ողորմական ‖ քանզի եհան հուքմ ու հրաման» [339] Ա. Տպ. Ալշ. կորուսել փխ կոտորել [340] Բ. երետ, Գ. որք [341] Գ. Ցոտար փխ 'Ի աւտար

Եւ Շահըռուխն այն մեծ սուլթան
Գնաց, դարձաւ ի Խորասան,
Երթեալ յաթոռն իւր բընական՝
Ի Սըմըրղընդ հայրենական.
Զթախթըն թողեալ ըշշահստան
Անտէր՝ Թուրէզ քաղաքըն զայն։
Ապա որդիք Յուսուֆ բէկին
Եկեալ թախթին այն տիրեցին,
Բայց ինքեանք ոչ բարիշեցին,
Այլ մին ըզմիւսըն փախուցին։
Իսկ անիծեալն ամենւին՝
Կըրսեր որդի Միր Յուսուֆին՝
Սպանդիարն անուաթ չարին,
Լիրբ, անըզգամ, յիմար հոգին,
Էր Ճիասակար և աւերիչ
Շատ բարեկի չէն գաւառին.
Զերնէշ և զԱրծկէ աւերեց,
Զթասեն և զԱւնիկըն քակեց,
ԶԿարնոյ քաղաքըն՝ զԱռզըռում
Քան զամենայն խիստ աւերեց։
Իսկ Ըսքանդար աւագ որդին
Ղարա-Յուսուֆ բահադուրին,
Նա ի Թուրէզ տիրեաց՝ թախթին
’Ի ասախ արար, շատ բարութիւն,
Բայց մեզ աւար ած և խաւար
Եւ չարութիւն դառն և դըժար։
Ի տարեկից իւր փախըստին,
Որ ի ձեռացն Չաղաթին,
Հեծել արար շատ բազմութիւն
’Ի եկն ի վերայ Խլաթայ բերդին.
Բերդին Ճնասել ոչ կարացին,
Այլ զքաղաքն այրեցին.
Ի յԱղուվանք արշաւեցին
Եւ չար ոճիրս անգ գործեցին,

342—343 Գ.-ում այսպես՝ «Իսկ ինքն և զօրքն իւր ամենայն ‖ դարձեալ գնացին ի Խո- րասան» 344 Ա. Տպ. Գ. Գընաց փխ երթեալ 345 Ա. Տպ. Սամըրղանդ, Գ. Սամըրղանդն 346—347 Գ.-ում այսպես՝ «Քաղաքն Թաւրէզն զշահաստան ‖ Թողեալ անդէն և անիշխան» 347 Ա. զԹաւրէզ 348 Գ. որդիքն 350 Գ. «Բայց և յինքեանք չմիաբանեցին» 353 Գ. որդին 354 Տպ. Ըսպանդիարն 355 Գ. յամառ փխ յիմար 356 Ա. Տպ. և աւերող, Գ. ’ւ աւերողին 357 Բ. «Շէն, բարեկի շաա գաւառին» 358 Բ. «ԶԱրծկէ և զԱրճէշ աւերեց», Գ. աւերեցին 359 Գ. չիք 361 Բ. աւերեց 362 Ալշ. իսկ չիք Ա. Տպ. Իսքանդար, Գ. Սքանդար 363 Ա. բախադու- րին 364 Գ. Նախ փխ Նա 365 Գ. չիք 366 Գ. «Եւ մեզ խաւար եղև կրկին» 367 Գ. չիք 368 Գ. ի Դաւրիզից փխ ի տարեկից 370 Տպ. Խեծել, Գ. Հեծեալ 371 Գ. ·Ի չիք, Ղըլաթ քաղքին 373 Ալշ. աւերեցին փխ այրեցին 374 Բ. յԱղուվանց, Գ. Տպ. յԱղուանք 375 Ա. Տպ. զազայ, Ալշ. Ղալայմ, Գ. չարիք փխ ոճիրս Ա. Տպ. Ալշ. արարին փխ գործեցին

Ըզբերդն առին, կոտորեցին,
Շատ քրիստոնեայք անդէն սպանին,
Քան զերկերիւրն այլ աւելի,
Զորս սըրոյ ճարակ տըւին,
Թող զորս ի ծովըն խեղդեցան
Եւ քարավէժ եղեալ կորեան.
Ո՜հ, գեղեցիկ կերպ ու սուրաթ
Այն մանկտեկացն որ կորուստն,
Լաւ հարկեւոր տանուտրայք
Համեստ 'ւ ազնուր լաւ տանտիկնայք,
Բարձրահասակ 'ւ ազէկ տեսակ
Գուն ու կերպով ճոխ կըտըրճակ.
Այս ամենայն ի սուր անցան,
Գերեզմանի չարժանացան,
Կանայք տղայաւքն գերեցան,
Քան զհինգհարիւրն այլ աւելան.
Զի ի միոյ գեղջէ չէին,
Այլ ի բազում տեղաց էին,
Ի Խիզանայ 'ւ ի Բաղիշոյ,
Որք հասկաքաղ եկեալ էին,
Ծըղաք 'ւ Աղաղ ամենեւին,
Շատք յԱղիթայ անդէն էին,
Որք ի սուրն քարշեցան,
Կին և տըղայքըն գերեցան.
Այս ամենայն ի պատճառէ
Այն Շամըզդին ամիրայէ,
Զար սատանին արբանեկէ
Եւ ի Ներին կարապետէ,
Որ նա արար հպարտութիւն,
Զհնազանդեցաւ Ըսքանդարին:
Շատք որ մեռան՝ անթաղ մնացին,
Ոչ հաց հոգւոյ 'ւ ոչ դրամ հողին.

---

376 Գ. և քանդեցին փխ. կոտորեցին 377 Գ. կոտորեցին փխ անդէն սպանին 379 Ա. Տպ. Ալշ. Զոր անդ (Գ. Անդէն) ի սուրըն քարշեցին 380 Գ. Զոմանս փխ Թող զորս 381 Դ. Զայլ քարավէժս մահացուցին 382 Ալշ. գըւարթ փխ սուրաթ 382—383 Գ. չիք 384—388 տողերը Գ.-ում տեղափոխված են 415 տողից հետո և խմբագրված են այսպես՝ «Մեծ պարոնայք և շատ իշխանք ‖ Համեստ 'ւ ազնուր լաւ տանտիկնայք ‖ ամենեքեան ի սուր անցան» 384 Տպ. տանուտիրայք Ալշ. տանուտերայք 385 Ա. Բ. լաւ չիք, Բ. «Ճոխ և ազնուր տանտիկնանայք», Տպ. տանտիկընայք, Ալշ. տանտիկնայք 388 Ա. Ալշ. Այսք 390 Գ. և զտղայսըն գերեցին 391—408 Գ. չիք 394 Ա. Տպ. Ալշ. Հիզանայ 397 Բ. յԱղիթայ, Տպ. յՍղիթայ 399 Ա. կանայքն որդւովքըն, Տպ. կանայք որդւովքն 400 Տպ. ամենայնի պատճառ է այն 401 Ա. Շամըղըղին, Տպ. ամիրայի 402 Տպ. արբանեկի 402—403 Բ. չիք 405 Ա. Տպ. Ալշ. Իսքանդարին 406 Ա. Շատք որ սպանւան, Ալշ. Շատ ոք ըսպան, Տպ. Շատ ոք սպան 'ւ, Գ. Զի որք սպանան փխ Շատք որ մեռան 407 Ա. ոչ դրամ հողին, Տպ. ոչ դրամ թողին, Գ. ոչ մաս բերնին փխ 'ւ ոչ դրամ հողին 406—407 տողերը Գ.-ում տեղափոխված են 415-ից հետո

Եւ որք գերի վարեալ գնացին,
Ցաւտար երկիր վըտարեցին,
Ի յայլազգիս խառնակեցան,
Ըզչարութիւն նոցա ուսան.
Աւտարացան և յոռացան,
Ըզհայրենիսըն մոռացան.
Ոչ ի կամաց, այլ յակամայ
Հանդիպեցաւ այս դէպք նոցա։
Միթէ աստուածըն քաղցրանայ
Եւ ազատէ անտի զնոսա։
Որք հանդիպիք այս երգակիս
Զիս յիշեցէք ըզեղկելիս՝
Զմրափած Գրիգոր Խըլաթեցիս,
Որ սպասաւոր կոչիմ բանիս,
Եւ սխալանաց շարագրիս
Անմեղադիր լերուք անձինս.
Որ գըրէի ըզբանս ողբիս
Եւ կըսկըծայր սիրտս ի փորիս,
Ոչ հանգուըժեալ մըտաց խըղճիս,
Զոր գըրեցի ես ի քարտիս,
Քանզի ի մէջ էաք չարիս,
Որ եկն եհաս մեր աշխարհիս,
Եւս առաւել մերում ազգիս,
Այս տառապեալ Հայոց տոհմիս՝
Անուամբ միայն քրիստոնէիս
Գործոց դատարկ ամըտըրշտիս,
Սուրբ աւրինաց հակառակիս.
Բաբիստեաց չարասիրիս,
Եմք անաղաւթք հեղգ ի բարիս,
Անապաշաւ խըղճամըտիս,
Ծոյլ և պըղերգ յամէն բարիս,
’Ի անկարեկից յայլոց կարիս,
Ցիշոցնատու ոչինչ բանիս,
’Ի երգըթաղանց ևս ի սնոտիս,
Բախիլ ’ւ յաչաղ յայլոց բարիս
Եւ նախանձոտ առ ընկերիս,
Քինախընդիր, չարաճըճիս.
Եւ բամբասող միտ ըզըրարիս։

410 Գ. յայլազգիսն խառնեցան, Տպ. յայլազգին 411 Գ. եւ զչարիսըն փխ ըզչարութիւն 412 Բ. Ցոռացան ’ւ աւտարացան 412—413 Գ. չիք 413-ից հետո Ա. Տպ. ունեն՝ «Պըգծեցան և ղարշեցան ‖ Աղտեղացան և գազրացան» 414 Գ. կամայ 415 Ա. Տպ. գարք Ալշ. չարք, Գ. բանս փխ դէպք 416 Բ. Մեծ է փխ Միթէ 416—417 տողերով ավարտվում է «Ցիշատակարանը» Բ. (Երևան 4522) և Գ. (Երևան 8908) ձեռագրերում. այդ տողերը Գ.-ում խմբագրված են այսպես, «Միթէ գթայ տէրն երկնային ‖ ’ւ ողորմեսցի հոգոց նոցին, ամէն» 421 Տպ, գրէի 433 Ա. քրիստոնէից 434—440 Ալշ. չիք 436 Տպ. պղերգ 442 Տպ. ’ւ չիք

Վասն այսորիկ տաժանելիս
Եւ տառապեալ եմք յաշխարհիս,
Մերս խաւարած եկեղեցիս,
Աղգըս ցըրւած յամեն տեղիս։
Բայց գոհութիւն մարդասիրին,
Որ ապրեցաք ի յայս վըշտիս,
Զմեզ ոչ թողեալ ի նեղութիւն,
Այլ փոյթ եհան յանգորութիւն։
Տուք աւրհնութիւն հաւրն անեղին
Եւ միածին բանի նորին,
Այլ և հոգւոյն՝ իւր էակցին։
Փառք և պատիւ ի մէնջ տացին
Երրորդութեանն միակին՝
Հայր և որդի և սուրբ հոգին,
Որ էտ ինձ կար՝ տկար անձին
Եւ զեչն ու զնուն հասոյց ի մին՝
Րամեալ զանձերս որ ի միջին
Եչն առաջին և Նուն յետին։

[Պատմութիւն արշաւանաց և ասպատակութեանց զաւրաց Լանկ-Թամուրի, ի Գրիգորէ Խլաթեցւոյ]

... Էր Թըւականն յաբաբարդեալ
Ամս ութհարեւր՝ հոլով անցեալ,
Երեսուն ու վեց ի նոյն յանկեալ (1387)
Ժամանակաց շատալըծեալ.
Յորում ամի էր սաստկացեալ
Զաւրք Թամուրին ի դուրս եկեալ,
Բազում ոճիրըս գործեցեալ
Եւ շատ արիւն յերկիր հեղեալ։
ԸզՊարսկաստան երկիր կոխեալ
Եւ զՀայաստան ի յոտք տարեալ.
Այն գազանին էր նըմանեալ,
Զոր Դանիէլ սուրբն ասացեալ։
Մինչ ի սահմանս Ամթայ հասեալ,
Զերկիրս ամէն չաւլ արարեալ.
Ապա դարձեալ՝ ի Վան եկեալ,
Զամուր դըղեակըն պաշարեալ,
Վեց ու քսան աւր հըսարեալ,
'Ի ապա ի ձեռս նոցա մատնեալ։
Բազմաց աւրհասըն ժամանեալ
Դուարն մահւամբ քարավիժեալ,
Ոչ մին հազար 'ւ երկու եղեալ,
Այլ քան զերեքն առաւելեալ,

[448] Տպ. Մեր [449] Տպ. Աղգս ցրուած

Մինչ մըսադէզըն բարձրացեալ
Եւ որք անկեալ՝ այլ ոչ մեռեալ։
Իսկ և գերեացն ըզթիւ անցեալ*
Եւ համարոյ գերազանցեալ,
Զօրս առեալ և վըտարեալ՝
Ի Սըմըրղանդ քաղաք հասեալ։
Դարձեալ յեւթներորդ ամին (1394)
Այլ բազմութեամբ ի դուրս ելին,
Քաղդէացոց աշխարհն իջին
Եւ զԹարեզոն քաղաքն առին,
Ի Միջագետս արշաւեցին
Եւ շատ աւերս անդ արարին,
ԶԱմիթ քաղաքն երեելին
Առհասարակ կոտորեցին։
Անտի ելին յերկիրս վերին
Եւ զԱւընիկոյ ամուրն առին,
Այլ և ըզբերդն Բագրաւնին,
Որ անհընար էր առողին։
Բազմաց զաւրհասըն հասուցին,
Զշատս ի քարանցն ի վայր արկին.
Եւ ըզգըլուխսն զոր հատին
Զայնս մընարա յաւրինեցին.
Այս էր ի Թիւ ութհարիւրին
Եւ քառասուն 'ւ երեք ամին (1394)։
Երկիր բոլոր սասանէին
Ի տագնապի ահէ նոցին։
Եւ այնմ աւրէ հըսարեցին
Զամուր դղեակն Երընջակին,
Պատեցին, բոլորեցին
Ամուր պատնէշս կանգնեցին։
Դարձեալ յետ հինգերորդ ամին (1399)
Եւ Թագաւորըն Վըրացին...
Եկեալ ի բերդն Երընջակին,
Ծանր զաւրաւք շատ 'ւ ահագին,
'Ի նշան զօրդի Անմատ. ղանին,
Փախոյց զզաւրսն չաղաթին,
'Ի այլ ամրացոյց զօրս ի բերդին։
Զոր և լուեալ Թամուր բէկին,
Կըրկին շարժեալ ի բարկութիւն,
Ի քաղաքէն Սամարղանդին
Դարձաւ զաւրաւք ծանր, ահագին,
Բազում փըղաւք՝ ազգ վիթխարին,
'Ի այլ հընարիւք մեքենային։

* Ձեռագրում՝ «անցին»։

Ի յութ հարիւր Հայոց Թըւին
Եւ քառասուն և ութ ամին (1399)
Եկեալ աւուրս աշնանային
Մինչ յեղանակն ամառնային։
Քանդեալ կորոյս ըզվըրացին
Եւթըն ամիս բոլորովին.
Եւ սըպանելոցըն Թիւ գըտին
Հարիւր հազար՝ այլ աւելին,
Բայց ըզգերելոցն ըզԹիւ անցին
Եւ ի համար ոչ անկանին,
Թող զոր ձիոցն էին կոխած
Եւ ի քարանցն էին վիժած։*
Եւ այս նըման Իսրայելեանցն,
Որ ի յաւուրս Մակաբայեանցն,
Զոր մարգարէն յառաջ ասաց,
Աստուածախաւսըն գուշակեաց։
Զնետն աստուծոյ արեամբ արբած,
Սուրն ի յարիւնՆս շաղախած.
Այս ամենայն պըտուղ մեղաց
Եւ անաւրէն գործոց չարեաց,
Զոր սատանայ ի մեզ ազդեաց՝
Սուտ քըրիստոնեայքս և խարխալեաց,
Որով արբաք ըստ արժանեաց
Զդառըն բաժակն ի յայլ ազգաց։
Ցետ այսորիկ չարըն խաղաց
ԱնԹիւ զաւրաւքն իւր և գընաց,
Եմուտ սաստիւ ի տունն [Ց]ունաց՝
Ի Մէջերկրեայ սահման Գամրաց,
Մայրաքաղաք Սեբաստիայ.
Սաստիկ հարուած եհաս նըմայ,
Զոր պաշարեալ ըզնայ առին
Եւ նորաձև պաշար տըւին։
Զարս ամենայն ըզքաղաքին
Ըզգլխաւորս երևեցին
Գուբ և խանդակ փոս փորեցին
Եւ կենդանոյն ի ներս արկին.
Զամենեսեան քարկոծեցին,
Շնչոփն իւրեանց և ծածկեցին։
Ո՜, յահագին պատուհասին
Եւ անծանաւԹ, որ ոչ պատմին,
Զի մինչ աւուրըն չորրորդին
Գոռունն գայր անընդային,
Զի ոչ հարիւր կամ հազարին,
Այլ ութ հազար գոլ Թիւ նոցին։

* Ձեռագրում՝ «Վիժացն»

301

ՄԱՇՏՈՑ

Երևան 6248

Գրիչ՝ Սիմէոն
վայր՝ Երզնկա

189 բ ... Արդ, գրեցաւ աստուածախօսս քնարս, որ կոչի հայր Մաշ-
տոց ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Սիմէոն սուտանուն քա-
հանայի, ի գաւառս Եկեղեաց, ի քաղաքս Եզնկա, ընդ հովանեաւ սրբոյ
Կարապետիս և սուրբ Աստուածածնիս։
Արդ, գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՊՀԱ. (1422), սեպտեմբեր
ամսոյ Ե. (5) աւարտեցաւ, ի հայրապետութեան տեառն տէր Յո-
հաննիսի արքեպիսկոպոսի, զոր աստուած ընդ երկայն աւուրս արաս-
ցէ։ Արդ, աղաչեմ զամենեսեան արտասուալից պաղատանաւք, զի զա-
մենեսեան յիշատակի արժանի առնիջիք. Նախ՝ զաստուածազարդ
սուրբ կտակիս զոտացաւղ տառիս՝ զերիցակին Թաճն, և զՄխիթար
քահանայն, և զաւակն իւրեանց զՍառա-խաթունն, և զամենայն արեան
մերձս նորա՝ զկենդանիս և զհանգուցեալս։ Եւ զառաջնորդ անապա-
190 ա տին զհայր Մարգարէ, որ զաւրինակն շնորհեաց և բազում երա ‖ խ-
տիք ունի առ մեզ, և զտէր Առաքելն, և զտէր Մաթէոսն, որ շատ աշ-
խատեցաւ հետ ինձ։
Ցիշեցէք և զհոգեոր հայրն մեր զՅովաննէս կրաւնաւորն, որ աշխա-
տութեամբ սնոյց և ուսոյց զիս և զծնողսն նորա։ Ընդ նմին զմեղապարտ
և զանարժան գրիչս զՍիմէոն երէցս, և զեղբայրն իմ զԿարապետ սար-
կաւագ, և զծնաւղսն մեր զՍտեփանոս՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և
զՇնովոր, և զամենայն արեան մերձաւորսն իմ՝ զկենդանիս և զհան-
գուցեալսն ի Քրիստոս։ Ցիշեցէք և զՌըստակէսն և զԽելաւքն, և զա-
ւակն իւրեանց զՄարթախունն*, և զստացաւղ գրոցս զերիցակին
Թաճն, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց և ետ ի լուսեղէն
տաճարս՝ ի սուրբ Գէորգս և ի սուրբ Աստուածածինս, յիշատակ իւր
և ծնողաց իւրոց։ Եւ ով ոք զյիշատակեալքս լի սրտիւ յիշէ՝ յիշեսցէ
և զձեզ Քրիստոս յիւր երկնից սուրբ արքայութիւնն, ամէն։ Եւ ով
ոք մի իշխեսցէ ի գրոցէս պարապ թուղթ կտրել կամ յիշատակարա-
190 բ նէս քերել և այլ անուն գրել։ Եւ ոչ ոք յազգականաց սոցա մի ‖ իշ-
խեսցէ ծախել, կամ գրաւկնել, կամ ի սուրբ Աստուածածնիս գոնէս
հանել. եւ եթէ ի պատահմանէ յայլազգեաց ձեռք անկանի, ով որ գնէ՝
բերէ ի սուրբ աթոռս՝ ի սուրբ Գէորգս։
Այլ և վատութեան գրիս և սղալանաց մի մեղադրէք, զի ի խիստ
դառն ժամանակի գրեցաւ. զի երեկ Աւթմանն ի վերա մեր և դառն աւա-
րեց, և ԺԳ. (13) շաբաթ ի վերա քաղքիս նստաւ և զվաստակն կերցուց,
և ով որ ի ձեռք անկաւ՝ զոմն սպանեց և զոմն ծառա բռնեց և խիստ խսա-
րեց, ապա ի յաստուծոյ (*) և ով որ ի յափ ընկաւ՝ նա բերին ծախեցին. և
հանց խսարեց, որ մօթ հացն ՌՃ. (800) դրամ եղաւ և մօթ աղն ի ՌԲՃ.

* Թերևս աղավաղումն է «Մարթա-խաթուն» անվան։

(1200) դրամ, և ոնց որ յԱճի անկ եղաւ։ Նայ ողորմեցաւ աստուած, որ ասաց քաղքին պարոնն, թէ զամէնքս ի դուրս արէք, զինչ որ մարդ կայ, որ ազեխ չունի. և զամէնքս ի դուրս արին։ Նայ ողորմութիւնն աստուծոյ անսպառ էր, որ հանց քաղցրացոյց զԱւթմանին սիրտն, որ
191 ա ով ի դուրս ելաւ, նա մարդ կու դնէր ի հե || տ, որ կու տանէին՝ ի շէն աշխարհ հասուցանէին։

Այլ աղաչեմ զձեզ յիշեցէք զԿարապետ քահանայն և զծնաւղսն իւր, և զԳէորգ ժամակոչն և զծնաւղսն իւր, զսպասաւորք սուրբ Աստուածածնիս և սուրբ Գէորգայ զաւրավարիս, և զիս՝ զանարժան գրիչս զՍիմէոն մեղապարտ քահանայս. և որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Ցիշեցէք զՄխիթարիչն, և զերիցակին Թանն, և զՍիոնն, որ հալալ արդեամբք իւրեանց աւգնական եղեն և զժամատունս շինեցին, և զԿարապետ քահանայ, որ յանձն առ և բազում երախտիք ունի, և զայլ մեծ և փոքր, որ աշխատեցան ի հետ. Քրիստոս աստուած թողցէ զյանցանս նոցա աստ և ի հանդերձեալն. և աստուած թողցէ զյանցանս Ասպետին, որ շատ աշխատեցաւ ի հետ և զպատերն շ[ի]նեաց,



Նկ. 11. Մի հատված Սիմէոն դպրի հիշատակարանից

Ցիշեցէք զՀայրապետն, և զաւակն իւր զԱմիրպէկն, և զՄարեմ-խաթունն, որ զիպրեզն (*)* և զգրտկալուցն ծածկոցն տուին յիշատակ
191 բ իւ || րեանց և ծնաւղաց իւրեանց։ Քրիստոս աստուած թողցէ զյանցանս նոցա աստ և ի հանդերձելումն։

Ցիշեցէք զՍտեփանոսն, որ կէս լիտր կերիոն ելից յամէն տարի...։

Ցիշեցէք զՅակոբն և զհամեստ կինն իւր, որ քիմխա շուրջառ և զբոլոր սպասքն դրին յիշատակ իւրեանց...։

* Թերևս կարդալու է՝ «Ձ. (ծ) լիտր եղն»։

Յիշեցէք զտանտիկնաք զգեղիս, որ զատենի շուրջառն գրին յիշատակ...։

Յիշեցէք զՍամուէլ քահանայ, որ զաւետարան գնեց...։

Յիշեցէք զԹաթէոսն և զգեղիս մեծ և փոքր, որ զճաշոցն առին և եղին յիշատակ իւրեանց...։

Յիշեցէք և զՍտեփաննոս քահանայ, որ զպայծառ խորանս կազմեաց... և զգեղիս մեծ և փոքր, որ շատ աշխատեցան, Քրիստոս աստուած ջնջէ զձեռագիր յանցանացն նոցա աստ և ի հանդերձեալն։

302

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄՑՎ 10 (280), հա. Ա., էջ 114—115

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Խլաթ

ա

774 բ ... Արդ, աւարտեցաւ աստուածաշունչ գիրքս՝ հին և նոր կտակարանքս՝ ընդ ձեռամբ մեղսամած գրչի Կարապետի, ի քաղաքիս որ կոչի Խլաթ, ընդ հովանեաւ ԺԱ. (11) խորանիս, որ է գեղեցկայարմար և բարձրաբերձ և լայնատարած տաճարիս, ի խնդրոյ բարիբարւոյ և փառաւոր վարդապետի Յովհաննիսի, որ բազում աշխատութեամբ և յօժար փափաքմամբ և թաղխծեալ անձամբ տըւի զսա գրել ի ժամանակս նեղ և անձուկ, որ կանք փախուցեալ ի յամուրս և ի ծերպս վիմաց ի յահէ անօրինաց, բազում աշխատութեամբ և տառապանօք։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսլեամբ կամ օրինակելով, անյապաղ զաստուած-ողորմին շնորհեցէք ստացողի սորա Յովհաննէս վարդապետին, և ծնողաց նորին՝ հօրն Սահմադինն, և մաւրն, և ամենայն ազգականաց իւր՝ բարեկամաց և սիրելեաց իւրոց, ամէն...։

Արդ, աղաչեմ զամենեսեան յիշել զանարժան գծողս զԿարապետ, որ բազում աշխատութեամբ և տառապանօք հասի յաւարտ սորա, միով աստուած-ողորմիւ յիշել զծնողսն իմ՝ զհայրն իմ զՅով[հաննէս], և զմայրն իմ զԹանկ-Խաթունն, և զհոգևոր հարքն իմ զԱնդրէասն և զԿիրակոս, զվարդապետն իմ՝ զշնորհալիր կրաւնաւորն զՊետրոս, և զամենայն երախդաւորսն մեր, ամէն։

Արդ, հիմնեցաւ սուրբ կտակարանքս ի թվին ՊԿԷ. (1418), և աւարտեցաւ ՊՀԱ. (1422)։

բ

349 ա ... Յիշեցջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ստացող աստուածաբուխ տառիս՝ զհեզ և զխոնարհամիտ վարդապետն Յովհաննէս, և զծնողսն իւր, և զեղբայր զԹուխթամուր, և զամենայն ազգայինսն, և զմեղապարտ գծողս Կարապետ՝ միով աստուած-ողորմիւ յիշել ի տէր։

Ծաղկող՝ Մկրտիչ Նաղաշ

Գ

697 բ Զաստուածարեալ և զոխեզերալոյս վարդապետն՝ զստացող աստուածոյշունչ տառիս զՅովանէս սրբակրօն զբաբունին աղաչեմ յիշել ի տէր, ընդ նմին և զմեղապարտ նկարիչս՝ զորուպ ծառայ համաւրէն ծառայից աստուծոյ զՄկրտիչ մեղաւք զառածեալս, զի խոնջաքիրտն աշխատանաւք վաստակեցայ ի նկարել տառքս։ Աղաչեմ յիշման արժանի առնել զմերս անարժանութիւն և աստուած յիշողացդ ողորմեսցի։

Դ

777 բ Եւ զմեղաւորս Մկրտիչ սուկ անուամբ եպիսկոպոս Ամիթ քաղաքի և Մերտընայ, Ուռհայու և Թիլկուբնա, Հինու և Արղնու։ Վա՜յն է պատեւ զիս, յորժամ առնուն զհամարն տնտեսութեան։

Ողորմելի գերի Նաղաշ,
Քանի ուտես զաւրըն պըլաշ,
Զա՛նքդ բաց ու հատր պտշ,
Որ չլինիս որթանցըն ճաշ։

Ցիշեցէք ի Քրիստոս զԹանղրուէրմեշ տղայն,* որ հանդիպեցաւ այսօր աստ։ Ցիշեցէք զմղտսի Մահուան, որ յամէն օր ինձ Ժ. (10) լաւշ կու բերէր։**

303

ՈՍԿԵՓՈՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երուսաղէմ 1248

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Տաթև

Գրեցաւ ի վանս Ստաթէի, առ ոտս քաջ րաբունապետին մերոյ Մխիթարայ, և յառաջնորդութեան տանս Սիսականայ տէր Ստեփանոսի՝ որդւոյ պարոն Սմբատին, որ և յայսմ ամի գնացեալ ի Տունն Վրաց, առ մայրն իւր՝ փոխեցաւ ի Քրիստոս... և իշխանութեան պարոն Պէշքենին՝ եղբօր նորին, և Յովհաննէս փակակալին... ի թուին Հայոց՝ ՊՀԱ. (1422), ձեռամբ Թումայի։

304

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 3713

Գրիչ՝ Առաքել Սիւնեցի
վայր՝ Անգեղակութ

212 ա ... Կատարեցաւ սուրբ և աստուածախաւս աւետարանս ձեռամբ տէր Առաքելոյ Սիւնեաց, յանապատիս Անգեղակութոյ, ի թվիս Հայոց

* «Թանգրիվերմիշ»— Թրք. Աստուածատուր անունն է։ Տպված է աղավաղված, այսպես՝ «զԹանգրուէր Մեշաղայն»։
** Տես նաև ՊՂԸ. (1449)-ի թվաշարքում։

ՊՀԱ. (1422) ամի, ի խնդրոյ սրբասէր և աստուածահաճոյ, կուսակրաւն քահանային՝ Գրիգոր աբեղային, որ ըստացաւ սուրբ աւետարանս ի հալալ արդեանց իւրոց, ի յիշատակ իւր և ծնօղաց իւրոց։



Նկ. 12. Առաքել Սիւնեցու ինքնագիրը։

*Արդ, որք հանդիպիք սմա [տեսան]ելով և կամ աւրինակելով, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զպատուելի քահանայն զտէր Գրիգոր, և զծնաւղսն իւր զ*Թագուորշայն*, և զեղբայրսն իւր [Վ˚]այրամշայն և զխոտրշայն և ե | | |*

305

ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼԻ ԲԱՂԻՇԵՑԻՈՑ

Երևան 7362 և 101*

Հեղինակ՝ Առաքել
վայր՝ Ղազարու վանք

Յարմարեցաւ ճառս ի վանքն Ղազարու, *ձեռամբ ամենամեղ և եղկելի Թշուառական անձին* Առաքել *վարդապետի, ի Թվականիս Հայոց ՊՀԱ. (1422)։*

*... Եւ արդ, զոր ի համբաւէ լուեալ և զոր ի գրոց պատմութեանց ընթերցեալ պատուեմք և մեծարեմք զօր յիշատակի նոցա, ապա ես առաւել պարտիմք գովել և ներփողել զայնոսիկ, որք ականատես եղաք մեզէն նոցա հրեշտակակրօն և բազմօրինակ վարուցն։ Եւ թէ զհամօրէն ընտրեալսն յիշատակօք տօնախմբել արժան է, ապա ես առաւել զհոգևոր ծնօղսն մեր և զվարդապետսն, որք բանիւք և իմաստութեամբ երկնեալ ծնան զմեզ անխարդախ կաթամբ աստուածաշունչ գրոց, ըստ բանի մեծին Պօղոսի, յորոց և մի ի բազմաց վարդապետաց եկեղեցւոյ և աստուածաբան քարոզողաց սքանչելի այրն աստուծոյ և ախոյանն հաւատոյ, զարդարեալսն ամենայն առաքինութեամբ և լցեալն շնորհօք աստուածային րաբունապետն Գրի*գորիոս Խլաթեցին, *որդի* Տերին, *որ ի վերջին աւուրս քան զառաջինսն գերագոյն երևեցաւ և յերեկոյացեալ ժամու նախնի մշակացն արժանաւորեալ հաւասարեցաւ աստուածատունկ այգիս եկեղեցիս սրբոյ։*

---

* *Այս հիշատակարանի առաջին պարբերությունը գտնում ենք նաև Երևանի № 7465 ձեռագիր Ցայսմաւուրքի 445ր էջում։*

Արդ, ես՝ տարտամեալս մեղօք և զառացեալս աղդեղութեամբ, մտօք յիմարեալ և հոգով ‖ ցնորեալ և մարմնով անսրբութեամբ, անվարժ իմաստութեամբ և անպիտանս եկեղեցւոյ, պղինձ հնչողական և ցնծղայս ղօղանջական, ժանկոտեալս պատրանօք և նսեմացեալս ի գործ խաւարին, անարգս ի մէջ պատուաւորաց և անհմուտս ի կարգս բանասիրաց՝ Առաքեալ *պիտականուն վարդապետ, որ չեմ բաւական գովել զամենայն գովութեանց արժանաւորն՝ զքաջ վարդապետն* Գրիգորիոս, *որ չէ կարօտ [գովութեանց]....*

306

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5635

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Բերկրի, Եղիվանք

276 ա *... Սրբամաքուր կրաւնաւորն* Յոհաննէս, *զարհուրելով ի սպառնալեացն և փափաքելով աւետեացն ստացաւ զանարիկ մեծութիւնս և զանկողոպտելի գանձս՝ զսուրբ աւետարանս, յիշատակ բարի իւրն, և ծնաւղացն իւրոց՝ հաւրն քրիստոսադաւան* Ստեփաննոսին *և մաւրն* Աւթին, *և բար[ե]պաշտ եղբարցն իւրոց՝* Մովսէսին, Կարապետին *և* Մարտիրոսին, *և եղբաւրորդւոցն՝ նորաբողբոջ պատան[ե]ակացն՝* Յո-
276 բ վաննէսին, Կարապետին, ‖ Մկրտչին, Ստեփաննոսին *և* Թովմային, *քրիստոսասէր և հաւատարիմ քւերցն՝* Էլտա-Մէլիքին, *և աստուածապահ զաւակին իւրոյ՝* Հայրապետին, Սուլտան-խաթունին, Մըրուաթին *և* Դուխտարին, *և հաւրեղբաւրն իմ* Ամիրին, *և* Մարտիրոսին, *և մեծ պապուն իւր՝* Գրիգորի, *և* Գինէ՝ *մեծ մաւրն. և հաւրեղբաւրորդւոյն* Գրիգորի, *և զաւակին իւր* Առվմ<ոն>*ին, և հոգևոր հաւրն և վարդապետին իւր* Թովմա *քահանային, և որդւոցն իւր՝* Յովհաննիսին *և* Ստեփաննոսին, *այլ և զերախտաւորն մեր և զխրատ[ատ]ուն՝ զ*Յովաննէս *աստուածարտն վարդապետն, որ բազում բարութեանց պատճառ եղև սորին ի յուսումն պէս պէս, և զ*Աստուածատուր *կրաւնաւոր, և զ*Ստեփանոս *հայրապետն, նաև զհոգևոր եղբայրն և զընկերակիցն՝ զ*Մարտիրոս *կուսակրաւն աբեղայն, և զհոգևոր մայրն մեր զ*Մարթա, *և*
277 ա *զքոյրն իւր զ*Դովլաթ, *և զգստերսն իւր զ*Հռիփսիմէ *և զ*Աննա, ‖ *և զորդիսն իւր զ*Կիրակոս *և զ*Թովմա, *և զհայրն նոցին զ*Աստուածատուրն, *և զ*Ստեփաննոս, *և զամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիս և զհանգուցեալս, յիշեալ լիցի ի գիրն կենդանի, ամէն։*

Արդ, ես՝ մեղուցեալ և անարժանս ի կրաւնաւորաց Յոհանէս, *ստացա զսուրբ աւետարանս ի հալալ և յարդար վաստակոց իմոց ի թողութիւն մեղաց և ի բժշկութիւն հոգւոյ իմոյ, զի յոյժ խոցոտեալ եմ ի սատանայէ և ի բազում խաղբից նորին, քանզի սովաւ հասից առ անձկալին իմ Քրիստոս։*

277 բ *... Եւ արդ, ես՝ յետինս ի կրաւնաւորաց...* Յակոբ *սուկանուն*

աբեղա, շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի թուականիս Հայոց Մեծաց ՊՀԱ. (1422), ի գաւառիս Տարբերունի, որ այժմ կոչի Բերկրի, ի սուրբ ուխտս, որ կոչի Եղավանք, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսիս և արեամբ ներկեալ նահատակացն Քրիստոսի՝ սրբոց Վարդանանցն, ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս՝ Մելքիսէթ հեզահոգի և աստուածաբան վարդապետի և այլ միեղէն եղբարցս, որ աստ կան ի սպասաւորութիւն սուրբ ուխտիս։ Նաև զհոգևոր հայրն մեր և զառաջնորդ սուրբ ուխտին տէր Յուսկա որդւոյ՝ զերանաշնորհ և զաստուածաբուղխն ի հոգւոյն սրբոյ զՄկրտիչ վարդապետ, և զՅակոբ խոյեցի հոգևոր եղբայրն իւր, որ
278 ա զաւրինակն ‖ ետուն, տացէ նոցա տէր աստուած զիւր անճառ ողորմութիւնն, ամէն։

... Ընդ նոսին աղաչեմ և յերեսս անկեալ պաղատիմ, յիշման արժանի առնել զանպիտան գրիչս և զծնաւղսն իմ զՅուսիկ և զՂրէլ, և զեղբայրն իմ զպարոն Լուսեր, նաև զհոգևոր որդեակս իմ զԳրիգոր դպիր, որ զպէտս մեր լցուցանէ, և զմիաբանք սուրբ ուխտիս՝ զՍտեփանոս կրաւնաւոր, և զՅակոբ մահդասի աբեղայն, և զխոսրով մոնթն,
278 բ ‖ որ սպասաւորէ մեզ ի պէտս տնտեսութեան, և զԴովլաշահ մանկալն յիշեցէք ի Քրիստոս...։

Այլ և աղաչեմ անմեղադիր լինել խոշորութեան գրիս և սխալանաց, զի անընդունակ եմ արուեստի գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ի սիրոյ հարկեալ և սիրով վճարեալ։

Ցիշել աղաչեմ զարժանին յիշատակի զքեռին իմ՝ պատուէլի քահանայն զՄկրտիչ՝ առաջնորդ քաղաքին Բերկրոյ, որ բազում գութ և զխնամ ունի առ մեզ, նաև զծաղկեալ զաւակքն իւր զՊետրոս՝ ծաղկող սուրբ աւետարանիս և զԹուման, ծաղկեցուսցէ զնոսա տէր աստուած հանդերձ զաւակաւք և ծնաւղ[աւք] իւրեանց՝ ի բարին Քրիստոս, ամէն։

Դարձեալ, յիշեցէք ի բարեգութն աստուած զհամապատիւ աստուածարեալ տանուտէրքն՝ զՇիրինշահն, և զՊարընշահն, և զՋաքարէն, և զորդիքն իւր՝ զՀազարբէկն, զՖռանգն, զԱստմն և զՅովանէսն, և լի սրտիւ աստուած-ողորմի ասացէք նոցա, ամէն։*

307

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիրդ. Նօա. 88—69, Արծկէ, Սքանչելագործի վանք

Գերութիւնից ազատող՝ Աստուածատուր
վայր՝ Տկուց վանք

Ես՝ Աստուածատուրս և եղբայրն իմ Յովհաննէս, թափեցաք զսուրբ աւետարանս, որ էր գերի... այլասեռաց. և տուաք ի սուրբ ուխտն՝ ի Տկուց վանքն, ի դուռն սուրբ Անանիայի, յիշատակ մեզ և

* Ձեռագրի 279բ—281բ էջերում կան հետագա ստացողների մի քանի անթվական ռակավարժեք հիշատակարաններ։

ծնողացն մերոց Բանէրգեսին *և* Ուլուխաթունին, *զի յառաջն վանացն էր աւետարանս, և մեք այլ յիւր տեղն տուինք, ՊՀԱ. (1422)։*

308

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նոտ. 69, Արծկէ, Սքանչելագործի վանք

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան

... *Սրբամաքուր քահանայն* Յովհաննէս՝ *զարհուրելով ի սպառնալեացն և փափաքելով աւետեացն ստացաւ զանառիկ մեծութիւնս և զանկողոպտելի գանձս՝ զսուրբ աւետարանս, յիշատակ բարի իւրն, և ծնողացն իւրոց՝ հօրն* Թուլուխին, *մօրն* Մարթային, *եղբօրն* Յովհաննիսին *և* Բաղշայիշին, *և քերց* Խալիմ-խաթունին, Ուսլումին, Էդըլ-Մէլիքին, *և որդւոցն* Սուլթանշահին *և* Էդըլշա *սարկաւագին, և կենակցին* Աթա-Մէլիքին, *և զոքանչին* Ջհան-Մէլիքին, *և մօրքրօջն* Թան-Մէլիքին *և* Ֆառուխին։

Եւ արդ, ես... Կարապետ *սուտանուն քահանայ, շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի թուականիս Հայոց Մեծաց ՊՀԱ. (1422), ի քաղաքս որ կոչի* Վան, *ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պօղոսի...։*

Գարձեալ, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զՄխիթարն... *որ ստացաւ զսուրբ աւետարանս ի յարդար վաստակոց իւրոց ի յառաջին ստացողէն՝ ի* Յովհաննէս *քահանայէն. և ետ ի դուռն սուրբ Վարդանայ, որոյ տէր աստուած զերկնից արքայութիւն տացէ, ամէն։*

309

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փիրգ. Նոտ. 68

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Վան

... *Պատուական կրօնաւորն և բարեսէր աբեղայն* Ատոմ *սիրով ցանկացաւ այսմ աստուածարեալ գանձիս, և ստացաւ զսա յիշատակ բարի իւր, և ծնողաց իւրոց* Պարիշահին *և* Մարթային, *Նաև զմիաբանք սուրբ ուխտին՝* Կտցի *սուրբ Խաչին, և սուրբ Կարապետին, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Գրիգորին, և սուրբ Հռիփսիմեանցն, զառաջնորդ ուխտին զտէր* Մխիթար *եպիսկոպոսն, և զ*Կարապետ *սպասաւոր բանի, և զ*Մելքիսէթ *կրօնաւոր, և զ*Մկրտիչ *կրօնաւոր, և զ*Կարապետ *կրօնաւոր, և զ*Սարգիս *կրօնաւոր, և զ*Յովհաննէս *կրօնաւոր, և զ*Սիմէոն *կրօնաւորն, և զ*Յովաննէս *կրօնաւոր, այլ և զ*Դաւիթ *կրօնաւոր, հանդերձ ամենայն բնակչօքն, որոց տացէ տէր աստուած հանդիստ արքայութիւն արդարոց։*

Արդ, գրեցաւ սա ի խնդրոյ Ատոմ *աբեղային, ձեռամբ յոգնամեղ*

և անարհեստ գրչաց՝ Գրիգոր տրեղայի և Մկրտիչ սուտանուն երիցու և Կարապետի, ի Վան քաղաքի, յամի ՊՀԱ. Թուականիս Հայոց (1422)…։

310

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 8423

Գրիչ՝ Սարգիս

ա

171 բ Փառք… որ ետ կարողութիւն՝ ամենախնամ տէրն և արարիչն Քրիստոս աստուած, մեղապարտ և բիւր հազար քանքարոցն պարտական Սարգիս անուամբ եպիսկոպոս և գործովք թափոր յամենայն բարութենէ։ Արդ, ես՝ ամենայթշուառ՝ ծրեցի ձեռամբ իմով, յաղագս յիշատակ[ի] հոգոյս իմ և ծնողացն մեր, նախ՝ Սօլթանշին, Մինախաթունին, և եղբաւրն իմ Յովանէս քահանային, Մաթէոսին, և այլ ամենայն արեան մերձաւորաց մերոց, և ինձ՝ հոգւով մեռեալ չարագործիս, բարկացողիս, բանբասողիս, ամբարհաւաճիս, ապարասանիս, ամբարտաւանիս, գիճագնացիս, կանամբի գարշե[ալ հոտո]տելիս և բուրմամբ աղտեղիս ազգի ազգի, [զոր ո]չ է պարտ ի գիր սուրբս արկանել, բայց պակասութեան գրոյս մի մեղադրէք, վասն աստուծոյ և վասն ահեղ դատաստանին Քրիստոսի թողութիւն շնորհեցէք մեղապարտ[իս]։

Թվ. ՊՀԱ. (1422) էր, և քրիստոսի փառք յաւիտեանս յա[ւիտենից]։

172 ա Ո՛վ դասք քահանայից և սուրբ հանդիպողք, որ և ղքաջ հով[ու]ապետքն մեր՝ յիշեսջիք ի Քրիստոս զտէր Ստեփանոսն, զտէր Յովանէս, զտէր Սաեփանոս, զտէր Զաքարիայն, և զմիւս Զաքարէն, զտէր Թադէոսն, զտէր Ստեփանոս, զտէր Վանականն, զտէր Մարկոսն, զտէր Մարտիրոսքն, զտէր Գրիգորն, զտէր Ալեքսիանոսն, իւրայիւքն, զտէր Կարապետն, զտէր Աստուածատուրն, և զայլն ամենայն ուղղափառ հայրապետքն մեր, որ ի Քրիստոս են հանգուցեալ, ընդ նմին և ինձ՝ եղուկ և եղկելի Սարգիս, ամէն, եղիցի։ Ընդ սոցին զվարժապետքն մեր վասն Գոշայ, Վարդանայ, Ներսեսի, Սարգսի, Յեսայեա, Տիրատրու, Առաքելոյն, Գրիգորի, Յակորի, Կիրիոնի, Ղազարին, Յովսէփին, Սարգսի, և Սարկաւագի, Սաեփանոսի, Մաղաքիայի, Յովանիսի, Գրիգորի քաջ հռետորի, Մաթէոսի, Յունանու, Բարսղի և այլ ուղղափառ վարդապետացն, որ ի Քրիստոս են հանգուցեալ, զտէր Սարգիս, աղաչեմ յիշել ի տէր…։

բ

171 ա Որպէս դիւրին է նաւավարին յելանելն ի յեզր ծովուն, նոյնպէս եղկելի և գարշելի և պիղծ շընծեր Սարգսիս՝ ի գիծս գրոցս հասանել։ Գրեցաւ վերջք գրոյս յաւուր համբարձմանս, շատ և անհուն գառնութեամբ և հեծութեամբ, գրչի մատն ա՝ չորացած է, այնոր համար գիրդ ձագուձու է, թողութիւն շնորհեցէք, ԽԲ. (42) տարի է, որ կու աշխատիմ, բանս իմ՝ [ար]տովս չէ, մերն այդ չափ [էր]։

Գ

120 բ [Զմեղս]անիրկ անձն՝ Սարգիս գրիչ, հիվանդ հոգւով և մարմնով տկար, փանաքի, զժահահոտ գարշելիս աղաչեմ յիշել ի [տէր]։

Դ

132 ա ԶՍաֆարշայն յաղօթս յիշեցէք։

311

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

Երևան 3874

Գրիչ՝ Ղազար Ղրիմեցի
Վայր՝ Տրապէզ[ոն]

ա

420 ա ... Ազգանազեանս մեծ տումարի
Հայոց Մեծաց Թուականի՝
Երկեակ քառիցըս հարիւրի,
Եւթանց տասանց և միակի (1422)
Աւարտ եղև այսմ տառի,
Ի մեծ քաղաքըս արքունի,
Որ Տրապէզ սա յորջորջի,
Ընդ հովանեաւ սուրբ Տիրամաւր,
Որ Զարխափան սայ անուանի....*
421 ա ... Հոգենորոգ այսմ տառի
Ցոյժ ցանկացա տարփմամբ սրտի
Ղազարս՝ մեղաւք մեռեալ ոգի
Եւ խըլխայթեալս յամենայնի։
Ձեռամբ իմով գծագրեցի
Ինձ յիշատակ անջնջելի,
Նաև ծնաւղացն իմ կրկնակի,
Եւ ամենայն ազգատոհմի,
Եւ. իմ եղբաւրն հարազատի,
Որ Յէաիլպէկ անուն կոչի,
Նաև եղբաւրն իմ ըստ հոգւոյ
Մելքիսեթեկ կրաւնաւորի,
Եւ ըզկոկաւղ նիւթոյ սորին,
Եւ ըզշնորհաւղն աւրինակի,
Որք հանդիպիք զսա ընթեռնուլ,
Կամ փափագմամբ աւրինակել,
Ցաղաւթըս ձեր յիշատակել
Եւ թողութիւն մեղաց հայցել,
Զի և ձեզ տէրն ողորմեսցի,

* Դուրս ենք թողնում մի ընդարձակ հատված, ուր գովերգվում են Հարանց Վարքի նյութերը։

Այն որ առատն է ի բարի,
Նմա փառք յաւիտեանսն,
Այժմ և յանցեալն և յապառնի։

Նաև զվերջին ստացող սուրբ գրոց զՄկրտիչ գրոց աշակերտն յիշեցէք ի բարի մասին, զի յոյժ եռափափագ սիրով ստացաւ զսա ի հալալ արդեանց ի վայելումն անձին իւրոյ։ Եւ ես՝ եղկելիս Ղազար, թէպէտ վասն անձին իմոյ գծեալ էի, այլ յորժամ խնդրեաց եղբայրս մեր՝ ոչ կարացի զխնդիրքն սորա անտես առնել վասն եղբայրական սիրոյն, այլ շնորհեցի նմա զխնդրելին իւր և առի ի նմանէ զգինն, զոր տէր աստուած վայելել տացէ յամերամս ժամանակաց, ամէն։

Բ

278 ա Զեղկելի գծողակս՝ զՂազար Ղրիմեցի, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր...։

312

ԱՒԵՏԱՐԱՆ

Ալիշան, «Կամենից», էջ 161, Մակլեր, Հանդէս հայագիտութեան, VII
(հրատարակված է փոտո-պատճենը)

Վաճառող՝ Սիմէոն
վայր՝ Ղրի՞մ

Զվերջին ստացօղ սուրբ աւետարանիս զպարոն Խութլուպէկն, յիւր հալալ արդեանցն գնեաց զսուրբ աւետարանս ի Սիմէոն աբեղայէս, ի յիշատակ իւրեանն, և իւր կողակցին Մելիք-Խաթունին, և իւրեանց ծնողացն։ Որ ոք հանդիպի սուրբ աւետարանիս կարդալով կամ օրինակելով, յիշման առնէք արժանի զվերոգրեալ պր. Խութլուպէկն և զՏաւնակաՆ վարպետն, որ զայս սուրբ աւետարանս մեզ եբեր, և աստուած զձեզ յիշէ։

Ի թվ. ՊՀԱ. (1422), ես Սիմէոն աբեղաս՝ եղբայր Յովանիսի, ծախեցի սուրբ աւետարանս պր. Խութլուպէկին։

313

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 7362

Գրիչ՝ Թորոս
վայր՝ Երուսաղէմ

ա

631 բ Փառք... որ ետ կարողութիւն տկար և տարտամ անձին և անպիտան գրչի Թորոս աբեղի հասանել յաւարտ գրոցս պիտանի, որ աւրըստաւուր սոսկացնէ զոսկերս լսողաց սորա՝ պատմութիւն կարծագոյն տանջանաց և սքանչելի չրնաշխարհիկ վարուց սրբոցն, որ

սոս հաւաքեալ կան։ Որոց սիրատարփ տենչմամբ և եռափափագ ըղձմամբ սրտի ցանկացայ աստուածակոխ քաղաքիս՝ սուրբ յԵրուսաղէմաս և աստուածընկալ սուրբ տնաւրինականացս, և կամաւք և նախախնամութեամբն աստուծոյ ի սուրբ յԵրուսաղէմս մեծաւ սիրով և հառաչմամբ անկեալ՝ երկրպագեցի Քրիստոսի և սուրբ անաւրինականաց նորա և գամբարանի սրբոյն Յակոբա, և կացեալ ճ[ռ]ացի յԵրուսաղէմս, ի հոյակապ և ի հռչակաւոր վանքս սրբոյն Յակոբա։ Եւ արդ, ես՝ անպաուղս ի բարեաց, մեղաւորս արդարոց և անկատարս ի կատարելոց, ոգէաս ի գիտնականաց և յանյիշելիս ի յիշեցելոցս՝ բազմամեղ, սուտանուն աբեղայ Թորոս ես առաւել ցանկացայ | | | *

Բ

13 բ Այլ և ստացողաց սուրբ գրոցս Թորոս աբեղին, Ներսէս սարկաւագին, Խրիմ-Խաթունենին, և ծնողաց սոցին. այլ ես առաւել Աստուածածնին սուրբ գերեզմանին լուսարարացն՝ Կաֆացի Մարիամենացն, զի ինձ Թորոս գծողիս ի հետ բազում աշխատանս կրեցին, այլև կարդացողաց և լսողաց [յիշեցէք]։

Գ

97 ա Որսյ աղաւթիւքն ողորմի Քրիստոս Թորոս անարժան աբեղին, և ծնողաց նորին Աթսպէկին, զԱմէն-Տիկնայ, և եղբարցն՝ Յոհանէսին, Ներսէսին, Աւետիքին, և քուերցն՝ Գուհար-Տիկնայ, Դրիմին, Խաղութին, եւս առաւել իմ հոգևոր մարցն Մարանէիցն, որ բազում աշխատէին ընդ իս, և Ներսէս աբեղին, որ զԹուխտս կոկեաց...։

Դ

4 բ ... Ողորմի Քրիստոս աստուած ստացողի գրոցս՝ Սաեփանոս հերպետին և ծնօղաց նորին՝ Մարտիրոսին, Գուհար-Տիկնայ:**

* Շարունակությունը չի պահպանվել։ Ձեռագրում կան բազմաթիվ մանր հիշատակություններ, որոնցից մի քանիսը մեջ ենք բերում։

** Ձեռագրի գրչության տարեթիվը հայտնի չէ, սակայն գրված պետք է լինի Առաքել Բաղիշեցու «Գովասանութիւն սրբոց» (կամ «Մեծի գալստեան ծաղկազարդին») վերնագրով ճառի հորինումից, այսինքն՝ 1422 թվականից հետո։ Ըստ այդմ էլ հիշատակարանները պայմանականորեն տեղադրում ենք 1422-ի թվաշարքում։

314

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երուսաղէմ 2181

Գրիչ՝ Թումայ Սպատկերտեցի
վայր՝ Բերդավանք

Գրեցաւ ի Թու. ՊՀԲ. (1423), ձեռամբ Թումայի Սպատկերտեցո, *ի գեղէն* Բերդավանից, *ի յերկիրն* Վայուձոր, *ի յանապատի վանք, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորի մերոյ լուսաւորչին և սուրբ վարդապետացն, որ աստ հանգուցեալ կան՝* Տիրատուր *վարդապետն,* Գրիգոր *վարդապետն,* Բարսեղ *վարդապետն, տէր* Սուլտանշէն, *առ ոտս* Յովանէս *բաբունապետին... որ տքնութեամբ և անդադար ընթերցմամբ աշխատի ի գիրս աստուածային հնո և նորո կտակարանաց՝ առայտապէս լիացուցանէ զգրոց տշակերտեալ մանկունս, որ աստ հաւաքեալ կան։*

Արդ, գրոցս երկու հատորն ի յոնառիկն Մակու *[գրեց]աւ, ձեռամբ* Գրիգոր *վարդապետի։ Եւ ես պատմեցից զաղէտ ժամանակիս և զպատուհաս, որ եղև առհասարակ, զի քաղցրութիւն ժամանակի ի դառնութիւն փոխեցաւ, զի ապերախտ եղաք առ երախտաւորն և ապարանք առ բազմապարգևն, միշտ մեղուցեալ առ երկայնամիտն, մինչ զի զարդար զցասումն նորա շարժեցաք ի մեզ։ Առաքեաց ի մեզ ըստ մարգարէին զօր իւր մեծ՝ այսինքն զմարախ, և զխառնիճ, որ էր կոնգն, և թեւաւորն՝ խառն ի խուռն ընդ միմեանս։ Զի առաջին տարին ինքն թեւաւորն [եկ՞ն] և սերմանեաց, և ի միւս այլ տարին՝ ի գարնան յեղանակին ընդ խոտոյն ի վեր փչեաց՝ առաւել քան զբոյս, մինչ զի լի եղեւ ի խորութիւն ձորոց և ի լայնութիւն դաշտաց, ի գագաթունս լերանց, էր երկիր առաջի նորա իբրև զդրախտ փափկութեան և վերջ նորա՝ դաշտ ապականութեան, ըստ մարգարէին։ Եկեր զամենայն խոտ և սպառեաց զամենայն վաստակն սերմանեալ, նուազէին անասունք, լքեալ դատարկացան երկրագործք ի վաստակելոյ. խցեալ կալնուին զերդ և զպատուհան ի ներքս լինելոյ նոցա, մինչ զի զերդս պահէին աւելելով կամ մաղ ի վերայ դնելով, և ապա հաց եփէին ի ներքս կամ ուտէին։ Ամենայն ժողովք ջուրց պարզք և բաբեհամք՝ գիշահոտեալ տղմային արիւնատեսիլ իբրև զեգիպտացւոցն լինէր ի ներքս կուտելոյ նոցա։*

Անբնակ ի մարդոյ և յանասնոյ գեօղք լինէին գնալով նոցա։

յայլ տեղոջէ յայլ. քակտեցաւ ամենայն միաբանութիւնք, որ հացիւ և կերակրով էին շազկապեալ։

Եւ ապա իմ՝ եկեալ յերկիրս Ռշտունեաց, ի դերահոչակ ուխտն Աճ–ճապատ կոչեցեալ, և ոչ տային դադար դրելոյ կամ կարդալոյ, զի անկանք ի մէջ ազիտաց և անվարժ և անկրօն կրօնաւորաց։ Եւ չարչարէին զմեզ որպէս զայլազգի. եւ զամենայն անարգ և անպիտան գործ ի յանձն առաք և չկարացաք հաճեցուցանել զանբարեսէր կամս նոցա, զի բարիսն(՞) և զչարսն սիրէին, զի էին ինքնահաճք և ինքնահաւանք, ցոփազրուցք, շաղակրատողք, այլոց տրհամարողք և զինքեանս յարգողք, և այլ զի՞նչ ասացից, զի յոտից մինչև ցգլուխ չիք առողջութիւն։ Երբ ոչ գտաք հանգիստ ոտից մերոց՝ ցրուեցաք յիւրաքանչիւր տեղիս՝ վարդապետք և աշակերտք։ Եւ իմ եկեալ առ ծնօղն իմ՝ ի գեղն որ կոչի Բերդավանք. և աստ վճարեցի զգիրքս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս մօրս մերոյ։ Եւ ոչ տայ գադար միտքս իմ ինձ, զի կամիմ դառնալ առ վարդապետն իմ Յակոբ, զի կամի խիստ զուսուցանելն և է վայելչատիպ չափահասակ, բարիոք ալեօք ծաղկեալ, զուարճայխօս, առատաբան. արդիւնաւոր և ուսուցանող անձանձրոյթ, որոյ եղիցի մասն և վիճակ ժառանգութեան ընդ ամենայն սրբոց ուղղափառ վարդապետաց, ամէն։

Գարձեալ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ գրոց օրինակելով, կամ ընթեռնելով, կամ տեսանելով յիշեսջիք զիս՝ զտառապեալս Թումա, և զծնողսն իմ՝ զհայրն իմ զՄարգարէ և զմայրն զՇնոհվոր, և զեղբայրն իմ զՅովհաննէս, որ ի պատահմանէ չարին անկաւ ի բերդի գոնէն ի վայր և փոխեցաւ յաստեացս ի հանդերձեալն, և զքոյրն իմ զԹանկ–Մէլիք, և զԹագուհի...։

Դարձեալ աղաչեմ զամենեսեան յիշեսջիք... զխուրն* իմ զԱռաքել, որ անձանձիր աշխատի միշտ ու հանապազ...։

315

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 1587

ա

Գրիչ՝ Յով[աննէս] Անեցի

313 բ Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուաբերութեանս Հայոց ՊՀԲ. (1423), ձեռամբ ախմար և փցուն գրչի Յով[աննէս] եպիսկոպոսի Անոյ, ի խնդրոյ հոգևլից և շնորհաց աւթարանի՝ աշակերտի քաջ բաբունւոյ Ղազարու և ճըգնազգեաց հարազատի իւրոյ Յովաննու երաժշտապետի։ Աղաչեմ զմանկունսդ նորոյ յիշեսջիք ի Քրիստոս զստացող սորին՝ զՅոհ[անն]էս զկուսակրաւն քահանայն՝ զաշակերտ քաջ արանցս, և զիս ընդ նոսին՝ զծրող սորին, և աստուած զձեզ։

* Հավանաբար ցանկացել է ասել՝ «զհիւրն»։

Բ

Ստացող՝ Յո՜[վաննէս] քահանայ

344 ա Արդ, ես յետինս ի ծնունդս եկեղեցւոյ և անարգս յամենայնի
Յոհ[աննէ]ս մեղապարտ ոգի, ի մանկութենէ սնեալ և վարժեալ ի
դրան սուրբ Աստուածածնիս Սանահնոյ, յաղագս յիշատակի հոգւոյ
իմոյ ի հալալ ընչից իմոց ետու գրել Յով[աննէ]ս արքիեպիսկոպոսի
մականուն Ոսկեփորիկ վերաձայնելոյ՝ շնորհազարդի և ճարտար գրչի,
որոյ յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի։ Որ և ես ըստ կարի
տկարութեան իմոյ յուսով անմահին և սիրով հոգւոյն սրբոյ ծաղկե-
344 բ ցի զսա ոսկիճաճանչ զարդուք և զա || Նազան գունովք, ի յիշա-
տակ հոգւոյ իմոյ, ծնաւղաց իմոց Վարդանայ և Խոնձի, և բազմերախտ
մաւրաքեռ իմոյ պարոն Ցարխունդէի, և հարազատ եղբարց իմոց Խա-
չատրոյ, Աստուածատրի և Մկրտչի, և քերց իմոց Բաղբա-Խաթունի և
Խաթունի՝ փոխեցելոցն ի Քրիստոս, և ի վայելումն անձին եղբաւրորդ-
ւոյ իմոյ Ներսէս կուսակրաւն քահանայի, և եղբօր նորին Վարդանայ
դպրի։ Վասն որոյ յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք վայելէք
և աւգտիք ի սմանէ ուսանելով կամ գաղափար առնելով, յիշեցէք
ի Քրիստոս զիս՝ զբազմամեղ ստացաւղ և զնկարող տառիս՝ զՅով-
հ[աննէ]ս սուտանուն կրօնաւոր, և զՆերսէս վայելող, հանդերձ ծնօղաւք
և հարազատաւք և ամենայն արեան մերձաւորաւք՝ կենդանեօք և
ննջեցելովք։ Որով յիշողացդ և յուսացելոցս ողորմեսցի Քրիստոս
աստուած, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ընդ որս և զտէր Աստուածատուր՝ կազմող և սպասաւոր բանի, և զտէր Մելիքսէթէկ ծաղկող, և զՏէրունական աբեղայ, որ զնիւթ մագաղաթիս շնորհեաց, ամէն, եղիցի, եղիցի։

316

ՄԱՇՏՈՑ

«Թորոս Աղբար» Ա. էջ 233—234, Բ. էջ 338—339
Տիվրիկի ս. Լուսաւորչի վանք

Գրիչ՝ Դաւիթ
վայր՝ Այրիվանք-Գառնի

...Աւրհնութեանց աւրհնաբեր գիրքս այս Մաշտոց մեք՝ Նուաստ և անպիտանք Սարգիս քահանայ և Դաւիթ ստացաք... յիշատակ ծնողաց մերոց և մեզ։ Սարգիս ծերունի և պատուական քահանայն ի սուրբ ուխտէս Հաւուց-Թառ զԹուղտն պատբաստեաց, և ես՝ անյիշելի Դաւիթ գրեցի զգիրքս...։ Եւ ընծայեցաք զսա ի սուրբ ուխտն Հաւուց-Թառ, ի դուռն սուրբ Կաթողիկէին, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Յարութեան, և ամենազաւր սուրբ Ամենափրկչին և այլ սրբոց։ Եւ

եղև գրչութիւն սորա ի նախադրական սուրբ ուխտն՝ ի մեծն Այրիվանս, և կատարումն գրոցս՝ յաստուածապահ գիւղաքաղաքս Գառնի, առ դրան սուրբ և հրաշափառ Կաթողիկէիս և այլ սուրբ եկեղեցեացս, ի թվ. ՊՀԲ. (1423), ի հայրապետութեան տեառն Պաւղոսի Գառնեցւոյ՝ սրբազան կաթողիկոսի, և ի վերադիտողութեան սուրբ ուխտիս Հաւութառ՝ հեզահոգի և սրբասէր և մաքրամիտ և մեծազգի արհիապատիւ եպիսկոպոսի տէր Զաքարիայ...։ Յիշեցէք ի սուրբ պատարագն զՍարգիս քահանայն, և զծնողսն նորա զՄեհեւանն և զԱստղիկն, և զիս զբազմամեղ սուտանուն քահանայ զԴաւիթ գրիչ, և զծնողսն իմ՝ զհայրն իմ Վարդան և զմայրն իմ ....։

317

ԱՒԵՏԱՐԱՆ

Ղազախի Ղուլալի գիւղ Մ.Տ.Մ.

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Ի վանս Հերմոնի

...Ի ժամանակս, որ Ըսքանդարն թագաւորեաց Թաւրիզոյ աշխարհիս և զրազումս ի քրիստոնէից կոտորեաց....

318

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 5114

Գրիչ՝ Թովմայ Մեծոփացի
վայր՝ Մեծոփայ վանք

ա

114 բ ԶՍտացող լուսազարդ տառիս՝ զՍաեփանոս կրաւնաւորն և զծնաւղսն իւր զՆերսէս, [և զմայրն]՝ զհանգուցեալն ի Քրիստոս յիշեցէք...։ Եւ եղկելի գրչիս Թովմայի Մեծոփացւոյ, գրեցաւ [ի թուականիս] ՊՀԲ. (1423)։

բ

372 ա ...Արդ, գրեցաւ սա յերկիրս Քաջբերունւոյ, ի սուրբ մեծաստանիս, որ կոչի Մեծոփայ վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ցակովբայ, և սուրբ վարդապետաց գերեզմանացս, ի թվականութեանս Հայոց ՊՀԳ. (1424), ձեռամբ անարհեստ և սխալագիր գրչի Թովմայ խաբեղայի,* ի հայրապետութեանն տեառն Պաւղոսի, և

* Բառախաղ է, ստեղծված «աբեղայ» և «խաբեբայ» բառերի լծորդումով։

ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս հոգիազարդ և երանաշնորհ և աշխարհալոյս մեծ րաբունապետիս մերոյ Թովմայ վարդապետի, որ հանապազ խրատ[ե]այ մեզ ի յարուեստ գրչութեանն, Քրիստոս աստուած զերկնից արքայութիւնն պարգևէ ‖ իւրն և իւր ննջեցելոցն, ամէն։ Արդ, ի խնդիր ելեալ այսմ աստուածաշունչ կտակիս երանաշնորհ և սրբասէր կրաւնաւորն Ստեփաննոս, որ ետ դրել զսա ի յարդար վաստակոց իւրոց յիշատակ իւր և բարի ծնաւղաց իւրոց՝ հաւրն Ներսէսին և մաւրն՝ հանգուցելոյն ի Քրիստոս....։

Դարձեալ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, յիշեցէք ի բարին Քրիստոս զվերոյգրեալքսն՝ Ստեփաննոս և զհարազատ եղբայրն իւր զՕլէքսանն կրաւնաւորն՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և դուք յիշեալ լինիք ի Քրիստոս Յիսուս՝ ի տէր մեր, որ է աւրհնեալ յաւ[իտեան]։

Այլ և կրկնակի աղաչեմ զամենեսեան, որք պատահիք ի սմա կարդալով կամ աւրինակելով յիշեցէք առաջի աստուծոյ զստացող սորա և զիս՝ զանպիտան գրիչս, խոշորութեան և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս է։

Գ

Ստացող՝ Ատոմ

373 ա Դարձեալ յիշեցէք... զվերջին ստացող սուրբ կտակիս զԱտոմ վարդապետ՝ զքաջն և զարին ի գործս առաքինութեան... որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնաւղացն՝ հաւրն Կարապետին և մաւրն Թուխութանզին, կենդանեաց և հանգուցելոցն ի Քրիստոս....։*

Դ

Ստացող՝ Աբրահամ

Զվերջին ստացող Շարակնոցիս յիշեցէք ի Քրիստոս՝ զԱբրահամ եպիսկոպոսն, որ բարի մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս, և ի կեն-
373 բ դանութիւնն ետ զՇարակնոցս վերըստին նորոգել, յիշատակ հո‖գոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց Սիրունին, և մաւրն,** և եղբաւրն Յովանիսին, և կողակցին իւրոյ Գուլգուլին, և եղբօրորդոցն Գուլնադարին, որ բարի մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս և եթող սուք անմխիթար ծնաւղաց իւրոց, և Փոլատին, և եղբօր դստերն Թուրվանդին, և քուրոջն,** և որդոյ Նորին պարոն Գորգին, և այլ ամենայն արեան մերձաւորացն, յիշեցէք և աստուած ողորմի ասացէք ամենեցուն, ամէն....։***

---

* Ըստ հնագրական տվյալների այս հիշատակարանը պետք է գրված լինի ձեռագրի գրչությունից ընդամենը մի քանի տարի, գուցե մի տասնամյակ միայն հետո։

** Անվան լրացման համար դատարկ տեղ է թողնված։

*** Ըստ հնագրական տվյալների այս հիշատակարանը գրված պետք է լինի ԺԵ. դարի վերջին կամ հաջորդ ԺԶ. դարի սկզբին։

319

ՃԱՇՈՑ

Փիրղ. Նոտ. 72, Վան, Լամզկերտ գիւղ

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Մոկաց երկիր, Սպատ վանք

...Աւարտեցաւ այս տառ ձեռամբ անարհեստ գրչի Կարապետի, ի թվ. ՊԿԲ. (1423) հայկազեան սեռիս տոմարի և հայրապետութեան տեառն Դաւթի... ղանութեան Թիւրքմէն ազգի, որ Իսքանդար-բէկ անուն կոչի...։ Գրեցաւ աստուածախօս այս տառ յարքունական յեր-կիրս Մոկաց, ի վանքն որ կոչի Սպատ, ընդ հովանեաւ Ամենափրրկ-չիս, որ* է սրբագործ եկեղեցի, և ձեռնադրողին Քրիստոսի Կարա-պետի, և զօրավարիս քաջ Նահատակի, և այլ հաւաքեալ սրբոց, ի խնդրոյ սրբասէր Թումա կրօնաւորին։

320

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5734

Հետ. ստացող՝ Աստուածատուր
վայր՝ Ուլկազոմ գիւղ

151բ Եւ արդ, ես՝ վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ, անպիտան և անար-ժան ծառայս ծառայիցդ աստուծոյ Աստուածատուր, ստացայ զսուրբ աւետարանս զայս ի հալալ արդեանց իմոց, և ետու ըզսա ընծայ և նըւէր սուրբ Շմաւոնի առաքելոյ հրաշագործ տաճարիս, յանուանի գեաւղս Ուլկազոմ կոչեցեալ, որպէս զի հանապազ ընթերցցին զսա մանկունք սուրբ եկեղեցոյ։

Արդ, աղաչեմ զամենեսեան զհանդիպողքդ սմա լի բերանով և ուղիղ մտաւք աստուած-ողորմի ասացէք ինձ՝ մեղաւոր և անարժան ստացողիս Աստուածատրու, և եղբաւրն իմոյ Յովանիսի, և ծնաւղացն մերոց Աւագ-Պարնի և Փոխան-Շահի, և Հռիփսիմէի, և Նըշխունի, և կե-նակցին իմոյ Եղիսաբեթի, և այլ ամենայն արեան մերձաւորացն մե-րոց, և Դանիէլ քահանային, և ծնողաց նորին, որ միջնորդ եղև այսմ գործոյ...։

Ի թուականիս Հայոց ի ՊՀԲ. (1423)։**

* Տպված է «ուր»։

** Այս տողը վերցված է նույն ստացող Աստուածատուրի 336ա էջում թողած հի-շատակարանից, որը բովանդակությամբ շատ աղքատ է։

321

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5708

Նվիրաբերող՝ Սահակ
վայր՝ Աղուանից աշխա՞րհ

268 ը ...Ո՜վ Սահակ անուն մուղտսի ցանկացող եղև. այս սուրբ աւետարանիս և ստացաւ զսայ ի հալալ արդեանց իւրոյ՝ յիշատակ հոգոյ և ծնաւղաց իւրոց՝ հաւրն իւրոյ Աբրահամին և մաւրն իւրոյ Դաւլաթխաթունին, և այլ ամենայն արեան մերձաւորաց...։

Ես Սահակ միայնակեացս ստացա զսուրբ աւետարանս և իմ սրտի յաւժարութեամբ տուի... իմ ազգականիս տէր Կարապետ եկեղեցպանին և հոգոյ որդոյ իւր Թումայ աբեղային։ Եւ ի հայրապետութեան տեառն Կարապետի և յաջորդի նորին տեառն Մատթէոսի, զոր տէր աստուած պահեսցէ զսայ բարձր փառօք և անսասան կենօք աստ և ի յանդերձելումն, ամէն։ Եւ սուրբ և ուղղափառ եպիսկոպոսացս տէր Կարապետին, և տէր Կիրակոսին, տէր Ստեփանոսի[ն], և տէր Տիրատրին, և Գալուստ աղին, և խօճա Յաշաիշին, զոր տէր աստուած հաստատուն պահեսցէ զոսայ ի սէրն աստուածային, ամէն։

Աթոռիս վկաութեամբ, և տեառն Մատթէոսի, և իւր սուրբ և ուղղափառ եպիսկոպոսացն վկաութեամբ տվի զսուրբ աւետարանս տէր Կարապետ եկեղեցպանին։ Այլ ումէք դաւի չկա, ոչ եղբաւր, ոչ ազգականի, այլ աստուծով և տեառն Մաթէոսի և իւր սուրբ եպիսկոպոսացն բանս հաստատ է։ Որք հակառակին այս բանիս զանէծս Կայենի և Յուդայի մատնչի և զԱրիոսի առցէ։ Եւ ես հողոյ հաւասար Մովսէս եպիսկոպոս, որ զգիրս գրեցի առաջի տեառն Մաթէոսի կաթողիկոսի Հայոց և Աղւանից, վկա եմ այս բանիս. ի թվաբերութեանս Հայոց ՊՀԲ. (1423), ի փառս աստուծոյ, ամէն։

322

ՃԱՇՈՑ

Վենետիկ 1522

Նորոգողն է Յովհաննէս քահանայ սուրբ Թորոսեցի, ձեռնտուութեամբ պարոն Կիրակոսի, ի թվ. ՊՀԲ. (1423)։ Սաստիկ սով եղև. մի ձոթ հացն Պ. (800) դրամ եղև։

323

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4960

Գրիչ՝ Թումայ

1ր [Յութհար]իւր Թուականին,
Յեւթանասուն երկրորդ սկսեալ ամին,
Ի Հայկան ազգի սեռին,
Ի Թորգոմի մեծի զարմին
Ի նեղութեանց ժամանակին,
Զոր այլազգիքն նեղէին.
Զքրիստոնեայք նախատէին,
Զեկեղեցիոն քակէին,
Եւ ըզհիմունսն շարժէին,
Քտհանայք նստեալ լային,
Եւ ժողովուրդք գումարէին,
Եւ այսպէս է՞ր հանդիպին,
Վասն մեղացն, որ գործէին,
Որ բազմացեալ էր առ նոսին
Որպէս զջուրս հեղեղատին։
Որպէս և ես կամ ի նմին,
Զգայարանաւքս տասնեսին,
Բազում չարիք որ գործեցին,
Զայրի հոգիս կողոպտեցին,
Վէրս ի վերայ սորա եդին,
Եւ կիսամահ թողեալ գնացին,
Մինթէ գթա տէրն ամենին,
Նորոգեսցէ զրկեալ այրին,
Մխիթարն՝ հայր Հռիփսիմին,
Որ յետոյ եկեալ նա ի մտին,
Եւ զղջացեալ ըստ անառակին,
Զոր և գործեաց կրսեր որդին,
Զոր հեռացեալ եղև նմին,
Եւ տար աշխարհ որպէս պատմին,
Զինչս վատնեաց զհայրենին,
Եւ սովամահ լինէր հացին,
Եւ ոչ ոք էր որ տայր նմին,
Եւ նայ ցանկայր ի յեղջիւրին,
Զոր անբան հոզքն* ուտէին.
Յետոյ դարձեալ առ հայրենին
Անկեալ ի գիրկս իւր ստեղծաւղին,

* Իմա «խոզքն»։

Թէ հայր, մեղա քեզ ի յերկինս,
Եւ գթացեալ հայրն առ Նմին,
Ի ձեռն նորա ետ զմատանին,
Զեզն եզեն զպարարակին,
Եգիտ զմեռեալն զիւր որդին։
Նոյնպէս գտեալ այն Հռիփսիմին,
Անուանակից սուրբ Նախատակին,
Ցաշխատանաց իւրոց չնչին,
Ի յարծաթոյ ժանկահարին,
Ստացաւ զգանձս աստուածային,
Ի յիշատակ հոգւոյ Նմին,
Զոր ետ ի դուռն սուրբ [Աստո՛մ]ին
Ի վանքն | | |* ի ձեռն ընտրեալ կրօնաւորին,
Սրբասնեալ Ստեփաննոսին,
Եւ զՄխիթար հայր սոցին,
Ցիշել արժէ յեկեղեցին,
Եւ զհայրազատ որդիք սորին,
ԶԱտոմ և զՎարդան ժառանգ Նմին,
Եւ զՆախապետ՝ Թոռն նորին,
Եւ որք յետոյ նորա լինին,
Զոր արժանի լինել նոցին։
Եւ որք ընթեռնուն զսայ յեկեղեցին,
Ցայնժամ յիշեն զգծող սորին,
Զտառապեալ անձն ի բարին, '
ԶԹումայ անարժանին,
Զմեզաւք ծածկեալն ի մէջ տղմին․․․։

324

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4819

304 բ ․․․Արդ, գրեցաւ յիշատակարանս սուրբ աւետարանիս ի դրան սուրբ Աստուածածնիս, որ կոչի Քաւ և Քաւարան, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի, ի թվին ՊՀԲ. (1423) հայկազեան սեռիս տումարի, ի հայրապետութեան տեառն Դաւթի, ի թագաւորութեան Հայոց ազգիս պարոյնաց, ի խնդրոյ աստուածասէր և պատուական կրաւնաւորի Յովանէս քահան[այ]ի, որ գնեաց զսուրբ աւետարանս ի հալալ
305 ա վաստակոց իւրոց… ‖ …ի ՅԾ. (350) Թանկայ, ի ձեռաց անաւրինաց…։

Եւ ինքն ամենագութն աստուած, որ հատուցանողն է ամենեցուն ձեզ ողորմեսցի և… այնոցիկ, որ աւգնական եղեն ի գին աւետարանիս…։

---

* Մեկ բառ քերված է։

325

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 2829

Գրիչ .

278 բ Ի թվականութեանս Հայոց ՊՀԲ. (1423), ի հայրապետութեան տեառն Պօղոսի, և ի յառաջնորդութեան հռչակաւոր և աստուածապահ քաղաքիս՝ արի և քաջ րաբունապետիս Մատթէոս վարդապետի, որ է ժառանգ և աթոռակալ և աջորդ գլխոյն համայնի Հայոց տեառն տէր Պօղոսի կաթողիկոս[ի] ամենայն Հայոց։

Արդ, ի յայս ժամանակիս այր ոմն բարեպաշտ և հաւատարիմ, համեստ և պարկեշտ, որոյ անուն Խաւնզա, որ է կենակից հանդիսաւոր, անուանի և պատուելի մեծ խաւճային պարոն Ամիրին, որ յայսմ ամի բարիոք քաղաքավարութեամբ հանգեաւ խաղաղութեամբ և փոխեցաւ ի յոյսն ամենեցուն Քրիստոս...։ Արդ, ստացաւ զսա իբրև զհոգեոր գանձ և անջրիջանելի լապտեր և ամենազօվ պարգև՝ պատճառ փրկութեան և առաջնորդ երկնաչու ճանապարհին։ Եւ ընծայեաց զսա Խաւնզա-Խաթուն ամենաւրհնեալ զաւրեղ զաւրավարին սրբոյն Սարգսի եկեղեցւոյս, և մի ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սրբոյն Սարգսի՝ ոչ վաճառելով, ոչ գրաւկնելով և ոչ գողանալով։ Եթէ ոք յանգրքնեսցի անզգամութեամբ և խորհեսցի հանել զսա ի դրանէ սրբոյն Սարգսի՝ մեր մեղացն պարտական լիցի, և նզովեալ եղիցի յաստուծոյ և ի զաւրեղ զաւրականէն իւրոյ, և ի սուրբ աւետարանչացն, ամէն...։

326

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՒԹԱՆԵՑՈՒՆՑ ԹՂԹՈՑՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ

Երևան 1408

Թերին լրացնող՝ Սիմէոն

234 ա Կատարեցաւ մեկնութիւնս եւթանեցունց թղթոցն կաթողիկ[էից] աւարտեալ ի մեծէն Աթանասէ պայծառ և գեղեցիկ տեսութեամբ, ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ, ի թվիս Հայոց ՊՀԲ. (1423), զպակասն գրելով։

Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ լուսատեսակ կտակիս, յիշեսջիք յաւժար կամաւք և սրտի մտաւք զհոգացեալս ի վերջին ծայրս աւուրց, մաշեալ և ապականեալ բազմապատիկ և սաստիկ մեղաւք զիս՝ զՍիմէոն վարդապետ բիւրապատիկ պարտական յամենայն տաղանդաց և քանքարաց...։

327

ՇԱՐԱԿՆՈՑ

ՄՑՀ հա. Բ. 10, էջ 50

Գրիչ՝ Սողոմոն

84 *...Գրեցաւ սայ ձեռամբ յոգնամեղ և փծուն գրչի* Սողոմոնի, *ի Թվականութեան Հայոց ՊՀԲ. (1423)։ Արդ, աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա՝ մեղաց Թողութիւն խնդրեցէք բազմամեղ և անիմաստ քահանայի* Սողոմոնի, *և եղբարց, և ծնողաց, և ամենայն զարմի հայցեմք, զի տէր ողորմեսցի։ Եւ* Աստուածատուր *քահանայի, որ զաւրինակն շնորհեաց տէր Յիսուս ողորմեսցի։*

Գարձեալ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք պատահիք սմա, անմեղադիր լերուք | | | * *անիմաստ և տխմար գրչի և սղալանաց սորայ, զի յոյժ տատանեալ և խեկագար էի մտաւքս ի դառն և ի մահաթոյն ժամանակիս։*

*Գարձեալ, աղաչեմ ըզձեզ յիշեցէք զվարդապետն իմ ըզ*Գրիգոր *ճգնաւորն՝ զփոխեցեալն առ Քրիստոս, և ով որ զմեզ յիշէ՝ ի [բա]րին՝ յիշեալ լիցի յիւր արքայութիւնն, ամէն։*

328

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Երևան 7019

Գրիչ՝ Գրիգոր

104 ր *... Յամի Թուականութեանս Հայոց ՊՀԲ. (1423) գրեցաւ գիրքըս այս աղօթական եռամեծին սրբոյն* Գրիգորի Նարեկացւոյն *և վանից վանականի և Հայոց փիլիսոփայի։ Գրեցաւ ձեռամբ* Եզնկացւոյ, *և* Գրիգորի Խլաթեցւոյ, *և իմովս մեղապարտի տխիղծ մատամբս, և յետինս ի բանասիրաց և տրուպս ի բանաստեղծաց, և ի խնդրողաց բանին Յիսուսի հսկող անուանեալ հոմանուն* Գրիգորի, *և իրօք որոշեալ և արթուն Թմրեալ, զոր և աղաչեմ զաստուածասէր պատահօղսդ ընթեռնելով և կամ ընդօրինակելով յիշել ի տէր, և Թողութիւն յանցանաց մերոց հայցել, այլև զստացօղ սուրբ կտակիս* Կիրակոս *կրօնաւորն և զծնօղն յիշել առաջի զենման գառինն, և վերջի զստացօղ մահդասի պատուելի* Սաճակ *աղան,*** *ի հպիլն յիշեցէք զստացօղսն, հանդերձ իւրայնովք։*

---

* *Քերված է եղել մի փոքր բառ, ըստ իմաստի Թերևս՝ «ինձ»։*

** *«Սահակ տղայի» անունից նույն այս ձեռագրով մի այլ հիշատակարան էլ գըրված է նախորդ 104ա էջի վրա։ Այնտեղ պատմվում է, որ 1801 Թվականին «Վանայ հեծեալն գնաց ի Մահմուտի, ի վերոյ Աւտի աղին, նա փախեաւ գնաց Խոյ, գիւք [իմայ գոյք] նորին աւարի և Թախթան արարին»։ Այդ ժամանակ գերվում է նաև սույն ձեռագիրը։ Մի քանի տարի անց՝ 1800 Թվականին Հէքիմպաշոնց Մահդասի Սահակ աղան գե-*

329

ՇԱՐԱԿՆՈՑ

Х. Кучук-Иоаннесов. Древния армянския рукописи из Крыма*

Գրիչ՝ Քրիստոսատուր
վայր՝ Կաֆայ

Եւ արդ, ես նուաստ ծառայս ի ծառայիցդ ճշմարիտ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի տէր Ստեփանոս՝ սպասաւոր բանի, յետինըս ի բանասիրաց, որ ի գաւառս Վրաց, ծննդեամբ յԱխալցխայոյ, փծուն գրիչ և մոլորեալ հովիւ, ի վաղուց հետէ ցանկայի տեսանել աշխարհն Հոռմոց՝ վանորայքն, արեղայքն և աշխարհականքն։ Եւ արդ, եկեալ մտի յաստուածապահ քաղաքն Կաֆայ, և հանդիպեցայ մեծիմաստ արքեպիսկոպոսին տէր Մատթէոսի՝ աշակերտի մեծի հռետորին Գրիգորի. աւժանդակութեամբ նորա գտի զառաքինի արեղայն զՔրիստոսատուրն՝ գրիչ, ծաղկող և կազմող, և տուեալ նմա զարդիւնս իմ՝ ցանկացայ այսմ եղանակաւոր տառիս, ի վայելումն անձին իմոյ և ի յիշատակ նախնեացն իմոց։

Եւ արդ, գրեցաւ յաշխարհս Հոնաց, որ ասի Ղրիմ, ի մեծահըռչակ և փառաւոր քաղաքն Կաֆայ, ընդ հովանեաւ սրբոյն Աննայի և այլ բազում սրբոց, ի կաթողիկոսութեանն տէր Պաւղոսի, և յեպիսկոպոսութեան հանճարեղ և իմաստուն հռետորի Մատթէոսի վարդապետի, ի թուականութեանն Հայոց ՊՀԲ. (1423)։

Եւ ես վատնողս տէրունական գանձուց և թագուցողս տաղանդաց տէր Ստեփանոս, յերկիր անկեալ աղաչեմ զսրբամաքուր դասս պաշտօնէից սրբոյ եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա տեսանելով և օգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի սուրբ և ի մաքուր յաղօթս ձեր զստացող սորա զտէր Ստեփանոս, նաև զվաստակաւոր, զիմաստուն և զփառաւոր ուսուցիչն մեր՝ զհանգուցեալ վարդապետն Յակոբ, զարքեպիսկոպոսն տէր Ներսէս, զտէր Յակոբ՝ վանահայր մեծահռչակ ուխտին Հաղբատայ, և զդաստիարակն մեր՝ զՎարդան աբեղայ,զկենակիցն և զհայրն բարերարին իմոյ պարոն Յովհաննիսի որդւոյ պարոն Քուրդամիրի, զմարմնաւոր ծնողսն իմ աղա Կիրակոս և Կուլ-Մէլիք խաթուն, աղա Մուրադ և Շահ-խութլու**, զհայրն իմ պարոն

րութիւնից ազատում է, նորոգել է տալիս ձեռագիրը, և հին հիշատակարանի տվյալների օգտագործմամբ կազմում վերը բերված հիշատակարանը։

Այսպիսով, 1423 թվականի մասին տվյալներ ունեցող սույն հիշատակարանը խմբագրված է 1800 թվականին։

* Оттиск из № 47 „Известий" Таврической Ученой Архивной Комиссии, էջ 1—3։ Տպված է ռուսերեն թարգմանությամբ, չունենալով բնագիրը՝ ռուսերենից կրկին անգամ թարգմանում ենք հայերեն, աշխատելով հարազատ մնալ հիշատակարաններէ լեզվին և ոճին։

** Սրանք, անշուշտ, ստացող տեր Ստեփանոսի հոր և մոր ծնողներն են, այսինքն՝ պապն ու տատը՝ հոր և մոր կողմից։

Մարտիրոս և զմայրն իմ Շնաւոր, զեղբայրն պարոն Յովհաննիսի զպսակեալն վկայական մահուամբ ի Միջագետս. զհօրեղբայրն՝ պարոն Յակոբ, զհարսն իմ Նուկզար-խաթուն, զփեսայն պարոն Ղազար, զքոյրն իմ Դեսպինա-խաթուն, զքեռին պարոն Գրիգոր, և զամենայն արեան մերձաւորս և ազգականս իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս, որոց փրկեսցէ Քրիստոս աստուած ի միւսանգամ գալստեանն իւրում, ամէն։

Նաև... անարժան գրիչս, ծաղկողս և կազմողս՝ զՔրիստոսատուր, և զծնողսն իմ...։

330

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երուսաղէմ 1941

Գերութիւնից ազատող՝ խոջա Գորգ

...Եւ յայսմ ամի, որ թվականն Հայոց էր ՊՀԳ. (1424), վասն ծովացեալ մեղաց մերոց եկն Սքանդարն *յերկիրն* Ռշտունեաց *բազում հեծելօք, և զՎանայ բերդս խսարեաց, և շատ աւեր էած, զոր սպանմամբ և զոր գերութեամբ և զոր այրելով։ Եւ զեկեղեցիքն կործանեցին, և զգրեանքն գերի վարեցին և բերին ի քաղաքն* Սղերտ, *զոր և տեսեալ հաւատարիմ և աստուածասէր տանուտէրն խոջա* Գորգ, *և փեսայն խոջա* Բաղշաիշ, *և կենակիցն* Ղրիմ-խաթունն, *և ազատեցին ի գերութենէ զսուրբ աւետարանս...։ Եւ ետուն ի գին նորա ՌԵԾ. (1500) դր[ամ] մերտնցի, և ետուն կրկին ի սուրբ ուխտն | | |* յիշատակ հոգոյ իւրեանց և ծնողաց իւրեանց* Բադեղ ինն(*) *և* Թավրէզ-Մէլիքին, Մըմրարաքշին *և* էլխաթունենն, *և ամենայն արեան մերձաւորացն, ամէն։*

331

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 1303

Հետ. ստացող՝ Կիրակոս

ա

44 բ *Ի թվարերութեանս Հաոց ՊՀԳ. (1424)* Սկանդար *ղանն զՎանա*
բերթն էառ, և տանուտէր առիւծն էր, և բազում քրիստոնէք հալածա-
կան եղան ի տար աշխարհ. Նոյնպէս ես՝ Կիրակոսս *շատ նեղութեան*
հանդիպեցայ վասն գրոցս։ Արդ, աղաչեմ զամէնէսեան, որք ոգաւիք ի
սմանէ յիշեցէք ի Քրիստոս աստուած զԿիրակոս *ստացող գրոցս, և*
45 ա *զծնօղսն իմ՝ զհայրն իմ* Մարտիրոս, ‖ *և զմայրն իմ* զԱղութ, *և զեղ-*
բարքն իմ, և զվարդապետն իմ զԹումա *փիլիսոփա* Վարագեցի, *և*
զծնաւղսն իւր զհայրն Զաքարա, *և զամենայն արեան մերձաւորս իւր,*
զի զգրոց գինս նա է տվէր, տացէ նմա տէր աստուած փոխարէն
զանմահ կեանքն, ամէն։

Արդ, և ես՝ Կիրակոս *աբեղայ, անձնական օձս եղեռնաին, յե-*
րեսս անկեալ աղաչեմ զժրաժան մեղուստ ի հովիտս ծաղ[կ]անց բու-

* *Անունը եղծված է։*

բասաանաց աստուածային տառից, յիշման արժանի արարէք և ձրի
ողորմութիւն Քրիստոսի տուք մեզ, և ձեզ յիշողացդ լիցի մասն ընդ-
մեզ, ամէն։

Բ

284 բ Ես Կ[իրակոս | | | *գիրս [գնեցի | | | ի Գր[իգո՞ր] արեղայէ, յի-
շատակ ինձ, և ծնօղաց իմոց, և ամենայն արեան մերձաւորաց, և այ-
նոցիկ, որք երախտիք ունին ի վերա մեր, թէ հոգևոր, թէ մարմնա-
ւոր։ Որք հանդիպիք սմա տեսանելով, կամ օրինակելով, կամ ուսա-
նելով, յիշեցէք ի Քրիստոս աստուած | | | * և զծնօղսն իմ, և զհո-
գևոր հայրն իմ զԹումա փիլիսոփա Վարագեցի, և զծնօղսն իւր....։
Ապա հետ իմ մահուան առ ով որ գիրք[ս լինի, ի]նձ** Ժ. (10)
պատարագ առնէ, [կատարողն]** ուրհնեալ եղիցի։

332

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4435

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Սանահին

...Արդ, ականջալուր եղեալ աւետարանական հրամանիս, որ
315 ա ասէ՝ Գանձեցէք || ձեզ գանձ յերկինս, ուր ոչ գող մերձենա և ոչ ցեց
ապականէ, երիցս երանեալ երջանիկս այս, երրակի մասամբ առաքի-
նութեան հոգւոյ բարգաւաճեալ, սպիտակացեալ ալեաւք և լուսա-
փայլեալ հոգւով, ի տիս համբակաց մաքուր կուսութեամբ սնեալ
սրբասէր քահանայս Մաթէոս, յԱրարատեան գաւառէ, սնընդեամբ
ի բարձրադիտակ յականաւոր և ի գերահռչակ սուրբ ուխտէն Հայոց-
Թառոյ, առ որ մեծաւ փափագմամբ ցանկացող եղեալ այսմ աստուա-
ծաշունչ կտակի և աւետարանի...։ Եւ ետացաւ զսա յիշատակ հոգւոյ
իւրոյ և ծնաւղաց իւրոց, [հաւրն իւրոյ Խաղաղութեն, և փոխեցելոյն
ի Քրիստոս Ըռստի, եղբաւր իւրոյ Մելքիսեդեկի]***, գանձ անկողոպ-
տելի, պաշար և առաջնորդ երկնաչու ճանապարհին, և փունջ մի
անուշահոտ բազմերանկ ծաղկանց առ ի յընծայս ամենասուրբ եր-
րորդութեանն՝ հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։
315 բ Արդ, եղև զրաւ գրչու || թեան սորա ի շրջագայութեան հայկա-
զեան տումարի ՊՀԳ. թուի (1424), յամի որում եղև սաստիկ մահտա-
րաժամ, առ ի խրատ մեղաց մերոց։ Ի թագաւորութեանն Վրաց
Ալէքսանդրեա, և ի բռնակալութեան տանս Հայոց թուրքման Սքան-
դարի, և մեզ թագաւորելոյ՝ Քրիստոսի աստուծոյ, ի հայրապետու-
թեան տեառն Պաւղոսի։ Ցաստուածապահ գաւառիս Լոռոյ, ի յերկ-

* Քերված է։
** Նորագման ժամանակ այս բառերի վրա թուղթ է փակցվել։
*** Փակագծերի մեջ առնված հատվածը գրված է այլ ձեռագրով։

նահանդէտ, մեծարգոյ և ի գերահռչակ ուխտի Սանահին *վերաձայնե-*
լոյ, ի դրան մաւր լուսոյ սուրբ Աստուածածնիս և հրաշափառ կա-
թողիկէ Ամենափրկիչ սուրբ տաճարիս և աստուածընկալ սուրբ Նշա-
նացս։ Ձեռամբ ամենամեղ և փցուն գրչացս՝ Ղազար *վարդապետի՝*
առաջնորդի սուրբ ուխտիս, և նորին հարազատի Յովանէս *վարդա-*
պետի։ Վասն որո յերես անկեալ աղաչեմք զամենեսեան, որք լու-
սաւորիք սովաւ կարդալով կամ գաղափար առնելով, յիշեցէք ի Քրիս-
տոս զստացաւղ տառիս զարժանապատիւ կուսակրօն քահանայն Մա-
թէոս, *հանդերձ ամենայն արեան մերձաւորաւք, և զնորաբողբոջ զեղ-*
316 ա *բօրորդի նորին* զՈւմեկն՝ *զվայելող սուրբ աւետարանիս։ || Ընդ նոսին*
և զսնընդակից զըստ հոգւոյ հարազատք նորին՝ զսրբասէր քահա-
նայսն զպարոն-տէր Յովանէս, *և զմեծ* Յովանէս, *և զտէր* Սարգիս, *և*
*զ*Գրիգոր, *և զայլ միաբանեալսն սիրով ընդ նմա յիշեցէք ի Քրիստոս։*

Այլ և զճիռն աւրհնութեան, զիշխանն իշխանաց զպարոն Զալապի,
և զպարոն ե ծաղկեալ զաւակաց նոցա։ եղիցի յիշատակ մասին աւրհ-
նութեան։

Դարձեալ, ի ծունկս անկեալ աղաչեմք մայրամած դիմօք զընաւ-
*դասքդ պաշտաւնէից, յիշեցէք ի Քրիստոս զթարմատար գրիչս՝ զ*Ղա-
զար *վարդապետ, և զ*Յովանէս *վարդապետ, և զտէր* Կիրակոս *կազմող,*
*և զանպիտանս յամենայնի զ*Յոհանէս, *որ յոյժ աշխատեցաք ի գիր և*
ի ծաղիկ և ի համարաբրառսն, և զծնօղսն մեր ամենայն արեան մեր-
ձաւորօք, ասելով ի խորոց սրտէ, թէ՝ Տէր աստուած, ողորմեայ նոցա։
Այլ և սղալանաց և խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի այս
էր կար մեր ի ժամ ծերութեան...։

Ցիշատակեալքդ յիշատակարանի աստ զյիշատակողս մի մոռա-
*նայք։**

333

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7833

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Կիւրզի վանք

ա

...Արդ, ես՝ նուաստ հողս Գրիգորս, *ծոյլս և անարժանս ի կրաւ-*
նաւորս, և շնորհիւն աստուծոյ և ողորմութեամբ նորին գրեցի զսուրբ

** Ձեռագրի սկզբից և վերջից կան մեկական թերթ երկաթագիր մագաղաթյա պահ-պանակներ (ըստ երևույթին Պատարագամատույցից), որոնք հնագրական տվյալներով գրված պետք է լինեն հավանաբար Ժ. դարում։ Վերջում գտնվող թերթի ա. էջի վրա կա բարձրորակ մի մանրանկար, որի ներկերը, ցավոք, թափված են, նկարը խունացած ու եղծված է։ Էջի մեջտեղում նկարված է Քրիստոսը նստած ավանակի վրա, հետևից երևում են նրա ուղեկիցների եղծված պատկերները. առաջից 3 դիմավորողներ, որոնք հանդերձանք են փռում Քրիստոսի ճանապարհին։ Ավանակի մեծությունը, գլխից մինչև պոչ, 15 սմ է, իսկ գլխից մինչև գետին՝ 13 սմ։ Քրիստոսը նստած դիրքով նկարված է 11 սմ բարձրությամբ, լուսապսակը ոսկեգույն է։ Նկարը մեծ հետաքրքրություն է ներկայացնում որպես հայ մանրանկարչության մեզ հասած հնագույն նմուշներից մեկը։*

և զկենսունակ աւետարանս ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և ի զուարճութիւն մանկանց նորին։

391 ա Բայց գրեցաւ սա ի Թուականութեանս Հայոց ՊՀԳ. (1424), ի սուրբ և գերահռչակ անապատս որ կոչի Կիւրղի վանք, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնին, և սուրբ Լուսաւորչին, և սուրբ Յովհաննու, և բազմահրաշ սուրբ Նշանացս, որ աստ։

Արդ, աղաչեմ ըզձեզ մանկունք նորոյ Սիոնի, որք հանդիպիք այս սուրբ և աւետաքարոզ աւետարանիս՝ կարդայք, աւգտիք և աւրինակէք, յիշեցէք սրտի մտաւք ի մաքրափայլ աղաւթս ձեր զփցուն և զխոշոր գրչակս զԳրիգոր, և յանդգնութեանս իմոյ ոչ մեղադրել, զի յաւժարութիւն և փափագ սրտիս մոռացումն եղև տխմարութեանս...։*

Բ

391 բ Ես՝ [պարո՞ն] Ամիրպէկս՝ Շահրիարին որդին, որ տուի Ծ. (50) դրամ ի յաւետարանին գինն՝ իմ հոգւոյս, և իմ հաւրն հոգւոյն, և իմ մաւրն հոգւոյն։ Աստուած թողացական առնէ զիւր տղայքն՝ զԿոստանդ և զՃանիպէկն:

Ես՝ պարոն Կարապետս, որ տուի Ծ. (50) դրամ իմ հոգւոյս և իմ [կող]ակցին, և իմ նը[նջե]ցելոցն, աստուած դասակից և պսակակից առնէ սրբոց մարտիրոսացն, ամէն։

Ես՝ Հիւրմէլիքս, որ տուի իմ հոգւոյս Ծ. (50) դրամ։

[Ես]՝ խոճա Շամխա...՞ր տուի իմ հոգ[ւոյն և ի]մ ծնաւղաց Ծ. (50) դրամ։

Ես՝ Թուխթանիս, որ տուի իմ հոգոյս և իմ ծնաւղացն Խ. (40) դրամ։

Ես՝ Կիրա-խաթունս, որ տուի իմ հոգւոյ և իմ ծնաւղացն Լ. (30) դրամ։

Ես՝ Ալէքսանոսս որ տուի իմ հոգւոյ 'ւ իմ ծնաւղացն [Ծ. դրամ]** աստուած թողացական առնէ զիւր որդիքն։***

Գ

392 բ Արդ, ո՜վ դասք լուսերամ քահանայք և սրբասէր ժողովուրդք, որք հանդիպիք այսմ սուրբ աւետարանիս կարդալով կամ տեսանելով, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր ըզվերջին ստացող սուրբ աւետարանիս

* Հիշատակարանի շարունակությունը ոտանավոր է, գրիչը փառաբանում է Քրիստոսին ձեռագրի ընդօրինակության ավարտման առթիվ, և այնուհետև գրում.

Այլ յիշատակ սայ եղիցի
Նւ բարեխաւս առ տէր լիցի,
Թէ տէր Յիսուս ողորմեսցի
Ինձ, և նախնեաց, և ուսուցչի
Նւ ամենայն ոք ընթերցի
Նւ կամ գնող սորա լիցի...»։

** «Ծ. դրամ» բառերը գրված են այլ ձեռագրով նախադասության վերջում։

*** Ըստ հնագրական տվյալների նվիրաբերման այս արձանագրությունը գրված պետք է լինի անմիջապես ձեռագրի գրությունից հետո, թերևս, հենց նույն Գրիգոր գրչի ձեռքով։

զՊաւղոս *սրբասէր քահանայն, որ եռափափաք սրտիւ և տենչմամբ հոգւով գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ յընչից իմոց և արդար վաստակոց յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց, և զաւակաց իմոց, և ամենայն արեան մերձաւորացն, ամէն։*

Եւ դարձեալ, յիշեցէք եղբայրն իմ զԹադէոս *կուսակրօն կրաւ-ն[աւ]որն։ Ցիշեցէք զերիցկինն* զՄարթան, *որ ետ զերկու ապարան-*
393 ա *ջանն ի գին սուրբ աւետարանիս։ Եւ դարձեալ, յիշեցէք* զՄանու-շակն *մամն, որ ետ ի գին սուրբ աւետարանիս փլորի մի։ Եւ դարձեալ յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր սուրբ քահանայք, սուրբ* հայրապետք և սուրբ վարդապետք միով ողորմիս ասելով և հայր մեր յերկինս կարդալով, յիշեցէք զծնաւղսն իմ* զԻշխանն, *և զմայրն իմ* բզխոնդ, *և զեղբայրն իմ* զԱլէքսանոսն, *և զողայն իւր* ըզԲէկն, *և զամենայն արեան մերձաւորսն միաբան, և աստուած զձեզ յիշէ, ամէն։*

Ցիշեցէք յաղաւթս ձեր զՄարիամն, *որ ետ Ժ. (10) կանգուն կտաւ ի գին սուրբ աւետարանիս։ Դարձեալ յիշեցէք* զՄխիթարն, *որ ետ ի գին սուրբ աւետարանիս ոչխար մի, աստուած ողորմի իրենց հոգւոյն և տայ զերկնից արքայութիւնն, ամէն։***

334

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 8173

ա

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Տաթև

Աստուածունակ բան ցանկալի,
Վարժող մտաց և բաղձալի,
Կրթող զմարմին նա և զհոգի,
Հանող ի լոյսն անըստու[եր]ի
Որ ոք ըղձմամբ սմա փափաքի,
Զի ասէ գանձ անգլխելի,
Որ յարաժամ փարթամասցի
340 ա *Ցաշխաաողէն անհատելի,*
Որ յաւիտեան ոչ պակասի,
Զոր ժողովեալ Գրիգորի,
Հայաստանեաց հռետորի,
Արի և քաջ մերոյ պետի
Եւ Սիսաքեանս նահանգի։
Բանքս այս քաղցր, խորխախ մեղուի,
Ի քիմս ուղիղ գաւ[ան]ոդի,
Իսկ սայ սրեալ սուր երկսայրի

---

* *Բնագրում՝ Հորքն։*
** *Գրված պետք է լինի ԺԵ. դարի կեսերին։*

Ընդդէմ ամէն հերձուածողի,
Որ ազգ ազգ հերձիք ի տէր խօսի,
Նայ և կարկիչ պիղծ բերանի
Եւ բարաքար ի ճակատի՝
Որք հաւանի Քաղկեդոնի
Եւ հայհոյողք են Քրիստոսի։
Իսկ դուք՝ մանկունք սուրբ Սիոնի,
Պայծառամիտք և հրաշալի,
Որք ընթեռնուք զբան կտակի
Եւ զամբարեալս յայս մատենի,
Ինձ ողորմել՝ անարժանի՝
Փցուն գրչի Կարապետի:

Արդ, գրեցաւ սա ի վանքս Տաթևի, ի դրունս սուրբ Աստուածածնին, և սուրբ առաքելոյն Եւստաթէի, և սուրբ Լուսաւորչին, և առ ոտս մեծ րաբունապետին և տիեզերալոյս վարդապետին Մխիթարա, ի թվականութեանս Հայոց ՊՀԳ. (1424)։

Արդ, որք հանդիպիք այսմ տառիս տեսանելով կամ աւրինակելով, յիշեսջիք սրտի մտօք ի մաքրափայլ աղօթս ձեր զանարժան հոգս՝ զԿարապետ սուտանուն երէցս, և զծնօղսն իմ՝ զՄկրտիչ քահանայն, և զԵղիսաբէթ մայրն իմ, և զայլ ամենայն մերձաւորսն իմ, նաև զՑակոբ կուսակրօն ճգնաւորն և փիլիսոփայն՝ զուսուցիչն իմ և զիրատ[ատ]ուն և զերախտաւորն, և զամենայն արեան մերձաւորսն նորա՝ զկենդանիս և զհանգուցեալս ի Քրիստոս։ Այլ և զերախտաւոր հոգևոր եղբայրն իմ զԹումայ Կաֆացի՝ զիմաստուն և զհանճարեղ, սիրող բանի և արժանապատիւ քահանայ Քրիստոսի, որ ամենայն գիտութեամբ և զաւրութեամբ աւգնական և ձեռնտու եղև ինձ, զի աւրինակն շնորհեաց ուրախութեամբ և սրտի մտօք, և շատ աշխատեցաւ ի սմայ, զի զառաջի տետր ցանկին գրեաց, և զամենայն երկաթագիր որ կայ ի գիրքս, ի յառաջմէ մինչև ի վերջքն գրեաց, այլ և զկարմիր և զսև թանաքն ի յամենայն ժամս պատրաստեաց. խնդրեցէք ի սուրբ հոգոյն բոլորով սրտիւ, զի պատրաստ և արժան լիցի երանաւէտ ձայնին Քրիստոսի և պատրաստեալ տեղոյ հանգըստեան արդարոցն։ Այլև զկուսակրաւն նորընծայ քահանայն Թորոս կոչեցեալ, որ յոյժ աշխատեցաւ և զթուխտս կոկեաց, որ և մասն և բաժին լիցի նմայ ընդ ամենայն վարդապետաց և քահանայից, որք կարդան զսա կամ օրինակեն, ուսանին և ուսուցանեն աղօթիւք ձերովք։ Այլ և զխոնարհամիտ և զհեզահոգի սարկաւագունքն, զհարազատ եղբայրքն զՍարգիս և զԵղիայ, որ յոյժ աշխատ եղեն ի հաց, ի սպաս և ի ջուր պատրաստելն, ի թոնիր և ի ճրագ վառելն, որ և վառեալ լապտերօք սուրբ առագաստին արժանասցին։

Այլ և զՍարգիս ծերունի միա[յ]նակեացն, որ և նա շատ օգնական եղև և պանդխտակից մեզ, զի ընդ սուրբ ծերոցն դասեսցի։ Եւ աստուած յիշողացդ և յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի։ Դարձեալ, յերես անկեալ աղաչեմ զսուրբ ընթերցողսդ, զի անմեղադիր լինիք

վատութեան և սխալանաց գրիս, զի կար մեր այսչափ էր, և դուք աւրհնիք յաստուծոյ։

Բ

Ծաղկող՝ Թումայ Կաֆացի

Ո՛վ, մանկունք սուրբ Սիոն[ի]
Եւ վայելողք այժմ կտակի,
Զիս, որ ակար եմ ի բարին,
Երագամիտ եմ ի չարին
Զ[Թումայ]* անարժան աբե[ղայ], որ զծաղկագրէր**
հանեցի, յիշեցէք յաղօթս ձեր, ով սուրբ ընդերձօղք։***

335

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երուսաղէմ 1635

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Հերմոնի վանք

Գրեցաւ ի թվ. ՊՀԳ. (1424), ձեռամբ անարհեստ Գրիգորի աբեղայիս, ի գաւառս Եղեգեաց, ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ և սուրբ Սահակայ, յառաջնորդութեան սուրբ ուխտիս տիեզերալոյս հոեաոր Յովհաննէս վարդապետի։

336

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 5114

Գրիչ՝ Թովմայ
վայր՝ Մեծոփայ վանք

372 ա Փառք... որ ետ զաւրութիւն իմոյ տկարութեանս հասանել ի յաւարտ այսմ լուսափայլ շարագրեալ Շարակնոցիս, զոր եդեալ և հաստատեալ է սուրբ հայրապետացն և վարդապետացն սրբոց, ի պայծառութիւն սրբոց ե ի մանկանց սուրբ եկեղեցւոյ։

Արդ, գրեցաւ սա ի յերկիրս Քաջբերունեաց, ի սուրբ մենաստանիս, որ կոչի Մեծոփայ վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ե սուրբ Յակոբայ, և սուրբ վարդապետաց գերեզմանացս, ի թվականութեանս Հայոց ՊՀԳ. (1424), ձեռամբ անարհեստ և սխալագիր գրչի Թովմայ խաբեղայի, ի հայրապետութեան տեառն Պաւղոսի, և ի յառաջն[որդ]ութեան սուրբ ուխտիս հոգիազարդ և երանաշնորհ և

* Անունը ջնջված է, վերականգնում ենք գլխավոր հիշատակարանի տվյալների համաձայն, ըստ որոց Թումայ Կաֆացին, օգնել է գրչին, գրել է «երկաթագիր» տառերը, պատրաստել է թանաքը՝ կարմիր, սև և այլն։

** Բնագրում գրված է հապավումով՝ «զծկգրեր»։

*** Հիշատակագրությունը գրված է 339 ր էջի ներքին լուսանցքում, կարմիր թանաքով։

աշխարհալոյս մեծ րաբունապետիս մերոյ Թովմայ վարդապետի, որ
հանապազ խրատ [տ]այ մեզ ի յարուեստ գրչութեանն։ Քրիստոս
372 բ աստուած զերկնից արքայութիւնն պարգեւէ ‖ իւրն և իւր ննջեցելոցն,
ամէն։

Արդ, ի խնդիր ելեալ այսմ աստուածաշունչ կտակիս երանա-
շնորհ և սրբասէր կրաւնաւորն Ստեփաննոս, որ ետ գրել զսա ի յար-
դար վաստակոց իւրոց, յիշատակ իւր և բարի ծնաւղաց իւրոց՝ հաւրն
Ներսէսին և մաւրն* հանգուցելոյն ի Քրիստոս....

Դարձեալ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ յիշեցէք
ի բանին Քրիստոս զվերոյգրեալքսն Ստեփաննոս և զհարազատ եղ-
բայրն իւր զԷլեքսան կրաւնաւորն՝ զհանգուցեալն ի Քրիստոս. և դուք
յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ յաւ-
[իտեանս]։ Այլ և կրկնակի աղաչեմ զամենեսեան, որք պատահիք ի
սմա կարդալով կամ աւրինակելով յիշեցէք առաջի աստուծոյ զստա-
ցող սորա, և զիս զանպիտան գրիչս. խոշորութեան և սխալանացս
373 բ անմեղադիր լե ‖ րուք, զի կար մեր այս է։

337

ՇԱՐԱԿՆՈՑ

Շուշի Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Բերկրի, Եղեվանք

ա

333 բ ...Արդ, գրեցաւ եղանակաւոր տառս ի թվին Հայոց Մեծաց
ՊՀԳ. (1424), ձեռամբ ախմար և սխալագիր խելահեզ անպիտան գրողի՝
սուտանուն կրաւնաւորի Յակոբի, ի խնդրոյ պատուական և սրբասէր
կրաւնաւորի Յովաննէսի, յիշատակ բարի նմա եղիցի։ Ի նտհանգիս
Տարբերունի, որ այժմ Բերկրի կոչի, ի սուրբ և ի հրեշտակաձեմ յանտ-
պատիս Եղեվանք, ընդ հովանեաւ Նախավկայ սուրբ Ստեփանոսի և
սրբոց Վարդանացս արեամբ ներկեալ բազմութիւն նշխարացս, ի
յառաջնորդութիւն բաբէմիտ Մելիքսէթ վարդապետի...։

Յիշեցէք ...Յովաննէս մաքրամիտ աբեղայն, և ծնաւղաց իւ-
րոց՝ սրբասէր Տերուն** քահանայի, մաւրն*** Արղուն-Մելիքի, և խան-
կայ իւրոյ Խութլու-Մելիքի, և եղբարց իւրոց Թումա քահանայի՝ կոչե-
ցելոյ ի Քրիստոս, Վարդանի, Ստեփաննոսի և Կիրակոսի, և քուերցն
Թան-Մելիքի, Խաթուն-Մելիքի, և Մամախաթունի, Մեսրովպի, Մկրտչի, և
Կարապետին, և Մարտիրոսի... Նաև զհոգևոր որդեակս իմ՝ զԳրիգոր
դպիր, որ բազում աշխատանք ունի ի տուն տալ խաչելոյն(՞)։

---

* Անվան լրացման համար տեղ է բաց թողնված։
** Մեքենագրված է «ծերունի», ուղղում ենք՝ «Տերուն»։
*** Մեքենագրված է «հաւրն»։

24—21

Բ

304 բ Ի յուԹհարիւր Հայոց Թվի
                    եւԹանասուն և երեքի
Ի նահանգիս Արբերունի,
                    որ Բերկրի այժմ կոչի,
Ի լեառնայարտ անապատիս,
                    որ Եղէվանք սա* անուանի,
Ձեռամբ մերով գծագրեցաք,
                    եղբաւր մերոյ Յովանէսի
Սա յիշատակ սմա լիցի**
                    և ծնաւղացն իւրոյ բարի։

338

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 8188

Գրիչ՝ Ղազար
վայր՝ Սըղգայ գիւղ

386 ա Փառք ...որ ետ կարողուԹիւն տկար մարՄնոյ և տարտամ հոգոյ՝ մեղսասէր և բազմավէր անձին Ղազար մեղուցելոյս հասանել յաւարտ այսմ գանձարանի, յամի ՊՀԴ. (1424) Թըւականի մերումս տումարի, որ գրեցաւ յանուանի գեաւղս որ կոչի Սըղգայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ, ի խնդրոյ ժրաջան և զովելի սրբակրաւն աբեղային Յովանէսի, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց և յարդար վաստակոց, ի վայելումն անձին իւրոյ աստ ի կենացս և յետ ատեացս՝ յիշատակ իւրն, և ծնողաց իւրոց՝ հաւրն Կիրակոսին և մաւրն Բաղդատին, [և եղբօրն]
386 բ ‖ Մկր[ա]չին՝ փոխեցելոյն առ Քրիստոս, և միւս եղբօրն Կիրակոսին, և զհաւր փոխանն իւր Սարգիսն, և մեծ պապն իւր զՓօլատն, և զիւր կենակիցն զԱննայ, և զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն առ Քրիստոս։ Ընդ նոսին և զիս՝ զանյիշելի և բազմավէր հիւանդ զՂազար գրիչս, հանդերձ ծնողօքն և ամենայն ազգականաւքն իմովք՝ կենդանեաւքն և հանգուցելովքն առ Քրիստոս։

Արդ, որք հանդիպիք սմա տեսուԹեամբ և կամ աւգտուԹեամբ յիշեցէք ի միտս բարիս և ի պատկանաւոր խնդրուածս զստացող սորա զՅովանէս աբեղայ և զանյարմար գրող սորա զՂազար: Եւ խոշորուԹեան գրոյս անմեղադիր լերուք, զի շատ եղ ու մուտ և գրոյց անաւգուտ մարդկան ձանձրացուցանէին զիս։

Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպողքդ սորա, որ լաւ [խնա]մով պահէք զգիրքս և առանց շորի | | | հանապազ զմատս
387 ա չԹըքո ‖ տեն ու զԹուղԹն վայրապար շըջմըրջեն, և որ յայս ԹղԹե-

* Մեքենագրված է «Հռավանդ..առ»(՞)։
** Մեքենագրված է «Մալեցի» փխ «սմա լիցի»։

րոյս կորէ՝ նայ աստուած զնա ի կենաց կորէ, և որ խնամով պահէ և զարդուք՝ նայ աստուած զհոգի նորա զարդարէ և արքայութեանն արժանաւոր առնէ, և Քրիստոսի աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս, ամէն։

Ո՜վ եղբարք, վկայ է աստուած, որ այս այն գրիչն է, որ յառաջին եմ սկսել, մէկ հետ է կորած, գանձ ու տաղ ու խաղն՝ մէկ գրչի։

Բ

205 ա Ո՜հ, ո՜հ, Ամիրի բաւթն եկաւ,
Մեզ տրտմութիւն հանդիպեցաւ
Ի յայսմ աւուր, որ նա մեռաւ։

339

ԳԱՆՁԱՐԱՆ

Լվովի համալսարան, Cod. arm. 52,
ՀԱ. 1937, սյուն. 121—122

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Ամասիա

238 ա ...Արդ, անգ ելեալ աւարտեցաւ սուրբ երգարանս, որ է յարմարեալ սուրբ վարդապետաց, որ կոչի գանձարան և տաղարան, և է զարդ եկեղեցւոյ և պայծառութիւն քահանայից և ժողովրդեան, ի վայելումն շնորհազարդ և առաքելաշնորհ արհիեպիսկոպոսին տէր Մխիթարին՝ վերադիտողի մայրաքաղաքիս Ամասիոյ և իւր վիճակին, ի յիշատակ իւր, և ծնողաց իւրում՝ հաւրն իւր Աւետիք քահանային, և մաւրն իւրոյ Կիրա-խաթ[ուն]ին, և երկու քերցն իւրոց, և այլ ամենայն արեան մերձաւորաց իւրոց։

Արդ, աղաչեմ զամենեսեան... յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվերոյասացեալ զտէր Մխիթար արհիեպիսկոպոսն և զծնողսն իւր, որ ստացաւ զսա ի հալալ արգեան[ց] իւրոց՝ ի վայելումն անձին և հոգևոր զաւակին իւրոյ՝ դեռարոյս սարկ[աւագ]ին Սիմէոնին...: Արդ, գրեցաւ սա ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Պաւղոսի, և եպիսկոպոսութեան տէր Մխիթարի, ի թվ. Հայոց Մեծաց ՊՀԳ. (1424)...։ Ընդ նմին և զիս՝ զանպիտան գրչակս զՅոհաննէս սուտ քահանայն աղաչեմ յիշել ի ձեր սուրբ աղաւթք, ամէն։

340

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 3588

Գրիչ՝ Յովհաննէս Սուրբ-Թորոսեցի

132 ա Տէր աստուած, ողորմեա ստացողի գրոցս Մարտիրոս վարդապետի, և ծնողաց, և եղբարց իւրոց, և ամենայն արեան մերձօրաց։ Ընդ նմին և գրողի սորայ՝ Յոհաննէս աբեղի, և ծնողի իւր, և ամենայն արեան մերձօրի, և որ ասէ ամէն։ Գրեցաւ ձեռամբ յոգնամեղ գրչի Յոհանէս աբեղի Սուրբ-Թորոսեցոյ, ի գուռն և ի գերեզմանս սուրբ

Լուսօրչի, և սուրբ Փրկչիս հովանեաւ, և ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Կարապետին։ Ի հայրապետութեան Մկրտիչ տրեզի Սէրոբեցոյ, ի վայելումն Մարտիրոս վարդապետի, և յիշատակ իւր և ծնողաց իւրոց։ Գրեցաւ ի Թվականիս ՊՀԳ. (1424), ի յօգոստոս Ը. (8),*

341

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 2167

Գրիչ՝ Մկրտիչ Ղրիմեցի
վայր՝ Երուսաղէմ

320 ա ...Արդ, գրեցաւ Քարոզգիրքս հաւաքեալ, զոր արարեալ է սուրբ և տիեզերալոյս վարդապետին Գրիգորի, որ և եղէ ես անպիտան և անիմաստ, մեղօք լցեալ Մկրտիչ սուտանուն աբեղայս Ղրիմեցի ի յԵրուսաղէմ՝ Փրկչի վանացս փակակալ, և զհարազատ եղբայրն իմ հեզահոգի՝ զՏրատուր աբեղան, և զՄարուգէ փիլիսոփայն, և զԳրիգոր միայնակեցն, և զայլ ամենայն միաբանքս Փրկչիս։ Զի փափաքմամբ սիրով սկսայ և խիստ շտապով գրեցի, զի օրինակն չին ի տալ,** և ժմեռն էր, Թուխթն քամ և Թանաքն աւեր, և յաւժարութիւնս սրտիս մոռանալ ետ զպակասութիւնն։ Արդ, աղաչեմ, զի անմեղադիր լինիք տկարութեանս և Թողութիւն մեղաց հայցեցէք որք կարդայք կամ օրինակէք։ Արդ, գրեցաւ սա ի Թվականիս Հայոց ՊՀԳ. (1424), և [ի] սուրբ քաղաքս Երուսաղէմ, և ի Փրկչի վանքս։

Բ

Աղաչեմ զքեզ, վարդապետ, մի մոռանար զիս ի քո պատարագն, աստուծոյ սիրուն համար։***

342

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՑՎ 150 (1313), հտ. Ա., էջ 645

Հետ. ստացող՝ Ղազարոս

216 բ Ես պրն. Ղազարոս՝ որդի Ամիր-Գրիգորի, որ առի սուրբ աւետարանըս յիմ հալալ արդեանցս, որ տվի յիր տէրն, յիշատակ ինձ և կենակցին իմոյ Անլի-Խաթունին, և հարազատ որդոյ իմոյ պրն. Թորոսու, և Ամիր-Գրիգորի, և աստուածատուր զաւակին իմոյ, և մաւրն իմոյ Մարիանէի՝ առփոխեցեալն ի Քրիստոս, և հայրն իմ Ամիր-Գրիգորն՝ առփոխեալն ի Քրիստոս։ Որք ընթեռնուք զսուրբ աւետարանս յիշեսջիք ի սուրբ

* Ձեռագրի 10 բ, 35 բ, 123 ա, 157 բ և 167 ա էջերում պահպանվել են Յովաննէս գրչի կողմից գրված հիշատակագրությունները, որոնցում նա խնդրում է հիշել ձեռագրի ստացող Մկրտչին և իրեն։
** Իմա «չէին տալիս»։
*** Գրված է 51 բ—52 ա էջերի ներքին լուսանցքում։

մաքրափայլ յաղաւթս ձեր և զծնաւղսն մեր, և դուք յիշեալ եղիցիք ի միուս անգամ գալըստեանն, ամէն։

Թվին. ՊՀԳ. (1424)...։

343

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

«Միաբանք և այցելուք Երուսաղէմի», էջ 351—352

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Երուսաղէմ

...Արդ, գրեցաւ սուրբ տառս ի թվին Հայոց ՊՀԳ. (1424), ի հայրապետութեան տեառն տէր Պաւղոսի, *զոր աջն անեղին և բազուկն հզաւրին անսասանելի և անդրդուելի պահեսցէ զաթոռ հայրապետական, և յառաջնորդութեան սուրբ ուխտիս Երուսաղէմայ տէր* Եսայիա *և տէր* Մարտիրոսի, *և փակակալի՝* Գրիգորիս *փիլիսոփայի։ Այլ և աղաչեմ չլինել մեղադիր խոշորութեան և սխալանաց և անարհեստութեան սորա, զի ըստ կարի իմոյ յոյժ աշխատեցայ ի սմա և գրեցի ի ստոյգ և յընտիր աւրինակէ, զի որ օգտիք ի սմանէ կամ կարդայք կամ աւրինակէք, յիշեսջիք... զփծուն գրիչս* զՅովհաննէս *լոկ անուն աբեղա, և զծնողս իմ, և զամենայն արեան մերձաւորն իմ զհանգուցեալ. ընդ նմին՝ զրաբունի վարդապետքս մեր՝ զհեզահոգի* Արիստակէս, *և* զՄելքիսէթ, *և* զՅակոբ *ճգնաւոր աբեղայ, և* զՅովհաննէս *վարդապետ աբեղայ, որ ի յորդորելն աւգնական եղէն և ի խազելն, և զկուսակրաւն աբեղայ* զՍիմէոն Մելաինցի, *որ ծաղկեաց, և զթղթի կոկողսն, և զպատուելի եղբայրս մեր* զՆնովք *քահանայ, զսիրելի ըստ հոգւոյ եղբայրս մեր* զԱմինադաին *և զծնողս իւր, և ըստ հոգւոյ մայրերս մեր, որ սպասաւորքն մեզ ըստ պիտոյից մարմնոյ...։*

Եւ արդ, ես՝ Յովհաննէս *աբեղայս եդի զգիրք յիշատակ ի սուրբ Փրկիչս, յիշատակ ինձ և ամենայն արեան մերձաւորաց իմոց։ Եւ զդէմս իմ յերկիր եդեալ պաղատիմ սպասաւորաց սուրբ Փրկչի լուսազարդ տաճարիս, և սուրբ կափարիչ վիմիս, և սուրբ բանտիս, որ զգիրքս լաւ պահէք և խնամով պահէք և դուք այլ արժանաւորիք մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս...։*

344

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երևան 2077

Գրիչ՝ Յոհանէս

313 ա *Եւ ի ներգևեալ և ի չանարգի (*) անձնէ իմէ՝* Յոհանիսէ *խնդրողէ բանի, որ ետ կարողութիւն հասանել գործաւորութեամբ ի յաւարտ սորին։ Արդ, յիշման արժանի արարէք զանպիտանս, աղաչեմ, նաև զծնօղսն մեր հոգևոր և մարմնաւոր։ Գրեցաւ ի թուականիս ՊԾՀԳ. (1424)։*

345

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 5542

Գրիչ՝ Թումայ Մինասենց
վայր՝ Աղթամար

ա

238 բ ... Եւ արդ, ես ունայնս և Թափուրս յամենայն բարեաց, մե-
ղաւոր և անարժան ծառայս ծառայիցդ աստուծոյ՝ սոսկանուն աբեղա
Թումայ... կատարեցի զսա յաստուածախնամ կղզիս Աղթամար, ընդ
հովանեաւ գերահռչակ սուրբ Խաչի, և սուրբ Աստուածածնի, և այլ
բազմահաւաք սրբոցս, որ աստ կան բազմեալ, ի հայրապետութեան
տեառն Դաւթի, և ի Թվականութեան հայկազեանս տումարի յՊՀԴ.
(1425), ի յամենեւին չար և ի դառն և ի նեղութեան ժամանակի,
յորում ամի բոլոր աշխարհս Հայոց ի յառ և ի յաւարի, ի սուր և ի
գերութիւն մատնեցաւ վասն ծովացեալ մեղաց իմոց, ի ձեռս անաւ-
րէն և անիծեալ ազգին Նետողաց, վասն զի այս բոլոր տարի մ'է, որ
239 ա չար բռնաւորն ամիրզա Սքանդարն՝ տէրն Թավրիզոյ՝ || ազգաւ Թուրք,
զամիրապետն Ոստան քաղաքի՝ զսուլտան Ահմատն ըմբռնեալ է և
երկաթի կապանաւք ի յԱլընջոյ բերթն ի բանտի է եդեալ, խրնդ-
րելով ի նմանէ զանառիկ ամրոցս նորա. և զերկիրս Հայոց՝ զԱղբակ,
և զՔարպաճ, և զՈստանայ երկիրս, մինչ ի Բաղէշ անմարդաբնակ արա-
րեալ։ Եւ բնակիչք աշխարհիս մերկ և բոկ և սովալլուկ տարաշ-
խարհիկ եղեալ, և ոմանք յաստուածախնամ կղզիս անկեալ ա[պաւին]ե-
լով յաստուած և յամենայաղԹ զաւրութիւն սուրբ Խաչիս ազատե-
ցան ի գերութենէ չար բռնաւորին։

Դարձեալ պատմեցից և այլ ևս աղէտ և կըսկիծ արժանի արտա-
սուաց, որ եկն եհաս ազգիս քրիստոնէից։ Վասն զի Աւթման-բէկն՝
տէրն Ամթայ, ջատագով եղեալ մերոյ իշխանացս, և եկեալ բազում
զաւրաւք, և զերկիրն Արճիշոյ և զԱրծկոյ բնաջինջ գերի վարեալ և
239 բ սրոյ ճարակ արարեալ, ի տաւնի գա || լըստեան | | | աստուծոյ։
Աւա՜ղ ... դառնութեան ժամանակիս, որ մեք պատահեցաք, վասն զի
աշխարհս մեր աւերակ, և սեղանք և դրունք եկեղեցեաց մերոց սա-
պալեալ, և սպասք սրբութեանցն գերի վարեալ, և աւրհներգութիւնքն
աստուծոյ լռեալ ի բոլոր երկիրս մեր, միայն խոյակապ սուրբ Խաչս
է մնացեալ իբր զհզաւր Թագաւոր՝ անսասան և անպարտելի, որ և աջ

անեղին աստուծոյ հրեղէն պարիսպ եղիցի սմա՝ պահելով առանց փորձանաց ի պարծանս ամենայն քրիստոնէից։

Արդ, ի յայսմ դառնութեան ժամանակի գծագրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ անարհեստ գրչի Թումայի, վասն որոյ աղաչեմ զհանդիպողսդ ուղիղ մտաւք աստուած-ողորմի ասացէք ինձ՝ մեղուցելոյս
Թումայի, և ծնաւղացն իմոց՝ Սիմէոնի և Արղունի, և հաւրեղբաւրորդւոյն իմոյ Մկրտիչ կրաւնաւորի՝ ծաղկողի սորին, և ծնաւղաց նորին,
և քուերցն իմոց, և ազգայնոցն ամենայնի։ Այլ և այնո ‖ ցիկ, որ ձեռ
240 ա ընտու և աւգնական եղեն մեզ կոկելով զնիւթ սորա, և որք յանձնեցին զինքեանս ի մեզ յիշատակել յաղաւթս՝ կենդանեացն և հանգուցելոցն։ Որոց տէր աստուած՝ տուողն բարեաց ամենեցուն, առհասարակ, պարգևեսցէ զանսպառ ողորմութիւնն իւր և զերկնից արքայութիւնն՝ ստացողի սորին Հաթունին*, և ծնաւղաց նորին՝ Յակոբին և Գուլ-Մէլէքին, և մեղաւոր Թումա գրչիս, և ծնաւղացն իմոց՝ ազգայնաւքն [հանդերձ]։ Եւ որ յիշէ զմեզ սրտի մտաւք և աստուած-ողորմի ասասցէ մեզ, և ինքն արժանասցի ողորմութեանն աստուծոյ յաւրհնութեանն պահու, ամէն, ամէն։

Այլ և զնորաբողբոջ տղայն զՀէրապետ սարկաւագն՝ զքուերորդին իմ պահեսցէ Քրիստոս աստուած յամենայն արկածից չարին և ողորմեսցի սմին, ամէն։

Ապա վա՜յ ամենայն աշխարհովս ի դառնութեան ժամանակիս, զի հէրու զմահն ու կըսկիծն տեսաք և այս տարի զգերեացն...։

Բ

Աւա՜ղ, աւա՜ղ և հազար աւա՜ղ դառնութեանս, որ ի յայսմ աւուր աշխարհս մեր ի յաւար և ի գերութիւն մատնեցաւ զաւրացն Թուրքաց, ի յամսեանն տրէ ի Ի. (20), ի տաւնի սուրբ Լուսաւորչի։ Ով պատահէ գրոյս մեզ աստուած ողորմի ասէ։**

346

ՄԱՇՏՈՑ

Ն. Ջուղա 429. Մ. Տ. Մ.

Վայր՝ Սխգայոյ վանք, մերձ ի Վան

Քրիստոս աստուած...ողորմեա բարեպաշտ տանուտրոջն Յովանէսին և ծնողաց նորին՝ Որդորուն և Յաւմար-Մէլիքին, և որդոյն Ատոմուն,

* 240 բ—241 ա էջերում Հաթունի և նրա մերձավորների մասին կան ոսկավարժեք մանրամասնություններ. հայտնվում է, որ նա «յետ մահուան առն իւրոյ Առաքելին ստացաւ զսուրբ աւետարանս»։ Ձեռագրում կան նաև գրչի և հետագա ստացողների այլ հիշատակագրություններ, որոնցից որոշ հետաքրքրություն է ներկայացնում հետագա ստացող Կարապետի հիշատակագրության ստորև բերվող հատվածը. «Ես՝ Կարապետ գնեցի զաւետարանս և տուի Կիրակոս աբեղայի, յիշատակ մեզ և մեր ծնօղացն...։ Աստուած ողորմի Մկրտչին, Գաւրկէն, որ երեք թանկա երետ, որ կոտհերն զուգեցին...»։ (էջ 181 ա)։

** Գրված է 236 ա—237 ա էջերի ներքին լուսանցքներում, մանր տառերով։

որ զսուրբ գիրքս Թափեաց ի յանօրինաց, յորժամ էառ Իսկանդար ամիրզայն զՎան, և դարձոյց ի դուռն Սխգայոյ վանաց սուրբ Աստուածածնին։ Եւ դուք՝ միաբանք սուրբ ուխտին, յամէն տարի երկու ժամ առնէք անխափան. ի Թվ. ՊՀԴ. (1425)։

347

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 4041

Գերութիւնից ազատող՝ խոջայ Աստուածատուր։

253 ա Ես խօջայ Աստուածատուրս՝ որդի խօջայ Ամիրմուլք մահդասուն գնեցի զՆարեկացիս ի գերութենէ Թուրքմանին, յայն տարին որ զՎանայ բերդն առին ի քրդուն Սքանդար ամիրզէն, ի ՊՀԴ. (1425) ամին։ Եւ շատ աւիրութիւն արարին, և զսրբութիւնսն զամէն գերի առին, և հանդիպեցաւ այս Նարեկացիս, որ ի Վերի Վարագայ բերին, և գնեցի զսա ի հալալ արդեանց իմոց և ետու ի սուրբ ուխտն Վերի Վարագ, ուր եղեալն էր, ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ մահդասի Ամիրմլքին և Մաքր-Մէլեքին, և կենակցին իմոյ խաթուն-Մէլեքին, և ծաղկեալ զաւակացն իմոց Միրաքին, Կարապետին և Յովանէսին, և ամենայն արեան մերձաւորաց իմոց, ամէն, եղիցի. և զեղբայրն իմ զԱմիրումէան, և զփեսայն իմ զէւաաշայն յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ յերկնային արքայութիւնն, ամէն, եղիցի։

348

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նոտ. 77—78 և Նշխարք (№ 4515), էջ 128, Բաղէշ

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Հիզան

...Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ անիմաստ գրչի Կարապետի, ի դառն և ի վշտացեալ ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց անօրէն Իսքանդարն ըմբռնեաց զամիրայն մեր զսուլթան Անմառն, և եկեալ բազում զօրօք ի վերայ մեր, և յիսուն օր խսարեաց զանառիկ դղեակս Վան, և ոչ կարաց առնուլ զսա. և սուտ երդմամբ գնացեալ ի Դարէժ, և ի գարնանային աւուրսն առաքեաց զզօրս և գերեաց և աւերեաց զերկիրն Ռոշտունեաց: Եւ մեր փախստական եղեալ՝ եկաք ի Հիզան, և եղև կատարումն սորա աստ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սրբոյն Սարգսի զօրավարին, և Գէորգայ քաջ նահատակի, ի Թուականիս Հայոց ՊՀԴ. (1425)։ Յիշեսջիք...ստացող սուրբ աւետարանիս զՍարգիս, որ գնեաց զսուրբ աւետարանս և ետ...ի դուռն Ալանայ սուրբ Նշանին, ձեռամբ Թադէոս կրօնաւորին։

349

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նոտ. 78—79, Վան, Հոգոց վանք

Հետ. ստացող՝ Կարապետ
վայր՝ Արգելան վանք

Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զԿարապետ *կրօնաւորն, նաև* զՄկրտիչ *քահանայն, որ խնամ տարաւ սուրբ աւետարանիս՝ ի* Վանայ *բերդն ի* Սքանտարի *հասարն [յիշեցէք]...։*

Գրեցաւ ի Թվ. ՊՀԴ. (1425), ի վանս Արգելան*։ Զմեղաւոր վարդապետս* Մկրտիչ *յիշել աղաչեմ։*

350

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 4876

Գրիչ՝ Յակոբ*
վայր՝ Խառաբաստի վանք

519 բ *Եւ ի յամի Թըւականիս Հայոց ՊՀԴ. (1425)։ Եւ եկ[ի]ն ի վերա երկրին արիւնակեր գազանքն՝ զօրքն* Օթմանին *և հեծեալքն* Ըռօշկանին*, և առ և գերի արարին զերկիրս՝ զորս և կարացին, և շատոց արիւն հեղին։ Ընդ որս և զմեծ րաբունապետն մեր և զլուսաւորիչն հոգոց և մարմնոց մերոց նահատակեցին ի վանքն* Ցիպնա*, յաւուր պենդէկոստէի կիրակէին, և անբուժելի կսկիծ հասուցին ամենայն երկրի, եւ առաւել մեղուցեալ անձին գծողի և խաւարնալ աչաց* Յակոբի:

*Որ էր ինձ հայր գովելի***
Եւ պարծանաց րաբունի՝
Արեանառու մեր ազգի,
Եւ հօրեղբայր գծողի։

Լալով գոչեմ ողբալի
Կոծ և եղուկ իմ սրտի,
Զի ջահն մեծ պանծալի
Այսօր շիջաւ ի յերկրի։

Եղուկ անձինս եղկելի,
Վայ իմ աչացս, որ տեսի
Զմեծ վարդապետն իմ բարի
*Ներկեալ արեամբ ի յերկրի։****

---

* *Ձեռագիրն ընդօրինակված է 1477 թվականին Ցովէփ և Գրիգոր գրիչների կողմից։ Ցակոբ գրչի այս հիշատակարանը, հավանաբար, գրիչներն ընդօրինակել են գաղափար օրինակից*

** *Խոսքը Գրիգոր Խլաթեցու մասին է։*

*** *Շարունակությամբ գրիչ Ցակոբը, որն եղել է Առաքել Բաղիշեցու նոտարը (տես Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հտ. Գ, էջ 503—504), մեջ է բերում*

Գորովագութ ձայն կականի
Աղաղակեմ արտասուալի,
Շարժեմ ի կոծ զազգս Արամի,
ԶԱսքանազեան Հայկայ տոհմի։

Րաբունք համայն, որ յաշխարհի,
Լուցէք զՀայոցս եկեղեցի,
Որ մերկացաւ յանկարծակի
Զլոյսն պայծառ յաշտանակի։

Ինձ վայ՚ւ եղուկ՝ ախմար գրչի,
Յակոբ անուն՝ գծող բանի,
Հոգոյ ծնունդ հօրն մեծի՝
Քաջ րաբունոյն իմ Գրիգորի։

Գանձ մերկացայ ես՝ եղկելի,
Որ արտասուաց եմ արժանի,
Զրաբունապետն իմ բաղձալի,
Որ և Գրիգոր անուն կոչի։

Ոչ հանդուրժեմ այսմ աղետի,
Այլ յօրինեմ կոծ սխրալի,
Քանզի տեսի զհայրն բարի
Ներկեալ արեամբ այսօր յերկրի։

Րապաղ ոգիս մեղօք ի լի,
Զունիմ իմաստ բանականի,
Զինչ ասիցեմ ես արժանի
Մեծ րաբունոյն իմ Գրիգորի։

Վարդապետաց էր ցանկալի
Խրատիչ քանոն ամենայնի,
Վարդ անթառամ յեկեղեցի
Հոտով լցեալ զտունըս Արամի։

Արթուն անունն այն ըղձալի
Գրիգորիոսն երանելի,
Արեգական նման յերկրի
Լուսաւորէր զեկեղեցի։

Րամից Հայոց, որ յաշխարհի,
Լուսաւորիչ էր նա յայտնի,
Մեղուցելոց մարդկան ազգի՝
Մաքրիչ մեղաց ամենայնի։

Բաղիշեցու հորինած ողբը Գրիգոր Խլաթեցու նահատակության առթիվ։ «Հայոց նոր վկաների» հրատարակիչները, սխալմամբ, նույնացրել են այս Ցակոբին նշանավոր տոմարագետ Ցակոբ Ղրիմեցու հետ (տես «Հայոց նոր վկաները», գիտական հրատարակություն, 1903, էջ 274)։

Դրախտ բազմազան պտղով լի,
Անուշահամ անծախելի,
Սուրբ վարդապետն հոգելի
Գրիգորիոս, որդին Տերի։

Անձամբ առնէր զգործս բարի,
Նման փրկչին տեառն Յիսուսի,
Եւ քարոզէր ամենայնի,
Խափանեցաւ այսօր յերկրի։

Պատուէր զվկայսն Քրիստոսի,
Եւ յօրինէր ճառ ցանկալի,
Վկայասէրն բաղձալի,
Անուանակից նախնոյն մեծի։

Եհաս անանցն պսակի,
Որում ցանկայր տենչմամբ սրտի,
Բարունապետըն հրաշալի՝
Սպանեալ ձեռամբ անօրինի։

Տանըս Հայոց՝ գերեալ ազգի,
Էած կրսկիծ անբերելի
Ամենագով հայրն բարի
Գրիգորիոսն Բզնունի։

Ի նեղութեան ժամանակի
Էր օգնական ամենայնի,
Միշտ կերակրող էր աղքատի,
Զգեցուցանող մարմնոյ մերկի։

Նման նախնոյն այն Ներսէսի՝
Եղբօր մեծին տէր Գրիգորի,
Նոր զարգարեաց զեկեղեցի
Դանձ և տաղիւ բազմազունի։

Յոյժ քաղցրըրախօս էր աղքատի,
Հեզ և խոնարհ յամենայնի,
Ոչ էր սիրող նա արծաթի,
Ունէր զպատուէրն Քրիստոսի։

Արթուն հըսկօղ անձանձրալի,
Պատուող տօնիցն տէրունի;
Հանգոյն Մաշտոցին Մեսրոպի
Եւ Գրիգորին Լուսաւորչի։

Ռետին բաշխէր մարդկան ազգի,
Զբանս գրոց պատուիրանի,
Մատամբ իւրով անխոնջելի
Դպիր վերին տեառն արքայի։

Այսօր եԹող զմեզ որբ յերկրի
Ամենագութ հայրն բարի,
Հաւասարեալ երկնից գնդի,
Ժառանգ անանցն պսակի։

520 բ Քուրձ ըզ || գեցիր եկեղեցի,
Այրի եղեր յանկարծակի,
Փեսայն բարձաւ քո ի միջի,
Ցառագաստէ քում խորանի։

Եկեալ հասին վաղվաղակի
Ազգըն մարաց, որ քուրԹ կոչի,
Սպանին զհայրն ցանկալի
Ի Ցիպնավանքն երեւելի։

Լուսոյ ծնունդք աւազանի
Դտոն ողբացէք զյանցս աղետի,
Խաւարեցաւ լոյսն տրփենի,
Ջահն/ շիջաւ նոր Սիոնի։

Էհաս ինձ սուգ անբուժելի,
Լալով գոչեմ անլռելի
Զի խրատատուն իմ ըղձալի
Այսօր Թողեալ զիս ամայի։

Նոր ձայն երգեմ ի յատենի,
Ներբողական ի չափ տաղի,
Առ քեզ խօսիմ հայր բաբունի,
ՄիԹէ հոգիս մխիԹարի։

Ո՛վ ցանկալիդ ամենայնի,
Րաբունապետ Հայոց ազգի,
Մտօք մաքուր, պայծառ հոգի,
ՄարՃովզ կոյս 'ւ առաքինի,

Րոտեալ սիրոմ Քրիստոսի,
Հովիւըդ քաջ նորին հօտի,
Վանիչ գայլոյն իմանալի
Եւ արածող ի գալարի։

Իմաստութիւնն հօր յերկրի
Զքեզ զարդարեաց իւրըն տեղի՝
Ցոբս և հոգով հայրն հանգչի,
Երրորդութիւնն անտրոհելի։

Նաւ ի ծովու այսմ աշխարհի
Ուռկան մեծին այն, որ | | | ի,
Որ որսացէր զծնունդս ախտի
Հանէր ի կեանս, որ մահ չունի։

Աղբիւր Ջըրոյն այն կենդանի
 Բըխեալ հոգովն Քրիստոսի,
 Որ ծարաւեալ մարդկան ազգի
 Միշտ արբուցէր անսպառելի։

Շնորհազարդ տանն Յիսուսի
 Դու գանձապետ իմաստիւք լի,
 Միշտ բաշխէիր, յեկեղեցի
 Ջգանձ հին և նոր կտակարանի։

Ամենիմաստ գլուխ բարի,
 Խոնարհեցար ի տապանի,
 Ակն պայծառ առատալի
 Ծածկեալ հողով այսօր յերկրի։

Կարօտելոցն աղաղակի
 Ունկդ՝ որ լըսօղ էր ամենի,
 Խափանեցար յանկարծակի,
 Թողեր մեզ սուգ անբուժելի։

Եւ երգարանդ հոգոյն մեծի,
 Որ միշտ հընչէր յեկեղեցի,
 Խըցեալ սըբով անօրինի,
 Որ խօսակից էր աղքատի։

Բամից որբոց և տնանկի
 Աջդ, որ շնորհէր տուրս ամէնի՝
 Կապեալ եգաւ իսկ ի շիրմի,
 Որ միշտ գրէր զբանս տէրունի։

Տարակուսիմ յամենայնի,
 Քանզի չունիմ իմաստ բանի
 Ջքեզ ներբողել ըստ արժանի,
 Երախտաւոր հայր հոգելի։

Էին տացուք փառք ի յերկրի
 Հօր և հոգւոյն ընդ միածնի
 Որ դասակցեաց ճրաբուն սեռի
 Այսօր զքեզ տէր բաբունի։*

Արդ, աղաչեմ զամենեսան, որք հանդիպիք այսմ տառի տեսու-
թեամբ կամ ւգտութեամբ իւիք, զվերոյասացեալըս | | |

* Ոտանավոր ողբի քառյակների սկզբնատառերով հոգվում են՝ «Գրիգոր վարդապե-
տին յԱռաքելէ նորին աշակերտէ» բառերը։

351

ԳԱՆՁ ԹԷՈԴՈՐՈՍԻ ՎԿԱՅԻ

Երևան 8908

3ա *Գանձս գրեցաւ ըստ պատշաճին*
Թէոդորոս քաջ վկային.
Երգեաց ըզսայ քաջ բարունին
Տէր Առաքել Բաղիշեցին
Վասն խնդրոյ իւր վարպետին՝
Սերենց Գրիգոր *վարդապետին։**

Ասա թէ ձայն ունիս յոճին
Հանց, որ ժողովքըդ հաւանին.
Եթէ հրմուտ չես դու սըմին՝
Նա մի ձըգտիր յանհասելին,
Որ չի լըսիս բանս գըժուարին,
Հանց, որ գըժար գայ քո սըրտին։

352

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ ՅԱԿՈԲԱՅ ՂՐԻՄԵՑՒՈՅ ԵՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԱՅԼՈՑ ԳՐՈՑ

Երևան 1114

ա

Գրիչ՝ Սանփանոս
վայր՝ Զագավանք

102բ *Փառք...որ ետ հասանել ինձ՝ յախմար և սխալագիր գրչիս* Սանփանոս *անուամբ և ձևով միայն կրօնաւոր կոչեցելոյ յաւարտ տումարական մեկնութեանս, ի յուրախութիւն ուսումնասիրաց անձանց և ի պահել անսխալ զլրումն տօնից տէրունականաց՝ զատիկն և զայլն։*

Արդ, գրեցաւ սա յաստուածաբնակ սուրբ ուխտս, որ կոչի Զագավանք, *ընդ հովանեաւ սուրբ Գետարգելիս, և սուրբ Սարգսիս՝ Կուրանց կոչեցեալ, և սուրբ աջոյս Կիրակոսի և այլ սրբոցս, որք կան հաւաքեալ։ Գրեցաւ գիրքս ի թվականիս Հայոց ՊՀԴ. (1425), ի խընդրոյ հօր վանիցս Գաւթի և նորին աշակերտի* Սարգիսի *կրօնաւորի և փակայկալի, որ ստացան զսայ յիշատակ իւրեանց և ծնօղաց իւրեանց, զի վասն բազում պատճառի ստանայ մարդ զգիրս և տայ գրել, զի մեք ապականացու և մահկանացու գոլով ոչ նոյնպէս* կանք, *մնամք, որ-*

* *Նախորդ հիշատակարանի տվյալով Գրիգոր Ծերենցը նահատակվել է 1425 թվականի մայիսին, հետևաբար Թէոդորոս վկայի մասին իր գանձը Առաքել Բաղիշեցին գրած պետք է լինի մինչ այդ։*

պէս ասէ մարգարէն՝ Պանդուխտ և անցաւոր եմք, որպէս ամենայն
հարքն մեր, ստանամք զգիրքս, զի անապական կենացն արժանի լի-
ցուք շնորհօքն Քրիստոսի, զի ասէ մարգարէն՝ Երանի, որ ունիցի զա-
103 ա ւակ ի Սիոն և ընդան ‖ եակ իցեն նորա յԵրուսաղէմ։

Արդ, գրեցաւ յառաջնորդութեան* ազգիս Հայոց տեառն Պաւղո-
սի, և յարհիեպիսկոպոսութեան մեծ Նահանգիս Արարադեան տէր Յո-
հաննիսի՝ նորընծայ ընդունակ նոր շնորհացն Քրիստոսի, զի է ընդու-
նող գեր ի վերոյ տուողէն անընդմէջաբար և բաշխող կարօտելոց
անձանց միջնորդութեամբ, զոր տէր աստուած պահեսցէ երկար ամօք
յամենայն փորձութենէ՝ հարազատ եղբօրօքն իւրովք, ամէն։ Եւ ի
թագաւորութեան Սքանդարին, որդոյ Ուսուփին Թորգոմեան, երկրորդ
Աշրափ ազգիս Հայոց և աւերող եկեղեցեաց, և ի պարոնութեան երկ-
րիս Փիր-Ղաիպի և Աւդուլի՝ Թոռանց Սահաթի։ Արդ, աղաչեմ, որք
հանդիպիք յայսմ տառիս ուսանելով, կամ ուսուցանելով, կամ ընդ-
օրինակելով յիշեցէք զվերոյգրեալդ՝ զտէր Յոհանէս, և զԴաւիթ, զՍար-
գիս փակակալ, և զայլ մի[ա]բանք տեղոյս, զի բազում երախտաւորք
են մեզ ի պէտս հոգևորի և մարմնաւորի, զոր ոչ կարեմ ընդ գրով
արկանել զերախտիս սոցա։ Ընդ նմին և զիս՝ զանարժանս, զհեղգս ի
բարին և զ<զ>արիացեալս ի չարն՝ արժանի առնէք յիշելոյ միով
աստուած-ողորմայիւ....։

Բ

Ստացող՝ Սարգիս

116 բ Զստացաւղ սուրբ գրոցս զՍարգիս մեռեալ ոգով աղաչեմ յիշել ի
տէր հոգևոր և մարմնաւոր ծնողաւք մերովք։ Այլ և զկապողք սորա
զԹոմա և զՆերսէս յիշեցէք ի Քրիստոս։

Գ

Գրիչ՝ Մաթէոս**

Զմեղուցեալ գրիչ զՄաթէոս աղաչեմ յիշել ի տէր։ Թվ. ՊՀԸ. (1429)։***

---

* Բառի վերևում, նույն ձեռագրով, գրված է՝ «ի հայրապետութեան», որ, անշուշտ, ավելի ճիշտ է։

** Մաթէոսը ձեռագրի մի փոքր մասի (էջ 111 ա—116 բ) գրիչն է։

*** Ձեռագրի կիսախորաններըը, լուսանցազարդերը և գլխատառերը նկարված են գրու-
թյունից շատ հետո՝ 1577 թվականին, այդ առթիվ ծաղկողը 27 բ էջում թողել է համառոտ
մի հիշատակագրություն։ «Ծաղկելոյ ժամանակս թիւն Հայոց Ռ. ու ԻԶ. (1577) էր, ժա-
մանակս ձըմըռն էր, Թողոյթիւն արէք, խիստ անբախտ ժամանակ էր»։

Ձեռագրի 11 ա էջում կա նաև անթվական մի հիշատակարան գրված հետագա ստա-
ցողներից մեկի՝ Գրիգոր Բաղիշեցու կողմից. «Արդ՝ ես մեղաւք լցեալ ի ծնունդս եկեղե-
ցոյ պիտակ անուն Գրիգոր վարդապետ Բաղիշեցի, ըստացայ զգիրքս զայս յիշատակ ինձ,
և ծնաւղաց իմոց՝ Ամիրաղին [և] Հռիփսիմին, և եղբաւրն իմոյ Պալասարին, քուերն իմոյ
Եփրոսինեին, և մեծ պապուն իմոյ՝ Էգիլեային։ Արդ, որք հանդիպիք սմա տեսանելով յի-
շեցէք զիս՝ զԳրիգոր վարդապետս, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ»։

Ըստ հնագրական տվյալների հիշատակարանը գրված պետք է լինի կամ ԺԵ. դարի
վերջերին, և կամ էլ՝ ԺԶ. դարի ընթացքում։

353

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՌԳԻՐՔ

Երևան 530

Գրիչ՝ Ստեփաննոս Վարագեցի
վայր՝ Զագավանք

116 բ Փառք...որ ետ զաւրութիւն և կարողութիւն տկար և մեղա-
պարտ և անարժան ծառայիս իւրոյ հասանել ի կատարումն սակաւ և
փոքր քաղուածոյս գրոցն, որ կոչի Քերական։
Արդ, գրեցաւ սայ ի սուրբ ուխտս, որ կոչի Զագավանք, ընդ հո-
վանեաւ սուրբ Նշանիս, որ կոչի Գետարգել, և սուրբ եկեղեցեացս, որ
կոչի[ն] սուրբ Գէորգ և սուրբ Կարապետ, և սուրբ զաւրավարիս և մեծ
վկայիս և նահատ[ակ]իս Քրիստոսի՝ սրբոյս Սարգսի և որդոյ նորա
սուրբ Մարտիրոսի։
Արդ, աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք սմա կարդալով կամ
աւրինակելով յիշեսցիք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զեր-
ջանիկ բաբունապետն զտէր Առաքել կոչեցեալ՝ զհանգուցեալն ի Քրիս-
տոս, որ բազում աշխատութեամբ արար զքաղուածոյս Քերականիս յի-
շատակ իւրն և ծնաւղաց իւրոց, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։
Այլ և յիշեսցիք ի սուրբ յաղաւթս ձեր զկենդանի նահատակն՝ զՍար-
գիս վարդապետն՝ զառաջնորդ սուրբ ուխտիս, զբազմերախտ հայրն
117 ա մեր, որ յետ աստուծոյ նախախնամութեանն բազում կե || րպիւ նա-
խախնամէ զմեզ հոգևոր և մարմնաւոր բարութեամբ, այլ և զինչ աւ-
րինակ և խնդրեմք՝ աննախանձաբար պարգևէ մեզ, նոյնպէս և զայս
աւրինակս շնորհեաց։ Վասն որոյ խնդրեմք յաստուծոյ՝ յամենառատ
պարգևողէն, զի տացէ նմայ յիւր առատ պարգևացն զհոգևորն և զմարմ-
նաւորն յայսմ աշխարհիս ընդ երկայն աւուրս, և յետ աստեացս զան-
ճառական պարգևքն և զմնացական բարիքն պարգևեսցէ նմայ, և
ծնաւղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց, ամէն։ Եւ յայսմ
կենցաղումս փրկեսցէ զնայ յերևելի և յաներևոյթ թշնամոյն, և ի
հոգևոր և ի մարմնաւոր որոգայթից զերծուսցէ զնայ, և պահեսցէ զնայ
խաղաղական կենաւք պարագայց ամաւք, և յետ աստեացս ելանե-
ոյ* զանսպառ բարիքն ժառանգել տայ նմայ։
Այլ և յիշեսջիք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանար-
ժան և զանպիտան ծառայս աստուծոյ զՍտեփաննոս Վարագեցիս**
զգրոց աշակերտս, զմեղաւորս և զ[յ]անցաւորս ի յամենայնի՝ զստա-
117 բ ցող և զփցուն գրիչս... || և զծնաւղսն իմ, և զեղբարսն, և զամենայն
արեան մերձաւորսն և զերախտաւորսն մեր՝ զհոգևորս և զմարմնաւորս...։

---

* Բնագրում՝ «ելանեանելոյս»։

** Նախորդ հիշատակարանի գրիչն է, ըստ այդմ անթվական այս հիշատակարանը տեղադրում ենք նրան առընթեր։

354

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

*«Սիսական», էջ 326**

Գրիչ՝ Մատթէոս
Վայր՝ Ագուլիս

[*Գրեցաւ*] յեպիսկոպոսութեան տեառն Տէրունականի, զոր գրիչն գովութեամբ կոչէ *սուրբ և երանեալ,* զի ի *նեղ և յետին ժամանակիս առաջնորդ և լուսաւորիչ է եկեղեցւոյ, և քաղցելոց կերակրիչ, և աղքատաց մխիթարիչ, գերեաց ազատիչ և ամենեցուն սփոփիչ*։ Իսկ վարդապետ տեղւոյն ըստ այնր վկայութեան էր *քաջ և արդիւնական բաբունապետ և հոգևոր հայր և վարժապետ Յակոբ*։ Յիշին և միաբանք Յակոբ աբեղայ, Բարսեղ շնորհալի գրագիր, Յոհաննէս եկեղեցպան, Ստեփանոս, հայր վանացն, յեղբայրականն կարգէ՝ Սատոն և Մկրտիչ, *որ զարդիւնքս հասարակաց կու ժողովէ յեշտեմարանս, և տնտեսս* Ցառուխ, *որ կու սպասաւորէ միաբանիցս և այլն*։ Իսկ գրողն է Մատթէոս վարդապետ՝ եղբայր խաչատրոյ քահանայի, որ և յիշէ զկարևոր քաղաքական անցս ինչ ժամանակին, զմահ [Գարա]-Եուսուֆ բռնաւորի, և զթագաւորել որդւոյ նորին Սկանդարի. *որ զի յոյժ ողորմած էր ազգիս Հայոց, եւս առաւել մեր գեղիս* Ագուլեաց, *իւր խաս արար, և մէկ տարի թարխան արար*։ Ծանուցանէ ևս զի էին յայնմ ժամանակի *առաջնորդք աստուածապահ գեղոյս աղա* Գէորգ, *լոտիս* Սահր-Բէկ, *և տանուտէր* էգիլշայ, *որ բարեպաշտութեամբն իւրեանց տածող և խնամածու էին* Ագուլեաց, *և հայր որբոց և այրեաց*։ Պատմէ և արկած ինչ. *Յայսմ ամի որ թիւն Հայոց ՊՀԴ. (1425) էր զմեր աշակերտի եղբայրըն գետ տարաւ և անյայտ արար, և անմխիթար սուգ եղև ծնողաց իւրոց և մեզ՝ յոյժ դառնութիւն, որ չէ եղել հայնց դառն կսկիծ՝ որ եղև յանկարծակի, որ տղային անունն* Յետղմուրշայ *էր, զոր տէր աստուած իւր տեսուն և երկնից արքայութեանն արժանի արասցէ, ամէն*։

355

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 2144

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Տաթև

463 բ *...Եւ արդ, գրեցաւ սայ ձեռամբ ախմար և փցուն գրչի* Կարապետ *բանի խնդրողի... ի թվականութեանս Հայոց ՊՀԴ. (1425), ի սուրբ*

* *Ղ. Ալիշանը վերապատմում է հիշատակարանի բովանդակությունը, երբեմն բնագրից հարազատորեն մեջ բերելով որոշ արտահայտություններ ու նախադասություններ։ Ալիշանի վերապատմած հատվածները տալիս ենք շեղագրով, իսկ հիշատակարանից անաղարտորեն բերված հատվածները՝ սովորական գրով։*

ուխտս Տաթևի, առ դրան սուրբ տաճարացս տիրամաւր Աստուածածնի,
և Ստաթէի սուրբ առաքելոյն, և սուրբ Գրիգորին, առ ոտս մեծ բա-
բունապետին Մխիթարա: Արդ, որք հանդիպիք այսմ տառիս տեսա-
նելով կամ աւրինակելով, յիշեցէք ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր զսուտ-
անուն քահանա զԿարապետ, և զհայրն իմ զՄկրաիչ քահանայն, և
զմայրն իմ զՇղիսարեթ՝ զփոխեցեալսն ի Քրիստոս, և զայլ ամենայն
մերձաւորսն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս։ Այլև զգորովագութ հո-
գևոր հայրն իմ՝ զբարերարն և զյոյժ երախտաւորն՝ զանյաղթ փիլի-
սոփայն և զխարանազգեաց ճգնաւորն զՅակոբ կուսակրաւն աբեղայն,
որ առաջնորդ եղև ինձ ի յամենայն բարիս ոչ միայն բանիւ, այլ և
գործով, որոյ փոխարէնն ոչ է ի մէնջ և յայսմ աշխարհիս, այլ յաս-
տուծոյ ի հանդերձեալն։ Այլ և դհամշիրակ և զմիաշունչ զհայրն իմ
հոգևոր և զեղբայրն գթաւոր զԹումա քահանայն՝ զաշակերտն և սի-
րողն բանին Յիսուսի, որ զաւրինակն շնորհեաց և զցանկ գրոցս և զա-
մենայն երկաթագիր որ ի սմա՝ [մա]կագրեաց, և ինձ աւգնական և
յորդորող եղև, հանապազ ակն ի վարձահատոյցն ունելով՝ ի Քրիստոս,
463 բ որ ասաց՝ Որում արարէք ի փոքրկանցս՝ ինձ արարէք։ Այլև զգեոա ‖ -
բոյս կուսակրաւն քահանայն զԹորոս՝ զխաչաչարչար մշակն և զկեն-
դանի նահատակն, որ յոյժ չարչարեցաւ և զԹուխթն կոկեաց, որոյ
յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Այլ և զաւագ սարգաւ[ագ]ունս՝ զեր-
կոսին եղբարսն՝ զՇղիայն և զՍարգիսն, որ և նոքա յոյժ աշխատեցան
ի սպաս առնելն, և ի ջուր բերելն, և ի ճրագ վառելն, զի վառեալ լապ-
տերօք Քրիստոսի հանդիպեսցին։ Այլ և զծերունի հայրն իմ զՍարգիս
միայնակեցն, որ է պանդղտակից մեզ և սպասաւոր և բազում կեր-
պիւ օգն[ակ]ան՝ ի բարի մտաց մի մոռանայք....։ Գարձեալ, յերես
անկեալ աղաչեմ զհեզութիւնդ ձեր անմեղադիր լինել սխալանաց և
վատութեան գրիս, զի յոյժ կ[ար]օտութիւն ունէի սուրբ գրոցս, և
բազում աշխատութեամբ այս չափ կարողացայ...։

356

ԱՒԵՏԱՐԱՆ

Տ. Պալեան, «Ջեռագիրք Կեսարիոյ վիճակին», № 4,
«Լոյս» շաբաթաթերթ, 1905 թ., էջ 518—519

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Բերկրի

Փառք...որ ետ կարողութիւն տկար բնաւորութեան մերոյ հասանել ի վերջ սուրբ աւետարանիս...ի խնդրոյ աստուածապատիւ և քրիստոսափափաք սրբասէր աբեղային Մարտիրոսին և հարազատ եղբաւրն նորին Մխիթարին, որ յաւժար կամաւք և առատ սրտիւ ստացան զսա ի հալալ արդեանց իւրեանց....։

Արդ, գրեցաւ սա ի լուսազարդ և գեղեցկայեզց աստուածընկալ և քրիստոսաբընակ անապատիս տէր Յուսկայ որդւոյ, ի գաւառիս

Թերկրոյ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս՝ սուրբ մաւրս լուսոյ տիրամաւր Աստուածածնի կուսին, և սուրբ Կարապետին, և սուրբ Ցարութեանս, և սուրբ Գերեզմանաց, և սուրբ տէր Ցուսկան որդւոյ Ստեփաննոս վարդապետի։ Ընդ որս և ես՝ անպիտանս ի մանկանց եկեղեցւոյ սուտանուն կրաւնաւորս Յակոբ, անուամբ միայն և ոչ գործով գծող գրոյս, որ սակաւ ինչ տաժանմամբ երկոց գրեցի ի դէմք քարտիսիս, պաղատանս ձեզ ընծայեմ յիշել և զմեզ, և զհոգեոր և զմարմնաւոր ծնաւղքն մեր, զերջանիկ և զերա[նա]շնորհ քարոզքն կենաց՝ զարժանիքն յիշման զերախտաւոր հարքն մեր զՄկրտիչ վարդապետ զառաջնորդ սուրբ ուխտիս և զՄելիքսեթ վարդապետն, որ բազում բարութեանց մեզ պատճառ եղեն. և զայլ ամենայն միաբանք սուրբ ուխտիս՝ վարդապետաւք և կրաւնաւորաւք, ընդ սարկաւագունս և միայնակեցունք, և այլ գործաւորք, որք աշխատին առ հասարակ ի դուռն սուրբ եկեղեցւոյս, ընդ ԽԸ. (48) ոգի, որ և պահեսցէ Քրիստոս աստուած անվորձ։

Գրեցաւ քարոզութիւն սուրբ աւետարանիս... ի Թուականութեան ՊՀԴ. (1425), և ընծայեցաք տիրամաւր Աստուածածնին ի վանս Խառաբաստայ, զոր տէր աստուած վայելել տացէ յամենայն ժամանակի ի դուռն սուրբ Աստուածածնին, ամէն։

357

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 1616

Վայր՝ Արծկէ, Առբնճիկ գիւղ

328 բ ...Արդ, կատարեցաւ հոգելից մատեանս ի Թվականիս Հայոց ՊՀԴ. (1425), ի յընտիր աւրինակէ, ի յերկիրս Արծկու, ի գ[ե]աւղս Առբնճկուս, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիս և սուրբ Գէորգեայ զաւրավարիս։

358

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2523

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Հիզան

282 բ Ո՛վ լոյսերամից դասք, որք հանդիպիք լուսափայլ մարգարտաշար ափիս ժողովեալ բազում անգին ակունք ուսումնասիրաց, թէ կարդալով, թէ աւրինակելով, թէ աւկ[ա]ելով, յիշման արժանի առնէք զՍարգիս քահանայ, և զծնաւղս իւր, և զամենայն արեան մերձօրսն, և լի բերանով ասէք զտէր ողորմեայն, և ինքն, որ առատն է ի տուրսն և զաւարթ ի բաշխելն՝ տայ յամենունակ մառանէն յիշողացդ և յիշեցելոցս միահամուռ զիւր պարգեքն և զարքայութիւնն, ամէն։

Կազմեցաւ վերըստին գիրքս այս ի Հիզան քաղաք, ի Թվական ՊՀԴ. (1425)։*

359

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Փիրդ. Նոտ. 78, Տարօն, Առաքելոց վանք

Գրիչ՝ Թոմայ
վայր՝ Բարի-Ձորի վանք (Հիզան)

Արդ, ես վերջինս խնդրող բանի,
Որ եմ տրուպ յամենայնի,
Փափագանօք զտառս գրեցի
Նեղ և անձուկ ժամանակի,
Ընդ հովանեաւ Աստուածածնի,
Որ Բարի-Ձոր անուն կոչի,
Ի Թուականիս ութհարիւրի
Եօթանասուն և չորս ամի (1425)
Ձեռամբ ... Թոմայի:

360

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 5955

Գրիչ՝ Վարդան.
վայր՝ Մոկաց երկիր, Սպատ ուխտ.

ա

329 բ ... Աւարտեցաւ վարգափըթիթ անուշահայն և երգարան սուրբ Շարակնոցս ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի՝ Վարդան ունայն աբեղայի, ի խնդրոյ սրբասէր և ժրաջան Յոհանէս քահանայի, ի Թւականութիւն Հայոց ՊՀԴ. ի հայկազեան սեռիս տումարի (1425), ի դառն և նեղ ժամանակիս, որ բազում մորմոք և տրտմութիւն եկն ի վերայ մարդկաց , որք կոտորեցան անմեղ գառինք վասն ծովացեալ մեղաց իմոց։ Գրեցաւ երգաբանող սուրբ Շարակնոցս ի յերկիրս Մոկաց, ի սուրբ ուխտս որ կոչի Սպատ, ընդ հովանեաւ Ամենափրկչի, և սուրբ Աստուածածնի, և սրբոյն Կարապետի, և յայլ միաբան եղբարց իմոց, որ աստ կան բնակեալ և կան ի սպասու սուրբ ուխտիս, զոր տացէ տէր Աստուած զիւր ողորմութիւնն, ամէն։

330 ա Արդ, ես՝ Յոհանէս քահանայս ցանկացայ աստուածային բուրաստ-

---

* Ձեռագիրն ընդօրինակված է 1425 Թվականից տասնամյակներ առաջ, հավանաբար ԺԴ. դարի կեսերին։ Գրչից պահպանվել է միայն մի փոքրիկ հիշատակագրություն, որ-տեղ ասված է. «Ո՜վ հայր պատուական, ողալանաց բանից մի մեղադրել, զի շտապով գրեցաւ և յորժամ առցես զգիրս զայս ի սուրբ ձեռին քո, Թողութիւն մեղաց խնդրեա ի Քրիստոսէ սակաւ գծաւղիս՝ Գրիգորիսի մեղապարտի, և իմոց ննջեցելոցն» (էջ 222 ա)։

տանիս փափագմամբ սրտիւ, խոու գրել զՇարակնոցս յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց՝ հաւրն Թադէոս քահանայի և մօրն իմ Շուշանայ և կնոջն Մինայի, և զաւակացն Գորգկայ, և Շուշանա, և Արղունի, և ամենայն արեան մերձաւորաց իմոց։

Արդ, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ օրինակելով՝ լի սրտիւ և բոլոր հաւատով աստուած-ողորմի ասացէք Թադէոս բարէսէր քահանային, և որդւոյն իւր Յոհանէսի, և քւերցն Նազխաթունի և Մինայի, և քւերորդոյն Սարգսի՝ քաղցր և անուշատիպ մանգան, որպէս զծաղիկ նոնենեաց հարեալ ի կարկտէ, և բազում տրտմութիւն և սուգ եբեր ի վերայ ծնօղաց և սիրելեաց իւրոց, զոր տէր աստուած գասեսցէ զնոքա ընդ սուրբ քահանայիցն և սրբոց մարտիրոսացն, ամէն։ Ի սոյն ժամու անպիտանս ի մանգանց եկեղեցոյ և բազմավէրս
330 բ ի սուրբ կարգաւորաց՝ փծուն գրիչս Վարդան անուն, յերեսս ան||-գեալ աղաչեմք յով որք հանդիպիք սմա՝ անմեղադիր լերուք խոշորութեանց և սղալանաց սորա․․․։

Ծաղկող՝ Յոհանէս

Բ

330 բ Հոգով վառեալ ի սէր նոցին
Եւ ետ ծաղկել զծաղիկ սորին,
Զոր և պա[յ]ծառ յո[յ]ժ երեւին,
Քան զայլ գրոցս, որ հոչակին։
՚Ի իւսեմ Յոհանէս քահանայի զտէր ողորմի,
Հանդերձ ծնօղօք իւր և զարմի,
Եւս և որդոցն իւր գեղեցկի,
Որ իւր անուն Ստեփանոս կոչ[ի]
Հա[յ]ցել աւուրս* երկարելի։
Ո՜վ, վեհագոյն եղբարք բարի,
Մանկունք վերին Նոր Սիոնի,

Յովանէս ծաղկող աբեղայս, որ անու<ան>ամբ եմ աբեղա և գործօքս խաբիբա, ո՜, ո՜հ, ո՜հ, զՈվանէս մականուն Լենկանց,

Առ ոտս անգեալ արտասուայլի,
Զձեզ աղաչեմ յար ըզգձալի,
Ցիշել բանիւ տէր ողորմի
Զմեզ, մերայնովք հանդերձ ծնօղի։
Լերուք և ինձ քաղցուք բարի,
Առնել յիշման զՈվանէս արժանի
Ի մեղսամակօրդս յոյժ եղկելի,
Վա[տ]թարս մեղաւք ի լի։

---

* Բնագրում՝ շուրջս։

361

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4007

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Խարճոց գիւղ

630 ...Եւ արդ, ես՝ ունայնս ի բարեաց գործոց՝ սուտանուն գրչակս
Յոհաննէս... ըստ իմում տկարութեանս գրեցի զսա՝ զսուրբ աւետա-
րանս, ի գեաւղս որ կոչի Խարճոց, ընդ հովանեաւ սուրբ Քրիստափո-
րի։ Եւ արդ, յայսքան և յայսպիսի բարէվայելուչ և մեծայփառ սրբ-
631 բոցս գումար բարէխաւս աշխարհի || և ապաւէն ապաստանի քաւու-
թիւն մեղուցելոց, զոր գիմեալ մեծաւ յուսով բարի արմատոյ շառա-
ւեղն՝ կատարեալն հաւատով և գործով բարեաց Սիմէոնն կամեցաւ
ստանալ զաստուածախաւսս սուրբ աւետարանս և ետ ի դուռն սուրբ
Խաչիս, և թէ ոք ծախ առնէ՝ ի վերա բանն, զոր տէրն հրամայեաց
Յուդայի և Կաենի՝ հանդչի ի վերա նորա և այլն ամէն, ուր լալ աչա-
ցըն իցէ և կրճել ատամանց...։
632 ... Եւ արդ, ես՝ Սիմէոնն և Մինայ, ետու գրել զսուրբ աւետարանս
յիշատակ ծնաւղաց մերոց և ամենայն արեան մերձաւորացն, որ և
ինձ մասն ընդ նոսին լիցի։ ամէն։

Ի ութ* հարիւր Հայոց թուին
'Ի եւթանասուն չորս** յաւելուածին (1425),
Դառն և ի նեղ ժամանակի,
Ի հայրապետութիւնն Հայոց տէր Դաւթի,
Ի ղանութիւն Թավրիզոյ՝ Ըսքանդարի,
Որ աւար էառ զաշխարհն Հեքարի:
Որ և կրկին զաղերսալին
Ձեզ առաջի արկեալ բանին,
Զերեսս դնեմ ձեզ ի մոխրին,
Ցիշել յաղաւթս՝ զվերայգրելին՝
ԶՅովաննէս ու զՇնոռնոր,
633 Զփոխեցեալ || լքն յերկինս՝ զՍիմէոնն
Ու զՄինա՝ զհոգով արին,
Զթղթի կոկաւղն,*** որ ի կարգին,
Ամէն արեան մերձաւորին...։
Եւ ծնաւղացն իմ ըստ մարմնի,
Որ Մարտիրոս անուն կոչի,
Եւ հաւրեղբարն Յովանի,

---

* Բնագրում՝ «Ը» (8)։
** Բնագրում՝ «ՀԴ» (74)։
*** Նույն թղթի կոկողի մասին 228 էջի հիշատակագրության մեջ ասված է՝ «Յիշեցէք ի Քրիստոս զԱռաքել փոքր երէց, որ աշխատեցաւ ի կոկել թղթերս և ի հոգս եկաց...»

Որ փոխեցան նոքա ի բարի։
Կարճեալ աւուրք են և ոչ լի,
Մեռ սուգ առաւ անպաամելի
Եւ այլ բազում քրիստոնէի,
Զի ոչ գտայ նոցա նմանի,
Այլ և բնաւ յո[յ]ժ եմ հեռի,
Վասն այսորիկ յամենայնի
Ոչ կայ հանգիստ մեզ յաշխարհ[ի],
Եւ զհաւրեղբայրն իմ զկայլ ի մարմնի՝
Մկրաիչ *կրաւնաւորի,*
Որ քան զծնաւզ էր աւելի,
Շատ աշխատանք առ իս ունի,
Տէրն է վկայ ամենայնի։
Նոյնպէս և ձեզ այնպէս չափ[ի],
*Որպէս և դուք մեզ ամէնի։**

362

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Փերգ. Նոտ. 79—80, Վան

Հետ. ստացող՝ Աւետիք
վայր՝ Դարանաղեաց գաւառ, Կապոսի վանք

...Տարտամս և տառապեալս ոգւով՝ Աւետիք *աշակերտ բանի, ի* Դարանաղեաց *գաւառէ, ի վաղուց հետէ փափագեալ ըղձայի այսմ վայելուչ...աստուածաշունչ հին և նոր կտակարանացս։ Իսկ ի վախճանել հոգելից և տիեզերահռչակ մեծ րաբունապետին իմոյ և վարժապետին* (Գէորգեայ)՝ *ժառանգեաց զսա եղբօրորդի նորին* Եզեկիէլ *սարկաւագ, և կամեցեալ նորա վաճառել, որ և ես անձեռնհաս էի և անարժան. կամակցութեամբ և օժանդակութեամբ բազմերախտ հօրս իմոյ հոգևորի տէր* Սահակ *կրօնավորիտ բանասիրի և երաժշտապետի... [որ] տեսեալ զտենչանս իմ առ այս անգին մարգարիտս՝ օգնական եղեալ յորդորեաց զմեզ։ Որ և վաճառեալ զամենայն ինչս մեր, զոր ունէաք ի նախնեաց և յազգականաց, և խնդութեամբ ստացաք զայս լուսատու մարգարիտս և զաստուածային գանձս։*

* *Համանման բովանդակությամբ մի այլ ոտանավոր հիշատակարան էլ գրել է Թովել է 299 էջի վրա։ Այնտեղ նա խնդրում է, հիշել նաև իր ամուսնուն.*

«Եւ ամուսնին իմ՝ Նաւարպի,
Որ փոխեցաւ ինքն ի բարի...»։

Հայտնում է նաև, որ իր հայրն ու հորեղբայրը մահացել են չորս տարի առաջ.

«Զորբորդն եմուա ի յայս ամի,
Որ փոխեցան իւրեանք ի բարի,
Սուգ մեզ թողին անանցելի...»։

Արդ, որք ժառանգէք զսա յետ մեր՝ ողորմելով մեղուցեալ ոգւոցս, ողորմութիւն հայցեցէք ի Քրիստոսէ և յիշման արժանի արարէք ի բարին։ Մանաւանդ զերջանիկ վարժապետն իմ զԳէորգ լուսաւոր հոգին, և զուսուցիչն իմ զտէր Սահակ, և զարետմբ նահատակեալ հայրն իւր զՍեղբեստրոս քահանայն։

Եւ ստացաք զամենագով աստուածաշունչս ի թուականիս Հայոց ՊՀԴ. (1425)․ ի դառն և ի դժնեայ ժամանակիս, զի մեծ պատուհաս պատահեցաւ Եկեղեաց գաւառիս, քանզի ի նոյն ամի յորում փոխեցաւ առ Քրիստոս հռչակելի րաբունապետն մեր Գէորգ՝ եկն տէրն Ամքայ ի վերայ Եզնկիս, և ... հրդեհեաց զգեղաւանսն առհասարակ և զվանօրայս, ընդ որ և հռչակելի մենաստանս մեր Կապոսու վանքս հրդեհեալ աւերեցաւ։ Եւ երեք ամ ի խսար պահեաց զքաղաքն, և առեալ ապա խաղաղացոյց, և խնամօքն աստուծոյ սկիզբն եդև շինութեան գաւառիս։ Որ և մեք, ողորմութեամբն աստուծոյ նորոգեցաք զսուրբ անապատս պայծառ շինուածով՝ առաւել քան զառաջինն, զժամատունըն, և զխցերն, և զտնտեսատունն, և զայլ ամենայն շինուածսն, որ և խնամօք բարերարին աստուծոյ մնասցէ սա անխախտ ի վայելումն սրբազան կրօնաւորաց և յիշատակ մեզ՝ անարժանիցս և ամենայն աշխատաւորաց ի սմա, ամէն։

363

ՃԱՇՈՑ

Վենետիկ 630, «Այրարատ», էջ 322, Մ. Տ. Մ.

Դրիչ՝ Յովանէս
վայր՝ Եզնկայ

Ես՝ Յովանէս երէց Սելահեցի գրեցի զսուրբ գիրքս և ծաղկեցի և կազմեցի վասն սուրբ կաթողիկէին, ի քաղաքս Եզնկայ:

Ստացող՝ Պանտալեոն, և եղբայրն Ներսէս քահանայք, և [միւս] եղբայրն Յովհաննէս ոսկերիչ. ի ժամանակս Օրման պակին օգնականութեամբ Դէմիրնա-խաթունին և Եաղուբ աղային, որ եղբօր հօրն որդի պարոն Խութլուշին և պարոն Սուլէմանին:

Ի թվ. Հայոց ՊՀԴ. (1425)։

364

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղէմ 1617*

Վայր՝ Համշեն, Քոշաենց վանք

[Ընդօրինակված է ՊՀԴ. (1425) թվին], ի խնդրոյ պարոնաց պարոն Դաւթի, ի դրան սուրբ Աստուածածնի, որ կոչի Քոշաենց վանք,

* Ձեռագրի սկզբի մասը, ուր գտնվում են Գր. Տաթևացու քարոզները, ընդօրինակված է 1422 թվականին, «ի խնդրոյ պարոնաց պարոն Առաքելին»։ Վերջին մասը ապասպելախառն մի պատմություն է «Վասն թագաւորելոյ Թէոդոսի» խորագրով։

ի գաւառն Համշինու, ի հայրապետութեան տէր Պօղոսի և ի թագաւորութեան Սքանտար պակին, ի պարոնութեան պարոն Դաւթին:*

365

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՑՎ 108 (1400), հտ. Ա, էջ 485–486

ա Հետ. ստացող՝ Էվաչայ

299 ա ...Սոյն կերպիւ և ձևով եղեալ շնորընկալ ի հոգոյն այր աստուածայկոչ և արժանավոր՝ պարոն Էվաչաս, որ գնեցի ես զայս սուրբ ավետարանս իմ հալալ արդեանցս, որ այլոց իրք մ' աւգնութիւն չի կայ, գնեցի սայ՝ յաւգնութիւն ինձ և իմ տան և տղայոց։ Եւ ետու զայս սուրբ ավետարանս ի վերի սուրբ Աստուածածին, ի տէր Վարդանայ յեկեղեցին՝ զաւակ ի Սիոն և ընդանի յԵրուսաղէմ, յիշատակ ինձ պր. Յեւաչիս, և իմ հաւրն Խաչերեսին, և իմ մաւրն Մելիքին, և ի[մ] մաւրն (°) Խէր-Խաթունին, և իմ կողակցին Շնոֆոր-Խաթունին, և իմ նորայրող[րոջ] զաւակին Յովանէսին, և իմ քուրոջն Դիլշատ-Խաթ[ունին], և իմ փես[այ] պր. Մուսեխին, և իւր գոտերն** Լալ-Խաթ[ունին], և Խոյանդին, և ԳորքիՆ՝ յաստուած փոխեցելոյն, և ի Քրիստոս աստուած հանգուցեալն իմ եղբաւրն Խարըշին, և իմ որդոյն Խարըշին, և Յովանէսին, և Դովլաթին, և զամենայն ազգատոհ[մ]ն իմ առհասարակ ի Քրիստոս հանգ[ուց]եալ. և զԾտիլ-Մէլիքն և զԽարշայս յիշեցէք՝ իմ հոգոյ որդի է...։

Ո՞վ եղբարք, ով ոք իշխանութիւն չունի, ազւսէ (°) իմ ազգէ, կամ այլոց ազգէ, որ ասէ կամ իմս է, կամ ավէք, կամ ով ոք ծախէ կամ գրավկանէ՝ չունի հրամանք ի Քրիստոսէ. զի իմ հալալ արդ[ե]անցս գնել եմ և տվել սուրբ Աստուածածնին ողբ,*** իշխեցողն սուրբ Աստուածածինն է. ով որ դաւի անաւղ լինենայ, նայ ունենայ զանէծքն սուրբ աստուածածնին և զտիրասպան քահանայից, և զմասն Յուդայի, և զանէծքն զհայենի, և ՅԺԸ (318) հայրապետացն առցէ, կամ ջնջելով, կամ թուղթս կտրելով՝ անիծած կեն[այ] ի սուրբ աւե-

---

* Ձեռագրում այս նույն պարոն Դավթի անունով կա մի ուշագրավ գրություն, որ բերում ենք ստորև.

«Ցանուն աստուծոյ և սուրբ Նիկոլաոսի՝ պարոն Դաւիթ, յառաջն գուն զայս ուխտէ աստուծոյ, որ ճամփորթ համար լաւ լինաս ու զճամփորթի ապրանքն հանց պահես՝ որպէս զաստուծոյ տված հոգիդ, ով որ լինա՝ թէ քրիստոնեա և թէ այլազգ, ատ քեզ ավանդ։ Եւ զինչ քեզ ես Շամսադինս ավանդ գնեմ՝ զայն առնուս, այլ աւելի տամահութիւն չլինայ։ Վրայ այս բանիս գրէ մօտ ի Սպերու տէրն, որ բեռն բեռ բռնէ, թամպալիթ՝ թամպալիթ, ելման՝ ելմայ, խուրճին՝ խուրճի, պոզչան՝ պողչայ. եւ բեռին տալիքն ընդ սազվաթ ընդ ամեն խարճ, մինչև Բասենու սինօռն՝ զան որ պիտ առնուն՝ զան յիստակ գրեն, որ [ըթա]-մահ և ստութիւն չլինայ ի մէջն»։

** Տպագրում «գաաերն»։

*** Իմա՝ «վակուֆ»—եկեղեցուն նվիրված անշարժ կալվածք, գույք։

տարանէս. կատարողքն աւրհնեալ լինին ի Քրիստոսէ աստուծոյ մե-
րոյ, ամէն։

Գրեցաւ թվին Հայոց ՊՀԴ. (1425), սեկտէ[մ]բերի Բ. (2)։

Բ

191 Քրիստոս աստուած քո սուրբ չարչարանացա բարեխաւսու-
թեամբ ողորմեայ պր. Յեւատչիս, և իմ ծնողացն. ով զմեզ յիշէ՝ Քրիստոս
զինքն յիշէ յիւր արքայութիւն։

Եւ զիս յիշեայ, ով սուրբ ընթերցող, զանարժան զԱլէքսանոս
քահանայս և զՄկրտիչ քահանայս, որ մենք այ[լ] հանտբիպեցաք, որ
պր. էվաչան զաւետարանս գնեց...։

366

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երևան 2063

Յիշատակարան վերջին ստացողիս

351ա Արդ, ես՝ վերջինս մեղօք լցեալ
Եւ ի բարեաց թափուր մնացեալ
Զձեզ աղաչեմ յերես անգեալ
Զսուրբ քահանայդ, որ հանդիպեալ,
Զեր սուրբ յաղօթսդ ըզմեզ յիշեալ,
Արտի մտօք բարին խնդրեալ,
Ի յարարչէն, որ փոյթ ի տալ՝
Սանփանոսիս մեղօք լցեալ,
Զի ես վաղուց 'ի ցանկացեալ
Եւ սուրբ գրոց կարօտ մնացեալ,
Տէրն իմ Յիսուս յիս գթացեալ
Եւ զիմ փափաքս կատարեալ,
Տեսի սուրբ գիրքս զարդարեալ
Անգին ակամբ մարգարտաշար,
Ազուլթ, զմրուխտ ու ակն գոհար,
Լոյս համասփիւռ և կառավար,
Սա բուրաստան արփիափայլ,
Անմահական պտղօք լցեալ,
Ի սուրբ հոգւոյն շնորհիւ լցեալ՝
Անմահական հոտ մեզ բխւրեալ,
Մարգարէիւքն է հաստատեալ
'Ի առաքելօքն է ամրացեալ,
Հայրապետացն է ճոխաբառ
Եւ բաբունեացն ջահ ի վառ։
Իմաստասէրքն են զարմացեալ,
Թէ անչափ շնոր[հքն, ո]ր աստ հեղեալ,

Հերձուածողքն են կարկամեալ
Եւ բանսարկուն տարէկուսեալ։
Արդ, ես մեղօքս յերես անկեալ
Ձձեզ աղաչեմ արտասուաբար
Ըղբանասէրքըդ հաւասար,
Որք հանդիպիք աստ ի կարդալ,
Թէ ուսանելով, թէ աւրինակել՝
Ի սուրբ յաղօթս ըզմեզ յիշել,
Ի սուրբ սրտէ զտէրն աղաչել,
Ի փորձանաց զմեզ պահել։

Այլ և զծնօղքն մեր զՀայրապետ քահանայ և զՆազխաթունն՝ փոխեցեալքն ի Քրիստոս, և զհայրազատ եղբայրն մեր զՍարգիս քահանայ, և զտիրասնունդ որդիքն իւր զՄարտիրոս, զՀայրապետ, զՅովանէս, զՄելքեսեդ սարկաւագ և զՇլուկն, նաև զդեռաբոյս որդին մեր զԳրիգոր, և զՅոհանիսիկն, և զմայրիկն իւր՝ զփոխեցեալք ի Քրիստոս, զի արարիչն աստուած հանգչի ի հոգիս նոցա, և զամենայն արեան մերձաւորքն, նաև զամենայն քրիստոնեա, այլ և զքվերդուստրն մեր և զմայրն։ Ցիշեցէք ի Քրիստոս զխոճա Մաթէոսն, և զՌւնուսն, և զԱվ-բանբէկն, որ աւգնական եղեն գնոջն և զՆւայ-Խաթունն՝ զքվերդուստրն մեր, որ յօժար կամօք աւգնական եղև, նաև երախտաւորքն մեր, և ուսուցողքն մեր. հոգևոր և մարմնաւոր ծնօղքն իմ յիշեցէք ի Քրիստոս և լի սրտիւ ասացէք զաստուած-ողորմին, և ինքն որ տէրն է տէրանց և աստուածն աստուածոց՝ Ցիսուս Քրիստոս, յորժամ նստի [ի դատաստան], առհասարակ, ողորմեսցի յիշելոցդ և յիշելոցս, և ասէ՝ Եկայք օրհնեալք։

Թվ. ՊՀԴ. (1425) գնեցօ։

367

Ք Ա Ր Ո Զ Գ Ի Ր Ք

ՀԱ, 1892, էջ 83, Ճեմարան Արևելեան լեզուաց, 3, Cod. Arm. III. 5. 3.

Հետ. ստացող՝ Դանիէլ

Այլ և զվերջին ստացող սուրբ մատենիս զԴանիէլ պիտակ աշակերտ և զկուսակրաւն աբեղայ, և զծնաւղսն իւր զհայրն իւր զՊլտուխ՝ զփոխեցեալն ի Քրիստոս, և զմայրն իւր Զըմրախտ-Խաթունն և զեղբարսն իւր զՄարգարէ կուսակրաւն աբեղա, և զԽտըրշահն, և զԹումայն. այլ և ըստ հոգոյ զծնաւղսն իւր՝ զաէր Յովաննէս քաջիմաստ քահանա և զբազմերախտ հայր իւր ըստ հոգոյ զԲարաքշայ, և զամուսինն իւր զԹամար-Խաթունն, և զայլ ամենայն երախտաւորսն իւր հոգևոր և մարմնաւոր՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ով ոք [որ] տե[ս]անէք, կամ ընթեռնուք, կամ [ընդօր]ինակէք, զի խիստ փ[ափա]ք[ա]նաւք էա[ռ] զգիրքս [յ]ի[շատա]ակ իւրն և ծնաւղացն, և յամենայն

արեան մերձաւորաց. յիշեցէք յամենայն սրտի մտաւք, և աստուած զձեզ յիշէ, և սխալանաց ձերոց ներեսցէ, և զԾնկայքն ձեզ լսելի արասցէ։

Եւ զՇմաւոն յետնեալս յամենայնի,
Որ զյիշատակս գրեցի,
Դու զիս յիշեա միշտ ի բարի,
Ո՜վ ցանկալի եղբայր իմ նազելի,
Զի արգեալ ես դու ամէն լեզուի,
Եւ բարգաւաճեալ ի հանդիսի՝
Սուրբ Դանիէլ, որ քո անունդ է մարգարի
Ցիրաւաբարն Շուշանի,
Դու ընկալցիս պսակ անթառամելի
Եւ մասն մի մեզ անգանի,
Որպէս կնոջն այն այլազգի,
Որ ի փշրանաց տեառն կերակրի։
Դնեցաւ գիրքս ի Թվ. ՊՀԴ. (1425)։

368

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

ՄՑՀ, հտ. Ա. Թ, էջ 27

Գրիչ՝ Յակոբ·
վայր՝ Հերմոնի վանք·

437 *...Կարաւզութեամբն աստուծոյ սկսայ և շնորհիւ նորին աւարտեցի տկար և ախմար մտաւք և անձամբ, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ տիրեալ էր աշխարհիս Հայոց ազգն հագարու Թուրքման և զամենայն աշխարհս ի սուր, ի սով և ի գերութիւն մաշեաց, որ ոչ ուստէք ունէաք մխիթարութիւն, բայց միայն զՔրիստոս և զնոցին անսուտ խոստմունքն·*

Արդ, գրեցաւ գիրքս ի գաւառիս Եղեգեաց, *ի վանքս* Հերմոնի, *ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին և սուրբ Յակոբայ՝ կենաց բարեխաւսին, ի լաւ և յընտիր աւրինակէ Խլկցի, ձեռամբ* Յակոբ *մեղսամակարդ անձին և սուտ անուամբ քահանայի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի թուականութեան հայկազեան տոմարի ՊՀԵ. (1426). ...*

36

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 5418

Գրիչ՝ Ստեփանոս։

...Եւ արդ, ես՝ անարժանս ի մանգունս եկեղեցոյ Ստեփանոս
291բ *գրիչս... ‖ գրեցի զսուրբ աւետարանս ի յիշատակ եղբաւրն իմոյ* Կա-
րապետ *քահանային, որ և ինձ մասն ընդ նմին լիցի, և ծնողացն
մերոց, և ամենայն արեան մերձաւորացն մերոց, այլ և զաշխարհա-
կան եղբայրս մեր* զՅովանէս, *որ և սա փափաքէր սուրբ աւետարանիս
աւարտման, աղաչեմ յիշել զնայ, և զկողակիցն իւր* զՍանդուխտ, *և
զդեռաբոյս զաւակն իւրեանց* զՄկրտիչ, *զոր պահեսցէ Քրիստոս աս-
տուած յերկար ամաւք և բազում ժամանակաւք, և զհանգուցեալ
քուրիկն իմ* զԱնայ։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թվականիս Հայոց ՊՀԵ. (1426)։

Ի դառն և ի նեղ ժամանակիս,
Ի զանութիւն Սքանդար *թաթարիս,*
Որ աղաղակ մեր և չարիս

Ասգարարեալ անաւրինիս,
Ըստ Նախագրեալ մարգարէիս,
Ըզկծեցոյց զմեզ յաշխարհիս։
Շատ Թագաւորք և խրոխտալիս,
Տէր քաղաքաց մեծագունից,
Զտունս Հայոց զերթ զանապատ արար, գերիս,
Միայն չեմուտ ի յայս տեղիս,
Բայց դողացոյց զամենեսին,
Եւ ուր եհաս ոտքն չարին,
Սրոյ ճարակ ետ զնոսին։
Ոմանք սովով մեռանէին,
Եւ այլք սրով կոտորէին։
291 ա Այլ ոչ գրով [րմն]ս ճառի
Եւ ոչ բանիւ լեզւաւ պատմի։
Ի յայսմ ամի նեղ և դառին.
Եղև գրումն այսմ տառին,
Որ և կրկին զաղերսալին,
Զեզ առաջի արկեալ բանին,
Զերեսս գնեմ ձեզ ի մոխրին,
Յիշել յաղաւթս զվերագրելին՝
ԶԿարապետն՝ փոխեալ յերկին,
Եւ զեղկելի եղբայրս նորին,
Զհայրն և զմայրն, որ ըստ մարմնին,
Ամէն արեան մերձաւորին,
Ընդ նոսին և իմս կցորդեսցին
Սրտահառաչ ձայնիւ ուժգին,
Ունկն դնելով խոնարհագին
Զձեզ աղաչեմ լսել և գիմն,
Որպես և մեծ վարդապ[ետին]
| | | *ցաւակից եղև չարին,
Այն կռամով Թագաւորին,
Որ առ Նմայ Ներողութիւն | | | **
Եւ ծնաւղացն իմ | | |
Եւ իմ եղբաւրն | | |
Էր քահանայ | | |
Անկեղծ ասեմ ըզ | | |,
Որ փոխեցաւ Նայ ի յ | | |
Կարճեալ աւուրբք ի | | |

* 5—6 տառի չափ տեղ՝ պատռված։

** 291 էջի Բ. սյունակի վրա նորոգման ժամանակ, վերևից մինչև միջին մասը, Թուղթ են փակցրել։ Առաջին 8 տողերից կարդացվում են միայն անորոշ բառեր (դրանք չենք բերում), իսկ այնուհետև, մինչև 15-րդ տողը, անընթեռնելի են մնում միայն որոշ բառեր, որ ցույց ենք տալիս երեք ուղղահայաց գծիկներով։

Մեզ սուգ տուաւ անպատ[մելի],
Այլ և բազում քրիստոնէի,
Զի ոչ գտայ նորայ նմանի,
Այլ և ընաւ յոյժ եմ հեռի,
Վասն այնորիկ յամենայնի
Ոչ կայ հանգիստ մեզ յաշխարհի։

Բ

1 բ Ես անարժանս յամենայնի
ըՍտեփանոս մեղօք ի լի
Ստացող սուրբ մարգարտի,
Որ է անգին և անթերի,
Մաքուր անձանց յոյժ պիտանի,
Ակն ունելով տեառն և փրկչի,
Տալ ինձ փոխան զանանց բարի.
Թէպէտ որ չեմ ես արժանի
Գրիլ ի սուրբ գիրս մա[տե]նի,
Եւ զեղբայրն իմ ըստ մարմնի,
Որ [Հայր]ապետ անուն կոչի,
Որ փոխեցաւ նա ի բարի,
[Աղաչմն]ս ձեզ ի հողի
Ցիշման առնել մեզ արժանի։*

370

ՄԱՇՏՈՑ

Երևան 5568**

Գրիչ՝ Պետրոս
վայր՝ Բերկրոյ գաւառ, Յեղեվանք

106 բ ...Զի զօրաւորինակ նաւ, որ ի բռնութենէ հողմոյ և ի սաստկութենէ ալեաց ծովուն տրտմեալ տարակուսեալ լինի, և ի խնամոցն աստուծոյ յանկարծակի հողմ շնչէ յաջողակի և զնաւն ի նաւահանգիստն հասուցանէ՝ յոյժ ուրախութիւն է։ Նոյնպէս և ինձ՝ տկարութեանս՝

Հանդիպեալ վերջին գծիս
Ի յուրախութենէ սրտիս
Զստեղծիչն աւրհնեմ զգոյիս,

* Գրված է Մատթէոս ավետարանիչի մանրանկարից ներքև՝ լուսանցքում։ Նման ոտանավոր հիշատակագրություններ Ստեփաննոս գրիչը թողել է նաև 81 բ, 135 բ և 223 բ էջերի վրա, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս ավետարանիչների մանրանկարների կից։

** Ողջ ձեռագիրը, բացի վերջին տերից, կրկնագիր է։ Շատ թերթերի վրա պարզ կերպով նկատվում են ջնջված գրերի հետքերը։ Ջնջված տեքստը, որ գրված է բոլորձև երկաթագրով, հավանորեն Ժ. դարում, ըստ երևույթին, նույնպես եղել է Մաշտոց։

Զգեղեցկութիւնս զճառիս,
Զանհասութիւն զբանիս,
Զարմանազան սքանչելիս,
Որ կայ ծրեալ ի շարիս,
Նիւթ և մելան գղթորիս,
Թուղին է արջասպն աւղթեցիս.
Գոյն սպիտակ քարաիղիս
Թանգ գնեցի ես՝ գերիս,
Վասն շտապոյն իմ սրտիս,
Զգիրքն կարգի զնիւսացիս,
Գժուարալուր խոր բանիս.



Նկ. 13. Մի հատված Պետրոս գրչի հիշատակարանից

Ո՜վ սուրբ ընթերցողք, յիշեցէք ի Քրիստոս աստուած զգծողս զՊետրոս կրօնաւոր և զծնողսն մեր՝ զհայրն զՅովաննէս, և զմայրն Շամ-
107 ա շայ՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և զեղբարքն իմ զԿարապետ, և զԱտոմ, ‖ և զկրսեր սարկաւագն զՄկրտիչն, և զկանայքն նոցա՝ զԹոմար, և զդեռաբոյս ծաղիկք՝ զՄարտիրոս պատանեակ, և զՄարթայ, զմիւս զՆըշխուն, և զաւակ նոցա՝ զՅովաննէս պատանեակ և զամենայն արեան մերձաւորսն մեր, և զուսուցիչքն մեր և զխրատիչքն և զերախտաւորքն, և որ յիշէ զմեզ առ աստուած՝ յիշեալ լիցի և ինքն առ Քրիստոս աստուած։

Գրեցաւ ի Թվական Հայոց ՊՀԵ. (1426), ի գաւառիս Բերկրոյ, ի
յանապատիս Յեղեվանք, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոս Նախա-
վկայիս, և սուրբ Գրիգոր Լուսաւորչիս, և սուրբ Նշխարացս Վարդա-
նանցն։ Ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Ստեփաննոս կրօնաւորս
Դպղենց կոչեցեալ՝ բարի և հեզահոգի, ի ղանութեան Սքանդար ամիր-
զի, որ է որդի Ուսուֆի, զի այս երեք ամ է, որ յամէն տարի գայ, և
աւար և գերի արար զաշխարհն մեր՝ զՎան և զՈստան, և ապա առ-
եալ զամուրն զՎան, և մեք փախըստական եղաք ամենեքեան առհա-
սարակ՝ հայրապետք և վարդապետք, կրօնաւորք և քահանայք, տա-
նուտերք և տանտիկնայք, ի յաւտար աշխարհ շրջ ‖ եցանք և ի դըռ-
107 բ նէդուռն աւտարացանք, և այս ամենայն եկն ի վեր[այ] մեր վասն
ծովացեալ մեղաց մերոց, փառք աստուծոյ ամէն։

371

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղէմ 1582

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Թադէոս Առաքեալի վանք

...Գրեցաւ...ի Թվին Հայոց ՊՀԵ. (1426), ի մայրաքաղաքի որ այժմ Դավրէժ կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարին, զի անգ սկսայ և փոքր ինչ գրեցի, և եկեալ առ ոտս սուրբ առաքելոյն Թադէոսի՝ աւարտեցի, ի սոյն ամի որում էառ Ըսքանդար անուն ոճն բռնաւոր՝ որդի Ղարա-Ուսուֆին՝ զանառիկ բերդն Մակուայ, և զերկաբնակ ազգն ախթարմայից տարագիր և տարաշխարհ արար ի վերայ երկրի, և կատարեցաւ բան տեառն, զի չարքն չարեաւ կորոյս և զայգին ետ այլոց մշակաց։

Որ և ես՝ նուաստից նուաստս և տրուպս ամենայնի Գրիգոր անձն եղկելի՝ գծող սմին, ի վաղուց հետէ փափաքէի շինութեան առաքելական սուրբ աթոռոյս մերոյ և ոչ տային Թոյլ նախասացեալ ներհակքն՝ բնակիչքն Մակվայ: Որ և կրկին վայ եկն ի վերայ նոցա ի յԱրտազ գաւառէ, և ետ շխ Բայազիթ ոճն այլազգոյ։ Եւ զոր յառաջասացեալ չարքըն բարձեալ էին ի դրանէ սուրբ Առաքելոյս և տարեալ Թասպութեամբ և նախանձու, սա դարձեալ ի տեղի իւր երբեր մեծաւ յաւժարութեամբ և հնազանդութեան սիրով՝ զդուռն եկեղեցոյս, և զմեծ զանկակն, և զգերան ժամատանս, և այլ ամենայն ափաթ (*) և զողորմութիւն, զոր ի մարդապաշտ անիծեալ յազգէն յայն ոչ տեսաք ամենևին, զոր սա արար, որ և ըստ հնազանդութեան իւրոյ զհատուցումըն ի մարթաւորս առցէ՝ զառողջութիւն և զդաւլաթ։

372

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նոտ. 81, Վանի նահանգի Ալիւր գիւղ

Գրիչ՝ Կիրակոս
վայր՝ Մերտին մայրաքաղաք

...*Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ* Կիրակոսի *անարժան գրչի, ի դառն և ի նեղ ժամանակի, ի մայրաքաղաքս* Մերտին, *ընդ հովանեաւ Գէորգեայ զօրավարին, ի հայրապետութեան տեառն* Պօղոսի, *և յեպիսկոպոսութեան տէր* Աբրահամին, *յիշխանութեան ազգին նետողաց ամիրզայ* Սքանտարին, *և ի Մերտնայ իշխանութեանս՝ ամիր* Նասրին, *և ի թուականութեանս Հայոց ՊՀԵ. (1426)։*

373

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ, ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՑ

Երևան 6262

Գրիչ՝ Գասպար Համբեցի
վայր՝ Կիպրոս

175 բ *Հով[ու]ապետ բարի՝ Քրիստոս աստուած մեր, որ եկիր ի խնդիր*
մոլորեալ ոչխարին, խնդրեայ և զիս զմոլորեալս՝ զստացող գրոցս զՄար-
կոս *եպիսկոպոսն, և զծնաւղն իւր, և զմերձ ազգայ<կայ>ինքն, և*
զամենայն արեան մերձաւորն, և ինձ գրագրիս՝ Համբեցի Գասպար *իրի-*
ցուն, և ծնաւղացն իմոց, և վարպետիս<իս> իմ Սաաըեցի Առաքել
աշակերտին, և ամենայն նախնեաց նոցայ, մեզ՝ կարդացողաց և ձեզ
լսողաց, և որ ողորմին ասէ՝ աստուած ողորմեսցի իւրն և ծնաւղացն
176 ա *իւր ‖ ոյ, ամէն։*

Ի յայս ժամանակի ի թվականութեանս ՊՀԵ. (1426), ի վարդավառին կիրակի, Մսրայ *սուլթանն* զԿիպրոս *էառ և զբաղում քրիստոնեայս գերի էառ, որ էին ոգիք Ր. (5000), զկոտորեալսն ո՛ թու<ով>է, ո՞հ, վա՜յ է զիս։**

374

ՇԱՐԱԿՆՈՑ

Երուսաղէմ 1584

Գրիչ՝ Յովհաննէս եպիսկոպոս Անոյ
վայր՝ յանառիկ դղեակս Թմոք

Թվ. ՊՀԵ. (1426), ի Մալխաս *և յանառիկ դղեակս* Թմոք, *ընդ հովանեաւ սուրբ* Աստուածածնի, *ձեռամբ մեղապարտ գրչի* Անոյ *եպիսկո-*

---

* *Մանր և անարժեք հիշատակագրություններ կան աշխատության համարյա բոլոր գլուխներից հետո։ Այս ձեռագիրն ուշագրավ է, որպես նոտր գրություն ունեցող հնագույն ձեռագրերից մեկը։*

պոսին տէր Յովհաննիսի, ի խնդրոյ մաքրամիտ և սրբասէր կրօնաւորի ... տէր Աստուածատրոյ, ի լաւ և յընտիր աւրինակէն մեծ և քաջ քարտուղարին Սիսոյ Գրիգոր դպրի՝ մականուն խուլ կոչեցելոյ։ [Ծաղկողն է Յովհաննէս կրօնաւոր]։

375

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

«Արցախ», էջ 78

Գրիչ՝ Յովհաննէս եպիսկոպոս Անւոյ

Զստացող սուրբ գրոցս զՍիմէոն րաբունի՝ զաշակերտ մեծին Գրիգորի, և զանիմաստ ծրող սորին՝ զՅովհաննէս եպիսկոպոս Անւոյ, աղաչեմ զձեզ դասք լուսերամից յիշման առնել զմեզ արժանի...։*

376

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Երուսաղէմ 1225

Թովմա Մեծոփեցի

ա

Գիրք Մեծոփու վանաց սուրբ Աստուածածնին։ Լաւ պահողն և ընթերցողն աւրհնի յաստուծոյ և յամենայն սրբոց։ Ընդ առաջին աշխատողացն յիշել աղաչեմ զպիտակ անուն վարդապետս Թովմա:

բ

ՊՀԵ. (1426) Թվին դասիւ կարգացի հետ Վարդանայ մեկնչին,** և զարմանալի տեսայ զմիտք սորին։ Քրիստոս աստուած ողորմի Թովմա վարդապետին և իւր ծնողացն։

377

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4807

Հետ. ստացող՝ Ուսթայ Էվաաշայ
վայր՝ Վառնիշատ գիւղ

1ա Քրիստոս աստուած ... քաղցրութեամբ հայեաց ի հոգի վերջին ստացողի սուրբ աւետարանիս Յէվաաշին, և յիւր ծնողացն՝ ուսթայ Ամիր-Սարգսին և Ուլուն-խաթունին, և ի յեղբարցն Ստեփաննոսին, և Յովանի[սին, և] Խաչատրուն, և մեծ հարսին Գուլ-Մէ[լէ]քին, և զաւա-

---

* Անթվական այս հիշատակարանը տեղադրում ենք նույն Յովհաննէս եպիսկոպոսի 1426 թվականի հիշատակարանին առընթեր։

** Խոսքը Վարդան Արևելցու «Մեկնութիւն երգոց երգոյն» աշխատության մասին է։

կացն [Սուլ]թմիշին, և Յովսէփին, և Բաղշայիշին, և ի յայլ ամենայն ազգականացն...։ Գնեցաւ սուրբ աւետարանս ի թվ. ՊՀԵ. (1426)...։

Զսակավ գծողս զԿարապետ անարժան քահանայ և զծնաւղսն իմ յիշեցէք ի Քրիստոս և աստուած-ողորմի ասացէք, և Քրիստոս աստուած ձեզ և մեզ և զստացողացն և աշխատողացն ողորմեսցի, ամէն։

Բ

195 ա ...Արդ, ի վերջին դարուս և յերեկոացեալ ժամանակիս ես՝ Էվաաշայ ի յՈստան քաղաքէ, ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ ընչից իմոց, յիշատակ ինձ, և ծնօղացն իմ՝ հաւրն իմ Ամիր-Սարգիսի, և մաւրն իմ Ուսուլ-Խաթունին, և եղբարցն իմ Ստեփանոսին, և Յովանիսին, և Խաչկէն, և հանգուցեալ քուրոջն իմ Շար-Մէլէքի և եղբաւրորդոցն իմ Սուլթմշին և Յուսէփին, որ յայսմ ամի փոխեցան առ Քրիստոս՝ յոյսն ամենեցուն։ Եւ եգի զսա ի դրան սուրբ Եղիշէ վարդապետին, ի գօղն որ Վառնիշատ կոչի...։

Ընդ նմին և զիս՝ զսակաւ գծողս զԿարապետս, որ լի եմ մեղօք և անառակ վարուք ի մէջ մարդկան, հայցեմ ի ձէնջ, որ խնդրէք ի Քրիստոսէ զթողութիւն բազում յանցանաց իմոց...։

195 բ Ես Էվաաշայ ստացայ զսուրբ աւետարանս յիշա‖տակ ինձ և նախնեացն իմոց, ի թվաբերութիւնս Հայոց ՊՀԵ. (1526)։ Եւ ով ոք հեռացուցանէ զսա ի դրանէ սուրբ եկեղեցոյս ի մերոց և յաւտարաց՝ մասն զՈւդային առցէ, ամէն։ Եւ խնամ տարողքն աւրհնին յաստուծոյ և յամենայն սրբոց, ամէն...։*

378

ԺԱՇՈՑ

Երևան 4553

Հետ. ստացողներ՝ Անտոն և Սիմէոն

247 բ Արդ, աղաչեմ զամենեսեան առհասարակ յիշեսջիք... զվերջին ստացողք սորա՝ սուրբ ընթերցուածիս...սրբասէր քահանայն զտէր Անտոնն, և զբարիհասակ եղբաւրորդին իւր և զիմաստուն և զբարէսէր քահանայն զտէր Սիմէոնն, որ կանգնեցան և աւգնական եղեն և յորդորեցին զգեզ Պոասաբեացս ժողովուրդն՝ զմեծ և զփոքր, զայր և զկին, և բազում բարեաց առաջնորդք եղեն, ես առաւել այս գրոցս և այլ բազում բարեաց։

Արդ, որք հանդիպիք սմա յիշեսջիք յաղաւթս ձեր զպարոն Ներսէսն և զկողակիցն իւր զՍիրմայ-Խաթունն, որ ետուն ի գրոցս գինն ՃԾ. (150) դրամ, և զպարոն Գրիգորն, որ ետ ԲՃ. (200) դրամ։ Եւ ստացան զսա ի հալալ ընչից իւրեանց և ետուն յիշատակ ի գեղ

* Շարունակության մեջ կրկին ու նորից խնդրում են հիշել ստացողին և նրա ազգականներին։ Էվաաշան այստեղ կոչվում է «ուսթայ»։

Պռաստինքս, ի դուռն սուրբ Գէորգեա յիշատակ իւրեանց ե ծնողաց և ամենայն արեան մերձաւորաց...։

Եւ զՍամուէլ աբ[եղայ], որ զգիրքս ծախեցի, ո՜վ սուրբ քահանայք, զգիրքս խնամով պահեցէք և լաթով բռնեցէք, և ի յահու ժամանակ շուտով փախուցէք։ Եւ ոչ ոք ունի իշխանութիւն յազգականաց սոցա, որ զգիրքս կամ ծախէ, կամ դրաւկնէ, կամ ի սուրբ Գէորգեա դռանէս հանէ, կամ զյիշատակարանս քերէ...։

Գնեցաւ գիրքս Գճ. (400) [դրամաւ],* ի թվին Հայոց ՊՀԵ. (1426) մայիս ամսոյ ԺԷ. (17), ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ։

379

ԱՒԵՏԱՐԱՆ

Վրաց թանգարան 23

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Աղթամար

289 ա ...Հաւատարիմ և բարեսէր տանուտէրն Յովանէս և կենակիցն
իւր Շնաւոր ... ստացան զսուրբ աւետարանս անջինջ յիշատակ
իւրեանց, և ծնողաց իւրեանց՝ Աւետիսին և Դիմաքին, Սարգսին և Մե-
լիք-խաթունին, ե ամենայն արեան մերձաւորաց...։

289 բ ...Արդ, գրեցաւ սուրբ || աւետարանս ի կղզիս Աղթամար, ընդ
հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տէր
Դաւթի, և ի թուին Հայոց ՊՀԵ. (1426), ձեռամբ Թումայի սուտանուն
կրաւնաւորի։ Եւ իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բա-
զում մեղացն ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պար-
գևեաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատանաւք գրեցի անար-
ժան ձեռաւք իմովք ի ստոյգ և յընտիր աւրինակէ՝ կենաւք տառա-
պանաւք և բազում պանդխտութեամբ։

Արդ, որք հաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի
սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ և ընթերցմամբ, յիշես-
ջիք յաղաւթս ձեր զստացող սորա** զվերոյ յիշեցեալն զՅովանէսն և
290 ա զՇնաւորն, և բոլոր հաւատով || և սերտ սիրով աստուած-ողորմի
ասացէք...։ Ընդ նոսին և զանպիտան Թումայ գրիչ, և զծնողքն իմ
զԿարապետ քահանայ, և զԴումէլիք, և զեղբայրն իմ և զուսուցիչն
զԴանիէլ քահանայ, որ ծաղկեաց և կազմեաց, և զշնորհալի սարկաւագն
զՋաքարայ՝ որդի նորին, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Քրիս-
տոս և մեզ եթող սուգ անմխիթարելի, և զքոյրքն մեր, և զհաւրեղ-
բայրն մեր զՋաքարայ փիլիսոփայն՝ զհանգուցեալն ի Քրիստոս և զա-
մենայն ազգականքն մեր՝ զկենդանիս և զննջեցեալս...։

---

* Բառը քերված է։

** Շարունակությունը՝ այլ ձեռագրով։

380

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 231

Ցանուն հեա. ստացող՝ Մշցի Առաքելի

252 ր *Արդ, աղաչեմ զձեզ եղբարք, որ ով զգիրքս կարդայ՝ նայ յիշէ* զՄշցի Առաքելն *ի մաքրափայլ յաղաւթս իւր, որ գնեաց զգիրքս և ազատ[ե]աց ի յանաւրինաց գերութիւնէ, ի թվ. Հ[այո]ց ՊՀԵ. (1426)։ Աղաչեմ զձեզ, որ աստուած-ողորմի ասէք իւր ծնաւղացն և ննջեցելեաց հոգոյն...։*

381

ԺԱՌԸՆՏԻՐ

ՍՑՎ 201 (1014), հա. Բ., 06

ՈմՆ այցելու

132 ր *Ես՝ ծառա աստուծոյ, եկի ի սուրբ Ովանէս վանքն*, ի թվ. Հայոց ՊՀԵ. (1426), ի ապրիէլ Զ. (6), ո[ւ]րբաթ, աւր աւետեաց Աստուածածնի։*

** Մերտին քաղաքի սուրբ Յովանէս, որ «մականուն Թվին կոչի» մենաստանի մասին է։*

382

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ, ՍԱՐԳՍԻ ԿՈՒՆՏԻ

Երևան 5591

Ծմբագրող՝ Թովմա Մեծոփեցի
վայր՝ Մեծոփայ վանք

Այլ և ես՝ վերջինս և մեղապարտս ի ծնունդս եկեղեցւոյ, տրու-
պըս բանասիրաց և անարժանս ի կարգաւորաց, սոսկանուն վարդա-
պետս Թովմա, *յերեսս անկեալ արտասուալիր գիմաւք հողս և մոխիր*
սուրբ գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ, մանաւանդ
240 բ *աստուածաբան վարդապետաց ուղղափառութեան, և գրոց աշակեր-*
տեալ || անձանցդ մաքրութեան, և քրիստոսակիր մանկանցդ նորոյս
Սիովնի քահանայիցդ լրման, որք հանդիպիք նորընծայ աստուածա-
քարոզ սուրբ աւետարանիս Ղուկասու մեկնութեան, ընթերցմամբ դա-
սիւ կամ աւրինակելով և կամ սակս մասին սմին պատահէք տեսու-
թեամբ՝ յիշեսջիք և զիմս աշխատութիւն, որ ի վերջին ժամանակի
զգիրս զայս գտի և ետու ի ձեռս վարժապետաց և բաբունապետացդ
հայկազեանս սեռի՝ դաս ասել սմաւ և զաշակերտեալսն ի հոգի և ի
մարմին մխիթարել։ Եւ թողութիւն հայցել ի տեառնէ բազմադիմի և
բազմատեսակ յանցանաց մերոց, մանաւանդ հոգևոր և մարմնաւոր
ծնողաց մերոց՝ կենդանեաց և հանգուցելոց՝ Մաթէոս *կրօնաւորին, և*
ծնողաց նորին, և հոգևոր և մարմնաւոր հարազատաց մերոց, և ամե-
նայն երախտաւորաց և արեան մերձաւորաց։ Եւս առաւել յիշատակ
եղիցի սա վարժապետացն մերոց և հոգևոր հարցն և ուսուցչացն՝ Գրի-
գորի *մեծի հռետորին, և* Սարգիս *վարդապետին, և* Վարդանայ *վարդա-*
պետին, և Յոհաննէս *վարդապետին, և ամենայն վարդապետաց ուղ-*
ղափառաց...։

Աղաչեմ զերջանիկ գաղափարաւղսդ, որք աւրինակէք զգիրս զայս՝
զսակաւ յիշատակս այսոցիկ գրեսջիք, զի գիտասցեն վերջինքն, թէ
յումէ գտեալ եղև, զի և դուք գրեսջիք ի գիր յաւիտենական կենացն
դպրութեան, ամէն։

Եւ պարտ է գիտել, թէ զճարդ գտեալ եղև մեկնութիւն աւետա-
րանիս։

Հարկեցին զմեզ եղբարքն զմեկնիչն տէր Իգնատիոսի *դաս ասել։*
Եւ մեք սկսաք ըստ տկարիմաց մտաց մերոց բան-բան լուծանել, և
տեսաք, զի ոչ էր առեալ զընագիրն ի ներս՝ ըստ կարգի մեկնու-
թեանն բանի։ Մտաւք և բանիւ տրտնջէաք, որպէս սովորութիւն է

ազգիս մեր։ Եւ ի նոյն աւուրսն եկն եհաս տաւն ծննդեան Քրիստոսի
աստուծոյ մերոյ։ Ելեալ գնացաք ի գեօղ մի կոչեցեալ Ասպիսրճակ։
Մտաք յեկեղեցին և գտաք ի խորանին՝ ձգեալ անպիտան ի մէջ մոխ-
րակոյտին։ Առեալ տեսաք և գոհացաք զաստուծոյ, զի վասն առատա-
241 ա տուր պարգևացն և ձրի ‖ շնորհացն զհասարակաց զշահն և զօգուտն ոչ
արգելէ ողորմած և մարդասէրն աստուած ի յանարժան վարդապե-
տաց։ Եւ վասն դառն և չար ժամանակիս թշուառութեան Ը. (8) ամ ի մէջ անցաւ, և ոչ կարացաք գրել։ Իսկ յորժամ բարերարն աստուած սակաւ ինչ անդորրութիւն ետ՝ ի ՊՀԶ. (1427) թվականիս, կամաւքն աստուծոյ սակաւ ինչ ես գրեցի, և զբոլորն գրել ետու հոգևոր որդոց իմոց՝ Թովմայ գրագրի և Յովաննէս գրոց աշակերտի։ Զոր խնդրեմք ի Քրիստոսէ պահել զսոսա անվորձ և անսասան կենաւք մինչ ի խո-րին ծերութիւն։ Եւ թողութիւն մեղաց արասցէ Քրիստոս աստուած ծնողացն նոցին և ամենայն արեան մերձաւորացն ի միասին։

Բայց սկիզբն անկեալ էր, մինչև «յամսեանն վեցերորդի» զնա-խերգան Ի՞Շաաիոսին եդի, և զցանդ խորանացն նոր եդի, զի դիւ-րագիւտ և առձեռն պատրաստ ուսումնասիրացն եղիցի։

Այլ սխալանացն անմեղադիր լինել աղաչեմ, զի էր ինչ որ ջըն-ջեալ էր և էր ինչ որ գրիչն սխալեալ էր, զի ԲԾ. և Լ. (230) ամաց էր*։ Եւ յոյժ աշխատութեամբ ի յաւարտ ածաք։

Իսկ դու, սուրբ եղբայր, զսխալն ուղղեա, զի և դու մասն բարեաց ի տեառնէ ընկալցիս և վիճակի սրբոցն ի լոյս արժանի լինիցիս՝ հան-դերձ ծնողաւք և ամենայն արեան մերձաւորօք, ամէն, եղիցի։

Այլ և զհոգևոր և զմարմնաւոր հարազատքն մեր՝ զՄկրաիչ վար-դապետն, և զՅովհաննէս քահանայն, և զպարոն Գորգի-Մելիքն, և զՅո-վանէս, և զԱրիստակէս, և զԱմիր-Մելիքն, և զՍօլթանշա, և զհայրն իմ զՍաեփանոս, և զմայրն իմ՝ զհանգուցեալքն ի Քրիստոս, աղաչեմ յի-շել ի տէր...։ Վասն զի սոքա հանգուցանեն զմեզ ի վշտաց անաւ-րինաց և ի դառնաբարոյից՝ աննհնազանդ և անսէր հոգևոր կրօնաւո-րական եղբարց։

Գրեցաւ աստուածային կտակս ի սուրբ ուխտս Աստուածածնի, որ այժմ Մեծոփայ վանք անուանի, ի գաւառս Քաջբերունեաց։ Եւ աւ-րինակն առաջին գրեալ էր ի սուրբ ուխտն Եղէվարդու, ի գուռն սըր-բոյ եկեղեցոյն Թէոդորոսի, որ էր գրեալ յառաջին օրինակէն ձեռամբ աշակերտաց սուրբ վարդապետին Սարգսի՝ Դաւթի և Ներսէսի՝ յոյժ սխալ։ Քրիստոս աստուած ողորմի հոգոց նոցին, ամէն։

---

* Ուրեմն գաած ձեռագիրն ընդօրինակված է եղել 1427-ից 230 տարի առաջ, այն է 1197 թվականին։

383

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երեւան 1419

ա

Ստացող՝ Թովմա Մեծոփեցի
վայր՝ Մեծոփայ վանք

81 ա ...*Այլ և զհոգևոր հարազատն իմ զ*Մկրտիչ *վարդապետն, որ զգիրըս երբեր յ*Երուսաղէմայ *բազում աշխատութեամբ, և հասոյց յաստուածարնակ ուխտս Աստուածածնի, որ այժմ* Մեծոփայ *վանք անուանակոչի։ Եւ ես մեղապարտս և վերջինս ի [ման]կունս եկեղեցւոյ՝ դասիւ զգիրս ի դուրս ելի ի ՊՀԶ. (1427) թվականի, ի դառն և չար ժամանակի, որ սէրն աստուածային պակասեցաւ ի մարդկանէ և ի սոսկանուն կարգաւորէ, վասն այնորիկ աւերեցաւ աշխարհս ամէն ի անաւրէն Թուրքմանէն. և Զ. (6) տարի է, որ պատարագ չէ եղել ի ծովու բոլորս ամէն։ Արդ, աղաչեմք [զեղբարքդ*] *ամէն՝ մեզ թողութիւն հայցել...։*

բ

Ստացող՝ Մկրտիչ Մեծոփավանեցի

201 բ *Արդ, յերեսս անկեալ պաղատիմ քրիստոսակիր մանկանցդ սրբոյն Սիոնի, յիշեսջիք առաջի անմահ գառինն Յիսուսի Քրիստոսի զպիտականուն վարդապետս* Մկրտիչ, *և զծնօղքն իմ զ*Նահապետ, *և զեղբարքն իմ՝ զհանգուցեալքն ի Քրիստոս՝ զ*Արքուխշա *և* Սեթենկիկ, *և զմիւս եղբայրն* Յովանէս, *և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանի և զհանգուցեալս, որ ստացայ զսա ի սուրբ քաղաքն* Երուսաղէմ, *և բազում ահիւ և դողութեամբ ի տեղս հասուցի, վասն այն յուսոյն, որ գիրս ի դաստուն մտանէ և ի վարդապետաց և ի գրոց աշակերտաց ձեռն տայ։*

Եւ դուք, որ առօղքդ էք պարգև<որ>ացս հոգևոր, տուք մեզ ձրի զառատ ողորմութիւն հօրն մեր երկնաւոր։ Աստուած ողորմի Մկրտիչ *վարդապետին, և իւր ծնօղացն, և վարդապետացն երախտաւոր...։*

*Այլ և զհոգևոր հարազատն իմ զ*Թովմա *վարդապետն յիշել [աղաչեմ], ամէն։*

ՊՀԴ. (1425) թվականին հանգեաւ նահատակութեամբ Գրիգոր *վարդապետն* Ծերենց *ի Քրիստոս, հոգոյ գալստեան կիրակէին, և ի միւս ամի ՊՀԵ. (1426)՝* Յակոբ *վարդապետն* Ղրիմեցի, *հինգշ[աբթ]ի, օր համբարձմանն, Ժ. (10) պակաս քան զվարդապետին, ի փառս աստուծոյ, ամէն։*

Գ

202 ա *Ընդ առաջին աշխատողացն յիշեսջիք և զվերջին ստացողս՝ զմեղապարտս ի մանկունս եկեղեցւոյ՝ զ*Մկրտիչ *վարդապետս* Մեծոփայվանեցի, *և զհոգևոր և զմարմնաւոր ծնողքն իմ, որ ստացա զսուրբ գիրս ի սուրբ քաղաքն* Երուսաղէմ, *և բազում աշխատութեամբ բերի ի տեղս հասուցի։ Նա և զհարազատն իմ զ*Թովմա *վարդապետն, որ դասիւ զգիրս ի դուրս ելաւ և զեղբարքս մխիթարեաց...։*

ՊՀԵ. (1426) *գրեցաւ։*

384

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

Վիեն. 428, Տաշ. Ցուց., էջ 886

Գրիչ՝ Ղազար
վայր՝ Մեծոփայ վանք

ա

155 ա—156 ա | | | *հասա]րակաց աղաւթից քրիստոնէից, ի թուականութեանս մեր* **ՊՀԶ. (1427)** *ամին, ի յերկիրս* Քաջբերունոյ, *ի սուրբ մենաստանիս որ կոչի* Մեծոփայ *վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Յակովբիս, և սուրբ վարդապետաց գերեզմանաց, առ ոտս տիեզերալոյս և քաջ րաբունապետիս* Թումա *վարդապետիս, ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի* Ղազար *սարկաւագի։ Արդ, որք հանդիպիք սմա յիշեցէք ի Քրիստոս զանարժան գրիչս զ*Ղազար, *և զհոգևոր հայրն իմ՝ զարհիական գլուխն զտէր* Յովհաննէս *եպիսկոպոսն՝ վերատեսուչ երկրիս* Քաջբերունոյ, *և զհոգևոր հայրն իւր զ*Թումա *վարդապետն, որ զգիրս ուսոյց և աւր ըստ աւրէ յորդորէ զմեզ և զամենայն եղբարք, զի ի յայս ամի զտեսիլ Յովհաննու աւետարանչին յայտնեաց մեզ դասիւ* | | |*

Այլ և կրկին կենաւք, աղաչեմ յիշել ի տէր զհոգևոր հայրն իմ զվերոյասացեալդ զտէր Յովհաննէս *եպիսկոպոսն, և զերախտաւոր հայրն իմ զ*Յովաննէս *կուսակրաւն քահանայն՝ զփոխեցեալն ի Քրիստոս...։*

բ

141 բ *Տէր Յիսուս ... կնքեա զտեղի հանգստեան, մանաւանդ զհոգի և զմարմին աստուածապատիւ հոգևոր հաւր մերոյ տէր* Յովհաննէս *եպիսկոպոսին, և զհոգևոր հաւրն իւրոյ զ*Թումա *րաբունապետին։*

---

* *Ձեռագրից թերթ է ընկել։*

385

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 4873

Գրիչ՝ Սարգիս եպիսկոպոս
վայր՝ Կոթիփորոյ վանք (Ընկուզագամ)

365 բ ...Պարգեւաւք և առատ ողորմութեամբն աստուծոյ բարերարին ցանկացող եղեալ բաղձանօք հոգևոր սիրոյ տէր Սարգիս եպիսկոպոս սոսկանուն և թափովը ի յամենայն բարեգործութենէ և սեւերես կամ դիմօք և պատառող ցանկոյն աստուծոյ, որ և ցանկացօղ եղէ ի բազում ժամանակաց մինչև ցայժմ, զոր տէր պատրաստեաց զփափագս մեր յայսմ հոգևոր գանձիս, որ է յիշատակ անջնջելի հոգւոյս մեր ի տանն աստուծոյ....։

366 ա Արդ, ես՝ ամէնմեղ հոգով մեռեալ և մարմնով մոլորեալ, ի հոգս աշխարհիս և պատրանք մեծութեան, և ի յաստուծոյ սեւերես և յիմ աւրհնողէն մահրում, և ի մարդկանէ ամաւթով՝ Սարգիս սոսկանուն եպիսկոպոս և գործովք թափաւոր ի յամենայն բարութենէ, ցանկապատառս, որ և ստացայ զսա ինձ՝ անջնջելի յիշատակ մեզ, և մեր ծնողացն, և ամենայն արեան մերձաւորաց։ Փափագ ուն[է]ի ի տղայութենէ յայս սուրբ նշխարացս և չգտանէի. ի Ի. (20) ամ շուրջ եկի՝ աւրինակ չըտային, լալով և պաղատ[ան]աւք հայցեցի ի յամենայնկարող փրկչէն, և տէր եցոյց բազմամեղիս զկարաւտ ծարաւոյս։ Սատանայ հանց կապել էր, ընդ որ գնացի՝ դուռն փակեցօ ի յիմ գարշելի և յառակ չարեացն իմ, յամենայն ժամ գոհութիւն ստեղծողին, որ ետուր ինձ ողորմութիւն։ Սատանայ հանց հակառակեցաւ, որ (ետու) ԲՌ. (2000) դ[ահե]կ[ան] ու զթուղթն ու զամէն նիւթ, ու չգրեցին այնիբաւն։ Մեք էաք Հ. (70) ամեայ, գրչի մատն չոր էր և աչքս վատայտես, անճար էաք, և ուխտեալ էաք աստուծոյ, վստահացաք ի ձեր ողորմութենէն և մասնակից եղաք ձեր սրբութեանդ, որ մէկ տէր-ողորմայիւ յիշէք ի տէր աստուած զբազմաբիծ գարշելիս՝ Սարգիս չեպիսկոպոս, աղաչեմ յիշել ի աէր, և աստուած զինքն յիշէ, և նայ զմեզ, և զբարեմիտ հոգի ծնողքն մեր, որ հանգուցեալ կան ... Նախ հաւրն մեր պարոն Սաւ[լ]թանշին, և մաւրն՝ Մինա-խաթունին, և եղբարցըն, և քուերացն, և եղբաւրն մեր ըստ̈հոգոյ՝ Յովանէս քահանային, և զաւակին՝ Կարապետ կրօնաւորին, որ զօրինակն շնորհեաց, աստուած բազում վարձս տացէ նմա, և տէր Առաքելին, և այլ հոգևոր հաւրն մեր պարոն Տիրիկին, Խուանդին, Թանկաուխին և մեր ամենայն ազգականացն, մինչև ի քառասուն պորտն, ամէն։ Դարձեալ, զհոգիայբուխ և զարփիայշնորհ, զհոգելիցս և զեղբայրս՝ զտէր Սիմէոն ճգնաւորն, աստուած զինքն յամենայն ճգնաւորաց մասնակից արասցէ, ի վերին Երուսաղէմ դասեսցէ, ամ[էն], այլև զեղբայրն ճգնաւորին՝ զՄաթէոս քահանայն, յիւր լուսոյն և տեսոյն արժանի արասցէ, ամէն, նաև զկենակիցն իւր զՆայն-Տիկին..., և զիւր զաւակսն զՄելքիսեդեկն պահեսցէ մինչև ի խորին ծերութեան անսայթաք...հանդերձ

դստրաւն Նուր-Ջահանիւն, ամէն։ Այլև զհանգուցեալն... զպարոն Դա-
նիէլն, և զեղբայր սոցայ՝ զմիայնայկեացն և զխորին ծերնն, զնոր Նըն-
ջեցեալն, որ և այժմ հանգեաւ՝ զտէր Յովիէլ, և զաշխարհի կարօտածս՝
366 բ զԲարսեղն, || [որ] և տղայ հասակաւ ի Քրիստոս փոխեցաւ, յի-
շատակ նորա աւրհնութեամբ, եղիցի, ամէն։

...Պաղատանաւք հայցեմք ի սուրբ հանդիպողացդ, որ զԻգնա-
տիոս վարդապետն, և զՅորդանան, և զԵրեմիայն յաղաւթս յիշէք, որ
բազում աշխատեալ են վասն մեր՝ կերակրելով և յամենայն կողմանց,
աստուած զսոսայ կերակրէ, ամէն։ Այլ և բազկատարած խնդրեմք ի
յամենայն լեզուաց՝ աւրհնեալ է աստուած, յաղագս քաջ և արի, ժրա-
ջան զսուրբ վարդապետքն մեր յիշեսջիք ի մաքրայջփայլ յաղաւթս ձեր.
նախ՝ Գոշա, Վանականա, Վարդանա, Ներսեսի, Յեսայիայ, Տիրայարւ,
Բարսղի, Գրիգորի, Ծերունի, Կիրակոսի, Գրիգորի, Յովսէփի, Յակոբի,
Մաղաքիայի, Յոհանիսի, Սարգսի, Վարդանի, Գրիգորի՝ քաջ և արի հռե-
տորի, Գէորգեայ, Յակոբին, Մաթէոսի և այլ ամենայն համաւրէն վար-
դապետացն, որ ի ստեղծմանէն յաշխարհիս մինչև ցայսօր հանգուցեալ
կան...։ Որ և զհոգևոր հայրապետքն մեր յիշեսջիք տերամբ ի տէր՝
զկաթողիկոսքն, որ և հանգուցեալ կան՝ զտէր Ստեփաննոս, զտէր Ներ-
սէս, զտէր Մեսրովբ, զտեր Ստեփաննոս, զտէր Յովաննէս, զտէր Զաքա-
րիայ, և զմիւս Զաքարայ, զտէր Թադէոս, զտէր Թէոդոս, զտէր Ստեփա-
նոս, զտէր Կարապետ, զտէր Գրիգոր, զտէր Վանական, զտէր Ալէքսիա-
նոս, զտէր Կարապետ, զտէր Նիկողայոս, զտէր Կարապետ, զտէր անուն
տէր Սարգսի(*), զտէր Յովանէս, տէր Առաքել, զտէր Սարգսիս, որ զգիր-
քըս գրեցի, զՄաթէոս քահանայ, զԹանկուզ, զպարոն Ամիրազիզն,
զՋանազիզն, զՀազարմարդն և զայլն ամենայն, որ և յառաջին կիւրա-
կէ են հանգուցեալ և այլ պիտի հանգչին ի Քրիստոս աստուած...։

Վասն աստուծոյ թողութիւն արարէք խոշորութեան գրոյդ և
սխալանաց, անտըրտունջ ուղղեցէք զպակասութիւն գրոյդ, քանզի
ջան և կար մեր այս է. վասն աստուծոյ և վասն անեղ դատաստանին
Քրիստոսի մի արհամարհէք, ձեր խտչդ ու աստուած վկայ է. որ ԻԱ.
(21) տարի է, որ գրչի ծայրն ու մազ չեմ տեսուլ, ու ձեռս կու դո-
ղայ, վասն աստուծոյ մի մեղադրէք...։

367 ա Ի թուիս Հայոց ՊՀԶ. (1427), յահկի ի Բ. (2), ի տեղիս որ
աւարտեցաւ՝ ի Կոթիփորոյ վանքս, որ կոչի Ընկուզայգամ, ընդ հո-
վան<ու>եաւ սուրբ Աստուածածնիս, քանզի պահեսցէ զձեզ և զմեզ,
ամէն։

Թողութիւն արարէք վասն սիրոյն Քրիստոսի, ձանձրացուցի
զհանդիպողքդ. և զկարդացողք աւրհնի յաստուծոյ և յամենայն սրբոց և
ի մէ[ն]ջ, ամէն։

ԶՅովանէսն ու զՍարգիս յիշէք, որ մեզ ջուր են բեր[ել], զՄար-
տիրոսն, որ մեզ մեղր է տուել, աստուած զիւր քաղցրութիւնն նմա
տացէ, ամէն։

386

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՎՑ. 91 (942), հա. Ա., էջ 413—414

Գրիչ՝ Գրիգոր Արծկեցի
վայր՝ Շամրի-Ձոր գաւառ, Մաղարդայ վանք

ա

13 ա ... Կատարեցի զսուրբ աւետարանս ... ես՝ իմով տկարացեալ բնութեամբս, բազմամեղ և անարժան սուտանուն կրաւնաւոր Գրիգոր գաւառաւ Արծկեցի, որ մականուամբ Էլմէլիքենց կոչիմ. գրեցի զսա ի խնդրոյ Դանիէլի կրաւնաւորի՝ աշակերտ բանի, և ստացողի հօր ուրեմն բանասէր և աստուածահաճոյ Աբրահամին, յիշատակ իւրն, և ծնաւղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց։

Ես Աբրահամս ... ետու գրել զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց և յարդար վաստակոց իմոց, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, և ետու զսա հոգևոր որդւոյն իմոյ տէր Դանիէլի աշակերտ բանի, որոյ տէր աստուած վայելել տացէ իւր և հոգևոր որդւոյն իմոյ | | |,* ամէն։

Արդ, գրեցաւ և աւարտեցաւ քրիստոսախօս աւետարանս ի գաւառիս Շամրի-Ձորոյ, ի մենաստանիս՝ որ մականուամբ Մաղարդաւ վանք կոչի, ընդ հովանեաւ քրիստոսահիմն և առաքելաշնորհ սուրբ խորանացս՝ սուրբ Աստուածածնի, և սրբոյն Ստեփաննոսի նախավկայի, և սրբոյն Գէորգեայ զօրավարին, որ կառուցեալ կան ի հարաւակոյս կողմանէ, հանդէպ Երասխ գետոյ։ Ի թագաւորութեանն Իսքանդարին՝ Յուսուֆոյ որդւոյ, և յաթոռակալութիւնն կիլիկեցւոց՝ տեառն տէր Պօղոսի, և ի թըւականութեանն Հայոց ՊՀԶ. (1427), ձեռամբ անարհեստ գրչի Գրիգորի: Գրեցաւ ի լաւ և յընտիր աւրինակէ, և ունի զհամաբարբառքն չորեցունց աւետարանացն՝ ըստ իւրաքանչիւր թըւոցն, և զտասն խորանացն զկարմիր գիրն՝ ըստ իւրաքանչիւրոցն։ Եւ եթէ սղխալ կամ այլայլումն ունի՝ ի յօրինակէ է, և ոչ ի գրչէս, քանզի խնդրողն զայս կամեցաւ և ես գրեցի զստոյգն զօրինակիս։ Եւ եթէ գրչութեան արուեստին կամ գրադարձութեանն, շեշտին, և բըթին, և պարուկին, և այլ ռոգանութեանցն՝ անմեղադիր լերուք, զի ի ծըրողէս է՝ ըստ տկարիմաց տեսութեան իմոյ. և զիս զանարժանս և զփանաքիս ի գրչաց յիշեսջիք ի մաքրափայլ և յերկնաթռիչ յաղաւթս ձեր, և զծնողսն՝ զէլմէլիք և զԳոհար, և զքարտիս կոկողս զՄինաս քըւերորդին իմ, և զվերոյգրեալսդ ի սմա՝ զԱբրահամ, և զայլ արեան մերձաւորսն ...։

բ

247 ա Ես՝ Դանիէլ աշակերտ բանի՝ ետու գրել զսուրբ աւետարանս՝ յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց՝ հաւրն իմոյ Պողո, և մաւրն իմոյ

* Մի բառ քերված է։

Ձմրուխտի, և Ները եղբարց իմոց Թումի և տէր Մարգարին, և հարազատ եղբաւրն իմ Խաըրշի, և կուսակրաւն որդոյ իմս Առաքելին, և զանարժան գրիչս յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր...։

Գ

Նպաստող՝ Աբրահամ

247 ա Ես՝ աղաւաշ Աբրահամս հոգով տկար, դարձոյց զիս ի մոլորեալ ճանապարհէ տէր Դանիէլ՝ աշակերտ բանի։ Եւ ետու թղթո գին Խ. (40) դրամ ղլիճպաղի, էառ և բազում ընչաւք և աշխատանաւք կատարեաց զսուրբ աւետարանս ուղիղ սրտիւք և ուղափառ հաւատով, զոր և աստուած վայելել տացէ իւր և արեան մերձաւորաց իւրոց, ամէն։

387

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4019

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Տաթև

ա

574 ... Ցանգ ելեալ աւարտեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ յոգնամեղ և փցուն գրչի Սարգսի, ի դերահոչակ և սուրբ ուխտիս Եւսաթէի, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Լուսաւորչիս, և այլ համաւրէն սրբոցս. առ ի յիշատակ հոգելից հաւրն իմ Թադէոսի, և բազմերախտ և արտասուալից մաւրն իմ Էլմին, վասն բազում երախտեացն, զոր ունէին ի վերա իմ սակաւ մի փոխարէն հատուցանելոյ, զի եղիցի սայ պատճառ բարեաց և ի փրկ-

575 կութիւն հոգ‖ ոց նոցա, ամէն։

Ո՜վ մանկունք սուրբ ե[կե]ղեցոյ, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք աստ, յիշեցէք զհոգևոր վարդապետն իմ Զեկիէլ, նայ և զծնաւղսն իմ՝ զհայրն իմ Թադէոս, և զմայրն իմ Էլմայ,* և զսնուցիչ մամն իմ Ազիզ, և զեղբայրքն իմ զԲախտիյար, զՄահրիյար, զԳրիգոր, զԱղութայ, և զքոյրն իմ Խովանդ, և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանիսն և զհանգուցեալսն։ Դարձեալ աղաչեմ և առ ոտս ձեր անկեալ պաղատիմ, յիշեցէք և զիս՝ զՍարգիս անարհեստ գրողս միով տէրողորմայիւ...։

Ի թվիս Հայոց ՊՀԶ. (1427)։

բ

161 Արդ, աղաչեմ զձեզ, ով մանգունք սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք աստ, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զհոգևոր մայրն իմ Ուլուխաթուն, որ զթուխթս գնեց, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

---

* 22-րդ էջի վրա, Հիսուսի և Մարիամի նկարներից ցած, կանգնած դիրքով նկարված են Թադէոսի, Էլմայի և գրիչ Սարգսի պորտրեները։ Կենտրոնում կանգնած է Սարգիսը կրոնավորի զգեստով, աջ ձեռքով կրծքին է սեղմել ավետարանը, ձախով բռնել է մետաղյա մի խաչ, աջ կողմում Թադէոսն է՝ ձեռքերը պարզած դեպի կենտրոն, իսկ ձախ կողմում՝ գրչի մայր Էլման։

Գ

432 Աղաչեմ յիշել յաղաւթս ձեր զհաւատարիմ աբեղայն Մովսէս, որ զթուղթս կոկեց։

Դ

Ծաղկող՝ Ղազար

162 Ո՛վ եղբայրք, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք աստ, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զհոգևոր վարդպետն իմ Շմաւոն. և զծնաւղսն իմ՝ զհայրն իմ Խնդիր և զմայրն իմ Խոնդիկ, և զիս՝ ղանպիտանս Ղազար անարհեստ ծաղկաւղ սորայ...։

388

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրդ. Նոտ. 82—83, Արապկիր

Գրիչ՝ Յովնաննէս
վայր՝ Հիզան, ի վանս Գամաղիէլի

...Արդ, կատարեցաւ աստուածախօս և տիեզերաքարոզ սուրբ աւետարանս ի խնդրոյ աստուածասէր և հաւատարիմ Հռիփսիմին, յիշատակ իւրն և ծնողաց իւրոց՝ հօրն Սադոնին և մօրն Թանխաթունին...։

Եւ արդ, ես՝ ունայնս ի բարեաց գործոց, սուտանուն գրչակս Յոհաննէս, որ անուամբս եմ և եթ և ոչ արդեամբք... ըստ իմում տկարութեանս գրեցի զսա՝ զսուրբ աւետարանս, ի վանքս որ կոչի Գամաղիէլ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյն Գամաղիէլի և ամենայն սրբոց, որ աստ՝ շուրջ զմեօք բնակեալ կան։ Ի յառաջնորդութիւն վանացս բաբունւոյս մերոյ Ներսէս բանախնգրի, և յեպիսկոպոսաց մերոց՝ տէր Ստեփաննոսի, և տէր Վարդանի, և տէր Դաւթի, զոր տէր աստուած ընդ երկայն աւուրս առնէ, և ի յայլ միեղէն եղբարցս՝ Պողոսուն, Ստեփաննոսին, Դաւթին, Յովաննիսին, Սարգսին, Մխիթարին, Յովսէփին, և տնտես Մխիթարին, զոր տէր աստուած պահեսցէ զսոսա խաղաղական կենօք մինչև ի խորին ծերութեան, ամէն։

Արգ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊՀԶ. (1427), ի ղանութիւն... Սքանտարին, և մերոյս քուրդ ամիրիս Դառուաին։

389

ԺԱՄԱԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

Գալեմք. Ցուց. Միւնխենի 6, էջ 20

Գրիչ՝ Զաքարիայ
վայր՝ Ուրծայ վանք

Փառք... որ ետ կարողութիւն տկար ոգոյ և տարտամ մարմնոյ Զաքարիայի փծուն գրչի հասանել յաւարտումն այսմ հոգենորոգ և բազմափթիթ աստուածային բուրաստանիս։ Արգ, գրեցաւ վրկական

սուրբ խորհուրդ և մեղսաքաւիչ պատարագիս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Ցտկոբիս, ի վանս որ կոչի Ուրծայ*, առ ոտն վարժապետիս մերոյ Սարգսի, և այլ միեղէն եղբարցս, որ աստ են հաւաքեալ ի թվականութեանս Հայոց ՊՀԶ. (1427)։

Արդ, յիշեսջիք ի մաքրափայլ և յերկնաթոիչ յաղաւթս ձեր զստացաւղ սորա զՆերսէս սրբամիտ և կուսակրաւն քահանայ, որ բազում փափաքանաւք և տենչմամբ սրտիւ խնդիր եղեալ վարգափթիթ և աստուածային պատարագացս, և եկեալ հանդիպեցաւ ի սուրբ ուխտ առաքելոցս Անդրէի և Մաթէի, և գտեալ զփափաքելին իւր՝ մեծ ուրախացաւ։ Եւ բազում աշխատութեամբ և մեծ ջանիւ ետ գրել ի հալալ ընչից իւրոց, յիշատակ բարի իւր, և ծնաւղաց իւրոց հանգուցելոցն ի Քրիստոս՝ հաւրն Սարգսի և մաւրն Շնոհվորի, և եղբարցն իւրոց Թումայի և Շահանշահի, և քւերցն, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոցն, ամէն։

Արդ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան... յիշեսջիք ի ժամ սուրբ պատարագին զվերոյգրեալքս ի սմա՝ զՆերսէս քահանայ, և զիւրքըն ամէն, նաև զՍարգիս Զագավանեցի, որ զգլխագիրն գրեաց, նաև զյաւրինակին տվաւղն, և որ զսակաւ յիշատակարանս գրեաց՝ զՅովանէս, և զծնողսն իւր...։

390

ՃԱՇՈՑ

Փիրգ. Նոտ. 83, Վան, Հայկավանք

Գրիչ՝ Մարտիրոս
վայր՝ Սխգայ գիւղ

...Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... Մարտիրոս սուտանուն քահանայ, տեսի զսէր և զփափագ սոցա՝ զԹումայի և զԱբրահամու, և ըստ իմում տկար անձամբս յանձն առի, և ամենակարող զօրութեամբն աստուծոյ կատարեցի... ի թուականիս Հայոց ՊՀԶ. (1427)։ Եւ գրեցաւ սա ի գեաւղս Սխգայ, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիս և սուրբ Աստուածածնի։

391

ԱՒԵՏԱՐԱՆ

«Թորոս Աղբար», Ա. էջ 65, Փիրղ. Նոտ. 81—82,
Ամասիոյ ս. Աստուածածին եկեղեցի

Հետ. ստացող՝ Սահակ
վայր՝ Ղաղալայ գիւղաքաղաք

Ի թվ. ՊՀԶ. (1427), ի հայրապետութեան տէր Պաւղոսի և յեպիսկոպոսութեան տէր Մխիթարայ Ամասիոյ վիճակին, աստուածասէր և բարեպաշտ քրիստոնեայս մղտեցի Սահակս գնեց զսուրբ աւետա-

* Ուրծայ վանքը՝ համանուն գավառի մեջ՝ գտնվում է Սյունիքի արևմտյան կողմում։

բանս ի յԱստուածատուր քահանայէն ԻԴ. (24) փլորի, ի յիւր հալալ յընչիցն և ի յարդար վաստակոցն, և ետ ի Ղաղալու եկեղեցին՝ ի սուրբ Սարգիս, յիշատակ իւր և ծնողացն՝ հաւրն Գառնուկին և մաւրն Ուստիանէ, և մի ոք իշխեսցէ յափշտակել զաւետարանս կամ ի քահանայից, կամ ի սարկաւագաց, կամ ի ժողովրդոց, կամ գողանալով, կամ տիրելով, այլ կացցէ ի հրճուանս սուրբ եկեղեցւոյս ի գիւղաքաղաքիս ի Ղաղալայ՝ ի սուրբ Սարգիսն։ Եւ որ ոք յանդգնի հանելոյ զսա ի սուրբ եկեղեցւոյս՝ նա այնպիսին անիծիւք լիցի և բանադրանաւք ի սուրբ հայրապետացն և ի սուրբ եկեղեցւոյս, և որ ոք կարդայ կամ աւրինակէ աստուած-ողորմի ասէ մղտեցի Սանակին, և ամենայն արեան մերձաւորաց, և կարդացողաց, և լաւ պահողաց։

392

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑՆ ՆԵՐՍԻՍԻ

Երևան 3429

Յետ. ստացող՝ Թորոս Ասլիպակենց
վայր՝ Մուլիվոն

103 ա Ո՛վ գրայգէտք, որ գիր գիտէք ու կու կարդայք, նայ զմեզավորս յիշեցէք՝ զԹորոս պարոն Ասիլպակենցս, և մեղաց թողութիւն խնդրեցէք, և աստուած զձերն թողու, ամէն։

Ի թվին ԸՃՀԶ. (1427) ի հոգտեմպերն ամիսն ԻԸ. (28), կիրակի, մտաք ի Մուլիվոն՝ ես Թորոսս, իմ որդաւքն ու տընաւվ, ու իմ մայրն, ու իմ աղբերն Գրիգորն ի հետս եկաք յառ Մաթիկ պապէն ու յառ իր որդիքն, և [որ] զմեզ յիշէ՝ աստուած զինք յիշէ ի բարին։

393

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Վենետիկ 131, Մ.Տ.Մ.

Մ. Աւգերեան, Լիակատար վարք սրբոց, ԺԱ. էջ ՀԴ—ՀԵ

Գրիչ՝ Ղազար Ղրիմեցի
վայր՝ Տրապիզոն

...Կարգեալ եղեւ բովանդակ տօնք սոցա աշխատութեամբ տէր Իսրայէլի, ի խնդրոյ Ջալալ-Դաւլայի տեառն Խաչենոյ, հրամանաւ Վանականի վարդապետի և հաբաղատին տէր Իսրայէլի Գրիգորոյ, զի նոքա հրամայեցին նմա, հայելով ի համբերութիւն և ի հնարիմաց գիտութիւն նորա, զի ջանս եդեալ գտցէ զօր նահատակութեան սրբոցն, որ գրեալ կայ ի լիակատար պատմութիւն նոցա, համառօտելով նմա զսքանչելի կատարումն սոցա։ Եդ ըստ այլ կարգի և զԱյսմաւուրս, զոր միաշունչ եղեալ անսղալ զտարին կատարեն։ Բայց ոմանք յանգէտս եղեալ հակառակին այսպիսի գեղեցիկ և սքանչելի ընթերցմանց, որ յամենայն օր զլսելիս մեր զարհուրեցուցանեն և դողումն ցաւագին տան անձանց մերոց, և ճանաչել իմանամք, թէ այնպիսեացն է ար-

քայութիւնն աստուծոյ, և զայս զմտաւ ածեալ՝ խորհիմք, թէ մեզ զինչ լինիցի՝ ծուլիցս և հեղգացելոցս։

...[Գրեցաւ] ի թվ. ՊՀԶ. (1427), ի յանապատս Տրապիզոնու, *ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս և սուրբ Յովհաննէսիս ... ձեռամբ* Ղազարի Ղրիմեցոյ ...։

394

ՃԱՇՈՑ

Վենետիկ 1613

Գրիչ՝ Ղազար Ղրիմեցի
վայր՝ Պոնտոս քաղաք

...Արդ, գրեցաւ սա ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի Ղազարի Ղրիմեցոյ,* *ընդ հովանեաւ սուրբ և փառաւոր գերեզմանին լուսաւորչին մերոյ Գրիգորի, ի խնդրոյ ... պարոն* Վարդանայ *և ամուսնոյն իւրոյ* Մամախաթունի ... *Եդին ի դրան սուրբ* Աւքսենտիս, *[զոր հիմնարկեալ է* Մելիտէ *քահանայն], որ է* Պոնտոս *քաղաքիս, յիշատակ... հաւրն* Պարոնին, *և մաւրն* Դովլաթ-խաթունին, *հարազատ եղբաւրն իւրսյ* Յազիզբէկին ...։ *Յիշեցէք... զառաջնորդն սուրբ ուխտիս...* զՄարտիրոս *վարդապետն և* զՄկրտիչ *հայրպետն, այլ և զկոկոզք նիւթիս՝* զԱրքնամն *և* զՅովանէս ...։

395

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 4452

Գրիչ՝ Ղազար Ղրիմեցի

ա

103 ա *Գրեցաւ աստուածաշունչ բուրաստանս, որ կոչի Քարոզգիրք, ձեռամբ յոգնամեղ խլխայթեալ մեղօք ոգո* Ղազար *աբեղի* Ղրիմեցոյ**, *ի խնդրոյ պատուական և գովելի իմաստայեղ գրոց աշակերտի* [Մարտիրոսի]***։

Արդ, աղաչեմ զհանդիպողսդ, յորժամ ճաշակէք ի քաղցրօրակ պտղոյ սորա, յիշեսջիք սրտի մտօք զվերոյասացեալ ստացող սորա [զՄարտիրոս] *գրոց աշակերտն, որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնօղաց իւրոց։*

Նաև զեղկելի ծրօղ սորա զՂազար *աբեղայս աղաչեմ յիշել ի բա-*

** Նախորդ հիշատակարանի գրիչն է։ Ըստ այդմ էլ անթվական այս հիշատակարանը տեղադրում ենք նրան կից, 1427-ի թվաշարքում։*

*** Նախորդ հիշատակարանի նման տեղադրում ենք 1427-ի թվաշարքում, նույն Ղազար Ղրիմեցու թվական ունեցող հիշատակարանին առընթեր։*

**** Ստացողի անունը, և՛ այստեղ, և՛ մյուս հիշատակագրության մեջ խնամքով քերված է։ Առաջարկվող անունը հնարավոր եղավ վերծանել քերվածի հազիվ նկատելի հետքով։*

րի մասին, և ծնօղսն իմ, և զամենայն արեան մերձաւորսն, և որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։

Այլ և սխալանացս և խոշորութեան գրոյս անմեղադիր լինել աղաչեմ, զի կար իմ այս չափ էր, զի անհմուտ էի արհեստիս, և թէ մեղադրէք՝ այն ձեր հրամանք է և մեր արժանք։

Բ

Գրիչ՝ Յոհանէս

21 ա Տէր աստուած, ողորմեա ստացողի սորա [Մարտիրոսի գրոց աշակերտի], և ծնօղի իւր, և ամենայն արեան մերձօորի, և գրողի սորա Յոհանէս աբեղի, և ծնողի իւր, բարեխօսութեամբ աստուածածնին և իւր, որ ամէն ասէ, ամէն, հազար։

Գ

130 ա Ո՜հ, զգրող սորա զՅոհաննէս մեղօոր աբեղաս և զծնողս իմ աղաչեմ յիշել...։

396

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ

Փիրղ. Նօտ. 83, Մարզուան, ի վանս Զարխափան Աստուածածնի

Գրիչ՝ Տիրատուր և Վարդան
վայր՝ Երուսաղէմ

...Գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊՀԶ. (1427), ի կաթողիկոսութեան տեառն Պօղոսի, և յեպիսկոպոսութեանս Երուսաղէմայ՝ տէր Մարտիրոսի: Տէր աստուած ողորմեա ստացողի գրոյս Մկրտիչ աբեղային, որ է լուսաւոր սուրբ Յարութեան տաճարին և սուրբ Գողգոթային, և գծողաց սուրբ տառիս՝ Տիրատուր և Վարդան աբեղայիցս։ Յիշեցէք զԵղիսաբեդ հաւատաւորն, որ յոյժ երախտաւոր է մեզ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ:

397

ՔԱՂՈՒԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 5133

Գրիչ՝ Թորոս
վայր՝ Երուսաղէմ

ա

58 ա Ո՜վ տեարք, աղաչեմ յիշել ի սուրբ յաղօթս ձեր զհեզահոգի վարդապետն Մել[ք]իսէդ, որ ետ գրել զսայ յիշատակ իւր և ծնօղաց իւրոց և ի վայելումն անձին իւրոյ։ Ընդ նմին աղաչեմ յիշել յա-

զօթս զոչ արժան գրիչս՝ զԹորոսս սուտանուն աբեղայ, և զծնօղս իմ, և զերախտաւորս, և անմեղադիր լերուք, զի չէի հմուտ արուեստիս։

Գրեցաւ ի սուրբ և յաստուածակոխ քաղաքս Երուսաղէմ, ի վանքս սուրբ Յակոբայ, ի Թվ. ՊՀԶ. (1427)։

Բ

Գրիչ՝ Վարդան

10 բ Զմելքիսէդ հեզահոգի վարդապետն և զՎարդան սուտանուն աբեղայ, աղաչեմ յիշել ի տէր։

Գ

152 բ Զբազմամեղ անձնս զՎարդան պիտականուն և զհեզահոգի կուսակրօն վարդապետն զՄելքիսէդ յիշել մաղթեմ սիրողացդ բանի, ամէն։

Գրիչ՝ Գէորգ

Դ

194 ա Զանարժան գծող սորա և զանարհեստ Գէորգ երէցս՝ միայն անուամբ և ոչ գործօք, աղաչեմ զձեզ, ով սուրբ ընթերցողք տեառն հրամանի, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր...։

Ե

152 բ Յիշեսջիք զՄկրտիչ աբեղայն՝ սիրող բանի՝ զլուսարար սուրբ Յարութեանն, որ զօրինակն շնորհեաց, և աստուած զձեզ յիշէ, ամէն...։

Գրեցաւ գիրս ի մէջ սուրբ Յարութեանս։ Անմեղադիր լերուք խոշորութեան գրիս և սղալանացն, զի շտապով գրէի։

Զ

58 ա Գարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՄելքիսեթ վարդապետն, որ ետ գրել սա յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, ի վայելումն անձանց տէր Եսայուն և տէր Դանիէլին, ով որ այս գրոցս հակառակի ծախելով կամ գողանալով՝ նայ անիծեալ է յամենայն սրբոց։

398

ՃԱՇՈՑ

Երևան 4977

Կազմող՝ Վարդան

149 բ Զկազմող սուրբ գրոցս զպանտուխտեալ և զվշտացեալ անձս՝ զՎարդան սուտանուն սարկաւագ աղաչեմ յիշել յաղաւթս ձեր, ով սուրբ ընթերցողք։ Կազմեցաւ ի Թվ. Հայոց ՊՀԶ. (1427)։

ՌԵԺ. ՌԵԺ. Ս. Ս. ԲՌԵԺ. ԲՌԵԺ. Բ. Բ. Ս. Ս. ԲԺ. ԲԺ. Ս. Ս. ԳԺ.

*ԲՃԾ. ԲՃԾ. Ս. Ս. ԳԺ. Ժ. Ժ. ԲՌ. ԲՌ. ԵՌ.։**
*Եթէ գտյիր ես դու կարդա, թէ չէ՝ վզիտ տուր ու հազայ։***

399

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նոտ. 84, Երզնկայ, Տոխայ վանք

Հետ ստացող՝ Ղազար

...*Ես՝* Ղազար, *որդի* Ստեփաննոսին, *ի* Վերին-Թլկանէն, *գնեցի զսուրբ աւետարանս և եդի յիշատակ ի դուռն սուրբ զինաւորին՝ սըրբոյն Սարգսի... Թվ. ՊՀԶ. (1427)։*

---

* *Գումարագիր ծածկագրով կարդացվում է՝ «Վարդան այշայ ի ար» հավանաբար ցանկացել է գրել՝ «Վարդանա յիշեայ ի տէր»։ Ս նշանը կես է նշանակում, ուրեմն Ս+Ս հավասար է մեկի, այսինքն՝ Ա–ի։*

** *Ձեռագիրն ըստ հնագրական տվյալների գրված պետք է լինի շուրջ մեկ հարյուրամյակ Վարդան կազմողի հիշատակարանից առաջ՝ ԺԴ. դարի առաջին կեսին։ Ձեռագրի 99 ր էջում պահպանվել է առաջին ստացողի հիշատակարանը, ուր գրված է՝ «Զստացող այսմ աստուածախաւս սրբոյ մատենիս՝ զպատուէլի հայրն՝ զվանական կոյս կրաւնաւոր քահանայն զԶաքարիաս յիշեսջիք ի բարին Քրիստոս, հանդերձ ծընողիւք և եղբարբք, ի հաշտութիւն հոգւոյ և ի թողութիւն մեղանց...»։*

400

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 6324

Գրիչ՝ Թումայ Մինասեն
վայր՝ Աղթամար

ա

...Արդ, այսմ ...մարգարտիս ցանկացող եղեալ... պատուական
և սրբասէր կրաւնաւորն Աբրահամ, ստացաւ զսուրբ աւետարանս...
296 բ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց՝ հաւրն իւրոյ Վարդա-
նայ և մաւրն իւրոյ Խութլուին, որպէս զի հանապազ ընթերցցին զսա
մանկունք եկեղեցւոյ և զաստուած-ողորմին աննախանձ կամաւք
ասասցեն նոցա։ Եւ ես՝ մեղուցեալ և անարժան ծառայս ծառայից
աստուծոյ Թումա, անուամբ և եթ միայն աբեղայ և ոչ գործով, տեսի
զփափագ սրա և զսէրն զոր ունէր առ հոգեորսն, և իմով անկատար
գիտութեամբս և տկար հոգւով և անարժան մարմնով յանձն առի զսա՝
վըստահանալով ի ներողութիւնն աստուծոյ։ Եւ ամենակարող զաւ-
րութեամբ նորին կատարեցի զսա յաստուծով նախախնամեալ կղզիս
297 ա Աղթամար, ընդ հովանեաւ գըմբէթայարկ և երկնանման սուրբ Խաչին
և սուրբ ‖ Աստուածածնին, և այլ բազմահաւաք սրբոց նշխարացս, որ
աստ կան հաւաքեալ։

Ի հայրապետութեան տեառն Դաւթի, և ի զանութեան ազգին
նետողաց ամիրզա Սքանդարին՝ թուրք ազգաւ, որ և տիրեաց աշխար-
հիս մերում և էառ բռնութեամբ զանառիկ ամրոցք աշխարհիս մե-
րոյ, այս է՝ զանմատչելիս և զանկոխս ոտից թշնամեաց և զտեղիս
ապաստանի բոլոր աշխարհացս՝ զկղզիս Աղթամարայ, և զանառիկ ամ-
րոցս և զմայրաքաղաքս երկրիս զՎանն, և զպարանոցատանջն զԱմուկ,
և մինչ ի Հէշտա և ի Նըւան՝ զբոլոր աշխարհս բռնակալեաց ընդ ձե-
ռամբ իւրով և ընդ իշխանութեամբ։ Եւ բազում և անթիւ չարիս և
դառնութիւնս անասելիս և անպատմելիս լեզուաց անցոյց ընդ աշ-
խարհս մեր, զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ ընդ գրով արկանել զաւէր
297 բ աշ ‖ խարհիս մերոյ և [կործա]նումն բնակչաց սորին։ Վասն զի այս
Ժ. (10) ամ է, որ մրրիկ բարկութեանն աստուծոյ ի յաշխարհիս մերում
յաճախագոյն երեեցաւ վասն ծովացեալ մեղաց իմոց։

Եւ պատմեցից ձեզ զգլխաւորսն կարճ ի կարճոյ բանիւ, զոր
տեսաք աչաւք մերովք, զի առ յապա եկեալքդ, լսելով զաղէտս մեր,
երկնչելով յաստուծոյ՝ դադարեսջիք ի մեղաց ձերոց։

Ի յՊ. և ի ԿԸ. թվականին (1419) եկն մարախ սաստիկ, ըստ անչափութեան աւազոյ ծովու, բայց ի յաւուրս հնձոցն եկն, և իրք մի կերաւ զվաստակն և իրք մնաց, և ձգեաց զսերմ իւր յերկիր. և միւս այլ տարին ձագն ելաւ և խիստ աւէր էած: Բայց յաստուծոյ խնամոցն ի գուբ շարժեալ իշխան աշխարհիս մերոյ Ամիր-Էզդինն՝ *առաքեաց մարդ և երեր ջուր, և հաւ եկն զկնի ջրոյն, և սատակեաց զմարախն, և ազատեցաւ երկիրս:*

298 ա *Իսկ ի յՊՀ. (1421) թվին շարժեցաւ թագաւորն Արևելից ամիրզա* Շաղռուխն՝ *անթիւ հեծելով, և սատակեցաւ* Ղարայ-Ուսուֆն՝ *տէրն* Թավրիզոյ *իւրով մահուամբ, և որդին նորա ամիրզա* Սքանդարն՝ *մարտ պատերազմ ի եդեալ ընդ Ջաղաթային, կոտորեալ եղև ի նմանէ. և սատակեցան սպանմամբ բազումք ի զաւրաց նոցա, և ինքն մազապուրծ փախեաւ ի ձեռաց նոցա: Իսկ թագաւորն Արևելից առեալ զամենայն աւար և անրաւ բարիս ի զաւրուն Թուրքաց՝ դարձեաւ յաշխարհն իւր, և մնաց թաղթն անտէր: Ապա վերստին դարձաւ* Սքանդարն *ի* Թավրէզ *և տիրեաց նմա, և ժողովեաց բազում զաւրս: Եւ միւս այլ տարին եկն բազում զաւրաւք ի վերայ* Խըլաթայ, *և բազում անձինք քրիստոնէից ի գերութիւն վարեցան ի ձեռաց նոցա,*

298 բ *և բազումք սրոյ ճա || [րակ եղեն | | |* Սքանդ]արն* *եկն | | | ել*[illegible]] *ի | | | յերկիրս մեր [և՞ խ]աղաղութեամբ [ա գ|նաց ի* Թավ[րէզ], *տանելով ընդ իւր զգերիսն:*



Նկ. 14. Թովմա Մեծոփեցի ինքնագիրը:

Իսկ ի յՊՀԲ. (1423) թվին գնաց նոյն Սքանդարն *բազում զաւրաւք ի վերայ* Ավրեկոյ, *և էառ զնա: Եւ իշխան աշխարհիս մերոյ գնացեալ առ նա բազում ընծայիւք ի գործ պատերազմին, և նա գեղ մահու աքքուցեալ իշխանին մերոյ* Մէլիք-Մահմադին՝ *սպան զնա, և աննարին սուգ և անմխիթար տրտմութիւն եհաս աշխարհիս մերոյ:*

Եւ ի սոյն ամի եկն սաստիկ մահ տարաժամ ի յաշխարհս մեր և մնաց Բ. (2) տարի ի բոլոր ծովուս, և բազում տունք աւերեցան և ծնաւղք անզաւակ մնացին:

Իսկ ի յՊՀԳ. (1424) թվին կոչեաց նոյն Սքանդարն՝ *զտէրն* Ոստանայ *զսուլտան* Ահմատն *և զտէրն* Բաղիշոյ *զՇըմըզդինն խաբանաւք*

* *Էջի ձախ եզրը ճղված է, մի քանի բառեր թերի են վերծանվում:*

299 ա առ ինքն || և կալաւ զերկուսինն։ Զճմզգիճճ սպան ի խլաթ, և ինքն յան-
դուգն յարձակմամբ և լի դառնութեամբ և անթիւ զաւրաւք եկեալ
նըստաւ ի վերայ անառիկ ամրոցին Վանայ, ընդ իւր ունելով երկա-
թի կապանաւք զսուլտան Աճմատճ։ Եւ զերկիրս մեր ի յառ և յաւար
և ի գերութիւն տուեալ Բ. (2) տարի, զոր ոչ է բաւական քարտէզս
գրով ընդունել յինքեան զաւէր աշխարհիս մերոյ. և [զնեղու]թիւնն,
զոր կրեցաք մորմոքով և վշտացաք հոգով ի կղզիս Աղթամար։
Իսկ ի յՊՀԴ. (14?5) թվին էառ ամիրզա Սքանդարճ զՎաճ և զայլ
բերդորայքն, և մըլքեց զաշխարհս մեր։ Եւ միւս այլ տարին գնաց ի
վերայ Բաղիշոյ։ Եւ այս Գ. (3) տարի է, որ Բաղէշ ի խըսար է, և
զվերջքն աստուած գիտէ։
Իսկ ի յՊՀԶ. (1427) թվին էառ նոյն Սքանդարճ զանառիկ բերթն
299 բ Մակուայ ի ձեռաց քրիստո || [նէից | | | և անմիի]թար կըս[կիծ-ե]-
հաս բոլոր ազգացս քրիստոնէից, զի բոլոր աշխարհացս այն մին
բերթն միայն էր մացեալ ի ձեռս քրիստոնէից. և այն ես առաւ ի
մէնջ։
Արդ, այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց. եւ
այսքան բաւական է առ այս։
Եւ արդ, ես՝ վերջինս ի ծնունդս եկեղեցոյ և առաջինս ի
դասս մեղաւորաց, ամենամեղ և յանցաւոր ծառայս ծառայիցդ աս-
տուծոյ Աբրաճամ սոսկանուն աբեղայս, յայսպիսում դառնութեան ժա-
մանակի ցանկացաւղ եղէ այսմ աստուածունակ և աստուածախաւս
կտակիս ...։* Ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց, և ետու զսա ըն-
ծայ և նըւէր ի մեծ և ի հռչակաւոր ուխտս Պատրկի վանք կոչեցեալ,
որ կայ հանդէպ Ոստաճ քաղաքի, ի դուռն սուրբ Աստուածածնին և
սուրբ Գէորգ զաւրավարին։ Վասն որոյ յերես անկեալ աղաչեմ զհան-
դիպողքդ սմա տեսութեամբ, կամ կարդալով և կամ աւրինակելով,
լի բերանով և բոլորախաւս լեզուաւ և ուղիղ մտաւք աստուած-ողոր-
300 ա մի ասացէք ինձ՝ մեղաւոր կրաւնաւորիս Աբրա || ճամու, և ծնաւղացն
իմոց Վարդաճա և Խութլուի, և այլ ամենայն արեան մերձաւորացն
մերոց՝ կենդանեաց և հանգուցելոցն։ Դարձեալ, յերես անկեալ աղա-
չեմ զսրբութիւնդ ձեր յիշել ի Քրիստոս զսպասաւորք սուրբ եկեղեց-
ւոյս, որք վայելողք են սուրբ աւետարանիս՝ զքաջ և զարիաբան,
զսրբազան և զուղղադաւան վարդապետն մեր զՅովաճճէս և զԱստուա-
ծատուր վարդապետն | | | ** զՄարտիրոս և զՅովաճէս, զՅովսէփ և
զԱստուածատուր, զՄկրտիչ և զՎարդաճ, զԿարապետ և զՍտեփաճոս,
զՎարդաճ և զԱտոմ միայնակեացն։ Այլ և զխրատիչքն մեր և զուսու-
ցիչքն և զառհասարակ երախտաւորքն, որք ընդ հովանեաւ սուրբ
301 բ եկեղեցեացս հանգուցեալ կան, որք յառաջ քան՝զմեզ, զորս | | | ***

* Բաց ենք թողնում մեկ-երկու էջ, ուր գովաբանվում է ավետարանը և արվում են
աստվածաբանական դատողություններ։
** Զորս տեղ մաշված և անընթեռնելի։
*** Երեք տող՝ անընթեռնելի։

ան]ժամանա[կեայ փոխ]եցան յաշխարհէս՝ զԹումա վարդապետն, և
զՍարգիս սրբակրաւն աբեղայն, զՍտեփաննոս հեզահոգի վանից հայրն,
և զՅովանէս, և զՄարգարէ, և զՄկրտիչ, զՅովաննէս, և զՍտեփաննոս՝
զՄարտիրոս, զՁաքարիայ, և զՅովանէս, և զՎարդան, և զայլ առհասա-
րակ ննջեցեալսն ի դուռն սուրբ եկեղեցացս, վասն որոյ աղաչեմ զձեզ
ուղիղ մտաւք աստուած-ողորմի ասել ամենեցուն առհասարակ յիշե-
լոցս ի սմա՝ կենդանեացս և հանգուցելոցսն։

Եւ արդ, ես՝ ունայնս և Թափուրս յամենայն հոգևոր բարեմաս-
նութեանց, անկարգս ի կարգաւորաց և անյիշելիս ի գրչաց, անուամբ
միայն աբեղայս Թումայ յերես անկեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր յիշ-
302 ա ման արժանի առնել և զիմ անարժանու ‖ Թիւնս և Թողութիւն մեղաց
խնդրել ի Քրիստոսէ ինձ, և ծնաւղացն իմոց Սիմէոնի և Արղունի, և
քուերցն իմոց, և ամենայն արեան մերձաւորացն, այլ և երախ-
տաւոր քեռոյն իմոյ և ուսուցչին Թումա միայնակեցին, և հաւրեղ-
բաւրն իմոյ Վարդանէն, և որդոյ նորա Մկրտիչ կրօնաւորին՝ հանգու-
ցելոցն ի Քրիստոս, և նորաբողբոջ քուերորդւոյն իմոյ Հայրապետ
կրաւնաւորի, որ աւգնական և ձեռընտու եղև [սմա՝ կո]կելով զնիւ[Թ
Թղթիս]...։

Այլ և խոշոր և անյարմար գրոյս և անարհեստ ծաղկիս, աղաչեմ
302 բ [անմեղադիր լինել | | | ...։ Գծագրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւե-
տարանս ի յՊ. և յՀէ. (1428) Թվականին, և ընծայեցաւ ի դուռն Պա-
ղըրկայ վանից սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգ զաւրավարին։
Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ տաճարացս գո-
ղանալով, կամ ծախելով և կամ գրաւելով։ Եւ ով յանդրգնի և հանէ՝
պատիժ պատուհասի կրեսցէ ի Քրիստոսէ, ընդ Կայենի և ընդ Յու-
դայի և ընդ խաչահանացն, ամէն,*

Բ

141 բ Ո՜վ կրաւնաւորք և կարգակիցք,
Ծգնաւորաց հանդիսակիցք,
Սուրբ կուսանացն դասակիցք,
Եւ անմարմնոցն հանդիսակիցք,
Որք հանդիպիք այս մատենիս,
Աստուածախաւս սուրբ կտակիս՝
ԸզԱբրահամ մեղաւք գերիս,
Կարգիւ պատուեալ, գործովք յոռիս,

* Այս ընդարձակ ու բովանդակալից հիշատակարանը Ղ. Փիրղալեմյանը իրավամբ համարել է «Տարեգրություն», բայց ամբողջական հրատարակելու փոխարեն՝ ըստ առան-ձին տարեթվերի բաժանել է հատվածների ու ցրել իր «Նոտարք Հայոց»-ի տարբեր թվա-կանների տակ՝ սկսած ՊԿԸ. (1410)-ից մինչև ՊՀԷ. (1428) թվականը։

Փիրղալեմյանի ընդօրինակությունից օգտվելով, հիշատակարանն ամբողջությամբ հրատարակել է Գ. Աղանյանը «Դիւան Հայոց Պատմութիւն» ժողովածուի Ժ. հատո-րում (Թիֆլիս, 1912, էջ 1—5)։ Այդ հրատարակության մեջ կան որոշ հատվածների հապա-վումներ ու կրճատումներ։

Ցաղաւթս ձեր միշտ յիշեսջիք.
Եւ զողորմին բարբառեսջիք,
Ցորժամ սիրով միարանիք
՚Ի յԱստուածածնի գուռնա կանգնիք։
Իմ աչքս ի ձեզ է հանապազ,
Զի իմ գործել մեղք աննուազ,
Դուք կարգալով զայս հանապազ
Զհոգիս հանէք ի սրբոց դասն։
142 ա Այլ և զԹումայ՝ գերեալ մտաւք
Եւ զանպիտան հոգիս տիաւք
Մաղթեմ յիշել սրտի մտաւք,
Սեռն սիրով, բարի կամաւք։
Զտէր-ողորմայն լի արտասուաւք
Ողորմագին պաղատանաւք՝
Ինձ առձայնել սրտի մտաւք,
Եւ ձեզ լիցի կրկին չափաւք։

Զկնի Ռ. և ԳՃ. և ՂԷ. (1397) ամի համբառնալոյ փրկչին* գծագրեցաւ սուրբ աւետարանս։**

401

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4156

Գրիչ՝ Մելքիսեթ Բաղիշցի
վայր՝ Արճէշ

258 ա . . . Արդ, գրեցաւ սուրբ աւ‖ետարանս ի քաղաքս ի Բաղէշ՝ կէսն։ Եւ ի յայնմ աւուր մեղքն մեր բազմացաւ, և աստուած մեզ բարկացաւ և առաքեաց ի վերայ մեր զպարոն Սքանդարն, զոր եկեալ պաշարեաց զքաղաքն մեր, և բազում չարիս գործեաց ի քաղաքն մեր և յերկիրն։ Շատ աստուածարնակ վանորայս աւերեաց և բազում ժամատեղս խափանեաց։ Զոր մեզ փախստական լեալ, ի բազում տեղիս ի շուրջ եկեալ, և շատ վիշտս կրեալ մեզ ի բազում մեղաց մերոց, և ոչ գտեալ մեզ հանգիստ։ Այլ յետո գԹացեալ արարիչն աստուած և առաջնորդեալ մեզ հասոյց զմեզ ի յերկիրս Քաջբերունի։ Զոր եկեալ բնակեալ մեր ի քաղաքիս Արճէշ, և եղև աւարտումն սորա աստ, առ ոտս

* Այստեղ ևս նշված է ձեռագրի գրության 1428 Թվականը։ Այսպես՝ ըստ ավետարանի Քրիստոսը, իբր, խաչվել և համբարձվել է 33 տարեկան հասակում (ուստի քրիստոնեական Թվարկության 33 Թվականին)։ Ուրեմն 1397 Թվականին պետք է ավելացնել Քրիստոսի տարիքը (33 տարի), ստացվում է 1430 Թվականը՝ ըստ հայկական Թվարկության, որը համապատասխանում է այժմ կիրառվող Թվարկության 1428 Թվականին։

** Ձեռագրի վերջում կան մի քանի ուշագրավ կալվածագրեր Վարգ-Պատրիկի վանքին անշարժ կալվածքներ նվիրաբերելու մասին։

սուրբ Ծիրանաւոր Աստուածածնիս և աստուածաբնակ վանորէիցս՝ Մեծափու սուրբ Աստուածածնիս և Արծւաբեր սուրբ Աստուածածնիս, ի մէջ հեռաւոր և քաջ րաբունապետացն՝ Թումա վարդապետի և Կարապետ վարդապետի, ընդ հովանեաւ գմբեթաձև և գեղազարդ հինգ-խորանացս Կաթողիկէ եկեղեցոյս՝ սուրբ Աստուածածնիս, սուրբ Յով[աննէսի]. սուրբ Ստեփանոսի և սուրբ Յակոբայ։ Ի հայրապետութեանն
258 բ Հայոց տեառն Պօղոսի, ի մեծ թու || ին Հայոց ՊՀԷ. (1428), ձեռամբ սուտանուն քահանայի Մելքիսէթ Բաղիշցոյ։ Եւ իմ անընդունակ գոլով յարուեստս գրչութեան և բազում մեղացն ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատանաւք գրեցի անարժան ձեռաւք իմովք, ի սաոյք և յընտիր աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ։ Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ և ընթերցմամբ յիշեսջիք յաղաւթս ձեր զստացող սորա զվերոյ յիշեցեալն ի սմա [զՅակոբ կրաւնաւորն, և զՅոհանէս, և զԹումէն],* և բոլոր հաւատով և սերտ սրտիւ աստուածողորմի ասացէք, և աստուած ձեզ՝ յիշողացդ ողորմեսցի առհասարակ, ամէն։ Ընդ նոսին և զանպիտան գրիչս զՄելքիսէթ, և զծնողքն իմ զՅակոբ քահանայ, և զմայրն իմ զԱխաթունն՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և զկենակիցն մեր, և դարձեալ զհաւրեղբայրն իմ զպարոն Աշխարբէկն, և զկենակիցն իւր, և զաւակքն իւր՝ զհանգուցեալքն ի Քրիստոս, և զբարի յիշատակն իւր զՅոհանէսն։
259 ա Եւ դարձեալ, զքոյրն իմ զՇահանդուխտն, և զքեռին իմ՝ զպատուական քահանայն զԿարապետ, և զկենակիցն իւր, և զուսուցիչքն մեր և զխրատտատուքն, որք հետ մեզ աշխատել են, և զամենայն ազգականքն մեր՝ զկենդանիքն և զհանգուցեալքն ի Քրիստոս...։

Արդ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան սխալանացն և խոշորութեան ծաղկին և գրին անմեղադիր լինել, զի այս էր կար մեր։

Բ

Եղբարք, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այս սուրբ աւետարանիս և այս | | | յիշես]ջիք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան քահանայս զՄելքիսէթ, և բո] | | այս չա]փ էր կար մեր, զի վարդպետի չենք ծառայել և ոչ այլ հանել, այլ ինձ սէր գո | | |**

* Փակագծի մեջ առնված հատվածը գրված է հետո՝ այլ ձեռագրով։

** Հիշատակագրությունը գրված է երեք տողով. տողերի ձախ կեսը գտնվում է 3 բ էջի ստորին լուսանցքի վրա, իսկ դրա շարունակությունը (աջ կեսը) գտնվելիս է եղել այժմ բացակայող հաջորդ էջի ստորին լուսանցքի վրա։ Այսպիսով, հիշատակագրությունը կիսով չափ թերի է։

402

ՑԱՑՍՄԱՒՈՒՐՔ

Փիրդ. Նօտ. 89—90, Վան, Հայկավանք

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Մեծոփայ վանք

...*Ի թուաբերութեանս Հայոց ՊՀԷ. (1428) թուականին գրեցաւ գիրքս սոսկացուցիչ, ի հայրապետութեան տեառն* Պօղոսի, *և յաշխարհակալութեան շահ* Իսքանտարին, *որ ունէր զթաղթն և բազում աշխարհ, ի* Սօլթանիոյ *մինչ ի* Մէրտին, *և զայս միջոցս զամէն ի ձեռին ունէր։ Եւ զի տղայ էր և չոր գլուխ՝ շատ աւեր եբեր* Քրդստանաց, *և սպանեց զպարոնէքն, և շատ աւար տարաւ և դերի՝ վասն ծովացեալ մեղաց մերոց։ Եւ յայսմ ամի հոգեգալստեան ծնկահար ձիւն եբեկ։*

Արդ, այս չար ժամանակիս կրօնաւոր ոմն աբեղայ Սարգիս *անուն ետ զգիրս ի գրել և ինքն փոխեցաւ առ Քրիստոս...։ Եւ ես՝ սուտանուն* Յոհաննէս, *յանձն առի և շնորհօք Քրիստոսի աւարտ հանի։ Գրեցաւ գիրքս լուսազարդ ի վանքս* Մեծոփայ, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Ցակոբիս, և առ ոտն մեծ րաբունապետի* Թումայ *վարդապետի՝ պարոն* Գորգու *աղբեր, և տէր* Յոհանիսի, *զոր տէր աստուած պահեսցէ զնոսա ի խաղաղութեան ամրածածուկ աջովն իւրով և բարձր ի գլուխ։*

403

ՃԱՌԸՆՏԻՐ—ՏՕՆԱԿԱՆ

Վիեն. 224. Տաշ. Ցուց. էջ 583

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Կողուց վանք

ա

431 ա-431 բ *Փառք... որ ետ մեզ կարողութիւն հասանել ի յետի գիծ ոսկեփոր աւանականիս յաստուածարնակ ուխտս որ կոչի* Կալուց վանէ, *ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, եւ սուրբ նշանացն Քրիստոսի։ Ցառաջնորդութիւն երջանիկ... մեծ րաբունապետին* Յակովբայ: *Ի խնդրոյ հաւատարիմ եւ աստուածասէր տանուտիրոջն պարոն* Մկրտչին, *որ մեծաւ փափագանօք... ետ գրել զսա յիշատակ իւր, եւ ծնողաց իւրոց՝* Սալաթելին *եւ տիկին* Մելեքին, *եղբարցն՝ կենդանւոյն* Ստեփանոսի, *եւ փոխեցելոցն առ Քրիստոս* Սահակին *եւ* Գէորգ *սարկաւագին, եւ կնոջն՝* Նունուֆար-խաթունին, *եւ որդւոյն* Յոհանէս *սարկաւագին։*

Եւ ես՝ ամենամեղ եւ սխալամիտ գծողս Կարապետ *աբեղայս տեսի զփափագ սորա եւ տկար անձամբ ի գրել սկսայ։*

...*Արդ, գրեցաւ սա ձեռամբ նոյն անմար* Կարապետի *եւ անպիտան գրչի, յամի ՊՀԷ. թըւականի մերումս տումարի (1428)։ Ցաշխարհակալութիւն եւ ի տիրութիւն Թախտին* Իսքանդար *իմիրզին, որ տիրեաց* Պարսից *եւ* Բաբելացւոց, *Հայոց եւ* Միջագետաց Ասորւոց, *յ*Արա-

բաթեան տանէն Հայոց՝ մինչ յԽզնկայն, ի Մերդին, ի Բաղդատ, ի Սուլթանիայ, եւ ի Գանձակ շահաստանն Թաւրէզ, եւ մինչ ի մեծ գետն Քուռ: Զայս ամենայն ի բռին ունէր Իսքանդար խմիր[զ]այն։

Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ աւգտութեամբ ինչ իւիք՝ յիշեցէք ի միտս բարիս եւ ի հայցուածս պատկանաւորս՝ զստացող սորա զՄկրտիչ* հաւատարիմ տանուտէրն . . . քանզի ստացաւ զսա իւր զաւակ հոգւոյ եւ յիշատակ բարի յեկեղեցի . . .։

Արդ, աղաչեմ զամենեսեան [յիշեցէք] յաղօթս ձեր՝ զբազմամեղ գրիչս Կարապետ, եւ զծնաւղսն իմ զԽաչատուր եւ զԱղբրաց, եւ զեղբարքն՝ զԱւետիս սրբասնունդ եւ բարեմիտ աբեղայ, որ պայծառ է իբրև զջահ ի մէջ եկեղեցւոյ, եւ զԹումայ քահանայ, այլ եւ զվարպետն իմ զԹումայ կրօնաւոր, եւ զծնողսն իւր զԱբրահամ եւ զՀերիք-Տիկին, ամէն։ Այլ եւ զհոգեւոր հայրս մեր զՄելքիսէթ առաջնորդ սուրբ ուխտիս . . .։ Այլ եւ յիշեցէք ի Քրիստոս զհոգեւոր եղբարքս իմ՝ զԱնդրիաս սրբասնունդ կրօնաւոր՝ զեղբայր մեծ հռետորին Յակովբայ, . . . եւ զաշակերտքն իւրեանց՝ զՅովհանէս գրոց աշակերտ եւ զՅոհանէս-Ղազարոսենց, զՄխիթար եւ զՄարտիրոս, զՀայրապետ եւ զՄաքտիրոս, զԴանիէլ փակակալն եւ զՆերսէս փիլիսոփայն, զՄկրտիչ եւ զԹումաս, եւ զայլ միաբանք վանացս՝ զսարկաւագ եւ զաշխարհական՝ զմեծ եւ զփոքր, որ կան ի գաւառս սուրբ Լուսաւորչին։ Ո՛վ կարդացողք եւ լսողք, վասն եղբայրսիրութեան գրեցաք, որ ի կարդալն չձանձրանայք . . .։

Բ

Վայր՝ Արծկէ

432 ա Ընդ նմին եւ աստուած-ողորմի ասացէք Յոհանիսին, Եղիին եւ Իկտիշ մամուն, զի գիրքս բոլոր ի յԱրծկէ գրեցաւ, զի փախած էաք ի քրդուն, եւ ի սոցա տունն հանգչաք, Քրիստոս յիւրեանց հոգին հանգչի, ամէն։**

404

ՔԱՂՈՒԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ

Ալիշան, Հայկարան

Գրիչ՝ Ստեփանոս

Գրիչ Ստեփանոս, որդի պարոն Մկրտչի և Մլքէ-խաթունի, եղբայր Աբրահամի և Սարգսի, ի քաղաքիս | | | ան,*** ի հայրապետութեան տեառն Պաւղոսի և յԱղթամարայ Դաւթի, ի խանութեան Սքանդարի, ի Թշուառ և ի չար ժամանակիս, որ եղև Թանկութիւն սաստիկ, որ մի բեռ հացն է Ռ. (1000) դրամ։

---

* Վրան գրված՝ «զՆերեմիան»։

** Ձեռագրում կան նաև բազմաթիվ մանր հիշատակագրություններ, որոնցում հիշվում են նաև «քարտեա կոկողներ» Թումայ աբեղան (էջ 100 ա), Աւետիս կրօնաւորը (էջ 100 ա) և Ղազար սարկաւագը (էջ 341 բ)։

*** Հավանաբար եղել է «Ոստան»։

405

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 0401

Գրիչ՝ Մովսէս Անկեղակութեցի
վայր՝ Անկեղակութ

240 բ Փառք ... որ ետ կարողութիւն անարժան և ապուշ գրչի Մովսէ-
սիս Անկեղակութեցոյ հասանել ի վերջին գիտութեան աստուածաբան
սուրբ աւետարանիս ...։
Այսմ մեծ երանութիւն փափաքեալ հոգով ոմն երկիւղած քրիս-
250ա տոնեայ Տաշ անուն, և ստացաւ ի սուրբ աւետար[ա]նս հալալ ար-
դեանց իւրեանց, վասն զի ոչ ունէր զաւակ մարմնոյ, յոյս եդեալ ի
սուրբ աւետարանս ըստ [խո]ստմանն տեառն, եթէ՝ Ես եղեց նմայ ուս-
տերս և դստերս ...։
Արդ, ես՝ անարժանս Տաշ ստացայ զսուրբ աւետարանս յիշատակ
հոգոյ իմոյ և ծնողաց իմոց։ Եւ յետոյ իմ սրտիս յաւժարութեամբ
Հայրապետին յազգէ յազգ և ինձ յիշատակ յաւիտեանն։ Եւ յայժմ յե-
րես անկեալ դառն արտաս[ու]աւք, աղաչեմք հանդիպաւղ սուրբ աւե-
տարանիս յիշել ի սուրբ աղաւթս ձեր զիս և զծնաւղս իմ...։
250 բ Գրեցաւ աստուածահոս քառաբուղխ [ջրո]րս, աստուածախաւս
հրամանս, ի թվկայութիւնս ՊՀԷ. (1428), ի հռչակաւոր գեղս Անկե-
ղակութ. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի ղանութիւն Սքան-
դար միրզին, և յիշխանութիւնն Բէշկ[են]ին, և առաջնորդութիւնն Շա-
պանին: Վասն որոյ և ես՝ մեռեալս հոգով և նեղեալս ի բազմադիմի
հէնից չարին՝ հեծեծեալ աղէտիւ և ողնաթաղիծ մաղթանաւք, հայ-
ցեմք ի մանկանց սուրբ կաթուղիկէի յիշել ի մաքրափայլ յաղաւթս
ձեր զՄովսէս անարհեստ գրիչս, և զծնողս իմ զՄխիթար, և զյուսու-
ցիչն իմ զՍտեփանոս, և զեղբայրն իմ զՆերսէս, և զայլ ամենայն մեր-
ձաւորն իմ ի Քրիստոս, և իբրև կաթիլ մի ի դուլէ ձերոյդ կենեղուտ
լեառնէ կարկաջահոս իջմամբ ցաւղելով ի մեր պասքեալ և ռոչորեալ
հոգի՝ զովացուցել զծարաւ տագնապի խորշակահարս հայցողի Մով-
սէսի, որ և զարժանն և եթ, զանիմանալին յեղական սեռից զանպա-
տում և զանճառ ուրախութիւն առնոյք փոխարէն ամենառատ պար-
գևողէն։

406

ԱՒԵՏԱՐԱՆ

«Արարատ», 1911, էջ 567, «Ագուլիս և շրջակայք», № 23

Գրիչ՝ Եղիայ Հադրուդեցի
վայր՝ Ճգնաւորի Քար

342 բ ... Ցանգ ելեալ աւարտեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ յոգնա-
մեղ և փցուն գրչի Եղիայի, որ անուամբ կոչիմ աբեղայ և ոչ գոր-
ծով, աշխարհաւ յԱղվանից, և տեղեաւ Դիզակեցի, և գեղաւ Հադրուդեցի։

Գրեցաւ սուրբ մատեանս ի յանապատիս որ կոչի Ճգնաւորի քար, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, որ է մաւտ* ի քաղաքս Եղեգիս. ընկերակից մեր տէր Սարգիս կուսակրաւն և ճգնազգաց | | | ընդիս քահանայիս | | | է պատճառ մեզ հանգստեան այսմ դառն ժամանակիս. անփորձ և անսասան պահեսցէ զսա Քրիստոս աստուած յայսմ կենցաղիս և յետ աստեացս ընդ ճշմարիտ քահանայիցն լիցի դասակից և պսակակից։

Դարձեալ, աղաչեմ զձեզ զծնօղսն իմ ըստ մարմնոյ՝ զհայրն իմ զՄէսար, և զեղբայրն իմ զՋէսար, և զամենայն արեան մերձաւորս իմ յիշել ի տէր, և աստուած զձեզ յիշէ ի բարին, ամէն։

Դարձեալ, աղաչեմ զձեզ հանդիպողք սորին՝ զվարպետն իմ զտէր Յաթանաս յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր և զմեղսապարտ գրիչս, որ յետ սակաւ ժամանակաց ձեռս իմ հողանայ և մաղթանք իմ առ ձեզ մնայ...։

Ի թվիս Հայոց ՊՀԷ. (1428)։

407

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 73, սյուն. 135—136, ԲՑՎ 252, Վանի Ցայնկոյսներաց եկեղեցի

Հետ. ստացող՝ Պետրոս Եղեգեցի

Կամաւն ամենակալին աստուծոյ ես՝ տէր Պետրոս արհեպիսկոպոս (Եղեգեցի), վերադիտող այսմ նահանգի, իմ կամաւ և յաւժարութեամբ զիմ աւետարանս, որ բերի յԵրուսաղէմայ, ստացուած հալալ արդեանց իմոց՝ ավի իմ սանամայր պարոն Սէթի-Խաթունին** և իւր աստուածատուր զաւակացն՝ կենաց բարեխօս և քաւիչ յանցանաց, որ քանի կենդանի է՝ յամէն տարի Բ. (2) պատարագ տայ առնել մեզ, և երկու ոչխար մատաղ՝ անխափան։

Աստուած շնորհաւոր առնէ պարընացն զսուրբ աւետարանս՝ անջինջ յիշատակ հոգոց նոցա այժմ և յապագայն և յետ մահու, և բարեխօս առաջի զենման անմահին։

Հաստատ է կտակս կամաւն աստուծոյ։

Գրեցաւ յիշատակս ձեռամբ պիտակ պետի Յովանէսի, առ դրան սուրբ Աստուածածնիս, և Գէորգեայ զօրավարիս, և սուրբ Ստեփանոսիս, ի թվաբերութեան հայկազեան տոմարի ՊՀԷ. (1428)։ Աստուած շնորհաւոր առնէ, ամէն։

---

* Տպված է՝ «որ եմուտ»։
** ԼՑՎ՝ «Սիթի-Խաթունին»։

408

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6211

Գրիչ՝ Մանաւէլ
Վայր՝ Աղուանք, Շուշու գիւղ

ա

359 բ ...Արդ, գրեցաւ աստուածագիծ սուրբ աւետարանս ձեռամբ [յ]ոգնամեղ և ապիկար գրչի տէր Մանաւէլի,* ի Թվականութեանս Հայոց ՊՀԷ. (1428), ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի
360 ա գեղս Շուշու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի կաթողիկոսութեան տէր Յոհանիսի, զոր տէր Յիսուս պահեսցէ երկար ամաւք, ամէն, և ի բռնակալութեանն Ըսքանդարին, որ է Թորգոմածին և չարչարող քրիստոնէից, և յոյսն աստուած է։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ աւետարանիս, յիշեցէք զիս՝ զտառատիպ գրողս զտէր Մանաւէլ, և զծնողսն իմ, և զամենայն տզգայինսն իմ, և աստուած, որ առատն է ի տուրս պարգևաց, ողորմեսցի մեզ և ձեզ, ամէն, և որ յիշէ յիշեալ լիցի առաջի Քրիստոսի, ամէն։

բ

Ալէքսիանոս եպիսկոպոս Ամարասայ

10 բ Տէր Մանուէլայ գր[ե]անքն բաժանեցին, աւետարանք անկաւ ի Մեսրոբ: Ես՝ տէր Ալեքսիանոս գրեցի, որ Մեսրոպայ հախ ելաւ, ապրանք Մեսրոպայ ելաւ և իւր որդոյն | | |** ոչ ով ուժ չանի կալըստան*** պահի, քանի որ կենդանի է, ոչ ով ուժ չանի։ Մկրտչայ աստուած-ողորմի աւէ և իւր ննջեցելոցն։

գ

Կամաւ ամենակալին աստուծոյ. յորժամ որ տէր Մանուէլ վախճանեցաւ՝ գրեա<եա>նքն բաժանեցին տէր Մանուէլայ եղբարքն։ Դ. (4) եղբարքն էին տէր Մանուէլայ՝ [Մեսրոպ],**** Խոջազիզի, Մկրտիչ և Մարտիրոս՝ Ջանազիզայ որդի։

Ես աէր Ալեքսանոս՝ եմ եպիսկոպոս Ամարասայ, և յիշատակ տէր

* Բնագրում՝ «Մաւանէլ»։

** Մեսրոպի որդու անունը ջնջված է։

*** Սույն բառի երկրորդ տառը լավ չի երևում, կարելի է կարդալ նաև «ու» և այլն, սակայն կարծում ենք, որ մեր առաջարկածը («կալըստան») ճիշտ է, և պետք է նշանակի այստեղ՝ «կալ մեջ առնել», «սեփականել»։

**** Եղբայրներից Մեսրոպի անունը ջնջված է, վերականգնում ենք նախորդ հիշատակագրության տվյալով։

Մանու[էլ]այ, և որդի նորա Կոստանդիանոս[ի]. և որդոյ որդի Ոյիսի* և այլոց։**

409

ԱՒԵՏԱՐԱՆ

«Երնջակ», էջ 258

Գրիչ՝ Մանուէլ
վայր՝ Ամարասայ վիճակ, Քթիսոյ վանք

ա

...Գրեցաւ աւետարանս ի Թվ. Հայոց ՊՀԷ. (1428), ձեռամբ մեղապարտ գրչի տէր Մանուէլի, ի վիճակս Ամարասայ, ի վանքս Քթիսոյ, ի դառն և անբարի ժամանակիս, որ Թորգոմացի ազգն տիրեն աշխարհի, և ամենեքեան ի մեծ վշտի կան, և ազատութիւն տեառն կամքն է։

Արդ, աղաչեմ զհանդիպողք կենաց բաբբաբողիս, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զտէր Մանուէլ մեղաւոր հոգս, և ըզծնօղսն իմ, և զամենայն երախտաւորս ի յաշխարհի...։

բ

Ստացող՝ Մելքիսէդ

Ես նուաստ Մելքիսէդ աբեղայ, որդի Ասադայ, ետու գրել զաւետարանս ձեռամբ տէր Մանուէլա, յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց՝ հաւրն իմոյ Ասադայ, և մաւրն իմոյ, և եղբարցն իմոց, և ամենայն ազգականաց և արեան մերձաւորաց...։ Ով որ կարել ջանայ զյիշատակարանս՝ նզովեալ լիցի ՅԺԸ. (318) հայրապետացն, մասն և բաժին զՅուդային առցէ, ամէն։

410

ՄԱՇՏՈՑ

Երևան 3456

Գրիչ՝ Մելքիսէթ
վայր՝ Խութ գաւառ, Քեռու գիւղաքաղաք

ա

204ր ...Գրեցաւ սուրբ տառս, որ Մաշտոց անուանի*** ձեռամբ անարժան փծուն և անմար գրչի Մելքիսէթ քահանայի, ի գաւառիս, որ Խութ կոչի, ի գեւղաքաղաքս, որ Քեռու անուանի,**** առ ոտս սուրբ

---

* Բնագրում մեծ դժվարությամբ կարդացվում է «դրի ոյիսի»։ Ենթադրաբար սրբագրում ենք՝ «որդի Ոյիսի»։

** Հիշատակարանի վերջին նախադասության իմաստը մնում է մութ։

*** Բնագրում՝ «անուանուան»։

**** Բնագրում՝ «անուանանի»։

անապատի գլխոյն մեծին Թադէոսի, որոյ անուն Վանդիր կոչի, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի ՚ւ որդւոյ նորա Մարտիրոսի և սրբւոյն Շամօնի։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ուսմամբ՝ կար-
205ա դալով, աւրինա ‖ կելով կամ հարենցի, յիշեսջիք ի Քրիստոս և ի սուրբ յաղաւթս ձեր զՍիմէոն քահանայ, և զծնաւղսն իւր՝ ըզհայրն Ուզբէկ* և զմայրն իւր ըզԻմչայն*, և զեղբայրքն իւր, և զորդիքն, և զԱյմելէքն, որ ստացաւ գիրքս*, և զամենայն արեան մերձաւորքն, և լի բերանով և ուղիղ մտաւք աստուած-ողորմի ասացէք Ամելէքին* և ծնողաց իւ-րոց, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց և ի յարդար վաստակոց, զոր տէր աստուած վայելել տացէ՝ երկար ամաւք մինչև ի խորին ծե-րութիւն, ամէն։ Այլ և զմեղուցեալ գրիչս զՄելքիսէթ քահանայ, և զհայրն իմ զՅակոբ քահանայ, և զմայրն իմ զԱխաթունն, և զամենայն
205բ արեան մերձաւո ‖ րքն մեր յիշեցէք...։

Ի թվկ. Հայոց ՊՀԷ. (1428), ի յարեգ ամսո ԺԶ. (16), ի յունիս ի ԺԸ. (18), հրորտից ի Է. (7) գրեցաւ յիշատակարանս։

Ր

Աւախ հազար յէս քնի զահմաթէս։
Աւախ հազար ի յայս քնո զահմաթէս։**

411

ՄԱՇՏՈՑ

Երեւան 6050

Գրիչ՝ Մելքիսէթ
վայր՝ Խութ գաւառ, Քեուու գիւղաքաղաք

ա

...Գրեցաւ սայ ի գաւառիս, որ Խութ կոչի, ի գեւղս, որ Քեուու անուանի, ‖ առ ոտս սրբոյն Վանդրի՝ գլխոյն մեծին Թադէոսի, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զաւրավարի և որդոյ Նորա Մարտիրոսի և սրբոյն Շամաւնի։ Արդ աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք սմա ուսմամբ, կարդալով, օւրինակելով կամ հարեանցի՝ յիշեսջիք ի Քրիս-տոս զՅովանէս կրաւնաւորն, և զծնողսն իւր՝ զհայրն զԷնկիպէկն, և զմայրն զՇնոֆորն, և զամենայն արեան մերձաւորքն իւր...։ Որոյ տէր աստուած վաելել տացէ իւրն և եղբօրորդոյն իւրո Սիմէոն քա-հանային, մինչ ի խորին ծերութիւն խաղաղական կենաւք, և ինքն զփողարէնն յաստուծոյ առցէ ի միւսանգամ գալստեան հազարապա-տիկ և բիւրապատիկ, և ընդ սրբոցն դասեսցի ամէն, եղիցի։

* Գրված է այլ թանաքով ու ձեռագրով։
** Գրված են 13 ա և 63 ա էջերի ներքին լուսանցքներում։

Բ

142 բ Զստացող սուրբ գրոցս զՅովանէս կրաւնաւորն յիշեսջիք ի Քրիստոս և լի բերանով աստուած-ողորմի ասացէք ծնօղացն իւրոց։ Եւ գարձեալ ինձ՝ մեղայպարտ և փծուն գրչիս Մելքիսէթ դպրիս* թողութիւն խնդրեցէք ինձ և ծնաւղացն իմոց ի Քրիստոսէ աստուծոյ, և աստուած զձեր գործեցեալ մեղքն թողու, ամէն։ Դարձեալ յիշեսջիք զԿարապետն ի Քրիստոս, որ քաղցրութեամբ զկաւկիչն երէտ։

Գ

24 ա Խոշորութեան անմեղադիր լեր [եղբայր], զի աւուրքս ցուրտ։

Դ

37 ա Ո՞վ սուրբ ընթերձողք, խոշորութեան անմեղադիր լինիք, զի աւուրքս այս խիստ դառն հանդիպաւ ինձ յիմ մեղացն։

Ե

58 ա Խոշորութեան անմեղադիր [լեր] և զՄելքիսէթ դպիր առ աստուած յիշեա։

Զ

62 ա Եթէ յոռ չնստի քեզ գիրս՝ նա պատճառն այն է եղբայր, որ ձիթի տակն էր, և ճրագն լուս պակաս։

Է

89 ա Եւ կարդա, և զանպիտան Մելքիսէթս առ տէր յիշեա, և խոշորութեան գրիս անմեղադիր լեր, քանզի գիշերն գրեցաւ՝ ի ճրագն, քանզի ցորեկն պզտիկ էր, և ցնորն շատ, և սիրտս խոցած յեղբաւրէ։

Ը

126 ա Եղբարք, որք հանդիպիք սմա յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՅովանէս կրաւնաւորն, և լի բերանով աստուած-ողորմի ասացէք, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց։

Թ

132 ա Խոշորութեան անմեղադիր լեր, ով եղբայր, զի գիշերն եմ գրեր՝ ի ճրագն, յամէն գիշեր Ը. (8) թուխթ և ցորեկն՝ երկու թուխթ կամ երեք։

Ժ

162 ա Ա՜յ ձեռ, սիրտ խոց և միտք մոլոր, գթուն մայր և սիրուն եղբայր կորուսած։

---

* Նախորդ հիշատակարանի գրիչ Մելքիսէթն է, ըստ այդմ էլ այս անթվական հիշատակարանը տեղադրում ենք նույն գրչի 1428 թվականին գրած հիշատակարանին տակը։

412

ԱԻՆՏԱՐԱՆ

Փիլդ. Նօա. 90, Վան

Գրիչ՝ Մարգարէ
վայր՝ յերկիրս Բուխտանից

ա

...Արդ, կատարեցաւ... աւետարանս ի խնդրոյ պատուական և աստուածասէր քահանայիս Խաչատրոյ...հօրն Թումայ քահանային, և մօրն Հռիփսիմին, և կենակցին իւրոյ Սաւարքային...։ Եւ արդ, ես՝ ունայնացեալս ի գործոց բարեաց... Մարգարէ փանաքի գրիչս...։ Արդ, աւարտեցաւ աւետարանս յերկիրս Բուխտանից, ընդ հովանեաւ սրբոյ Սարգսի զօրավարիս, ի թվիս Հայոց ՊՀԷ. (1428)։

Ո՜վ եղբարք իմ սիրելիք, ի յաւուրս յայսմիկ խիստ արամութիւն հանդիպեցաւ մեզ, զի հարկեոր և պատուական աանուաէրն, որում անուն էր Մարտիրոս, որ զօրինակն մեզ շնորհեաց... այսօր նահատակեցաւ։ Քրիստոս աստուած դասակից արասցէ զՄարտիրոսն ընդ սրբոց մարտիրոսաց և զուրախութեան ձայն՝ լսել տացէ նմա՝ թէ եկ բարի ծառայ և հաւատարիմ, մուտ յուրախութիւն տեառն քո՝ ընդ երջանկին սրբոյն Ստեփաննոսի, ամէն։

բ

Զստացող սուրբ աւետարանիս զԽաչատուր քահանայն...և կենակցին իւրոյ Սաւարքային,... ես առաւել զհոգևոր հայրապետն մեր զԹումայ եպիսկոպոսն, և զծնօղսն իւր՝ զՊօղոս քահանայն և զՄարեմն, և զեղբայրն զԱտոմ քահանայն, և զքոյրն զՌսկին [յիշեցէք]...։

413

ՑԻՍՈՒՍ ՈՐԴԻ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 5972

Գրիչ
վայր՝ Ս. Կարապետի վանք, Մո՞ւշ

Ի յութ հարիւր Հայոց թվի
Եւթանասուն և եւթնեկի (1428),
Ի քսանվեց* ամսո հոռի,
Ի ի տասնինն** յունվարի
Վճարեցաւ երգ սքրբալի,
Զոր ասացեալ տէր Ներսէսի
Կըլայեցո և Տարսոնի.

* Բնագրում՝ «ԻԶ» (26)։
** Բնագրում՝ «ԻԹ-ն» (29)։

Ի յիշատակ Ամիր-Սարգսի
Եւ ծընաւղաց իւրոց բարի։
Որ և աղաչեմք զտէրն ամեն[ի]
Պահել ամբողջ յայսմ աշխարհի
Զինքն իւրոյաւքն հաւատի,
Ցերկար կենաւք լինել յերկրի.
Եւ յելանելն իւրում յաստի,
374 բ Ընդ || իշխանացըն պըսակ[ի]
[Ար]րահամու և ընդ Դաւթ[ի]
[Եւ] այլ սըրբոց հարցըն նախ[նի],
Զի ետ գրել ըղձմամբ սրտի
Զսա, որ Յիսուս Որդի ասի։
Զի յորժամ գա տէրն ամենի,
Նստի յաթոռն դատաստանի,
Ցայնժամ տացէ սմա տեղի՝
Ցեդեմ դըրախտ ընդ հայրենի,
Եւ ես մեռեալ մեղաւք ի լի,
Որ անըզգայ եմ ի բարի,
Շատ մի բաներ կայր ի մտի,
Որ չարէի յայս նափորտի,
Բայց ոք չըկար յայսըմ վայրի,
Որ միտ դնի [ի]մում բանի,
Եւ ես աւտար այս գաւառի
Ի դըրան սըբոյ Կարապետի
Դարձեալ ըզ | | |

414

ԳԱՆՁԱՐԱՆ

Նխվկայ 187/24, Մ. Տ. Ա.

Գրիչ՝ Մխիթար

182 բ Աւետիս աբեղայն ի Նկարենոյ վանիցն, բազում աշխատութեամբ շըջեալ ի գերափրկանք ճանապարհ, հանդիպեցաւ ի սուրբ ուխտս Նախավկայս, հանգեաւ խաղաղութեամբ առ Քրիստոս ի թվ. ՊՀԷ. (1428), ահկի ամսոյ է. (7)։

415

ՀՈՒՇՄՈՒՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ, ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑՒՈՑ

Վենետիկ 525

Գրիչ՝ Թադէոս Ավրամենց
վայր՝ Կաֆայ

Սկսեալ ի ՊՀԷ. (1428) ամի, նոյեմբերի Լ. (30) օրն, քանզի յայսմ աւուր սկիզըն արար մեծ վարդապետս և քաջ հռետորս և արին տէր

Սարգիս դաս տալ և ուսուցանել... մեզ եղբարցս՝ տէր Թորոսին և տէր Սիմէոնին և ինձ՝ յետնեալ փանաքոյս Թադէոսի, որ զհունձմունքն փոխեցի՝ զամէն աւուր զդասն միայն։ Եւ ուշիկք և հանդարտ կարդացաք զՊորփիւրն և զԱրիստոտէլն, և ի հոկտեմբեր ամսոյն վճարեցաք, քանզի երբեմն-երբեմն խափան պատահէր ի պատճառէ իմեքէ։*

416

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Ալիշան, հայկական (Փարիզ)

Գրիչ՝ Քրիստոսատուր։
վայր՝ Կաֆա

215ա ...Գրեցաւ Խազտետրս ի թուականութեան Հայոց ՊՀԷ. (1428), և ի հայրապետութեան տեառն Կոստընդեա, ի յաշխարհս Հոնաց, ի մայրաքաղաքս ի Կաֆայ, ընդ հովանեաւ և յառ ոտն սրբոյն Անտոնի-անապատականին, յեպիսկոպոսութեան Յովսէփու Գաղատացւոյ, և ի վարդապետութեան Սարգիս վարդապետի, որ է առաջնորդ սուրբ ուխտիս և ուսուցիչ մեր, ձեռամբ Քրիստոսատուրի մեղապարտ կրաւնաւորի։**

Արդ, այսմ եղանակաւոր տառիս ցանկացող եղեալ եռափափագ սիրով Աւետիք կուսակրաւն աբեղայն զսա ետ ինձ գրել՝ Քրիստոսատուր անարժան գրչի, յիշատակ հոգւոյ իւրոյ, ի լաւ և յընտիր օրինակէ, որ կոչի Առաքելցի...։

---

* Թադէոս Ավրամենցի մյուս հիշատակարանը Սարգիս վարդապետի դասախոսությունների մասին, որ նա կարդացել է Կաֆայից ոչ հեռու գտնվող ս. Անտոնի վանքում, տես 1429-ի թվաշարքում։

** Գրչի ծնողներն են Սիմոն և Աննա-խաթուն, եղբայրք՝ Գրիգոր և Խաչատուր։

417

Մ Ա Ն Ր Ո Ւ Ս Մ Ո Ւ Ն Ք

Փարիզ 33, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Գառնոյ գաւառ, Մանուէլի անապատ

100 *Արդ, յանգ ելեալ աւարտեցաւ հոգիարուխ Մանրուսմունս, որ կոչի տետր, ի գաւառս Գառնոյ, ի յանապատս, որ կոչի Մանուէլի. որ է ի սիրտ լերինս Այրիվանուց, յորում բազմեալ կայ գեղարդն աստուածամուխ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ստեփանոսիս, և սուրբ ճգնաւորաց սուրբ գերեզմանացս, ի յառաջնորդութեան սուրբ մենարանիս Ստեփանոս միայնակեցիս, ի հայրապետութեան մեծ աթոռոյն տէր Թէոդոր Կոստանդեի (*)։ Ի յայսմ ամի եկն չաղաթէն արևելից՝ ի Սամարղանդայ՝ Շահռուխ անուն, որդի Լանգ-Թամուրին, բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք, և էառ զԳաւրէժ քաղաք, և զԹուրքման ազգն աւառ էառ և զբազումս գերի վարեաց։ Բայց զայս միայն էր բարութիւն, զի սպանումն և արիւն ոչ արար և զԹուրքման ազգն ցիրուցան արար ընդ երեսս երկրի։ Եւ ազգս քրիստոնէից փախստական ի ծերպ և ի ծակ մտած և ի յիւրեանց բնակութենէն ելած։ Եւ փախուցեալ Թուրքմանն՝ Թալանեաց զաշխարհս Հայոց. զհաց և զգինի հանին և մեծ աւերութիւն ածին աշխարհիս, և ի խիստ վտանգի կայ ազգս, ահ ու երկիւղն պատել է, կու վախեն, թէ զամէն ազգս գերի վարեն յորժամ գարնանէ, բայց նա, որ զընութիւնս ազատեաց ի ծառայութենէն սատանայի՝ նա ազատէ։*

Արդ, գրեցաւ սա ի Թվականութեանս Հայոց ՊՀԸ. (1429)-ն ձեռամբ յոգնամեղ և փցուն վարդապետիս Գրիգորի, ի դառն և յանբարի ժամանակի, զոր փախստական եկաք ի յանապատս, և ամիս երկու մնացաք ի տեղ։ Եւ մենարանիս հայրն իւր միաբանաւք ծառայութիւն ոչ սակաւ արարին, զի բազում աշխատանք կրեցին ի վերայ մեր և խնդրեցին զայս Մանրուսմունքս, և թէպէտ դառն էաք ի ներքին սատանայի հնարիցն և յարտաքին, ի զանազան փորձանաց, բայց սէրն հարկեց զմեզ և սկսաք աւգնականութեամբն աստուծոյ և կատարեցաք։

Արդ, աղաչեմ զուսանողքդ և աւրինակողսդ յիշեցէք ի Քրիստոս աստուած զՍտեփանոս միայնակեցն և զծնողսն իւր, և զՍտեփանոս աբեղայն և զծնողսն, և զայլ մի[եղէն] եղբարքս, զԱռաքել կրաւնաւորն, և զԱնառճ ճգնաւորն յիշեցէք, ընդ սոցին և զերախտաւոր ուսուցիչն իմ զԳէորգ վարդապետն... և զիս անարժան գծողս Գրիգոր վարդապետս,

զծնողս իմ զՕվանէս կրաւնաւորն, զորգիացեալս իմ... և վասն խոշորութեան և սղալանաց անմեղադիր լերուք, զի ժամանակս ցայս չափս կատարեաց...։

418

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 687

Հետ. ստացող՝ Աւագ

ա

234ա Զվերջին ստացող սուրբ աւետարանիս՝ զԱւագս, և զծնաւղսն իմ զՇնոռհաւոր և զԹղթիկ, և զամենայն արեան մերձաւորսն իմ յիշեցէք ի Քրիստոս, որ ես՝ Աւագս ի հալալ ընչից իմոց ստացայ զսուրբ աւետարանս յիշատակ ինձ և ծնօղաց իմոց, և ի վայելումն դեռաբոյս պատանեկին՝ եղբօրորդւոյն իմոյ Սարգսին, զոր տէր աստուած վայելել տացէ ընդ երկայն աւուրս։ Աղուբ շայն գերի կու տանէր, ես Աւաքս թափեցի։

բ

313բ Ցանուն աստուծոյ ես՝ Բեշկէն, որդի մեծի իշխանին Սմպա[տա]յ, տեսի զաւետարանս, որ բազում ժամանակ ի մեր երկիրս էր ու գնել էր Տանծիկանց Աւագն։ Երեկ Թումայ երէց Սիւնայվանից, թէ այս մեր եկեղեցոյն է, Սիւնեվանից թալան է տարել, ու երդումն կերաւ։ Ես Բեշքէն, որդի պարոն Սմպատին տուի մեզ արեշատութեան ու մեր նախ[ն]եցն յիշատակ ի Սիւնեց վանիցն, որ Սիւնիվանք ասեն։

Ես Յովհանէս վարդայ[պ]ետ, որ զգիրս գրեցի, վկայ եմ. Ես Յովանէս եկեղեցայպան Վաղադնոյ [վա]նացն վկայ եմ։ Ես Դիլանհի՝ որդի Լեշին վկայ [եմ], ես Պաշաքաթ՝ որդի Էլէկ[ս]անին Լոռեցի վկայ եմ, ես Էլաուր՝ որդի Փալիկին վկայ եմ, ես Ափղազ՝ որդի Սեթիկայ, որ մեր հայրն ու հաւրեղբայրն Աւաքն գնել էր, մեք էլ յետ ուինք, մեք ենք Դաւայքարու տէր՝ ուինք ի յեկեղեցին Սիւնէվանից, ոչ ում խաւսք, ու զրոյց չկայ, աստուած շնհաւոր առնէ։

Ամիս արեգ, թուական Հայոց ՊՀԸ. (1429).

Դաւայքարն պատժաւք լինի ։

419

ՄԱՇՏՈՑ

Երևան 1028

Կազմող՝ Սարգիս
վայր՝ Ցաղրձին

Ես մեղապարտ Սարգիս սարկաւարկս, որ կազմեցի Մաշտոցս յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի հայրապետութեանն տէր Միխթար

եպիսկոպոսի՝ հոգևոր հաւրն իմ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որ կոչի Յաղրձին, ի Թվ. Հայոց ՊՀԸ. (1429). ի մարտ ամսոյն Ե. (5):*

420

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7740

Վայր՝ Սուլթանիա՞

391ա Սոյն սուրբ աւետարանս է յիշատակ պարոն Հնդուշահին, և կենակցին իւրոյ խաթուն** Մամաչային, և զաւակացն՝ Սաֆար-Մելիքին, պարոն Մելիքշահին, և եղբարցն պարոն Խարշահին, պարոն Թուրանշահին, պարոն Թուրկանշահին, պարոն Ամիրշահին, որ Թափել են զսուրբ աւետարանս ի ճղաթայէ, հալալ արդեամբ իւրեանց։

391բ Այժմ դիպող ժամանակիս կաւանդ[ին] վերոյգրեալ պարոնայքս ի սուրբ Սարգիս, ի յաթոռ եկեղեցին, յիշատակ իւրեանց և ծնողացն։ Ի Թվ. Հայոց ի ՊՀԸ. (1429), աւգոստոսի ամսոյ ԻԳ. (23), զի կացցէ սա յիշատակ անջնջելի ի ներհակացն։ Ով ոք ոչ ունի իշխանութիւն զսուրբ աւետարանս կամ գրաւելով, կամ ծախելով, կամ այլ բազում պատճառաւ։ Ազատ է, ազատ է։ Որ ոք յանդգնեսցի դրուատելոյս մեր զպատիժն առցէ զԿայենի, զՑուդայի և զխաչահանուացն, և պարտական լիցի [ար]եան ազգականաց մերոց առաջի Յիսուսի Քրիստոսի մեծ հրապարակին. և ով ոք զանարժանքս յիշման արժանի արասցէ, և ինքն յիշեալ լիցի ի մարանաթաին Քրիստոսի աստուծոյ՝ աւրհնելոյն յաւիտենից յաւիտեանս, ամէն։ Եւ նոյն շնորհօք սուրբ աւետարանիս Ա. (1) շուրջառ ծիրանի աթլաս, զի կացցէ յիշատակ ի սուրբ Սարգիս եկեղեցին՝ վերոյգրեալ բանադր[ան]աւք և դաշամբքն, ամէն։

421

Մ Ա Շ Տ Ո Ց

ԲՑՎ 287

Գրիչ՝ Յովանէս
վայր, Թուխ գիւղ

Փառք... որ ետ կարողութիւն սղալմիտ և մեղսապարտ Յովանիսիս և հասոյց ի յաւարտ Մաշթոցիս...։ Աստուած-ողորմի ասացէք Խանում-Խաթունին, որ ետ զսա գրել ի հալալ վաստակոց իւրոց...։

* Ձեռագիրը հայերեն լեզվով պահպանված հնագույն Մաշտոցներից է, գրված 1298 թվականին։

** Այս բառը ձեռագրում հապավված է այսպես՝ «մխթ» (՝)։ Առաջարկված վերծանությունը երկրայական է։

Գրեցաւ սա Թվականիս Հայոց ՊՀԸ. (1429) ամին, ի յերկիրն | | | ընդ հովանեաւ սուրբ] Աստուածածնին և Իգրուզ* վկային | | | ի գեաւղս, որ կոչի Թուխ...:

422

ՄԱՇՏՈՑ

Փիրղ. նոտ. 91—92, կամախ, Աւագ վանք

Գրիչ՝ Գրիգոր Տիւրիկեցի
վայր՝ Եկեղեաց գաւառ, ի գերեզմանի
Լուսաւորչիս, յուխտս Ջորենաճգիստ

Ի Թուականութեանս Հայոց ՊՀԸ. (1429), յիշխանութեան Աւթման պակին, որ գրեցաւ բոլոր Մաշտոցս ձեռամբ Գրիգորի անիմաստ գրչի Տիւրիկեցւոյ: **

423

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. նոտ. 91, Մարմեա գյուղ

Վայր՝ Կարբի

... Արդ գրեցաւ սա ի գիւղաքաղաքս Կարբի, ընդ հովանեաւ Աստուածածնին և այլ սուրբ եկեղեցեացս, յամի ՊՀԸ. (1429) Թուականիս մերում:

424

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղէմ 1631

Գրիչ՝ Թադէոս Ավրամենց
վայր՝ Կաֆա

... Մեկնեալ մեծի և անյաղթ փիլիսոփայի Դաւթայ և լուծեալ ի մեծ հռետորէ Յոհաննու Որոտնեցոյ և ի լուսաւոր բաբունապետէ Գրիգորիսէ եռամեծէ: Եւ զմնացեալն զայս յիմաստասիրական գրոց խնդրեալ մեր ի բարեսէր վարդապետէն մեր՝ ի տէր Սարգիս քա՞

* Իմա՝ «Ցիգաւիրուզա» վկայի, որ նահատակվել է Զ. դարում:

** Սույն հիշատակարանը Փիրղալեմյանը (ավելի ճիշտ Աբրահ վրդ. Թոխմախյանը, որի ընդօրինակությունից օգտվել է Փիրղալեմյանը) կցել է նույն ձեռագրի մեջ եղած նվիրաբերական երկու ակտերին, որոնք գրանցվել են Ցաղուպ-բեկի (1478—90) իշխանության տարիներին, ուստի անմիջական առնչություն հիշատակարանի հետ չեն կարող ունենալ:

բարունոյ՝ առ ի կարդալ, և նա խոնարհեալ յաղաչանս մեր աշխատեցաւ ընդ մեզ, և կարդացաք՝ երկու աւուրն մին ճառ կարդալով, և այնպէս օր ըստ օրէ գրելով հոգ ի մտի ունէի մի ինչ բան դժուարիմաց ծածուկ և անյայտ մնացէ։* Վասն որոյ ի լուսանցքն ի դասէն իմացեալս դրոշմեցի, ի վանս մենաստանի մեծի սրբոյն Անտոնի անապատականի, առընթեր մեծի մայրաքաղաքի Կաֆայի, յաշխարհս Հռնաց Գազարիա կոչեցելոյ, և ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և յեպիսկոպոսութեան նահանգիս մեր Կաֆայի և Ղրըմի տէր Կարապետի սրբասիրի, և ի վարդապետութեան տէր Սարգիս քաջ հռետորի՝ մերոյ վարժապետի...։ Յիշեցէք զանարժան Թադէոս Ավրամենց կոչեցեալս...։**

425

ՇԱՐԱԿՆՈՑ

Փարիզ 132, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Քրիստոսատուր
վայր՝ Կաֆայ

133ա ... Գրեցաւ Շարակնոցս ի թվին Հայոց ՊՀԸ. (1429) ամի, ձեռամբ ապիկար և անմար գրչի Քրիստոսատուր կրաւնաւոր քահանայի, ի խնդրոյ եղբաւր մերում Մարտիրոս կուսակրաւն քահանայի, ի վայելումն անձին իւրոյ։ Արդ, եղև սկիզբն և գրաւ եղանակաւոր տառիս յաշխարհս Հռնաց, ի վանս սուրբ Անտոնին, առընթեր Կաֆայ... քաղաքին, առաջնորդութեամբ վանացս մեծի վարդապետի և քաջ բարունոյ տեառն Սարգսի, ի հայրապետութիւն տեառն Կոստանդինեա և ի նուիրակութեան տէր Կարապետի։

Արդ, որք հանդիպիք ի սմայ յիշեսջէք զվերագրեալն զՄարտիրոս կրաւնաւոր քահանայն, և զծնաւղսն իւր՝ զհանգուցեալսն Ասելն և զմայրն իւր, զՍտեփաննոս էրէցն, և զքոյրն իւր զՋիմաթ-Խաթունն, և զփեսայն իւր զպարոն Փիլիպոսն, և զամենայն ազգայինս նորա։ Եւ զիս՝ զանպիտան գրիչս, զծաղկաւղս, և զկազմաւղս զՔրիստոսատուր մեղապարտ աբեղայս, և զհեզն՝ իմոյ սնուցեալն զԱւքսէնդ կրաւնաւոր քահանայն, որ մադաղաթն տողեաց։***

* Խոսքը վերաբերում է ժողովածուի վերջին աշխատությանը, որ է «Լուծմունք Պերիարմենիասի Յովհաննու Որոտնեցւոյ»։

** Մ. Տեր-Մովսիսյանը հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակվել է ՊՀԸ-ՊՁԲ (1429—1433) թվականների ընթացքում։

*** Մ. Տեր-Մովսիսյանի մեքենագիր ցուցակում այս բառը գրված է «առզգբեց» սխալ ձևով։

426

ԳԱՆՁԱՐԱՆ

Նխվկայ 187/24 Ս. Տ. Ա.

Գրիչ՝ Մխիթար
վայր՝ Մաղարդի վանք

342 *Փառք... որ ետ կարողութիւն արկար մարմնոյ և տարտամ հոգոյ Մխիթար սուտանուն աբեղի հասանել յաւարտ այսմ գանձարանի յամի ԳՀԹ. (1430) թըւականի մերումս տումարի, որ գրեցաւ սայ ի վայելուչ տեղս, որ կոչի Մաղարդի վանս, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոս նախավկայիս և յայլ սուրբ Նշխարացս, ի յառաջնորդութիւն աէր Աւագի և Յակոբ վարդապետի, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ Շահռուղ ղանն էրեկ, բազում աւեր էած աշխարհիս մեր, և դհայոց ազգս գերեց և փորձութիւն ձգեց, վասն բազում մեղաց իմոց։ Վա՜յ ինձ հազար բերան, որ տեսի աչաւք իմ զՔրիստոսի արեամբ գնեալ ժողովուրդս ի ձեռն տաճկաց գերի, մերկ և քաղցած ի ծառայութիւն անաւրինաց։*

Արդ, ես մեղուցեալ ոգի մեռեալ անձն Մխիթար գրիչս, որ եմ աբեղայ՝ ձեւով միայն և ոչ գործով, ցանկացայ և փափագ եղէ այս սուրբ գանձուցս և անմահական պտղոյս, և բազում աշխատութեամբ գրեցի զսա ի վայելումն անձին իմոյ աստի կենացս, և յետ ատեացս յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց՝ հաւր իմոյ Ամիր-Ասաթին, և մաւր իմ Հասրաթոյն, և եղբարց իմ, և ամենայն արեան մերձաւորաց իմոց...։

Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ և կամ աւգտութեամբ, յիշեցէք ի միտս բարիս և ի պատկանաւոր խնդրուածս | | ¦ զպատուական վարդապետն մեր զՅակոբ, որպէս արեգակն լուսաւորէ զտեղիքս մեր, զոր և Քրիստոս ասաուած | | |

Բ

129 ա *Յիշեա յաղաւթս ձեր զեղկելիս՝ զխոցեալ ոգիս Մխիթարիս, վա՜ ինձ։*

427

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 73, սյուն. 133—134, Վանի Ցայնկոյսներ եկեղեցի

Նորոգող և կազմող՝ Ստեփանոս

... Արդ, կազմեցաւ և թերին լցաւ...ի թվաբերութեանս Հայոց ԳՀԹ. (1430)։

Զոր ստացեալ էր զսա տէր Պետրոս Եղեգեցի*
Ի դռանն արքունի և ի գերեզման Քրիստոսի,
Ի վայելումն անձին իւրո նահատակի,
Որ ի հոգսն մաշի վասն Երուսաղէմի,
ԵւԹն անգամ յերԹեւեկի,
Նաև եղբօրորդոյն Ստեփանոսի
Սուտանուն կրաւնաւորի։
Եւ ի յահէ չարին Շահըռուխի,
Որ աւար էառ զաշխարհս Հայկազնի։
Սա պահեստի եղեալ ի վիմի,
Եւ ըղխեալ վտակ Ջրի,
Եւ տապալեաց զմշտահոսան աղբիւրս կենդանի։

Արդ, արք հանդիպիք սմա՝ անմեղադիր լերուք սղալանաց և Թերութեան, որ ի սմա, զի յոյժ աւերեալ էր։ Այլ ևս յիշեսջիք ի սուրբ յերկնաԹոիչ յաղաւԹս ձեր զստացաւղ սորին զաէք Պետրոս և զամենայն արեան մերձաւորս, և զիս՝ զանարժան Ստեփանոս և զծնողս մեր, և որ յիշէ յիշեալ լիցի և նա յաւուրն աներեկի և յաջակողմեան դասին բազմի, ամէն

428

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4827

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Խոսրովավանք

387 բ ... Այլ և արդ, գրեցաւ սուրբ աւետարանս աստուածախաւս ձեռամբ անարժան և անմար գրչի Վարդանի: Եւ իմ՝ անընդել գոլով
յարուեստ գրչուԹեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ
կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատասիրեալ իմ ի սմա, գրեցի անարժան ձեռաւք իմովք յընտիր և ի
ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանօք և բազում տրտմուԹեամբ։
Ե· է ի մեծ Թուականիս Հայոց ՊՀԹ. (1430), ի կաԹողիկոսուԹեան
Հայոց Աղթամարեցւոյ տեառն Դաւթի՝ եղբօր տեառն Զաքարիայի, որ
վկայական մահուամբ կատարեցաւ և պսակեցաւ ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս։ Ի սուրբ ուխտս, որ կոչի Հոսրովավանք, ընդ հովանեաւ-
սուրբ տաճարիս Խոսրովային սուրբ Նշանիս և Աստուածածնիս, և առաջնորդ սուրբ ուխտիս՝ Մկրտիչ քահանային և այլ միաբան եղ-
388 ա բարցս, որ աստ կան հաւաքեալ || աղաչեմ յիշել ի աէր աստուած։

* Պետրոս եպիսկոպոս Եղեգեցու հիշատակարանը, տես 1428-ի Թվականքում։

Քանզի ստացաւ զսուրբ աւետարանս պատուական և սրբասէր կրօնաւորն Սանփանոս*, ետ գրել յիշատակ իւրն և ծն[աւղ]ացն իւրոյ՝ հաւրն Թումայի, և մօրն Շնոճորի, և պաբուն Խոցդեղի, և եղբաւրն Աստուածատրոյ, և Մկրտիչ քահանային, և Ղազարին, և ծնաւղացն իւրեանց Հէրապետ քահանային, և Յոնանէսին, և ամենայն արեան մերձաւորացն իւրեանց, ամէն։ Եւ կացցէ սա ընդ իշխանութեամբ տաճարի սուրբ Նշանիս։ Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս՝ յիշեսջիք ի Քրիստոս աստուած զՄամաիկին ապաշխարողն, և զծնաւղսն իւր՝ զՅովսէփն և զԵղիսա-

Նկ. 15. Ձեռագրի ստացող Ստեփանոս կրոնավորը

բէթն, և զեղբարքն զԱստուածատուրն և զԱնտոնն, և զեղբօրորդին զՅոհանէս դեռաբոսիկն, և զզաւակս իւր զԽոսրովն և զԹագուհին, և զհօրեղբայրն Թովմաս, և զորդին իւր զԱռաքելն, և զամենայն արեան մերձաւորս, և աստուած-ողորմի ասացէք լի բերանաւ և զուարթառատ սրտիւ սոցա, ամէն, և զՅովաննէսն, որ զօրինակն ետ։

Ցերես անկեալ աղաչեմ և արտասուալից պաղատանօք զդէմս
288 բ առ ձեզ ուղղա |·| | ես, ով ձիւնք պաշտաւ ‖ նեայք. յիշման արժանի
զեղկելիս և զմեղուցեալ փծուն գրիչս զՎարդան ունայն աբեղայս... և զհայրն իմ զՍամուէլ քահանայ, և զմայրն իմ Մինայ, զԹումէն, և զՏիրանցն՝ զհոգևոր ծնօղքն իմ, և զամենայն արեան մերձաւորսն, ամէն,

... Ի դառն ժամանակի, աւաղ, զայնքան դառնութիւն դժնդակութեանս, զի վասն մեղաց իմոց, թէ ինչ երեկ ի վերայ այնքան քրիստոնէից, ոհ։

* 6 ա էջի վրա, կրոնավորի հագուստով, նկարված է Ստեփանոսը (տես Նկ. 15)։

429

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2666

Գերութիւնից ազատող՝ Շառիպէկ

276 բ ... Ի թուականութեանս Հայկազեան տումարի ՊՀԹ. (1430)-երորդի, յունուարի ԻԹ. (29), բերին զսուրբ աւետարանս այլազգիքն գերի, զոր լուեալ ոմն քաջահաւատ և բարիանուն պարոն Շառիպէկ և ստացօ զսա ի հալալ ընչից իւրոց ... և եդ ի սուրբ Կիրակոս՝ յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց՝ պարոն Յալինախին, և մաւրն Արզուն-խաթունին, և ի Քրիստոս փոխեցեալ զաւակին Ալինախին։

Արդ, վասն Դ. (4) պատճառի գնեաց զսա. մի՝ զի զպակասութիւն տաճարին լրցուսցէ, և երկու՝ զի ծնաւղաց իւրոց յիշատակ լիցի, և Գ.՝ զի զաւակաց իւրոց յերկար կեանք խնդրեսցի, և Դ.՝ զի աստուածային կամքըն քաղցրասցի իւրենն և կենակցին իւրո։ Արդ, որք աւկտիք ի սմանէ, կամ աւրինակէք և կամ վաելէք ի սուրբ Կիրակոս՝ յիշեցէք յաղաւթս ձեր, զպարոն Յալինախն և զԱրզուն-խաթուն:

276 ա Հրաման ունիք ի Քրիստոսէ, որ յորժամ կարդան ‖ * զայս յիշատակարանս՝ ա[մեն] մարդ մէկ մէկ ծունր դնէ ու Գ. Գ. աստուած ողորմի ասէ, զի ձեզ խիստ հեշտ է և նոցա կարիք է։ Ընդ նմին յիշեցէք զպարոն Շառիպէկն, և զկենակիցն իւր զԱւղուլ-խաթունն, և ծաղկեալ զաւակցն պարոն Սարթախն, և զպարոն Ֆախուրշան, և զԿուլամիրն և զքոյրն Մարիամ-խաթուն, և զորդին իւր Սովիատին, և զեղբայրն իւր զԱմիրպէկն, ամենին [առ]հասարակ արևշատութիւն և յերկար կեանք խնդրեցէք...։

Արդ, ով որ զայս սուրբ աւետարանս գողանա կամ ծախէ՝ յանդիմանեսցի մոլար ժողովոյն Մահամետի, և որ յանգգնի՝ զպատիժն Ցուդայի առցէ և զխաչահանուացն, և որք լսէք ի միտ առէք և մի պարսաւէք։

430

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

ԼՑՎ, 659 Փէրդ. Նօա. 95

Գրիչ և խմբագրող՝ Թադէոս Ավրամենց

վայր՝ Կաֆայ

Փառք... որ շնորհեաց անպիտան և աղկաղկ և անարժան ծառայիս տեսանել զաւարտումն շնորհազարդ գրոցս սուրբ Հարանց Վարուց, զոր ի հերուն հետէ ցանկացեալ կարաւտանայի տենչմամբ մեծաւ գրել, ժողովել, ամբարել զերանելեացն և զամէն երջանկացն վարս սուրբս և գերաշխարհիկս, անմարմնոցն նմանս, և զբանս լուսաւոր հոգևորական խրատուց նոցա, որ քաղցր է ի քիմս ճաշակո-

* Թերթը այժմ շրջված է, սկզբից պետք է կարդալ 276բ էջը, ապա՝ 276 ա։

դացն զսա առաւել քան զմեղու խորիսխ ե զռետին, և գիտէ լուսաւորել, նորոգել և կենսագործել, ե զի հանդիմանիչ ևս է և կշտամբիչ ե յայտնիչ անզղջայ գնացելոց։

Արդ, նայելով ի գործս քննայօյզ ծուլացելոցս և անիմաստ շաղաց մտելոյս և անտէրունջ ընթացելոցս, ըղձմամբ մեծաւ փափաքեցայ գրել և արձանացուցանել ե առ իս պահել և ունել յար և հանապազ ինձ կշտամբիչ և յանդիմանիչ և յայտնիչ խորհրդոց՝ մաքուր կարծեցելոյս։ Եւ դարձեալ, մխիթարիչ և սփոփիչ և տածիչ ախմարացեալ յիմարացելոյս, ե ինձ հայր խնամակալ և գութածնօղական, և խրատ անխարդախ զսա վարկանելով սիրեցի գրգալով ի վերայ սորա։ Զի գոնէ միայն ի լուր աստուածազարդ բանից խրատուց սուրբ հարց երկնանման կրաւնից գործոց նոցին գիտութիւն զիմ անդէպ և կարծելի միայն գնացեալս, ամաչեցուցեալս գլխակորեալ՝ զգլուխս յերկիր հայեցուսցեն։

Եւ արդ, այսպէս սկսայ զսա ջերմեռանդն սիրով և յուսով, որ տայն առ ամենայնի առատապէս ու ոչ նախատէ՝ հասուցանել յաւարտ սորա, այլ յոյժ տառապանաւք ե աշխատութեամբ զաւրհանատազ զլաւագոյնն ընտրելով և զճշմարտագոյնսն խուզելով և համառաւտն թողեալ զկատարեալ պատմութեան հետևելով ժողովեցի, բրդեցի օրինակք ոչ սակաւ, որչափ ձեռնահաս եղէ գտանել։ Եւ թէ ի մինն սխալ գտանիւր ի գրչաց կամ աւրինակաց ե համառաւտել զնա իմանայի, նա զիւրաքանչիւր աւրինակքն առընթեր բերելով՝ գտանէի զնոյն բանն ոչ վկայելով միմեանց, այլ ի նոցանէ խնդրելով զընտրելագոյնսն, և զհաճելին ի նոցունց առեալ գրէի յարմարեալ և կատարեալ բան զճշմարտագոյնսն շարադրելով։ Այլ ի հասանել պատմութեան կամաւոր աղքատին սրբոյն Ալէքսիանոսի, տարակուսեալ արգելայ, քանզի այլ և այլ պատմէին աւրինակքն զնմանէ, ոմանք ի Կոստանդնուպաւլիս լեալ ասէին և ոմանք՝ ի Հռովմայ։ Եւ այլն երկոտասան ամի ի դուռն ծնողաց ասէին, և կէսք՝ երկոտասան օր, և այլն Է. (7) ամ, և այլք զՈրուսաղէմ ասեալ ասէին զնա, և կէսք Եդեսիայ միայն, այլ[ք]՝ ոչ ուրէք գնացեալ։ Այսպէս ամենայն պատմութիւն այլևայլ էին գրեալ, մինչ հարկ եղև և ի յունաց բերել աւրինակ ի ձեռն բարեկամաց և ոչ շատանալ միով, այլ մինչ վկայեսցեն և նոքա միմեանց։

Եւ այսպիսի սիրով աշխատեալ գտի զայն, որ միմեանց վկայեցին ե գրեցի զճշմարտագոյնն՝ զլաւն և զանսխալն։ Այսպէս և զամէն նայն արարի, այլ ոչ զսրբոյն Ալէքսիանոսին աշխատեցայ։ Եւ բազում վարք և բան աւելի եդի ի սմա, զայն՝ որ ոչ գոյր ի մեծի աւրինակն։

Արդ, ամենայն գլխոյն վերջքն, որ կարմիր յի՛ խաչագլուխ կա ի լուսանցքն ներքին՝ այն այլ գրոց աւրինակեալ է, իսկ ի կողմանէ լուսանցքին կարմիր նշան և թուխ կռագլուխ խաչ. բազմեալն՝ այն պիտանի և աւգտակար նշանաւոր բանք են, և եդի նշան առ ի փոյթ գըտանել զայնպիսի և ախորժագոյնսն։ Եւ ի վճար մեծ աւրինակին յի-

շատակարանս եդեալ սկսայ և զայլն, որ ոչ գոյին ի մեծ աւրինակն։ Եւ որչափ կարող եղէ հաւաքեցի և զայնոսիկ նմանապէս պաշտելով զընտիրն և զճշմարտագոյնսն խնդրելով գրել։

Իսկ աւարտ սորա եղև ի թվին ամաց յելանելոյ ի դրախտէն Ադամայ ի ՑՈԼ. (6630) ամի ըստ Մեծ Հային տոմարական արհեստին, և դարձեալ յԱդամայ ի ՑՊԾԵ. (6855) ամի հինգհարիւրեկին, որ է Հասայ իմաստասիրին, որ ի յԱղէքսանդրիայն ժողովին, և սա է բուն թվական կիկլոնին. և դարձեալ յԱդամայ ՑՉԺԱ, (6711) ամի ըստ Անանիա վարդապետին Շիրակայնո, և ի ծննդենէ կենարար փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ՌՆԼԲ. (1432) ամի, իսկ ըստ Հոռվմայեցոց ՌՆԼ. (1430) ամի, և թվին Հայոց ըստ արեթական տոմարի ՊՃԹ. (1430) ամի, յօգոստոս ամսոյ ԻԵ. (25), օրն երեքշաբթի, յաշխարհս Հռնաց և Գազարիայ կոչեցելոյ, յերկիրն Սուղդաթայ, ի մայրաքաղաքս Կաֆայիս, մենաստանիս, որ յանուն մեծի ճգնաւորին սրբոյն Անտոնի, և ընդ հովանեաւ նորին արժանաւոր աղօթիցն, և յառաջնորդութեան սորին վանից մեծի երջանիկ բաբունապետի Սարգիս լուսաւոր վարդապետի՝ արթուն և ժիր մշակի, որ զաւերս զայս և զամալացեալս, որ մուրալով էին կերակուր ընակչաց սորա՝ նորոգեաց շինելով, և յօրինեաց զբոլոր պակասութիւն սորա, և զարգարեաց եղբարբք և պայծառ ժամատեղաւ, և հաստատեաց մտաւք և արդեամբք, զոր ընդ երկայն աւուրս արասցէ տէր աստուած զսա բազմամեայ ժամանակաւք տևել մնալ առ մեզ։ Իսկ ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ աստուածասէր իմաստուն խաղաղասիրի և ի նուիրակութեան և եպիսկոպոսութեան տէր Կարապետի՝ սրբասնունդ և խոհեմի, ձեռամբ անարժան և պիտակ անուն կրաւնաւորի Թադէոսի Ավրամենց, ի վայելումն ծարաւելոյս և կշտամբող մխիթարիչ վտարանգելոյս, և յիշատակ յետ իմոյ ելանելոյն յաշխարհէս կամողաց զսա ջերմեռանդ սիրով զսա կարդալ, իսկ ձանձրացեալոտացս լսել զսա առիթ կամելով լինել և նոցա հաղորդել ընդ երջանկացն, կարդալով և ի միտ առնելով՝ զարդարացի կենդանակիր պատկերաւք և ծաղկաւք ոսկով, զի գոնէ ի սիրոյ պայծառութեան ծաղկանց և պատկերաց կարդալ ձեռնարկեսցեն։

Եւ դարձեալ և զանուանս սրբոց յայտնիչ՝ կարմրադեզով արարի, մի՝ զի յորդորիչ լիցին կարդացողացն, որք ոչ սիրով, և երկրորդ՝ զի նման նմա լինել ակն ունիմք մեք, բայց նոքա յամենայն անւանց երկրաւորաց՝ անուն տէրունական կարմրադեզով, սոյնպէս և սրբոցն անուանք երանե[լե]ացն դասուց նմանեցան նմա կարմրադեզովն և որպէս և նայն։

24—26

431

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6403

Նուիրատու՝ Հեղինէ
վայր՝ Սուրբ-Թորոս գիւղ

ա

183 բ *Աստուած ողորմի* Խուպիաքին *դստերն Հեղինէ, որ էառ այս աւետարանս յիշատակ իւր հոգուն և իւր ծնողացն, ամէն. և ետ յիշատակ ի գուղն* Սուրբ-Թորոս, *ի դուռն սուրբ Աստուածածնի, ի ձեռն տէր* Ղուկասին, *հայրապետնութիւն տէր* Մելքիսեթին, *թիւ* [Պ]*ՀԹ*.(1430)։ Որք հանդիպիք՝ ողորմին ասէք, ամէն։ Աստուած-ողորմի* Ախիկին՝ *կենդանի հոգուն, որ սապապ եղաւ յա[յ]ս բանիս.***

բ

281 բ *Ես* Հեղինաս *գնեցի սուրբ աւետարանս հալալ արդեանց իմոց, եդի յիշատակ ի գիւղն* Սուրբ-Թորոս, *ի դուռն սուրբ Աստուածածնին, ի ձեռն տէր* Ղուկասին, *ոչ ոք չունի իշխանութիւն հանել այս գիւղէն կամ տէր* Ղուկասի *ձեռացն...։*

432

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՏՀ, հա. Ա. 32, էջ 70—71

Հետ. ստացող՝ Ստեփանոս

314 *Արդ, ես [յետինս] ի մանկունս եկեղեցոյ տէր* Ստեփանոսս *ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդ[ե]անց իմոց՝ յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց՝ հաւրն իմոյ* Սիմէոնի, *և մաւրն իմ* Աղէկի։ *Ով որ հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, զինչ կերպ որ իցէ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր* Ստեփանոս *քահանայն և զծնաւղսն իւր...։*

Ի թվ. ՊՀԹ. (1430)։

---

* *Հարյուրավոր թվանշանը ջնջված է։ Հնագրական տվյալներով ձեռագիրը գրված պետք է լինի ԺԵ. դարում, ուստի ջնջված թվանշանը, որոշ կասկածներով, վերականգնում ենք՝ Պ. (800)։*

** *Համանման բովանդակությամբ մի հիշատակագրություն էլ կա ձեռագրի 281բ էջում։*

433

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6430

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Ամիթ

ա

299 բ ... Արդ, գրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս ի գաւառս Մի-
ջագետաց, յԱմիթ մայրաքաղաքի, ընդ հովանեաւ սուրբ Թէոդորոսի զի-
նաւորի, և ամենասրբուհի կուսին Մարիամու Աստուածածնին, և
սուրբ Կարապետին Յովաննու, և Գէորգեայ զաւրավարին։ Ի հայրա-
պետութիւն տեառն Կոստանդի Վահկեցոյ, և ի վերադիտողութեան
Ամիթ շահաստանի տէր Մկրտչի աստուածաբան վարդապետի և արք-
եպիսկոպոսի ամենայն Միջագետաց և երեսփոխանի կաթողիկոսի ամե-
նայն Հայաստանեայց և մինչ ի ծայրս արևելեան իշխեցողի, և ի
թագաւորութեանն ամենայն Միջագետացս պարոնաց պարոնին, որ
կոչի շահ Աւթման Պահատուր, ի թվ. Հայկազանս տումարի ՊՁ.
300 ա (1431)- ‖ երրորդի։

Յորում ամի բացան պատուհանք հենից բարկութեանն աստուծոյ
և մերկացաւ սուրն վաղակաւոր յազդերէ իւրմէ, և վասն ծովացեալ մե-
ղաց մերոց սուր պատուհասին աստուծոյ տարածեցաւ՝ տարաժամ
մահ ընդ ամենայն երկիր, և առաւել ևս բարկութիւնն աստուծոյ տե-
ղեաց յԱմիթ մայրաքաղաքի, և ի սպառ կոտորեաց զամենեսեան առհա-
սարակ, առաւել քան զանդրանկածախն Եգիպտոսի, որպէս յանպա-
տին՝ զԻսրայէլ և յաւուրս Դաւթի՝ զկոտորուած ՀԵ. (75) հազարացն,
զի անկաւ ի ժողովրդենէն ՁՌ. (6000) արանց միայն, զորս ի թիւ
արկան, թող զանհամարսն, և զայն, որ արտաքոյ քաղաքին՝ ի գա-
ւառսն և ի գեաւղսն. որ և զբազում աւանս անմարդաբնակ արար,
300 բ մինչ զի ‖ չորքոտանիքն յամայի շրջէին և ամենայն հայրենիք կո-
գոպուտ եղեն յարքունիսն։

Եւ արդ, ոչ ոք կարէ ընդ գրով արկանել կամ լեզուաւ ճառել զաղէտս
կսկծանաց և զողբս տարակուսանաց և զհառաչանս սրտից և զկոծս
տարակուսանաց, զոր գործեցան ի միջի մերում, զի բարկութիւնն
աստուածային էր և սաստիկ էր հրամանն. կենարարն մահու մատ-
նեաց և ո՞վ էր որ ապրեցուցանէր, քաղցր բնութիւն աստուծոյ դառ-
նացեալ էր, և ո՞վ ոք էր որ ապրեցուցանէր կամ ողորմէր քաղցրու-
թեամբ, զի բարձաւ նախախնամութիւնն բարերար բնութեանն և
հասին մեզ ահեղ վրէժխնդրութիւն դատաստանին աստուծոյ, և կոտ-

301 ա բեաց յանխնա սաստիկ հար || ուածով և արար լալագին զբազումս ի մարդկանէ, զի եղև ամենայն սիրտ խոցեալ ի սրոյն աստուածոյ, և աչք ամենեցուն յարդերս արտասուաց, յամենայն ուրեք ողբ հառաչանաց և յամենայն տուն կոծս տարակուսանաց, լալումն որբոց և աղաղակ այրեաց, կըսկիծ ծերոց և մանկատութիւն ման-կամեռ մարց, յամենայն լեզուէ վայ և յամենայն բերանոյ աղա-չաւանք։ Որ և ի սոյն սաստիկ հարուածոյ, տարաժամ մահուամբ յաւու-ւած փոխեցաւ բարէպաշտ և աստուածասէր քրիստոնեայն Կարապետ և դեռաբողբոջ զաւակքն իւր՝ զՅովանէսն և Յիսէն* և Սադաթն, և անմը-

Նկ. 16. Ստացող մահդասի Յագիզի վաղամեռիկ թոռներ՝ Յիսէն և Յովանէսը

խիթար սուգ թողին բարեպաշտուն մաւր իւրեանց՝ մահդասի Յագի-
301 բ զին, որ ծեր անձամբ մնաց || իբրև զբու յաւերակի միայնացեալ լա-լագին աչաւք և խոցեալ սրտիւ, անմխիթար յամենայն կողմանց, վերջացեալ ի զաւակաց և յազգականաց, վասն որոյ ի միտ ածեալ

* Յովանէսի և Յիսէի պատկերները, կանգնած դիրքով, նկարված են 8ա էջի վրա։ Նրանց հագուստներն ու գլխարկները ուշադրավ են և ունեն կենցաղագրական նշանակություն (տես նկ. 16)։

զբանն աստուածային, թէ՝ Ծրանի, որ ունիցի զաւակ ի Սիոն. և ցան-
կացող եղև անկողոպուտ գանձիս աստուածային, և ըստացաւ զսուրբ
աւետարանս յիշատակ բարի որդոյն իւրոյ Կարապետի, և զաւակաց
նորա Յովանիսին, և Յիսէին, և Սադաթին, և հաւր նորայ՝ Վահրամ
երիցու, և եղբարց նորին Աբրահամուն և Մուսէսին, և որ[դ]ոց նորին
Յորդանին, և Վասլին, Սարգսին և ամենայն արեանառու ազգականաց
նորին, յիշատակ յաւիտենական կենաց ի կեանս յաւիտենական,
302 ա վասն որոյ աղաչեմք զա ‖ մենեսեան,* որք անդիպիք սմա կարդալով,
կամ օրինակելով, կամ տեսանելով, կամ լսելով զյիշատ[ակ]ութիւն
վերագրելոցն ի սմա՝ յիշեսջիք ի մաքրափայլ և յերկնաթռիչ սուրբ
յաղօթս ձեր զՎահրամ քահանայ, և զորդի նորա զԿարապետ, և զզա-
ւական Կարապետին զ[Յ]ովանէսն, և զՅիսէն, և զՍադաթն, և զազգայինս
նոցա զԱբրահամն և զՄովսէսն, և զորդիս նոցա՝ զՅորդանանն, և զՎա-
սիլն, և զամենայն արեան մերձաւորս նոցայ, և զՄարիամն։ Եւ առա-
ւել ևս զբարէպաշտ և զաստուածասէր մայր Կարապետին՝ զմահդասի
Յազիզն յիշեցէք ի Քրիստոս, որ բարո պատճառ եղև և ինքն ստացաւ
302 բ զսուրբ աւետարանս ի բաղում աշխատանաց իւրոց, ‖ և զամենայն
ծախք սորայ լի սրտիւ և միամտութեամբ արարեալ և բոլոր հաւատով
տուեալ, որպէս թէ ի ձեռս Քրիստոսի ընձայեալ, զի ի Քրիստոսէ
առցէ զփոխարէնն աստ և ի հանդերձելումն՝ զարքայութիւնն երկնից։
Եւ ընծայեաց զսուրբ աւետարանս նուէրք սուրբ Թորոս զաւրավա-
րին և ամենասուրբ կուսին Մարիամու աստուածածնի, զի կացցէ
սուրբ աւետարանս յիշատակ անջնջելի ի տաճար սրբոյն Թորոսի, ի
սորին յաւիտենի, և մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսուրբ աւետա-
րանս ի դրանէ սորայ...։
303 բ ... Այլ և յիշեցէք ի Քրիստոս զամենայն հաւատացեալ ննջե-
ցեալսն և առաւել զայնոսիկ, որք ի սոյն ամի տարաժամ մահուամբ ի
Քրիստոս փոխեցան՝ զսրբասէր քահանայքն և զաստուածապաշտ տանու-
տեարքն, զգեղեցիկ երիտասարդքն և զբարետեսիլ մանկունքն, զբա-
րեմիտ կանայքն և զշքեղատեսիլ նորահարսունքն, որք ի սուր տեառն
մաշեցան և ի բարկութենէ աստուածասաստ պատուհասին, որպէս
զծաղիկ նունենեաց հարեալ ի կարկտէ և յանխնտ կոտորեցան ողոր-
մաբար։ Վասն որոյ յիշեցէք ի Քրիստոս զամենայն ննջեցեալսն, որք
յԱմթայ ժողովրդենէն ի սոյն ամի փոխեցան...։

Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զայնոսիկ, որք աշխատանք ունին
ի սուրբ աւետարանս, որ շատ և որ սակաւ, զթղթին կոկողքն, և զայնո-
սիկ, որք զգրագիրն ծառայեցին և սպասաւորեցին, և զայնոսիկ, որք
կամակից եղեն, որ զայս սուրբ աւետարանս ստացաք և ընծաեցաք
սուրբ Թորոս զաւրավարին։

Այլ և յիշեցէք ի Քրիստոս զայսոսիկ, որք յամենայն տաւնի և
304 բ տուբը ‖ զատկի ընթեռնուն զյիշատակարան աւետարանիս։ Եւ որ
առատն է ի տուրս բարեաց, ողորմեսցի ամենեցուն առհասարակ՝ յի-

* Բնագրում՝ «զամենեսնեան»։

շողացղ և յիշեցելոցս ի սմայ, և տացէ իւրաքանչիւրոցն վարձս ըստ վաստակոց աստ և ի հանդերձեալն յաւիտենիւ յաւիտեանս, ամէն և եղիցի։

Գարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զքաջ քարտուղարն զԳրիգոր գրագիր, որ գրեաց զսա յ[ր]նդիր աւրինակէ։ Այլ և զԱբրահամ վարպետ, որ ղարղարեաց զսա ծաղկով և ամենայն տնաւրինականաւք և կազմեաց, և զայնոսիկ, որք աշխատեցան ի գործառութիւն սորայ, որ աւարտեցաւ սուրբ աւետարանս, որոց ամենեցուն յամենայնի ողորմեսցի տէրն ամենայնի, ամէն և եղիցի։

Բ

97 բ Տէր աստուած...
Ողորմեա ստացողի սորին,
Այլ և յոռի, փըծուն գըրչին,
Որ վեց տառիւ անունս կոչին,
Գիմ՝ առաջին և ըՐէն՝ յետին,
Որ համարով վերաբերին՝
Տասն հազար բոլորովին
Եւ վեցհարիւր քսան ու վեցին։*

Գ

16 ա Ո՜վ պատուական եղբայր ծաղկող,
Խոհեմ, ճարտար և [սրբա]գրաւղ
Զվասն էրդ անթիւ շատագրելով
Մի մեղադրեր դու ին[ձ | | |
Դու զաւրացեալ ես սուրբ հոգով,
Զթերին լնուս վերին տր | | |
[Ե՞ս] աւրինակ չուն՚ի լաւով,
Որ գըրէի զդա համա[րով]։

434

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՑՎ 154 (52), հտ. Ա., էջ 662—664

Գրիչ՝ Ղազար
վայր՝ Երզնկայ

194 ա ...Գրեցաւ տառս աստուածայինս և տիեզերտաքարոզ սուրբ աւետարանս ձեռամբ անարժան սուտանուն աբեղայի՝ Ղազարի փցուն գրչի։ Արդ, գրեցաւ սա ի մայրաքաղաքս Երզընկաս՝ առ դրան սրբոյն Ստե-

* Գրչի անունը, ինչպես երևում է նաև գլխավոր հիշատակարանից՝ Գրիգոր է։ Եվ քրոք, «Գրիգոր» անունը հոգոդ տառերի թվական արժեքների գումարը հավասար է 10,626-ի. (Գ=3, Ր=5000, Ի=20, Գ=3, Ո=600, Ր=5000)։

փաննոսի նախավկայի, ի Թուականութիւնս Հայոց ՊՁ. (1431) եղև աւարտ սուրբ աւետարանիս աստուածախաւս կտակիս։

Արդ, ի յայսմ դառն՝ ի նեղ և նուրբ ժամանակիս, որ զաւրացեալ են հաքարացիք ի վերայ քրիստոնէից, որ կոչի Թուրքիման, և յոյժ նեղին հաւատացեալ քրիստոնէք ի վերայ աշխարհիս։

Ցայսմ նեղ ժամանակիս ցանկացող եղեալ աստուածասէր և բարեհաւատ և բարեմիտ կին ոմն, որ կոչի անուն նորա Մեծ-խաթուն, յոյժ փափա[գա]նաւք և ըղձմամբ սիրով և անչափելի յուսով ետ գրել զաստուածախաւսակ սուրբ աւետարանս անջնջելի յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց՝ հաւրն իւրոյ Անդրիասի, և մաւրն իւրոյ Աւագ-Տիկնա, և ամուսնոյն իւրոյ Ամիր-Դաւթին, և եղբաւրն իւրոյ Կարապետին, և Կապուտին, և քերցն իւրոյ Էլխաթունին, Ուսլուին, և Շնոֆորին, և քեռեցն իւրոց՝ Կիրակոսին, Ղազարին և Աստուածատրին, և ամենայն ազգականաց և արեան մերձաւորաց, ի լուսաւորութիւն հոգոց և մարմնոց...։

Նաև զգրող սորա զՂազարս՝ յետնեալս յամենայն կարգաւորաց, և զծնաւղսն իմ յիշեսջիք ի Քրիստոս, աղաչեմ, և սխալանաց սորա մի մեղադրէք, զի կար մեր այս էր...։

435

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Երևան 944

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Էրէզ անապատ

ա

11 բ Յիշեցէք զՄկրտիչ աւագերէցն, և զիւր որդին զՅոհաննէս աւագերէցն, և զփոխեցեալն առ Քրիստոս զՅովաննէսն, որ մականուն Թաթար կոչի, և յիշեցէք զՇնոֆորն, որ զգիրքս գրել երետ յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց պարոն Աստուածատրին, և ամենայն զարմից իւրեանց՝ կենդանեաց և հանգուցելոց, ամէն, Եւ զիս զՅովանէս աբեղաքս՝ զմեղաւք լցեալս, և զծնաւղսն մեր յիշեցէք ի բարին...։

բ

36 բ Զողորմելի գծողս յիշեցէք՝ զՅովանէս աբեղաս, և զծնաւղսն իմ զՍարգիս քահանայ, և զմայրն զՄանանն: Եւ յիշեցէք զվանիս հայրապետս՝ զՍտեփաննոս աբեղայս, որ ի Թխտիս կոկեալ կաշխատի և զահմաթ կու քաշէ։ Յիշեցէք զՇ[նո]ֆորն, որ զգիրքս գրել կու տա, և զիւր տղայքն՝ զփոխեցեալն առ Քրիստոս զԱստուածայտուրն և զԱլամ-խաթունն, և զիւրեանց հայրն՝ զփոխեցեալն առ Քրիստոս Յովաննէսն, և յիշելոցդ ողորմեսցի, ամէն։

Գ

Գրիչ՝ Ղազար
վայր՝ Էրէզ անապատ

231 բ ... Արդ, աստուածային կանոնքս, որ վառն գեղեցիկ բանիցն կոչի Ոսկէփոր, ի լաւ և յընդիր աւրինակէ և վատթար գծողէ գրեցաւ սայ յանապատիս, որ կոչի Էրէզ, ի գուոս սուրբ Աստուածածնին։ Թվ. ՊՁ. (1431) գրեցաւ սայ։ Արդ, որք աւգտիք կամ աւրինակէք յիշեցէք զգծողս սորա և զծնաւղսն և զեղբարսն և զամենայն երախտաւորսն մեր, ևս առաւել յիշեսջիք զհոգևոր հայրն մեր զտէր Յովանէսն, որ նայ այլ շատ աշխատեցաւ ի գիրս և փոխեցաւ յանանց ի կեանս։ Ցիշեսջիք և զայժմուս առաջնորդս զտէր Սանեփանոս՝ զհոգևոր հայրս մեր, յիշեսջիք և զդասս կրաւնաւորաց, որ աստ կան հաւաքեալ... և զողորմելի գծողս զՂազար աբեղայս, և զհայրն իմ զԱմիշան, զմարիկն իմ, սարգաւարք եղբայրն իմ, որ փոխեցաւ առ Քրիստոս, և զմիւս
232 ա եղբայր իմ զԱստուածատուրն, և զամենայն ազգատոհմս մեր յիշեցէք ի բարին, և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն։

Արդ, աղաչեմ զամենեսեան յիշեցէք զՄկրտիչ աւագերէցն, և զիւր որդին զՅոհանէնս աւագերէցն, և զփոխեցեալ առ Քրիստոս զՅովանէսն, որ մականուն Թաթար կոչի։ Եւ յիշեցէք զՇնոֆորն, որ զգիրքս գրել երետ յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց պարոն Աստուածատրին, և մաւրն Էլթի-խաթունին, զաւակաց իւրեանց Աստուածատրին, և Յալսամ-խաթունին, և եղբաւր իւրոյ, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց, ամէն։ Եւ զիս՝ զՂազար աբեղայս զմեղաւք լցեալս, և զծնաւղսն մեր յիշեցէք ի բարին...։

Դ

96 բ Եւ ես՝ յերեսս անկեալ ողորմելի և անարուեստ գծողս Ղազարս, մեղաւք լցեալս և սրտովս խոցեալս՝ աղաչեմ յիշեցէք զիս, և զնախնիքն մեր, և զհայրիկն իմ զԱմիշան, և զմայրն իմ Խէր-խաթունն, և զհարազատ եղբարքն իմ զԱստուածատուրն, և զփոխեալ եղբարն Շահինշայ սարգաւագ յիշեցէք...։

436

ԱՌԱՔԵԼ ՇՆՈՐՀԱԼԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ ԳՈՎԵՍՏ ՈՏԱՆԱՒՈՐ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Երևան 7465

Հեղինակ՝ Առաքել Բաղիշեցի

311 ա Ցարմարեցաւ ճառ ծննդեան և յայտնութեանն Քրիստոսի աստուծոյ մերոյ և գովեստ Տիրամայր աստուածածնին ի բազմամեղ Առաքել պիտականուն վարդապետէ, ի նորաշէն յանապատիս, որ յա-

նուն սրբո[և]հոյ Աստուածածնին և Յովաննու Կարապետին, ի Թվականիս Հայոց ՊԶ. (1431)*։

437

ՃԱՇՈՑ ԵՒ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Երևան 1569

Գրիչ՝ Մաթէոս
Վայր՝ Անկեղակոյա գիւղաքաղաք

382ա ... Արդ, գրեցաւ Նարեկս սուրբ վարժապետի աղաւթից կըտակս այս ի Թվականութեանս Հայոց ՊԶ. (1431), ի գեաւղաքաղաքս, որ Անկեղակոյա յորջորջի, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորի Լուսաւորչիս և սուրբ Թագաւորիս Սիմոնի։

Ձեռամբ անարհեստ և վցուն գրչի՝
Մաթէոս սուտանուն իրիցի,
Որ պարտականս եմ բիւր քանքարի,
Զի զտաղանդ տեառն չյարդեցի,
Այլ անիրաւ գործի կացի
. . . .**

283ա Վասն այնորիկ խորհուրդ արարի
Գրել զմատեանս այս ցանկալի,
Որ է աղօթք զարմանալի,
Ոգեալ սրբոյն Գրիգորի։
Զսա ըստացայ ինձ գանձ յերկրի,
Զի զյոյս բարեացն չունէի.
Վասն այն ըզսա գծագրեցի,
Զի ապաւէն ինձ եղիցի,
Այլ յետ աստեացս իմ՝ երբ լինի,
Յորժամ Նիրհիմ ի տապանի,
Զի յիշատակ սա ինձ լիցի,
Եւ ծնաւղացն իմ գովելի՝
Աղա-Սուլդան անուն կոչի,
Ու մօրն իմ գէդայ մեծ Թուխթէնի,
Բարի կենաւք կացեալ յերկրի,
Եւ [ըն]կալեալ զաւր վախճանի,
[Եւ] եղբարձ իմ կենդանի,
Զոր Փա[ռ]ուխշահ կու անուանի,
Կըսեր եղբաւրն հեզահոգի՝
Սալուք անուն քաջ մշակի,

* Առաքել Բաղիշեցու ոտանավոր այս գովեստը գտնվում է 1506 Թվականին ընդօրինակված Ցայսմաւուրքի մեջ։
** Բաց ենք Թողնում 35 անարժեք տող, որտեղ գրիչը պախարակում է ինքն իրեն։

Եւ հաւրեղբաւրն իմ անորդի՝
Իկիթ-Աղայ՝ գործովք բարի,
Ու ամուսնոյն իւր Թուխծամի,
Որք են ննջեալ ի տապանի,
Եղբաւրորդոյն իմ Սաւլթանշի,
Քաջ կարդացւող սարկաւագի,
283 բ Որ վախճանեաց | | | *
Իգնատիոս կարգացւողի,
Ու լալագին մաւրն իմ Հռիփսիմի,
Վասն իւր որդոցն վախճանի,
Այլ և իմոյս մեռեալ ոգի,
Մարքոս անուն՝ մեղաւք ի լի,
Յիշատակ սայ ինձ եղիցի,
Զի փափագանաւք գրեցի,
Ո՛[հ. ս]ուրբ մանկունք առագաստի,
Որք ընթեռնուք զգիրքս աղաւթի
Յիշմ[ան առն]ել զմեզ արժանի
Եւ զննջեցեալսն իմ, զոր գրեցի։
Եթէ ասէք սրտով ի լի,
Թէ թող, աստուած ձեզ ողորմի,
Թողցէ զյանցանս ձեր չարի
Եւ ազատէ ի հրոյն գեհենի։
Նա և աստուած ձեզ ողորմի
Յաւուր մեծին դատաստանի,
Յորժամ յաթոռ բազմեալ նստի
Ու գործոց հատուցմունք լինիցի.
Փառք արդարոցն յայտնի լիցի,
Աւրհնեն զաստուածն յաւիտենի։

Բ

101 բ Քրիստոս աստուած, քո սուրբ մարմնով և արեամբդ, որ միշտ պատարագիս անծախապէս, ողորմեա տառապեալ ոգւոյ գծողի սորա Մաքէոսի անարժան իրիցի, և ծնաւղացն իմ Սուլդանի և Թուխթենոյ, նաև գեղեցիկ պատանոյն իմ Ղուլիջան կոչեցելոյն, որ և յայսմ ամսոյս առ քեզ կոչեցեր...։

Ընդ նոսին և ինձ՝ մեղաւոր և անարժան Վարագեցի Յովանիսիս, որ զանունս ունիմ և զգործս ոչ։ Ընդ նոսին և ձեզ՝ յիշողացդ զմեզ թողութեան մասն պարգևի, ամէն։

* Նորոգման ժամանակ փակցված թղթի տակ մնացել է չորս անվերծանելի տող։

438

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4923

Հետ. ստացող՝ Դրպօ
վայր՝ Ալի[վ]ա՞նք

... Ես Դրպօ *և եղբայր իմ* Յովսէփ՝ Մովսեսա *որդիքս, գնեցինք*
262 բ *զսուրբ աւետարանս ի հալալ յարդեանց մերոց և տուինք || ի դուռն*
սուրբ Աստուածածնին Մլիանից *եկեղեցոյն։ Ո՞վ սուրբ քահանայք և*
*դասք լուսերամից, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զ*Դրպօ, *և*
*զկենակիցն իւր զ*Հաթուն, *և զեղ[բ]այր իւր զ*[Յ]ովսէփ, *և զկենակիցն*
*իւր զ*Մլրան, *և զիւրեանց ծնօ[ղ]քն՝ զ*Մովսէս *և զ*Հաթուն, *և զամենայն*
ազգակիցն իւրեանց, և զայնոսիկ, որ աւգնական են եղեր ի գին սուրբ
աւետարանիս, և լի բերանով և ուղիղ սրտիւ աստուած-ողորմի ասա-
ցէք...։

Վերջին գնել սուրբ աւետարանիս ի Թիվս Հայոց ՊԶ. *(1431)։*

439

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

Երևան 845

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Երերան վանք

243 բ *... Ի Թիւ Հայոց ՊԶ. (1431) գրեցաւ հոգիաբողբոջ բուրաստանս*
*վարք սուրբ Հարանց, ի վանքս ի յ*Երերան, *ընդ հովանեաւ սուրբ*
Աստուածածնիս, և սուրբ Գէորգիս, և սուրբ Ստեփանոսիս, և սուրբ
Նշանիս, և առ ոտս Յովաննէս *րաբունապետիս, և ընտրեալ աշակեր-*
244 ա *տացն գրոց, և սուրբ կրաւնաւորացս, | | | որք աստ կան հաւաքեալ։*
Արդ, ցանկացող եղէ ես այսմ հոգիաբուղխ և ծաղկաւէտ բուրաստա-
նիս՝ Յակոբ *անարժան աբեղայս, և իմով ձեռամբս գծագրեցի զսա, զի*
եղիցի սայ ի վայելումն անձին իմոյ և ամենայն մանկանց Սիոնի։
Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսանելով, կամ
աւրինակելով, կամ կարդալով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր
*զիս՝ զանարժան զստացաւղս՝ զ*Յակոբ *կրաւնաւորս, և զծնաւղսն իմ՝*
*զհայրն իմ զ*Թադէոսն, *և զմայրն իմ զ*Փաշիկն, *և զամենայն արեան-*
մերձաւորսն իմ։ Եւս առաւել զբազմերախտ ուսուցիչս և զվարդա-
*պետս մեր զ*Յովանէս *հաւրեղբայրն իմ, որ է երկրորդ ստեղծաւղ մեր.*
յիշեսջիք ի Քրիստոս...։

Բ

Քրիստոս աստուած... զտէր Ստեփանոս *ընդ կուսակրաւն սուրբ*
քահանայիցն դասեցէ, որ սա եղև պատճառ սուրբ Հաբանց Վարուցս,
որ աստ կատարեցաւ։

440

ԱՒԵՏԱՐԱՆ

ՀԱ, 1917/16, էջ 63

Վայր՝ Ոշտունիք, Շադուան գիւղ

Արդ, գրեցաւ սա ի թվ. ՊԶ. (1431), ի հայրապետութեան տէր Դաւթի, յերկիրս Ոշտունեաց, ի գիւղս, որ Շադուան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, ի դառն ժամանակիս, զոր չեմ կարող ընդ գրով արկանել։

441

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նոտ. 97—96, Նշխարք (№ 4515), էջ 136—137, Բաղէշ

Նորոգող և կազմող՝ Ներսէս
վայր՝ Հիզան(°)

... Հայրապետ կրօնաւոր, զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախօս սուրբ աւետարանիս, և գնեաց զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ի վայելումն անձին իւրում, և քուերորդւոյ իւրոյ Մխիթար դեռաբողբոջ և նորածաղիկ քահանայի, և ծնողացն իւրոց հօրն Խուսէն-Բէկին և մօրն Խէրիքին, ի մեծ թուականութեանս Հայոց ՊԶ. (1431), ի կաթուղիկոսութեան Հայկազեանս սեռի տեառն Կոստանդեայ, և ի մերոյ կաթուղիկոսութեան Աղթամարայ տեառն Դաւթի, և ի թագաւորութեան մերոյ Ամիր-Դայուտի, և ի ղանութեան աշխարհիս Սքանտարի, զոր տէր աստուած Իսրայէլի պահեսցէ անսասան զաթոռ հայրապետական և զթագաւորական մերոյ ազին և բարձրացուսցէ զեղջիւր Սիոնի ի մէջ Հայաստանեայց...։

Եւ ես... Ներսէս մահասսի... ծրագրեցի զյիշատակարան և նորակերտեալ կազմեցի, և աղաչեմ յիշել և զիս միով աստուած-ողորմիւ, և զստացող սուրբ աւետարանիս զՀայրապետ հաւատարիմ կրօնաւորն, և զՄխիթար քահանայ, և զծնողս իւր զԽուսէն-Բեկն և զԽէրիքէն, և զերկու քոյրն զԳունձար և զՇնոռնուռ, և զերկու աղբերն զԳրիգորն և զՔուրդամիրն և Ղազար*, և զկողակիցն իւր զԹանխաթուն, [և զդուստրն°] զՄարգարիտն, զփեսէն իմ զՎասակ, և զնորաբողբոջ զաւակն մեր զՄուսէս, և զկնքաւորն իմ զՆիկողայոսն յիշեցէք առ աստուած։

---

* Երկու եղբոր փոխարեն՝ բերված են երեքի անունները, ինչպես նաև որպես «կողակից» նշված է երկու անուն (Թանխաթուն, Մարգարիտ)։ Սրա վրա ուշադրություն է դարձրել Փիրղալեմյանը և հանգել մեր կարծիքով անհիմն եզրակացության։ Լսենք նրան. «Զոյգ անուամբ յիշէն թէ Թանխաթուն և թէ Քուրդամիրն, և այսու յայտ լինի մեզ, թէ առ. նախնիս մեր կայր սովորութիւն զոյգ անուն գործածելոյ»։

Թվում է, որ պարզապես «երկու աղբերն» արտահայտությունը պետք է սրբագրել «երեք աղբերն» ձևով, և «Մարգարիտ» անունից առաջ ավելացնել «և դուստրն» բառը։ Որ Մարգարիտը, իրոք, եղել է ստացողի դուստրը, այդ երևում է նաև այն բանից, որ նրանից անմիջապես հետո հիշատակվում է ստացողի փեսան (այսինքն՝ դստեր ամուսինը). ոչ մի հիմք չունենք ենթադրելու, որ հիշատակարանի մեջ տեղ են հատկացրել փեսային, բայց արյունակից դստեր մասին լռել են։

442

ՃԱՇՈՑ

Երևան 7434

Գրիչ՝ Քրիստոսատուր
վայր՝ մերձ ի Կաֆայ·

395 ա ...Սապէս և երջանիկ բաբունապետս մեր և առաքինասէր և քաջ
հռետորական իմաստիւք լցեալ տէր Սարգիս վարդապետս՝ երեսփոխանն
սրբոյ կաթողիկոսին և աթոռակալ Հոնաց աշխարհի և Կաֆայիս. ի մերում
ժամանակիս, որ աստ պատահեցաք՝ սա խորհուրդ բարի եդեալ ի
մտի, զարդարեաց զմենաստանս մեծի հաւրն սրբոյն Անտոնի շինուա-
ծովք յաւրինելով՝ յիշատակ անջնջելի ազգաց յազգս, բրգամ[բ]ք և
պարսպով, և գեղեցկայարմար տնտեստնով, և ջրհորով, և հողմային ջաղ-
ջով, և պայծառագոյն ծանր ժամատեղով, և բազում բարի և հեզահոգի
եղբարբք· Նաև զմատեանս գրոյ ժամատեղաց լնուլ կամելով՝ ըղձայր
փափագելի տենչմամբ, որով պատրաստէր Թուխտս յոլովագոյնս գնոց,
գնելով արդեամբք իւր։
Իսկ ես փցուն և անարհեստ գրիչս Քրիստոսատուր մեղապարտ
և սուտանուն կրաւնաւորս, աւգնական լինել ցանկացա սրբոյ եկեղե-
395 բ ցւոյս ըստ ի [[մ]]ում չափոյս, և յանձին կալա գրել ձեռամբ իմով
զՃաշոցս զայս, ստանալ կամելով ինձ գանձ պատուական և ան-
դըժրբելի յանարիկն Սիոն, ուր ոչ գող մերձենալ կարեն և ոչ ցեց
ուտիչ լինել· Եւ հոգևոր որդեակն իմ Աւգսէնտ մանուկ կրաւնաւորն
աւգնական եղև կոկելովն և յարդարեալ պատրաստելով· Զանզի պա-
տուականութիւնն սրբասէր վարդապետին մերոյ յորդորեալ ստիպէր
զամենեսեան ի լաւ անդր՝ ի բարերարութիւն և ի սէր խաղաղութեան
և ի վաստակս և յանխոնջ աշխատութիւնս, այնք՝ որոց ճնան փոխա-
րէնքն ի կեանսն յաւիտենականս, որք ի սէր երջանիկ վարդապե-
տին ընթերցեալք մակաղեցան առ սովաւ ի գութ խնամոց սորա եղ-
բարք պիտանիք և հաւատարիմք, յորոց մինն ի սոցանէ նախ եղ-
բայրն մեր Թադէոս կրաւնաւոր քահանայն Ավրամենց, և զԹորոս աբե-
ղայն զգրոց աշակերտն, և զմիւս Թորոս աբեղայն, և զՍիմէոն աբեղայն,
և զՅովհաննէս աբեղայն, և զՎարդան աբեղայն՝ աշխատասէրն, և
զՍտեփանոս աբեղայն՝ զլուսարարն, և զՄաղաքիա աբեղայն, և Յովան-
նէս աբեղայն, և զխոնարհ հոգին զՍարգիս աբեղայն՝ որ ինձ՝ փցուն
գրչիս լաւաւ էր և զամենայն ժամակարգութիւնն ի մաւտս կատա-
րաւղ էր, և զՄինաս աբեղայն· Իսկ աստուածասէրն և ըղձալին Սանակ
աւագ սարկաւագն՝ անխոնճ աշխատաւորն, որ զբովանդակ ցաւն և
զհոգսն վանացս ունի յանձին իւրում հրամանաւ մեծի վարդապե-
տին, որ է սիւն և հաստատութիւն սրտի նորին, մինէն եղբայրու-
թեամբք, որք աստ բնականապէս կացեալք աշխատեցան ընդ նոսա
հնազանդք և հլուք գոլով, որ փախուցեալք յանտերունջ գոլոյն աստ
եկեալք զկամս իւրեանց ուրացան, և զմիւս սպասաւոր վանացս՝

զԱստուածատուրն, որ է որդի պարոն Նուրատինենին, և զԽսայի աբեղայն, որ մանուկ հասակաւն իւրով ուրացեալ զաշխարհն և զինչսն՝ եկեալ աստ կրաւնաւորեցաւ, որդի գոլով պարոն Աստուածատրին, և եղև պատճառ բազում բարեաց վանացս, քանզի բարեպաշտ տիկինն խաթուն Ազիզ-Մելիքն՝ դուստրն պարոն Ամիրին, և որդին իւր Եսայի կրաւնաւորն ետուն վանացս սուրբ Անտոնի Ճ. (100) սոմ ի պանքն եդեալ, անդրդուելի, մնալով անդ ի կումինին գլուխքն, որ է Ճ. (100) սոմ, և զմուտքն նորին յամենայն ամի ուտէ վանքս՝ ՌՆ. (1400) սպ[իտակ]։

Եւ պարոն Ամիրն, որ է պապն Եսայեա՝ ԻԵ. (25) սոմ, և մուտքն է Յ. (300) սպ[իտակ] ամ յամէ անխափան վանացս։

Եւ հայր Սաեփանոս եկեալ աստ միայնակեաց եղև, տուեալ վանացս ոչխարք և շինուածք, եկեալ յարեցաւ ի սրբութիւնս ի գովութիւն և ի գութ վարդապետին, ուրանալով զաշխարհ։ Զորոց տեսեալ զայսպիսի զհաւատարմագոյն սէրն, որ առ աստուած և առ սուրբ եկեղեցի նորա, ըղձալով փափագեցայ և ես այսպիսի գեղեցկայարմար և խորհրդաւոր գիրս ստանալ, որ ունի բովանդակեալ ի ծոց իւր զբոլոր ամին ընթերցմունսն՝ զտաւնից տէրունականաց և զաստուածահաճոյից արանց և կիրակէից և զպահոց, ըստ ՅԿԵ. (365) աւուրց
396 ա տարոյն, անմոլար շաւիղ ‖ եկեղեցւոյ մանկանց թողեալ ի հոգեկիր արանց աստուածազգեստից, որ ի նախնեաց անտի հիմանց եկեղեցւոյ սահմանեցաւ ի փառս Քրիստոսի և ի պայծառութիւն որդւոց Սիովնի, զի յար ընթերցմամբ լուսաւորեսցին միտք մարդկան ի պատուիրանս տեառն, որ է լոյս և լոյս տան աչաց։

Եւ եղև աւարտ սորա ի ծննդենէն կենարար փրկչին ՌՆԼԱ. (1431) ամի, իսկ ի մերում թուականիս յաբեթական տամարի Հայկազան սեռիս ՊՁ. (1431) ամի, ի մարտի ԻԶ. (26), աւր աւագ երկուշաբթի, ի հայրապետութեանն տեառն Կոստանդնեա բարեպաշտի և աստուածասիրի և իմաստնոյ, և ի յաթոռակալութեանն և յերեսփոխանութեանն սրբասիրի, մեծի և քաջ րաբունապետի տէր Սարգիս վարդապետի, ի մերում Հոնաց աշխարհիս և Գազարիայ նահանգիս՝ Սուլխաթ 'Լրիմի և Կաֆայիս մայրաքաղաքիս, ի մենաստանս մեծի սրբոյն Անտոնի և սուրբ Աստուածածնի, և առ ոտն սոցայց աղաւթից, ի վայելումն այսմ մերում մենաստանիս սրբոյն Անտոնի, և մանկանց սոցին յաւիտեան։ Յիշատակ մեզ՝ վերոյգրելոցս մեծի վարդապետի և ինձ՝ աշխատողի բազում տառապանաւք, քանզի ի տուէ և ի գիշերի ոչ դադարեցի ի գրելոյ և ի ժամ Նեղասրտութեան իմոյ և ժամ աշխատութեան տկարանալոյ մարմնոյս ոչ արգելայ ի գրելոյ։ Վասն այնորիկ աղաչեմ մի լինել մեղադիր խոշորութեան և կամ սխալանաց սորա։ Եւ զի ծաղկեցի և կազմեցի և պաճուճեալ զարդարեցի վասն յուսոյ ողորմութեանն աստուծոյ յիշատակ լինելոյ ինձ, և ծնողաց իմոց Յովաննէսին և Հռւփսիմէին, և հաւրքուերն իմոյ Մարանէ, և մաւրքուերն իմոյ Եղիսաբէթին, և իւր երեք որդւոցն, և միւս մաւր-

քուերն իմոյ Սուրաթին, *և երկու քերցն իմոյ՝* Ծռիլ-Մելիքին *և* Աննա-յին, *և ամենայն արեան մերձաւորաց իմոց։*

Արդ, զԾաշոցս զայս ազատ արարեալ եդաք ի սուրբ եկեղեցիս՝ ի վանս մեծի սրբոյն Անտոնի, որ կացցէ մինչև յաւիտեան ազգ յազգէ Թնալով և տևելով աստ։ Եւ ոչ ոք ի մերոց մերձաւորաց իշխեսցէ սորա, և ոչ յայլոց իշխողաց վանացս կամ ծախելով և կամ գրաւ գնելով և կամ երախտիք առնելով՝ մեր գոլ ասել զսա, այլ որպէս մեք ազատելով զսա տուաք աստ՝ ի սուրբ Անտոն վանքս սեփհական և անահ յումեքէ, զի ոչ մեք, որ երախտաւորք եմք՝ վարդապետս և գրիչս և կոկողս, ասել կամ իշխել ունիմք սմայ, քանզի մեր յաւժարական կամաւքս արարաք զսա ազատ, վասն այնորիկ ոչ ունիմք մեք իշխանութիւն Ծաշոցիս ծախել, և կամ գրաւ գնել, և կամ այլ ինչ դրդուելի իրաւք զսա նենգել և խախտել ի վանացս։ Այսպէս և մերձաւորքն ոչ ունին ամենևին հրաման իշխելով խաւսել ընդդէմ Ծաշոցիս, և որք յանդգնաբար իշխեսցեն աղագաւ բան ասիցէ խոտորեցուցանել կամելով զԾաշոցս ի վանացս, նա զվարձն Կայենի և Յուդայի և խաչահանուացն առցէ և սուտ լիցի առաջի ամենայն դատաստանաց, և Ծաշոցս այս սեփհական վանացս եղիցի։ Արդ, աղաչանաւք հայցեմք զլուսերամիցդ պարս, հանդերձ հաւատացեալ որդւոց լուսոյ ժողովրդական դասիւք, որք հանդիպիք || կարդալով և կամ լսելով զյիշատակարանս զայս, յիշեցէք ի Քրիստոս աստուած, խնդրելով ի նմանէ շնորհել մեզ զերջանիկն մեր զորբասնեալ և զաւրինակն ամենայն բարեաց զտէր Սարգիս *վարդապետն ընդ երկայն աւուրս, յամերամս ժամանակաւք, պաբագայց ամաւք, մինչև ի խորին ծերութիւնն խաղաղական կենաւք Թնալ և տևել առ մեզ, և յետ աստեացս ելանելոյ՝ սրբոց վարդապետաց դասակից և պսակակից առնել։*
396 բ

Եւ զիս՝ զաղկաղկ և փանաքի գրիչս զՔրիստոսատուր *աբեղայս յիշեցէք ի տէր Քրիստոս, ողորմութիւն հայցելով ինձ, և ծնողացն իմոց, և հոգևոր որդւոյն իմոյ* Աւգսէնդ *մանուկ կրաւնաւորի, և եղբաւրն և ծնողաց նորին։ Եւ յիշեցէք ի տէր ողորմութիւն խնդրելով և սոցա, զորս ի վերոյ յիշեցաք՝ զբարեկամք վանացս՝ զերախտաւորքն և զաշխատաւորքն, և զշնորհողն աւրինակի Ծաշոցիս* զԳէորգ *աբեղայն յիշեցէք ի բարի մասին ողորմիս տալով....*

443

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 6122

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ մերձ ի Կաֆայ

318 ա *... Գրեցաւ Շարակնոցս այս ձեռամբ բազմամեղ* Յովհաննէս *աբեղի ի սուրբ* Գրիգոր *վանք, որ է մաւտ* Կաֆայի, *ի ստոյգ աւրինակէ* Գրիգոր խըլուն: *Եւ սա լինի յիշատակ գրողի սորա* Յոհաննէս *աբեղայի, և եղբաւր իւրոյ* Սիմէոնի *կրաւնաւորի, և հաւրն* Թա-

թոսին, և մաւր Նազայ Թանն-Մէլիքի, և քրոջն իւրեանց Մարիանէի, փեսին իւրեանց տէր Ավագի և ճըշմարիտ քահանայի, և որդոյ Նորայ տէր Աւքսենտին։ Ես Յովհաննէս աբեղայս աղաչեմ զամենեսեան, որք ուգտիք ի սմանէ, խնդրեցէք յաստուծոյ մեղաց իմոց թողութիւն, և ծնաւղաց իմոց, և ամենայն ազգաց իմոց...։ Գրեցաւ սա ի թվական Հայոց ՊՁ. (1431), սեպտ[եմբերի] ԻԲ. (22), ի հայրապետութեան տեառն տէր Կոստանդնեա, և մերոյ Նահանգիս տէր Կարապետին և ճըշմարիտ հայրապետին, զոր տէր աստուած վայելել տացէ, ամէն, ամէն։ Այլ և յիշեցէք յաղաւթըս ձեր զաւըրինակին տաւաղն՝ զԳորգ սարկաւագն...։*

444

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2961

Հետ. ստացող՝ Ատոմ

73 ա Զվերջին ստացաւղ այսմ գրոց զԱտոմ աբեղա, և ըզծընաւղսն իւր՝ զհայր իւր զՅակովբ, և զմայրն իւր Նէտիր, որք են ի Քրիստոս հանգուցեալ, և զհարազատ եղբայրսն իմ զՁըրքին, զխութլուբուղա, զՄենաս, և զսարկաւագ եղբայրն իմ զՅովանէս, և զաւագ եղբաւրորդեակքն իմ զՍտեփաննոս և զԹաիպշա, զՅակովբ և զՊարոնշա, և զիս զմեղաւք լըցեալ ոգիս զԱտոմ սուտանուն աբեղա աղաչեմ, աղաչեմ զսուրբ գաղափարողսդ այսմ գրոց, յիշել ի սուրբ աղաւթս ձեր զվերոյգրեալսդ միով աստուած ողորմայիւ...։

Ի թվիս Հայոց ՊՁ. (1431) ստացայ զսուրբ գիրքս ի հալալ արդեանց իմոց առ ի յիշատակ և յոյս բարեաց ինձ և ծնաւղացն իմ...։

445

ՄԱՇՏՈՑ

Երևան 4265

Գրիչ՝ Թաւրոս

ա

15 բ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք պատահէք սմա և կարդայք յիշեցեք ի Քրիստոս զանարժան գրիչս՝ զԹաւրոսս, և զծնաւղսն իմ, և այլն, որ ի յետ և յառաջ դրեցաք։ Ես իմով տգիտութեամբս ժողովեցի զաւըրինակերն աստի և անտի, և հաւաքեցի ի մի տուփ, և ձմեռն էր և ցու[ր]տ, և թանաքն մսեցաւ, և այս չափ էր կար մեր։

Գրեցաւ թվ. ՊԾՁ. (1431)։

---

* Ներքին, լուսանցքի վրա կա ԺԵ. դարի անթվական մի հիշատակարան, որտեղ ասված է. «Զվերջին ստացող դրոցս զխեր-խարունն, [որ ստ]ացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, զաւակ /// մանուկ կրաւնաւորին, տէր Կիւրեղին, զոր /// վայելել տացէ, ամէն։ Այլ և յիշեցէք յաղաւթս /// տիկին, որ և նա մայրութիւն կանէ տէր Կիւրեղին»։

Բ

133 ա ...Կատարեցաւ հոգիաքնար սուրբ մատեանս՝ մեծի աթոռոյս սուրբ Փրկչիս և սուրբ Երևմանս և սուրբ Նշանիս աթոռոյս, և ի հայրապետութեան աթոռակալէս ի տէր Սարգէս, և զգծող գրիս՝ զսուտանուն աբեղաս զԹաւրոսս յիշեսցիք, զՁոքիՇՇ և զիւր որդին զԱռաքել սարկաւագն, որ զաւրինակն շնորհեց մեզ, դարձեալ և զմեր Նախ-
133 բ նին, և զհայրն մեր զՄկրտիչՇ || քահանան, և զիւր ամուսին ՊուլղաՇ յիշեցէք ի տէր և մեղաց թողութիւն խնդրեցէք, ամէն։

Արդ, գրեցաք զՄաշտոցս ի ցուրտ և ի դառն ժամանակ, որ և թանաքն մսեցաւ և ոչ եղաւ պիտոյ, որ ոչ մեղադրէք թէ սղալ կենա, ծեր եմ։ Գրեցաւ Մաշտոցս ի կարգ և ի պատիւ ամենայն հաւատացելոց մանգանց եկեղեցոյ մաւր մերոյ Սիոնի, ի խնդրոյ զաւակի իմոյ ՅովաՇէս սարկաւագի, ի վայելումն անձին իւրոյ և զաւակաց իւրոց, յիշեսջիք և զիւր ծնաւղն՝ զխաս-խաթուՇՇ և մեղաց թողութիւն խրնդրեցէք։

Արդ, որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ աւրինակելով յիշեցէք և մեղաց թողութիւն խնդրեցէք մեզ և ձեզ, ամէն։

Գրեցաւ հոգիայքնարս ի թվ. Ճ. և Ռ. ՁԱ.* (1432), ձեռամբ անարժան գրչի Թորոսի։

446

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 3555

Ստացող՝ Մանուէլ

ա

285 բ ...Ի թվ. ՊՁ. (1431) ես՝ Մանուէլ աբեղա և եղբարս իմ տէր Տիրաւագ ստացաք զգանձարանս ի հալալ յընչիս մերոց ի վայելումն անձին և յիշատակ հոգւոց մերոց, և ծնողաց, և ամենայն արեան մերձաւորաց։ Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրագործ յաղաւթս ձեր զվերոյգրեալսդ....։

Բ

323 բ Ո՛վ տէր իմ Տիրաւագ, զայս երգեաy, և մեղուցեալ զգրչակս յիշեայ։

447

ԱՒԵՏԱՐԱՆ

F. Macler, Rapp. sur une miss. scient. en Belgique, էջ 114—115, միջնորդությամբ ՀԱ, 1939, սյուն. 181

Ստացող՝ Սիմէոն

Ի վերջին դարն ժամանակին, յորժամ սէրն ցամաքին և աշ-

* Իմա «ՌՃՁԱ», այսինքն՝ ՊՁԱ. (=1432)։

խարհ մեղաւք տապալին, մարդկան յոյսն պակասին և սատանայի կամքն լինին և տեսիլ սրբոյն Սահակի ի մեզ կատարի։ Ես վերջադեալս ի էն (*) սուտանուն Սիմէոն աշակերտս ցանկացող եղա աստուածաշունչ գրիս ի Թվ. հայոց Պ[Զ°]. (1431°), ի սուրբ յանապատիս, որ սուրբ Յակոբն յորջորջէի, ի շնորհազարդ վարդապետն Ստեփանոս, որ էր ի յերկրէն Գաւաշից, ի յորդոյ Թումայէ՝ ի Գաւղոս[ի] Թոռնէն, զի նա առաքելոյն նմանեալ... և զաւետարանս է ինձ տուեալ և ԺԲ.(12) Ֆլաւրին գին է առեալ, և իմ էլ ճար չյիմացեալ, մինչ զսա բարեխօս կալեալ, զի խիստ եմ մեղաւք լցեալ և սատանի բաժին եղեալ, ի յանապատէ եմ հեռացեալ և յաշխարհի փողոց մտեալ, զի իմ մեղքն բազմացեալ և զանպատներն աւերեալ։ Արդ, որք հանդիպիք այս սուրբ աստուածաշնչիս զիս յիշեցէք՝ զՍիմէոն վարդապետս...։

448

Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 965

Գրիչ՝ Դաւիթ
վայր՝ Եղեգեաց գաւառ, Ճեներեան անապատ

377 ա ...Արդ, եղև աւարտումն հոգիաբուխ տառիս, որ կոչի Մաշտոց,
ի թուաբերութիւնս Հայոց Մեծաց ՊՁԱ. (1432) | | | * [ի հայրապե-
տութեան] Կոստանդեա, և յաշխարհակալութեան ըստ ներելոյն աստու-
ծոյ՝ Սքանդարին, ի գա[ւառիս] Եղեգեաց, ի սուրբ [անապա]տս Ճե-
Ներեան, ընդ [հո]վանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակոբիս,
ռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Դաւիթ կրաւնաւորի, առ ոտս
գերերջանիկ րաբունապետի Յովանիսի, դառն և պանդուխտ կենաւք, ի
դառն ժամանակիս, որ եղև սով սաստիկ՝ մինչև զպեղծ կենդանիս կե-
րան բազումք, նաև ի Դաւրէժ քաղաք զմարդիկ կերան, և զեւղն մար-
դոյ որպէս զանասնոյ վաճառէին միմեանց։ Եւ եղև այս պատուհաս
ի գալ անաւրէն ազգին Պարսից, որ կոչի չաղաթայ, որ և վասն ծո-
377 բ վացեալ մեղաց մերոց եկեալ Ս[է]ր Թագաւորն Պարսից Շահռուխ յաշ-
խարհս Հայոց, յերկրորդ գալստեան իւրոյ։ Եւ աւերեալ քանդեաց զբա-
զում տեղիս, և զբազումս գերեաց, նաև յերկիրն Վասպուրականի և
Քաջբերունոյ կին և տղայ ոչ մնաց, այլ զամենայն առեալ տարաւ ի
Սամրղընդ, և զկնի նորա եղև սովն, որ գրեցաք, և զամս Դ. (4) մըր-
րիկ խռովութեան ոչ դադարեաց յաշխարհէս, որ դեռ ևս է։

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ տառի կամ զխորհրդածութիւնս եկեղեցւոյ կատարելով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանպիտան գծողս, որ ոչ աստուծոյ եմ պիտոյ և ոչ մարդոյ, նաև զծնաւղսն իմ՝ զհայրն իմ զՀնդու, և զմայրն իմ զՄարթայ, և զքոյր մաւր իմոյ զՀռիփսիմէ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, այլ և զհարազատ եղբարքն իմ զԹումայ մաքրամիտ քահանայ, և զՄխիթար աշխարհական, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալսն։ Եւ լի սրտիւ աստուածողորմի ասացէք և մեղաց թողութիւն խնդրեցէք, և ձերն թողեալ լիցի յամենակալ տեառնէն, ամէն։

* Ձեռագիրը եղել է չափազանց վատ վիճակում, հավանաբար ԺԶ. դարում մեծ վարպետությամբ նորոգել են և որոշ էջերի վրա թուղթ են փակցրել։ Այստեղ 4 տող մնացել է նորոգման ժամանակ փակցված թղթի տակ։

Զսակաւ աշխատող սորա զտրուպ | | | , որ զգիրքս ծրեցի հանդերձ ծնօղաւքն յիշեցէք ի Քրիստոս...:*

բ

248 բ Ի Թուականիս մեծ Հայո ՊՁԱ. (1432) գրեցաւ տառս Մաշտոց ձեռամբ տառապեալ Դաւթի՝ աշակերտի ուղափառ գրի, ի խստաբեր և ի դառն ամի, որ ամենայն հասակ մահուամբ կատարի՝ ծերթ և տղայի, երիտասարդի և կուսի, և այլոց ամենայնի։

Արդ, աղաչեմ զձեզ մանկունք Սիոնի, յորժամ կատարէք զաւրէնս Քրիստոսի, յորում եդեալ կայ ի յայսմ գրի, յիշատակի արարէք արժանի ըզանիմաստ գրիչս եղկելի, նաև զծնաւղսն իմ Նազելի և դուք գրիք ի գիր կենդանի այժմ և յապայն յաւիտենի, ամէն։

449

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9223, ԺԲ**

Գրիչ՝ Կարապետ Աղթամարցի
Վայր՝ Տփխիս

ա

...Շնորհիւ տեառն սկսա և ողորմութեամբ տեառն աստուծոյ կատարեցի ի ՊՁԱ. (1432) Թվականի Հայոց, յաւգոստոս ամսոյ ի ԺԶ. (16)։ Գրեցաւ ձեռամբ սուտանուն աբեղայի Կարապետի,*** ի մայ-
1 բ րաքաղաքս Տփխիս, ի վանքս պարոն Սալաղենց, ի || դրան սուրբ Ամենափրկչիս, զոր տէր աստուած զանձեռագործ խորանն պարգևեսցէ՝ զերկնից արքայութիւնն՝ շինողաց սուրբ ուխտիս, ամէն։

Եւ ես մեղսամած գրիչ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զիս, և զծնաւղսն մեր՝ զՊետրոս քահանայ և զՇնոհուոր, և զեղբայրն իմ զՅոհանէս, և զքեռն իմ զՍուլտան՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, որ և զմիւս եղբայրս, որ աւգնական եղև ի կոկել Թղթիս...։

Եղբայրք, խոշորութեան գրիս և սղալանացս անմեղադիր լերուք, զի կարն մեր այդ չափդ էր։

բ

1 ա Ցայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս պարոն Զալաբէն, և յետ Խ. (40) աւուր փոխեցաւ ի Քրիստոս արհեպիսկոպոսն տէր Յովանէս՝ եղ-

---

* Վերջին պարբերությունը գրված է 377 բ էջի ներքևում՝ շատ մանր տառերով, գիրը խունացել է և մեծ դժվարությամբ է վերծանվում։ Գրողի անունը չի կարդացվում։

** Ձեռագրից պահպանվել է միայն հիշատակարանը։

*** 1 բ էջի ստորին լուսանցքի վրա հազիվ նշմարելի մանր տառերով գրված է կիսով չափ ջնջված հիշատակագրություն, ուր կարդացվում է գրչի անունը «Կարապետ Աղթամարցի»։

բայր նորին, որդիք պարոն Փաշի, երիտասարդական մահուամբ, և Թողին սուք անբժշկելի իւրոցն և ւտարաց։ Զոր տէր աստուած Թողցէ զամենայն սխալանս նոցա ի յաւուր դատաստանին, ամէն։

450

ԱՒԵՏԱՐԱՆ

Ե. Լալայան, Ջաւախք, Ազգ. հնդ. Բ. 1897, էջ 288

Գրիչ՝ Մատուր
վայր՝ Բջնի

Կամաւ ամենակալին աստուծոյ հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, ի դարս վերջին և ի ժամանակս չար և անբարի, ի Թուականութեան հայկազեան տումարի ՊՁԱ. (1432), յանիշխանութեան Արարադետն գաւառիս, ցիր և ցան եղեալ տարաշխարհիկ ի մէջ...ազգին Վրաց։ Արդ, ի յայս և ի սոյն ժամանակի, յեպիսկոպոսութեան արհիական աթոռոյս Բըջնւոյ* տէր Յովհանէսի, ես Մատուր՝ ծառայ ծառայից աստուծոյ, նախարար, վերակացու և առաջնորդ քաղաքիս Բջնւոյ,** և ամուսին իմ Սարիբէկ՝ հասեալ ի ժամ ծերութեան, ակն ունելով ելից ի կենցաղոյս՝ ջերմեռանդ սիրով ստացաք զսուրբ աւետարանս՝ մեզ և նախնեաց մերոց յիշատակ յաւիտենական, կտակ անվախճան կենացն, պաշար և առաջնորդ երկնաչու ճանապարհին, ի հալալ արդեանց մերոց՝ զաւակ ի Սիոնի և գանձ անկողոպտելի ի վերինն Երուսաղէմ։ Եւ ընծայեցաք զսա մեծ սիրով արհիական աթոռոյս Բջնւոյ և երկնահանգէտ մաւրս լուսոյ սուրբ Աստուածածնիս, յիշատակ հոգւոց մերոց։

451

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9450

Վաճառող՝ Մկրտիչ Սըսցի

ա

373 բ Կամաւ անմահին աստուծոյ ես՝ Մկրտիչ Սըսցի, որդի Ստեփաննոսի, եկի յաթոռն Բջնոյ, և իմ սրտի յաւժարութեամբ զիմ հալալ արդեամբ գնած աւետարանս ծախեցի Երեմիայ աբեղին և իւր եղբաւրն Սարգսին, ոչ ի հարկէ կամ ի բռնութենէ, այլ իմ սրտի յաւժարութեամբ։ Այսաւրէ վեր ոչ իմ, ոչ իմ ազգականաց, ոչ այլ մարդոց դաւի չկայ հետ սացան։ Ով հանդգնէ և դաւի անէ՝ յերից սուրբ ժողովոյն որոշեալ լիցի, և զիւրն ոչ ժառանգեսցէ, և մասն Յուդային առցէ, ամէն։

Հասաւ գինն լի և անԹերի ՄԾԾ. (250) դ[ահե]կ[ան], որ անէ կէսն ՃԻԵ. (125) դկ.։

* Տպված է «Բըզնոյ»։
** Տպված է «Բզնւոյ»։

Վկայ գրոյս պարոն Սատրիկս և | | | Թամաշայ Ստեփաննոս հայրապետ, և ես Յովաննէս, որ զգիրս գրեցի։

Բ

Նուիրատու՝ Երեմիայ․

288 բ Կամաւն անմահին աստուծոյ ես՝ Երեմիայ արեղայ, որդի Աւկրին-
Նի, ծընընդեամր և սընընդեամբ Բջնոյ, ի հասեալ ժամս մահու և յելս
գնացից իմոց յաշխարհէս, և յանյոյս մնացեալ էի ի յազգականաց յետ
իմոյ յիշատակութեան։ Վասն այն պատճառին տուի զիմ հալալ արդ-
եանց ստացեալ սուրբ աւետարանս Բարսեղ տրեզին, որ ինձ քառա-
սունք կատարէ, միշտ ու հանապազ զիմ հոգիս ի բարին յիշատակէ։
Այսօրէ յետ աւետարանիս ոչ ով դաւեքար չելնի, ոչ իմոց, և ոչ աւտա-
րաց։ Եթէ ոք յանդգնի ու զիմ անդարձս խափանել ջանայ՝ դատի
յաստուծոյ և իմ մեղացն պարտական լիցի, զվարձ զՅուդայի և զԿա-
յենին առցէ։

Ես տէր Յոհաննէս արքեպիսկոպոս Բջնոյ և Արարատեան,* որ զգիրս գրեցի վկայ եմ, աստուած շնորհաւոր սանէ, ամէն։

452

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 8410

Գրիչ՝ Սարգիս․
վայր՝ Եղեգեաց անապատ

14 ա ․․․Շնորհիւ ամենակալին աստուծոյ․․․ աւարտեցաւ սուրբ աւե-
տարանս ի յանապատ[իս Եղեգեաց],** որ Քար կոչի, ընդ հովանեաւ
սուրբ Աստուածածնիս, և առ յոտս Յակոբ հրեշտակակրաւն ճգնաւորի,
ձեռամբ Սարգիս անպիտան ծառայի, վասն զի գրեցի զլուսաւոր և
314 բ զմաքրափայլ աւե ‖ տարանս բժիշկ հոգոյ իմոյ․․․։
Ով մանկունք սուրբ եկեղեցոյ, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք
աստ, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զՄաթէոս բարի և հաւատարիմ,
քաջ և ընտրեալ քահանայն, որ է փափագ և ջերմեռանդ նախանձա-
ւոր շնորհացն աստուծոյ և յուսոյն կենաց, զոր տէր աստուած կատա-
րեսցէ զամենայն խնդրուածս իւր աստ և ի հանդերձելումն, քանզի
315 ա նա հաճեցաւ յաւժարութեամբ սրտի վասն ‖ յուսոյ արքայութեանն
և վասն սիրոյն Քրիստոսի՝ զաւետարանիս մագաղատս ինձ ողորմու-
թիւն արար, և այն, որ առատն է յամենայնի՝ նմա պարգևեսցէ զիւր
յերկնից արքայութիւնն, և ծնաւղացն իւրոց մասն և բաժին շնորհեսցէ։

* Հիշատակարանը անթվական է. տեղադրում ենք 1432-ի թվաշարքում, որովհետև նախորդ հիշատակարանում ևս հանգես է գալիս նույն այս Յովհաննէսը, որպես Բջնիի եպիսկոպոս («յեպիսկոպոսութեան արհիական աթոռոյս Բջնւոյ տէր Յովհաննէսի»)։

** Փակագծերի մեջ առնվածը քերված է, նկատվում են տառերի աղոտ հետքերը միայն։

Յիշեցէք և զհոգևոր հայրն իմ զՅակոբ անբիծ և արտասուալից աբե-
ղայն, որ եղև մեզ մխիթարութիւն և հոգևոր ուրախութիւն յայսմ
անապատիս, նաև զբազմերախտ տէրն իմ զԵրեմիա մաքուր և սրբա-
սնեալ աբեղայն։ Յիշեցէք և զտէրՍտեփանոսն, որ զաւրինակն շնորհ-
315 բ եաց, յիշեցէք և զհոգևոր եղբայրն իմ՝ զմիւս Յակոբն՝ ‖ զճգնատեսակն
և զկուսակրաւն աբեղայն։ Յիշեցէք և զմանկունք անապատիս զՅոհա-
նէս հեզահոգի և ընտիր միայնակեացն և զՄարտիրոս աշխատասէր և
բազմաչարչար կրաւնաւորն, որ զմարմնաւոր պիտոյսն իմ և զսպա-
սաւորութիւնն անձանձրանալի, անտրտունջ, անթերի կատարեցին։
Յիշեցէք և զծնաւղսն իմ՝ զհայրն իմ Թադէոս, և զմայրն իմ Էլմա, և
զեղբայրքն իմ Բախտիյար, Մարտիրոս, Գրիգոր, Դովլաթիյար, Գուլիյար,
Արղութա, Բիրթէլ և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանիսն
և զհանգուցեալսն։
316 ա Դարձեալ, աղաչեմ և առ յոտս ձեր անկեալ մաղթեմ, յիշեցէք
միով տէր-ողորմայիւ զիս, որ յետինս և անարգս եմ ամենեցուն՝
զՍարգիս անարհեստ գծողս ...։

Թվ. ՊՁԱ. (1432)։

453

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ՄԻՔԱՅԷԼԻ ԱՍՈՐԻՈՅ, ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ԿԻՐԱԿՈՍԻ

Տյուբինգեն 70, ՀԱ, 1942, սյուն. 33

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Ագուլեաց վանք

Գծագրեցաւ պատմագիրս այս... ի թուիս ՊՁԱ. (1432), ձեռամբ մեղսաներկ և անարհեստ գրչի Թումայի՝ սիրողի գրոցս, և ծնողացն իմոց Սիմէոն քահանայի, և մօրն իմոյ Սայինին: Արդ, գրեցաւ սա ի վանքս Ագուլեց, առ դրան սուրբ Առաքելոյս Թումայի, որ է աթոռ Գողթեան գաւառիս, ի թագաւորութեան պիղծ ու անօրէն և այլազգի Սքանտարիս, և ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեա, և ի վերա-գիտողութեան սուրբ հայրապետիս մերո տէր Տէրունականայ։

454

ԺԱՄԱԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

Գալեմք. Ցուց. Միւնխէնի, 6, էջ 19

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Մեծոփայ վանք

118 ա—119 բ ...Արդ, ես՝ Ներսէս սուտանուն կրաւնաւորս ցանկացաւղ եղէ աստուածային բուրաստանիս, և եռափափագ և տենչալի հայցմամբ խնդրեցի յաստուածաբան վարդապետէն և ի քաջ բաբունապետէն Թովմայէ: Վասն որոյ ըստ բնածին բարուցն և հայրական գթոյն խոնարհեցաւ յաղաչանս տառապելոյս և ինքն շնորհեաց զքարտէսն և ետ գրել իւր ձեռնասուն աշակերտացն՝ Մկրտիչ վարդապետին և Յով-

ԵաննէսիՆ և Զաքարիային և ելից զտենչումն փափագանաց իմոց։ Վասն որոյ գրեցէ զնա աէր աստուած և զաշակերտսն իւր՝ յաւիտենական իրն և յանվախճան ուրախութիւնսն, ամէն։ Եւ արդ, գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՊՁԱ. (1432), ի հրեշտակարնակ յանապատս և ի հրաշափառ ուխտս Մեծոփայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Յակոբ հայրապետիս, և սուրբ վարդապետաց գերեզմա[նա]ցս առ ոտս նախասացեալ րաբունապետիս, որ փայլէ ի մերումս ժամանակի իբրև զարեգակն ի կոբրնթարթո երկնից։ Զոր և պահեսցէ զսա Քրիստոս աստուած երկար ամաւք ի պարծանս Հայոց ազգիս։ Եւ արդ, ստացայ զսա ի վայելս և ի մխիթարութիւն անձին իմոյ՝ Ներսէս կրօնաւորի, և ծնողաց իմոց՝ հօրն իմ Սարգսի, և մաւրն իմոյ Շնոհուորի, և ամենայն արեան մերձաւորաց իմոց։ Զի որք ընթեռնուք և կամ ընդյաւրինակէք և կամ հարևանցի տեսութեամբ հանդիպիք, լի սրտիւ, յաւժար կամաւք և բոլոր հաւատով ի ժամ սրբանուէր աղօթից ձերոց աստուած-ողորմի ասացէք...։

Այլ և յիշել աղաչեմ զերջանիկ և զերանաշնորհ զարհեպիսկոպոսն զտէր Մկրտիչ Ամթայ, որ երփն-երփն գունով և զանազան երանգով զարգարեաց* զսուրբ գիրքս առ ի յիշատակ բարեաց հոգւոյ իւրոյ և ի պատճառս աւրինակի տանս աբեղեան...։

455

ՄԱՇՏՈՑ

Փիրգ. Նօա. 100—101, Նշխարք (№ 4515), էջ 138, Բաղէշ՝ ի Գոմաց վանք

Ստացող՝ Մկրտիչ
վայր՝ Արճէշ

...Արդ, ես ...Մկրտիչ սոսկանուն վարդապետս եղէ ցանկացող այսմ աստուածաշունչ կտակիս, որ կոչի Մաշտոց։ Ետու գրել զսա սիրելի եղբօր մեր հոգևորի և սրբասէր քահանայի Կարապետի, յիշատակ ինձ, և հոգևոր ծնողաց իմոց՝ Կարապետ կրօնաւորի և Յակոբի, այլ և մարմնաւոր ծնողաց իմոց՝ Օրպէլին և Դովլաթին:

Դարձեալ, աղաչեմ յիշել ի բարին Քրիստոս զերջանիկ և զքաջ հռետորն և զտիեզերալոյս րաբունին զԹովմայ, որ զօրինակն շնորհեաց և բազում բարութիւնս եցոյց մեզ։ Նաև զհոգևոր եղբայրս մեր՝ զգրոց աշակերտեալ անձինս զՅովաննէս կրօնաւոր, որ զեօթն օրէնքն գրեաց և զյիշատակարանս գրոցս, և զՀայրապետ կրօնաւորն, որ զգիրս կազմեաց, Նաև զհոգևոր որդեակս իմ զՄինաս դպիրն, որ զգիրս ծաղկեաց, և զԳրիգոր դպիրն, որ հանապազ մեզ սպասաւորէ, և զեղբայրն իւր զՄկրտիչ մոթն, գրեսցէ զսոսա Քրիստոս աստուած ի դիրն կենաց և յանջնջելի դպրութիւնն, ամէն։

Եւ արդ, գրեցաւ սա ի Թուականութեանս Հայոց ՊՁԱ. (1432), ի չար և ի դառն ժամանակիս, յորում տառապին ազգ քրիստոնէից

* Մկրտիչ Նաղաշի երեք նկարները, որոնք գտնվում են այս ձեռագրում, հրատարակիչը «տգեղ» է համարում։

զանազան պատուհասիւ ի ձեռաց անօրինաց ի Թոյլ տալոյն Աստուծոյ վասն բազմութեան մեղաց մերոց։ Ի Թագաւորութեան աշխարհակալ և անիմաստ Սքանդարին, և ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և յեպիսկոպոսութեան տէր Յոհաննիսի, յերկիրս Քաջբերունի, ի քաղաքս, որ կոչի Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակոբիս, ձեռամբ Կարապետ քահանայի՝ հանճարեղ և իմաստուն քարտուղարի ...։

456

ԱԻԵՏԱՐԱՆ

ԲՑԲ 8, էջ 7

Գրիչ՝ Թումայ Մարաղացի
վայր՝ Ղարայմանիս գիւղ

188 բ ...Եւ ես Թումայ տկար անձամբ
Եւ բնական Մարաղացի,
Որ եմ տխմար և անպիտան,
Փծուն գրիչ և խիստ լալի,
Քանզի չէի վարժել գրի
Եւ ոչ ուսեալ զարուեստ գծի ...։

Արդ, գրեցաւ ի գեւղս Ղարայմանիս, ընդ հովանեաւ Աստուածածնիս, ի դառն ժամանակիս և այս զարիպութենիս, և այլ զինչ ասեմ և զորն պատմեմ. Ի Թուականութիւն հայոց ՊՁԱ. (1432), որ տարիս կենդայ[նա]կերպ ձուկն էր ...։

457

ԱԻԵՏԱՐԱՆ

Ալիշան, Հայկարան

Գրիչ՝ Յովհաննէս Արճրումեցի
վայր՝ Ղապալոյ գաւառ, Եղունդի գիւղ

[Ստացող Յովհաննէս քահանայ, ի հասակի ծերութեան գնաց յԵրուսաղէմ ... և զնիւթն աւետարանի առեալ՝ եկն խաղաղութեամբ].* և ետ գաղափարել զսա ի ձեռն անարժան և փանաքի գրչի ի ժամանակս վերջինս, ի Թվ. Հայոց ՊՁԱ. (1432), ի դաւառիս Ղապալոյ. յառաջնորդութեան տեառն Մատթէոսի Աղուանից կաթողիկոսի ... ի մենաստանիս Ճալէթոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ աջերուն Գրիգորի և Աթանագինի, և նոցին սպասաւորի տէր Կարապետի փակակալի, որ զաւրինակն շնորհեաց ...։

* Փակագծերի մեջ առած հատվածը պատկանում է Ալիշանին, որը երկու խոսքով վերապատմում է հիշատակարանի սկզբի մասի բովանդակությունը։

Արդ, գրեցաւ սա ի լաւ և յընտիր աւրինակէ ի գիւղն Եղունդի, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, ձեռամբ...* Յովնաննէս *գրչի* Արճրումեցոյ...։

458

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 1957

Գրիչ՝ Գրիգոր Կուզեցի

վայր՝ Զմշկածագ, Երկէն-Ընկուզեց անապատ

Ստացող Հայրապետ *կուսակրօն աբեղա սկսեալ յ*Ամիթ *քաղաքի, ի վերադիտողութեան նորին տեառն* Մկրտչին, *և աւարտեցաւ ի* Ցաղման *գաւառի, ի նահանգին* Զմշկածակի, *ի սուրբ ուխտիս* Երկէն-Ընկուզեց, *յառաջնորդութեամբ* Առաքել *վարդապետի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետին և սուրբ Աստուածածնին, ձեռամբ անարհեստ գրչի* Գրիգորի Կուզեցւոյ, *ի կաթողիկոսութեան Կիլիկիոյ տեառն* Կոստանդեայ, *և յաշխարհակալութեան* Օթման-Բէկին, *և ի թուականութեանս Հայոց* ՊՁԱ. *(1432) ամին*։*

45

ԱԻԵՏԱՐԱՆ

Սեբաստիա, ս. Նշան 66, ՀԱ, 1926, սյուն. 46—47

Գրիչ՝ Յովսէփ

վայր՝ Կիւրղի անապատ (Տիւրիկոյ գաւառ)

...Գրեցաւ սա ի թուականութեան Հայոց ՊՁԱ. *(1432), ի սուրբ և ի գերահռչակ անապատս, որ կոչի Կիւրղի, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս, և սրբուհւոյ Աստուածածնի, և Կարապետին և Յովհաննու, և բազմահաւաք սուրբ նշխարացս, որ աստ։ Արդ, աղաչեմ զձեզ մանկունք նորոյ Սիոնի, որք հանդիպիք այս սուրբ աւետարանիս և աւդտիք և աւրինակէք, յիշեցէք սրտի մտաւք ի մաքրափայլ աղաւթս ձեր զփցուն և զխոշոր գրչակս զ*Յովսէփս, *և յանդգնութեանս իմոյ ոչ մեղադրել, զի յաւժարութիւն և փափաք սրտիս մռացումն եղև տկարութեանս։ Յիշեցէք և զուսուցիչսն իմ զ*Արիստակէս *վարդապետն, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ զգիրս և ինքն ի Քրիստոս փոխեցաւ, նաև զծնողն իմ զ*Յակոբ *քահանայ, և զմայրն իմ զ*Ալամ-Խաթուն, *և զեղբարքն իմ զ*Գրիգորն *և զ*Միքայէլն, *նաև զհանգուցեալսն եղբարք իմ զ*Ասման *սարկաւագն, որ յուսով առ Քրիստոս փոխեցաւ*

---

* *Հրատարակածը հիշատակարանի բովանդակության համառոտ շարադրանքն է՝ կատարված Մ. Տէր-Մովսիսյանի կողմից։*

460

ԾԱՇՈՑ

Ալիշան, հայկարան

Գրիչ՝ Ղազար Ղրիմեցի
վայր՝ Տրապիզոն

...Արդ, գրեցաւ սա ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի Ղազարի Ղրիմեցոյ, ընդ հովանեաւ սուրբ և փառաւոր գերեզմանին լուսաւորչին մերոյ Գրիգորի, ի խնդրոյ...պարոն Վարդանա և ամուսնոյն իւրոյ Մամախաթունի...: Ետին ի դրան սուրբ Աւքսենտիս, [զոր հիմնարկեալ է Մելիաէ քահանայ], որ է Պոնտոս քաղաքիս, յիշատակ... հաւրն Պարոնին և մաւրն Դովլաթ-խաթունին, հարազատ եղբաւրն իւրոյ Ցազիզբէկին...:

Յիշեցէք...զառաջնորդն սուրբ ուխտիս...զՄարտիրոս վարդապետն և զՄկրտիչ հայրապետն, այլ և զկոկողք նիւթիս զԱբրճամն և զՅովանէս...:

461

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Երևան 3484

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Տրապիզոն

190 բ Գրեցաւ գիրգս այս ի Պոնտոս քաղաքին, որ անուն կոչի Տրապիզոն, և ի դուռն սուրբ Փրկչին, և մատուռ նորին սուրբ Կարապետին, որ է արդեամբ շինեալ խոճա Սաեփանոսին։

Գրեցաւ թուաբերութիւն Հայոց ՊՁԱ. (1432), յունվար Ժ. (10),
ձեռամբ բազմամեղ սուտանուն Յակոբ աբեղի։ Ո՜վ սուրբ ընթերցաւղք,
յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զեղկելի գծողակս և զծնօղսն
191 ա իմ, ‖ և զեղբարսն, և զամենայն արեան մերձաւորսն իմ, նաև զստա-
ցող գրիս՝ զԱւետիք միայնակեացն, և ետ գրել յիշատակ հոգոյ իւրոյ.
և թողութիւն մեղաց հայցեցէք, զի և ձեզ թողցէ ողորմածն աստուած,
որ առատն է ի տուրս պարգևացն, ամէն և յամենայն ժամ։ Եւ զար-
ժանագով զհոգևոր հայրն մեր զտէր Ղազար Ղրիմեցի՝ գրոց աշակերտ,
191 բ և զմանկագոյն եղբայրս մեր կրաւնաւորսն՝ ‖ տէր զՅովհաննէսն և զՂա-
զարն յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր...։

Նայ և խոշորութեան և սխալանացս* անմեղադրելի լերուք, զի կար [մեր] այս չափ էր, ով սուրբ ընթերցողք։

* Բնագրում՝ «Սղխանացս»։

462

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան 2387

Գրիչ՝ Քրիստոսատուր
վայր՝ առընթեր Կաֆայի

252 բ *Փառք ամենասուրբ երրորդութեանն, որ ետ կարողութիւն տկա-*
րութեանս իմ յաւարտ եւանել գրոյս։ Գրեցաւ խազտետրս ի թվին
Հայոց ՊՁԱ. (1432) ամի, ձեռամբ ապիկար և անմար գրչի՝ Քրիստո-
սատուր *մեղապարտ կրաւնաւորի, ի վայելումն շնորհազարդ* Սարգիս
սարկաւագին, որ բազում փափագանաւք ստացաւ զսա իւր հալալ ար-
դեանցն, յիշատակ իւր և ծնողացն։ Արդ, եղև սկիզըն և զրաւ խազ-
տետրիս լաւ և ընտիր աւրինակէ, որ կոչի Առաքելցի, յաշխարհս Հո-
253 ա նաց, *ի վանս, որ յանուն սուրբ Անտոնի,* || *որ առընթեր մեծի մայ-*
րաքաղաքի Կաֆայի, *առաջնորդութեամբ վանացս և աթոռակալու-*
թեանն մեծի վարդապետի՝ քաջ րաբունոյ տեառն Սարգսի, *ի հայրա-*
պետութեան տեառն Կոստանդնեա *և եպիսկոպոսութեանն տէր* Կարա-
պետին։ *Արդ, որք հանդիպիք ի սմա ուսանելով կամ աւրինակելով*
*յիշեսջիք զվերոյգրեալն զ*Սարգիս *սարկաւագն, և զհայրն իւր զ*Նիկո-
ղաոսն, *և զմայրն իւր զ*Եախլ-Մելիքն, *և զհանգուցեալ եղբայրն իւր*
*զ*Խաչիկն, *և զքուերսն իւր՝ զ*Աղուր-Խաթունն *և զ*Փաշա-Խաթունն, *և*
*ամենայն ազգայինսն։ Եւ զիս՝ զանպիտան և զփցուն գրիչս զ*Քրիս-
253 տոսատուր *աբեղայս՝ զծաղկաւղ և զկազմաւղ, և զաշակերտն իմ զ*Աւք-
սէնտ *կրաւնաւոր քահանայն, և զծնաւղսն իմ յիշեցէք ի տէր...։*

463

ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

Վիենն. 543, Տաշ. Ցուց. էջ 1016

Գրիչ՝ Քրիստոսատուր
վայր՝ առընթեր Կաֆայի

336 բ *...Ի թվականիս Հայոց ՊՁԱ. (1432), գրեալ ձեռամբ փցուն եւ*
անարհեստ գրչի Քրիստոսատուր *մեղապարտ կրաւնաւորի ստոյգ եւ*
յընտիր աւրինակէ, ի վանս, որ յանուն սուրբ Անտոնի, որ առընթեր
մեծի մայրաքաղաքի Կաֆայի, *ի խնդրոյ պարոն* Շամշատինին, *յիշա-*
տակ իւր եւ ի վայելումն որդւոյն իւրոյ պարոն Խաչատրի։

464

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան 1125

Գրիչ՝ Յակոբ Բերկրեցի
վայր՝ Երուսաղէմ

ա

522 ր ...Արդ, գրեցաւ սուրբ գիրս, որ կոչի Սաղմոսի Քաղուածոյ,
զոր արարեալ քաջ հռետորին և անյաղթ փիլիսոփային մեծ վարդա-
պետին Գրիգորի Որոտնեցւոյ* բազում աշխատութեամբ ի վարժումն և
յուսումն գրոց աշակերտեալ անձանց և վարդապետաց։ Զոր և տեսեալ
զսա արի և ժրաջան, հեզահոգի և ամենայն առաքինութեամբ զար-
դարեալ աստուածաբան վարդապետս Մարտիրոս՝ սպասաւոր սուրբ
Լուսաւորչի գերեզմանի, և ետ գրել զսա մատնադեղեւ և սխալագիր
գրչի Յակոբ սուտ աբեղայիս. ոչ թէ ի մակացութիւն արուեստի է
այս, այլ ի սիրոյ սրտէ եղև, զի կատարեալ սէրն մերժեաց զերկիւղն
ի բաց։ Եւ գրեցաւ սա ի սուրբ և ի փառաւորեալ աստուածակոխ քա-
ղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ սուրբ Յարութեան և սուրբ Գողգո-
թային, և աստուածընկալ և լուսափայլ սուրբ գերեզմանին Քրիստո-
523 ա սի, և սուրբ դամբարանիս Յակոբայ առաքելոյ։ Ի թուականութեանս
Հայոց ՊՁԱ. (1432), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և ի
յաթոռակալութիւն սուրբ քաղաքիս Երուսաղէմայ տէր Մարտիրոս արհ-
եպիսկոպոսի։ Գրեցաւ գիրքս այս յիշատակ բարի երիցս երանեալ
քաջ րաբունոյս՝ խաչաչարչար մշակին Քրիստոսի և կենդանի նահա-
տակիս Մարտիրոս վարդապետիս, և հոգևոր հարցն՝ խաչընդդյուս Գրի-
գոր աբեղայի և Սարգիս ճգնաւոր մահդասու, և մարմնաւոր ծնողացն
իւր՝ հօրն Յովսեփայ և մօրն Ամենտիկնայ, և այլ ամենայն արեան
մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն։ Արդ, որք օգտիք ի
սմանէ կարդալով և տեսանելով և մասին սակ ինչ վայել[ել]ով ի սմայ,
յիշեսջիք առաջի անմահ գառինն Յիսուսի զՄարտիրոս վարդապետն
և զվերոյասացեալ ծնօղսն իւր...։

Այլ և յիշել աղաչեմք զկուսակրօն միաբան եղբայ[ր]քս իւր՝ զՍե-
բեմիայ աբեղայ, որ սպասաւորէ ի պէտս մարմնաւոր կերակրոց մեզ
և բազում աղքատաց, այլև զԱբրահամ և զՍտեփանոս սրբամաքուր
աբեղայք, և զՄկրաիչ ժրաջան աղօթող ի սուրբ տնօրինականսն, որ
և աշխատեցաւ ի թղթի կոկելն, նաև զԱմիրբէկն, որ մահդասիս, և
զայլ ամենայն երախտաւորքս աղաչեմ յիշել ի տէր։

524 բ Դարձեալ, աղաչեմ յիշել ի աէր զԳրիգոր գրոց աշակերտ՝ կու-
սակրօն աբեղայ, որ զօրինակն շնորհեաց, նաև զՄէլքիսէթ սրբամա-
քուր աբեղայ. որ ծաղկեաց զսա, զոր և պայծառացուսցէ զսա տէր աս-

* Իմա «Տաթեւացւոյ»։

տուած իւր անճառելի տեսլեամբ, ընդ նոսին յիշել աղաչեմ և զհոգևոր զծնօղսն մեր և զուսուցիչքն՝ զԳրիգոր մեծ վարդապետն, որ զքաղուածոյս է արարեալ, և զԹովմայ վարդապետ Մեծոփոյ, որ անչափ և անեզր խնամեալ է զիս հոգևոր և մարմնաւոր։ Եւ ի վերայ այսր ամենայնի զամէնն անցոյց սիրով և գթով՝ ստացօղ սուրբ գրոցս Մարտիրոս վարդապետս, զի զհրամայեալն փրկչին կատարեաց, որ ասէ՝ Աւտար էի և ժողովեցէք զիս, մերկ՝ և զգեցուցէք, քաղցեալ և կերակրեաք զմեզ, և դարձեալ, այլ առաւել մեծ պարգեաց հասոյց, զի արժանաւորեցոյց կուսածին գերեզմանին Քրիստոսի իւր ողորմութեամբըն և այլ տնօրինականացն։ Քրիստոս աստուած յորժամ գայ հայրական փառօք զսա՝ հանդերձ ծնօղօքն իւր և ամենայն երախտաւորաւքն, արժանաւորեսցէ իւր վերնոյն Երուսաղէմի, և լսել զսա սմա զերանաւէտ ձայն, որ ասէ՝ Եկայք աւրհնեալք հօր իմոյ ժառանգել սմա զերկնից արքայութիւնն, ամէն և եղիցի։

Այլ և աղաչեմ զձեզ սիրովն աստուծոյ չլինել մեղադիր խոշորութեան և սխալանաց սուրբ գրոցս, զի բազում փութով գրեցաք զսա, որ յաւուր մեծի հինգշաբաթին կատարեցաւ յետ պատարագին, և աստուած յիշողացդ և յիշեցելոցս ողորմի, ամէն։

Բ

522 բ *Ձեռքս փտի ու ի հող դառնայ, գիրս յիշատակ առ ձեզ մնայ, որք ընթեռնուք յիշել հայցեմք զ*Յակոբ *գծողըս* Բերկրեցի:

465

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

Երևան 8242

Գրիչ՝ Տիրատուր
վայր՝ Երուսաղէմ

232 ը ... *Ստացօղ գանձտետրիս՝ զ*Յոհանն*էս սրբասէր և հեզահոգի աբեղայն, զոր փափագանօք գրել ետ ինձ անուամբ միայն աբեղայի* Տիրատրոյ, *ի յիշատակ իւր և ի վայելումն իւրայոցն ...։*

*Արդ, գրեցաւ սա յ*Երուսաղէմս, *ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս, որ է սուրբ վէմն կափարիչ և Քրիստոսի բանտն։ Յիշեսջիք ի Քրիստոս զառաջասացեալ* Յոհաննէս *աբեղայն, ընդ նմին և զծնօղսն իւր, և զեղբայրն իւր հարազատ զ*Սիմէոն *քահանայն, և զամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն առ Քրիստոս։*

Գրեցաւ ի Թվականին ՊԶԱ. (1432), յունվարի ԻԸ. (28)։

466

ԱԻՆՏԱՐԱՆ

Երուսաղէմ 1956

Հետ. ստացող՝ Վասիլ Խարաարցի
վայր՝ Երուսաղէմ

*Զվերջին ստացաւղ սուրբ աւետարանիս զ*Վասիլ Խարաարցին *և զծնաւղս իւր աղաչեմ յիշել յաղաւթս, որ ստացաւ զսա յիշատակ իւր և ծնաւղաց իւր, ի հալալ արդեանց իւրոց, հաւրն իւրոյ* Սահակի*, և մաւրն* Թէֆանէ*, և կողակցին իւր* Աւաիայ*, և զաւակաց իւր, և ամենայն արեան մերձաւորացն։ Եւ ետ զսա յիշատակ անջինջ, որ կենայ ի սուրբ Յակոբայ սեփական։ Արդ, մի ոք իշխեսցէ հանել զսա ի սուրբ Յակոբայ կամ գողանալ կամ ծախել։ Եւ որ ոք յանդգնի և հանէ՝ զպատիժն զԿայէնի և զՅուդայի մատնչին և զխաչահանուացն ընկալցի. և խնամով պահողն աւրհնի յաստուծոյ և ի սուրբ Յակոբայէն...։*

Գրեցաւ սակաւ յիշատակիկս ձեռամբ Թորոսի *անարժանի ի թվ. ՊՁԱ. (1432), յեպիսկոպոսութեան սուրբ քաղաքիս* Երուսաղէմայ *տէր* Մարտիրոսի:

467

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 287

Գրիչ՝ Վասիլ

63 բ *Զվերջին ստացաւղ սուրբ տառիս զ*Վասիլ *դպիր աղաչեմ յիշե ի տէր, ես առաւել զծնաւղսն իմ զ*Թորոս *հազարապետ,* և զմայրն իմ զ*Մարիամ*, և զեղբարսն իմ զ*Կոստանդին*, և զ*Թադէոս*, և զ*Ստեփաննոս*՝ զհանգուցեալն առ Քրիստոս, որ և ի յայսմ ամի վախճանեցաւ...։*

Գրեցաւ, ի թվ. հայոց ի Պ. և ՁԱ. (1432), և երբ զսա գրեցի էի ի ԺԸ. (18) ամաց։

468

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Փարիզ 43, Մ. Տ. Մ.

Նորոգողներ՝ Թումա և Ներսէս

358 ա *Զվերջին ստացողի գրոցս՝ զսրբասէր կրաւնաւորքն զ*Թումա *և* Ներսէս *յիշեցէք, որ ստացան զգիրս և զեզծեալ նիւթս սորա վերստին հաստատեցին և կազմեցին թուին Հայոց ՊՁԱ. (1432)։*

---

* *Բնագրում հապավված է այսպես՝ «Ռ. պետ»։*

469

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4818

Վայր՝ Օձովոց գիւղ

280 ա *...Բարէպաշտ տանուտէրն* Յովսէփ *ստացաւ զսուրբ աւետարանս ի Թուականիս մերում Պ. և ՁԱ. (1432)։ Արդ, որք հանդիպիք սմայ յիշեցէք ի Քրիստոս* զՅովսէփ, *և զհայրն իւր* Բուրթէլ, *և* զԿոստիկն, *և* զՅովանն, *և զկողակից Յովաննուն՝* զԱրուս-Խաթունն, *և զայլ արեան մերձաւորսն, ամէն։*

Թէ ով զէս աւետարանս ի գեղէս Օձովոց, *ի դրանէ Աստուածածնէն և ի սուրբ Յովաննէսէ հանէ՝ ընդանեաց կամ յաւտարաց, կամ ծախելով, կամ գրաւելով, կամ գողանալով՝ նա զանէծս զԿայինին և զՅուդային և զխաչհանողացն առցէ...։*

470

ՄԱՇՏՈՑ

Փիրղ. Նոտ. 100, Նիկոմիդիայ, ս. Աստուածածին եկեղեցի

Գրիչ՝ Յովաննէս

...Արդ, գրեցաւ սա ձեռամբ... Յովաննէս *պիտակ անուն աբեղայի, ի վանս սուրբ Կիրակոսու,* ի Թուաբերութեանս հայկազեանս տոհմի ՊՁԱ. (1432)։*

** Ղ. Փիրղալեմյանը ենթադրում է, որ այդ վանքն այն է, «որ կայ ի Սպարկերտ գաւառի յաշխարհին Մոկաց՝ մերձ ի գիւղն Գեղիա»։*

471

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4963

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Ի գեւղս Ուրաւնց

286 ա ... *Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս յաստուածապահ և յան* || *ուա-*
նի գեւղս Ուրաւնց, *ընդ հովանեաւ սուրբ Նշանիս և ի Թուին Հայոց*
ՊՁԲ. (1433), ձեռամբ Թումայ *կրաւնաւորի։ Եւ իմ՝ անընդունակ գոլով*
յարուեստ գրչութեան և բազում մեղացն ցնորիւք պաշարեալ, այլ
ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, բազում
աշխատանաւք գրեցի անարժան ձեռաւք իմովք, ի ստոյգ և յընտիր
աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ, ի
դառն և ի վշտաբեր ժամանակիս։ Վասն զի եկեալ գաղտաբար անաւ-
րէնն Փիրի-Բէկ՝ *պաշարեաց և էառ զկղզին* Աղթամար, *և մեր եղեալ*
փախստական ի տեղոյէն՝ մերկ և Թափուր ի հայրենի ընչիցն լինե-
լով, և եկեալ բնակեցաք ի քրիստոսապահ գեւղս Ուրաւնց, *և գրեցաք*
զսուրբ աւետարանս։ Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստա-
286 բ *նէս և* || *յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ և ըն-*
թերցմամբ յիշեսջիք յաղաւթս ձեր զյառաջ յիշեցեալ ստացողս սորա
*զ*Ներսէս *քահանայ, և զծնողքն՝ զ*Ուֆիկ *և զ*Թանճաթուն, *և զեղբարքն*
*զ*Գրիգոր, *զ*Որդանան *և զ*Ստեփանոս, *և զկենակիցքն զ*Ռուզ, *զ*Լի-Հաթուն
*և զ*Մարեմ, *և զորդայքն զ*Մարտիրոս *և զ*Կիրակոս, *և զհօրքվերորդին*
*զ*Կիրակոս, *և զըռէս* Մուսէս, *և զ*Մարեմ, *և զ*Մարտիրոս, *և զազգն ամե-*
նայն յիշեցէք և աստուած-ողորմի ասացէք։

Ընդ նոսին և զանարժան Թումայ *գրիչ, և զծնողքն իմ զ*Կարա-
պետ *քահանայ և զ*Դուռ-Մելիք, *և զեղբայրն իմ և զուսուցիչն զ*Դանիէլ
*քահանայ, որ ծաղկեաց և կազմեաց, և զհարսն մեր ըզ*Շամս-Հաթուն,
*և զորդայքն զ*Ստեփանոս *և զ*Յովանէս, *և զհանգուցեալ որդայքն մեր, և*
287 ա *զհաւրեղբայրն զ*Զաքարիայ *փիլիսոփայն, և զամենայն ազգականքն*
մեր՝ զկենդանիք և զննջեցեալք...։

*Այլ և զպաշտաւնեայք սուրբ եկեղեցոյս, և զգեղի քահանայքս՝ զ*Թու-
մայ, *և զ*Խարսեղ, *զմեծ* Թումայն, *և զորդին զ*Մուսէս, *և զ*Սարգիս, *որ*
հայրական գթով և եղբայրական սիրով խնամեն զմեզ, Քրիստոս աս-
*տուած վարձս բարեաց պարգևեսցէ նոցա և ծնողաց նոցա...։**

* *Նորություն չպարունակող հիշատակարաններ կան նաև Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի ավետարանների վերջերում՝ 85 բ, 136 բ, և 221 ա — 222 ա էջերի վրա։*

:24—28

472

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4915

Ստացող՝ Յովանէս
վայր՝ Մոկաց երկիր, Սուրբկանց գիւղ

ա

287 բ *Արդ, կամաւն աստուծոյ և ողորմութեամբ նորին ես՝* Յովանէս
*ունա[յ]նացեալս ի բարեաց… ըստացայ սուրբ աւետարանս և գնեցի
հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ, և ծնողաց իմոց* Ստեփանոսին
ե Ջմրութին, *և եղբարց իմ* Լէանոսին, *և զօակաց նորին՝* Ստեփանոսին,
և Յոնանէսին, *և* Յովանէս *քահանային, և* Կարապետին, *և զօակաց նո-
րին* Թումային, *որ անժամանակ փոխեց[աւ] ի Քրիստոս, և* Պետ-
րոս *բրուտին, որ աստուած զինք անփորձ պահէ, ամէն, և* Խա-
չայտուրին, *և ամենայն արեան մերձաւորաց մերոց, ամէն։ Եւ
արդ, ես՝* Յովանէս, *որ ոչ եմ արժանի կոչիլ ի կարգս կրաւնաւորաց,
զի զանունս միայն ունիմ և ոչ զգործս, յերես անգեալ աղաչեմ զդաս
լուսերամիցդ յիշելոյ արժանի առնել զանարժանութիւնս իմ, զի մեղաւք
զառացեալ եմ և ցնորիւք պաշարեալ, և այլ յոյս և ապաւէն ոչ ունիմ,
բայց զաստուծոյ մարդասիրութիւնն և զձեր ընդունակ աղաւթսդ, զի
288 ա *թողութիւն հայցեցէք յամէն || առատ մարդայսէրէն աստուծոյ ինձ, և
ծնողաց իմոց, և ազգականաց իմոց* Ոսկեկին…:

Ես Յովանէս *աբեղայս գնեցի սուրբ աւետարանս ի Թվականիս
Հայոց* ՊՁԲ. *(1433), ի յերկիրս* Մոզոց, *ի գեւղս, որ կոչի* Սուրբկանց,
*ընդ հովանեաւ սուրբ Գէորգայ զօրայվ[ար]ին, որ պահէ զիս յամէն
չարէ ի զատ, ամէն, ամէն**.*

բ

Ոմն ժամանակակից

5 ա *Վայ ասացէք հարիւր հազար,*
*Սուգ հասաւ** Հայոց խաւսար,*
Մարտխ, որ չենք տեսեր աչաւք,
Վէր մեզ տարով երէկ իջաւ,
Բազում տներք աւերեցան,
Ելուկ էհան գել ի վերայ,
Շատոց տղայ տեսանք տարաւ.
Ցարեկլից հեծելն եկաւ,
Մայրաքաղաքն երեկ իջաւ.
Առ ու գերի զամէն տարաւ.
Մեզ Փիր-բէկն *արար խաւար,*

---

* *Ձեռագրում կան հայերեն և արաբերեն բազմաթիվ նվիրաբերական ակտերի և այլ փաստաթղթերի ընդօրինակություններ։*

** *Բնագրում՝ «հասօ»։*

Մտաւ կլզին յԱղթամար,
Գերի տարաւ խաչ, աւետարան։
Զիս յիշացէք, որ չեմ արժան,
Անուն չունիմ, որ ձեզ ես տամ,
Ես աստուծոյ անպիտան,
Ցայսմ հետէ մինչ յաւիտեան։*

473

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5172

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Արճէշ

ա

... Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքս, որ կոչի
295 ա Արճէշ, ընդ հովա ‖ նեաւ սուրբ Աստուածածնիս և այլ համաւրէն սըր-
բոցս, ի Թվ. Հայոց ՊՁԲ. (1433), ձեռամբ անարժան և յոգնամեղ
փծուն գրչի Կարապետի: Այլ ըստ բազում հայցման և պատկառանաց
աստուածասէր տանուտէրիս Յովանիսի ձեռն ի գործ արկի, տխեղծ
մատամբ և մեղաւոր անձամբ գրեցի անարժան ձեռաւք իմովք։
Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի
սեղանոյս ընթերցմամբ և գաղափար առնելով և կամ հարևանցի տե-
սութեամբ, յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր զստացող սորա զոսկերիչ
Յովանէսն, և զեղբայրն իւր զՌըստակէսն, և զծնաւղսն իւրեանց՝ զհայրն
Պաստկան, և զմայրն Ուսթիանէ, և զկենակիցն իւր Գուլակ-խաթունն,
295 բ և զզաւակսն իւրեանց զպարոն Գորգն, և զխաւլասա-խաթունն, ‖ որ տա-
րաժամ մահուամբ փոխեցան առ Քրիստոս, և զնորաբոյս ծաղկեալ
զաւակն՝ զԹումաբէկ, և զաշխատաւոր զոքանչն իւր զՍուլտան-Մէլիք,
և զհաւրեղբայրն զՄկրտիչ, և զքեռին զԿարապետ քահանայ, և զայլ
ամենայն արեան մերձաւորսն՝ զպապերն և զհանքերն և զազգն ամե-
նայն յիշեցէք...։

Դարձեալ փծուն գրիչս Կարապետ, զիմ անարժան երեսս ձեզ ի գետին դնելով աղաչեմ զամենեսեան և զիս միոյ աստուած-ողորմոյ արժանի արարէք, և զծնաւղսն մեր, և զուսուցիչն իմ՝ զքաջ քարտողարն՝ Թումայ րաբունապետն, և զվերոյյիշեցեալ ստացող պըրոցս՝ զՆրզընկեցի ոսկերիչ Յովանէսն, և զեղբայրն՝ Ըռըստակէս յիշեցէք և լի սրտիւ աստուած-ողորմի ասացէք։

բ

Ծաղկող՝ Մինաս**

328 բ Զմինաս ծաղկողս և զծնողս իմ յիշեցէք ի Ք[րիստոս]։

---

* Բնագրում հապավված է այսպես՝ «յից.»։
** Ծաղկող Մինասը թողել է խորանների և ավետարանիչների ինքնատիպ նկարներ։

474

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 5509

Հւտ. ստացող՝ Յովաննէս

334 ա *... Ուստի և տեսեալ զսորա փրկագործութեան խորհուրդ սրբա-*
սէր կրաւնաւորքն Յովաննէս *և* Մկրտիչ *հարազատ եղբարքն... գնեցին*
զսուրբ աւետարանս ի խալալ *արդեանց իւրեանց, յիշատակ իւրեանց*
և ծնաւղացն Նոր-Ամիրի, *և մաւրն* Մէլէքի, *և եղբարցն* Մարտիրոսի *և*
334 բ Թու ‖ մայի *և* Յովսեփայ, *և քուերցն* Շաքար-խաթունին *և* Շամշայ-
խաթունին, *և այլ ամենայն արեանց մերձաւորացն։*

Արդ, որք աւգտիք յաստուածային բուրաստանէս յիշեցէք առ աստուած զբարէսէր և ըժրաջան կրաւնաւորքս զՅովաննէս *և* զՄկրտիչ *զխարազատ եղբարքս, որք ստացան զանաւիկ մեծութիւնս ի պատճառս արքայութեանն երկնից ինքեանց, և ծնաւղացն իւրեանց, և եղբարցն, և եղբաւրորդոցն* Ջանիբէկին *և* Սուլտանշին, *և այլ ամենայն ազգականացն....։*

Եւ արդ, ես յետինս ի կրաւնաւորաց և անպիտանս ի պիտականաց յերես անկեալ աղաչեմ և խնդրեմ ի ձէ[ն]ջ յիշման արժանի առնէք զիս զՅովհաննէսս, *և զեղբարն իմ* զՄկրտիչ, *և զծնաւղսն իմ* զՆոր-Ամիրն *և* զՄէլէքն, *և աստուած-ողորմի ասացէք ի ժամ պատարագին, և մեզաց թ[ողութ]իւն խնդրեցէք, ամէն։*

Այլ և գնեցաք զսուրբ աւետարանս ի տաճկանց, ի վերջին թուիս ՊՁԲ. (1433), յիշատակ մեր և ծնողաց մերոց։

475

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7857

Հւտ. ստացողք՝ Տիրատուր և Էտիլ-Մելիք

290 ա *... Յիշատակ է սուրբ աւետարանս պարոն* Տիրատրու *և իւր կո-*
ղակցին Էտիլ-Մելիքին, *և գնեցին իւրեանց հալալ արդեանցն զայս*
սուրբ աւետարանս, աշխատեցան պարոն Տիրատուրն *և իւր կողակիցն*
խաթուն Էտիլ-Մելիքն, *արծաթով զարդարեցին, և փրկչական պատկեր*
ի վերայ խաչին կայ, և տուաք ի սուրբ Յակոբ եկեղեցին վասն յի-
շատակի պարոն Տիրատրին *և իւր կողակցին* Էտիլ-Մելի[քի]ն, *և յ*Ամիր-
290 բ Սարգսին, Յուանզ-խաթունին՝ *փոխեցեալն առ Քրիստոս, և իւր զաւա-*
կացն Ուլու-խաթ ‖ ունին, *և* Կուլաֆ-խաթունին, *և* Յազիզպէկին՝ *զփո-*
խեցեալն առ Քրիստոս, և կենդանի զաւակացն, սոքա են՝ Տրճառ-
խաթունն, *և եղբաւր որդւոյն* Աւետիքն, *և իւր փեսայոց* Ուլուպէկին, *և*
մեծ Միքայէլն *և փոքր* Միքայէլն։ *Ի խնդրոյ աստուածասէր և բարէ-*
պաշտ առն պր. Աստուածատուրին *և հեզահոգի իւր կենակցին* Էտիլ—

Մելիքին: Յիշատակ է այս սուրբ աւետարանս անջնջելի, ոչ երէց, ոչ եկեղեցպան, ոչ տանուտէր ձեռնամուխ չի լինայ այս սուրբ աւետարանիս։ Եւ ոչ ազգ և ոչ մեծ, ոչ փոքր ձեռնամուխ չի լինայ, ոչ ծախելով և ոչ գրաւելով, բայց խնամս տանելով սուրբ աւետարանիս, որ կենայ ի սուրբ Ցակոբ եկեղեցիս. ոչ ոք իշխանութիւն չունենայ
291 ա հանելոյ || ի սուրբ եկեղեցոյս։ Եւ որք [յ]անդգնի և հանէ ի սուրբ եկեղեցոյս զայս սուրբ աւետարանս՝ որոշեալ լիցի ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, ամէն։

Արդ, աղաչանք եմ ձեզ, զայս սուրբ աւետարանս, որ իմ ազդէս, թէ ազգ մնայ, նայ իշխանութիւն ունենայ, որ փրտըռեն զայս սուրբ աւետարանս, որ չծախեն և ոչ դրավեն։ Այսպէս կու պնդեմ, որ իմ յիշատակս այս սուրբ աւետարանս է, որ տարին Ա. (1) տարապայմ[ա]ն կարդան զյիշատակարանս, որ ինձ ողորմիս ասեն...։ Ի թվ. ՊՁԲ. (1433), ի վայելումն Յակոբին:*

476

ԱՒԵՏԱՐԱՆ

ԲՑՎ 196

Գրիչ՝ Ստեփանոս

Աղաչեմք զամենեսեան, ով սուրբ հարք և եղբարք, որք հանդիպիք այս սուրբ աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր և աստուած-ողորմի ասացէք ստացողաց սուրբ աւետարանիս հոգւոցն հայրազատ եղբարցն՝ Մանգաեւազին և Յոհաննէսին, և իւրեանց ծնողացն հաւրն՝ Մեծատրուն, և մաւրն Սառին, և փոխեցեալ եղբաւրն Սահակին, և կենակցին իւր Շնանաւորին, և միւս եղբաւրն Յովանիսին, որ առ աստուած փոխեցաւ, և Մելիքսեթին, զի աստուած ողորմեսցի նոցա։ Ընդ նոսին և ինձ աստուած-ողորմի ասացէք, որ զսա գրեցի՝ Ստեփանոս սուտանուն քահանայի, որ զանունս ունիմ և զգործս ոչ, և կողակցին իմոյ Մինայի, որ յայսմ ամի առ աստուած փոխեցաւ, և իմոցն ամենայնի։

Գրեցաւ ի Թուականիս ՊՁԲ. (1433)։

477

ՑԱՂԱԳՍ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ԹՈՎՄԱՅԻ ԱՔՈՒԻՆԱՑԻՈՑ

Երևան 3936

Գրիչ՝ Գուլիար

ա

229 բ Եղբայր Ֆրա Սարգիս, խոշորութեան գրոյս անմեղադիր լեր վասն բազում պատճառաց, և զանարժան և զփանաքի նուաս[տս]՝ Ֆրա Գուլիարս յիշեա | | |

* Ձեռագրի կազմին փակցված է արծաթե մի խաչ, որի վրա փորագրված է. «Թվիս ՊՁԴ. (1435), ս[ուր]բ նշանս եւ ս[ուր]բ ավետարանս յիշա[տակ] է Տիրացուին եւ Եսիլ-Մեչքէրին»:

Բ

Նորոգող և կազմող՝ Դոմինիկոս Շահապոնցի

39 բ Զփրա Դոմինիկոս Շահապոնցի՝ վերըստին նորոգող և կազմող յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ով սուրբ սիրօղք այսմ սուրբ աստուածային գանձիս։ Աղաչեմ վասն սիրոյն Քրիստոսի յիշել յաղօթս նաև զհոգևոր և զմարմնաւոր ծնօղսն իմ, որ հանկ[ուց]եալ են ի Քրիստոս։ Նորոգեցաւ ի թվ. Հայոց ՊՁԲ. (1433)։

478

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նօտ. 102, Մուշ. Ս. Առաքելոց վանք

Վայր՝ Մոկունք գիւղ

Գրի մի աւետարան ի թվ. ՊՁԲ. (1433), ի պարոնութեան Ամիր-Աբտալին, ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, ի գիւղն Մոկունք:*

* Ղ. Փիրղալեմյանը ձեռագիրն անձամբ չի տեսել. այդ, ինչպես և մի շարք այլ ձեռագրերի մասին նա տեղեկություն է ստացել Արսեն վարդապետ Թոխմախյանից։

479

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4185

Հետ. ստացող՝ Մատթէոս կաթողիկոս Աղուանից

ա

1 ա *Ես՝* Մաթէոս *Աղուանից կաթողիկոս ունէի մատ* Յոհանէս *էրէցն՝* Առաքել *իրիցուորդին ՉՌ. (6000) դեկան ստակ ու Ի. (20) թաղար ցորեն՝ ղապալու չափովն։ Իւրեանքն ի Քրիստոս փոխեցան, իրքմին չուն'ին, որ զիմ պարտքն տէին, տանուտէրք և ք[ահանայք] մէջ ընկան, աւետարանս ու Ա. (1) ձի, Ա, (1) Թ[ամբ] բերին, թէ այլ իրքմին չունին, երես դրին, թէ | | | խեղչ են, ես այլ խղչացի, ձին ու թամբն յետ տվի, զաւետարանն առի։*

բ

Գնող՝ Եղիշայ երէց

1 ա *Ես* Եղիշայ *երէցս գնեցի զաւետարանս ի տէր* Մաթէոս *կաթողիկոսէն՝ ՌՄ. (1200) դեկանայ, վկաութեամբ* Եղունգեցի Ովանէս *իրիցուն, վկաութեամբ* Խուշփայշէն Մանուէլ *իրիցին, վկաութեամբ* Սուկուբլու *դարբուն* Գաւզումին, *յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց, և ամենայն արեան մերձաւորաց, հաւրն իմոյ* Շատուն, *և մաւրն իմոյ* Գուլգուլին, *եղբաւրն իմ* Արթուխշին *և* Սալղուրշին, *ի պարոնութեան* Ամիրխալիլին *և որդոյն իւրոյ* Վահրամին. *Թւին ՊՁԳ. (1434)։*

480

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՑՈՎԱՍԱՓՈՒ ԵՒ ԲԱՐԱՂԱՄՈՒ, ԱՌԱՔԵԼԻ ԲԱՂԻՇԵՑՒՈՑ

Երևան 3081

Հեղինակ՝ Առաքել Բաղիշեցի

176 բ *Ի թվականիս Հայոց, որ ութհարիւր էր,*
Ութսուն 'ւ երեք ի նոյն յարաբարդեալ էր,
Ոտնաչափ շինեցաւ յայս Առաքելէ՝
Վարդապետ կոչեցեալ բանիս խնդրողէ։
Արդ, աղաչեմ ըզձեզ, որք եղանակէք
Եւ քաղցրաձայն լեզուաւ սիրով զայս երգէք՝

Զիս և զիմ ննջեցեալսն յաղաւթս յիշեցէք,
Եւ թողութիւն մեղաց մերոց հայցեցէք։
Ով որ զգրողս յիշէ ի կամըս բարի
Եւ լի սրտիւ. ասէ աստուած-ողորմի,
Անփորձ կենայ նայ՝ յիշողն ի յայսմ աշխարհի,
7 բ Եւ արժանի || լիցի տեսոյն Քրիստոսի։
Ես Առաքել նուաստ ոգի
Մեղաւք լցեալ Բաղըշեցի,
Զբանս պատմութեան նախնեաց մեծի՝
Հընդըստանայ թագաւորի՝
Աբեններայ ՚ւ Յովասափի,
Կամիմ շինել ի չափ տաղի,
Դիւրահաւան երգեցողի
Եւ բարեմիտ վերծանողի,
Զի իմանան սիրով սրտի
Եւ փառս տան տեառն արարչի,
Որ ի քարանց անբեր պտղի
Ծնանի որդի Աբրահամի։

481

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 1693*

Հետ. ստացող՝ Ստեփանոս

...Որոյ մասին և իմս տկարութեան Ստեփանոս քահանայի եղև փափաքումն սիրոյ այսմ աստուածապատում աւետարանի և ծաղկաւէտ բուրաստանի. եւ ստացա զսա ի հալալ ընչից իմոց ի նեղ և ի ստորասուզեալ ժամանակիս, ի թվիս ՊՁԳ. (1434) ի կաթողիկոսութեան տէր Կոստանդեա, և ի հայրապետութեան քրտնաջան նահատակին և իմաստայեղձ փեսային եկեղեցոյ Տէրունականաց, և բաբունապետին՝ մեծ փաղերային Մխիթարայ. և հարազատ աշակերտացն։ Արդ, ես Ստեփանոս հայրապետս՝ վերջինս ի վերջին դարուս, վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ ընծ[այ]եցի զսուրբ աւետարանս սուրբ առաքելոյն Թումայի, յիշատակ հոգւոյ իմոյ, և ծնաւղաց իմոց՝ հաւրն իմ Աղպուղին և մաւրն Խուանդին, և քուերցն, և աւրինորդ մանկանն՝ ըստ հոգւոյ արքտնեկին Աբրահամ դպրին, յիշեսջիք և զամենայն եղբայրութիւնս, որ են յայս սուրբ ուխտս՝ զվարդապետս, զփակակալս, և զկրաւնաւորքս, զտէր Յակոբ, և զտէր Բարսեղ քաջ քարտուղարն, և զայլ գործաւորքս և զպաշտաւնեայք սուրբ եկեղեցւոյս։ Եւ զիս զանարժան Ստեփանոս յիշման արժանի առնէք սրտի մտաւք.,։

*Ձեռագիրն իմաստասիրական նյութերի ժողովածու է, ընդօրինակված ԺԶ. դարում, 1434 թվականին ընդօրինակված ավետարանի հիշատակարանը, որ գրված է մագաղաթի վրա, օգտագործված է այս ձեռագրի մեջ որպես պահպանակ։

Նաև զկազմող սուրբ աւետարանիս զՄխիթար կուսակրօն աբեղայ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, զի և դուք | | | եղբայրութիւնս, որ են յայս սուրբ ուխտս՝ զվարդա[պե]տս, զփակակալս, զծերս, զերիտասարդս, զդոր[ծա]ւորս, և զամենայն պաշտաւնեայս սուրբ եկեղեցոյս, թերևս եթէ արժանի առնիցէք զիս՝ զանարժան [Պետ]րոս սրտի մտաւք մեղաց թողութեան...։

482

ՃԱՇՈՑ

Փիրզ. Նօտ. 103, Մարզուանի ս. Աստուածածին եկեղեցի

Գրիչ՝ Ղազար Ղրիմեցի
վայր՝ Մշոյ սուրբ Կարապետ

... Արդ, գրեցաւ սա ձեռամբ գրչի Ղազարի Ղրիմցւոյ, ընդ հովանեաւ սուրբ և փառաւոր գերեզմանիս լուսաւորչին մերոյ Գրիգորի, և սուրբ Փրկչիս, և Մանեայ սուրբ գերեզմանիս, ի թուին ՊՁԳ. (1434), ի խնդրոյ պատուական և հեզահոգի կրօնաւորի Սարգսի Տիւրիկեցւոյ, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց և ետ յիշատակ իւր և ծնողաց իւրոց ի սուրբ Լուսաւորչիս անապատ։

Արդ, ես՝ Սարգիս աբեղայս. որ եդի զգիրքս յիշատակ ի սուրբ Կարապետս. ոչ ոք չունի իշխանութիւն հանել զսա ի յանապատէս, ոչ հայրապետ և ոչ այլ միաբան...։

Յիշեսջիք և զառաջնորդ զերախտաւոր հոգևոր հայրն մեր զՄարտիրոս վարդապետն և զՄկրտիչ հայրապետն։

483

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

Ցոնուզի ս. Կարապետի վանք 4, ՀԱ. 1894, էջ 51

Գրիչ՝ Յաւհաննէս Կաֆեցի
վայր՝ Գերմանիկ

... Աւարտեցաւ խորհրդատետրս [ձեռամբ] անարուեստ և անարժան մեղաւք լցեալ չեմ արժանի կոչիլ քահանայ Յաւհաննէս աբեղայ Կաֆեցւոյ. եկի սև Գերմանիկ և ձեռամբ գրեցի աստուածային մատեանս ի յիշատակ եղբաւրս Զաքարին, յիշեսջիք սրբազնասուրբ խորհրդատետրս և յիշաւղքդ յիշեալ լիջիք. և դուք տեառն աստուծոյ մերոյ | |-| մեր և ամէն. տումարական տուին ՊՁԳ. (1434), տրէ ԺԳ. (13).

484

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4206

Գրիչ՝ Դաւիթ

վայր՝ Զմշկածագ, Ընկուզեաց անապատ

ա

321 բ ...Աւարտեցաւ սա յամսենի
Ի քսան և ինն ի յունիսի,*
Ցաւուր տաւնի ընարեալ գնդի
Առաքելոց գլխաւորի.
Արդ, ես՝ Դաւիթս, որ գրեցի
Զաւետարանս տեառն Յիսուսի,
Զեմ արժանի այս սուրբ կարգի՝
Զի կորուսի զփառս հայրենի։
Բայց գրեցաւ սա յանապատի,
Որ Ընկուզեաց անուն կոչի,
Ի դրունս սուրբ Աստուածածնի
Եւ Մկրտչին տեառն Յիսուսի,
Ի գաւառիս Յերապաւլսի,
Որ Զմըշկածագ այժմ կոչի,
Ձեռամբ Դաւիթ կրաւնաւորի,
Որ եմ զերեալ սատանայի։
Արդ, զառաջնորդ սրբոյ ուխտիս,
ԸզԱռաքել վարդապետիս,
Տացէ Յիսուս պարգևս բարիս
Միաբանիցս առ տէրունիս,
Այլ և զկոկաւզ սրբոյ նիւթիս՝
Հարազատի Մարտիրոսիս,
Ցերկար ամաւք դու ապրեսցիս,
'Ի ոչ սասանիս մինչ ծերասցիս։**

Աղաչեմ զընթերցաւղսդ, յիշել ի տէր զհայրն իմ՝ զՍանակ քահանայ, որ գնացեալ է առ Քրիստոս՝ յոյսն մեր, և զմայրն իմ, և զամենայն արեան մերձաւորսն։ Յիշեցէք և զԱնանէն, որ աւգնական եղև ի նիւթս սուրբ աւետարանիս։ Ի թուիս Մեծ Հայոյն ՊՁԳ. (1434)...։

---

* Մատթեոսի ավետարանի վերջում Գաւիթը գրում է. «Մայիս ԺԴ. (14) էր»։ Ուստի ձեռագրի 3/4-ը՝ ավելի քան 200 մեծադիր թերթ, նա ընդօրինակել է ընդամենը 46 օրվա ընթացքում։

** Մեջ ենք բերում միայն հիշատակարանի վերջին՝ պատմական մասը։ Սկզբում գրիչը նույն տաղաչափությամբ (4+4) տալիս է ավետարանի սեղմ բովանդակությունը, կրոնական անհետաքրքիր դատողություններով համեմված։

Բ

249 բ Ո՞ սատանայ, քանի և մինչև յերբ յարուցանես զպատերազմ քո ի վերայ իմ, քանզի յոյժ տրտմութեամբ գրեցաւ։

Գ

Ստացող՝ Ռըստակէս

322 ա Յանուն Յիսուսի Քրիստոսի, ի թվ. Հայոց ՊՁԴ. (1435)-ն, ես՝ Ռըստակէս երէցս, որ ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ վաստակոց իմոց՝ յիշատակ ինձ, և ծնողաց իմոց՝ հաւրն իմոյ Հայրապետին, և մաւրն իմոյ Տիկնացին, և եղբարցն իմոց Կարապետին, և Աստուածատրին, և Գրիգորին, և քուրոջն իմոյ Եղիսաբեթին, և ամենայն ազգականաց իմոց՝ կենդանեաց և հանգուցելոցն ի Քրիստոս...։

Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեցէք զՇանապն, որ աւգնական եղև ի գինս սուրբ աւետարանիս, իւր ննջեցելոց հոգւոյն, աստուած հանգուցանէ զիւր ննջեցեալքն յերկնից արքայութիւնն, և զինքն նոցա յիշատակ պահէ, ամէն։

Յիշեցէք զԼիպարիտն, որ և նա աւգնական եղև ի սուրբ աւետարանս։

Յիշեցէք զԱռաքել երէցն, որ աւգնեաց ի գինս սուրբ աւետարանիս։

Յիշեցէք ըզՇատին, և զՄարտիրոսին մայրն, և զՇատէ մայրն, և զԱղութ-խաթունն, և զԹանկ-Մամայն, և զՆուրայն, և զՊուլղանն, և զՀավբայն, և զԹուխլիշայն, և զՇատին, և զիւր կենակիցն, ամենեքեան արժանի լիցին երկնից արքայութեանն...։

322 բ Այլ դարձեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք զաներն իմ զՓողոցն, և զզոքանչն իմ զՃուճարն, և զիւրեանց դուստրն զԹանտուխն, և զդեռաբոյս զաւաքսն մեր զՄելքիսէթն, և զՍտեփաննոսն, և զքեռակինն, և զՇահմելիքն, և ամենեքեան, որ ի Բերդկոնի ռապատս մեզ երախտաւոր են, եթէ շատ և եթէ սակաւ...։

Եւ այս սուրբ աւետարանիս բարեխաւսութեամբն Քրիստոս աստուած պահեսցէ զաշխարհս ամենայն անսասանելի՝ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, ամէն և եղիցի։ Կրկին աղաչեմ յիշեցէք զՎարդանշահն և զիւր հաւրեղբաւր կինն։ Եւ զԴաւիթ աբեղայս, որ զյիշատակարանս գրեցի...։

485

ՄԱՇՏՈՑ

Երևան 3508

Գրիչ՝ Թադէոս
Վայր՝ Կաֆայ

Փառք... որ ետ կարողութիւն տկարութեան իմոյ յանգ ելանել
ի թվին ՊՁԳ. (1434), ի հայրապետութեան տեառն Կոստանդեա և
201 բ սրբասնեալ արհիեպիսկոպոսութեան տէր Կարապետի՝ || Կաֆայի աս-

տուածապահ քաղաքի և ամենայն հիւսիւսական կողմանց։ Ի լաւ և յընտիր աւրինակէ գրեցաւ, ի չար և ի դառն ժամանակի, զոր տէր աստուած տացէ անդորրութիւն, ձեռամբ Թադէոսի սուտանուն կրօնաւորի, ի քաղաքիս Կաֆաի, ի մենաստանս սուրբ, որ կոչի սուրբ Մինաս, որ է աթոռ սուրբ աէր Կարապետին։

Արդ, սխալանաց և տնարհեստութեան սորա անմեղադիր լերուք, ի կար մեր այս չափ էր։ Որք հանդիպիք սմա ուսմամբ կամ կարդալով յիշեսջիք յաղաւթս ձեր զծնողսն մեր միով տէր-ողորմաիւ...։

Արդ, որք հանդիպիք այսմ աստուածարուխ տառիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԱստուածատուր քահանայն՝ զստացաւղ գրոցս, որ ստացաւ զսայ յարդար յընչից իւրոց։ Արդ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զծնաւղսն իւր զԱստուածատուր երէցն, և
192 ա զկենակիցն իւր զՎարդէթուփն, զՄար || աիրոսն, և զկենակիցն իւր զՈսկէաիկին, զԹադէոս երէցն, և զԱռխառակէս երէցն. զորդին իւր Թադէոս երէցն, և զԽաչատուր արեղտյն՝ զնահատակն, և զմայր իւր զՍիրմա-Խաթունն, զՅովակիմն, և զեղբայր իւր զՀերն, զպատուելի զԱստուածատուր քահանայն, և զկենակիցն իւր զԹամթան, զհամեստ զաւակն իւր զԽաթունն, զնորին զաւակն զԿարապետն, և զՅովանէսն, նաև զհարազատ եղբայրն իմ զՅովանէս, և զկենակիցն իւր զԼալ-Խաթունն, և զզաւակսն իւր զՇմին-Մելիքն, և զՄարգարէն, և զքուրն իւր զԴէսպինան, և զկողակիցն իւր զԳրիգորէս՝ այրն իւր, և զաւակն իւր զԱլեքսանոսն, և զպարոն Գորգն, և զՅովսէփն, և զՊապիկն...։

486

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 8590

Հետ. ստացող՝ Յոհանէս
վայր՝ Ղրիմ

ա

243 բ Քրիստոս աստուած ի քո միւսանգամ գալստեանդ նորափետուր փառաւք զարդարեա զհոգի ստացողի սուրբ աւետարանիս և վերստին նորոգեա զՅոհանէս կրաւնաւորն և զամենայն ազգայինսն իւր։ Եւ ետ վերստին կազմել զսուրբ աւետարանս իւր յիշատակ և իւր ծնողացն։ Կազմեցաւ գանձս անկողոպտելի, մարգարիտս անծախելի, յիշատակս անջնջելի, ի Հայոց Մեծաց ի Թուականի ՊՁԳ. (1434)։

44 ա Արդ, աղաչեմ զա || մենեսեան, որք հանդիպիք կամ աըդիւնիք ի սուրբ աւետարանէս, յիշեսջիք ի Քրիստոս զվերոյգրեալքս ի սմա և աստուած զձեզ յիշէ յիւր սուրբ արքայութիւնն և նմա փառք յաւիտեանս, ամէն։

բ

44 ա Ես Յոհանէս աբեղայս իմ կամաւս ծախեցի զաւետարանս մեղտեսի Տէրտէրին,* զոր աստուած վայելել տացէ նմայ, ամէն։

* Վաճառքը կատարվել է, ըստ երևույթին, 1451 թվականին, որովհետև նոր ստացող մեղտեսի Տէրտէրի հիշատակարանը ձեռագրի ձեռք բերման մասին գրված է 1451-ին (տես)։

Այս է իմ ձեռնագիրս և խրէրս աստուծով հաստատունս։

Գ

Ոսկոդ՝ Ասգսենգ

Զոսկաւղ սուրբ աւետարանիս զԱւգսենդ սուտանուն աբեղայս աղաչեմ յիշել ի տէր։

487

Մ Ի Ս Ա Լ

Ալիշան, «Հայ-Վենետ», էջ 180—181, Փարիզ

Նուիրատու՝ Գորգ
վայր՝ Վենէժ

ՊՁԳ. և ՊՁԳ. Հայոց (1434), Ես Գորգս *կու տամ պարոն* Յակոբին *և իւր որդւոյն զայս* Միսալս, *որ է պատարագատետր։ Ով որ գայ ի* Վենէժ, *որ կամի պատարագ առնել, նա առնու և պատարագ ասնէ ի Հայ տուն...։**

488

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ, ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

Երևան 4504

Գրիչ՝ Ոհանէս Ածղաւրեցի

ա

98 բ *...Ո՜վ քահանայ՝ ստացաւղ տառիս,*
Աստուածատուր *անուամբ կոչիս,*
Քեզ երանի, որ հանդիպիս
Լուսափթիթ բուրաստանիս,
Հոգիարուղխ սրբքոյ տառիս,
Երբ լի սրտով ծունըր կըրկնես,
Սիրով հոգւոյդ յասաուած հըպիս,
Յայնժամ յիշեա դու զեղկելիս
Զզ*Ո*հանէս Ածղաւրեցիս՝
Զմեղօք փարթամս և զեղկելիս։
Յառեդական մեծ տումարիս՝
Ի յուԹհարիւր Հայոց Թվիս,
ՈւԹսուն ու երեք յաւելորդիս (1434)
Եղև ծրել Սարգիս գրքիս։

** Ալիշանը հայտնում է նաև, որ հիշատակագիրը «Երկու տող ալ կաւելցնէ կիսատ բառերով, որով կերևի պահանջել, որ գիրքն ապահով պահեն պարոն Յակոբն և իր որդինե-*

Բ

79բ ... Ո՜վ սուրբ ընթերցողք և ունկնդրողք բանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացաւղ սուրբ կտակիս՝ զԱստուածատուր կրաւնաւոր, և զեղբայր իւր Զաքարիա, և զՓարխունդի, և զծաղկեալ զուտկսն սոցա՝ զՍաեփանոս, զԴաւիթ, զՄելքիսէթ դպ[իր], և զարեան մերձաւորսն և զերախտաւորսն սոցա՝ զկենդանիսն և զհանգուցեալսն, և զմեղապարտ գրիչս զՈհանէս...։

489

ԱԻԵՏԱՐԱՆ

Երեւան 7849

Կազմող՝ Յովանէս

318ա [Յ]ուսազարդ ձայն ի յերկնից
Գոչէ բարբառ ուրախալից,
Որք ժառանգեն յաւիտենին
Ըզհայրական իւրեանց տեղի,
Զոր սրբոցն պատրաստի.
Եւ երանի ում հանդիպի,
Զոր խոստացաւ տէրն ամենի։
Զոր և լուեալ յայսմ իմտ[ս]տի
ԶԱւագ-ՊարոնՆ՝ սրբոց դասի,
ԶՏղա-ՊարոնՆ՝ ի նոյն կարգի.
ԶԿարապետՆ ի նոցին շաւղուի.
Զմայրն ՎարդետիկիՆ
Եւ զքոյրն մեր զԽսմաթիՆ,
Զեղբայրն մեր ՏիրատրիՆ:
Այս բարեխորհ և ճշմարտի
Գովեալ լեզուաց բազմադիմի,
Որք հանդիպիք այսմ տառի,
Որ յաստուծոյ սա կու խաւսի...։

Քրիստոս աստուած, ի քո միւսանգամ գալստեանն նորափետուր փառաւք զարդարեա զՂազար երիցու զննջեցելոցն զհոգիսն՝ զծնողացն և զեղբարցն և զիւրայոցն, զոր վերոյ գրեցաք, զանուանսն՝
318բ ի գիրն կենաց գրեսցին. և որք կան այժմուս՝ նոցին լի ‖ ցի յիշատակ։
Որ է զստացաւ զսուրբ աւետարանս Ղազար քահանայն հալալ արդեանցն։ Եւ կազմեցաւ գանձս անկողոպտելի վերստին ձեռամբ ՅոհանՆէս արեղին մարգարիտս անծախելի՝ յիշատակ անջնջելի Ղազար քահանային, և մաւրն իւրեն ՂիմաթիՆ, և եղբաւրն իւր ՀերապետիՆ, քըւերն իւր Խէր-ԽաթունՆիՆ և ՌսկէհատիՆ, և երիցակնոջն ՓաշայիՆ, և իւրեանց զաւակին, հայր ՏիրատրիՆ, [և քուերն՝ ՄարիաՆէ]։

Ի Հայոց Մեծաց թվականի ՊՁԳ. (1434)։

*Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք կամ արդունիք** *ի սուրբ աւետարանէս յիշեսջիք ի Քրիստոս զվերոյգրեալքս ի սմա՝ զկենդանիսս և զհանգուցեալս, և զնուաստ ծրողս, որ տողեցի, զսակաւս ի մեծն համարեցէք...։***

490

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 287

Գրիչ՝ Վասիլ

83 ր *Ի թվ. Հայոց ՊՁԳ. (1434), ի յունիս ամսոյ ի ԺԷ. (17), ի չորեքշաբթի**** *աւր՝ խաւարեցաւ արեգակն։*

491

ՄԱՇՏՈՑ

Վենետիկ 615

Գրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Խարտիշարայ վանք

Գրեալ ի վանս Խարտիշարայ, *ընդ հովանեաւ սուրբ Կարապետին և սուրբ Աստուածածնին, ձեռամբ* Ստեփանոսի *կրօնաւորի։*

492

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան 8647

Գրիչ՝ Ս[ար]գ[իս]

103 ա *Զստացաւղ զսրբասէր և մաքրամիտ* Հ[այրա]պ[ետ] *աբեղա աղաչեմ յիշել ի տէր հանդերձ կրկին ծնօղաւք, և զմեղապարտ* Ս[ար]գ[իս] *գրիչ, թվ. ՊՁԳ. (1434)։*

---

* *Իմա «արդիւնիք», այսինքն՝ օգտվեք, արդյունք ստանաք։*

** *Ձեռագիրը գրված է կազմելուց տասնյակ տարիներ առաջ, հավանորեն ԺԴ. դարի վերջերին։ 152 ա էջի վրա անհայտ գրիչը թողել է ստացողների մասին հիշատակագրություն. «Քրիստոս աստուած, քո կամաւոր չարչարանացդ և բարեխաւսութեամբ ողորմեայ ստացողի սորա՝ սուրբ աւետարանիս, և* Վարդան *քահանայն զսա արար յիշատակ իւր և կենակցի իւրոյ* Հեղինէ-խաթունին, *և Քրիստոսի փառք յաւիտեանս»։*

Նույն գրիչը 5 ա էջի վրա գրել է. «Զեղկելիս և զանպիտանս յիշեա, ո արուեստագետ, և ողալանացս մի մեղադրեր, աղաչեմ»։

*** *Բնագրում հապավված է այսպես. «Դշ.»։*

493

ՄԱՇՏՈՑ

Երևան 4163

Գրիչ՝ Գրիգոր

վայր՝ Զմշկածագ, Կարմիր մենաստան

ա

116 բ Արդ, գրեցաւ սա սուրբ մենաստանիս, որ կոչի Կարմիր, ի խնդ-
րոյ արի և քաջ հովուապետի աէր Մելքիսէթին, ձեռամբ մեղսամած
գրչի Գրիգորի, ի յամի ՊՁԴ. (1435) թուին, ի հայրապետութեանն
տեառն Կոստանդեայ, և ի բռնակալութեանն Աւթման-Բէկին: Արդ, որք
հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք ի մաքրա-
փայլ յաղաւթս ձեր զվերոյգրեալսդ ի սմա, և մեք ըստ փանաքի
մտաց մերոց վերըստին նորոգեցաք զսա և փարթամացուցաք քարոզով
և խրատական բանիւք, և զկարգս ըստ իւրաքանչիւր աստիճանացն
117 ա բացայայտեցաք և յատկացուցաք առ ի դիւրահաւա || նութիւն կար-
դացողացն ըզկարգս աստիճանացն....

բ

183 ա Ո՜վ սուրբ մանկունք առագաստին
Որդիք լուսոյ նոր Սիովնին,
Որք հանդիպիք այս մատենի
Դուք յիշեցէք զստացող սորին՝
Զտէր Մելքիսէթ հովիւ բարին,
Զարի և զքաջ առաքինին,
Որ անմարմին կայ ի մարմին
Ի մէջ ընտրեալ իւր համացեղին.
Եւ զանպիտան գծող սորին
Ու վեց առիւ անունս կոչին՝
Գիմն առաջին և Րէն վերջին,
Որ համարով վերաբերին՝
Տասը հազար բոլորովին
Եւ վեց հարիւր քսանուվեցին.*

---

* Գրչի անունն է Գրիգոր: Անվան տառանիշերի թվական արժեքի գումարը, իրոք, 10626 է:

Որք միտս ունին՝ նա հաւանին
Եւ որք չունին՝ նա շիւարին։

Գ

Հետ. ստացող՝ Մելիք-Բէկ

183 ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և աստուած-ողորմի ասացէք վերջի ստացողի սուրբ գրոցս՝ անգին մարգարտիս և վարդափթիթ բուրաստանիս Մելիք-Բէկին, և կենակցին իւր Սեւար-Աղին, որ յայսմ ամի տարաժամ մահուամբ փոխեցա[ւ] առ Քրիստոս, և սուգ անմխիթար թողեալ գնաց յանցաւորէս յանանց հանգիստն յաւիտենական, յանդառնալի և յերկարաձիգ յուղէգնաց բարի ճանապարհն իւր, և թողեալ ըզգփսքրիկ տղայքն իւր մայր[ա]կարաւտ և կաթնածարաւ և լալոտ աչաւք և հառաչմամբ սրտիւ, քանզի ոչ էին լիացեալ մօր տեսով և ծնաւղի համբուրիւ։

183 բ Զոր աստուած մխի || թարէ զՄելիք-Բէկն և փարատէ զսուգ և զտրտմութիւն, և բաշխէ արարիչն աստուած զսաստերս և ըզգստերսն Մելիք-Բէկին՝ զառաջին և զվերջին, ընդ երկայն աւուրս արասցէ, և ազատէ զիւր հոգին ի հրոյն յաւիտենից, և արժանի արասցէ երկնից արքայութեան զինքն և զկենակիցն իւր զՍէւար-Բակին...:*

Դ

Հետ. ստացող՝ Ամիր

190 ա ... Ես՝ անարժան սուտանուն Ամիր միակէցս գնեցի զՄաշտոցս, Թաթէի սուրբ Առաքելոցս վախճ տվի, յիշատակ ինձ և ծնաւղացն իմոց՝ հաւրն իմ Վարդանին, և մաւրն իմ Փաշիջանին, ով որ կարդայ մէկ բերան աստուած-ողորմի ասի գիրողաց, վախճ տռվողաց։

494

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երուսաղէմ 25, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Մինաս

վայր՝ Ձմշկածագ, Երկայն-Ընկուզեաց վանք

... [Գրեցաւ] ի թվ. ՊՁԴ. (1435), ի վանքն Երկայն-Ընկուզեաց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնայ, ի հայրապետութեան Կոստանդեայ, և յառաջնորդութեան սուրբ ուխտին Առաքել վարդապետին, ի պարոնութիւն Օթման-Բէկ խանի, և ի նայիպութիւն գաւառին՝ Խոշղադամին, յորոյ անուն գիրքս գրեցաւ և վանքս շինեցաւ ի յԱրզն:

[Այստեղ Աբրահամ եպիսկոպոսն ստացել է ձեռագիրը և բերել

* Գ. և Դ. հիշատակագրությունները, ըստ հնագրական տվյալների, գրված են ԺԵ. դարի վերջերին կամ ԺԶ. դարի սկզբներին։

Երուսաղէմ *ի Թվ. ՊՂԴ (1445). գրիչն է* Մինաս, *որդի* Սուլթանշահի *և* Խէրխաթունի, *որ նկարներով զարդարել է իր գրած ձեռագիրը։ Թղթի կոկողն է* Դաւիթ *քարտուղար, ստացող* Դաւիթ *վարդապետ և* Արևշահ...] :*

Ձեռաւք Արևշահին *շինեցաւ սուրբ Ցարութիւնն, ի գիւղս* Երկայն Կոզիք, *և զսա զարգարեաց շուրջառներով, բազում խաչերով, Աւետարանով, Տարեգրով, Սարգիս գրով և ամենայն պիտոյիւք, և հա գրել զորբոց պատմութիւնս և եգ ի գաւռն սուրբ Կարապետին։***

495

ԽՄԲԱԳԻՐ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԶՈՐԵՔՏԱՍԱՆ ԹՂԹՈՑՆ ՊԱՒՂՈՍԻ

Երևան 1380

Խմբագրող՝ Թովմա Մեծոփեցի
վայր՝ Մեծոփայ վանք

ա

343 ա ... *Արդ. ես մեղապարտս ի մանկունս կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ եւ վերջին ծնունդս ի կարգս վարդապետացն առա°նոց՝ սոսկանուն վարդապետ* Թովմա՝ *աստուածային բանին խնդրաւղ եւ ճշմարիտ իմաստից հոգւոյն սրբոյ փափագաւղ, ի խնդիր ելեալ գերազանց աստուածաշունչ կտակի՝ մեկնութեան աստուածաբան առաքելոյն Պաւղոսի, եւ ի պարգեւաց հոգւոյն սրբոյ գտի մեկնեալ եւ թարգմանեալ, համառօտեալ եւ ի միասին հաւաքեալ ճշմարտասէր եւ ուղղադաւան վարժապետացն մերոց ի կրկին ազգաց՝ Յունաց եւ Ասորոց, քրիստոսածաւալ աղբեր եւ անմուտ արեգականն Յովհաննու Ոսկեբերանի եւ երջանիկ սուրբ հաւրն՝ մեծի ճգնաւորի եւ վարդապետի Եփրեմի* Խորին *Ասորոյ, բացայայտ եւ պարզ տեսութեամբ մտաց վարդապետաց եւ ի լուսաւորութիւն գրոց աշակերտաց անձանց, որ էր թաքուցեալ յանկեան ուրեք՝ ի խաւարի տգիտութեան, անփոյթ եղեալ յուսումնասիրաց անձանց, վասն դառնութեան ժամանակաց պատահմանց եւ վասն աւերման մերոց աշխարհաց։ Եւ յաւելեալ եդի ի սմա մեկնողաւրէն զցանդ մեծին Եւթաղի եւ զամենայն որոշմունս բաժանմանց նորա՝ զընթերցուած, զգլուխ, զվկայութիւն, զտուն, զնախագրութիւն, զվասնէրն, և եառ. ի ձեռս մանկանց եկեղեցեացդ Հայաստանեայց՝ ճշմարտախոհ վարդապետաց եւ քաջամիտ աշակերտաց։ Զոր եւ ձեզ պարտ է մի կալ եւ մնալ ի ծուլութեան, այլ ամենայն կենցաղական հոգոց բարեաւ մընալ ասել եւ աստուածային երանութեանն արժանի լինել, վասն որոյ ուսուցանէ առաւզն իմաստու-*

---

* *Այս պարբերությունը վերապատմում է իր խոսքերով Մ. Տեր-Մովսիսյանը։*

** *Մ. Տեր-Մովսիսյանը հայտնում է, որ «Ցիշատակարանը բավական ընդարձակ է, (յիշում է) սուրբ Կարապետի բոլոր միաբաններին և հաղորդում նաև այլ մանրամասնություններ։ Ընդօրինակելու ժամանակ չկար»։*

թեան՝ Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն և մահկանացու, որ ետես զհանճար։ Եւ դարձեալ՝ Ցաւրէնս տեառն խորհել ի տւէ եւ ի գիշերի, եւ ուսուցանել զճշմարիտ աստուածաբանութիւնն եւ զլոյս վերին ճառագայթին, եւ աստուածատեսակ եւ աստուածանման առա-
343 բ քինութեան հետեւել, || եւ ըստ կամացն Քրիստոսի եւ գրելոյ առաքելոյս ընթանալ, առնել եւ ուսուցանել յայսմ աշխարհի, եւ յետ աստեացս ելանելոյ ընդ Քրիստոսի թագաւորել յանճառ ի փառս եւ յանպատում ի կեանս, ըստ խոստման առաքելոյս Պօղոսի։ Վասն որոյ յերեսս անկեալ պաղատիմ իբր անքըթիթ ակամբ, ողորմելի դիմաւք եւ կողկողագին պաղատանաւք՝ աստուածաբան վարժապետացդ եւ ուսումնասէր քրիստոսակիր գրոց աշակերտեալ անձանցդ, որք հաւաքեալ ժողովիք առ սեղանս հոգեւոր եւ կերակրիք ի կենաց հացէս եւ յանմահարար բաժակէս ընթերցմամբ դասի աւրինակելով եւ սակս մասին սմին պատահելով, յիշեսջիք եւ զիմս անպիտանութիւն առաջի անմահ դառինն Յիսուսի Քրիստոսի՝ զպիտականուն վարդապետս Թովմա, եւ զհոգեւոր եւ զմարմնաւոր ծնաւղքն մեր՝ զՄատթէոս կրօնաւորն, եւ զՍանփանոս, եւ զմայրն իմ, եւ զուսուցիչքն մեր եւ զվարժիչք՝ զաստուածաբան վարդապետքն զԳրիգոր Տաթեւացի, զՅոհանէս սուրբ ուխտիս, զՍարգիս, եւ զՎարդան, զԳրիգոր Նահատակն Խլաթեցի, զՅակոբ ճըգնաւորն Ղըրիմեցի, զԳալուստ Վաղանդնեցի եւ զամենայն վարդապետք այժմեան ժամանակիս, որ բազում երախտիս ունին ի վերայ մեր եւ ամենայն Հայաստանեայց եկեղեցեացս։ Եւ մի լինիցիք բազմին առաւղ եւ սակաւին ոչ տըւաղ, այս է՝ աստուած-ողորմի ասել մեզ եւ թողութիւն մեղաց ի տեառնէ աստուծոյ խնդրել մեզ եւ մերոցս ամենեցուն...։

Այլ եւ զհամշիրակ եւ զաշակերտակից եղբարս իմ, զպատճառս բազում բարութեան՝ զճգնաւոր եւ զաստուածաբան վարդապետս Մկրտիչ, եւ զհայրն իւր Նահապետ, եւ զամենայն արեան մերձաւորսն, որ խրատէ. հոգեւոր մարմնաւոր խրատով զմեզ եւ զամենայն ուխտս միաբան։ Յիշել աղաչեմ ի սուրբ եւ ի մաքուր յաղաւթս ձեր նաև զբաղձալի եղբարքս եւ զհոգեւոր որդիքս՝ զՍտեփանոս վարդապետ, զԱտոմ վարդապետ, զՋաքարէ վարդապետ, եւ զգրոց աշակերտեալ որդիքս՝ զՆերսէս, եւ զՍտեփանոս, եւ զՀերապետ, եւ զՅոհանէս, զՂազար կրօնաւորն, եւ զԱբրահամ փիլիսոփայ, զՆերսէս եկեղեցպանն, եւ զամենայն միաբան սուրբ տաճարիս, եւ Քրիստոս աստուած զձեզ յիշէ աստ եւ ի հանդերձեալն, ամէն։

344 ա Այլ եւ զհոգեւոր որդեակն մեր զՅովհաննէս եպիսկոպոս աստուածաբնակ սուրբ ուխտիս, եւ զՅակոբ կրաւնաւորն, զհարազատ եղբարքն իմ զՅովանէս, եւ զպարոն Գորգի-Մելիքն, որ բազում նեղութիւնս կրէ յանօրինաց վասն մեր եւ սուրբ ուխտիս, եւ զԱռիստակէս, եւ զԱմիր-Մելիք, եւ զՅոհանէս քահանայ, եւ զՍօլթանշա, եւ զՄկրտիչ քահանայ, եւ զՄկրտիչ միայնակեց, եւ զամենայն արեան մերձաւորքն մեր յիշել աղաչեմ ի սուրբ աղաւթս ձեր եւ թողութիւն մեղաց հայցել ի տեառնէ...։

Այլ եւ զամենաւրհնեալ մանկունքն զՍտեփանոս եւ զՅովանէս՝
աշակերտք մեր, որ զգիրս բազում աշակերտութեամբ եւ սհիւ գրե-
ցին, եւ զհայրն իւրեանց զԿարապետ քահանայ, եւ զՄանգասար.
Քրիստոս աստուած աւրհնեացէ զոսա, եւ բազմաժամանակեան արաս-
ցէ ի վերայ երկրի եւ յետ աստեացս զերանաւէտ բարբառն լսել տա-
ցէ սոցա, ամէն։

Արդ, գրեցաւ գիրս յերկիրս Քաջբերունեաց, յանապատիս Աս-
տուածածնի, առ դամբարանի քրիստոսընկալ վարդապետացն սրբոց՝
Աստուածատրու եւ Մխիթարայ, Մովսիսի եւ այլոց ճգնաւորացս, որոյ
յիշատակն աւրհնութեամբն աստուածային եղիցի. Ի ՊԶԴ. (1435) թվա-
կանիս, ի փառս հաւր եւ որդւոյ եւ սուրբ հոգոյն, ամէն։

Արդ, գիտելի է, զի մինչ ոչ էր աւարտեալ սուրբ գիրս, անաւրէն
թագաւորն Շահռուխ եկն բազում զորօք յաշխարհս մեր, եւ նստաւ ի
վերայ բերդին Երընջակու, եւ թուրքմանն էջ ի ներքին կողմ աշխար-
հիս Հայոց։ Եւ թագաւոր նոցա Սքանդար անուն սպան զթագաւորն
Ամթա և բոլոր ԴիարբակիՆ՝ Օթման անուն՝ յոյժ քրիստոնասէր և սի-
րաւղ եկեղեցականաց։ Իսկ մեք փախստական եղեալ հասաք ի Խլաթ
քաղաք, եւ աստ տեսաք զնմանութիւն Նեռինն դառնութեան, զի
բազմութիւն զօրացն մարաց՝ ի լերանց եւ ի ըլլոց ձայն ետուն մի-
մեանց, հաւաքեցան ի դիւարնակ քաղաքն, եւ կամէին որոյ ճարակ
առնել զտառապեալ ազգս մեր։ Եւ ո՞վ կարէ պատմել զաղէտ տարա-
կուսանաց եւ զձայն գոչման եւ աղաղակ ի քրիստոնէից եւ անօրի-
նացն, զի ոչ անասնոյ, ոչ հանդերձի և ոչ հացի ետուն մնալ։ Իսկ
մեք մազապուրծ եղեալ ի նոցանէ, ի գիշերի հասաք ի լերինս Բաղի-
շու: Եւ համբաւ հասեալ առ սրբազան արքեպիսկոպոսն տէր Ստեփա-
նոս եւ առ ամենայն բազմութիւն քրիստոսընկալ քահանայիցն եւ
344բ աստուածասէր ժողովրդեանն՝ ‖ մեծամեծաց եւ փոքունց, ողբս ի բե-
րան առեալ ողբային զմեզ։ Եւ խումբ առեալ ելին ի քաղաքէն եւ ի
գեղորէիցն՝ լալով եւ հառաչմամբ, եկեալ գտին զմեզ ի լեառն Ուր-
տաբու, եւ անճառելի ուրախութեամբ ուրախ եղեն։ Իսկ աստուածա-
պատիւ եւ քրիստոսընկալ այրն աստուծոյ տէր Ստեփանոս հետիոտս
եղեալ գայր առաջի մեր եւ առաջի ամենայն քահանայիցն եւ ժո-
ղովրդեանն, իբր զԴաւիթ առաջի տապանակին աստուծոյ, աւրհնէր
զաստուած եւ աւրհնել տայր ամենայն ժողովրդեանն մեծաւ ուրա-
խութեամբ, զի ողջունիւ ընկալաւ զմեզ զամենեսեան, եւ յաչս ամե-
նեցուն սիրել ետ զմեզ՝ զանարժանքս. իբր զճշմարիտ առաքեալ եւ
մարգարէ։ Եւ ոչ միայն այս, այլ եւ զաստուածաբնակ անապատս իւր
մեզ սեպհականեաց՝ քահանայիւք, հացով, անասնով և ամենայն
մարմնաւոր պիտոյիւք։ Որ եւ արարիչն աստուած սըմա հատուցումն
եւ փոխարէն արասցէ հազարապատիկ եւ բիւրապատիկ յայսմ աշխար-
հի, եւ յետ աստեացս ելանելոյ՝ սրբոյն Ստեփանոսի Նախավկային,
եւ ամենայն արեան մերձաւորօք, մանաւանդ զորդեակս մեր զԱբրա-
համ փիլիսոփայ, եւ զփոքր երիցանիս զՅակոբ, զՍտեփանոս, զՀերա-
պետ, զԿարապետ քահանայ, զՅովանէս կրօնաւորն, որդեակ իւր զԿի–

բակոս, զԴանիէլ, զմիւս Յովանէս ծերունին, եւ զԱռաքել տնտեսն, եւ զԱռաքել, եւ զՅովանէս սարկաւագն, եւ զԿիրակոս միակեցն, որ կան ի ծառայութիւն մեզ եւ սուրբ ուխտիս, եւ զհանգուցեալն ի Քրիստոս զՅոհանէս կրօնաւորն, որ ի սմին ամի գնաց առ Քրիստոս։ Քրիստոս որդին աստուծոյ հատուցումն եւ փոխարէն արասցէ սոցա եւ ամենայն ժողովրդեանս, որ յայսմ գաւառնիս եւ ի լերինս բնակեալ կան, եւ տացէ սոցա զանճառելի զփառս եւ զտեսութիւն աստուածային երեսացն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Այլ եւ զխօջա Մուրատշէն, որ ի սըմին աւուր նահատակեցաւ յԱրծկէ քաղաք ի յանօրինաց, եւ զՄերուն որդի Դամուրին, ի գէշ եւ ի չազիր ազգաց, եւ զՆւատշա տանուտէրն արժանի արասցէ Քրիստոս աստուած իւր տեսութեանն եւ իւր փառացն։ Եւ յոյս յարարիչն աստուած ունիմք, որ վաղվաղակի առցէ զվրէժ սոցա ի յանօրինաց, ամէն եւ եղիցի։

Բ

48 – Արդ, յերեսս անկեալ պաղատիմ Քրիստոսի մանկանցդ եւ գրոց աշակերտեալ անձանցդ՝ զտգեղութեամբ ախտիւ պարուրեալս ի կերպարանէ վեհին՝ զպիտականուն վարդապետս Թովմա, յաստուածաբնակ ուխտէ Աստուածածընէ, որ այժմ Մեծոփայ վանք վերաձայնի, մաղթեմ պատահողացդ սմին յիշել բարեմիտ կամաւք և մեղաց թողութիւն խնդրել ի տեառնէ, եւ տարագիծ գրչիս՝ հոգեոր որդւոյ ծմոյ Ստեփանոսիս, եւ ամենայն երախտաւորացն մերոց, եւ դուք ի վերջին եկելոցն զնոյն ընկալջիք զթողութիւն մեղաց, ամէն։

Գ

253 – Զտարտամեալս հոգով եւ զկապեալս ի տոռունս մեղաց եւ զյետնեալս ի շարս բանասիրաց՝ զսոսկ անուամբս ի կարգս վարդապետաց, աղաչեմ զդասս ճշմարիտ քարոզչաց եւ զերջանիկ գունդ աշակերտելոց բանին կենաց՝ յիշել զմեզ, եւ աստուած զձեզ յիշէ։ Այլ եւ զՍտեփանոս գծաւղիկս յիշեցէք ի Քրիստոս, որ քան ըզմազմանի աշակերտ դէպ յետ կու գնամ։

Դ

377 – ...Աղաչեմ զընթերցողքդ սուրբ մատենիս եւ զաստուածաբան վարդապետդ, որ նստիս ի հանդիսական ատենիս, յիշել զմեզ ի սուրբ աղաւթքդ ձեր՝ զսոսկանուն վարդապետս Թովմա եւ զՄկրտիչ, եւ աստուած ողորմի ասել մեզ, որ ըստ իմում կարի կամ յաշխատութիւն սուրբ գրոցս, զի յետ մեր ելանելոյ յաշխարհէս յիշատակ մնասցէ ի ձեռնն մանկանց եկեղեցւոյ։ Զի կորուսեալ էր գիրս այս եւ ի դուրս անկեալ ի դաստանէ սուրբ վարժապետացն մերոց՝ մեծին Գրիգորի Տաթեւացւոյ, եւ սրբոցն Սարգսի, եւ Վարդանայ՝ նորին աշակերտի,

եւ մեզ վերջնոցս տուրք եւ ողորմութիւն պարգեւեցաւ յառատաձիր պարգեւացն աստուծոյ։

Ե

197 բ Աղաչեմք զնաղելի եղբարքդ եւ զաստուածարան վարդապետք եկեղեցւոյդ Հայաստանեայց, յիշեցէք ի Քրիստոս զմեղուցեալ վարդապետս Թովմա, եւ զհոգեւոր որդիքս մեր, եւ զհայր զՄկրտիչ վարդապետ սուրբ ուխտիս Մեծոփայ, եւ զՄկրտիչ վարդապետ հրաշալի ուխտին տէր Ցուսկան՝ զսիրելի մեր, եւ զաշակերտեալ եղբարքս զՍտեփաննոս վարդապետ, զԱտոմ վարդապետ, Զաքարէ վարդապետ։ զՆերսէս, զՍտեփաննոս, որ կան յաշխատութիւն աստուածաշունչ տառից եւ յորդորեն զմեզ ելանել ի ծուլութենէ հեղգութեան, այլ եւ զպատուական որդիքն մեր՝ զՄկրտիչ վարդապետն Հիւսաճ, եւ զՂազար, եւ զՄեսրոպ, եւ զՅովաննէս Բաղիշեցի, որ տարաժամ մահուամբ փոխեցան եւ ելին ի գառն կենացս, եւ զՅոհաննէս քահանայ՝ եղբայր մեր, եւ սուգ անմխիթար թողին մեզ, զի ի զուրն եղեւ աշխատութիւն մեր վասն մեղաց իմոց....։

Զ

215 ա Զսուտանուն վարդապետս, եւ զԿարապետ քահանայն, եւ զորդեակըն իւր՝ զհնազանդ ծառայն Քրիստոսի, որ զգիրս գրեցին, յիշեցէք ի Քրիստոս, եւ աստուած զձեզ յիշէ, ամէն։

Է

243 բ ԶԹովմա պիտակ անուն վարդապետս, որ անմահական գանձիստուիթ եւ պատճառ եղէ եւ ի լոյս ածի, զի առաջնորդ է սա երկնաչու ճանապարհին, այլեւ զհոգեւոր հարազատն մեր զՂազար կրաւնաւորն, եւ զՆերսէս եկեղեցպանն, եւ զՅակոբ հերպետն, որ աշխատին ի դուռն սուրբ եկեղեցւոյս, Քրիստոս աստուած՝ փառաց թագաւորն, անմահութեանց պարգեւատուն՝ տացէ նոցա զանտրտում ուրախութիւնն, զանծերանալի հասակն եւ զմանկութիւն զանանցական եւ զանմահական զկեանսն, եւ փոխանակ անկեղծ սիրոյ նոցա, որ առ աստուած եւ առ մեզ ունին, Քրիստոս աստուած ընդ սիրելիս իւր դասեսցէ զնոսա, հանդերձ ծնօղօք եւ ամենայն արեան մերձաւորաւք, ամէն։

Գրեցաւ ՊՁԴ. (1435) թվականիս։

Ը

315 ա Զպիտակ անուն վարդապետս եւ զհոգեւոր եղբարքն մեր զԶաքարէ վարդապետն, որ աշխատի ի խազելն, եւ զհամշիրակ որդիս մեր եւ զերախտաւոր զՀերապետ ընտրեալ կրօնաւորն եւ գրոց աշակերտն, որ բազում աշխատութեամբ զհին գրեանքս նորոգէ, Քրիստոս աստուած նորոգէ ի կեանքն անմահական, հանդերձ ծն[ողօք] եւ ամենայն արեան մերձաւորօք, ամէն։

Թ

327 ա Այլ եւ զպիտակ անուն վարդապետս, եւ զաշխատաւոր եղբարքս մեր՝ զԹովմա սուրբ Թովմեցի, եւ զՏերուՆ փիլիսոփայ, եւ զԱռիսաակէս, եւ զՏերուՆ քուերորդին մեր, որ աշխատի վասն սուրբ ուխտիս, եւ զխաչատուր միայնակեացն յիշեցէք ի Քրիստոս, եւ զզարդարիչ եւ զծաղիկ անապատիս՝ զհեգահոգի եղբարքս մեր զԴաւիթՆ, զԳրիգորՆ, զՎարդաՆՆ, զՅոհաՆէսՆ, զՅակոբՆ, զԵրեմիայՆ...:

Ժ

334 ա Յերեսս անկեալ աղաչեմք զմանկունս եկեղեցոյ, յիշեսջիք ի բարին Քրիստոս զհոգեոր հայրն իմ զՄաթէոս կրօնաւորն, եւ զմարմնաւոր ծնօղքն զՍտեփաՆոս եւ զՇամշա, եւ զՄկրտիչ քահանայ հօրեղբայր, եւ զՄկրտիչ միայնակեացն, եւ զեղբայրքն մեր զՅոհաՆէս քահանայ, եւ զՍոլթաՆշա՝ հանգուցեալ ի Քրիստոս, եւ զկենդանիքն՝. զՅովաՆէս եւ զպարոն Գօրգի-ՄելիքՆ, զԱռիսաւկէսՆ եւ զԱմիր-ՄելիքՆ, եւ արարիչն աստուած զձեզ յիշէ, ամէն։

ԺԱ

Գրիչ՝ ՅովաՆէս

16 բ Զսուտ գծագրիկս զՅովաՆէս քաղաքացիս յիշման արժանի արարէք, ով սուրբ գրոց աշակերտեալ անձինք, որ յայս տետրակս Չ. (900) գիր ի Ա. (1) անգամ Թաթխելոյն գրեցի և այլ՝ Ի. (20), Լ. (30) աւելի, վարդապետքս վկայ։

ԺԲ

23 ա Գիրքս այս Մեծոփայ սուրբ ուխտին է, եւ Թումա բարունապետին է յիշատակ։*

ԺԳ

229 բ Աղաչեմ զձեզ, լի բերանով աստուած-ողորմի ասացէք ՅովաՆէս սարկաւագին եւ իւր ծնողացն, որ ուգնականութեամբ աշխատեցաւ ի յըղորդել գրոցս։ Աստուած անփորձ պահէ։**

Եւ Քրիստոս աստուած ողորմի ծնօղաց սորա եւ անփորձ պահէ ի փորձանացն սատանայի, որ այս Բ. ամ է, որ ձրի աշխատի և պանդխտութեամբ ի դուռն սուրբ Աստուածածնիս Մեծոփայ վանացս։ Եւ զընկերակից հոգեոր եղբայր իւր զՍտեփաՆոս դպիրն, որ միաբանութեամբ յանձն առին զգիրս եւ յաւարտ հանին, եւ զահ եւ զերկիւղ չաղաթին ոչինչ համարեցին, որ հասին ի Թաւրէզ, վայ եւ եղուկ մեզ։***

---

* Գրված է կարմիր թանաքով։

** Այս պարբերությունը Յովանէս գրչինն է։

*** Երկրորդ պարբերությունը գրել է Թովմա Մեծոփեցին։

ԶՍտեփանոս սարկաւագիս յիշեցէք ի Քրիստոս, որ տասն ու վեց տետր գրեցի։ Բայց ի մի թաթխելոյն Է՜Ճ. (700) գիր գրեցի։ բայց կաթաւ թանաքն, թէ չէ այլ կու գրէի։*

ժդ

327 ա Արդ, աղաչեմ զմանկունս եկեղեցոյ, որք աւգտիք ի սուրբ կտակէս Պաւղոսի՝ լի բերանով եւ փափագելի սրտիւ աստուած-ողորմի ասացէք տէր Մաթէոսին՝ շինողի տանս, որ զգիրս աւարտեցաք, այլ եւ աշակերտի սորին Կարապետ հեզահոգի կրաւնաւորի, որ զանարժանքս արժանաւոր համարեցաւ եւ մինչև ցայսաւր զմեզ ուրախ եւ քաղցր պահեաց իւր քաղցրութեամբն։ Քրիստոս աստուած զսոքա իւր քաղցր տեսուն արժանաւոր արասցէ, ամէն, եւ զիս՝ զայս տարակուսեալ գծողս։

ժե

Ընթերցող՝ խալիֆայ

248 ա Զխալիֆէս յիշեցէք, որ զէջս իջայ։**

496

ԱՒԵՏԱՐԱՆ

Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, էջ Լ. (30)

Գրիչ՝ Յովհաննէս Մանգասարենց
վայր՝ Արճէշ

[Յիշեցէք] եւս առաւել զերեւելին ի մէջ ամենայնի, զլուսատուն ազգիս, զաստուածաբան և զսուրբ բաբունապետն, զհեզահոգի և զքաղցր վարդապետն Թովմա, զոր տէր աստուած ջահ անշիջանելի պահեսցէ զնա եւ հաստատուն ի վերայ գաւազանի իւրոյ։

497

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4840

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան քաղաք

298 բ ...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ սուտ գրչի և անարժան քահանայի Կարապետի, ի թվ. Հայոց ՊԶԴ. (1435), ի հայ-

---

* Վերջին հատվածը գրել է ձեռագրի երկրորդ մասի գրիչ Ստեփանոսը։

** Հետաքրքրական է 345 ա էջի հիշատակագրությունը, որը պարունակում է վկայություն Էրզրումի արհեստավորական համքարությունների մասին։ Այնտեղ գրված է. «Յիշատակ է գիրքս Արզրումնու Թարզի անաֆներուն, ի ձեռն Պօղոս վարդապետին ։ Թվին ՌՃԻԴ. (1675)»։

բարեպաշտութեան Կոստանդեայ, և մերոյ առաջնորդի և աթոռակալի սուրբ ուխտիս Վարագայ տէր Յովաննէս արքեպիսկոպոսի, ի քաղաքս, որ կոչի Վան, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի Նախավկայի և սրբոյն Սահակայ հայրապետի, և դառն և ի վշտաշատ ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց բացաւ դուռն Խորասանայ, և եկեալ որդի Թամուրին՝ Շախռուխն ի յաշխարհս Հայոց, և որդիք Ղարա-Ուսուֆին՝
297 ա Իսքանդարն փախըս||տական գնաց ի Ներքին աշխարհն և սպան զՂարա-Օթմանն և զորդին և զայլ բազումք ընդ նմա. և միւս եղբայրըն՝ Ջհանշայն գնաց հնազանդութեամբ մօտ ի Շախռուխն, և նստաւ նորին հրամանաւ ի Թաւրէզ. և եղեն երկու եղբարքն թըշնամիք միմեանց, և ոչ գիտեմք, թէ զինչ լինելոց եմք։

Արդ, ի յայսմ դառն ժամանակիս ցանկացաւ այսմ աստուածեղէն և երկնապարգև գանձիս և լուսափայլ մարգարտիս երջանիկ և հոգևսէր տանուտէրն Ստեփանոս բրուտն, և ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ ընչից իւրոց, յիշատակ իւրն, և ծնողաց իւրոց՝ հօրն Թումայի և մաւրն Մըրւաթի, և եղբաւրն Ատոմի, և կենակցին Մէլէք-Խաթունի, և հօրն Մէրչի, և մօրն Փաշայի, և եղբօրն Ամիր-Մէլէքի և Ցառուխշի, որ առ աստուած փոխեցան, և զաւակացն Յովսէփի ե. Ցռանգշի, Աւ[ե]տիսի և Մլխամշի, և դստերն Ղադամ-Փաշի, և այլ ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեացն և հանգուցելոցն
297 բ ի Քրիստոս։ Արդ, աղաչեմ զամենեսե||ան, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով յիշեցէք յաղաւթս ձեր և լի բերանով աստուած-ողորմի ասացէք, և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Ընդ նոսին և զիս յիշեցէք՝ զանարժան գրիչս զԿարապ[ետ] անարժան քահանայ, և զծնողքն իմ՝ զՍտեփանոս քահանայ և զՄինայ, և զհօրեղբայրն իմ զՄովսէս միայնակեց, և զեղբարքն իմ զՅովանէս քահանայ և զՄէլքիսէթ սարկաւագ, որ առ աստուած փոխեցան, և զորրացեալ զաւակս իմ զՄեսրոպ, զԱբդլմսեհ, և զՄելքոն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ՝ զկենդանիք և զհանգուցեալք յիշեցէք...։*

498

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 161, այուն․ 372, Ջուլամերիկի Փոկան գիւղի եկեղեցի

Վայր՝ Մոկաց երկիր

...Աւարտեցաւ սուրբ աւետարանս յարքունական երկիրս Մոկաց, ի թուին Հայոց ՊԶԴ. (1435), ի վանքս, որ կոչի սուրբ Գէորգ զաւրավար, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցոյս և սուրբ նշանացս, [յ]առաջնորդութեան սուրբ ուխտիս Պետրոս աբեղային։

* Շարունակության մեջ գրիչը կրկին անգամ աղաչում է հիշել ստացող բրուտ Ստեփաննոսին և նրա բազմաթիվ ազգականներին, հայտնելով նոր անուններ։ Ձեռագրում կան նաև մի քանի ուշագրավ կալվածագրեր (էջ 6 բ, 296 ա, 298 բ)։

499

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

Աղթամ գիւղ, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Ամիթ

Գրիչ՝ Գրիգոր *որդի* Էրմելիքի *և* Գաւճարի, *ի հայրապետութեան տեառն* Կոստանդեայ, *և թագաւորութեան* Աւթմաճ-Բէկի *որդւոյ՝* Ալի-Բէկին,* *որոյ տացէ տէր աստուած նմա յաղթութիւն ընդդէմ թըշնամեաց իւրոց... ի մայրաքաղաքիս* Ամիդ ... *ի յառաջնորդութեան և վերատեսչութեան մայրաքաղաքին* Ամթոյ *արքեպիսկոպոսին տէր* Մկրտչի *նկարագրի, և երեսփոխանութեան ամենայն Հայաստանեաց և արքեպիսկոպոսութեան ամենայն Միջագետաց ... ի վերա ԻԴ. (24) գաւազանաց։*

500

Դ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

Բրիտ. Թանգ. Or. *2608, Կ8 54, էջ 121*

Հետ.ստացող՝ Ստեփանոս Եպիսկոպոս Խարբերդու

278 ա *Ո՛վ քահանայք և վարդապետք... յիշեցէք... զգանձատետրիս գրաւղն և զվերջի գնաւղն զ*Պօղոս *քահանայ, և զննջեցեալս իւր ... և զիս՝ անպիտան ծառայս ստուծոյ* Ստեփանոս *անարժան եպիսկոպոս* Խարբերդու, *որ անուամբ կոչեցայ և ոչ գործով. և որ զմեզ յիշէ յիշեալ լիցի... Ի թուականութեանն Հայոց ի ՊՁԴ. (1435)։*

501

ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երևան 83

Հեղինակ՝ Առաքել Բաղիշեցի
վայր՝ Ձմշկածագ, Երկաճ-Ընկուզեաց վանք

380 բ *Յօրինեցաւ ճառս ի թվականիս Հայոց ՊՁԴ. (1435), ի նորաշէն յանապատիս* ԵրկայՃ-Ընկուզեաց, *որ անուն սրբուհոյ Աստուածածնին և յանուն սուրբ Կարապետին, ի գաւառին* Ցաղմնայ, *որք կարդայք՝ մեղաց թողութիւն խնդրեցէք շինողի ճառի* Առաքել *վարդապետի։*

---

* *Ակ-Կոյունլու Ուզուն-Հասանի հայրը, Համդայի եղբայրը, որ ձգտում էր ինքը թագավորել։*

502

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

/ Երևան 2400

Գրիչ՝ Աւգսէնդ
վայր՝ առընթեր Կաֆայի

245 ա ... Գրեցաւ Խաղտետրս ի Թվ. Հայոց ՊՁԴ. (1435) ամի, ձեռամբ
ապիկար և ախմար գրչի Աւգսէնդ մեղապարտ կրաւնաւորի, ի խնդրոյ
Եսայեայ առաքինասէր և սրբասնեալ կուսակրօն աբեղայի, որ ստա-
ցաւ զսա ի հալալ արդեանց իւր ի վայելումն անձին իւրոյ, և յիշա-
տակ իւր, և ծնաւղացն իւր պարոն Աստուածատրին և Ազիզ-Մելիքին,
245 բ և եղբարցն իւր պարոն Թուման-Պէկին և պարոն || Էտիլ-Պէկին: Արդ
և[դև սկ]իզբն և զրաւ խաղտ[ետրիս յ]ընտիր աւրինակէ, որ կո[չի
Առաք]ելցի, յաշխարհս Հոնաց, ի վ[անս], որ յանուն սրբոյն Անտո-
նի, որ է առընթեր մեծի մայրաքաղաքի Կաֆայի, առաջնորդութեան
վանացս և աթոռակալութեանն մեծի վարդապետի քաջ բաբունոյ
տեառն Սարգսի, ի հայրապետութեան տեառն Կոստանդնեա, և յեպիս-
կոպոսութեանն տէր Կարապետի....

503

ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան 7728

Գրիչ՝ Աւգսէնտ
վայր՝ առընթեր Կաֆայի

102 ա ... Գրեցաւ Տօնացոյցս յաշխարհիս Ղրըմի, առընթեր մեծի մայ-
րաքաղաքիս Կաֆայի, ի Թվ. Հայոց ՊՁԴ. (1435), ի հայրապետու-
թեան տեառն Կոստանդնեա և յեպիսկոպոսութեանն տէր Կարապետի,
102 բ ձեռամբ անպիտան գրչի Աւգսէնտ կրաւնաւորի,* ի || վայելումն Յա-
կոբ քահանայի և յիշատակ իւր և կենակցին իւրոյ Ջոհար-Մելիքին,
և զաւակացն Մկրտիչ-Պէկին և Մանւա՞ր-**Խաթունին,և ծնողացն իւր

---

* Ամենայն հավանությամբ նույն այս Աւգսէնտ կրօնավորն է 1438 թվականին ընդօրինակել «Վարք Յովհաննու Ոսկեբերանի» այն ձեռագիրը, որի վերջում, հետագայում, ավելացված է եղել Հակոբ Կարնեցու «Տեղագիր վերին Հայոց» աշխատությունը։ Աւգսէնդի ընդօրինակած այդ ձեռագիրը, ինչպես հաղորդում է Հ. Կարնեցու աշխատության հրատարակիչ Կ. Կոստանյանցը, եղել է Նրա սեփական Մատենադարանի կորսայան մատնված ձեռագրերից մեկը, դրա հիման վրա է նա կազմել ու հրատարակել «Տեղագրի» բնագիրը (տես Յակոբ Կարնեցի, Տեղագիր վերին Հայոց, յիշատակարան ԺԷ դարու, Կ. Կոստանեանց, Վաղարշապատ, 1903, էջ 02)։

** Ձեռագիրը Երևանի Մատենադարանի ամենափոքր ձեռագիրն է, մագաղաթյա թերթերի մեծությունն է 4×3,3 սմ։ Շատ տառեր ու բառեր փոքրության ու մաշված լինելու պատճառով դժվար են վերծանվում։ Ստացողի դստեր և հոր անունների վերծանությունը կասկածելի է։

[զՏաւնակա՞ն] իրիցուն, և կենակցին Նունեա-Մելիքին։ Արդ, որք հանդիպիք ի սմայ՝ յիշեցէք զվերոգրեալն զՅակոբ քահանայ, և զամենայն արեան մերձաւորսն իւր, և զիս զՕգսենտ մեղ[ապարտս]։*

504

ԺԱՄՈՑ

Ալիշան, «Կամենից», էջ 161

Ընթերցող՝ Ստեփաննոս Որոտնեցի
վայր՝ Լվով

Ցիշեսջիք ի Քրիստոս զՍտեփաննոս Որոտնեցի, ի ՊՁԴ. (1435) զյիշատակարանս կարդացի, ապա զանունս գրեցի, ի քաղաքս, որ Լով կոչի։

* Մյուս՝ 103 թերթի վրա գտնվում է հետագա ստացող Նիկոլի նույնպես վատ պահպանված հիշատակարանը։

ՊՁԵ 1436

505

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

Երևան 4117

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Ի մայրաքաղաքիս Տփխեաց,
մերձակա գեղս Կրծանիս

293 բ Փառք... որ հասոյց յաւարտումն այսմ աստուածունակ տառիս
զիս՝ ղանարժան ծառայս աստուծոյ զՅոհանէս գրիչս։ Արդ, ես՝ մեռեալ
մեղաւքս և սևացեալ հոգովս, որ ձևով միայն ունիմ զքահանայութիւն
և ոչ գործովք, որ անարժանս եմ մեղապարտ։ Արդ, գրեցաւ ձեռամբ
մեղաւոր և անարուեստ գծողիս, և գլխագրեցաւ ձեռամբ տէր Սարգսի
Աղուվանից արհեպիսկոպոսի, որ հայրաբար գութ ունէր ի վերա մեր,
որ հանապազ գայր և քաջալերէր ի գրելն։
Գրեցաւ սայ ի Թվականիս Հայոց ՊՁԵ. (1436), ի յաշխարհս
Վրացտան, ի մայրաքաղաքիս Տփխեաց, մերձակայ գեղս Կրծանիս, ընդ
հովանեաւ կաթուղիկէ սուրբ Աստուածածնիս և այլ ամենայն սուրբ
294 ա եկեղեցեացս, ի հայր || ապետութեան տեառն Կոստընդնայ, ի Աղուվա-
նից տէր Մաթէոսի, և մեր՝ բազում երախտաւոր, քաջ և իմաստուն
Եզեկիէլ վարդապետին, ի Թագաւորութեան Վրաց Ալէքսանդրին, ի
նեղ և ի դառն ժամանակիս, որ վասն իմ ծովացեալ մեղացն եկն
չար անաւրէն Շաղռուխն, ու մեծ աւերումն [արար] աշխարհին։
Ապայ դնացաք ի տեղիքն երախտեաց՝ Երուսաղէմ, և համբուրեցինք
զսուրբ գերեզմանն, և այլ ամենայն սուրբ տնաւրինականքն։ Հետ
գալն՝ ի Դմըշխայ զգրոցս Թուխթն և այլն դրանաց առաք, և եկաք
բերաք ի Վրացտուն։ Թողաք զԹուղթս ու գնացաք ի Գանձակ, մեր
եղբաւր և ընդանացն կարաւտ էաք։ Այլ չարիքն ու պատուհասն
անաւրէն Ջաղաթին նեղեցուց զմեզ, այլ մեք առաք զմեր եկեղեցւոյ
հանդերձն՝ շուրջառներ, զաւետարան, ու զգրանք, ու զըուրվառ, և
294 բ զայլ ամենայն հոգւոյ || և մարմնոյ զինչ որ կայր՝ զամէն առաք, ի
Վրացտուն կու գայաք բազում կարվան։ Եկաք մինչև Աղեստև, հան-
դիպեցաւ Ջաղաթին իլղարն՝ բազում հեծեալ. և Թալանեցին զմեզ
ու զամէն քրիստովնեայքն, և մերկեցուցին, որ քան զոտից ամանն
այլ իրք չԹողին, այլ ձմերան աւուրք և ցուրտ։ Այլ եկաք ի Գավա-
զանին բերթն, քրիստովնեայքն ի վերա եկին և ծածկեցին զմեր մեր-
կութիւնն։ Այլ մեք եկաք լալագին աչաւք, առաք զԹուղթս։
Յիշեցէք զՍարգիս աբեղէն Տփխե[ա]ց կաթուղիկին աւագերէցն,
որ զաւրինակն շնորհեց. Քրիստոս աստուած նորայ զերկնից աքայու-

թիւնն պարգևէ, այլ և զհամշիրայ հոգևոր եղբայրքն իմ՝ զՅորդանան աբեղայն և զՍտեփաննոս քահանայն Կրծանեցին։

Արդ, գրեցաւ սայ ի ընտիր աւրինակէ գանձատետր և տաղա-
295 ա տետր, մեղեդի և զամենայն բովանդակ, ‖ արդ, և սուրբ գանձարանս պայծառացուցին տաւնից և ուսումնասիրաց։ Արդ, աղաչեմ զձեզ, որ խոշորութեան և սխալանաց գրոյս անմեղադիր լերուք, քանզի կար մեր այս էր, բայց սէր ունէաք և արուեստ ոչ։



Նկ. 17. Մի հատված Ցոհաննէս գրչի հիշատակարանից

Քանզի անարժանս Յոհաննէս՝ անուամբ և ոչ գործաւք քահանայ, ըստացայ զսա յիշատակ ինձ, և ծնողաց իմոց, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և ննջեցելոցն և ամենայն երախտաւորաց, իմ եղբաւրն՝ Յովաննիսին, և իմ քոյուէրն՝ Թուղթէնոյն, և իմ գնացելոցն ի Քրիստոս՝ իմ հաւրն Հուռումին, և իմ մաւրն Գուհարին, և իմ քուերացն Նիւսրաթին, Ղատամին և Հերիքին, և իմ զաւակացն՝ Մելքիսէդին և Մխիթարին, զկենդանիսն փրկեսցէ յամենայն յորոգայթից, և փոխեցելոցն հանգիստ և ողորմութիւն պարգևեսցէ ի Քրիստոս աստուած։ Այլ և զիմ սանամայրն զԱրուս-Խաթունն, և զիւր որ-
295 բ դիքն՝ Վաչանն և զՍալբանն, ‖ և զիւր դստերսն՝ զԽաս ապաշխարողն և զԱնաայ-Խաթունն, և զիւր հարսն զՀռիփսիմին, այլ և զԿրծանեց զամէն ժողովուրդն՝ զա[յ]ր և զկին, զծեր և զտղայ, զայգապան և

զամենայն աշխատաւոր, որք մեզ մէկ կտոր հաց բերելով, կամ մէկ քարեղէն ապուր, և կամ մէկ փառչ ջուր տալով։ Քրիստոս աստուած մեկին ատ զհարիւրապատիկն հատուսցէ և հանդերձեալն՝ զհազարապատիկն, և զերկնից արքայութիւնն պարգևեսցէ։

Այլ և որք ուգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զմեղապարտ ծառայս, և աստուած զձեզ յիշէ իւր յերկնից արքայութիւնն, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն, ամէն։

Եւ զեղբայրայդուստր իմ Խոսարովիթուխթն և զայրն իւր զՂազանն յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր....*

506

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5543

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամար

...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տէր
290բ Զաքարիայի, և ի թուին Հայոց ՊՁԵ. (1436), ձեռամբ Դանիէլ ‖ սուտանուն քահանայի։ Եւ իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղացն ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատանաւք գրեցի, ծաղկեցի և կազմեցի անարժան ձեռաւք իմովք, ի ստոյգ և յընտիր աւրինակէ, կենաւք, տառապանաւք և բազում պանդխտութեամբ, ի գառն և ի վշտաբեր ժամանակիս, յորում եկեալ անաւրէն բռնաւորն Փիրի-Բէկ, և առեալ զկղզիս Աղթամար, և յոյժ աւերեալ թալանեաց։ Եւ մեր փախստական եղեալ, և մերկ և թափուր ի հայրենի ընչիցն, և տարաշխարհիկ եղեալ կացաք Բ.(2) տարի ի յաստուածապահ գեւղն Ուրանց, մինչև մեծ տէրն խնդիր արարեալ և երեր զմեզ, և ինքն յաստուած փոխեցաւ, և մեք կամք երկմիտ և ի վայր մնացած։ Եւ այս ամենայն եղև վասն ծովացեալ մեղաց մերոց։

291ա Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ և ընթերցմամբ՝ յիշեսջիք յաղաւթս ձեր զյառաջ յիշեցեալ ստացող սորա զՅովաննէս, և զծնողքն իւր զտէր Աւագ և զԱզիզ-Տիկին և ըզհաւրեղբայրն ըզՏիրացու, և զնորին ծնողքն՝ զԱռաքել և ը[զ]Զմրուխ, և զկենակիցն զՄարթայ, և զեղբարքն զՍահակ, զՍտեփանոս և զՄկրտիչ, և զկենակիցքն զՓոքր-Տիկին, զԱւագ-Տիկին և զՍիրամարգ, և զորդայքն զտէր Աւաք և զՎարդանէս և զՅոհաննէս սարկաւագ, որ առ աստուած փոխեցաւ, և զազգն ամենայն յիշեցէք և աստուած-ողորմի ասացէք։ Ընդ նոսին և զանպիտան Դանիէլ գրիչ և զծնողքն իմ զԿարապետ քահանայ և զԴուռ-

* Վերջին պարբերությունը գրված է այլ ձեռագրով ու թանաքով։

մէլիք, և զեղբայրն իմ զԹումայ կր[օնաւոր], որ ինքն այլ գրեաց, և զքոյրքն մեր, և զուսուցիչն մեր և զհաւրեղբայրն՝ ըԶաքարիայ փի-լիսոփայն, և զկենակիցն իմ զՇամսա-Հաթունն, և զողայքն զՍտեփաննոս և զՅովաննէս, և զհանգուցեալսն Զարմանի-Հաթուն և ը[զ]Զաքարիայ և զամենայն ազգականքն մեր՝ զկենդանիք և զննջեցեալք...։

507

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԼԱՏԻՆԱՑՈՑ ԹՂԹՈՅՆ Ի ՄԿՐՏԻՉ ՆԿԱՐԱԳՐԷ, ԶՈՐ ԳՐԵԱՑ ՀՐԱՄԱՆԱՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ՄԵԾ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻՆ ԹՈՒՄԱՅԻ

Երևան 5657

Հեղինակ՝ Մկրտիչ Նաղաշ

150 բ Վերջինս ի մանկունս Սիոնի, անյիշելի հողիկս, անարժան Մկրտիչ կարծեցեալ իմաստակ, բացասութեամբ եպիսկոպոս Համիթ քաղաքի, մականուն Նաղաշ մակագրեալ, հրամանաւ տեառն իմոյ Կոստընդինն պատրիարգի, և քաջ ախոյանին և անյաղթ փ[ի]լիսոփային Թումա րաբունապետի՝ Արևելեան հռետորի, սուղ ինչ և զուր* տրամագատեալ պատասխանի եկեղեցոյն լատինացոց։ Զոր վերադրեալ եղև յԱգամայ մինչ ի ծնունդ մարդացելոյն աստուծոյ ԲՃՂԸ· (5198) ամի, եւ ի մարդեղութենէն Քրիստոսի մինչ ի հայ թըվականն ՇԾԳ.
151 ա (553) ամի, ծնընդենէն Քրիստոսի մինչ առ մեզ ՌՆԼԸ (1438) ամի. ‖ եւ ի Լուսաւորչէն մերոյ մինչ առ մեզ ՌՃԼԸ. (1138) ամի. եւ ի Նիկիոկոն ժողովոյն մինչ առ մեզ ՌՃԺԲ. (1112) ամի, ի Կոստանդինուպաւլսի սուրբ ժողովոյն մինչ առ մեզ ՌԽԲ. (1042) ամի, յԵփեսոսի ժողովոյն մինչ առ մեզ ՋՂԴ. (994) ամի, ի Քաղկեդոնի ժողովոյն մինչ առ մեզ ՋԾԹ. (959) ամի. ի թվականութեան յարաբարգեալ արմենագրի համարաւղական արհեստի ՊՁԵ. (885+551=1436) թվին,** յամսեանն մայիս վճշտասան, աւուր չորեքշաբաթի։ Եւ նվիրեցաք ի ձեռն Աբդլմսեճի սարկաւագի, որ է նվիրակ տեառն Եսայեա արքեպիսկոպոսի, որ եղև առ մեզ արգելական ամիսս Ժ. (10), վասն



Նկ. 18. Մի հատված Մկրտիչ Նաղաշի հիշատակարանից

---

* Մաշված է. Գ. Հովսեփյանը իր «Մկրտիչ Նաղաշի Թուղթը Ֆլորենտիոյ ժողովի առթիւ» հոդվածում (տես «Արարատ», 1916 թ., էջ 413—423) կարդում է՝ «դդիր», և ինքն էլ կասկածելով իր վերծանությանը՝ հարցական է դնում բառից հետո։

** Գ. Հովսեփյանը կարդում է ՊՁԼ. (1438), և իր վերոհիշյալ հոդվածում իզուր վիճում է Մ. Զամչյանի հետ, որը Նամակի գրության թվականը իրավամբ համարել է 1436-ը։

պղտորութեան ժամանակիս, որ շատ աշխատանք կրեաց, որոյ տացէ տէր աստուած մասն բարի։

Եւ ես Յոհանէս Կաֆացի,
Բացասութեամբ արեղայի
Եւ սպասաւոր ուղիղ բանի,
Առ ոտս Թումա վարդապետի,
Ձեռամբ Գրիգոր մեր մալազի։
Ո՞վ կարդացողք, ձեր աղութիւք
Քրիստոս աստուած կաա[ր՞ ն]անի,
Յիշման արէք զմեզ արժանի,
Քրիստոս առնէ զձեզ արժանի
Արքայութեանն իւր ցանկալի, ամէն։

508

Յ Ա Յ Ս Մ Ա Ւ Ո Ւ Ր Ք

Փիրգ. Նոտ. 108—109, Տարօն, Առաքելոց վանք, Ալիշան, Հայկարան

Գրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Բաղէշ

... *Արդ, գրեցաւ սա ի յաստուածապահ քաղաքս* Բաղէշ, *ընդ հովանեաւ զօրավարացն սուրբ Սարգսի և սուրբ Գէորգայ և սուրբ Ստեփաննոսի Նախավկային, ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և յեպիսկոպոսութեան տէր* Ստեփաննոսի, *ի բռնակալութեան աշխարհիս Հայոց* Սքանդարի՝ *որդւոյ* Ղարայ–Ուսուֆի* *աշխարհակործան և աւերող յամենայն գաւառացս՝ ի* Դարբանդէն *մինչև* Սեւաստ, *և եղև երկրորդ* Աշրաֆ *ազգիս, և մեր ամիրայի* Շեխ-Մահմուտի։ *Ցայսմ ամի մեծ վարժապետն՝* Թումայ *և* Կարապետ՝ *եօթն վարդապէտօք և այլ բազում աշակերտօք՝ փախստեայ եկեալ ի գաւառէն* Արճիշոյ՝ *առ մեզ կային ժամանակ ինչ, և ի նոցին շնորհտբաշխ և առատաբուխ իմաստից բազումք օգտեցան պէս-պէս ուսմամբ, զոր տէր աստուած վարձս բարեաց տացէ նոցա, ամէն։*

Տառատպեցաւ գիրքս ձեռամբ... Ստեփանոս *երիցուն ի թուաբերութեանս Հայոց ՊՁԵ. (1436)։ Տանուտէրն* Թումայ *ցանկացաւ....*

509

Մ Ա Շ Տ Ո Ց

Վենետիկ, Մ. Տ. Մ., «Այրարատ», էջ 163

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Սաղմոսավանք

... [*Գրեցաւ*] *ձեռամբ սրբասէր կրաւնաւորի և կուսակրաւն քահանայի* Կարապետ *գրչի, յ*Այրարատեան *գաւառի, ի յերկնահանգէտ և*

* *Ալիշանի մոտ՝ «Ղարա-Ուսուվի»։*

ի դերահոչակ ուխտն Սաղմոսավանից... ի թվ. ՊՁԵ. (1436), ի բռնակալութեան Սքանդարի.... Յովհաննէս վարդապետ փակակալ Սանահնոյ՝ ստացող... յիշատակ հաւրն Վարդանայ, և մաւրն Խոնձի, և հանոյ իւրոյ տէր Ցարխունդէ, եղբարց՝ Խաչատրոյ, Աստուածատրոյ, և Մկրտչի, և Ամիր-Սարգիս սարկաւագի, և քերցն Բաբա(՚)-Խաթունի...:

510

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԷՈԴՈՐՈՍԻ ՔԱՒՐԱՎԱՐԻ

«Սիոական», էջ 326 (տպված է նմանահանությունը)

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Ագուլեաց վանք

Գրեցաւ պատմութիւնս ի թուականութեանս Հայոց ՊՁԵ. *(1436), ի թագաւորութեանս Թորգոմա* Ասկանտարի՝ *որդի* Ուսեփին, *եւ ի հայրապետութեանս տեառն* Կոստանդեա, *ի վանքս Ագուլեաց, ընդ հովանեաւ սուրբ* Թումայիս, *ձեռամբ բազմամեղ գրչի* Յովհաննէս *վարդապետի։*

511

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

Փէրդ. Նօտ. 108, «Լոյս», 1906, էջ 569, հարին

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Ձմշկածագ, Կարմիր վանք

...Արդ, գրեցաւ սա ի նահանգիս Փռուգիոյ, *ի գաւառս* Երապօլեաց, *որ այժմ մականուամբ կոչի* [Ձմշկածագ], *ի համանուանադրութիւն* Ձմշկիկ Յոհաննէս *թագաւորի։*

Արդ, գրեցաւ սուրբ տառս ի թուականութեանս մերում ՊՁԵ. *(1436) ամին, հայրապետութիւն Կիւլիկեցւոց տեառն* Կոստանդեայ, *և յաշխարհակալութիւն* Ալի-Պէկին, *ի յերկիրս* Ձմշկածակու, *ի սուրբ ուխտս* Կարմիր վանք, *ընդ հովանեաւ սուրբ Կարապետին և աստուածընկալ սուրբ Նշանացս, ի յառաջնորդութիւն տէր* Մելքիսէթի։ *Եւ լրացաւ ձեռամբ... անարհեստ* Մկրտչի *սուտանուն կրօնաւորի։*

512

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 7448

Հիշատակարանի գրիչ՝ Սիմէոն աբեղայ

506 ա *Զվերջին ստացող սուրբ գրոցս Ճաշոցիս,* զՅակոբ *կուսակրաւն աբեղայն և զընկեր նորին՝* զՍարգիս *աբեղայն՝ զհանգուցեալն առ Քրիստոս [յիշեցէք]։ Եւ սոքա միաշունչ, միախորհուրդ գոլով կային ի դուռն սուրբ Աստուածածնին վանացն, որ կոչի հայր Յովանիսի, և*

բազում աշխատութեամբ շինեցին և լցին զպակասութիւնն կահիւքն ևս, այլ և սպասուք, նա ևս գրենեաւք, և զսա ևս՝ սուրբ մատեանս՝ զՃաշոց գիրքս, որ յիւրեանց աշխատանացն և հալալ արդեանցն գնեցին և գրամով եդին ի մէջ սուրբ եկեղեցոյ՝ յիշատակ իւրեանցն իբրև զանդրանիկ որդի, որպէս այն, որ ասէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն. և է սուրբ գիրքս ճշմարիտ զաւակ և կենդանի և իւրեանց մեծ յիշատակ, նաև ծնողացն ևս լիցի յիշատակ, եղբարցն և ազգականացն։

Արդ, դուք, ով ոք որ հանդիպիք սուրբ գրոցս, յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զՍարգիս աբեղայն, և զհայրն նորին զՂրիմշայն, և զեղբայրն նմին զԹորոսն, և զմայրն իւրեանց։ Այլ և յիշեսջիք վերստին զՅակոբ աբեղայն, և զհայրն նորին զՏիրացու քահանայն, և զմայր նմին զՂրիմ-Խաթունն, և զքոյրն զԻաղուբ-Խաթունուն, և զեղբայր նորին զՍարգիսն՝ զփոխեցեալն առ Քրիստոս, և զեղբայր՝ Եղիսէոս քահանայ՝ և զկրսեր քոյր նոցա զԲաւմպոս, և զամենայն արեան մերձաւորսն նորա յիշեսջիք ի Քրիստոս, և ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յուսացելոցս ողորմեսցի Քրիստոս աստուած, և յիշեցէք ի Քրիստոս զերախտաւոր վանացն զպարոն Աստուածատուրն զԲաղձենց, և ով ոք լըրբութիւն առնէ յազգականաց կամ յաբեղայից և ի հայրապետաց՝ զսուրբ գիրքս հանելով ի վանացն կամ փոխելով կամ ծախելով, առնու զանէծս սուրբ աստուածածնին և զաստուծոյ և զամենայն սրբոց։

506 բ Եւ ով որ բարի ոք լինի ի գործ սպասաւորութեանն սուրբ Աստուածածնին և պահէ զպատուէր վերոյգրեալ սուրբ գրոցս, և պահէ զսուրբ գիրքս ի դուռն սուրբ Աստուածածնին՝ առնու աւրհնութիւն...։

Եւ գրեցաւ գիրս ի Թվ. Հայոց ՊՁԵ. (1436), դեկ[տեմբերի] Թ. (9), ձեռամբ Սիմէոն աբեղիս, այլ և զկազմող գրոցս զՄաղաքիա կրօնաւորն յիշ[եցէք]...։

513

ՇԱՐԱԿՆՈՑ

«Հնութիւնք Ակնայ», էջ 78—79

Գրիչ՝ Սամուէլ
վայր՝ Երզնկայ

...Յիշեսջիք Յովհաննէս քահանայ զծաղկաւղն՝ զՄելտինցին և... Ամիրպէկ սարկաւագն, որ զաւրինակս շնորհեաց մեզ։ Գրեցաւ և ծաղկեցաւ և կազմեցաւ... ի լաւ և յընտիր աւրինակէ, որ կոչի Ելկցի, ձեռամբ Սամուէլի, ի յԵկեղեաց գաւառս, ի մայրաքաղաքս ի յԵզնկայ, ի Թուաբերութեանս Հայոց ՊՁԵ. (1436)։

ՊՁԶ 1437

514

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

Երևան 8979

Գրիչ՝ Շմաւոն
վայր՝ Սանահին

ա

349 ա Փառք... որ ետ կարողութիւն տըկարութեանս մեր հասանել ի
վերջին գիծ Շարակնոցիս և Տաւնացուցիս, որ է զարդ տաւնից և
պայծառութիւն եկեղեցեաց և ի վարժումն մանկանց Սիոնի։ Արդ,
գրեցաւ սա ի լաւ և ի ընտիր աւրինակէ Խըլկոյ, ձեռամբ մեղսամա-
կարդ անձին Շմաւոն վարդապետի, ի վանս Սանահնոյ, ընդ հովա-
նեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Կաթուղիկէիս, և այլ բազմահոյլ
349 բ եկեղեցեացս և բազմագումար սուրբ նշանաց և սուրբ նշխարացս ‖.
եւ մերձ դանբիրանի քաջ հռետորի Գրիգոր վարդապետի որդոյ Աբասա։
Ե[ւ] ի թվաբերութեան Հայկազեան տոմարի ՊՁԶ. (1437), եւ ի թա-
գաւորութեան Վրաց Ալեքսանդրի բարեպաշտի, եւ իշխանութեան տե-
ղոյս իշխանաց իշխանին պարոն Բէշքենին՝ շառաւիղին՝ Օրբելեանց, և
որդոյ իւրոյ պարոն Ըռըստամին, որ և է ինձ հոգևոր որդի, զոր տէր
աստուած պահեսցէ անսասան կենաւք զպարոն Բէշքենն ծաղկեալ զաւա-
կաւն իւր մինչ ի խորին ծերութիւնն։ Եւ ի յառաջնորդութեան սուրբ
ուխտիս առն իմաստնոյ և առաքինի անձին՝ անմարմին ի մարմնի և
մարմնով հաւասարեալ վերին քահանայապետութեանցն, լցեալ երկոքին
որակաւն՝ տեսականաւն, գործնականաւն, համբաւ բարի և գործով
սքանչելի և արուեստիւ նազելի, արդեալ ի յոգունց և բարգաւաճեալ
ամենայն լեզուաց, զոր բազում աշխատութեամբ, որ ի ճըգանցն
նուազեալ կայր և վասն յուսոյ արքայութեանն և բազում գըթոյն
հայրախնամ, զոր ունէր առ մեզ՝ տէր Յոհաննէս, ամենևին նմանեալ
350 ա անու[ան]ակցին իւր՝ սիրելի աշակերտին, թողեալ զմարմնոյ տկ ‖ ա-
րութիւնն վասն աղաչանաց և սիրոյ մերոյ և զարդարեաց զսա ստ-
փերական ոսկով և բազմերանկ դունով, և զշրուեալն կազմով՛ ի մի
ժողովեաց և ընձեռեաց մեզ վասն իւր բազում գթոյն։ Զոր տէր
աստուած զարդարեսցէ զսայ երկոքին կենաւքն, հանդերձ իւրաեաւքն,
արեան մերձաւորաւքն և ձեռնասուն աշակերտաւքն՝ Ներսէս կուսա-
կրաւնի և քաջ փիլիսոփայի, և Բէհնուշ դպրի, և Վարդան սարկաւագի,
զոր տէր աստուած պահեսցէ մինչ ի խորին ծերութիւնն անսասան
կենաւք, և զննջեցեալսն իւր երանական ձայնին արժանաւորէ, ամէն։

Այլ և իմ՝ մտածեալ զբանս իմաստնոյն, որ ասէ՝ Երանի, որ
ունիցի զաւակ ի Սիոն, և իմ ոչինչ գոլով մասն բարեաց, և ոչինչ

տրէրտուր փոխարինաց, և վասն յուսոյ արքայութեան և ի պատճառ ապաշխարութեան գրեցի զսա յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց՝ հաւրն իմ Խաչատրոյ, և մաւրն իմ Աղուտին, և եղբարցն իմ Հովադեղին, և Բաղթիարին, և քերցն իմ Շիրազին, Ասուկանին և Խաթունշին, և որդոց նոցին Խիմշին և Ումիտշին, և եղբաւրորդեացն իմ Միրիջանին,
350 ր Խաւնաջանին, և Խաչաս[ուրին], || և ամենայն արեան մերձաւորաց իմոց՝ կենդանեաց և ննջեցելոց, և հոգևոր ծնաւղացն իմ տէր Առաքելին, և քաջ հռետորին Մխիթարա, զոր տէր աստուած դասեսցէ ընդ նմանիսն իւրեանց։ Եւ զհամշիրաք եղբարսն իմ զՅզեկիէլ վարդապետն, և զԳրիգոր վարդապետն, և զՄարտիրոս փակակալ սուրբ Առաքելնոյն Եւստաթէի յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր։ Այլ և զհոգևոր որդիս իմ զՂազար կուսակրաւն աբեղա, որ բազում միամտութեամբ ծառայէր մեզ՝ յիշեցէք հանդերձ իւրաւքն։

Արդ, գրեցի զ[ս]ա յիշատակ ինձ հոգոյ և ի վայելումն դեռաբուսիկ և նորբողբոջ եղբաւրորդոյս իմ Սարգ[սի՞ | | | * և ընձեռեցի սմա, որ այլ մարդոյ դաւի չկա հետ Շարակնոցիս՝ յիմոց կամ աւտարաց, զոր տէր աստուած վայելել տացէ սմա մինչ ի խորին ծերութիւնն, ամէն։

Այլ և յիշեսջիք յաղաւթս ձեր զհրեշտակատիպ և զկուսակրաւն աբեղայն զԱլեքսանոս՝ որդիս մեր, և զձեռնասուն որդիս մեր զՅովաննէս դպիր, և զհայրն իւ[ր] զՈւմեկ յիշեցէք ի Քրիստոս։ Դարձեալ, աղաչեմ յիշեցէք իւր՝ ամենայն կենդանեաւք և ննջեցելաւք՝ զՅակոբ կուսակ[ր]աւն աբեղա և զմահդասի, որ զնիւթ մագաղաթիս շնորհեաց։ Եւ դուք՝ ով ոք տեսանէք կամ գաղափարէք, յիշեցէք զվերոյասացեալ զտէր Յոհանէս՝ հանդերձ իւրաւքն, և զիս՝ հանդերձ իմաւքն, և զվերոյգրեալսն...։

351 ա | | | տար]տեամեալ** անձամբ վասն դառնութեան ժամանակիս և բազում վշտաց և աւերման աշխարհիս Հայոց, զի գալն անիծեալ չար բռնաւորին և կարապետ Նեռինն, որդի անակն*** սատանայի Շահրուխն, որդի Լանկ-Թամուրին, յազգէն պարսից ելաւ բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք ի կողմանց հարաւու, և եկեալ տապալեաց զաշխարհս մեր, և արար կապուտ կողոպուտ, և գերի էառ զամենայն, և փախըստական արար զաշխարհակալս մեր՝ զկոչեցեալն Ասկանդար՝ զորդին Յուսուֆին, յազգէն Թորգոմա։ Եւ զաղէտն և զկործն և զազգի ազգի վիշտ և դառնութիւն ժամանակիս ընդ գրով ո՞ կարէ արկել, զի այս երրորդ գալն էր և աւերելն և եկեղեցեաց մերոց խաւար ածելն։ Եւ վասն աւերման հրեշտակարնակ աթոռոյն մեր Եւստաթէի սուրբ առաքելոյն, զի բնաջինջ աւեր ածին և, առհասարակ, զաներն այրեցին և զստացուածքն զամենայն կողոպտեցին. և միա-

* Մի բառ ջնջված է։

** 350 և 351 թերթերի միջից ընկել է մեկ (կամ մի քանի) թերթ։ Ուստի և հիշատակարանի պատմական և ամենակարևոր մասի սկիզբը չի պահպանվել։

*** Այս բառի վերծանման վրա կասկածում ենք, կարելի է կարդալ նաև «արեանակն», «ջուցե և «արբանեակին» և այլն։

րանաւք մերովք փախստական և ցանուցիր եղաք աշխարհս Վրաց,
351 բ աստուածապարգև իշխանաւս || մեր և ամենայն աւրհնութեանց ար-
ժանաւոր պարոնաց պարոն Բէշքենաւս, և ազատաւք, և ժողովրդաւք։
Եւ վասն այս՝ պատճառիս ընակեցաք ի սուրբ ուխտս ի՛ Սանահին,
առ ոտս բազմերանեան և ճգնազգեաց և խարազանազգեաց կուսա-
կրաւնի Յոհաննէս նկարողի այս մատենի, զոր տէր աստուած զար-
դարէ զսա երկոքին քաղաքավարութեամբ, զի բազում և ազգի-ազգի
տրաւք մխիթարեաց զմեզ և զմերոյքս ի տառապանս մեր. և մեք ի
բազում դառնութենէ և ի տարակուսանաց ոչ հանդուրժէաք զտիւ և
զգիշեր վասն աւերածուն աշխարհին մեր և խաւարելոյ եկեղեցայցն,
այլ կրկին մխիթարք եղև ազգիս տառապեալ՝ պարընաց պարոնն և
իշխանաց իշխանն, տիպ գեղեցիկն և ամենայն կերպիւ զարդարածն
պարոն Բէշքենն, գնաց առ բռնաւորն և առհասարակ ազատեցոյց
զգերեալսն ի ղաւրաց նորին, զոր տէր աստուած ազատէ զինքն և
զնախնիքն իւր ի ձեռաց սատ[ան]այի և ի պատրանաց նորին։ Եւ
այս փոքր ի շատէ | | |*

Բ

10 ա Աւգնեա հոգիդ սուրբ և զսկըսեալս իմ շուտով կատարեա և
զգծաւղ սորա փրկեա ի ճաղբից բանսարկուին, և լիցի սա առիթ
ինձ ապաշխարութեան, և զվայելող սորա զԴանիէլ դպիր՝ անսասան
կենաւք պահեա։ Եւ զհրեշտակակրաւն անձն, զլցեալսն ամենայն առա-
քինութեամբ՝ տեսականաւն և գործնականաւն, զՅովաննէս մաքրա-
միտ և սրբասէր աբեղա, որ ոսկով և զանազան դունով զարդարեաց
զսա՝ զարդարեսցէ տէր աստուած զքաղաքավարութիւն սորա, և յետ
աստեացս ելանելոյ պսակեսցէ զսա բազմերանկ պսակով։

Գ

109 բ Ընդ իմաստուն կուսանաց և յառագաստ հարսանեաց արժանա-
ցոյ զնկարող այս երգարանաց և դասեցոյ ի խորանս անդրանկաց և
պսակ սորա պայծառ պատրաստեաց։

Դ

124 ա Շմաւոն վարդապետս յիշեցէք՝ զգծող սուրբ տառիս։**

Ե

Նկարիչ՝ Յոհանէս։

218 բ Ձեռանաշնորհ և զերջանիկ բարունին զՇմաւոն՝ զառաջնորդ և զվե-
րադիտող առաքելական աթոռոյն Սիւնեաց՝ զգրիչ և զստացող ոսկե-
ճաճանչ բուրաստանիս յիշեցէք վերափոխման տիրա[մօր] տօնիս։ Ընդ

* Շարունակությունը չի պահպանվել։

** Գրված է 124 ա էջի լուսանցքում, Շմավոն վարդապետի նկարի շուրջը։ Շմավոնը նկարված է Քրիստոսի խաչելության պատկերի առջև, չոքած գիրքով։

նմին և ղաշխատեալս ի սմա, զբազմաբիծ մե[ղօք առ]ակեալս՝ զՅոհանէս նկարող աղաչեմ յիշել սրտի մտօք ի մեղաց թողութիւն, զի որով չափով չափէք և ձեզ եղիցի։*

515

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՑՀ, հա. Ա, 28, էջ 64—65

Գրիչ՝ Մխիթար
վայր՝ Սևերաք

577 բ ... Գրեցաւ սուրբ աւետարանս ի թվականիս ՊՁԶ. (1437), ձեռամբ Մխիթար աբեղայի, ի վայելուչ տեղս, որ կոչի Սևերաք, ընդ հովանեաւ սուրբ Թէոդորոսիս, ի յաթոռակալութիւն սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին՝ տէր Կոստընդին, ի հայրապետութիւն տէր Մկրտչին՝ վերագիտող յամուրն Արղնի բարձր Աստուածածնին և Ամիթ շահաստան քաղաքի։ Զոր և Քրիստոս՝ յոյսն ամենեցուն և զառաջնորդող ամենայն բարեաց բացցէ զդուռն ողորմութեան ընդդէմ Սևերկո քրիստոնէիցս, որ բազում կարեաւք լցուցին զպէտս մեր՝ կերակրելով և հանգուցանելով, զոր և ի Քրիստոսէ զմիոյն հարիւրապատիկն առցեն, ամէն։

Նկ. 19. Հիշատակագիր և Տաթևի եպիսկոպոս Շմավոնի դիմանկարը

Աղաչեմ զհանդիպող եղբարքդ յիշել ի սուրբ յաղաւթս ձեր, զմրող սուրբ աւետարանիս զտառապեալ ոգի Մխիթար աբեղաի։ Վայ ինձ, որ միայն անուամբս եմ և ոչ գործով, հազար եղուկ է զիս, որ զամէնն գիտութեամբ կու մեղանչեմ, վայ ինձ՝ մեղապարտ անձինս Մխիթարա, որ վասն բազում յանցանաց իմոց տարակուսեալ և երերեալ կամ, որ եմ ի Թադէոսի և Բարդողիմէոսի սուրբ առաքելոց վիճակէն՝ ի Նախավկայէն։ Որ ի բազմանալ անաւրինաց վասն իմ մեղացն եկաւ Շահռուղ իմիրզէն՝ անիծեալ շունն նետողական, բազում և անթիւ զօրաւքն, և աւերէած աշխարհին Հաոց, և բազումս գերեաց և կոտորեաց, քակեաց և այրեաց և ի հաւատոց էհան։ Եւ մեք տեսաք և վայ կարդաինք անձանց մերոց և լսելեացս։ Եւ մեք լալագին աչաւք ե դառն սրտիւ թողաք զծնող, զեղբայր, զքոյրս և զմայր և եկաք մինչև ի Համիթ քաղաք. և ի խնդրոյ Սևերկոյ քրիստոնէիցս Մնացաք ի տեղս և գրեցաք զսուրբ աւետարանս։ Աղաչեմ յիշել ուղիղ սրտիւ ի սուրբ աղաւթս ձեր զմեղաւք լցեալ ոգիս Մխիթար գծողիս,

* Հիշատակագրությունը գրված է Աստվածածնի փոխման, ամբողջ էջով մեկ նկարված, պատկերի ներքին լուսանցքում։ Ձախ լուսանցքում, կանգնած դիրքով, նկարված է ձեռագրի գրիչ՝ Շմավոն վարդապետը, առաջնորդական գավազանը ձեռքին (տես նկ. 19)։ Այս և ձեռագրում պահպանված մյուս բազմաթիվ նկարները վկայում են Յովանէս ծաղկողի բարձր ճաշակի և մեծ հմտության մասին։

զոր և ինքն Քրիստոս աստուածն մեր, որ առատն է ի տուրս, ձեզ՝ կարդացողացդ և մեզ՝ աշխատողացս ի միասին ողորմեսցի ազաւթիւք ձեր, ամէն։ Այլ և խոշորութեան և սղալանաց գրոցս անմեղադիր լերուք, քանզի կայր մեր այս էր, և զհաւրեղբաւր որդին՝ աշակերտն իմ զԱլթունն յիշել յաղաւթս, որ զԹուխտն կոկեաց...։

516

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9432

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Խլաթ

... Եւ ես անպիտանս և տրուպս կարգաւորաց Աստուածատուր խնդրողս բանի մոռացայ զնեղութիւն և զտըկարութիւն անձինս և ձեռն արկեալ գրեցի զսուրբ աւետարանս ընդ հովանեաւ ԺԱ. խորանացս և սուրբ Գէորգ զաւրավարին, ի Խլաթ մայրաքաղաքի, ի հայ-
290 բ րապետութեան տեառն Կոստանդ || նեա ընդհանուր կաթողիկոսի, և մերոյս նախանգի տէր Զաքարի Աղթամարայ կաթողիկոսի, ի յաշխարհակալութիւն Ջհանշայ ամիրզին, որ զեղբայրն իւր զՍքանդարն փախըստական արար, 'ւ յԱլընջայ մտաւ և ամրացաւ, և խսարեաց զնա բազում զաւրաւք։

Եւ գրեցաւ սա ի թըւականութեանս Հայոց ի ՊՁԶ. (1437) ամին։ Արդ, որք հանդիպիք սուրբ աւետարանիս տեսութեամբ կամ ընթեռնելով կամ գաղափար առնըլով ի սմէնէ աւրինակի՝ յիշեցէք ի Քրիստոս զստացող սորա զՍւատ ճգնաւորն, և զեղբարքն իւր զՆուրատն, և զկողակիցն իւր զԹանկ-Խաթունն, և զՅովանէսն, և զծնօղսն իւրեանց, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեաց և հանգուցելոց, ամէն։ Եւ զՄարթէն յիշեցէք։

Ընդ նմին յիշեցէք ի Քրիստոս զմեղապարտ գրիչս զԱստուածատուր անարժան քահանայս, որ բազում աշխատութեամբ գրեցի, ծաղ-
291 ա կեցի և կազմեցի զաւ || ետարանս, և զծնաւղսն իմ զԿարապետ քահանայ և զԹաղայ-Մելիքն, և զեղբարքն իմ զՅովանէս սարկաւագն, և զԽաչատուրն, և զՎարդանէսն, և զկենակիցն իմ, և զնորընծայ զաւակն իմ զԿարապետն...։

517

ՇԱՐԱԿՆՈՑ

«Թորոս Աղբար», Բ., էջ 462—463, Ջնքուշի սիրահայեաց ս. Աստուածածնի վանք

Գրիչ՝ Մաթէոս
վայր՝ Ցաւղացքար վանք

... Աւարտեցի դառն և ի նեղ ժամանակիս, որ տիրեալ էր աշխարհիս Հայոց ազգն Թուրքման, որ և զամենայն աշխարհս ի սուր և ի սով և ի գերի մաշեաց, որ ոչ ուստեք ունէաք մխիթարութիւն....

Գրեցաւ գիրքս ի գաւառիս Ն[ղե]գեաց, ի վանքս Ցաւղացքար,
ընդ հովանեաւ կենսաբեր սուրբ Նշանիս, ի լաւ և յընտիր աւրինակէ
Խլիցի, ձեռամբ Մատթէոս քահանայի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց...
ի Թվին Հայոց ՊՁՁ. (1437)...։

518

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5530

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան քաղաք

ա

... Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ սուտ գրչի և անար-
282 ա ժան քահանայի Կարապետի, || ի Թուականիս Հայոց ՊՁՁ. (1437), ի
հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և ի Թագաւորութեանն Ջը-
խանշայ ամիրզին, ի քաղաքիս, որ կոչի Վան, ընդ հովանեաւ սրբոյն
Ստեփաննոսի Նախավկայի և սրբոյն Սահակայ հայրապետի, ի դառն
և ի վշտաշատ ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց մահ
տարածեցաւ յաշխարհի՝ յԱսորոց մինչև ի Հայք, և անողորմ կոտո-
րեցան անթիւ տղայք և մանկունք, և ոչ գիտեմք զինչ լինելոց եմք,
բայց յոյս ունիմք ի սուրբ Աստուածածինն, որ բարէխաւսէ առ որ-
դին միածին, մի թէ բառնայ զայս պատուհասս յաշխարհէ, ամէն։
Արդ, ի յայսմ դառնացեալ ժամանակիս ցանկացաւ այսմ... կու-
սակրաւն աբեղայն Սարգիս, և ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց,
282 բ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց՝ հաւրն Ղազարի || և
մաւրն Էլթանգի, քուերն Մամխաթունի, և քուրոջ դստերն Փաշայի, և
այլ ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեացն և հանգուցե-
լոցն, ամէն։
... Ընդ նոսին և զմեղապարտս և զչարս յամենայն գործս անօ-
րէնութեան՝ զգծող սորա զԿարապետ, և զծնողքն իմ զՍեփանոս քա-
հանայ և զՄինայ, և զհօրեղբայրն իմ զՄովսէս միայնակեց, և զեղ-
բայրն իմ զՅովանէս աբեղա, որ փոխեցաւ առ Քրիստոս, և զայլ ամե-
նայն արեան մերձաւորսն իմ յիշման արժանի արարէք...։
Այլ և յիշեսջիք առաջի Քրիստոսի զպատուական հայրապետն,
զուղղափառ անբիծ աթոռյանն, քաջ և յաղթող, զրբասնեալ, զաղքա-
տասէր և զողորմածն զտէր Զաքարիա կաթուղիկոս, զոր տէր աստուած
պահեսցէ զնա ջահ անշիջանելի ի սուրբ եկեղեցի, ի պարծանս քրիս-
տոնէից և աջն անեղին և բազուկն հզաւրին պահապան և հովանի
լիցի նմա, ամէն...։

բ

Ստացող՝ Սարգիս

283 բ Արդ, գրեցաւ Աւետարանս այս յառաջնորդութիւն Կարապետիս
և տուաք Անձնանաաատիս, յիշատակ ինձ, և ծնողաց իմոց, Սարգիս
կրօն[աւոր]իս, հաւրն Ղազարի, և մաւրն Էլթանկի, քըւերն Մամխա-

թունի, և դստերն Փաշ[այի]: Մի ոք իշխեսցէ [հանել զսա] ի դռանէ սուրբ եկեղ[եցւոյ, ոչ ի յառաջ]նորդեաց և ոչ ի յեպիսկոպոսեաց, ոչ ի հայրապետեաց և ոչ ի քահանայից, եթէ ոք յանդգնի զսայ ծախելով, կամ գրաւելո[վ և կ]ամ տանելով զսայ ի սուրբ եկեղեցոյ՝ զմասն զՅուդի առնէ և զանեցքն Կայենի տօցէ | | |

519

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փերգ. Նոտ. 111—112, Բաղէշ, Ամրդօլու վանք

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Արճէշ

ա

. . . *Եւ ես՝ անպիտանս...* գրիչս Կարապետ՝ *տեսի զփափագ ամենօրհնեալ քրիստոնէին խօճայ* Թաճդնին, *և յանձն առեալ գրեցի ի քաղաքս* Արճէշ *կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարին, և այլ ամենայն սրբոցս, որք աստ կան, ի թըւականիս Հայոց ՊՁԶ. (1437), ի հայրապետութեան տէր* Կոստանդնի, *և յառաջնորդութեան երկրիս* Քաջբերունւոյ *և ամենայն քրիստոնէից ազգի՝ մեծ հռետորին և քաջ քարտուղարին* Թումայ *րաբունապետին, քանզի յայսմ վերջին ժամանակիս սա միայն յայտնեցաւ ճշմարիտ քարոզող ազգիս Հայոց և պարծանք ամենայն վարդապետաց և կրօնաւորաց։ Վասն զի առնէր և ուսուցանէր ամենեցուն զսրբութիւն և զառաքինութիւն, քանզի աթեգակն էր բերան սորա և լոյս փայլէր ի պրակաց բանիցն, որ շուրջ էին ղնովաւ։*

Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... անյիշելիս ի գրչաց՝ սուտանուն Կարապետ *աշխարհի երէցս, ծառայ և աշակերտ սմին, հրամանաւ սորին և միջնորդութեամբն, ըստ իմում տկարութեամբս յանձն առի և ամենակարող զօրութեամբն աստուծոյ կատարեցի զսա։ Վասն զի այսչափ գծագրելս շնորհիւ և ողորմութեամբ սորին է՝* Թումա *վարդապետի։ Որոյ տէր աստուած ընդ երկայն աւուրս հաստատուն և անշարժ պահեսցէ զսա ի վերայ գաւազանի իշխանութեան իւրոյ, և յետ աստեացս ելանելոյ՝ երկնից արքայութեան արժանիս արասցէ, հանդերձ ծնողօքն և ամենայն արեան մերձաւորօքն, ամէն։*

Ստացող գրոցս զխօճայ Թաճդինն *և զծնողսն իւր* Ամիր-Հասան *և զ*Թավրէզ-Մէլիքն, *զկենակիցն զ*Դիլքուշատ, *և զհանգուցեալն ի Քրիստոս զ*Ալամշա, *և զծազկեալ զաւակսն իւր զ*Սքանդար *և զ*Նասրադին, *և զեղբարսն զ*Ամիրդօլ, *զ*Աբդըլքարիմ: *Նաև զծնօղքն մեր՝ զ*Յովհաննէս *քահանայ և* Զըմրութ, *և զեղբարքն իմ զ*Մկրտիչ, *զ*Մելքիսեթ *և զ*Վարդան *քահանայս, և զուսուցիչն մեր զ*Թումայ *վարդապետն՝ զվերոյիշեցեալն, և զ*Յովհաննէս *եպիսկոպոսն, որ զօրինակն շնորհեաց, և զորդին իմ զ*Ստեփաննոս *սարկաւագն, որ և նա գրեաց։*

Բ

Ստացող՝ Թանդին

Ես՝ Թանդին, Հասանի որդիս, գնեցի զջաղացն Շամօյէն՝ հայի և տաճկի վկայութեամբ, և բնական մուլք տուի սուրբ Յովանիսին, ինձ բարի յիշատակ, և իմ ծնողացն Ամիր-Հասանին և Թավրէզ-Մէլիքին, և եղբարցն իմոց Ամիրդօլին և Աբդլ-Քարամին, Կարապետին և Մկրտչին, և իմ զաւակացն Սքանդարին և Նասարադնին, և իմ կենակցին Դիլ-քուշատին, և Ալամշին, և ամենայն արեան մերձաւորացն, ով որ կարդայք լի սրտիւ աստուած-ողորմի ասացէք սոցա։

Եւ զջաղացն մեր թաղի վկայութեամբ ամենու, և քաղաքացւոցն՝ հայու և տաճկի վկայութեամբ, և վանից երիցանու վկայութեամբ։ Ես՝ Բարսեղ եպիսկոպոս վկայ, ես՝ Մաաթէոս աբեղայս վկայ, ես՝ Աստուածատուրս վկայ, ես՝ Ատոմ աբեղայս վկայ, ես՝ Ղազար վարդապետս վկայ, ես՝ Խոսրով աբեղայս վկայ. առաջի աստուծոյ վկայ ենք, որ ջաղացն վանիցն գնեցաւ՝ տաճկի և հայի ձեռօք։

520

ԳԱՆՁԱՐԱՆ

Կիպրոս, Նիկոսիա, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Տիփխիս

Ի-թվ. Հայոց ՊՁԶ. (1437) և ի փոքր թվ. ՅԾԴ.* (354) և ի հոռոմոցն ՌԴՃՁ՞Թ. (148՞9),** ի թագաւորութեան վրաց Աղէքսանդրու, ի մայրաքաղաքս Տիփխիս, ի յանապատս Բետղահեմ, ի դրան սուրբ Աստուածածնին, ձեռ[ամբ | | | աբեղայիս Կարապետի...։

521

ՇԱՐԱԿՆՈՑ

Բրիտ. թնգ. Add. 8999, հՑ. 47, էջ 96—97

Գրիչ՝ Մարտիրոս
վայր՝ Հաղպատ

Արդ, գրեցաւ գիրքս այս, որ կոչի Շարակնոց ի թվականութեանս Հայկազնեա ՊՁԶ. (1437) ամի, ի սուրբ ուխտս Հաղպատայ, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս, և սուրբ Կաթուղիկէիս, և սուրբ գերեզմանիս Սարկաւագ վարդապետիս, և Շուշանա սուրբ վկային, ի վարժապետութեան մեծ րաբունոյս և քաջ հռետորիս Յովանէս վարդապետիս, ի յառաջնորդութեան տէր Զաքարէի, ձեռամբ յոքնամեղ, փծուն և անարհեստ գրչի Մարտիրոսի սուտանուն աբեղայի, ի վայելս անձին

* Մ. Տեր-Մովսիսյանի մեքենագիր ցուցակում սխալմամբ տպված է ՁՄԴ. (՞)։

** «Հոռոմոց» (իմա բյուզանդական) թվականը սխալ է գրված, ըստ երևույթին, պետք է լիներ «ՌԴՃԼԹ.» (1439)։

և յետ մահուն յիշատակ հոգւոյ, և կրկին ծնողաց, և եղբարց, քերց և հոգևոր զաւակաց։

Արդ, որք հանդիպիք այսմ տառի ուսմամբ կամ ականատես և գաղափար առնելով՝ յիշեցէք ի մեղսաքաւ իչ յաղաւթս ձեր զվերոյգրեալսդ, և զհաւրեղբայրն իմ զտէր Յունան, զհայրն իմ զԽոջադեղ, և զմայրն իմ զԽոնդիկ, զեղբայրն իմ զՍարգիս, և զամուսինն իւր զՄամքան, և զզաւակսն իւրեանց, զքոյրն իմ զՈւստիանէ, որ միամտութեամբ սպասաւորեաց մեզ, և զզաւակսն իւր և զայլ արեան մերձաւորսն՝ հանգուցեալսն և զկենդանիսն։ Եւ խոշորութեան գրոյս և սխալանացն անմեղադիր լերուք, զի այս էր կամ մեր....

522

ԱՒԵՏԱՐԱՆ

Բրիտ. Թնգ. Or. 2668, կց. 18, էջ 30

Գրիչ՝ Աւետիք
վայր՝ Բալու գաւառ

340 բ ... Այսմ աստուածաւանդ սուրբ աւետարանիս տենչացեալ եղև մաքրամիտ Ահլի-Մելիքս՝ դուստր Տուլաթ-Մելիքին... և ստացաւ զսուրբ աւետարանս ի յարդար և ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ և բարեխաւս առ աստուած իւր, և բարի ծնողացն իւրոց՝ հաւրն Յովաննիսին՝ ոսկերչին, և մաւրն Տովլաթին, և դստերն Տիլշատին, և ամենայն արեան մերձաւորաց։

Արդ, սկսեալ եղև սուրբ աւետարանս ի դաւառս, որ կոչի Բալու, ի վանքն, որ կոչի սուրբ Գէորգ զաւրավար, և աւարտեցաւ ի նմին գաւառ, և ի վերայգիտողութեան նորին եպիսկոպոսի տէր Միննասայ: Ի դառն, և ի նեղ ժամանակի, զոր մահտարաժամն յաստուծոյ չտար Թոյլ քահանայիցն հաց ուտել։

Արդ, գրեցաւ սա ձեռամբ... յոգնամեղ և անարհեստ գրչի Աւետիք սուտանուն աբեղայի, ի կաթողիկոսութեան Կիլիկ[ի]ոյ տեառն Կոստանդեայ, և յաշխարհակալութեան Միջագետաց Համզայ սուլտանին, ի Թուականութեանս Հայոց ՊՁԶ. (1437)....

Յիշեսջիք... Ահլի-Մելիքին և իւր կողակցին խոճա Յախրատնին:

Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց և անպիտանս յամենայնի, անարգս* ...անյիշելիս ի գրչաց Աւետիք անարժան աբեղայ տեսայ զսէր և զփափաք Ահլի-Մէլիք խաթունիս... աւարտեցի զսուրբ աւետարանս...։ [Յիշեսջիք] նաև զհոգևոր հարքն և վարդապետքն մեր, ընդ նմին և զբարի ծնաւղքն իմ զԱտոմ և զԽո[ն]տ-Մէլիք...:

* Տպված է «ղնարգս», հրատարակիչը հարցականով առաջարկել է սրբագրել «ապեգերգս»։

523

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 164, այուն. 378–380, կտուց անապատ

Գրիչ՝ Յուսէփ
վայր՝ Թացու

... Ուստի և տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ՝ աստուածասէր և հաւատարիմ տանուտէրն Դաւիթ, որ ցանկացող եղեալ աստուածաբան սուրբ աւետարանիս, և ետ գրել զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց՝ հաւրն Գալոցին, մօրն Թուրւանդին, էթարին, և զաւակաց Մուրատին՝ փոխեցելոյն առ Քրիստոս, և դըստերաց Զինարին, Համրէկուն, և եղբաւրն Խաչատրուն, և կողակցոյն Մարգարտին, և որդոցն տէր Գրիգորին և կողակցին Սալչուկին, Մէլքէսէթին և կողակցին Շանումին, ամէն։

Դարձեալ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԴաւիթն, և զծնօղքն՝ զԳալոցն և Թուրուանդէն, և զկողակիցն Մարգարտին, և որդոցն տէր Գրիգորին, և կողակցին Սալչուկին, և դստերն Գօզային, Մէլքէսէթին, և կողակցոյն Շանումին, և դստերն Թուրուանդին, ամէն։

Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ սուտանուն Յուսէփիս, ՚ի գիւղն, որ կոչի Թացու, ընդ հովանեաւ սուրբ Գէորգա զօրավարին և սուրբ Ատոմա զօրավարին, ի թուականիս Հայոց ՊՁԶ. (1437), ի հայրապետութեան Աղթամարա աթոռոյն տէր Ստեփանոս կաթուղիկոսին, և պարոնութեան Աւդալ-Բէկին, ի դառն և նեղ ժամանակիս գրեցաւ, անմեղադիր կալէք խոշորութեան և սխալանաց մերոց, զի կայր մեր այս է, առաջին գիրն է այս։

524

ԱՒԵՏԱՐԱՆ

«Լոյս», 1905 թ., էջ 519

Հետ. ստացող՝ Յունան
վայր՝ ի վանօրայս Բաղիշոյ

Ընդ նմին և զվերջին ստացող սուրբ աւետարանիս՝ զյետինս ի կարգաւորաց և զսրբասնեալ քահանայն Յունան, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, զի անկեալ է[ր] ի ձեռն օտարաց...։ Զոր յետոյ կրկին նորոգել ետ, և արար իւրն յիշատակ բարի, և ծնաւղացն իւրոց՝ հաւրն Առաքելին և մաւրն Մէլէքին, զոր տէր աստուած վայելել տացէ երկար ժամանակաւ մինչև ի խորին ծերութիւն, և յետ նորա տացէ տէր աստուած ճիւղ աւրհնութեան և զաւակ բարի, զի և նա վայելեսցէ ընդ երկար աւուրս։ Այլ և զհոգևոր և զերախտաւոր հայրն իւր զԳրիգոր քահանայն, որ բազում երախտիք ունի ի վերայ սորա, որ և զհատուցումն աստուծոյ առցէ և զպսակն ի հաւրէն լուսոյ...։

Արդ, գրեցաւ սակաւ գիրս ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի և յոյլ և ծոյլ կարգաւորի սուտանուն քահանայի, ընդ հովանեաւ սուրբ Յովանիսիս և սուրբ Գէորգայ զօրավարին, առ ոտս տիեզերալոյս և քաջ րաբունապետի Թովմա *վարժապետի, ի ժամանակիս, որ բնակեցայք ի վանօրայս* Բաղիշոյ: *Ի թվին* ՊՁՁ. *(1437) սրբասէր կրաւնաւորն* Յունան *ի խնդիր ելեալ լուսազարդ տառիս և ետ զսա կրկին նորոգել յիշատակ բարի իւրն և ծնաւղացն իւրոց*...։

525

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 6933

Գրիչ՝ Յոհանէս
վայր՝ Խիզան, Գամաղիէլի վանք

365 բ *... [Գրեցաւ սուրբ աւետարանս] ի մեծ թուվականիս Հայոց*
ՊՁՁ. (1437), ի կաթուղիկոսութեանն Հայկազեան տեառն տէր Կոս-
տանդեայ *Կիլիկեցւոց, զոր տէր աստուած պահեսցէ զսայ յամենայն*
ներգործութենէ սատանայի և բարձրացուցանէ զաթոռ հայրապետու-
թեանն, ամէն։
366 ա *Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս այս ի վանքս, որ Գամա-*
ղիէլ կոչի, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Գամաղիէլի, ձեռամբ յոգ-
նայմեղ Յոհանէս *րանախնդրի՝ սուտ և ախմար և անարժան գրչի։ Եւ*
իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան, և բազում մեղաց ցնո-
րիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մար-
դասէր հոգին սուրբ, բազում աշխատասիրեալ իմ ի սմա, դրեցի անար-
ժան ձեռաւք իմովք յընտիր և ի ստոյգ աւրինակէ, կենաւք տառա-
պանաւք և բազում պանդըխտութեամբ, ի գառն և ի նեղ ժամանակի,
յիշատակ Թումաին, *և իւր կողակցին* Հռիփսիմին, *և դեռաբոյս զաւա-*
կացն Աբրահամու, Գրիգորին *և* Յակոբին, *և քուերն* Թանկ-խաթունին,
և եղբարցն Թադէոս *քահանային,* Մարտիրոսին, *և* Յովանէսին, Անդո-
նին, *և* Մխիթարին, *քուերն* Մարգարիտին, *և ծնաւղացն* Գորգուն *և*
Թանկ-խաթունին: *Գրեցաւ սուրբ աւետարանս յիշատակ սոցին ի վա-*
ելումն, զոր տէր աստուած Յիսուս Քրիստոս վայելել տացէ, ամէն։
Եւ որք կարդայք կամ աւրինակէք աստուած-ողորմի ասացէք Աբրա-
366 բ համ || ուն *և իւր ծնաւղացն, և որ ասէ աստուած-ողորմին և աստուած*
իւրն ողորմի, ամէն։

Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, յիշեցէք ի Քրիստոս աստուած զԹումէն, *և զծնաւղսն իւր* զԳորգն *և* զԹանկ-խաթունն...:

Արդ, ես՝ յերեսս անկեալ մոխրաթաւալ և արտասուաթոր աչօք, կողկողագին պաղատանաւք, յուսապատար հաւատով աղաչեմ զձեզ, ո՛վ լսողք, անմոռաց յիշմամբ յիշեցէք ի Քրիստոս աստուած և բոլոր սրտիւ աստուած-ողորմի ասացէք ինձ՝ մեղապարտ գրչիս Յոհանէս

• վարդապետիս, և ծընաւղացն՝ հօրն ՎարդաՃիՃ և մօրն ԴիլշատիՃ, և հանգուցեալ ի Քրիստոս եղբաւրն ԽերաաՃետիՃ...:*

526

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 5285

Գրիչ՝ Խաչատուր
վայր՝ Սորոյ վաՃք

372 ա ... Ցերեսս անկեալ աղաչեմ ըզքեզ սուրբ Աստուածածին... ողորմեա բազմամեղ Խաչատուր աբեղայի՝ գրողի երգարանիս, անիմաստ և ճելագարի, զի յոյժ անպիտան և անարժան ծառայ եղայ տեառն իմ Յիսուսի Քրիստոսի, ա՜, զի ողորմի և ինձ յաւր անեկի։

Արդ, գրեցաւ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, որ կոչի Սորոյ վանք, թվականիս Հայոց ՊՁԶ. (1437)։ Ո՛վ հանդիպողք, անմեղադիր լերուք սղալանաց և խոշորանաց...։

Այլ և աւրինակի տըւօղին՝ ՍեթուՃ և իւր ծընաւղացն ողորմեսցի տէր աստուած, ամէն, եղիցի, եղիցի։

527

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆՔ

Բոդլեան գրատուն Ms. Arm. B. 1**
Մատենադարան, «Անհատական արխիվներ», թղթ. 119, էջ 496,
ինչպես նաև՝ ՀԱ, 1938, սյուն. 69—70

Գնող՝ Ֆրա Յօսէփ

Ցանուն աստուծոյ. յամի տեառն ՌՆԼԷ. (1437), յունիս ԺԹ. (19), ես ֆր. Յօսէփ վարդապետս և վերախնամողս գնեցի զարտաքինքս ի մեր հալալ ընչից ի տէր ՅոհաՃէս եպիսկոպոսէն՝ ԺԱ. (11) Թ[ա]Ճ[կայ], միջնորդութեամբ ֆր. ԳրիգորիՃ և ֆր. ՋուաՃիՃ ծաՃկեցո, և վկաութեամբ Գրիգորի վարդապետի և ֆր. Մխիթարչի և ֆր. ՋուաՃիՃ և Թաքէոսի և Մկրտչի և ՄաՃուէլ տղոցն։ Եւ թիւ ամաց մեր [եղ]և ի սոյն ամի ԽԹ. (49) ամ, և ՋՃաՃշաՃ թագաւորն։

528

ՏԱՂԱՐԱՆ

Ալիշան, Հայկարան

Ի թվիս Հայոց ի ՊՁԶ. (1437) և հոկտեմբեր ամսոյ, ի Քրիստոս մեռաւ վարպետն Սըմբատ երէց։

---

* Հիշատակարանը հասել է մեզ ոչ իր բնագրով, այլ 1486 թվականի ընդօրինակությամբ։ Այդ թվականին Աբրահամ քահանան ձեռք է բերել գողացած ձեռագիրը և գրել է «Ցեա գողանալոյն»—հիշատակարան։ Գրչի հիշատակարանը, հավանաբար, մաշված և ջնջված է եղել, ուստի նա նորից արտագրել է այն։

** Ձեռագիրը մագաղաթյա պահպանակների հավաքածու է, հիշատակարանը վերաբերվում է փիլիսոփայական նյութերի մի ժողովածուի։

529

ՄԱՇՏՈՑ

Երևան 8358

Գրիչ՝ Մաթէոս

224 ա Գրեցաւ գիրքս և մաշթոցս ե աստուածարանս և ամենայն աւրի-
նաց կատարումն ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Մաթէոս քա-
հանայի, որ կոտարեցաւ ի դուռն Գաւթայ սուրբ գերեզմանին, ե
Գոհարա սուրբ Նշանին, և այլ ամենայն սրբոց, որ աստ կան հա-
ւաքեալ։ Եւ ի հայրապետութեանն տէր Աբգարին, ե եղբաւրն՝ սրբա-
սնեալ քահանային տէր Պետրոսին, և այլ ամենայն սուրբ և ընտրեալ
կրաւնաւորացդ։ Եւ այլ ես աղաչեմ զամենեսեան, ով որ հանդիպիք
սմա տեսլեամբ՝ կարդալով, աւրինակելով կամ շ[ուշ]ափելով՝ Թողու-
Թիւն շնորհել Մաթ[էոս] քահանային և ծնողաց իւր և ամենայն արեան
224 բ մերձաւորաց, յիշելով ի մաքրափայլ յ || աղաւԹս ձեր զգծող սորին և
զտշխատացեալ հոգին, որ աստ պապաքեալ և նուաղեալ և յանկ հան-
եալ, ամէն։

... Արդ, եղև գրուԹիւն [այ]սմ ամի, որ էր Թիւ Հայկազան ի
ՊՁՁ. (1437), ձեռամբ սուտան[ուն կր]աւն[աւ]որ Մաթէոսի:
| | | ստացող վկաարանիս | | | Կարապետ տնտեսին | | |

530

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 6283

Գրիչ՝ Յակոբ Տրապիզոնցի
Վայր՝ Տրապիզոն

436 բ ... Աշխարհասէր մարդկան՝ ընչից ցանկացեալ բազում ջանիւ
յայլմէ յայլ գաւառ անցանեն, որպէս զի զշահն աճեցուցանել կարաս-
ցեն, ոմանք լայնատարած ծովու ծփանաց զանձինս առեալ, փրփրադեզ
խսրոցն անդընդապտոյտ ալեացն արտաշնչութիւնն կարծիւք զմեծա-
նալոյն շահն առաջի աչաց ունելով համբերեն ամենայն վշտաց, իսկ
այլք սատրիջիւք յատակս ծովուն առ ի խնդիր լուսափայլ մարգար-
տաց, լաւ համարելով զմահ անձանց քան զվատիցն անուն ժառան-
գել, որ և յոլով անգամ ի շահելն զանշահութիւն կենաց շահին։ Բայց
մեք յիշատակեսցուք զանուանս այնոցիկ, որ դրեալ է ի դպրութիւն
կենաց, որք ծանեան հոգով ե իմացան զստութիւն կենցաղոյս, և
Թողեալ կամաւ զվայելչութիւն և զմեծութիւն և զփառս՝ ակն ունե-
լով առ յոյսն ամենեցուն Քրիստոս, ելեալ ընակեցան ի յայրս ե ի
ծերպս վիմաց, անդ բազում ճգնութեամբ անցուցանէին զամենայն
ժամանակս կենաց իւրեանց՝ ի ցուրտ և ի տաւԹ, և ամենայն փոր-
ձանաց սատանայի ժուժկալեալք լինէին։ Նաև մարտիրոսք յաւժարու-
Թեամբ դիմէին ի սուր և ի հուր, և ի յայլ ամենայն զարհուրելի

տանջանս և ի սոսկալի մահնէին զանձինս կամաւ՝ վարդագոյն ար-
եամբ ներկեալ զմահ ճաշակէին վասն երանաւէտ կենացն և անթառամ
պսակացն արժանի լինէին, որ կա պատմութիւն սոցա ի լիակատար
ճառս սոցա, զոր յետոյ կարգեալ եղև բովանդակ տաւնք սոցա աշ-
խատութեամբ տէր Իսրայէլի, ի խնդրոյ Ջալա[լ]-Դաւլային՝ տեառն խա-
437 ա չենոյ, հրամանաւ || Վանական վարդապետի և հարազատին Գրիգորոյ՝
տէր Իսրայէլի։ Զի նոքա հրամայեցին նմա հայելով ի համբերութիւն
և ի հնարիմաց գիտութիւն նորա, զի ջանս եդեալ գտցէ զաւր նահա-
տակութեան սրբոցն, որ դրեալ կա ի լիակատար պատմութիւն նոցա,
համառաւտելով նմա զսքանչելի կատարումն սոցա եդ ընդ այլ կարգի
և զԱյսմաւուրս, զոր միաշունչ եղեալ անսխալ զտարին կատարեն։
Բայց ոմանք յանդէտս եղեալ հակառակին այսպիսի գեղեցիկ և սքան-
չելի ընթերցմանց, որ յամենայն աւր զլսելիս մեր զարհուրեցուցանեն,
և դողումն ցաւագին տան անձանց մերոց և ճանաչել իմանամք, թէ
այնպիսեացն է արքայութիւնն աստուծոյ։ Եւ զայս մտաւ ածեալ
խորհիմք, թէ մեզ զի՞նչ լինիցի՝ ծուլիցս և հեղգացելոցս։ Այլ միայն
յայս աղաւինեալ՝ յաւժար սրտիւ տաւնելով զյիշատակ սրբոցն և բա-
րեխաւս առնել առ աստուած, զի հաշտեսցի ի մեզ և բարձցէ զպա-
տուհաս մեղաց մերոց. տաւնք ըստ Հայոց և ըստ Հոռոմոց ամսոց,
յիշատակ և վարք և վկայութիւնք ամենայն սրբոց, զոր կատարէ
եկեղեցի ի փառս Քրիստոսի։ Բայց գիտել պարտ է, թէ այն, որ ասէ
յիշատակ՝ միայն յիշատակ է սրբոց, զոր պատմութիւնն յիշէ վասն
պիտոյից, իսկ այն, որ ասէ վարք՝ զայն յայտ առնէ, թէ առաքինու-
թեամբ և հաճոյական վարուք ճգնեալ սուրբքն հանգեան ի Քրիստոս,
իսկ որ ասէ վկայաբանութիւն՝ յայտ է թէ արեամբ նահատակեալ
սուրբքն վկայութեամբ կատարեցան ի Քրիստոս։ Եւ դուք եղբարք,
անխարդախ ընկալարուք սիրով և ընթերցեալ ուրախասջիք ընդ պը-
սակիլ մարտիրոսացն, որք բարեխաւս են առ տէր վասն մեր, զի ընդ
նոսին ընկալցուք զպսակն անթառամ ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ,
437 բ որ է աւրհնեալ։ || Վասն որոյ փափագող եղեալ այս մեծազարդ սաղար-
թափթիթ ծաղկաւէտ բազմաբեղուն բուրաստանիս պատուելի և հոգե-
սէր բարեպաշտն պարոն Ստեփաննոսն և ետ գրել յիւր հալալ վաստա-
կոցն յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և ամենայն մերձաւորացն։
Արդ, աղաչեմք զձեզ, ո՜վ որդիք նոր Սիոնի և մանկունք սուրբ եկե-
ղեցոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք
սրտի մտաւք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զպարոն Ստեփաննոսն, և
զհամեստ կողակիցն իւր զՌուստիանէն, և զծնաւղսն իւր զպարոն Յո-
վանէսն, և զԳուհար-Մելիքն, և զիւր պապն զպարոն Ամիրշան, և զմամն
իւր զՄարթա-խաթունն, և զմաւրքուրն իւր զՄաքի-Մելիքն, և զպարոն
Գալուստն, և զպարոն Ստեփաննոսն, և զայլ ամենայն արեան մերձա-
ւորսն՝ զկենդանիսն, զհանգուցեալսն, և թողութիւն մեղաց խնդրել
յամենագութ արարչէն, զի վասն այս յուսոյս ետուն դրել...։ Արդ,
եղև կատարումն սուրբ գրոցս ի թվ. ՊՁԶ. (1437). ի յանապատս
Տրապիզոնու, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս և սուրբ Յովհաննիսիս, ձե-

ռամբ անարժան և մեղաւք մեռեալ ոգոյ՝ Յակոբ Տրապիզոնցի անուամբ կրաւնաւորի։

Արդ, երես անկեալ աղաչեմ զսուրբ ընթերցողսդ յիշել ի բարի
մասին և լի սրտիւ զաստուած-ողորմին ասել անարժան գծողիս Յա-
կոբ աբեղիս Տրապիզոնցի, և ծնաւղաց իմոց՝ Պետրոս Թանանուշին և
զԳայիանէն՝ զփոխեցեալսն առ Քրիստոս, և զհարազատ եղբայրքն՝ զԹու-
438 ա մանն և զՄարգարէն, և այլ ամենայն մերձաւորաց իմոց, և մե || զաց
թողութիւն հայցեցէք...։

Արդ, երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ ընթերցողք սուրբ գրոցս, անարհեստութեան և խոշորութեան և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս չափ էր, զպակասն դուք լցէք և զյաւելորդն ի բաց ընկեցէք, և թողէք զմեզ առանց տրտնջանաց, աղաչեմ զձեզ։

Եւ դարձեալ, աղաչեմ զձեզ յիշեցէք ի բարի մասին զհամշիրակ զհոգևոր եղբայրն իմ՝ զառաջնորդ սուրբ ուխտիս Ամենափրկչիս և զվերատեսուչ քաղաքիս Տրապիզոնու՝ զտէր Յոհանէսն արհեպիսկոպոսն, և զերկրորդ ծնաւղն իմ զտէր Ղազար Դրիմեցի՝ զգրոց աշակերտն, և զայլ ճգնազգեաց զսրբասէր զկուսակրաւն կրաւ[նաւ]որքն՝ զՂազարն, և զՄարտիրոսն, և զՍերուճն, և զՅովանէսն, և զայլ միեղէն եղբարքն՝ զԿիրակոս սարկաւագն՝ զկոկոզ նամակիս սուրբ գրոցս, և զՍարգիս տնտեսն, և զ[Գրիգ]որ հովիւն, և մեղաց թողութիւն խնդրեցէք...։

Այլ և երես անկեալ աղաչեմ զսուրբ ընթերցող[սդ] յիշել սրտի
մտաւք զստացող սուրբ գրոցս զպարոն Ստեփանոսն, և զհամեստ կո-
ղակիցն իւր զՈւստիանէ խաթունն, և զծնօղսն իւր՝ զպարոն Յովանէսն
և զԳուճար-Մելիքն, և զպապն իւր զպարոն Ամիրշան, և զմամն իւր՝
զՄարթա-խաթունն, և զմաւրքոյրն իւր զՄարի-Մելիքն, և զԳալուստն, և
438 բ զՍտեփանոսն... || և ետ յիշատակ ի վերի Աստուածածինն...։ Ոչ ոք
չունի իշխանութիւն հանել զգիրքս զայս ի սուրբ Աստուածածնէն, ոչ
ի մերոց և ոչ յաւտարաց, և թէ ոք յանդգնի՝ պատիժս կրեսցեն յաս-
տուծոյ և յամենայն սրբոց, ամէն։ Խնամով պահողքն աւրհնին յաս-
տուծոյ և յամենայն սրբոց, ամէն։

Եւ զյորդորողն ի բարի և զկամակիցն սուրբ գրոցս զՅեափլպէկ սարկաւագն յիշեցէք ի բարի մասին, որ յորդորեաց զպարոն Ստեփանոսն, և նա ետ գրել, և եդ ի վերի Աստուածածինն յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, և դուք յիշեցէք ի Քրիստոս։

531

ՄԱՇՏՈՑ

Երուսաղէմ 296

Գրիչ՝ Ղազար Դրիմեցի

վայր՝ Տրապիզոն

Գրեց Ղազար Դրիմեցի ի ՊՁԶ. (1437) թուին, ի խնդրոյ տէր Յովանէս Նորընծայ Տրապիզոնի եպիսկոպոսի։*

* Այս և հաջորդ համարի տակ բերված է միայն հիշատակարանների բովանդակության համառոտ շարադրանքը, կատարված է Մ. Տէր-Մովսիսյանի կողմից։

532

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Երուսաղէմ 1210

Գրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Անկիւրիա

Սրա գրիչն է Ստեփանոս, յԱնկիւրիա, ի թվ. ՊՁԶ. (1437), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և յեպիսկոպոսութեան տէր Յովսէփայ, ի խնդրոյ Նիկոլայ սարկաւագի։ Յիշատակուած են նաև Նիկողոս եպիսկոպոս Աքերմանի, Մարտիրոս եպիսկոպոս, տէր Սահակ կրօնաւոր, և տէր Թորոս աթոռակալ։

533

ՀԱՄԱՌՕՏ ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երեւան 1394

Գրիչ՝ Աւգսէնտ
վայր՝ Ղրիմ

ա

151 ա Զստացաւղ սուրբ գրոցս զտէր Սարգիս րաբունապետն և զփցուն գրիչս զԱւգսէնտ սուտանուն կրաւնաւորս յիշեցէք...։
Գրեցաւ թվ. ՊՁԶ. (1437)։

բ

363 բ Զփցուն գրիչս զԱւգսէնտ սուտանուն աբեղայս, որ զգիրքս ծաղկեցի, աղաչեմ յիշել ի տէր։

534

ՃԱՌԸՆՏԻՐ

Ալիշան, Հայկաբան (Կ. Պոլիս)

Գրիչ՝ Աւգսենտ
վայր՝ մերձ ի Կաֆայ

Գրեցաւ Տօնացոյցս յաշխարհս Ղրիմ, առնթեր մեծի մայրաքաղաքիս Կաֆայ, ի թվ. Հայոց ՊՁԶ. (1437), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և յեպիսկոպոսութեան տէր Կարապետի, ձեռամբ անպիտան գրչի Աւգսենտ կրաւնաւորի, ի վայելումն Յակոբ քահանայի և ի յիշատակ կենակցին իւրոյ Ջոհար-Մելիքին, և զաւակացն իւր։

535

ԾԱՇՈՑ

Ալիշան, Հայկարան

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Արծկէ

Գրեցաւ... ձեռամբ Յովհանիսի *սարկաւագի* | | | *քաջ և տիեզերալոյս վարդապետիս* Թոմայ, *որ քանուն և վերատեսուչ քահանայից, վարդապետաց և եպիսկոպոսաց և ամենայն ժողովրդոց, ի խնդրոյ մահտեսի* Ամիր-Փաշայի... *յիշատակ ծնողաց՝* Պարոնի *և* Մամա-Տիկնայ | | |, *զի կարգեալ է զսա որբոց հարցն ե սուրբ վարդապետին* Գէորգեայ *ի սուրբ ուխտն, որ կոչի* Դրազարկ, *ի սահմանս* Կիւլիկեցւոցն | | | *սուրբ եկեղեցիք։ Իսկ երջանիկ քահանայն* Տիրացու *ի քաղաքէն* Մշոյ, *որ կարողութեամբ աստուծոյ և հրամանաւ երանեալ վարդապետին* Ստեփանոսի, *որ ի վանս* Իննակնեան, *որ յանուն սուրբ Կարապետին, ի գաւառին* Տարաւնոյ, *զայս ամենեցուն բազմութիւն ծաղկանց ի հոգւոյն սրբոյ գալստեան օրէն մինչև ի մեծ պահս ազուհտցից շարագրեաց ի վայելումն և ի պայծառութիւն սրբոց եկեղեցեաց...։*

Գրեցաւ սա ի հայրապետութեան մեծ աթոռոյն տէր Կոստանդեայ *ընդհանուր Հայոց կաթողիկոսի, և յառաջնորդութեան աշխարհիս մերոյ քաջ և րաբունի ճգնաւոր վարդապետի* Թովմայի Մեծոփեցւոյ, *ի դառն և ի չար ժամանակիս, յորում եկն ազգն Զաղաթից** *թագաւորութեան* Շահռուխին, *և փախոյց* զՍքանդարն, | | | *և հեծեալըն* Շահռուխին *եկն ի վերայ ամրոցին* Շամիրամայ, *որ է բերդն* Վանայ, *զի* | | | *անդ Էր] եղբայրն Սքանդարին* Ջհանշահուն, *և նա ել ի բերդէն և գնաց առ* Շահռուխն, *և նա ներեաց զսա, և ետ զթախտն թամանովս, և գնաց։ Եւ* Սքանդարն *դարձաւ և փախոյց զեղբայրն և նստաւ ի թախտն։ Եւ մնաց ի պարոնացն* Ջհանշին *մին անիծեալ* Փիր-Ալի *անուն ի բերդն* Ամկու, *և հանապազ ելանէր ի բերդէն և գայր ի վերայ երկրիս* Արճշայ *և* Արծկայ. *չարչարէր, զոմանս սպանանէր և զոմանց զաղայսն գերի առնէր, և ծնողքն աղէխորով սրտիւ այրվէին և օգնել ոչ կարէին անմեղ գառանցն իւրեանց։*

---

* *Ալիշանի «Հայկարանից», ինչպես արդեն հայտնել ենք առաջաբանում, օգտվել ենք միջնորդությամբ Մ. Տեր-Մովսիսյանի Ձեռագրաց ցուցակի։ Այստեղ «Զաղաթից» բառի փոխարեն, անշուշտ վրիպակով, դրված է «բուլղարից»։*

Եւ առաւել կսկիծ տեսաք, որ մին տանուտէր և Գ. (3) տղայ և Բ. (2) կին ի մին տանէն հանել ոչ կարաց. և անօրէնքն զտունն և զնոսա անգ այրեցին, որպէս քաջ նահատակ...։*

Ցայժմ չար ժամանակիս սկսաք զգիրքս ի քաղաքի Արծկէ, ընդ հովանեաւ ամենամաքուր Աստուածածնիս և պատերազմի սուրբ Նշանիս...։

536

ՃԱՇՈՑ

Փիրդ. Նոտ. 115-116, Ալիշան, Հայապատում, Բ, էջ 557-558

Գրիչ՝ Յովհան
վայր՝ Հաղբատ

...Արդ, ես՝ Աստուածատուր մեղապարտ էրէց՝ բազում ժամանակաց այրի, ի Կոտեւոց երկրէն, ի գեղջէն Արծնոյ, ցանկացող եղէ այս հոգելից տառիս ի դառն և ի նեղ ժամանակիս, որ որդի մեծի խորազմին Թամուրին՝ Շահռուխ կոչեցեալ, չորս անգամ բազում հեծելօք, անգութ և անագորոյն և աննողորմ և ծարաւի արեան քրիստոնէից՝ եւեկ ի վերայ աշխարհիս Թավրիզոյ, որ բազում և անասելի աւեր ած ի վերայ աշխարհիս Հայոց։ Զի զոր սրով կոտորեաց, և զոր անողորմ գերի վարեաց և կորոյս, և զոր սովամահ եղան, և զոր մահն տարաւ, և զորս գայլք և գազանք կերան և պատառեցին, և մնացեալքն այսր և անդր փախեան ընաջինջ և մտին յաշխարհն Վրաց: Եւ ամենևին անմարդաբնակ մնաց և աւերեցաւ աշխարհն մեր, և դրունք երկնանման տաճարաց փակեցան, և լոյսք և կանթեղք շիջան և խաւարեցան, և խունկք և նուէրք պակասեցան, և աղօթք և երգք սաղմոսաց պակասեցան և դադարեցան, և մատուցմունք պատարագաց և ամենայն սրբութիւնք եկեղեցւոյ՝ խաչ և աւետարան. և ամենայն հանդերձեղէն, սպասք եկեղեցւոյ ի ձեռն այլազգեաց գերի մատնեցան։ Եւ մեծ սուգ և ողբ և տրտմութիւն և կսկիծ հասաւ Հայոց եկեղեցեաց. և եղաք որպէս հինն Իսրայէլ՝ կոխան և այպն կատականաց ամենայն ազգաց, և այս ամենայն հասաւ և եկն ի վերայ մեր վասն ծովացեալ և անառակ և անզգարձ և անզեղջ մեղաց մերոց։

Ցայս դառն և կսկծալից ժամանակիս, կարի աղքատութեամբ և չքաւորութեամբ ետու գրել զգիրքս ի յօտար երկիրս Վրաց, ի ձեռս Յոհանէս քահանայի, ի վանքս Հաղբատայ, առ դրան սուրբ Նշանիս,

* Փիր-Ալու խժդժությունների մասին խոսում է նաև Թովմա Մեծոփեցին (տես «Պատմութիւն», էջ 110-111)։ Նա գրում է. «Բայց եւ զայս գիտելի է, զի ի սոյն աւուրս պիղծ իշխանն Փիրալի անուն, որ նստէր ի քարն Ամկու, երեք անգամ ի սոյն ամի զերկիրն Արճիշու եւ Արծկու գերեաց եւ կողոպտեաց. եւ ի գիւղն Զերիշատ զձեանաւորն Մկրտիչ անուն ութն մարդով ընտանեօք տան իւրոյ ի հուրն այրեաց։ Եւ բարեպաշտ ձեռնաւոր մի Յովհաննէս՝ սպան ի գիւղն Ասպիսնակ։ Եւ եղբայր մի ծառայիս Արիստակէս անուն ի հուրն խորովեցին իբրեւ զգառն անմեղ»։

և սուրբ մայրաքաղաք խմբարանիս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Գրիգորիս, առ դամբարանի սուրբ վարդապետաց և սուրբ հայրապետաց, և մեղսաքաւիչ և աստուածարնակ սուրբ տաճարացս, ի յառաջնորդութիւն աէր Զաքարիա արհեպիսկոպոսիս, և ի Թագաւորութեան Վրաց Ալեքսանդրէի, և պարոնութեան տեղւոյս և նահանգիս Լոռոյ՝ մեծափառ և աստուածասէր իշխանաց իշխանիս՝ պարոն Բէշքենին յազգէն Օրբէլեանց, Թոռին մեծ պարոնին Բիւրթէլին, ի Թուականիս հայկազեան տումարիս ՊՁԷ. (1438) ամին։

537

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Ղուզիգիտան գիւղ, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Ախալցխոյ երկիր

...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի Վրացտունս... յերկիրս Ախալցխոյ, ի վանքս պարոն Յակոբայ, ի մեծ Թուիս Հայոց ՊՁԷ. (1438), ընդ հովանեաւ սուրբ Հրեշտակապետին, ի ժամանակիս յորում Շահռուխն երեկ ի վերայ Սքանդարին, և նա փախեաւ և գնաց մինչև Սևաստ, և բազում գաւառք աւերեաց, և զբազումս յազգէ Հայոց գերի արար և երեր, բազումք ի մերկութենէ և ցրտոյ ի սարին մեռան, և բազումք սովամահ եղեն։ Եւ ինքն գնաց ի վերայ Ջհանշին, և ի նորա զաւրութենէն հեծելն ամէն յեզբայրն դարձաւ, և նա փախեաւ ի յեղբաւրէն՝ ի Ջհանշահէն, և ամրացաւ ի յամուրն Երնջակայ, և ընկալաւ զհասն ի յաւիտենական տանջանացն...։

Այլ և կրկին յիշեցէք զստացող սուրբ աւետարանիս զբարեմիտ ճգնաւորն զԿարապետ... և զիս՝ զմեղապարտ գծաւղս՝ զՍարգիս պիտակ անուն վարդապետ, և զծնաւղսն իմ, և զհոգևոր որդիս մեր զԳրիգոր քահանայ, և զեղբայրս զԿարապետ քահանայ, որ զաւրինակն շնորհեաց...։ Այլև սխալանաց և խոշորութեան անմեղադիր լերուք, զի ի դառն և ի վշտաշատ ժամանակի գրեցաւ և մեք լի տրտմութեամբ կայաք։

538

Ց Ա Յ Ս Մ Ա Ւ Ո Ւ Ր Ք

Փիրդ. Նոտ. 117, Նշխարք (№ 4515), էջ 149 Նարեկան, Վանիկ գիւղ

Գրիչ՝ Կիրակոս
վայր՝ Բաղէշ

...Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... Կիրակոս | | | * կատարեցի ի վանս] Հինգ խորան, ի հայրապետութեան տեառն Կոստան-

* Երեք տող՝ մշակված։

դեայ, և մեր առաջնորդութեան (Բաղիշոյ) տէր Ստեփաննոսի, և ամիրութեան քաղաքիս Շեխ-Մահմատին, և ղանութեան Ջհանշայ միրզին, որ յայսմ ամի Սքանդար՝ եղբայր նորա սպանաւ ձեռամբ որդւոյ իւրոյ, և նստաւ ի թաղթն Ջհանշէն, և ի թուականիս Հայոց ՊՁԷ. (1438),

Զստացող գրոյս՝ զբարեմիտ տիկին Դբիմ-խաթուն, և զայրն իւր զԱպտլէն [յիշեցէք]... որ եդ ի դուռն սուրբ Աստուածածնին և Գէորգայ զօրավարին... և Կիրակոս գրչիս, և իմ ծնողացն էլէքսան քահանային և Եղիսաբեդին,... և կողակցին իմոյ Քնքուշ-խաթունին:

539

ԲԺՇԿԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԲԺՇԿԻ

Վիեն. 310. Տաշ. Ցուց., էջ 740

Կազմող գրոյս* Աբրահամ

ա

10 ա Զսակաւագիծ աշխատողս եւ կազմողս գրոյս զԱբրահամ Նուաստ աբեղայս աղաչեմ յիշել ի տէր՝ ի մեղաց թողութին, եւ աստուած յիշողացդ ողորմեսցի, ամէն։

բ

310 ա Զվերջի կազմողս եւ զաշխատողս գրոյս՝ զԱբրահամ բազմամեղս աղաչեմ յիշել ի տէր սրտի մտաւք...։ Ընդ նմին եւ զկազմել տվող զՅովանն էս հէքիմս եւ զհայրն իւր զհանգուցեալն ի Քրիստոս՝ զվարպետ Սկանդարն յիշեսջիք...։
Կազմեցաւ ի թվին Հայոց ՊՁԷ. (1438)։

գ

01 բ Աստուած ողորմայ Սկանդարին հոգուն՝ հաքիմինն։**

540

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 7839

Վայր՝ Տըփխիս

ա

357 ա ...Արդ, գրեցաւ սա*** ի թուականութեանս Հայոց ՊՁԷ. (1438), ի մայրաքաղաքս Տըփխիս, ընդ հովանեաւ սուրբ և հրաշափառ կաթուղի-

* Իմա՝ հավաքող, խմբագրող։
** Ունի մի քանի այլ աննշան հիշատակագրություններ ևս։
*** Հիշատակարանի սկզբի մասում ձեռագիրը կոչվում է «Երաժշտական սուրբ սաղ, որ կոչի Գանձարան»։

կէին սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն Կոստանդեա, և ի թագաւորութեանս Վրաց Աղէքսանդրէի աստուածասիրի և բարեպաշտի, զոր տէր աստուած պահեսցէ զսա անփորձ կենաւք և պարագայց ամաւք՝ զաւրաւք և զաւակաւք իւրովք՝ ի վանումն և ի
357 բ հերքումն անաւրինաց խըմրից ‖ և ի հաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ։

Արդ, որք հանդիպիք սմա երգելով, կամ աւրինակելով, կամ տեսութեամբ, յիշեսջիք ի մաքրափայլ և ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր զյառաջասացեալ սաացաւղ սորին զԴաւիթ կուսակրաւն քահանայ*, և զհայրն իւր զԱւետիս քահանայ, և զմայրն իւր զԽուզան, և զեղբայրսն զՆերսէս և զՍիմէոն՝ զփոխեցեալսն առ Քրիստոս, և զմնացեալ եղբայրն զԱբել, և զսիրելի որդին իւր ըստ հոգւոյ,** և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զննջեցեալսն…։

Ընդ վերոյգրելոցս յիշեսջիք և զերջանիկ և զսրբակրաւն զհայր մեր ըստ հոգւոյ զտէր Սարգիս փիլիսոփայն՝ զփակակալ և առաջնորդ սուրբ Կաթուղիկէին՝ զգծագրող սորին, և զիս՝ զանարժան ծառայս ծառայից աստուծոյ, որ զսակաւ պակասորդս գրեցի, հանդերձ ծնողաւք և ազգականաւք, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

| | |մրխութուն ապաշխարողն յիշեսջիք ի Քրիստոս, որ աւգնական եղև ի ծախս սորին։

Բ

Հետ. ստացող՝ Գուլշար

358 բ …Արդ, երես անկեալ աղաչեմ զձեզ, ով դասք լուսեղէն, որ ամէն տաւնի և տաւնականի զյիշատակարանս կարդայք և մէկ բերան աստուած-ողորմի ասէք Սուրխենց հին և նոր ննջեցելոց, ամէն։

Արդ, ես՝ Գուլշարս առի սուրբ Գանձարանս իմ հաւրանց գերեզմանատան՝ ի սուրբ Կաթողիկէն, իւր ննջեցելոց հոգոյն համար, որ ամէն տարի յիշատակուին մեր ղարիպ ննջեցեալքն։ Եւ ոչ ոք ունի իշխանութիւն հանելոյ զգիրքս ի դրանէ սուրբ Կաթուղիկէիս, ոչ իմոց, և ոչ աւտարաց, ոչ եպիսկոպոսէ, և ոչ քահանայից, և ոչ աշխարհականաց, զի ազատ է գիրքս այս, ով ոք որ անտքնի, կամ յայտնի լրրութեամբ, կամ գողանալով, կամ բաշխելով, կամ ծախելով՝ դատի յաստուծոյ և ամենայն սրբոց, և զհուրն անշէջ առցէ, ամէն։***

* Հիշատակարանի սկզբի մասում լրացուցիչ ասված է, որ Գաւիթը «յետ ստանալոյ բազում տարից հին և նոր կտակարանաց, յաւել և զսա ի գանձս աստուածայինս»։

** Անունը ջնջված է։

*** Հնագրական տվյալների համաձայն հետ. ստացող Գուլշարի հիշատակարանը գրված պետք է լինի ԺԶ. դարի կեսերին։

541

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նոա. 117, Սերաստիոյ ս. Նշան

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Գորի մայրաքաղաք

…Գրեցաւ սուրբ աւետարանս ի մայրաքաղաքն, որ կոչի Գորի *ի Թագաւորութեան Վրաց* Աղեքսանդրոյ, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի Թուին ՊՁԷ. (1438), ձեռամբ* Յոհաննէս *գրչի, ի խնդրոյ տէր* Մատթէոս *քահանայի…։*

542

ՄԱՇՏՈՑ

Երեւան 1042

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Մուխրան, ի գեղս, որ կոչի Վարդիսուպան

ա

224 ա *Քրիստոս աստուած… ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց՝ զեղկելի* Կարապետ *աբեղայիս, և զհայրն իմ* զՈվանէս *քահանայ, և զմայրն իմ* զԱզիզ, *և զուսուցիչս իմ զտէր* Սարգիս, *որ շատ երախտաւոր է մեզ, ուրհնութեամբ եղիցի, ամէն։ Եւ զհայրեղբարս իմ* զԱկոր, *և զամուսինն իւր* զԱյմելիքն, *և զորդին իւրեանց* զԱրղունշայն, *և զքեռին իմ* զԻալն, *և զորդին իւր* զՅովսէփ, *և զփեսայն իմ* զԻշխանն, *և զքուրն իմ* զՈւստիանայն, *և զորդին իւր* զՇարիարն, *և զսանայհայր իմ՝* զՃանազիզն, *և զսանամայրն իմ՝* Սուլթանն, *և այլ զամենայն երախտաւոր,* Քմիկս, *որ շատ կու ծառայէ մեզ, և ամենեքեան ուրհնեալ աստուածոյ ի մէնջ, ամէն։*

Գրեցաւ գիրս ի Թվականի Հայոց ՊՁԷ. (1438) էր, ի Մուխրանիս, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի գեղս, որ կոչի* Վարդիսուպան. *երախտաւորք մեր ուրհնեալ եղիցի[ն], ամէն։*

Բ

317 բ *…Եւ զայլ ամենայն կերակ[ր]ողքս մեր, որ այս գեղումս զմեզ կերակրել են, և որ շատ և որ սակաւ՝ զվարձս առցեն ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, ամէն։ Եւ* զՔիմիկս *աղաւթս յիշեցէք, և զհերեանս մեր՝* զԿարապետ, *և զամուսին իւր՝* զՄիսրիկ, *ուրհնութեամբ եղիցին, ամէն։*

Գ

342 ա *Ձաէր* Վարդան *եպիսկոպոսն յիշեցէք յաղաւթս ձեր, ամէն։**

** Գրված է կարմիր Թանաքով, նախորդ հիշատակարաններից տարբեր գրով։*

543

ԺԱՇՈՑ

ԲՑՎ 254, ԼՑՎ 688, Լիմ

Գրիչ՝ Հերապետ խալիֆա
վայր՝ Արճէշ

...Աւարտեցաւ ... յամի ութհարիւր և ութսուն եւթներորդի թուականութեանս Հայկազեան տոհմիս տումարիս (1438), ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի սուտանուն Հերապետի, որ մականուն խալիֆա կոչիւր, ի խնդրոյ սրբասնեալ և սրբակրաւն Մկրտիչ կրաւնաւորի....

Այլ և այս գիտելի է, զանզի ունի աստուածաշունչ գիրքս այս զբոլոր մասունս տաւնից տէրունականաց, զոր սուրբ հարքն հաստատեցին... զոր մեծաջան և ծանր աշխատութեամբ հաւաքեալ եղև ի սրբոց վարդապետացն, զորոյ և Տիրացու քահանայն Մըշոյ յետոյ ի մի գիրս ժողովեաց, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։

Արդ, գրեցաւ աստուածաշունչ կտակս ի քաղաքս, որ կոչի Արճէշ, ընդ հովանեաւ Տիրամաւր աստուածածնի տաճարիս, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, կամաւք և հրամանաւ հոգևոր, բարեմիտ սրբասնեալ և կուսակրաւն Մկրտիչ կրաւնաւորի, որ ետ գրել զսա յիշատակ իւր, և հոգևոր և մարմնաւոր ծնողաց իւրոց Խնդուին և Խութլուին, և հաւրեզրաւրն իւրոյ Խոցադեղին, և կենակցին Լի-Տիկնոջն, և որդւոյն պարոն Մկրտչին, և եղբաւրորդւոցն Խնդուին և Հերապետին, և քուերն իմոյ (*) Փաշա-Մելիքին, և եղբարց իւրոց Յովանիսին և Կարապետին՝ հանգուցելոցն ի Քրիստոս... և դեռաբոյս զաւակին իւրոյ Մխիթարին, և Հերապետին, և զաւակին իւրոյ Սուլթան-խաթունին, և քուերորդոյն իւրոյ Աւաքելին, և դստերն Ամրար-խաթունին, և դեռաբոյս զաւակացն Յակոբին, խալիֆին, և Մխիթարին...։

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ աստուածաշունչ կտակիս կարդալով կամ աւրինակելով նաև ինձ՝ մեղապարտիս սուտանուն Հերապետի և ծնողաց իմոց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ, որ բազում աշխատեցայ ի գրել սորին։ Եւ դարձեալ զուսուցիչն մեր զքաջ քարտուղարն Թումա գեղահոգի րաբունապետն, և զբանիբուն հռետորն զԿարապետ վարդապետն, և զԿարապետ աշխարհի երէցն, որ մեզ վարպետութիւն արար և ուսոյց զմեզ, Ստեփանոս այրի քահանայն յիշել ի տէր, և զՆերսէսն, և զԳրիգոր, որ զաւրինակն շնորհեցին յիշեցէք։ Անմեղադիր լերուք սղալանաց և խոշորութեան գրիս, զի այս էր կար մեր...։

544

ԱՒԵՏԱՐԱՆ

ՀՑՎ. 92, սույն. 182, Աղթամար

Գրիչ՝ Կարապետ Աղթամարցի

300 ա Զվերջին կազմող սուրբ աւետարանիս՝ զՎարդան, և ծնողս իմ յիշեցէք յաղօթս ձեր, թվ. ՊՁԷ. (1438)։ Նաև ինձ՝ մեղսասէր և անարժան Կարապետ գրչի Աղթամարցոյ, և մեր ծնողացն, ամէն։

545

ԳԱՆՁԱՐԱՆ

«Թորոս Աղբար», Բ., էջ 452—453։
Զնքուշի սիքահայեաց ս. Աստուածածին վանք

Գրիչ՝ Դաւիթ
վայր՝ Մելիտինէ

Գրեալ ի վանս ս. Գրիգորի Մելիաինոյ Հայոց, ի թվ. Հայոց ՊՁԷ. (1438)...։ Յիշեցէք զիս՝ զԴաւիթ աբեղայս, և զհայրն իմ զԻսաճակ քահանայն,... զԿոստանդին աւագերէցն, և զաստուածատուր զաւակն իւր զԹորոս քահանայն, և զՍտեփաննոս հայրապետն, որ այժմ խնամատար և վերակացու են սուրբ ուխտիս...։

546

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 4517

Գրիչ՝ Ազարիայ
վայր՝ Կեսարիայ

ա

130 ա ...Ընդ նոսին և զստացող սուրբ գրոցս՝ զտէր Յովանէս արհեպիսկոպոսն, և զծրնօղք նորին՝ զՆերսէս քահանայն և զԽաբիր-Խաթունն, և զքըւէրքն իւր զՋմրութն և զՍանդուխտն, և զհօրեղբայրքն՝ զԿարապետ կրաւնաւորն, և զՆուրադինն, զՄաղթումն, և զԳրիգորն, զՄովսէս րաբունին, և զնորին եղբայրն զՄալիքն, և զմեղապարտ գծողս՝ զԱզարիայ, և զկարդացողդ և զլսաւղքդ [յիշեսջիք առ աստուած]...։

բ

287 ա Ո՛վ նորածին մանուկ Յիսուս... ողորմեա ամենայն հաւատացելոց քրիստոնէից, եւ առաւել ստացողի գրոց՝ պանծալի արհեպիսկոպսին Յովանիսի, և ծնողաց նորին Ներսէս քահանային, Խաբիր-

խաթունին, և քըւերն Զըմրութին, և մեծ պապուն Մանգլաւին, և Մովսէս վարդապետին, և նորին ծնողացն՝ Յիսաւին և*, և եղբաւրն Մալիքին և Մուրադին, և մեղապարտ գծողիս՝ Ազարիայի, և իմ ծնաւղացն, և ձեզ՝ կարդացողիդ և լսողացդ, և Մարգարայ կրաւնաւորին, որ աշխատեցաւ ի կոկել թղթիս, ամէն։**

547

ԳԱՆՁ ՍՈՒՐԲ ՎԱՌՎԱՌԻՆ

Փիրղ, Նօա. 116

Հեղինակ՝ Առաքել Բաղիշեցի
վայր՝ Մերձ ի Մերտին

...Որ Առաքել անուանեցայ
Եւ վարժապետ ես կոչեցայ.
Բայց ի գործոց յոյժ հեռացայ,
Այլ յոյս ի տէր Յիսուս կալայ։
Ի յութհարիւր թուականին,
Ութսուն և եօթն աւելորդին (1438),
Զրանս ասացի սուրբ Վառվառին,
Յեզր Մերտին մեծ քաղաքին։

548

ԳԻՐՔ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ՀԱ, 1924, սույն. 435—436

Գրիչ՝ Յակոբ Տրապիզոնցի
վայր՝ Կոստանդինուպաւլիս

Գրեցաւ գիրքս ձեռնադրութեան թվ. ՊՁԷ. (1438), ի վայելումն արհեպիսկոպոսին տէր Յովակիմին Կոստանդինուպաւլսի, զոր տէր աստուած վայելել տացէ յամերամս ժամանակաց, ամէն։

Կատարեցաւ հրամայեալն ի քէն, ով տէր պատուական, զսակաւ գծիկս ընկալ յանպիտան Յակոբ աբեղէ Տրապիզոնցոյ, իբրև զխէ-

* Մոր անվան լրացման համար տեղ է բաց թողնված։

** Ձեռագրի գլխավոր հիշատակարանը ԺԸ. դարում, նորոգման ժամանակ, եղել է մաշված և դժվարընթեռնելի վիճակում։ Նորոգողը թողել է մի հիշատակագրություն ձեռագրի գրչության վայրի և ժամանակի մասին։ Ստորև տալիս ենք այդ հիշատակագրությունը։

«Արդ, ի ծաղկալից գրքոյս թուականն յոյժ հնացեալ էր և հազիւ թէ միայն նշմարանքն երևէր, և մեք տեսեալ զնա՝ աստէն եղաք թուական գրքոյս, որ էր ՊՁԷ. (1438)-ումն, ապրիլի Է. (7)-ումն, աւետեաց տօնին աւարտ եղեալ էր։ Գրեցաւ ձեռամբ Յովհաննէս վարդապետին, ի Կեսարիայ, որ է Ղայսարի քաղաքին, ի հրաշալի սուրբ աթոռն սրբոյն Յովհաննու Կարապետին։ Վասն այն գրեցաք, զի զաշխատանս նորին տեսանելով մէկ բերան տացեն զողորմին, և յիշողացն տէր ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն և յաւուրն ահեղին, ամէն»։

Ձեռագրի գրչի անունը, ինչպես որոշակիորեն հայտնի է Ա. և Բ. հիշատակագրություններից, Ազարիայ է, ուստի նորոգողը լավ չի կարողացել վերծանել գլխավոր հիշատակարանը, և ստացողին շփոթել է գրչի հետ։

ընէշս այրոյն։ Եւ անմեղադիր լեր խոշորութեան և անարհեստու-թեան և սխալանաց սորա, զի կար մեր այս չափ էր, և մի մոռանար ի մաաց քոց սուրբ ի բարի մասին զանարժանս, աղաչեմ։

549

ՃԱՇՈՑ

Սեբաստիա, ս. Նշան 77, ՀԱ, 1926, սյուն. 242-243

Գրիչ՝ Դաւիթ

ա

150 ա …Եւ զԴաւիթ գրիչս յիշեցէք ի տէր, ՊՁէ. (1438)։

բ

291 բ …Ողորմեա ստացւողի գրոցս Ներսէսի քահանայի, և մաւրն իւրոյ Մեծ-խաթունին, և հաւրն իւր Շնոֆոր պարոնին, և քեռոյն Աստուածատուր քահանայ կուսակրօն կրաւնաւորին, և կենակցին իւր Փաշային, և որդւոց իւրոց Աստուածատրին և Դաւթին՝ հանգուցելոցն առ Քրիստոս աստուած, որոց ողորմեսցի սուրբ հոգի աստուած, և դստերն իւր Շահտիկնայ, և փեսային իւր Սատաղային, և թոռին իւր Ստեփանոսին, և ամենայն արեան մերձաւորացն…։

Այլ և ողորմեսցի հոգին սուրբ և անփորձ պահեսցէ զհայր Ներսէս քահանային՝ զՇնոֆոր պարոնն,* և զփեսայն իւր զՔուրդամիրն, և զաստուածապարգև զաւակսն իւր զԽաչատուր քահանայ, և զՄկրտիչն. և զԱւագն, և զԱստուածատուրն, զի բազում սպասաւորէ Շնոֆորն Ներսէս քահանային, և տանն, և ամենայն գալւող և գնացւողի, և գոբովագութ գթով կու խնամարկէ, զի տունս Ներսէս քահանայիս որպէս զվանք է, և բազում գալւող և գնացւող կայ՝ ի յեպիսկոպոսաց և ի վարդապետաց և յամենայն աղքատաց, և ամենեցուն կերակրէ, զոր տէր աստուած վարձահատոյց եղիցի, ամէն։

գ

308 ա Ամենազաւր սուրբ հոգի աստուած՝ ողորմեա անարժան գըրչիս Դաւիթ աբեղայի, և հաւր իմ Սահակ քահանայի, և մաւրն իմոյ Մինայի, և ստացւողի սորին՝ այսմ ծաղկաւէտ բուրաստանի՝ պատուական և սրբասէր գովելի և հաւատարիմ, զՆերսէս քահանայն, և զՍահակ երէցն, և զզաւակս նորա զՍտեփանոսն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ։ Աղաչեմ ես՝ Ներսէս երէցս, զի խնամով պահեսջիք զայս սուրբ տարեգիրքս և լիցի սա յիշատակ մեզ անջինջ ի Սեբաստիա քաղաքիս, ի դուռն սուրբ Աստուածածնին վավխի շուկայի մահալան։ Աստուած զայն քահանայն և զայն ժողովուրդն աւրհնէ, որ խնամով պահէ զսայ, և մի իշխեսցին իմոյքն ծախել և կամ հանել ի դրանէ սուրբ եկեղեցւոյս, այլ պաշտօնէից սորա լիցի սայ։**

---

* Տպված է «տիկինն», ուղղում ենք համաձայն նախորդ պարբերության և 356ա էջի հիշատակագրության տվյալների։

** Նոր բան չպարունակող հիշատակագրություններ կան նաև 207ա — 208ա, 265ա, 276բ և 356ա էջերում։

550

ՄԱՇՏՈՑ

Երևան 5905

Գրիչ՝ Խալիֆա

144 ա ... *Արդ, գրեցաւ սա ի Թուականիս Հայոց* ՊՁԷ. *(1438), ձեռամբ սուտանուն* Խալիֆա *սարկաւագի։ Տէր աստուած ողորմեա ստացողի գրոցս* Յակոբ *քահանային, և* Եղիսաբեթին, *և* Ղարիպ-Խաթունին, *և այլ ամենայն արեան մերձաւորաց նոցին՝ կենդանեաց է հանգուցելոց, յիշեցէք ի Քրիստոս և լի բերանով աստուած-ողորմի ասացէք* Եղիսաբեթին, *որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ իւրն և ծնաւղաց իւրոց, ամէն, եղիցի։*

*Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ գրոցս, անմեղադիր լերուք, զի այս էր կար մեր։ Եւ դարձեալ զ*Կարապետ *քա-*
144 բ *հանայն, որ եղեւ պատճառ այս Մաշթոցիս, ‖ և ետ գրել զսա
անջինջ յիշատակ յաւիտեան։ Եւ դարձեալ, յիշման արժանի արա-
րէք զստացող սորին* զԵղիսաբեթն, *զ*Յակոբ *քահանայն և զ*Կարիպ-
Խաթունն...։

551

ԱՒԵՏԱՐԱՆ

«Միաբանք և այցելուք Երուսաղէմի», էջ 70

Վայր՝ Երուսաղէմ

...*Ողորմիա խոճայ* Ճանազիզի *և ծնողաց իւրոց, որ եկն ի* Տփխիս *քաղաքէ և բազում արդիւնս արար ի յաղքատս և ի կրաւնաւորս և յեկեղեցիս, և զսուրբ աւետարանս ետ վերստին կազմել պատուէլի և ճրգնազգեաց եպիսկոպոսին* Գաբրիէլի Կարբեցոյ, *որով արքայութեան արժանի առնէ Քրիստոս աստուած* զՃանազիզ *խոճան և զծնողսն իւր ամէն։*

Ի Թվ. Հայոց ՊՁԷ. *(1438) կազմեցաւ սուրբ աւետարանս ի սուրբ քաղաքն* Երուսաղէմ։

552

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՈՑ

Երևան 3485

Հետ. ստացող՝ Խաչատուր

199 բ *Ի Թվին* ՊՁԸ. *(1439)։ Զվերջին ըստացողս՝* զԽաչատուր *աբեղաս յիշեցէք, ով սուրբ ընթերցողք...։*

553

Յ Ա Յ Ս Մ Ա Ւ Ո Ւ Ր Ք

Վիեն. 7, Տաշ. Ցուց., էջ 49—50

Գրիչ՝ Սիմէոն
վայր՝ Եկեղեաց գաւառ, Աւագ վանք

ա

606 ա—607 ա Փառք ...վասն որոյ փափագաւղ եղեալ ողջախոհ եւ իմաստուն աստուածասէր եւ հեզահոգի քահանայ Մովսէսն, որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոց։ Եւ ի բազում ժամանակս ի խնդիր եւ ի փափագ էր աստուածագիծ տառիս, որ կոչի Այսմաւուրք...։ Եւ ետ գրել զգիրքս յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց եւ ամենայն ազգականաց իւրոց կենդանեաց եւ հանգուցելոց, ձեռամբ բազմամեղ եւ անիմաստ գծողի Սիմէոն կրաւնաւորի, ի գաւառս, որ կոչի Եկեղեաց եւ Դարանաղեաց, ի վանքս, որ կոչի Աւաք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, եւ սուրբ Կարապետին, եւ սուրբ Առաքելոցն, յառաջնորդութեան վանացս երջանիկ եւ առաքինի սուրբ վարդապետին Մարտիրոսի։ Բայց գրեցաւ կէսն ի դուրս երջանիկ հաւրն մերոյ սուրբ Լուսաւորչին, եւ միւս կէսն ի դուրս սուրբ Առաքելոցն։

Արդ, աղաչեմ զձեզ յիշեցէք զմիաբան եղբարքս, որք աստ կան հաւաքեալ՝ հոգեւոր հայրն իմ զԳրիգոր աբեղայ, որ դասագլուխ էր, եւ զՄկրտիչ աբեղայ, որ շատ աշխատեցաւ յըզորդելն, եւ զՄարտիրոս աբեղայ, եւ զՅակոբ աբեղայ, եւ զՆերսէսն, եւ զԱռաքելն, եւ զՄարգարէն, եւ զմիւս Մարտիրոսն, զոր աստուած անսասան պահէ զսոսա, ամէն։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, ով տաւնասէր... քահանայք... յիշեսջիք ի մաքրափայլ եւ յարժանաւոր աղաւթս ձեր զՄովսէս քահանայն եւ զհայրն իւր զՄխիթար սարկաւագն, զՄկրտիչ սարկաւագ, զՖռանկ սարկաւագ, եւ զեղբայրսն իւր զԳրիգոր երէցն, եւ զՅովանէսն, եւ զկողակիցն իւր զԹիմայն, եւ զծնաւղսն իւր, եւ զփեսայն իւր զԱւետիք երէցն, որ կամակից եղեւ այս գրոցս... եւ զիւր ծնաւղսն զՄկրտիչ եւ զՃուճար-խաթունն, եւ զեղբայրն իւր զպարոն Թադէոսն, եւ զպարոն Խաչատուրն։ ...Յիշեցէք զպարոն Ֆռանկին խաթուն զԼալխաթունն, որ ՃԾ. (150) դրամ եբետ Յայսմաւուրացս ի գրելն, եւ եդիր յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց ի դուրս սուրբ Ստեփանոսի։ Եւ ոչ ոք ունի յազգականաց իւրոց իշխանութիւն, որ զգիրքս յայս եկեղեցոյս հանէ, ծախելով, կամ գրաւկնելով, կամ գողանալով, կամ այլ ինչ պատճառաւ, եւ եթէ ոք յանդգնի եւ ծախէ՝ զմասն Յուդայի

եւ զխաչահանուացն տացէ, եւ ով որ զպտուէրքս ի տեղ պահէ եւ խնամով եւ լաթով բռնէ, եւ ձէթ եւ մոմ չկաթեցուցանէ՝ աւրհնի յասաուծոյ եւ յամենայն սրբոց, ամէն։

Արդ, աղաչեմ լալագին պաղատանաւք եւ մաղթեմ յամենեցունց, որ ընթեռնոյք եւ լռէք եւ աւգտիք ի սմանէ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան դծողս զՍիմէոն զանիմաստ կրաւնաւորս, եւ զծնաւղսն զՊաւղոսն եւ զՍառան, եւ գոհանամ զյասաուծոյ, որ ետ ուժ ու կարողութիւն, որ գրեցի զայս գիրքս, ի մեծ թվականիս Հայոց ՊՁԸ. (1439), ի հայրապետութեան տեառն տէր Կոստնդնեա, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, եւ յեպիսկոպոսութեան Եկեղեաց գաւառիս տէր Յոհանիսի, զոր տէր աստուած պահէ խաղաղութեամբ։

Եւ արդ, եղեւ զրաւ գրչութեան այսմ տառիս, զի սկիզբն արարաք ի սուրբ Լուսաւորիչն, եւ վասն զառն ժամանակիս, որ խուլն երէկ ԾՌ. (100,000) զաւրաւք, եւ աւէր ոչ արար. եւ յետ այնոր եկն Այխանըկլուն,* եւ շատ աւեր արար, եւ վասն այն պատճառին ոչ կարացի կենալ ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն, եւ աւտրտեցաւ աստուծով ի յԱւագ վանքս, յապրիլ ամսոյ ի Ի. (20)...։

Եւ դարձեալ կրկին աղաչեմ յիշեսջիք զախմար գծողս, որ աչքս խացկեցաւ ի գրելն ու Բ. (2) ամի ապա գրեցաւ, աղաչեմ զձեզ անմեղադիր լերուք սգալանաց եւ խոշորութեան սորա, զի կար մեր այս չափ էր։

Կրկին աղաչեմ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Յ. Բ. Մ. Ի. Խ. Կ. Ի. Ո. Ե. Ռ. Է. Ի. Ռ. Է. Կ. Ե. Բ.,** որ շատ աշխատեցա եւ գրեցի զայս անուանս. թէ դպիր էս կարդա, թէ չէ՝ փզիտ տուր ու հազայ...։

Բ

431 բ Ո՛վ եղբայր, անմեղադիր լերուք, զի աւրս յետի չորեքշաբթի է. զկազմարն ի վեր թ[ափեցաւ], մուր դարձաւ. Նա ես փոխեցի զկազմարն, որ գրոցս տէրն աւր մի զմեղ մէկ հացիւ չյիշեց։

Գ

6 ա Աղաւթիւք սոցա... պարգեւեա մեզ զքո առատ զողորմութիւնդ, եւ ստացողի սորա Մովսէս քահանայի, եւ եղբաւր իւրոյ Մկրտիչ սարկաւագի, եւ Մխիթար սարկաւագի, եւ Յռանկ սարկաւագի, որ տղա հասակաւ փոխեցան առ Քրիստոս, եւ զհաւրեղբաւրորդին իւրոյ զՆաղաշ Քարեմն, եւ ինձ մեղապարտ գրաւղիս Սիմէոն աբեղիս, եւ ծնողաց իմոց...։

---

* Առաջին «Ն» տառը կասկածելի է։

** Փոխարինագիր ծածկագրով (միավորի փոխարեն՝ հազարավոր, տասնավորի փոխարեն՝ հարյուրավոր) կարդացվում է տառացի այսպես՝ «զՍիմնոմ կրաւմաւորս». այսինքն՝ «զՍիմէոն կրաւնաւորս»։

դ

406 ա Ո՜վ եղբայր, անմեղագիր լեր, զի կաւկիչն արէր՝ զթուղթն աւ-
քերեաց, գրեցաւ սուրբ Սարկսէն պահոցն. կարդա եւ զմեղաւորս
յիշեա։

ե

279 ա Մի ակս խացկեցաւ ի գրել սորա։

զ

549 բ Ո՜վ եղբայրք, թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ, զի աւրս
աւագ երկուշաբթին է, մին աչքս կու ցաւէր, նա խրեցի ու մին աչո[վ]՝
գրեցի՝ խիստ աշխատանաւք, եթէ յիշման առնէք արժանի զՍիմէոն
նայ դուք յիշեալ լիցիք։

է

553 ա Ո՛վ եղբայրք, յիշեսջիք յաղաւթս ձեր զախմար գծողս զՍիմէոնս,
որ աւրս աւագ երեքշաբթի եղաւ, դեռ աչքս կու ցաւի։

ը

667 ա Ահայ ազատեցար շլրած աչկունք, կզացաց շլնեկունք, կո[արած]
ոտկունք։

554

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՍՑՎ 12 (1007), հա. Ա., էջ 128

Վերստին նորոգող և կազմող՝ Հէրապեա
Վայր՝ Մշոյ Առաքելոց վանք։

ա

468 ա Այլ և զվերջին կազմող լուսազարդ տառիս և ծաղկաւէտ բու-
րաստանիս՝ զՀէրապետ կրաւնաւոր աղաչեմ յիշել ի տէր ... զի խիստ
փտեալ էր և բամբակ դարձեալ, ի տեղիս տեղիս ցեցն է ծակոտեալ,
հազիւ կարացի ի կապ ածել...։

468 բ Դարձեալ, յերես անկեալ աղաչեմ սուրբ և պատուական ուսում-
նասիրացդ և բանասիրաց անձանց, զի որք հանդիպիք սմա տե-
սանելով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր
զառաջնորդ սուրբ ուխտիս զտէր Պօղոս եպիսկոպոս, զի ի ժամանա-
կիս այսմիկ, որ էր թիւս Հայոց ՊՁԸ. (1439), էր սա առաջնորդ
սուրբ ուխտիս Առաքելոց, և ի սորին աւուրքս չքահանայ ...ոմն
անուն Վարդան՝ եղև գործովն Յուդայի և մատնեաց զամենայն սըր-
բութիւնք եկեղեցւոյն անօրինաց՝ զխաչ և զսկի, և բազում խաւար

էած աղկիս Հայոց։ Որ և զաղէտ տարակուսանացն և զկսկիծն օ՜վ կարէ ընդ գրով արկանել։

[Ապա կը նկարագրուին Թովմա բաբունապետին՝ այն է Թովմա Մեծոփեցւոյն փախստեամբ հոն գալը, բազմաթիւ վարդապետներով, աշակերտներով և գրենով, յերեսաց նեռողաց ազգին, և Առաքելոց վանքի միաբաններու կրած անլուր աղետները Մշոյ քիւրդ իշխանին և մատնիչ Վարդանի ձեռքէն]։*

555

ՃԱՇՈՑ

Փիրգ. Նոտ. 120, Մարգուանի ս. Աստուածածնի եկեղեցի

Վայր՝ Դարանեղաց գաւառ, Ծնածառնոյ վանք.

...Արդ, գրեցաւ սա ի Թուականիս Հայոց ՊՁԸ. (1439), ի դաւառիս, որ կոչի Դարանաղեաց և մականուն Կամախ, ի սուրբ մենաստանիս, որ կոչի Ծնածառնոյ վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան տէր Գրիգորի, և յեպիսկոպոսութեան Դարանաղեաց գաւառիս տէր Կիրակոսին, և յիշխանութեան Իադութակին, որ էր նախախնամող քրիստոնէից ազգին, ապա չէր արծաթասէր, այլ նախախնամէր և հրաման տայր եկեղեցեաց որ շինէին, և այլ բազում բարութիւնս առնէր։

Յիշեսջիք զստացող սորա՝ զպարոն Պակթամուրն, և զծնողսն իւր՝ զՔրման-խաթունն, և զԱստուածատուրն, և զկողակիցն իւր զՄամա-խաթունն, և զզաւակսն իւրեանց։

Յիշեսջիք և զառաջնորդ սուրբ ուխտիս, այլ և զպարոն Պակթամուրն, որ եռափափագ և ջերմեռանդ և յօժար սրտիւ ել և գնաց և շինեաց զեկեղեցին, որ անբնակ ի մարդկանէ...։ Շինեաց զսա վանք և անապատ, և զարդարեաց հանդերձիւք և գրեանօք, ամենայն զարդիւք՝ ծառօք և տնկօք։ Ով ոք չունի իշխանութիւն ի յայս վանքըս՝ ոչ գավէ առնելով ոչ ծախելով, ոչ տանելով, ոչ գիրք և ոչ այլ ինչ, յիշատակ անջնջելի իւրն և ծնողացն։

556

ՃԱՇՈՑ

Փիրգ. Նոտ. 119, Նշխարք (№ 4515), էջ 149—150, Վանի Տիրամօր եկեղեցի

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ոստան

...Եւ արդ, ես... քահանայ Կարապետ ...կատարեցի զսուրբ գիրքըս զայս ...ի քաղաքն Ոստան, որ է ծովահայեաց, ի դուռն Քարի

* Ցավոք, հիշատակարանի շարունակությունը հրատարակիչը վերապատմել է իր խոսքերով։

սուրբ Աստուածածնին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Ստեփաննոս նախավկային, ի թուականութեանս Հայոց ՊՁԸ. (1439), ի հայրապետութեան տէր Զաքարիայի, որ յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեան...։ Զոր տեսեալ զայսպիսի գանձս ...աստուածասէր տանուտէրն Յոհաննէս ...ստացաւ զսայ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն Թումային և Մինային և կողակցին Եղիսին, և դստերացն Ուխտի-խաթունին, և եղբօրն Ստեփանոս քահանային, և որդոյ նորին Աբարահամ քահանային։ Եւ ետ զսա նուէր և ընծայ ի դուռն սուրբ և փառաւորեալ վկային Քրիստոսի Գէորգեայ, ի գիւղն, որ կոչի Նանդենց: Նաև զսանահէրն իւր՝ զհաւատարիմ տանուտէրն զԱմիրբէկն...: Մեղաց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ ինձ, և ծնողաց իմոց՝ Ստեփանոս քահանայի և Փաշայի:

557

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4979

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Լիմ

250 բ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ ...սուրբ վարդապետն Յովաննէս և ձեռն ի գործ արկեալ գրեաց զսուրբ աւետարանս, յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց՝ հաւրն Շատլուսի, և մաւրն Խաթունշի: Այլ որ շտեմարանն է ամենայն հոգւոց պահանջեալ շտեմարանեաց զհոգի սորա և ի կատարումն աւետարանիս ոչ ժամանեաց, այլ փոխեցաւ տարաժամ մահուամբ ի Քրիստոս։ Վասն որոյ աստուածասէր և բարեպաշտ միայնակեացն Յովսէփ եռափափագ սրտիւ ...ի քիրտն աշխատանաց իւրոց կատարել ետ զսուրբ աւետարանս՝ գրելով և ծաղկելով և կազմելով, յիշատակ բարի առ Քրիստոս հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց՝ հաւրն
251 ա Թաւաքալին և մաւրն Մէրէքին, և կենակցին իւր Աղու || թին, և զաւակացն իւրեանց՝ Աառմին, Մխիթարին, Առաքելին, Յովանիսին՝ հանգուցելոցն ի Քրիստոս...։

251 բ Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց տումարի ՊՁԸ. (1439), ի ծովահայեաց անապատս, որ կոչի Լիմն, ընդ հովանեաւ սրբոյ Գէորգեա զաւրավարին, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի: Արդ, ես՝ վարդապետ Յովաննէս և Յովսէփ միայնակեացս ընծայեցաք սուրբ աւետարանս սրբոյն Գէորգեայ յիշատակ մեզ և ննջեցելոցըն մերոց, և մի ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սորա, ոչ կաթողիկոս, ոչ վարդապետ, և ոչ եպիսկոպոս, և ոչ հերպետ, և ոչ յազգականաց մերոց։ Եւ թէ ոք յանդգնի հանել՝ զպատիժն Կայենի և զմասն Յուդայի ժառանգեսցէ։

Գարձեալ, աղաչեմ զամենեսեան յիշել ի Քրիստոս զտիեզերալոյս և զաստուածաբան, քաջ և երջանիկ վարդապետն Մկրաիչ, որ

զպակասութիւն սուրբ աւետարանիս գրեաց, և ի կատարումն յիշատակարանիս ոչ ժամանեաց, այլ տարաժամ մահուամբ փոխեցաւ առ անծկալին իւր Քրիստոս, յունուար ամսոյ ի ԻԲ. (22) և հոռի ի ԻԵ. (25), և անասելի սուգ և կսկիծ հասոյց մեզ։ Եւ զկազմողս զԳրի[գոր], յիշեցէք ի Քրիստոս։

558

ԱՒԵՏԱՐԱՆ

Առ. Դավրիժեցի, Պատմութիւն, 1884, էջ 321

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Արգելան

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի Թուիս Հայոց ՊՁԸ. (1439), ձեռամբ Գրիգորի սուտանուն կրօնաւորի, ի վանս, որ կոչի Արգելան, ընդ հովանեաւ մօրս լուսոյ սուրբ Աստուածածնին, և տեառն Ցուսկայ որդւոյ սուրբ գերեզմանին, ի հայրապետութեան Լուսաւորչին, քանզի յայսմ ամի վերացեալ եղև աջն ի Սսայ, և ոչ գիտեմք զինչ եղև, ի յառաջնորդութիւն սրբոյ ուխտիս Մկրտիչ վարդապետի...* և ի հայրապետութեան կրօնաւորին Յովհաննեսի, և խաչընդուս փիլիսոփայի Յակոբի՝ հոգևոր հօրս մերոյ։

559

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՑՀ, հա. Ա. 39, էջ 83

Հետ. ստացող՝ Յովհաննէս

ա

595 ա ...Ի Թուականութեանս Հայոց ութհարիւրերորդի ութսուներորդի ութերորդի (1439)։ Ցայսմ ամի շարժեալ ի սէր աստուածային շնորհաց ...սրբասնեալ և հեզահոգի քահանայս Յոհաննէս, և ետ նորոգել զսա վերստին կրկնակի, զի յոյժ հնացեալ էր...։

Արդ, այսմ բանի աստուածայնոյ հլու և հնազանդ եղեալ քահանայս Յովհաննէս. եւ ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ և արդար վաստակոց իւրոց՝ յիշատակ իւր, և բարի յիշատակեալ ծնաւղաց իւրոց՝ հաւր իւրոյ Սահակ քահանայի և մաւր իւրոյ Քաղամին, և պարկեշտ կենակցին իւրոյ Երինէի, զի յիշատակ իւրեանց եղիցի, և ի վայելումն հրեշտակատիպ, գեղեցկագեղ, դեռաբողբո մանկանն իւրեանց Մանկասար դպրի, որ այժմ կոչի Մարկոս, յոյժ ուսումնասէր և բարի բնութեամբ, զոր տէր աստուած պահեսցէ զսա՝ զՄարկոս դպիրս այս ընդ երկայն աւուրս և տացէ սմա վայելել զսուրբ աւե-

* Շարունակությունը լրացնում ենք Ս. Տեր-Ավետիսյանի կազմած Նոր-Ջուղայի հայերեն ձեռագրերի ցուցակի տվյալներով։

տարանս պարագած ամաւք յամերամս ժամանակաւք, ամէն, և ասաուած-ողորմի ասացէք...։

Բ

Տէր աստուած ողորմեսցի աւետարանիս գնողին, որ գնեաց զաւետարանս։ Ես՝ Յոհաննէս *երէցս, որ գնեցի զաւետար[անս]* յԻսկան-դարէն Գ. *(3) ֆլորի, ի Թվին* ՊՁԸ. *(1439), ի հալալ վաստակոց իմոց, ի յիշատակ իմ և դեռաբոյս որդոյն իմոյ* Մանկասար *սարկաւագին։*

560

ՄԱՇՏՈՑ

Մ. Աթոռ Թ, «էջմիածին», 1958 թ. մայիս-հունիս, էջ 86—87

Գրիչ՝ Գրիգոր

ա

33 բ—34 ա *Արդ, ես* Գրիգոր՝ *ծրող գրոյս,*
Յաղաւթս ձեր ունիմ մեծ յոյս.
Արձակեցէք զիս ի կապոյս,
Որ իմ մեղացն է տարակոյս,
Եպիսկոպոս մեր Նահանկոյս,
Տէր և տեսուչ հայկան սեռոյս,
Սուրբ քահանայք եկեղեցոյս,
Եւ նորընձայք ի յայս ժամուս,
Ունկն դրէք իմոյ խնդրոյս,
Եւ մաղթեցէք ի տէր Յիսուս,
Որ ճարն նա է գլոբելոյս՝
Մաքրէ զհոգիս մեղաց տղմոյս.
Իմ դեղն դուք՝ խոցեալ հոգւոյս,
Զի յիշէցեք անտարեկոյս,
Ցիշողքդ աւրհնիք յայսմ սրբոց
և յեկեղեցւոյս (*), ամէն։

Բ

366 ա *Գրեցաւ Մաշթոցս ձեռամբ անյարմար* Գրիգարի *և [ան]արժան ծառայի, առհասարակ՝ մեծի և փոքու, որ էր Թիւն Հայոց* ՊՃՁԸ. *(1439), ի դառն և ի նեղ ժամանակի, վասն ծովացեալ իմոյ մեղացն։ Որք վայելէք զՄաշտոցս և մեր ծնողացն և մեր երախտաւորաց թողութիւն խնդրեցէք ի բարերարէն Քրիստոսէ, և զձեր[ն] Թողցէ ամենակարողն աստուած, և նմա փառք յաւիտեանս, ամէն։*

561

ԱՒԵՏԱՐԱՆ.

Փիրգ. Նոտ. 119, Կ. Պոլիս, Ղալաթիոյ ս. Լուսաւորիչ եկեղեցի

Գրիչ՝ Մաղաքիա
վայր՝ Կաֆա

...[Գրեցաւ] ձեռամբ... Մաղաքիա աբեղայի։ Եւ եղև աւարտ սորա ...ի մերում [թուականի] ՊՁԸ. (1439) ամի, ի նոյեմ. Է. (7), օրն շաբաթ, ի հայրապետութեան տեառն Գրիգորի բարեպաշտի և աստուածասիրի և իմաստնոյն, և եպիսկոպոսութեան սրբասիրի մեծի տէր Մաղաքիայի, ի մերում Հոռմաց աշխարհին և Գազարիայ նահանգիս Սալխաթ Ղրիմի և Կաֆայիս մայրաքաղաքիս, ի մենաստան մեծի սրբոյն Անտօնի և Աստուածածնի, ի խնդրոյ պատուական և երջանիկ քահանային Աբրահամի:

562

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

«Միաբանք և այցելուք Երուսաղէմի», էջ 448

Գրիչ՝ Սարգիս Արծկեցի Մելիքենց
վայր՝ Երուսաղէմ

...Քանզի գրեցաւ սա ի աստուածակոխ քաղաքս յԵրուսաղէմ, տասն և եօթն տետրակս ի մէջ Յարութեանս, ընդ հովանեաւ աստուածընկալ և լուսաբուղխ գերեզմանիս և նորակնունք սուրբ վերնատանս՝ երկրորդ Գողգոթայիս, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Սարգիս անպիտան ծառայի, ի վայելումն մանկանց Սիոնի։

Արդ, աղաչեմ զձեզ, ով մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա տեսանելով կամ ընթեռնելով և կամ աւրինակելով՝ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր ամենայն աւրհնութեանց արժանաւոր զտէր Մարտիրոսն սրբասնեալ և առաքելաշնորհ եպիսկոպոսն Երուսաղէմայ և զծնողս իւր, որ ետ գրել զսա...։

563

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ, ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՑՒՈՅ

Երևան 2514

Հետ. ստացող՝ Յովսէփ

170 բ Ո՛վ սուրբ ընթերցաւղք և մաքուր ուսումնասէրք, աղաչեմ յիշել ի տէր զվերջին ստացօղ Երգոց երգոյս Սօղոմոնի զՅովսէփ աբեղայ,*

* Այս Յովսէփ աբեղան 1450 թվականին գիրքը նվիրում է Սուքիաս կրոնավորին։ Այդ առթիվ գրված հիշատակարանը տես 1450-ի թվաշարքում։

որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ բարի իւրն, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորացն, ի թվին ՊՁԸ. (1439), զոր տէր աստուած վայելել տացէ, ամէն։

564

ԲԱՆՔ ԵԻԱԳՐԻ

Երևան 2540

Հատ. ստացող՝ Յովսէփ

ա

183 ա Այլ և զվերջին ստացաւղ լուսաւոր պատերազմիս Եւագրեայ զՅովսէփ կրաւնաւոր և զհոգևոր համշիրակ եղբայրն իւր զՅոհաննէս, կրօնաւոր աղաչեմ յիշել...։

Ի թվին ՊՁԸ. (1439) գնեաց զգիրքս ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ բարի իւրն և ծնօղաց իւրոց...։

բ

Ես Յովսէփ աբեղայ [բաշ]խեցի զայս գիրքս տէր Սուքիասին՝ իմ հոգևոր եղբաւրն, և է սա սեփական նմայ, և այլ ոք ոչ ունի իշխանութիւն ի վերայ սորա, բայց ի տէր Սուքիասէն։*

565

ՑԱՂԱԳՍ ԱԶԳԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԱՆՄԱՆ, ՅԱԿՈԲԱՑ ՂՐԻՄԵՑԻՈՅ

ՄՑՀ հա. Ա. 81, էջ 163

Գրիչ՝ Յակոբ

138 Գրեցաւ գիրքս ի թվինս Հայոց ՊՁԸ. (1439), ձեռամբ բազմամեղ անարժան Յակոբ քահանայիս, վասն որոյ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ՝ մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ՝ անարժանիս...։**

---

* Նույն այս Յովսէփ աբեղան 1450 թվականին տէր Սուքիասին նվիրել է նաև 1439 թ. գնած Գր. Նյուսացու Երգ երգոցի մեկնությունը (տես նախորդ ծանոթագրությունը)։ Հավանաբար այս նվիրաբերությունը նույնպես կատարվել է ձեռք բերումից տարիներ հետո, գուցե հենց նույն՝ 1450 թվականին։

** Նույն այս ձեռագրի հետ կազմված է Հակոբ գրչի 1482 թ. ընդօրինակած Մաշտոցը, որի հիշատակարանը տես 1482-ի թվաշարքում։

566

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ ԿԻՒՐՂԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑՒՈՅ

Երևան 976

Կազմող՝ Մխիթար
վայր՝ Մաղարդէ վանք

292 բ *Արդ, աղաչեմ զձեզ, ով հանդիպող եղբայրքդ, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր առ Քրիստոս յոյսն ամենեցուն՝ զստացաւղ սուրբ գրոցըս* զՅակոբ *վարդապետ, որ յոյժ փափաքանաւք հանդիպաւ սուրբ գանձուցս ի* Խօ* *քաղաք, և խնդրեալ զսա ի հաւատարիմ կնոջէ մի, և բերեալ զսա ի սուրբ ուխտս ի վանքս* Մաղարդէ, *ընձա սուրբ Նախավկայ վկայիս, և ետ նորոգել զսա յիշատակ ոգոյ իւրոյ, և յետ ստացեալ բարեխաւս առ աստուած։*

Ընդ սորա և զվերջին կազմողս զՄխիթար *եպիսկոպոս, զԹափուրս ի յամենայն բարեաց յիշել ի սուրբ աղօթս ձեր, և դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի և յիւր անմահական սեղանն, ամէն։ Այլ և յիշել յաղաւթս ձեր զսուրբ Նախավկայիս կրօնաւորքն և զսրբասնունդ քահանայքս՝* զՄաթէոս, զՈհանէս, զԲարսէղ, զԹումա, զՍտեփանոս, զՅակոբ, զԽաչատուր, զԳրիգոր, զԱւետիս, զՂուկաս, զՍիմէոն, զԹադէոս, զՄեսրոպ, զՊետրոս, *և զտառապեալ ոգիս* Մխիթար *եպիսկոպոս, և* Աւագ *եպիսկոպոս, և զայլ միաբան սուրբ ուխտիս՝ զսարկաւագունս և զայլ ուսումնականքս և զպաշտաւորքս յիշել ուղիղ սրտիւ...։*

Կազմեցաւ սա ի Թվ. ՊՋԹ. (1440), ընդ հովանեաւ Նախավկայիս, ի ժամանակիս, որ էառ չար և անիծեալ պեղծն Չիհանշայ *իմիրզան* զՎրացտունն, *և բազում քրիստոնայք ի սուր քարշեց, և ով կարէ ճառել* |
293 ա *[զսուգ... քր]իստոնէից և զանթիւ կոտորուածք նոցա, որ ոչ լեզու ճառել կարէ զանթիւ բազմութիւն մարդկան և զկանանց, զմանկանց և զտղայոց, որ վասն հաւատոց և քրիստոնէութեան կոտորեցան վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ սուրբ արքայութեանն, զմահ ի յանձն առին և զմարտիրոսական պսակն Քրիստոսէ խնդրեցին, և սրով և քարկոծմամբ կոտորեցան և հասին յաւիտենական կենացն. և գեղեցկատեսակ մանկունքն գերեալ բերին առ մեզ և մեք տեսեալ զանմեղ գառինս ի ձեռն անաւրինաց՝ դառն և լեղի, մերկ և քաղցած, ծեծած և կոփած | | |***

---

* *Այսինքն՝ «Խոյ»։*

** *Սույն՝ 293 թերթից մնացել է միայն առաջին սյունակի երկու-երրորդ մասը, հիշատակարանի շարունակությունը, այսպիսով, կորած է։*

567

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5512

Գրիչ՝ **Մինասենց Թումայ**
վայր՝ **Աղթամար**

ա

36 ա Ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս յիշեցէք ի Քրիստոս և ի սուրբ յաղաւթս ձեր զստացող սուրբ աւետարանիս զպարոն **Յովանէսն**, և զծնողքն իւր՝ **զՅորդորն** և **զԴօճար-Մէլիք**, և զեղբայրքն **Ստեփաննոս** և **զԱտոմ**, և զկենակիցն **զԽալիմ-Խաթունն**, և **զԽալ-Խաթունն**, և զորդեակն **զԱտոմ**, որ տէր աստուած փոխեցաւ և սուգ անմխիթար եթող ծնողաց իւրոց, և ուղիղ մտաւք և բոլորով սրտիւ և լի բերանով աստուած-ողորմի ասացէք . . .:*

բ

298 ա Ցամի Պ. և ութսուներորդի թվականութեան Հայկազեան տումարիս (1431) անհնարին աղէտ և մեծ կըսկիծ դիպեցաւ յաշխարհիս մերում, վասն զի ամիր **Փիրի-Բէկն**՝ ազգաւ քուրդ, թոռն ամիր **Էզդբեին**՝ էառ զաստուածապահ և զանառիկ կըզզին **Աղթամար**, որ տեղի էր ապաստանի ամենայն աշխարհացս, և յառ և յաւար և ի գերութիւն վարեաց զսպասք և զզարդք երկնանման տաճարին, և զբոլոր ծովեզերոյս վանորայիցս և գեղորայիցս զաստուածաշունչ մատեանքս և զայլ անաւթք սրբութեանցն, և ցան և ցրրիւ ընդ ամենայն աշխարհ տարածեաց։ Որ և մի ի բազմաց գերելոցն է աստուածաշունչ և աստուածախաւս սուրբ աւետարանս այս, որ է **Աթանան** գեղին։ Զոր ծերունի և պատուա‖կան քահանայն **Ատոմ**, որում շնորհեաց զսուրբ
298 բ աւետարանս առաջին ստացաւղ սորին աստուածասէր տանուտէրն **Խաչատուր**:

Սորա ի խնդիր ելեալ մեծաւ փափագանաւք և ջերմեռանդ հաւատով և սիրով, տկարացեալ մարմնովն և խաւարեալ ի լուսոյ երկոցունց աչացն, և գտեալ զսա ի **Վան** քաղաք, առ ուրեմն աստուածասիրի, որոյ անունն **Յորդորենց Յովանէս** ճանաչի։ Եւ բազում պաղատանաւք և արտասուաւք թափեաց զսուրբ աւետարանս զայս ի նմանէ աստուածապատիւ քահանայն **Ատոմ**, ի հինգհարիւր և յիսուն դեկան, և երեր զսա վերըստին ի գեօղն իւր ի յ**Աթանան**, որպէս զի հանապազ ընթերցցին զսա մանկունք եկեղեցոյ ի դուռն սուրբ Գէորգեայ տաճարին, և ուրախասցին սովաւ։

Արդ, աղաչեմ զհանդիպողքդ սմա կարդալով կամ աւրինակելով, լի բերանով և ուղիղ մըտաւք աստուած-ողորմի ասացէք առաջին ստացողի սուրբ աւետարանիս **Խաչատրուն**, և ծնաւղաց նորին՝ վերո-

---

* Այս անթվական հիշատակարանը, համաձայն Բ. հիշատակարանի տվյալի, գրված պետք է լինի 1440 թվականից քիչ առաջ։

յիշելոցն ի սմա, և վերջին ստացողի սորին Ատոմ լուսաւոր քահանային և ծնօղաց նորին՝ Կարապետին և Հէրխաթունին, և կենակցին իւրոյ Դիլշատին, և որդոյն իւրեանց Թումային, և նորին կենակցին Ջաւհարին, և լերդահատոր հարազատին էվատշին, և իւր կենակցին Ուլուխաթունին, և իւրեանց զաւակացն խալիֆային և խաթունշին, և քուերցն Մըրվաթին և Փաշային, և այլ ամենայն արեան մերձաւորաց նոցին կենդանեացն և հանգուցելոցն, և մեղաւոր Մինասեն Թումայիս և ծնօղաց իմոց աստուած-ողորմի ասացէք, որ զսակաւ յիշատակարանս գրեցի․․․։

Ի Պ. և ՁԹ. (1440) թվին գրեցաւ։

Գ

148 ա Ընդ առաջին ստացողացն յիշեցէք ի Քրիստոս զՑախրադին, և զծնօղսն իւր զՎարդան և զԱզիզն, և զկենակիցն իւր զԵղիսէն, և զազգն ամենայն առհասարակ, և աստուած-ողորմի ասացէք նոցա, ամէն։

Քրիստոս աստուած ողորմեսցի խաթուշին, և ծնողաց նորա, և ամենայն ազգականաց նորա, զի սոքա երախտիք ունին ի վերայ մեր, աստուած-ողորմի նոցա հոգուն, ամէն։ Եւ Թումայ քահանային և ծնողաց նորա ողորմի Քրիստոս աստուած, ամէն։

Դ

96 ա Քրիստոս աստուած ողորմի ստացողի սորա, անդերձ տուողին, և աստուած զնա զարդարէ ի յաւուր դատաստանին, որ ետուր անդերձ սուրբ աւետարանիս։

Այս Թուրւանդին և Թումաին, յիշատակ իւրն և ծնողացն իւրոց, ամէն, և մեղաց թողութիւն խնդրեցէք ի յաստուծոյ և ի մէնջ, ամէն։ Մէկ՝ Աւաք և մէկ՝ Ուխտի-խաթուն յիշեցէք ի Քրիստոս, զուրենց ծնաւղս և զուրե[ն]ց հոգին, ամէն, եղիցի։ Եւ ինձ՝ մեղաւոր գըրչիս սուտանուն Ստեփանոս քահտնաիս մեղաց թողութիւն, ամէն, եղիցի:*

568

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ԵՓԵՍԱՑԻՈՑ, ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երևան 1382

308 բ ՊՀ. (1421) Նստաւ Սքանդարն | | | ՊՀԱ. (1422) առաջին գալն Շահռուխին, ՊՀԸ. (1429) միջին գալն և Բուսաիտն | | | եդիր, և տանուտէր աղեղնաւորն, ՊՁԵ. (1436) յետին գալն և տանուտէր [խե]ցգետին։ ՊՁԹ. (1440) Ջահանշէն զՇամշուլդէ առ և կոտորեաց աւելի քան զերեք հազար և տարաւ գերի աւելի քան զինն հազար և մեծ

---

* Գ. և Դ. անթվական հիշատակարանները, ըստ հնագրական տվյալների, գրված են Ա. և Բ. հիշատակարանների ժամանակ կամ նրանցից միայն մի քանի տարի հետո, այն. է՝ 1440—1450-ական թվականներին։

սուք եթող քրիստոնէից,* զի բազումք թողին զՔրիստոս։ Քրիստոս աստուած ողորմեայ Կիրակոս բանասիրին, և թող զմեղք նորին՝ զմահու չափն և զնեղելին, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց գնդին, ամէն։

---

* Սամշվիլդեի կոտորածի մասին հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում Հովհաննես գրիչը, 1458 թ. ընդօրինակած իր «Յայսմաւուրքի» մեջ, շարադրելով հատուկ «Վկայաբանություն» այդ մասին։ Ստորև, որոշ սղումներով, մեջ ենք բերում այդ «Վկայաբանությունը», քաղելով Հովհաննեսի ինքնագիր օրինակից, որը պահվում է Երևանի Մատենադարանում (ձեռագիր № 4696)։ Նույնը իր «Նշխարք պատմութեան Հայոց» աշխատության Բ. հատորում ընդօրինակել է նաև Ղ. Փիրղալեմյանը (ձեռագիր № 4515, էջ 150—153)։

«Քաղոց ի ԺԴ. (14) և դեկտեմբեր ի ԻԲ. (22)։ Յայսմ աւուր յիշատակ է և վկայաբանութիւն կոտորելոցն ուղղափառ և անմեղ քրիստոնէիցն Հայոց և Վրաց՝ Շամշուլտէ քաղաքին»։

Անօրէն և պիղծ բռնաւորն Թավրիզու Ջհանշայ անուն, որդի Յուսուֆ-Բէկին, սա եսպան զեղբայրն իւր Սպանդար բահադուռն, ի ձեռն որդոյ նորա Ղան կոչեցեալ, ի դղեակն Երնջակու, հրամանաւ և կամաւք չար թագաւորին արեւլից Շահռուխ անուն։ Եւ ինքն ոխս ունելով ի մտի իւրում ընդ թագաւորին Վրաց Ալէքսիանոս կոչեցեալ, զի ոչ եկն առ նա յողջոյն խաղաղութեան և ոչ ետ զսահմանեալ հարկս թագաւորական։ Վասն որոյ զայրացեալ պեղծն և առեցաւղն քրիստոնէից իբրև զգազան արեան ծարաւի զաւրս ժողովեալ, զունդս կազմեալ, և զամենայն առաջնորդս անաւրէնութեան Նեռին կարապետն Ջհանշաւն ժողովեալ աւելի քան զԻՌ. (20,000) ոգիս, առեալ գնաց ի տունն Վրաց . . .։

Եւ նոցա երթեալ ի քաղաքն Տփխիս՝ քանդեցին, աւերեցին և զքաղաքն հրոյ ճարակ տուին, և զամենայն եկեղեցիսն ի հիմանց տապալեցին, և անտի յետս դարձան։ Եկն և նստաւ ի վերայ Շամշուլտէ քաղաքին աւուրս Խ. (40), ի գալստեան ծաղազարդարի տաւնին, ի կիրակէին մինչ ի համբարձումն Քրիստոսի աստուծոյ մերոյ, ի մեծահրաշ կիրակէին նստաւ ի վերայ նոցա անիծեալ անաւրէնն Ջհանշան։ Եւ նոքա՝ քրիստոնեայքն ակն ունէին յուսով անիծեալ թագաւորին իւրեանց՝ գալ օգնել նոցա և ազատել ի նեղութենէ անաւրինացն։ Իսկ նոքա անփոյթ արարեալ զնոցանէ՝ լաւ համարեցաւ զանձն իւր կեցուցանել, քան զկորուստ քրիստոնէիցն. անարի և անմարդի գտան, որ և մին մարդոյ վնաս ոչ կարացին առնել։

Յայնժամ քաղաքացիքն, նեղեալ ի սովոյ և ի ծարաւոյ՝ անփոյթ արարին զպահպանութիւն բերդին։ Եւ նոքա զաղտաբար ծակեցին զպարիսպ քաղաքին և ի ներս մտին։ Եւ նոցա զահի հարեալ դողացին, կոչեցին զբռնաւորն ի դուռն քաղաքին՝ առնել ողորմութիւն ի վերայ նոցա։ Եւ նոցա երդուեալ յարարիչն աստուած ստութեամբ և խաբէութեամբ, թէ ոչինչ չար առնել ձեզ և կամ վնաս մահու գործել։ Եւ նոքա աւատացին երդմանն, և բացին զդուռն քաղաքին, և ետուն ի ձեռս նոցա։ Եւ նոքա հանեալ զամենեսեան արտաքոյ, և հրաման ետ զամենեսեան չարչարել զերիս աւուրս, և առնել զգաղտնի և զյայտնի ստացուածս նոցա։ Եւ յետ երից աւուրց հրաման ետ զամենայն հաւատացեալսն կոչել ի հանդիսական տեղին։ Եւ զաւրաժողով եղեն ի վերայ նոցա բազմութիւն անաւրինացն, սուր առեալ ի ձեռին, յայս կոյս և յայն կոյս շրջապատեալ, զհաւատացեալսն ի միջի ունելով . . .։

Եւ նոյն ժամայն Բ. (2) երիտասարդք ի տիոս մանկական հասակի՝ զօրեղ զաւրականք և քաջ նահատակք, զահ և զերկիւղ ի բաց բարձեալ, գոչեն մեծական ձայնիւ ի լուր ամենեցուն. Նզովեալ է Մահմետ աւրէնսդիրն ձեր, և մեք Քրիստոսի եմք աշակերտք և երկոտասան առաքելոցն, և հոգևոր որդիք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին . . .։

Եւ ապա ձայն արձակեալ անաւրինացն, իբրև զշուն կատաղի մռմռեալ ի վերայ նոցա, նետիւ զերկոսին վկայսն անդէն լցին։ Եւ չար բռնաւորն ասէ. Ահա, զի՞ կայք, հայհոյեցին զառաջնորդն մեր. ահա կոտորեցէք զամենեսեան սրով և, առհասարակ, գլխատեցէք և զգլուխս նոցա քարիւ ջարդեցէք։ Եւ նոքա կատարեցին զչար հրամանս նորա, սպանին ի նոցանէ աւելի քան զՌ. (1000) հոգի և Խ. (40) ի նոցանէ կրաւնաւորք, քահա-

569

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱՑ ԳՐՈՑ ԴԱՒԹԻ, ԱՌԱՔԵԼԻ ՍԻՒՆԵՑԻՈՑ

Երևան 1849

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Մեծոփայ վանք—Մաստավանք

123 ա ...Արդ, ես՝ ունայնս ի բարեաց և լցեալս չարեաւք, ծոյլս և
յոյլս և անպիտանս ի մանկունս եկեղեցոյ՝ պիտակ անունս Ներսէս,
որ անուամբ աբեղայ և գործով խաբեբայ, գրեցի զշարս մարգար-
տեայ և զքանոնս ամենայն իմաստասիրական արհեստից և մակացու-
թեանց հրամանաւ և արդեամբք երջանիկ և հոգիընկալ րաբունապե-
123 բ տիս մերոյ և աստուածաբան վարդապետիս և խարազնավարք || ճըգ-
նաւորի Թումայ րաբունապետի և հոգևոր և մարմնաւոր եղբարցն,
որ փայլէ ի ժամանակիս մերում իբրև զարեգակն պայծառ ի կամարս
երկնից, յերկիրս Քաջբերունոյ, ի հրեշտակաբնակ անապատս Մեծո-
փայ։ Այլ և երկրորդ եղբարցն իմոյ հոգևոր հօրն՝ Մկրտիչ վար-
դապետի և Յոհանէս արքեպիսկոպոսի։

Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց Մեծաց ՊՁԹ. (1440), ի պատուական օրինակէ, որ էր գրեալ ձեռամբ Մկրտիչ վարդապետի, որ յայս ամի փոխեցաւ ի Քրիստոս և եթող մեզ սուգ անմխիթար, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Վասն որոյ երես ի գետին դնելով և համբուրեմ զսուրբ զարշապար ընթերցողացդ այսմ աստուածատուր պարգևացս, որք պատահիք սմա ընթեռնլով կամ օրինակելով յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղօք զառածեալս Ներսէս, և զհարազատ եղբայրն իմ զԹըստակէս քահանայ, և զուսուցիչն իմ զՍտեփանոս կրօնաւոր, որ և զփոխարէնն յաստուծոյ առցէ, և զդեռաբոյս որդեակն իմ զԳրիգոր աբեղայ՝ իմոյս աբենակցի, որ բազում անգամ սպասաւորէ մեզ անձանձիր մտօք, և զմարմնաւոր հայրն իմ Ստեփա-

---

նայք և սարկաւագունք էին։ Եւ զոչումն ազգակի նոցա զերկիր դողացուցանէր և զհրեշտակք ի յերկինս զարմացուցանէր, և անմեղութիւն արեան նոցա իբրև զԱբէլին առ տէր ազաղակէր՝ վրէժխնդիր լինել անմեղութեան արեան նոցին։

Եւ հրաման տուեալ չար բռնաւորն՝ զամենայն կանայս և զորդիս նոցա գերի առնուլ, աւելի քան զԺՌ. (10,000) ոգի, և ցրուեալ յամենայն կողմանս Տաճկաստանեաց՝ ի Մսր և ի Խորասան:

Անդ էր տեսանել զաղէտ տարակուսանաց ամենայն քրիստոնեական ընդին, զի մայրըն լայր զորդին և որդին լայրն զմայրն աղիողորմ կսկծանաւք և դառն արտասուաւք. որդեակ իմ բաղձալի, այլ ոչ տեսանեմ զքեզ, վա՜յ արգանդիս՝ որ զքեզ երկնեցի, և վա՜յ իմ աչացս՝ որ զքեզ տեսի, վայ ականջացս՝ որ զձայնդ լսեցի։ Եւ, դարձեալ, որդին գոչէր առ մայրն. Աստուծագութ ծնաւղ իմ ցանկալի, վա՜յ և եղուկ ինձ յերկրի և վա՜յ աւուրն իմ դատաստանի, զի զանապական հաւատս զիմ կորուսի և յաստուծոյ աչաց ելի։

Եւ ոչ ոք կարէ ընդ գրով արկանել զանպատմելի դառնութիւնս, որ եղև Հայոց ազգիս։ Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Բարեխաւսութեամբ սոցին և դառնագոյն չարչարանաւք Քրիստոս աստուած ազատեա զամենայն գերիս քրիստոնէական ազգիս ի յանաւրինացն։

Կատարեցան սոքա ի թուականիս Հայոց ՊՁԹ. (1440)...։

(Ձեռագիր № 4696, էջ 235 բ—238 բ)

Ծոս, և զմայրն իմ զՇամշայ, և զԲ. եղբարքն իմ՝ զԱտոմ և զՎրդանէս, որք մտեալ են ի կարգ աշխարհի, այլ և զԲ. սարկաւագս մեր՝ զՅակոբ ճգնաւոր և զԳալուստ, որք սպասաւորեն մեզ...։

Գարձեալ, կրկին աղաչեմ սխալանացն անմեղադիր լինել, զի կար մեր այս էր...։

Սկսեալ եղեւ ի վանս Մեծոփայ և աւարտեցաւ ի վանս Մատնավանից, առ ոտս արքեպիսկոպոսի Ստեփանոսի, որ յոյժ սէր և հայրութիւն եցոյց մեզ...։

570

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 8404

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ոստան

200 բ Փառք... որ ետ կարողութիւն տկար և տարտամ և անարժան անձինս Կարապետ գրչի հասանել ի յաւարտ Գանձարանիս, որ աւրստաւրէ պայծառացուցանէ զեկեղեցիս և զմանկունս սորա, որ ունի ի ինքն հաւաքեալ ծնընդեան և յարութեան և ամենայն տէրունական տօնից՝ առաքելոց, մարգարէից, ճգնաւորաց, մարտիրոսաց և ամենայն սրբոց։ Որոց փափաքաւղ եղեալ աստուածասէր տանուտէրն Պետրոս և ստացաւ զսա բարի յիշա[տա]կ իւր, և ծնաւղացն իւրոյ՝ Թումային և Սիրային, և ամենայն նախնեացն, և կենակցին՝ Շամշա-խաթունին, և զաւակացն իւր՝ հանգուցելոցն, և դստերն Փաշային, և միւսն դստերն Խալիմ-խաթունին, և ամենայն ազգականացն և արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոց առ աստուած։ Եւ ետ զսա ընծայ և նուէր ի դուռն սրբոյն Թումայի առաքելոյն, ի վանքն, որ կոչի Սուրբ Թումայ, զի մանկունք սուրբ եկեղեցոյս հրճուին սովաւ հանապազ և ուրախասցին ի տա[ւ]նս տէրունականս և ի յիշատակս ամենայն սրբոց, և յիշեսցեն յերկնագնաց յաղաւթս իւրեանց զստացող սուրբ գրոցս զհիւսն Պետրոս, և զծնաւղսն իւր զԹումայ և զՍիրայ, և զկողակիցն զՇամշա-խաթուն, և զհարկեոր և զաստուածասէր և զանու[անի] զփեսայն իւր զպարոն Թումէն, որ յայսմ ամի հանգեաւ առ Քրիստոս և եղև սուգ անմխիթար, և զայլ ամենայն ազգականսն իւր...։

210 ա Եւ արդ, գրեցաւ սա ի մայրաքաղաքս Ոստան, որ է ծովահայեաց. ի դուռն Քարի սուրբ Աստուածածնիս, սուրբ Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Սարգսի զաւրավարին, ի թուականիս Հայոց ՊՂԹ. (1440), ի հայրապետութեանն տէր Զաքարիայի Հայոց կաթողիկոսի։ Եւ արդ ես՝ անկարգս ի կարգաւորաց, անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց, անկատարս ի կատարելոց. մեղչականս յանմեղաց, տգէտս ի գիտնականաց՝ մեղաւոր Կարապետ գրիչս, յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք և գաղափարէք և քաղցր ձայնիւ եղանակէք զսա յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարհեստ

գրչիս Կարապետ, և զծնաւղսն իմ զՍտեփաննոս քահանայ, և զմայրն իմ զՓաշայ, և զեղբայրն իմ զՅովանէս քահանայ, որ փոխեցաւ առ Քրիստոս, և զքոյրն իմ զԱրմանի, և զամենայն արեան մերձաւորսն մեր և զերախտաւորսն, և լի բերանով աստուած-ողորմի ասացէք մեզ և մերոցն ամենայնի...։

Բ

210 բ Ես՝ հիւսն Պետրոս ի գեղջէն Նարեկայ, ետու ըզսա ընծայ և նուէր ի դուռն սուրբ Թումայ առաքելոյն. և մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ եկեղեցոյս՝ ծախելով կամ գրաւելով և կամ [այլ] ինչ պատճառաւ, ոչ ի մերոց, և ոչ ի յօտարաց, և ոչ ի քահանայից. և եթէ ոք յանդգնի և հեռացուցանէ՝ դատապարտի յաստուծոյ և ի սուրբ Թումայ առաքելոյն, և զանէծքն զաւձին և զԿայենին ժառանգեսցէ, և զմասն զՅուդային և զայլ խաչահանուացն առցէ, և մի եղիցի նմա թողութիւն, մի յայս կեանս և մի ի հանդերձ[եալ]ումըն, ամէն։

Իսկ խնամողքն և լաւ պահողքն սորին աւրհնին յաստուծոյ, ամէն։

Գ

21 բ Հազար վա՜ ի վերայ զրոցին, անմեղադիր լերուք։

Դ

205 բ Ջոսկերիչ Քրիստոսատուրն յիշեցէք ի ՚տէր, աստուած-ողորմի ասացէք նմա, որ այսօր մեզ ծիրան յօղարկեց։*

571

ՄԱՇՏՈՑ

Երևան 7263

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Համշէն

228 ա ...Արդ, ի յանկ ելեալ աւարտեցաւ Մաշդոցս ձեռամբ անիմաստ և անարհեստ գրչի Աստուածատուր աբեղի, ի գաւառիս, որ կոչի Համշէն, և ի վանքս Խուժկա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և կենսակիր աստուածընգալ սուրբ Նշանացս, ի թուականութեանս յաբեդական տումարիս ՊՁԹ. (1440), հոռի ամսոյ Բ. (2), ի պարոնութեանն պարոն Դաւթի** և դեռաբոյս զաւակին իւրո պարոն Վարդին, զոր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, ամէն։

Արդ, աղաչեմ զամենեսեան սիրով աստուծոյ, որք պատահիք
228 բ այսմ ամենալի բուրաստանի ‖ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք

* Դ. և Դ. հիշատակագրությունները գրված են նշված էջերի ստորին լուսանցքներում։ Գ-ի գրության առիթն եղել է սխալը, որը թույլ է տվել գրիչը գրույցի հետևանքով։
** Բնագրում՝ «Դօթի»։

յերկնաթռիչ յաղաւթս ձեր զա[նար]ժան գծողս ի թողութիւն յանցանաց, նաև զծնօղսն իմ՝ զփոխեցեալսն յաստի կենաց առ յոյսն ամենայն Քրիստոնէից և զամենայն արեան մերձաւորսն իմ, որք ակն ունին առատ ողորմութեանն աստուծոյ, զի. որ առատն է ի տուրս բարեաց առհասարակ ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս ողորմեսցի յաներեկ աւուրն, ամէն։

572

ԱՒԵՏԱՐԱՆ

ՀԱ, 1993, էջ 341, Կ. Պօլիս

Գրիչ՝ Մաղաքիա
վայր՝ Կաֆայ

Եւ եղև աւարտ սորա [ի ՊՁԹ.] (1440) ամի, ի նոյեմբերի Է. (7) աւրն շաբաթ, ի հայրապետութեան տեառն Գրիգորի բարեպաշտի և աստուածասիրի և իմաստնոյն, և եպիսկոպոսութեան սրբասիրի մեծի տեառն Մաղաքիայի ի մերում Հռնաց աշխարհին և Գազարեաց նահանգիս, Սալխաթ Ղրիմի և Կաֆայիս մայրաքաղաքիս, ի մենաստան մեծի սրբոյն Անտոնի և Աստուածածնի, ի խնդրոյ պատուական և երջանիկ քահանային Աբրահամի...։

Արդ, աւետարանս ազատ արարեալ եդի ի սուրբ եկեղեցիս մեծի սրբոյն Լուսաւորչի...։ Եւ որք յանդգնաբար իշխելոյ աղագաւ բան ասիցէ խոտորեցուցանել կամելով զաւետարանս ի Խալաթեա* եկեղեցւոյս՝ նա զվարձս Կայենի [առցէ]...

Եւ զիս՝ զաղկաղկս և վանաքի գրիչս զՄաղաքեայն յիշեցէք ի տէր Քրիստոս, ողորմութիւն հայցելով ինձ, և ծնողաց իմոց՝ հաւրն՝ իմոյ Ռսաաշային և մաւրն իմոյ Ազիզ-Մէլիքին, և քվերն իմոյ Շիրին-Մէլիքին, և Խութլուպէկին, և աւաք եղբաւրն իմոյ Մաղաքիա կրաւնաւորին՝ զգնացեալսն առ Քրիստոս, և զամենայն ազգականքն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալսն, յիշեցէք ի Քրիստոս զմահտեսի Մկրտիչն և զվոքելն (*) մեր զպարոն Խաչատուրն...:

573

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 7463

Նուիրատու՝ Յովաննէս

351 ա Ես՝ Յովաննէս երէցս, իմ յաւժար կամաւք տվի զայս Այսմաւուրքս սուրբ Աստուածածնին՝ ի Մովսէս իրիցու և իւր որդոյն՝ Յովաննէս իրիցու, ի Մուսեխ իրիցու եկեղեցին սեփական, որ ոչ ոք իշխանութիւն չունի այս գրոցս, ոչ իմ ազգ և ոչ իմ զաւակ չունի իշ-

* Իմա Կոստանդնուպոլսի Ղալաթիա թաղի։

խանութիւն զայս Այսմաւուրքս ի յայս եկեղեցոյս հանել, և ոչ այս եկեղեցոյս քահանայքն՝ վաճառելով կամ ծախելով. և որ յանդգնի՝ զմասն խաչահանուացն, զՑուդային և զԿայենին առցէ։

Դրեցաւ ի թվ. ՊՁԹ. (1440), նոյեմբերի Դ. (4)։

Ես՝ Ավտուլս քարխանաճի, որդի Առաքելին՝ վկա։

Ես՝ Յովաննէս, որդի Մուսեխ քահանայի՝ վկա։

Ես՝ Ամիրս, որդի Յոհանիսին՝ վկա։

Ես՝ Յակոբշաս, որդի Անաիպէկին՝ վկա։

Ես՝ Յոհաննէսս, որդի Սիմէոն քահանայի՝ վկա...։

574

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան 2388

Կազմող՝ Վարդան

1 բ ...Արդ, աղաչեմ զձեզ, ո՜վ պատուական եղանակողք, յիշել ի մեղսաքաւիչ աղաւթս ձեր զսրբասնեալ քահանայն Ստեփաննոս, որ ստացաւ զտետրս ի հալալ վաստակոց իւրոց, ի վայելումն սրբասնեալ զաւակին իւրոյ Աառմ քահանային, զոր տէր աստուած վայելել տաց-
2 ա ցէ նմա ընդ յերկայն ա‖ւուրս, ամէն։

Դարձեալ, ծանուցանեմ ձեզ զաղէտս կսկրծանաց՝ զծաղիկն ձըմերային, մանուշակն գարնանային, զվարդըն փթթեալ ի կոկոնին, զփիլիսոփայն արին, զընթերցող հին և նոր կաակարանին, զճարտարն ի պատասխանին, զհսկաձևն ի մանկտին, զգեղեցիկ տիպ պատկերին, զսիրող աստուածային պատուիրանին, զցանկալին ամենայն ազգաց՝ զԹումա սարկաւագն, զի յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս և սուգ անմխիթար եթող ծնաւղաց իւրոց հաւրն իւրոյ Սաեփանոս քահանային և մաւրն իւրոյ, և եղբաւրն իւրոյ նորընծա քահանային Առոմին, զի ոչ միայն եղբար գոլով, այլ սնընդտկից և ուսումնակից միմեանց,
2 բ զոր մխի‖թարիչ հոգին՝ սուրբ աստուած ճշմարիտ մխիթարեսցէ զսուգ սրտի սոցա, և զԹումա սարկաւագն ընդ սրբոյն Ստեփաննոսի դասակից և պսակակից արասցէ, ամէն։

Կազմեցաւ թվ. Հայոց ՊՁԹ. (1440), ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ, ձեռամբ մեղապարտ Վարդանի, զոր աղաչեմ յիշել միով տէր ողորմայիւ։

575

ԱՒԵՏԱՐԱՆ

Վրաց Թանգարան 25

Վերջին կազմող՝ Վարդան

109 բ Զվերջին կազմող սուրբ աւետարանիս զմեղուցեալ հողս զՎարդան և զծնողսն իմ աղաչեմ յիշել յաղօթս ձեր, ո՜վ սուրբ ընթերցողք։

Կազմեցաւ ի թվ. ՊՁԹ. (1440), տանուտէրն Կարիճն։

576

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 3562

Գրիչ՝ Մովսէս

342 ա *Արդ, եղև գրաւորութիւն սորայ ձեռամբ հոգնամեղ և փծուն գրչիս* Մովսիսի *քահանայ[ի], մեղսամած մատամբ գծագրեցի: Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցաւ ի թվականիս մերոյ տումարիս ՊՁԹ. (1440), և այլ աւելի և պակաոն աստուած գիտէ, ամէն:**

577

ԱՒԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 1828

Գրիչ՝ Սարգիս

... Եւ զայրն իւր | | | Ստեփանոս, *և զորդիսն իւր* Ստեփանոս *և* Սօլթանշահ, *և դստերսն իւր* Խոյանդքարշան *և* Գոնդիշան *... և զհայրն իւր* Նուդ *| | | և* զԳալուստն *և* զԽաչնանէսն *և* զԱստուածատուրն *| | |, զիս՝* զՍարգիս *անարժան գծողս, և զծնաւղսն իմ՝ զհայրն իմ* Թադէոս, *և զբազմերախտ և արտասուալից մայրն իմ* Էլմայ, *և զեղբայրն իմ...: Ցիշեցէք* զԱբրահամ *բարի և հաւատարիմ և կուսակրաւն մուզդեսին, որ զթուղթս կոկեաց ... թվ. ՊՁԹ. (1440):*

578

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

ԼՑՎ 1481, Աղթամար

Գրիչ՝ Ստեփաննոս

Արդ, գրեցաւ գիրքս այս ձեռամբ մեղսաներկի և անարհեստ գրչի Ստեփաննոս *աբեղայի, ի թուականութեան Հայոց տումարի ՊՁԹ. (1440), ի հայրապետութեան տեառն | | |*

Արա ողորմութիւն ստացաւղի սուրբ կտակիս՝ հոգևոր հաւրն Քուրթանշին, *և ամուսնոյն իւրոյ* Դիլշատին, *և* Շալումին, *և* Կարապետին, *և մեղապարտ գրողի՝* Ստեփաննոս *անարժան աբեղայի, և կարդացողաց, և լսողաց, և քեզ փառք:*

---

* *Հիշատակարանի սույն անգամահատված քաղվածքը գտնվում է Նորոզող Կարապետ եպիսկոպոսի կողմից 1601 թ. գրված հիշատակարանի մեջ և, հավանորեն, արտագրըված է այժմ գոյություն չունեցող գլխավոր հիշատակարանից: Տարակուսանք է պատճառում այն հանգամանքը, որ ձեռագրի երկու փոքր հիշատակագրությունների մեջ, որպես գրիչ հանդես է գալիս ոչ թե Մովսեսը, այլ ոմն Ըռըստակէս: Ստորև տալիս ենք այդ հիշատակագրությունները. «Աղաչեմ յիշել ի տէր* զԸռըսթակէս *մեղօք լցեալ գերիս, և որ յիշէ բոլոր սրտիւ նա՝ աստուած յիշէ զյիշողն ի բարին» (էջ 336 ա): «Աղաչեմ յիշել ի տէր* զԸռըսթակէս *գրիչս՝ զմեղաւք լցեալս և զծնօղսն իմ» (էջ 260 ա):*

579

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 6863

Վայր՝ Հախբատ

...Արդ, յանկ ելեալ աւարտեցաւ. հոգիաբուխ քառավըրակ աս-
300 ա տուածաշունչ մատեանս... ‖ ի մեծահռչակ և աստուածաբնակ և հրեշ-
տակաճեմ յաթոռս Հախբատայ, ընդ հովանեաւ աստուածազաւր և
արեամբ ներկեալ սուրբ Նշանիս, և երկնանըման Կաթողիկէիս, և
բարձրացեալ բազկատարած Փրկչիս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ
Կարապետիս, և Առաքելոցս, <և սուրբ Կարապետիս>, և սուրբ Գրիգո-
րիս, և սուրբ Յակոբիս, և սուրբ Նիկողայոսի, և սուրբ Տէրունականիս,
և Լեղանի սուրբ Նշանիս, և Շիկիքարի սուրբ Սարգսիս, և սուրբ
Երրորդութենիս, և Սարկաւագ վարդապետի սուրբ դամբարանիս, և
300 բ Թեփակեր ճգնաւորի սուրբ շիրմիս, և այլ բազմահաւ ‖ աք սրբոց, որ
աստ կան գումարեալ ի պատիւ արեամբ ներկեալ սուրբ Նշանիս, ի
Թվականութեանս Հայկազեանս տաւմարի Պ.-երորդի և իննսուներոր-
դի (1441), ի դառն և յանբարի ժամանակի, յորում սաստկացեալ էր
սուրն Իսմայելացոց ի վերայ մեր հալածանաւք, ըստ յառաջատես
տեսլեանն սրբոյն Սահակայ, որ և տատանեալ ծփիմք ամենաներհակ
արկածիւք ի ներքուստ և արտաքուստ, որ ափշութիւն տեսականի և
մինչնուՊՌ (այսպէս) գործոյս. Զի յայսմ ամի զանն Դայվրիժու Ջա-
հանշայ իմիրզայն՝ որդի Թուրքման Յուսուփին՝ որդո Ղարա-Մահմա-
301 ա տին, ելեալ բազում զաւրաւք և ան ‖ թիւ հեծելաւք մահմետականաւք՝
եկն ի Վերաստուն, ի վերայ Վրաց, զի ոչ հնազանդէին ազգն Վրաց զա-
նին Թավրիժու։ Եւ յորժամ եկն ազգն Տաճկաց՝ փախստական եղեն ազ-
գըն Վրաց և մտան ի յԱփխազս, և մնաց ազգս Հայոց, որք եկեալ
էին և բնակեալ ի Վրացտունս՝ ի ձեռն անաւրինաց, և իբրև զկատա-
ղած գազան յարձակեցան ի վերայ Հայոց, և սուր եդեալ ի վերա, և
սպանին իբրև հազարաց հնգից անողորմ. և աւելի քան զվաթսուն
կրաւնա[ւ]որ և քահանայ սրով և քարիւ քարկոծեցին և սպանին, և
բազում եկեղեցիք ի հիմանց տապալեցին, և զբազում մանկունս ի
301 բ ‖ մարցն խլէին և ընդ քարիւ հարկանէին, և մայրն զայն տեսանէր.
և զբազում մանկունս անմեղս մերկացուցանէին և սրով խոցոտէին,
և տղայն ճչէր և աղաղակէր և լայր, և անաւրէնքն ծիծաղէին և ասէ-
ին՝ Ահա ձայն, որ ի յիւրեանց բէհէշտէն կուգա. և մայրն զայն տե-
սանէր և աղեխարշեալ մորմոքէր և լայր, և ոչ ոք էր որ աւգնէր։
Բազում կանայք զտղայն ի գիրկն առնէին և քար ի վայր ան[կ]ա-

նէին։ Եւ Գ. (3) ամիս նստան ի վերա ամուրին Սամշուլտու, և յոր-ժամ խաբէութեամբ առին զբերդն, թէ որպէս յափշտակեցին զինչսն կամ որպէս բաժանեցին զայրքն ի կանանցն, կամ որպէս խլէին զ"րդ | | | *

580

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9450

Հետ. ստացողներ՝ Գրիգոր և Բարսեղ

372 բ Ի Թուականութեանս Հայոց ՋՁՀԹ (՞) Ջահանշէն, որ զԼոռու բերդն հեսարեց՝ սուրբ աւետարանս գերի անկօ։**

Ես տէր Գրիգորս և Բարսեղ աբեղայս կանգնեցաք Ռ. (1000) դեկան տուաք, Թափեցաք ի գերութենէ յիշատակ մեզ և ծընօղաց մերոց, ամէն։

581

ՑԱՑՍՄԱՒՈՒՐՔ

Ա. Դավրիժեցի, Պատմութիւն, 1884, էջ 321—322
Ինճիճեան, Հնախօսութիւն, Ա. էջ 106—107

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Վան

Եւ արդ, գրեցաւ սա ի Թուականութեանս Հայոց Մեծաց ՊՂ. (1441) ամին, ի յերկիրս Վասպուրականի, ի քաղաքիս Վան կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս, և այլ սրբոցս, [ձեռամբ Վարդան քահանայի], ի հայրապետութեան մեծ աթոռոյն Սսայ, որ յայժմ ամի զլուսաւորչի աջն գողացեալ տարան, և աթոռն ունայն մնաց, ի դառն և ի չար ժամանակիս, ի պարոնութեանն Ջհանշահին***, որ չարութեամբ իւրով լցեալ գնաց ի Վրացաուն... և էառ զդղեակն

* Շարունակությունը կտրված է։

** Թվականը ՋՁՀԹ. (1530) ձեռագրում շատ պարզ է գրված, սակայն, անտարակույս, Թյուրիմացության արդյունք է։ 1580-ին Ջհանշահ անունով ոչ մի իշխող չի եղել, ուստի չի էլ արշավել Լոռու վրա։ Ջհանշահի արշավանքը դեպի Լոռի ու Վրաստան, ինչպես հաղորդում են բազմաթիվ հիշատակագիրներ, տեղի է ունեցել 1440 Թվականին։ Հիշատակագրությունը տեղադրում ենք 1441 Թվաշարքում, ենթադրելով, որ եթե ձեռագիրը գրի է ընկել 1440-ին, ապա մինչև գերությունից հետ գնվելը պետք է, որ որոշ ժամանակ անցած լիներ։

*** Հիշատակարանի այս հատվածը մեջ է բերում իր «Հրումն լիակատար վարուց և վկայաբանութեանց սրբոց» աշխատության ԺԱ հատորում (Վենետիկ, 1814) նաև Մ. Ավգերյանը։ Այնուհետև նա հայտնում է, որ գրիչը «յիշէ և զԹովմա վարդապետ, որ ի վանս Մեծոփայ, և զՀէրապետ կրօնաւորն յորոյ ի խնդրոյ գրեալ է մատեանս» (էջ ՀԷ-ՀԸ)։

Շամշուլտայ. և ինն հազար անձինք քրիստոնէից և այլ աւելի՝ հան-դերձ քահանայիւք ի սուր սուսերի մաշեցին, և զկանայսն և զտղայսն գերեվարեցին. զորոց աղէտ տարակուսանացն ով կարէ պատմել կամ գրել. և այս ամենայն վասն մեղաց գան ի վերայ աշխարհիս*

Ցայսմ ամի մեծ նշան եղև, քանզի լեառն Մամրուտ կոչեցեալ, որ ի մէջ Խլաթ և ի Բաղէշ է, յանկարծակի գոռաց, իբրև զսաստիկ որոտումն ամպոյ, որ երկիրն ամենայն ահարեկ եղեալ սասանեցան, որ և տղայքն ընդ հարս և ընդ մարս ողջս առեալ լային, վասն զի տեսին, որ սառն պատառեցաւ լայն՝ իբր զքաղաք մի և այլ փոքր փոքր, և ի պատառուածէն ի վեր հուր ցոլացեալ ելանէր մառախլա-պատ ծխով և ժահահոտութեամբ, որ և տղայքն ի հոտոյն հիւանդա-նային, և քարինք եռային յահագին բոցոյն, և մեծամեծ վէմս ընդ երկինս ձգէին ձայնիւ որոտմամբ. որ և ի դղրդմանէն Խլաթ քաղաք կարծիս առեալ դողային։ Զայս ամենայն տեսին աչօք բացօք և այ գաւառք,

582

ԺԱՇՈՑ

«Թորոս Աղբար», Ա, էջ 222, Տիվրիկի ս. Աստուածածին եկեղեցի

Գրիչ՝ Յովաննէս։
վայր՝ Արճէշ

ա

... Զոր տեսեալ զայսպիսի գանձս ... Մկրտիչ քահանայն, և ետ գրել զբոլոր տարեգիրքս տարւոյն անպատճառ և անթերի, յիշատակ իւր, և ծնաւղացն իւրոց Աւնոփրիոս քահանային, մաւրն իւր Շայմե-լիքին, և հաւրեղբարցն իւր պարոն Բուլքարամին, Նիկաւղաոսին, և Ստեփաննոսին, և մաւրեղբարցն իւր Կարապետ վարդապետին, և Յո-վաննէս հէրպետին, և Ազիզբակին, և զմօրքուեր որդին իւր զտէր Ստեփան եպիսկոպոսն։

Այլ և յիշեսցէ տէր աստուածն Իսրայէլի զսանամայրն իւր զՈւս-լուն-Մէլիքն, և զդուստր իւր զՄեծ-Խաթունն, որ ի տէր Մկրտիչ հէր-պետին բազում երախտիք ունին՝ հոգևոր և մարմնաւոր....

Արդ, աղաչեմ զամենեսեան յիշեցէք ի Քրիստոս զստացող գրոցս զՂազար երէց, և զծնաւղսն իւր, և զայլ արեան մերձաւորսն, և աս-տուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամէն։

Արդ, գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Յովհան-նէս քահանայի, ի յերկիրս Քաջբերունի, ի քաղաքս, որ կոչի Արճէշ, ընդ հովանեաւ կըմբեթայարկ և խորանաձև սուրբ եկեղեցոյս, որ յա-նուն սուրբ Գէորգայ զաւրավարին կառուցեալ կայ։

Ի թագաւորութեան ազգին Նետողաց սուլթան Ճիհանշային, և ի կաթողիկոսութեան սուրբ Լուսաւորչին աթոռոյն տէր Կիրակոսի, որ մականուն Խըլոց կոչի։

---

* Զհանշահի անվան հիշատակությունից հետո՝ մինչև այստեղ ունի միայն Ա. Դավ-րիժեցին, որով և նրա մոտ հիշատակարանն ավարտվում է։

Արդ, գրեցաւ սա ի Թուականիս Հայոց ՐՃՂ. (1441) Թուին, ձեռամբ յոգնամեղ և տխմար գրչի Յովաննէս քահանայի, ի յիշատակութիւն Մկրտիչ քահանայի՝ ստացողի և նկարողի*

583

ՃԱՇՈՑ

Երևան 1771**

Վայր՝ Արծկէ

309 ա Եւ արդ, գրեցաւ սա ի քաղաքս Արծկէ, հանդէպ սրբարար ծովուս, որ մանր ձկունք ելանեն, ընդ հովանեաւ պատերազմի սուրբ Նշանիս և ամենամաքուր սուրբ Աստուածածնի կաթուղիկէիս, ի հայրապետութեան մեծ աթոռոյն, որ էր ի Սիս՝ խափանեցաւ, զի զաջն սուրբ Լուսաւորչին անդի գողացան, և երկու ամ ազգս Հայոց անաէրունչ մնաց։ Ի դառն և ի չար ժամանակիս, յորում շարժեալ էր պիղծն Ջիհանշան, զի Թվականս Հայոց ՊՂ. (1441) էր, որ այս ամենայն բանս եղև։

584

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Փիրղ. Նօա. 125, Ամասիոյ ս. Նիկողայոս եկեղեցի

…[Գրեցաւ] ի Թուին Հայոց Մեծացն ՊՂ. (1441), յամսեանն մարտի, որ օր տասնհինգ էր, աւուր չորեքշաբթի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, և սուրբ Ատեփաննոսի նախավկային, և սուրբ Սարգսի զօրավարին, և սուրբ Կարապետին, և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան, ի հայրապետութեան տեառն Գրիգորի կաթուղիկոսի ամենայն Հայոց, ի սուլթանութեան Եգիպտացւոց և յաշխարհակալութեան Մելիք–Տաճարի, որ մականուն Ջախմախ կոչի, ի դառն և ի նեղ ժամանակի… որ կէսքս ի սովու յաշխարհէ յայլ գաւառ վարեն, և կէսք յեղբարց և ի մարց բաժանեն։ Եւ յայսմ ամի ՊՂ. (1441) դարձեալ յայլ իմն պատահումն հանդիպեցաւ Հայոց ազգիս, քանզի աջ սուրբ լուսաւորչին մերոյ Գրիգորի, որ կայր հիմի քանի ժամանակ [ի Սիս] քաղաքի, որ յաշխարհին | | | Կիլի[կ]եայ*** անյայտ եղև։ Ոչ գիտեմք թէ գողացան, և ոչ գիտեմք՝ ինքն զինքն ծածկեց, և ի մեծ նեղութիւն կան և ի տրտմութիւն Հայոց ազգս վասն այս

* Այս նույն ձեռագրի մասին տես նաև 1450-ի թվաշարքում։

** № 1771 ձեռագիրը հարուստ բովանդակությամբ ժողովածու է, որի 307 ա—312 բ էջերում ընդօրինակված են մի քանի ձեռագրերի հիշատակարաններ, որոնցից է նաև այս հիշատակարանը՝ վերնագրված այսպես՝ «Յայլ գրքէ գտաք և գրեցաք զայս այլ»։ Ունի նաև Առաքել Դաւրիժեցին (տես «Պատմութիւն», Էջմիածին, 1884, էջ 321), նրա մոտ տարբեր է միայն հիշատակարանի սկիզբը («Եւ արդ, գրեցաւ Ճաշու գիրքս…»)։ Հնարավոր է ենթադրել, որ № 1771 ձեռագրի մեջ Լուսաւորչի աջի մասին հիշատակարաններ հավաքողը հենց ինքը Առաքել Դավրիժեցին է։

*** Հիշատակարանի այս մասը մաշված է եղել։

պատճառի։ Եւ զկաթուղիկոս Գրիգոր բազում չարչարեցին, և այլ եպիսկոպոսք ընդ նմա՝ վասն աջին Լուսաւորչին, և ոչ գտին զնա. որ յուսամք ամենասուրբ հոգին աստուած. զի յայտնեսցէ զաջ սուրբ Լուսաւորչին մերոյ ի ձեռն ընտրելոյ և արդարոյ առնն միոյ, որպէս զփայտն սուրբ Խաչին՝ ի ձեռն Կիւրղի, և որպէս զինքն զԼուսաւորիչն ի ձեռն հովուացն, և որպէս զխաչն Վարագայ՝ ի ձեռն Թոդկայ սուրբ ճգնաւորի, և որպէս զնշխարն սուրբ Քօշիցն՝ ի ժամանակն վերջին, ամէն և եղիցի։

585

ՃԱՇՈՑ

Երևան 9087

Նուիրատու՝ Ամիր-Փաշայ

ա

138 բ … Այր ոմն ազնուական Ամիր-Փաշայ անուն մահդասի, ի մեծահռչակ նահանգէն և յանուանի և յականաւոր քաղաքէն Ախըլցխոյ… գնաց յԵրուսաղէմ երկիրպագանել սուրբ տեղեաց տնօրինականացն տեառն։ Եւ անդի դարձեալ եկն յարևելս. և հանդիպեցաւ ի բանակս Շահռուխ կոչեցեալ բռնաւորի՝ որդւոյ Լանկ-Թամուրի, որ էր բանակեալ շուրջ զգզեկեաւն Երընճակոյ, որ և գիրքս զայս գերի բերեալ յերկրէն Սիւնեաց: Եւ հանդիպեալ սըմա մեծահաւատ մահդասիս Ամիր-Փաշա, եւ ետ ի հալալ արդեանց իւրոց և յարդար վաստակոց իւրոց, և գնեաց զգիրքս և ազատեաց ի գերութենէ այլազգեաց։*

Եւ ըստ սիրալիր ըղձից իւրոց … զոր ունէր առ սուրբ առաքեալն Թադէոս՝ ընծայեաց զայս հոգէնորոգ մատեանս և զվարդափթիթ բուրա[ստա]նս յիշատակ հոգւոյ իւրոյ ի դուրս երկնահանգէտ սուրբ ուխտիս և գերահռչակ սուրբ մենաստանիս և աստուածաբնակ սուրբ տաճարիս և լոյսընծայ սուրբ գերեզմանի սուրբ առաքելոյս Թադէոսի։

Արդ, որք հանդիպիք այսմ աստուածաշունչ սուրբ տառիս կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԱմիր-Փաշայ մահդասին, և զհայրն իւր զՊարոն, և զմայր իւր զՄամա-Դեառ, զմեծ պապն իւր զՀեղու, և զմամն իւր զՄարգարիտ, և զեղբայր իւր զԱմիրշան, և զքոյր իւր զՍատրիշան, և զՋանխաթուն ,և զայլ ամենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանիս և զհանգուցեալսն…։

բ

Նուիրատու՝ Ովանէս Սալմաստեցի.

399 ա … Յիշեսջիք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացաւղ սուրբ գրոցս զՈվանէս աստուածասէր և բարեպաշտ քրիստոնեա, որ է

* Այսպիսով, Ամիր-Փաշայի հիշատակարանը գրված է 1441-ից տարիներ առաջ, հավանաբար Շահռուխի 1429 թվականին ձեռնարկած արշավանքի ժամանակ, երբ նա, խրոխ, պաշարեց և գրավեց Երնջակի բերդը։

սայ ի Սալամաստա երկրէն և բարի հոգի, և եկեալ բնակեցաւ ի տե-
գիս, որ կոչի Ջաղացտեղ, եւ հանդիպաւղ եղև աստուածաբուխ գան-
ձուցս... և էառ զսա ի հալալ ընչից և յարդար վաստակոց, յիշատակ
իւրենն, և ծնաւղացն իւրոց՝ հաւրն իւրո Տիրատրոյ, և մաւրն իւրոյ
Մարեմին, և ամենայն ազգատոհ[մ]քին...։ Եւ ետ զսայ ընծայ սուրբ
Աստուածածնիս...։

Ես Յովանէս կամեցայ, որ իմ ծնաւղացն խաչ կանկնեցնի։ Նա
ի յաստմանէ սուրբ հոգոյն հանդիպեցաւ սուրբ կտակս, առի յիմ հա-
լալ վաստակոցն զսուրբ գիրքս և դրի ի սուրբ Աստուածածինս, որ
ամէն տաւնի և ի տէրունական հանգիսի աստուած-ողորմի ասեն ինձ,
որ Յովաննէս եմ, և ծնաւղաց իմոց...։

Այլ և կրկին աղաչեմ զհանդիպող եղբարքդ յիշել ի սուրբ միտս
ձեր աշխատողք սուրբ գրոցն զՇզեկիէլ վարդապետ, որ և գծագրեաց
զսա. յետ ժամանակի գերեցաւ ի Սիւնեաց և բերաւ ի սուրբ առա-
քեալքն Թադէոսի. և քաջահաւատ մահդասի Ամիր-Փաշայ անուն էառ՝
ետ սուրբ առաքեալն Թադէոսի։ Եւ անդի բերաւ հրամանաւ Գրիգոր
վարդապետին՝ աթոռակալ սրբոյն Թադէոսի առաքելոյն՝ ի Ձորս—Շամ-
բի, ի գեւղս Ջալալացաեղ, և ծախեաց։ Զսուրբ և քաջահաւատ Քրիստո-
նեայս Յովանէս զիւր հոգոյ բաժինն էրետ և էառ զսա յիշատակ հո-
գոյ իւրոյ, և եդ առ սուրբ Աստուածածինս։

Այրս այս էր ամենայն բարութեամբ լցեալ, էր հեզ և խոնարհ,
աստուածասէր և աղաւթարար, զինչ որ աշխատութեամբ առեալ էր՝
զամէնն էրետ և գնեց զաստուածային գանձս, և եկաց ի գեաւղս՝ ընդ
առն աստուածասէր և բարեպաշտ տանուտրոջ Պարսումա, որդովքն
իւր Ամիրազզին, որ և կնքահայր եղև Նոցայ | | |* ի Թվ. ՊՂ. (1441)
[էա]ռ զսուրբս, և աղաթիւք կեցեալ զամենայն աւուրս կենաց իւրոց։
Եւ ձեզ և մեզ և ամենայն աշխատաւորաց սուրբ գրոցս ի միասին
ողորմեսցի Քրիստոս աստուած, ամէն։

586

Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 3556

Գրիչ՝ Սարգիս

ա

181 ա Ի Թուականութեանըս Հայոց ՊՂ. (1441) եղև զրաւ գըրչութեան
սուրբ և տիեզերալոյս և համապիտան գըրկունքս, որ կոչի Մաշթոց, ի
գաւառըս Մաւրակայ սուրբ Նշանին և ի գեղակս, որ կոչի | | |**
182 բ Եւ վասն անբարի և դառի ժամանակիս, յորում եմք՝ չէ բնաւ
կարողութիւն պատմել կամ ընդ գրով արկանել, յորում ազգըս մեր
քրիստոնէից էին ի նեղութիւն երեքալեան Թըշըուառութեամբ և

* Մեկ տող քերումով ջնջված է։
** Մի թերթ ընկած է։

հարկպահանջութեամբ և այլ ազգի ազգի վըշտաւք և նեղութեամբ վասն բազմանալոյ անաւրինաց։ Վա մեզ, և դարձեալ վա մեզ, զի կատարեցաւ մարգարէութիւն հոգելից առն աստուծոյ սրբոյն Ներսէսի, որ վասն քրիստոնէից, թէ՝ Ցամենայն կողմանց նեղին, և փոխին անզոջէ ի տեղիս, և հանգիստ ոչ գտանեն, և վասն մարդադէմ և գառնայթոյն գազանաց ազգին նետողաց։ Ահայ կատարեցաւ ամենայն, զի՝ Ասեմք լերանց, թէ ծածկեցէք զմեզ և բլրոց, թէ անկերուք ի վերայ մեր, վասն սաստիկ նեղութեանս և վասն կարի անբարի ժամանակիս։

Այս բաւ լիցի ձեզ։

182 բ Եւ դարձեալ աղաչեմ զձեզ. ով սուրբ ընթերցողք յիշեցէք զանարժան գրիչս՝ զՍարգիս սարկաւագն, և զկենակիցն իմ ըզԴայիանէն, և աստուած յիշէ զձեզ, ամէն։

Եւ դարձեալ, յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս. առհասարակ, ողորմեսցի Քրիստոս աստուած, ամէն։

Բ

Ա՜ւխ, թէ լինէր բազում յանցանաց իմոց թողութիւն, որ գառն խոցաւք խոցոտեալ եմ և վիրաւոր կամ ի մեղաց իմոց, ո՜վ եղբայրք։*

Գ

Ա՜ւխ եղբարք, զեղկելի գրչակս յիշեցէք, որ խիստ վիրաւոր կամ յաշխարհիս, որ չունիմ ի յաշխարհէս ինձ աւգնական՝ ոչ հայրիկ'ւ ոչ մայրիկ'ւ ոչ եղբայրիկ, ես միայն եմ մնացեալ քան զթուփ ի դաշտ։**

Դ

Ո՜վ տէր Յովաննէս, եղբայր բարի,
Սրտիս ուժեկ իմ սիրելի,
Պայծառ ջահ անշիջելի,
Գեղ պատկերիդ ես ցանկայի
Եւ աղաւթիցդ փափաքի,
Որ զիս յիշես ի պատարագի,
Բոլոր սրտիւ տէր-ողորմի.
Քանզի մեղաւք շաղախեցի,
Ջհոգիս մաքուր սևացուցի,
Դարձեալ ձայնեմ ողորմելի
Եւ հառաչեմ արտասուալի։***

* Գրված է 123 բ—124 ա էջերի ստորին լուսանցքում։
** Գրված է 134 բ—135 ա էջերի ստորին լուսանցքում։
*** Գրված է 150 բ—152 ա էջերի ստորին լուսանցքում։

587

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 3802

Գրիչ՝ Թովմա Մեծոփեցի
վայր՝ Քաջբերունեաց երկիր,
Գէորգայ զօրավարի վանք

ա

313 ա ...Ուստի և անսեալ զսորա անճառ փրկագործութեանն խոր-
հուրդ աստուածասէր և բարեպաշտուհի մահդասի կինն Գուլփա-
շէն* և ետ գրել զսուրբ աւետարանս յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, և
բարի ծնաւղաց իւրոց՝ հաւրն Մխիթարին և մաւրն,** և առն իւրում
Առաքելին, և եղբաւրն Ղազարին, և ամենայն արեան մերձաւորաց
իւրոց՝ կենդանեաց և հանգուցելոցն։ Եւ յորժամ ճաշակէք յաստուա-
ծային բուրաստանէս և յամենալի սեղանոյս ընթերցմամբ, կամ գա-
ղափար առնելով, և կամ հարեանցի տեսութեամբ, և կամ օրինակաւ՝
315 բ յիշես || զիք առաջի անմահ գառին Յիսուսի Քրիստոսի ստացաւղ
սուրբ աւետարանիս՝ զմահդասի կինն զՓաշա-Մայրն և զծնաւղսն իւր ի
մաքուր և յանարատ յաղօթս ձեր...։

Նկ. 20. Ձեռագրի ստացող մահդասի Գուլփաշայի պատկերը

Այլ և ես՝ մեղուցեալ գրիչս Թովմա Մեծեփցի, ի ծերութեան ժամանակիս, որ խիստ տկար էի մարմնովս և հոգովս, այլ վասն

* 10 բ էջում, ծնկաչոք դիրքով նկարված է ստացող Գուլփաշէն։ Նկարի կողքին կարդում ենք հետևյալ մակագրությունը՝ «Յիշեցէք ի Քրիստոս զմահդասի պատուգ՝ ստացող սուրբ աւետարանիս» (տես նկ. 20)։

** Անվան գրության համար տեղ է բաց թողնված։

բազում աղաչանաց և պաղատանաց հոգևոր եղբարցն Ներսէս վարդապետին և Հերապետ կրօնաւորին և ստացողի գրոցս մահդասուն՝ ձեռն ի գործ արկի մեղաւոր անձամբ և գրեցի անարժան ձեռաւք
316 ա իմովք ի յերկիրս Քաշ Ս բերունեաց, ընդ հովանեաւ սուրբ Դէորգեա զաւրավարիս և այլ սրբոցն, որ աստ կան։ Եւ ի Թվականիս մերոյ ՊՂ. (1441), և ի հայրապետութեանն տեառն Գրիգորի սուրբ Էջմիածնի, և ի Թագաւորութեանն Ջհանշին։



Նկ. 21. Թովմա Մեծոփեցու ինքնագիրը

Արդ, ի յայսմ գառն ժամանակի հաւատարիմ և իմաստուն կինս այս Փաշայ-Մայրս գնաց բազում չարչարանօք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ անտի եկն ուրախութեամբ և ետ գրել զսուրբ տէրունեան աւետարանս յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, և ծնաւղացն իւրոց, և զաւակացն, և մանաւանդ որդոյն իւրոյ Մխիթարին, որ յանկարծամահ յաստուած փախեցաւ և սուգ անմխիթար եթող ծնաւղացն։ Եւ ետ սուրբ աւետարանս ի վայելումն անձանց հոգևոր որդոցն՝ քաջ րաբունոյն Ներսէս վարդապետին. և այլ ոչ ոք իշխեսցէ սմին, բայց վարդապետն Ներսէս և եղբայրն իւր Ռստակէս կրօնաւորն վայելեն և աստուած-ողորմի ասեն Փաշայ-Մորն...:

316 բ Այլ և կրկին յիշեցէք յաղաւթս զստացաւղ սուրբ աւետարանիս՝ զմահդասի Փաշայ-Մայրն, և զքեռիքն իւր՝ զպարոն Աստուածատուրն և զպարոն Խաչատուրն, և զաւակսն նոցին, և զՎարդանն, և զզաւակսն իւր, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն...։

588

ՇԱՐԱԿՆՈՑ ԵՒ ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան 5667

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Մեծոփայ վանք

146 բ Փառք... որ ետ կարողութիւն իմոյ տկարութեանս և հասոյց Ս ի յաւարտ աստուածային երգարանիս, որ կոչի տեառ և տաւանացոյց՝

Եւ գրեցի ըստ իմում կարի յիշատակ ինձ և ծնողաց իմոց Ղազար մահգասուն և Ամբարին՝ հանգուցելոցն ի Քրիստոս, և ի Թվականիս ՊՂ. (1441), ձեռամբ անիմաստ գրչիս Թումայի, ի սուրբ ուխտս Մեծոփայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլ սրբոցն, որ աստ կան հանգուցեալ, և առ ոտս տիեզերալոյս վարդապետիս Թումայի, զոր և տէր աստուած պահեսցէ անսասան կենաւք, ամէն։

Եւ ես եղկելի գրիչս Թումա աղաչեմ զմանկունսդ սուրբ եկեղեցոյ, որք աւգտիք ի սմանէ կարդալով և ուսանելով և կամ աւրինա-
147 ա կելով, յի ‖ շեսջիք առաջի անմահ գառինն Քրիստոսի և Թողութիւն մեղաց մերոց հայցեցէք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ [է] աւրհնեալ յաւիտեանս։

Ո՜վ եղբարք և սիրելիք, անմեղադիր լերուք վասն խոշորութեան գրիս, զի մագաղաթս հին էր, և շատ աշխատեցայ և քերեցի և ոչ կարացի զայպն հանել, զի չոր և խոշոր էր,* և ժամանակս չար, և աւուրքն ձմերայնի, զի կար մեր այս էր։

Բ

240 բ Գրեցի զսա յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց Ղազար մահդասուն, և Ամբարին՝ հանգուցելոցն ի Քրիստոս։ Անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց, զի արկար էի մարմնովս և աչաւքս...։

Գ

210 ա Դարձեալ, կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զտէր Վարդան կրօնաւորն, որ նախախնամեաց բազում ժամանակ զգիրքս, և յետոյ եդ ի վանս սուրբ սքանչելագործ զօրեղ սուրբ խաչին Արծրկոյ, բարեխօս այնոցիկ յորոյ վերայ սուրբ գրոցս երախտիք և աշխատանք ունի՝ տէր Թումայ վարդապետին և տէր Վարդան կրօնաւորին, և եղ-
210 բ բօրորդոցն՝ Աւետիսին, Վարդանիսին, Երիանոսին, ‖ և տէր Սաէփանոսին՝ խաչընդուս կրօնաւորին, որ մականուն Հաւիկ կոչի, և այլ նախախընամող միաբանացն սուրբ սքանչելագործին, և որ յետ սոցա նախախնամէ զսուրբ գիրքս ի դուռն սուրբ Խաչիս՝ վարձս ի Քրիստոսէ առցէ։ Եւ կացցէ գիրքս անջինջ յիշատակ տէր Թումա վարպետին, ի դուռն Սքանչելագործին, և մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա կամ ծախելով կամ գրաւելով, և որ յանգգնի և հեռացուցանէ զպատիժն կայենին առցէ, ամէն։**

* Ձեռագիրը Մատենադարանի սակավաթիվ կրկնագրերից (палимпсест) մեկն է։

** Գ. հիշատակարանը գրված է ձեռագրի գրությունից «բազում ժամանակ» (իմա. մեկ-երկու տասնամյակ) հետո, այլ ձեռագրով։

589

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5515

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամար

ա

281 բ ... *Արդ դրեցաւ սուրբ աւետարանս ի կղզիս* Աղթա ‖ մար, *ընդ*
հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տէր
Զաքարիայի, *և ի թըւին Հայոց* ՊՂ. *(1441), ձեռամբ* Դանիէլի *սուտա-*
նուն քահանայի, ի ստոյգ և յընտիր աւրինակէ, կենաւք տառապա-
նաւք և բազում պանդըխտութեամբ, ի գաւռ և ի վշտաբեր ժամա-
նակիս։ Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամե-
նալի սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ և ընթերցմամբ,
282 ա *յիշեսջիք յաղաւթս ձեր զյառաջ յիշեցեալ ստացող սորա* զՄկրտիչ, ‖
և զծնողքն իւր զՊարոն *և* զՇաքար, *և զեղբարքն* զԳրիգոր *և* զՍտեփա-
նոս *կրաւնաւոր, և զքոյրն* զԹան-Հաթուն, *և զազգն ամենայն յիշեցէք*
և աստուած-ողորմի ասացէք, ընդ նոսին և զանպիտան Դանիէլ *գրիչ,*
և զծնօղքն իմ զԿարապետ *քահանայ և* զԴուռ-Մէլիք, *և զեղբայրն իմ*
զԹումայ *կրաւնաւոր, և զկենակիցն իմ* զՇամսա-Հաթուն, *և զորդիքս*
մեր զՍտեփանոս *կրաւնաւոր և* զՈվանէս *և* Զաքարայ, *որ աշխատեցան*
ի կոկել թղթիս, և զքոյրքն մեր, և զհանգուցեալ տղայքն մեր՝ զԶա-
քարիայ *շնորհալի սարկաւագն և* զԿարապետ *և* զԱրմանի-Հաթուն, *որք*
տարաժամ մահուամբ փոխեցան առ Քրիստոս և մեզ թողին սուգ
անմխիթարելի, և ղուսուցիչն մեր և զհաւրեղբայրն՝ զԶաքարիայ *փի-*
282 բ *լիսոփայն, և զամենայն ազգականքն մեր՝ զկենդանիք* ‖ *և զննջե-*
ցեալք....

Ես՝ Մկրտիչ *մեղաւոր ծառայս աստուծոյ, յոյս առ Քրիստոս*
աստուած եդի հաստատուն հաւատով և եռափափագ սիրով, եռանդ-
նաշարժ սրտիւ ետու ծրագրել զկենսաբեր սուրբ աւետարանս և ըստ
կարի զարդարել յարծաթ և յոսկի ի հալալ արդեանց և ի խոնջա-
քիրտն երկանց աշխատանաց, Եւ ետու զսա ի դուռն գերահրաշ և
երկնանման կաթուղիկէիս՝ սուրբ խաչիս Ախթամարայ, *յիշատակ ան-*
ջնջելի և կտակ անդառնալի ինձ՝ Մկրտչիս, *և ծնօղաց և եղբարց*
իմոց, և ամենայն արեան մերձաւորաց և երախտաւորաց։ Դարձեալ
աղաչեմ յիշել և զԴանիէլ *անարժան գրիչս, և զերախտաւորքն մեր,*
նաև զսպասաւորքս սուրբ տաճարիս՝ զմեծ փիլիսոփայքն զԹումայ,
283 ա *և* զՍարգիս, *և* զԽաչիկ, *և* զՈհանէս, *և* զԱւե ‖ տիս, *և* զՀէրապետ, զՅո-
վանէս *փակակալ, և* զԲարսեղ, *և* զՅովանէս, *և* զՅուսէփ, *և ղաշակերտքն*
մեր՝ զՈհանէս *և* զՀէր[ապե՛տ], *որ հանապազ աղօթեն բազկատարած*
մաղթանօք զփրկութիւն ամենայն աշխարհի։ Ցաղագս այսմ յուսոյ
նուիրեաց Մկրտիչն *զաստուածունակ կտակս կենաց ի դուռն մօրս*
լուսոյ, եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ Խա-
չիս յափշտակելով, կամ գողանալով, կամ գրաւելով։ Դատի ի Քրիս-

տոսէ, թէ յանդգնի և արասցէ անիրաւութիւն, և զմասն զՅուդային առցէ և զայլ խաչահանուացն, ամէն։

Եւ ինքն Քրիստոս աստուած... *ողորմեսցի ստացօղին, գրողին, և աշխատողին, կարդացողին, և լսողին, և խնամով պահօղին, և ինքն եղիցի աւրհնեալ, գովեալ և բարեբանեալ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

ԶՅովանէս *միջնորդ սուրբ աւետարանիս յիշեցէք*...։

Բ

Ծաղկող՝ Թումայ Մինասենց

210 բ *Զմեղաւք տառապեալ գծրիս* զՄինասենց Թումայս՝ *զեղկելի ոգիս, զանհանճար և զանյարմար ծաղկող աստուածախաւս կտակիս աղաչեմ յիշել ի տէր սրտի մտաւք և լի բերանով աստուած-ողորմի ասել ինձ և ծնօղացն իմոց, զի և դուք գտջիք ողորմութիւն ի Քրիստոսէ յաւրհնութեանն պահու, ամէն։*

Բայց անարհեստ ծաղկիս և անգուն գեղիս աղաչեմ չլինել մեղադիր, զի կար իմ և իմաստ այս չափ էր։

590

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ, ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՅՈՑՁՈՐԵՑՒՈՅ

Երևան 1665

Գրիչ

վայր՝ Տայշող գիւղ

... *Արդ, գծագրեցաւ պատմութիւնս երիցս երանեալ սուրբ և*
104 ա *երջանիկ հայրապետին մեծին* Ներսեսի || *և թագաւորացն Հայոց ի թվ.*
ՊԴ. (1441), յամսեանն մեհեկի, ի գեաւղս, որ կոչի Տայշող, *ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Ստեփաննոս Նախավկային։ Արդ, յերես անգեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ հայրք և եղբայրք, որք հանդիպիք սուրբ երջանիկ հայրապետի պատմութեանս, յիշեսջիք յաղաւթս ձեր զստացողք սորայ* զԿարապետ *քահանայն, և զծնօղսն իւր՝* զՄկրտիչ *քահանայն և* զՆսէֆ-խաթուն, *և զկողակիցն իւր* զԲէկի-խաթուն, *և զորդիքն* զՄկրտիչ *սարկաւագն և* զՅովանէսն *յիշեցէք և աստուած-ողորմի ասացէք, ամէն։*

Այլ ես՝ գծագրող սորա, յերես անգեալ աղաչեմ զձեզ. մանկունք սուրբ եկեղեցո, անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց գրոյս,
104 բ *քան[զի] փոխեցաք յերկրէ երկիր՝ ոչ տո || ւն ունէաք և ոչ դադար, այլ կարողութեամբն աստուծոյ գրեցի զսա։ Եւ որք ընթեռնուք զսա լի բերանով և ուղիղ սրտով աստուած-ողորմի ասացէք ստացողի գրոցս* Կարապետ *քահանային, և* Նսէֆ-խաթունին, *և որդոյն* Գրիգոր *քահանային, և Նորին որդոյն* Մկրտիչ *սարկաւագին, որ ստացաւ*

զսուրբ գիրքս յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեաց և հանգուցելոցն, աստուածողորմի ասացէք...։

Բ

189 բ Քրիստոս աստուած, քո սուրբ նահապետացն բարեխաւսութեամբն ողորմեա ստացողի գրոցս Վարդանա գրակապին, և ծնողաց նորին՝ հաւրն Աւետիսին, և մաւրն Տալիթային, և եղբարցն Քանանաճապետին, և Յոհանիսին, Տուրութին, և Ղազարին, և քուրոչն Քարամ-Խաթունին, և հաւրեղբաւրն Հայրապետին, և Գուհար-Խաթունին, և ամենայն արեան մերձաւորացն, զի բազում աշխատութեամբ և փափաքմամբ սիրով ետ գրել զպատմութեններս զայս, որք կարդայք և լուսաւորիք՝ լի բերանով աստուած-ողոր[մ]ի ասացէք ստացողի գրոցս և ծնողաց նորին, և աստուած ձեզ ողորմ[ի, ամէն]։

591

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

«Երնջակ», էջ 241—242

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Սիւնի՞ք

Փառք ... որոյ շնորհաւք և ողորմութեամբ յարմարեաց զմատունս մեղուցեալ գծագրիս Յովանէս սուտանուն քահանայի, որ անուամբ յորջորջիմ և գործովք և ոչ իմիք, և հարազատ որդւոյս իմոյ Յակոբ դպրի հասանել յաւարտ այսմ հոգենորոգ և աստուածայարմար տառիս, որ ասի Յայսմաւուր...։

Արդ, զայսպիսի հոգինորոգ և զանուշահոտ բուրաստանս տեսեալ սրբասնեալ և հոգիընկալ կրաւնաւորս տէր Սարգիս ճգնաւորս ի գաւառէն Վայոյ—Ձորոյ, ի սուրբ ուխտէն Հերմոնի վանաց, և ցանկացաւ այսմ երանաւէտ մեծութեանս և փարթամութեանս...։

592

ՃԱՇՈՑ

Վենետիկ 813, Ալիշան, Հայկարան

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Խլաթ

Կարապետ կրօնաւոր ետ գրել զսա յիշատակ ծնաւղացն Յակոբին և Գոհարին, և եղբաւրն Ստեփանոսին, Կարապետին և Պաւղոսին, և եղբաւրորդւոյն Ցառուխշին ... և գրչի Յովանէս քահանայի և իմ ծնաւղաց Կարապետին և Թաւամէլիքին, և եղբարց Աստուածատուր քահանային, Խաչատուրին, և Վարդանին...: Ի թվ. ՊՂ. (1441), ի Խլաթ քաղաքի, ընդ հովանեաւ սրբոյն ԺԱ. (11) խորանին, սուրբ Գէորգայ, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Վարգանայ։

593

ԱՒԵՏԱՐԱՆ

Հիշատակում է Գաուբյանը, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Եղիա
վայր՝ Բերկրի

Ի թուին Հայոց ՊՂ. (1441), յընտիր աւրինակաց սրբոց հարցն գրեալ ի լուսազարդ և գեղեցկայեղց անապատիս տէր Յուսկան որդւոյ, ի գաւառիս Տուրքերանեաց, որ այժմ Բերկրի կոչի... գրեցաւ ձեռամբ... Եղիա սուտանուն կրաւնաւորի, ի խնդրոյ բարեբարոյ տանուտրոջն խաւշայ Խալիֆին։

594

ԱՒԵՏԱՐԱՆ

Փերգ. Նոտ. 124, Մոկս, ի Թաղն Աբրահամեանց

Գրիչ՝ Մարգարէ
վայր՝ Մոկաց երկիր, ի գեղս Աբրահամանց

... Եւ ետ գրել զսա [Մկրտիչ եպիսկոպոսն] յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողացն՝ հօրն Կիրակոսին, և մօրն Հոնդ-Մէլէքին, և հոգևոր մօրն Մարթայ մահդասոյն, ամէն, և ինձ՝ անյիշելույս Մարգարէ գրչի,... և ծնողաց իմոց Յոհաննէսին և Ոսկոյն, և եղբարց իմոց Թումայ քահանային և Յոհաննէսին:

Արդ, աւարտեցաւ սուրբ աւետարանս ի յարքունական երկիրս Մոկաց, ի գեղս, որ կոչի Աբրահամանց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի թուաբերութեանս Հայոց ՊՂ. (1441)։ Որք հանդիպիք սուրբ աւետարանիս զպարգևքն տուք՝ զաստուած-ողորմին՝ ստացողին Մկըրտիչ եպիսկոպոսին և ամենայն քրիստոնէից, ամէն։

595

ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան 7203

Գրիչ՝ Աւգսէնդ
վայր՝ Կաֆայ

114ա ...Արդ, գրեցաւ Տաւնացոյցս բոլոր տարոյն ի թվ. Հայոց ՊՂ. (1441) ամի, ձեռամբ անարհեստ և փցուն գրչի Աւգսէնդ սուտանուն աբեղայի, ի վայելումն սրբասնեալ Եսայի կուսակրաւն աբեղայի, ի մայրաքաղաքս ի Կաֆայս, առ ոտս սրբւոյն Անդոնի ճգնաւորին։

Արդ, որք հանդիպիք սմա ուսանելով և կամ աւրինակելով յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերոյգրեալն զԵսայի կրաւ-
114բ նաւոր քահանայն, որ փափագեցաւ այսմ և ետ գրել զսա || ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց՝ հաւրն իւրոյ պա-

րոն Աստուածատրին, և մաւրն խաթուն Ազիզ-Մելիքին, և եղբարցն իւրոյ պարոն Թուման-Պէկին և պարոն Խոիլ—Պէկին, և մայրենի հաւուն իւրոյ՝ պարոն Ամիրին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։ Ընդ նոսին յիշեսջիք և զիս և զբազմամեղ աբեղայս զԱւգսէնդս՝ զանարհեստ գրիչս և զոսկաւղս....։*

596

ԱՒԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 2563

Հետ. ստացող՝ Մարտիրոս արքեպիսկոպոս Երուսաղէմայ

Զվերջին ստացաւղ սուրբ աւետարանիս այս՝ զտէր Մարտիրոս Երուսաղէմա արքեպիսկոպոս յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, որ գնեցի յիմ հալալ արդեամբն զսուրբ աւետարանս և արծաթեցի զինքն և դրի ինձ յիշատակ և իմ ծնաւղացն ի սուրբ Ցակոբ ողջ։ Եւ ով որ հանէ զինքն ի սուրբ Ցակոբայ, կամ ծախէ, կամ գրաւէ, նա առնու զՑուդայի և զխաչահանուացն զմասն և բաժին։

Կազմեցաւ սուրբ աւետարանս արծաթով ի թվ. Հայոց ՊՂ. (1441), ի փառս աստուծոյ։

597

ՑԱՑՍՄԱՒՈՒՐՔ

Վենետիկ 974, Մ.Տ.Մ.

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Երուսաղէմ

Գրիչ Գրիգոր՝ որդի Ելմէլիքի և Գոճարի, յԵրուսաղէմ, ընդ հովանեաւ Գաբրիէլի և Միքայէլի, ստացող Գրիգոր կրօնաւոր՝ հայր վանացն, որդի Յովանիսի և Սիմայ-խաթունի։**

---

* Ձեռագրի 2ա էջում պահպանվել է նաև հետագա ստացողներից՝ Վարդան աբեղայի անթվական հիշատակարանը, որն ըստ հնագրական տվյալների գրված պետք է լինի կամ ԺԵ. դարի վերջերին, կամ ԺԶ. դարում։ Հիշատակարանի կարևոր մասը հետևյալն է. «Վերջին ստացող սուրբ տաւնացուցիս զՎարդան աբեղայս գնեցի զսայ ի հալալ ընչից իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց. և տվի ի յաշակերան իմ Ազարիա աբեգին, զոր տէր աստուած վայելել տացէ մինչև ի խորին ծերութեան, ամէն»։

** Մ. Տէր-Մովսիսյանի ցուցակում գանում ենք միայն հիշատակարանի բովանդակության սեղմ ու հապճեպ կատարված վերապատմությունը։

598

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Նիկոսիա, Մ.Տ.Մ.

Գրիչ՝ Գրիգոր Արճկեցի
վայր՝ Երուսաղէմ

Գրեցաւ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, *ձեռամբ* Գրիգորի Արճկեց-ւոյ, *ի կաթուղիկոսութեան Կիլիկեցւոց տեառն* Գրիգորի *և բռնակա-լութեան Եգիպտացւոց* Ջախմախին:

599

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 4227

Գրիչ՝ Դաւիթ

ա

316 բ *... Գրեցաւ գիրքս այս ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի* Դաւթի, *թվ. ՊՂ. (1441), ի փառս Քրիստոսի մերոյ։ Արդ աղաչեմ*
317 ա *զհանդիպողսդ յիշել ‖ ի բարի մասին զանարժան ծրողս* զԴաւիթ, *հան-դերձ ծնօղիւք և ամենայն արեան մերձաւորաւք, և թողութիւն մեղաց հայցել ի տեառնէ աստուծոյ մերոյ, և Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց, մեզ և ձեզ, առհասարակ, ողորմեսցի, ամէն։*

բ

Ստացող՝ Եղիա

Զստացող գրոցս զԵղիա *կուսակրաւն աբեղայս և զեղբայրն իմ* զՂազար... *յիշեսցիք...։*

600

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Բրիտ. Թնգ. Add. *19, 727, կց 2, էջ 3*

Հետ. ստացող՝ Խասսան

146 *Յիշեցէք ի Քրիստոս* զԽասսան *և զկողակիցն իւր* զՄեծ—Խաթուն, *և զդուստրն իւր* զՄարիամն, *և* զՄլուքն, *և* զՂամպարն, *և զքորն իւր* զՋայմեյիքն, *զհայրն իւր* զԱպաէն, *զմայրն իւր* զԳունաշն...։ *Ստացաւ զաւետարանս ի թվականիս ՊՂ. (1441)։*

601

ԳԱՆՁԱՐԱՆ ԵՒ ՄԱՇՏՈՑ

Երևան 6452

Գրիչ՝ Յովանէս

46 բ ...*Գրեցաւ պակասորդ Մաշտոցիս ձեռամբ անարհեստ գրչի* Յովանիսի, *ի Թվիս Հայոց ՊՂ. (1441)։ Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ աւրինակելով յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սորին* զՍիմէոն *կրաւնաւորն, և զհայր նորին* զԱստուածատուր, *զմայրն* | ' |

602

ԱԻԵՏԱՐԱՆ

Թեհրան 2, ՀԱ, 1935, սյուն. 313

339 ա *Քրիստոս աստուած, քո սուրբ չար[չարանաց բարե] խաւսութեամբ ողորմեա* | | | Յակոբ | | | *վերստին նորոգել զսա և [զար]դարեա և գրեա զսա [ի դպ]րութիւն կենաց*։

Ի Թվ. ՊՂ. (1441՞)։*

---

* *Այս թերթի երկրորդ սյունակը կտրված է եզել, ուստի տողերը պահպանվել են իրենց առաջին մասով։ Պարզ չէ, թե ՊՂ. թվականն ունեցել է արդյոք միավոր թվանշան, թե ոչ։*

603

ՏԱԻՆԱԿԱՆ

Նրևան 996

Գրիչ՝ Ոհաննէ Թմոքուեցի
վայր՝ Երկիրս Արարատեան, ի գեղս Սերկևիլի

ա

Արդ, ի թուաքերութեանս Հայկազեան տաւմարի ՊՂԱ. (1442), և
կենարար<ար>ին փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՆԽԴ. (1444),
363 բ և յելանելոյն Ադամայ ի դը ‖ րախտէն ՑՈԽԲ. (6642), կատարեցաւ տե-
սիլ Սահակա հայրապետին՝ առն աստուծոյ, որ տեսաւ սեղան չորեք-
կուսի ամբանման և խաչ լուսեղէն ի վերայ կանգնեալ, և սկ[ուտ]եղ
արծաթի ի վերայ սեղանոյն և մագաղաթ թղաչափ՝ի վերայ է. (7)
տողն ոսկի, յառաջքն գիր և մէջն եղծեալ և ջնջեալ, և տող մի ոս-
կի և կէս կարմիր՝ ի վերջքն գրեալ։ է. (7) ոսկի տողն Լուսաւորիչն
է, մինչև ի Սահակ՝ առն աստուծոյ, և մէջն, որ եղծեալ էր և ջնջեալ
և աթոռն ծովագոյն սառնանման սև կտաւով ծածկեալ՝ի Սահակա
մինչև ի մեզ կաթողիկոսք և եպիսկոպոսք, որ նստան եղծեալք և ջըն-
ջեալք ի բարութենէն կենաց, զի արծաթով նստան և անիծիւք և նզովիւք
զաշխարհս լցին։ Այս էր սև կտաւն, որ տարածեալ էր ի վերայ ազգիս։
Այժմ բարձաւ անէծքն սուրբ Լուսաւորչի աղաւթիւքն, որ էր
թուխ կտաւն եղծեալ և ջնջեալ, նորոգեցաւ աթոռ Լուսաւորչին
վերստին, հինն էանց և եղև ամենայն ինչ նոր, հինն անէծքն էր և
նորս՝ աւրհնութիւն ի ձեռն սուրբ հարանց, որ ժողովեցան յարևե-
լից և յարևմտից, ի հարաւոյ և ի հիւսիսոյ ի Վարդգէս՝ ի Նոր քա-
ղաքս Վաղարշապատ՝ ի սուրբ էջմիածինս, որ է մայր ամենայն եկե-
ղեցեաց և ծնաւղ և լուսատու Հայոց ազգիս։ Որ ի բազում ժամանա-
կաց անտես արարեալ էին զնա և ինքեանք ի յաստուծոյ անտեսա-
ցեալք էին, զի խնամք ողորմութեանն աստուծոյ [վերա]ցեալ էր ի
յազգէս, որպէս ասաց աստուած՝ Մի մնասցէ հոգի իմ ի դոսա, վասն
թողլոյ դոցա զտուն իմ։ Իսկ այժմ շարժեալ ի գութ ողորմութեան
արարիչն աստուած և ողորմեցաւ տառապեալ ազգիս Հայոց, և ժողո-
վեցաւ բազում իմաստունս և առաքինիս՝ բանիբուն վարդապետք, և
364 ա ուղղափառ եպիսկոպոսք, և խարազ ‖ նազգեստ կրաւնաւորք, և ողջա-
խոհ քահանայք, և սրբասէր ազատք և ժողովուրդք, որ ընդրեցին
տեսլեամբ և կամաւք ամենասուրբ երրորդութեանն՝ զհեզն, զխո-
նարհն, զիմաստասէրն, որ ունէր զտեսականն և զգործնական առաքի-

նութիւնն, ըստ Պղատոնի իմաստասէր կոչեմ ոչ զոգնագէաս և զայն,
որ կարող գոյն ըտզում ինչ ի բերան առնուլ, այլ զայն, որ անբիծ
և անաղտ վարս ստացեալ ունին, որպէս հայր[ապետ]ս մեր՝ հոգևոր
տէր Կ[ի]ւրակոս կաթողիկոսս, որ յիւր ժամանակն ոչ միս է կերեալ,
և ոչ գին[ի] խմեալ, և ոչ սուտ ասել, և ոչ երդումն կերել, ոչ նզովք
և անէծք ի բերանն է ելել։ Խէ. (47) տարի է, որ յանապատի է և
սուրբ կենդանաթաղ Խոր-Վիրապին սպաս[ա]որել։

Զսա ընդրեաց հոգին սուրբ գլուխ, առաջնորդ, հովիւ, վերատե-
սուչ և պատրիարգ ազգիս հայկազնոյ, սա է տող ոսկին, որ ի վերջք
մագաղաթին գըրեալ էր։ Աստանաւր կատարեցաւ մարգարէութիւն-
առն աստուծոյ Սահակայ։

Եւ ի սոյն ժամանակի եղև կոտորումն անմեղ քրիստոնէիցն
Սամշուիլդոյ, որ նահատակեցան վասն Քրիստոսի և են մարտիրոսք,
վասն զի շարժեցան ի սատանայէ ազգն Սկիւթացւոց Ջահանշահ միր-
զէն, և առ<առ> ընդ ինքեան զբազմութիւն լեգէոն զաւրացն, և
նստաւ ի վերա բերդին Դ. (4) ամիս, և ի նեղութիւն էարկ զնոսա,
զի բազումք մեռան ի վշտաց։ Եւ անաւրէնքն երդուեցան յաստուած
կենդանի, թէ առնել չենք ձեզ վնաս։ Եւ նոքա վստահացեալք ի սուտ
երդումն նոցա՝ բացին զդուռն բերդին, և անաւրէնքն դիմեցին ի
ներքս և սուր ի վերայ եդեալ կոտորեցին անխնայաբար՝ աւելի քան
Վ. (3000)։ Եւ զողբումն և զաղիողորմ և զկսկիծ դառնութեան ոչ կա-
րեմ ընդ գրով արկանել, զի զոմանս սրով խո[ղ]խողեցին, զոմանս*
504 բ քա || րկոծեցին, զոմանս բրաւք ջարդեցին, զոմանց զգլուխն հատին
և Գ. (3) մնիրա շինեցին։ Անդ էր տեսանել զահագին լալումն և
զկոծն ի վերայ սիրելեացն. զի լայր մայր զորդին, և քոյր զեղբայրն,
և հարսն զփեսայն, և ոչ ուստէք էր մխիթարութիւն նոցա, ոչ յաս-
տուծոյ և ոչ ի մարդկանէ։

Եւ էր թիւ գերելոցն աւելի քան Թ. (9000), որ բաժանեցին ի
վերայ իւրեանց։ Անդ էր տեսանել զաղէտ ծնողաց և զաւակաց, զի
բաժանէին զմայր ի յորդոյ և զորդի ի մաւրէ, և զեղբայր յեղբաւրէ,
և զհարսն ի փեսայէ. և զփեսայ ի հարսնէ, և զմատաղ տղայքն
յափշտակէին անողորմաբար ի մաւր գրկացն և արկանէին ի գետ,
և մարքն աղէխարշեալք լալով գնացին ի գերութիւն։ Զոմանս ի նո-
ցանէ յարևելս տարան՝ ի Խորասան, զոմանս յարևմուտս՝ ի Հոռ-
մաստան, զոմանս ի հարաւ՝ ի յԱրաբստան, զոմանս հիւսիս՝ ի Լա-
կըստան, որպէս զհին Իսրաէղ ի Դ. (4) կողմ աշխարհիս ցրուեցին։
Բաժանեցան հայր ի յորդոյ, և դուստր ի մաւրէ, և զսիրելի ի սիրե-
լեաց, և բարեկամք ի բարեկամաց, և գնացին անդարձ յերկիր Տաճ-
կաց։ Եւ լայրն եկեղեցիք Հայաստանեայց ըստ Երեմիայի Եղկեսացւոյ,
որ ասէր՝ Գնացէք, գնացէք, և ես մնացի աւերակ, ձեզ ասեմ, ձեզ
ասեմ անցաւորք ճանապարհի, տեսէք զաղէտս իմ կսկծանաց և ող-
բացէք զիս, զի ամայի և անապատ մնացի յո[րդւ]ոց իմոց։

Բայց չէ պարտ յուսահատիլ ի յաստուծոյ, այլ հաւատով խընդ-

* Ձեռագրում՝ «զորանս»։

րել ի նմանէ, զի դարձ արասցէ գերելեաց, որպէս զհին Իսրաէլին, բարեխաւսութեամբ ամենայն սրբոց, ամէն։

565 ա Եւ ի՛ յայս դառն և ի ‖ նուրբ և ի նեղ և ի սուգական ժամանակիս այր մի բարեպաշտաւն, աղաւթասէր և ողորմած, աստուածասէր և քրիստոսադաւան և ուղղափառ, այր հսկայազաւր ի մրցմունս պատերազմաց, դիւցազնական ի յաղատաց և պայազատ ի յիշխանաց, ի յազանց և ի տոհմէ ազքանազեան սեռից պարոն Շալուէ, որդի մեծի իշխանին՝ աստուածասէր պարոն Սարգսին և թոռն պարոն Բուղլախին. եւ սա հմուտ գոլով հմտութեանց և ներհմտութեանց, արհեստից և մակացութեանց և հնա[գի]ր պատմութեանց՝ նորոց և հնոց, և ուսեալ գրանն, որ ասէ՝ Երանի, որ ունի զաւակ ի Սիովն և ընդանի յԵրուսաղէմ, և դարձեալ, թէ՝ Լաւ է անզաւակութիւն հանդերձ քաջութեան, զի անմահութիւն յիշատակ նորա, զի յաստուծոյ և ի մարդկանէ ճանաչի, և դարձեալ, թէ՝ Են մարդիկ որոց գործքն յայտնի են և յառաջագոյն երթան ի դատաստան, և են որոց զկնի երթան՝ գիրքն է և ամենայն սպասք եկեղեցւոյն։



Նկ. 22. Մի հատված Ոհաննէս Թմոգուեցու հիշատակարանից։

Զայս տեսեալ և իմացեալ հաւատարիմ ծառայս աստուծոյ պարոն Շալուէս, ցանկացող եղև լուսափայլեալ և մեծապատ տաւնականիս, ի հաստատութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ։ Սա բուրաստան աստուածային և դրախտ աստուածատունկ, յորում ծաղիկքն բանականք սպիտակափայլ, կարմրանըշան, ծիրանագեղ, դեղնանկար, կանաչազարդ վայելչութեամբս ըստ զանազան առաքինութեանցն ցուցեալ. սա [եկ]եղեցոյ զարդ և փառք պարծանաց, հայրապետաց խնդութիւն, թագաւորաց պարծանք, քահանայից հրճուումն, սա գանձ և մարգարիտ մեծագին։ Ստացաւ զսա փափագանաւք և ի հալալ և ի քրտնաջան վաստակոց իւրոց և

565 բ ետ գրել զսա, զի լիցի բարեխաւս յաւուրն դատաստանի և ա‖նա-

նառ առեննին բարեխաւս և անջինջ յաւիտենական յիշատակ պարոն
Բուղլախին, հաւրն պարոն Սարգսին, և մաւրն պարոն Թամսին, և եղ-
բաւրն պարոն Գրիգորին, որ ի ծրագրել սորա խակակոտորել յաշխար-
հըս և եԹող սուգ և տրտմուԹիւն բազում եղբաւր իւրոյ, զոր տէր
աստուած իմ հանգուսցէ զնա ի գոգն Աբրահամու և ինքն անցեալ
պտղատեսցէ, և միւս եղբաւրն պարոն Փանուելին, և քերցն Սիթ-խաթու-
նին և Թենեկին, և ամուսնոյ իւրոյ պարոն Դովլաթ-խաթունին, և միւս
այլ կենդանի կենաց կցորդի իւրոյ պարոն Գուլփաշին, և նորաբող-
բոջ դեռաբուսիկ զաւակի սոցա՝ պարոն Դաւթին, զի տէր աստուած
պահեսցէ զսա անփորձ և անսասան մինչև ի խորին ծերուԹիւնն,
ամէն։

Արդ, որ հանդիպիք սմա կարդալով, կամ աւրինակելով, կամ
ունկնդրուԹեամբ՝ յիշեցէք ի մաքրափայլ և յերկնաԹոիչ յաղաւԹս
ձեր զվերոյգրեալսդ առհասարակ։ Դարձեալ, աղաչեմ յիշել ի տէր
Յովանէս եպիսկոպոս՝ մականուն Ոսկիափոր, որ է ուսուցիչ մեր այսմ
գործոյ։

Արդ, ծրագրեցաւ սա յերկիրս Արարատեան, ի գեաւղս, որ կոչի
Սերկևիլի, ընդ հովանեաւ սրբոյ Յովհաննիսի և այլ սրբուԹեանցս, ի
հայրապետուԹեան և իշխանուԹեան տէր Գաբրիէլի՝ արի և քաջ կրաւ-
նաւորի, և ի խանուԹեան Ջահանշահին, և ի ԹագաւորուԹեանն
Վրաց Վախթանկի՞, և յիշխանուԹեան տեղոյս պարոն Ալիբէկին, և
պարոն Շալուին՝ տեառն գրոյս, և պարոն Վաչ[ուտի՞]ն, և պարոն Քրթին,
[և պարոն Սա՞]րգս[ի]ն: Դարձեալ, աղաչեմ վասն սիրոյն Քրիստոսի
յիշել ի տէր զայս գեղիս զկրաւնաւորքս և զքահանայքս՝ զտէր Խա-
չատուր կրաւնաւորն՝ խրատիչ և ուսուցիչ սոցա, վասն զի եաւԹա-
566 ա նասնամեայ ‖ անձամբ հեծեծանաւք գնացեալ է յԵրուսաղէմ, յերկըր-
պագուԹիւն սուրբ ոտնատեղեացն և ի տեսուԹիւն գերեզմանին Քրիս-
տոսի աստուծոյ մերոյ, վասն Թողութեան մեղաց և ծնողաց իւրոց։
Եւ ի դարձ նորա առել է զքարտէզս և բազում աշխատուԹեամբ և
տառապանաւք հասոյց առ մեզ, զի եղիցի յիշատակ նորա ի սմա անջինջ
յաւիտենական, և ծնողաց իւրոց, կենդանեաց և ննջեցելոց իւ[րոց]։

Աղաչեմ կրկին յիշել զտէր Մանուէլ քահանայ, զՈհանէս կրաւ-
նաւոր՝ սպասաւորք սուրբ ուխտիս։ Կրկին աղաչեմ վասն սիրոյն
Քրիստոսի և յուսոյ արքայուԹեանն յիշել ի տէր զտէր Յակոբ կրաւ-
նաւոր՝ զփակակալ [սուրբ] Յովհաննիսի, զեղբայրն իւր զԻշխան, և
զմայր սոցա զՆարին, և զհարսն սոցա զԳուլփաշայ, և զաւակսն սոցա
պահեսցէ Քրիստոս աստուած մինչև ի խորին ծերուԹիւնն, ամէն,
որ բազում աշխատուԹեամբ և տառապանաւք սպասաւորէին մեզ ի
ծրագրել սորայ, զոր տէր իմ Յիսուս հատուսցէ վարձս ատ և ի հան-
դերձեալն։ Դարձեալ, աղաչեմ յիշել ի տէր զգեղի տանուտէրքս՝ զՄով-
սէսն, զՎիրապիկն, զԽերադինն, զխաւջա Մկրտիչն, զհանգուցեալ Սար-
գիսն, հանդերձ կանամբք և զաւակաւք սոցա, և զայլ քրիստոնայքս,
որ յառ ոտս հաւաքեալ կան պարոն Շալուին՝ զայր և զկին, զծեր և

զաղա, զմեծ և զփոքր՝ աւրհնեսցէ Քրիստոս աստուած այն աւրհնու-
թեամբն, որ ոչ անցանէ...։

566 ր Այլև աւրհնեսցէ Քրիստոս զԹաճաուխն և Գուլ-Մելիքն, զի բազում
աշխատեցան յերթևեկութիւն և ի կերակրել զմեզ։

Կրկնապատիկ և բիւրապատիկ աւրհնեսցէ Քրիստոս աստուած,
ամենայն սրբոցս բարեխաւսութեամբ, որ աստ կան հաւաքեալ, զբա-
րեպաշտ և զհաւատարիմ և զամենայն աւրհնութեանց արժանաւոր
զիշխանաց իշխանն զպարոն Շալուէն. Թշնամիք սորա ընդ մի ճանա-
պարհ գայցեն և հազարսն փախիցեն, սուրք նոցա մտցեն ի սիր[տս]
նոցա և աղեղունք նոցա փշրեսցին, ատելիք և չարախաւսք սորա
ընդ անդունդսն րեւեռեսցին՝ մինչև դարձցին և զղջասցին, զի բա-
զում անգամ աշխատեցաւ ի վերայ մեզ՝ ի տան, ի | | | րել, ի հար-
կել | | | նեղանալ և կերակրել | | | կէ և ուրախացուցանել։ Աս-
տուած զպարոն Շալուէն ընդ հարիւրաւորսն դասեսցէ և ինքն ան-
ցեալ պաշտեսցէ, ամէն։

Եւ ես անարժանս և անարհեստս՝ ախմարս ի բարեաց և լրա-
ցեալս յամենայն չարեաց սուտանուն Ոհանէս միայնակեաց, ի գա-
ւառէն Վրացտանայ, ի յամուրն դղեակէն Թմոքոյ, ըստ իմում ան-
արժանութեանս գծագրեցի զսայ, զի լիցի մասն մեր ի սմա։ Եւ որք
կարդայք կամ աւրինակէք յիշեցէք յերկնաթռիչ յաղաւթս ձեր զիս՝
զանարժանս և զանարհեստս, և զծնողսն մեր, և զերախտաւորսն...։

567 ա | | | * անմեղադիր լերուք խոշորութեան գր] ‖ բիտ և սղա-
լանաց սորա, ծաղկիդ և կազմիդ, զի կար մեր այդ չափ էր։ Եւ ինքն՝
մարդասէրն աստուած թողութիւն շնորհեսցէ յանցանաց և սղալա-
նաց ձերոց և արժանի արասցէ զձեզ և զմեզ անմահ կենացն և երկ-
նից արքայութեանն, ամէն։

Բ

227 բ ...Եւ զՅակոբ կրաւնաւորն՝ սպասաւոր սյսմ գործոյս յիշեա ի
քում յարքայութիւնդ, ամէն։**

Գ

232 բ ...Եւ զՅակոբ սպասաւորս և զՅոհանէս՝ հողս և մոխիրս աղաչեմ
յիշել վասն սիրոյն Քրիստոսի, մի մեղադրել խոշորութեան սորա, զի
ժամանակս ձմեռնային է և ես պանդուխտ ի յաւտար գաւառի, և
աստուած զձեզ յիշէ։

---

* 566 ր էջի Բ. սյունակի ցածի 10 տողը շատ մաշված ու գունաթափված է։ Վեր-
ջին չորս տողը հնարավոր չեղավ վերծանել, իսկ նախորդ 6 տողից անվերծանելի մնացին
միայն մի-երկու բառ։

** Ցուրաքանչյուր գլխից հետո կան մանր հիշատակագրություններ, որոնք ոչինչ
չեն ավելացնում գլխավոր հիշատակարանի վրա։ Այդ հիշատակագրություններից մեջ ենք
բերում միայն մի քանի հատվածներ, որոնք նորություն են պարունակում։

Դ

318 ա ...Եւ սղալանաց և պակասութեան սորա անմեղադիր լեր, վասն զի աւրինակս կտրաած է և ես զայս չափս կարացի յիրար ածել։ Վայ, յանագաւրուն և յանիմաստ մարդոց ձեռաց։

Գ

344 բ ...Ստացող սուրբ կտակիս զպարոն Շալուէն, և զբարեպաշտ ծնողսն իւր, և զեղբայրն Գրիգոր յիշեսջիք յաղօթս, և զՅովսէփ՝ զիւր հորտն, և զՈհանէս գրիչս աղաչեմ։

Գ

483 բ ... Ընդ նմին և զԹանսուխն, և զդերձակ Գաւրգասալն, և զծնողսն սոցա, և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

604

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Ա. Դավրիժեցի, Պատմութիւն, 1884, էջ 322

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան

Աւարտեցաւ սուրբ գիրքս Յասմաւուրացս յամի ՊՂԱ. Թուականութեանս Հայոց (1442), ձեռամբ յոգնամեղ գրչի Կարապետ երիցու, ի խնդրոյ մահղեսի Մխիթարայ։ Եւ գրեցաւ սուրբ գիրքս ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պօղոսի, և սուրբ Ստեփաննոս նախավկայի, և Սահակայ հայրապետի. ի կաթողիկոսութեան տեառն Կիրակոսի։ Որ ի յայսմ ամի եղև ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց, ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ, որոց էր գլուխ մեծ րաբունապետն Թովմայ և Յովհաննէս վարդապետն. և եդին զտէր Կիրակոսն յէջմիածին՝ կաթողիկոս ամենայն Հայոց, և նոր նորոգեցաւ աթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի ըստ տեսլեանն մեծին Ներսէսի հայրապետին և Սահակայ Պարթևին, և մերոյս առաջնորդի սուրբ ուխտին Վարագայ Յովհաննէս եպիսկոպոսին. ի թագաւորութեանն Ջհանշահի, որ ի յայսմ ամի էառ զանառիկ բերդն զԸռել և զՋուլամերկ։

605

ՃԱՇՈՑ

Երևան 989

Գրիչ՝ Գալուստ
վայր՝ Աղջոց վանք

330 բ ...Աւարտեցաւ աստուածախաւս, մարգարէական և առաքելական հոգիաբուխս այս տառ ի Թուաբերութեան հայկազեանս տումարի

ՊՂԱ. (1442), ի հայրապ[ետութեան] Հայոց տեառն Կիրակոսի և յաշխարհակալութեան ըստ ներևլոյն աստուծոյ արիւնարբու գաղտնին Ջհանշահին, զոր իբրև էառ զիշխանութիւնն և նստաւ յաթոռ առաջին աշխարհաշէն և բարէմիտ ղանորէից՝ սկսաւ սայ աւերել և տապալել զբազում քաղաքս և զգաւառս, և ամայի և անմարդաբնակ առնել։ Եւ ոչ ոք կարէ զչարութիւն սորա ընդ գրով արկանել, առաւել ես զոր արար ընդ աշխարհն Վրաց, ընդ քաղաքին Շամշուլտոյ, զի խաբէութեամբ առ զնա և զամենեսեան ի սուր սուսերի մաշեաց, զի ըստ մարգարէին, որ ասէ՝ Ոչ ոք էր, որ թաղէր զնոսա, այսպէս և սոքա։ Անթիւք և անհամարք՝ քահանայք, և աշխարհականք, և զկանայս նոցա, և զմանկունս ցրուեցին ընդ ամենայն աշխարհ։ Եւ ով կարէ զաղէտ տարակուսանացս լեզուաւ պատմել, զոր եղև ի սոյն ամի ընդ ազգիս Հայոց։ Եւ ի սմին դառն և նեղ ժամանակի գրեցաւ գիրքս այս ի գաւառիս Արարադեան, ի ձորս Քեղոյ, ի վանքս Աղչոց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Կաթողիկէիս, և սուրբ Ստեփանոս Նախատակիս, և Թրի սուրբ Նշանիս և Սրամունից սուրբ խաչիս, և Թևատ սուրբ Գրիգորիս, և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ։ Եւ է գրեալ սա ձեռամբ յոգնամեղի անարհեստ և և փցուն գրչի սուտանուն կրաւնաւորի անուամբ [Գալուստ կոչեցելոյ | | |*

606

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան 769

Գրիչ՝ Գալուստ
վայր՝ Աղչոց վանք

... Արդ, յանկ ելեալ կատարեցաւ տառս, որ կոչի Տետր ձեռամբ յոգնամեղի և յոյժ մեղապարտի Գալստի՝ անուամբ միայն աբեղայի՝
87 ա սուտանուն կրաւնաւորի, ի դառն և յանբարի ժամանակի, ի թը || վիսն ՊՂԱ. (1442), ի վանքս Աղչոց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ստեփանոս Նախատակիս, և Թրի սուրբ Նշանիս, և այլ բազմահաւաք սրբոցս, յիշատակ մեզ՝ Մխիթարի և Գալստի, և ծնաւղացն՝ հանգուցելոցն և կենդանեացն։ Եւ որք հանդիպիք տեսանելով յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամէն, եղիցի, եղիցի։

---

* Հիշատակարանի շարունակությունը չի պահպանվել։ Գրչի անունը լրացրել ենք 219 ա էջում պահպանված հիշատակագրությունից, ուր ասված է «Զբաղմամեղս և գծծուն գրիչս՝ զԳալուստ աղաչեմ յիշել ի տէր, և դուք յիշեալ [լիջիք]»։

607

ԺԱՇՈՑ

Փիրդ. Նօտ 128, Բաղէշ, Ամրդօլու վանք

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Խիզան, Գամաղիէլի վանք

... *Անարհեստ գրիչս* [Յոհաննէս *վարդապետ*] *յանձն առի ակար անձամբ... բազում և մեծ աշխատանօք հասուցի զսա յաւարտումն յաստուածարտնակ վանքս, որ Գամաղիէլ կոչի, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Գամաղիէլի, ի Թուականութեանս Հայոց ՊՂԱ. (1442), ի հայրապետութեան տեառն տէր* Կիրակոսի, *որ յայսմ ամի նորոգեցաւ սուրբ* էջմիածինն, *և տէր* Կիրակոս *հայրապետ ձեռնադրեցաւ, և ի մեր քուրդ ամիրիս՝* Ամիր-Դայուդիս։

Գարձեալ, Յոհաննէս *վարդապետս աղաչեմ զսրբութիւնդ ձեր... յիշեսջիք զիս՝ զգծագրող սորա, և զծնողսն իմ* զՎարդանն *և* զԴիլշատն, *զհանգուցեալ եղբարքն իմ՝ ղքաղցրիկ* Յոհաննէս *և զտարաժամ* Խէրապետն:

608

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փիրղ. Նօտ. 129, Մուշ, Առաքելոց վանք

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Արծկէ

Օրհնութիւն... որ ետ կարողութիւն... գրչի Յովհաննէս *քահանայի հասանել յաւարտ յայսմ աստուածաշունչ կտակիս, յամի...* ՊՂԱ. *(1442)։ Եւ արդ, գրեցաւ սա ի քաղաքս* Արծկէ, *հանդէպ սրբարար ծովուս, որ մանր ձկունք ելանեն, ընդ հովանեաւ ամենամաքուր սուրբ Աստուածածնի կաթուղիկէիս։ Ի հայրապետութեան տեառն* Կիրակոսի *ընդհանուր Հայոց կաթուղիկոսի, որ է արժանաժառանգ մեծ աթոռոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ ի տեղի իջման միածին բանին աստուծոյ։ Վասն զի զաջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին գողացան ի Սսոյ, և բերեալ եդին յիւր սեպհական աթոռին, և այս ի խնամոցն աստուծոյ։ Եւ մերոյս նահանգի (առաջնորդութեան)* Ստեփաննոս *արքեպիսկոպոսի՝ հօրեղբօրս իմոյ։*

609

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փիրդ. Նօտ 128, Ռշտունիք, Կապուտկողայ ս. Ցակոբի վանք

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Աղթամար

... *Եւ արդ, ես՝ ունայնս* Թումայ *սուտանուն կրօնաւորս... գրեցի զսա... ի կղզիս* Աղթամար, *ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանիս,*

ի Թուկանութեանս Հայոց ՊՂԱ. (1442)։ Այլ և զմեծ փիլիսոփայն զՄինասենց Թումայն, որ-զառաջն նա գրեաց, և զնորին ծնողքն [յիշեցէք]։

610

ՍԱՂՄՈՍ

Փիրղ Նոտ. 129, ի Սեպուհ Լեառն, ի վանս Լուսաւորչի

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Ի լեառն Սեպուհ

…Իսկ ես… փծուն գրիչս Յովհաննէս…։

Արդ, գրեցաւ սա ի Թուականութեանս Հայոց ՊՂԱ. (1442), ի մէջ երկուց գաւառաց՝ Եկեղեաց և Դարանաղեաց, յերկնահանկէտ և յաստուածարնակ լեառս Սեպուհ, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչիս մերոյ Գրիգորի, և սուրբ Փրկչիս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Կարապետիս, և Մանեայ կուսին սուրբ գերեզմանիս, և այլ բազմահաւաք սրբութեանց։ Եւ եդի զսա յիշատակ ինձ և ծնողացն իմոց… ի գուռն բազմերախտ հօրն մերոյ սուրբ Լուսաւորչիս Գրիգորի, մերձ այրն Մանեայ։ Ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս տէր Բարսեղ եպիսկոպոսի, և զմիաբան եղբայրութիւն սուրբ ուխտիս՝ զՅովհաննէս աբեղայն՝ զփակակալն, և Թորոս աբեղայն՝ զօրինակիս շնորհողն, և զՄարտիրոս աբեղայն՝ զծաղկողն, և զԱբրահամ աբեղայն՝ զդասավայրն, և զԱւետիք աբեղայն, և զՄեղիտոն աբեղայն, և զայլ միաբան սուրբ ուխտիս յիշեցէք։

611

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 18, Մ. Տ. Ա. և Ս. Տ. Ա., Ալիշան, Հայկարան

Գրիչ՝ Ոնոփրիոս
վայր՝ Կեղի, Խլպաշի վանք

291 բ …Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս յերկիրն Խորձիւն, որ կոչի Կեղի, ի վանս, որ կոչի Խլպաշի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետին և այլ սրբոցն, որ աստ կան, ձեռամբ յոգնամեղ և անարժան սուտանուն կրաւնաւորի Ոնոփրիոսի։ Արդ, աղաչեմ զամենեսեան յիշեսջիք և զառաջնորդ վանացս զՄելիքսէթ հայրապետ [և զՊետրոս հայրապետ] և զպատուելի քահանայքն, որ աստ կան՝ զՅովանէս քահանայ, և զԿիրակոս քահանայ, և զՎարդան քահանայ, և զՍտեփանոս քահանայ, և զԱստուածատուր քահանայ, և զՄելքիսեթ ճգնաւորն, և զԴանիէլ սարկաւագն, որ սպասաւորէ վանացս և մեզ, նաև զհոգեսէր խաթունն զՈւղուր-Մէլիքն*, և զծնողսն իւր՝ զհայրն իւր զՇահամիրն,** և զմաւրն

* Ս. Տ. Ա.—«զուղ Մէլիք»։
** Ս. Տ. Ա.—«զՇահմիրն»,

իւր զԿիրա-խաթունն,* և զեղբարն իւր Վֆախ (՞),** և զատն իւր զպարոն զԱղիպէկն,*** և զաստուածատուր զաւակն իւրեանց զպարոն Սարքախն,**** և զխոճա Յարուխշան*****և զԿուլամիրն, և զհաւրեղբայր սոցայ զԱմիրպէկն, զոր ետուն գրել սուրբ աւետարանս և եդին յիշատակ ի դուռս սուրբ Աստուածածնին, և սրբոյն Ստեփանոսի Նախավկային, և աստուածընկալ սուրբ Նշանին...։

Դարձեալ... յիշեսջիք զեղկելի գրչակս զՈնոփրիոսս, և զծնողսն իմ, և զհոգևոր հայրն իմ Յոհանէս քահանայ, և որ ի վերա մեր երախտիք ունի, և զթղթին կոկողն, և զմարմառին տուողն, ամէն։

Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս ՊՂԱ. (1442). խոշորութեան և սխալանաց մի մեղադրէք, աղաչեմ զձեզ, զի այս էր կար մեր...։

612

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 46, Մ. Տ. Ա. և Մ. Ք. Մ.

Գրիչ՝ Ոնոփրիոս
վայր՝ Կեղի, Խլպաշի վանք

295 ա– ... Եւ ես՝ անարժանս Ոնոփրիոսս սուտանուն կրաւնաւորս
297 ա անարհեստ գրչակս գրեցի սուրբ աւետարանս ի գաւառիս Խորձիւն, որ կոչի Կեղի, ի վանքս Խլպաշի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետին և այլ սրբոցս, որ աստ կան։ Աղաչեմ զամենեսեան յիշեսջիք և զառաջնորդ վանացս զՄելքիսէթ հայրապետ, [և զՊետրոս հայրապետն],****** և զալեաւք պատուեալ ծերունիս մեր զՈնանէս քահանայ, և զԿիրակոս քահանայ, և զՎարդան քահանայ, և Ստեփաննոս քահանայ, և զԱստուածատուր քահանայ, զՄելքիսէթ ճգնաւորն, և զԴանիէլ սարկաւագն, որ յայսմ ամի սպասաւոր էր վանացս և մեզ։ Նաև զքրիստոսադաւան քրիստոնէն զՃաշ-Մէլիքն, որ ստացաւ զսուրբ աւետարանս յիշատակ իւր, և ծնողաց իւրոց՝ հաւրն իւրոյ Գրիգորին և մաւրն իւրոյ Ճինաս-Մելիքին, և հանգուցեալ առն իւրում Մլքին, և այլ ամենայն արեան մերձաւորաց։ Եւ ետ զսա հոգոյ որդոյ իւրոյ՝ Նորաբողբոջ քահանային Աստուածատրին...։ Յիշեսջիք զՃաշն, զի յոյժ աղաւթասէր էր և երթայր աւր մի ի ժամ և կատարէր զսովորական աղաւթս, թէ՝ Երանի այնոցիկ, որ ունի զաւակ ի Սիոն և ընդանեակ նորա յԵրուսաղէմ։ Եւ ասէր Ճաշն ի մտի իւրում՝ ոչ ունիմ որդի, և

---

* Ալիշան—«Ներ-Խաթուն»։
** Աղավաղված այս հատվածը Ալիշանը չունի։
*** Մ. Տ. Ա. «Շարիպէկն»։
**** Ալիշան՝ «և զաստուածատուր զաւակ իւրեանց, և պարոն Սարքախն»:
***** Մ. Տ. Ա.—«Վարուխշան»։
****** Հետո է ավելացված։

ոչ ունիմ դուստր, և ոչ եղբայր և ոչ հայր, և փոխանակ ուստերաց և դըստերաց արար սուրբ աւետարանս իւր հոգևոր որդի...։ Յիշեսջիք և զիս՝ զեղկելի գրիչս զՈնոփրիոսս և զծնողսն իմ, և մի մեղադրէք խոշորութեան և սղալանաց, զի թէպէտ անարհեստ էի և անմիտ, բայց զորյաւրինակ գտաք՝ զայն գրեցաք...։ Գրեցաւ աւետարանս ի թուականութեան Հայոց ՊԾՂԱ. (1442)։

Ձեռս երթայ և այս գիրս մնայ։

613

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7870

Գնող՝ Անդրիաս

236 բ ...Արդ, ես մեղուցեալ ծառայս աստուծոյ Հանէսի թոռս Անդրիասս գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ վաստակոց իմոց՝ յիշատակ ինձ, և ծնողաց իմոց՝ պապին Հանէսին, և հանկանն իմ Մուշանին, հաւր իմ Մկրտչին, և հաւրեղբաւրն Տատուրին, և մաւրն իմ Արուս-խաթունին, և եղբաւր իմ Ասլան-Բէկին, և Ակոբին, որ տղաւք փոխեցաւ առ Քրիստոս՝ ամաց իբրև ԻԶ. (26)-ից, և քուրն իւր Խութլու-խաթունն, և հաւրն իւրո Սարգսին, և ամենայն արեան մերձաւորաց, իմոց։

Արդ, երես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք կարդէք կամ աւրինակէք՝ զմեզ և զմեր ննջեցեալսն ի սուրբ յաղաւթս ձեր յիշեցէք։ Եւ աստուածն ամենեցուն ձեզ և մեզ ողորմեսցի, առհասարակ ի սոսկալի յատենին, ամէն, թվ. ՊՂԱ. (1442)*,

614

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 481, Մ. Տ. Մ. և Ս. Տ. Ա.

Գնող՝ Կարապետ Սալիթաղեցի

ա

287 բ Յիշեցէք ի Քրիստոս զսրբազան կրաւնաւորն զՍիմէոնն՝ զմիջնորդ աւետարան[ի]ս և զծնողսն իւր, ամէն։

Զփրա Կարապետ Սալիթաղցի,
Որ զաւետարանս զայս գնեցի,

---

* Ձեռագիրը գրվել է այդ թվից մի-երկու տասնամյակ առաջ։ Ծաղկողն է ոմն Առաքել եպիսկոպոս, որը 2ր էջի լուսանցքում գրել է. «Զսկաւ աշխատող ծաղկիս Առաքել եպիսկոպոս աղաչեմ յիշել»։

Ստացողն է ոմն Յովաննէս, որը 84ա էջի հիշատակագրության մեջ գրել է. «Յովաննէսս, որ զաւետարանս գրել տուի յիշեցէք ի Քրիստոս»։

Յիշատակ ինձ արարի,
Յիշման արարէք արժանի,
Եւ զծնողքն իմ զբարի,
Որ Մամքան և Յնցիկ կոչին։

Բ

Վաճառող՝ պարոն Բէկտողմիշ

388 ա Յանուն աստուծոյ ես պարոն Բէկտողմիշս, հանդերձ իմ եղբօրացովս, և աէր Յոբ եպիսկոպոս ծախեցի սուրբ աւետարանս փրա Կարապետին ՅԻ. (320)* դ[ա]հ[եկա]ն, մեծ շնահաւր առնեմ։**

Ես տէր Յովանէս եպիսկոպոս վկայ եմ, ես փրա Յրանկչէս վկայ եմ և ծախող, ես փրա Օրբէլս վկայ եմ, ես փրա Յօսէփ վարդապետս վկայ եմ, ես փրա Մաթէոսս վկայ եմ, ես փրա Յովհանէս վկայ եմ։

615

ՄԻՍԱԼ

Bibl. National 106 (Suppl. arm. 71)
ՀԱ. 1938, սյուն. 75, «Միսականն», էջ 390

Նորոգող՝ Դոմինիկոս Շահապօնեցի

Պատուական վարդապետ փրա Յովսէփ՝ վերախնամող կարգիս միաբանողաց,*** ընկալ զսակաւ աշխատօղ և զկրտսեր կատարող դրոցս զփրա Դոմինիկոս**** զանարժանս Շահապօնեցիս, և յիշեայ զ[իս] ի քո սուրբ աղօթսդ, և աստուած զքեզ յիշէ և զքո ննջեցեալսն ի յարքայութիւնն երկնից, ամէն։ Ի թու. մարդեղութեան տեառն ՌՆԽԲ. (1442) Նորոգեցաւ Միսալս։

---

* Մ. Տ. Մ.—«Յ» (300)

** Մ. Տ. Մ.—«առնեմ»։

*** «Միսականում» Դոմինիկոս անվան փոխարեն կարդում ենք «Ղուկաս»։ Դուցե այստեղ չկա շփոթություն, այլ նույն ձեռագրում, նույնպիսի մի հիշատակարան գրել է նաև Ղուկաս Շահապօնեցին։

**** Հավանորեն այն Ցովսեփ Շահապօնեցին է, որը ոմն ժամանակակցի կողմից կոչվել է «գերապատիւ գերահրաշ հայր մեր ըստ հոգոյ»։ Սա սկսել էր թարգմանել Թովմա Աքվինացու «Ցազագս խորհրդոց եկեղեցւոյ» աշխատությունը, բայց «ոչ առեալ զաւարտն վասն վրդովման ժամանակին և խստութեան այլազգեացն», և մնացել թերատ բազում ամ» (մինչև 1415 թ.)։

Հավանաբար հենց այդ ժամանակ էլ թարգմանությունն ավարտել է ոմն փրա Գրիգոր։ Այս մասին տվյալներ են պահպանվել այդ աշխատության հառում պահվող մի ընդօրինակության մեջ (հմմ, Borgio, Cod, arm. 45)։

616

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 36. Ս. Տ. Ա. և Մ. Տ. Մ.

326 ա … Աստուածաշունչ աւետարանս … անկեալ էր գերութիւն. նայ պր. Ամիր Կաֆացի գնեց զինքն իւր արդար ընչաւք ու պատարագեց յաւժար կամաւ ի վայելումն հաճատկատար Աստուածածնիս։ Իր յիշատակ է, և իւր ծընաւղացն, և իր պսակաւոր կողակցուն՝ Դուխտար–Մելիքին, յաւիտենից յիշատակ իւրեանց ծնողացն։ Աուրբ քահանայք, յորժամ ընդերնուք ձեր մաքրափայլ աղաւթքտ յիշէք պր. Ամիրին ծընաւղքն՝ զհայրն Ցրտնկշայ և մաւրն անուն Խթա—Մելիքն յիշէք, և դուք յիշեալ լինիք սոսկալի ատենի․

Գրեցաւ աստուածայշունչ աւետարանս թվ. ՊՂԱ. (1442)։*

Ռ. Է. [Ր]. Գ. Մ. Թ. որ գրեց։**

617

ՃԱՇՈՑ

Երևան 7446

Հատ. ստացող՝ Ազիզպէյ
վայր՝ Ղրի՞մ

529 բ Ի թվականի Հայոց ազգի
Արեթտկան սերեալ տոհմի
Ի ՊՂԱ. (1442), ամսեանն ԺԱ. (11) ապրիլի
Ստացա զգիրքս այս պանծալի,
Որ տարէգիրք սայ անուանի…։
Ի յիշատակ անջնջելի
Ինձ՝ անարժան Ազիզպէի,
Որ Ջիրքինեաց վերակոչի,
Եւ Գրիգորի րտզմամեղի,
Որ Մխիթրեանց վերակոչի…։***

618

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Երևան 5199

Հեա. ստացող՝ Գրիգոր

265 ա Ջվերջին ստացողք գրոցս զԳրիգոր աբեղայ և զհոգևոր եղբայրն իմ զՏիրատուր կուսակրաւն աբեղայն յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր, ով սուրբ ընթերցողք, և աստուած զձեզ յիշէ, ամէնւ

Թւիս ՊՂԱ. (1442)։

---

* Խոսքը սույն հիշատակարանի գրության մասին է։

** Փոխարինագիր ծածկագրով կարդացվում է «Աւ(ե)տիք» անունը։

*** Ջեռագիրն ընդօրինակված է 1391 թվականին, Ղրիմում։ Հետ. ստացող Ազիզպէի հիշատակարանը ընդարձակ է, բայց շարունակությունը զուրկ է պատմական արժեքից։

619

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 358

Գրիչ

306 ա ...Եւ արդ, ես կրտսերս յորդիս եկեղեցոյ և անպիտանս ի քահանայս | | | * անիմաստ և ախմար գրիչ, և իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին գրեցի անարժան ձեռաւք իմովք ի յ[ը]նտիր և ստոյգ աւրինակէ, ի մեծ Թուիս, ի յեղանական շրջագայութեան արեգական ստորիջիւք երկնաչու ճանապարհաւ յերկնից յերկիր հայելով, ըստ արարչութեանն չափեալ՝ յԱդամայ մինչև ցայսք ամք ՑՊԿԷ. (6867), իսկ ի Հայոց Թուականիս· ՊՂԱ. (1442) | | |

* Գրչի անունը և թվականին հաջորդող 3,5 տող քերված էր

620

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Իրան, Փերիա, Սանգիրարան գյուղ, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Բաղէշ

... [Արդ, ես]՝ Մկրտիչ քահանայ, ցանկացող եղէ աստուածախօս և աւետարեր սուրբ աւետարանիս, գտի ստոյգ և ընտիր օրինակ, զոր գրեալ էր Թորոս *Փիլիսոփայն ի* Դրազարկն, *յաղագս հռչակաւոր ուխտին սուրբ Առաքելոյն* Տարաւնոյ... *որ կոչի Ղազարու վանք։ Եւ իմ առեալ գրեցի զսա անարժան ձեռաւք իմովք ի մեծ Թուականիս ի յեզա[նա]կան շրջագայութեան արեգական ստորինջիւք երկնաչու ճանապարհաւ յերկնից յերկիր հայելով, ըստ արարչութեանն չափեալ յԱդամայ մինչև զայսր ՑՊԾԵ. (6855), իսկ ի Հայոց Թուականիս ՊՂԲ. (1443), ի գաւառիս* Աղձն, *ի մայրաքաղաքս* Բաղէշ, *ընդ հովանեաւ Հինգ խորանիս, ի ժամանակիս յորում զաջն Լուսաւորչին գողացան ի* Սսոյ, *և վարդապետք միաբանեցան և դրին կաթողիկոս* Էջմիածինն, *և կասեն աջն Լուսաւորչին մաւտ ի մեզ է, և զստոյգն աստուած գիտէ։ Եւ ի կայսերական բռնակալութեան ազգին նետողաց* Ջհանշահ *պարոնին՝ որդոյ* Ուսուֆին, *ի դժուար և ի չար ժամանակի, յորում արդարութեան կողմն նուազեալ և անիրաւութիւն յամենայն կողմանց զաւրացեալ ...։*

Ցիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԵսային *և զկողակիցն իւր* զՏիկին-Մելիքն, *և զհանգուցեալ զաւակսն իւր* զՅովհաննէսն, *և* զՄուրատն, *և* զԲաղդատ-խաթունն, *և* զՄարտիրոսն, *և* զԹուրվանդէն, *և զծնողսն իւր* զՍտեփանոս *և* զՇնոհւորն*...։ Գրիչ* Մկրտիչ *քահանայ, և զծնողսն մեր՝* զԽաչատուր *քահանայ և* զԵղիսաբեթ *... զի անմխիթար է սա յորդոյ, ի քաղաքիս յայս* Բաղիշոյ, *զսուրբ աւետարանս ետ իւրոյ հոգոյ, ի դուռն սուրբ եկեղեցոյ... սուրբ Կիրակոսիս.... Եւ զիս* Յովհաննէս *անարժան քահանայս, որ զայս ղադար յիշատակարանս գրեցի յիշեցէք։*

621

ՑԱՑՍՄԱԻՈԻՐՔ

Մ. Աբեղ 74, «Էջմիածին», 1951 թ., նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 81—83

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Բաղէշ

ա

549 բ Փառք ... որ ետ կարողութիւն Յովանիսի հասանել յաւարտ գրոցս, որ կոչի Ցայսմաւուրք ...։

Բարեպաշտ և մեծազգի տանուտէրս պարոն Վարդանն... ետ գրել զսա բարի յիշատակ հոգոյ իւր, և ծնօղացն, և ամենայն ազգականացն։ Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց և անկատարս ի կատարելոց, մեղանչականս յանմեղաց և անյիշելիս ի գրչաց՝ անարժան Յովանէսս յանձն առի գրել զսուրբ գիրքս ի դառն ժամանակիս, զոր կանք ի վշտի ի ձեռն անօր[ին]աց և սատանայի։

Եւ գրեցաւ սա ընդ հովանեաւ սուրբ Կիրակոսիս, ի քաղաքս Բաղէշ, ի հայրապետութեան տեառն Կիրակ[ո]սի ի յէջմիածինն, զի զաջ Լուսաւորչին գողացան ի Սըսոյ և տարան յէջմիածինն ի Վաղարշապատ, և ... հաստատեցին զաթոռ Լուսաւորչին յէջմիածինն, և եդին կաթողիկոս տէր Կիրակոսն՝ Խլոնց կոչեցեալ, այր ցանկալի, նման մեծ հայրապետացն, ձեռամբ մեծ բաբունապետին Թումա հռետորի և Յովանիսի մեծ բաբունապետի։ Ի թվականիս Հայոց ՊՂԱ. (1442), և մեր առաջնորդիս տէր Ստեփանոսի, և յամիրութեան քաղաքիս Շիխ Մանմատ ամիրզի, և ի շահութեան* Ջհանշայ ամիրզին, որ սպանաւ եղբայր նորա ձեռամբ որդոյ իւրոյ, և նստաւ ի թաղթն Ջհանշայ ամիրզէն։ Եւ եմուտ ի Վրացտուն, և շատ աւեր արար, զի էառ զբերդն Շամշուլտայ, և բազում սպանումն արար. զի զքահանայքն ետ ի չուան շարել և քարկոծ առնել, և զայլսն զամենեսեան ետ չարաչար գըլխատել։ Եւ զկանայսն և զտղայսն ետ գերի առնել ԲՌ. (2000) անձն, և այս ամենայն վասն մեղաց մերոց եղև։ Բայց յայս ուրախ եմք, զի ի Քրիստոս եմք ապաւինեալ, զի նոքա, որ կոտորեցան՝ ի տեղի անկելոցն են ժառանգել զանպատում բարիսն ի Քրիստոսէ։

Բայց յայսմ ժամանակի ահարկու նշան եղև, զի գլուխ միոյ լերինն, որ Նմրուտ կոչի, հրդեհեալ վառեալ ի յանդընդոց. և զքարինքն բարձրացուցանէր իբրև Ե. (5) կանգուն, և հալէր, և բոցն երևէր Բ. (2) աւուր ճանապարհ։ Եւ ոք ոչ գիտաց թէ այն ինչ նշան է, բայց ճշմարիտ զայս զմտաւ ածեմք, որ վասն մեղաց հրաշս ցուցանէ մեզ, զի դառնամք ի մեղաց, և մեք յամառեալ ի մեղս։ Այլ հենց նշան մարդ չէ լուեալ և ոչ տեսեալ, և գետ ի տեղացն ծուխն ելանէ, և որք տեսանեն զարհուրին, զի լեառն հերձեալ է և վիհ մեծ եղեալ, և զքարինքն յիրար եռացուցեալ ի գլուխ լերինն, և խրատ մեզ և ամենայն ազգի, որ դառնամք ի ճշմարիտ ճանապարհն Քրիստոսի աստուծոյ։

Արդ, աղաչեմք զամենեսեանս՝ զքահանայքդ և զժողովուրդքդ,

* հաւանաբար ընթերցվածք է, ըստ երևույթին բնագրում եղել է «ի զանութեան»։

որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք առաջի Քրիստոսի աստուծոյ զստացող սորա զխոջայ Վարդանն / / /* Ամիրին, Աղութին, և / / / և կենակցին իւր / / / զաւակացն Վարզելին և Յուղիդին, և հանգուցելոցն ի Քրիստոս՝ Յովանիսին և Բուստխին, և [իւրայն]ոցն առհասարակ։ Եւ ինքն Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց, տացէ նոցա զերկնից արքայութիւն ...։

Դարձեալ, աղաչեմ զամենեսեան՝ զքահանայքդ և զժողովուրդդ, յիշեսջիք առաջի Քրիստոսի զանարժան և զմեղաւոր ծառայս զՅովանէս գրիչս, և ուղիղ սրտիւ և լիակատար բերանով աստուած-ողորմի ասացէք ինձ և ծնօղաց իմոց՝ Մկրտիչ քահանային և Շահանդուխտին, և մեծ պապերուն՝ Խաչատուր քահանային, Յակոբ քահանային և քեռուն իմ Մելքէսէթ քահանային, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս, զի շատ աշխատեցաւ հետ ինձ, աստուած արասցէ իւրն բարի փոխարէն յիւր երկնից արքայութիւն, ամէն. և ողորմի իմ մեծ մամերուն՝ Եղիսաբեդին և [Խա]թունին, և ամենայն արեան մեր[ձաւո]րաց իմոց, և մեղաւոր [Յով]անէս գրչիս, և կենակցին իմոյ, և ամենայն արեան մերձաւորացն, և Խաթունին, որ շատ մէրութիւն է արել մեզ՝ ի գրոց գրելս, աստուած արասցէ իւրն փոխարէն, ամէն։

Դարձեալ, ողորմի և Վարդանին և իւր ծնօղացն՝ Շահամիրին և Աղութին, և քեռն իւրոյ, և ծաղկեալ զաւակացն Ուղիդին և Վարզելին, և ամենայն ազգականացն՝ կենդանեացն և հանգուցելոցն, ամէն։

Գրեցաւ գիրգս այս ձեռամբ Յովանիսի, ի քաղաքս յայս Բաղէշ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս, որ աստ կան հաւաքեալ, ի թուականիս ՊՂԲ. (1443)։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդայք զսա կամ աւրինակէք՝ մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողի սորա, և գծողիս, զի բազում աշխատութեամբ գրեցի զսա ի բազում տեղիս, ի դառն և ի չար ժամանակիս, որ Բ. (2) տարի գրեցի զսայ ի խուցս սուրբ Կիրակոսիս և ի սուրբ Գէորգա ժամատունն, և ի մարդոյ ոչ մէկ խնձոր տեսի և ոչ մէկ խիար, վասն այն, զի սէրն բարձեր էր ի Հայոց ազգէս, մանաւան[դ] յիրիցականաց։

Դարձեալ, աղաչեմ զձեզ, անմեղադիր եղերուք սղալանաց և խոշորանաց սորա, զի կար մեր այս էր։

Դարձեալ, ողորմի Քրիստոս աստուած օրինակի շնորհողին՝ Ղրիմ-Խաթունին, և իւր ծնօղացն, և քահանայիցն, որ կամակից եղեն ի տալն՝ տէր Մարտիրոսին, և Թադէոսին, և Արսէնին, և Կարապետին, և Գրիգորին, որ աստուած՝ մշակ առանց ամօթոյ պահեսցէ զսոսա ի դուռն սուրբ Աստուածածնի և Գէորգա զօրավարին...։

Ո՜վ, գիրս Յիսայ,
Ձեռս հող և փոշի դառնայ,
Այլ ողորմութիւն տեսան Յիսայ,
Որ յետոյ նորոգէ զհողացեալ բնութիւնս Ադմայ։

Բ

241ա ... Վասն իմ զտէրն աղաչեցէք
Եւ թողութիւն ինձ հայցեցէք։

---

* Երեք տող անընթեռնելի։

Միթէ լինի [ինձ] ողորմի՝
Յովանիսիս անարժանի,
Եւ փոխեսցէ զիս ի բարի,
Զի մի անփոխ մատնիմ չարի։
Ո՛վ քահանայք աստուածասէրք,
Մաքուր մտօք սրբանուէրք,
Յորժամ որ զայս գիրքս կարդէք,
Յաղօթս ձեր զմեզ յիշեցէք.

Եւ աստուած-ողորմի ասացէք անարժան Յովանիսիս, *և ծնողացն իմ* Մկրտիչ *քահանայի և* Շահանդուխտին, *և մեծ պապերուն՝* Խաչատուր *քահանային և* Յակոբ *քահանային, և բարի խրատատուացն և ուսուցողացն իմ և վարպետացն։ Եւ ստացողի գրոց բարեմիտ տանուտէրոջն* Վարդանին, *և իւր ծնողացն* Շահամիրին *և* Աղուբին, *և քուրոչն, և կենակցին իւր* Սառին, *և իւրենց զաւակացն, որ հանգուցեալ են ի Քրիստոս՝* Յովանիսին, Բուտախին *և այլոցն, և մեւս զաւակին՝* Ուդիդին, *և ամենայն ազգացն, և խցան չինօղիս, որ աստ գրեցի։ Այլ լուն խիստ զահմաթ կու տայր, զի բազում էր ի խուցս, զի այլ մարդ չկայր ի ներս, և ամենին* փոխան՝ զիս կերան։ Աստուած ողորմի կարդացողացդ և լսո[ղացդ]։*

622

ՃԱՇՈՑ

Ա. Դավրիժեցի, «Պատմութիւն», 1884, էջ 323

Վայր՝ Արծկէ

Եւ արդ, եղև սկիզբն Ճաշոցիս ի սուրբ ուխտս Մառնավանք, *և աւարտեցաւ ի քաղաքն* Արծկէ, *յամի ութհարիւրերորդի, իննսունեւորդի և երկրորդ ամի (1443), ի թագաւորութեան* Ջհանշահի՝ *որդւոյ* Ղարայ-Իւսուֆին, *և ի հայրապետութեան աթոռոյ Լուսաւորչին մերոյ տեղապահի տէր* Կիրակոս *ընդհանուր Հայոց կաթողիկոսի։ Զի մինչ ի սոյն ամս աջն Լուսաւորչին մերոյ* Գրիգորի *ի* Սիս *էր, և ամենայն ազգս Հայոց հնազանդեալ էաք աթոռոյն* Կիլիկիոյ, *և այժմ շնորհիւ նորին և օժանդակութեամբ հոգւոյն սրբոյ՝ վերստին եկն ի նոյն* Վաղարշապատ Էջմիածին *շողակաթի տաճարին, և հաստատեցաւ աթոռ հայկազեան սեռի գերապատիւ և հրաշափառ, զոր պահեսցէ տէր Յիսուս, ամէն։*

623

ՄԱՇՏՈՑ

Երևան 6450

Գրիչ՝ Իգնատիոս
վայր՝ Սուխարա վանք

238 ա *... Արդ, գրեցաւ ի թուականութիւնս մեր ՊՂԲ. (1443) ամին, ձեռամբ անարժան կրաւնաւորի և անպիտան գրչի* Իգնատիոսի, *ի քրովբէախումբ և աստուածաբնակ մենաստանիս՝ ի վանս* Սուխարա

* *Տպ. «ամենայն»։*

առձանյելոյ, որ այժմ Հեռարաձ* կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աս-
տուածածնի տաճարիս, և սուրբ Ստեփաննոսիս, և սուրբ Սարգսի՝
զօրեղ վկայիս, և սուրբ վարդապետաց գերեզմանացս, որ աստ կան
հաւաքեալ։ Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս հեզահոգի և բարե-
միտ վարդապետիս Կարապետի, գրեցաւ ի յառաջին ամին հայրապե-
տութեան նոր աթոռոյս էջմիածնի և նորընծայ կաթողիկոսիս տէր
338բ Կիրակոսի, ի խնդրոյ աստուածասէր և պատուական, փա || ռաւոր,
իմաստուն և հաւատարիմ տանուտէրս Պապն, յիշատակ իւր և ծնաւ-
ղաց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, զհայրն իւր
խաւչայ Մըսրշէն և զմայրն Աթամելիքն, որ հանգուցեալ են ի Քրիս-
տոս, զՊապին որդիքն՝ զՄիրիջանն, և զկողակիցն իւր Մաղխթում,
զՇէրին, և կողակիցն իւր Խաւնդզաւդայն։

624

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 380

Նորոգող՝ Կարապետ

312բ ...Ի թուաբերութեանս Հայկազեան տաւմարի ՊՂԲ. (1443)
ամի, ի դառն և ի նուրբ և յանբարի ժամանակիս, վասն որոյ ազգս
քրիստոնէից սաոուցեալ տատանեալ և վարատեալ ի ձեռաց իսմայէ-
լական ազգաց, ի կաթուղիկոսութեան Կիրակոսի, ի նորոգութեան
Վաղարշապատու Բ. (2) ամաւ յետոյ, և ի թագաւորութեան քրիստո-
նէից Վախտանգի՝ որդոյ Աղէկսանդրի, և ի ղանութեան Ջահանշահի՝
որդոյ Ուսուֆի, և իշխանութեան տեղոյս պարոն / / / իկին՝ որդոյ
Ջաջուռին**. Քրիստոսասէր և ամենայն առհնութեանց արժանաւորք
սրբասէր կրաւնաւոր եղբայրք սուրբ ուխտիս դամբարանաց սրբոյ
Սարգսի զաւարավարիս՝ Յովհանէս փակակալ սուրբ տաճարիս, Բարսեղ
բնական հայր, և Մովսէս եղբայր հեզահոգի և սպասաւոր սոցին։
Զմտաւ ածաք, որ ասէ՝ Երանի որ ունից զաւակ ի Սիովն և ընդանի
յԵրուսաղէմ, ապաւինեցաք ի բարեխաւսութիւն սուրբ աւետարանիս,
որ ունի համարձակութիւն առ Քրիստոս յոյսն ամենեցուն, և ավաք
վերստին նորոգել և զարդարել զսա ի հալալ ընչից մերոց յիշատակ
մեզ, և ծնողաց մերոց, և ամենայն արեանառու մերձաւորաց։ Դար-
ձեալ, աղաչեմ յիշել ի տէր զիս՝ զկազմող սորա զԿարապետ անար-
ժան աբեղայ...։

Ողորմեա տէր աստուած նորոգողի սոցա տէր Յովանիսի՝ սպա-
սաւոր սուրբ տաճարի, և աշակերտին իւրոյ / / /*** Բարսղի և Մովսէսի,

* «Խառաբաստ» անվան կեղծ ստուգաբանությամբ աղավաղված ձևն է։

** «Տեղոյս պարոն»-ների անունները քերված են. տառերի մնացած հետքերով հնարավոր եղավ վերականգնել հոր անունը (Ջաջուռ) լրիվ, իսկ որդու անվան՝ միայն վերջավորությունը։

*** Քերված է։

և ամենայն հաւատացեալ քրիստոնէից, և ինձ՝ բազմամեղ և անարժան Կարապետի. փըրկեա զմեզ յաւիտենական և անշիջ հրոյն և. դառն դժոխոց, և արժանի արա անմահ կենացն և յերկնից սուրբ արքայութեանդ, ամէն, եղիցի, եղիցի։

625

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 582

ա

154բ Քրիստոս աստուած ողորմեայ Կիրակոս բան[ա]սիրին, և ծնողացն, և ամենայն արեան մերձաւորացն, ամէն։

Քրիստոս աստուած, ողորմեա պարոն Մեծատան որդոյն, և հօրն Ղազարին, և մօրն Խըթոյն, եղբօր Յոհանէսոյն*, և քւերցն՝ Մարթախաթունին, և Ճուխար-խաթունին, և Մարեմին, և Քաղաքին, և Բաղդատին, և ամենայն արեան մերձաւորին և Թող մեղք նոցին՝ զմահացուն և զներելին,բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին, ամէն։**

Բ

Գրիչ՝ Դաւիթ

101բ Զանյիշելի Դաւիթ և զեղբարսն իմ զՅովանէս և զՄարտիրոս, և զքոյրսն իմ, և զծնողսն իմ աղաչեմ յիշել առ Քրիստոս, զի ողորմեսցի ամենեցուն, և աստուած զձեզ յիշէ. ամէն։

Տէր աստուած ուրհնեսցէ զՁաքարիա դպիրն։***

---

* Այս անունը հապավված է այսպես՝ «Յհոյն». առաջարկված վերծանությունն երկբայական է։

** Հիշատակագրության ստույգ ժամանակը հայտնի չէ։ Կարելի է կասել, որ այն գրված պետք է լինի 1443 թվականից մի քանի տարի միայն հետո, որովհետև հիշատակագրությանը նախորդում է մի ժամանակագրություն, որի մեջ գրանցված վերջին տվյալը վերաբերում է հենց այդ թվականին՝ «ՊՂԲ. (1443)—Զուէր Կիրակոս կաթողիկոսն փոխեցին վասն նախանձոյ և Մակուեցին նստաւ զապալով և Թուրքով։ Եւ զիս, և Սարգիս վարդապետն (Սալնապատցի) տօգանել տվին, զինչ վատութիւն, որ արարին կաթողիկոսին, Սարգիս վարդապետին և ինձ (արարին)։ Աստուած թողոյ նոցա զմեղս իւրեանց» (էջ 150 բ)։

Այդ ժամանակագրության հեղինակը Կիրակոս վարդապետ Ռշտունեցին է, որը հիշվում է նաև սույն հիշատակարանի մեջ, որպես «Կիրակոս բանասեր», (այդ մասին տես Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատոր I, Երևան, 1951, էջ 113—114)։

*** Դավիթ գրչի սույն հիշատակագրությունը, ըստ հնագրական տվյալների, գրված է Ա. հիշատակագրությունից առաջ։

626

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6342

Գրիչ՝ Գալուստ

վայր՝ Արարատեան գաւառ, Աղջոց վանք

ա

239ա ... Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊՂԲ. (1443), ի հայրապետութեան տեառն Գրիգորի, և ի թագաւորութեանն Վրաց Վաղթանգին, և ի ղանութեանն արիւնարբու գազանին Ջահանշահին՝ որդո Յուսուփին, գրեցօ ձեռամբ յոգնամեղ և անարուեստ և անիմաստ գրչի Գալստի սուտանուն կրօնօրի, ի դառն և յանբարի ժամանակի, ի գաւառս Արարադեան, ի ձորս Քեղոյ, ի վանքս Աղջոց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Կաթու[ղիկ]էիս, և սուրբ Ստեփանոս Նահատակիս, և Թրի սուրբ Նշանիս, և այլ բազմահօաք սրբոցս, որ աստ կան։

բ

Գրիչ՝ Մխիթար

239բ Ես՝ Նուաստ և անպիտան անյիշելի անուն Մկրտիչ աբեղայս ստացայ զսուրբ աւետարանս յիշատակ մեզ՝ Մկրտչին, և տէր Կիրակոս կաթուղիկոսին, և տէր Աստուածատրին,* և ծնաւղացն իմոց, և եղբարցն, և քուերցն, և ամենայն ազգականացն՝ կենդանեացն և հանգուցելոցն։

Արդ, աղաչեմ զհանդիպեալսդ ի սմա զաստուածասէր տեառղքդ, զընթերցողսդ և զաւրինակողքդ յիշել առաջի զենման գառինն աստուծոյ զտէր Աստուածատուրն, և զտէր Կիրակոսն, և զտէր Մկրտիչն՝ աբեղայք և հարազատ եղբարք, և զծնաւղսն մեր, և զամենայն ազգայինսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն, և զհոգեոր զաւակն մեր զՍերուն կուսակրաւն աբեղայն, ընդ նմին և զանպիտան կազմող և գրող սուրբ աւետարանիս՝ զՄխիթար և զԳալուստ աղաչեմ յիշման արժանի առնել ի սուրբ յաղաւթս ձեր։ Այլ աղաչեմ զամենեսեան՝ խոշորութեան և սղալանաց գրոյս անմեղադիր լինել, զի այս էր կարն իմ, և դուք յիշեալ լիջիք յառաջի ողորմութիւնն Քրիստոսի աստուծոյ մերոյ, ամէն ...։

գ

Նկարիչ՝ Ստեփանոս

7ա Ով, եղբարք սուրբ և ընթերցողք, որ հանդիպիք աստուածաբուղխ սուրբ աւետարանիս ընթեռնելով կամ աւրինակելով, հաս ի

---

* Մկրտիչի, Կիրակոսի և Աստուածատուրի պատկերները՝ կանգնած դիրքով, նկարված են ձեռագրի 3ա էջում։ Նկարիչն է Ստեփանոսը (տես Նկ. 23)։

վերայ և գիտութեամբ ընկալջիր և անմեղադիր լերուք, զի յառաջին ուրինակն խորանքս քարշել էի մի ըստ միոջէ, զամէնն հասարակ, և յետոյ այլոց հանդիպեցաք և հաւանեցաք՝ զցանկն ի սմա հաստատեցաք։ Աղաչեմ զձեզ և դուք ընկալջիք և լիակատար սրտիւ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զՍտեփանոս Նկարիչս։

Նկ․ 23. Կիրակոս կաթողիկոսի և Մկրտիչ ու Աստուածատուր աբեղաների պատկերները

627

ՃԱՇՈՑ

Ալիշան, Հայկարան, Երկնիստ զիւղ Կարնոյ

Գրիչ՝ Գալուստ
Վայր՝ Աղջոց վանք

Այս է վաստակ մատանց եղկելի Գալուստի տարտամ եղեգնագըծի և կեղի, վայելումն յաւէտ լիցի, և կաթ աղօթից ձերոց ցնծղիցի ինձ ի տապանն գերեզմանի, և բուսուսցէ ի նորոգումն կենաց արքայութեան երկնից ամէն։

[Ստացող Ջահար (կամ Ջանհան), կինն Դինար, ծնողքն Սարգիս և Տիկնաց, եղբայրն Սարգիս, Պաղիկ, քոյրն Թէլուն, Նազխաթուն, եղբորորդի Ազիզբէկ, և քուերորդի Մելքիսեդիկ սարկաւագ, Ազիզբէկի կենակից Խանթէն։ Գրեալ ի վանս Աղչոց, ձեռամբ Մխիթար և Գալուստ աբեղայից]։*

628

ԱՒԵՏԱՐԱՆ

Կ. Պոլիս, Անտոնեան վանք 95, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Գալուստ
ստացող՝ Սամուէլ մահդասի և կինն Փաշիկ

Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեան Հայոց ՊՂԲ. (1443), ի հայրապետութեան տեառն Կիրակոսի, և ի թագաւորութեան Վրաց Վաղթանկին, և ի դանութեան Ջահանշահին՝ որդոյ Յուսուփին, ի գաւառս Արարատեան, ի ձորս Քեղւոյ,** ի վանքս Աղչոց։

629

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7772

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Խլաթ քաղաք

ա

298ա ... Որոյ ցանկացող եղեալ բարեմիտ և ողջախոհ տանու-
տէրն Յոհանէս և ամուսինն իւր Հալսայ-Խաթունն, և ստացան
զսա յիշատակ հոգոյ իւրեանց և ծնաւղաց Յոհանիսին՝ տէր Մկրտչին
և Ազիզ-Մելեքին, որ փոխեցեալ են ի Քրիստոս, և եղբարցն Յովանիսին
և Մինասին, և քուերն Շալ-Մելեքին, և հաւրեղբարցն Սիոն քահանա-
յին, Թումին և Նեքամատին, և դստերն Նարին-Խաթունին, և փեսին
298բ Մկրտչին, և դեռաբոյս զաւակի ‖ նոցին Մուրաչին, զոր տէր ա-
տուած ընդ երկայն աւուրս առնէ, ամէն։ Այլև նախնեացն՝ Խութլու-
շին և Ջամլայ-Խաթունին, և ամենայն մերձաւորաց իւրոց, ամէն։

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ աւետարանիս կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք յաղաւթս ձեր զստացող սուրբ աւետարանիս զՅոհանէսն, և զամուսինն իւր ըզՀալւայ-Խաթունն, որ ետ զաւետարանս գրել, և մարմնաւոր աչօք չտեսաւ, այլ յայժմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և զդուստրն իւրեանց զՆա-

---

* Փակագծերի մեջ բերված հատվածը հիշատակարանի տվյալների հիման վրա շարադրել է իր խոսքերով Ղ. Ալիշանը։

** Մեքենագրված է այսպես՝ «ի Ձորոյ քեղոյ»։

բիճ-խաթունն, և զփեսէն զՄկրտիչն, և զորդին իւրեանց՝ զՄուրաչէն, որ փոխեցեալ է ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամէն։

Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի Խլաթ քաղաքի, ընդ հովան<ան>եաւ ԺԱ. (11) խորանացն, և սուրբ Գէորգ զօրավարին, և խնդրակատար Աստուածածնին, և սուրբ Վարդանին, ձեռամբ յողնամեղ և անիմաստ գրչի Աստուածատրոյ* սուտանուն քահանայի, յամի ՊՂԲ. (1443) թըւականի, ի հայրապետութեանն տեառն Կիրա-
299ա կոսի էջմիածնի կաթողիկոսի, որ մին ամաւ քան զսա ‖ յառաջ հաստատեցաւ շնորհօքն աստուծոյ։

Արդ, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի յաղաւթս ձեր զստացող սուրբ աւետարանիս զՅոհանէսն և զԽալւայ-Հաթունն, որ փոխեցաւ ի Քրիստոս, զի նա եղև պատճառ սուրբ աւետարանիս և ես գրել։ Ընդ նոսին և զիս յիշեցէք ի Քրիստոս՝ զմեղօք լցեալ գրիչս զԱստուածատուր, որ բազում աշխատութեամբ գրեցի, և զհարազատ եղբայրն իմ զտէր Յովանէս, և զծնօղսն իմ զԿարապետ քահանայն և զԹաղայ-Մելիքն, և զմեծ եղբայրն իմ զԽաչատուրն, որ երիտասարդ մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս, և զՎարդանէսն, և զդեռաբոյս զաւակսն իմ, և զկենակիցն իմ, և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամէն։

Այլ ես՝ Թափուրս յամենայնի
Աստուածատուր գրիչս ողորմելի,
Ջձեզ աղաչեմ մանկունք բարի
Զմեզ յիշեցէք յեկեղեցի,
Եւ ի ժամ սուրբ պատարագի,
Սուրբ աղօթից տէրն լսէ
Առհասարակ ողորմեսցի
Ձեզ և մեզ և ստացօղի։
Արդ, կատարեալ գործն ի բարի,
Երանի այն մարդ, որ ունի արթուն հոգի,
Թող զանցաւոր կեանքս չսիրէ
Ոչ ժողովէ արծաթ 'ւ ոսկի
Եւ արդիւնք, զինչ որ լինի.
Ամէնն անցնի, որ չերևի,

---

* Ձեռագրի 18բ էջում կա ուշագրավ մի նկար։ Ձախ կողմում, աթոռի վրա բազմել է քահանայի հագուստով մեկը, աջ ձեռքում բռնած ունենալով մի տախտակ՝ «Երանեալ է այր, որ [ոչ գնա ի խորհուրդս ամբարշտաց]» մակագրությամբ, ձախ ձեռքում՝ հարվածելու պատրաստ մի ճիպոտ։ Նրա դիմաց կանգնած է դասապատասխանող աշակերտը՝ ձեռքերը խաչաձև ծալած կրծքին։ Այնուհետև, նկարի աջ անկյունում ծալապատիկ նստած է մի այլ աշակերտ, որի ձախ ձեռքում նկարված է երեք թարմ ճիպոտ, որով ուսուցիչը «խելքի է բերել» իր աշակերտներին։

Նկարն իր բոլոր մանրամասնություններով նմանվում է № 3714 ձեռագրի համապատասխան նկարին (էջ 225, նկ. 10)։

Ով իմաստուն, որ կու գիտէ,
Քան զայս չկայ գանձ գովելի.
Ո՜վ Յոհանէս, եղբայր բարի,
Դու զուգեցէր գանձ պանծալի,
Զինչ որ ակունք կայ գովելի՝
Անգին ջաւխարն՝ զսա չարժէ.
Ամենայն ինչք, որ լինի՝
Անտես մընա և անցանի,
Սա քեզ ճրագ ի վառ լինի՝
Զհոգիդ յերկինս ուղևորէ,
Հոգիդ զհօր ձայնն լըսէ՝
Եկ դու, հանգիր, իմ սիրելի.
Քեզ պատրաստեալ եմ սուրբ տեղի,
Որ յաւիտեան ոչ անցանի.
Զի տէրն քաղցր է և բարի,
Որ կու լսէ իւր ծառ[այ]ի,
Եւ որ ասէ զտէր-ողորմին՝
Աստուած իւրեանն ողորմեսցի,
Եւ ամենայն քրիստոնէի,
Որ զսա լսէ յաւժար սրտի
՚Ի ի միտ առնու և ալգտեսցի,
Եւ. Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

Բ

Ստացողներ՝ Յոհանէս և Հալէայ-Խաթուն

1199թ Եւ արդ՝ ես Յոհանէս և Հալայ-Խաթուն ըլւինք զսուրբ աւետարանս Խլաթայ սուրբ եկեղեցեացն՝ ԺԱ. խորանին և սուրբ Գէորգ զաւրավարին, որ կենայ ի ձեռն Աստուածատուր քահանային և Յով[անէ՞ս]ին. և մի ոք իշխեսցէ տիրել սմա, կամ ծախել, կամ գողանալ, ոչ յազգականաց իմոց և ոչ աւտարաց. և որ յանդգնի՝ զմասն Յուդային առցէ և զխաչահանուացն և զհայենին, ամէն։

Եւ արդ, կրկին աղաչեմ զձեզ աստուած-ողորմի ասել Յոհանի մեծ պապուն՝ Նասրադնին, և Հալւա-Խաթունի մօրն Խաթուն-Մելեքին, և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

630

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

ՄՑՀ, հա. Բ. 12, էջ 53—55

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Եկեղեաց գաւառ

333 ա ... *Արդ. գրեցաւ հոգիարուխ մատեանս աստուածազարդ և ծաղկաւէտ բուրաստանս, որ ընդունող | | | անային քաղցր բարբառս քաղուածոյ աւետար[ան]ին, որ ըստ Մաթէոսի, հաւաքեալ ի լուսազարդ և յարփիափայլ բանից աստուածաբանչացն՝ Գրիգորի Աստուածաբանին և Ոսկէբերանին և այլոցն, քաջ և մեծ հռետորին՝ աշխարհալուր և տիեզերալոյս անկարաւտ գիտնականին և սուրբ իմաստասիրին, տիեզերահռչակ և մեծահամբաւ վարդապետին զուարթուն անուն կոչեցելոյ, ի պարծանս ե ի փառս եկեղեցոյ և ի վարժ մանկանց Նորոյս Սիոնի, նայ և յիշատակ բարի հոգոյ իւրոյ և իւրոյն վարժապետի՝* Յովհաննու Որոտնեցոյն՝ *մականուն Կախեալ ի սէրն Քրիստոսի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Զոր տէր Յիսուս փոխանակ այսմ հոգևոր գանձոյ տացէ նմա զբազմելն ի սեղան հաւրն և մաւր | | |**

*Եւ գրեցաւ մատեանս այս ի Թուականութեան Հայոց... ՊՂԲ. (1443) ամի, աւգաւստոս Ի. (20)-ն**, ի գաւառս* Եկեղեաց, *ի վանք[ս* Աւագ], **** ընդ հովանեաւ | | | ինք, սուրբ | | | լոյս մեծ բաբունապետիս մերոյ մեծիս* Աւետեաց, *զոր տէր Յիսուս հաստուսցէ զորս ընդ մեզ բազում աշխատանացն, նաև զբազմերախտ և զգորովագութ հայրս իմ հոգևոր և զուսուցիչս իմ՝ զհեզահոգի և զբբասնեալ բանին սպասաւոր զտէր* Խաչատուր *յիշեցէք յաղաւթս ձեր, ով հետևողքդ բանին ճշմարտութեան, որ և յայնմ աւրէ, որ ոչ գձաւ և զաջ ճանաչէի՝ սայ յայնմհետէ սնուցիչ եղև ինձ ընդ դայակ, զտիւ և զգիշեր աշխատեալ ընդ իմ առ ի յուսուցանել զճշմարտութիւն...։ Զոր աէր Յիսուս՝ հատուցանողն բարեաց հատուսցէ յիւր միւսանգամ գալստեանն իւր վարձս բարի աշխատողիս ընդ իս, զոր ոչ կայ | | | ես վճարել փոխանակ բազում աշխատանացն, որ առ իս, ոչ բանիւ և ոչ արդեամբք, նաև զեղբայր տէր* զԱստուածատուրն՝ *զհաւատարիմ աստուծոյ և զբարի ծառայն, որ և երկոքեան սոքա քեռ[ի]ք են ինձ. ընդ այսոր յիշատակեցելոցս Թերևս և զիս՝ զհարեալս մեղաւք և զմեռեալս յոգի արժանի առնիջիք յիշման, ով գրոց աշակերտեալ մանկունք և սիրողք բանի, խնդրելով զԹողութիւն յամենագութ փրկչէն բարի, զոր և ձեզ ամենեցուն ողորմեսցի։ Զի Թերևս ի հայցմանց ձերոց ցաւղ ողորմութեանն աստուծոյ իջցէ ի գերեզման մեղաւք մեռեալ ոգոյս և սրբեսցէ զբազմաշարաւ վէրս անձին իմոյ։*

** 15 տող խոնավությունից վնասվել է ու չի կարդացվում։*

*** Տպված է «Աւգոստոսին»։*

**** Բերված է եղել։*

Այլ և աղաչեմ յիշել ի տէր զբարի և զուրբասնեալ կրաւնաւորն և զհետևողն ճշմարտութեան զտէր Խաչատուր զուսուցիչն իմ, որ բազում ուրեք ի սուրբ գիրքս գրեաց՝ զմարգարտաշար գիրս իւր սփռելով, մինչև զկէս գրոցս կարծեմ գրեալ սորա, զի մեք տկար էաք ի յարհեստ գրին, վասն այն աւգնական լինէր մեր. ընդ թէ զոսկի ընդ սեաւ գեղ | | | սեաւն գեղեցկանայ։ Նաև գիրս մեր անարհեստ և որ լի ամենայն արհեստիւ և գեղեցիկ, Քրիստոս հատուցէ նմա փոխանակ այսմ աշխատանաց զ[հանդի]ստն մշտնջենաւոր և զկեանս անվախճան, ամէն։

Այլ և յիշ[եցէք | | | եր իմ և զսիրելիքն ի սրաէ և | | | եղբարքն իմ ըստ հոգոյ զսբբա[սէ՞ր] հետևողքն բանին ճշմարտութեան զտէր Աստուրեն և զտէր Աւետիքն, զոր տէր Յիսուս ի կամս իւր պահեսցէ միշտ և տացէ նոցա բան իմաստութեան առ ի հաստատութիւն կալ ծնալ ինքեանց, ամէն։ Զսոյն և ես յերես անկեալ աղաչեմ մոխրաթաւալ գիմաւք զհանդիպողքդ այս մատենի, ո՜վ գրոց աշակերտեալ մանկունք, յորժամ ընթեռնուք կամ գաղափարէք յիշեցէք զառածևալս մեղաւք զգրող այսմ տառի, որ և չհամարձակիմ և չհամարիմ արժան գրել զսեաւ անունս իմ ի սպիտակ գարտիզիս՝ զմեղօրս Սարգիս, նաև սխալանաց և խոշորութեան մեր, որ ի սմա ներեցէք, որ չեմ ուսեալ զքերթողութիւն ի կատար, անվարժ և անարհեստս ի մէջ մանկանց քերթողաց։ Զոր աղաչեմ անմեղադիր լինել վերաասացելոցդ, զի կար մեր այս էր, և թողութիւն մեղաց մերոց խնդրել ի տեառնէ աստուծոյ...։

Բ

318 Անմեղադիր լեր, ո՜վ սիրողդ բանին, որոյ հետևեալ ես խաչիս, սխալանաց և խոշորութեան, որ ի սմա, զի կարի շտապով էր աւրինակս, աղաչեմ զիս յիշեա։*

631

ԺԱՄԱԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

Երևան 6121

Գրիչ՝ Ղազար

105ա Փառք... որ զօրացոյց զմեղսամակարդ մարմինս և զմատունս հասանել ի զրաւ տառիս։ Աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ինչ կերպիւ և իցէ, յիշեսջիք աղօթիւք մասին զՅովսէփ քահանայս, և զծնաւղքն իւր, զհայրն իւր զ[Ի]սբայէլ, և զմայրն իւր զՄռջան, և
105բ զորդիքն իւր զԿի‖բակոս և զԹաջդին, զՇաքար և զՎարդան, յիշեսցիք յերկնաթուիչ յաղաւթս ձեր, որք հանդիպիք տեսանելով կամ աւրինակելով, լիակատար բերանով աստուած-ողորմի ասացէք

* Նորություն չպարունակող մանր հիշատակագրություններ կան ձեռագրի բազմաթիվ էջերում։

Յովսէփ քահանային, և ծնաւղաց իւր, և եղբարցն, և այլ ամենայն արեան մերձաւորացն, առհասարակ, ամէն, եղիցի, եղիցի։

Եւ զՂազար ղանպիտան գրիչս և զծնօղօքն իմ, ամէն։

Թվս. ՊՂԲ. (1443)։

632

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

«Միաբանք և այցելուք Երուսաղէմի», էջ 228

Ստացող՝ Ղազար Ղրիմեցի
վայր՝ Երուսաղէմ

Զվերջին ստացող սուրբ կտակիս զՂազար Ղրիմեցիս յիշեցէք, որ եգի զսա Երուսաղէմ, ի սուրբ Փրկիչն՝ անջինջ յիշատակ ննջեցելոցն ...։

Ի թվին Հայոց ՊՂԱ. (1443), մարտ ամսոյ ԻԱ.(21) գրեցաւ։

633

ՃԱՇՈՑ

Փիրղ. Նոտ. 132, Նշխարք (№ 4515), էջ 157, Վարագ

Գրիչ՝ Յովհաննէս

Օրհնութիւն ... որ ետ կարողութիւն Յովհաննէս սուտանուն քահանայի հասանել յաւարտ այսմ կտակի, յամի ՊՂԲ. (1443) Թուականի, ի խնդրոյ սրբասնեալ կրօնաւորի տէր Ղազարի։ Արդ, գրեցաւ լուսազարդ տառս ի դառնացեալ և յերեկոյացեալ ժամտնակիս, յորում ամի շարժեալ ի վերայ քրիստոնէից անհնարին վիշտ և տառապանք յազգաց անօրինաց և հարկապահանջողաց, յորմէ այց արասցէ զմեզ Քրիստոս որդին աստուծոյ։ Եւ զիս զանարժան զգծողս զՅոհաննէս սուտանուն քահանայ, և զծնողսն իմ զՅակոբ քահանայն և զՍալչուկ-խաթուն, և զհարազատն իմ զԳրիգոր աբեղայն, և զՆերսէս դպիրն [յիշեցէք]։

634

ԱԻԵՏԱՐԱՆ

«Թորոս Աղբար», Բ, էջ 349—350, Ղուլէի վանք

Գէորգ եպիսկոպոս Զմշկածեկցի
վայր՝ Խուլավանք

Յիշատակ է այս սուրբ աւետարանս Զմշկածեկցի Գէորգ եպիսկոպոսիս, որ դաղդաղեալ ձեռաւք գրեցի, անարժան առաջնորդ սուրբ Գէորգայ գերեզմանի Խուլավանից, որ զարդարել է հանդուցեալ Միքայէլ եպիսկոպոսն։ Վասն երկիւղին Լանկ-Թամուրին սուրբ գե-

* Ձեռագիրն ընդօրինակված է 1430-ին, հաֆայում։

րեզմանիս միաբանքն թագուցեալ են՝ ի Սով դղեակ, և վանս Խար-տիշարի, *և ս. Կարապետին, և Կարմիր վանուց։ Եւ սիրով յօրդորեալ ամենայն միաբանաց՝ կրկին ժողովեցին ինն միաբանս, և պաճծառա-ցուցաք սուրբ աթոռս. և երկու ագարակ գնեցաք գիւղին մերձ և դաշտն. մեծ ագարակն հարիւր փարայ և միւսն՝ քսան, իմ հալալ վաստակէս, և բացի վանքիս մերձակայ հաւղէ, որ ածեալ քար գրաք ի ներքոյ վանացս ութն բոլէ, և հիւսիսային ճանապարհիւ սուտ* Լոյսալի *գիւղն, որ հեռի է կէս ժամ, և անտի հողադաշտ լեռն է յարեմտից կուսէ, դէպ ի հարաւ՝ կէս ժամ, անտի յարեմուտս՝ կէս ժամ, մինչև ի ճանապարհն* Խարբերդու, *և ճանապարհիւ ուղիղ դէպ յարեմուտս, և ի գլուխ գեղին՝ ածեալ քարն, հանց ջրով և հողով, որ բազում աշխատանաւք ստացայ...։*

Պարոն Աբէլն Թաղարցի, *որ կոյր էր աչաւք և եկն ուխտ, և բա-ցան աչք նորա՝ հարիւր և վաթցուն ամաց. եւ բազում քաջութեամբ ստացաւ վանացս հողն, որ տիրեալ էր* Լոյսալի *(գիւղի) չար կարդա-ցողն...։ Ասացէք աստուած-ողորմի նահատակ եղբաւրս տէր* Յովա-նէսն... Մէլիք-Մահառյ Աւզբէկցւոյ, *թաղեցաւ ի մատուռն սուրբ Աս-տուածածնայ, և բազում հիւանդ բժշկի։ Վայ ինձ, բթամտիս, որ եղբայր նորա եմ և այս սուրբ գերեզմանիս առաջնորդ եմ։ Գրեցի այս բանս սակաւ, այլ և գրեալ եմ ամենայն անցք, որք ընդ իս և ընդ աթոռս անցին՝ յիշատակագրութիւն* Միքայէլ *արքեպիսկոպոսին և միւս առաջնորդաց, որք յառաջ քան զմեզ, իսկ այս բանս սակաւ գրեցին թուին Հայոց ՊՂԲ. (1443)։**

* *Եթե ամբողջությամբ կեղծիք չէ այս հիշատակարանը, որ արված է Խուլավանքի սեփականած կալվածքների հաստատության համար, ապա, անտարակույս, աղավաղված ու փոփոխված է և իր ներկա ձևով չի կարող 1443 թվականի շարադրանք համարվել։*

635

ՏՈՒՄԱՐ ԱՐԵԳԱԿԱՆ ԵՒ ԼՈՒՍՆԻ

Երևան 8973

Հեղինակ՝ Եսայի

2 բ *... Ծանի՛ր, զի յամի ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՆԽԴ. (1444) թուին Հռովմայեցոցն և Հայոց թուին ՊՂԴ. (=1444) էր...։*

Եւ զիս՝ զյոգնամեղս և զյետնեալս ի կրաւնաւորաց զԵսայիս՝ *զանարժան աբեղայս՝ զչինող արուեստիս յիշեցէք միով տէր ողորմային, որ բազում աշխատութեամբ քննեցի և յարդարեցի զարեգակ-*
3 ա *նային և զլուսնեկին գնացմունքն և զաստեղաց դիրքն, որ ան ‖ սխալ և անխափան ընթանալով ոչ կորուսանեն զժամն, զմասունքն, զծըննունդն, զլրումն, զաստիճանն և զմասունքն իւր, և ոչ բոպէ մի անցանէ, զոր ցուցանէ արուեստս, զի արարի զսա անխափան, որ ընթանայ մինչև ի կատարած աշխարհի։**

636

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

«Հայապատում», Բ, էջ 569—570

Վայր՝ Այրիվանք

Ամենագովելի և աստուածահաճոյ, ամենայն գովութեանց արժանաւորեալն, սուրբ և քաջ հռետորն և արիաջան բաբունապետն Սիմէոն, *յոյժ սիրելի գտեալ ամենայն սրբոց ի տօնախմբութիւն անյապաղ առանց ձանձրանալոյ, մի ըստ միոջէ կատարելով զտօնս սրբոց նահապետաց, նախահարց և սրբոց մարգարէից, մինչև ի խոնարհել որդւոյն աստուծոյ...։ Զոր տէր մեր* Ստեփանոս՝ *որդի մեծափառ իշխանին* Իւանէին Որոտնեցւոյ *եբեր ի* Սսոյ *յաստուածաբնակ ուխտն* Եւստաթէի *սուրբ առաքելոյն, և մեծ վարդապետն մեր քաջ եկլեսիաստէս Հայոց* Սիմէոն՝ *ստացող օրինակի սորին, բազում աշխատութեամբ և երթևեկութեամբ բերել ետ ի գաւառն* Արարատեան, *և մեծափափագ յօժարութեամբ և բազում ծախիւք գրել ետ յիշատակ իւր և ծնողաց իւրոց։ Արդ, գրեցաւ օրինակ սորին ի թուաբերութեանն հայկազեան տոմարի ՊՂԳ. (1444), ի հայրապետութեանն* Գրիգորի *աթոռակալի*

** Եսայի վարդապետի տոմարագիտական այս աշխատությունը մեծարժեք մի գործ է և արժանի է մասնագիտական մանրակրկիտ քննության։*

սուրբ էջմիածնին վերստին նորոգելոյ, և յաշխարհակալութեանն կորովի և յաղթող Ջհանշահ խմիրզին՝ որդւոյ մեծին Յուսուֆին, ի մենաստան Այրիվան, ընդ հովանեաւ հրաշափառ սուրբ լուսոյ մօր կաթուղիկէ սուրբ Աստուածածնին. ներկեալ արեամբ կենարարին սուրբ Դեղարդեանն, և ամենայն սրբոցն, որ անդ հաւաքեալ կան։

Այլ և աստանօր աղաչեմք զամենեսեան՝ պատահողք սուրբ տառիս, յիշեցէք զստացող օրինակի սորին՝ զաստուածահաճոյ և զարդիւնական և մեծ վարժապետն Հայոց զՍիմէոն, որ յայնմ ժամանակի փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրև զարեգակն, և մեծաւ յուսով և եռափափագ սիրով սկսաւ նորոգել և զարդարել զվանորայս Աքարաւեան նահանգիս, որ խախտեալ կային ի սահմանաց և ի կրօնից յառաջին հարցն։ Նախ բնակեցաւ յաստուածաշէն և ի տիրախնամ գեղն Եղիվարդ, ի փոքր վանս, որ ի մէջ գեղին, և բազում արդիւնս արարեալ անդ ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտ, մեծազգի և փառաւոր, աղքատասէր, ազատածին առն Ազիզպէկին և որդւոց նորին՝ Աւագին և Ջաքարիային։ Բազում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ ժողովեալ յուսուցանել զհինն և զնոր մատեան աստուածաշունչ գրոց, զսուրբ և զարտաքին փիլիսոփայութիւն՝ ամս տասն։ Եւ ապա ուշեդեալ գնալ յաստուածակոխ սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ տեսանել և երկիր պագանել սուրբ տնօրինականացն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և ի ճանապարհի տկարութիւն պատահեալ՝ դարձեալ եկն բնակեցաւ ի մեծափառ սուրբ ուխտն յԱյրիվանս, և զամենայն կարգս և զսահմանս ուղղեաց ըստ առաջին սուրբ հարցն, ուխտ եդեալ յամենայն օր ասել ՃԾ. (150) սաղմոսն Դաւթի, և անխափան կատարել զաստուածային պատարագն ի շաբաթ և ի կիրակէի, յամենայն մեծամեծ տօնի, և թողեալ յիշատակ պայծառ ժամատեղացն՝ մի պատուական Աստուածաշունչ, մի Տօնական և մի Ցայսմաւուրք։ Եւ կեցեալ սուղ ինչ ժամանակ, ապա եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն Զագավանք, և վերստին կարգեաց զամենայն բարի կարգս և օրէնս յերկրին Կոտեաց՝ ի կարգաւորս, յազատս և յաշխարհականս։ Վասնզի շատ անկարգութիւն և անօրէնութիւն մտեալ էր յեկեղեցի։ Առաջին՝ զազգակցութիւն, զկնքաւորութիւն և զխնամութիւն՝ ախտիր, անխրատ գործէին. շփոթեալ անամօթ, և յեկեղեցւոյ սաղմոսն Դաւթի պակասեալ էր և չոր շարականքն բազմացեալ, և քահանայք զանազան զգեստուք պճնեալ և գօտեւորեալ իբր այլազգի, և աբեղայք թողեալ զվանս և զանապատս և զամենայն հոգևոր ուսմունս՝ ի գիւղս բնակէին։ Իսկ սա աստուածային վարդապետութեամբն սաստէր և յանդիմանէր զանուսումն և զանխրատս և զանխըրղայս (*)։ Եւ դարձեալ, քաղցրուսոյց վարդապետութեամբն ուսուցանէր, խրատէր և մխիթարէր վկայութեամբ աստուածային սուրբ գրոց՝ զզջացեալ հաւատացեալ ժողովուրդս, օրհնելով յորդորէր ի պատուիրանսն աստուծոյ. և եբարց զամենայն խռովութիւն ի տանէ աստուծոյ։ Եւ կանոնս և օրէնս հաստատեաց՝ զի աբեղայք ի վանս բնակիցին, իւրեանց հանդերձիւն՝ բրդեղէն, մաշկեղէն կամ մազեղէն՝ ըստ առաջնոցն, և աշխարհի երէց ի պահք ժամանակի գինի մի ըմ-

պիցէ և ձէթ մի ուտիցէ. և կապուտ փաթթէ* ի գլուխն. զՃԾ. (150) սաղմոսն երգէ իւր ընկերօքն յեկեղեցի, և զերեք յիսնական կենաց պահօք շարաթ և կիրակին՝ զղջացեալքն, միայնակեացքն և ապաշխարողքն։ Իսկ պատարագողք աբեղայքն և ճգնաւորքն՝ բոլոր կենան զյիսնակաց պահսն, և յօրն, որ զպատարագն մատուցանէ՝ լեզուաւն ասէ զութ կանոնն անխափան, և գինի և միս մի ուտիցէ այն օրն, ըստ առաջին հարցն։ Այլ և զամենայն սահմանս և զկարգ վանիցն ուղղեաց ըստ առաջնոցն. եթէ բնակիչք, որ լինին ի մի խորհուրդ և բան և մի գործ, այսինքն երեք տեղ՝ ի ժամատեղն, ի հացատեղն և ի բանատեղն,** հնազանդ լինին առաջնորդաց եկեղեցւոյ. և առանց հրամանի կրօնաւոր ի վանացն մի ելցէ յոչինչ գործ։ Այլ և զվանքն պարըսպեաց և ամրացոյց և որոշեաց ի յաշխարհականացն, զի աբեղայ ի շուրջ պատի կողմն բնակեսցէ, և սանամայր մի արասցէ և քոյրաքոյր և մայրաքոյր. և ամառն և ձմեռն ի մի վայր ժողովին ի քնոյ ժամն, ըստ առաջնոց սահմանին։ Եւ հինգ մեծամեծ խաչ կանգնեաց ի մէջ պարսպին. կամէր զեկեղեցի շինել և այլ բազում արդիւնս առնել, եհաս հրաման յարարչէն կոչել զվարդապետն առ ինքն, ի թուիս ՊՀԷ. (1428), և մնաց գիրքն թերատ ամս բազումս։ Առաջինն գրեալ եղև ձեռամբ սրբասէր և մաքրամիտ քահանայի՝ Մեսրոբ անուն գրոց աշակերտի, յիշատակ նորին օրհնութեամբ եղիցի։***

Վկայասէր գոլով մեծ րաբունապետն Սիմէոն՝ ըղձմամբ և փափագանօք վասն յուսոյն, որ առ աստուած և սիրոյ վկայիցս՝ զտկարութիւն անձին մոռանալով գնաց և ի Տարեւոյ երեր զկէս աւրինակն և զկէսն ի տեղն ետ գրել։ Վասն որոյ աղաչեմ զճշմարիտ գաղափարողսն յամենայն ամսի վճարն գծագրէք ընդ յիշատակի ձերոյ զմեծ րաբունապետն Սիմէոն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

637

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 1629

Ծաղկող՝ Մինասենց Թումայ
վայր՝ Աղթամար

296 ա ... Արդ, այսմ աստուածեղէն և երկնապարգև գանձիս և լուսափայլ և մաքուր մարգարտիս ցանկացաւղ եղէ ես՝ մեղաւոր և անարժան ծառայս ծառայիցն աստուծոյ Թումայ մականուն Ղուզիկ կոչեցեալ՝ ի գեղջէ Գաւաշից, և ետու գըծագրել զսա մեծաւ փափագմամբ և ջերմեռանդ հաւատով ի հալալ արդեանց իմոց, յիշատակ բարի հո-

* Այս նույն հիշատակարանը, որ քաղված է Վենետիկի № 402 ձեռագրից, Ալիշանի «Հայկարանից» ընդօրինակել է նաև Մ. Տեր-Մովսիսյանը. Նրա մոտ «փաթթէ»-ի փոխարեն գրված է «մի փաթթէ»։

** Իմա՝ «աշխատանոց», «գործատուն»։

*** Շարունակությունը վերցնում ենք Ղ. Ալիշանի «Հայկարան» ժողովածուից Մ. Տեր-Մովսիսյանի կատարած ընդօրինակությունից։

գոյ իմոյ, և ծնաւղացն իմոց՝ հաւրն իմոյ Կիրակոսի և մաւրն իմոյ Խաթուն-Մէլէքին, եղբաւրն իմոյ Ծերուն աբեղային, և կենակցին իմոյ Աղութին, և զաւակացն իմոց՝ հանգուցելոցն ի Քրիստոս Կուրճի-Բէկին և Փաշային, այլ ամենայն արեան մերձաւորացն իմոց՝ կենդանեացն և հանգուցելոցն։

298 ա … Եւ տուի զսա ընծայ և նուէր ի յանուանի գեօղս Գաւաշ, ի դուռն գերահռչակ սուրբ տաճարացս Ամենափրկչի և սուրբ Կիրակոսի՝ յիշատակ բարի հոգոյ իմոյ և ծնաւղացն իմոց, որպէսզի հանապազ ընթերցցին զսա մանկունք եկեղեցոյ ի դուռն սուրբ տաճարացս, մանաւանդ ի ժամ սուրբ և սոսկալի, հաշտարար և մեռսաքաւիչ պատարագին…։*

298 բ … Եւ արդ, ես՝ ունայնս և թափուրս յամենայն հոգևոր բարէմասնութեանց, և հիւծեալս և մաշեալս վերջին աղքատութեամբ՝ մեղապարտ և յանցաւոր ծառայս աստուծոյ Մինասենց Թումայս՝ անուամբ և էթ աբեղայս, տեսի զփափագ սորա և զսէրն, զոր ունէր առ հոգևորն, և հարկեցայ յաղաչանաց նորա, և յանձն առի և ետու ըղծագրել զսա քուերորդոյն իմոյ Հայրապետ աբեղային ի ստոյգ և յըղտիր աւրինակէ։ Եւ ես իսկ մեղսամած մատամբ իմով ծաղկեցի զսա

299 ա ըստ իմում կարի, և զհամաբարբառսն և զտրնառաջ գըլ‖խագիրսն և զյիշատաքանս զայս և զերից ևս գլխացն** ըղծագրեցի ձեռամբ իմով և կազմեցի յաստուածապահ կըղզիս Աղթամար, ընդ հովանեաւ գերահռչակ և երկնանման գմբէթայարկ սուրբ Խաչի տաճարին, և Ամենափըրկչին, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Սարգիս զաւրավարին, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, և ի թվականութեան հայկազեան տոմարիս ի յԹ. և ի ՂԳ. (1444), ի դառն և ի չար ժամանակի, յորում տառապեցուցանեն և նեղեն զազգս քրիստոնէից ազգի ազգի կեղեքմամբ, և անողորմ հարկապահանջութեամբ, և յաշխարհէ յաշխարհ վըտարմամբ իբր զգերի՝ տամբ և ընդանեաւք, անիրաւ ազգն նետողաց, որք են տեարք և թագաւորք և իշխանք աշխարհաց մերոց՝ ազգաւ Թուրք։

Արդ, ի յայսպիսում դառնութեան ժամանակի ըղծագրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ անարժան և անարհեստ գրչի Հայ-

299 բ րապետի անուամբ և եթ աբեղայի, ‖ ի խընդրոյ երկուց հարազատ եղբարցն՝ պատուական և սըրբասէր Ծերուն աբեղայի և Թումայի վաճառականի։

Վասն որոյ աղաչեմ զամենեսեան սիրողս Քրիստոսի, լի բերանով և ուղիղ մտաւք աստուած-ողորմի ասացէք սուրբ աւետարանիս երկուց հարազատացն՝ Ծերուն կրաւնաւորին և Թումայ վաճա-

* Բաց ենք թողնում 298ա—298բ էջերի վրա գտնվող ընդարձակ հատվածը, որը կրկնությունն է նախորդ հատվածի։

** Խոսքը Մատթեոսի, Մարկոսի, և Ղուկասի ավետարանների վերջում եղող համառոտ հիշատակարանների մասին է, որոնք ոչինչ նոր բան չեն ավելացնում ընդարձակ հիշատակարանի վրա։

ռականին*, և ծնօղաց նոցին Կիրակոսին և Խաթուն-Մէլէքին, և Թու-
մայի կենակցին Աղութին, և զաւակաց նոցին՝ հանգուցելոցն ի Քրիս-
տոս Գուռջիրէկին և Փաշային, և քեռոյն իւրեանց Աղուպշային, և այլ

Նկ. 24. Ձեռագրի ստացողներ Թումայ վաճառականը և Մերուն կրոնավորը

ամենայն արեան մերձաւորաց նոցին՝ կենդանեացն և հանգուցելոցն։
Ընդ նոսին և զմեզ արարէք յիշման արժանի՝ զմեղաւք տառապեալ
ոգիքս զՀայրապետ սոսկանուն աբեղայս՝ գծագրող տառիս, և զծնաւղսն
իմ զԽաչիկ և զՌսկիտիկին, և զեղբայրն իմ զՑռճանՆէս, և զքոյրն իմ
300ա զՎարդ-Խաթուն, և լի բերանով և բոլորա || խաւս լեզուաւ աստուած-
ողորմի ասացէք մեզ, զի և ձեզ ողորմեսցի Քրիստոս, ամէն։

Ցիշել աղաչեմ ի Քրիստոս և զիմ անարժանութիւնս՝ զՄինասեՆց
Թումայս՝ զբազմավէր ոգիս, որ ծաղկօղ և կազմօղ եմ աւետարանիս և
գրծող յիշատակարանիս աննախանձ կամաւք և ինձ ասացէք աստ-
ուած-ողորմի, և ծնօղացն իմոց Սիմէոնի և Արղունի, և եղբայրն
քեռոյն իմոյ Թումայ միայնակեցին, և ձեզ յիշողացդ ողորմի Քրիս-
տոս ի յաւրն վերջին, ամէն։

Եւ արդ, ես՝ մեղուցեալ և անարժան ծառայս ծառայիցդ աստու-
ծոյ Մերուն սոսկանուն աբեղայս, որ ի նարդեան ժամանակիս հէլ-
պէտ կոչիմ ես սուրբ ուխտիս՝ հըռչակաւոր մենաստանիս սուրբ Վար-
դանայ զաւրավարիս, և հարազատ եղբայրն իմ Թումայ, որ ստա-
ցաւղն է սուրբ աւետարանիս, տըւաք զսուրբ աւետարանըս զայս ի

* Ձեռագրի 11ա էջում նկարված են մի աշխարհականի և մի հոգևորականի պատ-
կերներ։ Ըստ երևույթին, դրանցից առաջինը ձեռագրի պատվիրատու Թումայ վաճառա-
կանն է, իսկ երկրորդը Մերուն կրոնավորը (տես նկ. 24)։

յանուանի գեօղս Գաւաշ՝ ընձայ և Նըւէր գերահռչակ սուրբ տաճա-
300 բ րացն Ամենափըրկչին և սուրբ Կիրակոսին։ ‖ Վասն որոյ աղաչեմք
զամենեսեան՝ զպատուական և զըրբասէր քահանայսդ, որ ի յայժմու
ժամանակիս սպասաւորք էք սուրբ տաճարացս՝ երկու հարազատ եղ-
բարքդ՝ Թադէոս և Կարապետ, Ատոմ, և Կիրակոս և Յովաննէս. և որք
յապայս լինելուց էք, զի սիրով ընկալջիք զսա ի ձեռաց մերոց Նըւէր
աստուծոյ, և խնամով պահեսջիք զսա ի գողոց և յայլ պատահարաց,
և առանց ձանձրանալոյ և աննախանձ կամաւք և յաւժար սրտիւ հա-
նապազ ընթեռնուք զսա ի սուրբ քառասներորդ աւուրք յարութեանն
Քրիստոսի, և յամենայն կիրակմտի, և մանաւանդ ի ժամ սուրբ և
սոսկալի պատարագին, զի և դուք գտջիք ողորմութիւն ի Քրիստոսէ
յաւրհնութեանն պահու, ամէն։

Այլ և զպատուական և զըրբասէր կրօնաւորքս յիշեցէք ի Քրիս-
տոս՝ զհարքս մեր և զեղբարքս, որք են միաբանք և սպասաւորք
հրեշտակաբնակ ուխտիս սուրբ Վարդանտյ զաւրավարիս, որք խրա-
301 ա տիչք եղեն մեզ և յորդորիչք ‖ ի գործս բարիս՝ ծերունի հայրս մեր
պատուական տէր Թումա, որ ծընաւղ և սընուցող է լեալ մեզ ամե-
նեցուն։ Եւ ի սորա առաջնորդութիւնս շատ արդիւնք յաւելցաւ վա-
նացն, աւգնականութեամբ միեղէն եղբայրութեանցս, որք ի բազ-
մացն սակաւք են մնացել և են թըւով վեց՝ Մկրտիչ մահդասին և
Ստեփանոս սըրահոգին, Բարսեղ և Վարդան, Յովանէս և Վարդան, և
ես Տերունս՝ տրուպ քան զամենեսեան և սպասաւոր սոցին։

Արդ, ի հերպետութիւն տէր Թումային, մեր ամենեցուն աւգնա-
կանութեամբս և կամաւք աստուածասէր տանուտերացս, որք կան
այժմ կենդանի՝ Մանկասարենց Թումայն, և հիւսն Կիրակոսն, խոջա
Ստեփանոսն, Զիթկանց Կիրակոսն, և ըռէս Աղուպշէն, Կիրակոսն, և
301 բ Փափոսենց Յոհանէսն։ ‖ Սոցա և մեր ամենեցուն կամաւքս և աւգնա-
կանութեամբս, և տըրաւք և ողորմութեամբ քըրիստոնէից, և յորդոր-
մամբ սուրբ և աստուածաբան վարդապետացն Յակոբայ և Յովաննէս
Գուտըլկեցոյ՝ շինեցաւ ի հիմանց սուրբ Վարդան զաւրավարի գում-
բէթաձև և երկնանման տաճարն՝ ի հէրպետութեան վանիցն Թումայ
աբեղային, և ի ղանութեան Ղարա-Յուսուֆին, յամիրապետութեան
Ոստան քաղաքի՝ Ամիր-էզդընին և որդոյն իւրոյ Մէլիք-Մահմադին։
Կըտըրվաւ և նոյն Թումայ վանից հաւր ձեռօքն Նաջբադընի վէցքու
հողն արտ, ամիրաց մըլքաթըղթովն և նըշանովն՝ սուրբ Վարդանայ
մուլք գընվաւ և* էգին, և հաթողիկոսենց արտերն, և Պէշգէնի դրախտն՝
սուրբ Վարդանայ վանիցն մուլք, շինեցաւ և ձիթահանքն սուրբ
Վարդանայ, ի Գաւաշ գեաւղս։

Այսքան բարութիւնքս և առաւել քան զսոյն, կամօք և աւգնա-
297 ա կանութեամբ Գաւաշից աստուածասէր տանուտերացն և ‖ ** պատուա-
կան քահանայիցն, և աշխատութեամբ վանից սըրբակըրաւն աբեղայիցն,

* Մի բառի տեղ բաց է թողնված։

** Հիշատակարանի վերջին թերթը, սխալ կազմված լինելով, այժմ ձեռագրի 297-րդ
թերթն է կազմում։

և տըրաւք և ողորմութեամբ ամենայն քրիստոնէից յաւելցաւ սուրբ Վարդանս։ Յամիրապետութեան երկրիս Մէլիք-Մահմադին, և հաւրն իւրոյ և մօրն, և յառաջնորդութեան վանիցն Թումայ արեղային, որոց ամենցուն առհասարակ՝ կանգնողացն, և կամեցողացն, և աշխատողացն, և ողորմութիւն տըւողացն, և յորդորող վարդապետացն՝ տացէ Քրիստոս վարձս բարի զանսպառ ողորմութիւնն իւր և զերկնից արքայութիւնն, ամէն։

Իսկ գրծագրեցաւ սուրբ աւետարանս ի թագաւորութեան ամիրզա Ջհանշային, և ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս Ղըլին-Ասլան պարոնին, ի խընդրոյ երկուց հարազատ եղբարցն աստուածասիրաց Ծէրուն արեղային՝ սուրբ Վարդանայ հէրպետին, և եղբաւրն իւրոյ Թումային։ Գրծագրեցաւ և յիշատակարանս այս ձեռամբ Մինասենց Թումայի անիմաստ և ախմար գրչի։

297 բ Վասն որոյ աղաչեմ զհանդիպողքդ սմա՝ զպատուական քահանայքդ, որք սպասաւորք էք սուրբ Փրրկչիս և վայելողք աւետարանիս, և զաստուածասէր տանուտէրքդ Գաւաշ գեղիս, որ յամէն տարի երկու աւր ընթեռնուք զյիշատակարան սուրբ աւետարանիս՝ մի անգամ աստուածայայտնութեան տաւնին և մի անգամ աւագ զատկին, զի լըսօղքն ի բարին յորդորեսցին և ուղիղ մտաւք և լի բերանով աստուած-ողորմի ասասցեն ստացողի սորին Ղուզիկ Թումային, և ծնօղաց նորին, և եղբաւրն, և կենակցին իւրոյ, և զաւակացն՝ ի վերոյ յիշեցելոցն։ Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի Գաւաշից սուրբ եկեղեցեացն՝ գողանալով կամ ծախելով կամ գրաւելով։ Եւ ով ոք յանդգնի և հանէ և կամ ի վերայ վանից արտորայիցն և անդաստանացն չար յիշատակ և ըունիաթ գրնէ՝ ընդ Կայէնի և ընդ Յուդայի և ընդ խաչահանուացն պատժի ի Քրիստոսէ, ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս և զՆասրադին սարկաւագն, որ աւգնական և ձեռնտու եղև մեզ կոկելով զնիւթ սորա, զոր տէր աստուած պահեսցէ անփորձ յերկրի, և [արա]սցէ զաւարտ նորա ի բարի, և [տա]ցէ նմա շնորհ և ողորմեսցի նմա, ամէն, ամէն։

Բ

303 բ Արդ, աղաչեմ զձեզ յիշեցէք յաղաւթս ձեր զբարեսէր և զհաւատարիմ տանուտէրն զպարոն Մուղրիլն, որ զսուրբ աւետարանս գերի գնեց յիշատակ իւրն և ծնաւղացն՝ հաւրն Դալաբին, և մաւրն Շուշանին, և զաւակացն Ջանազիզին և Դարմանին, ամէն։

... Դարձեալ, աղաչեմ զձեզ յիշեցէք յաղօթս ձեր զբարիսէր տանուտրէք Գաւաշից՝ զպարոն Մուղբիլն, և զԱզբէկն, զաւագերէց զտէր Յովանէս, և զԳուլազիզն, զՀայրապետն, զՄլքամն, զտէր Վարդան, Գաւաշենց Միրիջան, Մարտիրոսն, Տլօշենց Միրիջան, Քարիմշենց Մկրտիչն, զՖառուխն, զԿակոսն, զԱխշիբէկն, և զԱստուածատուրն, զԳուլազիզն, Մուսեխենց զքարզարկ Յովանէսն, յիշեցէք և լի բերանով աստուած-ողորմի ասացէք սոցա, ամէն...։*

* Այս հիշատակարանը հնագրական տվյալներով գրված պետք է լինի ԺԵ—ԺԶ դարերում։

638

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 5931

Կազմել տվող՝ Թովմա Մեծոփեցի

120 ա Այլ և ես մեղաւորս ի մանկունս եկեղեցւոյ պիտակ անուն վարդապետս Թովմա և հարազատս իմ Մկրտիչ վարդապետ, յերեսս անկեալ պաղատիմ քրիստոսընկալ ուսումնասէր եղբարցդ, որք հանդիպիք իմաստութեան գրոյս՝ լուծմանցս Պորփիւրի և Պարապմանցս սրբոյն Կիւրղի ախոյանի, աշխատասիրութեամբ մեկնեալ հոգևոր հաւր մեր՝ վարժապետին Գրիգորի Տաթեւացւոյ, յիշեսջիք և զմեզ ընդ առաջին աշխատողացն և զծնաւղսն մեր, ասելով՝ Քրիստոս աստուած, թող զյանցանս նոցա. և Քրիստոս աստուած զձեր յանցանսն թողցէ աստ և ի հանդերձեալն։ Զի ՊԼԲ. (1383) թվականին գրեալ էր։ Եւ ի ՊՂԳ. (1444) թվականիս մեք նոր ետուք կապել հոգևոր որդւոյ մեր Հէրապետ կրաւնաւորի և գրոց աշակերտի։ Քրիստոս աստուած զսա գրէ ի գիրն կենդանի, հանդերձ ծնօղօք, և ամենայն արեան մերձաւորաւք, և զամենայն սրբասէր ուսումնական[աւք], ամեն։

Եւ ես ԿԶ. (66) տարոյ եմ, և եղբայրս իմ ՀԲ. (72)։ Եւ այս գիր ի ձեռն մարդոյ չէ եկեալ վասն ծառայութեան* ուսումնասիրաց։

639

ՃԱՇՈՑ

Ալիշան, Հայկաբան

Գրիչ՝ Թումա

վայր՝ Արճէշ—Մեծոփայ վանք

Ցամի ութհարիւրերորդի ենյսուներորդի երրորդի ի թուականութեան Հայոց տոհմիս տումարի (1444), և ի հայրապետութեան տեառն Գրիգորի Վաղարշապատու էջմիածնի, և ի թագաւորութեան Ջհանշանին, որ տիրեաց երկու թախտի՝ Հայոց և Ասորոց և արար խաղաղութիւն ոչ սակաւ, բայց հարկապահանջութիւնն բուռն և ծանր էր ի վերայ քահանայիցս...։ Ձեռամբ... Յովանէս քահանայի և Թումա անարժան կրօնաւորի, ... յիշատակ... ծնողացն Ղազար մահդասուն և Ամրար-խաթունին, և պապուն իմոյ Սարգսին, և Ծով-խաթունին, և զաւակաց նոցին՝ Աստուածատուրն և Տիրատուրն, և հօրքըւեր իմոյ Մարթային, և քեռոյն իմոյ Խաչատուր[ին], Կարապետին, և հոգևոր որդոյն իմոյ Մինաս քահանային | | |

---

* «Ծառայութեան» բառի ընթերցումը երկբայական է, կարող է լինել նաև «ծուլութեան» և այլն։

Այլ և այս գիտելի է, քանզի ունի աստուածաշունչ գիրս այս զբոլոր մասունս տօնից տէրունականաց, զոր սուրբ հարքն հաստատեցին...։

Արդ, գրեցաւ աստուածաշունչս կտակս ի յերկիրս Քաջբերունեաց, ի քաղաքն Արճէշ, և կէսն՝ ի սուրբ ուխտս Մեծոփայ, առ ոտս տիրամաւր սուրբ Աստուածածնի տաճարիս, և յառաջնորդութեան սրբասէր և հեզահոգի արհիեպիսկոպոսիս տէր Ներսէսի և հոգևոր որդւոյ իւրոյ Բարսեղ կրօնաւորի...։

640

ԱՒԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 2583

Ծաղկող՝ Զաքարա
վայր՝ Վարագ

Նկարիչն է Զաքարա վարդապետ, ստացող Մարտիրոս վարդապետ՝ որդի Սարգսի և Շամշայ-խաթունի, պապն ու տատը Յովանէս և Մարթայ, քոյրերն են Շաքար, էվատ-Մէլիք, Գոհար, եղբայրն է Խդըրշահ, գրեալ ի թուին ՊՂԳ. (1444), ի մենաստանիս Վարագայ, ի յառաջնորդութեան տէր Յովանիսի, և ի հայրապետութեան տեառն Գրիգորի, որ յետի ժամանակիս կաթողիկոս նստաւ ի սուրբ Էջմիածին, և կաթողիկոսին Աղթամարայ տէր Զաքարիայի, և իշխանութեան Ջհանշա միրզի, որ աւերեաց և գերեաց զՎրացտունն:

Աստուած զնա կործանէ, որ առաւել հարկապահանջութիւն խնդրէր ի քրիստոնէից։*

641

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 2671

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Վան քաղաք

...Արդ, կատարեցաւ սուրբ աւետարանս և բերանս Քրիստոսի և
քարոզս Յիսուսի տեառն աստուծոյ մերոյ ի քաղաքս, որ կոչի Վան,
ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և սուրբ Վար-
298ա դանայ քաջ || զօրավարին, ի թվաբերութեանս Հայոց ՊՂԳ. (1444), ի
հայրապետութեան տեառն Գրիգորի, և մերոյ աթոռակալի և առաջ-
նորդի սուրբ ուխտիս Վարագայ տէր Յովանէսի, և աթոռակալին եր-
կրրին Քաջբերունեաց տիեզերալոյս և քաջ հռետորին Թումա րաբունա-
պետին, ձեռամբ անարժան և սուտանուն երիցու Վարդան անարհեստ
գրչի։ Արդ, աղաչեմ զմանկունսդ սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք
սմա՝ յիշեցէք ի Քրիստոս և ի սուրբ յաղօթս ձեր զՄկրտիչ սրբասէր
կրօնաւորն, և զծնողքն իւր զխնդուն և զխութլուն, և զեղբայրքն զՅո-
վանէսն և զԿարապետն՝ զհանգուցեալքն ի Քրիստոս, և զքոյրն զՓաշա-

* Միայն վերջին նախադասությունն է բնագրին հարազատ։ Սկզբի ամբողջ մասը վերապատմում է նկարագրող Մ. Տեր-Մովսիսյանը։

Մէլիք, և դեղբօրորդիքն զԽՑդուՆ, և զզաւակսն՝ զՄխիթարն և զԿարա-
պետն, զԽէրապետն, և զզաւակսն Նորին՝ զԱմիր-ՄէլէքՆ և զՅովանէսՆ,
298 բ և զՀօրեղբայրն զԽոցադէղն, և զկենակիցն ‖ զԼի-ՏիկիՆՆ, և զզաւակսն՝
զպարոն ՄկրտիչՆ և զՁմրութՆ, և զքեւրորդին զԱռաքելՆ, և զզաւակսն
պարոն ՄկրտչիՆ՝ զպարոն ՄեՃէրՆ և զՄուղդասիՆ, և զքեւրորդին՝
զՍտեփաՆոսՆ... և զիս զանարժան գծողս, և զծնողսն իմ զՅովաՆես
քահանայ և զՁմրութ, և զեղբայրքն իմ զԿարապետ քահանայն՝ զու-
սուցիչն իմ, և զՄկրտիչ, և զՄելքէսէթ, և զհոգևոր մայրն իմ զԱրղուն-
Մէլէք, և զերախաաւորքն մեր՝ զԱբդլմսեՃՆ, զՑառուխշէՆ, և զՊապուհէր
դարբինն, և զԱւետիսն, և զիւր ծնօղքն, և զկոկոզ Թղթին յիշեցէք և
լի բերանով աստուած-ողորմի ասացէք ի ժամ սոսկալի՝ ի սուրբ
299 ա պատարագին, և աստուած չ[յ]իշօղքդ և զյիշեցեալքս արժանի արաս ‖ ցէ
արքայութեան իւրում, ամէն։

Դարձեալ, յերես անկեալ աղաչեմ զձեզ անմեղադիր լերուք սխա-
լանաց և խոշորութեան գրիս, զի միտքս մեղօք մոլորեալ է և յիմ
չար գործքն տարեկուսեալ, աղաչեմ չմեղադրել։

Բ

299 ա Այլ և աղաչեմ ի սուրբ յաղօթս ձեր զԳրիգոր սոսկանուն քահա-
նայ՝ ծաղկող և կազմող սուրբ աւետարանիս, և զծնօղքն նորա և զեղ-
բարքն [յիշեցէք]....

642

ՑԱՑՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 3806

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Աղթամար

701 ա ...Արդ, ես՝ ՍտեփաՆոս քահանայ, յոյժ փափաքանօք ետու գրել
զՑայսմաւուրքս ի հալալ և յարդար ընչից իմոց, և ետու զսա ընծայ և
նւէր սուրբ Ստեփանոսի Նախավկային՝ ի մայրաքաղաքս յՈստաՆ,
որպէս զի հրճւեսցին սովաւ մանկունք սուրբ եկեղեցոյ, և յիշեսցեն
յերկնագնաց յաղօթս իւրեանց զստացող գրոցս զՍտեփաՆոս քահանայ,
և զծնօղսն իւր՝ զԹումայ և զՍուրաթ, և զկենակիցն իւր զՆաւասուզ-Խա-
թուՆ, և զնորին ծնօղսն զԹումայ քահանայ և զՇամշայ-ԽաթուՆ, և
զմիւս մայրն զՇարմէլիք, և զզաւակսն նոցա զԱտոմ քահանայ և զԹու-
մայ դպիր, որ տարաժամ մահւամբ փոխեցաւ ի յաշխարհէս, և զայլ
ազգատոհմսն, և լի բերանով և ուղիղ սրտիւ աստուած-ողորմի ասա-
ցէք և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Ես՝ ՍտեփաՆոս քահանայ տըւի զՑայսմաւուրքս սուրբ Ստեփա-
նոսի Նախավկային, և մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ
սուրբ Ստեփանոսին ծախելով, կամ գրաւելով, կամ այլ ինչ աղագաւ,
կամ հակառակ կենայ կարդալոյն, ոչ ի մերոց և ոչ յօտարաց, և թէ

ոք յանդգնի և հեռացուցանէ կամ հակառակէ՝ դատապարտեսցի յաս-
տուծոյ և զանէծքն զաւձին և զԿայենին ժառանգեսցէ և զմասն զՑու-
դային և զխաչահանուացն առցէ՝ հանդերձ ծնօղօք իւրեանց, ամէն։
701 բ Եւ արդ ես… ‖ բազմամեղ և անարժան սոսկանուն քահանայ
Գրիգոր, որ զձև ունիմ քահանայի և ի գործոյն Թափուր և ունայն
գտանիմ, վա՜յ ինձ յահագին աւուր դատաստանին, տեսի զսէր և
զփափագ սորա, զոր ունէր առ հոգևորսն, և իմով իսկ տկարութեամբս
յանձն առի և ամենակարող զօրութեամբն աստուծոյ կատարեցի
զսուրբ գիրքս զայս մեղսամած մատամբս իմով, բազում և մեծ աշ-
խատութեամբ հասուցի զսա յաւատումն յաստուածարնակ կղզիս Աղ-
թամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Աստուածածնիս, ի
հայրապետութեան տեառն Զաքարիայի, և ի Թուականիս Հայոց ՊՂԳ.
(1444), ի դառն և ի վշտալից ժամանակիս, յորում կամք ընդ հար-
կի և ի ծառայութեան ազգին Նետողաց։ Վասն որոյ, բարեխօսու-
Թեամբ սուրբ և փառաւորեալ աստուածածնին Մարիամու և աղաչանօք
ամենայն ընտրելոց սրբոց, Քրիստոս աստուած, որ տէրն է փառաց և
տըւող ողորմութեանց, տացէ զիւր առատ ողորմութիւնն ստացողի
սորա Ստեփանոս քահանային, և Նաւռուզ-խաթունին, և ծնօղաց նոցա,
և եղբարցն, և զաւակացն, և ամենայն ազգականաց նոցա, և խորա-
նակից և դասակից արասցէ սրբոց վկայիցն և զուրախարար ձայնն
արձակեսցէ առ նոսա, եԹէ՝ Եկայք բարի և հաւատարիմ ծառայք,
մտէք յուրախութիւն տեառն ձերոյ, ամէն։
Դարձեալ, մեղապարտ և բազմավէր ոգիս Գրիգոր սուտանուն
քահանայ՝ գծագրող սորա… նաև զծնօղքն մեր զխաչիկ և զԱզիզ-Մէլիք,
և զեղբարքն մեր՝ զհոչակաւոր քարտուղարն զԹումայ կրաւնաւոր, որ
ուսոյց մեզ զարուեստ գրչութեանս, և զՆաւասարդ՝ զհանգուցեալսն
702 ա առ Քրիստոս, և ‖ զքոյրն մեր զՀալիմ-խաթուն, և զզաւակսն մեր զԹու-
մայ և զՆաւասարդ, զխումար-խաթուն և զԱզիզ-Մէլիք, և զմայր սոցա՝
զՔրման-խաթուն, որ յայսմ ամի փոխեցաւ ի կենցաղոյս, և զծնօղսն
նորա, և զայլ ամենայն արեան մերձաւորքն մեր՝ զկենդանիսն և
զննջեցեալսն, և զայնոսիկ, որք երախտաւորք եղեն մեզ ի պէտս
մարմնաւոր պիտոյից, և արժանի արասցէ լսել զկենեղուտ բարբառն,
որ ասէ՝ Եկայք աւրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ
ձեզ զարքայութիւնն երկնից ի սկզբանէ աշխարհի, ընդ սուրբս և սի-
րելիս անուան իւրոյ, ամէն։ Եւ ինքն՝ Քրիստոս աստուած, որ տէրն
է փառաց և տըւող ողորմութեանց՝ տացէ զխաղաղութիւն և զողոր-
մութիւն իւր ամենայն աշխարհի, եկեղեցեաց՝ զանշարժ զհաստատու-
Թիւն, հայրապետաց ընդ ամենայն տեղիս՝ ուղղափառ վերադիտողու-
Թիւն, վարդապետաց՝ արիութիւն, կրօնաւորաց՝ վարս առաքինու-
Թեան, քահանայից՝ սրբութիւն, սարկաւագաց՝ պարկեշտութիւն, Թա-
գաւորաց հաւատացելոց՝ յաղԹութիւն, իշխանաց՝ հանդարտութիւն,
տանց՝ շինութիւն, տղայոց՝ պահպանութիւն, աւդոց՝ քաղ[ց]րութիւն,
անձրևաց՝ առատութիւն ըստ պատշաճի, անասնոց՝ անսխալ ծնընդակա-
նութիւն, մեղաւորաց՝ դարձ ապաշխարութեան, համօրէն հաւատացեալ

ննջեցելոց՝ մեղաց թողութիւն, հանգիստ և ողորմութիւն. և յամե-
նայնի գոհացողական փառատրութիւն մատուցանել ամենասուրբ եր-
րորդութեանն և մի աստուածութեանն, այժմ և հանապազ յանսպառ
յաւիտենին յաւիտեանս, ամէն։*

643

ՄԱՇՏՈՑ

Երևան 4846

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Աղթամար

260 բ … Զոր տեսեալ զսորայս մեծութիւն աստուածասէր և հաւատա-
րիմ ծերն Քարիմ, և ստացաւ զսա յարդար և ի քրտնաջան վաստա-
կոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց Վարդանայ և
Զմրութի, և եղբարց իւրոց Յովանիսի և Վարդկայ, և այլ ամենայն
261 ա ազգատոհմից իւրոց՝ կենդանե ‖ աց և հանգուցելոց, և ետ զսա ընծայ
և նուէր յանուանի գեօղն ի Գաւաշ, ի դուռն ամենասուրբ Փրկչին և
սուրբ Կիրակոսին, որով հրճուին սովաւ մանկունք սուրբ եկեղեցոյ և
հրաւիրեն զազգս մարդկան յորդէգրութիւն հաւրն երկնաւորի։
Եւ արդ, մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ ամենա-
սուրբ Փրկչին ծախելով, կամ գրաւելով, կամ այլ ինչ աղագաւ, ոչ ի
մերոց և ոչ յաւտարաց, և եթէ ոք յանդգնի և հեռացուցանէ՝ զանէծքն
զաւձին առցէ և զպատիժն զՎայենին ժառանգեսցէ, մասնակից Յու-
դայի և այլ խաչահանուացն եղիցի, ամէն։
Եւ արդ, ես՝ ամենամեղս և անարժանս ի մէջ կարգաւորաց՝
Գրիգոր անպիտան և մեղուցեալ սոսկանուն քահանայ, ըստ իմում
տկարութեանս յանձն առի և ամենակարող զօրութեամբն Քրիստոսի
կատարեցի մեղսամած մասամբ իմով յաստուածապահ կղզիս Աղթա-
մար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Գեզարդեանս, ի հայրա-
261 բ պե ‖ տութեան տեառն Զաքարիայի, և ի թվականիս Հայոց ՊՂԳ. (1444),
ի դառն և նեղ ժամանակիս, և կամք ի նեղութիւն ի ձեռն անաւրի-
նաց։
Եւ արդ, աղաչեմ զդասս լուսերամիցդ, որք հանդիպիք սմա տե-
սութեամբ, կամ կարդալով, կամ աւրինակելով, յիշեցէք ի սուրբ և

---

* «Ցիշատակարան գծագրողիս» խորագրի տակ, այս հիշատակարանի շարունակությամբ, գրիչը բերել է մի ընդարձակ (ավելի քան 100 տող) չափածո գրվածք, որտեղ պախարակում է ինքն իրեն։ Նա գրում է.

«Ես յաշխարհի մեղօք կացի
Եւ ծուլութեամբ զկեանս անցուցի,
Զմարմնոյ կարիս կատարեցի
Զհոգիս ի միտս ես ոչ ածի...» և այլն։

Այս գրվածքում կենսագրական ու պատմական ոչինչ չկա, ուստի այն հետաքրքրություն կարող է ներկայացնել սոսկ որպես Գրիգոր Աղթամարցի գրչի գեղարվեստական ստեղծագործություն։

յար[ժան]աւոր յաղօթս ձեր զստացող սուրբ գրոցս զՔարիմ, և զծընաւղքն իւր զՎարդաՆ և զՋմրութ, և զե[ղբա]րքն նորա զՑովաՆէս, և զՎարդիկ, և զ[կե]նակիցն իւր զԱր | | |, և զզաւակսն նոցին՝ զԱւետիս և զՀայրապետ, և զքըւերսն իւր զԴովլաթ, զՀոռոփսեմ, զՇՆոՃւոր և զՄարթայ, և զքըւերորդիսն զԿիրակոս և զՄարտիրոս, և զկենակիցն զԱմԵՆաաիկիՆ, և զզաւակն զԽոցադեղ, և զայլ ամենայն արեան մեձաւորսն իւր յիշեցէք և սերտ սրտիւ և լի բերանով զաստուած-ողորմի ասացէք, զի և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Եւ ընդ արժանաւորացն զանարժան գծող զԳրիգոր մաղթեմ յի-
262 ա շել ի սուրբ և յըն ‖ գունակ յաղօթս ձեր, նաև զծնօղս մեր զԽաչիկ և
զԱզիզ-Մէլիք, և զեղբարսն մեր զԹումայ կրաւնաւոր և զՆաւասարդ, և
կենակիցն մեր, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, և զաւակսն մեր, և զամենայն ազգատոհմքն, և զերախտաւորսն, և զայնոսիկ, որք յանձնեցին զինքեան ի մեզ յիշել յաղաւթս, աղաչեմ զամենեսեանդ յիշել և ուղիղ սրտիւ աստուած-ողորմի ասել ստացողին և գծողիս և մերոցն ամենայնի...։

644

ՃԱՇՈՑ

Փիրղ. Նօտ. 134—135, Վարագ

Գրիչ՝ ԴաՆիէլ
Վայր՝ Աղթամար

ա

...Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... ԴաՆիէլ սուտանուն քահանայ տեսի զսէր և զփափագ [Առաքել քահանայի], կատարեցի զսուրբ գիրքս զայս։ Բազում և մեծ աշխատանօք հասուցի զսա յաւարտումն յաստուածաբնակ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչիս և սուրբ Նշանիս և սուրբ Աստուածածնիս, ի Թուականիս Հայոց ՊՂԳ. (1444), ի հայրապետութեան տեառն Զաքարիայի։

բ

Զստացող սուրբ գրոցս զԱռաքել քահանայն և զծնողքն իւր զՍտեփաՆոս քահանայն և զԱրղուՆ-ՄելէքՆ, և զկենակիցն զՆազխաթուՆ, և զորդիքն զԹումայ-ՊէկՆ, զՍաեփաՆՆոսՆ և զՅովհաՆՆէսՆ... յիշեցէք ի Քրիստոս։ Ընդ նոսին և զմեղուցեալ գրիչս զԴաՆիէլ սուտանուն քահանայ, և զծնօղսն իմ զԿարապետ քահանայ և զԴուռՆ-Մելիք, և զեղբայրն իմ զԹումայ կրօնաւոր, և զորդիքն մեր զՍտեփաՆՆոս կրօնաւոր և զՅովհաՆՆէս սարկաւագն, որ աշխատեցաւ ի կոկել և ի կցել Թղթիս։

645

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 8058

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ոստան մայրաքաղաք

259 ա ... Վասն որոյ փափագաւղ եղեալ այսմ մարգարտաշար տառիս աստուածասէր տանուտէրն Ատոմ և իւր կենակիցն Խովլաթ, և ստացան զսա բարի յիշատակ և ետուն զսա ի դուռն սուրբ և գերամաքուր Աստուածածնին և սուրբ Գէորգեա զաւրավարին, զի մանկունք սուրբ եկեղեցեացս [զու]արճացին սովաւ՝ երգելով և եղանակելով...։*

258 բ ... Եւ արդ, ես Կարապետ գծողս, բազում աշխատութեամբ և կամաւք յանձն առի և ըստ կարի իմում յաւարտ հասուցի զսա՝ շնորհաւք և ողորմութեամբ աստուծոյ։

Եւ արդ, գրեցաւ սա ի մայրաքաղաքս Ոստան, ի դուռն Քարի սուրբ Աստուածածնին, որ է ծովահայեաց, ընդ հովան[ե]աւ սորին, և սուրբ Ստեփանոսի նախավկային, և սրբոյն Սարգսի զաւրավարին, որ սակաւ հեռի։

Եւ արդ, գրեցաւ սա ի Թուականիս Հայոց ՊՂԳ. (1444), ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, զոր տէր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ և պահեսցէ զնա ի չարէ, ամէն։

Արդ, և ես Կարապետ գծայ[գր]ող սորին, երես ի գետին դնելով ձեզ, և աղաչեմ [զդաս]ս կրօնաւորացդ, և զամենեսեան առհասա[րակ]՝ զմեծ և զփոքր, զի և զիս յիշման արժանի առնէք** զունայնացեալս ի բարեաց գործոց... տառապեալ ոգի Կարապետ գրիչս, և զմեծ պապն իմ Յովանէս քահանայ, և զծնաւղսն իմ՝ զհայրն իմ զՍտեփանոս, և զմայրն իմ զՓաշայ, և զքոյրն իմ զԱրմանի, և զեղբայրն իմ զՅովանէս քահանայ, որ հանգեաւ ի Քրիստոս, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ՝ զկենդանիս և հանգուցեալսն ի Քրիստոս...։

Գարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զսպասաւոր և զերախտաւորք սուրբ ուխտիս, զիմաստուն և զհանճարեղ և զմեծահամբաւ րաբունին զՅովանէս, զՍտեփանոս հէրպետ, և զԱստուածատուր վարդպետն, և զԱբբահամ սրբասնեալ կրօնաւոր, որ առաջնորդ եղև գրոցս, որ և յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և զՄկրտիչ մահդասին, որ մականուն Կոշկըրենց կոչի, և զՅոհանէս կրօնաւորն, և զայլ ամենայն հաւատացեալ ննջեցեալք, որ ընդ հովանեաւ սուրբ եկեղեղեցեացս

---

* Հաջորդ տողերի աջ եզրերը մաշված են և լրիվ չեն վերծանվում։ Կարդացվում են ստացող Ատոմի մերձավորներից և ազգականներից մի քանիսի անունները՝ մայրն է Շնահւար, քույրերն են Շախար և Գոհար. կարդացվում են՝ նաև Ակոբ, Կարապեն, Մխիթար անունները, բայց նրանց ազգակցական կապը ստացողի հետ չի պարզվում։

** Շարունակությունը, որ այժմ ձեռագրից բացակայում է, մեջ ենք բերում Հ. Աճառյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Բայազետի» աշխատությունից (Վիեննա, 1924, № 39, էջ 40)։

հանգուցեալ են և եդեալ ի սուրբ ուխտս Պըտըլկի վանք կոչեցեալ, թէ ի վարդապետաց են, թէ ի կրօնաւորաց, թէ ի քահանայից, թէ ի սարկաւագաց, թէ ի մենակեցաց, թէ յաշխարհականաց, թէ ի յարանց են, թէ ի կանանց, թէ ի ծերոց են, թէ ի տղայոց, դասակից և պսակակից արասցէ տէր աստուած սրբոց առաքելոց, սուրբ վարդապետաց և սրբոց մարտիրոսաց....

Դարձեալ, յիշման արժանի արարէք զայժմու ըղսպասաւորք և զգործաւորք սուրբ ուխտիս, որ կան ծաղկեալ պէս-պէս առաքինութեամբ, և սուրբ վարիւք աշխատին ի սուրբ եկեղեցեաց դուռս. Նախ և առաջին՝ զանըրիծն հոգով և զանարատն մարմնով ըՅովանէս վարդապետն, և զպատուական և զըՆտրեալ կրօնաւորն զՄարտիրոս, և զՍտեփանոս կրօնաւոր, որ պատճառ եղև սուրբ տաճարիս, և զսրբասնեալ կրօնաւորն զԱստուածատուր, որ յայսմ ամի ընկալաւ զառաջնորդութիւն սուրբ ուխտիս, զոր տէր աստուած հովանի լիցի նմա և յաջողէ զգործս նորա ի բարի, զընտրեալքն և զգովեալքն ի մարդկանէ՝ սրբասնունդ եպիսկոպոսքն զտէր Սիոն, և զտէր Յոհանէս,, և զՅոհանէս և զՊետրոս կրօնաւորքն, զծերացեալն մարմնով և զմանկացեալքն հոգով, և զհեզահոգի կրօնաւորն զՅովանէս փակակալն, և զառաքինի կրօնաւորն զԱռաքել, և զԹադէոս, և զԹումա անրից | | | մահգասի, և զՊարոնկլուս մահդասին | | | սուրբ եկեղեցեացս, և զՂազար | | | զգործաւոր և զերախտաւոր | | |

646

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5784

* Նորոգող և կազմող՝ Յովանէս
վայր՝ Տըփխի՞ս

357 ա ... Ըստ յաճախման աստուածային բանին և զհոգւոյն սրբոյ, սրով լուսաւորէ զհոգիս աստուածասիրաց անձանց և տպաւորէ ի նոսա զլոյս աստուածագիտութեան իւրոյ և մերձաւորս առնէ աստուածային երանութեանն, որ և զհուր սիրոյ իւրոյ արկեալ ի սիրտ աստուածասէր ամենամաքուր և ամենաբարի, հեզ և ընտրեալ կրաւնաւորի և անյաղթ փիլիսոփայի տէր Սարգսի՝ սպասաւորի և առաջնորդի սուրբ և հրաշափառ կաթողիկէի մայրաքաղաքին Տըփխե[ա]ց, որ և ցանկացող եղեալ այսմ աստուածային տառիս և կենսաբեր սուրբ աւետարանիս, և ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց, եւ
357 բ վերըստին || նորոգել ոսկէնկար և բազմերանգ դունովք զտնաւրէնութիւնն և զայլ սքանչելիսն Քրիստոսի աստուծոյ մերոյ, ի զուարճութի և ի պայծառութիւն նորոյ Սիոնի: Զի յետ ստանալոյ բազում տառից և բազում արդեանց, զոր ունէր յեկեղեցի աստուծոյ՝ յաւել և զսա ի գանձս աստուածային, ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց՝ հաւր իւրոյ Սողոմոնի և մաւր իւրոյ Ուլու-Խաթունի, և եղբաւր իւրոյ

Ամիր-Ազըզի, և հաւրեղբաւր իւրոյ Դաւիթ աբեղայի, և մաւրքուերորդւոյ իւրոյ և ձեռնասնունդ աշակերտի Վարդան քահանայի, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեաց և ննջեցելոց։

Արդ, որք աւգտիք ի սմանէ և լուսաւորիք յաստուածային բանիցս՝ յիշեսջիք սրտի մտաւք առաջի Քրիստոսի զնախագրեալ ստացաւղ ղտէր Սարգիս աբեղայ, հանդերձ աստուածասէր զարմիւքն իւրովք, ամէն։

Ընդ նոսին և զձեռնասնունդ աշակերտն իւր՝ զորդի պարոն Թումանին՝ զՂուկաս սարկաւագ, և զհոգևոր եղբարսն իւր զՍտեփաննոս քահանայ, և զՇմաւոն քահանայ, և զԿիրակոս քահանայ, և զԱստուածատուր քահանայ, և զխաչատուր քահանայ...։

Նորոգեցաւ և կազմեցաւ սուրբ աւետարանս ի Թվականիս ՊՂԳ. (1444)։ Ընդ նոսին, որք վերոյ յիշեցան, յիշեսջիք և զիս՝ զՅովանէս մեղապարտ գրիչ, որ զսակաւ յիշատակարանս գրեցի.*

647

ԱՒԵՏԱՐԱՆ

*Երևան 1771***

Գրիչ՝ Աւետիք
վայր՝ ի յամուր դղեակս յԱրղնի

309ա ...Ըստ նմին աւրինակի և այսմ աստուածաւանդ աւետարանիս
տենչացեալ եղև մաքրամիտ, պատուական և հեզահոգի աստուածասէր
այրս այս Մելքիսեթ, և կողակիցն իւր Մէհրինար՝ Թողեալ զբարս մանկութեան և փափաքեալ ըստ բանին, որ ասէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն
և ընդանեակ յԵրուսաղէմ. և ստացան զսուրբ աւետա-
309բ րանս յարդար և ի հալալ արդեանց իւրեանց, յիշատակ և բարեխ-
աւս առ աստուած իւրն, և բարի ծնաւղ[աց] իւրոց՝ Փողոցին և Ջհանին, Նաև Յովանէսին, Արղունին և ամենայն արեան մերձաւորաց
իւրեանց։

Եւ արդ, սկսեալ եղև սուրբ աւետարանս յԱրղնի, ի վերադիտողութեան հայկազեան սեռի երկու կաթողիկոսաց՝ տէր Գրիգորին և տէր Կիրակոսին: Զի յորժամ գրեցաւ սուրբ աւետարանս՝ չորս ամ էր, որ Լուսաւորչի աջն կորեր էր ի Սըսոյ, և էլ համբաւն ի Վաղարշապատ: Վասն որոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպոսք, քահանայք՝ ևւթնհարիւր անձն, և հաստատեցին զաթոռն յէջմիածին, և եդին

* Բուն ձեռագիրն ընդօրինակված է 1293 Թվականին, Սկևռայում։

** № 1771 ձեռագիրը ժողովածու է, ընդօրինակված 1651 Թվականին, Վարդան գրչի կողմից։ 301ա—309բ էջերում գտնվում են 4 տարբեր ձեռագրերի հիշատակարաններ, ի Թիվս որոց և սույն հիշատակարանը՝ «Զայս ալ յայլ գրքէ գտաք և գրեցաք» խորագրի տակ։ Այդ բոլոր հիշատակարաններում էլ տվյալներ կան Լուսավորչի աջի Սսից անհետանալու և էջմիածին տարվելու մասին։

զոմն Կիրակոս անուն՝ այր առաքինի և խստակրօն ճգնաւոր՝ կաթողիկոս, և հաստատեցին զաթոռ սուրբ Լուսաւորչին։

Արդ, աւարտեցաւ սուրբ աւետարանս ի յամուր դղեակս յԱրղնի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Նշխարացս, որ աստ կան հաւաքեալ, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս և յեպիսկոպոսութեան տէր Մկրտիչ արքեպիսկոպոսին, և յերեսփոխանութեան նորին՝ Յոհանէս կրօնաւորին, ի դառն և ի նեղ ժամանակիս, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Աւետիք աբեղայի անարժանի, ի յաշխարհակալութեան Համզայ սուլտանին, ի թվականութեան Հայոց ՊՂԳ. (1444) ամին։

Ո՜վ, սուրբ մանկունք եկեղեցւոյ, որք հանդիպիք սուրբ աւետարանիս կարդալով, կամ աւրինակելով, կամ տեսանելով՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյգրեալսդ ի սմայ զՄելքիսէթ։*

648

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փարիզ 48, Մ.Տ.Մ.

Ծաղկող՝ Գրիգոր
վայր՝ Խարբերդ

[Գծագրեցաւ] ի թվականութեան Հայոց ազգիս ՊՂԳ. (1444) ամին, և ի հայրապետութեան Կիլիկեցոց տեառն Գրիգորի, և ի Վաղարշապատուն տէր Կիրակոսին, և յաշխարհակալութեան սուլթան Համզային, ի քաղաքս Խարբերդայ, ի դղեակս, որ կոչի Սինամուտ, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս, որ այժմ Տղայ սուրբ Նշան կոչի, և սուրբ Վասլիս, և սուրբ Ցակոբիս, և այլ սուրբ Նշանացս, որ աստ հաւաքեալ կան, ի յառաջնորդութիւն և յեպիսկոպոսութիւն տէր Ստեփանոսին, ձեռամբ Մինաս դպրի և մեղսամած Գրիգոր ծաղկողի։ Որ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սուրբ գրոցս՝ զսրբասնեալ քահանայն զՏղապարոն, և զհայրն իւր զպարոն Թաւաքալն, և զմայրն զՍուլտան-Մելիք, և զաւագ եղբայրն զխոջայ Ամիրն՝ զփոխեցեալն ի Քրիստոս, և զկողակիցն իւր զՇահ-Մէլիքն, և զամուսին նորին զՓաշայն, և զաւակ նոցին զՄանուկն, զԽաչայբաղշն, և զկողակիցն իւր զՇահ-Մէլիք, և զաւակաց նոցին Շամսին, և Գուռգադնին։ Այլ և խաւջայ Ալէքսիանոսին, և կենակցին Խանզադային, և զաւակին Սէթին, և քուերն Շահփաշին, և փեսայ Վարդերեսին... զՏղապարոն ...և մեծ պապուն և մեծ մաւրն Մեծ-Խաթունին, և Դովլաթին, և Աղուբ-Մէլիքին, և Ամիրբէկին, և Գրիգորին...։

* Այս նոյն յիշատակարանն ընդօրինակված է նաև № 8143 ձեռագրում (ԺԹ. դար) և Առ. Դավրիժեցու «Պատմութեան» մէջ (1884, էջ 823)։

649

ԱՒԵՏԱՐԱՆ

ԱՑԹ, էջ 72, Թաւրիզ, Բերդաթաղի Ս. Աստուածածին եկեղեցի

Գրիչ՝ Աբրահամ եպիսկոպոս Մսրի
վայր՝ Դավրէզ

342 բ Ո՛վ դասք քահանայից, յորժամ ընթեռնուք զսուրբ աւետ[ար]անըս յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զանարժան զսուտանուն եպիսկոպոս Երուսաղէմա զտէր Աբրահամ Մսրցին, որ հանդիպեցայ ի Դավրեզ, ի թուին Հայոց Մեծաց ՊՂԳ. (1444) յաւգոստոս է. (7)։ Զյիշողքս Քրիստոս յիշէ։

650

ՍԱՂՄՈՍ

«Հանդէս հայերէն ուսումնասիրութեանց», 1929, էջ 137—181*

Ընթերցող՝ Սիմոն Վանեցի

Այս սաղմոս կարդացի ես՝ ընիկ Վանեցի Աբիսողոմի որդի Սիմոնս որ վաթսուն ամեայ էի, թվին Հայոց ՊՂԳ. (1444)։ Ով որ կարդայ՝ գրողին և կարդացողին ողորմի տայ, ամէն։

651

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԳՐՈՑ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Վիեն. 151. Տաշ Ցուց., էջ 455

Գրիչ՝ Խաչատուր

133 ա– …Գրեցաւ գիրքս, որ կոչի վերլուծութիւն Պարապմանց սրբոյն
133 բ Կիւրղի ասացեալ ընդդէմ երկաբնակաց, զոր եւ արարեալ է զվերլուծութիւնս զայս Գրիգորի քաջ հռետորի և տիեզերահռչակ վարդապետի, ի խնդրոյ Գէորգեա քաջ փաղերային եւ մեծ բաբունոյն։ Եւ գրեցաւ սա ձեռամբ իմով՝ անարժան եւ սուտանուն աբեղաի Խաչատրի, ի թվականութեան Հայոց ՊՂԳ. (1444)։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ գաղափարելով՝ յիշեսջիք զյիշմանն արժանին զրաբունեաց պետն՝ զշնորհալին եւ զերախտաւորն իմ եւ զամենայն բարութեանց կամեցողն՝ զվարժապետն իմ զԱւետիք քաջ հռետորն, որ զօրինակն շնորհեաց։ Նաեւ զԹշուաո ոդիս՝ զեղկելի գծողս, եւ զծնօղսն իմ, եւ խընդրեսջիք զողորմութիւն…։

---

* Անձամբ չենք տեսել, քաղել ենք Մ. Տեր-Մովսիսյանի ձեռագիր ցուցակից։

652

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Ղ. Գարտաշեան, «Գահիրէի հայ. առաջնորդարան», Ա, էջ 86—87

Քրիստոս աստուած ողորմեա Կիրակոս *վարդապետին եւ Թող զմեղք նորին՝ զմասս չու.նին և զներելին։ Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի եւ կենսաբեր սուրբ Խաչին եւ Յովհաննու կարապետին եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային եւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ ամենայն սրբոց գնդին ողորմեսցիս* Կոռանոսն. *ամէն։*

Թվ. ՊՂԳ. (1444)։

653

ՄԱՇՏՈՑ

«Դիւան հայոց Պատմութեան», Ժ., էջ 5—12
Փիրզ. Նոտ., էջ 136—139, Ռշտունիք, սուրբ Յակոբայ վանք

Գրիչ՝ Մինասենց Թումայ
վայր՝ Աղթամար

...Զոր տեսեալ զսորայս զհոգեոր փարթամութիւնս սրբասէր կրաւնաւորս Յովաննէս, ի գեղջէն Գաւաշից, ըստ նախնեաց Բրծոնց կոչեցեալ, և նուիրեաց զսա ընծայ սուրբ տաճարիս, որ է շինեալ գումբէթաձև և երկնանման, ի գերահռչակ ուխտս և ի հրեշտակաբնակ կրօնաստանս, որ կոչի սուրբ Յակոբ, զոր շինեալ է յառաջին թագաւորացն Հայոց, ի գլուխ երկրիս Ռշտունեաց, յարևմտից կուսէ, առաջի Կապոտկողան բերդին՝ ի պահպանութիւն աշխարհիս Հայոց...։

Ստացող սուրբ կտակիս ընծայեաց զսա սուրբ Յակոբայ գերահռչակ տաճարիս՝ յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողացն իւրոց Բաղտասարին և Շնոնվորին, և եղբօրն իւրոյ Թումային, որ յաւուրս ձմերայնոյ ի բքաբեր ուսի* անկեալ՝ մեռանի յերկիրն Կեցնայն։

...Եւ արդ, ես ...փծուՆս ի գրչաց ... Մինասենց Թումայ եղկելի հոգիս ... ի սիրոյ և ի հարկեցուցիչ հրամանէ սրբազան անձինն և աստուածաբան վարդապետին Սիմէոնի՝ առաջնորդին և շինողին սուրբ Յակոբայ գերահռչակ ուխտին, որ յորդորեաց զՅովաննէս [կրօնաւորն] ի բարին, յաղթեցայ և ես ... կատարեցի զսա յաստուածախնամ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ գմբեթաձև երկնանման տաճարիս, և սուրբ Փրկչիս, և սուրբ Սարգիս զօրավարիս յաշխարհակալ թագաւորութեան ամիրզայ Ջհանշային, և ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս, որ տիրէ Վանայ և Ոստանայ՝ Ղլիճ-Ասլան պարոնին, որք են ազգաւ Թուրք՝ յոյժ հարկապահանջողք և կեղեքիչք քրիստոնէից, ի հայրապետութեան մերոյ Նահանգիս տեառն Զաքարիայի, և ի թուականութեան հայկազեան տումարիս ՊՂԴ. (1445), ի յամսեան մարեքի Թ. (9), յաւուր շաբաթու գծագրեցաւ և աւարտեցաւ սուրբ տառս այս...։

Եւ այժմ սակաւ ինչ պատմութիւնս արժանիս յիշատակի գծագրեցից յայսմ տառի՝ ես Մինասենց Թումայս՝ եղկելիս ոգի, զի զկնի մեր եկողքն գիտասցեն թէ յորո՞ց ոմանց շինեցաւ և յորո՞ւմ ժամանակի սուրբ ուխտս այս և հանդիսաւոր կրօնաստանս, որ կոչի սուրբ

* «Ուս» Փիրղալեմյանի բացատրությամբ նշանակում է «շեղջ ձեանց»։

Ցակոբ, որ ի վաղուց ժամանակաց ամայի էր լեալ և անբնակ ի մարդկանէ։

Արդ, որպէս լուաք ի պատմութեանց՝ առաջին սկիզբն շինութեան-սորա եղև յառաջին թագաւորացն Հայոց՝ ի Սենեքերիմայ և յորդւոց նորա, ի ժամանակին, յորում գնաց քոյրն Մանանիրհի հեծելոց՝ ջերմեռանդ հաւատով և յորդառուղխ արտասուօք ի Նըսէրին, և եբեր զսուրբ Ցակոբ հայրապետի ճկոյթն մինչ ի տեղիս այս. և աստ հաճեցաւ սուրբ մատն հայրապետին Ցակոբայ բնակիլ, և ազատեցաւ յերկիրս Ըռշտունեաց յանիծիցն սուրբ հայրապետին։ Վասն որոյ աշխարհաժողով արարեալ թագաւորն Հայոց շինէ զփառաւոր եկեղեցիքս՝ զսուրբ Աստուածածինն, և զսուրբ Ցակոբն, և զսուրբ Յովհաննէս, և զսուրբ Մանկունքն, և ժողովեալ բազում կրօնաւորս՝ տանէ զսա վանս միաբանակեցաց բազմաց, մինչ զի ասի աւանդութեամբ, թէ քան զերեք հարիւրն աւելի աբեղայ եղեալ է ի վանքս այս։ Եւ հաստատէ թագաւորական հրամանաւ ի բոլոր ծովուս, ընդ ամենայն իշխանութեամբ իւրով՝ գեօղս և արտօրայս, այգիս և դրախտս և ծառատունկս ոխվ և մուլք վանացս. և մնայ բազում ժամանակ շէն այնպիսի փարթամութեամբ՝ մարդով և մլքով։ Եւ այս առաջի շինութիւնս յառաջ էր քան զհայ թուականն։ Բայց զկնի ժամանակաց աւերեալ տեղիքս՝ լինի անմարդաբնակ, իբր զհողաբլուր մի մեծ, ոչինչ մնացեալ նշան շինութեան, բայց միայն եկեղեցիքն անշարժ մնացին։ Եւ թէ զի՞նչ եղև պատճառ աւերմանն, և քանի՞ ամ մնացաւերակ՝ ոչ գիտեմ հաստատ, բայց կարծեօք թուի թէ քան զերկու հարիւր տարի աւելի աւերակ մնաց։ Իսկ ՊԿԱ. ամի թուականութեան Հայկազեան տոմարիս (1412), ի թագաւորութեան թաղթին Ղարայ-Յուսուֆին և ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս Ամիր-եզդնին և որդւոյն իւրոյ Մելիքին, որ էր յոյժ խնամածու և բարեկամ քրիստոնէից, և ի կաթողիկոսութեան մերոյ վիճակիս տեառն Դաւթի, վարդապետ ոմն երևելի, բարեսէր և աստուածային ձրիւքն բարգաւաճեալ, որոյ անուն Ստեփաննոս ճանաչի, մականուն Փիր, յերկրէս Ըռշտունեաց, ի գեղջէն Բախվանից, աշակերտ գոլով Յոհաննու Որոտնեցւոյ՝ մականուն Կախիկ կոչեցելոյ, սորա՝ վարդապետական քարոզութեամբ շրջագայեալ ի վերայ ամենայն երկրի՝ ընդ կողմամբ աշխարհի Հռոմոց ամս բազումս, երթայ մի անգամ և երկիցս յԵրուսաղէմ, և ապա դառնայ վերստին և գայ յաշխարհս Հայոց, ի բնիկ և ի սեփհական երկիրս իւր՝ մեծաւ ընծայիւք ամենայն եկեղեցեացս, շուրջառ և սկիհ և աւետարան բերելով վանօրէից և գիւղօրէից եկեղեցեացս։ Եւ յորդորեալ զքրիստոնեայս և ինքն գլխաւոր լեալ՝ քան զտասն աւելի եկեղեցիք կրամածք և կամարօք շինել տայ յերկիր Ըռշտունեաց, յամիրապետութեան Մելիքին և հօրն իւրոյ։ Եւ ապա խորհրդակից և գործակից ինքեան առեալ կրօնաւորս աստուածասէրս, որոց անուանք յորջորջեալ կոչին Մկրտիչ և Կիրակոս, Յովանէս և Յոհաննէս, Սիմէօն և Գրիգոր, և եկեալ ի մեծահռչակ և ի թագաւորաշէն ուխտս, որ կոչի սուրբ Յակոբ, որ էր ի բազում ժամանակաց աւե-

բակ լեալ և անմարդաբնակ։ Եւ սկիզբն առնեն շինութեան տեղւոյս, և յաջողութեամբն աստուծոյ ժողովին ի տեղիս և այլ կրօնաւորքս և աշխարհականք՝ գործաւորք վանացս, որոց անուանք գրեալ են ի դպրութիւն կենաց, և շինեն զվանքս ծագէ ի ծագ. նորոգեն կղմնորաշէն և կրամած զսուրբ Յակոբայ գումբէթս, որոյ ճարտարապետ և շինող էին սրբասէր կրօնաւորքն Գրիգորն և Յոհաննէսն և Յովաննէսն, որք մաքրական վարուք զկնի ամաց ինչ անցելոց փոխեցան յաշխարհէս, որոց ողորմի Քրիստոս յօր դատաստանին, ամէն։ Իսկ Սիմէոն սրբասէր՝ աբբանեակ և սպասաւոր լեալ վարդապետին Ստեփաննոսի, և տուեալ զինքն յընթերցումն աստուածաշունչ կտակարանաց՝ եղև աշակերտ գրոց և սպասաւոր բանի։ Եւ մնացեալ վարդապետն Ստեփաննոս ամս ինչ ի նորաշէն սուրբ Յակոբ, յանձն առնէ զաշակերտն իւր և զբնակիչք տեղւոյս շնորհացն աստուծոյ, և ինքն դէմ եդեալ՝ երթայ դարձեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և վախճանի անդ. որ և հանգուցիչն աստուած հանգուցէ զհոգի նորա ընդ աստուածաբան վարդապետացն ի խորանսն լուսեղէն, ամէն։ Իսկ ապա, զկնի գնալոյ նորա, Սիմէոն սպասաւոր բանի առնու գաւազան իշխանութեան վարդապետութեան ի ՊՀԶ. (1427) թուականին, և լինի խնամածու, հոգաբարձու և առաջնորդ սուրբ Յակոբայ հանդիսաւոր կրօնաստանիս, և ծնօղ և դայեակ, խնամիչ և դարմանիչ, սնուցանող և սփոփիչ սուրբ Յակոբայ միաբանիցս, իւր զգորովագութ ծնող զաւակաց իւրոց։

Վասն զի յաւուրս սորա և մեր բազում վրդովմունք եղև աշխարհիս մերոյ. և էառ անիծեալն Սքանդար զաշխարհս մեր և զանառիկ բերդորայքս Քրդստանաց՝ զՎան և զՈստան և զայլսն ամենայն ի ձեռաց ընիկ պարոնանց մերոց, և անցոյց զտունն Շամօանից, և մնաց երկիրս շատ աւերակ։

Ի ՊՀԴ. (1425) թուին էառ զՎան։ Եւ ի ՊՁ. (1431) թուականին էառ Փիր–Բէկն զԱղթամար կղզին, և անպատմելի տրտմութիւն եհաս աշխարհիս և ազգիս Հայոց. և երկիրս աւերակ մնաց երկու տարի։ Եւ յՊՁԴ. (1435) թուականին Շահռուխն ի դուրս եկն, և Սքանդարն փախեաւ, և երկիրս սասանեալ կայր, և զՋհանշէն եդիր պարոն Շահռուխն, և ապա խաղաղացաւ երկիրս։ Եւ յՊՁԸ. (1439) թուին գողացան զլուսաւորչի աջն ի Սիս, և... հուր անկաւ յերկնից ի Մըմրուտ սարն և շատ տարի այրեց զայն սարերն։ Եւ յՊՂ. (1441) թւին յէջմիածին կաթողիկոս նստուցին։ Եւ յայս ամենայն նեղութիւնքս և հալածանքս հեզահոգի և աստուածաբան վարդապետն Սիմէոն զսուրբ Յակոբայ միաբանքս իբր զգորովագութ ծնող պահեաց զսոսա, յայլ և այլ տեղիս շրջելով, ի հոգևորսն խրատելով և զմարմնաւոր զպէտսն լիակատար պատրաստելով։ Սա ստացաւ և բազում մուլք և արտորայք, այգի և ծառատունկք վանիցս, զոր ինքեամբ գնեաց՝ տրօք քրիստոնէից, և զոր յորդորեալ զքրիստոնեայս՝ զքահանայս և զաշխարհականս, ետ գնել նոցա ի հալալ արդեանց իւրեանց մուլք և անդաստան վանիցս, որոց տացէ... Քրիստոս աստուած ընդ միոյն հարիւրապատիկ։

Եւ արդ, այսոքիկ են նոր տուած և արծաթագին մուլք վանացս։ Զինչ որ բնական մուլք է վանացս՝ թէ կաղամախի պրակն, և թէ արտ, և թէ ափն, որքան և է ի յԸնծափու դաշտս՝ յայտնի է ամենեցուն, և երկու արտ ի ՇատուաՆ, և ծառ ի ԳանՁակ, և երկու արտ ի ԴեղՁիսՆ, և հինգ արտ և Սաղաթիէլ երիցանց այգւոյ կէսն ի Մոխրաբերդ, և Օմար ՇամշաՆի բաժին հողն, ԺԳ. (13) արտ, և խոտունցն, և փագախն*, և կւլն, և ՄաՆդուկաՆց Ամիրպէկի այգին՝ ծառոերովն ի Մոխրաբերդն։ Սոքա ամենեքեան ՍիմէոՆ վարդապետին արծաթագին մուլք են վանացս, զոր ստացաւ տրօքն քրիստոնէից և յորդորեաց վարդապետական քարոզութեամբ զայլս ոմանս՝ ըստանալ ընչիւք իւրեանց և նուիրել մուլք և ոխվ սուրբ Յակոբայ վանացս։ Եւ երկու արտ ի Նարեկ, և մէկ ի ԲախվաՆց:

Դարձեալ, աղաչեմ յիշել ի Քրիստոս զևրթահատոր հարազատքս մեր՝ զմբրակրօն աբեղայքս, որք վայելողք են այս տառիս, և սպասաւորք սուրբ տաճարիս՝ զՊօղոսենց ԿիրակոսՆ, և զԳաւաշեցի ՍտեփաՆոսՆ, զԿիրակոս և զՄկրտիչ մահդասիքն, զՍարգիս, և զԿիրակոս, զՀայրապետ, և զերկու ԹումայՆ, և զԱռաքելՆ, և լի բերանով… աստուածողորմի ասել…։

654

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 5521

Գրիչ՝ ՄիՆասեՆց Թումայ

վայր՝ Աղթամար

433 ա …Զսուրբ գիրքս զայս, որ է գանձարան գանձուցն աստուծոյ-
արարի պատճառ փրկութեան հոգւոյս մեղուցելոյ և յաններելի տան-
ջանացն և ի մխիթարութիւն անձին իմոյ ի նարդեան ժամանակիս։
Եւ ստացայ զնիւթս սորա ի հալալ արդեանց իմոց ես՝ անպիտան
ծառայս ծառայից աստուծոյ ՄիՆասեՆց-Թումայս՝ բազմավէր հոգիս,
և իմով իսկ մեղսամած մատամբս գծագրեցի զսա մեծաւ աշխատու-
թեամբ յաստուածախնամ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ հրաշակա-
ւոր և երկնանման գումբէթայարկ սուրբ Խաչի տաճարիս, և Ամե-
նափրկչիս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Սարգիս զաւրավա-
րիս, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, և ի թուականութեան
հայկազեան տոմարիս ՊՂԴ. (1445), Եւ նուիրեցի զսա ընծայ և նուէր
ի նոյն գերահռչակ և յերկնանման տաճարիս՝ ի սուրբ խաչս Աղթա-
433 բ մարայ, որ է գուռն երկնից և ճանապարհ ար || քայութեան, որպէս
զի ուրախասցին սոքաւ հանապազ մանկունք և սպասաւորք սուրբ
Խաչի տաճարիս համեղաբան գանձիւքն և քաղցրեղանակ մեղեդաւքն
և տաղիւքն, որ գըծագրեալ կայ ի սմա ի տաւնս տէրունականս և ի

* «Փագախ» բառը Փիրղալեմյանի ծանոթագրությամբ նշանակում է «բնակարանանասնոց»։

յիշատակս ամենայն սրբոց։ Զորս երգեալ են զսոսա սուրբ և աս-
տուածարան վարդապետքն եկեղեցոյ և ախոյանքն հաւատոյ՝ սուրբն
Գրիգոր Նարեկացին, և տէր Ներսէս Կըղայեցին, տէր Մխիթար Այրի-
վանեցին, և Խաչատուր Կեչառեցին, տէր Մկրտիչ տեսուչ բարին, և
Մաթէոս Գանձասարեցին, և այլք բազումք, որոց անուանքն գրեալ
են յիւրաքանչիւր վերնագիրս և ի ստորնագիրս և ի աընառաջս գան-
ձուցն և տաղիցն, և գրին անուանք նոցա ի դպրութիւնն կենաց,
ամէն։ Իսկ զկնի սոցա եղեալ ոմն վարդապետ Գրիգոր անուն Ղըլա-
թեցի, ըստ նախնեացն Ծերենց կոչեցեալ, յոյժ հանճարեղ և բանի-
բուն և առատամիտ, ոչինչ նըւազ գոլով քան զյառաջ յիշեցեալ վար-
դապետսն, այլ գերազանց գտաւ քան զնոսին։ Սորա առեալ զառաջ-
434 ա նոց երգեալ գանձարանսն և ‖ յամենեցունցն զհամեղաբանսն և
զքաղցրեղանակսն հաւաքեալ՝ սրբագրեաց մեծաւ աշխատութեամբ և
ի յոան եհտն։ Թէ պակաս բան կայր ի վանկսն՝ յաւելցոյց յինքենէ,
և թէ աւելի բան կայր, որ հատակոտոր բերէր զվանկսն՝ քերեալ ի
բաց եհան։ Եւ յաւել յինքենէ բազում գանձս և տաղս համեղաբանս
և քաղցրեղանակս տէրունական տաւնից և ամենայն սրբոց, ի վերայ
անուան իւրոյ գրծագրելով զաընտառաջս գանձիցն, եթող անջընջելի
յիշատակ ինքեան ի սուրբ եկեղեցի, որ և յետոյ մարտիրոսական
մահուամբ ել ի կենցաղոյս՝ սպաննեալ յանաւրինաց։ Որոց տացէ
ամենեցուն՝ աստուածազանից արանցն երգաւղացն ըղբանք գանձա-
րանիս՝ առաջնոցն և վերջնոցս, պսակ լուսեղէն ի յարքայութեանն
երկնից, ամէն։

Որոց լուսազարդ և ուրախարար բանից ցանկացող եղէ ես՝ վեր-
ջինս ի ծնունդս եկեղեցոյ և առաջինս ի կարգս մեղաւորաց Մինա-
սենց Թումայս՝ սոսկանուն աբեղայս. ստացայ զնիւթ սորա ի հալալ
434 բ արդեանց ի ‖ մոց, և իմով իսկ մեղսամած մատամբս գըծագրեցի
զգանձարանս զայս, որ ունի հաւաքեալ ի ծոց իւր Ծ. և ԻԳ. (123)
գանձ՝ մեղեդովք և տաղիւք բազմաւք՝ ի զարդ ճոխութեան և ի
փառս պարծանաց կաթուղիկէ եկեղեցւոյս սուրբ Խաչիս Աղթամարայ,
որպէս զի ուրախասցին սովաւ մանկունք և սպասաւորք սուրբ խա-
չիս և քաղցրեղանակ երգաւքն, որ ի սմա՝ զուարճացեալ բերկրեսցին
ի տաւնս տէրունականս և ի յիշատակս ամենայն սրբոց, և անմոռաց
յիշմամբ յիշատակեսցեն զմեզ ի սուրբ և յերկնաբացիկ յաղաւթս
իւրեանց։ Վասն որոյ յերես անկեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր՝ պա-
տուական հարք իմ և լերդահատոր հարազատք, ծառայք աստուծոյ և
սպասաւորք սուրբ Խաչիս, որք ի նարդեան ժամանակիս դուք վայե-
լողք էք այս տառիս և որք զկնի ելիցն մերոց յաշխարհէս հարդերձեալ
էք վայելել զգանձարանս զայս, և որք պատահիք սմա տեսութեամբ և
435 ա կամ աւրինակ դնելով զսա՝ լի բերանով և բոլորախօս ‖ լեզուաւ և
ուղիղ մտաւք աստուած-ողորմի ասասջիք ինձ՝ մեղուցելոյս Թումայի,
և ծնաւղացն իմոց Սիմէոնի և Արղուն-Մէլէքի, և քուերցն իմոց Ոս-
կի-Տիկնայ և Անղալատի, և որդոց նոցին՝ Հայրապետի սրբակրաւն
աբեղայի՝ լերդահատոր հարազատին իմոյ և Յոհանիսին, Քուրդամիրին

և Աւետիսին, և նոցունց զաւակացն, և այլ ամենայն արեան մերձաւորացն իմոց՝ կենդանեաց և հանգուցելոցն աստուած-ողորմի ասացէք։

Դարձեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր, ով պատուական հարք իմ և եղբարք, յիշեցէք ի Քրիստոս և զերախտաւոր քեռին իմ և զուսուցիչն զԹումայ միայնակեացն՝ զհոգեոր հայրն իմ, որ բազում ջան և աշխատութիւն կրեալ է ի վերայ իմ, և զհաւրեղբայրն իմ զՎարդան, և զՆերսէս սարկաւագն զսիրասնունդ աշակերտն իմ, որ աւգնական եղև ինձ կոկելով զնիւթ սորա....։*

655

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փիրղ. Նօտ., էջ 146, Նշխարք (№ 4515), էջ 158—159, ի գիւղն Խժիշկ

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Վան

... Կատարեցի բազում աշխատանօք ի լաւ և յընտիր օրինակէ, զոր արարեալ է քաջ նահատակին և տիեզերալոյս վարդապետին Գրիգորի [Խլաթեցւոյ], որ էր ուսուցիչ մեր....։ Եւ գրեցաւ սա յերկիրս Վասպուրական, ի քաղաքս, որ կոչի Վան, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, և սրբոյն Սահակայ հայրապետի, և սրբոց առաքելոց Պետրոսի և Պօղոսի, և սրբոյն Վարդանայ զօրավարին, ի հայրապետութեան տէր Գրիգորի և մերոյ եպիսկոպոսի և առաջնորդի սուրբ ուխտիս Վարագայ տէր Յոհաննէսի, ի թուականութեանս Հայոց ՊՂԴ. (1445), ի դառնացեալ ժամանակիս, ի թագաւորութեան Ջհանշայի, որ ի յայսմ ամի գնաց բազում զօրօք յԱխլցխայ և բազում քրիստոնեայս գերի արար, զոր տեսաք աչօք մերովք զլիրդ և աւսաւրօ սոցա։ Արդ, ի յայսմ դառն ժամանակիս ցանկացող եղև այսմ աստուածային և փարթամ գանձուցս երիցս երանեալ սրբազան կրօնաւորն Մկրտիչ, և ետ գրել զսա յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց՝ հօրն Խութլու-Բէկին, և մօրն Խութլուին, և եղբարցն Յովանիսին և Կարապետին՝ հանգուցելոցն ի Քրիստոս։ Եւ արդ, ես անպտուղս ի բարեաց ... սուտանուն էրէց Կարապետ տեսի զսէր Մկրտիչ կրօնաւորին, զոր ունէր առ հոգեորս....։

---

* Ձեռագիրն ամբողջությամբ վերցրած թուղթ է, բացի 417—422 և 432—436 թերթերից, որոնք կրկնագիր մագաղաթ են։

Նախկին գիրը պահպանվել է սկզբից և վերջից գրված մեկական թերթ պահպանակների և 435ր էջի վրա։

Ըստ երևույթին, այդ պատառիկները հնագույն (գրված Ժ. դարից ոչ ուշ) մի ճառընտրի կամ Հարանց վարքի հատվածներ են։ Պահպանվել է նաև մի հիշատակագրություն՝ գրված բոլորձև երկաթագիր խոշոր տառերով.

«ԶՍՏԱՑՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՑՍ
ԶԽԱՉԻԿ ԲԱՐԵՄԻՏ ԿՐԱՒՆԱՒ
ՈՐ ԽԻ ԶՄՆԱՒՂՍՆ ՒԻՐ ՑԻՇԵՍՋ
ԻՔ Ի ՔՍ ՅՍ Ի ՏՐ ՄԵՐ, ԱՄԷՆ»։

656

ԺԱՄԱԳԻՐՔ

Նախավկայի վանք, Ս. Տ. Ա.

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ոստան

186 ա—187 բ ... *Գրեցաւ տետրակս ձեռամբ* Կարապետ *սուտանուն քահանայի, որ անուանս տիրիմ և գործովքս ատար յամենայն գործոց բարութեան, ի մայրաքաղաքս* Ոստան, *ի դուռն Քարի սուրբ Աստուածածնիս, ընդ հովանեաւ սորին և սուրբ* Ստեփանոս *Նախավկային, ի Հայոց թվ. ՊՂԴ. (1445), ի հայրապետութեան տէր* Զաքարիայի, *զոր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ։*

Արդ, աղաչեմ զձեզ, ով դասք լուսերամից՝ մանկունք եկեղեցոյ, որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ աւրինակաւ՝ յիշեցէք յաստուածամերձ յաղաւթս ձեր զպատուական կրօնաւորն զՅակոբ, *որ ստացաւ զսա ի հալալ աշխատանաց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծընօղացն իւրոց՝ հօրն* Ստեփանոսին *և մօրն* Խուբլուին, *և եղբօրն* Լուսաւազին, *որ նահատ[ակ]եցաւ յանաւրինաց վասն անուանըն Քրիստոսի, և միւս եղբաւրն* Աստուածատրին, *և այլ ամենայն մերձաւորացն և հանգուցելոցն ի Քրիստոս...։*

Այլ և զբարի և զընտրեալն ի բազմաց՝ զպատուական փիլիսոփայն զտէր Սիմէոն *զվարդապետն իւր յիշեցէք ի Քրիստոս աստուած, և լի բերանով աստուած-ողորմի ասացէք ամենեցուն, առհասարակ,* Յակոբ *կրօնաւորին և իւր ամենայն ազգականացն, ամէն։ Ընդ նոսին յիշեցէք ի Քրիստոս զմեղաւոր գծողս* զԿարապետ, *և զիմ ծնօղսն, և մի բերան մեզ աստուած-ողորմի ասացէք, և աստուած մեզ և ձեզ ողորմեսցի և մեղաց թողութիւն շնորհեսցէ, ամէն։*

Անմեղադիր լերուք, զի ամէն մեղօք պաշարեալ է միտս ու հոգիս ի բանսարկւէն սատանայի, ոհ, ոհ։

657

ԱՒԵՏԱՐԱՆ,

Ալիշան, «Հայկարան»

Գրիչ
Վայր՝ Բաղէշ

Գրեալ ի Բաղէշ, *ընդ հովանեաւ սուրբ* Կիրակոսի, *ի ղանութեան* Ջհանշահի *ամիրզին և յամիրութեան քաղաքիս մերում շեխ* Մահմուդին, *որ խեղագաբեցաւ, և եկին ամենայն մեծամեծքն՝ եդին ի տեղի նորա զեղբօրորդին՝ զամիր* Շամշադին:

658

ՑԱՅՍՄԱՒՈՒՐՔ

«Թորոս Աղբար», Բ., էջ 306, Կամախ, Թադէոս առաքեալի վանք

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Խլաթ

... *Յիշատակ* Հազարբէկին *և ամուսնոյն իւրոյ* Թուրուանդէին, *և ծնողաց իւրոց* Բուրթէլին *և* Քաֆուրին, Կիրակոսին *և* Խաթուն-Մէլէքին, *և ծնողացն* Ստեփաննոսին *և* Շող-Մէլիքին, *և եղբաւրն* Մխիթարին, *և... գրիչն* Աստուածատուր, *ի* Խլաթ *քաղաքի*, *ընդ հովանեաւ ԺԱ. խորանացս, յամի Պ. և ՂԴ. (1445) Թուականի, յաշխարհակալու-Թեան նետողաց ազգի* Ջընխանշահ *ամիրզին՝ Թուրքմանին, և ի նոր հայրապետութեանս Հայոց՝ տեառն* Կիրակոսի էջմիածնի *կաթողիկոսի...։*

Աստուած-ողորմի Հազարբէկի *դստերն* Գոճարին *և քուրուըտոցն* Նազ-խաթունին *և* Թաճ-խաթունին...։

659

ԱՒԾՏԱՐԱՆ

Փիրղ, Նօա., էջ. 147—148, Մեծոփավանք

Գրիչ՝ Յոհաննէս Մանգասարենց
վայր՝ Արճէշ

... *Ցանկացող եղեալ [սմին] երջանիկ քահանայն և կրօնաւոր* [Յոհաննէս], *որդի բարեպաշտ և աստուածասէր տանուտիրոջ պարոն* Գուրգի-Մելիքին, *երիտասարդ հասակաւ և բարի բնութեամբ, ուստի շարժեալ ի սէր աստուածային գանձուցս, և ջանաց ստանալ զանաոիկ մեծութիւնս և զգանձս անկողոպտելիս ի վայելումն անձին իւրոյ, և յետ աւդեացս ելանելոյ՝ յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց պարոն* Գորգի-Մէլիքին, *և մօր իւրոյ* Սալչուկին, *և եղբարց իւրոց պարոն* Գրիգորին *և* Ստեփաննոսին *և* Մինաս *խալիֆին,... և հօրեղբարց մերոց՝* Թովմայ *րաբունապետին. և ուսուցչին, իմոյ* Ամիր-Մէլիքին, *և որդւոց նորին* Ստեփաննոս *կրօնաւորին, և հանգուցելոցն ի Քրիստոս պարոն պապուն՝* Ստեփաննոսին, *և* Շամշին, Յոհաննէս *քահանային,* Արիստակէս *նահատակին, և ի զուարճութիւն ուրախութեանց մանկանց և որդւոց նոցին* Գրիգոր *քահանային,* Ծերուն *սարկաւագին,... և դեռաբոյս պատանեկաց՝* Յակոբին... Նասրատին... *և ամենայն արեան մերձաւորաց իւրեանց՝ կենդանեաց և հանգուցելոց, յիշատակ բարի և Թողութիւն մեղաց լիցի աստ և ի հանդերձեալն, ամէն։*

Եւ ես՝ յետինս ի քահանայից և յերիցանց՝ սուտանունս ի կարգաւորաց Յոհաննէս, *որ բազում աշխատութեամբ զտկարութիւն աչացս մո-*

ռացայ և զգիրս գրեցի,* որք հանդիպիք սմա օրինակելով... յիշեսջիք ի բարին Քրիստոս զմեզ և զհանգուցեալ ծնողս մեր զՄանկասար: Եւ դարձեալ, կրկին ի յիշումն աստուածաբնակ սուրբ ուխտիս Մեծոփայ սուրբ Աստուածածնի տաճարիս՝ զԹումայ մեծ րաբունապետ, և զՄկրտիչ վարդապետ, և զհանգուցեալքն ի Քրիստոս զՅոհաննէս եպիսկոպոս, զՄատթէոս կրօնաւորն, և զՂազար, զՅակոբ, զՄեսրոպ, զՆիկողայոս՝ աշակերտք սորին, ամէն, և զայլ ամենայն միաբանք սուրբ ուխտիս.**

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառս Քաջբերունեաց, ի յաստուածապահ քաղաքս Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյս, և ծաղկեցաւ ի սուրբ ուխտս Մեծոփայ, [ձեռամբ աստուածապատիւ... և հեզահոգի Մինաս կրօնաւորի]: Ի հայրապետութեան տեառն Կիրակոսի սուրբ կաթողիկէ էջմիածնի Վաղարշապատու Նոր քաղաքիս սկսեալ եղև, և [ի] հայրապետութեան տեառն Գրիգորի աթոռակցի Լուսաւորչին մերոյ օրհնեալ եղև, ի յաշխարհակալութեան Ջհանշայ ղանին Թավրիզու:

Եւ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊՂԴ. (1445) ամին | | |

---

*Իր աչքերի տկարությունից գանգատվող Հովհաննես Մանկասարենցը (կամ Մանկասարի որդին) ԺԵ. դարի ամենանշանավոր, գրագետ ու վարժ գրիչներից է: Վախճանվել է 80 տարեկան հասակում՝ 1505 թվականին, կամ դրանից մի-երկու տարի առաջ:

72 տարի շարունակ, 14 տարեկան պատանի հասակից մինչև իր մահը՝ նա զբաղվել է ձեռագրերի ընդօրինակության տաժանակիր ու չարքաշ աշխատանքով: Իր բազմամյա գործունեության ընթացքում ընդօրինակել է ավելի քան 132 մեծ ու փոքր ձեռագիր:

Այդ արտակարգ բեղմնավոր, տոկուն ու համեստ մշակի կյանքի ու գործունեության մասին ուշագրավ տվյալներ է հաղորդում իր աշակերտներից մեկը՝ Զաքարա գրիչը, 1505 թվականին ավարտելով իր ուսուցչի ծերությամբ ու մահով թերի մնացած ավետարանը և գրելով հիշատակարան ձեռագրի գրչության հանգամանքների մասին:

Լսենք Զաքարային.

«... Արդ, յանդ ելեալ աւարտեցաւ աստուածաբան սուրբ Աւետարանս ի մեծ թուականիս մեր ՋԾԴ. (1505), ի գաւառս Վասպուրական, ի քաղաքս Վան...: Եւ արդ, գրեալ եղև Յոհան գլուխն ձեռամբ վարդապետին իմոյ տէր Յոհաննիսի Մանգասարենց քաջ քարտողին, որ ՀԲ. (72) ամի՝ ամառն և ձմեռն, գիշերն ու ցերեկ ի գրել եկաց: Որ գրեալ եղև ձեռամբ նորա Խ. (40) Այսմաւուրք և Տաւնագիրք, իսկ փոքր գիրք՝ Տեառ և Աղօթամատոյց, Շարակնոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձատետր՝ Ծ. (50)—Կ. (60) և այլ աւելի, և Աւետարանս ԼԲ. (32): Եւ զայս Յոհան գլուխս ի ծերութեան ժամանակիս, որ աչք չէր հայիլ և ձեռքն կու դողայր, բազում չարչարանօք հազիւ կարաց աւարտել, և այլ չկարաց գրել բռնել մինչ ի վախճան, որ հանգեաւ ի Քրիստոս ՁԶ. (86) ամաց: Վասն որոյ աստուած-ողորմի ասացէք, ամէն:

Եւ արդ, ես Զաքարայ աշակերտ նորին գրեցի զՂուկաս գլուխն, և կարապետ աշակերտ մեր գրեաց զՄաթէոս և զՄարկոս գլուխն...» (Երևան № 5250, էջ 291բ—292ա):

Այս նույն ձեռագրում, Հովհաննի ավետարանի վերջում, Հ. Մանկասարենցը թողել է իր ամենավերջին հիշատակագրությունը. «Զմեղաւոր ծեր գրիչս Յով[հաննէս] յիշեցէք առ աստուած և աստուած զձեզ յիշէ» (էջ 290բ):

** Ղ. Փիրղալեմյանը հայտնում է, որ «քսան և հինգ վարդապետաց անվանք եւ կային, բայց մի առ մի գրելն զանց արարի»:

660

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6366

Գրիչ՝ Մարգարէ
վայր՝ Աւաք Վանք

ա

239 բ ...Արդ, գրեցաւ տէրունական հրամանս ի գերունակ և ի հրա-
շափառ անապատս կոչեցեալ Աւաք վանք, ընդ հովանեաւ աստուածա-
մերձ սրբոց՝ սուրբ Աստուածածնի, և սուրբ Կարապետի, և սուրբ
Առաքելոց, ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս ժրաջան, մաքրամիտ,
հիւրընկալ, նայ և Այցելուկ կոչեցեալ Մարտիրոս րաբունապետի, և
մգտեսի տէր Սարգսի Տիւրիկեցի հեզահոգի քաղցրեղանակ դասավարի,
և մտերիմ եղբաւր մերոյ մղտեսի Երեմիայի աբեղայի, և փակակալի
սուրբ ուխտիս Յակոբ աբեղայի՝ սրբասիրի և զեղբայր սիրողի, զի
եղբարք բազումք հաւաքեալ ի սուրբ ուխտս, զի աբեղայ և սարկա-
ւագ և գործաւորք միահամուռ ԼԳ. (33) միաբանք, նաև զՅոհանենէս
մղտեսին Ղրիմեցի և զՎարդան տնտեսն, զի ցաւակցաբար աշխատի։
Ցիշեսջիք և տէր Կիրակոս եպիսկոպոսն, նաև զարի նահատակն զԸռս-
տակէս վարդապետն, որ զգրչութեան դուռն բացեալ մեզ, զոր տէր աս-
տուած հատուցանէ զարիտուր նորին։ Նաև զանարժան հողս՝ զՄար-
գարէ աբեղաս՝ զկրկնամեռիկս, նաև զծնաւղսն իմ զհանգուցեալսն
առ Քրիստոս, այլև զեղբարսն իմ։ Եւ գրիչս յերես անկեալ աղաչեմ
240 ա զամ || ենեսեան, որք հանդիպիք կարդալով կամ աւրինակելով, յի-
շեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձէր զվերոյգրեալսդ, նաև զանպիտան
գրիչս միով տէր-ողորմայիւ, զի ողորմածն աստուած սովոր է այլոց
աղաւթիւք՝ այլում ողորմիլ։ Զի դուք՝ յիշաւղքդ և մեք՝ յիշեալքս,
առհասարակ, ի միասին վայելեսցուք յամէնառատ պարգևողին սե-
ղանն։

Ողորմութեամբ ամենակալին աստուծոյ սկսա և կարողութեամբ
նորին եղև զրաւ։

Դարձեալ աղաչեմ, զի խոշորութեան և սխալանաց ոչ մեղադրել,
զի ժամանակն ձմեռն էր և միտքս շփոթեալ բազում իւիք, և զի կար
մեր այս էր։ Եղև ի թվին ՊՂԴ. (1445), ի փառս Քրիստոսի աստու-
ծոյ մերոյ, որ է աւրհնեալ յարաձգական յաւիտեանս, ամէն։

բ

Կազմող՝ Յովանէս

240 ա Ցիշեսջիք ի Քրիստոս զբարեմիտ և զբարեգործ, քրտնաջան,
աշխատասէր հողագործն, զիմաստուն և գհանճարեղ քրիստոնէն՝ զպա-
րոն Յոհանէսն, որ ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց
իւրոց՝ յիշատակ իւր, և ծնողաց իւրոց՝ հաւրն իւրոյ Յակոբին, որ

241 ա մականուն Ճատիկ կոչի, և մայրն իւրոյ || Շնոֆոր տիկնա, և կենակ-
ցին իւրոյ՝ համեստ և հարկեոր տիկնոջն Տանա-Մելիքին, հայրն իւ-
րոյ Յովանիսին, և մայրն իւրոյ Խաթունին, և եղբայրն իւրոյ Մկրտչին,
և ամենայն արեան մերձաւորաց և զաւակաց սորա, որ տղա հասակաւ
փոխեցան առ Քրիստոս և սուգ անմխիթար թողին ծնաւղաց իւրեանց։

Սայ ստացաւ զսուրբ աւետարանս... և եդ զսա յիշատակ ի գե-
ղաքաղաքս Բագառին, ի դուռն սուրբ Աստուածածնին և սրբոյ Գէոր-
գեա, և մի ոք իշխեսցէ ձեռնամուխ լինելով՝ ծախելով, կամ գրաւե-
241 բ լով, կամ սեփհականելով, || և եթէ ոք յանդգնի և զյիշատակս ջնջէ
կամ անխնամ պահէ՝ նայ ջնջի ի գրոյն կենաց. բայց ի կարդալոյ
կամ յաւրինակելոյ անխնայ եղիցի, և ով որ յաւժարութեամբ զյի-
շատակս կարդա, որ լսեն՝ լսէ և զձայն յերանաւետ փողոյն, ձեզ՝ յի-
շողացտ և մեզ՝ յիշեցելոցս, առհասարակ, ողորմեսցի յիւր միւսան-
գամ գալստեանն, ամէն։

Այլև զկազմող սուրբ աւետարանիս՝ զՅովանէս աբեղա և զհաւրեղ-
բայրն իմ զՄկրտիչ աբեղայ յիշեցէք ի տէր, և աստուած զձեզ յիշէ,
ամէն։

661

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նոտ., էջ 185, ի լեառն Սեպուհ, ի վանս Լուսաւորչի

Գրիչ՝ Յովանէս

վայր՝ Ի լեառս Սեպհոյ

...Արդ, գրեցաւ և ոսկով զարդարեցաւ սուրբ աւետարանս ի
թուաբերութեանս Հայոց ՊՂԴ. (1445), ձեռամբ սուտանուն աբեղայի
Յովաննիսի, ի մէջ երկուցն գաւառաց՝ Եկեղեաց և Դարանաղեաց, առ
դամբարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչիս և սուրբ Փրկչիս, ի լեառս
Սեպհոյ, յառաջնորդութեան սուրբ ուխտիս Բարսղի, և ի վարդապե-
տութեան քաջ րաբունոյն Յովհաննէսի, և գրոց աշակերտաց նորին՝
տէր Աբրահամին, և Մարտիրոսին, և Աստուածատրին, և Աւետիքին, և
զալեօք պատեալ ծերունին զտէր Թորոսն, և Յովհաննէս փակակալն,
զՍարգիս Ապահունեցին, զԳրիգոր Համշէնցին, և զՀայրապետն, և զայլ
միաբան սուրբ ուխտիս՝ զմեծ և զփոքր յիշեսջիք։

662

ՍԱՂՄՈՍ

Երևան 6108

Գրիչ՝ Գրիգոր

վայր՝ յանառիկ դղեակն Արղնոյ

ա

200 բ ...Արդ, գըրեցաւ աստուածաքնար երգարանս գործիք աւրհնութեան
և քնար հոգւոյն աստուծոյ ճշմարտի մեծի Դաւթի թագաւորի և մար-

գարէի, զոր երգեն հոգւով մանկունք ուսումնասէրք ի դրունս սուրբ
եկեղեցւոյ, որով հաշտեցի տէր ընդ աշխարհի, ձեռամբ անիմաստ
և անարհեստ, անարժան և տարտամ ոգւոյ բազմամեղի Գրիգոր գրիչ
սուտանուն կրօնաւորի, ի մեծ և յանառիկ դղեակն Արղնւոյ, առ
դուրս վիմարդեան և շքեղաշուք խորանայարկ և կըմբեթաձեւ բարձր
Աստուածածնի տաճարիս, և ընդ հովանեաւ սուրբ նշխարացս, որ
201 ա ա||ստ կան հաւաքեալ, ի հայրապետութեան տ[ե]առն Վաղարշապա-
տու տէր Կիրակոսի, և ի թագաւորութեանն այլազգեաց մերոյ նա-
հանգիս Ջհանգիր ամիրզային՝ Թոռինն Աւթման Բահադուրին, որ
զսուրբ եկեղեցիս շինեաց ի գլուխս ամուր կլային Արղնոյ, և յա-
ռաջնորդութիւն սուրբ ուխտիս՝ հեզահոգի և սրբասէր եպիսկոպոսին
տէր Յոհանիսի նորընծայ հայրապետի, որ մի ամ է աւրհնութեան
նորա, ի Թըւականիս Հայոց ՊՂԴ. (1445)։

Բ

Ստացող՝ Ստեփանոս

201 բ [Գրեցաւ] հոգիայրուղ աստուածային գանձարանս ձե[ռամ]ը յոք-
նամեղ և անպիտան ծառայի Գրիգորի, ի խնդրոյ Ստեփանոս աբե-
ղայէն. յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց՝ հաւր իւրոյ Մխիթարի, և
մաւր իւրոյ Մինայի, և եղբաւր իւր սարկաւագ Պետրոսի, և մայրա-
[քո՞ւր]ոչ իւր Շնաւհվորի, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց ....։

663

ՑԱՑՍՄԱՒՈՒՐՔ

«Միաբանք և այցելուք Երուսաղէմի», էջ 28

Նուիրատուք՝ Առաքել Վարդապետ
և Արևշահ աղա
վայր՝ Արղնի

ա

Ես Առաքել վարդապետս և պարոն Աբևշահ խօշադամ աղայս՝ տուաք զգիրքս այս ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն սուրբ Յակոբ կաթուղիկէի, յիշատակ մեզ և ծնօղաց մերոց և ամենայն արեան մերձաւորաց, ձեռամբ և վկայութեամբ տէր Աբրահամ եպիսկոպոսի Երուսաղէմի և վկայութեամբ տեր Յովհանէս եպիսկոպոսի Արղնու...։

Բ

Ստացող՝ Աբրահամ եպիսկ. Երուսաղէմի
վայր՝ Դամասկոս

Ես նուաստ ոգիս տէր Աբրահամ Երուսաղիմա եպիսկոպոս, որ հանդիպեցայ ի Արղնին, և երեւ նուէրք սուրբ Յակոբայ Երուսաղէմայ եկեղեցւոյն զգիրքս զայս և շուրջառ այլ պարոն Արևշահ,

յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, ամէն...։

Գրեցաւ ի մեծ թուին Հայոց Մեծաց ՊՂԴ. (1445), մարտ ամսոյ ԻԳ. (23), ի փառս աստուծոյ հաւր, ամէն։ Ցաւուք աւագ շաբթու երեքշաբաթի աւրն, ի Դամասկոս քաղաք։

664

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5647

Հետ. ստացող՝ Ատոմ
վայր՝ Մար քաղաք

1 ա Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զմահդասի Ատոմ կրաւնաւորն յիշեցէք ի Քրիստոս, որ ըստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց Գուռջիբէկին և Խէրիք-Տիկնայ, և եղբարցն Ջանիբէկին և Վարոսին, և ամենայն արեան մերձաւորացն իմ, և ի վայելումն եղբաւրորդուն իմ Կիրակոսին: Ի թըւին Հայոց ՊՂԴ. (1445), ի Մար քաղաքին, ձեռամբ Մեսրոպայ քա՞ ըրաբունապետին։ Արդ, աղաչեմ զդասս սուրբ քահանայիցդ, որք հանդիպիք այսմ սքանչելագործ և մեռեղյարոյց սուրբ աւետարանիս, յիշեցէք ի Քրիստոս և լի բերանով աստուած-ողորմի ասացէք Ատոմ կրօնաւորին, և ծնօղացն Գուռջի-Բէկին և Խէրիք-Տիկնեայ, և եղբարցն Ջանիբէկին և Վարոսին, և ինքն Քրիստոս, որ առատն է ի տուրս ողորմութեան՝ ողորմի ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս, ամէն։

665

ՏՈԻՄԱՐԱՏԵՏՐ

Երևան 8973

Գրիչ՝ Աւգսէնդ
վայր՝ Կաֆայ

58 ա Եւ զստացաւղ սորա յիշեա՝ զերջանիկ րաբունապետն մեր զտէր Սարգիսն, որ է աթոռակալ Կաֆայիս և առաջնորդ վանիցս սրբոյն Անդոնի, որ ստացաւ զսա ի յարդեանց իւրոց և ետ գրել զսա | | |* և ծնողաց իւրոց, ի թվականութեանս Հայոց ՊՂԴ. (1445), ի յարքիեպիսկոպոսութեանն սրբասիրի տէր Մաղաքիայի մայրաքաղաքիս Կաֆայի և ամենայն հիւսիւսական կողմանցս։

Եւ ես՝ անարհեստ գրիչս Աւգսէնդ** անարժան և բազմամեղ աբեղայս գրեցի զտումարատետրս զայս ի յանբարի և ի դառն ժամանակիս, ի մայրաքաղաքս ի Կաֆայս, առ ոտս սրբոյն Անդոնի, յիշատակ երջանիկ րաբունապետին մերոյ տէր Սարգսի, և որ զմեզ յիշէ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։***

---

* Քերված է. ըստ երևույթին եղած պետք է լինի՝ «ի յիշատակ իւր»։

** Աւգսենտը իր ժամանակի ամենաշնորհալի ու ճարտար գրիչներից է, որը հատկապես հմուտ է տոմարական աղյուսակներ կազմելու և շատ մանր տառերով գրելու մեջ։

*** Տեղեկություն ունենք նաև այն մասին, որ Արմաշի վանքի ձեռագրերից № 207-ը եղել է 1445 թվականին ընդօրինակված մի Մաշտոց։ Գրիչն է եղել Ստեփանոս երէց, գրչության վայրը՝ Գռւսա, ստացողը՝ Մելքիսեթ եպիսկոպոս։

666

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 4866

Գրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Բաղէշ

ա

Փառք... որ ետ կարողութիւն տկար և մեղուցեալ անձին Ստեփանոսի հասանել յաւարտ գրոցս, որ կոչի Յայսմաւուրք...։

543 ր *Տեսեալ զանառիկ մեծութիւնս և զմեծագին մարգարիտս՝ զգանձս փարթամ և զերանաւէտ յիշատակս ոՌ ի կրօնաւորաց Մկրտիչ անուն և եղբայրն իւր Յովանէս, և ետուն գրել զսա բարի յիշատակ հոգւոց իւրեանց և ծնօղացն և ամենայն ազգականացն։*

Եւ արդ, ես... անարժան Ստեփանոս յանձն առի գրել զսուրբ գիրքս ի դառն ժամանակիս, զոր կանք ի վշտի ի ձեռն անաւրինաց և սատանայի։

Եւ գրեցաւ սա ընդ հովանեաւ սուրբ Սարգսի և սուրբ Գէորգեայ և սուրբ Ստեփանոսի, ի քաղաքս Բաղէշ, ի հայրապետութեան տեառն Կիրակոսի, և յամիրութիւն Շեխ-Մահմատին, որ յաթոռոյն աքսորեցին՝ զեղբօրորդին ի տեղն [եդ]ին՝ զփոքր ամիրէն զՇմըզդ[ին], և ի ղանութիւն Ջըհանշա ամիրզին։

Եւ յայսմ ամի եղև թանկութիւն մեծ, որ մին բեռն ցորեան եղև ի Կ. (60) թանկայ։ Եւ արարիչն աստուած նախախնամեաց զիւր հաւատացեալ քրիստոնեայքս։

Ի թվականիս Հայոց ՊՂԵ. (1446) գրեցաւ։

Արդ, աղաչեմք զհանդիպողսդ զամենեսեան՝ զքահանայքդ և զժողովուրդսդ, որք կարդայք կամ աւրինակէք, յիշեսջիք առաջի Քրիստոսի զստացող սուրբ գրոցս՝ զՄկրտիչ կրօնաւորն, և զեղբայրն իւր զՅովանէս, զհայրն իւր զՔուքն, և զմայրն զէլխաթունն, և զմիւս այլ եղբայր զՊարոնն, և զԿարապետն, և զմիւս այլ եղբայր զՎարդ-Մանուկն՝ զփոխեալն առ աստուած, և զքոյրն զԽամօշ-խաթունն, և զեղբօրորդիքըն՝ զԴանարէկն, զԹումաբէկն և զՍիրունբէկն, և զքոյր նոցին զՀայ-խաթունն, և զմայր նոցին Արման-խաթուն, և զԿարապետ պղնձագործն, և զկողակիցն իւր զԽոնձէն, որ աշխատեցան ի վերայ մեր, և զմեր հարսն զԹուրւանդէն, և զհաւրեղբայրն մեր զԹումայ մահդասին, և զմիւս հաւրեղբայրն զՊետրոս քահանայն, զհօրեղբօր որդիքն՝ զԽաչա-

տուր կրօնաւորն և զԿարապետն, և զամենայն արեանառու մերձօրսն։ Եւ լի բերանով և արտասուալի հառաչմամբ հայցեցէք ի մարդասիրէն զՔրիստոսէ զքաւութիւն մեղաց և զթողութիւն յանցանաց վերադրելոցս ի սմա։

544 ա ... Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զամենեսեան՝ զքահանայսդ և զժողովուրդսդ, յիշեսջիք առաջի Քրիստոսի զանարժան և զմեղաւոր ծառայս զՍտեփանոս գրիչ, և ուղիղ սրտիւ և լիակատար բերանով աստուած-ողորմի ասացէք ինձ, և ծնօղաց իմոց՝ Հէրապետ քահանային և Նաս-խաթունին, և եղբօրն Սարգիս քահանային, և որդւոց նորին, և ամենայն ազգականաց, և վարդապետաց իմոց, և բարի խրատտուողաց, և երախ[տ]աւորացն մեր, և ամենայն արեան մերձաւորացըն՝ կենդանեաց և հանգուցելոց, ամէն։

Բ

Ստացող՝ Մկրտիչ Քուքենց

544 ա Եւ արդ, ես՝ ունայնս և թափուրս ամենայն հոգևոր բարեմասնութեանց և հիւծեալս և մաշեալս վերջին աղքատութեամբ, մեղանչական և յանցաւոր ծառայս աստուծոյ Մկրտիչ անուամբ եւթ արեղայ, տեղեաւ Աղթամարցի. ըստ նախնեացն Քուքենց կոչեցեալ... կամաւք և խորհրդածութեամբ երից եղբարց իմոց՝ Շնօհվոր պարոնին և Կարապետին և Յովանիսէն, և ետու գրծագրել զսուրբ գիրքս զայս, որ է պատմութիւն վարուց և սքանչելեաց և նահատակութեան ամե-
544 բ նայն սրբոց... զոր սուրբ հարքն հոգևոր Գրիգորիս Վկայասէրն, և Ներսէս Շատաշնորհն, և նմանք նոցին հոգիընկալ և աստուածաբան վարդապետքն եկեղեցոյ, յամենայն ազգաց պատմութեանց հաւաքեալ՝ ի մի տուփ գումարեցին և անուանեցին Յայսմաւուրք։ Իսկ ի մերումս ժամանակի, որ էր թվական Հայկազեան տոմարիս ՊԾ. (1401), երանաշնորհ վարդապետ Գրիգոր Խլաթեցին, ըստ նախնեացն Ծերենց կոչեցեալ, ոչինչ նուազ գտեալ քան զառաջին հոգիընկալ վարդապետսըն, այլ առաւելեալ քան զնոսին, սա յաւել ի վերայ առաջնոց դրելոցն յոլով բանս շահաւետս և աւգտակարս յամենայն պատմագրաց և վկայաբանութիւնս յինքենէ նորոց վկայից սրբոց, որք եղեն ի մերումս ժամանակի, և հարստացոյց ըզ[գի՜ր]քս, յետոյ և ինքն սրով կատարեցաւ ի ձեռաց անաւրինաց՝ անիծեալ ազգին Ըռօշկանից, ի վանքն Ցիպնայ՝ ի Պ. և ՀԴ. (1425) թվականին, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։

Արդ, ես՝ վերջինս ի ծնունդս եկեղեցոյ Մկրտիչ անուամբ միայն կրաւնաւորս, տեսի զհոգևոր փարթամութիւն սուրբ գրոցս և ցանգացայ սմա, և ետու գրծագրել զսա ի հալալ արդեանց իմոց և տըւի զսա ընծայ և նըւէր ի գերահռչակ ուխտս, որ է յանուն սուրբ Վարդան զօրավարին, [որ է յերկիրն Ըռըշտունեաց, հանդէպ գեղին Գաւաշից], ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, յիշատակ բարի հոգոյ իմոյ և ծնօղաց իմոց և եղբարցն։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ կարդալով և կամ աւրինակ

24—38

դլնելով, լի բերանով և ուղիղ մտաւք և բոլորախաւսք լեզուաւ աստուած ողորմի ասացէք ինձ՝ մեղաւոր աբեղայիս Մկրտչի, և աստուածասէր ծնաւղացն իմոց Քուչին և Էլխաթունին, և եղբարցն իմոց Շնոհ-վոր պարոնին, և Կարապետին, և Յովանիսէն, և տարաժամ մահուամբ վախճանեալ եղբարցն իմոց՝ Վարդ-Մանուկին, և [Ստե]փաննոս և Յովաննէս սարկաւագացն։*

667

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 8771

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Բաղէշ մայրաքաղաք

301 ա . . . Յանկացող եղև սուրբ աւետարանիս ստանալ և պատուական կրաւնաւոր աբեղայս Մկրտիչ, և ետ գրել զսա յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորացն։

Արդ, աւարտեցաւ սա ձեռամբ անիմաստ և անմար յարուեստ գրչութեան Մկրտիչ քահանայի և գրչի, ի թուականութեան Հայոց ի ՊՂԵ. (1446), ի մայրաքաղաքս ի Բաղէշ, ընդ հովանեաւ Հինգ խորանիս, ի հայրապետութեան տեառն տէր Կարապետին:

301 բ Արդ, յերես անկեալ աղաչեմ զսրբասնեալ դասս քահանայից, որք հանդիպիք այսմ աստուածաբան աւետարանիս կարդալով կամ աւրինակելով՝ մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողաց սորա, և ինձ՝ մեղապարտ գրչիս Մկրտչի, և իմ ծնողացն Խաչատուր քահանայի և Եղիսաբեթի, և խոշորութեան և սղալանաց անմեղադիր լերուք, զի կար մեր այս չափ էր . . .։

Բ

Ստացող՝ Մկրտիչ

301 բ Ես՝ Մկրտիչ քահանայս ետու զաւետարանս սուրբ քառասնից Գաւառու վանիցն, ձեռամբ և վկայութեամբ քահանայից և սանուտերաց Դաւիթ եպիսկոպոսի, և Դաւիթ և Մկրտիչ և Յոհանէս կրօնաւորացն, և Ծերուն քահանայի, և տանուտերաց ձեռօք։

Որ հակառակի, կամ ի դրանէս հանէ, կամ ծախէ՝ զմասն զՅուդային առնու, ամէն։**

---

* Ձեռագրի հաջորդ՝ 545 և 546 թերթերի վրա կան հիշատակագրություններ (ըստ երևույթին ԺԷ. դարի), որոնցից արժանի է հիշատակության հետևյալը՝ «Աստուած-ողորմի ասացէք ըռէս Նաւռուզին և եղբօրն՝ ըռէս Յովանիս[ին], որ վերակացու է Գաւաշ գիւղաքաղաքին . . .» (էջ 546 ա)։

** Ձեռագրի 302 բ էջի ԺԷ. դարի գրչությամբ հիշատակագրության մեջ հիշվում են մի շարք խոջաներ, որոնք «Վանայ քաղաքի քահանայից սաւրիզագիմ զամենայն հարճն վերացուցին»։

668

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 108, այուն. 396—398, Փիրղ. Նոտ., էջ 152—153, Ուշտունեաց Բեյու գիւղ

Գրիչ՝ Թումայ Մինասեանց
վայր՝ Աղթամար

...Իսկ ես՝ ունայնս...և անարժան ծառայս ծառայից աստուծոյ Մինասեանց Թումայս *անուամբ և եթ արեղայս՝ լուսյ զփափագ և զսէր և եռու. գծագրել զաստուածախօս սուրբ աւետարանս քու երորդոյ իմոյ՝* Հայրապետի *սրբակրօն աբեղայի, յաստուածախնամ կղզիս* Աղթամար *կոչեցեալ, ընդ հովանեաւ երկնանման և գումբէթաձև սուրբ Խաչի տաճարիս, և Ամենափրկչիս, և սուրբ Սարգիս զօրավարիս, ի հայրապետութեան տեառն* Զաքարիայի, *և թուականութեան հայկազեան տումարիս ՊՂԵ. (1446)։ Եւ ընծայեաց զսա Նուէր և ընծայ աստուածաբնակ սուրբ տաճարիս, որ է շինեալ յանուն սրբոյն Յակոբայ հայրապետին, սուրբ Աստուածածնին, և սուրբ Յոհաննէս աւետարանչին, առաջի* Կապուտկողան *բերդին, և է հռչակաւոր վանք և հրեշտակաբնակ կրօնաստան։*

Յայսմ ամի էառ ամիրզա Ջրհանշէն զԲաղդատ, *որ է* Բաբելոն, *և էր թիւն ՊՂԵ. (1446)։*

669

ՃԱՇՈՑ

Փիրղ. Նոտ., էջ 154, Բեյու գիւղ

Գրիչ՝ Յովսէփ

...Արդ, գրեցաւ սա ի թուին ՊՂԵ. (1446), ի դառնաբեր ժամանակիս...։ Եւ հրաման արարեալ [ղանն Ջհանշահ] *ժողովեաց զամենայն թորգոմացիս յարևելից, և բազում զօրօք գնաց ի վերայ* Բաղդատայ, *և կռիւ եղեալ, և ոչինչ կարաց առնել, բայց ի զօրականացն կոտորեցաւ ԲՌ. (2000) այր ու ԳՃ. (300) պարոն։ Եւ գիտութիւն եղև մեզ, զի յաստուծոյ էր...զոր ասաց տէրն, թէ որ առնու սուր՝ սրով անկանի։*

Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղուցեալ գրիչս Յովսէփ *սարկաւագ...։*

670

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նոտ., էջ 154—155, Բեյու գիւղ

Գրիչ՝ Մարգարէ
վայր՝ Ըռըշտունեաց եկրիր, Բերդաձոր վանք

...Արդ ես՝ Մարգարէս... *շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի ի յարքունական երկիրս* Ըռշտունեաց, *ի*

վանքն, որ Բերդաձոր կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի թուականիս Հայոց ՊՂԵ. (1446).

Եւ արդ ես՝ ունայնս ի բարեաց... Առաքել անուամբ և եթ աբեղայ՝ ցանկացող եղէ այս աստուածախօս տառիս ... և ընծայեցի զսա նուէր ի յանուանի և ի գերահռչակ ուխտս սուրբ Յակոբ, որ է յերկիրս Ռըշտունեաց, առաջի Կապուտկողան բերդին... յառաջնորդութեան սուրբ ուխտիս Սիմէոն վարդապետին, որոյ տացէ Քրիստոս պարգև բարի ըստ վաստակոց իւրոց, զի մեծ երախտաւոր է մեզ և տեղւոյս...։

671

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փիրգ. Նօտ., էջ 153—154, հատուց կզգի

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Վան

*... Աւարտեցաւ սուրբ գիրքս այս յամի ՊՂԵ. ի թուականութեանս Հայոց (1446), ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Վարդան երիցու, ի խնդրոյ Վարդան կրօնաւորի... և գրեցաւ սուրբ գիրքս ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պօղոսի, և տիրամօր սուրբ Աստուածածնին, և սուրբ Վարդան քաջ զօրավարին, և սուրբ հայրապետին Իսահակայ. ի կաթուղիկոսութեան տեառն Կիրակոսի և տէր Զաքարիայի, և մերոյս առաջնորդի սուրբ ուխտիս Վարագայ՝ Յոհաննէս եպիսկոպոսի և Զաքարիա վարդապետի. ի թագաւորութեան Ջհանշայի, որ ի յայսմ ամի էառ զանառիկ քաղաքն զԲաղդատն: Եւ յայսմ ամի եղև վախճան տիեզերալոյս և մեծ բաբունապե[տին | | |**

** Ցավոք, հիշատակարանի շարունակությունը, ուր, անշուշտ, եղել է նաև մահացած «մեծ բաբունապե[տի]» անունը՝ կորած է։ Այդ կորուսը, սակայն, անփոխարինելի չէ. կան հիմնավոր տվյալներ այն մասին, որ վախճանված այդ բաբունապետը եղել է Թովմա Մեծոփեցին։ Այդ մասին որոշակի տվյալ է հաղորդում Կիրակոս բանասերը իր «Պատմութիւն մեծի բաբունապետին Թումայի» աշխատության մեջ. (տես Գ. Յովսեփյանի «Թովմա Մեծոփեցու կյանքը» աշխատությունը, էջ 1, 6, 11, ինչպես և նրա ուսումնասիրությունը՝ էջ ԻԵ.) Ըստ նրա Թովման մահացել է 1446 թվականի մայիսի 15-ին, Մասեաց ստորոտի Արկուռի գյուղում։*

Գավիթ Բաղիշեցին ևս իր «Տարեգրութեան» մեջ այդ առթիվ գրում է. «Եւ եկեալ վարդապետն Թումայ միւսանգամ ի Մեծոփ, և սրբագրեաց զՍաղմոսն և զԱղօթամատոյց, և Կ. (60) ամ կացեալ անդ, և թուին ՊՂԵ. (1446) վախճանեցաւ» (տես Ղ. Փիրղալեմյանի «Նօտարք Հայոց», էջ 148)։

Ելնելով վերոհիշյալից առաջարկում ենք հիշատակարանի վերջին պարբերությունը լրացնել այսպես.

«Եւ յայսմ (1446)ամի եղև վախճան տիեզերալոյս և մեծ բաբունապե[տին Թովմայի Մեծոփեցւոյ]»։

Ըստ այդմ էլ հաջորդ անթվական հիշատակարանները, որոնցից առաջին երկուսը (№№ 672—673) գրել է ինքը՝ Թովմա Մեծոփեցին, իսկ մյուս չորսի մեջ (№№ 674—677) հիշատակվում է նա որպես կենդանի անձնավորություն՝ տեղադրեցինք 1446-ի թվաշարքում, նկատի ունենալով, որ այդ տարեթվից հետո նրանք չէին կարող գրված լինել։

672

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ

*Երևան 7117**

Ծաղկող՝ Թովմա Մեծոփեցի

ա

345 բ *Արդ, յերես անկեալ աղաչեմ զքրիստոսակիր եղբարքդ և զբաղձալի ուսումնասէր մանկունքդ եկեղեցոյ, որք հանդիպիք նորընծայ աստուածային պարգեաց գրոյս, յիշեսջիք ի բարին Քրիստոս զճգնաւորն զ*Կիրակոսն՝ *կենդանաթաղ գերեզմանին Գրիգորի Լուսաւորչին* Վիրապայ, *որ երեր զգիրս զայս ի* Հայս *ի* Կաֆա *քաղաքէն։ Եւ ես՝ մեղապարտս ի մանկունս եկեղեցոյ սուտանուն վարդապետս* Թովմա՝ *առաջնորդ սուրբ ուխտիս* Մեծոփայ, *վերստին սրբագրեցի զսա։*

Եւ ետու գրել զսա հոգևոր որդոյ իմոյ Յովանէս *սարկաւագի* Արճիշեցոյ: *Որք աւգտիք ի սմանէ սակս մասին ինչ պատահելով՝ ուղիղ սրտիւ աստուած-ողորմի ասացէք մեզ և ծնաւղաց մերոց, և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։*

Բայց դուք ընկալարուք զսա իբրև զտախտակն Մովսիսի և զաւետարանն Քրիստոսի. և մի ոք պախարակեսցէ զսա, զի ի վաղուց ժամանակաց նախատանս կրէաք յազգաց քրիստոնէից և այսօր ետ զսա աստուծոյ ի ձեռս մեր. և որ ոչ ընդունի զսա՝ պատասխանի ինքն տացէ Քրիստոսի աստուծոյ մերոյ։

բ

Գրիչ՝ Յովանէս Արճիշեցի

ա *Զանպիտան և զսուտանուն գրիչ* զՅովանէս`*յիշեցէք ի Քրիստոս, և զծնողսն իմ ըստ մարմնոյ* զՄկրտիչ *քահանայ, որ ստացաւ զսայ ի վայելումն անձին իւրոյ։ Զոր տէր աստուածն մեր տացէ վայելել նմա զսայ ընդ երկայն աւուրբք, և զմայրն իմ յիշեցէք ի Քրիստոս, որ անչափ աշխատեցան վասն իմ։*

673

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Երևան 5212, ՀԱ.1927, էջ 38—39

Ծաղկող՝ Թովմա Մեծոփեցի

...Արդ, ես՝ մեղապարտս ի մանկունս եկեղեցւոյ՝ նուաստ վարդապետս Թովմայ՝ *ի յերկրէ* Քաջբերունեաց, *ի յուխտէ սուրբ Աս-*

* *№ 7117 ձեռագրում է գտնվում աղվանից այբուբենը, որ 1937 թվականին հայտնաբերեց անվանի հայագետ պրոֆ. Իլիա Աբուլաձեն և հմուտ ուսումնասիրությամբ հրատարակեց պրոֆ. Ա. Շանիձեն (տես А. Шанидзе,* Новооткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки. *և И. Абуладзе,* к открытию алфавита кавказских албанцев, Тбилиси, 1938)։

տուածածնին, որ այժմ Մեծոփայ վանք վերաձայնի, սրբագրեցի զԱղօթամատոյցս յընտիր յընտիր աւրինակաց յաստուածաբան վարդապետացն և հոգիընկալ մերոյ ազգիս թարգմանչացն, հրամանաւ սուրբ և երջանիկ վարժապետացն մերոց և համշիրակ հարազատ հոգևոր եղբարց։ Եւ բաժանեցի յիններորդ աստիճան զաղօթս հասարակաց՝ դիւրահաս և դիւրագիւտ ամենայն իմաստուն մտաց, և թողաք բարի յիշատակ զինուորեալ եկեղեցւոյս մեր Հայաստանեայց, ի փառս անմահ թագաւորին Քրիստոսի և ի լուսաւորութիւն պայծառութեան հոգևոր որդոցդ աստուծոյ՝ գրոց աշակերտեալ անձանց և քահանայական դասուց միանձանց, ամէն։

Արդ, յերեսս անկեալ պաղատիմ աղաչանաւք և արտասուալից դիմօք, կողկողագին պաղատանաւք քրիստոսակիր մանկանց Սիոնի, որք գաղափարէք կամ ուսանել կամիք, և կամ սակս մասին սմայ պատահիք, յաւժարութեամբ, առանց երկբայութեան և տարակուսի, ընդօրինակէք և մեզ ի սուրբ յաղաւթս ձեր յիշիցէք, և բազմամեղ և թարախալից հոգւոյ և մարմնոյ իմոյ ի տեառնէ աստուծոյ թողութիւն մեղաց խնդրեցէք։

Արդ, ես յետինս ի կարգաւորաց և անզեղջս ի մարդկան ազանց գրեցի զսա ձեռամբ իմով՝ ես Թումայ վարդապետս, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողացն և ազգականացն, ամէն։ Բայց աղաչեմ զիմաստուն գաղափարողսդ զնկարագիր բանիցն մի այլափոխէք, զի բաւական է, որ ինչ փոխեալ եղև ի բազում աւրինակաց։*

674

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Երևան 744

Գրիչ՝ Մկրտիչ

255բ ...Արդ, ես ունայնս ի բարեաց և լցեալս ի չարեաց սուտա‖նուն վարդապետս ցանկացեալ եղէ աստուածային գանձիս և անգին մարգարտիս։ Եւ մեծաւ տենչմամբ և եռափափակ սիրով խնդրեցի ի վեհագոյն պետէն իմմէ և ի բաբունապետէն Թումայի, որ փայլէ ի

* Թ. Մեծոփեցու նույն այս հիշատակարանի համառոտ մի փոփոխակը գտնվում է Երևանի № 6057 («Գիրք աղօթից») ձեռագրի 217բ—218ա էջերում։ Ստորև բերում ենք այն ամբողջությամբ.

«Արդ, ես՝ մեղապարտս ի ծնունդս եկեղեցւոյ Թովմայ անուն պիտակ վարդապետ, ի Քաջբերունեաց գաւառէ, ի սուրբ ուխտէն Մեծոփայ, ի կարգէ աշակերտաց մեծ վարժապետացն Սարգսի, և Վարդանայ, և Գրիգորի Տաթևացոյ, սրբագրեցի զգիրս հասարակաց աղօթից, և յիններորդ մասն բաժանեցի, և ետու ի ձեռս մանկանց եկեղեցւոյ։ Վասն որոյ յերեսս անկեալ պաղատիմ քրիստոսակիր եղբարցդ և ճշմարիտ ուղղագիր գրչացդ, որք ընդաւրինակէք և կամ ուսանիջիք՝ զնկարագիր բանիս այլ մի այլայլէք, աղաչեմ, և զսակաւ յիշատակարանս գրեսջիք, զի յամենեցունց ճանաչեալ լինի այս աւրինակ, զի և դուք գրեսջիք ի գիրն կենաց։ Եւ զմեզ անմոռաց յիշեսջիք յաղաւթս ձեր՝ հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնողօք և հարազատօք, և թողութիւն մեղաց շնորհեցէք, զի և ինքն Յիսուս Քրիստոս ձեզ շնորհեսցէ զանճառ արքայութիւն, ամէն»։

յաւուրս մեր իբրև արեգակն ի մէջաւրէի յազգս Հայոց և յերկիրս Քաջբերունի, ի հրաշափառ սուրբ ուխտս Մեծոփայ: Որ և սա նորոգեաց զաղօթնիս, որ էր ծեքեալ և եղծեալ ի սղալագիր գրչաց և անմիտ արանց՝ Զոր հոգ յանձին տարեալ, ըստ իւրում* իմաստութեամբ և աւեալ շնորհացն, և յաւժընդակութեամբ հոգւոյն սրբոյ կատարեաց՝ զսղալն ուղղելով, և զաւելորդն բառնալով, և զպակասն լնլով, և եթող զանձ անկողոպտելի և յիշատակ բարի ի սուրբ եկեղեցի, յորոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։

256 ա Զոր և ես ան ‖ պիտանս, բազում անգամ աղաչեցի, զի մատամբ իւրով գրեսցէ, և վասն բնածին բարուցն իւր, զոր պարգևեալ էր հոգին աստուած, ձեռն ի գործ արկեալ և վասն անկյարմար նիւթոյն ոչ յաջողեցաւ, ետ գրել ձեռնասուն աշակերտին իւրոյ հոմանուն Թումայի.**

675

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

«Արձագանք», 1888, № 8, էջ 75

Գրիչ՝ Գորգ

ա

Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ գրոյս կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք յերկնաթռիչ յաղաւթս ձեր զիս՝ զփարթամացեալս մեղաւք և զծնողսն իմ, և սխալանաց և ամենայն պակասութեան անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր, և գահոյքն թափուր էին ի թագաւորէ...։

գ

...Գրեցաւ աստուածային գանձարանս, որ կոչի Հարցմունք Գրիգորի վեհիմաստ հռետորի քաջ իմաստասիրի և վարդապետի Հայոց, մանաւանդ ախոյանի ուղղադաւանիցն և ընդդիմի հարկանող չարափառացն դասուց, առ դուրս սուրբ Աստուածածնիս և Նախավկայիս Քրիստոսի սուրբ Ստեփան[ոս]ի, ձեռամբ բազմամեղ անձին Գորգի, ի վայելումն մանկանց Սիոնի...։ Յիշեցէք ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր ստացող սորա [զԹարդողիմէոս աբեղայ, և զքեռին սորայ զԱստուածատուր հէրպետն սուրբ Առաքելոյս, և զծնաւղք սորա՝ զԹուրքէլ, և զմայրն Սըքլայճալ, և զեղբայրն զԹարուճակ, և զքոյրն զԱսանխութլուն, և զիւր որդիքն զԿարապետն և զՀայրապետ սարկաւագն...]։***

Այլ արդ, անարդս ի սեռս մարդկային ազգի՝ անպիտանս և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ ոչ թէ վասն գրչութեան արհեստից

* Բնագրում՝ «որում» փխ. «իւրում»։

** Սույն հիշատակարանը գաղափար օրինակի գրչինն է, № 744 ձեռագրում այն արտագրված է 1638 թվականին, Յովհաննէս գրչի կողմից։

*** Փակագծերի մեջ առնված հատվածը ավելացված է այլ ձեռագրով։

և կամ յարագութեան մտաց և յորդորումն մատանց բուռն հարաք ի հանճարիմաստ և ի բազմայեղ մատեանս, այլ վասն սիրոյ և հրամանաց գերապայծ[առ] և երանաշնորհ և պանծալի րաբունապետիս մերոյ Թումայի քաջ հռետորի, զի բազում անգամ թղթով և պատգամաւ առաքէր. եւ մէք հարկեցաք՝ ըստ տգէտ և ըստ փանտքի անզօրութեան մերում աւարտեցաք։ Այլ և համշիրաք եղբայրս մեր Գրիգոր, և սա ևս առաւել խնդրէր, վասն զի Գ. (Տ) [illegible]տ յայլ ոք ետ և ոչ առին յանձն...։ Եւ մեք վասն եղբայրական գթոյ սորա և սրբասէր և մաքուր անձին ե բազձանաց սրտին կատարեցաք զհայցելիս սորա...։

676

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ, ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Կիպրոս կղզի, Նիկոսիա, Մ. Տ. Մ.

Գրիչ՝ Ստեփանոս

[Գրեցաւ] յանապատիս, որ կոչի Ձորոյբերդ, ընդ հովանեաւ սուրբ մաւրս Կոթուղիկէի և սուրբ Աստուածածնի և սուրբ վկային Մինայի... ստացաւ Ստեփանոս քահանայ...։

Յիշեցէք Շահնշահին, և քուերցն, և ամենայն ազգականացն մերոց... նաև զերջանիկ վարդապետն՝ զԹումա Մեծոփեցին, և զայլ վարդապետքն, որ յորդորեցին զմեզ ե աւգնական եղեն և ուղարկեցին յԵրուսաղէմ, այլ և զԿարապետ վարդապետն՝ զխոստովանահայրն,... ե զերջանիկ հոգևոր հայրն մեր՝ զտէր Սարգիս եպիսկոպոսն Կոռիկոսու,... և զՂազար վարդապետն, և զՍարգիս կրաւնաւոր քահանայ, և զՅովհաննէս, և զԱւշին դպիր՝ որ կրկին աշխատեցան ի յուղորդելն և ի ծաղկելն... և զխոճա Խտրշէն, որ յորդորեաց և օգնական եղև զարդարելոյն...։

677

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փիրղ. Նոտ., էջ 153, Վան, Երերին գիւղ

Գրիչ՝ Խալիֆայ
վայր՝ Արճէշ

Փառք... որ ետ կարողութիւն տկար Խալիֆայ քահանային հասանել յաւարտ [գրոյս]...։ Արդ, գրեցաւ ի թուականիս Հայոց ՊՂԵ. (1446), ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և Գէորգեայ զօրավարին, և սուրբ Յակոբ հայրապետին, ի քաղաքս Արճէշ կոչեցեալ, ի հայրապետութեան տեառն Կիրակոսի և յառաջնորդութեան քաջ րաբունապետացն Թումայ վարդապետի և Կարապետ վարդապետի, որոց յիշատակ նոցին օրհնութեամբ եղիցի...։ Ջստացող սուրբ գրոցս՝ զԱբրահամ կրօնաւորն, և զհօրեղբայրն իւր զՎարդան վարդապետն, և զԵղիա սարկաւագն յիշեցէք ի աէր։

678

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Փիրղ. Նօա., էջ 148—151, Երզնկայի ս. Կիրակոսի վանք

Դրիչ՝ Սարգիս
վայր՝ Երզնկայ

ա

... *Եւ եա զսա* [Ներսէս *երէցն*] *ի վանքն* Նոր-Գեղկայ, *ի դուռն սուրբ Կիրակոսի, յիշատակ անջինջ հոգւոյ իւրոյ...։ Այլ և աղաչեմ յիշել ի տէր զերջանիկ վարդապետն՝ զքաղցրաձայն փիլիսոփայն* զՅովհաննէս՝ *զխաբաղանազգեաց ճգնաւորն՝ զառաջնորդ վանացս սուրբ Կիրակոսի, որ կամակից և պատճառ եղև գրոցս գրելոյ և յորդորող այսմ հոգևոր գործոյ, և* զՅովհաննէս *աբեղայն ՝ զեղբօրորդին իւր, և* զՅովհաննէս *աբեղայն՝ զհոգևոր սիրեցեալ որդին իւր, և զայլ ամենայն աբեղայքն և զմիաբանք վանացս։ Դարձեալ, աղաչեմ յիշել ի տէր զգրողք գրոցս* զՄինաս *սարկաւագն, որ զառաջքն գրեաց ԺԶ. (16) տետր, և* զԵրեմիայ *աբեղայն, որ Ժ. (10) տետր գրեաց, և զտէր* Խաչատուր *վարպետն, որ Ը. (8) տետր գրեաց, և* զՅոհաննէս *վարդապետն, որ Ա. (1) տետր գրեաց, և զիւր աշակերտքն՝* զԱստուածատուր *աբեղայն, որ Զ. (6) տետր գրեաց, և* զԱւետիք *աբեղայն, որ Դ. (4) տետր գրեաց։ Եւ ես՝ բազմամեղ և անիմաստ* Սարգիս, *որ զԴ. (4) տետրակ՝ ի վերջք գրոցս գրեցի և զցանկն ի յառաջքն, նաև* զՄարկոս *աբեղայն, որ Դ. (4) տետր գրեաց, և* Ներսէս *աբեղայն, որ Ա. (1) տետր գրեաց։ Եւ այսոր պատճառն՝ մին վասն ժամանակիս, և մին, զի օրինակն հատեալ եղև, և այլք ոմանք զնոյն գիրքս գրէին, և մին վասն ջերմ սիրոյն, զոր ունէր* Ներսէս *քահանայն։ Այլ և աղաչեմ յիշել ի տէր աստուած զտէր* Խաչատուրն, *որ ետ զօրինակն* Մինաս *սարկաւագին, գրեց զԴ. (4) ամսոյն, և զայլն տէր* Գրիգոր Կարպեցին *ետ ....*

Եւ դի գրեցաւ սա ի ՊՂԵ. (1446) ամի Թուականիս Աբեթականի, ի դառն և յանբաբի ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց իմոց խստացաւ սիրտ իշխանին Եզնկա *քաղաքիս... և արար խորհուրդ ընդ դանուշմանսն, զի քակեսցեն զեկեղեցիսն՝ զքաղաքիս և զգեղօրէիցն, նաև զվանորայս։ Եւ ինքն էլ բազում զօրօք և գնաց ի վերայ* Շամխայ *բերդին, և բան տուեալ էր մօլնանուն, թէ յորժամ զբերդն առնու՝ առհասարակ զԲ. (2) երկրիս զեկեղեցիքն քակեսցեն...։ Իսկ միածին որդին աստուած ոչ արար անտես զգնեալքս պատուական և սուրբ արեամբն իւրով, այլ գթացեալ փրկեաց զեկեղեցիս քրիստոնէից։ Մինչ զի ակներև տեսեալ էր իշխանն զսուրբն Սարգիս սպիտակ երիվարօք և այլ սուրբք ընդ նմա, որ փութացուցանէին զնա երթալ ի բերդն՝ զի առցէ։ Եւ նա եկեալ մերձ ի բերդն ի գիշերի և կապեաց իւրովի զպարանն ի պարանոցն իւր, որք քարշեցին զնա ի վեր և արկին ի բանտ։ Եւ զօրքն եկեալ փախստական ի քաղաքս՝ ըն-*

դունեցան զորդին նորա իւրեանց պարոն, և դարձեալ կրկին արարին զառաջին խորհուրդն քակելոյ զեկեղեցիսն։

Եւ յաւուրս յայնոսիկ, իբրև յետ ամսոյ միոյ, եղբայր իշխանին Շեխ-Հասանայ եկն յօտար երկրէ և եմուտ ի քաղաքս Ի. (20) արամբ, և տեսեալ զկապուտն, որ ի գլուխն քրիստոնէից և զնեղութիւնս, ել-եալ այն Ի. (20) արամբն, և գնացեալ ի դուռն պալատին, և կալեալ զորդի իշխանին՝ ինքնին տիրեաց քաղաքիս։ Եւ հրաման արար, զի քրիստոնեայքն զկապուտն ի գլխոյ իւրեանց ձգեսցեն և համարձակ զօրէնս իւրեանց կատարեսցեն։

Եւ յետ աւուրց ինչ Կամխայ բերդի պարոնն եհան զՇեխ-Հասան և արձակեաց, և մօլնանին այս քաղաքիս դարձեալ թուղթ յուղարկե-ցին ի ծածուկ առ նա, զի եկեսցէ ի քաղաքս, և նոքա կոտորեսցեն զդուռն և առցեն ի ներս, և սպանցեն զեղբայր նորա, և զառաջին խորհուրդն կատարեսցեն։ Իսկ եղբայր նորա Մահմուտ պարոնն իմա-ցեալ զայս, և ըմբռնեաց զամենեսեան՝ զգլխաւոր մօլնան կախեաց և զայլ բազումս չարաչար տանջեաց, զինչս և զապրանք նոցա էառ, և յայլ երկիր վտարեաց։

Եւ յետ սակաւ աւուրց ելեալ Շեխ-ՀասանՆ ի Կամխայ՝ երթայր յերկիրն իւր՝ ի Դերջան. և եղբայր նորա իմացեալ առաքեաց զօրս և կալաւ զնա և եդ ի բանտ երկաթի կապանօք. և խաղաղացաւ նոցա չար խորհուրդ...։և կատարեցաւ բանն Գաւթի, թէ՝ Գուբն, զոր փորե-ցին և պեղեցին՝ ինքեանք անկան ի խորխորատն, զոր գործեցին։

...Գործեցաւ այս ի յեղանակէն աշնան, մինչև ի յեղանակն գար-նան. իսկ ի գալ եղանակին ամարան եկն ի վերայ քաղաքիս եղբօր-որդի Մահմուա պարոնին... Ծիհանկիրն բազում և շատ զօրօք, և խսարեաց զքաղաքս ամսոյ Իէ. (27)-էն մինչև յօգոստոս Ժ. (10)։ Եւ քար և քանդ արար զերկիրս Եկնղեաց, և գեղօրայսն զամէն այրեց, և ելեալ յերկրէս յայլ շրջակայ գաւառսն՝ զամենայն աւերէ։ Իսկ մար-դիկ երկրիս յօտար երկիր վտարեցան, մինչ զի անբնակ եղև երկիրս ի մարդկանէ, և դեռ յայս ալեաց միջի կամք իբրև զնաւ բեկեալ, և թէ զինչ լինելոց է յառաջիկայն՝ աստուծոյ է գիտելի։

Արդ, մի ոք իշխեսցէ հանել զսուրբ մատեանս...։ Իսկ եկեղեցպան և այլ աբեղայքդ սուրբ Կիրակոսի վանացդ՝ խնամ տարէք գրոցս, զի ի ժամանակի փախստեան կամ խռովութեան զգիրքս ի քաղաք տա-րէք և պահեցէք, և ի ժամանակի խաղաղութեան [բերէք ի վանս] և ընթերցէք, և մի ախեալ և փակեալ պահէք, զի գիրք փակեալ կուռք են...՝

Բ

Ո՜վ գառն ժամանակիս, զի զօրք բազում պաշարեալ են զքաղա-քըն Եզնկայ։

Ո՜վ եղբայր, անմեղադիր լեր խոշորութեան և սխալանաց գրոյս, մին՝ զի անարհեստ էի ի գործ իբրիս, և մին՝ զի ի խսար էաք և ի տրտմու-թիւն, զի ամենայն գեղօրայս Եզնկոյ և զվանորայսն, նաև զմիաբան-

քըն այրեցին հրով, այլ և զվաստակն և այգիքն և զամենայն ինչ՝ զոր կերան ե առին, զոր ատ ոտն կոխեցին, և տարակուսեալ էաք.

գ

Ո՜վ եղբարք, անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց գրոյս, զի յահ ե ի փախ էաք… ե մարդիկ երկրիս ամենեքեան յօտար երկիր վտարեցան, և երկիրս մնաց անընակ։

*Զստացող գրոյս զ*Ներսէս *քահանայն յիշեցէք ի բարին… Նաև զհեղահոգի նկարող սորա՝ զ*Սամուէլ *վարդապետն, ամէն։*

679

ԺԱՌՈՑ

Կ. Պոլիս, Անտոնյան վնք. 6, Մ.Տ.Մ.

Ծաղկող և կազմող՝ Գրիգոր եպիսկոպոս Հասընքէֆոյ
վայր՝ Արապկիր

ա

Արդ, գրեցաւ… ձեռամբ գրչի Մինաս *սարկաւագի, ի յերկիրն* Արապկերոյ, *ի մեծ հռչակաւոր ուխտն Փրկչին, զոր տէր ի կերպարանըս երևեալ եզին եղջերաւորի Ապլակիտոսի, և խաչս առ նա նմանի յեղջեւրսն, և եղեալ ձայն ի խաչէն առ Ապլակիտոս ե ասէ՝ Զի՞ հալածես զիս։ Եւ նա… մկրտեցաւ ամենայն տամբ իւրով և անուանեցաւ Ստաթէոս, և շինեաց զտեղին վանս հռչակաւոր ե անուանեաց Փրկչի վանք…։*

Աւարտեաց սուրբ գիրքս… ի թուականութեանս Հայոց տումարի ՊՂԵ. (1446) ամի, ի հայրապետութեան Կիւլիկեցւոյ տէր Կարապետի. *և ի թագաւորութեան* Եգիպտոսի *սուլթան* Տաճիրի, *ազգին մահմեդականի։*

Արդ, ես Գրիգոր *եպիսկոպոս* Հասընքէֆոյ* *ետու գրել զգիրքս քըւերորդւոյն իմոյ* Մինաս *սարկաւագին, և ծաղկեցի և կազմեցի ձեռամբ իմով, և ետու տէր* Կարապետ *կաթողիկոսին։*

բ

Ստացող՝ Կարապետ կաթողիկոս

Փառք… տէր Կարապետ *կաթողիկոս ամենայն Հայոց… կրկին նորոգեալ զաթոռ մայրաքաղաքիս* Կիւլիկոյ.. *և պատրիարգ առաքելաշնորհ սուրբ աթոռոյս՝ հաստատեալ ի յաստուածարնակ սուրբ ուխտըս տէր Պօղոսի, որ կայ հարաւակողմն քաղաքիս* Սըսոյ, *ընդ հովանեաւ Վանկոյ սուրբ նշանիս…։ Ստացաւ զսուրբ մատեանս… յիշատակ [իւր], և եղբաւրն պարոն* Առաքելին, *և եղբաւրորդոյն տէր* Գրիգորին: [*Այնուհետև նկարագրված է, որ գտել է Լուսաւորչի կորած աջը, հաստատել* Սսոյ *աթոռը, ուխտ է գնացել* Երուսաղէմ, *որտեղ Հայոց վանքն ազատել է պարտքից. գնացել է նաև* Եգիպտոս]:

* *Մեքենագրված է «Հարսընքէֆոյ»։*

680

ՇԱՐԱԿՆՈՑ

ԺՑԲ 37, էջ 30

Գրիչ՝ Մաքէոս
վայր՝ Այրիվանք

... Գրեցաւ եղանակաւոր տառս Շարականաց ի Թուաբերութեանս Հայոց ՊՂԶ. (1447), ի դառն և ի չար ժամանակի, յորում նեղիմք յանաւրինաց և յանիրաւ պահտնջողաց, ի հայրապետութեան տեառն Գրիգորի՝ ի յաթոռ սուրբ էջմիածնի Վաղարշապատ Այրարադեան նահանգի, ի խանութեան Ջահանշանի։

Արդ, ես... Մաթէոս գծեցի զմագաղաթս և գրեցի զսա ձեռամբ իմով... և ետու զսա ձեռնասնունդ աշակերտի մերոյ Յովանէս սրբասնունդ կրաւնաւորի...։ Եւ ես Յովհաննէս աբեղայս ետու ծաղկել զսա ոսկեճաճանչ երանկաւք և ազգի ազգի գունաւք և պատկերաւք...։

Արդ, գրեցաւ սա ի սուրբ գերահռչակ... սուրբ ուխտս Այրիվանքս, ի սկիզբն և մայրն ամենայն վանորայից, ընդ հովանեաւ սքանչելագործ տիգին, և արեամբ ներկեալ անմահին Յիսուսի սուրբ գեղարդեանն, և այլ բազմութեան սրբոց..., ի լաւ և յընտիր աւրինակէ առաջին իմաստնոց և վարժապետացն Սիսոյ, զոր էր գրեալ ձեռամբ Յովհաննէս եպիսկոպոսի Անոյ, մականուն Ոսկեփոր վերաձայնելս...։

681

ՏՕՆԱԿԱՆ

Թաւրիզ, Մասնաւորաց, 56, ԱՑԹ, էջ 122--123

Գրիչ՝ Մաթէոս
վայր՝ Ագուլիս

527բ—529բ ...Զոր տեսեալ զայս ամենայն վայելչութիւնս հրաշից երիցս երանեալ, հաւատարիմ, հեզհոգի, հանճարամիտ, հոգով աղքատասէր, նաև աստուածասէր քահանայապետն Քրիստոսի և արհիական մեծ եպիսկոպոսն Գողթան վիճակիս տէր Ստեփաննոս գովելին, բորբոքեալ ի սէրն աստուծոյ, զի բազում ժամանակաց ջերմ հուսով և եռանդնափափագ սիրով ցանկացաւղ եղեալ այսմ աստուածային սուրբ գրոցս, որ կոչի ամենալի Տաւնական։ Զոր և սա ունի յինքեան լիակատար զպատմութիւն և ըզգովասանութիւն տաւնից տընաւրինականացն Քրիստոսի աստուծոյ մերոյ՝ զծննդեանն և զյարութեանն և որ ըստ

կարգին, այլ և զյիշատակ սուրբ և փառաւորեալ աստուածածնին և զաստուածաբնակ սուրբ առաքելոցն և զաստուածառաք սուրբ մարգարէիցն, և զհոգիացեալ սուրբ հայրապետացն, և զարեամբ շաղախ նահատակեալ սուրբ մարտիրոսացն, և զուղղափառ սուրբ թագաւորացն, և ըզճգնազգեաց սուրբ միանձնացելոցն, և զվսեմական սուրբ վարդապետացն, և զարիացեալ սուրբ կուսանացն, այլ և զպատուէր քարոզութեանն յաւուրս պահոց, զոր գրեցին սուրբ վարդապետքն, զի հանապազ ընթեռնուն սուրբ քահանայք ի լսելիս աւրհնեալ ժողովըրդեան, զի լսելով զայս ամենայն խրատք պատուիրանացս հաստատեսցին ի հաւատս ուղղափառս, զոր ունէին ի սկզբանէ։ Եւ յիշեսցեն առաջի Քրիստոսի յաղօթսն իւրեանց զստացող սուրբ գրոցս զտէր Ստեփաննոս արհեպիսկոպոսն, և զծնաւղսն իւր ի Քրիստոս հանգուցեալ՝ զհայրն Աղպուղա, և զերջանիկ մայրն իւր Խուանդ-Խաթուն, և զամենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանիս և զհանգուցեալս։ Նա և զերիցս երանեալ երջանիկ և քաջ հաւտապետն նոյն ասացեալ Գողթան աթոռոյս՝ արհեպիսկոպոս զքեռին իւր զտէր Տէրունականն՝ զառ ի Քրիստոս հանգուցեալն, հանդերձ ծնաւղաւքն իւրովք, եղիցին յիշատակք նոցա աւրհնութեամբ...։

Եւ արդ, ես՝ ունայնս ի գործոց բարեաց և փցունս ի գրչաց Մաթէոս սուտանուն քահանայ, որ անուամբ եմ կոչեցեալ, բա[յ]ց հոգւովս եմ ես խաւարեալ, եղէ անարժանս ես թախանձեալ ի նոյն վերասացեալ տէր Ստեփաննոսէն, որ և բազում սիրով հրաւիրեաց զմեզ առ ի գրել զսուրբ Տաւնականս։ Իսկ մեք ոչ կարացաք ընդդիմանալ մեծի հրամանաց նորա, վասն զի տեսաք զեռափափագ սէր նորա, որ առ հոգեորսն ...և գրեցաք զսուրբ Տաւնականս զայս ըստ իմում կարի, դրոշմամբ մեղսամած մատամբ անձինս կործանելոյս՝ բազում և պէս պէս աշխատանաւք, զի մեծաւ չարչարմամբ և անժուժելի տքնութեամբ հասուցաք զսուրբ Տաւնականս առ ի յաւարտ կատարման, զոր միայն տէրն իսկ գիտէ զդիտումն մտաց մերոց, եթէ վասն որր ուրուք մտածման գծագրեցաք զսուրբ դիրքս զայս։

...Գրեցաւ սուրբ Տօնականս այս ի գեղաքաղաքս Ագուլիս գովելի Գողթան վիճակիս, ի նոյն իւրոյ աթոռիս, ընդ հովանեաւ առաքելայարկ խորանիս, աստուածաբնակ տաճարիս Քրիստափորի մեծ նահատակիս և Թումայի առաքելոյ սքանչելագործ հրաշալի աջիս, առ ոտս երջանիկ նոյն վերասացեալ տէր Ստեփաննոսիս, ի թուականութեանս Հայոց ՊՂԶ. (1447), և ի հայրապետութեան մեծի աթոռոյ աստուածայարկ սուրբ Էջմիածնին՝ երիցս երանեալ տեառն Գրիգորի խարազն ճգնաւորի, նաև երկրորդ լուսաւորչի, զոր տէր աստուած անսասան պահեսցէ և անզրթելի ի յայսմ աշխարհի...։

Նա և ստացաւղ սուրբ Տաւնականիս տէր Ստեփաննոս Գողթան վիճակիս, նախնեաւն իւրով՝ տէր Տէրունականաւ, և ամենայն ազգայնօքն իւրովք, ողորմութեամբ քո Քրիստոս, մասնակից լիցին ամե-

նայն գերերջանիկ սրբոցն, որք հաւաքեալ կան աստ ի հրաշափառ ամենալի սուրբ Տօնականիս...։*

682

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՑՎ 181 (543), հա. Ա. սյուն. 887—688

Գրիչ՝ Գալուստ
վայր՝ ի Ձորս Քեղոյ, Աղջոց վանք

258 ա ...Որում բաղձացայ ես յետինս Գալուստ եղկելի, վշտաւք և մեղաւք զանազանեալ անձամբ գաղափարեցի զսուրբ աւետարանս ի ստուգաբան և յընտիր աւրինակէ, որ ունի զրանս սեփական և ստորակէտ և զտնհատ՝ յստակ և անթերի, ի յայս վերջին գառն և յանբարի ժամանակի։

Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊՂԶ. (1447)**, ի հայրապետութեան տեառն Գրիգորի, և ի թագաւորութեան Վրաց Գաւ[ր]գէ, և ի զանութեան Ջաճանշաճի՝ որդոյ Ուսուփին, ի գաւառս Արարադեան, ի Ձորս Քեղոյ, ի վանքս Աղջոց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Կաթուղիկէիս, և սուրբ Ստեփաննոս Նախատակիս, և սուրբ Աջոյն, և Թորի սուրբ Նշանիս, և Արամունից սուրբ Խաչիս, և Թեատ սուրբ Գրիգորիս, և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան։ Գրեցաւ ձեռամբ անիմաստ և անարուեստ փծուն գծողի Գալստի՝ անուամբ միայն աբեղայի, և ձեռնտուութեամբ եղբաւրս իմոյ Մխիթար աբեղայի...։

683

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 8875

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Տփխիս մայրաքաղաք

286 ա Շառաւիղն աւրհնութեան և սեռն բարենշան, աստուածասէր և բարեպաշտ և երկիւղածն յաստուծոյ Ներսէս ցանկացող եղեալ այսմ կենսունակ և մեղսաքաւիչ տառիս և աստուածախաւս մատենիս. Զի յետ ստանալոյ բազում զգեստուց և սպասուց եկեղեցւոյ՝ յաւել և

---

* Գրեթե բոլոր ճառերից հետո գրիչը թողել է համառոտ հիշատակագրություններ (ընդամենը 125 հատ), որոնցից մի քանիսը հրատարակել է Հ. Աճառյանն իր «Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի» աշխատության 121—122 էջերում։

Այդ հիշատակագրությունները ոչ մի նոր բան չեն ավելացնում գլխավոր հիշատակարանի տվյալներին։

** Բնագրում՝ ՊՂԶ., սակայն հրատարակիչը իրավամբ ուղղել է, նկատի առնելով, որ Ղ-ի ծայրը քերված է, և որ հիշատակված անձինք ապրել են ոչ թե ՊՂԶ. (1387), այլ ՊՂԶ. (1447) թվականին։

զսա ի գանձս աստուածայինս, ի մտի ունելով զբան մարգարէին, որ ասէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և յընդանի յԵրուսաղէմ,
286 բ ստացաւ զսուրբ աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց ‖ իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։

Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ, ընթերցմամբ կամ աւրինակելով, յիշեսջիք սրտի մտաւք առաջի Քրիստոսի զվերոյգրեալ ստացաւղ սուրբ աւետարանիս զՆերսէս, և զհայրն իւր զԿարապետ քահանայ, և զմայրն զԴաւլաթ, և զկենակիցն իւր զԱսլմէլիք, և զեղբարսն զՅովսէփ քահանայ և զՅուսիկն, և զեղբարորդին իւր զՍուլթանշէն, և զհաւրեղբայրն նորին զտէր Յովհաննէս, և զորդին զտէր Մխիթար, և մօրքվերորդին զԿարապետ, և զպապն իւր զտէր Մաթէոս, և զքոյրն զՇնահավորն, և զքվերորդին զԱմիր-Մէլիքն, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն։ Եւ որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

287 ա Ընդ նոսին, որք վերոյ գրեցան, յիշեսջիք և զիս՝ զՅովանէս մեղապարտ գրիչս և զծնողսն իմ, որ զսուրբ աւետարանս գրեցի և աւարտեցի ի մայրաքաղաքս Տփխիս, ընդ հովանեաւ կամակատար սուրբ Աստուածածնիս, ի թվիս Հայոց ՊՂԶ. (1447).

684

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Երևան 2130

Ստացող՝ Յովանէս Կաֆայեցի

ա

425 բ Ի թվ. ՊՂԶ. (1447)....

Արդ, գրեցաւ առաքելական և մարգարէական, աւետարանական և վարդապետական, աստուածաբուխ հոգիալից տառս այս ձեռամբ Տէրունականն[ի] և Յոհաննէս կրօնաւորի Սանահ[ն]եցոյ, ի խնդրոյ սրբասէր և հեզահոգի գրոց հետևողի [Յովանիսի եպիսկոպոսի Կա՞]ֆայեցոյ, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնողաց իւրոց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ հոգելից բուրաստանիս կամ կարդալով կամ աւրինակելով, վասն սիրոյն Քրիստոսի յիշեսջիք յաղաւթս ձեր զՅովանէս եպիսկոպոս Կաֆայեցիս, և զպապքն իմ զԳալուստ երէցն և զխաւճայ Ղազարն. և զհայրն իմ զպարոն Գէորգն. և զմայրն իմ զՇիրին-Մէլիք, և զհաւրեղբայրն իմ զտէր Դանիէլ աբեղայն, և զեղբայրքն իմ զՆիկողայոսն և զԿարապետն և զՄկրտիչն, և զամենայն մերձաւորքն և զազգականքն իմ. և որ սրտի մտօք յիշէ զմեզ և ողորմի ասէ՝ տէրն մեր Յիսուս Քրիստոս իւրն ողորմեսցի աստ և ի հանդերձեալս, ամէն, եղիցի, եղիցի։

Փարձեալ, աղաչեմ զամենեսեան յիշեսջիք յաղաւթս ձեր զՀէշուաեցի Մխիթար էրէցն, որ զգիրքս կապեց և շատ զահմտթ քաշեց, սրտի մտօք ողորմի ասէք։

Բ

Գրիչ՝ Տէրունական

425 ա Ո՜վ, սուրբ վարժապետք, որք հանդիպիք այսմ հոգելից դրախ-
տիս, յիշեսջիք զսակաւ աշխատողս՝ զՏէրունական տրեղայս։*

685

ԱՒԵՏԱՐԱՆ

«Թորոս Աղբար», Բ., էջ 433, Տիգրանակերտի ս. Սարգիս եկեղեցի

Գրիչ
վայր՝ Արծկէ

Գրեալ ի քաղաքն Արծկէ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, ի հայրապետութեան տեառն Կիրակոսի ընդհանուր Հայոց կաթողիկոսի, ի թագաւորութեան Ջհանշահի՝ որդւոյ Ղարա-Եուսուֆի, ի թվականի մերում Պ. և ՂԶ. (1447) ամի, յորում ժամանակի յոյժ հարկապահանջութեամբ տառապի ազգս Հայոց…։

686

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4436

Գրիչ՝ Մինասենց Թումայ
վայր՝ Աղթամար

138 ա …Արդ, այսմ աստուածեղէն և երկնապարգե գանձիս և լու-
սափայլ և մաքուր մարգարտիս ցանկացաւղ եղև ոմն սրբասէր քա-
հանայ՝ պատուական և աստուածային ձրիւքն բարգաւաճեալ, որոյ
անունն Մովսէս ճանաչի, ի գեօղաքաղաքէն Ուրանից… յիշատակ
բարի հոգոյ իւրոյ, և ծնօղացն իւրոց՝ հաւրն իւրոյ Թումայ քահանա-
138 բ յին և մաւրն Դուռմէլիքին, և եղբաւրն || իւրոյ Գրիգորին, և կենա-
կցացն իւրեանց Նիկարին և Շնօճվորին, և զաւակացն իւրեանց՝ կեն-
դանեացն և հանգուցելոցն ի Քրիստոս՝ Յովանիսէն և Աստուածատրուն,
Մելքեսէթին և Սանվէլին, և քըւերցն Գօճարին և Սիֆաթին, և այլ ամե-
նայն արեան մերձաւորաց նոցին…։
Եւ արդ, ես՝ … Մինասենց Թումայս, անուամբ և եթ աբեղայ՝ եղ-
կելի ոգիս, տեսի զփափագ և զսէր Մովսէս քահանային, զոր ունէր առ
հոգեւորսն, և իմով ծերացեալ անձամբս և տկարացեալ մարմնովս յանձն
առի գըծագրել զսա իմով իսկ մեղսամած մատամբս, և ամենակարող
զաւրութեամբն աստուծոյ կատարեցի զաստուածախօս կըտակս զայս
139 ա յաստուածապահ կըղզիս Աղթամար, ընդ հովա || Նեաւ գերահռչակ և

* Ձեռագրի բոլոր 425 թերթերը կրկնագիր մագաղաթ են, նախկին գրերը ջնջված են շատ խնամքով, հազիվ որոշ թերթերի վրա նկատվում են նրանց թույլ հետքերը, ըստ այդմ թերթերի մի մասի գիրը ուղղագիծ—թեքական երկաթագիր է, իսկ մյուս մասինը՝ շատ մանր երկաթագիր։

երկնանման սուրբ Խաչի տաճարիս, և սուրբ Փրկչիս, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Սարգիս զաւրավարիս, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, և ի թվականութեան Հայկազեան տոմարիս ի յութհարիւր և իննսուն և վեց (1447)...։*

140 բ ... Աստուած-սղորմի ասացէք և ինձ՝ մեղուցելոյս Թումայի սոսկանուն աբեղայի՝ գըծագրողի սորին, և ծնաւղացն իմոց՝ Սիմէոնին և Արղունին, և քուերցն իմոց՝ Ոսկի-Տիկնէն և Անղալատին, և որդոց նոցին՝ Հայրապետ աբեղային և Յոհանիսէն և Աւետիսին, և երախտաւոր քեռոյն իմոյ՝ սընուցողին և ուսուցողին զիս՝ Թումայ միայնակեցին, և այլ ամենայն արեան մերձաւորացն մերոց...։

687

ՃԱՇՈՑ

ԲՑՎ 416

Գրիչ՝ Սահփանոս
վայր՝ Աղթամար

Փառք... որ ետ կարողութիւն ...մեղսամած անձինս հասանել յաւարտ սորա...։ Եւ արդ, գրեցաւ սուրբ տառս և աստուածախաւս սուրբ կտակս յաստուածախնամ սուրբ կղզիս Աղթամար, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի կաթողիկոսի, ի մեծ թուականիս Հայոց ՊՂԶ. (1447), ձեռամբ... Սահփանոս աբեղայի, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց Գուլազիզին և Մրջանին...։

688

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4922

Գրիչ՝ Իսրայէլ
վայր՝ յերկիրս Մոկաց, ի գեւղս Փոսավանք

361 բ ...Կատարեցաւ սուրբ աւետարանս յերկիրս Մոկաց, ի գեւղս, որ Փասավանք կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Գրիգորին և Փրկչին, եթէ լսեալ էիք ի պատմութենէ սորայ, զոր Գ. (3) խնձոր է բերեալ ի դրախտէն Ագամա կրաւնաւորի միոյ։

362 ա Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Իսրայէլ քահանայի ...յընտիր և ի ստո[յ]գ աւրինակէ Կիլիկեցւոց, կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ, ի մեծ թուիս Հայոց ՊՂԶ. (1447), ի կաթողիկոսութեանն հայկազան սեռի տեառն Զաքարիաի Աղթամարցոյ, զոր տէր աստուած պահեսցէ անսասանելի զաթոռ հայրապետական և

---

* Այս՝ 139 ա էջի շարունակության և հաջորդ՝ 139 բ—140 ա էջերի վրա գրիչը աստվածաբանական տարտամ դատողություններ է անում և կրկին անգամ հիշատակում տացողի արդեն հիշատակված ազգականներին՝ մեկ առ մեկ։ Այդ ընդարձակ մասը դուրս ենք թողնում։

զթագաւորական, զի յիշելով զանուանս նոցա սասանել սաքրին և ոչ ևս երեւին թշնամիք ճշմարտութեանն.

Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի վայելումն մանկանց սուրբ եկեղեցւոյ։

Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային լուսով զարդարեալ՝ ցանկացաւ աստուածասէր և հեզայհոգի տանուտէրն Թովմայ և

362 բ Բ. (2) եղբայրն իւր՝ Գրիգորն և Ղազարն, || ի դեղջէն Աշնայ. և ետ գրել զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ. և ծնա[ւ]ղացն՝ հաւրն Սահփանին* և մօրն Շնոհորին, և եղբարցն Գրիգորին, և կենակցին Փաշին, և որդւոյն Հալիֆին, Ղազարոսին, և կենակցին իւրոյ Սուլտանին, և քուերացն Մարգարտին և Արուսին և Նարընջին, և եղբաւրն Առաքելին, որ յառաջ փոխեցաւ ի Քրիստոս, իբրև զծաղիկ անթառամ...։

363 բ Դարձեալ, կրկին մաղթանօք աղաչեմ ես՝ հողացեալս ի գերեզմանի, անարժանս ի դաս կրօնաւորաց Իսրայէլ՝ զամենայն ընթերցողքդ սուրբ աւետարանիս, զի յիշման արժանի առնէք զանարժան գրիչս զԻսրայէլ, և զհայրն իմ զԱմիրշահըն, և զմայրն իմ զՇնոհորն, և զեղբարքն իմ զՍանակն և զՅովնանն, և զքուերքն իմ՝ զփոխեցեալքն ի Քրիստոս՝ զՄարգարիտն և զԽէրէքն և զՄրջանն, և զանդրանիկ եղբայրն իմ զՍանակն, զոր յառաջ փոխեցաւ ի Քրիստոս։ Պահեա տէր աստուած զվերջինս յամենայն չարէ, ամէն։

Այլ և զամենայն արեան մերձաւորս իմ, և զերախտաւորսն, և զուսուցիչքն իմ՝ զԹովմայ քահանայն և զԹադէոսն և զԱռաքելն, այլ և զերախտաւորք վարդապետքն իմ՝ զտէր Մարգարէն և զտէր Վարդան մաղդասին, և ասացէք բոլոր հաւատով զաստուած-ողորմին, և ասացողացդ աստուած ողորմեսցէ, ամէն։

Այլ և յիշեցէք ի Քրիստոս աստուած զԳաշտի Պետրոսն, որ ասէր՝ տէր Իսրայէլ, զիս յաւետարան գրէ, քեզ վարձք է...։**

689

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 6360

Գրիչ՝ Իսրայէլ

350 ա | | | Նելով յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ըստացող սուրբ գանձարանիս զԿարապետ քահանայն, և զծնաւղսն իւր զՀարա-

* Հիշատակարանի շարունակության մեջ ստացողի հայրը կոչվում է՝ Սեփանոս։

** Այս էջի ստորին լուսանցքում կա մի ծաղկագիր տող՝ «□ ԺՇՃԲՆԼԹԸ։ □ ԺՇՃԲՆԼԹԸ»։ Նույնպիսի մի ծաղկագիր գրված է նաև 359 բ էջի սկզբում, այսպես՝ «□ Գ. եղբարցն։ ԳՏԼԳՇՏ | ԺՇՃԲՆԼԹԸ | ՋԲԵԲՏԼ □»։

Այգ նշանը (□) իր տարատեսակներով՝ «Աւետարան» բառի գաղափարագիրն է։

Ծաղկագիր առաջին տողը եղբայրագիր ծաղկագրով կարդացվում է «Աւետարանս Թոմային» (2 անգամ)։

Երկրորդը՝ նույն ծաղկագրով՝ «Աւետարանս Գ. (3) եղբարցն՝ Գրիգոր, Թոմային է, Ղազարին»։

պետն և զՀաքունն, և զեղբարքն զՎարդան և զԳրիգորն, և զդեռաբոյս զաւակն իւր զՀարապետն:

Դարձեալ, կրկին աղաչեմ և պաղատեմ զդասս կարդացողաց և լսողաց՝ յիշեցէք զըստացող գրոցս զԴաւիթ կրաւնաւորն, և զծնաւղսն իւր զՎարդան քահանայն և զնազխաթուն, և զեղբարքն զխէրապետն, և զՅակոբ սարկաւագն, և զՄատթէոս քահանայն, և զորդին իւր զԹադէոս, և զքուերքն զԹանկ-խաթուն, և զորդին իւր զՊետրոսն, և զմիւս քոյրն զՀաւռոփսեմն, և զհօրեղբարքն իմ զՍտեփաննոս քահանայն, և զորդին իւր զՅովաննէս քահանայն, և զՅոհաննէս սարկաւագն, զդըստերքն իւր զՄըլքանն, և զորդին իւր զՅովսէփ, և զմիւս քոյրն զխաթունն, և զհաւրեղբարըն զՄարգարէն, և զորդին իւր զսարկաւաք Թովմէն...:

350 բ ... Յիշեցէք ի Քրիստոս աստուած զեղկելի Իսրայէլ գրիչս,* և զիմ ծնողսն, և զամենայն արեան մերձաւորսն, ամէն, և զվարպետըն իմ զՄարգարէն և զՎարդան Մաքին, ամէն....

Բ

351 ա Յիշեսցէ բարէգութն աստուած և ողորմութիւն տացէ Շուշանին, և մխիթարէ յերկնային յարքայութիւնն զհոգի և զմարմին խաթունշին՝ լուսով պայծառ է քան զարփին, դասաւորեալ ընդ կուսանին Հռիփսիմեայ և Գայինին զխաթունշէն՝ զդուստրն Շուշանին՝ զարիպ մեռաւ Մոկաց յերկրին, սուք մեծ արար իւր ծնաւղացն՝ պարոն Թումին և Շուշան[ին]. տացէ զերկնից արքայութիւն, ամէն, տէր, և պահեայ զորդիք սոցին՝ զՂարիպշէն և զիւրեանքն, պահեա տէր, յամէն չարէն։

Այլ և յիշեցէք զխանթունշէն, և զՇամամ՝ քոյրն իւր, ամէն, և զհաւրեղբարքն՝ Զաքարէն, զՅակոբշէն, և զՄխիթարն, զՇապուհն, յամէն,**

690

ԱԻՆՏԱՐԱՆ

Ն. Զուղա 559, Մ.Տ.Մ. և Ս.Տ.Ա.

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Մոկաց երկիր, Գինէկանց գիւղ

293 բ ... Այլ և արդ, գրեցաւ սուրբ աւետարանս աստուածախաւս ձեռամբ անարժան և ախմար գրչի Վարդանի: Եւ իմ անընդել գոլով յարուեստ գրչութեան... գրեցի անարժան ձեռաւք իմովք յընտիր և ի ստոյգ աւրինակէ կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ

---

* Նախորդ հիշատակարանի հեղինակ Իսրայէլ գրիչն է։ Նկատի ունենալով այդ՝ անթվական այս հիշատակարանը տեղադրում ենք նրան առընթեր՝ 1447-ի թվաշարքում։

** Այս երկրորդ հիշատակարանը, ամենայն հավանականությամբ, նույնպես գրել է Իսրայէլ գրիչը, սակայն ավելի խոշոր տառերով և, հավանաբար, առաջին հիշատակարանից տարիներ հետո։

և ազգի ազգի տրտմութեամբ, զոր վասն ծովացեալ մեղաց իմոց ժամանեն ինձ փորձութիւնք յամ յամէ և ոչ տային ինձ հանգչել։ Եւ է ի մեծ թուականիս Հայոց ՊՂԶ. (1447), ի հայրապետութեան հայկազեան տոհմի տեառն Զաքարայի, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Գէորգեա և ամենայաղթ սուրբ Նշանիս, ի յիշատակ հոգւոյ Սարգիս մաղգասոյ, և եղբաւրն Փիլիպպոսի, և ծնաւղացն Թագաւորին և Ազիզին, և որդւոյ իւրոյ Աւետիս սարկաւագին՝ տարաժամ փոխեցելոյն առ Քրիստոս, և սուք եւ ծնաւղացն իւրոց, և եղբաւրորդւոյն Մկ[րտ]չի, և քուերն Դովլաթ-խաթունի...։

Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք ... զՅովաննէս եպիսկոպոսն և Զաքարիայ վարդապետն, որք են առաջնորդք և հովիւ երկնահանգէտ սուրբ ուխտին Վարագայ։ Ընդ նոսին և զիս՝ զփծուն գրիչս զՎարդան անարժան աբեղայս, ... և զծնաւղսն իմ զՍամուէլ քահանայն, և զմայրն իմ զՄինայ, և զայլ ամենայն արեան մերձաւորսն և զերանտաւորսն, ամէն, և զիմ սիրելի եղբայրն զՅակոբ քահանայն։

Այլ և գրեցաւ աւետարանս ի յերկիրս Մոկաց, ի գեաւղս Գինէկանց, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս և սուրբ Գէորգեա...։

Եւ արդ, ես՝ ամենամեղ ծառայ ծառայից Յիսուսի Քրիստոսի Սարգիս մահդասի, վկայութեամբն աստուծոյ, և տէր Յովաննէս եպիսկոպոսին, և Զաքարիայ վարդապետին, Թումա քահանային և խոսրովին ետու զսուրբ աւետարանս իմ քըւերորդւոյն՝ Կարապետ քահանային, որդւոյ Յովանէս իրիցուն, որ հանապազ կարդայ և աստուած-ողորմի ասէ։ Եւ մի ոք իշխեսցէ ընդ նմա աղաղակ և կամ դաւի առնել. և թէ ոք յանդգնի և դաւի առնէ՝ նա զմասն զՅուդային առնէ և զայլ խաչահանուացն, ամէն։ Այլ տէր աստուած վայելել տացէ զսա Կարապետ քահանային, ամէն։

Այլ և յիշեցէք յաղաւթս ձեր և զծնողքն Կարապետ քահանային զՅովանէս քահանայ և զԱզիզ-խաթուն, և զմեծ պապն զՍտեփանոս քահանայ, և զՈսկին, զՄովսէս քահանայ, և զորդեակն իւր զՄելքիսէթ քահանայ...։ Յիշեցէք... զմահդասի տէր Զաքարէն, զհայրն իւր Նորվալի, և զմայրն Խանումն, դուստր և որդին իւր, որ բազում աշխա[տե]ցաւ ի Ջուղայի մինչ ի Հսպահան, յիշեցէք, ողորմի ասացէք, աստուած զձեզ յիշէ աւրն դատաստանի։

691

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6365

Գրիչ՝ Մարգարէ

վայր՝ յերկիրս Ըռշտունեաց, ի վանքս Բերդաձոր

362 բ ...Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ կին ոմն աստուածասէր և ուղիղ հաւատով Շայխութլու* կոչե-

* 20 ա էջի վրա, չոգած դիրքով, նկարված է ձեռագրի ստացող Շայխութլուն, նրա ձախ կողմում կանգնած է պատանի որդին՝ Յովսեփը, որը, համաձայն նկարի, վերևում

ցեալ, ի վաղուց հետէ ցանկացաւ այսմ աստուածախաւս սուրբ աւետարանիս, և ետ գրել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն՝ հաւրն Մարտիրոսի և մաւրն Սադդաթի, և որդւոցն Յովսէփին և Մելիքսէթին, և դստերաց իւրոց Համուշ-խաթունին և Մարգարտին և Ուլուն-խաթունին, և քուերն իւրոյ Հաթուն-Մէլեքին,* և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, և փեսային իւրոյ Մուրադին:**

Նկ. 25. Ձեռագրի ստացող Շայխութլուի և նրա վաղամեռիկ որդի Յովսեփի պատկերները

... Ընդ նոսին և զիս՝ զանյիշելիս զՄարգարէ մեղաւք մեռեալ գծողս, և զհայրն իմ զՅոնանէսն, և զմայրն իմ զՈսկին, և զեղբարքն
363 բ իմ զՅովանէսն ‖ և զՄխիթարն, և զամենայն արեան մերձաւորքն իմ ազատեսցէ Քրիստոս աստուած յաններելի տանջանացն, և տացէ ամենայն Քրիստոնէից և ինձ՝ մեղաւորիս և իմոցն ամենայնի տեսանել զինքն՝ զՔրիստոս հայրական փառաւք ի նորոգել զտիեզերս, ամէն:

եղող կարմրագեղ մակագրության՝ որդեն մահացել էր: Մակագրության մեջ գրված է՝ «Ցիշեցէք ի Քրիստոս Շայխուբլուն, եւ զորդի նորին, որ փոխեցաւ առ աստուած» (տես Նկ. 25):

* Այս բառից հետո կարմիր թանաքով ավելացված են մի քանի այլ անուններ, այդ հավելումից հնարավոր է կարդալ այսքանը՝ «Հալիմ-խաթունին և զաւակացն (˚) | | | զարիա-խաթունին, Համ | | | -խաթունին»:

** Շարունակության մեջ, ևս հինգ անգամ, ձանձրալի կրկնաբանությամբ, գրիչը աղաչում է դարձյալ ու դարձյալ հիշել ձեռագրի ստացող Շայխութլուին ու նրա ազգականներին: Վերը չհիշատակված ազգականներից են «դստէքըն իւր զԱւետիսն և զորդին զԱստուածատուրն» (էջ 363 ա):

Այդ ընդարձակ մասը դուրս ենք թողնում:

Քրիստոս աստուած, ի քո յահեղ դատաստանին դասակից արա և պսակակից ընդ սրբոց առաքելոցն և ընդ մարգարէիցն... զաւրինակ տըւողն զՍիոն եպիսկոպոսն, և զծնաւղսն իւր զՊետրոսն և զՇարմէլէքն, և զամենայն արեան մերձաւորքն իւր, ամէն, ամէն։

Արդ, աւարտեցաւ սուրբ աւետարանս ի յերկիրս Ըօրշաունեաց, ի վանքս, որ Բերզաձոր կոչի, ընդ հովանեօ սուրբ Աստուածածնիս, ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս տէր Սիոնի, և Աստուածատուր քահանայի՝ հաւր վանիցս, և այլ եղբարցս, որ աստ են հաւաքեալ, զի յոյժ կամակից եղեն մեզ, զոր Քրիստոս աստուած դասակից արասցէ զոսսա ընդ դասուց հրեշտակացն... ընդ նոսին և զՍարգիս տնտեսն, ամէն։

Ի Թվականիս Հայոց կատարեցաւ ՊՂՋ. (1447)։ Աղաչեմ զձեզ, զի վասն խոշորութեան գրիս անմեղադիր լերուք, զի աչքս [պ]ա[կասե]ալ է ի լուսոյ, զի կայր | | |, և Քրիստոսի | | | զաւրո̄ւ.]Թիւն ե. փառք յաւիտեանս, ամէն.

Բ

20 ա Ցիշեցէք ի Քրիստոս զՇայխուքլուն, և զորդին իւր զՅովսէփ, և զԹոռն զԸօըսատկէս, և զկազմող Գրիգորն, և աստուած-ողորմի ասացէք, և Քրիստոս աստուած ձեզ և մեզ ողորմեսցի, ամէն։

Գ

29 բ Աւգնեա տէր Ցիսուս տկար մատինս և յաջողեա զգործ անյիշելոյս մեղաւորի, ամէն։*

692

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4971

Գրիչ՝ Մարգարէ

ա

256 ա Զտառապողս, զանհամեմատս ի գունդս մեղաւորաց զՄարգարէ** գրիչ, և զհայրն իմ զՅոհանէս, և զմայրն իմ զՈսկի, և զեղբարքն զՅովանէս և զՄխիթար՝ աղաչեմ յիշել ի տէր աստուած, և ասացէք՝ Քրիստոս աստուած ողորմի սոցա, ամէն, ես առաւել [ստացողի գրոցս] Յոհանէս քահանային, և ծնողաց իւրոց, և զաւակացն, և Կաբապետ մահդասոյն, և ամենայն արեան մերձաւորացն իւրոց, ամէն, և լսողաց և կարդացողաց, ամէն։

Բ

99 ա Ցիշեցէք զԹուխթանզ, և զաւակսն իւր՝ զՅովանէսն, զՅովսէփն,

---

* Գրված է Մատթէոս ավետարանչի նկարի ներքևում։

** Նախորդ հիշատակարանի գրիչն է, ուստի և անթվական այս հիշատակարանը տեղադրում ենք նրան աղնթեր՝ 1447-ի թվաշարքում։

զՄարգարիտն և զԳոհարն, և զամենայն արեան մերձաւորքն իւր... ես առաւել զՄոշան՝ զմայրն Թուխթանկի...:*

693

ԾԱՇՈՑ

Փիրղ. Նոտ., էջ 156—157, Սեբաստիոյ ս. Մինաս եկեղեցի

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Դերձկի վանք

...Արդ, գրեցաւ սա ի Թուիս Հայոց ՊՂԶ. (1447), ի դառնաբեր ժամանակիս վասն ծովացեալ մեղաց մերոց, ձեռամբ Մկրտիչ սարկաւագին... ընդ հովանեաւ սուրբ Թէոդորոսի զինաւորին, զոր այժմ Դերձկի կոչի, և այլ բազմահաւաք նշխարաց...։ Եւ Սիմէոն հայրապետի, որ ետ գրել զգիրքս ի վայելումն մաքուր անձին իւրոյ, յիշեցէք զվանիցս միաբանքն՝ զՍիմէոն աբեղայն և զսարկաւագներն և զգործաւորն՝ զՍարգիս պապն։

694

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նոտ., էջ 157, Արապկիրի ս. Աստուածածին եկեղեցի

Գրիչ՝ Հայրապետ
վայր՝ Ծառիկու վանք

...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի Թուականիս Հայոց ՊՂԶ. (1447), ի հայրապետութեան տեառն Կարապետի, և եպիսկոպոսութեան տէր Գրիգորի՝ եղբօրորդի նորին, ի վանս Ծառիկու, ընդ հովանեաւ սուրբ Աննայի, ձեռնատուութեամբ Սիմէոն քահանայի և քուերորդւոյ իւրոյ Կիրակոս դպրի...։ Զգծագրող սորա զՀայրապետ բանին աշակերտեալ, ընդ նմին և զստացող սուրբ աւետարանիս Աւլիմէլիքն, և զծնողսն իւր՝ Ազիզպէկն և Ըռանախաթուն...:

695

ԳԱՆՁԱՐԱՆ

Ն. Ջուղա 463, Մ.Տ.Մ. և Ս.Տ.Մ.

Գրիչ՝ Ներսէս

373 ր ...Գրեցաւ Գանձատետրս ի Թվին Հայոց ՊՂԶ. (1447), յունիս ամսոյ ի ԺԹ. (19), ձեռամբ բազմամեղ, անարուեստ և անիմաստ փծուն գրչի Ներսէս սուտանուն կրօնաւորի ... ի գեաւղս, որ կոչ[ի] Ումբուքիլիսա,** ընդ հովանեաւ սուրբ հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, և սուրբ Եւտոկսայ և հարազատաց որդոց իւր սուրբ Նա-

---

* Այս հիշատակարանը գրված է, անշուշտ, ձեռագրի գրչությունից տասնամյակներ հետո, հավանաբար ԺԵ. դարի վերջերին կամ ԺԶ. դարում։

** Ձեռագրում՝ «Կոչում բուքիլիսայ»։

հատակաց, ի Հաճարկատար սուրբ Աստուածածնին, և սուրբ Գրիգորի Լուսաւորչի, և այլ բազում սրբութեանցս, որ ի յայս սահմանք կան, զոր ոչ գիտեմք յանուանէ կոչել...։

...Ցիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր... զանպիտանացեալ հոգի զՆերսէս սուտ ան[ուն] կարգաւորս, որ անունս կայ և գործս ոչ ունի, այլ և զհոգևոր հայրն մեր և զուսուցիչ զԳրիգոր վարպետն։ Ցիշեցէք ի Քրիստոս աստուած զմարմնաւոր ծրնաւղսն մեր՝ զհայրն իմ զՅեսակարն, և զմայրն իմ զՄարթայ, և զեղբայր իմ զՅոհանէս, և զքոյրն իմ զԹուրվանդայ...:

Այլ և յիշեցէք ի Քրիստոս զսպասաւորս մեր իրիցկինս, որ շատ աշխատեցաւ ի լվանալ, ի կերակրել, ի ծառայութիւն, և զծնողսն իւր և զեղբարքն, և աստուած զձեզ յիշէ։ Այլ և յիշեցէք ի Քրիստոս զԹղթիս կոկաւղքն՝ զԿոստանդ սարկաւագն և որ զԱսիլն(°)...:

Այլ և աւարտեցաւ Գանձտետրս ի կաթողիկոսութեան տեառն տէր Կարապետի և մեր սրբասնեալ առաջելաշնորհ եպիսկոպոս տէր Սիմէոնի:

Այլ և հոգևոր հարք և եղբարք մի մեղադրէք խոշորութեան և սխալանաց գրիս, զկար մեր այս էր, և ի բազում սրաղմանց մէջ կայեաք և խիստ նեղ տեղ։

Այլ և արդ, աղաչեմ յերես անգեալ ղամենեսանգ, ով ոք հանդիպիք տեսանելով կամ կարդալով կամ աւրինակելով, նա յիշեցէք ի տէր և զիս՝ զանարժան գրագիրս և զՆերսէս սուտանուն քահանայս զԵրևանցի, և զծնաւղքն իմ, և զուսուցիչքն՝ զկենդանիքն և զննջեցեալքն։

Այլ և զմխեղէն եղբարքս ի դուռն սուրբ Լուսաւորչին՝ զԱստուածատուր հայրապետն, և զնորաբոյս բողբոջն զԱնանի աբեղան, և զՍտեփաննոս ճաբեղան, և զմիւս Անանիա ճաբեղան, և միաբանքն, զսարկաւագանին և զտնտես, և որ զսպասաւորութիւն կանեն սուրբ տաճարին, նա Քրիստոս աստուած զիւր սուրբ արքայութիւնն մեզ և ձեզ պատրաստէ աստ և ի հանդերձելումն...։

Այլ և զիս զանարժան և զանպիտան զԱնանիա սուտանուն աբեղաս՝ զծաղկաւղս սորին, և զուսուցիչն իմ, և զհոգևոր հայրն զտէր Սիմէոն արի եպիսկոպոս, որ բազում աշխատութեամբ վարժեցուց զիս յարուեստ ծաղկաւղութեան, ով քահանայք, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր, այլ և անմեղադիր լերուք ծաղկիս, զի առաջին ծաղիկս այս էր, ասաս9իք մեզ ողորմի...։

696

ՄԱՍՈՒՆՔ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Երևան 141

Լրացնող և կազմող՝ Աբրահամ

327 բ ...Շնորհիւ և օգնականութեամբ տեառն աստուծոյ մերո ես՝ սուտանունս Աբրահամ աբեղայս ձեռնարկեցի և սակաւ գծով և կազ-

մեցի զմատեանս հին կտակարա[նա]ցս, զոր սկսեալ է նախամարգարէն Մովսէս ի յիսկզբանց արարածոցն տեառն աստուծոյ՝ զարարածս ստեղծանելոյն մինչև ի կատարումն երկրորդ օրէնք, որ է գիրք հինգ փերթ, այսինքն՝ Ա. Ծնունդքն, Բ. Ելքն, Գ. Ղևտականքն, Դ. որ է Թիւքն, Ե. Երկրորդ օրէնք։

Արդ, աղաչեմ զհանդիպողսդ սմա յիշման արժանի առնել զիս՝ ղանարժանս, նայ և հայրն իմ զՅովանէս մղասին, և զամենայն ազգայտոհմս մեր՝ զկենդանիս և զհանգուցեալս, և որ յիշէքդ սրտի մտօք և աստուած-ողորմի ասէք մեզ՝ նոյն ինքն Քրիստոս աստուած ձեզ և մեզ տացէ զիւր անսպառ բարիսն, և նմա փառք յաւ[իտեանս]։

*Ի թվկ. Հայոց. ՊՂԶ. (1447), և ի յամսեան յունիսի Ը. (8)։**

** Աբրահամ աբեղան ձեռագրի միայն լրացնողն ու կազմողն է, իսկ ձեռագիրը հիմնականում գրել է Մխիթար անունով մեկը (հավանաբար Մխիթար Կերմանեցին), ԺԴ. դարում։ Վերջինս թողել է մի երկու հիշատակագրություն, որոնցից ընդարձակը բերում ենք ստորև.*

«Բայց ես նուաստ և թարմատար գրողս Մխիթար սուտանուն երէց զիմ զմոխրակոյտ երեսս ի գետինն եմ դրել և արտասուելով աղաչեմ զտէր և զսուրբ հայրքդ և զեղբարսդ և զորդեակքդ, զի ողորմեսջիքդ մեզ և խնդրէք մեզաց թողութիւն, այսպէս ասելով՝ Քրիստոս աստուած, թող զՄխիթարս գյանցանսն, ամէն» (էջ 158ա)։

301 բ էջի ստորին լուսանցքում, ձեռագրում գործածված թանաքով, բայց, ըստ երևույթին, այլ ձեռքով, գրված է «Գրիգոր Անեցի» անունը։ Անկարող ենք պարզել, թե այդ Անեցին ինչ առնչություն ունի ձեռագրի հետ։

697

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

«Արցախ», էջ 268—269, Մ. Տ. Մ, Գանձակ, Արլաճ գիւղ

Վաճառող՝ Մուրադշայ
վայր՝ Թմոք

Յանուն Յիսուսի Քրիստոսի ես Մուրադշէս *ծախեցի զիմ հայրենի աւետարանս քեզ՝* Խաչատուր *իրիցիդ՝ որդոյ* Յոհանիսի, *ի գաւառէն Եղիշէ առաքելոյն, ի յաթոռոյն* Ջրվշկայ, *վկայութեամբ մեր եպիսկոպոսիս տէր* Թումի *և սպասաւորի սուրբ ուխտին* Հախբաաայ, *և* Թմոքայ *քահանայիցս՝* Մկրտիչ *իրիցոյ և* Առաքել *իրիցոյ, ի թվ. ՊՂԷ. (1448), ի տրէ ամսոյ ի ԻԵ. (25), և աստուած շնորհաւոր առնէ, ամէն։*

698

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 5196

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Արծկէ"

294ր *...Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր՝ քահանայք և ժողովուրդք և լի բերանով և ուղիղ սրտիւ աստուած-ողորմի ասացէք ստացաւղի սորա* Թուրւանդայ-խաթունի, *և առն իւրոյ* Իսրայէլին, *և ծնաւղաց նորին* Առաքելին *և* Մլախին, *և դստերաց նորա* Նարին-խաթունի *և* Բուրսայ-խաթունի, *և* Թուրւանդի *քու[ր]ոջն՝* Սաղդաթ-խաթունի. *և Քրիստոս աստուած, որ առատն է ի տուրս բարեաց՝ տացէ մեզ և նոցա զարքայութիւնն իւր, ամէն։*

295ա *Եւ ես՝ յետինս բանասիրաց և տրուպս կարգաւորաց* Յովանէս *սուտանուն՝ տեսի զփափագ և զսէր, զոր ունէր հետ սուրբ աւետարանիս հոգևոր մայրս մեր* Թուրւանդայ, *և յանձն առեալ սկիզբն արարի սուրբ աւետարանիս ի թվականութեանս մեր Պ. և Ղէ. (1448) ամին, յաւուր չորեքշաբթի՝ յարութեան զատկին։ Որ և ի մեւսաւուրն սուգ տրտմութեան և դառնակսկիծ աղէտ եհաս ինձ և ծերացեալ ծնաւղի իմոյ։ Վասն զի հրաման եհաս յարարչէն փոխիլ առ տէր լերգահատոր եղբաւր իմոյ հարազատ* Ներսէսի՝ *Ի. (20) ամեայ, լի շնորհաւք օարկաւագ, լցեալ աստուածային իմաստութեամբն,*

խոնարհ և հեզ բարուք, քաղցրատես և սիրուն յաչս ամենեցուն, եւս
առաւել արարչին իւրոյ, նման սրբոյն Ստեփանոսի նախասարկաւա-
գին, վասն որոյ ոչ արժան համարեցաւ զայնպիսի պատւական եղ-
295 բ բայր ինձ՝ մեղաւորիս, այլ փոխեաց աստի՝ ի || դառն և ի մեղսա-
սէր աշխարհէս, ուր ինքն կամեցաւ։ Բայց զի Թէպէտ և նորա հան-
գիստ էր և ընդ հրեշտակս ցընծուԹիւն այնպիսի անմեղուԹեամբ
մահն, այլ ծնաւղին իւրոյ և ինձ՝ անչափ տրտմուԹիւն և դառն կըս-
կիծ։ Վասն որոյ յոյժ տրտմուԹեամբ և արտասուալից աչաւք գրեցի
զսուրբ աւետարանս ի հայրապետուԹեան տեառն Գրիգորի ընդհա-
նիւր Հայոց կաԹուղիկոսի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տա-
ճարի և սրբոյն Ստեփանոս կաԹուղիկ[էի]։

Գարձեալ, կրկին [ան]գամ յերես անկեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք
ի բարին Քրիստոս զվերոյասացեալ ստացաւղ աւետարանիս զԹուր-
ւանդայ-խաթունն, և զծնաւղսն իւր զԹաղաչար և զՍաբախ-Մելիք, և
զեղբայրն իւր զՍաղդադին, և զքոյրն զՍաղդաթ։ Եւս առաւել յիշեցէք
ի Քրիստոս զԻսրայիլն, և լի բերանով աստուած-ողորմի ասացէք
296 ա ծնաւղաց նորին Առաքելին և Մլախին, և զաւակաց նորին Նար || ին-
խաթունին և Բուրսայ-խաթունին, և դուք և մեք մասն բարեաց ընկալցուք
ի Քրիստոս աստուծոյ մերոյ, ամէն։

Գարձեալ, աղաչեմ յիշել առ Քրիստոս զմեղուցեալ գրիչ[ս],
և զծնաւղսն իմ զՅակոբ քահանայ և զՍալչուկ-խաթունն, և զեղբայրն
իմ զԳրիգոր՝ սրբասնեալ կրաւնաւոր, և մեղաց Թողութիւն խընդրեցէք,
և Քրիստոս աստուած յիշողացն ողորմեսցի, ամէն։

699

ԳԱՆՁԱՐԱՆ

Փիրդ. Նոտ., էջ 156, Նշխարք (№ 4515), էջ 163, Բաղէշ

Գրիչ՝ Խաչատուր
վայր՝ Վան

... Ի Թուականիս Հայոց ՊՂէ. (1448) գրեցաւ սուրբ Գանձարա-
նըս ի քաղաքիս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոց Պետրոսի և
Պօղոսի, ի հայրապետուԹեան տեառն Ըսստակէսի, և մերոյ առաջնոր-
դիս սուրբ ուխտիս Կարագայ տէր Յովհաննէս եպիսկոպոսի և Մար-
գարայ վարդապետի, ձեռամբ Խաչատուր երիցու...։

Ցիշեցէք ի մաքրափայլ յաղօԹս ձեր զստացող սորա զտէր Աս-
տուածատուրն, որ յանօրինաց նահատակեցաւ, ընդ նմին աստուա-
ծասէր տանուտէրն զԱղազարն, [հայրն] զԳրիգորն, զմայրն Շնահօր,
զկենակիցն Շախփաշայ... որ ետ երկու գրիւ ցորէն և Թափեաց զգան-
ձարանս ի գերուԹենէ, և ետ ի դուռն սուրբ Աստուածածնին, որ է
յԱրարքն՝ անջինջ յիշատակ։

700

ԱՒԵՏԱՐԱՆ

ԼՑՎ 170, սյուն. 400

Ստացող՝ Առաքել

վայր՝ Ուշատւնիք, Բերդաձորի վանք

...[*Գրեցաւ*] *ի յարքունական երկիրս* Ըռըշտունեաց, *ի վանքս, որ* Բերդաձոր *կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի թուականիս Հայոց* ՊՂԷ. *(1448)։ Ես՝* Առաքէլ *աբեղայս ետու գծագրել մեծա*[*ւ*] *փափաքմամբ ի հալալ արդեանց մերոց և ընծայեցի զսա նըւէր սուրբ Ցակոբայ տաճարիս և գերահռչակ կրաւնաստանիս, յիշատակ բարի հոգւոյ իմոյ, և ծնողացն իմոց՝* Խաչատրուն *և* Թանգ-Մելիքին, *և քեռեացն իմոց* Յովհանիսի *և* Թումայի՝ *սրբակրաւն աբեղայիցն, յառաջնորդութեան սուրբ ուխտիս* Սիմէօն *վարդապետին։ Որոց տացէ Քրիստոս պարգև բարի ըստ վաստակոց իւրոց, զի մեծ երախտաւոր է մեզ և տեղոյս։*

701

ԱՒԵՏԱՐԱՆ

«Արարատ», 1905 թ., էջ 731—732, Գիւմուշխանէի ս. Փրկչի վանք

Գրիչ՝ Հայրապետ

... *Սուրբ աւետարանիս եռափափաք սիրով ստացող եղեալ սրբասէր քահանայն* Սիմէօն, *և հանգիպեալ իմոյ նուաստութեանս* Հայրապետ *պիտակ անուն, մոռացեալ զտկարութիւն հոգւոյ իմոյ, վասն աստուածասէր փափաքմանն* Սիմէօն *քահանային*... *սկսայ*... *զի իմոյ ձեռամբս զթուղթն նշայեցի և սկսեցի և գրեցի և ծաղկեցի և կազմեցի այս։ Եւ յիշեսջիք ի Քրիստոս զստացող սուրբ աւետարանիս* զՍիմօն *քահանայն և զամենայն արեան մերձաւորս, նաև զանդրանիկ որդին իւր* Աստուածատուր *քահանայն և* զԿիրակոս *դպիրն, նաև զյոգնամեղ կցողս* Հայրապետ *աշակերտեալ բանի, և զհայրն իմ* զՄաաթէոս *քահանայն, և զամենայն ազգատոհմս իմ, և զուսուցիչս և զամենայն երախտաւորս իմ*...։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊՂԷ. *(1448), ի հայրապետութեան տեառն* Կարապետի, *եպիսկոպոսութեան եղբաւրորդոյն իւրոյ տէր* Գրիգորիսի, *առ ոտս սոցա աւարտեցաւ։ Տէր աստուած պահեսցէ զսոսա ընդ երկայն աւուրս, ընդ հովանեաւ* Մաւիկու[*] *սուրբ Աստուածածնիս, և միաբանից սուրբ ուխտիս՝* Աստուածատուր *կուսակրաւն տրեղային, և* Սիմէօն *քահանային, և* Գրիգոր *տնտեսին, և* Նուրբակի *միայնակեցին, և* Իշխան *միայնակեցին, դեռաբոյս սարկաւագացն՝* Կիրակոսին, *և* Վասիլին, *և* Սիօնին, *և* Կիրակոսին, *և* Սիրեբին, *և* Պապուկին...։

---

* *«Մաւիկու» բառը տպված է «ընդ հովանեաւ»-ից առաջ։*

702

Մ Ա Շ Տ Ո Ց

Սեբաստիոյ ս. Նշան 84, ՀԱ, 1926, սյուն. 338

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Սեբաստիա

424 ա Յիշատակ է ի գուռն սուրբ Աստուածածնին (Սեբաստիոյ), որ կոչի Շուկի ժամ։* Զունի ոք իշխանութիւն մերոց թէ յաւտարաց հանելոյ զսա ի դրանէ սուրբ Աստուածածնին։ Եթէ ոք յանդգնի՝ զընդդիմակն կրեսցէ, իսկ հնազանդեալքն՝ աւրհնին յաստուծոյ և յամենայն սրբոց նորա։ Արդ, գրեցաւ Մաշթոցս այս ձեռամբ Մկրտիչ կրաւնաւորիս, ի թվ. ՊՂԷ. (1448)։

703

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԱՐՏԱՔՆՈՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երուսաղէմ 1584

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Կաֆա

Ի հայրապետութեան տեառն Գրիգորի, յեպիսկոպոսութեան տէր Մաղաքիայի, յաշխարհս Հոռմոց, ի Կաֆա, առ ոտս սուրբ Մինասայ արագահասին, ձեռամբ Յովհաննէս կրօնաւորի։**

---

* Շուկի (Շուկայի) ժամի (եկեղեցու) անդը պարզվում է ձեռագրի հետագա ստացողներից Մահտեսի Տանիկի 1558 թվականին շարագրած հիշատակագրությունից, ուր գրված է «ի գուռն սուրբ Աստուածածնի, որ կոչի Սեբաստիոյ քաղաքի Շուկի ժամ»։

** Գ. Սրվանձտյանի «Թորոս Աղբար» Բ. հատորից (էջ 387) տեղեկություն ենք ստանում նաև մի Մաշտոցի մասին՝ «գրեալ ի Զմռնիածագ. ի վանքն Կարմիր, յամի ՊՂԷ. (1448)», իսկ Մկրտիչ Արծրունյանի «Ստորագրութիւն Երուսաղէմի» աշխատության մեջ (էջ 319—320) հրատարակված է 1448 թվականից կազմողի մի հիշատակագրություն. «Կազմեցաւ Ցայսմաւուրքս Լեռնակողման վանացն սուրբ Յովհաննէս Մկրտչի, ձեռամբ Յովհաննէս աբեղայի, ի թիւ Հայոց ՊՂԷ. (1448)»։

704

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

*Երևան 2379 (Ա), 2748 (Բ), 9004 (Գ)**

Յիշատակարան գրոցս պատմագրաբար, զոր շինեալ է քաջ քարտուղարն, առաքելական եպիսկոպոսն և աստուածաբան վարդապետն տէր Աստուածատուր՝ քուերորդի բաբունապետին Յակոբայ Ովսանանց:

Փառք ամենասուրբ երրորդութեանն հաւր և որդոյ և սուրբ հոգոյն։

Ամենեցուն ճարտարապետն աստուած յառաջ քան զլինելն ժամանակաց ընդրեաց ի մարդկանէ զորս ինքն կամեցաւ, և յիւրաքանչիւր ժամանակի նոյն և մի հոգի աստուծոյ յայտնէ ներգործութեամբ զնիւթս պատշաճաւոր և տնօրինէ նախագիտութեամբ նահապետս և մարգարէս, հովիւս և հովւապետս, տեսուչս և վերակացուս, իշխան և դատաւոր. և յարաձգականս յաւիտենիւ ոչ դադարէ ի ներգործելոյ, որպէս ասաց ճշմարտութիւնն, թէ՝ Ես ընդ ձեզ եմ մինչ ի կատարած աշխարհի։ Ըստ այսմ սարասի ի վախճան ժամանակի և ի կէտ սուզական, որ ամենայն ծաղիկ թառամեալ էր և ամենայն տերև ցամաքեալ, յայտնեաց մեզ աստուած ծաղիկ անթառամ, որոյ անուշահոտութիւնն ելից զտիեզերս ամենայն՝ զտէրն տիեզերալոյր՝ զտէր Մկրտիչն *մականուն* Նաղաշ *կոչեցեալ, որ և եղև երկրորդ լուսաւորիչ ամենայն* Միջագետաց *և պարծանք պարծանաց ամենայն քրիստոնէից.*

Եւ էր սա բնական ի նահանկէն Բաղիշու, *ի* Պոռ *կոչեցեալ գեղջէն, որդի մեծատան և աստուածարեալ քահանայի* Առաքելոյ *և մաւր բարէպաշտի։ Էին և սմա եղբարք երկու՝* Յովաննէս *քահանայ, որ*

---

1 Բ. «պատմագրական» 3 Ա. «Ովսաննա», Բ. «Ովսանց» 7 Բ. «և ի» 13 Ա. Գ. «յաշխարհիս» 18 Բ. «պարծանաց» չիք 20 Բ. Գ .«գեղջէ»

** Այս հիշատակարանը, որի մեջ շարադրված է ԺԵ. դարի նշանավոր բանաստեղծ Մկրտիչ Նաղաշի ընդարձակ կենսագրությունը՝ բնագրով մեզ չի հասել, այլ պահպանվել է հետագա ընդօրինակությունների։ Մատենադարանի ձեռագրերից այդ հիշատակարան-կենսագրականն ունեն հետևյալ ժողովածուները՝*

Ա.—№ 2379, էջ 244 ա—262 բ (ԺԷ. դար)

Բ.—№ 2748, էջ 354 բ—357 բ (1624 թ.)

Գ.—№ 9004, էջ 1 ա—5 բ (1678 թ.)։

Բնագիրը կազմելիս օգտագործել ենք այդ ձեռագրերը՝ առաջնություն տալով № 2379 (Ա) ձեռագրի բնագրին, որն ամենալրիվն է։

Կենսագրականը, միայն մի ձեռագրի (№ 9004) հիման վրա, հրատարակել է Կ. Կոստանյանցը՝ «Արարատ» ամսագրի 1898 թ. հունվարյան համարում (էջ 23, 44—48)։

տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս և միւսն՝ Աբգար անուն, որ եղև երևելի, մեծ և փառաւոր և պատուեալ յամենեցունց, որ և զտուն հաւր իւրոյ առաւել քան զառաջինն բարեկարգեաց՝ երկրորդ հայր Աբրահամ լեալ՝ կերակրելով զրաղումս։ Եւ բազմերջանիկս տէր Մկրտիչս ի տղայութենէ սիրէր զվարս կրօնաւորական՝ սիրէր զկրաւնաւորս և զվանականս, և սիրող լեալ արուեստից և ուսման և հանապազ նմին հետևէր։ Եւ էր տուեալ նմա շնորհք ի վերուստ, մինչ զի զամենայն դիւրաւ ուսանէր և զամենայն դժուարին արուեստ միանգամ տեսանելով նա գերագոյն քան զօրինակն ներգործէր։ Եւ զուսումն աստուածաշունչ գրոց, զոր ինչ սա ի միում ժամու, այլ ոք զաւուրս Ժ. (10), բազում աշխատութեամբ ոչ կարէին ի միտ առնուլ, և ամենեցուն հիանալի էր ի վեր քան զտեսութիւն մտաց, մինչ գրեթէ ոչ ոք երևեցաւ յայսմ ժամանակի այսպիսի տիրական շնորհի. զարդարեալ՝ առաքելաշնորհ և աստուածուսոյց։ Մինչ հընգետասան գոլով ամաց եղև կատարեալ ուսմամբ և արուեստիւ, իմաստութեամբ և վարդապետութեամբ, քաջ քարտուղար, անհամեմատ նկարիչ և ամենայն արհեստից ճարտարապետ, մինչ զի զամենայն արուեստ, զոր ինչ և կամէր, կարողութեամբն աստուծոյ անսղալ առնէր, մինչ զի հռչակեցաւ համբաւ շնորհաց նորայ և իմաստութեան ընդ ամենայն երկիր։

Եւ զի ոչ ունէր սէր աշխարհի, բռնադատեալ եղև ի ծնողացն, եմուտ ի կարգ աշխարհի, ոչ փոխելով զբարս իւր, այլ հանապազ ընդ կրաւնաւորս լինէր։ Եւ զի նախագիտութիւնն աստուծոյ տնաւրինեալ էր զսա լինել փեսայ երկնաւոր հարսին՝ եկեղեցոյն Միջագետաց, զի սովաւ ուրախանալոց էր հարսն Քրիստոսի, և ցնծալով մանկանց Սիոնի, և բարձրանալ խաչին Քրիստոսի, և ուրախանալ սովաւ տարտամ և տխուր ազգս հայկազեան, որ եղև իսկ։ Զի մին որդի ծնանելով եղև մեռանել ամուսնոյն իւրոյ, զոր և ինքն զնոյն խնդրէր յաստուծոյ՝ ազատ լինել։ Եւ առաջնորդութեամբ աստուած սուրբ հոգւոյն ելեալ ի բնական նահանգէն, եկեալ բնակի յեևելի և յականաւոր ապաստանի՝ ի քաղաքն յԱմիթ շահաստան։ Եւ ողորմութիւն տեառն էր ընդ նմայ, և յաջողեալ էր ի գործս սորա, զի յամենայնի հոգին աստուած էր թելադիր և գործակից սմա։ Զի յորէ յօրմէ հետէ եմուտ սա ի Միջագետս՝ շարժեաց հոգին աստուած զսիրտ ամենայն մարդոյ ի սիրել զսա և զամենեցուն լեզու՝ գովել և բարեբանել և բարեհամբաւել։

Եւ երաց սմա աստուած զդուռն ողորմութեան, զի ամենայն ոք, որ տեսանէր զսա՝ կամէր և զհոգին ևս տալ յաւժարութեամբ և զուարթութեամբ և առատ սրտիւ. եւ ոչ եթէ միայն յազգս քրիստո-

---

Ա. «հասակօ» 5—6 Բ. «սիրէր զկրաւնաւորս» չիք 16 Բ. Գ. «նկարօղ» 17 Բ. «և» չիք 19 Բ. Գ. «սորա» Բ. «և իմաստութեան» չիք 20. Գ. «զսէր» 22—23 Բ. «զիտէր» փխ. «տնաւրինեալ էր» 27 Բ. «ծնաւ» Ի. «կնոջն» 28 Բ. «աստուած» չիք 29 Բ. «երկրէն» 30 Ա. «և յապաստանի» 30 Բ. «ի մայրաքաղաքն՝ յԱմիթ շահաստանի» 31 Ի. «ի գործս սորա, զի յօրէն...» 39 Գ. «ազգս»։

նէից, այլև Թուրք, և Թաթ, և Թաթար, և Քուրթ, և Արապ, և Ջհուտ, և ամենայն ազինք, ընդ տեսանելն զպատիւ և զպարգևս պատրաստէին՝ ձիս և ջորիս և խլայս մեծագինս՝ անասելի և անպատմելի։ Եւ ոչ եթէ միայն իւր դէմն և յիւր վիճակն, այլ և յամենայն աշխարհաց գային՝ յԱրևելից և յԱրևմտից, և պարգևատու լինէին և պարգևս բերէին ոսկի, արծաթ, ականս պատուականս, կտաւս մեծագինս, մինչ զի բազում ոմանք Ռ. (1000) և ԲՌ. (2000) թանկայ պարգևս բերէին։ Զի տարածեցաւ համբաւ սորայ ընդ ամենայն աշխարհս, մինչև եհաս առ թագաւորն Պարսից և առ տէրն Եգիպտոսի, և չանց զՄեծ ծովն՝ մինչև ի պապն Հռոմայ և ի Կոստանդնուպոլիս, մինչ զի վարշամակս ոսկեթելս և մեծագին պարգևս առաքէին։

Եւ ես առաւել սիրեցեալ եղև ի յաչս պտրոնաց պարոնին շահ Ուզուն-Հասանին, որ տիրէր ի Խորասանայ մինչև ի ծովն Պոնտոսի, որ է Տրապիզոնն: Զի այնպէս քաղցրացոյց աստուած զսիրտ բռնաւորին ընդդէմ սմայ, զի զամենայն քրիստոնեայք, որ ընդ իւրոյ իշխանութեանն էր՝ ետ ի ձեռն սորայ և մեծապէս պարգևաւք և տրօք մեծարեաց և փառաւորեաց թագաւորական սգեստիւք և արքունական երիվարուք, մինչ զի զոր զգեցեալն էր արքայն՝ զայն զգեցուցանէր. և զսէրն զոր սիրէր և զպտրգևսն ոչ ոք կարէ ընդ գրով արկանել, մինչ գրեթէ և ոչ ոք ի մարդկանէ՝ ի թագաւորացն քրիստոնէիցն այսպիսի պարգևաւք ճոխացոյց զոք ի հայրապետաց սրբոց։ Եւ զչափ սիրոյն ի պարգեացն գիտացիր, զի յարաժամ հազար և ԲՌ. (2000) թանկայ ի պարգևս տայր։ Եւ ի գնալն առ նա՝ ընդ առաջ ելանէր, և համբուրէր, և ի վերայ իւրոյ թագաւորական խալիչային նստուցանէր, և զբան սորայ ընդունէր իբրև զծառայի աստուծոյ, զի սիրող էր բանին։ Զի հրաման տայր բերել յիւրոց առաջնորդացն և զգիշերն ի բուն տայր խաւսել յաստուածաշունչ գրոց։ Եւ սա աստուածատուր շնորհաւքն և աստուածուսոյց վարդապետութեամբն զամենեսեան յամաւթ առնէր, և զթագաւորն հաւանացուցանէր և առնէր պարգևս ի թագաւորէն և աւրըստօրէ աստուած զսա ի բանս իւր զաւրացուցանէր և հոգի աստուծոյ էր ի վերայ սորա։

Եւ յետ յՈւզուն-Հասանին, սուլթան Համզա, զոր ինչ ականատես եղև հօրէն իւրմէ, այլ առաւել պատուով ընդունեցաւ զսա՝ հայր ինքեան աւանդելով փոխանակ հօր իւրոյ։ Եւ մեծաւ պատուով փառաւորէր զսա քան զամենայն մեծամեծս իւր։ մինչ բազմաց ասել թէ և ինքն քրիստոնեայ է, զի այս չափ սիրէր և պատուէր զեպիսկոպոսն։

---

1 Գ. «քուրդ» 2 Ա. «զպատիւ» չիք 3 Գ. «խիլայս» 4 Բ. Գ. «յիւր», Բ. «թէմն» 11 Ա. «ոսկեթել» Ա. Գ. «առաքէին» բառից հետո ունեն՝ «աւրհնեալ է աստուած». 12 Բ. Գ. «Եւ» չիք 13 Ա. «չառանայ» 16 Բ. «էր» չիք 17 Բ. Գ. «զգեստիւք» 18 Բ. Գ. «զնոյն» 23 Ա. «յառաջ» 26 Գ. «քանզի» 27—28 Բ. «շնորհիւն» 29—30 Բ. «ի նմանէ» փխ. «ի թագաւորէն» Ա. «զաւրացուցանէ», Բ. Գ. «զօրացուցանէր զսա ի բանս իւր» 32 Բ. Գ. «Օթման-պէկին փառաւոր սուլթանն որդի նմին սուլթան Համզայ (Գ. Համզայն)» 33 Գ. «զսա» չիք 36 Բ. Գ. «սիրէ և պատուէ» 36—37 Բ. «զհայրապետն»։

Եւ ձեռնագրեցաւ սա յաստիճան եպիսկոպոսութեան ի տէր Կոստանդեայ կաթուղիկոսէ Վահկեցոյ, որ էր ի մեծ թուականիս Հայոց ՊՀԹ. (1430)։ Մեծարեաց զսա և կաթուղիկոսն զանազան պատուով և պարգևաւք, և հաստատեաց արքեպիսկոպոս ի վերայ ԻԴ. (24) գաւառանի։ Եւ ամենեքեան սիրով հնազանդեցան և ընկալան զսա իբրև զառաքեալ աստուծոյ, և եղև բանս սորա արդիւնաւոր ընդ ամենայն երկիր։ Եւ եղև յաւուրս սորայ ցնծայրին եկեղեցիք Հայաստանեաց, և բարձրանայր եղջիւր քահանայից, և պայծառանայր հաւատս քրիստոսական, և ուրախանային ամենայն հաւատացեալք։ Զի յայտնեցաւ հովիւ քաջ և արժանաժառանգ վիճակին պայազատ, որ գիտէ հովուել զբանաւոր գառինքն յարօտ անմահտրար և ի ջուր կենդանի՝ բազմադիմի և յորդառատ վտակաւք, որ տուեալ է սմայ առատապէս ի շնորհացն հոգոյն։

Զի աւրէն [է] պատմագրաց յաւելեալ ի ճառս գովեստից, այլ մեք զնոյն շարագրեցաք, զոր ականատես եղաք և յայտնի է ամենայն երկիր տեսողաց, այլ մի ըստ միոջէ գրել ձանձրութիւն է լսողաց, այլ համարեա՝ թէ զամենայն տեսակ աստուածային շնորհաց։ զոր յամենայն մարդիկ՝ ի սա միայն տեսանիւր լի և անթերի՝ ընկերասէր, աւտարասէր, աղքատասէր, խաղաղարար, խոնարհ և համբերող, ողորմած, առատասիրտ, մեծապարգև, զի յայսմ ժամանակի ոչ ոք էառ իբրև զսա և ոչ երեւ իբրև զսա, որպէս ասաց տէրն՝ Զրի առէք և ձրի տուք։

Զի սա միայն գտաւ արկանել զքանքարն ի սեղանաւորս և բազում բարեաց պատճառ եղև կարողութեամբն աստուծոյ։ Նախ, զի եկեղեցիս խախտեալ ոչ ոք իշխէր քար մի ամրացուցանել, և սա զամենայն եկեղեցիս խախտեալ և զհնացեալ և զհողաշէնս՝ նոր նորոգեաց կամարակապ և գմբեթաձև, և բազում նորաշէնս, որպէս զբարձր Աստուածածինն՝ ի գլուխ բարձր բերդին Արղնոյ։

Եւ երկրորդ, զի յաւելեաց յեկեղեցիս բազում շուրջառ մեծագին, գիրք, աւետարան, և սկիհ պատուական և զարմանալի, և հանապազ զնոյն բանս հոգայր։

Երրորդ, զի ոչ իշխէին համարձակ պաշտել յեկեղեցիս. և յաւուրս սորա համարձակ պաշտէին. առաւել պաշտէին քան յանապատս և ի վանորայս։

Չորրորդ, զի հալածէին զքահանայս և հարկապահանջութեամբ տանջէին առաւել քան զաշխարհականս. և սա, կարողութեամբն աստուծոյ, զամենեսեան ազատ արար ի թագաւորական հարկէն։

Հինգերորդ, զի եկեղեցիք Միջագետաց ի ներքոյ դիմոսական հարկի կային, և եպիսկոպոսք՝ մաքսապետք, զի զամենայն, զոր ինչ

---

1 Բ. «արքեպիսկոպոսութեան» 6 Բ. Գ. «րան» 7 Գ. «Եւ յաւուրս սորա ցնծային եկեղեցիք», Ա. Բ. «ցնծայր» 12—13 Բ. Գ. «շնորհաց» 16 Բ. «երկրի» փխ. «երկիր տեսողաց» 18 Գ. «մարդիկք», Բ. «մարդիկն» 19 Ա. «խաղաղերար», Բ չիք 20 Գ. «և առատասիրտ», 21 Բ. «առ» 25 Բ. «յեկեղեցիս» 29—30 Գ. «շուրջառս մեծագինս» 30 Գ. «սկիհն» 33 Բ. Գ. «քան զոր» 36—37 Բ. Գ. «Քրիստոսի» փխ. «աստուծոյ» 39 Ա. «հարկէ», Բ. «հարկին»։

առնուին ի քրիստոնէից՝ ի մաքս տային, և ոչ կտրէին մէկ հաց տալ աստուծոյ կամ աղքատի, և սա, զաւրութեամբն Քրիստոսի, եբարձ զմաքսն յեկեղեցեաց և ինքն ևս առնոյր ի պարոնացն Ժ. (10) և Ի. (20) հազարով և բաշխէր եկեղեցեաց, աղքատաց և կարաւտելոց։

Վեցերորդ, զի վասն սորա ազգ կարգաւորաց առաւել սիրեցեալ եղեն ի պարոնաց քան զառաջնորդս իւրեանց։

Եւթներորդ, զի ոչ ոք իշխէր փիլոնով կամ վեղարով շրջել. և յաւուրս սորա յամենայն ուրեք համարձակ զգենուին և քահանայական կարգաւք շրջէին՝ երևելի փառաւք։

Ութերորդ, զի անուամբ սորա բազմաց ազատութիւն լինէր ի դատաստանաց և ի տուգանաց և ի բռնաւորաց, մինչ զի ի ճանապարհի ըմբռնէին զբազումս. և յորժամ ասէին, թէ մենք տէր Նաղաշի մարդն ենք՝ ազատ առնէին։

Իններորդ, զի բազում գերիս ազատեաց յանօրինաց, զորս գնելով, և զորս խնդրեաց ի պարոնաց, և զորս յափշտակելով ի ճանապարհին։ Առաքէր ի ծառայից իւրոց արս զօրեղս և սրտապինդս, և խլէին զգերիս յանաւրինաց և բերէին ի Նորաշէն վանս իւր ապաստանի՝ ի բարձր Աստուածածինն, պահելով ժամանակս ինչ, մինչև գային տեարք ծառայիցն, և տայր նոցա հանդերձս և նաֆաղայս, և ուղևորէր ի տեղիս իւրեանց։

Տասներորդ, զի զամենեցուն պակասութիւնն և զնեղութիւնն և զվիշտն՝ ինքեան համարէր. և ամենեցուն աւգնական լինէր՝ կերակրով, պարգևս տալով, և կարեկից լինելով, և մխիթարելով բանիւք և արդեամբք։

Մետասաներորդ, զի դրունք եկեղեցոյ հանապազ փակեալ կային և ոչ գոյր յեպիսկոպոսարանն սեղանատեղ, և սա, կարողութեամբն Քրիստոսի; այսպիսի սեղանատեղ սահմանեաց, մինչ զի յամենայն ազգաց գային՝ ուտէին, ըմպէին և առեալ տանէին անխնայ և անարգել՝ առատապէս, մինչ զի պարոնայք զարմանային, թէ ուստի՞ կարէ պատրաստել ինչ, որ բաւական լիցի այսչափ ուտելոյ, տանելոյ և պարգևելոյ, ոմն ասելով թէ քէմիայ ունի,* բազումք ասէին թէ գանձ է գտեալ. և փող մի չունէր, այլ շնորհիւն աստուածոյ գայր նմա գանձ անպարապելի, որ յամէն աւր Ճ. (100) թանկայ և ԲՃ. (200) մուսխ էր նորա, սակայն Ծ. (50) և Կ. (60) [թանկայ] լինէր ամէնն ի շինումն սուրբ կաթուղիկէին սրբոյն Թորոսի, քեզ օրինակ, որ բանակն Մովսէսի յաբիկունն դատարկ լինէր ի մանանայէն և ի լուսա-

2 Բ. Գ. «աստուծոյ տալ», Բ. Գ. «աստուծոյ» փխ. «Քրիստոսի» 7 Ա. «վիզարով» 11 Ա. «ի գանաւորաց» (°) 11—12 Ա. «ճանապարհի» 12 Ա. «Նզաշի» 13 Բ. «մարդիկ եմք» 14 Ա. «անօրինաց» 10 Ա. Բ. «զօրեղ և սրտապինդ» 19 Բ. «տային» 20 Ա. «ուղաւորէր» 21 Բ. «պակասութիւն և զնեղութիւն» 22 Գ. «յինքեան» 23 ԱԲ. «բանիւ» 25 Գ. «եկեղեցեաց» 27 Բ. «սեղան» 28 Բ. Գ. «ըմպէին» 34 Ա. «մուսհ», իմա «ծախս» Բ. «մուտն» 34 Ա. «ամէն», Բ. «և տայր» փխ. «ամէնն» 35 Գ. «Թէոդորոսի» 36 Ա. «դարտակ» Ա. «ի մանայէն» Ա. Գ. «և» չիք

* Այսինքն՝ ձեռք է ձգել քիմիա քարը, որի օգնությամբ, հավատում էին, թե հնարավոր է անազնիվ մետաղներից ոսկի և արծաթ ստանալ։

նալ առաւօտուն լին էր ամենայն բարութեամբ, նոյնպէս և աստուած լցուցանէր զաէրս մեր հոգևոր ամենայն բարութեամբ, զի քան զմեծամեծ թագաւորս առաւելի բաշխէր ձիս, ջորիս, հանդերձս, ոսկի, արծաթ, ցորեան՝ մեծատուր պարգևաւք։ Եւ որքան առաւել բաշխէր՝ առաւել տայր նմա Քրիստոս՝ նա, որ ասաց՝ Տուք և տացի ձեզ, և սա ճշմարիտ հաւատայր, զի անսուտ է խոստումն, վասն որոյ առնոյր ըստ հաւատոյն։

Երկոտասաներորդ, զի յայսմ ժամանակի սա միայն կատարեաց զհրաման տեառն իւրոյ, որ ասաց՝ Բարի արարէք ատելեաց ձերոց, և սա զամենայն ժամանակս կենաց իւրոց սիրեաց զթշնամիսն և բարի արար ատելեաց, և ամենայն չարի փոխարէն՝ բարի հատուցանէր, վասն որոյ արդարադատն աստուած զամենայն թշնամի սորին անդընդասոյզ կորոյս։

Երեքտասաներորդ, զի յաւուրս սորա եղև աւգտութիւն մեզ, զի զմեռեալս քրիստոնէից ի քարշ տանէին Հայք, և Ասորիք, և Նեստորականք, և Ջհուտք. և թէ ՃՌ.(100,000) դեկան տային՝ ճարակ չկայր. և ի գալն նորա, ընթացեալ մօտ ի սուլթանն, և ընդ բազում պարգևացն, զոր ընկալաւ՝ խնդրեաց ե զայն, և առեալ հրաման բարձրացուցանել զմեռեալս քրիստոնէից, և այս սովորութիւն եղև։

Դարձեալ, ի ՊՁ. (1431) թուին Նստի յաթոռ հայրապետական ի յԱմիթ շահաստանի; և ի [Պ]ՁԲ. (1433) թուին շինէ զբարձր Աստուածածինն ի յԱրղնու բերդն, ի ՊՁԸ. (1439) թուին սկսանի վերանորոգել զամենագով և զամենահրաշն զամենեցուն զարմանալին՝ զհրաշափառ Կաթուղիկէն, որ յԱմիթ շահաստանի, յանուն սրբոյն Թէոդորոսի գինաւորին։ Եւ թէ որչափ աշխատանք կրեաց ի նմա անասելի, մինչ գրեթէ հողանիւթ մարմին ոչ կարէր տանել այնպիսի երկարախոնջ, ցայգացանկ և գիշերատանջ չարչարանաց, որ իբրև զկենդանի նահատակ զԴ. (4) ամ մարտիրոսական արիւն եհեղ ի շինումն սուրբ եկեղեցոյն և աւարտեալ կատարեաց գմբեթայարկ յօրինուածով, անասելի և անպատմելի գեղեցկութեամբ, զի գլուխ գմբեթին բարձր էր քան զմնարայիցն և Ը. ու Ժ. (18) անկիւնիւ ճոխացեալ, և Ը. ու Ժ. (18) լուսամուտս ի գմբեթին, և բարձրութիւն լուսամտին՝ ի չափ մարդոյ, և ով ոք կարէ ընդ գրով արկանել զզանազան յաւրինուածս գմբեթին վայելչութեան։

Զոր տեսեալ քրիստոսատեաց ազգն մահմետականք, և ի խոր խոցեցան, և ձայն ետուն միմեանց որդիքն հագարայ, և հոչակ հարեալ համբաւեցին և ամբաստան եղեն առ սուլտանն Եգիպտոսի, և առ թագաւորն Պարսից, և առ սուլթանն Հոռոմաց տանն, եթէ այսպիսի դեղեցիկ յօրինուածով բարձրացաւ եղեղեցին քրիստոնէից։ Զոր

---

3 Բ. Գ. «աւելի» 8 Ա. «սա» չիք 9 Ա. «իւր» չիք 11 Գ. «ատելեաց իւրոց», Ա. «մտացուցանէր» 13 Բ. «արար» փխ «կորոյս» 14 Բ. «դիւրութիւն» 15 Բ. «քարշէին» 16 Գ. «Ջահուկք» փխ. «Ջհուտք», Բ. «ճար» 22 Գ. «յԱրղնւոյ» 25 Ա. «յորչափ», Բ. «աշխատանս», Բ. «ի նմանէ» 29 Բ. «շինուածով», 29—30 Ա. Բ. «անաանելի» 31 Բ. «զմնիրայիցն», Գ. «անկիւնով», Գ. «ութուժ.» (18) 32, Ա. «լուսնամուտս» 36 Գ. «Զոր տեսեալ և ի խոր խոցեցան»։

լուեալ նոցա վառեցան չար նախանձու և իսկոյն իսկ դեսպան և հրովարտակս առաքեցին առ սուլթան Համզէն՝ քակել զամենագով սուրբ Կաթուղիկէն։ Եւ անտանելի սուգ հասաւ Հայոց ազգին, և ամենեքեան ի խոր խոցեցան, և յամենայն աչաց աղիողորմ արտասուս հեղոյր։ Եւ ետուն կաշառս գանձս բազումս, և ոչ կարացին ազատել, զի զամենահրաշ և զամենագով գհրաշալի զմբէթն քակեցին հաւասար աեններացն, և ամենայն քրիստոնեայք ի սուգ մտին։ Ո՜հ, ո՜հ, ո՜հ, ո՞վ կարէ պատմել զանտանելի սուգն և զաղիողորմ կսկիծն, զձայնս հառաչանաց և զողբս տարակուսանացն, և զկականաւոր աղաղակն, և զաղետալի մորմոքումն, զի ամենայն սիրտ ի տրտմութեան էր և ամենայն աչք յարտասուս, ամենայն բերան յաղաղակ և ամենայն լեզու յաւաղումն։ Եւ առաւել ևս արի այցելուն և քաջ հովուապետն տէր Մկրտիչ՝ շինօղ սուրբ Կաթուղիկէին։ Եւ ի սաստիկ խոցոյն և ի դառն կսկծանացն տարաշխարհիկ եղև, և գնացեալ էանց ի ծովն Պոնտոսի և եհաս ի Կաֆայ և յՍտամպօլ, և զցայգ և զցերեկ խոցեալ սըրտիւ առ աստուած աղաղակէր՝ այցելու լինել սուրբ Կաթուղիկէին յառաջ քան զելանելն ի մարմնոյն, զի մի մտցէ խոցով ի գերեզմանն։

Այլ ողորմածն աստուած՝ այն, որ կատարիչն է խնդրուածոց և լսող աղօթից, տեսեալ զջերմեռանդ սէր նորա, որ առ աստուած և առ սուրբ Կաթուղիկէն, և լուաւ աստուած աղաչանաց նմին և կատարեաց աստուած զխնդրուածս նորա։ Սատակեաց աստուած զայնոսիկ, որք քակեցին զգմբեթն և յարոյց այլ թագաւոր Միջագետաց՝ զՋհանգիր իմիրզայն։ Եւ տեսչութեամբն աստուծոյ նա խնդիր արար, և գիր և դեսպան առաքեաց Ջհանգիրն, և ամենայն մեծամեծքն, և զատէստանն, և տանուտերարքն քրիստոնէից, և ամենայն քահանայքն՝ ժողովրդովք միաբան գիր գրեցին հետ պարոնաց թղթին՝ Բ. (2) և Գ. (3) անգամ, և մեծաւ ջանիւ առաքեցին ի Կաֆայն, և բերին զամենեցուն զտենչալին զարհիական գլուխն զտէր Մկրտիչն՝ մեծաւ պատուով։ Եւ միաբան ընդ առաջ ելին Բ. աւուր ճանապարհ, և ընկալան մեծաւ պատուով՝ ուրախութեամբ և ցնծութեամբ, զի յօրէն, յորմէ* հետէ ելեալ էր սա ի Միջագետաց՝ ամենայն եկեղեցիք ի տրտմութեան կային, որպէս զմայր որգեմեռ ի տարակուսանս կային, և ամենայն քրիստոնեայք ի տրտմութեան։ Վասն որոյ ի գալն սորա ցնծացան ամենայն քրիստոնեայք, և բերկրեցան ամենայն եկեղեցիք, և զուարճացան մանկունք Սիոնի։ Եւ սա՝ արիացեալ ի հոգոյն սրբոյ և առեալ հրաման ի պարոնէն և ԳՌ. (3000) թանկայ պարոնացն ետ և մեծամեծացն, և վերստին նորոգեաց, շնորհօքն Քրիստոսի և ողորմութեամբ նմին։

3 Գ. «հասեալ ազգին Հայոց», Բ. «ազգիս Հայոց» 4 Ա. «յաչաց» 4—5 Գ. «հեղուին» 6 Բ. «կմբէթ» 7 Գ. «ամենեքեան» 8 Ա. Գ. «զձայն» 9 Ա. «հառաչաց» 14 Ա. «կսկծանաց» 15 Բ. «Կաֆայն» 18 Բ. «գերեզման» 22 Բ. «որ» 25 Բ. «զատաւորքն» փխ. «զատէստանն» 27 Բ. Գ. «գիր» չիք 35 Ա. Բ. «քրիստոնեայքն» 37 Ա. Բ. «մեծամեծացն ետ», Բ. «ետ» չիք, 39 Բ. «նորին»։

* Սույն էջի 13-րդ տողի «Մկրտիչ» բառից սկսած մինչ այստեղ՝ բացակայում է Ա. ձեռագրից՝ մի թերթի կորուստի պատճառով։

Եւ բնակիչք քաղաքին՝ քահանայք և ժողովուրդք, միաբան աւգնական եղեն՝ աշխատելով, դրամ տալով, կերակուր բերելով, մշակ տալով, աղքատք և մեծատունք միամիտ քաջութեամբ և բոլոր հաւատով ջանացին, և ի Ժ. (10) աւրն կատարեցին զղուպայն ի շինելոյ։

Եւ առաջիկայք ժողովրդեանն և երեւելի տանուտէրք էին՝ Շանրմանն Թիլկուրանցի, և ոսկերիչ Սատաղէն, որ էր երեսփոխան և հրամանատար, և Ալեքսիանոս ոսկերիչ, և Յերկեն Դանիէլն, Աբրահամն, և Սիմէոն դարբինն, որ ինքեանք տային ինչս բազումս և կերակուրս։ և զամենեսեան յորդորէին ի գործառութիւն սուրբ Կաթուղիկէին։ Եւ կատարեցաւ սուրբ Կաթուղիկէն ի ՊՂԶ. (1447) թուին, յաւգոստոս ամսոյ ի Զ. (6), յաւուր երկուշաբթի, ձեռամբ վարպետ Նեքամատին:

Եւ յորժամ ետես արհիական գլուխն եկեղեցոյ և աստուածաբան վարդապետն տէր Մկրտիչ զսուրբ Կաթուղիկէն կատարեալ՝ մեծաւ ուրախութեամբ զոհացաւ զաստուծոյ, և մոխրաթաւալ երեսաւք աւրհնէր զամենազաւրն աստուած, և ցնծայր և պարէր ի գաւիթս եկեղեցոյ, որպէս երկնաւոր փեսայ ի մաքուր առագաստին, և զարդարեաց զեկեղեցին ամենայն կահիւք և զարդիւք։ Եւ բերեալ ի Տրապիզոնու զմեծ սկիհն՝ զանազան յաւրինուածով, ոսկեզօծ և յոյժ պատուական, որ ոչ ուրեք գտանի այնպիսի փառաւոր սկիհ փարթամ և գերաշխարհիկ՝ Ճ. և Ձ. (180) մաղալ քուլիճայ արծաթ՝ ոսկեղած ե մինաքարի։ Եւ ի Կաֆայն գնացեալ ե ինքն շինեալ նորաձև նաշխ խաչաձև, ետ գործել շուրջառս մեծագինս բազմախաչեան։ Եւ զհրաշալի և զչքնաղազարդ զպատուական սուրբ Նշանն Քրիստոսի բերեալ ի Կաֆայէն, որ ունի մասն ի խաչափայտէն Քրիստոսի և բուն սուրբ Նշանին՝ ի լուսափայլ ականց, և ի սիրտս խաչին՝ զՔրիստոս բևեռեալ յոսկոյ ձուլածոյ։

Եւ թէ ուստի՞ իցէ հրաշալիս այս՝ պատուական սուրբ Նշանս. զսա պապն Հռոմայ պարգևեաց մեծ վարդապետին Սարգսի Կաֆայեցւոյն, յորժամ գնաց ի Հռոմ: Եւ ի գնալն տէր Մկրտչին ի Կաֆայն, մեծ վարդապետն Սարգիս ընկալաւ մեծաւ պատուով, և ընդ բազում մեծարանացն և պատուոյն՝ պարգևեաց տէր Մկրտչին զսուրբ և զհրաշալի զպատուական սուրբ Նշանն։ Զոր ընկալեալ մեծաւ ուրախութեամբ, և բերեալ մեծ պարգևք տանս Հայոց՝ ի սեփհական յաթոռն իւր՝ և յԱմիթ մայրաքաղաքն, ի սուրբ Կաթուղիկէն, զոր ինքն շինեալ էր։ Եւ եհաս յաւուր տաւնի սուրբ Նշանին Վարագայ, և զօրն զայն տօն մեծ կարգեաց յանուն սուրբ Նշանին, և սահմանեաց ամ յամէ

3—4 Բ. «սրտիւ» փխ. «հաւատով» 4—5 Ա. Բ. «զկուպայն ի շինելոյն» 7 Բ. Գ. «Թուլկուրանցի» 8 Գ. «Երկայն», Բ. «Երկեան» 10 Ա. «ի գործութիւն» Ա. այսեղ և այլ ուրէք՝ «Կաթաւղիկէին» 12 Գ. «օրն», Բ. «ուսթայ» 13 Գ. «Նէքամատին», Բ. «Թամատին» 18 Բ. Գ. «զերկնաւոր» 20 Գ. «օրէնուածով», Ա. «յոժ» 22 Գ. «մղղալ», Բ. «մինաքարի» 24—25 Գ. «պատուական» 26 Բ. «խաչէն», Գ. «Նշանն», Ա. «լուսափայլ», փխ «ի լուսափայլ» 29—30 Ա. «Կաֆեցոյն» 33 Բ. «ընկալաւ» 34 Գ. «աթոռն»։

յամենայն տարի, զնոյն օր մեծ տօնախմբութեամբ ուրախութիւն առնել բազմութեամբ հաւատացելոց, ուխտ մեծ կատարել զաւր գալստեան սուրբ նշանին ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ։* Եւ զսուրբ և զհրաշալի սուրբ նշանն և զպատուական սկիհն և զհանդիսաւոր շուրջառն ամենավայելուչ, և զայլ զեղեցիկ շուրջառն, և զայս հրաշալի Ցայսմաւուրքս, որ եռ յիշատակ բարի ի սուրբ Կաթուղիկէն, և զՏարեգիրքն՝ յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնաւղացն իւրոց՝ Առաքել քահանային և Հռիւսխաթունին, և եղբարց իւրոց Յովաննէս քահանային և պարոն Աբգարին,** Ներսեսին և Ստեփաննոսին, որք ի Քրիստոս են հանգուցեալ. ի յիշատակութիւն հոգոց նոցա և ի վայելումն աստուածապարգև զաւակին իւրոյ տէր Մեսրոպին, որոյ տէր աստուած վայելել տացէ երկար կենաւք և պարագայց ամաւք. ամէն և եղիցի։

Վասն որոյ աւրհնեմք զձեզ ի հոգի և ի մարմին, որք հանդիպիք ի սուրբ Կաթուղիկէն, և սուրբ գրոցս, և սուրբ նշանին, և հրաշալի սկոյն, և վայելչագեղ շուրջառին, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զարժանին յիշման զտէր Մկրտիչ արքեպիսկոպոս և աստուածաբան վարդապետն՝ զշինաւղ սուրբ Կաթուղիկէին, և զծնաւղսն նորին՝ զԱռաքել քահանայն և զՀռիւս-Խաթունն, և զեղբարսն իւր զՅովաննէս քահանայ, և զպարոն Աբգար, և զՆերսէս, և Ստեփաննոս, և զծաղկեալ զաւակն իւր և զաւագ որդին՝ զտէր Մեսրապ, և զամենայն երաշխաւորսն իւր, և առաւել զտէր Յոհաննէս եպիսկոպոս բարձր Աստուածածնին, և զմղսի Յոհաննէսն և զծնօղն իւր, որ Ի. (20) տարի ծառայութիւն արար տէր Մկրտչին, և շատ աշխատեցաւ ի սուրբ Կաթուղիկէն և ի բարձր Աստուածածինն, և զեկեղեցպանն, որ կայ հանապազ ի սպասաւորութիւն ի սուրբ Կաթուղիկէն և ի շինելն աւգնական եղև։ Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զՂարա-Սադաղէն և զմղսի Ջմրութն, որ աւգնական եղեն ի գիր և ի թուղտ Ցասմաւուրացս։

Այլ և զքաղաքի քահանայքս, որ եղեն յաւուրս սորա՝ զհանգուցեալքն ի Քրիստոս զԴաւիթ երէց, զՄարգարէ, զԱստուածատուր, զԹումայ երէց, զՅիսէ երէց, զՄիքայէլ , զԱռաքել երէց, որոյ տէր աստուած ողորմեսցի նոցա և իւր սուրբ տեսոյն և սուրբ արքայութեան արժան առնէ, ամէն։ Նաև զՂազար քահանայ՝ աւագերէց սուրբ Կաթուղիկէի սուրբ Թորոսու, որ բազում աշխատութեամբ չարչարեցաւ ի շինումն

1 Բ. Գ. «խրախութիւն» 6 Գ. «երետ» փխ. «որ եռ», Գ. «զՏարեգիրքն եւ»։

* Բ. ձեռագրում Հիշատակարան-վերջն ավարտվում է այստեղ։

** Գ. ձեռագիրը սրանից հետո ունի միայն մի պարբերություն՝ որով և ավարտվում է հիշատակարանը։ Ահա այդ պարբերությունը. «որք ի Քրիստոս են հանգուցեալ, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի. վասնորոյ սրտահառաչ տենչմամբ աղաչեմ զհանդիպօղքդ, որք հանդիպիք ի սուրբ Կաթուղիկէն և սուրբ գրոյս և սուրբ նշանին և հրաշալի սկոյն և վայելչատես շուրջառին, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զարժանին յիշման զտէր Մկրտիչ արքեպիսկոպոսն և զաստուածաբան վարդապետն, և զծնօղս նորին, և զփծուն ծրօղս ես ընդ նմին։ Ի Թուականութեանս Հայոց կրկին քառիւք հարիւրօք և երկ յոբելին ընդ նմին երկերիւրօք հանդերձ և եռիւք ըննեօք աւարտելօք (1678 Թ.)...»։ Ուրեմն, № 9004 Գ. ձեռագիրն ընդօրինակված է 1678 թվականին։

սուրբ եկեղեցոյս, նաև բազում աշխատութեամբ գնաց ի Կաֆէն՝ թղթով պարոնաց և տանուտրաց, երեր զպարծանաց պարծանքն մեր՝ զլուսաւորիչն մեր զտէր Մկրտիչ. այլև զընկերք նորին՝ զքահանայքն՝ զԿիրակոս, զխաչատուր, զԳրիգոր, զՅովաննէս, զԱստուածատուր, և զմիւս խաչատուր Եզնկացի։ Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զհոգևոր մայրն մեր զմղտսի Ասանեթն և զծնողս իւր, որ շատ աշխատեցաւ հետ մեզ, ևս առաւել յիշեցէք ի Քրիստոս զբռայիս Գտռնն, և զիւր ամուսնեալ որդին զխալաւն, և զխութլուն, և զԹանխուսն, որ շատ աշխատեցան հետ մեզ, և զմեր միաբանքն զամէն ծառայեցին ի շինումն սուրբ և փառաւորեալ բարձր Աստուածածնին, զմեզ զամենսեան կերակրելով, ծառայելով, լուանալով և խնամ տանելով, որոց տացէ տէր աստուած միոյն հազարտ[պա]տիկ փոխարէն զարքայութիւնն երկնից՝ պարոն Գտռնին, և ամուսնեալ խալաւին, և մօրն իւրոյ խութլուին, և կենակցին իւրոյ ԹանՍուխին, և եղբօրն իւրոյ Անթասամին, ամէն։

Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զՇանմելիքն՝ զկենակիցն տէր Մեսրոպայ, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս, զի դեռ Բ. (2) ամիս էր, որ տէր Մեսրոպն երէց էր ամուսնած և Շանմելիքն նոր տիրուհի, և նման արեգական փոխեցաւ ի Քրիստոս ի ՊՂԸ. (1449) թվ[ականին],*

Ցիշեցէք ի Քրիստոս և զարժանին յիշման զՏրնէ-Մելիքն՝ զխաթուն մայրն Շանմելիքին, որ յետ ԺԵ. (15) աւուր և ինքն փոխեցաւ ի Քրիստոս, որոյ ողորմեսցի Քրիստոս աստուածն, ամէն։

Ցիշեցէք ի Քրիստոս զՅովանէս և զԱբուսն և զիւրեանց անմեղ զաւակներն՝ զԱղուպն և զՔաքամն, որ տարաժամ մահուամբ փոխեցան ի Քրիստոս և զբօղչէն տվին Ցայսմաւուրացս՝ յիշատակ հոգոյ իւրեանց, որոց ողորմեսցի Քրիստոս աստուած գծողին այս գրիս Սարգիս սարկաւագին, ամէն, հայր մեր։

705

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄՑՎ 10 (280), հա. Ա., սյուն. 115—116

Հետ. ստացող՝ Յովսէփ

ա

444 բ Ցիշեցէք ի Քրիստոս և զվերջին ստացաւղս՝ զմեղաւոր և զանարժան սուտանուն կրաւնաւորս զՅովսէփ աբեղայս, և զմարմնաւոր ծնաւղսն իմ զխաչատուր ե զԴուռմէլիք, և զեղբայրսն իմ զԱմիրբէք, և զԱստուածատուր, և զՍտեփանոս՝ զփոխեցեալն ի Քրիստոս, այլ և

15 Ա. «զկենակցին»

* Հիշատակարան-վարքի մեջ եղող վերջին թվականն է այս։ Ըստ այդմ էլ հիշատակարանը գրված պետք է լինի կամ 1449 թվականին, կամ նրանից միայն մեկ-երկու տարի հետո։

զհոգևոր˛եղբայրն մեր՝ զտէր Յոհանէս կուսակրօն աբեղայն, և զծը-նաւղսն նորին՝ հաւրն Եղէոնին, և մաւրն Մարգային, և եղբաւրն Յո-վանիսին, և ամենայն արեան մերձաւորաց նորին, ամէն.

Բ

Ծաղկող՝ Մկրտիչ Նաղաշ

Յորժամ ստացաւ տէր Յովսէփն, էր թվ. ի ՊՂԸ (1449) ամին...։

Սոյն երջանիկ և աստուածաբան սուրբ վարդապետս Յովհաննէս ետ գրել զաստուածաշունչ սուրբ տառս յիշատակ հոգւոյ իւրոյ և ա-մենայն մերձաւորաց։*

*Եւ վասն առաւել բարեսէր կամացն արար զանարժան ծառայս իւրն յորդեգիր. և յառաջ քան զվախճանն իւր երեք ամով՝ պարգևեաց մեզ զսուրբ գիրքս յիշատակ սուրբ հոգւոյն իւրոյ։ Եւ եկաց մնաց առ իս սուրբ գիրքս՝ յետ վախճանի սուրբ վարդապետին՝ վեց տարի,** ի մայրաքաղաքն յԱմիթ, ի նորակերտ սուրբ Կաթողիկէն։ Ապա յետոյ եկն եհաս և հանդիպեցաւ առ մեզ ի յԱմիթ մայրաքաղաք ճըգ-նազգեաց սուրբ կրաւնաւորն Յովսէփ, ձեռնասուն աշակերտն սուրբ և աստուածաբան վարդապետին Առաքելի: Որ և տեսեալ սուրբ աս-տուածաբեալ աստուածազարդ գիրքս, և փափա[գոն]աւք խնդիր ա-բար ի մէնջ. Եւ իմ տեսեալ զջերմեռանդ սէր և տենչումն նորա... պարգևեցաք զսուրբ աստուածազարդ գիրքս Յովսէփ կրաւնաւորին անգարձ յիշատակ. և ի պատճառ գրոցս առաք ԳՃ. (300) թանկայ ի Յովսէփ կրաւնաւորէն և խարճեցաք ի սուրբ Կաթուղիկէն՝ վարդա-պետի հոգւոյն, և գրեցաք զվարդապետի անունն ի սուրբ Կաթուղի-կէի յիշատակարանն...։ Յիշեցէք ի Քրիստոս Յիսուս նախ և առաջին զարժանին յիշման՝ զաստուածաբան վարդապետն զՅովանէս բաբունա-պետն, և զեղբայրն իւր զԹուղբամուբ միայնակեացն...։ Դարձեալ, յիշե-ցէք ի Քրիստոս և զիս՝ զեղկելիս զմեղաւոր Մկրտիչ միայն անուամբ եպիսկոպոս, մականուն Նաղաշ կոչեցեալ, զշինող սուրբ Կաթուղի-կէին, որ յԱմիթ մայրաքաղաք և բարձր Աստուածածնին՝ ի յամուրն Արղնու, և զծնողսն իմ զԱռաքել քահանայն և զՀոփս-խաթուն...:****

---

* Տպված է «Յովսէփ»։ Ըստ երևույթին ձեռագրում գրված է եղել հապավումով «Յով.», և հրատարակիչը առաջին պարբերության մեջ հիշվող Յովսէփի հետ շփոթելով, հապավված անունը սխալ է վերծանել։

Առաջին ստացող Յովհաննէսի մասին տե՛ս այս հիշատակարանի շարունակության մեջ և 1422 թվաշարքի 2-րդ հիշատակարանում։

** Այսպիսով, ձեռագրի պատվիրատու Յովհաննէս վարդապետը վախճանվել է 1449-ից 6 տարի առաջ՝ 1443-ին։ Ձեռագիրը նվիրել է Մկրտիչ Նաղաշին իր մահվանից 3 տարի առաջ, ուստի 1440-ին։

*** Հրատարակիչը հայտնում է, որ այս հիշատակարանին նոտր գրով կցված է հե-տևյալը. «Որ եղ յիշատակ ի դուռն ամենասուրբ Առաքելոցն և սուրբ Աստուածածնին և սուրբ Կարապետին ի աթոռն Կամխայ Աւագ վանքն, ի թվականութեան Հայոց Չ. (1451) ամին»։ Չի պարզվում, թե ով է նվիրաբերողը։

706

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա, Ամենափրկիչ 546

Հիշատակագիր՝ Մկրտիչ Նաղաշ

316 Զմեղապարտ Մկրտիչ նկարագիր. և արքեպիսկոպոս ամենայն Միջագետաց, և երեսփոխան կաթողիկոսի ամենայն Հայաստանեայց, որ զվերջի յիշատակարանս գրեցի, աղաչեմ յիշել...։*

707

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նօա., էջ 159—160, Բաղէշ, ս. Գէորգ եկեղեցի

Գրիչ՝ Ներսէս եպիսկոպոս
վայր՝ Աղթամար

...Եւ արդ, ես... Ներսէս անուամբ և եթ աբեղայ եղկելի ոգիս՝ ծրագրող սորա ... գրեցի զսա ընդ հովանեաւ գերապայծառ և երկնանման սուրբ Խաչիս՝ զմբէթայարկ տաճարիս և սուրբ Փրկչին, ընդ հովանեաւ սուրբ Սարգսիս, և ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, և ի թուականութեան Հայկազեան տումարիս ՊՂԷ. (1448) ամին։

... [Յիշեցէք] Ներսէս սոսկանուն աբեղայիս, որ զսուրբ աւետարանս գծագրեցի, և ծնողացն իմոց Կուռնի-Բէկին և էմնայ-Խաթունին, և հարազատ եղբօրն իւրոյ Ստեփաննոս սրբասէր կրօնաւորի։ Աստուածողորմի ասացէք հոգևոր հօրն իմոյ՝ անյաղթ փիլիսոփային Մինասենց Թումային, ամէն։

Եւ արգ ես՝ ունայնս... Հայրապետ անուամբ և եթ աբեղայս, ի Շատվան գեղէ, ստացաք զսուրբ աւետարանս զայս... և ընծայեցի նուէր Նկարինայ սուրբ Յարութեան և սուրբ Աստուածածնին՝ հրեշտակաբնակ մենաստանին, յիշատակ բարի հոգւոյ իմոյ և ծնողացն իմոց Թումային և Մարթային...:

Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի Նկարինայ սուրբ Յարութեան տաճարէն։

Աւա՜ղ դառնութեան ժամանակիս, որ պատահեցաք մեք, վասն զի յայսմ ամի, որ զսուրբ աւետարանս ծաղկեցի և կազմեցի՝ էր սաստիկ մահաբաժամ, .որ չէր եղեալ այսպէս ի վաղ ժամանակաց. և ժանգն ապականեաց զվաստակ դաշտաց, և մուկն եռաց յամենայն երեսս դաշտաց և ապականեաց զվաստակս։

Այս եղև ի ՊՂԸ. (1449) թվականին։

---

* Հիշատակագրությունն անթվական է, տեղադրում ենք Մկրտիչ Նաղաշի ինքնագիր հիշատակարանին աոընթեր՝ 1449-ի թվաշարքում։

708

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4928

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Աղթամար

306 բ *...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս յաստուածապահ կղզիս* Աղ-
թամար, *ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչիս և սուրբ Նշանացս,*
ի հայրապետութեան տեառն Զաքարիայի *և ի թուականիս Հայոց ի* ՊՂԸ.
(1449), ձեռամբ Գրիգոր *սոսկանուն և անպիտան քահանայի... ի*
ստոյգ և յընտիր յաւրինակէ, կենօք տառապանաց և բաղում պան-
307 ա *դխտութեամբ, ի դառն և ի վշտա ‖ բեր ժամանակիս, որ կամք ընդ*
հարկի անաւրինաց՝ ազգին նետողաց...։

Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս... յիշեսջիք...
ստացող սորա զՅովանէս *ոսկերիչն, և զծնաւղսն նորա* զԱմիրմուլք *և*
զԽոճ-Մէլիք, *և զզաւակսն նորա* զՅոհանէս, զԽաչիկ *և* զՅուստիանէ, *և*
զկենակիցն նորա զԹուրւանղայ, *և զնորին ծնօղսն* զՄարգարէ *և* զԲա-
բաք-Մէլէք, *և զեղբարքն* զԴովլաթիար *և* զՇահրիար, զՍքանգար *և* Գրի-
գոր, *և զքըւերք նոցին* ըզՇահ-Փաշէն *և* զՍուլտան-Մէլիք, *և զխոջայ*
Առոմն՝ *զայրն* Թուրվանդին, *որ և յետոյ եղև,* և զայլ ամենայն ազ-*
գատոհմսն նոցին...։

307 բ *Ընդ նոսին և զանպիտան* Գրիգոր *գրիչս, արժանի արարէք միոյ*
աստուած-ողորմոյ, նա և զծնօղքն իմ՝ զԽաչիկ *և* զԱզիզ-Մէլիք, *և զեղ-*
բայրքն իմ՝ զհոչակաւոր քարտուղարն զԹումայ *կրօնաւոր և* զՆաւա-
սարգ, *և զզաւակսն իմ և զայլ ամենայն արեան մերձաւորսն մեր՝*
զկենդանիսն և զհանգուցեալսն...։

709

ԱՆՑԱՑՏ ՁԵՌԱԳԻՐ

«Հայապատում» Բ, էջ 576—577

Վայր՝ Մէրտին

...Յորում ամի (1449) բացան պատուհանք հինից բարկութեան ի տանէ աստուծոյ, և մերկացաւ սուրն վաղակաւոր յազդերէ իւրմէ, և տարածեցաւ հուր ծախիչ ընդ ոլորտս տիեզերաց, ոչ եթէ խրատ կամ հարուած, որպէս երբեմն յԻսրայելի, այլ պատիժ, վրէժ աշխարհի կորստեան, զի հարուածն և խրատն մին գաւառի լինի՝ զի միւսն խրատեսցի, իսկ պատիժն՝ համօրէն և ընդհանրական, որպէս Ջրհեղեղաւն։ Սոյնպէս և յայսմ ամի յընդհանուր աշխարհս տարածեցաւ տարաժամ մահ, յելանելոյն արևու մինչև ի մուտս արևու, ի հիւսիսոյ մինչ ի հարաւ, զի ոչ ոք ետես կամ լուաւ ի հնոց կամ ի նորոց այսպիսի դառնալուր պատիժ և հիանալի տեսողաց և լսողաց զարմանալի։ Մինն այս է դառնութիւն սորա, զի բոլոր ամ մի է և երեք

** Երկու բառի տեղ դատարկ է թողնված։*

ամիս, որ ի Մէքսիքս է և ոչ վերանայ. և երկրորդ եղեռնագոյն դառնութիւն, որ մի անգամ և երկու հանէ խոց և ողջանայ զաւուրս բազում, և դարձեալ կրկին հանէ և մեռանի. և երրորդ դժնեայ դառնութիւն սմին, զի յոր տունն որ մտանէ՝ բնաջինջ առնէ ամենայնիւ. չորրորդ սաստկութիւն սորա, զի ոչ տայ իմանալ զցաւն, երևի թէ անվնաս է և իսկոյն մեռանի։ Որ եղև մեզ գալ և հանդիպել ի Մէքսիք քաղաք ի սոյն ամի և դառն ժամանակի, զոր ոչ կարեմ պատմել կամ ընդ գրով արկանել զանցս աղետից և զմրուր դառնութեան, զկսկիծս մորմոքման և զբաժակն բարկութեան, զողբս արտասուաց և զբեկումն հառաչանաց, զվիշտս վառեալ և զհուրն բորբոքեալ, զաղիողորմ դառնութիւն և զանպատմելի տարակուսանս, զմեծական հառաչանս և զաղիողորմ արտասուս, զի աստուած էր խռովեալ և արարիչն դառնացեալ, զի անբարկանալին աստուած էր բարկացեալ, և կենարարն մահու մատնեալ, զի ողորմածն աստուած անողորմն դատեցաւ և քաղցր բնութիւնն՝ վրէժխնդիր յայտնեցաւ, զի տուողն կենաց՝ հրաման ետ մահու, և պահապան հրեշտակն հրեղէն սրովն խոցէ. քաղցր տեսութիւնն ընդ ակամբ հայեցաւ, և սուրն վաղակաւոր իսկոյն ընդ մէջ կարէ զանմեղ մանկունսն։ Զի սաստիկ էր պատգամն և ահեղ պատգամարերն, զօրաւոր էր զինաւորն և սուրն և զօրագլուխ ահեղին, զի կարծեմ թէ, որ յանապատին զքսան և չորս հազարսն կոտորեաց՝ այսօր ի միջի մերում զեօթանասուն և հինգ հազարսն երևի, կամ որ երբեմն յաւուրս Դաւթայ ընդ մէջ կոտորեաց ի միում ժամու՝ այսօր շողշողացնէ զսուրն բարկութեան ի միջի մերում. կամ այն, որ զօրս Ռափսակայ զհարիւր ութսուն և չորս հազար սատակեաց ցուցանէ այսօր և զմրուր դառնութեան պատժոյն, և առաւել դառնագոյն քան զնոյն, զի անդ միայն ի գիշերի սպանանէր, և աստ ի տուէ և ի գիշերի, և աստ մի ամ և երեք ամիս, զի անդ միայն զանհաւատսն սատակէր և զարդարն ապրեցուցանէր, աստանօր՝ զարդարն վասն մեղաւորաց պատժէ։ Ցամենայն առաւօտու փոխանակ լուսոյն՝ աղիողորմն կսկիծ ծագէ, և ամենայն աւուր փոխանակ արևուն՝ արեան արտասուք, յերեկօրեայ՝ երգ տրտմութեան, և ի մէջ գիշերի՝ խաւար մահաբեր, ի հաւախօսին՝ կանայք լալականք, և ընդ արշալոյսն՝ ողբերգականք պարաւորք։ Անդ էր տեսանել զողբս արտասուաց և անդանօր զկսկիծն մաղկտանաց, զալիս ծերոց արեան արտասուօք թաթաւեալ, և զմարքն որդեմեռ՝ կիսամահ նուաղեալ։ Ոմանք ծամակտուր և այլք ոմանք հերարձակ. ոմանք սևազգեստ և կէսք հրապարակ. ոմանք յարեան ճապաղեալ և շատք ի խելաց անցեալ. ոմանք ապշեալք և ոմանք կատաղեալք ի դառն կսկծանաց։ Զի անմեղ գառինքն ի հուր ծնողացն եփեցան, մատաղ մանկունքն ի ծնողացն պատուհասեցան, որպէս ասէ աստուած մարգարէիւն, եթէ՝ Հանեմ զմեղս հարց՝ յորդիս և յորդիս յորդւոց նոցա. և զմեղս մարց՝ ի դստերս և ի դուստրս դստերաց նոցա։ Եւ մարգարէութիւնս այս այսօր առ մեզ կատարեցաւ, զի վասն մեր մեղացն անմեղ մանկունքն կոտորեցան։ Ո՜հ դառն դատաստանիս և սաստիկ վրէժխնդրու-

թեանս, ո՜հ անկասկած կատարածի և արժանահաս պատուհասի։ Վա՜յ է ինձ ի բիւրս հազարաց և եղուկ է զիս, թէ զո՞ր կսկիծ տեսի կամ զո՞ր դառնութեան բաժակ ընպեալ ճաշակեցի։ Զի տեսի զնորաբողբոջ մանկունքն յաստուածային ահեղ սրոյն սպանեալ, զի թաւալէին մանկունքն առաջի ծնողացն՝ որպէս զգառն սրով զենեալ, կամ զձագս աղաւնոյ նետիւ խոցոտեալ, ի վերայ գրկաց մարցն նուաղեալ, և ողորմն ընդ երեսս ծնողին նայեցեալ, զձեռքն մեկնեալ և զոտքն տարածեալ և առ մայրն աղաղակեալ, և ի հօրէն օգնութիւն խնդրեալ։ Ոչ մայրն ողորմէր մանկան և ոչ հայրն օգնական լինէր, և հրեշտակն ահեղ կերպարանօք զհոգին քակտէր, և ընդ քակտել հոգւոյն անմեղաց՝ և ծնողաց հոգին խոցոտէր։ Անդ էր տեսանել զմանկունս մուբուագտլի աղիողորմ թաւալեալ, զնոր փեսայն և զնորահարսն՝ զի փոխանակ վայելուչ անկողնոյն՝ ի գէջ գետին և ի ներքոյ հողին տարածեալ, և փոխանակ հարսանեացն՝ սուգ սաւառնացեալ, և փոխանակ ուրախարար երգոցն՝ կանայք լալականք և ողբերգականք։

Արդ, զո՞ր լացից կամ, զո՞ր ոք ողբացից, զո՞րս ապաշաւեցից և զորո՞ց պատմեցից. զանմեղ մանկունքն՝ եթէ զկատարեալքն հասակաւ, զվայելուչ նորափեսայքն՝ եթէ զգեղեցկագեղ նորահարսունքն, զնորաբողբոջ կուսանքն՝ եթէ՞ զսուրբ սարկաւագունքն։ Որ ամենեքեան ի միասին կոտորեցան որպէս զծաղիկ նռնենեաց՝ հարեալ ի կարկտէ յաւուրս գարնանային, զի ամենեցուն էր պատիժն և առհասարակ պատուհաս։ Անտանօր տեսանելի էր, զի ամենայն աչք ի յարտասուք և ամենայն բերան լալական, ամենայն անձն ի սուգ և ամենայն սիրտ ի տրտմութիւն։ Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն բազում մեղաց մերոց ի ՊՂԸ. թուին Հայոց (1449). յորում ամի այսպիսի սաստիկ պատուհաս ընդ ամենայն գաւառս տարածեցաւ, և բազումս լալագին արար, և զբազում աւանս անմարդաբնակս, շատ մայր առանց որդւոյ արար, և շատ ծնող առանց զաւակաց, բազում տուն առանց տանուտէր, և բազում հարսն առանց փեսայի։

710

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիրղ. Նոտ., էջ, 162—163՝ Վանի ս. Յակոբ եկեղեցի

Գրիչ՝ Թումա Մեծոփացի

վայր՝ Քաջբերունեաց Արջոնից վանք

... Ուստի և տեսեալ զսորա փրկագործութեան խորհուրդ մեղուցեալ գրիչս Թումայ Մեծոփացի* զտկարութիւն մարմնոյս ի բաց ընկեցի, և զօրութեամբ և օգնութեամբ հոգւոյն սրբոյ սկսայ և աւարտեցի զսուրբ աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ Ղազար մահտասուն և Անբարին՝ հանգուցելոցն ի Քրիստոս։

Գրեցաւ ի յերկիրս Քաջբերունի, ի սուրբ ուխտս, որ կոչի Արջո-

* Չպետք է շփոթել նշանավոր Թումա Մեծոփեցու հետ, որը վախճանվել էր երեք տարի առաջ՝ 1446 թվականին։

նից վանք, ընդ հովանեաւ սուրբ Գէորգայ զօրավարիս և այլ սրբոցն, որք աստ կան հաւաքեալ, և ի հայրապետութեան տեառն Գրիգորի սուրբ Էջմիածնի, և ի թագաւորութեան Ջհանշին՝ որդի Ոսուֆին, որ տիրեաց աշխարհիս Հայոց և Ասորւոց, զի էր խաղաղարար, և հարկապահանջութիւն բուռն էր... վասն մեղաց մերոց, և ի թուականութեանս մեր ՊՂԸ. (1449)։

Դարձեալ, մեղուցեալ գրիչս Թումայ և Մինաս եպիսկոպոս ընծայեցաք զսուրբ աւետարանս աստուածահաճոյ և փառաւորեալ տէր Գրիգոր կաթուղիկոսին սուրբ Էջմիածին, որ հանապազ զմեզ ի յիւր սուրբ աղօթքն յիշէ, և անմեղադիր լինի, զի խիստ տկար էի աչօքս, որ ոչ զկարգ գրոյն և զնիրբն տեսանէի. աղաչեմք զձեզ վասն սիրոյն Քրիստոսի, որ անտես չառնէք, զի կար մեր այս էր։ Եւ զվարպետ Վարդան, որ զսուրբ աւետարանս կապեաց և կազմեաց յիշեսջիք ի սուրբ յաղօթս ձեր։

711

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՑՎ 162 (663), հտ. Ա., էջ 690—692

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Քաջբերունեաց գաւառ, Ձորոյ վանք

299 բ— ...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառս Քաջբերուն-
293 բ եաց, ի յանապատս, որ կոչի Ձորոյվանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և կենսաբեր սուրբ Նշանիս, ի հայրապետութեան տեառն Գրիգորի սուրբ Էջմիածնի, և ի թուականութեանս մերոյ ՊՂԸ. (1449), և ի թագաւորութեան Ջհանշին, որ է որդի Ոսուֆին և եղբայր Սքանտարին, որ տիրեաց երկու թագաւորութեան՝ Հայոց և Ասորոց, և էր խաղաղասէր. բայց հարկապահանջութիւնն բուռն է ի վերայ քրիստոնէից. վասն որոյ ապաւինեալ եմք յարարիչ արարածոց Քրիստոսն, որ այց առնէ տառապեալ ազգիս քրիստոնէից, ամէն։

Եւ ես՝ անարժան գրիչս Թումա, տեսա զսէր և զլի փափագ սորա՝ հոգևոր եղբաւրս մեր Հէրապետ կրաւնաւորիս, որ բազում անգամ աղաչեաց զմեզ. և էի խիստ տկար մարմնով և պակասեալ լուսով. հարկեցայ՝ ձեռն ի գործ արկի, մեղսամած մատամբ և մեղաւոր անձամբ գրեցի անարժան ձեռաւք իմովք։ Արդ, որ ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս ընթերցմամբ, կամ գաղափար առնելով, և կամ հարևանցի տեսութեամբ՝ յիշեսջիք առաջի անմահ գառինն Յիսուսի Քրիստոսի ի մաքուր և յանապական աղաւթս ձեր...։

712

ՔԱՂՈՒԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Ե ըևան 4419

Գրիչ՝ Ալէքսանոս
վայր՝ Հերմոնի վանք

288 բ *... Արդ. գրեցաւ սուրբ աւետարանի քաղուածոյս Մաթէոս դըլ-*
խին յերկիրս Եղեգե[ա]ց, *ի վանս* Հերմոնի, *ընդ հովանեաւ սուրբ Լու-*
սաւորչիս և սուրբ Նշանացս, ձեռամբ բազմամեղ և անարժան, տար-
տամ և անպիտան, փցուն և անյարմար գրչի Ալէքսանոս *սուտա-*
նուն աբեղայի, որ ձևով միայն է և ոչ գործով, ի առաջնորդութեան
սուրբ ուխտիս Սարգիս *վարդապետի, զոր տէր աստուած պահեսցէ զսա*
ընդ երկայն աւուրս յուղիղ վարդապետութեամբ, և փակակալի սորա
289 ա Զա ‖ քարիայ *սուրբ և մաքուր աբեղայի, կուսակրաւն և սրբասնունդ*
Յակոբ *քահանայի, և այլ միաբանիցս՝ մեծի և փոքու, ի թվականու-*
թեան Հայոց ՊՂԸ. (1449), ի յաւուրս դառն և անբարի, ի յետին
ժամանակս և անձուկ, որ յամենայն ուրէք բարին նուազեալք և չարն
յորդորեալ և թագաւորեալ. Զի ազգ անաւրինաց զրկեն զազգս Հայոց
և քահանայից ի յընչից իւրոց և դատեն անողորմ.

Արդ, երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան դհանդիպողսդ սմա կարդալով, կամ տեսութեամբ, կամ յօրինակով, կամ ուսմամբ՝ յիշել յեռափափագ և ջերմեռանդ սիրով և սրտի մտաւք ի մաքրափայլ և լուսաբորբոք յաղաւթս ձեր զհարազատ եղբայրն իմ ի Քրիստոս փոխեցեալ՝ զԱնտոն *աբեղայ, և զհաւրեղ[բ]այրն իմ* զՅովանէս *կուսակրաւն քահանայ, և զհայրն իմ* Մկրտիչ, *և զմայրն* Խոնդիկ, *և զայլ արեան մերձաւորս՝ զկենդանիս և զհանգուցեալս. Ընդ նոսին և զիս՝ զանարժան և զբազմամեղ գծող սորին աղաչեմ սրտառուչ դոչմամբ և արտասուալից հառաչանաւք յիշել ի քաղցր գութն Քրիստոսի՝ յոյսոյն մերոյ, զի թերևս ներեսցէ բազում մեղաց իմոց ձերով աղաւթիւքդ. Եւ խոշորութեան և սխալանաց սորա անմեղադիր լինել, զի ըշտապ էի.*

*Այլ և է. (7) տետրն գրած էր առաջ, ի զատ ի առաջի մին տետրէն, որ խորանաց մեկնութիւն է՝ առել եմ իմ հալալ ընչիւք ու զպակասորդն լմնել, ի յիշատակ ինձ և ննջեցելոց իմ, զի որք բոլորով սրտիւ յիշեն զմեզ ի Քրիստոս՝ յիշեալ լիցին և ինքեանք առաջի ատենին Քրիստոսի, ամէն.**

** Գրիչ Ալէքսանոսն ունի նաև մի քանի հիշատակագրություններ, որոնցում նոր բան չի ասում. Ուշագրավ է միայն երկու տողանոց այն հիշատակագրությունը, որը գտընվում է 8-րդ տետրակի առաջին էջի (90 ա) ներքին լուսանցքում. Այստեղ գրված է՝ «Աւգնութիւն ինձ ի տեառնէ եկեսցէ և սուրբ հոգին առաջնորդեսցէ, ամէն, տկար ոգոյս* Ալէխսանոսի, *որ դվաղնջուց թերատս լնունք».*

713

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

«Թորոս Աղբար» Բ., էջ 296, Երզնկայի ս. Սարգիս եկեղեցի

Հետ. ստացող՝ Կարապետ
վայր՝ Ապահունիք վանք

... *Զվերջին ստացող աստուածաշնչիս* զԿարապետ *վարդապետն, և զհայրն* զՄկրաիչ *քահանայն, և զմայրն* զԵղիսաբեթ, *և զքոյրն* զՄարթա, *և զամենայն ազգատոհմսն, և* զՅակոբ *վարդապետն իւր... և զաշակերտսն* զՅովանէս, *և* զՅակոբ, *և* զՍիմէւոն, *և* զՄարտիրոս, *և* զՍիմէւոն *հայրապետն, և զամենայն միաբանք սուրբ ուխտիս* Ապահունիք *կոչեցեալ՝* զՍարգիս, *և* զԹորոս, զՍողոմոն, զՅովաննէս, զՊետրոս, *և զմիւս* Յովհաննէս *սուրբ քահանայն, և* զԳրիգոր *տնտեսն յիշեսջիք ի Քրիստոս...։*

Եղև գրաւ բանիս ի Թվ. Հայոց ՊՂԸ. (1449)...,

714

ՇԱՐԱԿՆՈՑ

Բրիտ. Թնգ. Add. *18,603, կ8 46, էջ 95, Փիրղ. Նօա., էջ 160—161*

Գնող՝ Յոհանէս
վայր՝ Արզելան

15 բ *Ես* Յոհանէս *որդի* Ժանկտարին,* *ի Գ. (4) Թանկայ*** *Թամուրի ի չաղաթիցն գնեցի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի վայելումն որդոց իմոց։ Որդիքս առ աստուած փոխեցան և Թողին մեզ սուք անմխիթար. ետու զՇարակնոց դեռաբոյս մանկանն* Յովանէս *սարկաւագին, ի վայելումն անձին իւրոյ՝ տէր* Խսայի *որդուն....։*

*Գրեցաւ գիրս ի յ*Արզելան,*** *ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս* Ներսէս *վարդապետիս և* Յովանէս *եպիսկոպոսիս, սոցա վկայութեամբ,* Աբդալու *որդու* Բուրաքրիս *վկայութեամբ ետու զՇարակնոցս* Յովանիսին, *ի Թվ. ՌԾՂԸ. (1449) ամին, ի հայրապետութիւն* Գրիգոր *կաթողիկոսի, ի Թագաւորութիւն* Ջհանշին, *որ գնաց ի Հրէ ու ի* Խորասան։

715

ՄԱՇՏՈՑ

Երևան 3556

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Երզնկայ

212 բ ...*Ի Թվականութեանս Հայոց ՊՂԸ. (1449) եղև գրաւ գրչութեան սուրբ և տիեզերալոյս և համապիտան գըրկունքս, որ կոչի Մաշթոց, ի մայրաքաղաքս* Եզրնկայի, *ի դուռն սուրբ Աստուածածնին և սուրբ*

* *Փիրղ. «Սքանդարին»*
** *Փիրղ.. «ԻԴ. (24) Թանկայ»*
*** *Ձեռագրում եղել է «Ցարպելան» (՞), ուղղում ենք՝ «յԱրզելան»։*

213 ա Կարապետին և այլ բազմահաւաք սրբոցս, որք աստ կան ժողովեալ։ ||
Եւ ի Թագաւորութեանս բարբարոսաց, և ի կաթողիկոսութեանս Հա-
յոց տէր Գրիգորի, և յառաջնորդութեան և վերայտեսչութեան գաւա-
ռիս տէր Ներսէսի արհիեպիսկոպոսի։

Արդ, ստացաւ զսա բարեմիտ և հեզահոգի, ընտիր և պարծանք, տեսականաւն և գործականաւն բարգաւաճեալ*

Արդ, ես՝ ողորմելիս և տարտամս, ի սրտէ խոցեալ և մեղաւք
213 բ զառածեալս, ազգի ազգի մեղաւք լցեալս, || զանարժան գրիչս զՍարգիս
երէցս, և զծնաւղսն մեր զՄեսրոպ քահանայն, և զմայրն իմ զՄա-
նան-Խաթունն, և զբարի խրատատուքն մեր՝ զտէր Յակոբ ճգնաւորն
և զԿարապետ քահանայ Վանեցին, [որ] զգրիկս ծանուցեր է մեզ փոքր
ի շատէ. տէր աստուած զիւր երկնից արքայութիւնն պատրաստէ իւ-
րեանց հոգւոյն։

[Ա]րդ, ես յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք այսմ տառի կարդալով, կամ տեսանելով, կամ աւրինակելով յիշես-ջիք յարժանաւոր յաղաւթս ձեր և սըղալանաց և խոշորութեան և անարհեստութեան մի մեղադրէք, քանզի կար մեր այս է։ Եւ ձեզ՝ յիշողացդ և մեզ յիշեցելոցս Քրիստոս աստուած առհասարակ ողորմեսցի։

716

ԱՒԵՏԱՐԱՆ

«Թորոս Աղբար», Բ., էջ 423—424, Տիգրանակերա, ս. Սարգիս եկեղեցի

Գրիչ՝ Երեմիա

վայր՝ Դարանաղեաց գաւառ, ս. Լուսաւորչի անապատ

Գրեալ ի լաւ և յընտիր աւրինակէ յԵրեմիա կրաւնաւորէ, ի Թվ. ՊՂԸ. (1449), ի լեառն Սեպուհ, ի հռչակաւոր անապատն ս. Լուսաւորչին, ի դուռն ս. Աստուածածնին, և ս. Կարապետին, և սքանչելագործին սրբոյն Մինասայ, և Երից մանկանցն, ի յառաջնորդութեան Մատթէոս սրբասէր կրաւնաւորի, ի հայրապետութեան տեառն Գրիգորի ի Վաղարշապատ քաղաքի, և ի բռնակալութեան Դարանաղեաց գաւառիս Ճաւար-Բէկի...:**

717

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան 1203

Գրիչ՝ Մարտիրոս

վայր՝ Կաֆայ

255 ա ... Գրեցօ քաղուածոյս երգարանին Դաւթի ի Թվականութեանս
Հայոց ՊՂԸ. (1449), ի յաշխարհս հիւսիսային, ի մայրաքաղաքի յեզրս

* 5 տող գատարկ է թողնված՝ ստացողի և նրա մերձավորների անունները լրացնելու համար։

** Հիշատակարանի բովանդակությունը վերապատմել է իր խոսքերով հրատարակիչ Գ. Սրվանձտյանը։

Կաֆայի, ի մենաստանս Նորաշէն, ընդ հովանեաւ երաշխօոր սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն Գրիգորի սուրբ էջմիածնի պատրիարգի ամենայն Հայոց, և յեպիսկոպոսութեան նահանկիս այսմ՝ Սուրղաթոյ և ամենայն հիւս[իս]ական կողմանց՝ տէր Մաղաքիայ արքիեպիսկոպոսի, ի դառն և յանրաբի ժամանակիս, ի ձեռամբ Մարտիրոս կրօնօրի, հրամանօ քեռոյն իւրոյ և երկրորդ ծնօղի տէր Սահակ բանասիրի, ի վայելումն տէր Մարտիրոսի եպիսկոպոսի և աշակերտի և ներիրակի սուրբ էջմիածնի քրիստոսական աթոռոյ, յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և զկնի եկելոց սուրբ ընթերցողաց։

Արդ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյգրեալն զտէր Մաղաքիա արհիեպիսկոպոսն, որ զօրինակն շնորհեաց, և զիւր ծնօղսն, և զեղբայրն իւր՝ հանդերձ զարմօք և զաւակօք, ամէն։

Այլ և զաշխատողքս ի սուրբ գիրքս՝ զվերոյգրեալ հեզահոգի սրբասնունդ եղբայրս իմ ըստ հոգոյ՝ զտէր Սահակ կուսակրօն աբեղա և սպասօր բանի. ընդ նմին և զհեզահոգի մանկագոյն կրօնօրն զՄարտիրոս՝ քըւերորդին իւր՝ զգաղափար սորին, որ բազում փութով և աշխատութեամբ սիրով և հնազանդ բարուք գրեաց մեզ զգիրքս զայս վասն սիրոյ աստուածային պատուիրանացն, ի յիշատակ երից եղբարցս Մարտիրոս եպիսկոպոսի, և տէր Սահակի, և իւրս (°) գծողի, և ծնողաց մերոց, և ամենայն զարմից՝ կենդանեաց և հանգուցելոց։ Այլ և զճգնազգեաց կրօնօրն և զեղբայրն իմ ըստ հոգւոյ տէր Ստեփանոս և զչարչարակիցն իմ յիշեսջիք ի Քրիստոս։

Դարձեալ երկրամած դիմօք աղաչեմ զամենեսեան՝ զհանդիպողք այսմ գանձի՝ յիշեսջիք ի Քրիստոս աստուած զերախտօորքն իմ և զհոգևոր ծնօղքն իմ՝ զԿարապետ րաբունին, և զՅոհանէս րաբունին, և զՅովանէս վարդապետն, և զաշակերտակիցսն իմ՝ զՅակոբ, զՍիմէոն, զԱբրահամն, զԱստուածատուրն, զԱւետիք: Նայ և զմարմնօոր ծնօղսն իմ զՍտեփանոս, և զմայրն ի[մ] Հռիփսիմէ, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ։

255 բ Այլ և զառաջնորդ սուրբ ուխտիս զտէր Քրիստոսատուր հայրապետն, որ ամենայն արդեամ[բ]ք է մեզ երախտօոր, ևս առօել ի պատճառ գրոցս՝ հանապազ մոմ տալով և լոյս՝ վասն դրելոյ սուրբ գրոցս, Քրիստոս աստուած զիւր հոգին լուսօորէ. ամէն։

Այլ և զկոկոզ նիւթիս զԿարապետ կրօնաւոր և զՄկրտիչն յիշեցէք առ Քրիստոս, և զամենայն երախտաւորսն մեր՝ զառաջինսն և զմիջին և զվերջինսն։

Եւ Քրիստոս աստուածն իմ, որ առատն է ի տուրս բարեաց ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս, առհասարակ, ողորմեսցի, ամէն, ամէն և եղիցի։

Բ

Արդ, ես՝ նուաստ ծառայս աստուծոյ Մարտիրոս *պիտակ անուն եպիսկոպոս, եդի զսուրբ գիրքս ղայս, և զարծաթի սկիհն, և զիմ ոսկած աւետարանն, և զշուրջառն, և զբաղպաներն ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ ի գերեզման և ի դամբարանի սուրբ Լուսաւորչին։ Եւ ոչ ոք ունի իշխանութիւն հանել ի դրանէ սորա, ոչ վարդապետ, և ոչ եպիսկոպոս, և ոչ ոք ի քրիստոնէից, ոչ յիմոց և ոչ յաւտարաց, ոչ ազգական և ոչ բարեկամ, ոչ ի ծանաւթից և ոչ յանծանաւթից ծախել և կամ գրաւել...։**

718

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

Երևան 5297

Գրիչ՝ Թադէոս
վայր՝ Երուսաղէմ

197 բ ... *Գրեցաւ գիրքս, որ կոչի Յիսուս Որդի ի Թուականութեանս*
Հայոց ՊՂԸ. *(1449), ի սուրբ քաղաքս* Երուսաղէմ, *ընդ հովանեաւ*
սրբոյն Յակոբայ որդոյ Զեբեդեա, ձեռամբ բազմամեղ գրողկանս Թա-
դէոսիս, *ի խնդրոյ պատուական և կուսակրաւն քահանային* Յոհանէսին:
Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք սմայ կամ աւգ-
տիք ի սմանէ, կամ գաղափար առնոյք՝ յիշեսջիք ի Քրիստոս զստա-
198 ա *ցաւղ ‖ տառիս՝ զսրբասէր քահանայն* զՅոհանէս, *և զծնողսն իւր, և զա-*
մենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանիս և զհանգուցեալսն ի
Քրիստոս, որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ
հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և համաւրէն զարմից՝ յետ աստի
փոխելոյն։ Ընդ նմին և զեղկելիս՝ զԹադէոս, *որ զգրկունքս ծաղկե-*
ցի, նաև զվերոյգրեալսն՝ հանդերձ ծնողաւքն իւրեանց, և որ յիշէքդ՝
և դուք յիշեսջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յա-
ւիտեանս, ամէն։

** Ձեռագրի 14 բ էջի վրա՝ մեծ հմտությամբ ու ճաշակով նկարված է աշխատության հեղինակ Գրիգոր Տաթևացին կենտրոնում՝ մեծ դիրքով (տես էջ 102, նկ. 6), շրջապատված իր 15 աշակերտներով։ Աշակերտների մեջ կան երիտասարդ անձինք, ինչպես և հասակավոր ու ծերունի մարդիկ։ Դրանք, հավատացած ենք, իրական անձանց դիմանկարներ են, ինչ վերաբերում է Գրիգոր Տաթևացու դիմանկարին, ապա՝ տարակույս չի կարող լինել նրա հավաստիության մասին։ Այդ դիմանկարը գտնվում է նաև Պետական Մատենադարանի երկու այլ ձեռագրերում՝ նույնությամբ։ Սույն ձեռագիրն ընդօրինակված է 1449 թվականին, այսինքն՝ Գր. Տաթևացու մահվանից 39 տարի հետո։ Պետք է ենթադրել, սակայն, որ նկարը կամ ընդօրինակված է ավելի հնագույն (Տաթևացու կենդանության օրոք արված) բնագրից, և կամ գրված է ձեռագրի մեջ՝ այլ ձեռագրից։ Վերջինս հնարավոր է, որովհետև նկարի թերթը մագաղաթյա է, երբ ձեռագիրն ամբողջապես թուղթ է, և իր չափերով այդ մագաղաթե թերթը՝ փոքր է ձեռագրի թերթերից։*

719

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ

Երևան 3179

Գրիչ՝ Յոհաննէս

132 բ ... *Արդ, գրեցաւ գիրքս կանոնաց սրբոց հարց և սակաւ ոտանաւորքս և սակաւ Բարուախաւսս առ ոտս սրբոյն Մինասայ արագայհասին, ձեռամբ* Յոհաննէս *աբեղի, ի վայելումն սարկաւագատար* Յովաննէսին, *յիշատակ իւր և ծնողաց իւրոց՝ հաւրն իւրոյ պարոն* Մաղաքիային *և մաւրն՝* Տովլաթ-խաթունին:

*Արդ, աղաչեմ, որք հանդիպիք ի սմա ընթեռնելով կամ աւրինակելով, յիշեսջիք զվերոյասացեալսն՝ զ*Յովանէսն *և զծնօղսն իւր, և որք յիշէք՝ յիշեալ լիջիք ի տէր։*

Գրեցաւ ի Թվ. ՊՂԸ. (1449), և ապրիլի Գ. (3)-ն։

720

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

ՄՑՎ 122 (323), հա. Ա., սյուն. 537

Նուիրատու՝ Յոհանէս

2 ա *Ես* Յոհանէս *երէցս՝* Սարգիս *երիցու որդիս՝ պարգևեցի զսուրբ աւետարանս* Մարաիրոս *երիցու, մեզ յիշատակ՝ և զարմից մերոց։ Նա չունի իշխանութիւն որ ծախէ. քանի կենդանի կենայ՝ նա բռնէ, և յորժամ իւր վախճանն հասանի՝ նա մեզ յիշատակ դնէ։ Ի Թվիս Հայոց ՊՂԸ. (1449), հոկտեմբեր ԺԴ. (14).*

721

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5355

Գրիչ՝ Յովանէս.
Վայր՝ Ցիպնա վանք

ա

275 ա ...Ի խնդիր ելեալ լուսափայլ մարգարտիս առաքինասէր և բարեմիտ միայնակեացն Կարապետ, և փափագանաւք ետ գրել զսուրբ աւետարանս...։

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ աստուածաքնար աւետարանիս ընթերցմամբ կամ գաղափարիւ՝ աստուած-ողորմի անյապաղ արձակել Կարապետին, և ծնաւղացն նորին Թումին և Մարեմին, և զաւակաց նոցին Ազըզին, Ներսեսին, Սառ[այ]ին, Անն[այ]ին, և զաւակաց նոցին Ներսէս սարկաւագին, Վարդանին, Սարգիսի[ն]։

Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուաբերութեանս հայկազնեան սեռիս ՊՂԹ. (1450), ի վանս Ցիպնա՝ Դաստակ կոչեցելոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոս կաթուղիկէիս, և Վասիլ թագաւորի սուրբ նշանիս, և սուրբ վարդապետաց գերեզմանիս, որ աստ կան հանգուցեալ, ի խանութիւն Թաւրէզ քաղաքին Ջհանշա խաղաղարար պարոնի, և ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի Վաղարշապատ քաղաքի սուրբ էջմիածնի, աւարտեցաւ ձեռամբ ամենամեղ գրչի Յովանէս սուտ կրաւնաւորի։ Այլ և աղաչեմք զձեզ յիշել ի սուրբ յաղաւթս ձեր զմիաբանք վանացս՝ զառաքինասէր հայրապետն մեր զտէր Մինաս եպիսկոպոսն, զՅոհանանէս աբեղայն, և զՄանուէլ, և զԱրսէն, և զՅակոբ քահանայ, որ են ժիր մշակ ի դրունս սուրբ եկեղեցոյս...։

բ

Ծաղկող և կազմող՝ Թումայ Մինասենց

10 բ Ի ՊՁԹ. (1440) թվականին Ջհանշա ամիրզէն ի Վրացստան մտաւ, և շատ աւեր արար, և զեկեղեցիքն քակեց, և քան զԺԲՌ. (12000) աւելի ի Հայոցս՝ զորս եսպան և զորս գերի վարեաց։ Եւ ի Պ. և ի ՂԵ. (1446) թիւն զԲաղդատ էառ։

11 ա Ի Պ. և ՂԹ. (1450) թվականին էառ Ջհանշա ամիրզէն զեզրնկէն, և անթիւ քրիստոնէից կանայք և մանկունք գերի կալաւ։ Եւ յիննհարիւր (1451) թիւն՝ զՂըլաթայ երկիրն և զԲաղիշուն արար գերի և գետին։ Վայ Ռ. (1000) բերան, որ զայս խըղճերս տեսաք. աչաւք մերովք ի ժամանակիս մերում։

Զմեղուցեալ գծող ցանկիս և կաղմող սուրբ աւետարանիս՝ զՄինասենց Թումայս յիշեցէք ի Քրիստոս, և աստուած-ողորմի ասացէք ինձ և ծնաւղացն իմոց, և ձեզ ողորմի Քրիստոս։*

722

ԺԱՇՈՑ

«Թորոս Աղբար», Ա, էջ 223—225**

Ա

Վաճառող՝ Մկրտիչ
վայր՝ Տիւրիկ

...Արդ, ես Մկրտիչ քահանայս, ուխտ եդեալ էի գնալ յԵրուսաղէմ. և ի զբաղմանէս և ի ծուլութենէս ոչ շտապեցայ։ Եւ յազդմանէ չարին եկաւ Նուր-Ալւանդն ի վերայ Արճիշոյ և թալանեց զամենեսեանըս։ Եւ մեր չհանդիպեալ ուխտին՝ առաք զգիրքս և բերաք ի Տիւրիկս, և տուաք ի Ղազար երէցն. և նա ետ մեզ Ծ. (50) ֆլօրի, և մեք տարաք յԵրուսաղէմ։

Բ

Գնող՝ Ղազար
վայր՝ Տիւրիկ

Արդ, ես՝ Ղազար երէցս և որդին իմ Յովաննէս քահանայ գնեցաք զգիրքս ի Միրտիչ արեղայէս Ծ. (50) ֆլօրի, յիշատակ մեր և ծնաւղաց մերոց։

Արդ՝ ես Ղազար երէցս ուխտ եդեալ էի գնալ յԵրուսաղէմ, և ի ժամանակիս դառնութենէն ի վերայ ազգիս քրիստոնէից, զոր ելեալ Ճիհանշան սուլթանն ի թաղթէն Թաւրիզոյ, և եկաւ ի վերայ Եզրնկոյ քաղաքին, և էառ զԵզրնկայն, և բազում նեղութիւնք էած ի վերայ ազգի քրիստոնէից. և Խութլուպակ պարոնն ոչ հնազանդեցաւ Ճիհանշին, զոր հրաման ետ Ճիհանշան զաւրաց և զաւրավարաց իւրոց, զոր գնացեալ առին աւար բազում և գերի բազում. և ով կարէ պատմել զխեղճ և զաղիողորմն քրիստոնէից ազգիս։ Եւ դարձեալ անտի, և

---

* Այս հիշատակագրությունները Թովմա Մինասենցը թողել է նշված էջերի խորաններից ներքև։ Ուշագրավ է, որ այսքան ավերածություններ գործող բռնակալ Ջհանշահը գլխավոր հիշատակարանում կոչվում է «խաղաղարար պարոն»։

** Ձեռագիրն ընդօրինակված է 1441 թվականին, Հովաննէս գրչի կողմից, Արճեշում (տես 1441-ի թվաշարքում)։ Ստացող (այդ և վաճառող) Մկրտիչի ու գնող Ղազարի հիշատակարաններն անթվական են, սակայն, անտարակույս, նրանք գրվել են 1450 թվականին։ Բ. հիշատակարանում նկարագրված քաղաքական անցուդարձերը (Երզնկայի գրավումը Ջհանշահի կողմից և այլն), ինչպես պարզվում է Թովմա Մինասենցի հիշատակագրությունից (տես նախորդ հիշատակարանը) և Դաւիթ Խարբերդցու 1453 թվականին գրած ընդարձակ հիշատակարանից՝ տեղի են ունեցել 1450 թվականին (վերջինս հրապարակելու ենք «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի Բ. հատորում)։

չուեալ ի Կամախ, և առին աւար և գերի բազում. և զխեղճ և ղողորմն, զոր եղաւ ի վերայ քրիստոնէից, զոր հրաման տեառն կատարեցաւ, թէ՝ Մի լինիցի փախուստն ձեր ի ձմերայնի և մի յաւուր շաբաթու. այս ի Կամախ կատարեցաւ: Եւ իմ տեսեալ զդառնութիւն ժամանակիս և զծերութիւն անձինս, և իմ յուսահատեալ յաստուած ապաւինեցայ, թէ այց արասցէ աստուած փափաքանաց իմոց: Եւ ողորմածն և մարդասէրն աստուած ողորմեցաւ, և այլ դուռն ողորմութեան եբաց ինձ, զոր եկաւ գիրքս այս ի յԱրճիշոյ և եհաս առ մեզ. և մեք տեսեալ զգիրս և զթուղթ և զվայելչութիւն ծաղկի սորա. և մեր լցեալ փափաք սրտի՝ առաք զգիրքս ի վայելչութիւն իմոյ անձին և իմ որդւոյ. Յովաննէս քահանային:

723

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան 5223

Գրիչ՝ Մարտիրոս
վայր՝ Թորդանայ վանք

133 բ Աւաղ հանդիպմանս և ահագին աղետիս, որ դիպեցաւ գօտիս և շրջակա բոլորիս, զի ծածկեցին զօրք Իսմաելին և յանխնա թալանեցին՝ զոմանս սպանին և գ[ե]րեցին. ուստեք չեղև մեզ օգնութիւն, վերուստ խնդրեմք զայցելութիւն:

ՊՂԹ. (1450) ամի գրեցաւ, Թորթանայ վանքս, առ դամբարանի հօրս լուսոյ և որդոց և թոռանց նորա, ձեռամբ մեղսաներկ ոգոյ և անարժան Մարտիրոս եպիսկոպոսի:*

724

ՃԱՇՈՑ

Փիրղ. Նոտ., էջ 163—164, Բաղէշ, Ամրդօլու վանք

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Խլաթ

... Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով պատուական և երջանիկ պարոն Ամիր-Դօլն, ցանկացաւ այսմ աստուածային փարթամ գանձուցս, և ջերմեռանդ սիրով հոգւոյն և մեծ փափագմամբ ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց

* Ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է տարբեր վայրերում և, տևելով 13 տարի, ավարտվել է 1463 թվականին: Գրիչ Մարտիրոսը շատ քարոզներից հետո թողել է սեղմ հիշատակագրություններ, ուր հայտնում է տվյալ քարոզի ընդօրինակության տարեթիվը, երբեմն նաև՝ վայրը: Ահա այդ հիշատակագրությունների մի մասը՝

«Զմեղաւոր ԾՐՏՑԼՏԶՎ (եղբայրագիր ծածկագրով կարդացվում է «Մարտիրոս») յիշեցէք ի Քրիստոս, գր[եցաւ ի] ՋԹ. (1460)» (էջ 61 ա):

«ՋԹ. (1460 Թ.) գր[եցաւ] այս Բ. (2) քարոզս» (էջ 145 բ),

«ՋԹ. (1460 Թ.) գր[եցաւ], ի Գուրսա» (էջ 18 բ):

իւրոց՝ Հասանին և Թարէզ-Մէլիքին, և եղբարց իւրոց պարոն Թանդնին, պարոն Ապտուլ-Քարամին, պարոն Կարապետին, պարոն Մկրտչին, և քուերցն Շիրին-Խաթունին, Շատուն, Արմէլիքին, և զամենայն ազգատոհմ նորա՝ զկենդանիս և զհանգուցեալսն։ [Ցիշեցէք] զստացող սուրբ գրոյս զպարոն Դօլն, և զկենակիցն իւր զՄլքան-Խաթուն, և զիւր ծնողքն զԱստուածատուրն և զՍաղդաթ-Մէլիքն։ Զանիմաստ և զանպիտան գրչակս՝ զՅովանէս սուտանուն քահանայ, և զծնողսն իմ զԿարապետ քահանայն և զԹաղայ-Մէլիքն, և զեղբարքն իմ զԱստուածատուր քահանայ, և զամենայն արեան մերձաւորս իմ...։ Կատարեցի կարողութեամբն աստուծոյ զսուրբ դիրքս ի թուականիս Հայոց ՊՂԹ. (1450)։ Այլ և գրեցաւ ի քաղաքս Խլաթ, ընդ հովանեաւ ԺԱ. (11) խորանացս, և սուրբ Գէորգ զօրավարին, զի ետ գրել զսա Ամիր-Դօլն յիշատակ իւրն և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։ Եւ ետ զսա ի դուռն սուրբ Ցովհաննիսին, ձեռամբ և վկայութեամբ Սարգիս վարդապետին, և սրբակրօն կրօնաւորացն՝ տէր Աստուածատրուն, տէր Մկրտչին, տէր Խոսրովին, տէր Ստեփաննոսին, տէր Յովանիսին, միւս տէր Ստեփանոսին, տէր Ներսէսին...։

[Ցիշեցէք] զպարոն Ամիր-Դօլն, զպարոն Թանդինն... և զծնողքն իւրեանց՝ զԱմիր-Հասանն և զԹավրէզ-Մէլիքն, և զմեծ պապն զՍուլէմանշէն, և զՇար-Մէլիքն, և զհօրեղբայրն իւր զԱմիր-Ալին, և զորդիքն՝ զՍուլտանշէն և զՍուլէմանշէն, զՅովաննէս, և զՇանրիարն, և զպարոն զԻլալն...։

725

ԱԻԵՏԱՐԱՆ

ԱՑԹ, էջ 05—07, Թաւրիզ, Լիլաւա, ս. Սարգիս եկեղեցի

Գրիչ՝ Յովանէս
վայր՝ Արճէշ

...Ամէնաւրհնեալն և հոգիացեալն ի գործս ամենայն առաքինութեանց Վարդան գրակալն <և> ստացաւ զանաոիկ մեծութիւնս զփարթամ հարստութիւնս ի յիշատակութիւն հոգւոյ իւրոյ և բարեպաշտ ծնաւղացն իւրոց՝ հաւրն Աւետիսին և մաւրն Տալիթին, և եղբարցն Քանանայապետին, Յոնանիսին, Ղազարին և Տուրութին, և հաւրեղբօրն Հէրապետին, և զաւակաց նորին, և պապուն իւրոյ՝ Ներսէս բարի քահանային, և որդոյն Անդրիաս քահանային, և մաւրքուերցն Երանուհոյն և Խաթունին, և հօրքուերն Եպրաքսին, և Գոհար-Տիկնին, և այլ ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեաց և հանգուցելոց։ Արդ, որք վայելէք յամէնառատ սեղանոյս՝ լիակատար սըր-

«Ի դուռն Նանարտաշ սուրբ Նշանիս գրեալ եղև Ջ. (1451) ամին» (էջ 181 ա)։

«Գրեցաւ Թվ. ՋԹ. (1460), մայիս Ժ. (16), և աւարտեցաւ ի ԺԱ. (11) տարի» (էջ 200 ա)։

«Նախագիրս ի սուրբ քաղաքս Երուսաղէմ գր[եցաւ], ի ՋԺԱ. (1462)» (էջ 200 բ)։

«Այս Գ. (3) քարոզս... ՋԲ. (1463) գրեցաւ, յօրինակէ Վարագեցի Ցովանէս աբեղայէ և աշակերտէ, Քրիստոս լուսաւորէ զիւր հոգի և զձերն, ամէն» (էջ 204 ա) և այլն։

տիւ աստուած-ողորմի ասացէք Վարդանին և իւրոցն ամենայնի, ամէն։

Եւ արդ, ես՝ յետինս ի կարգաւորաց և անպիտան և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ և անիմաստս ի գիրս գրչութեան Յովանէս սուտանուն քահանայ շնորհիւ տեառն սկըսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի թուականիս Հայոց Մեծաց ՊՂԹ. (1450) ամին, յԱրճէշ քաղաքի, ընդ հովանեաւ և ի դուռն սուրբ տաճարիս Գէորգեայ զաւրավարիս, ի հայրապետութեան տեառն Գրիգորի աստուածադիր կաթողիկոսի մեծ աթոռոյս աստուածաշէն Կաթուղիկեի սուրբ էջմիածնի Վաղարշապատու, զոր տէր աստուած հաստատուն և անփորձ պահեսցէ զնա յաթոռ իւր ի պարծանս և ի մխիթարութիւն յետնեալ և նուաղեալ ազգիս, ամէն։

Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս՝ լի սրտիւ և առատ բերանով աստուած-ողորմի ասացէք վարպետ Վարդանին և քւերն իւրոյ Քարամ-խաթունին, ամէն։ Եւ ինձ անարժան գրիչ Յովանէս քահանայի, և երախտաւոր ուսուցչին իմոյ Թումա աշխարհալոյս վարդապետի՝ հետևողի առ Քրիստոս, և մարմնաւոր ծնաւղաց իմոց՝ Մանկասարին և Փաշային՝ գնացելոցն ի Քրիստոս։

Բայց խոշ[որ]ութեան գըրիս անմեղադիր լինել աղաչեմ, զի կար մեր այս է, և զի սիրտս խոցեալ է ի սատանայէ, և զի կենդանոյն մեռեալ եմ, և աչքս ի բաղում արտասուաց կուրացեալ է, զի իմ սիրական որդիքն Սանակն և Մեսրոպն զիս սևեցին։

726

ԱՒԵՏԱՐԱՆ

ՔՑԲ 6, էջ 5

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Հարճոց

...Եւ արդ ես՝ ունայնս ի բարեաց գործոց, սուտանուն գրչակս Յոհաննէս... գրեցի զսա՝ զսուրբ աւետարանս ի գեւղս, որ կոչի Հարճոց, ընդ հովանեաւ սուրբ Քրիստափորի և Աւաք սուրբ Խաչի։

...Եւ արդ, ես Կիրակոս եպիսկոպոս... ետու գրել սուրբ աւետարանս յիշատակ հոգոյ իմոյ և ծնօղացն իմ, ամէն, եղիցի. եղիցի։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊՂԹ. (1450), ի դառն և ի նեղ ժամանակիս, ի հայրապետութեան Հայոց տէր Գրիգորի, ի զանութիւն Թավրիզոյ Ջըհանշի...:*

---

* Հիշատակարանը հրատարակված է նաև «Բազմավէպ»-ի 1888 թ. համարում, էջ 101։ Այնտեղ հայտնված է նաև, որ ձեռագրի ծաղկողի անունն է Մկրտիչ։

727

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիրգ. Նօտ., էջ 165, Մշոյ ս. Մարիանէ եկեղեցի

Վայր՝ Բաղէշ

...Եւ գալ ստոյգ և ընտիր օրինակ, զոր դրեալն էր Յովանէս Աղէթրցի *ի* Թորոս *փիլիսոփայէ՝ ի* Դրազարկն, *և յուղարկեալ հռչակաւոր ուխտին Առաքելոցն* Տարօնոյ, *որ կոչի Ղազարու վանք։ Եւ իմ առեալ դրեցի... ձեռօքս, ի Թվականիս Հայոց ՊՂԹ. (1450), ի քաղաքս* Բաղէշ, *ընդ հովանեաւ սուրբ Սարգսի...։*

728

ՃԱՇՈՑ

Երևան 936

Հետ. ստացող՝ Վէգեն

222 բ *Զվերջին ստացողիս այս սուրբ գրոցս, որ է Ճաշագիրք զհայրս* Վէգեն, *և բարէպաշտ և աստուածայսէր զկինն իւր* Մրվարթն, *և զորդին իւր՝ զ*Ամիր-Մէմէն, *և զ*Յովանէս *սարկաւագն, և զ*Հայրապետն, *և զվանիցն հայր զ*Հայրապ/պետն՝ *քահանայ փառաւոր և պատուելի, և զայլն ամենայն արեան մերձաւորքն՝ լի սրտիւ աստուած-ողորմի ասացէք և մեղաց Թողութիւն խնդրեցէք ի յաստուծոյ,* Վէգենին *և կողակցին* Մրվաթին *յիշեցէք ի Քրիստոս աստուած մեր։ Գիրքս տվի սուրբ Աստուածածնին դուռն յիշատակ հոգոյ իմոյ և այլ ամենայն արեան մերձաւորացն, Թվականիս ՊՂԹ. (1450)։*

729

ԺԱՄԱԳԻՐՔ

Բրիտ. Թնգ. Add. *16,408, կՑ. 61, էջ 159*

Գնող՝ Թադէոս Շանապունեցի

վայր՝ Կաֆայ

406 ա *Յամի տեառն ՌՆԾ. (1450) վերջի ստացող Բրէվիարիս ես՝* ֆր. Թադէոսս Շանապունեցի *եկի ի* Կաֆայս՝ *ի սուրբ Նիկօլ վանքս և գնեցի ըզգիրքս զայս ի լադինացոց, ի հալալ արդեանց իմոց, և ետու զսա վերստին կազմել և զպակասն լնուլ, ի վայելումն անձին իմոյ և յիշատակ ինձ և ծնողաց իմոց, և որք հանդիպիք ի սմայ՝ յիշեսջիք յաղօթս ձեր զիս՝ զ*ֆր. Թադէոսս, *և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, ամէն։*

730

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԱՌԱԿԱՑ ԵՒ ՔԱՐՈԶԻՑ

Երևան 2226

Գրիչ՝ Մակար Կիլիկեցի՞

250 ա *Այս քարոզներս ասացեալ է ի* Ղուկաս Կեղեցի *սուրբ վարդա-*

պետէ՝ դիւրալուր հեշտիմաց ըստ աշխարհականաց ճանապարհաւ։ Եւ յառաջն եղաւ գեղեցիկ պատմութիւնք անծանօթք վասն օրինակի, ի հնոց որրոց վարդապետաց ասացեալ և գաղափարաւ առ մեզ հասեալ։

Գրեցաք ի վայելուչ մեծի րաբունապետին տեառն Սարգսի վարդապետին Մեծոփեցւոյ՝ աշակերտին Գրիգորի Տաթևացւոյն։ Գրեցաւ ձեռամբ Րակամ (=Մակար*) գրչիս էլլիկեցւոյ,** թվ. ՌՃՂԹ. (1450),***

731

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ, ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՑԻՈՑ

Երևան 2514

Նուիրատու՝ Յովսէփ

170 բ Ես Յովսէփ աբեղայս բաշխեցի զայս սուրբ գիրքս իմ հոգևոր եղբաւրն Սուքիաս կրաւնաւորին ի յիշատակել զիս և զծնաւղսն իմ ի ժամ ընթերցման խրատու սուրբ հաւրն Եւագրիոսի, աւգտելով ի սմանէ՝ ի յերգ երգոցն Սօղօմոնի, աստուած ո[ղո]րմի աս[աս]ցէ մեզ և ինքն յիշեալ եղիցի ի Քրիստոսէ՝ հանդ[երձ] եղբաւրն Դաւիթ կրաւնաւորիւ, և ամենայն ազգականաւք և ծնաւղիւք, ամէն։

Ի թվ. ՊՂԹ. (1450)։

732

ՄԱՇՏՈՑ

Մ. Աթոռ 31, «էջմիածին», 1950 թ., նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 85

Գրիչ՝ Կարապետ

ա

211 բ ...Գրեցաւ սուրբ տառս աստուածային՝ յորջորջեալ ցուցակ արարուած սուրբ հաւրն Մաշդոցի, ի թուականիս Հայոց ՊՂԹ. (1450), ձեռամբ յոգնամեղ և անարժան և պարտաւոր գրչի՝ սուտանուն Կարապետ աբեղայի, չարեաւք լցեալ եմ յաշխարհի։

բ

101 բ– Ո՜հ, ոհ, զայս ոչինչ տունս, զինչ յերգէն կու անկանի՝ թողի ի
102 ա գիրս և ապականէ։

գ

144 բ Ջեղկելիս և զանարժան գրիչս յիշեցէք և զպատուական կին զՔիչի-Խաթունն՝ զստացող գրոցս աղաչեմ յիշել ի Քրիստոս. և ինքն՝ ամենատատն աստուած ձեզ ողորմեսցի՝ կարդացողաց և լսողացդ յիւր միւսանգամ գալստեանն, ամէն, ամէն, եղիցի։

* Պետք է կարդալ աջից ձախ։

** Թերևս եղած պետք է լինի «Կիլիկեցւոյ»։

*** Հիշատակարանը գրված է, անտարակույս, Ղուկաս Նեղեցի վարդապետից (սա 1857 թ. գրեց իր չափածո տոմարը) հետո։ Երկրորդ պարբերությունը ընդօրինակված է այն ձեռագրից, որի մասին ընդօրինակողն ասում է՝ «գաղափարաւ առ մեզ հասեալ»։

ԼՐԱՑՈՒՄ

Սույն ժողովածուի բնագրային բաժինն արդեն հրատարակված էր, երբ մենք հնարավորություն ունեցանք լինելու Լենինգրադում և ծանոթանալու ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Արևելյան ձեռագրերի սեկտորի 316 հայերեն ձեռագրերի, ինչպես նաև Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանի Ձեռագրական բաժնի հայերեն 96 ձեռագրերի հետ: Վերոհիշյալ ձեռագրերից 7-ը ունեին ԺԵ. դարի առաջին կեսի ընթացքում շարադրված հիշատակարաններ, որոնք մեջ են բերվում ստորև, որպես լրացում սույն ժողովածուի բնագրային բաժնի:

Վերջերս Մատենադարանը ձեռք բերեց Ջմմառի (Բեյրութի մոտ) վանքի հայերեն 154 ձեռագրերի անտիպ ցուցակի լուսանկար պատճենը: Այդ ձեռագրերից 4-ը ունեն ԺԵ. դարի առաջին կեսի հիշատակարաններ, որոնք ևս մեջ են բերվում ստորև:

Վերոհիշյալ հիշատակարանները նույնպես շարադասել ենք ժամանակագրական կարգով, տալով նրանց հերթական համարներ (№№ 733—744):

733

ԱՍՈՐԱ-ՀՌՈՄԷԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ ՄԽԻԹԱՐԱՅ ԳՈՇԻ

Լենինգրադ, Հանր. գրադարան. Арм. н. с. 39

Գրիչ՝ Թումա

ա

Թվ. ՊԾԳ. (1404) գրեցաւ գիրս դատաստանի ձեռամբ մեղապարտ գրչի Թումաի բանի խնդրողի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և Գէորգեա ղաւր[ավար]ի, ով ոք որ ընթեռնու յիշէ ի մաքրափայլ յաղօթս իւր զհոգևոր հայրն մեր զէլէքսան կր[օնաւոր] և զծնաւղսն մեր, և դուք յիշեալ լիջիք յառատ ողորմութիւնն աստուծոյ...:

բ

Զխնդրողս բանի զԹումայ յաղօթս յիշեա:

734

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Քեշիշյան, Ցուց. Ջմմառի 121

Գրիչ՝ Յովհաննէս

86 բ Արդ, յերես անկեալ պաղատիմ ի [ման]կանցդ եկեղեցոյ, որք հանդիպիք այսմ կտակիս | | | քերականիս ա | | | թեան խրատիս, յիշեսջիք ի բարին Քրիստոս զա | | | արեգակն, զքրիստոսածաւալ աղբիւրն, զհոգևոր հայրն մեր և զծնաւղ՝ զմեծ րաբունապետս Գրիգորիոս զորդի Ծերին, որ [պարգև'] ողորմութեան շնորհեալ մեզ՝ մեղուցեալ անձին՝ պիտակ անուն վարդապետի | | |, ի մեծ թվականին Հայոց ՊԾԹ. (1410)... ըստ արժանաւորութեան իմոյ, այլ ըստ անխարդախ սիրոյն և հայրական | | | թեանցն, զոր ունի առ մեզ: Եւ [դուք յի]շեալ լիջիք ի Քրիստոսէ մերոյ:

735

ՃԱՇՈՑ

Բեշիկթաշյան, Ցուց. Զմմառի 2

Գրիչ՝ Յովսէփ

ա

462 բ ... *Աւարտեցաւ քառահիւն և առաքելախօս մարգարէաշէն հոգիարուիւ այս տառ ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի* Յովսէփ *անուն կրաւնաւորի, ի խնդրոյ սրբասէր և սրբտհոգի* Կարապետի *և* Ստեփաննոսի, *ի Թվ. ՊԿԳ. (1414) ի հայկազան սեռիս տումարի, ի հայրապետութեան տեառն* Յակոբայ, *ի Թագաւորութեան Հայոց ազգիս, որ այլ չերևին, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ հարկապահանջութեամբ զՀայք տապալեցին և մեք կանք հալածական | | |*

բ

41 ա *Եղբայր, անմեղադիր լեր, զի օրինակն այնց էր, յայլ տեղ գիտ և կարդայ։*

գ

242 ա *Ո՜, աղաչեմ անմեղադիր լերուք խոշորութեան, զի ցամաք կորեկ հաց կերայ և գրեցի, անմեղադիր [լերուք]։*

դ

245 ա *Ո՜վ եղբայր իմ հոգևոր* Կարապետ, *անմեղադիր լեր, զի ճանչերն ուտէին զաչս։*

ե

248 բ . *Աւրն պահք էր և հացն ցամաք կորեկ, աղաչեմ անմեղադիր լեր։*

զ

254 ա *Ո՜, զխոշոր Թուխթս, որ զիս ի յաջ իղն երեր, ու ճանճերս։*

է

270 ա *Ո՜, զայս խոշոր Թուխթս, որ ձանձրացոյց զիս, և ճանճերս։*

ը

271 ա *Զէրէց մի յայսմ ամի ուրացաւ զաստուած և անուանեաց զինքն զանԹարի։*

թ

279 ա *Պահք էր և կորեկ հաց կերայ ցամաք։*

ժ

286 ա *Ո՜, ծարաւեցայ և ոչ կայր ջուր խմելոյ։*

ժա

358 ա *Ո՜հ, շոք էր և ճանճերն չեն ի տալ դադար։**

---

* *Նման մանր հիշատակագրություններ կան նաև ձեռագրի այլ էջերում։*

736

ՔԱՂՈՒԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Բեշիկչյան, Ցուց. Ջմմառի 50

Գրիչ՝ Յովաննէս.
Վայր՝ Տաթև

